ՐԱՖՖԻ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ՐԱՖՖԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Տասներկու հատորով

Խ մ բ ա գ ր ա կ ա ն կ ա զ մ

Թոփչյան Ստ. Է., Խանզադյան Ս. Ն., Հակոբյան Պ. Հ.,
Պետրոսյան Վ. Հ., Ջրբաշյան Էդ. Մ., Սամվելյան Խ. Ե.,
Սարինյան Ս. Ն., Ֆելեքյան Հ. Հ.

«ՆԱԻՐԻ»

ՐԱՖՖԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հատոր տասներորդ

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ԵՐԵՎԱՆ—1991

ԳՄԴ 84 Հ 1—4
Ր 359

Հատորը կազմեց, տեքստը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց
Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆԸ

Րաֆֆի

Ր 359 *Երկերի ժողովածու 12 հատորով /Խմբ. կոլեգիա՝ Թոփչյան Ստ. և ուրիշներ։*

Հ. 10. Հոդվածներ, ակնարկներ (Բնագիրը հրատ. պատրաստեց և ծանոթագրեց Խ. Սամվելյանը, հատորի խմբ.՝ Ստ. Է. Թոփչյան։ Եր.: Նաիրի։ 1991.— 544 էջ։

Հատորում զետեղված են հայ դասականի հոդվածներն ու ակնարկները։

Ր $\frac{4702080101\ (33)}{705(01)\ 91}$ 66—91 «մ» ԳՄԴ 84 Հ1—4

ISBN 5-550-00687-1

© *«Նաիրի», կազմելու, ձևավորման և ծանոթագրելու համար, 1991*

ԱԿՆԱՐԿՆԵՐ

1858

ԱՂԹԱՄԱՐԱ ՎԱՆՔԸ

Խոսակցություն ազգային լուսավորության վերա, դուրս հանած մի ճանապարհագրությունից, որ եղած է 1858 թվակ. շրջելով Վասպուրականի և Տարոնի կողմերում։

Արեգակի վերջին ճառագայթները մտան Նարեկյան սարերի հետևը։ Մի թեթև զեփյուռ բերում էր ուխտավորների փոքրիկ նավակը Բզնունյանց ծովակի երեսից։ Երկար ժամանակ նստած մի բարձրավանդակի վերա, Աղթամարա կղզումը, սպասում էի ուղեկցիս, որ նավ մտնելու միջոցին պատահմամբ ինձանից ետ մնաց։ Բայց իզուր. ընկերիս մի այլ ձախորդություն էր պատահել. պատճառը, իմ նավամուտ լինելուց հետո նորա ձին, որ արածում էր ծովեզերյա դաշտումը, հանկարծ արձակվելով փախել էր։ Արդեն միամտեցա, որ նա, զբաղված լինելով որոնել յուր ձին, կարող չէր իսկույն գալ. նորա գալստյանը մնաց սպասելու առավոտուն։

Լուսինը մի երկաթյա երկնաքարի նման, կրակից նոր դուրս բերած, կարմիր երեսը ցույց տվեց Վարագա սարերի կատարներից, և նորա արծաթափայլ լուսով սկսան շողշողել ծովակի հեզիկ ալիքները։ Ես նստած էի մի բարձր քարաժայռի վերա, որին զարկվում էին ծովի երթևեկ ալիքները, և սրտիս մտածությունների մրրիկը խառնվելով հեղանյութ տարրի ալեկոծության հետ, արձակում էին երևակայությանս սենյակի մեջ նո-

բանոր արձագանք։ Հանկարծակի մի նոր ձայն շփոթեց մտածությանս։ Հայկոյա, և ահա տեսնեմ մի նորահաս տղամարդ, բռնած ձեռքին մի փոքրիկ պարսկական խալիչա, ասում էր. «Ելի՛ վեր, տիրա՛ր, ասիկա մեր հայր սուրբի տեղն է. ամեն օր էստ վախտ, ասանց նստած, ղահվա կխմե, մեկա էլ կուգա կոր». Իսկույն հասկացա, որ դա վանքի ծառաներիցն էր. եկողն ես՝ գլխավոր վարդապետներից մինը։ Լավ եղավ, մտածեցի, գոնյա՛ հայր սուրբի հետ փոքր-ինչ ժամանակ կանցուցանենք, նոր բաներ կլսենք։

Հայր սուրբը եկավ։ Ես ոտքի վերա կանգնեցա. աջն համբուրեցի, ձեռքը գլխիս դրեց՝ շնորհակալ եմ, մի պահապանիչ ևս ասաց։ Կարծեմ այս պատիվը չցուցաներ ինձ, եթե չտեղացնեի ձեռքը քսան ղուռուշանոց պեաղ մեճետյան։ Ինչևիցե։ Աստված նորան կյանք տա. սեպգլխի գործն այն է. նա մեղք չունի՛։ Հայր սուրբը տեղ ցույց տվեց, ծալապատիկ նստեցա։ Երեք այլ վարդապետներ ևս նորա մոտ շարվեցան. չորս հատ ես, քրդի նման, գլուխները կարմիր, դեղին և զանազան գույներով մարհամաներ փաթեթած մարդիկ կային, որոնք թե ի՞նչ ազգից էին, չիմացա իսկույն. բայց հետո հասկացա, որ հայ են, Շատախու և Մոկաց կողմերի իշխաններից։ Դառն ղահվայի փոքրիկ բաժակները սկսան պըտույտ գալ, և մինն ևս ինձ տվեցին. խոսակցության ասար բացվեցավ։

— Հըմը՛, որդի՛, ուստի՞ ես, ո՞ր տեղից կուգաս, հագուստիցդ Ռուստանու հայերուն կնմանիս. ապրի՜ս դո՛ւ, ի՞նչ է քեզ սախլեր, այսպես ջահիլ-ջահիլ եկեր ես, Հայաստանու վանքեր կպտտես. դորանոս. սուրբ Նշանի շնորհը վրադ լինի՛։

— Հա՛յր սուրբ, ես Պարսկահայոց գաղթականներից եմ. մանկությենից Ռուսաստանում մեծացած լինելով, նոցա հետ նմանություն ունիմ։ Բայց ընիկ սալմաստեցի եմ, Ատրպատականի ժողովուրդ։ Հայրենիքի սերը բերել է ինձ այս կողմերումս շրջելու. ուխտավոր եմ, սուրբ Կարապետի վանքից եմ գալիս։

— Աստված ուխտդ ընդունելի՛ արասցե՛։ («Երանի՛ քո աչքերուն», կրկնեցին մյուսները). բայց ասա՛, որդի՛, Պարսից կողմերին հե՛չ ընծա մի, հոգեբաժին, կամ ուրիշ բան ունի՞ս բերած, որ օրհնության գիր տանես։ Պարսկաստանու հայերը, թեպետ մոխրապաշտից մեջը կբնակին, բայց շատ ջերմեռանդ ու բարեպաշտ մարդիկ են. ամենայն ժամանակ անոնք չեն պակասեցներ յուրյանց ընծաները սուրբ վանքերեն։

Հայր սուրբի փաղաքշական գովասանությունը կամա-ակամա մի քանի դեղիններս, ոսկի ղահեկաններ պիտի խլեր ինձանից, բայց ի՞նչ

օգուտ, նորա բախտից քանիս հրաժարիմք էր կարդում։ Ինչ պետք է արած, պարտական ենք, պիտի տանք. կարելի է ավետարանի կողքին այդպես գրած լինի։ Դոքա թո՛ղ մնան. չիցե՛ թե մեր վարդապետը բարկանա։ Ա՜խ. ծառա՛ եմ նորա աչքին. նորա անեծքը կրա՛կ է։

— Ճշմարի՛տ է ասածդ. բայց ինձ ո՛չ մի բան տված չեն բերելու. միայն ես ինքս խոստացած ունիմ դարպաս տալու հարյուր ղուռուշանոց դեղին մեճիտիա, այսքան հազիվ իմ կողմից բաժին հասանի սուրբ ուխտին։ Ըստ որում Պարսկաստանից դուրս գալուցս հետո բավակա՛ն վանքեր եմ տեսած և ամեն մինին մասնավոր գանձանակ ընծայած։

— Աստված ես տավել կարողություն տա. մեք ձեզանից միշտ շնորհակա՛լ ենք, թե՛ տաք և թե՛ չտաք։ Ո՛րդիք, դուք լա՛վ գիտեք, որ աշխարհի ամենայն բանեն զրկված ենք. մեր ումուղը, մեր հույսը մեր ժողովուրդն է. մեք անոնց համար աղոթք կանենք. անոնք էլ մեզ չպիտի աչքե ձգեն. թե՛ սա աշխարհումս և թե՛ ան աշխարհումը ձեր հոգվո փրկությունը մեզնով է։

— Այս ո՛վ չգիտե,— ասաց վարդապետներից մինը,— մի՞թե Քրիստոս չէ՞ր, որ ըսավ. «Ով զոր կապիցէք երկրիս, լինիցի կապեալ երկինս. և զոր արձակիցէք, լինիցի արձակեալ» և այլն։ Մեկ բաղնիք որ կերթաս, բաղնիքպանը քու մարմնի կեղտերն կլվանա ու կմաքրե, դուրս գալու ատենը զանիկա չե՞ս վարձատրեր։ Հապա մեք, որ ձեր հոգվո խաներն ու կեղտերն միշտ կսրբենք, մեզ պիտի առանց վարձատրանա՞ց թողուք։ Հոգիներս դուրս կգա օրն յոթն անգամ ժամ ըսելով, շաբաթն երկու անգամ պատարագ ընելով ու ծունր իջնելով, ո՛վ գիտե ի՞նչ ճգնություններով։ Ընչո՞ւ, որ հայոց ազգը հաստատ մնա, փառավոր ըլլա, լուսավորչական օրենքը չկորչի։

— Ադոնք թո՛ղ մնան,— ասաց առաջինը։— Տիրացուն, կերևի, ինքն ալ գրոց աշակերտ է. անկարելի է, որ աս առարկաներս հասկըցած ըլլա։ Բայց, լսե, տիրացու Հակոբ, Ռուսաստանու և Պարսկաստանու վանքերը ու ժողովուրդը ինչպե՞ս են՝ համեմատելով մեր վանքերու ժողովրդյան հետ։

— Խնդրում եմ, այդ բաները ինձնից չհարցնեք. չիցե թե իմ պատասխաններս այդ նյութերի մասին վշտացնեն ձեր սիրտը և շատ կարելի է, ձեր բարկությունը հարուցանեն իմ վերա։ Նաև զանազան տեղերից, անհամար կարգավորք կսկսեն յուրյանց սև վեղարների տակից մռմռալ և անեծքի կայծակներ թափել իմ վերա. ուր մնաց հայոց նոր քննադատների գրիչ շարժիլը իմ վերա։ Գիտե՞ս, ես վաճառական մարդ

եմ, չունիմ այն գլուխը ամեն մի սրախոսության պատասխանատու լինելու։ Այլև առածն ասում է. «Ճշմարտախոսի գդակն է ծակ»։ Քանի որ ճշմարտությունը Հայաստանից փախչում է, հարկավոր է մեզ ևս թաքչիլ (թաք կենալ)։

— Ըսե, ո՞րդի, ճշմարտությունը մերկանդամ է, արժանի չէ զանիկա թաքուցանել։ Կարելի է, քու գաղտողություններդ արժանի ընդունելության բան ըլլան. խելքը հասակի ու մորուքի վրա չէ՛. շատ անգամ խիստ մանուկ և պատանի սրտերու մեջ կպատահին վսեմ ու արժանավոր մտածմունք. մի՞թե փոքրիկ բլուրներու մեջ ազնիվ մետաղներու հանքեր չեն գտնվեր։

— Հա՛յր սուրբ, դուք կամենում եք սրտիս խոցերը բանալ. և արդա՛րև, ո՞ր օրի համար պիտի մնան դոքա. լավն այն է, որ բացվին, դուք ևս հասկանաք, որպիսի՜ ցավեր այրում ու խորովում են սիրտս։ Քանի որ աշխարհագրության մեջ, մասնավոր մարդերի գրվածքների մեջ կարդում էի հայոց ազգի բազմության թիվը, նոցա կրոնասիրությունը, նոցա բարոյական ազնիվ բարք ու վարքը, և պատմությունից տեղեկանում էի նաև նոցա առաջինների բարեփառությունը— հիրավի, սիրտս մի անչափ ուրախությամբ լցվում էր. փա՜ռք էի տալիս նախախնամականին, որ այդպիսի բարեբախտ ազգի զավակ եմ։ Բայց երբ գրքերը մի կողմ դրած կամեցա ականատես փորձով ստուգել այդ կատարելությունը և բարեփառությունը, ո՜հ, այն երեխայական հոգեզմայլությունը փոխվեցան մի անտանելի վշտի։

— Ինչո՞ւ այդպես,— ասաց վարդապետը,— ընդհակառակն, քու ուրախությունդ տասնապատիկ պիտի ավելնար։

— Ո՛չ. խղճալի վիճակի մեջ եմ տեսնում ձեր ժողովուրդը. միանգամայն մնացած տգիտության խավարի մեջ, որ և պատճառ է տալիս զրկվելու աշխարհային և երկնային փառքից։

— Այդ բանից միտքը լավ չեմ հասկնար. ի՞նչ կնշանակե. մեր ժողովուրդը տգետ գոլով զրկվում է աշխարհային և երկնային փառքե— Կարծեմ ասել կուզես, ո՛չ աշխարհիս մեջ ունին մարմնական երջանկություն, և ո՛չ երկնքի մեջ՝ հոգեկան փառք։

— Այո՛, այդպես. տգիտության ներհակն է գիտություն, որին ուրիշ խոսքով լուսավորություն, ուսումն ենք ասում։ Լուսավորությունը մի այնպիսի ասպարեզ է բացում մարդու առջև, որի մեջ գտնում է նա երկու գլխավոր ճանապարհներ. մինը տանում է դեպի այս աշխարհի երջանիկ կյանքը. իսկ մյուսը՝ դեպի երկնքի հավիտենական փառքը։ Ըստ որում՝ լուսավորությունը ուսուցանելով մարդուս զանազան օգտավետ

արհեստներ, կրթում է նորա միտքը, բացում է ճանապարհը դեպի զանազան գյուտեր և հասուցանում է նորան հնարներ, որովք նա հեշտությամբ կարող է հարստանալ ինքը և հարստացնել յուր հասարակությունը։ Այլև լուսավորությունը ազնվացնում է մարդու բարքուվարքը և շինում է նորան օգտակար և բարեգործ անդամ ազգի. գորանից հետևում է առաքինությունը, այն միայնակ կենդանի և կենդանացուցիչ մասը կրոնի, որ և պատճառ է տալիս հանդերձյալ կյանքի բարելավությանը։ Դորա հակառակ, մի մարդ կամ թե մի ազգ, որ խավարի ու տգիտության մեջ է, ունի մի նեղ ու անձուկ դուռն ապրուստի. նորա կյանքը ստրկության և ծառայության մեջ է. նա հալթալթում է յուր ապրուստը դժվարին և անտանելի աշխատություններով. նա և կորցնելով կրոնի կենդանական մասը, հոգին, կամ թե մեռցնելով նորան, այնուհետև պիտի առաջանա անապաշտություն կամ կռապաշտություն։

— Որդի, այդ բանի մեջ դու շատ կսխալվիս, մեր ժողովուրդը, իր վիճակին նայելով, բավականին լուսավոր է։

— Ո՛չ, հայր սուրբ, ո՛չ միայն ձեր ժողովուրդը, և դուք, այլև բոլոր ազգը յուր նախնիքի բարեփառության ժամանակներում ևս լուսավորության համար հոգս չէ տարած։ Անի քաղաքում կարդում ենք հազար և մի եկեղեցի, բայց մի վարժատան անուն անգամ չկա։ Նույնպես Հայաստանի մյուս տեղերում տեսանվում են անթիվ վանքեր, բայց վարժատան նշույլ չկա։ Երևում է հայը, որպես այժմ, նույնպես և առաջ, ունեցել է մի անտի սեր դեպի կրոնը. աշխատել և բազմացնել եկեղեցիների, վանքերի, կրոնավորների և ճգնավորների թիվը։ Այս պատճառով հայոց գիտնավորը, շատով կրոնավորի կարգը ընդունելով, դիմում էր դեպի վանք. բնտրում այնտեղ պաշտվում էր սրբի տեղ։ Ո՞վ կցանկանար վարժապետության, ո՛վ էր վարժապետի պատիվ գնողը, ո՞վ էր նորա ժողովող և դարմանող հոգաբարձուն, կամ ազգասեր իշխանը նույնիսկ հասարակության մեջ։ Բայց, ավա՜ղ, մեր թշվառությունը. կարծես այժմ ևս ազգն յուր թանձր թմրության քնից զարթած չէ, որ այն վանքերից դուրս բերելով հայոց գիտնավորը պիտանի կացուցաներ յուր որդիներին. հայոց ուսումնարանը վանքերի պատերի միջից դուրս հաներ և դներ ժողովրդի մեջ և շիներ նորան հասարակաց կրթության և լուսավորության տուն։

— Հը՜մ...— գլուխը շարժեց վարդապետը.— կերևի կոր, դու ևս ան պարոններեն ես, որ ազգի վանքերը, ազգի սուրբ աթոռները քանդելու կչանան, կրոնավորաց դեմ կպատերազմին։ Այդ միտքերը նոր ազանդ

տարածել է, լուսավորչա սուրբ կրոնը խափանել է։ Ո՛չ, եղբայր, Հայը յուր նախնյաց շավիղեն դուրս չգար. նա որպես մինչև ցայժմ սուրբ պահեր է նախնյաց ավանդությունները ու ծեսերը, նույնպես պիտի պահե մինչև հավիտյան։

ՈՀ, այդ ի՞նչ նախանձու հոգի է, որ դուք ունիք Հայոց գիտնականների հետ։ Թո՛ղ միայն աշխարհական գիտունները. բայց և ձեր համակարգ եղբայրներից մինը, երբ սկսում է ազգային լուսավորության խնդիրների վերա մտածել, իսկույն վեր են կենում նորա ընդդեմ ահագին բազմություն նախանձոտ հակառակորդներ ձեր միջից։ Ինչ ասեմ ի մասին աշխարհական գիտնականների Հայոց մեջ, որք թափառական ման են գալիս աշխարհից աշխարհ՝ և ո՛չ մի տեղում դադար չեն գտանում։ Խեղճալի Մ. Թաղիադյանցը աստանդական մինչև ի Հնդկաստան հասավ, վերջը Պարսկաստանի քաղաքում ավանդեց յուր չնաշխարհիկ հոգին։ Աբովյանը — և անգիտելի է, ինչ կերպով կորցրեց յուր թանկագին կյանքը։ Բայց ե՞րբ կլինի, որ մեր Հայաստան աշխարհում ևս կառուցանվին աթենյան տաճարներ, և հնամոլության մառախուղը վերանա, մի՞թե ազգն ստեղծվել է վանքի ու վանականների և դատարկ ծիսապաշտության համար։ Դորա հակառակ, վանքը և վանականքը և բոլոր կրոնական կարգերը սահմանված են մարդու համար և պիտի է ծառայեն մարդկության օգտին։ Իսկ երբ որ նոքա անպիտանացան, և համեմատ չեն ազգի և ժամանակի պիտույքին, ապա պետք է ի բաց մերժվին։ Այժմուս ազգը, յուր ազատության բանտի մեջ, ճգնավորների աղոթքին և վանականների աղերսանքին այնքան կարոտություն չունի, որքան փափագում է կրթության ու քաղաքակրթության ախտահալած դեղին, այն զարթուցանողական ձայներին, որ լսելով սթափվի յուր մահահրավեր թմրութենից, փակած աչքերը բանա և տեսանե լուսավոր աշխարհը, լուսավոր ազգերը, ինքըն ևս աշխատի հասանել լուսավորության, ուրեմն և բարվոքել յուր դրությունը։

— Ո՜հ. լուսավորությո՜ւն... լուսավորությո՜ւն... անխելք բառ, անխելք գրույց... Նոր հավեր են եկել, երկաթի ձվեր կածեն։ Մի քանի խելագար ազգը կլուսավորեն. ան ևս Հայոց ազգը. ան հարյուրավոր սըրբերու անեծքին տակ ճնշված ազգը. և մեզ ալ թույլ չեն տար, որ մեր տեղերում հանգիստ մնալով, գոնյա հանապազօրյա աղոթիվք և սաղմոսերգությամբ պահպանենք նորան։ Եթե մեր աղոթքները չըլլային, գիտե՞ս, մինչև հիմա Հայոց ազգը հատատա կմնար։

— Ի՞նչ օգուտ այդ աղոթքներից։ Երբ որ տեսանում եմ շատ Հայա-

բնակ գյուղեր կես ժամու ճանապարհով հեռու մի վանքից, ուր գտնվում են բավական վարդապետներ. բայց ժողովուրդը ամենևին բարձիթողի արած։ Տարին երկու անգամ քահանայի երես չեն տեսնում, աստուծո, Քրիստոսի անունը հազիվ գիտեն, հավատքից ունեն մի քանի սնապաշտական կարծիքներ. գիտեն մի քանի առասպելախառն պատմություններ սուրբ գրքերից։ Ավելի լավ չէ՞ր լինելու, եթե դուք ժողովրդի մեջ մնալով, կրոնի պատվիրաններ ուսուցանեիք նրանց, ազգի որդիքը դաստիարակեիք և կրթեիք։

— Ո՜հ. բաները թամամեցավ. մեզ տարիներով կին մարդու երեսը չուզեմք տեսնել. ճգնավորը միայն ավագ շաբթի օրը իր սարից դեպի վար կգա, դա մեզ կըսե, գնացե՛ք ժողովրդյանը մեջ. ապա վանքերն մենակեցներո՞ւն մնան։ Ժողովրդյան հետ մեք ի՞նչ բան ունինք։ Հա՛, աստված մեր հոգին կառնե, թո՛ղ մեր վանքերաց մեջ մեռնիմք։

— Ահա՛ այդ թյուր նախապաշարումն է, որ պատճառ է տալիս ձեզ հեռանալով ազգից, ժողովրդին անտերունչ, անհովիվ թողլով, առանձնանալ վանքերի խցերում։ Այդ իրողությունն է, որ ի վաղուց հետե աղետության ցեխի մեջ է խրել ձեր ժողովուրդը։ Որովհետև նրանք ձեզ սուրբ տեղ պաշտում են, հայտնի բան է, որ և ձեր դատողությունները մեծ ազդեցություն ունին նրանց վերա։ Դուք ամենևին անհոգ եք ազգային լուսավորության համար, և ձեր կյանքը ընծայել եք ունայն և մենակյաց կրոնասիրության. ապա ժողովուրդը որքա՛ն անձնատուր պիտի լինի անշահ սնապաշտությունների. ի՞նչ օգուտ, հնդկական բրահմանները, պարսից դերվիշները ձեզանից ավելի ապաշխարհանք կամ ռիազաթ են կրում։ Եթե այդ բանը նրանց հոգուն շահ ունի, ձեզ ևս կլինի։ Բնա՛վ ոչ, մարդս ծնված է հասարակության համար, պարտական է որևիցե գործակատարությամբ արդյունաբեր լինել ընկերությանը, իբրև մասն յուր բոլորին։

Վարդապետը բարկացավ։

— Այս ի՞նչ դրույց է. մենք վանքե՞րը պահենք, թե ժողովրդյանը լուսավորություն տամք։ Տո, ախպար, մեր ժողովուրդը հազիվ թե անտանելի չարչարանքներով կկարողանա ապրուստ ճարել և իր գլուխը պահել. լուսավորությունը անոր հա՞ց կուտա, թե՞ հալավ։ Ասենք թե մեր ժողովրդն մինը գութանի մաճը ձեռքին թող տալով, մյուսն ալ խուրկիցն իջնելով խարազանի տեղ գրիչ վեր առան. մի տեսնեմք, հայոց դիվանխաներում գրագրությո՞ւն պիտի անեն, թե յուրյանց մեծ առևտրա-

կան հաշիվները պիտի գրեն Ու՛, մի թո՛ղ տար այդ օձու հեքիաթները[1]. թե ասված կլինես։ Որու ձեռքի մեջ գրիչ կտեսնեմ, անոր ճիտին մեջ մեկ փարա չիկա. ձեռ վեր կալ այդ սարսաղ խոսքերեն, քեզի համար պահիր. Հայոց ազգը թո՛ղ յուր հալին մնա. նա ձեզ նման մարդերու խրատներուն կարոտ չէ։

— Ճշմարիտ է, Քրիստոսը հարմարին խոսեց ձեր մասին. «Եթե աղն անհամ դառնա, ինչով համ պետք է լինի», դուք ինքներդ խավարի մեջ եք, ինչպես ժողովուրդը ինչ լուսավորություն պիտի ստանա ձեզանից. պատճառ, կույրը կույրին չէ կարող լինել առաջնորդ։ Ուրեմն լավն այն է, որ դուք այդ վանքերում մնաք, մինչև հայկական Պառնասից ծագե Հայոց համար լուսավորության արշալույսը։ Ձեզանից մեզ օգուտ չկա. թող Հայոց նորահաս մանկայքը յուրյանց սեփական ներգործականությամբ կենդանացնեն ազգի ուսումնականության մեռած հոգին։

— Այդ ո՞ւր ես ասում. Հայոց ազգը ի սկզբանե անտի ապերախտ է եղել դեպի յուր կրոնավորքը։ Կարդա Խորենացին և այլ պատմությունք, կտեսնես, քանի-քանի շնաշխարհիկ կրոնավորք մահ ընդունեցին ժողովրդեն, յուրյանց բարեգործության փոխարեն։ Դու ես այն օձերու ծնունդ ես, ավելորդ բան չէ քո նախատինքը կրոնավորաց ընդդեմ։

— Ապա ի՞նչ ասեմ, վարդապետ. Մշու դաշտի Նորշեն, Առինչ, Հաղանք կոչված գյուղերը որքա՞ն հեռավորություն ունին սուրբ Կարապետ, սուրբ Հովհաննու և սուրբ Գլակա վանքերից, որոնց մեջ բնակում են շատ վարդապետներ. մի՞թե ձեր անհոգությունից չէ, որ լատինադավան վարդապետները նույն մեջ բույն են դրել. կամ թե Խնուս գյուղը որքա՞ն հեռու է, ուր ամերիկացի միսիոնարը բարձր ամբիոնից քարոզ է կարդում։

— Ընկի՞ց է. չես գիտեր. որովհետև կաթոլիկը արծաթ ունի, կուտա, պրոտեստանտները արծաթ ունին, կուտան, կշարժեն. մենք արծաթ չունինք, որ տանք. ո՛վ կգա մեզ. արծաթն եկած տեղը, «Տերտերը պաշտըն կթուրքընա»։ Հոգին ու հավատը մարդու աչքին չեն երևար։

— Ամենևին այդպես չէ, որպես դու կարծում ես. թող վանքերն ձեզ լինին, որոնցից դուրս գալը այդչափ դժվարություն է պատճառում

---

[1] Վարդապետը միտք է բերում Պարսից ավանդիչների (ճոճիչների) գործը, որը յուրյանց ճոխությամբ, հրապարակավ թեթևամիտ ժողովուրդը խաբելու համար, զանազան աստղաբաշխական պատմություններ են ասում. որպեսզի ժողովրդյան ջերմեռանդությունը շարժեն և յուրյանց խաբեբա արհեստը շահեցնեն։ Այդ պատճառով հայոց մեջ սովորություն է ընկել, ամեն մի երկար և անհյութ խոսակցություն օձու հեքիաթ կոչել։

ձեզ։ Այդ վանքերի մեջ երբեք գիտնական վարդապետներ պակաս չեն. մի՞թե մեղք կլիներ վանքի մեջ մի փոքրիկ ուսումնարան հաստատելով հավաքել վիճակներից մի քանի մատաղ երեխայք, նորանց աստվածաբանական գիտությունների մեջ քաջ կրթել, հետո քահանա ձեռնադրելով արձակել գյուղի վիճակները։ Նորահաս գիտնական քահանայքը թող սկսեին ժողովրդին քարոզել, նոցա որդիքը մասնավոր ուսումների մեջ կրթել, եկեղեցական արարողությունքը խորհրդավոր կացուցանել ժողովրդի հոգու համար։ Այն ժամանակ և հավատացյալքը մին բան հասկանալով, կգիտենային յուրյանց կրոնի ազգությունը, արժանավորությունը։ Եվ պապականների լոկ խոսքով թե. «Դուք մոլորյալ եք, վա՜յ ձեր հոգուն, դուք արքայության ժառանգ լինելու չեք, դժոխքի բաժին կլինիք, ձեզ փրկություն չկա և այլն», չէին խաբվելու մերայինքը. բայց խղճալի ժողովրդից ի՞նչ իրավունքով պահանջենք, որ յուրյանց ազգային դավանության վերա հաստատ մնան, եթե նոքա ամենևին անտեղյակ են նորանից Ծնած օրից եկեղեցում մի քարոզի ձայն լսած չեն, գրի սևն ու սպիտակն չեն ճանաչում. Աստվածաշնչի ու Ավետարանքի պատմությունք յուրյանց պապից տատից են լսած առասպելախառն։ Ժողովրդի հոգևորական անուսումությունը մնացել է գյուղական անկիրթ քահանաների ձեռքում և սոքա յուրյանց պարտականությունք այդպես են հասկացել, որ միրոնություն և պատարագի, պսակի և թաղման կարգերը կատարելով, և յուրյանց պաշտոնավարձը ստանալով, կարծում էին, թե լցուցել են յուրյանց քահանայական խորհուրդը։ Ի՞նչ փույթ դոցա, ժողովուրդը թուրքացավ և պապադավան դարձավ. նոցա աջահամբույրը, նոցա ժամույցը պակաս չլինի, բավական է։

Այս միջոցին եկան, նստեցան մի քանի ուրիշ վարդապետներ, որք մի վայրկյան լուռ կենալուց հետո գոռացին չորս կողմից. «Տո՛ դա հերձվածող է, հո դա պապականա է, դորա խոսքերից շատ մոլորություններ երևում են։ Այս գիշեր միայն պատիվ քո այստեղ մնալը, առավոտուն գնա. Լուսավորիչը մեր օրինակն է, որ խստակրոն ճգնությամբ կյանքըն անցրուց Սեպուհ սարումը»։

— Երանի թե դուք սուրբ Լուսավորիչն ունենայիք ձեզ օրինակ. բայց մի լավ քննեցեք այն խնկելի ազամարդի և ձեր կյանքը. տեսեք, որևիցե համեմատություն կա՞ ձեր ու նորա մեջ. նա Հայաստանը լուսավորելուց հետո, մեհյանները քանդելուց հետո, Արիստակեսն յուր փոխարեն, ավելի քան չորս հարյուր երեսուն եպիսկոպոսներ ազգի հովվության համար ձեռնադրելուց հետո, երբ որ ունեցավ բոլոր իղձերն կատարած, Մովսեսի նման յուր անձը թաքցրեց։ Բայց. հավատացեք, որ Լու-

սավորչի ժամանակ յուրաքանչյուր նահանգում հազիվ թե գտնվում էր մի կռատուն. բայց այժմ համարյա ամեն ժողովրդականի սրտում պաշտվում է մի-մի Անահիտ։ Ապա այդ շնչով մեհյանները ե՞րբ քանդվելով պիտի դառնան Քրիստոսի համար սուրբ տաճարներ։

— Բավական է, քույրս մի՛ կարդա։ Քո ասածները մոլորություն են։ Քեզ համախոհ շատ մարդիկ այժմ գրիչ վեր առած բամբասում են մեզ, մանավանդ այն Մոսկվայի և Պետերբուրգի պարոնները, որք վանք ու վանականք թողով, բռներ են վարժատան պոչը ու կերթան. աստված անոնց կամքով չըլլե. անոնց միտքը մեզ հայտնի է։

— Հայր սուրբ ջան, ծառա եմ սուրբ աջիդ. կարելի է, ես մոլորյալ լինիմ. բայց դուք, իբրև օրենսուսույց վարդապետ, պարտական եք իմ մոլորությունս ուղղելու հեզ խրատաքանությամբ, և ո՛չ բարկությամբ։ Ես ազգի ցավով սիրտս այրված խորովված պատանի եմ։ Թողեցի Ատրպատականը, եկա տեսնելու Հայաստանը, գուցե փոքրիշատե մխիթարվիմ։ Ընդհակառակն, սկսյալ այն րոպեից, մինչև ոտքս կոխեցի հայրենի քաղցր հողի վերա, ամեն մի քայլափոխում սիրտս լցվում է նորանոր ցավերով, ամեն մի քայլափոխում աչքիս դեմ բացվում են ողբալի տեսարաններ. մի կողմից փառավոր քաղաքների, վանքերի ավերակները, մյուս կողմից տեսնելով այդ խղճալի համազգիքս, խելքս իմ մեջ մնում չէ. աչքիս առջև մթնում է։ Այն ողորմելի ժողովուրդը, որ մին ժամանակ ունեցել է սեփական փառք, տերություն, քաջություն, այժմ մթին խավարի մեջ նստած է բոլորից զուրկ։ Ապա ի՞նչ անեմ, հա՛յր սուրբ. դու մեղադրում ես այժմյան գիտնականներին, ասում ես, նոքա յուրյանց հոգևորականների պատիվը չեն ճանաչում, ուրիշ ազգերի առջև խայտառակում են։ Ապա ի՞նչ պետք է անել. մինչև այժմ ազգի պակասությունները քողարկելով, բանն այստեղ է հասել. բարբարոս ազգերը լուսավորություն ստացան. իսկ հայը (թո՛ղ նորանց, որ շատ աշխարհներում ցրված են). հայը, հայրենիքի սրտի մեջ, Հայաստանի ծոցումը խորին տգիտությամբ պաշարված. թո՛ղ մենք ամենքին չխոսենք, թո՛ղ հայ գիտնականը առժամանակ լռե. մի՞թե ձեր պատվին ինքնըստինքյան մեծ խայտառակություն չէ՛, որ ամերիկացի քարոզիչը, հռոմեական եկեղեցու քահանան հեռավոր աշխարհներից գալով, Հայաստանի սրտի մեջ բույն են դնում, յուրյանց համար նոր ժողովուրդ են ձեռք բերում. իսկ դուք ձեր սեփական հոտը չկարողանաք պահպանել. անփույթ առանձնանալով վանքի խցերի մեջ, անօգուտ կյանք վարեք։ Բայց, որպես ձեր անհոգությունը տեսնում եմ, այդպես ես չէ մնալու, ըստ որում փոքր կայծերը պատճառում են մեծամեծ հրդեհներ։ Շատ կար-

ծիք կա. նույն այդ վանքը, որ միջնադարյան ասպետների նման համարում եք ձեզ սեփական բերդ, մի ժամանակ դարա մեջ ես բարձրանա այն ազգի ամբոխը, որին դուք հերձվածող և մոլորյալ եք համարում:

— Զարմանալի՜ է բան. դուք միշտ կպահանջեք, լուսավորություն լինի, լուսավորություն լինի, ուսկի՞ց կլինի լուսավորությունը, երբ ոչ տերության գանձարանեն: Բայց մենք ո՛չ թագավորություն ունինք, և ո՛չ գանձ. հազիվհազ ազատ մնացեր ենք վանքերու մեջ, մեր սև օրը կուլանք: Հա՛, հա՛, քո Միրտիչ վարդապետն ալ, հողը անոր գլխին, ան ապերախտը թողավ անապատը, իր կրթված ու սնված սուրբ տեղը. ուզեց ապարան ու դպրոց հաստատել, լուսավորություն տարածել. հիմա ան է, որ չարվաղարի նման տարին մի անգամ կվազե դեպի Պոլիս, ամիրաներից օգնություն խնդրելու, մեծ պարտքերու տակ է ընկած. անխելք գործ, անիմաստ բան[1]: Ա՜յ թշվառական, ո՞վ քեզի կստիպեր քո չափեն դուրս շալակ վեր առնել, ուսդ կտրվի, տակը մնաս: Վանքերի խորշերում մի կտոր հաց չկար, որ ուտեիր, քո աղոթքից, ժամ ու պատարագից լինեիր: Այդ գործերեդ ի՞նչ կթափվի, որ դու ինչ հավաքես: Ազգը կլուսավորվի՛, թո՛ղ մի քիչ ալ խավարի ու անգունդը գնա՛, քեզ ինչ փույթ: Բոլոր Վասպուրականը քեզ թշնամի ես արեր, չգիտես, ի՞նչ է շինածդ: Վարագավանը ապարան և դպրոց է հաստատեր. թո՛ւհ, կործանվի ապարանին ալ, դպրոցն ալ. հենց մեր ուղղական, սեռական, տրա-

[1] Միրտիչ վարդապետ Խրիմյանը արդեն ծանոթ է ազգին, Ավետյաց երկրի և Արարատյան հրավիրակներով, այն 1845 թվին Պոլսում հրատարակված ամսատետրակներով: Այս հայրենասեր հոգին եռանդոտ ազգասիրությամբ վառված 1857 թվականին Վարագա վանքում Վանա քաղաքին մոտավոր, հաստատեց մի ապարան ու դպրոց, որ նույնպես ծանոթ է Արծվի Վասպուրականի ամսական տետրակներից: Անցյալ տարի ճանապարհորդելով այդ կողմերում և հանդիպելով սրբակրոն հորը, ոչ մի անձնում չէի տեսած ազգասիրական հոգին այնպես կենդանի, որպես այդ արժանապատիվ կրոնավորի մեջ: Մի կողմից՝ թշնամիների ահագին բազմությունը, մյուս կողմից՝ արծաթի պակասությունը չէին կարողացել հատանել նորա հույսը, շիջուցանել նորա ազգասիրության էռանդը. եղձալին ամենայն հալածանք, ամենայն թշնամություն, մինչև անգամ մահ հանձն էր առած, յուր իղձը կատար հասուցանելու համար. այնտեղ միտքս եկավ մի հայրենասերի ազդու երգ.

— Հուրըն սիրո իմոյս ազգի,
Միշտ ի խարոյկ սրտիս վառի,
Ջուրբ արտասվաց ո՞չ շիջանի.
Օգնյա՛, Հիսո՛ւս, Փրկիչ բարի

կան չգիտեմք, մեզ չօրհնեցին է՞հ, այդանք փուշ բաներ են. մեր Մեսրոպ ու Մովսեսն ալ քերականություն գիտեին. բայց սոված ծարավ ման կուգային։ Կտեսնենք, թե Արծվի վերջն ալ. ինչպես կինչանին նորան յուր ճանկերուն հետ դեպի Բյուզանդիոն։ Հո Հայոց ազգը, մեր բոլոր սրբերեն անիծյալ ազգը, վերջը պիտի կործանվի. թե քարոզես, թե չքարոզես։ Մեռած հիվանդի բերանը միշտ դարման լցրու, տեսնենք, կկենդանանա՞։

Տեսանելով արդեն, որ վանահայրը, բարկության բոցով առավել տաքացած, քաղաքավարության դիմակը վայր ձգեց յուր վերայից և անվարագույր երեցնում էր յուր մոլար դատողությունների պատկերը, որով ես հեշտությամբ կարող էի ծանոթանալ մեր հնադարյա կրոնավորի հոգու հետ. այնուհետև սկսում եմ համոզական խոսքերով վարդապետի բարկության հրդեհի վերա ջուր ցանելով խոսակցության թելը երկարացնել։ Թո՛ղ չձանձրանա մեր կարդացողը. այս խոսակցության մեջ տիրում է մի ոճական երկարաբանություն. ինչ պետք է արած։ Եվրոպացին ո՛վ է, ճանաչում Աղթամարա վանքումը. մեր վարդապետի գլուխը եթե դրով ծակելու լինիս, այնուամենայնիվ առածները նորա գլուխը չեն մտանելու... ո՞ւր մնաց եվրոպացի համբերատարությունը։

— Հա՛յր սուրբ ջան. ես շատ եմ ցավում, որ ձեր միտքը մոլորված է այդպիսի վտանգավոր գաղափարներով, այդպիսի աղավաղված գաղափարներով, որք խորին ապավորություն ունին, որպես քո երևակայությանդ մեջ, նույնպես և բոլոր քո միաբանակից եղբայրների։ Հայոց ազգը ամենևին անիծված չէ։ Հայոց ազգը ամենևին կործանման համար նախատահմանված չէ։ Նա մի պատվական ազգ է։ Նա յուր հետին ռամկության մեջ ունի մի ջերմեռանդ հավատ դեպի Փրկիչը. ունի շատ մաքուր բարք ու վարք։ Մի այդպիսի ազգ, մի այդպիսի քաջ, խելոք ազգ ինչպե՞ս բանալու չէ մաքի փակված պատուհանները, ընդունելու լուսավորության շողը։ Նա պաշտվածի նման ունի սաստիկ ձգտողություն դեպի ուսման մագնիսը։ Հա՛յր սուրբ, քո հոգուն մատա՜ղ, մի՛ նախատիր Հայոց ազգը, քո բերանը կրակ է. դա մին ազնիվ, բնատիր ազգ է։ Ա՜խ. հոգիս դուրս գա նորա համար։ Նա, չունենալով յուր համար առաջնորդ, աչքերի լույսը պակասած, կարեմ ասել, բոլորովին կույր, չէ շեղվում յուր ճանապարհից. գնում է, այն նեղ ու անձուկ շավղով, որ ցույց տվեց նորան սուրբ Գրիգորիսը։ Մի՞թե անպիտան է ակին, մինչև հողի գըրկումն է. թող մաքրեն նորան քիմիան, այն ժամանակ կտեսանես նորա վառվառուն ճաճանչները, այլև դու ինչո՞ւ այդպես կողմնակալորապես դա-

սում ես Արծվի ջանքը, նա արծիվ է. որտանս աչքերովը Վարագա բարձրավանդակից տեսնում է յուր ազգօգուտ ձեռնարկությունների շատ հեռավոր սահմանները: Նա առաջինն է, որ կամենում է զարթեցնել Վասպուրականի ժողովուրդը մահահրավեր թմրությունից: Ինչո՞ւ անիծում ես նորա դպրոց ու տպարանը. այդ երկու գլխավոր գործերը, որ այնքան ձեռնտու են ազգային լուսավորության բանին: Նա արդեն կրում է յուր մեջ այն բարձր, վսեմ միտքը, որով հոգեվորված է յուրաքանչյուր կրթյալ ազգասեր հայերի մեջ: Նորա խորհուրդները տարբեր են ձերայիններից: Նորա գործերի վախճանը շահավետ է. երանի թե մեր բոլոր կրոնավորք ունենային այն ազնիվ ոգին, որպես Մկրտիչ հայր սուրբը: Ի՞նչ երջանկություն կլիներ:

— Սորանք իմ գլուխս չեն մտներ... Մկրտիչ վարդապետն, մեք լավ կճանաչեմք նորան տիրացության ժամանակից. մին փարա չուներ գլուխը գիրծել տալու, ի՞նչ ելավ, հա էն շեկ (բարձրահասակ) Մկոն էլ: Խավինա չդառավ. ինչո՞վ պիտի կառավարե տպարանը ու վարժարանը: Ասում եմ, ափսոս է, մի քանի տարի կյանք ունի, թող չփչացնե խենթ ու խելառ գործերու մեջ. թող նա ես տանձնանա յուր վանքումը, խաղաղ ու հանգիստ նստե, ազգի բարիքն վայելե ու անոնց համար աղոթք ընե: Վատ չեմ ըսեր, սիրտս նորա համար կցավի. եթե ոչ, նա թագավոր դառնա, իմ վանքս չէ կարող ձեռքես դուրս հանել:

Ես ինչ որ ասում էի, հնարք չէր լինում, վարդապետը հենց յուր ասածն էր փչում: Կարծեմ խոսքերս նորա հնացած և քարացած մտքի վերա չէին ներգործում: Ա՜խ, երկար ժամանակ պետք է (արդյոք կհաջողվի՞) մինչև փափկանա այդ քարացած սիրտը և ընդունե եվրոպական կրթության տպավորությունները:

— Եթե դուք ազգասիրություն ունենայիք, Մկրտիչ վարդապետը ինչո՞ւ պիտի ամեն մի կարոտության համար Պոլիս գնար. եթե դուք սեր ունենայիք, այն վեհ Արծվին շատ ամուր թև ու թիկունք կդառնայք. նա ոչ մի բանում կարոտություն ունենալու չէր: Բայց, ի՞նչ օգուտ, որ անձնասիրությունը թույլ չէ տալիս: Գիտե՞ք, Հայաստանի վանքերի գլխավորները կարող են ունենալ մի-մի փառավոր վարժատուններ և տպարաններ: Գիտե՞ք, որքան արդյունք ունին այդ վանքերը. մեծ եկամուտներ ունին, եթե օրինավոր վերակացությամբ և տնտեսությամբ հավաքվին մի առանձին գանձարանում, ազգի օգտի համար գործ դրվին: Օրինակի համար, Մշու սուրբ Կարապետի և Գլակա վանքերը մի՞թե կարող չեն մի փառավոր վարժարան ունենալ, ուր կարող էին դաստիարակվիլ և կրթվիլ բոլոր Մշու հայոցի ժողովուրդը: Նոցա արդյունքը էջմիածնա

2*

հավասար է, բայց ի՞նչ օգուտ, բոլորը վարդապետների ագահ ախորժակին զոհ է լինում: Նաև այդ Աղթամարը, որ ունի երկու հարյուր գյուղից ավելի վիճակավոր ժողովուրդ, եթե ամեն մի գյուղից մի աշակերտ ընտրվի, վանքի մեջ երկու հարյուր աշակերտներից կազմված ընտիր վարժարան կձևանա: Այլև Հայաստանը Եվրոպա չէ, որ մի ուսանողը տարեկան երեք հարյուր, կամ ավելի ևս ոսկի ծախս ունենա ընելու համալսարան, բան ուսանելու: Այստեղ աշակերտի համար ավելի ծախս հարկավոր չէ. հասարակ շալեղեն հագուստները բավական են. և ուտելիքը վանքի խոհարանի պարզ կերակուրներից, որ բոլորը կարող են հատուցանել վանքի բազմաթիվ գոմեշների, կովերի և ոչխարների հոտերը. և հացը արդեն գալիս է վանքի սեփական անդաստաններից, որոնք, բացի վանքի գութանից, մշակվում են և բարեպաշտ ժողովրդի օգնությամբ:

— Տես, մինչ ո՞րտեղ վանքերի գաղտնիքը հասկացեր են. ասորմե առաջ աշխարհականը ի՞նչ գիտեր. մեզի սուրբ տեղ կպաշտեր: Աշխարհեն մի օգուտ չունինք, ասոնք կամին կոր մեր վանքերի ապրուստն ալ մեր ձեռքեն առնուլ: Ծո՞, աշակերտն կուտե, զահրըմար (օձի թույն) ուտե. աշակերտը ի՞նչ գործ ունի վանքի մեջ. մեղրաճանճի բույն կհավաքեմք կոր մեր գլխին. քի՞չ ցավ ունինք. անոնք ալ մի կողմեն ավելնան: Էգուց ու մյուս օր մեկ սև վեղար ալ կձգեն գլուխներին, մեկ ծանր բեռ ալ անոնք կլինին մեզի վերա. քի՞չ են այդ կլլըմիշները (կատարվածքը):

— Վարդապետ, դուք ամենևին ասածներիս ուշադրություն չեք դանում. երևում է, իմ խոսքերը քամու նման ձեր ականջների մոտից անց են կենում, ահա այդ է, այդ անձնական շահախնդրությունն է, որ ձեզ գիտնավոր անձների աչքից ձգել է. դուք ձեր անձին երջանկությունը և ձեր փառքը չեք փնտրում ազգի բախտավորության ու փառքի հետ: Ահա դրանով իրավունք են տալիս ազգի գիտնականները ձեզ չսիրել:

— Է՜հ. չարը տանե քո գիտնականքը: Ծո, անխելքներ. Այսմավուրքը, ծառա եմ նորա սուրբ զորությանը (երեսն խաչ է հանում), Այսմավուրքը կարդացեք, որ բան հասկնաք, թե հոգիներդ շահ լինի և թե մարմիններուդ: Մարդ չհասկնար, թե ի՞նչ կլլըուցեն այդ շատախոս ռեհպակները, իրենց նոր, օձի նման ոլորուն լեզվովն: Սատանան ալ կարող չէ հասկնալ: Ալ ի՞նչ մնաց, որ մեր գլխուն չբերիք. գնացեք, թե աստված կսիրեք, Մեսրոպն ու Խորենացին, և Լամբրոնացին իրենց գերեզմաններեն դուրս հանեք, տեսնեմ կհասկնան սիրա և մինա, սիմետրիա, անատոմիա, Ֆիզիոլոգիա բառերու նշանակությունը: Ծո, հիմարներ, անոնք կուրացեր եք, որ ձեր հոր խաչն ալ չեք ճանչնար: Ի՞նչ եղավ,

որ Մոսկվա, Փարիզ, Վիեննա կընակվիք։ Ձեր պապի լեզուն գրեք, որ մարդ հասկընա. ի՞նչ ադպես կթեքթեքեք ձեր լեզուն նորանոր բառերով։ Ծո, Նազարյանց, ի՞նչ ըսեմ քեզի. դու միշտ Մոսկվայեն կըսաս, թե աշխարհաբառ պիտի գրել ու մտածել,որ ամեն մարդ հասկնա։ Տեսնենք քո աշխարհաբարդ է խորթին, թե Նարեկը, կամ Լամբրոնացիի ճառերը. բավ լեզի, թե ես մեկ բան ալ կհասկնամ։ Խեղճ ռամիկը, որու համար դուն կգրես, ի՞նչ պիտի հասկնա։ Հայք ամեն երկիր ցրված են, նաև ամեն մեկ նահանգի բնակիչք կխոսին առանձին աշխարհաբառ լեզվով, որոնց մինը մյուսին անհասկանալի է։ Ուրեմն աշխարհի երեսին քանի երկիրներու մեջ հայք կգտնվին, այնքան ալ լեզուներու տարբերություն։ Դուն որ կուզես քու աշխարհաբարը հասարակաց լեզու ընել, որու համար մեծ դժվարություն կան, լավն ան չէ՞, գրոց լեզուն, որն որ շատերուն հասկանալի է, հասարակաց ընել։

— Հայր սուրբ, դու ծանո՞թ ես Եվրոպայի այժմյան հեղինակների հետ, և ունի՞ս տեղեկություն նոցա գործերին, նոցա մտածություններին. ստանո՞ւմ եք որևիցե նորանից գրվածք, օրագիրք, ամսատետրակներ։

— Եթե վանքի բոլոր սենյակներու մեջ ալ փնտրված ըլլան նե այդ անոնցմեն գրվածները, ես իմ Նարեկն ու Սաղմոսը չեմ թող տար և իմ ժամանակ չեմ կորսնցներ անոնց վրա։ Բայց համարյա թե միշտ պատահելուն պես թափառական աղամարդեր, որոնք կուգան կերթան, քեզի պես նույն սազերը կչալեն մեր ականջներուն։ Անոնցմե լսած եմ ու սորված այդ անունները։

— Այդպե՞ս. ուրեմն, պատահում են երբեմն ուսումնական անձինք հեռավոր աշխարհներից. հայրենիքը տեսնելու համար դուրս գալիս են, ներկայանում են վանքերի վարդապետներին։ Հայտնի բան է, նոցա խոսակցությունը ուսումնական նյութերի վերա կլինի. պատճառ ազգային առաջադիմության վերա խոսելն ու գրելը այժմուս ազգային գիտնականների մեծ մասի համար դարձել է մի գլխավոր նյութ։ Եվ ամեն մի կրթյալ անձն սուրբ պարտականություն է համարում յուր վերա գրել ու մտածել և հրատարակել յուր կարծիքը համազգիների լուսավորության պատկանելի խնդիրների վերա։

— Անօգուտ ջանք. այդպես կարելի չէ սահմանել այդ գործը։ Հայոց ազգի մեջ ով որ սկսավ փոքր-ինչ խնամք տանել նորա հառաջադիմության, շուտով արդեն կընդունի ապերախտ հասարակության ձեռքեն մահադեղի բաժակը։ Կարդա՛ Հայոց պատմության թերթերը, անանկ կտեսնես այն հոյակապ անձանց ցավալի վախճանը։

— Հայր սուրբ. այդ հայտնի բան է. այն մեծամեծ արդյունակա-

տարությունքը, որք ազգային հաստատության համար էական սյուներ են, պահանջում են հողաբարձումներից և շատ ու ծանր զրկանք, զոհաբերություն, չարչարանք, երբեմն, այո՛, և մահ. որպես ասա՛ նշած են այն մեծամեծ նահատակությունքը, պատերազմները, այն պատվական անձերի կորուստը։ Ապա դուք ի՞նչ եք համարում քաղաքական առաքինության տված բանը։ Դուք միայն հայում եք դեպի մեր ազգը։ Կարդացեք հունաց, հռովմայեցոց և նոր եվրոպական ազգերի պատմության թերթերը, նույն մեջ, իբրև պարզ հայելու մեջ, կտեսնեք քաղաքական առաքինության փայլուն վառատակները։ Իսկ դա անպիտան մարդու և մեռած սրտի գործ է, որ մինը յուր անձնական խաղաղությունը չխանգակելու համար հասարակաց օգտին անհոգ լինի։

— Օրհնած, չեմ հասկընար՝ ինչ կխոսիս. դու դեռ երիտասարդ ես. խելքդ խախուտ է. չես հասկցեր, թե աշխարհս ինչ բան է։ Մարդը քանի խելք ունի, թող կենաց վերջին օրերը լա. ի՞նչ գործ ունի նա ընդհանուր ազգին հետ. նորա ստեղծողը ամեն մեկի ալ լավ գիտե հոգալ նորա պետքը։ Քանի ծեր չես, ձեռք ու ոտքդ զորեղ են, աշխատիր վերջին օրերուդ համար ապրուստ ճարելու. սոված կմեռնիս։ Աշխարհ է. շատ ապրել, ուշ մեռնել կա։ Այն ժամանակ որ ծերացար, աչքի լույսից ընկար, ալ ո՞վ է քու պատիվ պիտցողը. կամ եթե աղքատության մեջ դուն մնար, ո՞վ պիտի հաց տա քու որբիկներուն. քու ազգը պատվել գիտե՞ մի երախտավոր մարդու ազգասիրական, ինչպես կըսես, արդյունակատարությունքը։ Է՜հ. փողի սիրային զորության ըլլամ. և հոգվո է, և մարմնու Վանա Գաբրիել առաջնորդը մեռավ, եթե այնչափ արծաթ թողած չըլլար, ինչպես հանդիսով նորան կթաղեի՞ն մի։

— Ահա՛, այդ գծնդական նախկան միտքն է, որ պատճառ է տալիս ձեզ երկրավոր հարստությունք գերի դառնալ. երբ մի վանք, կամ մի հոգևոր վիճակ ձեռք եք բերում, իսկույն աշխատում եք զանազան խաբեբա ճանապարհներով արծաթ հավաքել։ Այն է, որ հայոց վարդապետը մեռանելուց հետո մի երևելի վաճառականից ավել մեծ արծաթ է թողնում (երանի թե շատերի արծաթը յուրյանց մահից առաջ հողի մեջ թաղված չլինար)։ Երանելի, դու աշխատիր ազգի համար օգտավետ գործեր հառաջացնել. տեսանենք, հայը քո պատիվը կմոռանա՞։ Նա ո՛չ թե քո ծերությունը կպահպանե, այլև մեռանելուցդ հետո փոշի դարձած նըշխարքդ պաշտելով՝ անմահ կպահե քո հիշատակը։ (**) Նա գերեզմանիդ վերա սուրբ տաճար կանգնելով՝ զոհեր կմատուցանե ոսկերիդ վերա (**)։

— Ծո՛, քանի կենդանի եմ, հե՛շտ ապրիմ. մեռնելուց հետո մարմինս թող ինչ կամի լինի. դորա համար ի՞նչ հոգամ . . . . . .

Թուրքն անօրէն է, խոսքն՝ օրինավոր. «Ձիրաանդի ֆուք էյլամա» (մի հաջող միջոց ձեռքից անց մի թող), ինչպես կասենեն կոր, այդ նորահաս իմաստակները, ժամանակ կլինի, տասն պատարագ ընեն, մեկ փարա չեն տար։ Սուրբ Մեսրոպը միտք բերեք. սոված ման կուգար։ Դա ան ազգն է, Լուսավորիչ Սեպուհ չգիտար նե, Տրդատի հետ ի միասին կխմեին մահացեղը։ Միջքներուս իլիկը կտրեցավ ազ ազգի համար ծունր գնելով, աղոթք ընելով, դեռ շնորհակալ չեն. կուզեն վանքերն ալ մեր ձեռքեն հանել։ Խեղճ ճգնավորը՝ վանքն չեն. սարերու մագարեքն ալ անոնց արժան չեն համարեր, փա՜ռք քեզի, տե՛ր, փա՜ռք քեզի, վերջներս ո՞րտե՞ղ հասավ։

— Օրենքը արծաթով տալ սիմոնականություն է. որպես ձրի ստացաք, նույնպես ձրի պիտի բաշխեք. շատ ժամանակ է տեսնում եմ, նաև մեր երկրում հարսի ու փեսայի մեջ չհասություն է դուրս բերվում։ Բայց զարմանալի է. երբ մանեթի կանոնները քննում են, իսկույն չհասությունը վերանում է. մանեթն առավել օրինավոր գործ է կատարում, քան կանոնագիրքը։ Մի երեխա է ծնվում, մի մարդ է մեռնում, պիտի այնքան ժամանակ անկնունք և անթաղ մնան, մինչև հատուցանեն աթոռահարկը, քահանայի ժամուցը, երեցփոխանի տուրքը, և այլն։ Կամ թե Հայաստանու եկեղեցու ավանդությունը հետևելով, երբ մի նորահաս տիրացու կամք ունի ընդունելու քահանայական լուծը, ձեռնադրող եպիսկոպոսը քննորեն հարցուփորձ պիտի անենք. առաջին, նորա գիտության վերա. երկրորդ, նորա անարատության վերա, երրորդ, թե ունի՞ վկայություն ժողովրդի բերանից յուր առաքինի բարք ու վարքի և կրոնի սրբության մասին։ Սորա հակառակ, եպիսկոպոսի առաջին հարցափորձը լինում է՝ որքան արծաթ պիտի տար։ «Այսքան, հայր սուրբ». «փառք է, ո՛րդի. հավելցրեք»։ Այս է ահա պատճառը, որ ազգի մեջ գտնվում են այնպիսի քահանայք, որք կարգավոր գրել, հայր մեր ասել չեն իմանում։ Իհարկե, մի բան, որ արծաթով ստացվի, նորանում ևս դժվարություն կա։ Ըստ մեծի մասին, այն մարդիկը, որք աշխարհական կյանքի մեջ չեն կարողանում ապրուստ ճարել, թե փոքր-ինչ սեր ավետակից լեզվին, քահանայությունը մի առանձին ապրուստի դուռն համարելով, մտանում են այդ ծանր լծի տակ։

Հայր սուրբը կրկին բարկացավ։

— Անիծվի՛ այդպիսի ժողովուրդը, մի՞թե դա Թուրքեն ալ վատթար է, որ յուր մոլլաներուն, սեիդներուն տալիս է խումսը (հինգերորդ մասը գույքի) և զաքիաթը (տասանորդը գույքի որպես կրոնական տուրք)։ Դա

նահուպին ալ վատ է, որ յուր ռաբբիններուն, խախամներուն տալիս է ֆիթրան. ապա մեք ձեզի հետ ինչպե՞ս վարվիմք, որ մեզնից շնորհակալ ըլլաք։ Կըսեք, մեկ ղուրուշ չտամք. հոգիներդ Թող դուս գա, և աղոթք ըրեք, և եկեղեցական կարգերը կատարեցեք, և ազգի որդիքը կրթեցեք. ո՞հ, այդ ինչ բան է, որ մեր գլխին կբերեք. մեզ բամբասանքի տակ եք ձգեր։ Աստված ձեր դատաստանն ընե. ալ ի՞նչ ըսեմ. խղճմտանք չունիք, հույններնիդ կտրվեր է, ոչինչ բանի չեք հավատար, ո՛չ ժամը գիտեք, ո՛չ պատարագը, ո՛չ գիրքը։ Լոկ բռներ եք վարժատան ու ապարանի պոչը ու կերթաք։ Ո՞հ, բերանս բաց կընես. կուզես ինչ որ սրտիս մեջ կա, ըսեմ։ Անցյալ տարիները Թիֆլիզու Երևանու, Ղարաբաղու կողմերը ժողովարարության գնացեր էի, անտեղ տեսա մի քանի Ռուսաստանում կրթված հայեր։ Ա՞հ. սատանան տանու անպիտան հայը. ո՛չ լեզու գիտեն, ո՛չ պահքը, ո՛չ օրենքը. միայն կոկած ու սրած պալեհները (շլյապայի նման, Հայաստանի խեցեղեն անոթ) գլուխներին թեք դրած, ուռած-ուռած ման կուգան. ո՛չ իրենց հոր պատիվը գիտեն, ո՛չ կարգավորին։ Կարեմ ասել, կամշնամ ասելու, թե մեր հայ եմք, մի խոսքով, անոնցմե քաղաքավարություն չտեսա։ Աստված հաստատ պահե մեր ժողովուրդը։ Ինչ վատ բաներ կան, ձեզմե կգոյանան։ Մեր ժողովուրդը սրբի պես կպաշտե մեզ. քիչ կմնա, մեր ոտքերնիս լվանա, ջուրը խմե։ Տուներնին որ կերթաս, փարվանայի պես գլուխներուս վերա պտտտ կուգան. կըսեն, թե անոնց համար լույս եմք դարձած։ Սեր է, կարագ է, մածուն է, մեղր է, սեղան կբերեն. քիչ կմնա, որ իրենց հոգիներնին հանեն, մեզի տան։ Աստված իրենց կարողություն տա. ալ մի խեյրի բարաքաթ ըսես, անոնց մեջ կգտնվի. ձեզի մեջ ի՞նչ կա. սատկած էշ կինտրեք, որ նալերնին հանեք։

— Հայտնի բան է, օտար ազգերի վարժատներում կրթված ու դաստիարակված անասունի նման կլինի։ Մեր աշխատությունը էս այն է, որ ազգը սեփական վարժատուն ունենա, ազգի որդիքը կրթվին, դաստիարակվին հայկական հոգով, լինին կատարյալ հայ։ Մանուկների սիրտը կակուղ մոմի նման, ինչ կնիք դարցես նրա վերա, այն էս կընդունե և կպատկերացնե յուր մեջ։ Ոչինչ այնքան բնական չէ, ինչպես այս։ Ամենայն հայ, թեև անդամ հայկական հասարակության, յուր կարողության չափ պարտական է խնամք տանել ազգային մարմնի շինությանը։ Կարգավորք քահանայք, որպես կրոնի առաջնորդ և սպասավորք, էս առավել պարտական են հորդորել, քաջալերել, քարոզել խոսքով ու օրինակով։ Հայրենիքը, ազգը պահանջում է հոգևորին և աշխարհականին միանգամայն։ Գիտես, յուրաքանչյուր տարի քանի-քանի անձինք մեր աշ-

գիր հողով ստանում են, հեռանում են և պիտի հեռանան։ Ըստ որում հայոց մանուկների համար մասնավոր դպրոցներ հազվագյուտ են։ Կրոնի ուսումը մանկական հասակից նոցա սրտի մեջ չէ արմատացած։ Երբ որ այլազգի դպրոցներում դաստիարակվում են, իհարկե, իհարկե, ասում եմ, պիտի այլազգի հոգի և սիրտ ստանան, ավելի սիրեն օտարին, քան թե յուրյանցը, որ ողորմելիքը երբեք տեսած չեն և չեն տեսանում մի պայծառ կերպարանքի տակ։ Չափահասների համար քարոզությունը մեր եկեղեցիներում սովորություն չէ, որ գոնե հայոց քրիստոնյան հասակավոր տարիներում յուր կրոնից մի բան լսե։ Եկեղեցական ընթերցվածներից, որ բոլորը գրոց լեզվով են, ռամիկ ժողովուրդը մի բան չէ հասկանում, և այդ ռամիկը համեմատելով գրագետներին այնպես է, որպես 2:1000. ուրեմն նոցա համար են Ավետարանը կարդացած, և թե Մուհամմեդի Ղուրանը։ Երկուսից էլ մի բան չէ հասկանում ժողովուրդը։ Բայց սորա ներհակ, երբ ճիզվիտը յուր աղոթագիրքը կամ ամերիկացի քարոզիչը յուր Աստվածաշունչը վեր առած, մտնում են մի գյուղացի աղքատի խըրճիթ, նորա կողմը ժողոված մանուկ ու չափահաս մարդիկ, կին և աղջիկ, և սկսում են յուրյանց պարզ, հեշտին ռամկին հասկանալի լեզվով աղոթել նոցա հետ միասին կամ պատմել նոցա տիրոջ պատվիրանները, Հիսուսի խոսքերը. այն ժամանակ յոթանասուն տարիքով ծերունին էլ զարմացած, երկյուղած զգացմունքով լցված, ուշադրությամբ լսում է, հիանում է և հոգոց հանելով ասում է. «Մեղա քեզ, տեր, մեղա, ո՜հ. Հենց իզուր տեղը մորուքներս սպիտակացավ, անխելք ծնվանք, անխելք մեծացանք և անխելք պիտի մեռանինք։ Ա՜հ, մեր հոգու ճարն ինչպե՞ս պիտի լինի։ Այս ի՞նչ է ասում աղոթագիրքը, ի՞նչ է ասում Ավետարանը։ Ինչո՞ւ մեր քահանայքը այդպիսի խոսքեր մեզ չեն պատմած։ Վա՜յ, մեզ կորչինք։ Վարդապետներն էլ մեզ իմաց չեն արել։ Կարելի է մեր գըրքերի ու Ավետարանի մեջ դուքս գրված չեն։ Նոր բաներ ենք լսում. վա՜յ մեզ ու վա՜յ մեր հոգուն»։

— Ե՛կ դու, հա՛յր սուրբ, որքան խելք ունիս, բանեցրու, որքան զորեղ փաստեր ունիս, գործ դիր. միայն հասկացրու այն ալևորին, թե բոլոր ազգերի Ավետարանը մին է, զանազանությունք չկան, բայց նորա գլխում բան մտցնել կարելի չէ, նա մի լավ խոսքով քեզ կկապե. «Ապա եթե Ավետարանը մին է, ուրեմն այդ խոսքերը մեր Ավետարանում էլ պիտի գրված լինեին. ապա ինչո՞ւ համար մինչև այժմ մեր սուրբ հայրերից լսած չենք»։ Թեպետ Ավետարանը ամեն շաբաթ կիրակե մեր եկեղեցում կարդացվում է, և մեր ժամասեր ալևորը ամեն օր լսում է նորա ձայնը, բայց ինչ օգուտ, որ ավելի սառույց ուտելու նման ատամները

կրճատում են, փորը մի սննդական բան չէ գնում: Ահա այդ է պատճառը, որ ձեր ժողովրդի հավատը մնացած է:

— Ի՞նչ կխոսիս, ի՞նչ մեր ժողովրդի հավատը մնացած. այն սուրբ հավատը, այն, Քրիստոսի արյամբ, Լուսավորչի նահատակությամբ գնված հավատը մեռա՞ծ. անտանելի՞ հերետիկոսություն. խլեցեք, ականջներ, ասիկա չլսեմ:

— Մի բարկանար, հայր սուրբ. մարդու բարկությունը, ինչպես գրած կա, չէ գործում աստուծո արդարությունը: Թող առժամանակ լռեն մեր նախնիքի մեծամարմին մասունքը. մեք սկսենք խոսել նորանից, որպես տեսանում ենք հավատը Ավետարանի մեջ և ձեր ժողովրդի սրտի մեջ:

— Հայոց կրոնը, որ յուր սուրբ հիմնադրեն մինչև ցայժմ հաստատ կմնա հայկյան որդիներու մեջ, հալածող թշնամիներու դեմ, յուր անհաղթելի ճակատը անդրդվելի պահելով, մի այդպիսի կրոն կարելի՞ է մեռած համարել:

— Հայր սուրբ, իմ խոսքս հայոց ընդհանուր կրոնի վերա չէր. ես նորա հետ գործ չունիմ. իմ խոսքս ձեր մասնավոր ժողովրդի կրոնի այժմյան վիճակի վերա է: Պատճառ, երբ որ քրիստոնեությունը քննում եմ յուր բուն աղբյուրի, Ավետարանի մեջ և ցարձյալ նայում ես տեսանելու նորան ձեր ժողովրդի սրտի մեջ, քավ լիցի, չեմ ճանաչում եմ նորան: Այստեղ երևում է էականի լոկ ստվեր, մի կենդանական մեռյալ պատկեր: Այստեղ Քրիստոսը, Ավետարանը ինձ երևում են հեթանոսական մեհյանների մեջ: Որովհետև այն գլխավոր շարժառիթները, որք պտտում են քրիստոնեության ճախարակը, հավատն ու գործն եմ ասում, դոցա առաջինը շպարել է երեսը զանազան երանգներով և առել է յուր վերա սնապաշտության կերպը, որ, կարծեմ, նույնիսկ Մեսիան չկարողանա ճանաչել. իսկ երկրորդը ամենևին չկա. եթե լիներ, պետք է դուրս փայլեր կյանքի հանդեսների մեջ ընկերասիրությամբ, ազգասիրությամբ, հայրենիքի շինությամբ:

— Քրիստոնեական կրոնը պահանջում է երեք գլխավոր բան. հավատ, հույս և սեր: Ձեր ժողովուրդն ունի չափազանց հավատ, բայց ինչպիսի՝ նյութական: Ըստ որում պաշտում է նա եկեղեցական կարգերը մի առանձին ջերմեռանդությամբ, նայելով միայն նոցա արտաքին երևույթի վերա, բնավ չհասկանալով նոցա խորհուրդը: Գիտե. ծնելուց հետո նա մկրտված է, որ մաքրել է սկզբնական մեղքից. նորանից հետո, եթե նոր մեղք արած լինի, հաղորդությունը քավում է, ամուսնական կարգը նույնպես մեղքից ազատ է. մեռանելու ժամանակ թե մեղքեր

լինին, այն ևս վերջին խոստովանությամբ և հաղորդությամբ սրբված են. եթե մի փոքր մեղք դեռևս մնացած լինի, այն ևս երկնքում քավում են նորա այս աշխարհի պատարագովը և քահանաների հոգեհացին, աղքատներին հաց տալով վերջացավ գնաց. արքայության դռները քո առջև բաց են։ Ծառա եմ մի այդպիսի շնորհի. ի՞նչ կամիս, արա. հոգին դուրս գա թող, քահանան քո մեղքին ցավը լա. աջահամբույրը, ժամուցը, հիշոցը և այն բոլոր կատարած կարգերի հատուցումը, որ արել է, մի՞թե ձրի են։ Սարսափելի անձնախաբեություն։ Ահա՛ ձեր ժողովուրդը հավատքի այդ զգալի նյութական խորհրդությունների վերա ամրացնելով յուր հույսը, կրոնի երկրորդ մասը, մոռանում է, թե զոցանով է յուր փրկությունը։ Բայց կրոնի երրորդ մասը սերը, որից հառաջանում է բարի գործ և ամենայն ինչ, որ բարի է, որից բխում է մարդկային կյանքի երանությունը այս և հանդերձյալ աշխարհում, այդ սերը, որ հոգի է տալիս, կենդանացնում է հավատքի նյութական խորհուրդները, այդ պատվական մասը մնացած է, որ ավետարանական ուսման անկյունաքարըն է, որ պարունակում է յուր մեջ օրենք ու մարգարեք, որ և մարդկային ազգի սրտի մեջ արմատացնելու համար աշխարհ եկավ Հիսուս Քրիստոս։

— Ասենք թե քո ասածները ճշմարիտ են. ի՞նչ է դորա պատճառը,— ասաց վարդապետը։

— Միտքդ բեր, որ մեր խոսակցության սկզբումը ասացի, տգիտությունը զրկում է մարդս աշխարհի և երկնքի փառքերից։ Որովհետև ժողովուրդը միշտ երևելի խորհրդությունների վերա հաստատելով յուր հույսը, նորա մտքի աչքերը կույր են, աներևույթի համար անփույթ է լինում։ Այստեղ ևս պարտականությունը ձեզ է հասանում։ Օրինակ, հմուտ բժիշկը, հիվանդի ցավին համարվելով, դարման է մատուցանում. և թեպետ տված ճարը լինի շատ զզվելի, բայց իբրև վերածնիչ առողջության, պիտի անշուշտ գործ դրվի։ Արդյոք ինչի՞ց ընկավ ժողովուրդը այս սնապաշտության մեջ. տգիտությունից։ Ուրեմն նորա հոգաբարձուն աշխատելու է, որ տարածվի գիտությունը։ Այդ է ահա պատճառը, որ լուսավոր անձինք գոռում են ամեն տեղից. լուսավորությո՜ւն, լուսավորությո՜ւն, վարժատո՜ւն, վարժատո՜ւն, քարոզության ստատմը բանի և այլն, և այլն։ Մի շատ վնասակար նախապաշարումն է մտքի, ամենևին անպայմանաբար պաշտող լինել մի ազգային սովորության, որպես թե դա աստվածադիր սուրբ պատգամ էր։ Բայց աստվածադիր պատգամները նույն ինքն աստված երբեմն փոխում է. երևի, նա ևս մարդկային որպիսությունը, ժամանակի պայմանների մեջ, ուշադիր է։ Աշխարհի

ստեղծագործությունից մինչև ցայժմ երեք տեսակ օրենքներ մի աստուծույ գրված տեսանում ենք. բնական, մովսիսական և քրիստոնեական. մինը մյուսից տարբեր։ Այսուհետև հայը յուր բազմադարյան հնությամբ չպարծենա, թե Լուսավորչի ժամանակից մինչև ցայժմ անփոփոխ է պահել յուր կրոնը, կամ թե ծաղր անե մյուս ազգերին, իբր թե նոցա մեջ շատ փոփոխություններ եղած են։ Արդյոք կհասկանա՞, թե դորանով քանի ահագին ասպարեզներ ետ է մնացել լուսավորյալ ազգերից։

Կամեի առավել պարզաբանել ասածս, բայց չեմ կամենում լսել այն հիվանդոտ ազգասիրությամբ կուրացած քննաբանների բամբասանքը, որք սովորը գրկախառնվում են՝ փոխանակ սիրուհուն, որք Հայաստանը միմիայն աշխարհացույցի վերա տեսանելով հնավոր սահմանների վերա, ամենևին չունին տեղեկություն նորա այժմյան վիճակի մասին. Երբ դոքա կարդում են նոր բան, փոքր-ինչ դիպչողական յուրյանց հայրենակիցների սրտին, իսկույն սկսում են հրեից նման աղմուկ բարձրացնել. «Դու եկել ես մեր օրենքը քանդելու». և այլն։ Եվ սկսում են զանազան կողմերից գրիչ շարժել. «Դու մոլորված ես. դու հերետիկոս ես. դու տխմար ես». և մարդկային լեզվի մեջ եղած բոլոր նախատական բառերը թափել և սպառել մարդու գլխին։ Ո՛հ. ինչ պետք է անել այստեղ. կարծես թե մի նախասահմանյալ օրենք է, որ ճշմարտությունը դուրս երևելով, իսկույն քաղարկվի և աղավաղվի բազմաթիվ թշնամիների ձեռքով, և ամենայն ճշմարտախոս տանջվի ու զզվելի գառն։ Այսպես վեր կացավ մարգարեների, առաքյալների և շատ ճշմարտաքարոզ մարդերի ընդդեմ մի ամբոխ նախապաշարված մարդով։ Այլևս ինչ պետք է արած, հրաշագործություն չգիտենք, որ մեզ հավատան. խոսքով կամ թե գրով երբ որ մի նոր բան հայտնվում է, իսկույն դրոշմում են մարդու ճակատին մոլորյալ անունը։ Զարմանալի՞ բան. միևնույն է, եթե մի հիվանդ ամաչելով չհայտնի բժշկին յուր ցավը, որ գտնվում է մարմնի պատկառելի մասումը։ Ի՞նչ է վախճանը. մա՞հ։ Թո՛ղ հայը առժամանակ ևս կաքավ թըռչունի նման գլուխը ձյունի մեջ թաղե, իբր թե որսորդը չէ տեսնում նորան։ Տխմար, դու հազար քո պակասությունները ծածկես, արդյոք դոքա եվրոպացու սրատես աչքից անհայտ կմնա՞ն։ Թո՛ղ ձեր ասածը լինի, բայց ժամանակը ամենայն բան կհայտնե. մեք գործ չունիմք։

Մեր խոսակցության միջոցին երեք հոգիք ոչինչ չէին խոսում. երեվում էր, սկզբումը իմ լեզուս չէին հասկանում, բայց հետո խոսակցության ընթացքը մի անախորժ ապավորության գործեց նոցա սրտի վերա. ուստի մինը սկսավ յուր խանգարված լեզվով այսպես խոսել.

— Դու էսկնա կըրուցես, հավատա ձենավան բըռե (սատանի ցրտի)

մեր գոմերաց դառն առչև ցրտուց փետանայիր, Թաքա (քավ լիցի Թե) քեզ ներս առնեինք: Դու ի՞մալ մարդ ես, գորա՞ն (Թուրք) ես, քո՞ւրդ ես, մեք չենք գիտի: Շաղախու սուրբ Գեւորգ (երդվում է), անկյար անխավառ էլ էաս խորաթաներ (զրույցներ) կանեն: Աղեկ է, բերան չի քեթըրվե դեխ Հետև: Մեր երկրուց մեկ մարդ ասանկ զրուցեր, սուրբ Էջմիածին կատապ-յատեր (կգժվեր). էն վախտին է, օղորդ է, անզգամին ո՛չ աստված. ասանկ է: Աստված միտքից Հաներ է քեզ, նա վայլա սատանան ձախ Թևից վերա կու գրե:

— Վարժատուն բանի տեղ կուգա մի,— ասաց մյուսը,— մեք կարդալ չեմք գիտի: Աստված չե՞նք ճանչնար: Համա, բաքո. ինչ կանդար կարդացվոր տեսեր եմ, փա այ (բոլորն ես) ծուռ են: Էլ մը աստված մեր վանքեր, մեր վարդապետներ խաստատ պահե. իլա (պատճառ), մեր խոզու ճրագ էնոնք են. մեր օրենքներ էնոնք կուպաարեն: Խաղար որ կարդացվոր կլնես, կարա՞ս մեկ աղա մկրտել: Լաքին վարդըպետներ, ծառա եմ իրենց սուրբ աջին, մեզ Համար ժամ կասեն, մեր մեռելներաց գերեզման կ՚օխնեն:

Բիլա (առանց) էնոնց մեք կարա՞նք ապրայություն եթալ: Պալի (այո) մեր խողին էլ, մարմինն էլ էնոնց ձեռքն ի:

— Համա մզահսի խոսե,— կրկնեց առաջինը,— էսօր իմ ակընջներ նվեր, ես էս մարդու խոսքեր չը լսի. էսա մարդ ինչ կը խոսի. վանքերաց շնոխք վրա մեզ չեղնի, մենք ինչպե՞ս կապրինք. մեր խոզու չարեն ի՞նչ կեղնի. էսա մարդ ֆաթկու սուրբ Գեորգ չի գիտի: Որ ծառա եմ իրեն սուրբ շնոխքին, Հըմեն տարի ընոր անոնին մեկ վերու (վայրենի) ոչխար մատաղ կուքեր իրեն ատքով: Հապա ո՛րանց մնաց վանքի սուրբ աքլորի եղելություն. որ զուր չի խոսի, ըխտավոր զուրս չեղնե. Հազյար (ԵԹԵ) զուրս եղնե, ըրեն կու խեղդե. յա չէ, մեր աթոռի (Աղթամարա) խաչխաք չի գիտի, որ սուրբ մեռոնը առանց կրակի կեփվի:

— Հա՛, քյավոր Պիտո,— կրկնեց խոսնեն,— մեր վանքերաց ո՛ր մեկ խաչխաք ասես, էսա մարդ խավատա: Շաղխու սուրբ Գեորգ, որ խայ չեղներ, Համա մեկ շաշխանամ (մեջը ութանեկյունի Հրացան) պիտի տե վեր ի նոր կողին. Համա խայ ի, գեարիզ ի: Ապա մեր Նարեկացու խաչխաքագործության ի՞նչ պիտո ասե, որ փլած պատի տկի խատած Հետեր թևամերով մաղի մեջ դրան գերեզմանի վրեն տարան, սաղցան. քա, որանց կու մնա կիմ անապատա Գեորգ ճգնավորի գործ, փիլոն կու թալեր վեր ծովուն, վրեն նստած կերթեր ասրեր ճգնելու, որ էսա էնոր խաչխաքներաց մեկն ի: Համա ութը տարի չկա, մեր կույս Մարգրտի

եղելություն, որ եկեղեցվոյ մեջ աղոթքի ժամանակ լույս կաթեց վրեն[1]։ Շատ ընտավորներ դառ (հետ) անդերաց կուքին էնոր տեսա Վանու անխավատ քաղքցիք մեր կույս Մարգրիտ տարան, կրրուսին։ Ի՞նչ մարդ կարա չխավատալ, դու սուրբ տեր սկանորդու և տիրամոր ընկնավորներու խոսքերաց, աչքերաց մեռքը կը պատմեն ընտավորներաց[2]։

Ռամիկ պարոնների խոսքերը մեր վանահոր սրտին քաջալերություն ավելցին, ուստի նոր զորություն ստացած սկսավ խոսել այսպես.

— Իմ որդիք, աստված ձեր հավատն օրհնե։ Այսուամենայնիվ, մի հույս, մի հավատ ձեր մեջը կա. սիրելիք, ազնիք ամենայն հավատքե ավարա (զուրկ) են. որպես կարելի է չհավատալ. օր մի խաստախին մեկը հաց կտանե գութանի մշակներաց. ճանապարհին սոված լինելով, հացիրը կուտե. մեջրի (թաշկինակի) մեջ քարերներ կլեցնե, սուրբ Նարեկային պատահելով կխաչակնքե, քարերներ հաց կդառնան։ Կամ մի օր երեք կարգավոր, լսելով Նարեկացու անունը, կուզան, որ տեսնեն նորա հրաշքները։ Սուրբ Նարեկացին ինքն կուզա անոնց մոտ Ուրբաթ էր,

---

[1] Այս աղջիկը, որի մասին ջերմեռանդությամբ պատմում է խոխեն, մի օր պատահմամբ ընկնում է եկեղեցու լուսամուտների ապակիներից մի շող զորա վրա. ռամիկ ժողովուրդը սկսում է նորան սրբի տեղ պաշտել. հանգուցյալ Գաբրիել եպիսկոպոսը ընկելով Վան, ամուսնացրեց մին տղամարդի հետ։

[2] Ես ինքս պատահեցա տեր Հուսկան որդու և տիրամոր աստվածածնա ընկնավորներին։ Բայց ավա՜ղ. հեթանոսական սովորությունները դեռ իսպառ չեն վերացած Հայաստանի վանքերից։ Մի պառավ կին, որին ասում էին ընկնավոր, դիվահարի նման բերանը փրփրալով, դողդղալով խառնափնդոր ձայնով պատգամներ է կարդում, որբի միտքն է հայտնում։ Ըստ մեծի մասին շատի պարունակությունը այս է. տեր Հուսկան որդին ավեց այսինչ անձին մարաչը (հայտնի բան է, նորան, որ ավելի հարուստ էր), և նա պիտի բաշխե վանքին այսինչ կամ այնինչ բանը և այլն։ Եվ այն զարհուրելի դրության մեջ մնում է պառավը, մինչև վարդապետներից մինը խաչը դնելով բերանի վերա, սթափվում է (ուշը ստանում է վերստին)։ Զզվելի խաբեություն։ Այսպես իսկույն մարդու միտքն է գալիս Հունաստանի Դելփյան Ապողոնի Պյութիա քրմուհին, որ եռոտանու վրա ժահահոտ շոգիներից ցնորվելով, զանազան պատգամներ տալիս էր խառնափնդոր խոսքերով։ Զզվելի են նույնպես վանքերի տոնախմբության օրերը, որ կատարում է անապաշտ ժողովուրդը յուր անցած օրերի մեջ ընկղմված կրոնավորների հետ։ Արդարև, տավել վատթարագույն, քան թե Դեմետրեի խորհրդական տոնը էլևզիս քաղաքում, Դիոնիսյանը, Աֆրոդիտյանը, և այլն։ Կամ թե այն ի՞նչ խայտառակություն է, որ մեր պառավ խաբող կարգավորները թափառական մուրացիկների (ցիգանների) նման ամեն մեկը մի ոսկորի կտոր, արծաթով պատած, վեր են կալնում, ժողովրդի մեջ ման գալով զանազան խաբդախությամբը փող հավաքում վանքի համար։ Զարմանալի է. սուրբերը յուրյանց կենդանության օրերում աշխարհիս գույքին չեն ցանկացել. ընչի՞ց է, որ նոցա սուրբ մասունքը այժմ ոչ մի բանով չեն հագենում։

օրը պահող, կհրամայի, երեք աղավնի ի սեղան բերեն. ասանկ ան վարդապետները ժպտացին, սուրբ Նարեկացին կհրամայէ ուտելու, անոնք կհրաժարվեին. ան ժամանակը հրամայեց անոնց կենդանացնելու աղավնիքը։ Անոնք չկրցան, բայց սուրբ Նարեկացին խաչակնքելով, աղավնիքը թռան ու գնացին։

Այն կողմից գլուխը շարժելով, ռես Ակոն կրկնեց. ա՜խ, ա՜խ, ա՜խ. թե որ մեր վանքերաց քեթր աչքինք, հավլալա մեր աչքի լույս կխավարի. էն դադար հրաշք, որ անոնց մեջ կտեսնանք. Փութկի սուրբ Գևորգա տավար, ոչխար, առանց մուշտակի, առանց չոպանի սարերաց մեջ կպըտըտեն. ո՛չ գող կտանի, ո՛չ գիլեր կուտեն. աստված մեր վանքեր հաստատ պահե. աստված վարդապետներ մեր գլխեն պակաս չանե. մենք կարդալ չենք ուզեր. համա մենք աստուծո համար սոպյան կզործենք[1]։ Դեր որ Հոգվոց վանքին կհնազանդի, մենք ի՞նչ ենք, որ թըպահ չեղնենք[2]։ Աստված մարդո կտոր մը հաց տա այս աշխարհիս մեջ, և իր արքայութենեն չզրկե. ծո,մեր տղայք կարդալ ի՞նչ կընեն. գաթի մեր աղբյուրի շնորհքեն մեր երկրի մարդիկ քիչ մը խելքից քեթր են[3]։ Կարդալ որ իմանան, անկից հետըը ցիխ կխենթանան։ Բա՜րո, մենք մեր ճժերից բեղար չենք։ Մեր տիրացու Պ. կարդացվոր է, հա, աստված անոր տունը ավերե, ոչ խոգվու է, ոչ մարմնու. համա գժոխքը անդադար դև ու սատանա

---

[1] Ռամիկ ժողովուրդը ավելի բան չգիտենալը, հովվական կյանքը համարում է անմեղության և արդարության։ Այդ մի ավանդական առած է ռամիկների միջում, և վեր է առնված այն անեկից, երբ թե մի օր անապատական վարդապետներից մինը նավակով վանքը գնալու միջոցին պատահում է մի հովվի, հարցանում է. «Աղոթք գիտե՞ս». հովիվը պատասխան է տալիս. գիտեմ. ես միշտ այսպես աղոթք կանեմ. «Աստված, քեզ համար սոպյան կզործեմ». (պարս կամ շուլատր կշինեմ, որ հովվի մի հատ սիրելի զենքն է)։ «Ողորմելի. այդ մի աղոթք չէ. լավն այն չէ՞, որ հայր մերն ասանիս»։ Վարդապետը տերունական աղոթքից մի քանի բան ասացանելուց հետո նավ է մտանում։ Հանկարծ տեսանում է վարդապետը, որ հովիվը ծովու երեսից վազում է, հարցանելով, «Վարդապետ, ինչպե՞ս ասացիր»։ «Մի՞թե մոռացար ինչ որ ասացել եմ քեզ»։ «Մոռացա»։ «Գնա՛, կրկին քո աղոթքն ասա»։

[2] Պատմում են, երբ թե Հոգվոց վանքում սուրբ Գրիգորի ժամանակից մի կաղնիկ դև անընդհատապես սպասավորություն էր անում, դուրս հանելով վանքի թոնրի մոխիրը. սովորություն էր, որ օրը մի հացի կտոր թողնում էին դևի համար կերակուր։ Ծիծաղելի՛ բան։

[3] Շաղախու հայերը արդարև ցնորածների նման են խոսում, որպես Պարսից թիրյաքինները (ափիոնակերքը). դորան պատճառ են բերում, երբ թե Շաղախու Կաճեթ գյուղում մի աղբյուրի ջուր այնպիսի զորություն ունի, որ խմողի խելքը ցնդեցնում է. ստույգ լինելը մեզ անգիտելի է։ Կարծեմ, այն խավարի աղբյուրը լինի, որ հետին ռամկության մեջ է ձգել խղճալի ժողովուրդը, հավատարելով բանավորը անբանին։

չիկա, որ ղաղար էսա մարդ յուր գլխին ժողված, գիշեր ու ցերեկ չարդյ հետ խարար կուտա (կխոսի)։ Իշտա սա ալ քո կարգացվորի գործը։ Մատոյենց տիրացու Ն. խո յուր խոր ու մոր մալ գոլլաթը կրակի մեջ էրիցեց. ի՞նչ է. ես ոսկի պիտի որ շինեմ. մըկա կսոր մի ճաթի կարոտ է։

— Տիրացու Հակոբ,— երեսը գետի ինձ դարձուցանելով, ասաց Պիտոն,— քաքո՛, դու դեռ տղա ես, կարգավորի ղադր (արժանավորություն) գիտելը աղեկ բան մըն է. ինչու որ կարգավորի մեկ բերան ջուր ի, մեկալը սուր ի։ Անի քաղաքը մեկ կարգավորի անեծքով խարաբա եղավ. հապա դուք ի՞մալ չեք վախենար կարգավորի դեմ դեշ լսրցելուց։ Կարդա՞լ կըսեք մի. փուճ բան մըն է. ոչ արքայություն կտանե, ոչ դըժոխք։ Թե կուզես խոքուդ ճար ըլնի, ծոմ պահիր, Հինգ Նավակատյաց միս մի ուտեր, ղաղիմ մասն առ Տարին քանի մը խեն մատաղ արա. մեռելներուդ գերեզմանը օխնել տուր. վանքերուդ ուխտը մի քաթըլի (ուխտավորից մի լինեք)։ Տերտերներուդ ժամուցը ու քո մեռելներուդ խոքու բաժինը մի կտրեր։ էսա, էսկեա բաներ գործե, որ արքայություն գնաս. թե շատ աղեկ կուզես, Երուսաղեմ մըն ալ գնա, լույս տեսնաս, մուղդուսի էլնես, թե չէ, կարդացիր Վեցհազարյակը, Սողոմոնի թղթերը, Եփրեմվերդին, Պղնձե քաղաքը ջրի նման իմացիր. դուքս քո խոգուն ճար չանենա։

— Ծո, որդիք. դուք անպես կկարծեք, որ տիրացու Պ. միայն չարաց հետ կխոսի, հավատացեք, ազանց երկրում ամենքն ալ գլխավոր կախարդներ են[1]։ Անցյալ տարի Վենետիկու մի վարդապետ եկավ ըսյանեղ (երևի Հ. Ներսեսը), ան խելառի մեկը։ Հին աղավաղյալ մագաղաթի վերա գրված գրչագիրներ, որ մենք ոչինչ բանի տեղ չենք դներ, նա սրբոց մասունքի նման կհավաքեր։ Նա կպատմեր, թե Եվրոպա աշխարհում շատ ամիսներու ճանապարհ հեռավոր տեղերու հետ մի քանի րոպեում կխոսին. կամ թե սայլերը առանց տավարի ինքն իրեն կերթան. ուրիշ շատ զարմանալի բաներ կպատմեր, որը կատարյալ կախարդություն են։

Մի խորին լռություն տիրեց սրահ. Տեր-Աբրահամյանցի նամակը միտս ընկավ[2]։ Վարդապետները գնացին «Եկեղեցի» ասելու։ Կրկին մի-

---

[1] Շատ տեղ ես լսած եմ, որ անգետ անձինք Եվրոպան համարում են մի կախարդարնակ աշխարհ. ինչպես Պարսիկք Զուլումաթը կամ մութ աշխարհը։

[2] Իսահակ Տեր-Աբրահամյանը, սորահանցի Մեսրոպ Թաղիադյանցի աշակերտներից մինը, երկար ժամանակ Կալկաթայում մնացած, հազար ութ հարյուր հիսուն և յոթ թվին եկավ իմ մոտ. մի քանի ժամանակ մնալուց հետո գնաց ման գալու Հայաստանի մեջ.

այնակությունը։ Ծովի ալիքների ձայնը սկսավ լսելի լինել. մի վսեմ զգացողություն թագավորեց սրտիս վերա։ Ահա քեզ այդ զգացողության բանաստեղծաբար արտահայտությունը.

Ամեն տեղ տիրած խորին լռություն.
Կարծես թե մեռած լինի բնություն։
Նստած սգավոր, պանդուխտ միայնակ,
Ո՜հ, քե՛զ եմ տեսնում, ով փայլուն լուսնյակ։

Աշխարհի սկզբից դու մինչ ի վախճան
Երկնակամարով անում ես շրջան.
Ո՜հ, դու տեսե՞լ ես Հայ ազգ բարեփառ,
Արդյոք տեսնո՞ւմ ես նորա ցավ անճար։

Արդյոք դո՞ւ ես խղճալուս նման,
Տեսած Հայաստան ժանտ ոտքի կոխան,
Թափում ես աչքից աղի կաթիլներ,
Եվ սրտից միջում ցցվում են նետեր։

Քա՛ր է քո սիրտը,և խիղճըդ՝ մեռած.
Քանի՞ արյուններ, քանի՞ կոտորած
Տեսար, լսեցիր և դարձյալ պայծառ,
Հայ երկրի վերա կապում ես կամար։

Ձա՛յն տուր, ով ծովակ, ինչո՞ւ լռում ես.
Ողբակից լինել չկամի՞ս դժբախտիս։
Շարժեցե՛ք, զեփյուռք, ալիքը վետ-վետ.
Խառնենք արտասուքս այս ջրերիս հետ։

Հայաստանի մեջ անցքերին վկա,
Սկզբից մինչ այժմ, խնդրեմ ինձ ասա՛.
Մի՞թե միշտ այդպես կմնա Հայաստան
Փշալից անապատ, երբեմն բուրաստան։

որ այնուհետև Եվրոպա գնա։ Աղթամարա վանքից ստանում են նամակ. խղճալին մի քանի նոր խոսքեր բերանից դուրս հանելու համար մինչև այն աստիճան զայրացնում է վարդապետների սիրտը. մինչև վեր են կալնում նորան, որ ծովը ձգեն։

Մի՞թե միշտ այդպես ազգը խղճալի
Կլինի ծառա օտար իշխանի,
Մի՞թե աստուծո աթոռի մոտին
Անարժան է հայն և հայի որդին։

Արդյո՞ք գալու է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ,
Եվ ամեն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմել դեպ յուրյանց սիրուն հայրենիք։

Դժվա՞ր այդ. միայն, տեսուչըդ վերին,
Կենդանացրու հայության հոգին,
Տալի՛ր նույն դու քո լույս գիտության,
Որով, իբր էակք նոքա բանական,
Կճանաչեն մարդուս կյանքի խորհուրդը,
Կլինեն գործովք տիրուջ փառաբան։

Հանկա՞րծ ծովակի երեսին մի լույս.
Ջրից դուրս եկավ նազելի մի կույս,
Մի ձեռում ուներ նա վառած լապտեր,
Իսկ մյուսում՝ քնար փայլուն փղոսկեր։
Արդյոք Հուրի՞ էր, հրեշտակ աննշան,—
Ոչ, հայ մուզաների տիպ համանման։

— Հայոց ճակատագիրը կարդա, ով մուզա,
Ներկա և գալոց գուշակիր, ասա՞։
(Ասաց երկնային այն ոգի քաղցրիկ).

— Ավետիք տամ քե՛զ, նժդեհ պատանի.
Սրբի՛ր աչքերից արտասուքդ աղի։
Կըգան նոր օրեր, օրեր երջանիկ.—
Երբ տիրոջ կամքը ազատ ու արդար
Կը թագավորե— կրկին Ոսկեդար։

— Հայոց մուզայքը կը զարթնուն կրկին.
Հայոց Պառնասը կը ծաղկի վերստին,
Եվ Ապողոնյան կառքը լուսաբար
Կըրոլորե հայոց թուխ երկնակամար։

— Մենք ևս քո պես,— երբ խորին գիշեր
Պատեց Հայաստան,— սգավոր օրեր
Շատ ենք անցուցել. այժմ, սիրելի,
Մենք ևս հաշտության ստացանք ձիթենի։

Սրբեցե՛ք քնարի լարերը ժանգոտ.
Ելե՛ք Հայաստան երգով եռանդոտ.
Զարթնեցրեք հայոց աշխույժքը մեռած,
Լցվեցավ կամքը, հասավ ժամանակ,
Օրը կըբացվի,— ահա՛ Արուսյակ՝
Ձեզ հայտնի նշան, ասում է ասված։

Կրկին մթնացավ։ Չքացավ պատկերը։
Երկար ժամանակ դյութական ձայնը
Լսվում էր խառն ալիքների հետ,
Օդին տիրել էր բուրումն հոտավետ։

Ախորժելի՜ լուր, ավետիք քաղցրիկ.
Որպիսի՜ հրճվանք. Մուսայդ գեղեցիկ,
Ասա մեզ, մեկնիր, արդյոք հնարի՞ն
Մի մեռած մարմնի զարթնուլ վերստին...

[ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ]

ՈՒՍՈՒՄ ԵՎ ԴՊՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ[1]

Ճանապարհորդելով Պարսկաստանի քաղաքները՝ ամեն մի մեչիդի բակին կից գտնում ես մադրասաներ (վարժարաններ)։ Եվ շատ մեչիդներ իրանք ծառայում են որպես մադրասաներ։ Դու տեսնում ես մի կողմում, յուր թթված դեմքով, փոքրիկ խալիչայի վերա ծալապատիկ նըստած է մոլլան, վարժապետը։ Նրա առջև դրված է փոքրիկ գրքակալ, մի երկայն նախշուն թանաքաման իր եղեգնյա գրիչներով, և մոտին դրած են մի քանի գալար ճիպոտ, խեղճ աշակերտների հոգեհանը։

Մադրասեի հատակի ամբողջ մակերևույթը ծածկված է փոքրիկ և մեծ աշակերտներով, խառն ի խուռն նստոտած, որը մերկ գետնի վերա, որը փսիաթի վերա, իսկ ոմանք, որ հարուստ են՝ յուրյանց տանից բերած փոքրիկ կապերտի վերա։

Աշակերտներից ամեն մինը յուր առջև դրած ունի գիրքը ծնկների վերա, գլուխը կռացրել է դեպի ընթերցարանը և կարդում է բարձրաձայն, անդադար գլուխը դեպի ցած շարժելով։ Աշակերտների աղաղակը միախառնվելով, հնչեցնում են խիստ անախորժ և աններդաշնակ ձայն։

Մի այդպիսի մադրասեի այցելության էի գնացել ես։ Ինձ շատ զարմացրեց աշակերտների անդադար շարժումը։ Ես մոտեցա մոլլային և հարցրի դրա պատճառը։ Մոլլան խիստ զարմացած կերպով պատասխանեց.

---

[1] *Վերնագիրը պատկանում է «Արաքս» ամսագրի խմբագրության։* Ծանոթ. կազմողների։

— Աշակերտները կարդում են սուրբ գրքեր և աստծու անունն ամեն անգամ արտասանելիս նրանք պարտավոր են երկրպագել։

Ես հասկացա, որ աշակերտների կարդացածը կամ Ղուրան պիտի լիներ և կամ այլ կրոնական գրքեր, և ասացի մոլլային.

— Դա շատ վնասակար է աշակերտների առողջության, որովհետև այդպես չոքած, մեջքը կռացրած դրության մեջ, գլխի անդադար գնալի յած շարժումը կպատճառե արյան մակընթացություն դեպի ուղեղը, երեխայի աչքերը կլցվեն արյունով և կպատճառեն գլխի պտույտ և աչքերի ցավ։ Այլև մեջքը միշտ այդպես կռացած պահելով՝ մեջքի ողնաշարն ես ծռվում է յուր ուղղությունից, այնպես որ երեխայքը ոչ միայն կլինին սապատող, այլև կուրծքի ոսկորները և մկնակները ճնշելով սիրտը և թոքերը՝ նրանք կստանան կուրծքի և սրտի ցավ։

Մի հեգնական ծիծաղ շարժեց խալամի մանկավարժի թթված ունխը, և նա պատասխանեց ինքնաբավական համոզմունքով.

— Սուրբ գրքի ընթերցանությունը ո՛չ միայն այդպիսի ցավեր չէ պատճառում, այլ ընդհակառակն, նա փարատում է բոլոր ցավերը, ով որ կարդում էր նրան։

— Այդ մոլեռանդություն է,— կտրեցի ես մոլլայի խոսքը.— ես բժիշկ եմ, ես ոչ մի երկրում չեմ տեսած այնքան աչքի ցավ, կուրծքի ցավ, մեջքի ցավ, որպես Պարսկաստանում։ Այդ բոլորի մեծ մասը երեխան ստանում է, իմ կարծիքով, մադրասեններում։ Այլև այն բազմաթիվ գեմորոյի (մայասիլի) և նիկրիսի հիվանդությունները նույնպես մադրասենների ծնունդ է, երեխաների գետնի վերա ծալապատիկ նստելուց։

— Այդ բոլորը մարդկանց մեղքերից է,— ասաց մոլլան,— որովհետև նրանք չեն կարդում աստուծո գրքերը։

Ես նկատելով, որ մոլլայի համոզմունքը ավելի պինդ էր, քան թե նրա առաջ դրած քարը (որի վերա նույն րոպեին նա որոնում էր յուր....), թողեցի այդ խոսակցությունը և հետաքրքրվեցա տեղեկանալ նրա մանկավարժական մեթոդին։

Ես նկատեցի, որ մանկավարժությունը պարսիկների մեջ գտանվում էր ամենաթշվառ դրության մեջ. ոչ միայն դաստիարակության համար, այլ նույնիսկ ընթերցանության համար պարսից գրերն անմատչելի են։

Պարսիկները այժմ սեփական տառեր չունին, նրանք գործ են ածում արաբական տառեր, որի թե գրության ձևը և թե կարդալու դժվարությունը ամբողջ տարիներով մաշում է խեղճ երեխաներին, մինչև որ նրանք կարողանում են հասարակ ընթերցանությունը սովորել։

Ես տեսա մի քանի երեխաներ, որ չորս տարի մադրասեի հասիր-

ների վրա շարած, որբալան սաներին երկրպագություն էին տալիս և տակավին հասարակ ընթերցանությունը չգիտեին։

Այբբենարանը (ալիֆ-բեյը) վերջացնելուց հետո խեղճ երեխայի ձեռքը տալիս են Ղուրանը, որի ձայնավորի նշանները (զաբար, զիր, փուլ և այլն) գրված լինելով, իբր թե հեշտանում է ընթերցանությունը։ Ղուրանի վրա, որի միտքը ինքն մոլլան չէ կարող հասկանալ, երեխան տանջվում է ամբողջ տարիներ, մինչև նա փոքրիշատե ընթերցանության ընտելանում է. ապա տալիս են նրան պարսկերեն գրքեր (մեծ մասամբ հադիսների, այսինքն՝ կրոնական ավանդությունների գրքեր), որոնք բոլորն գրված են առանց ձայնավոր նշանների։ Երեխան մի քանի տարի չարչարվելով, հազիվ սովորում է ընթերցանությունը, այն էլ գրության մի քանի ձևերով միայն, որովհետև գրության ձևերն այնքան շատ են, որ ամբողջ կյանքում պետք է սովորել[1]։

Մի խոսքով՝ ամբողջ տասն տարում երեխան հազիվ թե կարողանա սովորել գրության մի քանի ձևերն։ Սա Պարսկաստանի մեջ լուսավորության տարածվելու գլխավոր արգելքներից մինն է։

Այդ հասկանալի է, որ արաբական գրության այդպիսի կրճատյալ ձևն առաջ է եկել գրության նյութերի չլինելուց։ Ղուրանի այեթներն առաջին անգամ գրվեցան ուղտերի թիակների վերա։ Իսկ թղթի գործածվելուց հետո պարսիկները դարձյալ չեն մտածում փոխել գրության ձևերն, կամ թե ընդունել մի այլ ազգի այբուբենը։ Այդ մասին շատ հարմար է հայոց այբուբենը, որ բոլորովին կարող է համապատասխանել պարսից և թուրքերի լեզվի հնչյուններին։

Պարսից գրության ձևերը ոչ միայն դժվարացնում են ընթերցանությունը, այլև տպագրությունը։ Մինչև այժմ Պարսկաստանը չունի դեռ ոչ մի տպարան, և նրանք վարվում են ձեռագիր գրքերով։ Վիմագրությունը դեռ նոր է մտել նրանց մեջ։ Չնայելով որ պարսից գրականությունը յուր հարստությամբ գերազանցում է շատ արևելյան և առհասարակ ասիական ազգերի գրականությունից։

Ամբողջ Պարսկաստանի մադրասեները ժողովրդական են, մոլլաների հսկողության տակ։ Եվ այս մադրասեներից ոչ մինում չէք կարող գտնել, որ ուսուցանեին բացի պարսկերենից օտարազգի լեզուներ։ Արաբերեն սովորում են միմիայն ընթերցանությունը՝ Ղուրանը կարդալու համար, բայց ոչ լեզուն։ Արաբական լեզուն սովորում են մասնավորապես նրանք, որոնք պատրաստվում են մոլլա լինել։

---

1 Գրության նշանավոր ձևերն են՝ խաթթի, ղուրանի, նասթալիխ, շքաստա, դիվանի, խաթթի բուֆի։

Կառավարությունը յուր կողմից չունի հիմնած ոչ մի ուսումնարան։ Ինձ ասացին, թե Շահը քանի տարի առաջ Թավրիզում հիմնեց ուսումնարան, որ կոչվում է մուալիմխանա, և մի ուսումնարան Թեհրանում, որ կոչվում է դարըլֆընուն։ Նա հրավիրեց Եվրոպայից ուսուցիչներ, եվրոպական լեզուներ և գիտություններ ուսուցանելու։ Այդ ուսումնարաններում ընդունվում էին աշակերտներ և օտար ազգերից։

Բայց մուալիմխանաները տևում են մի քանի տարի միայն։ Մոլլաների մոլի նախանձը խափանում է այդ օգտավետ հիմնարկությունները։ Մուշտայիդի մինը (գլխավոր մոլլա) բարձրանում է ամբիոնի վերա և ժողովրդին տալիս է մի այսպիսի քարոզ. «Ձեր որդիքը այդ մուալիմխանաների մեջ ուսանելով ֆրանկների լեզուներ և գիտություն՝ հոգով և մարմնով կլինին ֆրանկներ և կզրկվեն իսլամի սրբազան լեզվից, արաբերենից։ Եվ նրանք մեռանելու ժամանակ, երբ Նեքիր մունքիրը[1] կգան նրանցից հարցնելու նրանց ազգը և կրոնը՝ նրանք չգիտենալով արաբերենը՝ կսկսեն ֆրանկի լեզվով պատասխանել։ Եվ Նեքիր մունքիրը նրանց ֆրանկներ կարծելով, կտանեն դժոխքը, որպես անհավատներ»։

Այդ մի քանի խոսքերը բավական էին հիմարացնելու կույր ժողովուրդը, որ նրանք այլևս չկամենան յուրյանց որդիքը մուալիմխանա ուղարկել։ Դժբախտաբար սույն միջոցներում Թավրիզի մուալիմխանայի տան շինվածքի մի կույտը քանդվում է։ Այդ դեպքը վերին զորության վերաբերելով՝ տարածվում է լուր, թե Մուհամմեդը չէ կամենում իսլամի մեջ ֆրանկների լեզու և գիտություն մտցնել։ Եվ մուալիմխանաները թե՛ Թավրիզում և թե՛ Թեհրանում արգելվում են։

Պարսից գրականությունը հատկանում է յուր բանաստեղծական ոգով. կարծես գործնական և իրողական մտածությունը երբեք չէ սովորել այդ ազգը։ Արբեցած ղելյանի ծխով, յուր ուղեղը բորբոքած աֆիոնի թմրությամբ, ցողուն շատրվանի մոտ, ողկուզիների հովանիների տակ, միշտ յուր կիսամերկ հարեմների քնքուշությամբ հրապուրված պարսիկը, արդարև, չէր կարող գործնական կերպով մտածող մարդ լինել, նա բնականապես լինում է երևակայող։ Այդ պատճառով պարսիկների բանաստեղծությունը առավել երևակայական է, քան թե բնական։ Բնու-

---

[1] Նեքիր մունքիրը՝ այն հրեշտակներն են, որ գալիս են մեռնող մահմեդականի մոտ, երբ նրա հոգին տակավին չէ բաժանված մարմնից։ Որովհետև երկնքի լեզուն արաբերեն է, նրանք ևս նույն լեզվով հարցնում են մեռնողից քալմեի շահադաթը, այսինքն՝ նրա հանգանակ հավատոն, և մեռնողը պիտի պատասխանե նույն լեզվով։

թյունը զգալի չէ պարսիկներին, ո՛չ միայն բանաստեղծության մեջ, այլև նկարչության գեղարվեստից մեջ:

Հաֆիզի երգերը հնչում են ավելի քաղցր, քան թե Շիրազի գեղեց-կուհիների ձայնը, բայց նրա հերոսուհիները ապրում են ավելի նրա գլխում, կամ հրճվում են արմավենի ծառերի տակ Ճեննաթի հուրիների հետ:

Ֆիրդուսու հրաշալի գործը, «Շահնամեն», այդ անտառ՝ արձանագրությունը ժողովրդական վիպասանության, թեև նա չունի Վալտեր Սկոտի պատմական ճշտությունները, բայց նրա վիպասանական ճարտարությունը գերազանցում է Հոմերոսի Եղիականից: Ֆիրդուսու հերոսները երևում են հսկայական զորությամբ, նրանք ներկայացնում են տիտանական ուժեր, հերքուլեսներ, աջեմի փահլևաններ. իսկ մարդու հոգեկան հատկությունները, բարոյաց ավելով մասնավորներով պահպանված են նրանց մեջ ամենայն ճշտությամբ:

Մասնավիի հեղինակը յուր երգերի մեջ անձնատուր էր լինում աստվածային սոփեստականության. դա միակ գիրքն է, որ յուր սուր, միստիկական ոճով փշրում է իսլամի կրոնական մոլեռանդությունները: Մասնավին թեև չունի Վոլտերի սատանական յուր փիլիսոփայության մեջ, այսուամենայնիվ նա կարող է առաջին տեղը հեղինակությունը համարվել, ընդդեմ իսլամի սնոտիապաշտության:

Սաադիի առակները առաջին տեղն են բռնում բարոյախրատական գրվածքների մեջ: Նրա առակները չունին ոչ Եզովպոսի, ոչ Կռիլովի և ոչ Լաֆոնտենի առակների ձևերը՝ անշուշտ, անկեղծ առարկաների խոսակցությամբ զուրկ բերել բարոյականություն: Սաադիի առակները առնված են կենդանի տիպերից, այդ պատճառով նրանց ավելի հարմար է փոքրիկ վեպիկներ կոչել, քան թե առակներ: Նրա Գյուլիստանը և Բոստանը կարող են համարվել արևելյան կյանքի ճիշտ պատկերները:

Ջամիի, ավելի նոր բանաստեղծի երգերը նշանավոր են յուրյանց երգիծական և պարսավաբանական ոճով, թեև նրանք զուրկ են Հեյնեի նուրբ սրախոսություններից:

Պարսկաստանը չունի թատրոններ, և բեմական արվեստը նրանց մեջ գեթ անծանոթ է: Իմամների նահատակությունը մուհարեմի ներկայացումների մեջ փոխարինում են բեմական եղերերգությունը և օյին-բազների ծիծաղաշարժ օյինները (ներկայացումները հարսանիքներում՝ փոխարինում են կատակերգական պիեսները):

Պատմական գրվածքները, ըստ մեծի մասին, կրում են յուրյանց վերա պարսից հաճոյամոլ բարքի կեղծյալ կնիքը: Նրանց գրողները

նշել են կամ թագավորներին ժամանակակից մարդիկ, և կամ նրանց խիստ մերձավորը։ Այդ պատճառով նրանք ավելի գովասանական են, քան թե պահպանում են պատմական ճշտությունները։ Որպես Միրզա Մուստաֆա-խանը, Նադիր-Շահի քարտուղարը, գրեց նրա պատմությունը Թարիխ-Նադիր անունով։

Գիտական և արհեստական գրքերը այնքան աննշան են, որքան որ նա է մնացել Պարսկաստանը գիտության և արհեստի մեջ. դրանց փոխարեն պարսիկները խիստ հարուստ են արձակ և ոտանավոր վիպասանական և ռոմանական բանաստեղծություններով, որպիսի են Խամսեի-Նիզամին, Ղահրաման Նամեն և այլն։

Տիպերը այդ վիպասանությունների առնված են գրողների երևակայությունից, քան թե բնությունից. նրանք որքան ծայրահեղ հրապուրիչ են, այնքան էլ մտացածին առասպելական են։

Պարսից գրականության մեջ առաջին դերն են խաղում Հաքիմների գրքերը։ Դրանք մի տեսակ ժողովածուներ են կրոնական ավանդությունների, որոնք համապատասխանում են քրիստոնյաների «Վարք սրբոց» կոչեցյալ գրքերին, թեև Հաքիմները յուրյանց առասպելներով գերազանցում են բոլոր դիցաբանական աստվածքներից թե հունական և թե հռովմեական։

Այդ Հաքիմների մեջ դուք կտեսնեք ուշիմնիշներ, որոնք, օվկիանոսի մեջ կանգնած, կետ ձուկը հանում են ջրից, ձեռքով խորովում են արեգակի վերա և ուտում, դուք կտեսնեք մալայքաներ, ֆրուշտաներ (հրեշտակներ), որոնք երկնքով սլանալու ժամանակ, նրանց մի թևը սահում է գետնից։ Դուք կտեսնեք հուրիներ, որոնց դեմքը յաթաղաստն արեգակի փայլողություն ունի, որոնց գլուխը՝ արևելք, իսկ ոտքերը հասնում են արևմուտք...

Հաքիմները գլխավոր մանկավարժական գրքերն են մադրասաների մեջ, որոնք այնքան խորին կերպով տպավորում են երեխայի թարմ ուղեղի մեջ մոլեռանդ սնահավատությունը, որ պարսիկը դառնում է երևակայական մարդ, և նա յուր կյանքում ընդունակ չէ ազատ մտածելու։

Չնայելով որ Ատրպատականը մեծ մասամբ բնակեցրած է զանազան թուրքի ցեղերով, որոնք խոսում են նույն ազգի լեզվով, բայց նրանք զուրկ են գրականությունից յուրյանց ազգային լեզվով։ Թուրքերը գրում են և կարդում են պարսից լեզվով։ Միակ բանաստեղծը՝ Նաբաթին երգեց յուր ոգելից տաղերը հայրենի լեզվով։ Թեև նա յուր երգերի մեջ հետևած է Հաֆեզին։

Մարդ այն ժամանակ միայն սկսում է մտածել յուր ազատության վերա՝ երբ ստրկության շղթաների ծանրությունը ավելի և ավելի զգալի է դառնում։ Մարդ այն ժամանակ միայն սկսում է ազատ կերպով մտածել՝ երբ նրա համոզմունքները, կարծիքները բռնաբարվում են։

Ամեն երկրում, ամեն ազգի մեջ, ուր չկա կրոնքի և խղճի ազատություն՝ աղանդները և հերձվածները հայտնվում են ավելի շատ։ Ասածիս ապացույց է Պարսկաստանը։ Այստեղ Մուհամմեդի վարդապետությունը պահպանվում է թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական կառավարությունից ծայրահեղ խստությամբ։ Մուհամմեդի վարդապետության և նրա շարիաթի դեմ որևիցե թերհավատություն հայտնողը համարվում է քյաֆար (անհավատ) և դատապարտվում է քարկոծ լինելու։

Այսուամենայնիվ Պարսկաստանի մեջ աղանդները խիստ շատ են և նրանք ավելանում են օրեցօր։

Երեսուն տարի առաջ Շեյխ Ահմատ Բահրեյնցին, այդ համարձակ լութերը շիիդյան մուսուլմանների, քարոզեց մի այսպիսի վարդապետություն, թե կրոնքը չէ կարող հասնել յուր բարոյական նպատակին. երբ նա պայմանավորվում է արտաքին ծիսապաշտություններով և արարողություններով միայն։ Կրոնքը պիտի ազդե մարդու հոգու և խղճի վերա. նա պիտի սրբե մարդու սիրտը՝ լինելու բարի դեպի աստված և սիրով դեպի նրա արարածները։

Այդ ասացվածքի հիման վերա Շեյխ-Ահմադը հերքեց շարիաթի օրենքները, որոնք նյութապաշտական արարողություններով հուսադրում էին հավատացյալներին գտնել հոգու փրկությունը։

Նա ասաց, որ հոգու փրկությունը կարելի է գտնել միմիայն աստուծո հետ հաշտվելով։ Եվ աստուծո հետ հաշտվելու համար այս և այն իմամը, այս և այն խալիֆան չեն կարող միջնորդ լինել, որովհետև նրանք մեզ նման կրքերի տեր մարդիկ են։ Միջնորդը աստուծո և մարդկության մեջ պիտի լինի մի անձն, որ ծագում էր աստուծո գոյությունից։

Այդ միջնորդը ճանաչեց նա Աբու-Թալեբի որդի Ալիին, տալով նրան վալիուլլահ (աստուծո դեսպան) անունը։

Շեյխ-Ահմադը չէր ուրանում Ալիի մեջ մարդկությունը և չէր ճանաչում նրան իբրև աստուծո անձներից մինը, այլ նա դավանեց նրան իբրև մի հայելի, որ ցոլացնում էր յուր մեջ աստվածությունը յուր ամբողջ բովանդակությամբ։

Շիիզյան աշխարհի մեջ մինչև այն օր Ալիի մասին երգված բազմաթիվ բանաստեղծական գովասանությունքը նրա գործած գերահրաշ սքանչելիքների մասին, որոնք այնքան խորին կերպով տպավորված էին ժողովրդի սրտի մեջ՝ առիթ տվին նրան համարել Շեյխ-Ահմեդի նոր վարդապետությանը և նա շուտով ունեցավ հետևողներ և կազմեց յուրյան մի կուսակցություն, որ կոչվեցավ նրա անունով Շեյխի:

Շեյխիքը այնքան բազմացան, որ համարյա կես կիսեցին շիիզների մի մասը և կազմեցին, եթե կարելի է ասած, մի առանձին եկեղեցի և ունեցան առանձին մուշտայիդ:

Մնացորդ շիիզները, այսինքն՝ շարիաթի կանոնների հին կուսակիցները, շեյխիներից որոշվելու համար կոչվեցան մութաշառի, որ նշանակում է շարիաթին հնազանդողներ:

Շեյխին, համեմատելով մութաշառիի հետ, ներկայանում է ազատ բողոքականություն ընդդեմ մոլեռանդ կաթոլիկության. վերջինը որքան կաշկանդված է շարիաթի նախապաշարմունքներով՝ այնքան էլ ազատ է առաջինը յուր հայացքների մեջ:

Մութաշառիները չընդունեցին Շեյխ-Ահմեդի վարդապետությունը, հիմնվելով այն ավանդության վերա, թե իսլամի կրոնական վերանորոգությունը չէ կարող լինել հասարակ մարդու ձեռքով, այլ մի անձի ձեռքով, որ շառավիղում էր Մարգարեի արյունից, որին աստված նախասահմանել է դրա համար, և որին նա պիտի աշխարհն ուղարկե:

Այդ անձը, վերջին իմամը՝ Մեհդին էր, որ և կոչվում է Սահաբի Զաման (ժամանակների տերը), որի գալստյանը շիաները սպասում են այնպիսի մի հույսով, որպես Իսրաելը սպասում է Մեսիային:

Շիմրի և Յազիդի սրից ազատվելով՝ այդ աներևութացած իմամը, Մեհդին, թողեց խիստ հրապուրողական հավատալիքներ յուր մասին, թե նա մի օր պիտի հայտնվի և կբերե յուր հետ Ղորանի այն երեք գլուխները, որ գողացավ Օսմանը և կլրացնե աստուծո խոսքը, կբացատրե Ղորանի մինչև այն օր անմեկնելի մնացած այաթների խորհուրդը, և կվերանորոգե Իսլամը, կտարածե նրան բոլոր աշխարհի վերա և կթագավորե մինչև հավիտյան[1]:

Ամեն մի երևույթ, որի բնական պատճառները մնում էին Շիային

[1] Ղորանի այդ երեք գլուխների մեջ շատ զարմանալի բաների հետ գրված է և այն այաթը, որի մեջ նշանակված է Իսմի-ազամը, այսինքն՝ աստուծո իսկական անունը, որի կարդալու ժամանակ կատարվում են մարդու՝ բոլոր ցանկությունները, օր. եթե նա ասելու լինիր սարերին ոսկի դառնալու, նոքա ոսկի կդառնային:

անբացատրելի՝ գուշակել էին տալիս նրան Իմամի հայտնության մեր- ձակա լինելը։ Այդպիսի երևույթները շատ անգամ ձգում են Շիային ծի- ծաղելի սնահավատության մեջ. օրինակի համար, քանի տարի առաջ, Թավրիզ քաղաքում, Սահաբի-Զամանի անունով շինված մեչիդի դրան մեյդանում, մսավաճառը եզը մորթելու միջոցին, հանկարծ խեղճ անա- սունը դուրս է պրծնում, փախչում է և ուղղակի մտնում է Սահաբի-Զա- մանի մեչիդը, որ շատ մոտ է լինում սպանդարանին։

Որովհետև մեչիդը ծառայում էր այդ քաղաքում որպես ապաստա- նարան (բաստ), ուր ամեն մի պատսպարված հանցավորին չէր կարելի ստիպողական ձևերով դուրս հանել, այդ պատճառով՝ մսավաճառը չէ համարձակվում դուրս բերել յուր եզը։

Միայն նա տարածում է ժողովրդի մեջ շատ զարմանալի խոսքեր, թե երբ նա կամենում էր կտրել եզան վիզը, լսեց նրա բառաչմունքի մեջ որոշ ձայներով արտասանված Մեհդիի անունը, որից եզը խնդրում էր օգնություն, և նույն րոպեին եզան ոտնակապերը քանդվեցան, և նա վա- զեց դեպի մեչիդը։

Այդ լուրը տարածվում է բոլոր քաղաքում, և Սահաբի-Զամանի մե- չիդում ապաստանած եզը կատարելապես վայելում է եգիպտական Ապի- սի փառքը։ Նրա ոտքերի տակ տարածվում են թանկագին խալիչաներ և կերակրում են քիշմիշով ու արմավով։ Նրա ամեն մի մազերը բաժան- վում են որպես սրբություն, և ամեն կողմից դիմում է դեպի նա ցա- վագարների ամբոխը։

Այդպիսի սնապաշտական դեպքերը պատահում էին շիիդյան աշ- խարհում խիստ շատ, մինչև 18... թվին հայտնվում է Սեիդ-Ալի-Մուհամ- մեդ Շիրազցին, մինը գլխավոր աշակերտներից Շեյխ-Ահմադ բահ- րեյնցու։

Նա հայտնեց յուր մասին, թե ինքն էր վերջին Իմամը՝ Մեհդին, որը պիտի աշխարհ գար, և կոչեց յուրյան բաբ (դուռն) այն մտքով, որ այդ դռնով միայն կարելի էր մտնել Ամիրալ-Մոմնի (Ալիի) վիլայեթը, այ- սինքն՝ նրա արքայության մեջ։

Բաբը ներկայացրեց յուրյան իբրև աշխարհային տեղապահ-Ալիի, աստուծո միջնորդի, որի մասին Շեյխ-Ահմադը ոչ մի անձն չէր ցույց տվել։

Բաբը ունեցավ շատ հետևողներ, որոնք կոչվեցան բաբի։ Խիստ կարճ ժամանակում նրա ուսմունքը տարածվեցավ Պարսկաստանի ամեն մի անկյունում, առավելապես Ղազվինում, Զանգիանում և Թեհրանում։

Բաբիությունը, թեև երևցավ կրոնական կերպարանքով, հիմնված

շիաների փայլուն ավանդությունների վերա Ալիի և Մեհդիի մասին, բայց նրա գաղտնի նպատակը և ներքին կազմակերպությունը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ՝ կոմունայի համապատկերը:

Բաբը քարոզում էր ազատություն, հավասարություն, եղբայրություն: Նա հերքում էր սեփականության իրավունք ունենալ: Նա զինավորվում էր Իսլամի հոգևոր և մարմնավոր իշխանությունների դեմ:

Մի այդպիսի վարդապետություն, որքան համակրություն ստացավ ռամիկ, հաղթահարված ժողովրդի մեջ՝ այնքան էլ գրգռեց Շահի և մոլլաների բարկությունը, որոնք շուտով բարձրացրին բաբիների դեմ ամենասարսափելի հալածանքներ: Երևեցան նահատակներ, և զոհերի թիվը օրըստօրե սկսեց բազմանալ[1]*: Զանգիայի կոտորածի բազմաթիվ նահատակները յուրյանց արյունով կնքեցին նորածին վարդապետությունը:*

Երբ Բաբը բռնվում է, և առժամանակ Սալմաստա Ջահրիի բերդումը պահվելով, Թավրիզում դատի է կոչվում, գլխավոր մոլլաներից կազմված մի ժողովի մեջ: Շեյխիների մուշտայիդը չէ ներկայանում ժողովին: Եվ մուխթաշարիֆը դատապարտում է նրան մահվան պատժի: Եվ Բաբը նույն քաղաքի Արսենալի բակումը յուր երկու աշակերտների հետ հրացանազարկ է լինում:

Մինչև վերջին շունչը նա մնում է հաստատ յուր համոզմունքի վերա: Նա մեռնում է փառավոր մահվամբ. բայց բաբիությունը մնում է կենդանի նրա հետևողների մեջ:

Բացի բաբիությունը, Պարսկաստանում շատ է և այլ աղանդների թիվը: Բայց դրանց հետևողները այնքան ծածուկ են պահում յուրյանց վարդապետության իսկական խորհուրդը, որ շատ դժվար է նրանց մասին որոշակի տեղեկություն ստանալ: Պարսից գրականությունը անգամ չէ տալիս նրանց մասին պարզ տեղեկություններ: Եղած գրքերը գրված են կամ չափազանց կրքերով և կամ ավելորդ զրպարտություններով:

Մի քանի տեղեկություններ, որոնք ես կարողացա հավաքել զանազան աղանդավորների ներկայացուցիչներից՝ հաղորդում եմ քեզ, թեև նրանք չեն այնքան լիակատար:

Պարսկաստանի բարձր իմաստություն ունեցող դասի մեջ տարածված է Սուֆի *կոչված աղանդը: Դա մի տեսակ փիլիսոփայություն է, որ*

[1] *Բաբիների նահատակների մեջ նշանավոր եղան Մոլլա-Մամատ Ալի Զանգիացին, որ յուր կուսակիցներով պատերազմեց Շահի զորքերի հետ, Յահյախանը, երևելի կալվածատերը, որին Թեհրանում սպանեցին կենդանվույն՝ նրա մարմնի մեջ վառած պատրույգներ անցուցանելով: Կանանց մեջ նշանավոր եղավ Ղուրբաթուլ էյն (աչքի լույս) կոչված վկայուհին, Բաբի սիրելին:*

հիշեցնում է Հնդկաստանի փիլիսոփայությունը: Սուֆիները հերքում են կրոնական վարդապետությունները, համարելով նրանց մարդու անձնական զարգացմանը վնասակար: Նրանք ներողամիտ են դեպի ամենայն ազգ, համարելով բոլորին յուրյանց եղբայրներ:

Սուֆիները հավատում են մի գերագույն էակի, որ տարածված է բոլոր առարկաների մեջ, թե՛ երկնային և թե՛ երկրային: Նա յուր ստեղծագործող զորությամբ կյանք է տալիս նրանց, ձևափոխում է և կառավարում է: Ամենաչնչին ծաղկից սկսյալ, մինչև փոքրիկ զեռունը, կրում են յուրյանց մեջ նրա էությունից: Այդ պատճառով տիեզերքի մեջ ոչինչ բան պիղծ չէ: Այլ ամեն մի երևույթ և ուժ այն գերագույն էակի հայտնությունն է:

Մարդը, իբրև ստեղծագործված առարկաների մի մասը, նույնպես ունի յուր մեջ նույն գերագույն էությունից: Եվ մարդու բոլոր գործունեությունը պայմանավորվում են նույն էության զորությամբը: Ուրեմն նա պիտի լինի ազատ, և ոչինչ օրենքներ չպիտի սահմանափակեն նրա ձգտումները:

Դահրիները, որ նշանակում է ժամանակականք Սուֆիներին, բոլորովին հակառակ փիլիսոփայություն ունին: Նրանք չեն հավատում ոչինչ գերագույն էակի և համարում են տիեզերքը ժամանակի ծնունդ՝ տարրերի ֆիզիկական և քիմիական միավորության արդյունք: Նրանք հերքում են աստվածությունը և հոգու անմահությունը և մարդու կյանքը գտնում են միայն այս աշխարհում, քանի նա ապրում է, քանի նրա մարմնի շինվածքը խանգարվելով չէ դարձել յուր բաղադրության տարրերին:

Դահրին ասում է, թե ամեն կենդանի մեր հողագնդի արարածն է: Նա յուր գոյությունը պահպանելու համար բաժանորդ պիտի լինի երկրին, այդ հասարակաց սեղանին, նրանից յուր ապրուստը ճարելու համար: Զորեղ ձեռքով սեփականել յուրյան ավելի շատ հող, քան որ բավական է մի մարդու պիտույքներին՝ դա հասարակաց ընչի հափշտակություն է: Իսկ տիրել յուր նման մարդկանց վերա և ճնշել նրանց իրավունքը, դա ծայրահեղ բռնակալություն է:

Պարսկաստանում կան և Վահտար-աքվնուդի կոչված աղանդավորները: Դրանք հավատում են մարդկանց մահից հետո հոգիների զանազան կենդանիների մեջ տեղափոխվելուն:

Պարսկաստանի մեջ մինչև այսօր գտնվում են հետևողներ հին զրադաշտական կրոնի: Նրանք կոչվում են Գաբր: Զենդավեստան դեռ կարդացվում է նրանց մեջ, որպես սուրբ գիրք:

Պարսիկների մեջ կա և մի տեսակ ծածուկ կրոնք, որի հետևողները յուրյանց կոչում են Դավուդի: Դրանք յուրյանց համարում են Դավիթ մարգարեի աշակերտներ և կարդում են Սաղմոս, թեև նրանց ծեսերը և ավանդությունները շատ տարբեր են հրեաներից։

Մի քանի նոր մտքեր և փիլիսոփայություններ մտցրին Պարսկաստանում այն պարսիկ ուսանողները, որոնց Շահը հարյուր հիսուն հոգու չափ ուղարկեց Փարիզ կրթության համար։ Այդ ուսանողներից թեև չծըլվեց ոչ մի հանճար և ոչ մի տաղանդ՝ այնուամենայնիվ նրանք ձգեցին Պարսկաստանում մի փոքրիկ լույս եվրոպական կրթության և ճանապարհ բաց արին եվրոպական կրթությունը յուրյանց աշխարհում մըտնելու:

Բայց մոտ է ժամանակը: Պարսկաստանը երկար չպիտի մնա յուր խավարի մեջ։ Ծածուկ աղանդները արդեն ձգել են Իսլամի կազմվածքի մեջ զանազան կայծեր, կայծեր, որոնք մի ազատ քամու են կարոտ, որ հանկարծ բռնկեն և հրդեհեն նրա գոյությունը...

ԴԵՐՎԻՇ

Պարսկաստանի մտավոր կյանքի մեջ մեծ դեր են խաղում նաև դերվիշները։ Նրանք կոչվում են՝ և ֆագիր, զալանդար, որոնք նշանակում են խեղճեր:

Դերվիշին հեշտ է ճանաչել յուր արտաքին կերպարանքից անգամ։ Դու տեսնում ես մի մարդ երկայն, չխուզած մազերով, որոնք կապված են կամ սև թելերից վարսակալով կամ գլխին դրած ունի կարմիր և զանազան թալիսմանական գրվածքներով ասեղնագործած մի թագ։ Նա հագած ունի միայն մի շապիկ սպիտակ կտավից, որ հասնում է մինչև նրա մերկ ոտքերը։ Եվ մեջքը պնդել է նույնպես թալիսմանական տառերով զարդարած լայն գոտիով։ Նա ձգած ունի յուր ուսին ընձու կամ առյուծի մորթի և մերկ բազուկից քարշ է տված հնդկաընկույզից շինած Քաշկուլը՝ յուր միակ ամանը, որ նա ման է ածում յուր հետ։ Նա յուր ձեռքին ունի մի ահագին մահակ կոճղնավոր բամբուկի ծառից և կողքից քարշ է տված յուր եղջերափողը (նաֆիր)։ Պարսկաստանի բոլոր քաղաքներում դու հանդիպում ես այդպիսի մարդկանց, շատ անգամ բոլորովին մերկ, ափածանիքը միայն գոտիից մինչև ծնկները կապած՝ այդ մարդիկը դերվիշներ են։

Դերվիշն ամեն մարդու բարեկամ է։ Նա, հանդիպելով քեզ, իսկույն

յուր աչքը գետնի ճակատն է առնում և ասում է. «էյ փոլլահ» կամ «յա՛ հու հակ»:

Դու կճանաչես նրան, երբ ծանր քայլերով գնում է նա փողոցի ծածկված շուկայի միջով: Նա երգում է կամ Հաֆեզից, կամ Մասնավիից և կամ Ամիր-ու-Մոմնի հրաշքները: Նա բանաստեղծ է, նա երգում է սեր: Նրա ձայնը քաղցր մեղեդիներով հնչում է շուկայի գմբեթահարկ կամարների տակ:

Խանութպանները սիրում են իրանց երգիչին և նրանցից ամեն մինը ձգում է նրա Քաշկուլի մեջ մի սև փող:

Դերվիշը յուր պտիտանը (շրջանը) կատարելուց հետո դուրս է գալիս քաղաքից, հավաքած փողերից վեր է առնում այնքան, որքան պետք է իրան նույն ավուր ապրուստի համար, իսկ մնացորդը բաժանում է նա իրանից ավելի խեղճերին: Երեկոյան դերվիշն աղքատ է և մի սև փող չունի:

Դերվիշը տուն, տեղ, ընտանիք և հայրենիք՝ ոչինչ չունի: Նրա հայրենիքը բոլոր աշխարհն է, նրա ընտանիքը՝ ամբողջ մարդկությունը: Նա երգելով թափառում է երկրից երկիր, և ամեն տեղ բաց է նրա առջև աստուծո սեղանը:

Այդ կիսամերկ մոլորաշրջիկ թափառականները գտնում են արժանավոր ընդունելություն՝ թե՛ ամենահարուստ հաջիի տան մեջ և թե բարձրաստիճան խանի ապարանքում: Ամեն մարդ ցանկանում է լսել դերվիշի իմաստությունը և յուր խալիների վրա տեղ է տալիս նրան: Բայց դերվիշը փառասեր չէ, նա չէ սիրում շքեղ ապարանքներ, նա այցելություն է անում աղքատների խրճիթներին, նա անցուցանում է յուր գիշերը փողոցներում, փլատակված շինվածքներում: Նա քնում է ամեն տեղ, ուր օրը մթնում է նրա վրա:

Դերվիշը կոմունիստ է: Նովրուզի տոնից մի քանի ամիս առաջ յուր փոքրիկ վրանը կազմում է մի հարուստի դռան հանդեպ: Նա պահանջում է նրանից նրա հարստության մի մասը, որ հափշտակել էր հասարակաց սեփականությունից: Հարուստը իրավունք չունի հեռացնել նրան յուր դռնից, մինչև չլրացնե նրա պահանջը (թալաբ): Անցնելով թալաբի նստած դերվիշների վրանների մոտից՝ մարդ իսկույն մտաբերում է Դիոգինեսը յուր կարասի մեջ նստած:

Դերվիշներից ոմանք արհեստավորներ են և ապրում են իրանց ձեռագործներով. կան նրանց մեջ բժիշկներ, բանդակագործներ, գեղարարներ, պատկերահաններ և գեղագիրներ, որոնց մի կտոր վայելչագրության օրինակը մեծ գին է բերում:

Նրանցից շատերը անձնատուր են եղած էլեմսիրի՝ միջնադարյան փիլիսոփայական քարի գյուտին և այրում են սնդիկ, ծծումբ, մկնդեղ և այլ հանքային մարմիններ՝ ոսկու սարեր գոյացնելու փափագով:

Պարսկաստանի քաղաքներում դերվիշների համար շինած են առանձին օթևաններ, որ կոչվում են թաքիա: Ես կգրեմ քեզ իմ այցելությունս այդ թաքիաներից մինին Շիրազ քաղաքում: Թաքիան ամֆիթատրոնի ձևով մի բաց շինվածք է, փոքրիկ քառանկյունի բակով, որ շրջապատված է զանազան միմյանցից բաժանված կրպակներով: Այդ կրպակների մեջ բնակվում են դերվիշները:

Ես ներս մտա այդ կրպակներից մինի մեջ, ուր ինձ ասացին, թե բնակվում է դերվիշների մուրշիդը, այսինքն՝ նրանց վարդապետը:

Ձմեռն էր: Կրպակի դուռը բացվելուն պես իմ գլուխս զարկեց խիտ անախորժ և կծու հոտ: Ես կարծում էի, թե մտնում եմ Իտալիայի շնական կոչված այրը: Այդ հոտը հավաքվել էր այնտեղ բանգի, ափիոնի և զանազան արբեցուցիչ նյութերի ստեպ ծխերից: Ես խնդրեցի բաց թողնել կրպակի դուռը՝ օդը փոքր-ինչ մաքրվելու համար:

— Հյուրի պատիվը միշտ հարգելի է,— ասաց դերվիշներից մինը և բաց թողեց դուռը, թեև սաստիկ ցուրտ էր:

Նրանք թվով չորս էին: Ինքը մուրշիդը նստած էր ընձու մորթու վրա, իսկ մնացածներից ամեն մինը ձգած ուներ յուր տակին առյուծի, վագրի և զանազան գազանների մորթիք: Նրանցից մինը տվավ ինձ յուր մորթին, ես նույնպես նստեցի:

Այդ դերվիշներից ամեն մինը պատկանում էր առանձին ազգի, առանձին տիպերի: Մուրշիդը պարսիկ էր, միջին տարիքով. նա էր մի բարձրահասակ և ցամաք մարդ, արևից այրված երկար ճանապարհորդության մեջ: Նրա սևուկ դեմքը, թուխ, վառվռուն աչքերը բացատրում էին հանճար և զարհուրանք:

Մ՛ինը խափշիկ էր, մի երիտասարդ, բոլորովին մերկ, միայն սպիտակ կտավե վարտիքով, որ սև ընձու նման, պառկած մի անկյունում՝ խորին կերպով մրափում էր: Նրա սև կերպարանքը, միախառնվելով կրպակի մթության հետ, մնում էին աննշմարելի, միայն աչքերի սպիտակուցը և ճերմակ ատամները երբեմն փայլում էին խավարի մեջ, երբ նրա դեմքը ցնցվում էր սարսափելի ծիծաղով: Երևում էր, որ երիտասարդը, թմրած ափիոնի արբեցուցիչ զորությունից՝ հրապուրվում էր գեղեցիկ երազներով:

Մյուսն ավղան էր, մի փոքրիկ մարդ, կարճլիկ հասակով, թավ, սև սաթի նման մազերով, դորշ դեմքով և նեղ, պսպղուն աչքերով:

Իսկ չորրորդը հնդիկ էր, լերկ պղնձագույն դեմքով և երկայն, փափուկ մազերով։

Կրպակի մեջտեղում դրած էր մանղալ՝ շիկացած ածուխներով. նրանք բոլորել էին նրա շուրջը։

— Ի՞նչ բան բերեց ձեզ, տեր իմ, խեղճերի կայարանը.— հարցրեց ինձանից մուրշիդը։

— Ես էլ ձեզ նման դերվիշ եմ,— ասացի նրան,— և թափառում եմ երկրե երկիր. ինձ ցանկալի էր հարցասիրել իմ համավիճակների կյանքը։

— Էյ վալլահ,— ձայն տվավ մուրշիդը,— ուրեմն մենք եղբայր ենք։— Եվ ձեռքը իմ ձեռքին տալով, հետո դեպի բերանը և ճակատը տարավ։

— Ի՞նչ ազգից ես,— հարցրեց նա ինձանից։

— Ազգով հայ եմ,— պատասխանեցի ես։

— Իսկ կրոնո՞վ։

— Քրիստոնյա։

Վերջին խոսքերը շարժեցին մուրշիդի ուռած շրթունքները հեգնական ծիծաղով, և նա ասաց.

— Դուք խոստովանվեցաք, թե դերվիշ եք, բայց դերվիշները ազգ ու կրոնք չունեն։

Ես զգացի սխալմունքը իմ խոսքի մեջ և պատասխանեցի.

— Մենք այդ տեսակ դերվիշներ ենք։

— Բայց քրիստոնյաների կրոնքի վարդապետը, Մեսիան, կատարյալ դերվիշ էր, նա պատկանում էր ահլիմուհաբեթներին (սիրո ժողովրդին կամ սիրո նպատակին). նա ատում էր հարստությունը, նա բարեկամ էր աղքատներին և սրբում էր նեղացածների արտասուքը։

— Այո՛, նա քարոզում էր սեր, նա աշխատում էր բառնալ ստրուկի ծանր լուծը,— ասացի ես։

— Իսկ նրա հաջորդները, ձեր խալիֆաները (եկեղեցականները) չեղան իրանց վարդապետին արժանավոր աշակերտներ։ Նրանք սիրեցին աշխարհը և նրա փառքերը և ամենայն սրբություն զոհեցին իրանց կրքերին...

Մեր խոսակցությունն ընդհատեց խափշիկը, որ պառկած էր կրպակի անկյունում, մի երգով, որ նա հանկարծ եղանակեց քնի մեջ։

— Այս գիշեր բանգը շատ ներգործեց մեր եղբոր վրա,— ասաց մուրշիդը։— Նա տակավին հրապուրվում է երազներով։

Իսկ հնդիկը նույն միջոցին հանեց յուր մախաղից (ջուլբենդ) մի երկայն կտոր աֆիոն, կտրատեց և ափի մեջ լցնելով՝ բերանը ձգեց և բոլորը միանգամից կուլ տվավ։ Ես զարմացա. աֆիոնի ամեն մի կտորը բավական էր թունավորելու ամենաառողջ տղամարդուն, բայց նա կերավ նրանց որպես շաքար, առանց մի զզվանք զգալու։

Իսկ մուրշիդը վառեց յուր դդմաարմավակից շինված փոքրիկ ղեյլանը և, մի կտոր բանգ նրա գլխին դնելով, սկսավ ծխել։ Մյուսները նույնպես սկսեցին աֆիոն ուտել և ծխել։ Եվ մի քանի րոպեից հետո փոքրիկ սենյակը դարձյալ լցվեց խեղդող ծխով։

Բանգի և աֆիոնի արբեցուցիչ զորությունն սկսավ յուր ներգործությունն անել։ Դերվիշները հետզհետե զվարթանում էին և ոգևորվում։ Նրանք ինձ ևս առաջարկեցին ծխել իրանց ղեյլանից, բայց ես հրաժարվեցա, ասելով, թե սովոր չեմ և վառեցի իմ սիգարը։

Մեր խոսակցությունը տևեց երկար։ Ես նկատեցի, որ այդ դերվիշները պատկանում էին մի վարդապետության, որ կոչվում էր ահլ-հագիգաթ, որ նշանակում է ճշմարտության հետևողներ։

Դրանք ուրիշ ճշմարտություն չեն ընդունում, եթե նա իրանց հայտնըված չէ որևիցե գերբնական զորությունից։ Դրան հասնելու համար նրանք պիտի անցնեն հետևյալ երկու աստիճանները. առաջին՝ սեր (մուհաբաթ), որի վրա դնում են ամենայն բարոյականության հիմքը, երկրորդ՝ թարիկաթ (ծեսեր), երբ տեսակ-տեսակ սարսափելի ճգնություններով մարդն աշխատում է մեռցնել յուր մեջ ամենայն մարմնականություն (ջամբեի հեյվանաթ) և մաքրվել, սրբվել և բոլորովին հոգիանալ (ջամբեի ռուհանյաթ), այն ժամանակ ինքնուրույն հասնում է հագիգաթին, այսինքն՝ ճշմարտությանը։

Դերվիշներից շատերը պատկանում են զանազան այլ աղանդների, ինչպես են՝ դահրի, սուֆի բաբի, ուրֆա, և այլն, որոնց մասին առաջին նամակումս գրած եմ քեզ։ Այլև կան նրանց մեջ շատ խաբեբաներ, որոնք պարապում են կախարդությունով, առողջ հմայությունով և թովչությունով։

Դերվիշներին չեն սիրում մոլլաները, համարելով նրանց անհավատներ, որովհետև նրանք չեն կատարում շարիաթի կանոնները։ Բայց ժողովրդի բարձր դասը, ազնվականները, պատվում են նրանց և սիրում են լսել նրանց իմաստությունը։

Դերվիշները, այդ իմաստության թափառական միսիոնարները, կա-

բող են օգտավետ լինել Պարսկաստանի մեջ նոր մտքեր տարածելու, թեև նրանք մի որոշակի ուղղություն չունեին, այլ յուրաքանչյուրն ունի յուր առանձին համոզմունքները և կարծիքները, այսուամենայնիվ նրանց մեջ կա ազատ մտածողություն։

ՇԱՐԻԱԹ

Շարիաթն է քաղաքական և կրոնական օրենքը, որով կառավարվում են իսլամին հետևող ազգերը։ Նա յուր գոյությունն ստացավ Մուհամմեդից։

Շարիաթի օրենսդրական շրջանն այնքան նեղ եղավ, որքան սակավ էր այն ազգի (արաբացոց) կյանքի պիտույքները, որի համար գրվեցավ նա, և որքան տկար էր նրա հեղինակի ուժը և քաղաքական զորությունը նրա գրելու ժամանակ։

Մուհամմեդը տվավ արաբներին շարիաթի հրահանգները ոչ իբրև հասարակ օրենսդրական կանոններ, այլ որպես սրբազան հայտնություն (աշար), երկնքից նրան իջած Գաբրիել հրեշտակի ձեռքով։ Այդ հավաքված աշարները կոչվեցավ Ղուրան։

Ղորանի աշարները հարմարեցրած են առօրյա անցքերին և դեպքերին, որ պատահում են մարգարեի հետ։ Այդ պատճառով նրանց մեջ ոչ միայն չկա օրենքների ընդհանուր համակարգություն, այլև շատ տեղ նշմարվում են ամբողջ հատվածների հակասություններ։ Որովհետև փոխվելով դեպքերը, փոխվելով հանգամանքները, Մուհամմեդն ստիպված էր փոխել յուր խոսքը։

Ղորանի ընդհանուր պարունակությունը շատ բազմազանի է։ Նա գրված է բանաստեղծորեն, գեղեցիկ և քաղցր խոսքերով։ Նրա ոճը հատկանիշ է արաբացոց վառ երևակայության և նրա շրջապատող բնության ջերմության։ Բայց եթե վեր առնենք նրա միջից առասպելախառն պատմությունները (որոնք շատ հավանական է, թե մարգարեն հավաքած պիտի լինի բերանացի ավանդություններից), իբրև օրենք մնում են սակավ բաներ միայն։

Այդ օրենքներից շատերը, որպիսիք են՝ թլպատությունը, ծոմապահությունը, զոհաբերությունները, լվացմամբ մաքրությունը, ամուսնության կանոնները, փոխարինությունը՝ մի վնասը մյուսի դեմ, բաժանումը ժառանգության շարժական և անշարժ կայքերի և այլն, դրանք էին Մով-

սխալական օրենքներ, որոնք ավանդությամբ մնացել էին արաբների մեջ, և որոնց Մուհամմեդը ձևակերպեց յուր նպատակների համեմատ։

Մի քանի օրենքներ, որոնք հնարեց ինքը Մուհամմեդը, որպիսիք են՝ ջահադ, այսինքն՝ միահամուռ պատերազմ ընդդեմ անհավատների, և զաքաթ, այսինքն՝ կողոպուտ և նրա բաժանման կանոնները զորքերի մեջ՝ դրանք էին նրա մարգարեական և աշխարհակալական նպատակների շարժառիթները։ Առաջինը՝ ջահադը, կրոնական ջերմեռանդությամբ ոգևորում էր նրա հավատացյալներին դեպի պատերազմ իսլամը չընդունողների դեմ և թրի զորությամբ տարածում էր մարգարեի կրոնքը և իշխանությունը հաղթված ազգերի վրա։ Երկրորդը՝ զաքաթը, բորբոքում էր նրա զինվորների նյութական ընչաքաղցությունը և առիթ էր տալիս պատերազմելու։

Մի քանի օրենքներ վերաբերում էին մարգարեի անձնականությանը, նրա ընտանիքին և նրա սերունդի ապագային։ Օրինակի համար, նա վերստին հաստատեց Քաբայի տան ուխտագնացությունը, որի պաշտոնը և բանալիները իբրև հայրենական ժառանգություն՝ մնում էր Կորաշների՝ յուր տոհմայինների ձեռքում։ Նա հաստատեց խումսը, իբրև ապրուստի ապահովություն յուր զավակների, յուր ապագա սերնդի։ Նա տվավ ալհիջաբը՝ կանանց ծածկապահության օրենքը, յուր կանածավոր կրքերից գրգռված, որ յուր գեղեցիկ հարեմները անմատչելի լինեին ժողովրդին, և օրենքով արգելեց՝ ամեն մարդու, մինչև անգամ յուր մահից հետո, նրանց հետ ամուսնանալու իրավունքն ունենալուց։

Ես ավելորդ եմ համարում մանրամասն քննադատել Ղորանի ամբողջ վարդապետությունը, միայն կասեմ, որ նա մի խառն ժողովածու է բիբլիական պատմությունների և կրոնական ու քաղաքական օրենքների։

Բուն հոգին կրոնական օրենքների պայմանավորվում է արտաքին ծիսակատարություններով և արարողություններով։ Նրանք չեն ազդում մարդու խղճի և սրտի վրա, նրանք չեն հանգստացնում մարդու միտքը, այլ թողում են նրան՝ անորոշ և անտարբեր դրության մեջ։

Մուհամմեդը հայտնում է մի այնպիսի միտք, թե աստված սկզբանե ստեղծել է մարդկանց՝ ոմանց անհավատ լինելու և ոմանց՝ հավատացյալ, ոմանց դժոխքը տանելու և ոմանց՝ դրախտը, այլ խոսքով՝ նա քարոզում է ճակատագրի նախասահմանությունը։

Այդ միտքն ավելի պարզեցին Ղորանի մեկնիչները, ասելով՝ տիեզերքի ստեղծվելուց առաջ աստված ստեղծեց աշխարհ գալու ամբողջ մարդկության հոգիների ատոմը (զառրա)։ Այդ ժամանակը կոչվում է

պատճառ, այսինքն՝ տարբերի ժամանակ։ Նա առաջարկեց այդ տարբերքին հավատքը դեպի աստված, հավատքը դեպի գալոց աշխարհի ճշմարիտ կրոնքը՝ մայլն. ոմանք ընդունեցին, ոմանք ուրացան։ Այդ պատճառով աստված ստեղծում է մարդկանց իրանց սկզբնական ընտրության համեմատ՝ ոմանց հավատացյալ և բարի, իսկ ոմանց անհավատ և չար։

Եվ մարդ աշխարհ գալով՝ չգիտե, թե ինքը ո՞ր դասին է պատկանում՝ հավատացյալների՞ն, թե՞ անհավատներին. նա չգիտե, թե յուր հոգու տարրը ի՞նչ է ընտրել, արդյո՞ք նա բարին է ընտրել, թե չարը, դժոխքի՞ն է պատկանում, թե դրախտին. նա մնում է մինչև յուր մահը անորոշ երկմտության մեջ։

Եվ այդպես Ղորանը մարդու ազատ անձնիշխանությանը այս աշխարհում ոչինչ չէ թողնում. մարդը դառնում է մի կրավորական էակ, որ պիտի խոնարհվի սկզբնական նախասահմանությանը։ Ահա՛ գլխավոր պատճառը, որ իսլամի հետևողները մնում են զուրկ ինքնուրույն մտածելուց և ամենայն անհատական զարգացումից։

Իսկ քաղաքական օրենքները շատ թերի են, նրանք չեն համապատասխանում կյանքի բազմատեսակ պայմաններին, նրանք չեն լրացնում մարդկության պիտույքները, նրա պահանջմունքները։ Այսուամենայնիվ Ղորանի օրենքները մնացին իբրև նախասկիզբն իսլամի իրավաբանության։ Մարգարեի հաջորդ խալիֆաները՝ Օմարը, Օսմանը, Աբուբեքիրը, Ալին, հիմնվեցան նույն օրենքների վրա, համարելով նրանց աստուծո վերջին խոսքը, որով պիտի կառավարվեր մարդկությունը, և որ անփոփոխ պիտի մնար մինչև դարերի վերջը։ Թեև Ղորանն ունի յուր մեջ, որպես ասացինք, խիստ սակավ օրենքներ, միայն մարգարեից հետո նրա հաջորդները և Ղորանի մեկնիչները սկսեցին տալ նրա խոսքերին զանազան բացատրություններ, և այդ բացատրություններից հետզհետե ձևակերպվեցան զանազան կանոններ, այնքան խառն և հակասական միմյանց, որքան շատ եղան այդ մեկնիչների թիվը զանազան դարերում։ Եվ այդպիսով կազմակերպվեցավ շարիաթը։

Շարիաթի նախկին ավանդապահները և նրա գործադրողները եղան Մարգարեի հաջորդները, այսինքն՝ նրա խալիֆաները, որոնք էին ներկայացուցիչներն իսլամի թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր իշխանության։

Տաճկաստանում օսմանցիների և Պարսկաստանում սաֆավիների թագավորները խլեցին խալիֆաներից նրանց աշխարհական իշխանությունը և թողեցին նրանց միայն հոգևոր կառավարությունը և շարիաթի գործադրությունը։

Խալիֆաներից անցավ այդ արտոնությունը իսլամի մոլլաներին։ Որովհետև իմ խոսքը Պարսկաստանի վրա պիտի լինի, ուրեմն կգրեմ մի քանի տեղեկություններ Շիաների մոլլաների մասին։

Շիաների հոգևոր դասը բաղկանում է հետևյալ դասերից՝ Մուշտայիդ, ազամ, այսինքն՝ մեծ մուշտայիդ. դա է բարձրագույն գլուխը նրանց դինի, և որպես ընդհանուր պատրիարքը՝ նա նստում է Բաղդադի Քալբալա կոչված վանքում, որ և կենտրոն է շիաների կրոնական աշխարհի, ուր դրած են նահատակված իմամների գերեզմանները։

Բացի նրանցից, Պարսկաստանի քաղաքները ունեն իրանց առանձին Մուշտայիդները, որպես գլխավոր Մուշտայիդի տեղապահներ։ Դրանք կոչվում են բիշնամազներ, այսինքն՝ այնպիսի մոլլաներ, որոնք մզկիթներում հրապարակական աղոթքի ժամանակ կարդում էին նամազը, և ժողովուրդը հետևում էր նրանց օրինակին։

Մնացորդ կարգերն են Շեյխ-Ուլ-Իսլամ, Ղազի. դրանք են շարիաթի գլխավոր ավանդապահները, որոնք և կոչվում են Հաքիմ-շարա, որ նշանակում է դատավոր։ Ղազի և Շեյխ-Ուլ Իսլամ լինելու արտոնությունը տալիս է կառավարությունը։

Մյուս կարգերն են՝ հասարակ մոլլաներ, որոնք պարապում են վարժապետությամբ և ունին ուսումնարաններ։ Թալբաները համապատասխանում են քրիստոնյաների տիրացուներին։

Ամբողջ հոգևորական դասը, մի խոսքով՝ կոչվում է ուլամա (իմաստուններ) ախունդ կամ հասարակաբար մոլլա։

Մոլլա լինելու բարձր աստիճաններն ստանալու համար՝ որպես են՝ Մուշտայիդ, Շեյխ-Ուլ-Իսլամ, Ղազի՝ հարկավոր է դիմել Բաղդադ՝ գլխավոր Մուշտայիդին։ Այնտեղ, Քալբալայի տան մեջ կա հոգևոր բարձր ուսումնարան, իսլամի աստվածաբանությունը և շարիաթի օրենսգիտությունը սովորելու։ Ուսանողը մնում է այնտեղ յոթն, ութը տարի, սովորում է արաբական լեզուն, լսում է դասեր հիշյալ առարկաներից և ուսումն ավարտելուց հետո ստանում է գլխավոր Մուշտայիդից վկայական յուր գիտության մասին։

Ոչինչ կրոնական ծեսեր չեն կատարվում ուսանողին մոլլա լինելու որևիցե կարգում ձեռնադրվելու. բավական է միայն, որ նա ունենա գիտնական արժանավորություն և յուր վարձով գրավե գլխավոր Մուշտայիդի համակրությունը։ Նորընծա մոլլան, ավարտելով յուր ուսումը, գլխին փաթաթելով ճերմակ կտավե նվիրական ամմամոն, ծածկելով սև շալը մաշիդի վերարկուի (աբայի) մեջ, երկայն, սպիտակ արաբական հագուստով, մեջքը պնդած հաստ գոտիով, բարեպաշտական տեսողորմյան

ձևերով, մի խոսքով, յուր արտաքին կերպարանքը ձևակերպելով ջերմե-ռանդ և բարի հոգևորականի ամենայն կեղծավորությամբ, վերադառ-նում է հայրենիք և բաց է անում յուր համար շարիաթխանա (դատաս-տանատուն)։

Շարիաթխանան կառավարչական մի առանձին պաշտոնական տեղ չէ։ Ամեն մի հաքիմ-շահ յուր գրասատան սենյակը սարքում է յուր համար որպես շարիաթխանա։

Ես կնկարագրեմ այդ շարիաթխանաներից մեկը, որին ես այցելու-թյուն արեցի Թեհրանում։ Հաքիմ-շահը ամենահարուստ կալվածատերն էր, նա ուներ գյուղորայք, առաջին հարստություն։ Ես ներս մտա նրա շարիաթխանան. դա մի սենյակ էր՝ խիստ աղքատիկ կերպարանքով, թղթած լուսամուտներով և մերկ հատակով։ Ինքը հաքիմ-շահը, խիստ հասարակ հագուստով՝ նստած էր փսիաթի վրա։ Նա ներկայացնում էր ինձ իսլամի մարգարեն կամ նրա խալիֆաները, որոնք իրանց առաջին մեծության մեջ ցուցանում էին պարզ, անփառասեր և չափավոր կյանք։

Երեկոյան ժամն էր, հաքիմ-շահը ինձ հրավիրեց յուր ներսի տանը թեյ խմելու։ Ես զարմացա, տեսնելով առաջին զանազանություն ներսի և դրսի տան մեջ։ Այդ անմատչելի բնակարանը, որ նվիրական էր նրա հարեմներին, վառվում էր ամենայն շքեղությամբ։

Ես այնտեղ մանելու բախտն ունեցա նրանով, որ հաքիմ-շահի երե-խան հիվանդ էր, ինձ հրավիրեցին որպես բժիշկ։

Բակը զարդարած էր գեղեցիկ պարտեզով և հազվագյուտ ծաղիկնե-րով. նրա մեջտեղում փաղփողում էր մարմարին շատրվանը. ջուրը դեպի վեր էր ցողվում արծաթյա հոսանքով։ Սենյակները վառվում էին զույնզ-գույն ապակեզարդ լուսամուտներով. ամենուրեք տիրում էր ճոխություն, փայլում էին շալեր, թանկագին խալիներ, մետաքս, ոսկի, արծաթ, չի-նական կարասիք։

Ես կամեցա օգուտ քաղել իսլամի դատավորի ներկայացուցչից, խո-սելով շարիաթի վրա, և հայտնեցի իմ կարծիքը նրա մասին, ասելով.— Ամեն մի օրենսդրություն, թող նա տված լինի որևիցե մարգարեի ձեռքով, ժամանակների ընթացքից հետո հնանում է, անպիտանանում է և դառնում է ժողովրդի կյանքի պայմաններին անգոհացուցիչ։ Այդ-պես է Մուհամմեդի շարիաթը։ Համարյա տասնուերեք դարեր անցնում են նրա գրվելու ժամանակից։ Իսլամի քաղաքական և բարոյական կյան-քըն այժմ բոլորովին այլ պայմանների մեջ է, բայց շարիաթը դեռ մնում է նույնը։

Մոլլան պատասխանեց.— Շարիաթը որևիցե աշխարհական մարդու սահմանադրություն չէ, որ ենթարկվի այս և այն փոփոխություններին. նա աստուծո խոսքն է և պիտի մնա որպես հավիտենական օրենք։

— Ի՞նչ օգուտ մի այդպիսի օրենքից, երբ նա չէ համապատասխանում հասարակության կյանքի պայմաններին,— հարցրի ես։

— Թո՛ղ ժողովուրդն ինքը յուր կյանքը հարմարեցնե շարիաթի կանոններին, և ոչ թե շարիաթը հպատակվի ժողովրդի կյանքի պահանջմունքներին,— պատասխանեց մոլլան։

— Այստեղ է գլխավոր սխալը, որ դուք կարծում եք, թե մարդկային կյանքը պիտի հարմարվի օրենքի պահանջներին, և ո՛չ օրենքը՝ կյանքի պայմաններին։ Ես հիմա ցույց կտամ ձեզ ընդհանուր վնասը մի այդպիսի ուղղության։ Այն ազգերը, որ դարերով կառավարվում են միօրինակ օրենքով, նրանք մնում են միօրինակ անշարժության մեջ։ Գիտությունը, կրթությունը, լուսավորությունը մնում է նրանց անմատչելի։ Սույն դրության մեջն են այժմ իսլամին հետևող ազգերը։

Վերջին խոսքերը կարծես բարկացրին մոլլային, և նա ասաց.

— Այն բանը, որ դուք կոչում եք գիտություն, կրթություն, լուսավորություն, դա ծայրահեղ մոլություն է, որ տանում է մարդուն դեպի դժոխքը և շինում է նրան սատանայի հպատակ։ Լուսավորությունը բովանդակվում է միմիայն Ղորանի մեջ, և նրա լույսով պիտի կառավարվի ամբողջ մարդկությունը։

Ես հարցրի.— Գիտե՞ք այդպիսի սխալ կարծիքները որքա՛ն ետ թողեցին ձեր ժողովուրդը լուսավոր ազգերի առաջադիմությունից և նրանց բարօրությունից։

— Մեր բարօրությունը, մեր փառքը մարգարեի ճեննաթումը պիտի վայելենք. այս աշխարհքը ոչինչ բան է,— պատասխանեց մոլլան խորին համոզմունքով։

Ազանի ծանր և ձգական ձայնն ընդհատեց մեր խոսակցությունը, մոլլան պատրաստվեցավ յուր նամազը կատարելու։ Ես հեռացա նրանից։

ՆՈՏԱՐ

Պարսկաստանը չունի կառավարության կողմից նշանակված ո՛չ մակլերներ և ո՛չ նոտարներ։ Այդ պաշտոնները կատարում են զանազան մոլլաներ կամ միրզաներ (գրագիրներ), որոնք նստած բազարներում,

մի կտոր հաստատուն թուղթ և թանաքաման առաջներին դրած, նստում են իրանց մոտ հաճախորդներին:

Մի մարդ մյուսից պարտք է վեր առել և հարկավոր է նրան մուրհակ տալ. կամ մինը մյուսից անշարժ կալք է գնած, հարկավոր է նրան կալվածագիր տալ. կամ մինը մինի հետ պայման, դաշնագրություն ունի, կամ մինը բարեգիր պիտի գրե յուր բարեկամին. բոլորը գնում են մոլլայի կամ միրզայի մոտ: Նա գրում է նրանց թղթերը, ինքը կնքում է, և այլ երեք հոգի վկաների կնքել է տալիս, այդքանը բավական է թղթի հաստատության համար:

Միրզան կամ մոլլան, ով որ կուզե թող լինի, բարոյական, թե անբարոյական մարդ, այդ պաշտոնը կատարելու համար մի առանձին երաշխավորություն կամ արտոնություն չէ պահանջվում նրանից, բավական է միայն, որ նա գիտե գրել և կարդալ:

Ամեն տեսակ թղթի վրա գրում է նա՝ սպիտակ, դեղին և այլն: Պարսկաստանը դեռ դրոշմավոր թուղթ չունի:

Ամեն մի վկայական չէ վավերացվում պարտավորված կողմերի կամ վկաների ստորագրությամբ. այլ նրանց և գրող մոլլայի լոկ կնիքների դրոշմվելով:

Այդպիսի կնիքներ կարելի է գնել բազարից, ուր՝ քանդակագործների մոտ զանազան մարդկանց անուններով, հարյուրներով պատրաստի ծախվում են:

Այնպես որ կեղծ վկաներով մուրհակ շինելն ամենայն կերպով հնարավոր է լինում: Բավական է մի միրզային մի քանի շահի տալ գրելու միայն մի վկայական, այնուհետև նրան վավերացնելու համար կնիքները հեշտ է գնել բազարից:

ՋՐԱԲԵՐԴ

Մի հատված իմ ճանապարհորդությունից Ղարաբաղում

Մռայլ է։ Անցքից օձի նման ոլորվում է մի հազիվ նշմարվող շավիղ, որ տանում է անտառապատ լեռների կողքերով, իսկ վերևից տարածվում է հսկայական ծառերի կանաչազարդ կամարը։ Արեգակի ճառագայթները չեն անցնում այդ կամարի սաղարթախիտ հյուսվածքից. ճյուղերը, ոստերը, տերևները սիրալիր կերպով գրկել են միմյանց։

Տեղ-տեղ կանաչազարդ կամարը տատանվում է, և ճյուղերի ճեղքերից տեսնվում է կապտագույն երկնքի մի փոքրիկ մասը միայն։ Այդ ճեղքերից ոսկյա ժապավենների նման ներս են ցոլանում արեգակի բարակ շողքերը, և անտառի մեջ տիրող մռայլը փոքր-ինչ պարզվում է, լուսավորվում է։

Օդը խեղդում է։ Վերևից հուլիսյան արեգակը կրակ է թափում։ Բայց այդ կրակը, այդ տապը, այդ բոցը չէ թափանցում մինչև անտառի խորքը։ Ծառերի տերևների խիտ հյուսվածքը ընդդիմադրում է նրանց։ Ձորերի խոնավ զովությունը, մեղմացած վերևից ներգործող ջերմությամբ, խիստ ախորժ հրապուրանքով շփվում է ուղևորի երեսին, և նա լի ախորժակով շնչում է եղևինիներից բուրող բալասանը։

Շավիղը նեղ է։ Նա անթիվ ելևէջներ ունի։ Երբեմն բարձրանում է գագաթների վրա, երբեմն իջնում է մթին ձորերի և նեղ փապարների մեջ։ Սայլակի անիվները աշխարհի սկզբից մուտք չեն գործել այդ կուսական անտառների մեջ։ Մարդը միշտ սարսափել է իր համար ճանապարհ հարթելու։ Լեռնային գահավեժները սոսկալի են։ Ուղևորի ձին

անգամ չէ հանդգնում ոտք կոխել նրանց վրա. մի սխալ քայլ, մի թեթև սայթաքում, և ահա՛ նա գլորվեցավ դեպի անդունդը...

Ստիպված ես գնալ ոտքով։ Քո առաջնորդը, այդ ահարկու ապառաժների, այդ մթին ծմակների հարազատ որդին՝ կտանե քեզ։ Նրան ծանոթ են բոլոր անցքերը, բոլոր շառավիղները, որտեղ միայն վայրենի այծերը համարձակվում են ոտք կոխել։

Տիրում է լռություն։ Անտառի մեջ մի տերև անգամ չէ շարժվում։ Միջօրեի տոթը բոլոր արարածներին հալածել է դեպի ծմակների խորքը, դեպի քարանձավների մթություն։ Թռչունները անգամ չեն երևում։ Ամեն ինչ ննջում է, ամեն ինչ հանգստանում է խորին խաղաղական ընկրկության մեջ։

Ինչ-որ մի բան խշխշում է, կարծես ուղևորի ականջներին դիպչում է թփերի մեղմ սոսափյունը։ Նայում ես քո շուրջը։ Եվ ահա բեղմնավոր շլորենու ճյուղերից քարշ է ընկած մի էակ։ Ծառերի խտությունը թույլ չէ տալիս պարզ նշմարել նրան։ Երևում է մի կարմիր շապիկ միայն, որ իջել էր մինչև մերկ սրունքները։ Հետաքրքրությունը վառվում է։ Նայում ես, նայում ես, այժմ նկատվում են կնոջ ծամերի երկայն հյուսեր, որ ծածանվում են ճյուղերի հետ։ Այդ ի՞նչ է, որտեղի՞ց հայտնվեցավ այդ անտառային ֆեան։ Ի՞նչ գործ ունի նա այդ վայրենի ամայության մեջ, ուր վագրերն անգամ սարսափում են երկյուղից։

Դա մի շինական հայ աղջիկ է, որ հեռավոր գյուղից եկել է անտառային պտուղներ քաղելու։ Նա քաղում է կարմիր, հասունացած շլորները և խնամքով լցնում է զամբյուղի մեջ, որ քարշ է ընկած նրա թևքից։ Նա մենակ է։ Փոքր-ինչ հեռու, գլուխը առջևի թաթերի վրա դրած, պառկել է նրա մտերիմ ընկերը՝ մի ահագին շուն։ Փորձի՛ր մոտենալ մենավոր աղջկան, այդ գազանը կպատառոտե քեզ։

Աղջիկը ետ նայեց։ Ուղևորը կասկածավոր երևեցավ նրան։ Զարմանալի արագությամբ ցած ցատկեց նա շլորենուց և մի ակնթարթում անհայտացավ անտառի մթության մեջ։ Այլևս ինքը սատանան չէ կարող գտնել նրան։ Նա չի վախենա. նա երկյուղ չունի. նա ամեն տեղ կգնա։ Նա ծնվել է և սնվել այն մամռապատ ծառերի հետ. նրա օրորոցը եղել է այն վայրենի ապառաժները։

Մի քանի քայլ ևս, և ուղևորը նկատում է այդ անտառային կույսերի երկրորդը, երրորդը... Դրանք չեն փախչում. դրանք ճանաչեցին, որ դու նույնպես հայ ես, որպես իրանք։ Նայում են քեզ վրա և խորամանկ հեգնությամբ ժպտում են։ Ինչո՞ւ, ի՞նչն է շարժում այդ միամիտ շինական աղջիկների ծիծաղը։

Նրանք նկատեցին քո դողդոջուն քայլերը, նրանք տեսան, թե ինչպես դու երկչոտ կերպով մագլցում ես ժայռերից և կրիայի նման առաջ ես սողում։ Այդ բավական է, որ հրավիրեր երիտասարդի վրա լեռնային աղջկա ծիծաղը։ Կարծես մարդ լսում է նրանց ուրախ հանաքները։ «Ա՜յ փափկամորթ, սովորե՛լ ես կառքերի վրա թեք ընկնել, կամ թավիշապատ դիվանների վրա ծուլանալ. դե՛, փորձի՛ր մեր սարերի վրա ման գալ, այն ժամանակ կասենք, որ դու էլ տղամարդ ես...»։

Ուղևորը թողնում է բնության այդ հարազատ զավակներին, և իրավ, կրիայի նման սկսում է առաջ շարժվել։

— Շուտով,— շտապեցնում է քեզ առաջնորդը,— եթե այսպես գնալու լինենք, մինչև արևի մտնելը տեղ չենք հասնի։

Առաջնորդի ծաղրածությանը ես առարկա չդառնալու համար ուղևորը ստիպված է փոքր-ինչ թեթև շարժվել։ Հոգնածությունը վերջապես բոլորովին անտանելի է դառնում։ Առաջնորդը նկատում է այդ և մի առանձին քաղաքավարությամբ միջոց է տալիս հանգստանալու։

— Ծխեցեք, պարոն։

Նստում ես ծառերի հովանավոր ստվերի ներքո, սկսում ես ծխել։ Քրտինքը հեղեղի նման թափվում է քո ճակատից։ Ամեն ինչ բաց է, շապիկ, ժիլետ և ամառային ժակետ։ Անկարելի է այդ դրության մեջ երկար նստել։ Հագուստը կորցնում է իր ջերմությունը, և մրսողությունը անխուսափելի է դառնում։ Պետք է դարձյալ շարժում գործել, պետք է առաջ գնալ...

Գնում ես, գնում ես միևնույն լռության, միևնույն անշարժության միջով։ Հանկարծ նիրհող անտառի խորհրդավոր հանգստությունը աղմկվում է և, կարծես, լսում ես մի խուլ, ստորերկրյա որոտման ձանր դղրդյուն։ Որքան առաջ ես գնում, շրջապատող լեռները սկսում են հետզհետե որոտալ։

Նայում ես դեպի երկինքը. տեսնում ես նույն մանիշակագույն կապուտակությունը իր նուրբ ժպիտով, նույն լուսավոր արեգակը իր պայծառ ճառագայթներով։ Ամպի մի փոքրիկ պատառ անգամ չէ երևում։

Բայց որտեղի՞ց է լսվում այդ խուլ, սարսափեցնող որոտի ձայնը։ Մտածում ես, անդունդի մեջ կատարվում է մի սոսկալի խռովություն. կատաղի տարրերը մարտնչում են միմյանց հետ։ Ժայռերը, ապառաժները մռնչում են։ Խաղաղ մթնոլորտը սկսում է երկյուղածությամբ դողդողալ։ Եվ ուղևորի վրա տիրում է մի սրբազան սարսուռ. նա խոնարհվում է, ծունր է իջնում բնության վեհության առջև...

— Դա Թարթառ գետի ձայնն է լսվում,— հանգստացնում է քեզ առաջնորդը։

— Շո՞ւտ կհասնենք։

— Այդ սարի մյուս կողմումն է։

Անցնում ես սարը, անցնում ես սարի մյուս կողմը։ Քո առջև բացվում է մթին անդունդ։ Նայում ես, նայում ես անդունդի խորության մեջ, աչքերդ սևանում են, գլուխդ պտտվում է, ոչինչ չես տեսնում։ Հետո երևում են քեզ ծառերի հավասար կատարներ, որոնք կարծես մկրատով հարթած լինեին։ Այդ ծառերը աստիճանաբար ցած են իջնում, ցած են իջնում և լցնում են կանաչապատ ձորի ամբողջ խորությունը։ Ուրիշ ոչինչ չի երևում։

— Ահա Թարթառը,— ցույց է տալիս առաջնորդը, ձեռքը մեկնելով դեպի ձորի խորությունը։

Բայց Թարթառը չէ երևում։ Նա կորել, անցել է ժայռերի ամրության. նա տաշել է միապաղաղ ապառաժների զանգվածը. նա հազարավոր քայլերով ցած է իջել դեպի երկրի սիրտը. նա դարերով գործել է այստեղ, մինչև քարերի միջով բաց է արել իր համար մի նեղ և ան- ճանապարհ։ Այդ ճանապարհի մեջ խեղդված, ճնշված, մի հսկա վիշապի նման գալարվում է նա, պտույտներ է գործում, որոտում է, մռնչում է և կատաղի կերպով աղմուկ է բարձրացնում, զայրանում է, թե ինչու չէ կարողանում ավելի լայնացնել իր ուղին։ Իսկ վիթխարի լեռները երկու կողմից ավելի և ավելի սեղմում են նրան, և նա բարկացած, ավելի աղաղակ է բարձրացնում։

Թարթառը հայոց մեծ գետերի ամենակրտսեր եղբայրն է։ Նա փոքրիկ է, բայց ահարկու է։ Բնությունից վիճակված է եղել նրան կատարել մի ամենադժվարին դեր։ Նա չէ վազում ընդարձակ, հարթ-հավասար և լայնատարած դաշտերի միջով, որ, որքան ցանկանար, այնքան լայնացներ իր ափերը և խաղալով, խայտալով, ուրախ հոսանքով շարունակեր իր ընթացքը։ Ճակատագիրը Թարթառին սեղմեց Ղարաբաղի լեռնային ձորերի մեջ. նա հազարավոր տարիներով պիտի կռվեր անողոք քարերի և անսիրտ ապառաժների հետ, և այդ էր, որ զայրացնում էր նրան, այդ էր, որի դեմ բողոքում էր նա իր աղմկալի ձայնով։

Այդ ճնշված, նեղված դրության մեջ ևս Թարթառը պահպանել էր իր վեհությունը։ Բնության խստությունը չէր կարողացել հուսահատեցնել նրան. նա միշտ կռվել էր և շարունակում էր կռվել իր հոսանքին արգելք դնող խոչընդոտների դեմ։

Երբեմն լեռնային գագաթից պոկվում է, ցած է գլորվում մի ահագին քարաժայռ։ Նա կտրում է գետի ճանապարհը։ Ջրերի ընթացքը կանգ է առնում։ Այդ միջոցին կատաղած Թարթառը ուռչում է, ուռչում է և,

հեաղհեան անձկով, հալածում է իր ուժերը։ Մի՜ զա՛րկ, զա՛րկ ես... և ահա ահագին քարաժայռը, որ կտրել էր նրա հոսանքի առաջը, հետ մղվեցավ, կատաղի ալիքները մի թեթև տաշեղի նման տանում են նրան. տանում են և, զարկելով ափերի ապառաժներին, խորտակում են, փշրում են։ Գետը դարձյալ ընդունում է իր բնական հոսանքը։

— Դուք կամենում էիք տեսնել Ջրաբերդը,— հիշեցնում է ինձ առաջնորդը,— շատ հեռու չենք բերդից։

— Տարեք ինձ այնտեղ։

Ջրաբե՜րդ, այդ անունը լսելիս իմ սիրտը բաբախում էր և ուրախությունից, և տրտմությունից։ Ես պիտի տեսնեի այն բերդը, որ շատ անգամ պահել, պահպանել էր մեր հայրերին պարսիկների, թաթարների, արաբների և կովկասյան լեռնաբնակների հարձակմունքներից։

Մենք պիտի իջնեինք Թարթառի ձորը։ Բերդը տեսնելու համար պետք էր անցնել գետը։

Բնությունը լավ հասկանալով այդ գետի անհաշտ բնավորությունը, գիտենալով, որ նա այնքան չար է, որ չէ կարող համբերել արհեստական կամուրջների, գտել էր մի հնարք. երկու ժայռեր, երկու ահագին սյուների նման, ափերի հակառակ կողմերից մոտեցրել էր միմյանց։ Նրանք այնքան մոտ են, որ մտածում ես, թե կարող ես մեկ ժայռից թռչել մյուսի վրա։ Այդ երկու ժայռերի վրա դրած է մի շարժական կամուրջ, որի տակով անցնում է Թարթառը։

Ես անցա կամուրջը։ Այժմ գտնվում էի գետաձորի հատակի վրա։ Չորս կողմից բարձրանում են անտառապատ լեռներ։ Նայում ե՞ս դեպի վեր, երկնքի մի նեղ շերտն ես միայն տեսնում։ Նայում ե՞ս դեպի ցած, և մտածում ես, որ ահա գտնվում ես անդունդի շրթունքների մոտ, որը իր ահագին բերանը բաց արած պատրաստվում է կլանել քեզ։

Այդ անդունդի, այդ սոսկալի խորության միջից, հսկայական շաքարի գլխի նման բարձրանում է մի մերկ, սեպաձև քարաժայռ։ Նայում ես նրա վրա և զարմանում ես, թե որքա՜ն խելացի է բնությունը, թե որքա՜ն նախատեսել գիտե նա չար մարդիկների չար բնավորությունը, որ կանխապես ստեղծագործել է մի այսպիսի հրաշք, որ մարդիկ կռիվների ժամանակ պատսպարվեին նրա՛ վրա, պաշտպանվեին թշնամու բարբարոսությունների դեմ։

— Դա Ջրաբերդն է,— ասում է առաջնորդը, ցույց տալով վիթխարի քարաժայռը։

Նրա լայնանիստ գագաթի վրա գտնվում են բերդի ավերակները։

Իսկ ներքևից նա սրածայր է երևում, մի ահագին սեպի նման։ Բայց ինչո՞ւ է կոչվում նա Ջրաբերդ։

Բերդը արժանի է այդ կոչմանը։ Եվ իրավ, նա երեք կողմից պատած է ջրով։ Մի կողմից որոտում է կատաղի Թարթառը, մյուս կողմից, Թըրղի գետը գալով, կտրում է առաջինին և կազմում է մի սուր եռանկյունի։ Այդ եռանկյունու միջից բարձրանում է սեպաձև քարաժայռը, և նրա գագաթի վրա է դրած Ջրաբերդը, որի ստորոտները ողողվում են այդ երկու գետերով։

Բերդի գլխավոր դռան հսկա կամարներն են միայն մնացել։ Այդ դռնից ներս մտնելով, մի օձապտույտ ճանապարհ, ապառաժների կուրծքը քերելով, դեպի վեր է բարձրանում։ Ճանապարհի հին սանդուղքներն այժմ ծածկված են փլատակների բեկորների տակ։ Այդ բեկորների միջից բուսել են, աճել են ծառեր, թփեր, որոնց ճյուղերից բռնելով՝ պետք է կամաց-կամաց վեր բարձրանալ։ Ձեռքից պոկվեցավ ճյուղը, և դու մի քանի րոպեից հետո կգտնվես Թարթառի որոտացող կոհակների մեջ, որ ներքևում հոսում է։

Իմ առաջնորդը խորհուրդ չէր տալիս գնալ մինչև բերդի գագաթը զգուշացնելով, թե այնտեղ կարող էինք գազանների հանդիպել։ Բայց ինչ էլ որ լիներ ես վճռել էի տեսնել բոլոր ավերակները։

Մի քանի ամբողջ ժամեր անցան, որ քարերը, ծառերը, թփերը, մացառները բռնելով, մենք դեպի վեր էինք բարձրանում։ Ամենադժվարինն այն էր, որ տեղ-տեղ այդ վայրենի բուսականությունը այնպես խիտ հյուսված էր լինում մինը մյուսի հետ, որ անկարելի է անցնել։ Իմ առաջնորդը խենջարով կտրատում էր ճյուղերը և ինձ համար ճանապարհ էր բաց անում։ Վերջը անկարելի եղավ շարունակել. հոգնածությունը մի կողմից, սաստիկ ծարավը մյուս կողմից, բոլորովին թուլացրին ինձ։ Ես նստեցա հանգստանալու։ Իմ առաջնորդը շտապով դարման գտավ իմ ծարավը հագեցնելու համար։ Նա քաղեց հասունացած շլորներ և տվեց ինձ ուտելու։ Թթվաշ պտուղները բավական զովացրին իմ սիրտը։ Այդ շլորենիները բուսել էին այն ավերակների միջից, որոնք մի ժամանակ շեն էին, որոնց մեջ մի ժամանակ մարդիկ էին բնակվում։

Վերջապես մենք գտնվում էինք սեպաձև ապառաժի գագաթի վրա։ Բերդի շինվածքներից ամբողջ ոչինչ չէ մնացել. երևում են կիսակործան աշտարակներ, երևում են կիսավեր պարիսպներ, երևում են զանազան սրահներ, սենյակներ, որոնց բոլորի ծածքերը ցած են թափվել։ Այն հզորները, որ մի ժամանակ այդ ամրություններից սարսափ էին տարա-

ծում թշնամու վրա, այժմ չկան։ Նրանց փոխարեն երկչոտ բուն թագավորում է ավերակների վրա և կանչում է իր չարագուշակ ձայնով։

— Տեսնո՞ւմ եք այդ անցքը,— ցույց տվեց իմ առաջնորդը,— պաշարման ժամանակ այստեղից ջուր էին բարձրացնում բերդի մեջ։

Այդ գաղտնի անցքը ցույց է տալիս, թե ո՛ր աստիճան զարգացած էր Հայ մարդու արհեստը, և ո՛ր աստիճան հմուտ էր նա ռազմագիտական հնարների մեջ։ Բերդի բարձրությունից ծակել էին ապառաժը և բաց էին արել մի անցք, որ տանում էր մինչև բերդի ստորոտը, մինչև Թարթար գետի ափը։ Այդ անցքը թունելի նմանություն ուներ և բազմաթիվ քարե սանդուղքներով իջնում էր ցած։ Սանդուղքները փորված էին բնական ապառաժի վրա։ Իմ առաջնորդը բացատրում էր, թե որպես այդ անցքի միջով ջուր էին գողանում գետից, և այդ պատճառով էլ անցքը կոչվում է ջրագող։ Քարե սանդուղքների յուրաքանչյուրի վրա կանգնած էր լինում մի-մի մարդ, վերջինը գտնվում էր գետի ափի մոտ։ Նա ընդունում էր իր մոտ կանգնողից դատարկ ամանը և փոխարենը տալիս էր նրան ջրով լցրածը, և այսպես ամանները ձեռքից ձեռք անցնելով, վերևից ստացվում էր դատարկը, իսկ ներքևից տրվում էր լիքը, և մի քանի րոպեի մեջ լցվում է ջրի ահագին ավազանը, որ գտնվում էր բերդի մեջ, անցքի մուտքի մոտ։

Մի այսպիսի գաղտնի անցք ես բերդից տանում էր դեպի ցամաքը, և ծայրը կորչում էր անտառի մեջ։ Դա փախուստի ճանապարհ էր։

Արեգակը սկսել էր թեքվել դեպի իր գիշերային կայարանը։ Իմ առաջնորդը շտապեցնում էր շուտով ցած իջնել։ Ես տխուր մտածություններով հեռացա այդ սքանչելի ավերակներից, որոնք իրանց կործանման մեջ ես դեռ պահպանել էին վաղեմի մեծությունը։

— Դուք ցանկանո՞ւմ էիք տեսնել և «քաղաքատեղի» ավերակները,— հարցրեց իմ առաջնորդը։

— Անպատճառ։

— Բայց ուշ է, մինչև այնտեղ կհասնենք, կմթնի։

— Վնաս չունի։

Չնայելով իմ առաջնորդի ենթադրությանը, մենք հասանք այնտեղ, երբ արեգակի վերջին ճառագայթները դեռ փայլում էին մի շարք սպիտակ շինվածքների վրա, որոնք գտնվում էին լեռնային բարձրավանդակի վրա։ Ճանապարհը, որ տանում էր այնտեղ, այնքան դժվարին չէր։ Մենք շուտով հասանք շինվածքներին, որոնք ամբողջապես կառուցված էին սպիտակ մարմարիոնի նման փայլուն, գեղեցիկ տաշված քարերից։

Դրանք ամրոցներ էին։ Դրանց մեջ բնակվում էին այն իշխանները, որոնց պատկանում էր Ջրաբերդը։

Բլուրը, որի վրա շինված էին այդ ամրոցները, կիսալուսնի ձև ուներ։ Կիսալուսնի երկու եղջյուրների վրա երևում էին երկու աշտարակներ։ Երևի դրանք ծառայելիս են եղել որպես պահականոցներ, որովհետև գտնվում էին երկու անցքերի մուտքի մոտ, որոնք միակ ճանապարհներն էին դեպի ամրոցը գնալու։ Մի քանի զինված մարդիկ այդ աշտարակների մեջ բավական էին, որ թույլ չտային ոչ ոքի մուտք գործել դեպի ամրոցները, որոնք գտնվում էին կիսալուսնի մեջտեղում։

Այդ փառավոր պալատների երեսը դարձրած է դեպի առջևում բացվող խորին ձորը, որը ծածկված է անտառախիտ ծառերով։ Ժամանակի կործանիչ ձեռքը դեռ շատ բան չէ ոչնչացրել այստեղ։

Ամրոցը չափազանց բաղադրյալ մի շինվածք է. ունի բազմաթիվ սենյակներ, շքեղ դահլիճներ, ընդարձակ սրահներ, երկայն կորիդորներ, բոլորի դռները բացված են միմյանց մեջ։ Լուսամուտները լայն են, և դռները մեծ։ Ամբողջ շինվածքը կառուցված է գեղեցիկ կերպով տաշված քարերից, և հայ մարդու ճարտարապետական տաղանդը փայլում է նրանց մեջ իր բոլոր ձիրքերով։

Մարդու սիրտը սկսում է դողդողալ, երբ նայում է այդ փառավոր շինվածքների վրա։ Այն հիանալի դահլիճներում, ուր մի ժամանակ տիկինները նազ-նազում էին, ուր աղախինների բազմությունը կամակատարությամբ պտտվում էր նրանց շուրջը, ուր կյանքը եռ էր գալիս երջանկության բոլոր բավականությամբ, այժմ ապրում էին վայրենի գազանները։ Ահագին ծառեր աճել էին կիսավեր սենյակների միջից, և իշխանների բոլոր փառքը ծածկված էր թփերի, մացառների և պատատուկների հյուսվածքի տակ։ Մամուռը ամեն տեղ դրել էր հնության կործանիչ դրոշմը։

Երկար, քարացածի նման նայում էի այդ մահվան տեսարանի վրա։ Արևը վաղուց մայր էր մտել, մութը պատել էր, և ես այդ չէի նկատել։ Ես միշտ նայում էի խավարի մեջ։ Եվ կարծես դարերը ետ-ետ էին գնում, և իմ աչքերի առջևից շարքերով անցնում էին ուրվականները այն անձինքների, որոնք մի ժամանակ բնակվել էին այստեղ, որոնք մի ժամանակ իշխում էին այդ հրաշալի անտառների, այդ հսկա լեռների վրա։

Ինձ սթափեցրեց իմ հափշտակությունից իմ առաջնորդը.

— Գնա՛նք, արդեն ուշ է,— ասաց նա։— Ճանապարհը երկար է. շուտով տեղ չենք հասնի։

ՀՈԴՎԱԾՆԵՐ

[«ԱՐԾՎԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԻՆ]

Հայրենասեր ճայր

Արդեն շատ ամիսներու գլորահոլով շրջանն լրացավ. մինչև Ձեր նամակին սպասելով՝ սրտներում անձկությունն օրըստօրէ կբազմանար։ Հիրավի՛, շատ հետաքրքրական լուր է՝ գիտել՝ արդյոք որպիսի սաստիկ զորությամբ նորությունը կմարտնչի հնության հետը։ Ի սկզբանե անտի այս երկու նախանձավոր թշնամիներն, յուրաքանչյուրն առանձին խումբ որոշած, մարտ կմղեն, այլ առաջինն միշտ հաղթող գտնվելու է։

Մարդկային բնությունը, մին առանձին գաղտնի հարաբերություն ունենալով տիեզերական համաշխարհական բնության հետ, միանգամայն և նորանից յուր կախումն ունի։ Զննելով տեսնում եմք. քառահոլով եղանակներուն հետ, երբ բնությունը տկարում և մեռնում է. զարթյալ առաջանալով հարություն է առնում. ընդ նմին և մարդկային սրտի եռանդն, ոգվո աշխույժն և մարմնո հաստկությունն նույն ձևերն ընդունում են։ Զարմանալի հեղափոխություններ տեսնելու է՝ ոչ թե մին դարվո միջոցումն, այլ ընդհանուր դարերու սահմաններումն. ուր ծեր Կռոնոսն հիանալի պատկերացուցանե յուր ներգործություններն, որպես համենայն տիեզերական բնության վերա, նույնպես և առհասարակ բոլոր մարդկային ազգին վերա։

Այժմյան Եվրոպիո լուսավոր ազգաց իմաստության, քաղաքականության, և վանական արվեստաբանության այդչափ զարմանում եմք. եթե փոքր-ինչ անցյալ ժամանակին նայելու լինիմք, կտեսնեմք նրանց թշվառ բարբարոսական վիճակն։ Հայաստանն առաջացույն սկսավ ընդունել բնության բարի ձիրքերն. բայց ինչ օգուտ, կատարելության չի հա-

աով, այլ հետզհետե նվաղեցավ: Այն ժամանակն, որ Եվրոպիո զանազան բարբարոս ազգերն՝ մինչ պատերազմներու մեջ շփոթված կատաղաբար միմյանց արյունն էին թափում. Հայաստանի ուշիմ որդիքը Աթինայի մեջ՝ Աթինաս Հռոմայում ուսումն էին սովորում: Բայց ինչո՞ւ համար նոքա յուրյանց բարբարոսական վիճակից այժմյան լուսավորությանն հասան. իսկ Հայաստանցիք յուրյանց պայծառափայլ լուսավոր աստիճանիցն՝ օրըստօրէ ազատացան. կորցնելով ըստ մեծի մասին ազգությանն, կրոնն և հայրենիքը: Այդ մասին թեպետ բազումք այլ և այլ պատճառներ հառաջ բերում են, իսկ նվաստս՝ ակար կարեացս չափ, Հայաստանի հոգևորականաց անհոգությունը համարում եմ սորա միմիայն էական պատճառ: (Բայց ներողություն կխնդրեմ հառաջագույն՝ չլինի թե իմ դատողություններն Ձեր սրտին դժկամական պատճառ լինին. ըստ որում դուք ես հոգևորական դասակարգեն լինելով՝ դույն մեր գրվածքներովն ներշնչեցիք: Այլ Ձեր ազգասեր ոգին և բարի նպատակն՝ որպես ընդհանուր ազգին, նույնպես և մեզ քաջահայտ է: Հուսամ զի ճշմարտությանն ես ընդդեմ լինեք և մեր ակար դատողություն ներեք):

Դ/ Հայաստանն արդեն քրիստոնեական ժամանակումն կորցրուց յուր վեհափառ թագավորներն: Այնուհետև ազգի պահպանությունն ընկավ հոգևոր կառավարության տակ: Բայց ափսո՜ս. զի որպես առաջնույն կործանման պատճառ նախանձն երկպառակությանն եղավ, նույնպես և հետնույն օրըստօրէ ակարանալուն պատճառն՝ նույն սատանայելի ոգին եղավ: Փառասիրությունը տիրեց ամենեցուն, վանքերն մեկ-մեկ դղյակներ դարձան. մեր պատվելի խաչազուրյան ամենեցուն առաջներն առանձնացան նոցա մեջ: Հիրավի՜, եթե մին այլ հարմար տեղի դասներն յուրյանց հանգիստ, ծույլ, անպիտան կյանքն դյուրությամբ անցուցանելու՝ վանքերն ալ թող կուտային: Բայց ուստի՞ կարող էին գտանել այնպիսի տեղը, ուր որ ազգն ջերմեռանդ ոգով թափում է յուր ողորմության բարիքներն: Թեպետ յուր հովիվներն՝ զինքն անտերունչ՝ գազանաց ժանիքներումն թողած՝ ինքյանք հեռացել են. բայց նա՝ (ազգն) միշտ յուր սրտին մեջ պահպանում է յուր ապերախտ կրոնավորաց հարգն:

Եվրոպացիք որչափ ավելի ջանք են տանում ուսումնարաններն բազմացուցանելու և տպագրությունն առաջ տանելու՝ Հայաստանի վարդապետներն այնչափ հերքում են: Այս երկուսս միայն պատճառ լինելով հասարակաց լուսավորությանն, եթե Հայաստանի մեջ ես գործի դըրվին՝ կարող են մեր այսքան հայր սուրբերու հարգությանն փոքր-ինչ

պակասություն բերել: «Որովհետև երբ այժմյան նախապաշարյալ հնասեր ծերերն վերջացան, և ազգին մեջ գիտնական անձինք գտնվեցան, այլևս չեն թողուլ կրոնավորներն վանքերու, անապատներու սենյակներումն փակվելու, այլ նոցա սեփական պաշտոնն հասկացնել տալով, կստիպվին ըստ արժանվույն ժողովրդյան համար հոգ տանել, ինչպես նախնի սուրբն Սահակ, սուրբն Մեսրովբ և այլն անձնանվեր սուրբ Հայրք աշխատում էին ազգին մտաց լուսավորության համար. և քարոզությամբ Սուրբն գրոց առաքինություն հաստատում էին նրանց սրտին մեջ:

Ազգին սերը, մանավանդ եվրոպացվոց օրինակներն, մեծ հորդոր եղավ Ձեզ հառաջ տանելու հայրենյացդ մեջ այն ամենահարկավոր ձեռնարկություն, որն ծնանիլ ունի շատ պիտանի օգուտներ: Բայց իբրև նոր բան և թշնամի հնության հետ՝ մեծ ջանք, մեծ դժվարություն կպահանջե՝ ըստ ամենայն մասին: Որո համար ամենայն բանից առավել հարկավոր է համբերություն: Դժվարին է մին տպավորությունն իսպառ ջնջել և այլովն փոխարինել. իսկ համբերություն պետք է, մինչ ժամանակն ինքնին ի կատար ածե. զի ժամանակն է սպառող ամեն բարի նպատակներու:

Խոհեմությունն միանգամայն դատավոր ընտրելով, նայելու է ամեն կողմերից, որ թե ներկայի համար և թե ապառնվո համար մին արգելք չհասնի, որ Ձեր նպատակի խանգարմանն պատճառ կարող է լինել, շատով նորա դեմն առնելու է ամենայն զգուշությամբ: Եվ ամենայն բանից առավել վստահանալու է Փրկչի նախախնամությանն և անհուսահատությամբ կամաց-կամաց հառաջ տանելու է գործն:

Կաղոթեմք առ Հիսուս, որ իր շնորհած նշույլն կաթեցնե դարձյալ Հայաստանին վրա, ինչպես երբեմն սուրբ խցմանն տեղին. որով պայծառ լուսավորվեին Գրիգորի որդիքներն ղարգանան ուսման առաջադիմությամբ: Այսքանս կարճառոտ գրելով,՝ կմնամ կարոտալի սուրբ աջոյդ համբուրմանն:

ԱՐԳՈ ԲԱՐԵԿԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԹԱՆՅԱՆՑ

Ձեր վերջին նամակը, որ գրված էր մարտի 7-ին, կարդացի կարի ուրախությամբ։ Շնորհակալ եմ. աշխատել եք հասցնելու «Աղթամարա վանքը» մեր մի հատված բանը Մոսկվա, պատվելի Նազարյանցին, որ կարդացի «Հյուսիսափայլի» թերթերու մեջ։ Դարձյալ շնորհակալ եմ պարոն Նազարյանցեն առավել հույժ պատճառ՝ պատվել է մեր գրվածքը տպելով յուր պատվական օրագրի մեջ, մանավանդ մշակելով նորա թերությունքը։

Այս նամակի ծոցումը կստանաք մի քանի ոտանավոր բաներ, որոնք մեր սեփական աշխատության պտուղներն են։ Սուրբ գիրքը կարդալու ժամանակ, տեսնելով շատ հարաբերություն ունին դոքա մեր ազգի այժմյան վիճակի հետ, մանավանդ, կարող են փոքրիշատե ներգործել, ազդել նորա բթացած, թմրած, մարմին դարձած հոգու վերա — ախորժել եմ աշխարհաբար թարգմանել, ոտանավորի ձևով։ Խնդրում եմ, այս ոտանավորները նույնպես անկորուստ հասուցանել պարոն Նազարյանցի ձեռքը. թե կամի կարող է տպել յուր օրագրի մեջ (չկարծեմ, որ նորա օրագրի ախորժակին ընդդեմ գտանվին)։ Ոտանավորներու հետ անպատշաճ չեմ համարում ուղարկել պարոն Նազարյանցին այս իմ առ Ձեզ գրված նամակը. պատճառ, նա կարող էր տեղեկություն ստանալ այն խոսքերեն, որ ես գրած եմ Սարպատականի միխիթարներու մասին։

Արդեն <18>61 թվականի 5-րդ ամիսն է. բայց «Հյուսիսափայլի» տետրակները տակավին հասած չեն ինձ. կասկածում եմ, չլինի թե օրագիրը դադարած լինի։ Ես այս տարի նույնպես բաժանորդ եմ գրված, կարող եք գրել պարոն Նազարյանցին, որ ինձ հասանելի ամսատետրակները

Թավրիզ ուղարկել աղա Գալուստ Շերմազանյանի տետրակների հետ. կամ թե իմ անվամբ ուղարկել Թավրիզու նամակատունը. այն տեղից գերապատիվ Հովսեփ խանը, նամակատան մեծավորը, անկորուստ ինձ կհասցնեն։

Դուք պահանջում եք ինձանից Սալմաստականի միսիոնարներու մասին Ձեզ տեղեկություն տալ, որով կկատարեմ Ձեր խնդիրը։ Այժմ ես Ուրմիա քաղաքումն եմ. այստեղ է ամերիկյան պրոտեստանտ առաքյալներու և հռոմեական լազարիստյան միաբաններու բոլոր կարողությանց կենտրոնը։ Հիշյալ քարոզիչները, Ուրմիո լճակի արևմտյան ափերում, գտան մի կորած, վերջին ռամկության մեջ ընկած ազգ. որք վարվում էին մի խավար առաջնորդապաշտականությամբ, որ առավել նսեմացած էր Նեստորի վարդապետությամբ։ Դոքա էին ասորիքը. մի հին հոյակապ ազգի մնացորդք։ Հաջորդ միջոցները, այլև երկրի պատեհ հանգամանքը շուտով ձեռնտու եղան նորեկ առաքյալներուն առավել հեշտությամբ և առավել արդյունք առաջ տանելու յուրյանց գործը։ Դոքա էին.— ա. բարեխնամ տերության ազատ թույլտվությունը. բ. ասորաց նզովական անկարողությունը և յուրյանց իշխաններից ունեցած անտանելի բռնությունը, մյուս կողմից եվրոպայի առաքյալներու (մանավանդ ինգլիզներու) դրամացի և տերության կողմից պաշտպանությունը. գ. ասորաց, իբրև մի երկար ընկած ազգի ստրկական խոնարհամտությունը և նույն խորին տգիտությունը յուրյանց առանձին դավանության. դ. ազգի ընկնելը վերջին հուսահատության մեջ հալածանքի երեսից, և Եվրոպայի մարդիկը տերությունից մեծ պատիվ ունենալով և նույն հետևողը ամենայն մասամբ պաշտպանված լինելով և այլն, և այլն։

Հռոմեական քահանաները, թեպետև առաջ քան կեսեցին Պարսկաստանի հողի վերա (իբրև 35 տարի առաջ). բայց հառաջադիմությամբ կարի հետ մնացին պրոտեստանտներեն։ Նոքա հազիվ թե կարողացան Ուրմիո քաղաքի և գյուղորեից մեջ ձեռք բերել 200 տուն (գերդաստան) անունով կաթոլիկ պա[illegible]ավաններ. և Սալմաստ նահանգում մինչև 300 տուն։ Թեպետ կարող էին ավելի առաջացած գտնվել, քան պրոտեստանտները. պատճառ, կաթոլիկական քարոզությունքը առավել հարմարություն ունեին ժողովրդի ընդունակության հետ. մինչ դորա հակառակ, պրոտեստանտներու քարոզությունքը փշի նման ծակոտում էին ծիսապաշտ ժողովրդի սրտերը։

Լուսավորության մասում հռոմեական քահանայքը ոչինչ օգուտ շորհյանավորեցին յուրյանց նոր կրոնափոխ ժողովրդին. միայն թե ասորի ազգի առաջուց աստվածացրած սնապաշտության տեղ սովորեցրին

պաշտել մի նոր աստված, շեյթը: Այժմ կաթոլիկները, որպես Եւրոպայում, նույնպես և Սալմաստում խաղաղ գյուղի մեջ ուսումնարաններ ունին երկու սեռ մանուկ մարդերի համար: Որոց մինի մեջ ուսուցանում են քահանայքը տղամարդերին, իսկ մյուսի մեջ Ֆրանսիայի կուսանք՝ աղջիկներին: Բայց մինչև այսօր մի մասնավոր կրթություն ունեցող մարդ չէ՛ դուրս եկել նոցա վարժարաններից: Այն չեմ կարող ուրանալ, որ դուրս ելել են սիրացուներ, որք գիտեն անգիր մի քանի սերտած եկեղեցական աղոթք և մի քանի համառ՛ոտ բառեր Ֆրանսերեն: Եվ աստվածաբանությունից մի քանի ճույլ վկաներ, որով հակառակությանց մեջ կարող էին մի հայ տգետ քահանայի դեմ՝ հաստատել Պետրոսի գլխավորությունը առաքյալներու վերա, որը պապի, նորա հաջորդ լինելով, բոլոր քրիստոնեից վերա, այս աշխարհում աստվածանալու կարողություն ունենալը. մանավանդ երկնքում արքայության դռնապան լինելը և դժոխքի մեջ Կերբերոսի պաշտոն կատարելը:

Հետին ժամանակներում, երբ 3 տարի առաջ (իհարկե հայերը կրոնափոխ անելու համար) Վիեննայի <և> սուրբ Ղազարու միաբաններից Սալմաստ եկան երկու վարդապետներ՝ Հայր Մովսեսը և Հայր Կղեմես Սիբիլյանը, ընթերցող հասարակության ծանոթ, հնագետ և դրամագետ անձն: Դոցա գալուստը սկզբում խիթալի էր, շատ վտանգավոր երևեցան հասա՛րակ աչքերու. բայց վերջում համարյա բոլորովին անարդյուն եղան: Պատճառ, նոքա ոչ մի հայ չկարողացան մոլորեցնել յուրյանց երևելի հայ ազգի և հայ կրոնավորի անունով (որպես սկզբում վարվում էին): Շուտով հեռացան նոցանից նոցա հետևող մի քանի թեթևամիտ գյուղացիներ, երբ հասկացան նոցա չար դարանակալությունը:

Միսիոնարները մինչև այսօր ո՛չ մի հայ չեն կարողացել Ատրպատականի մեջ կրոնափոխ անել: Այստեղ ավելորդ չեմ համարում ծանուցանել ձեզ գլխավոր պատճառը. և դույն լինելունքը: Առաջին, հայերը Պարսկաստանի մեջ կորած չեն, պահպանում են յուրյանց ազգային իրավունքը, ունենալով յուրյանց հոգևոր առաջնորդ սուրբ Էջմիածնի աթոռից, որ մեծ պատիվ, մեծ իշխանություն ունի թե՛ տերության կողմից և թե՛ յուր վիճակավոր ժողովրդի վերա: Երկրորդ, առավել վճռական է այս տեղում հայերի աղքատությունը. թե բացի հայից ոչ մի ազգ Քրիստոնյա չէր. ինգլիզ, ֆրանկ, կաթոլիկ անունները լսում են, որպես հեթանոսների: Հայ ազգանունը համարում են կրոնական անուն, որ մնացել էր Քրիստոսից. ո՛վ հայ չէ՛ և Քրիստոնյա չէ՛. ա՛ռ քեզ տգիտության կարծիքը, որ առավել օգտավետ գործ է կատարում, քան թե գիտությունը այս տեղում:

Այսքանս բավական է կաթոլիկներու մասին. այժմ խոսենք պրոտեստանտներու։ Ամերիկացի առաքյալները, այդ քրիստոնեական հավատքի ժրաջան մշակները, մեծ գործունեության մեջ են։ Կարծեմ նոքա ո՛չ մի տեղում, ո՛չ մի ազգի մեջ այդչափ սուղ ժամանակում (20 տարու միջոցում) չկատարեցին այն հրաշալի առաջադիմությունը, որպես Ուրմիայի նահանգումը, ձեռք բերելով մինչև 2000 դերդաստան պրոտեստանտ ժողովուրդ, բայց որպիսի ժողովուրդ յուրյանց դավանության մեջ կարի ուսյալ և կրթյալ ժողովուրդ։

Սրրա սարի լանջանցը վերա (այս անունով գյուղի մեջ) այն, յուր դրությամբ հիանալի ամառանոցումը, որ չէ Ուրմիա քաղաքից ավելի հեռի քան 10 վերստ, պրոտեստանտները ունեն յուրյանց գլխավոր ճեմարանը։ Նորա մեջ մտնում են այն աշակերտները, որք գյուղերու մասնավոր վարժարաններում նախապատրաստված էին։ Գլխավոր ճեմարանը Սըրրի պարունակում է յուր մեջ այնքան ուսման ընթացք, որքան է մի եվրոպական գիմնազիոնի գիտությանց ամբողջ կուրսը. միայն թե այստեղ աստվածաբանական և ճարտասանական մասին շատ հմտանում են աշակերտները, որ այսպես լինի ճարտարախոս քարոզիչք աստծո բանին։ Մանավանդ յուրյանց հին և նոր Քլդանի լեզուն, ավելի հարակցություն ունենալով Աստվածաշնչի բնագրի լեզվի հետ, առավել ծանոթանում են Հին կտակարանին։ Բայց մի քանի աշակերտներ միայն մինչև այսօր սովորել են անգլերեն, թեպետ շատերը ախորժակ ունեին սովորելու, բայց չեն կամենում ուսուցանել ամերիկացիքը. ըստ որում այժմյան տերությունը մեծ կարոտություն ունենալով եվրոպական լեզուների հմուտ անձերի, շուտով թարգմանչի պաշտոն է տալիս այնպիսիներին, որք գիտեին մասնավոր ֆրանսերեն, անգլերեն կամ գերմաներեն և այլն։ Եվ անգլիացիք յուրյանց աշակերտները, յուրյանց գործին պիտանի կացուցանելու համար կրթում են նորանց ասորաց նոր բանախոսությամբ։ Քաղաքի մեջ է մի այլ գլխավոր ճեմարան աղջիկներու համար, ուր ուսուցանում են ամերիկացի կանայք։ Նորա մեջ ընդունվում են այնպիսի աղջիկներ. որք նույնպես նախապատրաստված էին գյուղերում մասնավոր աղջկանց վարժարանների մեջ։ Աշակերտուհիքը, ուսումն ավարտելուց հետո, պսակվում են Սըրրի աշակերտների հետ, այնուհետև կամ պաշտոն են ստանում գյուղերու մեջ վարժապետության և կամ քարոզչության։

Սըրրա քաղաքի մեջ, աղջկանց ճեմարանի մոտ միսիոնարների տանումը, է և մի փառավոր տպարան ամենայն հարկավոր պարագայոք, նորանում տպել են մինչև այսօր Սուրբ գրքի քանի-քանի տեսակներ և

այլ ղանաղան գրյանք ասորոց աշխարհաբար լեզվով։ Նորանում ամիսը մի անգամ տպվում է և մի օրագիր ասորերեն. «Զարիրըդ բարա» (լուսավորության արշալույս) անունով։

Տարակույս չկա, որ ամերիկացիք մի փոքր ժամանակից հետո ձեռք կբերեն բոլոր Ուրմիո նահանգի ասորիքը. պատճառ, վերացել են նոցա հին կրոնքի պաշտպանողքը։ Նոցա հին բաքինները, բոլորեքյան այժմ պրոտեստանտներից ռոճիկ են ստանում։ Թեպետ ազգի մի քանի հարուստները գլուխը կտրած օձի մարմնի նման շարժվում են, բայց նոքա ևս շուտով կդադարին։

Այժմ սկսել են պրոտեստանտները քարոզել գավառի, Նավաչայի, Դիեարի, Տխուբի *սարերում* ճուլամերին, *որք նույնպես ասորիք են լեռնաբնակ։ Տարակույս չկա, որ շուտով կանցնեն և* Ճուլամերիկ *մինչև Մոսուլի բերանը։*

Այժմ կա այստեղ ինն ամերիկացի միսիոնարներու տուն, որոց մինը է ձրի բժիշկ և քարոզիչ, մինը՝ տպագրապետ, մյուսները վարժապետ և քարոզիչ։ Բացի դոցանից՝ 2 տուն վարժապետուհիք, որք դաստիարակում են աղջիկները։

Ավելորդ չեմ համարում մի քանի խոսք գրել ասորոց այժմյան կաթողիկոսի վերա։ Ասորոց այժմյան կաթողիկոսը է Մար Շիմոնը *(Տեր-Սիմոնը). դա նստում է այժմ* Կոճանիս *գյուղում, Տիար-Տխուբ նահանգի մեջ, որից կազմվում է* Նրինլ *գետի հովիտը։* Մար Շիմոնը *10 տարի առաջ, քանի օսմանցիք չէին տիրապետել այն կողմերին (քրդերի անկախության ժամանակ), յուր քաջ* ճույն *ցեղի օգնությամբ, բացի յուր կաթողիկոսության աթոռը հաստատուն պահելուց, պաշտպանում էր և յուր ազգի անկախությունը. որով էր հոգևոր և մարմնավոր առաջնորդ յուր ցեղի համար։ (Դուցե ժամանակի շատ խորին հնությունից մինչև 10 տարի առաջ այսօրինակ կառավարվում էին վայրենի ճուլոները յուրյանց հոգևոր առաջնորդներու ձեռքով)։ Բայց երբ օսմանցիք նվաճեցին Քուրդիստանու տիրող աշիրաթները (իշխանները), չհնազանդվող Մար Շիմոնը պատերազմեցավ* Բադրխանբեկի *հետ և հաղթվեցավ, թշնամին կողոպտեց կաթողիկոսի տունը և նորա ցեղը։ Մար Շիմոնը հուսահատված Ուրմի եկավ, յուր ազգից չգտավ այն առաջին պատիվը։ Պրոտեստանտյան հոգին ո՛չ միայն Մար Շիմոնին, այլև նույն ինքն մեծ Նեստորին մոռացման մեջ էր ձգել։ Առժամանակ Ուրմի մնալուց հետո, բոլորովին հուսահատված, կրկին վերադարձավ դեպի յուր երկիրը, այս մի քանի խոսքը ասելուց հետո. «Ես խնդրում եմ ձեզանից, որ պինդ կենաք ձեր առաջին դավանության վերա. բայց երբ կամիք կրոնափոխ լինել,*

մի լինիք պրատեստանտ. կամ հայ եղեք, կամ ֆրանկ և կամ ռուս»։ Բայց Լութերի հոգին հաղթող է, նորա կամքը չկատարվեցավ։ Մար Շիմոնը այժմ կենդանի է. բայց օսմանցոց հպատակ իր ցեղովը հանդերձ, վերջին հուսահատության մեջ է. նա հոժար է յուր ազգի մնացորդը կամ խառնել հայոց հետ և կամ՝ ռուսաց։ Ատրպատականի առաջնորդ հանգուցյալ Սահակ եպիսկոպոս Սաթունյանի ձեռքով քանիցս անգամ այդ մասին նամակագրություններ են եղել դեպի Էջմիածնա աթոռը. բայց ուր այդպիսի սրբազան ձգտողություն հայերու կողմից... Էջմիածնա վարդապետները թմրած են զեղխության հրապույրներով... Բայց ռուսներից քահանայք եթե գալու լինեն այս կողմերս, քանի կենդանի է Մար Շիմոնը, շատ շուտով կարող են յուրացնել բոլոր ասորոց մնացորդները. մանավանդ որ ազգը շատ հակամիտ է դեպի ռուսաց կողմը։

Այսքանս բավական է, գուցե դրանով կբավականանա Ձեր հարցասիրությունը։ Ուրիշ ժամանակի եմ թողնում Ձեզ գրել, արդյոք Ատրպատականի հայերը ևս մի ժամանակ կենթարկվեն միսիոնարաց ազդեցությա՞նը, թե միշտ կպահպանեն յուրյանց հայրենական կրոնը։

Մի բան, որ գրած էիք Ձեր եղբոր մասին, չեմ կարող հանձնառու լինել։ Ես ինքս ձանձրացել եմ այն առևտուրից, որ Թիֆլիսում կատարում ենք. պատճառ, ունի նեղություն չափից դուրս, բայց վաստակը կարի սակավ։ Մտադիր եմ Պոլիս գնալ, որ Պոլսից դեպի Փարիզ եվրոպայոց մանուֆակտուրայի առևտուրք անեմ։

Քանիցս անգամ Ձեզ գրած եմ, այժմ կրկնում եմ, որ մի քանի հատ ռուսերեն ընտիր թարգմանություններ, մանավանդ ռոմանս, իմ համար ուղարկեք. թե Մոսկվա կամ Ս. Պետերբուրգ բարեկամ ունիք, կարող են առնել, իսկ նոցա գինը որքան և լինի՝ կգրեմ Թիֆլիսից, անհապաղ Ձեզ հասուցանեմ։ Այս պահանջում եմ, որովհետև կասկածում եմ, այս անգամ ռուսաց լեզուն ամենևին անգործածությունից մոռանալ։ Մնաք բարյավ։

ՆԱՄԱԿ ԹԵՀՐԱՆԻՑ

Արդեն երրորդ տարին է գնում՝ Պարսկաստանը տանջվում է հացի պակասության պատճառով։ Անցյալ տարվա վերջին ամիսներից սկսյալ, սովը մի քանի տեղերում մինչև այն աստիճան անտանելի եղավ, որ տարածվեցան լուրեր, իբր թե եղան օրինակներ, որ մարդիկ կերել են գերեզմանից հանած նոր մեռելների մարմիններ, և կամ կերակրվում էին յուրյանց զավակների մսով, կամ գողանում էին ուրիշների զավակները ուտելու համար։

Այդպիսի անհիմն լուրեր բոլորովին հեռու են ճշմարտությունից, որովհետև Պարսկաստանի ժողովուրդը, այնքան ջերմեռանդությամբ կապված կրոնական զգացմունքին, նորա երկյուղած խղճմտանքից հեռու են այդպիսի մեղսագործությունք, չնայելով որ սովից մեռածների թիվը օրըստօրե հասնում է սարսափելի քանակության։

Սովը, սկսյալ Ռուսաստանի սահմաններից, գնալով դեպի միջին Ասիան, ավելի սաստկանում է։ Դորա համար Արաղստանը ավելի թշվառ վիճակի մեջ է, քան թե Ատրպատականը, որ, Ռուսաստանին սահմանակից լինելով, Կասպից ծովեն, կամ ցամաքով, ստանում է բավականին քանակությամբ ուտելի նյութեր։ Բայց հեռավոր քաղաքները, որպիսիք են՝ Թեհրանը, Խորասանը, Սպահանը, Շիրազը և մյուսները, դժբախտաբար զրկված լինելով ճանապարհների շուտափույթ հաղորդակցությունից (երկաթուղիներից և նավագնացությունից), զրկվում են ձեռնահաս նպաստավորությունից։ Բայց լսելով՝ օգոստափառ շահը սաստիկ հրաման է արած ամեն տեղ՝ թափել վաճառականների ապրանքները և

բեռնակիր գրաստները գործածել միմիայն ցորյան փոխադրելու այն հեռավոր կողմերն, ուր ավելի սաստկացել է սովը։

Չնայելով բարձրագույն կառավարության հոգածությանը, որ ամեն օր մեծ գումարներով փող է բաժանում աղքատներին և սահմանակից տերություններից ցորյան է բերել տալիս, չնայելով մասնավոր անձերի նպաստամատուցությանը, որոնք օգնում են խեղճ ժողովրդին, այսուամենայնիվ սովից ամեն օր մեռնում են շատ մարդիկ։ Թավրիզում, որ համեմատաբար ավելի բախտավոր վիճակի մեջ է, քան մյուս քաղաքները, ամեն օր սովից մեռնողների թիվը հասնում է մինչև 50 հոգի, Թեհրանում՝ 200 հոգի, Սպահանում՝ մինչև 300, և որքան գնում է Ասիայի խորքը, խղճալի զոհերի թիվը ավելանում է։

Քաղաքների փողոցները, շուկաները լցված են մուրացկանների բազմությամբ, որոնք հավաքվել էին շրջակա գյուղորայքից։ Ուր և գնում ես, լսում ես ողորմություն խնդրողների աղաղակը, լացի և սովեն մաշած թշվառների հառաչանքը։

Ավազակների թիվը անհամեմատաբար բազմացել է։ Նոքա ցերեկով մտնում են տներ, սպանում են մարդիկ և կողոպտում են նրանց։

Փողոցներում ծախված հացը ամբողջ խմոր է ավազի, գաջի, կամ այլ նյութերի հետ խառնված, բայց և այդ խարդախված սնունդը շատերին չէ հաջողվում գնել։

Ավելի թշվառ է քրիստոնյաների վիճակը, որովհետև բոլոր հացթուխները մահմեդականներ լինելով, նոքա ավելի բարվոք են համարում իրենց ուտելիքը հավատակցին վաճառել, քան օտարազգին։ Քրիստոնյա հայը ստիպված է արծաթը ձեռքում, վիզը ծռած ամբողջ ժամերով սպասել հացթուխի խանութի դռանը, բայց նրան հաց վաճառող չկա...

Սպահանի ժողովուրդը դիմում են իրանց վիճակավոր առաջնորդին, իբրև իրանց հոգևոր գլխավորին և աղաչում են, որ նա կառավարությանը խնդրե այդպիսի խարություն չթողնե ժողովրդի մեջ։ Նորին սրբազնությունը հուսադրում է նրանց, թե նա կբողոքե այդ անխղճմտության դեմ բարձրագույն կառավարությանը և, իբր թե, այդ նպատակով հեռանում է Սպահանից և ուղևորվում է դեպի Թեհրան։ Բայց նա թողնում է Թեհրանը և գալիս է Արարատ, յուր հետ բերելով սպահանցվոց և հնդկացվոց շատ քրտինքի արդյունքը, որ նոքա իրանց բարեբախտության օրերում այնպես առատաձեռնությամբ զոհում էին իրանց հոգևոր հորը։

Պարտավորություն ենք համարում մեր խորին շնորհակալությունը հայտնել Թեհրանի անգլիացոց դեսպանատանը, որի բարերարությամբ բավականին գումար հավաքվեցավ ի նպաստ Սպահանի հայերին։ Եվ

նրա առաքինական օրինակին հետևեցին Թեհրանում և Թավրիզում եվրոպական տերությունների մյուս ներկայացուցիչները։

Հնդկաստանի հայերն, վաղուց մի այդպիսի սովի պատճառով գաղթած լինելով Սպահանից, չմոռացան այդ տառապյալ միջոցում օգնել իրանց նեղության մեջ ընկած ազգայիններին։ Բայց նույն օրինակին կհետևե՞ն արդյոք և Ռուսաստանի հայերը, որոնք 1827 թվականին գաղթեցին Պարսկաստանից։ Նոքա մտածո՞ւմ են, որ ունեն այնտեղ դեռևս կենդանի քույրեր, եղբայրներ, որոնք այժմ ցավալի դրության մեջ են սովի պատճառով։ Նրանց գութը շարժվո՞ւմ է՝ նրանց օգնելու, թե ոչ...

Ավելորդ չեմ համարում իմ խոսքը դարձնել այն իրողության վրա, թե Պարսկաստանի նման բարեկլի և պտղաբեր երկրում ինչո՞ւ պիտի եռամյա երաշտությունը մի այդպիսի ցավալի հետևանք ունենա։

Այդ հարցը ստուգիվ բացատրելու համար հարկավոր եմ համարում քանի տեղեկություններ տալ տեղային երկրագործության մասին։

Պարսկաստանի ամբողջ հողը, մասնավոր բացառությամբ, որ պատկանում է շահին (խալիսաջաթ) մնացորդը է՛ շահզադաների, խաների, բեգերի, մոլլաների, հաջիների և զանազան կալվածատերերի սեփականություն։ Գյուղացին ինքը հող չունի։ Նա պարտավորված է մշակել կալվածատիրոջ հողը։ Բայց կալվածատերերի հողի վարձատրության պայմանները մշակողների հետ և հարկերի ծանրությունը մինչ այն աստիճան խիստ և անշահավետ են, որ գյուղացիք ցանում են այնքան, որքան կարող էր լցուցանել նրանց տարեկան ապրուստի պիտույքը։ Եվ այդպիսով ժողովուրդը չունի ավելորդ պաշար, այդ պատճառով հունձքի մի կամ երկու տարվա շարունակ անպտղաբերությունը պատճառում էր սարսափելի սով։

Այդպիսի միջոցներում ժողովրդի կարոտությունը կարող էր նպաստել կառավարության հացի ամբարները։ Բայց դժբախտաբար կառավարությունը ինքը հացի ամբարներ չունի, որովհետև նա իր զինվորներին հաց չի տալիս։ Այդ պատճառով և հոգս չէ տանում նրա համար ունելու պաշար պահելու։ Կառավարությունը տալիս է յուր զինվորներին արծաթ (ջիրա), և սարվազը (սալդաթը) ամեն օր ստիպված է յուր հացը գնել բազարից։

Հացի քանակությունը կենտրոնանում է գլխավոր կալվածատերերի ամբարներում, որոնք թանկության ժամանակ օգուտ քաղելով՝ ամենայն անխիղճ միջոցներ գործ են դնում հացը ավելի թանգացնելու։ Այդպիսի հանգամանքներում անճարացյալ ժողովրդի հուսահատությունը հաս-

նում է վայրենի կատաղությամբ։ Նրանք շատ անգամ ամբոխով հարձակվում են կառավարող դասակարգերի դեմ և կալվածատերերի ամբարների վրա և ցրվում են նրանց։

Մենք հույս ունինք՝ Պարսկաստանի բարձրագույն կառավարությունը հացի պատճառով յուր ժողովրդի այժմյան դժբախտությունից օգուտ քաղելով, կհեշտացնե հողի մշակության պայմանները, և այդպիսով ծաղկեցնելով հպատակների մեջ երկրագործությունը, կդյուրացնե հացի խնդիրը, յուր աչքի առաջ ունենալով այն իրողությունը, որ հացի խնդիրը — մարդկային կյանքի խնդիրն է։

ԸՆՏԱՆԻՔԻ ԿՃՐԲԵՐՈՍՆԵՐ

Հավասարության և ազատության հարցը կանանց սեռի քանի դար առաջ սկսավ մշակվել քաղաքակիրթ ազգերի մեջ, և վերջապես ներկա դարու առաջին կիսաբաժնում նա իր լուծումն ստացավ նորանով, թե կինը մարդկային կյանքի մի անդամն է, ուրեմն և պիտի լինի բաժանորդ նորա իրավունքներին։

Բայց թե մինչև որ աստիճանի իրագործվեցավ այդ հարցի վճիռը լուսավոր Եվրոպայի և Ամերիկայի մեջ, մենք թողնում ենք դորա վերա խոսելը, միայն կասենք մի քանի խոսք, թե որպիսի ընդունելություն գտավ նա հայերի կյանքում։

Արդարև, մի քանի եվրոպական քաղաքներում, որոնց թվումն է և Թիֆլիսը, հայերի ընտանեկան կյանքը նոր կերպարանք ստացավ։

Որպիսի՞։

Հայը դուրս բերավ հարեմի դարավոր բանտարկությունից յուր կինը, նա ձգեց նորա երեսից ծածկապահության քողը, նա թույլ տվեց նորա լեզվին խոսել և մտածել օտարների հետ։ Եվ սիրախնդիր ազամարդը, որի համար հայ կինը մի ծածկյալ գանձարան էր, պատիվ ունեցավ հանդիպել նորան թատրոններում, պարահանդեսներում, փողոցներում և ամենայն հասարակական զբոսարաններում։

Բայց հին հարեմային դրության կուսակիցները դեռ ո՛չ բոլորովին անհետացած էին։ Ամեն գերդաստանում մի ծերունի պապա, կամ մի պառավ մամա, սկսան խոժոռ աչքով նայել մի այդպիսի նոր երևույթի վերա։ Նոքա բողոքեցին այդ ընտանեկան հեղափոխության դեմ, կոչելով նորան լրբություն, շռայլություն, անամոթություն, մի խոսքով, անբարոյական մոլություն։

«Կրթյալ երիտասարդությունը», իբրև գեղեցիկ սեռի բռնաբարված իրավունքների պաշտպան, հերքեց նույա բողոքը, մի քանի փաստերով. «Թե դուք փտած մարդիկ եք, դուք կուրացել եք հնամոլության նախապաշարմունքներով, դուք մեղանչում եք հավասարության և ազատության սկզբի դեմ...»։

Կուսակցությունները կազմվեցան։ Ընտանեկան պատերազմը սկսվեցավ։ Այդ պատերազմը անխղճելի կերպով շարունակվում է մինչև այսօր և ցույց ընդ երկար տևելու էր ապագայում...

Բայց ո՞ր կողմին պետք է արդարության իրավունքը տալ։

Ո՛չ առաջինին և ո՛չ երկրորդին։

Երկուքն էլ ունեն յուրյանց սխալ կողմերը։

Արդարև, ծերունի պապայի, այդ գերդաստանի պատրիարքի, արթուն աչքը անդադար հսկում է յուր ընտանիքի վերա։ Նա համարձակ մուտք չի տալիս սիրախնդիր երիտասարդին սողալ յուր գերդաստանի սրբարանում և կծկած, սերտած, օտարազգի բառերով քաղցրախոսել, սեթևեթել յուր օրիորդ թոռնիկին, յուր մանկահասակ հարսի հետ և խելքից հանել նորանց։ Այդ պատճառով, երիտասարդը չվշտացնելով հեռանում է հայի գերդաստանից, նա այլևս չէ դառնում այնտեղ, որովհետև ծերունու հեքիաթները նորան զուր չէին գալիս, որովհետև նորա ընտանեկան շրջանի երևույթը համապատասխան չէր նորա նպատակներին, և ո՛չ գոհացուցիչ նորա կրքերին ու պահանջմունքներին...

Կրթյալ երիտասարդությունը պահանջում է հեռացնել, յուր կարծիքով, այդ ծերունի կերբերոսները. անհետացնել նույա իշխանության բռնաբարությունը և կատարյալ ազատությունը ներս տանել հայ ընտանիքի մեջ։

Շատ լավ։

Մենք նպատակ չունենք վիճել ազատության սկզբի դեմ։ Միայն կրկնում ենք, թե մենք արդեն տվինք փոքրիշատե ազատություն մեր կնիկներին, բաց արինք նորա առաջև հարեմի փակված դուռը և թույլ տվինք նորան հրապարակ ելանել իբրև մարդ, իբրև մարդկային անհատական իրավունքների բաժանորդ։

Բայց կինը ինչո՞վ. արդյունավորեց այդ առանձնաշնորհությունը։

Նա հանդիպեցավ մեր կյանքի ասպարեզում, ոչ իբրև մարդը — գործունյա, աշխատավոր և կարեկից յուր ազգամարդի հոգսերին, այլ որպես խամաճիկ, կոկլիկ, զուգված, զարդարված մոդնի մագազինների պաճուճանքներով և յուր դեմքը խարդախած արվեստական գեղերով...

Նա եղավ յուր ազգամարդի համար մի նոր տանջանքի մեքենա, մի

նոր հոգածության առարկա։ Նա գերի արեց յուր տղամարդին, որ առաջ նորա վերա իշխում էր, որի ինքը առաջ ստրուկն էր։

Արևելյան կյանքի մեջ, ուր հայ կինը դեռ ապրում է նահապետական շրջանում, ուր նա (որպես ոմանք մտածում են...) դեռ ստրուկ է յուր տղամարդի և տան ծերունիի կամքին, կինը ոչ միայն անկեղծ մաքրությամբ պահպանում է յուր բարոյական սրբությունը, այլ նա բաժանորդ է լինում յուր տղամարդի հոգսերին, նորա զբաղմունքներին, նա յուր տղամարդի հետ լծորդաբար կրում է յուր վերա ընտանիքի ապրուստի պիտույքը հայթայթելու հնարները։

Այնտեղ կինը կուկլա չէ և ոչ կրթյալ երիտասարդության ցնորքների առարկա։ Այնտեղ կինը ժիր և գործունյա տանտիկին է։ Նա թխում է յուր զավակների համար հաց, եփում է նոցա համար կերակուր, լվանում է նոցա լվացքը, կարում է նոցա հագուստը։ Նա օգնում է յուր տղամարդին նորա հողերի մշակության մեջ, կալսում է նորա կալը, մաքրում է նորա ցանքերը ավելորդ խոտաբույսերին։ Նա օտար մարդի հետ գործ չունի։ Նա յուր սերը, յուր սիրտը նվիրած է յուր ամուսնուն։

Բայց մեր քաղաքի ազատություն վայելող աղջիկ-պարոնը խոհանոցը չի մտնում, որովհետև կերակուր եփելու համար խոհարարներ կային, նա հաց չէ թխում, որովհետև կռո-փռնչին միշտ պատրաստ էր այդ պաշտոնը կատարելու, նա հագուստ չէ կարում, որովհետև այդ դերձակների գործ է։

Ուրեմն ի՞նչ է շինում նա։

Գիշերները վարում է զվարճությունների մեջ, զարթնում է ժամը տասին, շատ անգամ տասներկուսին, մի երկու ժամ հարկավոր են նորան լվացվել, հագնվել և հայելվո առաջ երեսը կոկել։ Այնուհետև նա դուրս է գալիս փողոց, մագազիններին այցելություն գործելու, բուլվարները չափելու, պատերի վերա աֆիշաներ կարդալու և սիրուն տղերանց նայելու...

Ահա կանանց ազատության հետևանքը մեր կյանքի մեջ։

ՆԱՄԱԿ ԹԵՀՐԱՆԻՑ

Պարսկաստանի սովը՝ օրըստօրե սաստկանում է։ Ժողովուրդը սկսել է մեծ մասամբ՝ անասունների՝ նման խոտաբույսերով կերակրվել՝ և այդ պատճառ է՝ ավել զանազան հիվանդությունների, որոնք հայտնվել են ժողովրդի մեջ. ժանտատենդից (տիֆուս) մեռնողների թիվը ավելի շատ

է, քան թե սովամահների։ Դավլին քաղաքում կերել են մի քանի մարդիկների մարմինները. ոստիկանությունը գտնում է եղեռնագործներին և տեղային մուշտայիդը (հոգևոր պետ) հրաման է տալիս նրանց քարկոծել։ Քաշանից դեպի Թեհրան ճանապարհում ավազակները հարձակվում են մի քանի ուղևորների վրա և խլում են նրանցից միմիայն ձիաները ուտելու համար։ Մինչև նոր ցորենի դուրս գալը Պարսկաստանում դեռ երեք ամիս կա։ Սարսափելի է մտածել, թե խղճալի ժողովրդի դրությունը ինչ պիտի լինի, մանավանդ որ անցյալ տարի շատ տեղերում սերմ չլինելու պատճառով շատ քիչ ցանված է։ Սպահանի հայերը սկսում են գաղթել դեպի Հնդկաստան։

Այս օրերս սպասում են Թեհրանում եվրոպեակիրթ քաղաքագետ Միրզա Մելքում խան հայկազն երիտասարդին։ Որպես լսում ենք, Բարձրագույն դուռը նշանակել է նրան մեծ պաշտոնի։ Մենք հուսով ենք, որ քաղաքագետ երիտասարդը կարող է մեծ օգուտ բերել Պարսկաստանի կառավարությանը, որ արդեն դիմում է դեպի վերանորոգություն։

ՊՈԼԵՄԻԿԱ

Պոլեմիկան մի նոր երևույթ է գրականական հանդեսում։ Նա ունի յուր արտադրիչ օգուտները։ Ցանկալի էր մեզ տեսանել նույնը Տփխիսում մեր երկու լրագիրների՝ «Մեղուի» և «Մշակի» մեջ։ Որովհետև նորանով զտվում են մտքերը, մաքրվում են սխալները և ուղղվում են ծուռ կարծիքները։

Բայց ուր պոլեմիկան կրքերի է ծառայում և, թողած առողջ տրամախոհությունը, անձնավորությունը դեմ է մարտնչում, միշտ կորուսանում է յուր օգտավետ նշանակությունը։

«Մեղու Հայաստանիի» 5-րդ համարում կարդացինք պ. Ս. Ո-ի մի քննադատությունը «Մշակի» մեջ տպված «Հինգերորդ դարի հայ-աբեղա պատերը» հոդվածի դեմ, որ գրել էր պ. Նիսբեն։

Կարդալով պ. Նիսբեի հոդվածը, կարդալով պ. Ս. Ո-ի կրիտիկան նորա դեմ, մեր առջև ներկայանում է մի ծիծաղելի երևույթ. կարծես թե այդ պարոնները մինը մյուսին չեն հասկացել։

Մենք ցույց կտանք պ. Ս. Ո-ի հոդվածի մեջ գլխավոր հարցերը, որք չարաչար հակառակում են առողջ կրիտիկայի դեմ։

Պ. Ս. Ո. Նիսբեի հոդվածում նկատում է այն զրպարտությունը, իբր

թե մինք բանսւիյամբ աշխատեր մի միաք փաթաթել մի ուրիշի վզին, հետո նորանից եզրափակել մեզավորի հանցանքը։

Ցանկալի կլիներ, եթե պ. Ս. Ո ինքն հետևած չլիներ այդ կանոնին, աշխատելով ուրիշի վզին անտեղի մտքեր փաթաթել և նորանից ինքնահաճո եզրակացություն դուրս քաշել։

Պ. Ս. Ո. հարձակվում է Նիտբեի դեմ, որ կամեցել էր նորան ցույց տալ, յուր կարծիքով, մի պատմական սխալ դաս։ Իբր թե քրիստոնեությունը հայոց ազգի մեջ տարածվել է և տարրացվել է սրով և բռնությամբ, և ոչ ճառական ոճով կամ քարոզներով։ Այդ պատճառով բողոքում է նա, թե անհնարին էր սրի կամ մտրակի զորությամբ մարմնացնել որևիցե գաղափար ժողովրդի մեջ։

Բոլորովին իրավացի կլիներ պ. Ս. Ո-ի բողոքը, եթե Նիտբեն յուր հոդվածում մի այդպիսի բան ասած լիներ։

Բայց մենք խորհուրդ կտայինք պ. Ս. Ո-ին նախ և առաջ լավ հարցասիրել յուր քննադատելու առարկան և ապա հարձակվել մի գրականական երևույթի վրա։ Որովհետև Նիտբեն չէ ասում՝ քրիստոնեությունը տարրացավ կամ տարածվեցավ սրի ու մտրակի զորությամբ, այլ, ընդհակառակն, նա ասում է, թե քրիստոնեությունը մտավ ազգերի մեջ սրի զորությամբ, և հիշում է, թե որպես Հայաստանում մտավ նա Տրդատի սրով, Ֆրանսիայում՝ Կլոդովիկ թագավորի, Ռուսաստանումն՝ սուրբ Վլադիմիրի և այլն։

Իսկ մարմնացնելը և տարրացնելը քրիստոնեական գաղափարի ժողովուրդների մեջ Նիտբեն չէ խլում առաքյալներից և աբեղա-պապերից, որք յուրյանց քարոզությամբ իրագործեցին ազգերի հոգում այն վարդապետությունը, որ նախ ընդունված էր եղել ակամա կերպով։

Քրիստոնեությունը հենց առաջին դարում մտավ Հայաստանի մեջ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ։ Բայց նա չտարածվեցավ և չտարրացավ ժողովրդի հոգևո մեջ։ Որովհետև քրիստոնեության պաշտպան Աբգար թագավորը շուտով վախճանվեցավ և արքայի Անանուն որդին կրկին բաց արավ յուր հոր փակած կռքատները և սկսեց հալածել քրիստոնյաներին։ Եվ Աբգարի քեռորդի Սանատրուկը մինչև անգամ նահատակեց յուր հարազատ դուստրը՝ Սանդուխտին, քրիստոնեության համար։ Եվ այդպիսյավ, Աբգարի ջանքով մտած քրիստոնեությունը նորա հաջորդների սրով հանգավ, թողելով մի քանի մարած կայծեր միայն։

Այստեղից ապացուցվում է, թե թագավորների ուժը և նոցա զորությունը ավելի մեծ դեր էր խաղում քրիստոնեության տարածելու կամ

նոյան անհետացնելու մեջ, քան աբեղաների ճառախոսությունքը և քարոզը։

Պ. Ս. Ռ. անհաճությամբ զրպարտում է, թե ինչո՞ւ Նիրբեն խոսում է Եղիշեի և Խորենացու վերա, որոց մասին ոչինչ հիշված չէր պ. Մ. Ս-ի հոդվածում։ Կարծես թե, այդ մի մեծ հանցանք էր Նիրբեի կողմից, երբ նա հիշում էր մի քանի անուններ՝ հաստատելու մի պատմական փաստ։ Եվ ավելացնում է պ. Ս. Ռ. Նիրբեի հոդվածից այդպիսի խոսքեր, իբր թե Վարդանանց պատերազմը եղել է Եղիշեից ու Խորենացուց առաջ, և կամ Եղիշեի ու Խորենացու գրվածքներն են միայն, որ կարողացել էին քրիստոնեության գաղափարը մարմնացնել ժողովրդի մեջ և այլն։

Բայց այդպիսի ստահոգ խոսքեր քաղել Նիրբեի հոդվածից, միևնույն չէ՞ր լինելու, որ պ. Ս. Ռ. կամենում էր փաթաթել նորա վզին մի անարդար զրպարտություն, երբ, ընդհակառակն, Նիրբեն յուր հոդվածում ասում է. «Մովսես Խորենացին յուր գրվածքներով չէ մտցրել և տարածել քրիստոնեությունը, որովհետև նա արդեն մտցրած էր, Եղիշեն, երբ գրում էր, Վարդան Մամիկոնյանը իր զորքով արդեն նահատակված էր քրիստոնեության գաղափարի համար»։

Պ. Ս. Ռ. հիշում է, թե դպրոցների ներգործությունը և ազդեցությունը եղան առավելապես Հայաստանի մեջ քրիստոնեության գաղափարի մարմնացնողները։ Եվ չէ հայտնում, թե ինչ դպրոցներ էին դոքա։ Միայն ասում է, թե այդ դպրոցները ծնեցին Խորենացուն, Եղիշեին և Վարդանին։

Ահա քեզ մի նոր պատմական գյուտ։

Մեր ազգի հին պատմագրությունից մի աղոտ տեղեկություն միայն ունիմք, թե Վռամշապուհը հիմնեց մի քանի դպրոցներ։ Բայց Վռամշապուհի դպրոցները չծնեցին ո՛չ Խորենացուն, ո՛չ Եղիշեին և ո՛չ եղան նոքա քրիստոնեական գաղափարի տարածողներ, որովհետև քրիստոնեությունը այն ժամանակ արդեն յուր ծաղկյալ դրության մեջ էր Հայաստանում. այլ պակաս էր միայն իմացական կրթությունը, որո ուսման համար Մեսրոպը գեռ նոր հայկական տառեր էր հնարում հայոց մանուկների դպրության։

Հինգերորդ դարու նշանավոր հայ աբեղաները, որք յուրյանց աշխատանքներով այնքան օգուտներ բերեցին Հայաստանին՝ թե Խորենացին, թե Եղիշեն, թե Մեսրոպը և թե այլք, չեն եղել որևիցե հայկական դպրոցի ծնունդներ, այլ նոքա յուրյանց նախակրթությունը ստացել են վանքերի խցերում և կատարելագործել են յուրյանց ուսումը Հունաստանի Աթենքում, Աղեքսանդրիայում և Բյուզանդիոնում։

Բայց ինչ որ վերաբերվում է պ. Ս. Ռ-ի այն խոսքերին, որ նա կատակի ձևով խոսում է Նիուշեի այն դատողության դեմ, որ Նիուշեն ասում է, թե հայոց ընտանեկան կյանքի անշարժության և նորա բարոյական անտարբերության պարտավոր է կրթյալ երիտասարդությունը, որ չէ աշխատում դարման տանել նորանց յուր կրթողական ազդեցությամբ, այլ յուր հարաբերությունքը ընտանիքների հետ պահպանում է դոմինոյի և թղթախաղի միջնորդությամբ. մեք ավելորդ ենք համարում այդ մասին մի բան խոսել, ի նկատի ունենալով, որ պ. Ս. Ռ-ի կատակը կրիտիկա չէ, երբ նա զրկված էր հիմնավոր փաստերից։

Միայն մեր կողմից խորհուրդ կտայինք համեստ և հնազանդ *աշակերտին՝ չհարձակվել յուր ուսուցչի դեմ, մինչդեռ լավ սովորած չէր յուր դասը...*

ՎՐԱՑ ԻՇԽԱՆ ԱՐՔԱՅԱԶՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՅԱՆՔԻՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Իշխան Ալեքսանդրի ժամանակը դեռ շատ չէ հնացել։ Պարսկաստանում մինչև այսօր ծերունի ալևորներ հիշում են նորա պատմությունը։ Եվ մենք, նյութեր քաղելով կենդանի ավանդություններից, կաշխատենք տալ ապագային մի քանի տեղեկությունք նորա կյանքից։

Իշխան Ալեքսանդրի Պարսկաստան գնալու պատճառները այնքան հայտնի են ժամանակակից պատմագրությանը, որ մենք ավելորդ ենք համարում այդ մասին մի բան խոսել, միայն նա գնաց այնտեղ, երբ Ղեջարյան գահին տիրում էր Ֆեթհ-Ալի-Շահը։ Շահից նա գտավ արժանավոր ընդունելություն, որ որոնում էր ապաստան մի այլ տերության մեջ։

Ֆեթհ-Ալի-Շահի հրամանով Ապպաս-Միրզան, որ և կոչվում էր Նաիբուլ-Սալթանա, այսինքն՝ Շահի ժառանգը, և միևնույն ժամանակ Ատրպատականի կուսակալը, շնորհեց իշխան Ալեքսանդրին Սալմաստա գեղեցկադիր գավառում մի քանի գյուղորայք նորա կացարանի և ապրուստի համար։ Այդ գյուղորայքից իշ. Ալեքսանդրը ընտրեց յուր բնակության համար Խոսրովիա անունով հայաբնակ և Ասորոց գյուղը, որ յուր այգեստ և ծառազարդ դիրքով, մաքուր ջրով և հստակ օդով, առժամանակ կարող էր մխիթարել նորանում Կախեթիայի բաղձանքները։

Խոսրովիայում իշխան Ալեքսանդրը շրջապատված էր այն վրացի տղամարդերով, որք ավելի քան հիսուն հոգի գաղթել էին նորա հետ

Նրա թվում կային և մի քանի անձինք ազնվական տոհմից, որք իշխանի դժբախտության ժամանակ չհեռացան նորանից։ Դոցա մեջ նշանավոր էին Ղարաման-բեկ, Յաթան-բեկ, Մակա-բեկ, Աղա-բեկ, Ռուստեմ-բեկ և այլք։

Ֆեթհ-Ալի-Շահը սիրում էր իշխան Ալեքսանդրին, նա շնորհեց նորան Վալիի Գուրջիստան տիտղոսը։ Եվ Վալին տարենը մի անգամ Թեհրան էր գնում Շահի հետ տեսության անելու, ուրկից դառնում էր նա թանկագին ընծաներով։

Ֆեթհ-Ալի-Շահը այնքան պատվեց նրան, որ մի անգամ, երբ նա ուներ մեծահանդես Սալամ (ընդունելություն) Նիգարիստանի այգու ապարանքում, ընդունեց իշխան Ալեքսանդրին յուր ամենաբարձր դրանիկների թվում, խիստ փառաշուքյան խառնվելով, և ընդունելության ծեսերն կատարվելեն հետո, Շահը հրամայեց նույն հանդեսի պատկերը նկարել ապարանքի դահլիճի պատի վերա, ուր մեջ առաջին տեղը բռնում է իշխան Ալեքսանդրի պատկերը[1]։

Երբ սկսվեցավ Պարսից և Ռուսաց պատերազմը, իշխան Ալեքսանդրը առանձին զորամբով, որ կազմված էր [illegible] զինվորներից և յուր հետ ունեցած ազնվական վրացի զորականներից, Տաճկաստանի-քրդստանի կողմից օգնում էր պարսիկներին։ Բայց երբ նա լսեց Ռուսաց զորքերի հաղթությունը, նոցա Արաքսից անցնելը, Խոյ, Սալմաստ, Ուրմի և Թավրիզ քաղաքների առնվելը, նա բոլորովին հուսահատվեցավ, նորա զինվորներն ցրվեցան, և ինքը մի քանի յուր հավատարիմներով գնաց Տաճկաստանի Վան քաղաքը, ուր նա ապրում էր պատերազմի վերջին։

Թուրքմենչայի հաշտությունից հետո, երբ Ռուսաց զորքերը թողեցին Ատրպատականը, մի քանի ամիս անցնելով իշխան Ալեքսանդրը դարձավ Խոսրովիա։ Բայց նա չգտավ այնտեղ յուր վրացիքը, նոքա Ռուսաց զորքերի հետ գնացել էին դեպի Տփխիս։

Իշխան Ալեքսանդրի վիճակը այնուհետև նախանձելի չէր։ Գլխավորապես այն պատճառով, որ Շահի առաջին վեզիրը, Հաջի-Միրզա-Աղասին, այդ բնավորությամբ դերվիշ և մոլլայի կրթությամբ մոլեռանդը, որ յուր գուշակություններով կարողացել էր գրավել անսահման Շահի անչափ համակրությունը յուր գերբնական զորության մասին, այդ վեզիրը սկսավ վատ վարվել իշխան Ալեքսանդրի հետ։ Նա կտրեց իշխանի հասույթները, որ ստանում էր կառավարությունից, և հետզհետե սկսավ խլել նորանից Շահի նորան պարգևած գյուղորայքը։

[1] Այդ պատկերը Նիգարիստանի ապարանքում մնում է մինչև այսօր։

Իշ. Ալեքսանդրը յուր հույսը կտրեց պարսիկներից, այն հույսը, որի մեջ խաղում էին նորա քաղաքական երևակայությունների երազները...

Բայց նորա գլխում հղացավ մի նոր երևակայություն։

Կովկասի վայրենի լեռնաբնակների քաջություններով միշտ հրապուրված իշխանը, Սալմաստա սահմանակից Քուրդիստանի լեռներում, Ջուլամերիկում, գտավ մի վայրենի ազգ, նույնպես քաջ պատերազմող և հանդուգն։

Այդ ազգը, կրոնքով նեստորական, կոչվում էր Ջուլո, մի ցեղ հին ասորիներից, որք օգուտ քաղելով յուրյանց լեռների դժվարմատչելի դրությունից, ժամանակի խորին հնությունից պահպանում էին յուրյանց անկախությունը։ Նորանց կառավարում էր յուրյանց եկեղեցական գլուխը, յուրյանց պատրիարքը, որ կոչվում էր Մար-Շիմոն (տեր Սիմոն), որդոց որդի ժառանգաբար տիրում էր գույն սուրբ Սիմոնի գահին, միշտ յուրյանց վերա կրելով Շիմոն անունը։

Մար-Շիմոնը էր նույնը Ջուլամերիկում, ինչ որ Շամիլն էր Դաղստանում, այսինքն՝ նա էր և՛ հոգևոր, և՛ մարմնավոր գլուխը յուր ժողովրդի, նա Քրիստոսի խաչի հետ կրում էր և պատերազմական սուրը։

Իշ. Ալեքսանդրը մտածեց կցել մի բարեկամական կապ Մար-Շիմոնի հետ, գուցե օգուտ քաղեր նորա բազմաթիվ պատերազմող ջուլոներին։ Եվ այդ նպատակով իշխանը պսակվեցավ Մար-Շիմոնի եղբոր, երեխայությունից կուսակրոնություն ուխտված դստեր հետ։

Բայց իշխանի նպատակները չպսակվեցան։ Որովհետև, երբ նա վերջին անգամ գնաց Թեհրան, մահը այնտեղ վախճան տվեց նորա բոլոր երևակայական նպատակներին... Նա մեռավ հետին աղքատության մեջ։

Նորա վերջին կտակը եղավ այն, որ յուր մարմինը տարվի Վրաստան, և այդ պատճառով նորա դագաղը երկար անթաղ դրված էր Թեհրանի Շահ-Աբդուլ-Ազիմի գերվազայի հայոց եկեղեցումը։ Բայց կտակը չկատարվեցավ։ Եվ Յագուբ խանը նույն եկեղեցու գավիթում, դռան հանդեպ թաղեց իշխանի մարմինը։

Թեհրանում շատ քիչ մարդիկ գիտեն, թե հայոց եկեղեցվո դռանը դրած այն փառազուրկ և աննշան գերեզմանը ամփոփում էր յուր մեջ վրաց սպառված իշխանության վերջին նշույլները։

ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻԻՑ

Շահի անցյալ տարի Քարբալա ուխտագնացությունը այն աստիճան մեծակշիռ նշանակություն ունեցավ շիիտյան մուսուլմանների մեջ նրա բարեպաշտության մասին, մինչ տարածվեցավ մի այդպիսի հավատք, թե նա քամարբաստա[1] եղավ մեծ Իմամեն։

Այն մեծահանդես ընդունելության մեջ, որ ցույց տվեց նորին վեհությանը Տաճկաստանի կառավարությունը, առավելապես Շահի ուշադրությունը գրավում են մի խումբ մանկահասակ երաժիշտներ, որք հատկապես նորին վեհության համար ուղարկված էին Բաղդադ։

Շահի հետաքրքրությունը առավել զորանում է, երբ հայտնում են, թե մանկահասակ երաժիշտները հայ ազգի պատանյակներ են։

— Իմ տերության մեջ կա՞ն այդ ազգից,— հարցնում է Շահը յուր վեզիրից։

— Այո՛, տիեզերքի Ղըբլեն[2] ողջ կենա։— Պատասխանում է վեզիրը երկրպագելով։

— Ուրեմն մենք էլ կարող ենք ունենալ այդպիսի երաժիշտներ,— ասում է շահը։

Եվ դառնալով Թեհրան՝ նա հրամայում է մի խումբ կազմել հայոց մանկահասակ պատանյակներից երաժիշտներ պատրաստելու համար։

Մի աստիճանավոր ուղարկվում է Ուրմիո գավառը, տասն տարեկանից մինչև տասնևհինգ տարեկան գեղեցիկ, բարձր և առողջ աշակերտացուք ընարելու հայոց մանուկներից, 100 հոգի։

Պարսկաստանում այդ արդեն ընդունված կանոն է, երբ մի աստիճանավոր հրաման է ստանում կառավարությունից զինվորագրելու, օրինակի համար, մին հազար սարվազներ (սալդաթներ), նա այդ թվի փոխարեն զինվորագրում է մինչև քանի մի հազարներ, որոնց նշանակված թիվը առնում է իր հետ, իսկ մնացորդը արձակելով ստանում է նրա ամեն մեկից մի քանի տասնյակ թումաններ։

Այդ սովորական կանոնին հետևեցին և նոր երաժշտացուների վիճակագրողքը։ Ուրմիո գավառի մեջ ամեն մի գեղեցիկ, մանկահասակ

---

1 *Քամարբաստա, գոտեպնդյալ, փոխանակ ասելու աներևույթ ձեռքից զորություն ստացած։*

2 *Ղըբլա, աղոթարան, կամ այն կողմը՝ դեպի ուր դառնում է մի ազգ աղոթելու միջոցին, օրինակի համար, քրիստոնյայք՝ դեպի արևելք, մահմեդականք՝ դեպի քաաբա, հրեայք՝ դեպի ավետյալ երկիրը։*

պատանիի անունը, ոչ միայն հայերից, այլև այսորիներից, անցած վիճակագրական դավթարի մեջ։

Երկյուղը յուրյանց մանկահասակ զավակները կրոնափոխ անելու, ամեն ավելի ծնողներին արծաթով փրկել յուրյանց որդիքը, այսուամենայնիվ նրա թիվը չէր պակասում, որովհետև արձանագրվածների տեղ բռնում են նոր գրվածները։

Բոլոր քրիստոնյա ժողովուրդը խռովության մեջ ընկավ։ Նրա ցավը և բողոքը հասավ Թեհրանու եվրոպական տերությունների ներկայացուցիչներին, որք հայտնեցին Բարձրագույն դռանը, թե մի այդպիսի բռնավորություն ձգելը քրիստոնյաների մեջ կարող էր անցանկալի հետևանքներ ունենալ։

Շահը համոզվեցավ ետ առնել յուր հրամանը, մանավանդ երբ որ լսեց Թիֆլիսում մի քանի հազար նեստորական այսորիներից ընդունեցին հունապրավոսլավական դավանությունը։

Խռովությունը առ ժամանակ դադարեցավ։

Բայց այս օրերում Ուրմիո կուսակալը, Սուջայըդ դոլլան, կրկին բարձրացրել է այդ հարցը։ Եվ մյուս անգամ կրոնափոխությունների վիճակագրությունը սկսել են խառնել մեր ժողովուրդը։ Բայցի դրանից հայերից և այսորիներից զինվորագրում են սարվազներ (սալդաթներ)։

Այդ էր պակաս միայն, որ խեղճ ժողովրդի դառնության բաժակը բոլորովին լցվի։ Այդ քանի տարիներում խալերայի, սովի և տիֆուսի բերանեն զերծ մնացած հայոց մանուկներին բացվում է մի նոր կորստյան անդունդ....

Սովը տակավին ամեն տեղ ունի յուր կորստաբեր ներգործությունը։ Թեպետ հունձքի ժամանակը մոտեցել է, բայց նա այնքան ցանված չէ, որ կարողանա լրացնել ժողովրդի աղքատիկ պետքերը։

Տիֆուսն էլ մի կողմից սկսել է ջարդել ժողովուրդը, այդ առավել բախտավորություն է սովատանջ ժողովրդին, երբ նա անմիջապես մահու սառը գերեզմանի մեջ գտանում էր յուր հանգստությունը։

Ճիշտ թվանշաններից հայտնի է, որ միայն սովից մեռնողների թիվը մինչև այսօր անցնում է երեք միլիոն հոգու։ Մի քանի քաղաքներում այնքան բազմաթիվ եղան մեռնողները փողոցներում և շուկաներում, մինչ ժողովուրդը ժամանակ չէր գտնում նրանց թաղելու։ Կառավարությունը հրամայեց հորեր փորել և հարյուրավորներով լցնել հորերում։

Եվրոպայից և Ամերիկայից դրամային օժանդակությունը բավականին նպաստեցին խեղճ ժողովրդի թշվառությանը։

Եվ Ուրմիո քաղաքի ամերիկացի միսիոնարներն ամեն օր երեք հարյուր հոգի կերակրում էին։

Իր բարեգործական նպատակով ավելի ուշադրության արժանի էր գերմանացվոց Պարսկաստան ուղարկած մին նշանավոր գումարը։ Նոքա խորհուրդ էին տվել նույն գումարով ավականներ փորել, հեռու տեղերից ջուր բերել և անջուր ամայի դաշտերը երկրագործության համար հարմարեցնել։ Եվ այդ գործի մեջ աշխատող բանվորները վարձատրել նույն գումարից, որպեսզի նոքա օրեկան հացի գին ունենան և սովից չմեռնեն։

Սեր-Մոսես Մոնտեֆիո հրեա հարուստը ուղարկեց Լոնդոնից մի գումար Պարսկաստանի հրեաներին բաժանելու։ Մինչև այսօր մի այդպիսի օրինակ չտեսնվեցավ մեր օտարերկրյա հայ հարուստներից։

Թեհրանում Միրզա Մելքում խան հայազգի երիտասարդը, առաջին վեզիրի օգնականը, ստացավ նազմըդ-դովլա տիտղոսը, որ նշանակում է բարեկարգիչ տերության։

Արդարև, փայլուն տիտղոս։ Մի այդպիսի տիտղոսը պատմությունը միայն շնորհում է մեծ վերանորոգիչներին։

Մենք հուսով ենք, որ հանճարեղ երիտասարդը յուր գործունեությամբ տեղիք կտա Պարսկաստանի քաղաքակրթության պատմագրությանը հավիտենական դրոշմով կնքել յուր տիտղոսի ֆերմանը։

[ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ]

Պարսկաստանից ստացած մի նամակից քաղում ենք հետևյալ տեղեկությունները. Ատրպատականի Ղարադաղ նահանգը տակավին ներկայացնում է Պարսկաստանի այն երկրներից մինը, ուր ավատական խաների բռնակալությունը դեռ յուր հինավուրց դերն է խաղում։ Խաները այստեղ ոչ միայն բարբարոսաբար տանջում են բնակիչ հայ ժողովուրդը, այլև մահմեդականները ևս ազատ չեն նոցա հաղթահարություններից։ Սպանությունը, կնիկների և աղջիկների հափշտակումը խաների զվարճության սովորական պարապմունքն է։ Այս միջոցներում երկու խաներ սպանում են յուրյանց հարազատ եղբայրները, որոնք պատկանում էին զանազան կուսակցություններին։ Թավրիզի կառավարությունը հրաման է գրում Ղարադաղի պատավոր Ամիրզադային 200 ձիավորով գնալ և կալանավորել մարդասպաններին։ Հրամանը կատարվում է փութով։ Բայց եղբայրասպան խաները, կազմելով 50 ձիավորներից բաղկացած ավազակների մի խումբ, հեռանում են բնակությունից և Թաք-

նվում են անտառներում։ Ամիրղաստան քանիցս անգամ հանդիպում է ավազակների խմբին, բայց ոչ միայն չէ կարողանում բռնել չարագործները, այլ իր մարդերով վիրավորված և կողոպտված ետ է փախչում։

Ավազակները սկսում են ավար հավաքել գյուղորայքից և կողոպտել ճանապարհորդներ։ Տեղային բնակչությունը մեծ խռովության մեջ է ընկնում։ Մինչև եղբայրասպան խաները, ամեն մի սպանված զոհերի համար, յուրյանց կողոպուտից ուղարկում են Թավրիզու իշխանին երկ-երկու հարյուր թուման արծաթ, և նորանց ներվում է…

Ասում են Պարսկաստանը նոր օրենքներ է մտցնում, վերանորոգվում է…

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ուրմիան է մինը Պարսկաստանի այն գավառներից, ուր առավել մեծ թվով բնակվում են քրիստոնյաները։ Տասնյոթն տարի առաջ, երբ կառավարությունը կազմեց մի ֆոկջ (զորագունդ) քրիստոնյաներից, նա բաղկանում էր Ուրմիո գավառի հայերից և ասորիներից ընտրված զինվորներից, Ջաֆրղուլի-խան սերթիփի հայազգի գեներալի զորապետության ներքո։ Եվ նույն զորախմբի մնացորդ սալթանավորներն նույնպես հայեր էին։ Բայց այժմյան քրիստոնյաներից կազմվելու զորախմբի վերա կառավարությունը չէ կամենում քրիստոնյա զորապետ նշանակել։ Ահա այդ մասին է քրիստոնյաների տրտունջը, և առավելապես նորա համար, որ նոր զինվորացուքը ընտրվում են մանկահասակ պատանյակներից, որոնց համար մեծ կասկած կար Պարսից ազդեցության տակ յուրյանց կրոնքը և ազգությունը պահպանելու մասին։

ՆԱՄԱԿ ՂԱՐԱԴԱՂԻՑ

Իմ առևտրական գործերի պատճառով ճանապարհորդելով այդ կողմերը, հանկարծ ստանում եմ «Մշակի» համարը, որի մեջ կարդում եմ մի փոքրիկ տեղեկություն Ղարադաղում պատահած եղբայրասպան խաների բարբարոսական անցքի պատճառով։

Ես շատ ուրախացա կարդալով պատվական շաբաթաթերթիդ մեջ, որ սակայն այդ խուլ, բոլորովին մոռացված, այսուամենայնիվ զանազան բռնակալություններին ենթարկված, անկյունի վրա ուշադրություն է դարձվում, որի բնակչաց թշվառ վիճակը ամենայն կարեկցության արժանի է։

Ղարադաղը Ատրպատականի մեջ այն երկիրն է, որ յուր աշխարհագրական դիրքով, կլիմայով և բնությամբ, համապատասխանում է յուր հետ զուգադիր Ղարաբաղ երկրին, որից նա բաժանվում է միայն Արաքս գետով։ Այդ երկիրը հարուստ է իր մետաղների հանքերով և անտառներով։ Վառելիքի առատությունը հնար է տալիս այդ հանքերից դուրս բերել դեռևս երկաթ և պղինձ, որք թեթևացնում են ոչ միայն ժողովրդի անհրաժեշտ պիտույքները, այլև մասնավորապես վաճառքի նյութ են դառնում։

Այդ հանքերը (որոնց թիվը խիստ շատ է), եթե արհեստական կերպով մշակվեին, կարող էին գլխավոր արդյունաբերության աղբյուրները դառնալ ազգային հարստության։

Այդ երկրի գլխավոր բերքերն են՝ մետաքս, ցորեն, բրինձ, բամբակ և ածուխ։ Նոքա թեև արդյունաբերվում են գյուղացիների մշակությունով, բայց ցավալի է ասել, որ ոչ այնքան լցուցանում են ժողովրդի ապրուստի պիտույքները, որքան պարարտացնում են կալվածատեր խաների քսակները։ Ժողովուրդը իր անտանելի աշխատություններով դարձյալ տանջվում է ծայրահեղ աղքատության մեջ։

Քառասուն կամ հիսուն տարի առաջ Ղարադաղում հայ բնակչաց թիվը ավելի շատ էր և նոցա վիճակը՝ ավելի բարվոք, քան թե այժմ։ Այն ժամանակ հայերն այստեղ կառավարվում էին յուրյանց մելիքներով, որք եղել են միշտ զորեղ և նշանակություն ունեցող անձինք։ Նոքա էին տերեր գյուղերի և կալվածների և պատերազմական դեպքերում միշտ կարողացել են իրենց հայ ժողովրդով ընդդիմանալ թշնամուն։

Այդ մելիքներից նշանավոր են եղել որպես կալվածատերեր Մելիք-Ազարիան և նորա որդին Մելիք-Զաքարիան։

Դոցա ժամանակներից սկսյալ այդ երկիրը լցվում է Չալաբյան կոչված թուրքերի մի բարբարոս ցեղով, որք հետզհետե աճելով և զորության տեր դառնալով, սկսում են ճնշել հայերին։ Մելիքները, չկարողանալով դիմանալ դոցա հաղթահարությանցը, թողնում են իրենց գյուղորայքը և կալվածքները, բազմաթիվ ժողովրդով գաղթում են դեպի Արաքսի մյուս ափը, Ղարաբաղ։

Չալաբյան խաները տիրում են հայ մելիքների թողած կալվածները և սկսում են ավելի և ավելի նեղել մնացորդ հայերին։ Նոցա վիճակը հետզհետե սկսում է վատթարանալ մինչև մեր օրերը։

Այժմ մինչև 28 գյուղերում բնակվում են հայեր, նոցա թիվը ամեն մի գյուղում կարելի է միջին թվով 30 տուն հաշվել։ Այդ 28 գյուղերի մեջ դուք չեք գտնելու ոչ մի վարժարան։ Այդ մասին չի կարելի մեղադրել

ժողովուրդը, որ վերջին աղքատության մեջ է և ուսման անհրաժեշտ կարիքը չէ զգում։ Այլ մեղադրելի է Ատրպատականի Հայոց կառավարությունը, Թավրիզի Առաջնորդարանը։

Նա միայն այն ժամանակ մտաբերում է, թե Ղարադաղում հայ ժողովուրդ ունի, երբ տարենը մի անգամ հարկավոր էր յուր նվիրակները ուղարկել այդ գավառի Հայոց պտուղը հավաքելու։ Խղճալի գյուղացին իր կրոնական ջերմեռանդությամբ վճարում է իր հոգու պարտքը։ Բայց Եթե չքավորության պատճառով չկարողանա իր պարտքը լցուցանել, Առաջնորդի նվիրակը կստանա նորանից բռնությամբ, նորա տան չուլ-փալասը ծախել տալով, որովհետև նա ունեի իր հետ Թավրիզու բարձր կառավարությունից հոքմ (հրաման) տեղային գավառապետի վերա, որ այդպիսի հանգամանքներում օգնե նվիրակին։

Խղճալի ժողովուրդ, նա յուր չքավորության մեջ ստիպված է տերության տուրքը վճարել ծեծ ուտելով... նա ստիպված է և յուր պարտագիր հոգևոր նվերը վճարել Առաջնորդին դարձյալ ծեծ ուտելով...

Երեսուն տարի առաջ, երբ Ղարադաղն էր Տաթևա վանքի վիճակը, այս գավառից հայ երեխայք տարվում էին նույն վանքում ուսման համար, ուր պատրաստվում էին գոնյա փոքրիշատե գրագետ քահանայացուք։ Բայց քանի Ղարադաղը կորցրավ Տաթևը, այդ բախտից ևս զրկվեցավ նա։

Այժմ ամեն մի ածխավաճառ, այծը դիմից որոշող, անտառի արջը, եթե նա ցանկություն ունեի քահանա դառնալու, կարող էր յուր բեռնակիր իշաները վաճառել, մի քառասուն ոսկի արծաթ կազմել Առաջնորդին դիմելով, տերտեր դառնալ և անտառում փայտահատությամբ կոշտացած, ածուխի մեջ սևացած յուր ձեռքը խեղճ ժողովրդին համբուրել տալ... Նորին սրբազնությունը մեծավ ուրախությամբ ընդունում է այդպիսիներին, և ծեսերն վերջացնելեն հետո ասում է յուր սարկավագին. «Նորընծային շուտ հեռացրու քաղաքից, որ մարդիկ չտեսնեն նորան»։

«Մշակի» համարում տպված էր եղբայրասպան խաների անցքը և Ամիրզատայի (տեղային գավառապետի) 200 ձիավորով փախստական խաներին հետամուտ լինելը բռնելու համար և այլն։

Բայց ահա մի նոր անցք ևս։

Ամիրզադան, չկարողանալով բռնել խաներին, հանդիպում է մի հայաբնակ գյուղի և, պատճառ բռնելով, թե փախստական խաների կայքը թաքցրած է այդ գյուղում, նա հարձակվում է բնակիչների վրա։ Գյուղացիքը փախստական են լինում, իսկ քահանան մի քանի մարդիկ-

ների հետ պատապարվում են եկեղեցումը։ Կոտրելով դռները՝ Ամիրզա-
տան մտնում է եկեղեցին, բռնում է քահանային և երկար տանջելուց ու ծեծելուց հետո ստիպում է նրան, որ նա Ավետարան կարդա, եկեղեցական ծեսեր կատարե, որ ինքն ծիծաղի և զվարճանա։ Խեղճ քահանան հնազանդվում է բռնավորի հրամանին։ Բայց նրան սկսում են դարձյալ ծեծել և երեսին թքել, թե Ավետարանը ուղիղ չէր կարդում, թե Ավետարանի մեջ այսինչ, այնինչ հիմար խոսքերն գրված են, բայց նա չէր ասում։ Իրավ, քահանան վարժ չէր կարող կարդալ Ավետարանը, բայց թուրքերն այդ ի՞նչ կարող էին իմանալ, միայն նոցա նպատակն այն էր, որ խեղճ եկեղեցականի գլխին կատակներ խաղան և նրան խայտառակեն։ Նոքա եկեղեցումը զանազան ապականություն գործելեն և յուրյանց սրբապիղծ զվարճությունը կատարելեն հետո դուրս են գալիս եկեղեցուց, կողոպտելով նորա սրբությունքը, սկիհը, խաչերը, բուրվառն, մեռոնը և գյուղի մի քանի տների կրակ տալեն հետո գնում են Քալաքդար կոչված գյուղը, այդ տեղից պարսկերեն գրված մի նամակ են ճամփում քահանային, որ 20 ռուբլի փող ուղարկե, մեռոնն ետ կտան, որովհետև նորանց պետք չէր։ Խղճալի գյուղացիք յուրյանց սրբությունը թուրքերի ձեռքից ազատելու համար ուղարկում են խնդրած արծաթը, բայց Ամիրզատան, ստանալով այդ գումարը, դարձյալ ետ չէ դարձնում մեռոնը։

Այդ անցքը պատահում է հուլիսի 9-ին և դորա գործողն այն անձն է, որ կառավարությունից նշանակված է որպես գավառապետ, որպես դատավոր, տեղային կարգերի և կանոնների վերա հսկելու համար։

Այդ անցքի մասին խնդիրք մատուցվել է մինը Թաբրիզի Նաիբուլ-վուզարային, մյուսն՝ Սահաքի դիվանին, և երկու օրինակ նույն խընդրքի ներկայացված է ռուսաց և անգլիացվոց հյուպատոսարաններին։ Տեսնենք ինչով կվերջանա։

Այդպիսի անցքերը Ղարադաղում նոր բան չեն։ Անցյալ տարի միևնույն գյուղից մեկ վերստ հեռավորությամբ գտնված մի հայ գյուղում, երկու հորեղբայր խաներ միմյանց հետ պատերազմելու ժամանակ, նայանից մինը 15 հոգիով մտնում են գյուղի փոքրիկ եկեղեցին, պատը քանդում են և սկսում այնտեղից հրացաններ արձակել դեպի յուրյանց թշնամիքը։ Կռվից հետո նոքա ապականում են եկեղեցին և եղած սըրբությունքը, եկեղեցական անոթները կողոպտելով, հեռանում են։

Կրկնում ենք, որ այդպիսի դեպքեր պատահում են Ղարադաղում խիստ հաճախ։ Իսկ բարձ. Կառավարությունը խիստ սառնասրտությամբ նայում է դոցա վերա, որպես մի սովորական բանի վերա...

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Հայերը, կորցնելով յուրյանց քաղաքական նշանակությունը, ենթարկվում են մահմեդական ազգերի իշխանության ներքո։ Նոցա հայրենական հողը դառնում է օտարների կալվածք, իսկ իրանք՝ նույն կալվածատիրոջ ստրուկները։

Անշահավետ պայմանները կալվածատիրոջ մշակների հետ ստիպում են նորանց թողնել հողը, թողնել երկրագործությունը և գաղթել դեպի քաղաքները։

Եվ այդպիսյավ հայերը հետզհետե յուրյանց բնակությունը կենտրոնացնում են մեծ մասամբ Տաճկաստանի, Հնդկաստանի և Պարսկաստանի գլխավոր քաղաքներում։

Այդ քաղաքներում ընտրում են նոքա ավելի ազատ պարապմունքը՝ վաճառականությունը։ Հայերի ճարտարությունը այդ արհեստի մեջ շուտով երևան է լինում։ Վաճառականությունը հաջողվում է նրանց, և նոքա գործում են մեծամեծ առաջադիմություններ։

Դորա պատճառն այն էր, որ հայերը յուրյանց կրթությունով և ուսմունքով ավելի բարձր աստիճանում գտնվում էին, քան այդ երկրների մյուս ազգաբնակությունները, որպիսի էին՝ պարսիկները, թուրքերը, տաճիկները, հնդիկները և այլն։

Ուրեմն ասպարեզը բաց էր հայերի առջև։ Եվ նոքա սկսում են առաջին դերը խաղալ ասիական վաճառականության մեջ։

Իսկ այդ բախտը երկար չէ տևում։

Ասիական վաճառականության արդյունաբերությունքը հրապուրում են եվրոպացիների շահասիրությունը։ Եվ վերոհիշյալ երկրներում հայտնվում են անգլիացի, գաղղիացի, հույն և զվիցերիացի վաճառականների մեծամեծ տներ։

Ասել է, թե հայերի առևտրական ասպարեզում երևում են ավելի զորեղ ախոյաններ։ Սկսվում է մրցությունը։ Բայց հայերը չեն կարողանում դիմադրել եվրոպացիներին և ընկճվում են։ Եվրոպացիք խլում են նոցա ձեռքեն ասիական վաճառականության ասպարեզը։

Եվ բնականապես այդպես է լինում։ Հաղթությունը միշտ մնում է զորեղի կողմը։

Մինչդեռ հայը առնում էր յուր ապրանքները երկրորդական և երրորդական ձեռքերից, հետզհետե թանկ նստեցնելով յուր վերա վաճառքի գները, եվրոպացին բերել էր տալիս նույնը ուղղակի նորա աղբյուրից, այսինքն՝ նորա կենտրոնից, ավելի էժան գնով։ Ուրեմն համեմա-

տությունը վաճառքի մեջ, գների վերաբերությամբ, լինում էին զանազան։ Եվրոպացին կարողանում էր վաճառել յուր ապրանքը վաստակ շահելով, իսկ հայը վաճառում էր նույնը կամ առանց վաստակի և կամ վնասով։

Հայերը չգիտեին եվրոպական լեզուներ, և ծանոթ չէին Եվրոպայում երևելի վաճառական տների և գործարանների հետ։ Այդ պատճառով և չկարողացան ունենալ նոցա հետ ուղղակի հարաբերություններ։ Այդ հանգամանքներով, նոքա ոչ միայն զրկվում էին ուղղակի Եվրոպայից ապրանքներ բերել տալու միջոցներեն, այլև ստիպված էին յուրյանց երկրի մշակության հում բերքերը վաճառել դարձյալ նույն երկրում գտնըված եվրոպացիների վերա։ Եվ այդպիսյավ ասիական վաճառականության երկու փոխադարձ ծայրերն ևս անցանում են եվրոպացիների ձեռքում։

Բացի անհմտությունը վաճառականության արհեստի մեջ, Ասիայում հայերի եվրոպացվոց հետ մրցություն անելու անկարողության գըլխավոր պատճառներից մինն էլ այն էր, որ նոքա չէին այնպիսի մեծ դրամատերներ, որպես նոցա հակառակորդները, որոց ուժը կազմված էր մեծամեծ ընկերություններից։

Հայերի թուլության վերջին հանգամանքին կարող էին նպաստել նույնպես ընկերությունները, *զանազան մասնավոր գումարներից կազմելով նշանավոր դրամագլուխներ։*

Այդ հնարը նույնպես գործի դրվեցավ։ Հայերի մեջ երևեցան զանազան ընկերություններ։ Իսկ նոքա ոչ միայն եղան ապարդյուն, այլ յուրյանց գործը մի կամ երկու տարի վարելեն հետո տասն տարիներով սկսան միմյանց հետ դատ վարել, մինչ կարողացան բաժանվել միմյանցից։

Ի՞նչ էր դորա պատճառը։

Թեև շատերը հայերի անմիաբանությանն են վերաբերում այդ, իսկ ես պատասխանում եմ,— պատճառն էր նոցա գիտնական վաճառականության արհեստը չիմանալը և հաշվապահության կանոններին անտեղյակ լինելը։

Ահա այդպիսով, հայերը, լինելով մի ժամանակ գլխավոր ներկայացուցիչքը ասիական վաճառականության, սկսում են նորա երկրորդական դերը խաղալ, դառնալով եվրոպացի վաճառականների օգտին գործիք և նոցա շահերուն ծառա։

Երկաթուղու գիծը հասավ մինչև Թիֆլիս, և նա կգնա մինչև Կասպից ծովը։ Կովկասը կլցվի մի մեծ հոսանքով եվրոպացի շահախնդիրների։

Նոքա կհայտնվին յուրյանց գիտությամբ, ճարտարությամբ և ամենայն ֆակուլտեներով:

Կսկսվի մրցությունը և այստեղ:

Ի՞նչ պիտի անեն հայերը: Պատրաստվա՞ծ են նոցա հետ մրցելու:

Կարծեմ, ո՛չ:

Եթե հայը Կովկասում ևս կկամենր տեղի տալ օտարազգիներին յուր վաճառականության ասպարեզը, թող նա դաս առնե այն հանգամանքներից, ինչ որ պատահեցան նորա ազգայիններին Ասիայում:

Մեք պատմական կերպով ցույց տվեցինք բոլոր պակասությունները, որք առիթ տվեցին հայերի հաղթվելուն: Թող Կովկասի հայերը լրացնեն այդ թերությունները:

Մեք կպարզենք փոքրիշատե մեր միտքը:

Մի հասարակ Ճանճուր Իվանիչի մոտ աշակերտ դառնալով, նորա խանութը սրբելով, տանը ջուր, ձուկ և գինի տանելով, տանիցը ճաշ բերելով և մի քանի տարի այս ծառայական գործերի մեջ պարապվելով, հետո նույն խանութի պրիկաշչիկ դառնալով և, մի փոքր գումար կազմելեն հետո, յուր համար առանձին դուքան բաց անելով առ և տուր սկսել,— դա չէ նշանակում գիտնական վաճառական դառնալ: Թեև մեր Կովկասի վաճառականների գործունեությունքը սկսվում են ըստ մեծի մասին այդպիսի միջոցներով:

Վաճառականությունը ինքնըստինքյան մի արհեստ է: Նորան պետք է գիտնական կերպով ուսումնասիրել և փորձով իրագործել: Մի այդպիսի վաճառականությունը սովորելու համար Ճանճուր Իվանիչի խանութը չէ կարող վարժարան լինել: Նորան պետք է ուսանել Անգլիայի, Գաղղիայի կամ Գերմանիայի վաճառականական ուսումնարաններում:

Իհարկե, այդ հնարը մատչելի չէ կարող լինել մեր ժողովրդի չքավոր դասին: Նոցա որդիքը, եթե միտք ունեին առևտրական դառնալ, դարձյալ ստիպված են Ճանճուր Իվանիչի խանութում աշակերտել:

Իսկ այդ Ճանճուր Իվանիչները, փոխանակ յուրյանց որդիքը Ռուսաստանի մայրաքաղաքները ուղարկելու, որ այս կամ այն գիտությունը սովորեին, միմիայն չինովնիկ դառնալու նպատակով (որոց մեծ մասը այս նպատակին չհասնելեն հետո հոր հարստությանց ցեց են դառնում), թող նոքա մտածեն այդ մասին յուրյանց որդիք գիտնական, եվրոպական կրթությամբ, վաճառականներ անելու:

Միայն ռուսերեն լեզու գիտենալով և վրացերեն լեզվով յուր դավթարները խմբշտելով, չէ կարելի եվրոպական վաճառական դառնալ և եվրոպացվոց հետ մրցություն անել: Դորա համար անհրաժեշտ պետք է

սովորել եվրոպական լեզուներ, գաղղիերեն, անգլիերեն, գերմաներեն, որպեսզի ուղղակի Եվրոպայի երկրի վաճառականական քաղաքների հետ, որպիսի են Մարսել, Մանչեստր, Լեյպցիգ՝ հարաբերություններ ունենալ։

Կովկասը հարուստ է հում բերքերով։ Կովկասի մետաքսը, բուրդը, բամբակը կաշին, ընկուզենու տախտին, չոր մրգեղենները, գինին և այլ զանազան բերքերը, կարող են վաճառականության առատ մթերք դառնալ։ Դրանց օրինակավոր կերպով արդյունաբերելու համար պետք է թողուլ նահապետական հին ձևերը և սովորել գյուղատնտեսական արհեստը։ Որպեսզի փոխադրելով մեր երկրի հում բերքերը դեպի արտասահման, այնտեղից ներս բերենք պատրաստի, արվեստագործված ապրանքներ։

Գյուղատնտեսությունը պահանջում է հող, զանազան մեքենաներ, գործիքներ, ուրեմն արծաթի անհրաժեշտ հարկավորություն։ Մեր դրամատերները մի չար բախտով անձնատուր եղած կապալներին, ուշադրություն չեն դարձնում այդ արհեստի վերա, նոքա չեն ցանկանում հողի և բնության հետ գործ ունենալ, որ միակ աղբյուրն է մարդկային հարստության։

Իսկ վաճառական դասի մեծ մասը յուրյանց առևտրական գործունեության շրջանը դարձնում են մասնավոր գումարներով։ Այստեղ դեր է խաղում վարկը, համարումը (доверия)։ Մի փոքրիկ անհաջողություն, մի քանի չար լեզուների բամբասանքը, մի րոպեում կարող են ոչնչացնել և՛ վարկը, և՛ համարումը։ Այդ պատճառով սնանկությունը սովորական դեպք է մեր վաճառականների մեջ։

Վաճառականության գործունեության շրջանը դարձնել միայն դատարկ վարկով և համարումով, դա կլինի ժամանակավոր և անհիմն։

Վաճառականի գործունեությունը պետք է հիմնվի կենդանի կապիտալի վերա։ Մի այդպիսի կապիտալի գումարը պետք է նշանավոր քանակություն ունենա։ Ուրեմն այստեղ ևս բարձրանում է ընկերության անհրաժեշտ կարևորությունը։

Ընկերությունների գլխավոր օգուտներից մինն էլ այն կլինի, որ մեր վաճառականները կդադարեն մենավաճառության ինտրիգաներով մինը մյուսին վնասել, յուրյանց արհեստակիցներին ստորացնել, որ դուրս ցցվի յուրյանց անձնական եսը։

Ընկերության մեջ վնասը և օգուտը կլինի ընդհանուր։ Եվ նոքա ընդհանուր ուժով կկարողանան եվրոպացիների հետ մրցություն անել։

ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Այս վերջին երեք տարին Կովկասի տնտեսական պատմության մեջ շատ հաջողակ տարիներ էին։ Այդ միջոցումը Թիֆլիսում հիմնվել են երկու գործարան և երեք բանկ։ Կովկասը արվեստագործության և վաճառականության զարգացման համար այնչափ հարմարություններ ունի, որ այս մի քանի փորձերի վերա մենք կարող ենք նայել ինչպես տնտեսական ձեռնարկության մի երկայն շղթայի առաջին օղերին։ Երկար շղթա եմ ասում, որ դառնելու է Կովկասը աշխարհիս ամենահարուստ երկրների կարգին։ Այս հույսը մի ցնորք չէ երևակայական հիմանց վրա բարձած, այլ մի անհրաժեշտ հետևանք այնպիսի պատճառների, որք կան և մանավորապես արդեն սկսել են իրանց ներգործությունը։ Կաշխատենք մի համառոտ կերպով ցույց տալ այդ պատճառները։

Արվեստագործության առաջադիմությունը կախված է գլխավորապես երեք պայմաններից. այդ է՝ ա) բնական նյութերի բազմությունից և էժանությունից, բ) մշակների շատությունից և էժանությունից, և գ) արվեստագործական ապրանքների ծախսելու հեշտությունից։ Այդ երեք պայմանները Կովկասը վայելում է վերին աստիճանի։

Գրեթե ավելորդ է խոսել արվեստագործության նյութերի էժանության և շատության վրա մեր բարեբեր երկրումը։ Այդ մի պարզ բան է։ Եվրոպան է, որ Կովկասից արվեստագործության նյութեր (հում արդյունք) է տանում և ոչ Կովկասը Եվրոպայից բերում։ Բամբակը, բուրդը, աբրեշումը և այլն, արվեստագործության գլխավոր նյութերն են և Կովկասի գլխավոր բերքերը։

Համեմատելով Եվրոպայի հետ այդ առարկաները այստեղ շատ էժան են։ Էլ չեմ ասում, թե Թուրքաստանը և մանավանդ Պարսկաստանը այդպիսի նյութերի անսպառելի աղբյուրներ են։

Ով որ գիտե, թե ինչ ահագին վարձ են ստանում մշակները Անգլիայում, Ֆրանսիայում և Եվրոպայի մյուս երկրներում, նա հեշտ կհասկանա, որ աշխատանքի էժանության կողմից Կովկասը ունի ահագին գերազանցություն Եվրոպայի վրա։ Կովկասի արվեստավորները երեք անգամ ավելի էժան են վարձվում, քան թե Եվրոպայի արվեստավորները։

Ի՞նչ կվերաբերի մշակների բազմությանը, այդ կողմից Կովկասի արվեստագործությունը պակասություն չի զգա, ըստ որում, մի 5 կամ 10 կոպ. մշակի վարձը ավելացնելով, կարելի է ինչքան մշակ հարկա-

վեր է Թուրքաստանից և մանավանդ Պարսկաստանից գնալ մեր երկիրը լցվել։

Հայտնի է, որ Եվրոպայի արվեստագործության բերքերի մեծ մասը ծախվում է ասիական ժողովուրդներին. հնդկաց, չինացոց, պարսկաց, թուրքաց և այլն, ուրեմն ո՞վ ունի ավելի հարմարություն արվեստագործության բերքերը տարածել՝ Կովկա՞սը, թե՞ Եվրոպան.— Իհարկե՝ Կովկասը։

Կովկասից ապրանք տանել Պարսկաստան մի չնչին ծախս է պահանջում, իսկ Եվրոպայից բերելը ունի մեծ դժվարություններ և ծախսեր։ Հարկավոր էր մի երկաթուղիով միացնել Կովկասը Հնդկաստանի հետ, այն ժամանակ Հնդկաստանի, Չինաստանի և Միջին Ասիայի հետ հարաբերությունները կտային Կովկասի արվեստագործության մի ահագին զարկ։

Եթե Կովկասումը գործարաններ հիմնվեին և փոքր-ինչ առաջ կանգնեին, եվրոպական գործարաններից շատերը այդպես առաջ չէին կարող շարունակել իրանց գոյությունը և անշուշտ պիտի ընկնեին։ Աշխարհիս հարստության համար եղած վեճի մեջ Կովկասը կունենար մեծ գերազանցություն ուրիշ երկրների վրա։

Արդյոք հարկավո՞ր է խոսել նորա վերա, որ գործարանները մեզ օգուտ են։ Ահա՛ ինչ է ասում ինձ մի վաճառական. «Տե՛ս էս ստիրին. սրա մեջ կա մի գրվանքա բամբակ, որ արժե մեկ աբասի, բայց ի՞նչ ենք վճարում, ինչ եմ տվել սրան... վեց մանեթ»։ Այս խոսքերը պարզ ցույց են տալիս մեզ, թե ինչ կնշանակե երկրիս համար իր սեփական գործարաններ չունենալը։ Մեկ աբասու և վեց մանեթի մեջ զանազանությունը՝ այդ մի սոսկալի հարկ է, որ մեր երկիրը վճարում է օտար ազգերի արվեստագործությանը։ Եթե մենք մեր սեփական գործարանները ունենայինք, այդ գումարը կմնար մեր երկրումը և մեր պակասությունները կլրացներ։

Մենք ասացինք, որ մշակը մեզանում էժան է, և այդ հանգամանքը արվեստագործության առաջադիմության պայմաններից մինն է։ Բայց ընթերցողը այդ խոսքերից չպետք է եզրակացնե, որ մենք կամենում ենք այդ էժանությունից գումարատերերը որչափ կարող են օգուտ քաղեն, որ մեր մշակներին նոքա հարստահարեն, ո՛չ։ Եթե մենք կամենում ենք արվեստագործության առաջադիմությունը մեր երկրում, դորա գլխավոր նպատակներից մինն է մեր մշակներին հանել իրանց թշվառ դրությունից, նոցա վարձը և կյանքը բարձրացնել։ Մնացյալ երկու պայմանները, մեր կարծիքով, բավական են, որ Կովկասի արվեստագործներին տան

գերազանցություն Եվրոպայի արվեստագործության վրա և ապահովեն մեր երկրի նյութական և հոգևոր առաջադիմությանը։

Կան մարդիկ, որք ասում են, թե հայերը անընդունակ են վերին աստիճանի քաղաքակրթությանը հասնելու։ Այդ ասողները իրանց մտքերին ապացույցներ չեն բերում։ Հայերը եվրոպական ազգերից շատ հետ են մնացել, իրավ է, և դորանից ավելի նոքա ոչինչ չեն կարող անել։ Բայց նոքա մոռանում են այն սարսափելի պայմանները, որք ահա քանի հարյուր տարի է հայոց ազգի վերա ծանրացած են։

Անհնարին էր հայոց ազգի համար մարտիրոսական խաչը տանել և միևնույն ժամանակ հոգալ նյութական ու մտավոր զարգացման վերա։ Հայերի հետ մնալու պատճառն էր պատերազմը։ Այժմ պատերազմի դարը անցավ, մտնում ենք խաղաղության դարը։ Հույս ունինք, որ հայերը այժմ կապացուցեն, թե նոքա ընդունակ են ամենավսեմ գործունեությանց և պատվավորությանց, թե հայը արժանի է ամենաազնիվ վիճակի, կամ թե զոնե նա կարող է անգլիացոց, հրեից, ֆրանսիացոց, գերմանացոց նման երկրիս արվեստագործական և առևտրական բեմի վրա գլխավոր դերասաններից մինը լինել։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Դավրեժից հաղորդում են.— Պարսկաստանի երկաթուղին, որի գիծը Կասպից ծովեն, այսինքն՝ Էնզելիեն մինչի Բենդեր-Բուշիր պիտի ձգվի, անգլիական ընկերության գործակալը, որ Թեհրանում էր, դաշնագրության թուղթն շահին կնքել տվեց։

— Սադր-էզեմը (մեծ եպարքոսը) այս տարի կտրեց կառավարությունից խոշոր ռոճիկ և թոշակ ստացողների շատերի թիվը, որոնք արքունի ծառայության մեջ չգտնվելով, դարձյալ ստանում էին նորան։

Իսկ նոքա, որ պաշտոնի մեջ էին և առատ ռոճիկ էին ստանում, պակասցրեց։ Օրինակի համար, մի սերթիպ (զնդապետ), որ ստանում էր 1000 թուման, այժմ ստանում է 600 թուման։ Այդ կարգով պակասել է բոլոր ծառայողների ռոճիկները, որ միմիայն Ատրպատականում մինչև երկու հարյուր հազար թուման գումար է կազմում հօգուտ արքունի գանձարանի։

Նազըմ-ուլ-Մուլքի Պարսկաստան հրավիրվելն և նորա Շահից այն ծանրակշիռ պաշտոնը ստանալն, արդարև, մեծ օգուտներ կարող էր ունենալ Պարսկաստանի քաղաքակրթության համար։ Եվ Նազըմ-ուլ-Մուլքը

կատարեց այն, ինչ որ մի մարդ կարող էր անել յուր մի քանի ամսվա գործունեության մեջ։ Այսինքն՝ նա գրեց նոր օրենքներ, որոնք անհրաժեշտ պետք էին Պարսկաստանի բարեկարգության այժմյան վիճակին։ Բայց թե երբ պիտի գործադրվին այդ օրենքները, դեռ հայտնի չէ…

Պարսկաստանի մոլեռանդ ժողովուրդը ի վաղուց անտի նախապաշարված լինելով Նազըմ-ուլ-Մուլքի դեմ, որպես մի հեղափոխական անձ*, միշտ խորթությամբ նայում էր նորա վերա։ Նոցա նախանձը ավելի գրգռվեցավ, երբ Շահը շնորհեց նորան Նազըմ-ուլ-Մուլք (բարեկարգիչ տերության) տիտղոսը և հանձնեց վերանորոգությունները անել յուր տերության մեջ։

Նազըմ-ուլ-Մուլքի կյանքը ամեն բոպե վտանգի մեջ է։ Սեփար-էզեմը, որ շատ սիրում էր նորան, կամենալով առ ժամանակ հեռացնել Պարսկաստանից, հանձնեց նորան մի փառավոր պաշտոն, այն է Լոնդոնում Շահի կողմից լիակատար դեսպան։ Եվ մոտ օրերս ասում են Նազըմ-ուլ-Մուլքը պիտի ուղևորվի դեպի Անգլիա։

ՊԱՏԱՍԽԱՆ

«Մեղվի» 31 համարում կարդացինք մի նամակ Դավրեժից Հեթում Ճելալյանի ստորագրությամբ։ «Մեղվին» շատ բնական էր մի այդպիսի գրվածքը յուր էջերի մեջ տեղավորել, նախ որ «Մշակին» էր դիպչում, երկրորդ, նորա խմբագրության աշխատակիցներից մինին։

Պ. նամակագիրը առանց հիմնավոր փաստերի կամենում է ապացուցանել, թե «Մշակի» 31 համարում տպված Ղարադաղու նամակը ամենևին Պարսկաստանից գրված չի եղել, այլ նա հնարած է նույն խմբագրությունից, անձնական կրքերի առիթով դեպի Դավրեժի Սրբազան Առաջնորդը։

Պատասխանատվությունը թողնելով այդ նամակի հեղինակի վրա, թե նա իսկապես գրված է եղել Պարսկաստանից և չխլելով նորանից

---

* Նազըմ-ուլ-Մուլքը, հայազգի երիտասարդը, Փարիզում իր ուսումը վերջացնելեն հետո, երբ դարձավ Թեհրան, նա կազմեց մի ֆարմասոնական կուսակցություն, նորան խիստ հաջողվեց այդ հիմնարկությունը և փոքր ժամանակում ստացավ բազմաթիվ կուսակիցներ։ Մոլլաները հալածանք հարուցին նորա դեմ, որի պատճառով նա ստիպվեցավ թողնել Պարսկաստանը և գնալ Պոլիս։ Իսկ Շահը Պոլսեն մյուս անգամ նորան Թեհրան հրավիրելեն հետո նա էր արդեն կատարյալ դրական մարդ և թողել էր յուր հին դաղափարները։

յուր խոսքերը գրավորապես արդարացնելու իրավունքը, մենք ավելորդ չենք համարում մեր կողմից հայտնել մի քանի նկատողություններ պ. Ճելալյանի նամակի մասին, ինչ որ վերաբերում էր «Մշակի» խմբագրությանը։

Պ. Ճելալյանը խոսում է ինչ-որ հոդվածի մասին, որ իբր թե տպված էր «Մշակի» խմբագրությունից Ղարադաղի վերա, որի մեջ հայտնված էին սուտ և անհիմն տեղեկություններ այդ գավառի մասին, և թշնամական զրպարտություններ Դավրեժի Սրբազան Առաջնորդի վերա և այլն, և այլն։

Ահա պարոնի իսկական խոսքերը։

«Քանզի, որպես քաջ գիտենք, հոդվածագիրը ժամանակայ բացառությամբ (դույն կամի ասել բացակայությամբ) անծանոթ է տեղիս և թե Ղարադաղի ներկա գործոց, անցից և դրությանը»։ Քանի տողերից հետո ավելացնում է. «Որի համար, հուսամ, անշուշտ կներվի ինձ ասել, թե հոդվածագիրը ոչ ազգասիրական եռանդով վառված, այլ անձնական կրից ծխով կուրացյալ, Տփխիս նստած՝ Դավրիժու առաջնորդը կդատապարտե անխոհեմաբար»։

Պարոնը երևի ինքը «անձնական կրքից ծխով կուրացած է», որ չէ ամաչում լույս ցերեկով յուր սևը սպիտակի տեղ ցույց տալ և «Մշակի» խմբագրության վերա այդպիսի զրպարտություն դնել։ Երբ որ «Մշակի» խմբագրությունը, սկսյալ իր թերթերի առաջինից մինչև վերջինը, իր համարների մեջ, իր կողմից գրված որևիցե հոդված Ղարադաղի, Թավրիզի կամ այնտեղի Առաջնորդի վերա երբեք տպած չէ, թե առաջնորդող հոդվածների մեջ, թե ներքին տեսության և թե արտաքին տեսության մեջ։ Եթե կա մի այդպիսի հոդված, թող ցույց տա պարոնը, թե «Մշակի» որ համարումն է տպված։

«Մեղվի» Դավրեժի թղթակիցը վերջացնելիս յուրյան թույլ է տալիս «Մշակի» խմբագրին դիպչել։ Ասելով թե «Բրուսսո-գաղիական ախոյան մաքերը այնքան հակառակ չեն միմյանց նկատմամբ, որքան որ պ. խմբագրի միտքը դեպի յուր համարյուն ազգայինքը ի Պարսկաստան։ Նա կզրպարտե հանդպարտս յուր Առաջնորդական եղբարքը, համարելով՝ թե նոքա կրոնափոխության կդիմեն, հետևելով բողոքականության պատրաստած թակարդը խորասուզվելով, այդ մի անհերեքի ստություն է»։ Եվ մի քանի անմիտ խոսքեր ավելացնելեն հետո վերջացնում է իբր թե «Մշակը» «լուսո և... ճահը թողած, մի անձյութ և վատ լապտերով խավարային աղջամղջի մեջ խարխափելով կշրջի»։

Մեր կողմից ավելորդություն կլիներ պատասխանել պարոնի այդ-

ոճի ափնեցիկ շատախոսությունը, որ առանց «Մշակի» խմբագրի հոդվածները կարդալու և նրա ուղղությունը կրիտիկաբար քննելու և առանց գիտական և արհեստական կերպով նրա թերությունը ցույցանելու, բավականանում է միայն յուր անձնական խակ կարծիքը հայտնել, չմտածելով, որ կարծիքը կրիտիկա չէ։

«Մեղվի» Դավրեժի թղթակիցը, խոսելով «Մշակի» խմբագրի մասին, իր կարծիքը հիմնում է այնպիսի փաստերի վերա, որ իսկապես ոչ եղել են և ոչ կան։ Նա ասում է, թե «Մշակի» խմբագիրը Պարսկաստանի հայերի մասին այս և այն սուտ ու սխալ մտքեր է տարածում։ Երբ որ «Մշակի» խմբագիրը իր թերթերի իննամյա շրջանում իր սեփական հոդվածների մեջ ոչ մի գրված առանձնապես նվիրած չէ Պարսկաստանի հայերին։ Միայն նա իր թերթերի մեջ տպել է մի քանի նամակագրությունք Պարսկաստանցի զանազան տեղերից ստացած։ Բայց եթե այդ նամակագրությանց մեջ կային անճշտությունք, դա խմբագրին չէ վերաբերում, այլ պատասխանատվությունը մնում է նույն հեղինակների վերա։

«Մեղվի» Դավրեժի թղթակիցը փոխանակ «Մշակի» մեջ տպված Պարսկաստանի նամակագրությանց սխալները ցույց տալու, «Մշակի» խմբագրի վերա է հարձակվում, կարծելով, թե նա ինքն է գրում այդ նամակները, չնայելով որ նույն հեղինակների անունները յուրյանց նամակների ներքև ստորագրված են։

Այդպիսի նամակագրությանց թվում «Մշակը» տպել է յուր 31 համարում մի նամակ (բայց ոչ թե հոդված) Ղարադաղի վերա, որ նա ստացել էր Պարսկաստանից յուր բաժանորդների մինից։ Հեղինակը յուր նամակի մեջ նկարագրում է Ղարադաղ գավառի աշխարհագրական տեղագրությունը, նրա բնության հարստությունը ու բերքերը, նրա ազգաբնակությունը ու հայ ժողովրդի թե ներկա և թե անցյալ ժամանակների դրությունը, վերջապես նա նկարագրում է խաների, չալաբաշների սարսափելի բռնակալությունը գեղի հայ ժողովուրդը ու Ամբատավ գյուղի բարբարոսական անցքը։ Նույն նամակի մեջ խոսում է նա և Ատրպատականի հոգևոր կառավարության վերա։ Այդ նամակը մինչև այն աստիճան հետաքրքրական էր ամեն մի հայ մարդու ուշադրության, մինչև Պոլսի «Մանզումե էֆքյար» լրագիրը ամբողջապես յուր թերթի մեջ առել էր «Մշակից»։

Գուցե այդ նամակի մասին լինի պ. Ճեպլյանի խոսքը, նրան հոդված կոչելով և «Մշակի» խմբագրության աշխատակիցների մինից հնարած համարելով։ Բայց հարկավոր էր կատարյալ մարգարեական հոգի

ունենալ, որ Թիֆլիսից մի այնպիսի օտար և անծանոթ երկրի վերա այնպիսի մանրամասն տեղեկություններ գրել և առօրյա անցքերը հաղորդել։ Բայց մարգարեների դարը վաղուց անցել է։

Կամենալով հաստատել Ղարադաղի նամակագրի ազնվությունը յուր հաղորդած տեղեկությունների մասին՝ պ. Ճելալյանը բերում է մի փաստ, թե նա նույն գավառի հայաբնակ գյուղերի թվի մեջ չափազանցություն է ցուցանում, գրելով, թե Ղարադաղի մեջ կային 38 հայաբնակ գյուղորայք և նոցա բնակչաց թիվը միջին թվով հասնում էր մինչև 30 տուն։ Պարոնը երևի Ղարադաղի նամակն էլ չէ կարդացել, որովհետև այնտեղ 38 գյուղ չէ գրված, այլ 28 գյուղ։ Իսկ մեր պ. կրիտիկոսի ցույց տված թվանշանները, որով կամենում է նա հերքել Ղարադաղի նամակագրի խոսքը, ավելի հաստատում են նորան, եթե նա 28 թվի տեղ 38 չդներ

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Մինչև «Մշակի» գոյություն ստանալը Պարսկաստանի հայերը խավարի մեջ էին ծածկված. ոչ մի պարբերական թերթ նոցա վերա չէր խոսում, նոցա վիճակի, նոցա դրության գիտակցությունը թաքնված էր անուշադիր մոռացության մեջ։ «Մշակն» առաջինն եղավ, որ սկսավ մշակել Պարսկաստանի հարցը։ Ապագայի պատմագրությունը յուրյան պարտական պիտի համարե այդ լրագրին, երբ նա կսկսե քննել Պարսկաստանի տխուր անցյալը։

Բայց կարդալով «Արարատ» ամսագրի իններորդ համարում արժ. Երեմյան վարդապետի նամակը, չեմ կարող իմ զզվանքը չհայտնել, երբ տեսնում եմ, որ հայր սուրբը օր ցերեկով աշխատում է արևի երեսին վարագույր ձգել…

Ահա՛ թե որպիսի խռովություն առիթ տվեց արժ. հորը յուրյան Թավրիզու Առաջնորդարանին փաստաբան հանդիսացնել, որպես լսեցինք, և որպես երևում է նույնիսկ «Արարատի» մեջ տպված նամակից, տեղվույս Հայոց Առաջնորդը ստանում է մի հանդիմանական նամակ յուր անհոգության մասին, որ նա թույլ էր տալիս օտարազգի միսիոնարներին տեղվույս հայ ժողովրդի մեջ կրոնափոխություն տարածել։

Առաջնորդը զանազան սպառնալիքներով կամենում է համոզել պ. Ա. Ալթունդիլյանին, որ նա ետ կոչե յուր «Մշակում» հրատարակված նամակները, հայտնելով, թե նոքա ստույգ չէին։ Ազնիվ երիտասարդը, ինարկե, բացասում է սրբազան հոր սպառնալիքները, որ ճարահատյալ

համոզում է պ. Հեթում Ճելալյանին յուր պաշտպանության համար գրել այն վայրիվերո նամակը, որ տպվեցավ «Մեղվի» համարի մեջ։

Հիշյալ նամակի պատասխանը ես «Մշակի» մեջ կարդացած լինելով, ավելորդ եմ համարում կրկին նորա վերա խոսելը, բայց չեմ կարող մի քանի խոսք չասել արժ. Երեմյան վարդապետի նամակի մասին։

Հայր սուրբը կոչում է «Մշակին» անզգույշ, արդարև, անզգույշ է «Մշակը». նա անզգույշ է, որովհետև խունկ չէ ծխում այս կամ այն սրբազան հոր քթին...

Կամենալով ծածկել Պարսկաստանի հայերի մեջ կրոնափոխության տարածվելը, արժ. Երեմյան վարդապետը վկայություն է բերում յուրյանց Ուրմիո գործակալի խոսքերը։ Ծիծաղելի փաստ, որը հերքելու համար ես միայն կհիշեմ մեր հորերից լսած առածը, թե. «Տանուտերի վրա լույս իջավ։— Ո՞վ տեսավ։— Գզիրը»։ Կամ. «Աղվեսից վկա ուզեցին, յուր պոչը դեմ արավ»։

Իսկ այն, ինչ որ վերաբերում է Մարաղայի կրոնափոխ եղած հայերին, դոցա մասին հայր սուրբը գրում է. «Զորմե շուտափույթ տեղեկացյալ մեր... հոգացած զարժանն»։

Ահա թե որպես հոգացին «զարժանն»:

Մարաղայի հայերն, անցյալ ձմռվա սաստիկ սովի նեղությունից, մասամբ աղքատության պատճառով, բոլորովին զրկվելով յուրյանց կյանքի գոյությունը պահպանելու միջոցներեն, ստիպվում են վաճառել յուրյանց միակ սրբությունը՝ հայրենական կրոնքը։ Օտարազգի միսիոնարները իհարկե միշտ պատրաստ են այդպիսի հանգամանքներից օգուտ քաղել, շուտով մտցնում են նոցա մեջ յուրյանց մարդիկը՝ խոստանալով նորանց նյութական օժանդակություններ։

Թավրիզի Առաջնորդարանը, փոխանակ հեռացնելու խղճալի մարաղացիներեն այն հանգամանքները, որք առիթ տվեցին նորանց այնպիսի ծայրահեղ զոհաբերության դիմել, ուղարկում է այնտեղ մի խումբ թուրք մուհասիլներ (ոստիկանության ծառաներ), որ մտրակի և ծեծի զորությամբ հայրենական եկեղեցու փոխարեն խրտնացած հոտը կըրկին դեպի այնտեղ դարձնեն։

Բայց թե ինչ հետևանք ունեցավ մի այդպիսի անզգույշ միջոցների գործ դնելը, բավական է միայն հիշել մարդկային պատմագրության այն փաստը, որ հալածանքները միշտ սաստկացնում են ժողովրդի մեջ հալածված որևիցե նոր երևույթ։

Միայն կասեմ, որ մուհասիլները ձրի չեն գնում մի պաշտոն կատարելու, նոքա պիտի ստանան յուրյանց զուլլուղը, այսինքն՝ ծառայու-

թյան վարձը: Եվ դորա համար նոքա խղճալի հայերին երկար չարչարանքներ տալեն հետո նոցա տուները կողոպտելեն հետո, պահանջում են նոցանից մի նշանավոր գումար յուրյանց զուլլուղի մասին: Աղքատ հայերը այդ գումարը վճարելու համար մինչև անգամ կամենում են թուրքանալ: Բայց մեր շնորհակալությունը չենք կարող չհայտնել տեղային պարսից զորքի աստիճանավոր հայազգի Սոլան-Յավարին, որ հավաքելով Մարաղայի հայ վաճառականներից մի գումար՝ տալիս է մուհասիլներին և ազատում է խեղճ հայերին նոցա ձեռքից:

Արժ. հայր սուրբը ակնարկություն է անում և մի «սաղմաստեցի» պարոնի վերա: Թող նա հրապարակով հայտնե պարոնի անունը. այն ժամանակ հայտնի կլինի, թե որքան ճշմարիտ էին նորա խոսքերը... միայն թե որքան անհիմն է արժ. Երեմյան վարդապետի նամակը միսիոնարների մասին, ես իմ ընթերցողների ուշադրությունն եմ դարձնում պ. Րաֆֆիի ժե, ժզ, ժէ երրորդ նամակների վերա, որոնց մեջ ճշմարտությամբ նկարագրված են Պարսկաստանի օտարազգի միսիոնարների գործունեությունքը:

ՄԻՐԶԱ ՄԵԼՔՈՒՄ ԽԱՆ

(Կենսագրություն)

Նոյեմբեր ամսի 30-ին հասավ Թիֆլիս Պարսկաստանի երևելի պաշտոնակալներից մինը, Նազըմ-ուլ-Մուլք (բարեկարգիչ տերության) կոչված, հայկազն Միրզա Մելքում խանը, որի կենսագրությունը համառոտ կերպով հաղորդում ենք մեր ընթերցողներին:

Այս նշանավոր անձն ծնված է 1831 թվականին, հայազգի ծնողներից, Նոր Ջուղայում, Սպահան քաղաքի մոտ: Նորա հայրը, Միրզա Յաղուբ (Հակոբ) խան անունով, տեղյակ լինելով քանի մի լեզուների, մերձ երեսուն տարի, թարգմանի պաշտոնով, ծառայում էր Թեհրանի Ռուսաց դեսպանատան մեջ: Նա յուր երկարամյա հավատարիմ ծառայությամբ պատիվ ունեցավ Ռուսաց և Պարսից տերությունների զանազան արտանությունների և շքանշաններին արժանանալ:

Երկու տասնամյակ Մելքումը դեռևս յուր պատանեկության հասակում կարողացավ ցույց տալ յուր բնական ընդունակությունը, որի պատճառով նորա հայրը մտածեց նորան ուղարկել Մոսկվայի Լազարյանց

ճեմարանը ուսանելու համար։ Բայց այդ նպատակը չկատարվեցավ հիշյալ ուսումնարանումը ազատ տեղ (ВАКАНЦИЯ) չլինելու համար։

Եվ հայրը փոխեց իր դիտավորությունը, 1845 թվականին ուղարկելով մանուկ Մելքումին Փարիզ, ուր մի տարի չափ գաղղիացի գերդաստանի մեջ վարժվելեն հետո նա մտավ Ռաֆայելյան ուսումնարանը։ Այդ միջոցին նա պարսկերեն, արաբերեն և հայերեն լեզուներում արդեն յուր հայրենիքումը բավականին կրթված էր։

Ռաֆայելյան ուսումնարանում չորս տարուց հետո ավարտեց և Փարիզի զանազան լսարաններում դիպլոմատիկական մասնում դասախոսություններ լսելեն հետո, 1850 թվին Մելքումը վերադարձավ Պարսկաստան, թեև մտավորապես զարգացած, բայց ֆիզիկապես բավականին մաշված և յուր առողջությունը կորցրած։ Նորա մարմնական տկարությունը թույլ չավեց նորան շատով ծառայության մեջ մտնել, և երկու տարվա միջոցում յուր առողջությունը բավականին կազդուրելեն հետո և արաբական ու պարսկերեն լեզուներում յուր գիտությունը կատարելագործելեն հետո մտավ ծառայության Թեհրանում, Պարսից Արտաքին գործոց վեզարեթի (մինիստրության) մեջ։

Կարճ միջոցում Միրզա Մելքումը կարողացավ ցույց տալ յուր հանճարը քաղաքագիտության մեջ, որի համար նա ոչ միայն առաջին վեզիրի ուշադրությունը դեպի իրեն գրավեց, այլև պատիվ ունեցավ Նորին Մեծության Շահի շնորհացն արժանանալ, ստանալով խանության տիտղոս։

1856 թվին, Պարսից ծոցի ափերի վերա, Անգլիայի և Պարսկաստանի մեջ ծագեց Մասմարի պատերազմը։ Ռուսիան և Ֆրանսիան միջնորդեցին հաշտեցնել այդ երկու տերությունները։ Ֆարուխ-խանը (որ բացի յուր մայրենի լեզվից օտար լեզու չգիտեր) նշանակվեցավ Պոլիս և Փարիզ գնալ հաշտության դաշինք կապելու։ Միրզա Մելքում խանը նշանակվեցավ որպես նորա խորհրդական։ Մին տարուց ավելի այդ դեսպանախոսությունը տևելեն հետո դաշնագիրը ստորագրվեցավ ավելի հօգուտ Պարսկաստանի, որ և եվրոպական լրագրությունը Միրզա Մելքում խանի ճարտարությանը և նորա հանճարին ընծայեցին։ Այնուհետև նա ավելի նշանակություն ստացավ Պարսից Բարձ. Դրան առջև։

Նույն միջոցին, երբ Միրզա Մելքում խանը Եվրոպա էր գտնվում, պատճառ եղավ առաջին անգամ Պարսկաստանին դաշինք կապել Ավստրիա, Ֆրանսիա, Պրուսիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Իտալիայի տերությունների և Ամերիկայի Միացյալ Նահանգների հանրապետության հետ։ Միևնույն ժամանակ իր պարապ ժամերը գործ էր դնում հեռագրական արհեստը սովորելու և պարսկաց լեզվի հնչյունները և ձևերը հե-

ագրական տասանշաններին համարացնելու: Վերադառնալով Պարսկաստան՝ նա համոզեց Շահին հեռագրի մի սերության համար անհրաժեշտությունը: Նորին մեծությունը Միրզա Մելքում խանի խորհրդով հրամայեց նախ Թեհրանեն մինչև Թավրիզ, հետո Պարսկաստանի այլ նշանավոր քաղաքների մեջ հեռագրական թել ձգել:

1859 թվի սեպտեմբեր ամսին, երբ Շահը ճանապարհորդում էր Ատրպատականի կողմերը, Միրզա Մելքում խանը Նորին Մեծության սվիտայի առաջնորդող անձն էր: Այդ ճանապարհորդությունը այն օգուտն ունեցավ, որ Շահն տեղեկացավ յուր ժողովրդի թշվառ վիճակը և Պարսկաստանի զանազան վերանորոգությունների կարոտ լինելը: Նորին Մեծության այդ գիտակցությունը, իհարկե, յուր առաջնորդի հետազոտություններին էր պարտական: Այդ պատճառով Թեհրան վերադառնալեն հետո Մելքում խանը սկսեց նոր բարեկարգությունների ծրագրներ հորինել և Շահի հրամանով նորանց փոքր առ փոքր գործի դնել,

Մի քանի չարանախանձ խավարասերների սրտում վաղուց արդեն սնանվում էր սև ատելություն դեպի Միրզա Մելքում խանի առաջադիմությունները, օգուտ քաղելով վերոհիշյալ հանգամանքներից, նոքա սկսեցին գրգռել մի քանի նշանավոր մոլլաների մոլեկրոնությունը, որք ժողովուրդը ապստամբեցրին Միրզա Մելքում խանի դեմ, բողոքելով, թե նորա սահմանադրած բարեկարգությունքը բոլորովին ընդդեմ են իսլամի վարդապետության հոգուն և շարիաթի օրենքներին: Օրըստօրե սաստկանալով ամբոխի խռովությունը՝ Շահը ստիպվեցավ հրամայել Մելքում խանին առ ժամանակ հեռանալ Պարսկաստանից և նշանակեց նորան Պոլսի դեսպանատան խորհրդականի պաշտոն:

Մելքում խանը առժամանակ մնալով նույն պաշտոնի մեջ և յուր մտավոր գործունեության ընդարձակ ասպարեզ չգտնելով, թողեց նորան և մտավ Տաճկաց ծառայության մեջ, որ լիովին կարողացավ գնահատել նորա արժանավորությունները:

Մերձ տասն տարի Մելքում խանը Պոլսում մնաց. այնտեղ նա ամուսնացավ երևելի Տատյանց գերդաստանի Առաքել բեյի դստեր հետ:

1872 թվականին Միրզա Մելքում խանի պիտանավորությունը Պարսկաստանի համար կրկին զգալի եղավ, երբ Շահը նկատեց, որ իր տերությունը կարոտ է զանազան բարեկարգություններին: Այդ պատճառով նա Պոլսից ետ կանչեց Մելքում խանին, բարձրագույն հրովարտակով նշանակելով նորան որպես երկրորդ անձ զինի Սադրազամի, այսինքն՝ առաջին վեզիրի և միևնույն ժամանակ որպես ներքին գործոց մինիստր:

Նույն տարվա ապրիլ ամսին Միրզա Մելքում խանը հասավ Թեհ-

րան, ներկայանալով Շահին, արժանացավ նրա շնորհացը, ստանալով Նազըմ-ուլ-Մուլք տիտղոսը և յոթն ամսու չափ յուր աշխատությունը նվիրեց Պարսկաստանի բարեկարգության համար նոր օրենքներ և կանոններ հորինելու։

Նրա օգտավետ գործունեության գլխավոր պտուղներից մինն այն եղավ, որ հասկացրուց պետությանը երկաթուղու անհրաժեշտ պիտանավորությունը և նրա խորհրդատվությամբ անգլիացիների հետ, Անզալիեն մինչև Թեհրան և այնտեղից մինչև Պարսից ծոցն երկաթուղի շինվելու պայմանն ստորագրվեցավ, որի ծախսն հասնում է մինչև հարյուր միլիոն պարսից թումանի (300 միլիոն ռուբլի)։

Պարսկաստանին մի նոր կյանք, նոր ձև տալու համար հարկավոր էր Շահին տեսանել քաղաքակրթված Եվրոպան։

Այդ նպատակով Միրզա Մելքում խանը համոզեց Նորին Մեծության ճանապարհորդել Եվրոպայում, որին և բարեհաճեցավ արքան։ Որի առթիվ Շահն նշանակեց Նազըմ-ուլ-Մուլքին որպես լիազոր դեսպան գնալ Եվրոպա յուր ճանապարհորդությունը առաջին կարգի պետություններին ծանուցանել։ Որտեղից վերադառնալով Թեհրան՝ Նորին Մեծության ճանապարհորդությանը նա պիտի առաջնորդեր։ Եվ հետո պիտի Լոնդրայում մնա որպես Պարսկաստանի կողմից լիազոր դեսպան։

Նազըմ-ուլ-Մուլքը յուր այսքանամյա գործունեության մեջ, Եվրոպայի նշանավոր տերությունների* պատվին և շքանշաններին արժանանալեն հետո, վերջին անգամ Թեհրանեն դուրս գալու ժամանակ Շահը շնորհեց նորան առաջին կարգի շքանշանը, ադամանդով զարդարած, յուր պատկերը (Թիմսալ-հումայում) և լուսափայլ իշխանի (светлейший князь) տիտղոսը։

Այսքանս խոսելով Նազըմ-ուլ-Մուլքի պոլիտիկական գործունեությանց մասին, ավելորդ չենք համարում մի քանի խոսք հիշել նրա գրականական աշխատությունից**։ 1851 թվին առաջին անգամ գրեց նա մի պարսկերեն գրքույկ, որի մեջ ծանոթացնում էր յուր ընթերցողներին եվրոպական լուսավորության, քաղաքակրթության և Պարսկաստանի

---

* Ռուսիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Տաճկաստանի, Պրուսիայի, Բելգիայի և Իտալիայի։

** 1. Քիթաբչեի մարդեհ թարագկի, 2. Շըխ վեզիր, 3. Պոլեթիկա դովլաթի, 4. Թանզիմ լաշքեար վե մեջլիսը իդարե, 5. Քթաբչեի կեյբի, 6. Դասկիահ դիվան, 7. Դաֆթար կանուն, 8. Րաֆիղ վեզիր, 9. Ջհար չեշմի, 10. Իսրար ֆարամուշխանե, 11. Թասֆիրի մարֆ վե թարքմանե։

հետամնացության մասին։ Նա ցույց էր տալիս, թե Պարսկաստանի հնասիրությունը որքան վնաս էր բերում նորա ժողովրդի զարգացմանը և բարօրությանը։ Այնուհետև հետզհետե գրեց նա մինչև տասն զանազան գրքույկներ, դարձյալ պարսկերեն լեզվով։ Այդ գրքերի բուն միտքն էր ծանոթացնել պարսիկներին եվրոպական առաջ մտքերի և գաղափարների հետ, թե որքան անհրաժեշտ էր կրթությունը մի այնպիսի ազգի համար, որպես պարսիկներն էին, բոլորովին քնած հնության փոշիներում... Հիշյալ գրքույկներում ավելի նշանավոր է այն տետրակը, որի մեջ հեղինակը ցույց է տալիս պարսիկների ընդունած արաբական տառերի անհարմարությունը մանկավարժական դյուրությունների մեջ և նույն դժվարությունը ընթերցանության համար, խորհուրդ տալով փոխել տառերի ձևը։ Պետք է ասած, որ հիշյալ գրքույկների և ոչ մինը չապագրվեցան իրենց ազատախոս բնավորության պատճառով, չնայելով, որ նույն ձեռագրերը բավականին տարածված են Պարսկաստանի մեջ։

ԲՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱԶՄԱՆԱԼՈՒ ՎՐԱ

Անհերքելի է, որ մի երկրի քաղաքական կազմակերպությունը ունի ազդեցություն ժողովրդի կանոնավոր աճման վրա։ Եթե ստորին դասը, ազգաբնակության մեծ մասը, որ ամեն ազգի մեջ ժողովրդական հիմք է կազմում, աղքատ կամ ճնշված ու հարստահարված լինելով առևտրական կամ կալվածատեր դասից, իր աշխատանքի պտուղներից օգուտ չէ քաղում և միշտ չքավորության մեջն է մնում, այդպիսի ժողովուրդը կանոնավոր և շուտ բազմանալ չէ կարող։

Բայց դիցուք թե զարման տվեցավ ժողովրդի տնտեսական բարելավությանը. դիցուք թե ժողովուրդը ազատություն ունի ընկերակցությունների միջոցով խնայել իր վաստակած արդյունքը, թե երկրագործ բնակիչը գյուղում և արհեստավոր բնակիչը քաղաքում տնտեսական հաջող պայմանների մեջ են գտնվում, թե նրանց աշխատանքի վարձը բավականացուցիչ է, կամ թե ժողովրդական կրեդիտի միջոցով նրանք իրանց ապահովացնում են վաշխառու դասերի հարստահարությունից, կամ մի երկրի մեջ ինքն ժողովուրդը կալվածատեր է..., ուրեմն նրանք միջոց ունեն կանոնավոր կերպով բազմանալ։ Բայց ինչ օգուտ է, եթե այդ բազմանալը արգելք կգտներ մի ուրիշ անհաջող պայմանից,— կլիմա-

յի անհաջող լինելուց, որ կհետևացներ սաստիկ մահկանացությանը։

Աշխատելով ապահովել գյուղական ընտանիքը տնտեսական միջոցներով,— դարձյալ թույլ օգնություն կհասցնենք նրան, եթե ինքը՝ բնությունը, անհաջող է, երկրի կլիման վատառողջ է և արգելում է ազգաբնակության կանոնավոր բազմանալուն, եթե երկիրը ճահիճներով լի է, որ անդադար առաջացնում են կորստաբեր գոլորշիների միջնորդությամբ զանազան հիվանդությունները, կամ եթե երկիրը չոր ու ցամաք ժայռերից է բաղկացած, զրկված բուսական կյանքից, անտառներից...

Կլիմայի անառողջ լինելը կարող է հետևանք լինել ընդհանուր պատճառների, ամբողջ երկրի աշխարհագրական և տեղագրական դրության և բացի սրանից կարող է հետևանք լինել և բոլորովին մասնավոր, տեղական պայմանների։

Այդ վերջինների վրա գլխավորապես կարող է ազդել մարդը, կարող է այս կամ այն փոփոխություն, բարեկարգություն իրագործել։

Աֆրիկայի անապատներից բերող չորացուցիչ քամիները, դիցուք, մարդու կարողությունից վեր է կատարելապես ոչնչացնելու, բայց մի հասարակության ուժերից վեր չէ զարգացնել անտառները, որտեղ նրքա չկան, կամ ցամաքեցնել ճահիճները, կամ անցկացնել ջրանցք, կամ մարդկանց բնակարաններից որքան կարելի է հեռու գերեզմանատները կարգել, որոնք միշտ թունավորում են թե օդը, թե գետինը, այնպես որ օրգանական թույները ծծվելով հողի մեջ՝ թունավորում են և ջրերը*։

Անհրաժեշտ է, որ զուգընթաց ժողովրդի տնտեսական բարեկավության հետ ուշադրություն դարձնվի և երկրի բնական պայմանների անհաջողության վրա, որ գործ դրվին միջոցները, և դարման արվի ժողովրդի կանոնավոր բազմանալու արգելառիթ երևույթները հեռացնելու։

Մենք վաղուց ենք խնդրել մեր թղթակիցներից և չենք դադարելու խնդրել, որ մեզ հաղորդեն Կովկասի զանազան մասերից (և նույնպես Թուրքիայից և Պարսկաստանից) բնակեցրած տեղերի կլիմայի և բնության տեղական պայմանների վերաբերությամբ ճիշտ տեղեկություններ։

---

* Գերեզմանատների խնդիրը հարուցված է այս րոպեիս Ս. Պետերբուրգի մեջ, որտեղ ապացուցված է, թե գերեզմանատները ամեն կերպով անհաջող դիրք ունին քաղաքի համար։ Կամենում են կարգել մի գերեզմանատուն երկաթուղու ճանապարհով քաղաքից 10 վերստ հեռավորությամբ, նույնը մի քանի տարի առաջ և Փարիզն արավ։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Անցյալ տարի զանազան պարբերական թերթերի մեջ կարդացվեցան մի քանի նամակներ Դավրեժի ազգ. ուսումնարանի վերա, որոնց համարյա բոլորն խիստ հրճվանոք և գովասանությամբ խոսում էին հիշյալ ուսումնարանի առաջադիմության մասին։ Այդպիսի գովասանքների պատճառն ինքնըստինքյան հասկանալի կլինի, երբ հիշենք, թե նամակագիր պարոններից շատերը նույն վարժարանի աշակերտներ են եղած և ավելի զարմանալի, որ նամակները գրված են եղել աշակերտների վարժապետի գրչով, որ կամենալով զարմացնել երեխաների ծնողացը և ժողովրդի աչքերին «թոզ ձգել», յուր աշակերտների անունով ուղարկում էր տպագրելու այդ նամակները...

Թողնենք այդ, մենք հիշյալ վարդապետի ազնիվ խորամանկության վերա նայում ենք, որպես մի սովորական բանի վերա...

Դառնանք դեպի ուսումնարանը։

Այդ ուսումնարանը կառավարվում է տեղիս սրբ. Առաջնորդի միապետական իշխանության ներքո։ Նա չունի ժողովրդից ընտրված ո՛չ տեսուչ և ո՛չ հոգաբարձուներ։

Վարժապետները մի քանի տիրացուներ են, որոնք միևնույն ժամանակ եկեղեցում շարական և փոխեր են կարդում և դասատվություն անում։ Բախտավոր դեպքերում նոքա և չէին խնայում հաճախել այնտեղ, ուր կային կնունքաճաշեր, մեռելի հոգեհաց, խաշ, հարիսա և այլն։

Հայկաբանության վարժապետն է նույն վարդապետը, որ յուր աշակերտներին վայելչագրության օրինակներ տալու ժամանակ շատ անգամ

տալիս էր նորանց ստորագրել յուրյանց անունով նամակներ «Արարատին» և այլ լրագրներին ուղարկել...

Հայտնի չէ, թե որ բարի աստղի զորությամբ մեր ժողովուրդը վերջապես զգաց, որ ուսումնարանը առանց տեսչի և առանց հոգաբարձուի չէր կարող ոչինչ պտուղ բերել, մանավանդ, երբ նա տեսավ ուսումնարանի դրամարկղի, մուտքերի և արդյունքների օրըստօրե սպառվիլը... և առաջադիմության ոչ մի պտուղ չերևնալը: Այդ պատճառով ժողովուրդը ընտրեց յուր միջեն պ. Աստվածատուր Ղարաբեկյանցին, Մահտեսի Սիմոն Թումանյանցին և պ. Հակոբ Ղազարյանին հոգաբարձուներ և ընտրության թուղթը ներկայացրեց Առաջնորդին վավերացնելու: Նորին սրբազնությունը չկամեցավ թուղթը ստորագրել, երբ նորընտիր հոգաբարձուքը առաջարկեցին յուրյանց ապագա գործունեության ծրագիրը, թե նոքա իրավունք պիտի ունենան յուրյանց ձեռքում ունենալու ուսումնարանի եկամուտը և տնտեսական կառավարությունը և վարժարանի ուսումնական վարչությունը:

— Բա ես ի՞նչ եմ,— ասաց Առաջնորդը և չստորագրած թուղթը ժողովրդին դարձրեց:

Վարժարանը դարձյալ մնաց առանց հոգաբարձուի, իսկ տեսչի մասին դեռ մտածող ևս չկա:

ԷԴ ԷԼ ՔԵԶ ԿՐԻՏԻԿԱ

«Արարատ» ամսագրի անցյալ տարվա մա և մբ-երորդ համարներում կարդացի «Թե ո՞ւր են Ավարայր և Տղմուտ» վերնագրով պ. Գալուստ Շիրմազանյանի մի երկար և ձիգ քննադատությունը պարոն Րաֆֆիի Պարսկաստանի ուղևորության երկրորդ նամակումը հայտնած մի կարծիքի դեմ, որով պարոն ճանապարհորդը հիշում է մի քանի ժողովրդական ավանդություններ Վարդանի, նորա պատերազմի և Ավարայրի դաշտի մասին:

Պարոն կրիտիկոսը յուր միտքը հաստատելու համար անխտիր կերպով յուր քննադատության մեջն է կոխում բոլոր ուսած և սերտած խոսքերը Խորենացիեն, Ղազար Փարպեցուց, Ինճիճյանից, Եղիշեից, Այսմավուրքից, Չամչյանից և այլ պատմագրություններից:

Հիշյալ պատմագրություններից բերած վկայությունները այնքան խառնիխուռն և միմյանց հակառակ են, որքան չէ վերաբերում և ոչինչ կապ չունի նորա քննադատության հետ պարոն կրիտիկոսի կյան-

քի ամբողջ պատմությունը, այսինքն՝ 1865 թվի Թիֆլիսի անկարգությունը, Մակվա Ալիխանի որդու հարսանիքը, յուր որսորդությունը խանի որդու հետ, Զավոյի և Գասպարի վիրավորվելը, պար եկող Մութրուֆի սպանվելը, Սեմեոն վարդապետի հեքիաթները, ռուսաց և պարսից պատերազմը... և այլն, և այլն... պարոնը դեռևս շատ բաներ է ունեցել գրելու, ափսոս, որ շատը մոռացած է եղել...

Իսկ մեք կբավականանամք այնքանով միայն, որքան պարոն կրիտիկոսը կարողացել է գրել, թեև նորա գրվածքի խառնափ մեջ ոչ միայն շփոթվել կարող է ամեն մի ընթերցողը, առանց մի որոշակի գաղափարի ամբողջություն դուրս բերելու նորա խոսքերեն, այլ շփոթվում է ինքը գրողը, երբ նկատում ենք, որ նա շատ տեղերում ինքն հակառակում է յուրյան, որը կաշխատենք ցուցանել մեր ընթերցողներին։

Միայն պետք է խոստովանած, թե մեք շատ հեռու եմք այն նպատակից, որ աշխատեմք ապացուցանել, թե որքան ուղիղ կամ սխալ է պարոն Րաֆֆին յուր կարծիքի մեջ, Ավարայրի դաշտի խոյ քաղաքի, այսինքն՝ Դուզլաղի մոտ լինելու մասին։ Որովհետև ինքը ճանապարհորդը վճռողականապես չէ հիմնվում յուր կարծիքի վերա, այլ նա հայտնում է մի քանի կենդանի ավանդություններ, ասելով. «Ես նայեցա», խիստ հավանական է մտածել, թե Վարդանանց պատերազմը կամ սրբույն Վարդանի նահատակվելը եղել է վերոհիշյալ մատուռի մոտակայքում, այսինքն՝ Ղոթուր գետի ափերու մոտ, որ կարծվում է պատմական Տղմուտը։ Թեպետ հայերի շատերի կարծիքն այդ է, պատերազմի Մակվա դաշտերում լինելը, բայց այդ կարծիքը տարակուսական է։ Որովհետև այնտեղ ոչ մի ընդարձակ դաշտ չէ հիշեցնում մեզ Ավարայրին և ոչ մի գետ՝ Տղմուտը։ Բայց առավել հավանական է, թե գլխավոր պատերազմը եղել է Դուզլաղի հարավային կողմում, այն նվիրական աղբյուրների և այն բոլոր ավանդության նշաններով ծածկված քարաժայռի մոտակայքում, որ փոքր-ինչ Ղոթուր գետը յուր պղտոր ջրով, լիլային և ցեխոտ հատակով, ձևացնում է մի հեղեղատ, որին այլ անուն անհարմար էր տալ, քան անունս Տղմուտ։ Եվ ընդարձակ դաշտը, այնպես ցամաք և անապատ, հիշեցնում է ողբալի Ավարայրը։

Պարոն Շիրմազանյանը, վերոհիշյալ խոսքերի ճշմարտությունը հերքելու համար, թափ տալով ամբողջ հայ պատմագրությունը, դուրս է բերում զանազան վկայություններ, իբր թե յուր միտքը հաստատելու Ավարայրի դաշտի պարոն Րաֆֆիի ցույց տված տեղում չլինելու մասին, չնայելով, որ նույնիսկ վկայություններով նա հաստատում է պարոն Րաֆֆիի կարծիքը։

Պ. Շիրմազանյանը, հիմնվելով Ղազար Փարպեցու (երես 8) և Ջամչյանի (հատ. Բ, երես 67) խոսքերի վրա, ասում է. «Մեր պատմիչներն հայտնի ասում են, թե Պենտեկոստեի մեծ տոնի ուրբաթ օրը Արտաշատ քաղաքեն, այսինքն՝ Խորվիրապեն սուրբ Վարդանը վեր առավ Հայերի գունդն և հասավ Արտազ գավառի Ավարայր գյուղը կամ դաշտը և շաբաթ օրը պատերազմը արին, այսինքն՝ մին օրվան ճանապարհ»։

Ընդունելով առժամանակ հիշյալ խոսքերը իբրև ճշմարտություն, մեք հասանում ենք մի այդպիսի եզրակացության, թե պ. կրիտիկոսը Հայոց բանակի արշավանքի երկու ծայրերը դնում է Արտաշատեն կամ Խորվիրապեն սկսյալ մի օրվա ճանապարհի հեռավորությամբ մինչև Արտազ գավառի Ավարայր գյուղը, որ համարում է վերջին կետը, ուր վերջացած է պատերազմը։

Այժմ հարցը նորանումն է, թե Խորվիրապի մոտեն ճանապարհ ընկնելով Հայոց բանակը նույն ուղղությամբ, որով տանում է նորանց պ. Շիրմազյանյանը, մի օրվա մեջ մինչև ո՞ւր կարող էին հասնել։

Երկաթուղու գաղափարն անգամ այդ դարումը ծանոթ չէր Հայերին։ Եթե ընդունեմք Հայոց բանակը մի օրվա մեջ անդադար առաջ տանելու լիներ յուր արշավանքը, նա կհասներ միայն մինչև Մասիս լեռան արևվելյան ստորոտը, այսինքն՝ այժմյան Մակվա դաշտին։ Ուրեմն պարոն Շիրմազանյանի խոսքերից եզրափակելով, այստեղ պետք է համարել Արտազը կամ Ավարայրին։

Բայց Մակվա դաշտը, ասում է պարոն կրիտիկոսը, չէ Արտազը և ոչ Ավարայրին, այլ նորան կոչում է պատմական Գեբառա դաշտը։

Եվ այդպես շեղվելով յուր հիմնական փաստից, պարոն Շիրմազանյանը թողում է այժմյան Մակույն (Արտազը), անցնում է մինչև Ղարա-Ջիազին (սխալմամբ կոչելով նորան Ղարա- Ջիադին) գյուղը, և այնտեղ Ջորսի դաշտը ցույց է տալիս պատմական Ավարայրի դաշտի լինելը, որը Խորվիրապից ոչ թե մի օրվա, այլ երեք օրվա ճանապարհորդության հեռավորություն ունի։

Մեր ընթերցողներին ցույց տալու համար, թե պարոն Շիրմազանյանը ինքն չգիտե, թե ինչ է գրում, այլ միմիայն լոկ անուններ է շարում միմյանց պոչից և պատմական խառնիխուռն, անկապ վկայություններ է թափ տալիս, ավելորդ չեմք համարում հիշել նորա խոսքերից մինը, որ ոչ միայն հակառակում է յուրյան, այլ բոլորովին հաստատում է պարոն Րաֆֆիի կարծիքը։

- Պարոն Շիրմազանյանը բոլորովին շփոթելով յուր երկար և անկապ գրվածքի խառնի մեջ և մոռանալով յուր մի անգամ Ավարայրի դաշտի

Խորվիրապից մի օրվա ճանապարհի հեռավորությամբ ցույց տալը, Ղարա-Ջիադինի մոտ Ջորսի դաշտումը ցույց տալը, ասում է. «Որպեսզի ընթերցողներին ավելի շուտով կարողանամ հասկացնել, հարմար եմ համարում սկսել ուղղությունը Խորվիրապին դեպի Հեր և Զարևանդ գավառն, որոց մեջ՚ն պետք է որոնած Ավարայրը և Տղմուտը»։

Հիմնվելով պարոնի վերջին խոսքերի վրա, պետք է վճռել, թե Ավարայրը և Տղմուտը գտնվում են Հերի և Զարևանդի մեջտեղում։

Շատ լավ։

Համարելով Հերը՝ այժմյան Խոյը, Զարևանդը՝ այժմյան Սալմաստը (որոց մասին պարոն Րաֆֆին և պարոն Շիրմազանյանը համաձայն են միմյանց հետ), ուրեմն Ավարայրին և Տղմուտը պետք է որոնել, ոչ թե Ղարա-Ջիադինի կամ Ջորսի դաշտերումը, այլ այդ երկու մահալների, այսինքն՝ Խոյի և Սալմաստա մեջտեղում։

Գալով մի այդպիսի եզրակացության, ստիպված ենք հարցնել պարոն Շիրմազանյանին. մի՞թե պարոն Րաֆֆիի ցույց տված տեղը Խոյի և Սալմաստա մեջտեղումը չէ։

Մենք չենք կարծում, որ պարոնը չհամաձայնի մեզ հետ, երբ ինքը խոստովանում է պարոն Րաֆֆիի ցույց տված տեղերի Խոյի և Սալմաստա մեջտեղում լինելը[1]։

Ուրեմն պարոն Րաֆֆին ինչո՞վ է սխալ յուր կարծիքի մեջ։

Վերջին հարցը թողնում ենք նորից մտածել պարոն Շիրմազանյանին...

Միայն կավելացնենք այդքանը, որ պարոն կրիտիկոսը ցանկացել է յուրյան ցույց տալ ոչ միայն հմուտ հայոց պատմագրության, այլև պարսից և արաբացվոց։ Պ. Րաֆֆի Ղազանֆարի հիշատակարանի մասին նա ասում է, իբր թե արաբացի Մահմադ Հանիֆֆին է պատկանում և ո՛չ Ղազանֆարին։ Պարոնը լսել է զանգի ձայն, բայց չգիտե ուր է այն։

Մահմադ Հանիֆֆի հիշատակարանը գտնվում է ոչ թե Խոյի մոտ, այլ Ուրմիո և Սալմաստա մեջտեղում, Իսի-Սու կոչված գյուղի հանքային տաք ջրերի մոտի գերեզմանատանում, ուր տեղային սունիների ուխտատեղին է։

Իսկ պարոն Րաֆֆին այդ տեղի մասին ոչինչ չէ գրել։

Ա՜խ, ես մոռացա ասել, որ պարոն Շիրմազանյանը յուր քննադատությունը, այնքան բազմամասնյա նյութերից խառնած, թեև կատարյալ

---

[1] Տե՛ս «Արարատ», համար ժա, 426 երեսի երկրորդ էջի 17-րդ տողից սկսյալ մինչև 3[illegible]-րդ տողի վերջը։

Թուրքի հարիսա է չինել, այսուամենայնիվ պետք է խոստովանած, որ նա մի նշանավոր բնագիտական գյուտ է արած, որն է արդյունք նորա երկարամյա Պարսկաստանի աշխարհի հետազոտության, այն է՝ անուշահոտ մշկի յուր ցույց տված Ավարայրի դաշտումը արածող այծյամների պորտի վերա գոյանալը։ Եթե լուսավոր Եվրոպան յուրյան թույլ կտար հավատալ այդպիսի առասպելին, մեք խորհուրդ կտայինք պարոնին յուր արած գյուտը Լոնդոնի արքունական երևելի բնագիտական ակադեմիային հայտնել, ի փառս գիտության։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Հետազոտելով Պարսկաստանի խիստ մոտավոր անցյալը, մենք նըշմարում ենք մի տխուր երևույթ. ժողովուրդը ստրկացած ավատական իշխանների հարստահարության ներքո, գավառական դատավորների մենավաճառություն, այս կամ այն նահանգը կաշառքով վարձել կառավարությունից և ծծել բնակչաց արդյունաբերության բոլոր ուժը։ Հալածմունք իսլամին չպատկանող ազգերի։ Բարձրագույն Դռան վեզիրների անընդհատ միմյանց հետ ինտրիգաներ և դավաճանագործությունք՝ միմյանց ձեռքից զանազան օգուտներ խլելու։ Եվ շահի անձնավորությունը, այդ բոլոր անկարգության մեջ երևում է որպես խաղալիք, հրապուրված շողոքորթող և խաբեբա դրանիկներից։

Պարսկաստանի մի այդպիսի հոգեվարք դրությունը, անշուշտ, կտաներ նորան դեպի կործանումն, եթե Պարսկաստանի գահի վերա չերևար նորին մեծն. Նասրեդդին-շահը։ Նա առաջինը եղավ, որ մոլլաների մոլեռանդության ընդդեմ սկսավ պաշտպանել քրիստոնյաների, հրեաների և մահմեդականության չպատկանող այլադավանների իրավունքը, կարգելով նոցա պահպանության համար առանձին պաշտոնակալներ, որք կոչվում էին սարփարաստներ։ Նա առաջինը եղավ, որ յուր դեսպանների և հյուպատոսների միջնորդությամբ սկսավ մոտ հարաբերություններ ունենալ եվրոպական պետությունների հետ և այդպիսով տվեց նա արտասահմանյան վաճառականությանը ընդարձակ շրջան, մտցրեց յուր տերության մեջ մի քանի եվրոպական հիմնարկություններ, որպիսիք են ուսումնարաններ Թեհրանում և Թավրիզում, հեռագրություն, կտավագործության գործարան Թեհրանում, երկաթուղի և նոտարիուսական կարգ (սափիթ դիվանխանա) գլխավոր քաղաքներում։ Վերջապես նա առաջինը եղավ, որ մի խումբ պատանիներ Ֆրանսիա ուղարկեց ուսա-

նելու և եվրոպական գիտությունները և արհեստը յուր աշխարհը բերելու։ Նորին Մեծության շահի մի այդպիսի ձգտողությունները դեպի քաղաքակրթությունները և վերանորոգությունը յուր տերության, թեև շատ անգամ հանդիպում էին զանազան արգելքների և ընդդիմադրության մոլլաների և նոցանից գրգռված խավարասեր ամբոխի կողմից, բայց վերջինները մեծ մասամբ կորուսին յուրյանց ուժը, երբ անցյալ տարում առաջին վեզիրի տեղը բանից Սադրազեմը և հայազգի Միրզա Մելքում խանը բարեկարգիչ տերության կարգվեցավ։

Վերահիշյալ երկու համձարների առաջին ջանքն եղավ՝ որքան կարելի էր և ժողովրդի դրությունը տանելի, մացնել տերության մեջ մի քանի նոր սահմանադրություններ և մաքրել բարձր Դուռը հին վեզիրներից։ Դոցա օրով շատ գավառներից վերացավ բռնակալքը, *այն ժողովրդին մաշող և նորա արյունը ծծող սխտեման, որով մի պաշտոնակալ յուր ռռճիկի տեղ ստանում էր մի գյուղի կամ մի ամբողջ* մահալի *հասույթը, անխնայաբար կողոպտելով բնակիչներին։ Դոցա օրով կնքվեցավ Հնդկա-Պարսկական երկաթուղու պայմանը անգլիացվոց հետ։ Դոցա օրով յուր հարեմի պատերի մեջ փակված Պարսից արքան, շարիաթի կանոններին հակառակ[1], համարձակվեցավ ոտքը դուրս դնել յուր երկրի սահմանից օտար հողի վերա և եվրոպական լուսավոր աշխարհին այցելություն գործել։*

Թեհրանի «Իրան» լրագիրը յուր 51 համարի մեջ տվեց մեզ մի քանի այլ ուրախացուցիչ տեղեկություններ. այն է, որ վսեմափառ Սադրազեմը, հիմնելով Թեհրանում կառավարության խելացի և մտածող պաշտոնակալներից մի կենտրոնական խորհրդարան (կաբինետ) տերության գլխավոր գործերի մասին խորհելու և նոցա գործունեության ծրագիրը ն. Մեծ. շահին ներկայացրեց։ Նորին Մեծ. հաճությամբ ընդունելով ծրագիրը և նորան յուր արքայական կնքով վավերացնելեն հետո գրում է այդ տողերը Սադրազեմին. «Սադրազեմ. նախարարաց խորհրդարանի ծրագիրն, որ հաղորդեցիք ինձ, շատ հավանեցա և Աստուծով շուտով ՚ի գործ դնելու կչանաք այն, զի որքան հետաձգվի, այնքան վնասաբեր լինի տերությանը»։ 20 շաբանի 1289 հիճրեթի։

Բացի սորանից շահը բարեհաճել էր դրել հետևյալ հրովարտակը. «Արդեն սադրազեմության վերաբերյալ կանոնադրությունքը մենք հրա-

---

[1] Շարիաթի օրենքով խալամի թագավորին արգելված է ոտք կոխել օտար հողի վերա, որ չէր պատկանում նորան։

մայիսյինք 'ի գործ դնել, վասնզի մեր հավիտենական տերությունը մի որոշ պաշտոնական կառավարության ձևի հարկավորությունը ունի, մի այնպիսի ձևի, որ պետական տերության (եվրոպական) համապատասխան է, մանավանդ այս ժամանակ, որ մեր թագավորության պաշտոնյաքը պատրաստվում են ուղևորվել դեպի Եվրոպա։

Նորին Մեծ. շահի Վիեննայի աշխարհահանդեսին այցելության գործելը առիթ տվեց յուր վուզարարի (մինիստրության) մեջ նոր-նոր փոփոխությունների։ Այսինքն՝ յուր տերության կառավարության գործերը ինն վեզիրների մեջ բաժանել. 1. ներքին գործոց վեզիր, 2. արտաքին գործոց, 3. զինվորական վեզիր, 4. իլեմական, 5. արդարության, 6. լուսավորության, 7. շահույց (ֆեվաիդ), 8. վաճառականության և երկրագործության, 9. արքունի նախարար։

Վերոհիշյալ ինն վեզիրների գլխավորությունը հանձնվում է Սեդերեքին, որի ներկայացուցիչն է Սադրազեմը։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Տաճկաբնակ հայերը, լսում ենք, թե վայելում են ազատություն։ Տաճկաբնակ հայերը, ասում են, թե առաջ են ընթանում։ Այդ խոսքերը խիստ քաղցր կերպով հնչվում են, ոչ միայն ամեն մի հայ մարդու ականջին, այլ ընդհանուր մարդկության բարեկամներին նորա հաճության են պատճառում։

Եվ իրավ, լրագրների մի շարք, որք ցոլացող աստղերի նման հաջորդաբար երևում են, փայլում են և դարձյալ կորչում են հայկական գրականության խավար մթնոլորտի մեջ. ազգային սահմանադրական վարչություն, հրապարակական դասախոսություններ, թատերական բեմ, երկսեռ դպրոցներ և այլն. այդ ամենը պնդում են լսողների համոզմունքը տաճկաբնակ հայերի առաջադիմության մասին։

Բայց խորին կերպով հետազոտելով այդ ուրախացուցիչ երևույթների ներքին էությունը, մենք գտնում ենք անմխիթար դատարկություն։

Լրագրությունը ավելի զբաղված է օտարներով, քան թե յուրյանով։ Նա հայտնում է, թե ինչ է խոսում ամեն օր Թիերը յուր կաբինետում, բայց չգիտե յուր տան մեջ ինչեր են լինում, չգիտե, թե Վասպուրականի, Մուշու, Բաղեշի, Կարնու և Փոքր Ասիայի զանազան անկյուններում ինչեր են պատահում խեղճ հայերի հետ և ի՛նչ դրության մեջ է նոցա վիճակը։ Նա ընդհանուր Եվրոպայի ճակատագիրն է վճռում, բայց հիշ-

րով երկրներում բնակվող յուր ազգայինների տնտեսական և մտավոր-բարոյական կյանքի մասին շատ քիչ է ասում:

Փոխանակ ազգի վիճակագրական և նրա տնտեսական դրությունը արտահայտող հոդվածների և ուսումնական ճառերի, մենք կարդում ենք լրագրության մեջ շատ անգամ անհաջող և անճաշակ բանակռիվներ, որը ավելի անձնականության են նպաստում, որը պարունակում են յուրյանց մեջ ավելի երկչոտական արտահայտություններ և համայն կեղտոտ հայհոյանքներ, քան թե միտք, լույս և առողջ դատողություն:

Իհարկե, լինում են բացառություններ, բայց այդ բացառությունները դժբախտաբար այնքան փոքր են թվով և այնքան չնչին, մինչ ընդհանուրի մեջ կորցնում են յուրյանց նշանակությունը:

Ազգային Սահմանադրությունը հանապազ երերման մեջ է: Նա եղել է խաղալիք զանազան կուսակցությունների և նույն ներկայացուցիչ այս և այն էֆենդիների: Նա դրված է միշտ Պոլսում և Բյուզանդիոնի պարիսպներից դուրս չէ գնում: Կարծես թե մեր մյուս տաճկաբնակ հայերը զուրկ լինեն այդ արտոնությունից...

Հրապարակական դասախոսությունները ունեն փոքրիշատե բավականացուցիչ կերպարանք յուրյանց ներկայիս համապատասխան բնավորությամբ: Որը ընդհակառակն թատրոնական բեմը հայոց խոսքով դեռ մեծ մասամբ ֆրանսիական վայրիվերո, միմիայն երևակայության և աչքի վրա ազդող պիեսաներ է ներկայացնում, թողնելով բուն ազգային կյանքի դաշտը:

Դպրոցները, երբեմն այս և այն պարոնի, երբեմն այս և այն սրբազանի մենավաճառության ներքևը, անհաստատ դրության մեջ են: Նրանք կազմվում են, բացվում են, ընկնում են, կանգնում են և հանապազ փոփոխությունների մեջ են ապրում, որքան փոխվում էին այն անհատները, որոց կամքից և կրքերից կախումն ունի հասարակական կրթության գործը:

Ծաղկոցը այդպիսի հանգամանքներում բոլորովին կրավորական դեր է խաղում: Նա, որը ուսերի վրա է բարձած այդպիսի հիմնարկությունների բոլոր նյութական ծանրությունը, նորա խրատները սարսափելի բռնաբարության ենթակա են:

Գրականությունը չէ ներկայացնում մի բավականացուցիչ երևույթ: Գրական գիտությունների ինքնաստեղծ, ինքնուրույն հեղինակությունները այնքան աննշան են, որ չլինելության հաշվում պետք է դնել նորանց: Թարգմանությունը, փոխանակ յուրյան պարապեցնելու եվրոպայում ընդունված մանկավարժական, գիտնական և արհեստական

գրքերի ի հայ լեզու վերածելուն. որոնցմե այնքան զուրկ են գյուղացիները, զբաղված է վեպերով, ռոմաններով և երգերով: Այդպիսի գրքերի ազդեցությունը պետք է վերաբերել պոլսեցի հայի այն դյուրագրգիռ և ոչընչով ոգևորվող, ֆրանսիական թեթևությունը, որ է հատկանիշ նորա աշխույժ բնավորությանը:

Մի տարր, որ առավելապես զբաղեցնում է տաճկաբնակ հայոց կրթյալ դասի մտածմունքը, մի տարր, որին գլխավորապես նվիրել է յուրյան ազգային մամուլը, է կղերական խնդիրը: *Այդ պարոնները աշխատում են նորից կյանք տալ կղերին, կրթել նորան, բարվոքել նորա դրությունը, որպեսզի նա, նորից ուժ ստանալով, կարողանա համարձակ տանել ազգային վարչության սանձը (° °):*

«Ասանկ ալ պետք է ըլլի, տղաք, մեր ազգը կրոնական ազգ մը է կոր»: — Ասում է ինձ մի ֆեսավոր պարոն:

— Կղերի դարը անցավ:

Մենք տեսանք և տեսնում ենք այն ազգերի թշվառ վիճակը, որք յուրյանց կառավարության սանձը հանձնել էին կղերին:

Թո՛ղ նոքա կարդան յուրյանց Սաղմոսը և Նարեկը և ազգի հանգուցյալների հոգուն աղոթք անեն: Իսկ կենդանիների *վերա մտածելը նորանց չէ՛ պատկանում:*

Ինչ ենք հասկանում մենք այդ խոսքերովս կենդանիներ: *Արդյոք վաճառական ամիրանե՞րն են դոքա, թե՞ մեծապատիվ էֆենդիները: Արդյոք արծաթասեր չորբաջինե՞րն են դոքա, թե՞ շնորհավաճառ փափազները: Ո՛չ. դոցանից և ո՛չ մինը: Դոքա ազգային մարմնի կազմվածքի մեջ փտած նյութեր են:*

Կենդանիներ *ասելով, մենք հասկանում ենք Պոլսի և Տաճկաստանի զանազան քաղաքներում ցրված այն պանդուխտ մշակները, որք խաներում, խոկոլաներում, մեյդաններում, սոխախներում մաշվում են բռնակալությամբ:* Կենդանիներ *ասելով, մենք հասկանում ենք Ռումելիի, Փոքր Ասիայի, Բաղեշու, Մշու, Կարինի և այլն մեր թե՛ գյուղացի և թե՛ քաղաքաբնակ ազգայինները, այն ճնշված և հարստահարությանց մեջ մաշված հայերը, որոց մեջ դեռևս պահպանվել է ազգային առանձնությունների կենդանի տարրը, որք կազմում են ազգայնության գլխավոր ուժը:*

Նոցա համար պետք է մտածել, նոցա համար պետք է գործել, մեր հույսը նոքա են...

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Տաճկաբնակ հայերը մի թախծալի ներկայի վրա են կանգնած։ Բայց ցավելով պետք է խոստովանել, որ նոքա յուրյանց դրությունից օգուտ քաղել չգիտեն։ Նոքա ապրում են մի այնպիսի երկրում, ուր տիրող ազգը, թե՛ կրոնքով, թե՛ սովորություններով և թե՛ ազգային այլ հատկություններով, բոլորովին տարբերվում է յուրյանցից։ Նոքա ապրում են մի այնպիսի երկրում, ուր տիրող ազգը, թե՛ յուր թվի բազմությամբ և թե՛ յուր մտավոր և նյութական գործունեության մեջ, խիստ ստոր աստիճանի վրա է գտնվում, քան թե հպատակ ազգերը։

Հայը, եթե կարողացավ պահպանել Տաճկաստանում յուր կրոնքը, յուր ազգային գոյությունը, դորանով նա պարտական է մահմեդական շրջափակ, խտրություն դնող և հալածանք բնավորությանը։ Հայը, եթե վայելում է ազատություն յուր ազգային հիմնարկությունների մեջ, դորանով նա պարտական է տիրող ազգի դեռ մանուկ քաղաքական զարգացմանը։

Իսկ այդ ազատությունը ժամանակավոր է։ Նա երկար չպիտի տևե։ Իսկ հայը կարողանո՞ւմ է օգուտ քաղել նորանից։

Այդ հարցի պատասխանը կգտանե ընթերցողը իմ առաջին նամակի մեջ, ուր, թեև համառոտ, բայց մի ընդհանուր տեսություն էի արած Կ. Պոլսի մտածող ազգայինների գործունեության մասին։

Այս անգամիս հարկավոր եմ համարում քննել մի քանի մասնավոր երևույթներ։

Համարյա ամեն օր, ամեն շաբաթ շոգենավը բերում է Կ. Պոլիս Փոքր Ասիայի զանազան գավառներից մի խումբ հայազգի պանդուխտներ, որք թողնելով տուն, տեղ, ընտանիք, գալիս են այս քաղաքը, որ մշակությամբ, համալությամբ մի քանի ղուրուշ փող վաստակեն, տանեն յուրյանց չքավոր ընտանիքը պահեն։ Թեև խիստ սակավներին այդ թշվառներից հաջողվում է ողջությամբ յուրյանց հայրենիքը դառնալ։

Կ. Պոլսի ազգային վերնագիրը յուր ճակատային հպարտությամբ կրող լրագրությունը մինչև այսօր չքննեց բուն պատճառը այդ վնասակար գաղթականության։ Բացի մի քանի մասնավոր խոսքերից. «Ըշտե քուրդերը կթալեն կոր», «Ըշտե չերքեզները ավազակություն կընեն», «Ըշտե ֆիլան փաշան ադեկ զուլումիշ ըլլար կոր»։

Քուրդերի, չերքեզների և այլ դոցա նման ազգերի վնասակար հարաբերությունը հայերի հետ և նոցա հաղթահարությունները ժամանա-

կավոր մի բան են։ Դրանք չեն և չեն էլ կարող հայերի գլխավոր անբախտության պատճառ դառնալ։ Որս ընդհակառակն, մենք պնդում ենք, որ այդպիսի ազգերի գոյությունը առավելապես նպաստում է հայերի բախտավոր ապագային։

Մեր խոսքը ապացուցանելու համար օրինակ առնենք Վասպուրականի և Տարոնի նահանգները։ Քրդերին մենք գտնում ենք այդ երկրըներում մի թափառաշրջիկ, աստանդական ազգ, առանց հիմնավոր բնակության, որ յուր ապրուստը գտնում էր միայն խաշնարածության մեջ։ Այդպիսի ազգերը, շատ բնական է, որ օտարանում են հողից և նորա մշակությունից։ Այդ իսկ պատճառով, երբ տերությունը առաջարկեց տեղային բնակիչներին հողերը թափիա[1] անել, գլխավորապես հայերին մնաց երկրի ընդարձակ դաշտերը, իսկ քրդերը չկարողացան այնտեղ հիմք ձգել։

Վասպուրականի հանգուցյալ Արծիվը «ազգ... հայրենիք... Հայաստա՜ն»... գոռալով կամենում էր Հայկի և Արամի անցյալ հիշատակներով միայն կերակրել սոված ժողովրդը, չմտածելով, որ մարդը յուր կյանքի գոյությունը պահպանելու համար կարոտ է նյութական սննդի և ո՛չ երևակայական քամիների։ Այժմյան լրագրությունը միակ ճարը գտնում է գրքույկների, ուսման և կրթության մեջ, չմտածելով, որ լոկ այդ բանը քաղցած փորին կերակուր չի տալ։

Կ. Պոլսի հայ մտածողները չկարողացան մինչև այսօր իրենց ուշադրությունը դարձնել այն առարկայի վերա, թե մի ազգի յուր գոյությունը պահպանելու գլխավոր պայմաններից մինը է հողը և նորա մշակությունը։ Թե մի ազգ, որ յուր կյանքի պահպանությունը չէ հիմնած հողի արդյունաբերության վերա, նա ոչ միայն երկար ապրել կարող չէ, այլև չէ կարող ազգ համարվել։

Գաղթականության հոսանքը դեպի մեծ քաղաքները, որ ամեն տարի հազարավորներին խլում է հայրենի հողի արմատից, պատրաստում է հայերից ժողովրդի մի դաս, բոլորովին անպիտանացած ազգայնության մարմնի մեջ։ Մի ազգի գլխավոր հիմքը է հողը, իսկ նորա գլխավոր ուժը

---

[1] Թափիա: Տերությունը, թե՛ այդ և թե՛ Փոքր Ասիայի զանազան գավառներում, սեփականացնելով յուրյան զանազան բնակալների տիրած հողերը, խիստ էժան գնով վաճառեց երկրի բնակիչների վերա։ Դա կոչվում է թափիա: Թափիա արած հողը համարվում է սեփականություն, որը կարող է վաճառել, գրավ դնել և վարվել նորա հետ, որպես յուր կամքն է։ Միայն նորա մահից հետո ժառանգը պիտի հայտնե, թե ինքը կամեր մշակել հոր թողած հողերը։

գտնվում է երկրագործ և արդյունաբերող դասի մեջ։ Սպառող դասը մի անհրաժեշտ մեքենա է այդ կազմակերպության մեջ։

Իսկ գաղթականությունը շարունակվում է։ Ժողովուրդը օրըստօրե հեռանում է Հայաստանի կենտրոնից։ Նրա ուժերը ցրվում են, և հայրենյաց դաշտերը մնում են ամայի, դատարկացած։

Ինչո՞վ կարելի է այդ հոսանքի պատճառը բացատրել։

Երկու բանից մինը պետք է լինի. կամ հայերը ընդունակ չեն երկրագործության մեջ, կամ եթե ընդունակ են, նոցա մշակության արդյունաբերությունը այնքան օգուտ չէ բերում, որ կարողանային ապահովել յուրյանց ապրուստը։

Վերջին պատճառը ավելի հավանական է։ Շարունակ ավերական և միատեսակ ընդեղենների վարուցանքը, մշակության նահապետական ձևերը, երկրի չափազանց էժանությունը, եթե ավելացնենք դոցա վերա տերության, ինքնըստինքյան թեթև, բայց արդյունաբերության համեմատ ծանր հարկերը, մեք կտեսնենք, որ երկրագործին ավելի ոչինչ չէ մնում յուր ապրուստը ապահովելու։

Գյուղատնտեսական ուսումնարանը, որ միակ ճարն է այդպիսի դեպքերի առաջն առնելու, դեռևս չէ հետաքրքրում Կ. Պոլսի լրագրության ուշադրությունը։

— Երկրի հում բերքերը արվեստագործելու համար արհեստագիտական ուսումնարանների մասին նա մտածել անգամ չէ ուզում։

— Երկրի մթերքը վաճառահանելու համար Տրապիզոնից Արզրում, այնտեղից Վան, Վանից Մուշ, մինչև Մուսուլ և Բաղդադ երկաթուղի շինելու հարցը բարձրացնել չէ ուզում, որովհետև կենտրոնական Ասիո խնդիրը նորան շատ է զբաղեցրել։

— Մշեցի, բաղեշցի կամ վանեցի հային մի վաշխառու քրդից կամ տաճկից հարյուր ղուրուշ փոխ առնել և շատով մի քանի հարյուր պարտական մնալ, այնուհետև յուր կինը, ընտանիքը գրավ թողնել, Պոլսի սոխախներում տարիներով փտել և մաշվել։ Այդ երևույթները նորան չեն գրավում, որ գյուղական փոխատու ընկերությունների վերա մտածե։ Որովհետև նա շատ պարապած է նորանով, որ գիտենա դեռևս ինչ հրաշներ է անում Բիսմարկը յուր անկողնի մեջ։

Ահա բոլոր դատարկությունը Պոլսի լրագրության, որ մեք հիշեցինք մեր առաջին նամակում, մնացորդը խոստանում եմ գրել հետո։

[ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՐՈՆ Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ]

Կարդալով «Մեղուի» 7-րդ համարում պարոն Խ. Գրիգորյանի մի քանի տողերը, որը թե իմ հայտնած միտքը սխալ է Ուրմիո կանանց մասին, ես ամենայն կրիտիկայից ստոր դասելով պարոնի կարծիքը, հարկավոր չեմ համարում պատասխանել։ Միայն խնդրում եմ տալիս պ. Գրիգորյանին փոքր ի շատե կարդալ սովորել և նորից ընթերցանիրել «Մշակի» 50-րդ համարում իմ տպված նամակը, այն ժամանակ յուր պատասխանը կգտանե նույն նամակի մեջ, թե իմ խոսքերը Ուրմիո կանանցը չեն վերաբերում։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Տաճկաստանում հայոց եկեղեցու բաժանվելը զանազան դավանությունների՝ եղավ ազգային միության թուլանալու գլխավոր պատճառներից մինը։

Ազգը կորցրուց իր զորությունը, և նորա ուժերը ցրվեցան։

Մեք հեռու եմք այն նպատակից, որ կրկին քարոզեմք կրոնական միություն, որովհետև բռնաբարել խղճի ազատությունը և համոզմունքը մեր գործը չէ։ Բայց մի ազգ բացի կրոնքից ունի միության ավելի զորեղ կապեր։ Նա կապված է արյունով *և յուր պատմական անցյալով։ Նա կապված է* լեզվով, *որի մեջն է նորա կյանքը։ Նա կապված է յուր տնտեսական և հասարակական* շահերով:

Բայց կղերի ագահությունը, կրոնքով բաժանելով մի անդամին ազգային ամբողջությունից, կտրեց և նորա անմիջական հարաբերությունների և մյուս կապերը։ Հայկա զավակները մինը՝ «ֆրանկ եմ» ասելով, մյուսը՝ «ինկլիս», երրորդը՝ «հոռոմ», սկսան ուրանալ հայությունը, եղբայրը բաժանվեցավ եղբորից։

Խավարի դարը անցավ։ Փորձը ցույց տվեց այն հայոց սխալմունքը, թե մի հայ կարող էր կրոնափոխության վաճառքով գնել իր հանգստությունը։ Թե մի հռոմեական փափազ, մի ամերիկացի միսիոնար և այս կամ այն ֆրանսիական, անգլիական հյուպատոսները, դեսպանները, կարող էին մի օտար տերության մեջ պաշտպանել հայի իրավունքները. և կամ նորա կնպաստեին նորա մտավոր և նյութական զարգացմանը։

Բնական օրենք է, որ մի առարկայի մեքենական շարժման ուժերը պետք է կենտրոնացած լինեն նույնիսկ առարկայի մեջ։ Արտաքին ուժը

միայն ժամանակավոր շարժառիթ է։ Դադարեց զարկը, կդադարի և նա գործելուց։ //

Եվ այսպես, մեր գործունեության բոլոր զորությունը պետք է ծնվի մեզանում, ծագե մեզանից։ Մենք պետք է դիմենք մեր ինքնաօգնականությանը: *Արտաքին ուժերը միայն ժամանակավոր շարժառիթներ պետք է լինեն։*

Ազգի ընդհանուր շահերի վերա մտածել, գործել և իրագործելու պետքը, ազգի անմիջական միությունից *կախումն ունի։ Բայց դժբախտաբար դեռ մեր կաթոլիկ, բողոքական և լուսավորչական եղբայրները Տաճկաստանում որոշ խմբեր են կազմում։ Նոցանից ամեն մինը առանձնապես յուր համար է ապրում։*

Ազգային մամուլը մինչև այսօր չբարձրացրեց միության խնդիրը։ (Մենք չենք նայում այդ հարցի վերա կրոնական կետից)։ Թեև ժամանակ առ ժամանակ հայտնվեցան զանազան հրավերքներ, բայց նոքա լինելով բոլորովին միակողմանի, եղան ձայն բարբառո անապատի։

Հակահասունյան կուսակցության բաժանվելը Վատիկանի՝ ամենայն ազատության ճնշող, միտքը և հոգին կաշկանդող շղթաներից, մի համարձակ քայլ էր դեպի ազգային միություն։ Բայց մեր լուսավորչական հայերը ո՞րպես նայեցան այդ երևույթին։ Նոքա ոգևորվեցան, ուրախացան, հրճվեցին և ավելի ոչինչ...

Կ. Պոլսի հայերը դեռևս չունեն մի կենտրոն, ուր ազգի զանազան անդամները հավաքվելով, նորա պիտույքների վերա մտածեն։ Հասարակաց սրճատները, այդ ժողովարանները ամենատեսակ դատարկախոս, մոլաշրջիկ և ծույլ մարդերի, հայտնի բան է, չէին կարող բավականություն տալ մի այդպիսի նպատակին։ Մի կենտրոն, որ կարող էր ժողովրդի գործունյա և մտածող դասին մի տեղ հավաքել, է ազգային կլուբը: *Այդ բանից զուրկ են Կ. Պոլսի հայերը։*

Ասելով կլուբներ, մեք չենք կամենում հիշել այնպիսի կլուբներ, ուր հաճախորդք միայն թղթախաղով ու զանազան զվարճություններով են վարում յուրյանց դատարկ կյանքի ծանրացած րոպեքը։ Այլ ազգային կլուբներ ասելով, մեք հասկանում եմք այնպիսիքը, որ ծնեցին այսպես կոչված երեկի կլուբական ճեռոններին: *Ազգային կլուբ ասելով մեք հասկանում եմք մի կենտրոն, ուր հասարակական գործիչները, միատեղ հավաքվելով խոսում են, վիճում են, հակաճառում են և վերջապես մշակում են հասարակական գործերի դժվարին խնդիրները։ Այստեղ կազմըվում են զորեղ կուսակցությունները, այստեղից ծնվում են երեկի տա-*

ղանդները և, վերջապես, այստեղ կցվում են կրոնական մրրկով զատված կապերը ազգի անդամների։

Շատ նեղ կլիներ այդ հայացքը և միակողմանի, եթե հայերը յուրյանց հասարակական շահերը պահպանելու համար միայն կաշխատեին միանալ յուրյանց այլադավան ազգայինների հետ, առանց ուշադրություն դարձնելու մյուս ազգությունների վերա, որպիսի են հույները, ասորիները, հրեաները և այլն։

Մի պետության մեջ, որպես է Տաճկաստանը, հպատակ ազգությունները մասնավոր բացառությամբ միևնույն լավ կամ վատ վիճակի, միևնույն բախտավոր կամ անբախտ դրության մեջ են ապրում։ Պաշտպանել այստեղ իրավունքը տիրող ազգի ճնշումներից, համահավասար ապատություն վայելել, այդ բոլորի պարտքն է։ Այսօր խլվելով մի ազգից նորա որևիցե իրավունքը, սեփականությունը, այսօր բռնաբարվելով նորա որևիցե արտոնությունը, պատիվը, վաղը միևնույնը կարող է պատահել և մյուսներին։ Այդպիսի հանգամանքներում հպատակ ազգերը պետք է ունենան ներդաշնակ համաձայնություն և փոխադարձ օժանդակություն դեպի հասարակաց բարին։ Որովհետև միայն ուժը, հանդիպելով ավելի զորեղի ընդդիմադրության տիրապետող կողմից, կորցնելու է յուր նշանակությունը, առանց հասնելու որևիցե հաջող հետևանքի։

Իսկ հայոց պատրիարքը այսինչ մասնավոր դեպքի առիթով կտրում է յուր հարաբերությունը հունաց պատրիարքարանի հետ և դորանով խզվում է մի ազգի կապը մյուսի հետ։ Չնայելով, որ նոցա փոխադարձ հարաբերությունները որքան օգտավետ էին յուրյանց ներկայի և ապագայի շահերուն։

Այս տողերը գրելու ժամանակ ինձ բերեցին «Մասիս» լրագրի՝1356 և 1358 համարները։ Նոցա մեջ մի հոդված, որ թարգմանված էր հունաց «Անաթոլի» լրագրից, բավականին գրավեց իմ հարցասիրությունը։ Նորա մեջ ամենայն անկեղծությամբ հնչվում էր հույների մտածող դասի արձագանքը դեպի եղբայրական սերը և հաշտությունը հայերի հետ, հեռու պահելով այս պարագայիս մեջ կրոնական միշտ երկպառակություն գցող և ատելություն սերմանող խնդիրները։ Հոդվածագիրը մեղադրում է հունաց կղերի մոլեռանդությունը, որ կրոնական դեպքերի պատճառավ կտրում են հայերի հետ հաշտության և սիրո կապերը, որք միակ հիմքը կարող էին լինել նոցա ներկայի և ապագայի բարօրությանը։ Մեք բոլոր սրտով համակրում ենք հոդվածագրի կարծիքը։

Տխուր երևույթ է ներկայացնում, երբ նշմարում ենք Տաճկաստանում ամեն մի դավանության պատկանող ազգությունները փոխանակ

հիմնվելու ժողովրդական ուժերի վերա, խիստ պինդ բռնած են կղերի փեշերից (քղանցքից)։ Այդ իրողությունը ունի յուր քաղաքական պատճառները։ Բարձ. դուռը մինչև այսօր եկեղեցականներին է ճանաչում որպես ազգային գլխավորների ներկայացուցիչներ։ Եվ ուրիշ կերպ չէր կարող լինել, երբ մահմեդական աշխարհը յուր կրոնական բնավորությամբ ինքը տակավին չէ կարողացել ազատվել յուր շեյխերի և դադիների ազդեցությունից։

Մի բան, որ կարող էր թուլացնել կղերի միապետական բռնակալությունը, է ժողովրդական ընտրությունը։ Այդ ժամանակ գոնեա կդադարեին այն անընդհատ բողոքները պատրիարքներից, գավառական առաջնորդներից և քահանաներից, և նոքա կսովորեին յուրյանց վարել որպես կարգն է։

Հայոց ժողովրդականությունը յուր եկեղեցվո խորին հնությունից ունի այդ արտոնությունը։ Բայց դժբախտաբար նորա արտաքին ձևերը միայն պահպանվում են այժմ...

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Նորին մեծ. շահը հեռացավ Պարսկաստանից Ֆերհատ-Միրզային յուր տեղ փոխարքա թողնելով։ Հեռագիրը երկու օր առաջ լուր տվավ նորին մեծության էնզելիեն շոգենավ նստելը Կասպից ծովով Աստրախան գնալու։

— Քուրդստանի խռովությունը հանդստացնելու համար, Շոջե-ըլ-Դովլան քաղաքիցս կառավարության խորհրդով գնաց Ուրմի, որ քրդերի շեյխի և նոցա բեկերի հետ հաշտության դաշինք կապե։

— Լսում ենք, որ Բուրզի-խանը, այժմյան սարփարաստը (քրիստոնեից պաշտպան պետական պաշտոնյա) մի առանձին աններողամտությամբ սկսել է վարվել հայերի և ասորիների հետ։ Պապազավան խանը, հակառակ յուր պաշտոնի նշանակությանը, որ պիտի պաշտպաներ քրիստոնյաներին և հրեաներին մահմեդականների հալածանքներեն և անիրավություններից, ինքը սկսել է նոցա մեջ խռովություններ սերմանել։ Տալով իր պաշտոնին կրոնական բնավորություն, Բուրզիխանը արդեն եղել է կաթոլիկ միսիոնարների մոլեռանդ մի արբանյակ և պարսից կառավարության բարի նպատակը քրիստոնեից մասին դեպի չարը գործադրելով, նա սկսել է հայերի և նեստորական ասորիների մեջ կաթոլիկություն տարածել։ Նրա մի այդպիսի վարվողությունը, գտնելով

խորին ընդդիմություն Նեստորականաց եպիսկոպոսի կողմից, մեծ հակառակության պատճառ դարձավ խանի և նորին սրբազանության մեջ, որի առիթով եպիսկոպոսը 140 թուման տուգանքի ենթարկվեցավ Բուրջի-խանից։ Նեստորականաց եպիսկոպոսը այժմ Դավրեժ եկած է այդ անիրավության դեմ բողոքելու։

. . . .

Մի թիֆլիսեցի հայ վաճառական Թեհրան գնալու ժամանակ, ճանապարհին ավազակները կողոպտում են նորան և խլում են մինչև 6000 մանեթ արժաթ, ինքը հազիվ կյանքը ազատում է անակնկալ մի դիպվածով։

— Մի ռուսաստանցի հայ, որ գալիս էր Կ. Պոլսեն, նույնպես ավազակների է պատահում Դիզեխալիլի մոտ (Խոյի ճանապարհին), յուր բոլոր ունեցածը կողոպտում են և մերձ ի մահ վիրավորում։

— Քաղաքիս մեջ մի քանի սրիկաներ մի հարուստ պարսիկի տուն են մտնում գիշերով. խենչարով նորան կտրատում են յուր անկողնի մեջ և, բռնաբարելով նորա մանկահասակ կնոջը, հեռանում են առանց մի բան գողանալու նորա տնեն։ Անպատված կինը հայտնի է մեր քաղաքում որպես գեղեցկուհի, լավ երգող և լավ պար եկող տիկին։

[ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ]

Թե մեր գրականությունը աղքատ է բանաստեղծական աշխատություններով, այդ գիտե մեզանից ամեն մինը, որ փոքրիշատե ծանոթ է հայկական մամուլին։ Ի նկատի ունենալով, թե մեր հասարակությանը որքան օգտավետ կարող են լինել երգերը, որոնց միտքը առնված է ոչ թե երևակայական-ցնորամիտ ոգեորություններից, այլ ժողովրդի իրական կյանքը նկարագրելով, պատկերացնում են նորա տնտեսական ավերված և հիվանդոտ դրությունը, նորա բարոյական և մտավորական պակասությունները։ «Մշակի» խմբագրությունը դիտավորություն ունի այս տարի տպագրել պարոն Րաֆֆիի «Փունջ» անունով բանաստեղծական գիրքը։ Ամբողջ գիրքը կլինի պարոն Միանսարյանցի «Քնար հայկականի» մեծությամբ. նա բաժանված է երկու մասերի։ Առաջին մասը գրված է բոլորը ոտանավորներով և պարունակում է յուր մեջ փոքրիկ պատկերներ և նկարագիրք՝ առնված ազգային կյանքից, այլև զանազան քնարերգական և պատմական երգեր։ Երկրորդ մասը գրված է արձակ շարադրությունով և բաղկացած է փոքրիկ վեպիկներից, որք առնված են ժամանակակից անցքերից։

«Փունջի» տպագրությանը մասնակից լինելու ցանկացող անձինք կարող են բաժանորդ լինել, կանխիկ վճարելով 3 ռուբլի, որի փոխարեն կստանան մի օրինակ այդ գրքից։ Տպագրությունը վերջանալեն հետո վաճառելու համար «Փունջի» գինը կնշանակվի 4 ռուբլի։

Թիֆլիսում ստորագրվել կարելի է ուղղակի «Մշակի» խմբագրատանը, իսկ գավառներում կամ այլ քաղաքներում՝ քանի մի գործակալների մոտ, որոնց անունները կհայտնենք մեր թերթի գալոց համարով։

Եթե հայկական գրականության սիրողները յուրյանց նյութական օգնությամբ կնպաստեն մեզ «Փունջի» տպագրությանը, այնուհետև խմբագրությունս նպատակ ունի ի լույս ածել պ. Րաֆֆիի և մյուս բանաստեղծությունքը, որպիսին են «Խլվլիկ» վիպասանությունը երեք հատորով Պարսկաստանի կյանքից առնված, «Ջահրումար»՝ ռոման երկու հատորով Թիֆլիսու կյանքից առնված և նորա ամբողջ ճանապարհորդությունը Պարսկաստանում, որ բաղկանում է 50 նամակներից, որոնցից դեռ 21-ը տպված է «Մշակի» մեջ։

«ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ»

1

Ապրիլի 19-ին սիրողների խումբը առաջին անգամ ներկայացրին ձմեռային թատրոնում պ. Սունդուկյանցի «Քանդած օջախ» անունով նոր կատակերգությունը։ Որպես սիրողների վերա, ես ավելորդ եմ համարում խոսել, թե նրանցից ամեն մինը որպես կատարեց յուր դերը, միայն չէ կարելի մի քանի խոսք չասել տաղանդավոր հեղինակի այդ նոր պիեսայի բեմական արհեստի և նորա կրթողական նշանակության մասին։

«Քանդած օջախը», որպես մեր այժմյան հասարակական կյանքի մի պարզ հայելի, ցոլանում է յուր մեջ մի տխուր երևույթ, որ պատկերացնում է նորա թե՛ տնտեսական, թե՛ բարոյական և թե՛ մտավորական՝ ընդհանուր բանկրոտությունը՝ նորա անկումը։

Մի կողմից, առևտրական գործը, հայի ապրուստի գլխավոր աղբյուրը, կայանալով խաբեբա, փտած և անհաստատ հիմքերի վերա, չէ տալիս բավականացուցիչ արդյունք փոքրիշատե յուր գործը խղճմտանքով վարող վաճառականին։ Մյուս կողմից, ընդհանրացած շռայլությունը, ընտանեկան անկարգ տնտեսությունը, մոլությունները դեպի նորաձևությունը՝ անխնայաբար խլում են, սպառում են գերդաստանի աշխա-

տավարի դասը քրտինքի արդյունքը, և նա, թեև այդ բոլորը հասկանում է, թեև աշխատում է ընդդիմադրել նորանց, բայց կամա-ակամա ենթարկված լինելով ընդհանուր շռայլության հոսանքին, չէ դիմանում և, վերջապես, ընկնում է։ Այդ սարսափելի դրամատիկական պատկերը կյանքի և մահվան մեջ տեսնում ենք Օսիփի տիպի մեջ։

2

Օսիփը երևակայական տիպ չէ՛։

Նորա մեջ կա հասկացողություն և համոզմունք. նորա մեջ կա կամք և հաստատակամություն, մի խոսքով, նա թույլ բնավորություն չէ։ Այսուամենայնիվ, նորա ազնվությունը յուր գերդաստանի վերա ստանում է բոլորովին թույլ կերպարանք, երբ նա, մի կողմից շփոթվելով յուր արտաքին գործերի անհաջող հանգամանքներից, մյուս կողմից, տանջվում է ընտանեկան երկպառակություններով։ Վերջին երևույթը ավելի խոշոր կերպարանք է ստանում այն ժամանակ, երբ նորա աղջկան, Նատոյին ուզում են ամուսնացնել։ Օսիփի կինը, Սալոմեն, չգիտե և չէ էլ ցանկանում գիտենալ յուր ամուսնի դժբախտ դրությունը։ Նա պահանջում է յուր մարդուց մեծ բաժինքով յուր դուստրը չինովնիկի կին շինել։ Օսիփը մանրամասնաբար պատմում է Սալոմեին յուր վիճակը, թե նորա պահանջմունքը վեր է յուր կարողությունից, այլև խորհուրդ է տալիս, որ ավելի հարմար է յուրյանց դստեր ապագա բախտավորությանը՝ լինել մի համեստ և աշխատավոր վաճառականի կին, որ բավականանար փոքր բաժինքով, քան թե մեծ բաժինքով գնալ որևիցե գրպանը և գլուխը դատարկ չինովնիկին։ Բայց կինը այդ ընտանեկան կռվի մեջ տանում է հաղթությունը։ Նատոն նշանվում է Ալեքսանդր Մարմարով չինովնիկի վերա։

Անբնական մի երևույթ է թվում այդ, որ հայ տղամարդը, դարերով կնոջ վերա տիրող և նորան ստրկացնող բռնակալը, հանկարծ ենթարկվում է նորա ազդեցությանը։ Բայց հեղինակը չէ սխալվել այստեղ, նա որսացել է մեր այժմյան ընտանեկան կյանքից ամենազգալի մի գիծ։ Այստեղ երևում է մեր առաջյոք քաղաքակրթված հայ կնոջ տիպը, որ ինչպես ինքը Օսիփը բացատրում է, «վուսեմեն ինչրու բողազը փռանգըստանու է ու գլուխը կի էլի էն է մնացի»։ Հայ կինը, արտաքին ձևերով նմանելով Եվրոպայի կնոջ օրինակներին, առանց նոցա կրթությունը և ուսումը յուրյանց սեփականելու, միայն լինում է մոդայի և մոդնի մագազինների գերի, դառնում է անընդունակ յուր տղամարդի հետ լծոր-

զարդար տանել ընտանիքի ծանրությունը, բաժանորդ լինել նորա բախտավոր և անբախտ րոպեներին։ Օսիփը թեև ինքը ուսում առած մարդ չէ, բայց նա արտասահմանում տեսել է, թե որպես կանայք օգնում են յուրյանց ամուսիններին և հասարակական գործիչներ են դառնում։ Բայց հայ կինը միայն մտածում է բալերի, վիչերների, պիկնիկների և լոտոյի վերա։ Այդպիսի կապիկությունները եվրոպական ձևերի միայն վատ կողմերն սովորելու, առանց նոցա գիտությանը և ուսմանը մասնակից լինելու, տալիս է Սալոմեին մի դատարկ և վայրիվերո բնավորություն։ Նա փոխադրում է յուր անձի վերա այն, ինչ որ մի ժամանակ նորա ամուսինն էր, պարզ ասած, լինում է մի նոր բռնակալություն տան մեջ։ Այսպիսի վնասակար և այլանդակ վերանորոգությունը ընտանեկան կյանքի մեջ հիշեցնել է տալիս սրբազան նահապետականությունը, այն անցած, գնացած պարզ և անհոգ օրերը, որոնց երանի տալով միտքն է բերում մամիդա խախոն, Օսիփի հորաքույրը։ Պառավի հիշողության մեջ զարթնում է ոսկի անցյալը, երբ ամեն մարդ սակավով էր բավականանում, երբ ամեն մարդ գոհ էր յուր վիճակեն, և ընտանիքը երջանկություն էր վայելում։

3

Նատոյի, Սալոմեի աղջկա կրթությունը, նորա ուսումը՝ բոլորովին համապատասխանում է այն շրջանին, որի մեջ զարգանում է նա։ Այստեղ մեք տեսնում ենք այն տխուր պատկերը, որով ներկայանում է մեզ այժմյան կրթված հայ աղջիկը։ Նորա մեջ չէ երևում մի հաստատ բան, ամեն ինչ նորա մեջ թեթև, թերի և անկատար է, որպես այն ուսումը և կրթությունը, որը ստացել է նա։ Նա ոչինչ գաղափար չունի յուր գոյության բուն նշանակության մասին, նա անտարբեր է դեպի յուր ազգը և կրոնքը, նա մինչև անգամ ատում է յուր մայրենի լեզուն։ Ամուսնական գաղափարը զարթնում է նորա մեջ բոլորովին դատարկ շարժառիթներից, չինովնիկի կին լինելով, մտածում է Նատոն, ավելի հեշտ միջոցներ կունենա կրուժոկ, թատրոն և այլ զվարճությանց տեղերը հաճախելու և ամեն օր մի նոր շիկ տալու յուր հագուստին ու զարդարանքներին։ Այդպիսի դատարկ բնավորությունը, որպես է Նատոն, չունի իր մեջ մի կենդանի կապիտալ, որով գրավեր դեպի ինքը փեսաներին, միակ կապիտալը, որով նա կարող էր յուր համար փեսա ընտրել, լինում է արծաթը, և այդ նյութի վերա դրվում է նորա ամուսնական կյանքի հիմքը։ Նորա ճակատագիրը կապվում է յուր նման մի երիտասարդի հետ, որպես էր Ալեքսանդր Մարմարովը։ Վերջինս չունե յուր աչքի առջև որևիցե անձ-

նական արժանավորությունը Նատոյի, միակ բանը, որ գրավում է նորան դեպի Նատոյի սերը, է՛ այն քանի մի հազյուր թուման փողը, որ պիտի ստանար նա որպես բաժինք։ Այդ պատճառով, Օսեփի անակնկալ դըժբախտության հետ, երբ քանդվում է նորա բոլոր նյութական զորությունը, նորա հետ և վերջանում է Մարմարովի սերը դեպի յուր հարսնացուն, երբ նա մտածում է, թե այլևս ոչինչ ստանալու հույս չկար։ Փողի հաշիվը, բոլորովին նյութական նպատակը դեպի ամուսնական կապը, մինչ այն աստիճան կուրացրել են թեթևամիտ, բայց միևնույն ժամանակ կրթված երիտասարդին, որ նա արտասուքը աչքերում թողում է և հեռանում է Նատոյից...

4

«Քանդած օջախի» մեջ բոլորովին հակառակը Օսեփին, որպես նորա հակապատկերը, հանդիսանում է մի այլ տիպ՝ «Կիպրոնից Մաթուսի վուրթի Փարսեղը»։ Այդ անձնավորությունը մի հարազատ ծնունդ է մեր անկարգ, փչացած հասարակական կազմակերպության։ Սնվելով, զարգանալով անբարոյական շրջանի մեջ, ուր միշտ խաբում են, կողոպտում են, մի խոսքով, ամեն կեղտոտ միջոցներ գործ են դնում միայն արծաթ որսալու նպատակով, Փարսեղը կազմել է յուրյան մի ամբողջ գաղափար, թե աշխարհումս սուրբ բան չկա: Հիմնվելով այդ վարդապետության վերա, Փարսեղը յուրյան ներելի է կացուցանում բոլոր անարգար հնարները հարստանալու, և նա հասնում է յուր նպատակին։ Ծածկելով յուր կեղտոտ անցյալը ոսկու թիթեղի տակ, փինաչի Մաթուսի տղան հանդիսանում է որպես պատվավոր քաղաքացի, նա ստանում է վարկ և կշիռ, նորան պատվում են և երկրպագում են։ Նորա առևտրական խանութը պատկերացնում է այն հիմնարկությանը, եթե կարելի է այդպես ասել, այն ըշկոլան, ուր պատրաստվում են այդպիսի փարսեղներ, այդպիսի պատվավոր քաղաքացիք։ Խաբեությունը, ստախոսությունը՝ գլխավոր դասախոսության առարկայքն են, որք քարոզում են այդ ըշկոլայի ամբիոնից։ Փարսեղը գլխավոր պրոֆեսորի դերն է խաղում։ Նորա աշակերտները հպատակում են նորան, որպես մի բարձր հեղինակության։ Փարսեղը գովում է յուր մեծ աշակերտի՝ Դարչոյի, այդ պրիվատ-դոցենտի առաջադիմությունը յուր ուսման մեջ և նախագուշակում է նորա բախտավոր ապագան, որին նա մի օր կհասներ այդ կեղտոտ ճանապարհներով։ Փարսեղը նախատում է, մինչև անգամ ծեծում է յուր գուքնի փոքրիկ աշակերտ անմեղ Միխոյին նորա անընդունակության հա-

մար, որ նա չէր կարողանում կտավը ձգելով և արշինի տակ սղացնելով, օրինակի համար, տասը գազը՝ տասներկուսի տեղ ծախել։ «Դուն մարթ չիս դառնա», ասում է ուստան, խեղճ աշակերտի ականջներին ձիգ տալով։

Աչքի առաջ ունենալով այդպիսի փարսեղները, աչքի առաջ ունենալով նույն առևտրական խանութները, ուր պատրաստվում են յուրյանց նման վաճառականներ, ինքնըստինքյան պարզվում է այն հարցը, թե ինչու մեր, հայերիս մեջ շատ փոքր են թվով օրինավոր և յուրյանց գործը խղճմտանքով վարող առևտրական մարդիկը։ Հայտնի բան է, որ օսեփները մի մասնավոր բացառություն են կազմում այդ փչացած դասի մեջ։ Նոքա, լինելով փոքրիշատե յուրյանց խղճմտանքով կենդանի մարդիկ, չեն կարողանում ազատ մրցություն անել ամենայն խաբեբայությամբ զինվորված բազմության հետ, և նոքա ընկնում են։ Ահա գլխավոր անբախտության պատճառը Օսեփի և նորա ընտանիքի։

5

Փարսեղը այն է յուր ընտանիքի մեջ, ինչ որ է յուր առևտրական խանութումը։ Նա կամենում է այնպես «գլխիցը ռադ անել» յուր աղջիկը, տան անպետք վաճառքը, որպես նորա ուշիմ աշակերտ Դարչոն «սաղացրել» փտած ապրանքը խեղճ սղնաղեցու վերա ծախելով։ Նա կամենում է և այդ առևտուրի մեջ մրցություն անել յուր հակառակորդի հետ։ Այդ ձեռնարկության մեջ նորան գործակից է լինում յուր կինը՝ Քալին։ Նոքա միասին խորհուրդ են անում խլել Օսեփի և նորա կնոջ՝ Սալոմեի ձեռքից նույն աղջկա՝ Նատոյի նշանածը՝ Ալեքսանդր Մարմարովին։ Աշխարհի ամեն բաների շինվելու և քանդվելու գլխավոր ուժը միայն փողի մեջ ճանաչող հայ վաճառականը ձեռք է առնում այդ զորավոր գործիքը։ Նա խոստացել է տալ Մարմարովին 100 թուման ավելի, քան Օսեփի խոստացածը, այլև ամենայն խորամանկ հնարներով աշխատում է վերջինիս զրկել յուր նյութական միջոցներեն, կտրել նորա վարկը առևտուրի մեջ, որպեսզի նա չկարողանա վճարել խոստացած արծաթը յուր փեսացուին։ Հիշյալ դավադրությանց մեջ փոքր չէ օգնում Փարսեղին նորա աշակերտ Դարչոն, որը սկսում է սուտ լուրեր տարածել Օսեփի գործերի ավերված վիճակի մասին և հրապարակավ պահանջել այն գումարը, որ Օսեփը պարտական էր յուր ուստային։ Փարսեղը յուր կողմից ուրանում է Օսեփից որպես գրավ առացած «չարչիի բարաթները» և, գործը դատարանին հասցնելով, Օսեփի դուքանը կնքել է տալիս։ Օսեփը սնանկա-

նում է։ Եվ նրա աղջիկը՝ Նատոն, որպես հիշեցի, զրկվում է հիմար և միևնույն ժամանակ շահասեր Մարմարովի կինը լինելուց։

Իհարկե, Օսեփի սնանկության գլխավոր պատճառը պետք է որոնել ոչ միայն Փարսեղի չարանենգ դարանագործությանց մեջ, որ նա վերջինիս մի հարվածքովը գլորվեցավ դեպի անկումն, այլ նրա գործերի անհաստատ և փտած տրամադրության մեջ, որոնք շատ տարիների հասարակական և տնտեսական պայմանների հետևանքներ էին, որոնց ակամա կերպով ենթարկվել էր խեղճ Օսեփը։

6

Որպես երկրորդական տիպեր «Քանդած օջախի» մեջ հանդիսանում են Օսեփի կողմից՝ Գևոն, նրա մտերիմ բարեկամը, իսկ Փարսեղի կողմից՝ Գիժ Մոսին՝ նրա մերձավոր ազգականը։ Գևոն երևում է մի թույլ բնավորություն, թեև բարի և խղճմտանքով մարդ։ Նա յուր բարեկամի դժբախտությանը չէ կարողանում այլ բանով օգնել, միայն նրա սնանկանալու ժամանակ բավականանում է նրանով, որ չէ ցանկանում պահանջել նրանից այն գումարը, որը Օսեփը պարտական էր յուրյան։ Իսկ Գիժ Մոսին չէ կարելի ասել, թե իսկական տիպ է, նրան կարելի է համարել մի երևակայական մարդ, որին ստեղծել է հեղինակի քանքարը, Փարսեղի բոլոր չարագործություններին և նրա կեղտոտություններին թարգման լինելու։

Իսկ ինչ որ վերաբերում է «Քանդած օջախի» բեմական նշանակությանը, պետք է ասել, որ նա հորինված է բավականին գեղարվեստական կերպով։ Տիպերը հանդես են գալիս խիստ հատկանիշ բնավորություններով. իսկ լեզուն, խոսքերը, արտահայտությունքը՝ հնչվում են ժողովրդի սրտի և հոգու խորքիցը։ Ձանձրացնում է միայն մոնոլոգների երկարությունը, և էֆեկտը վերջանալու միջոցին խիստ սառն է, երբ այն տխուր դրամատիկական բոպեում, որ կործանվում է Օսեփի տնտեսական կյանքը, լոտոխաղ կնիկները նորից սկսում են վիճել յուրյանց անպատվության մասին, որ զրկվեցան յուրյանց զվարճությունից։

Վերջացնում եմ իմ նկատողությունները այդ խոսքերով. որ «Քանդած օջախը» է՛ մի ցավալի ողբերգություն, որ պատկերացնում է մեր ժողովրդի քանդված դրության տխուր կործանվելը և նրա անկումը թե՛ բարոյապես և թե՛ նյութականապես…

[«РУССКИЙ МИР» ԼՐԱԳՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ]

Ս. Պետերբուրգյան «Русский мир» *լրագիրը, տարածելով յուր 104 համարի հետ* «О существе национальностей и об оброзовательном значении крупных народных единиц» *վերնագրով տետրակը*[1], *այդ առիթով իր առաջնորդող հոդվածի մեջ անում է մի քանի նկատողություններ Կովկասի և նորա բնակիչների վերա։ Մենք ավելորդ չենք համարում քաղել այդ հոդվածի մի քանի տեղերը, որոնք իսկապես վերաբերում են հայերին և վրացիներին։ Խոսելով Կովկասի վերա՝ հոդվածագիրը ասում է՝ «Մինչև այսօր Պետերբուրգի բնակիչը նայում է Անդրկովկասի և նորա դրացի երկրների վրա որպես մի ընկած տեղի վերա։ Մենք իսկապես հմուտ չենք մեր սեփական պատմությանը, ո՞րտեղից մեզ գիտենալ ուրիշ օտար ազգերով բնակեցրած նահանգների պատմությունը։ Բայց լեռնային երկրի (Կովկասի) բնիկները ունեն շատ բաներ՝ հիշել յուրյանց անցյալից. այդ անցյալի փառքը խաղում է նորանց իսկության հաշիվներում, բայց միևնույն ժամանակ մասամբ ներելի է կացուցանում նոցա սխալը։ Երկրի փառավոր հիշատակարանները ինքնըստինքյան աչքի են ընկնում ամենին, ով որ անցնում է փոքրիկ փոստային ճանապարհով. մեծ ճանապարհները այդ երկրում ծառայել են որպես մշտնջենավոր ուղի թշնամական հարձակումների, որոնք կրկնվում էին անխզելի կերպով ժամանակի խորին հնությունից և անդադար ջնջում էին լուսավորության հետքերը։ Բայց մի քանի քայլ առաջ, և ահա երկրի նախկին մեծափառությունը հարություն է առնում ամենախուլ ստվերախիտ անտառներում, դժվարանցնելի ձորերում և խուլ անապատներում։ Հազիվ նշմարվող շավիղը տանում է դեպի հնության հիշատակարանները՝ և որպիսի՜ հիշատակարաններ։ Ամբողջ քարաժայռը փորված ներսից, որպես մեղուների խորիսխ, ներկայացնում է տրոգլոդիտյան (անձավաբնակ) ժամանակի ստորերկրյա դահլիճների անվերջ մի կարգ։ Դու տեսնում ես ցրված մինչև քսան վերստ փլատակները մայրաքաղաքի, որ շինված է Աննիբալի պլանով։ Մի այլ հին արքայանիստ քաղաք, կարծես թե դեռ կենդանի, յուր աշտարակների շարքով և կրկնակի պարսպներով, որոնց հետքից երևում են կաթուղիկեքը վաղուց դարտակացած տաճարների, նա երևում է, որպես թե մի կախարդված քաղաք առասպելական*

[1] «Ազգությունների գոյությունը և մեծ ազգային միությունների կրթական նշանակությունը»: *Այդ վերնագրով տետրակի մասին «Մշակը» խոսացել է յուր անցյալ տարվա համարների մեջ։*
Ծան. Թարգմ.

վեպերի։ Ամբողջ նահանգը, որ հռչակված էր հազար տարիներով որպես արևելքի դրախտը, այժմ անմարդաբնակ անապատ է, որ բնակեցրած է միայն օձերով, ուր մինչև այսօր մնում են բյուրավոր ջրաբաշխ առվակները, որոնք երբեմն տալիս էին երկրին կյանք, իսկ այժմ ցամաքած են բոլորովին։ Ամեն տեղ, թե՛ անտառներում և թե՛ քարաժայռերի վերա՝ ցրված են հոյակապ եկեղեցիներ, մինչև անգամ ամբողջ մենաստաններ պատած են թփերով։ Դարավոր կամուրջների վրայով այլևս չկա անցուդարձ, ջրանցքները և հարթած ճանապարհները հանկարծ կտրվում են որևիցե խորին անդնդով։ Իհարկե, մի այդպիսի երկրում մարդիկ մի ժամանակ մտածում էին և գործում էին, և անցյալի հիշատակը միանգամայն չէ կարող ջնջվել նոցա սերունդի մեջ, որքան և թույլ լիներ նոցա ժամանակակից ազգային դրությունը։

Բացի մահմեդական բնակիչներից, որոնց նեցուկը կայանում է միայն կրոնքի մեջ, Անդրկովկասում ապրում են երկու պատմական ազգություններ՝ վրացիք և հայեր։ Երկուսն էլ պահպանել են փառավոր հիշատակներ, բայց զանազան ձևերով։ Վրացիք, թեև սակավաթիվ, բայց մինչև այսօր անբաժան մի ազգ են։ Նոքա միակ քրիստոնյա ցեղն են ամբողջ Ասիայում, որք, ազատվելով մուսուլմանների լծից, պահպանեցին անկախությունը, թեև նորան ձեռք բերին շատ ջանքերի և անհավատներից տանջանքների գնով, բայց պսակվեցան կատարյալ հաջողությամբ։ Որովհետև նոքա անկախ մնացին մինչև այն ժամը, երբ Ռուսիան յուր կողմից հասավ մինչև Կովկասի ստորոտը, նոքա բաց արին նորան դռները դեպի լեռնային երկիրը։

Եթե վրացիք մինչև 19-րդ դարի սկիզբը պահպանած չլինեին յուրյանց ամբողջությունը որպես մի ազգ, Ռուսիան, ամենայն հավանությամբ, դարերով փակված կմնար հարավային կողմից Կովկասի ձնապատ պարիսպներով։ Ի նկատի ունենալով այդ, կարելի է ասել, թե հերոսական պատմությունը վրացիների վճռեց վերին Ասիայի վիճակը։ Հայերը, որ կազմում էին մի զորեղ թագավորություն, չկարողացան դիմանալ մուսուլմանների հարվածքին, բայց ընկան փառքով. Նոցա բոլոր հին ազնվապետականները համարյա գլխատվեցան կրոնքի համար, հայերը բնակվում են այժմ բաժանված յուրյանց տիրապետող մուսուլմանների մեջ, առևտրական ինքնավստահությունը ցրեց նորանց հազարներով երկրի երեսին, բայց նոքա պահպանում են միմյանց մեջ խորին ազգայնական կապ, չեն մոռանում յուրյանց պատմությունը և լեզուն։ Նոքա պահպանեցին յուրյանց կրոնական կենտրոնը, հին պատ-

մական հողը յուրյանց ոտքի տակ և նախնյաց լեզուն։ Այդ պայմաններով դժվար է մոռանալ մի ազգի յուր պատմությունը, որ ավանդվում է շքեղ հիշատակների շարքով, որոնց շրջապատող հողը մինչև այսօր մշակվում է ձեռքերով, իսկ հայոց ազգաբնակության՝ մի պատմություն, որ սկսվում է Շամիրամից առաջ և վերջանում է միայն միջին դարերից հետո…

Շատ բնական է, որ այդ երկու ցեղերի մեջ կենդանի են անջնջելի հիշատակներ և մի քանի հափշտակվածներ բնիկներից, որք իրանց կրթությունը ստացել են ու մինչև անգամ ծանոթացել են իրանց սեփական պատմության հետ ռուս ուսումնարաններում, այնքան ընկնում են անցյալի ցնորքի հետևից և շատ անգամ մոռանում են անփախչելի ներկան։ Բայց բավական չէ ցնորքը, այլ հարկավոր է գործնական դրությունը ըմբռնել։ Պատմությունը անդառնալի կերպով վճռել է և բացել է Միջին Ասիայի քրիստոնյա ազգերի առաջ միայն երկու ելք՝ կամ մահմեդականների բայաներ լինել, կամ Ռուսաստանի հպատակներ։ Իհարկե, նրանք երկրորդն են նախադասում։ Այժմ Կովկասյան բնիկը կարող է որքան կամենում է իրան կերակրել անցյալի փառքով, բայց ամբոխից ուրիշ կերպով չէ կարող բարձրանալ, եթե ոչ նույն ժամանակ ռուս դառնալով, այսինքն՝ սեփականելով իրան ռուսաց լեզու և քաղելով իր կրթությունը ռուս աղբյուրից։ Կրթյալ բառը դարձել է հավասար ռուսացած բառին։ Մինչև անգամ իր սեփական պատմությունը սովորելու համար հայը կամ վրացին պիտի կրթվին, ուրեմն ռուսանան։ Նա կարող է միևնույն ժամանակ լինել լավ բնիկ և գերազանց ռուս, բայց չէ կարող մնալով միայն բնիկ, միևնույն ժամանակ մարդ դառնալ բառի բուն նշանակությամբ, մտածող էակ և գործունյա քաղաքացի իր նոր և մեծ հայրենիքի։ Անդրկովկասյան երկիրը անհրաժեշտ կերպով ենթարկվելու է ռուս լեզվի և ռուսաց պատմության ընթացքին, թեև բազմության մասին հոգսը անցավոր ժամանակամիջոցում չէ թույլ տալիս արհամարհել տեղական լեզուները։ Այդ բոլորովին պատմական և ոչ թե կամավոր դրության մեջ, տեղական ազգասերների հափշտակությունը, որ բոլորովին երևակայական է, կարող է նրանց միայն վնասել և չէ կարող կռվել ժամանակի հոսանքի դեմ։ Բայց նա, թեև աննշան կերպով, դարձյալ արգելում է կրթության առաջադիմությունը և շատերին մոլորեցնում է»։

«Русский мир»-*ը թեև բոլորովին համաձայնվում է մեր հիշած տետրակի մտքի հետ, թե մի տերության մեջ փոքր ազգությունները*

պետք է միանան մեծ և տիրապետող ազգի հետ, և թե պետք է տիրե պետական լեզուն, այնուամենայնիվ, նա ավելացնում է.

«Պետք է ասել և հետևյալը՝

Երբ որ երկու կողմերի մեջ վեճ կա, որքան և զորեղ և արդար լիներ նրանցից մեկը, որքան և տկար և միակողմանի լիներ մյուսը, արձակ ճշմարտությունը, այնուամենայնիվ, չէ կարող լինել ամբողջապես առաջինի ձեռքում. մինչև անգամ մանանեխի հատիկը, որ դրվում է կշռի թաթի մեջ, ցույց է տալիս յուրյան վերաբերող ներգործության ծանրությունը:

Պետական լեզուն պետք է հանդիսանա, մինչև անգամ ինքնըստինքյան նա կլինի գլխավոր գործիք բնիկների զարգացմանը, ուրեմն և տիրող ազգի հոգին փոքր առ փոքր կներշնչվի նոցա մեջ: Այնտեղ է Ռուսաստանը, ուր ամեն մի մտածող մարդ մտածում է ռուսերեն: Ժամանակով կարող է, մինչև անգամ պետք է, որ լինի օրգանական միախառնությունը: Բայց մինչև այն ժամանակը տեղային լեզուն, որ ծառայում է ամբոխի առտնին գործածությանը, թանկագին է մինչև անգամ լուսավորված և ուսյալ բնիկների համար, նա ունի յուր կրթողական նշանակությունը և արժանի է, մի նշանավոր չափով, կառավարության բարեհաճությանը:

Այլև տերության պատկանող սահմանակից երկրների բնակչաց օրգանական միավորությունից հետո, որք օտար և հակամիտ էին տիրող ազգին, մնում է մի բարոյական ինքնաձև հիմք, որի վրա կայանում են տեղային ավանդությունները, սովորությունները և հասկացողությունները, որք ունին կյանքի իրավունք, որպես ամեն կենդանի և իրական բան, մի հիմք, որը ոչ օգուտ և ոչ հարկ կա քանդել արհեստական հնարներով: Հաստատությունը պետության կայանում է հոգվո միության և ընդհանուր օգտի պարզ հասկացողության վերա և ոչ երկրորդական ձևերի միակերպության մեջ...

Նահանգները, որք կորուսել են ամենայն ինքնակայություն, ամենայն գույնը տեղային, որք եղել են լոկ կառավարչական վերաբաժանումըն, դադարում են ապրելուց. այն ժամանակ ժողովրդի բոլոր մտավորական և բարոյական կյանքը ներհոսում է դեպի սիրտը, և թուլանում են անդամները, որը ուղղակի տանում է դեպի չինականություն և կամ պարզ ռուսերեն արտասանելով՝ դեպի պաշտոնականություն, որը չէ խոստանում ո՛չ հարուստ զարգացում և ո՛չ մեծ հարատևություն: Պատմությունը ներկայացնում է մեզ այդ մասին երկու մեծ և հակասական օրինակներ՝ հին Հռոմը և հին Հունաստանը, որք տարածեցին այնքան

հետու յուրյանց տիրապետությունը, որք ստեղծեցին այնպիսի լայնատարած դաշտ յուրյանց ցեղերին։ Հռոմը ջնջում էր նահանգների ինքնակայությունը, հավասարում էր բոլորը մի մակերևույթի տակ, տարածում էր յուր լեզուն, կարելի է ասել, այդ ամենը անում էր մեքենաբար և ոստիկանական հնարներով. մարդերի ամբոխները լուսավորվում էին նորա տիրապետության ներքո, բայց նահանգները մեռանում էին։ Կայսրության լատինական բաժնի ամբողջ տարածության վերա չբարձրացավ, որպես նեցուկ Հռոմին, ոչ մի ինքնակա կենտրոն զարգացման։ Հունաստանը տարածում էր յուր լուսավորությունը ամենաընդարձակ կողմերում, չհաղթահարելով ոչ մի երկրում տեղային կյանքը. արևելքի կենդանի, թեև հելլենացած հողի վերա բուսան, որպես նեցուկ Աթենքի և՛ Աղեքսանդրիան, և՛ Անտիոքան, և զանազան այլ կենտրոններ մտավորական գործունեության. այնտեղ ոչ միայն կյանք ունեին մարդիկ, բայց կյանք ունեին և նահանգները, որոնք ամենևին չէին ցանկանում խզել յուրյանց կապերը քաղաքական կենտրոնի հետ։ Կյանքի և ինքնագործության ամեն մի ձևի մեջ պարունակվում է զորեղ հիմն։ Զուր չէր՝ հելլենական բաժինը կայսրության ապրեց հազար տարի ավելի, քան թե նորա լատինական կեսը»։

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

«Արարատ» ամսագրի ներկա տարվա մայիսի տետրակումը կարդացի պ. Շիրմազանյանի պատասխանը իմ «Մշակի» 7-րդ համարում տպված հոդվածի դեմ։

Պարոնը շատ վրդովվում է, իբր թե ես, հեռանալով պատմական փաստերից, պատասխանել եմ նորան հեգնորեն։ Բավականին ուղիղ է նկատել նա։ Չմտածելով, մի գրվածք, որ ստոր էր ամենայն կրիտիկայից, նորան հերքելու ամենահարմար զենքը կատակն է։

Իսկ պ. Շիրմազանյանը յուր վերջին հոդվածում մի նոր առաջադիմություն ևս է արել։ Նա անցանելով պատմաբանական դաշտից, հասնում է անձնականության։ Ինչ փույթ, դույն «էդ էլ մի նոր» կրիտիկա է։

Մի բան վաղուց մեք գիտեմք կյանքի մեջ, թե կատուն նեղի ընկած միջոցին սկսում է չանգռել մարդի ձեռքերը։ Մի այլ բան դորա նման երբեմն հանդես է դուրս բերում գրականությունը, երբ թույլ մարդ են ծանր պոլեմիկայի մեջ, սկսում են հայհոյանք և լուտանքներ արձակել։

Մեր քաղաքում նույնպես մարդ շատ թանկ չէ ծախվում, եթե պետք

լիներ նոցա գործածությունը։ Բայց ո՞վ ախորժակ ունի արատավորել յուր ձեռքերը։

Գրականության մեջ այս և այն անձի պսևդոնիմը մերկացնել կատարյալ անազնվություն է։ Այդ պատճառավ, ոչ ոք իրավունք չէ տալիս պ. Շիրմազանյանին ասել, թե Մելիքզադեն Րաֆֆին է, կամ Րաֆֆին Հակոբ Միրզայանն է և այլն։ Որովհետև այդ անունները, ով ոք և լինեին նոքա, Եղիշեի, Փարպեցու և Ավարայրի դաշտի հետ ոչինչ կապ չունեն։

Բայց թե Մելիքզադեն էշի կամ ուղտի վերա հեծնելով է ճանապարհորդել այն կողմերը և դորա համար նորա խոսքերի մեջ ճշտություն չկա, այդ շատ իրավացի է։ Ինչ պետք է արած, երկրի սովորություններին դեմ մարտնչելը դժվար բան է։ Երևելի Վամբերին ևս էշով անցավ Պարսկաստանը։ Այդ բանը կարծես թե աշխարհի ճանապարհորդների ճակատագիրն է։ Միայն շատ քչերին է հաջողվում հարստանալ, փողի և գյուղի տեր դառնալ և, նժույգ ձի նստած, Փանոս գյուղեն մի քանի ժամվա մեջ մինչև Խորվիրապ հասնել և լավ հետազոտել երկիրը...

Պարոն Գալուստ, ես իմ կողմից վերջացնում եմ իմ բանակռիվը ձեզ հետ, գուցե պարոն Րաֆֆին ինքը կպատասխանե ձեզ, որովհետև, ես թեև մինչև այսօր համոզված էի, որ դուք լավ պատմաբան եք (՞), բայց չգիտեի... Միայն բարեկամաբար խորհուրդ եմ տալիս ուշադրությամբ կարդալ ձեր առաջին և երկրորդ հոդվածները, եթե կա նոցա մեջը միտք, դուք կհամոզվիք, թե որքան հակառակում եք ինքներդ ձեզ։

Պարսից առածը ասում է. «Ստախոսները հիշողություն չունեն»։ Միևնույն հակասությունն է պատահում գրականության մեջ, երբ մարդ ամեն րոպե մի նոր խոսք է խոսում։

[ՊԱՏԱՍԽԱՆ «ՄԵՂՎԻՆ»]

№ 26 «Մեղուի» ֆելիետոնում պ. Քաղքցին չգիտեմք ինչ իրավունքով վատ կարծիք է տարածում և դատապարտում է մի գիրք, որ տակավին տպագրության մամուլի տակ անգամ մտած չէ։ Նա կոչում է մեր աշխատությունը ««Փունջ» անգույն ու անհոտ ծաղկանց» և այլն։ Մեք հավաստի եմք, որ Բաղամի հոգին մտել է պ. Քաղքցու մեջ. նա սկսել է գուշակություններ անել։ Բայց ինչ որ վերաբերում է «Փունջի» «անգույն, անհոտ» լինելուն, մեք կրկնում եմք երևելի Սաադիի խոսքը. «Ինչ մեղ ունի արեգակը, երբ կույր չղջիկը լույս ցերեկով չէ տեսնում նորա

ճառագայթը»։ Ինչպես էլ «Փունջը» մեղավոր չէ, երբ մեր պ. Զոհրի հոտառությունը, չար նախանձից դուլանալով, ոչինչ չէ զգում։ Բայց ինչ որ վերաբերում է այն բանին, թե պ. Քաղքցին որքան է հասկանում և գիտե բանաստեղծությունը, այդ արդեն հայտնի է նորա վերջին ·զուռնա ֆելիետոնից, ուր ոտանավորներով է արտահայտում յուր ցնորաբանությունքը։ «Ագռավը ուզեց կաքավի երիշ գնալ, իր երիշն էլ կորցրեց»... ասում է հայի առածը։

Կ. ՊՈԼՍԻ ՍՐ. ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Ֆրանսիական կրթության վայրիվերո ազդեցությունը հայտնվում է պոլսեցու կյանքի ամեն մի երևույթների մեջ, միայն այն զանազանությամբ, որ այնտեղ ամբոխի կուսակցությունները, նոցա շարժումները, խռովությունները և հեղափոխական ցույցերը մեծ մասամբ լինում են նպատակավոր, ծառայում են ընդհանուրի օգտին և նորա ազատության, իսկ Կ. Պոլսում՝ միայն մի քանի էֆենդի աղաների չար կրքերին։

Այդպիսի հանգամանքներում խանիճապանց ամբոխը, բոլորովին անգիտակցաբար, առանց մի բան հասկանալու՝ թեքվում է երբեմն այս, երբեմն այն կուսակցության կողմը և շարժվում է նոցա պարագլուխների ձեռքում որպես մի կրավորական մեքենա։

Կ. Պոլսի վերջին պարբերական թերթերը զբաղված էին սր. պատրիարքի հրաժարման հարցով։ Նախքան խոսելը այդ խնդրի մասին, մի թեթև հայացք ձգենք Տաճկաստանի հայոց սահմանադրական վարչության կազմակերպության և նորա գործադրության ձևերի վերա։ Սահմանադրությունը Կ. Պոլսի մեջ ունի զանազան ժողովներ՝ խառն, թաղական, կրոնական, քաղաքական և այլն, և ընդհանուր ազգային ժողով։ Վերջինը, եթե կարելի է այդպես կոչել, հանդիսանում է որպես բարձր կենտրոնական կայարան ընդհանուր տաճկահայերի գործերին։

Երևակայեցեք, սահմանադրական վարչության գործադրությունը դեռ չէ անցել Բոսֆորից։ Գավառները դեռ զուրկ են յուրյանց հատուկ ժողովները ունենալուց. նոցա գործերը՝ բոլորովին անմիջակ և առանց տեղային դատարաններում քննվելու պետք է Կ. Պոլիս գան և այնտեղի ժողովների քննությանը ներկայանան։ Արդյոք ի՞նչ փաստերով և ի՞նչ ապացույցներով Կ. Պոլսի ժողովները կարող էին քննել և յուրյանց վճռահատությունը տալ, օրինակի համար, Վանի, Մուշի, Պրուսայի մեջ պատահած մի անցքին։ Գործը ձգվում է տարիներով, դատախազների և

դատարանի կողմից բացվում են անընդհատ դատագրություններ, մինչև, որպես հաճախ պատահում է, դատախազներն անձամբ ստիպված են Կ. Պոլիս դիմել և ամիսներով յուրյանց վճռաբեկների վճռին սպասել։

Մի այդպիսի վարչության ձևը ոչ միայն քաղաքակրթված պետություններում անկարելի է գտանել, այլև վայրենի ազգերի մեջ անգամ նորա օրինակը հազվագյուտ է։ Որովհետև Կ. Պոլսի Քաղաքական ժողովը երբեք չէ կարող և անկարելի է, որ կարողանա Տաճկաստանի ավելի քան երեք միլիոն հայ ժողովրդի պետքերը հոգալ և նորա պահանջմանցը լրացուցիչ բավականություն տալ, երբ որ նա, նույնիսկ Կ. Պոլսի մեջ պատահած գործերը քննելու և վճռելու անձեռնահաս է։

Հիշյալ հանգամանքները աչքի առջև ունենալով՝ սր. պատրիարքը առաջարկում է քաղաքական ժողովին կազմել երկու մասնաժողովներ, մինը՝ տեղական գործոց համար, մյուսը՝ գավառական գործոց համար, որպեսզի նոքա թեթևացնեն տարիներով վեր թափված գործերը։

Այդ պատճառով սր. պատրիարքը ներկայացնում է մի ծրագիր քաղաքական ժողովի քննությանը, որի մեջ բացատրում է նա, թե. սահմանադրության որոշ օրենքները և նորա գործադրության ձևերը անհամապատասխան են հայ հասարակության ներկա պիտույքներին, և խնդրում է նորից վերաքննել սահմանադրությունը, լրացնել նորա թերությունքը, և ընդհանուր Թուրքաբնակ հայերի պահանջմանցը հարմարավոր կացուցանել։

Քաղաքական ժողովը ոչ միայն ուշադրություն չէ դարձնում սր. պատրիարքի մի այդպիսի առաջարկության վերա, այլ արժան էլ չէ տեսնում Ընդհանուր ժողովին ներկայացնել։ Այստեղից ծագում են երկպառակության պատճառները սր. պատրիարքի և Քաղաքական ժողովի մեջ, որ, հետզհետե ավելի ծանր հետևանքներին հասնելով, Խրիմյանը ստիպված է լինում թողուլ պատրիարքական աթոռը և յուր հրաժարականը տալ։

«Մասիսի» 1419 համարում կարդալով այդ հրաժարականի գրավոր պատճենը, որ մատուցել է Խրիմյանը երեսփոխանական ժողովին, մի ցավալի տպավորություն է թողնում ընթերցողի վերա, թե ինչ անպիտան վիճակի մեջ է սահմանադրությունը Կ. Պոլսում, և որպիսի անզարգացած և չարանախանձ անձինքներից բաղկանում է նորա վարչությունը։ Օրինակի համար, քաղաքական ժողովի անդամները հայտնում են, թե սահմանադրությունը ամենևին վերաքննության կամ փոփոխության կարողություն չունի, և համարում են Խրիմյանին հակասահմանադրական, որ պահանջելով դորա, մեղանչում էր սահմանադրության սրբազնության դեմ... Զարմանալի՜ հետադեմ միտք, որ մեր դարում բոլորովին

հիվանդոտ ուղեղների ցնորք համարելու է։ Մի ժողովուրդ, որ կառավարվում է անփոփոխ օրենքներով, նա կմնա անփոփոխ անշարժության մեջ։

Այդ վեճերը քննելու համար կազմված երեսփոխանական ժողովը բոլորովին իրավացի է համարում Խրիմյանի հրաժարմանը առիթ եղող պատճառները և, նորա բացատրությունքը հարգելով, նորից հրավիրում է պատրիարքական աթոռը ընդունելու։ Սրբազան հայրիկը ընդունում է այդ առաջարկությունը։

Վերջացնում ենք մեր խոսքը նորանով, որ Կ. Պոլսի սահմանադրությունը երբեք հասնել չէ կարող յուր նպատակին, քանի որ նա Կ. Պոլսի մեջ է միայն կենտրոնանում, քանի որ չեն աշխատելու նորան նահանգային դրության վերածել և բոլոր տաճկաբնակ հայերի համար նրա գործադրությունը կարևոր կացուցանել։

ԲՈՒՐՍԱՅԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Թիֆլիսը կարելի է համարել Անդրկովկասի ամբողջ առևտրական գործունեության կենտրոնը։ Այդ քաղաքում ներս են մտնում արտասահմանից կամ Ռուսաստանից եկած ապրանքները և բաժանվում են գավառներին. այդտեղից փոխադարձաբար դուրս են գնում դեպի արտասահման կամ Ռուսաստանի մայրաքաղաքները երկրի հում բերքերը։

Գավառական վաճառականը բերում է այստեղ ծախելու ըստ մեծի մասին՝ բամբակ, բուրդ, մետաքս, չորքոտանիների կաշիներ, մաղոտ գազանների մորթիք և այլն։ Շատ անգամ նա ծանոթ չէ քաղաքին, տեղային առևտրական պայմաններին, ծանոթ չէ գներին և դեպի նոցա վարկը հավատարմություն չունի։

Շուտով մինը մյուսի ետևից հայտնվում են նորա մոտ դալալները։

— Մարտիրոս աղա, լսեցի դուք բամբակ ունեք,— հարցնում է նա։

— Այո՛, ունիմ, մի հարյուր հակ,— պատասխանում է գավառեցին։

— Քանի՞ով ես տալիս։

— Վեց մանեթով։

— էհ, ի՞նչ ես խոսում, երեկ չէ՞ր, որ Կիրակոսի բամբակը առի հինգ ու կեսով, էն էլ ամերիկի սերմից։ Էսօր մաղանդան ավելի կոտրած է, ասում են։ Մարսելից վատ դեպեշներ են ստացել, էնտեղ շատ վատ է գնում բանը։ Մին էլ քո բամբակը, ինչպես լսեցի, ջուրն ընկած է, խարար է ու խառն է...

— Եղբայր, ի՞նչ գիտես որ էդպես է, երբ դու դեռ տեսած չես իմ ապրանքը։

— Ես գիտեմ,— պատասխանում է դալալը և հեռանում է վաճառականից։

Թեև Մարտիրոսին ավելի լավ ծանոթ է յուր ապրանքի հատկությունը, այնուամենայնիվ դալալի խոսքերը թուլացնում են նորան, և հուսահատությունը տիրում է նորա սրտին, երբ լսում է, թե արտասահմանում գները իջել են։

Քանի րոպեից հետո մեր պարոն դալալը հայտնվում է խաչատուր աղայի մոտ, որո համար նա միտք ուներ գնել հիշյալ բամբակները։

— Խաչատուր աղա,— ասում է նա,— Երևանից մի հարյուր հակ բամբակ է եկել, ի՞նչ ապրանք է, ի՞նչ ապրանք է, իմ դեդու հոգին գիտենա, որ ձյունը էնպես սպիտակ չէր կարող լինել, խոտակ ամերկի սերմից է։

— Քանո՞վ կարելի է առնել,— հարցնում է խաչատուր աղան։

— Օխտը մանեթեմեն պակաս չէ տալիս։

— Թանկ է։

— Հեր օրհնած, ինչ թանկ, էսօր մաղանդան շատ բարձր է, ասում են Մարսելից լավ դեպեշներ են ստացել։ Բայց էդ մարդը խամ օքմին է, նոր է եկել, չի իմանում մաղանդան։

— Գնա, մի բան ավել, կամ պակասով վերջացրու,— ասում է խաչատուր աղան։

Հիշյալ խոսակցություններից երևում է, թե որպիսի երկերեսանի դեր են խաղում դալալները առևտրական հարաբերության մեջ։ Այդ խաբեություններին ենթարկվում են առավելապես գավառային անփորձ վաճառականները, որոնք արտասահմանի հետ հաղորդակցություն չունեն։

Դալալը պաշտոնապես ճանաչված անձն չէ։ Ամեն մարդ կարող է լինել դալալ, ով որ ուներ ճարտար լեզու, ով որ շատ երդվել ու հեշտ խաբել գիտեր։ Դալալի միջնորդությունն առնողի և ծախողի մեջ չէ լինում և չէ կարող լինել ապացույց առուտուրի հաստատության։ Ամեն մի հանգամանքում, թե առնողը և թե ծախողը կարող են դրժել յուրյանց խոսքը, քանի որ ապրանքը ծախողի ձեռքից առնողին անցած չէր, քանի որ այդ վերջինը փողը վճարած չէր։ Այդ պատճառով վիճաբանությունները վաճառականների մեջ լինում են անվերջ։

Թիֆլիսը չունի մի կենտրոն, որ հավաքեր միասին վաճառականնե-

րին և նրանց ամենօրյա գործունեության ճիշտ հաշիվներ տալ։ Այդ պաշտոնը Եվրոպայում կատարում են բուրսան և մակլերները:

Վաճառականները ցրված են զանազան քարվանսարաներում և առանձնապես վարում են յուրյանց առևտուրը։ Նրանք մինը մյուսից տեղեկություն չունի, Մինը խաբում է, մյուսը խաբվում է, որովհետև չունեն ընդհանուր գիտակցություն ապրանքների օրական գների հավասարակշռության մասին։

Այդ դժվարությունները հեշտացնում է բուրսան: Դա մի կենտրոն է, ուր օրվա մի նշանակված ժամում հավաքվում են բոլոր առևտրականները։ Խաբելը կամ խաբվելը այստեղ չէ կարող տեղի ունենալ, որովհետև լինում է առևտուրի ազատ մրցություն: Նյութերի գները և նրանց որքանությունը հայտնի են, արտասահմանյան վաճառանոցների նոր լուրերը գիտեն բոլորը, մի խոսքով, ամեն ինչ, որ կարող էր նպաստել առնողի և ծախողի գիտակցությանը, դրված են պարզ շրջանակի մեջ։

Բուրսայի մեջ միջնորդի պաշտոն կատարում են մակլերները: Նրանք տալիս են վաճառականներին ճիշտ տեղեկություններ, որք վերաբերում էին նրանց առնելու, կամ ծախելու նյութին։ Մակլերը միևնույն նշանակությունը ունի, ինչ որ մեզանում դալալը, միայն այն զանազանությամբ, որ մակլերը պաշտոնապես ճանաչված մարդ է, նա յուր վերա առել է մեծ պատասխանատվություն, եթե որևիցե խաբեություն գործ դներ առնողի կամ ծախողի դեմ։

Վերոհիշյալ հանգամանքները ի նկատի ունենալով, զգացվում է Թիֆլիսում բուրսայի կարևորությունը։

Եթե այդ նպատակը կիրագործվի, մեք հույս ունիմք, որ անդրկովկասյան վաճառականությունը կստանա մի կանոնավոր ընթացք, և առավելապես գավառացի անփորձ վաճառականները կազատվեն խաբեբա դալալների ձեռքում խաղալիք դառնալուց։

Բայց թիֆլիսցին աշխատում է յուր հագուստը, ապրուստի ձևերը միայն նմանեցնել եվրոպացուն, իսկ յուր գործունեությունը դեռ գտնվում է խավարի նահապետական դրության մեջ...

ՓՈՍՏԱՅԻ ՀԱՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Ամեն մի սահմանակից պետությունների մեջ փոստայի հարակցությունը է՛ այն դյուրացուցիչ միջոցներեն մինը, որ հեշտացնում է առևտրական հարաբերությունները և մեծ զարկ է տալիս վաճառականության։

Կես դար հազիվ է անցել, որ Պարսկաստանը բացեց յուր շրջափակ չինական պարսպները արտասահմանցիների դեմ, և եվրոպացիք սկսան այնտեղ համարձակ և ապահով մուտք ունենալ։ Այդ հարաբերությունը շատ փոքր ժամանակում այնտեղ արագ կերպով ընդարձակվեցավ, մինչ եվրոպական մեծամեծ պետությունները ունեցան Պարսկաստանի ամեն մի նշանավոր առևտրական քաղաքներում յուրյանց կոնսուլները և Թեհրանում՝ յուրյանց դեսպանները։ Թավրիզի, Ռեշտի և Թեհրանի մեջ հիմնվեցան մեծամեծ առևտրական տներ, և Եվրոպան սկսավ դուրս քաշել Պարսկաստանի հում բերքերը և փոխադարձաբար յուր գործարանների արվեստագործությունը պարսից շռայլ գործածության նյութ դարձնել։

Զննելով վաճառականության այդպիսի հսկայական քայլերին, նա յուր ընթացքի մեջ մեծ դժվարություններ է կրում և շատ արգելքների է հանդիպում դրամի փոխադրության և նամակների երթևեկության մեջ։

Ահա պատճառները.

Պարսից կառավարությունը ինքը փոստայի օրինավոր հիմնարկություն չունի և հետևապես զուրկ է արտասահմանի հետ ուղղակի հաղորդակցություն ունենալուց։ Այդ պատճառով մասնավոր անձինք միջնորդական դեր են խաղում։ Այսինքն՝ եվրոպական կոնսուլները, Ռուսաց, Ֆրանսիայի, Անգլիայի, Բելգիայի, Տաճկաստանի և այլն, դոցա ամեն մինը ունեն յուրյանց առանձին սուրհանդակները (չափարներ), որք կատարում են թղթատարի պաշտոն։

Սուրհանդակների մի նշանակված քաղաքից դուրս գնալը կամ վերադառնալը լինում է անորոշ ժամանակներով, իհարկե, այն ժամանակ միայն, երբ նոքա պետք է տանեին կոնսուլների պաշտոնական թղթերը։ Վաճառականները ստիպված են լինում ենթարկվել այդ կամայականություններին և սպասել այնքան, մինչև որևիցե կոնսուլ յուր սուրհանդակը ճանապարհ կդներ, որ նոքա ևս կարողանան յուրյանց նամակները ուղարկել։ Շատ անգամ նոքա այդ սուրհանդակների ձեռքով ուղարկում են յուրյանց արծաթը։

Մի այնպիսի երկիր, որպես Պարսկաստանն է, ուր ավազակությու-

նը մի սովորական բան է, քիչ չէ պատահում, որ սուրհանդակները կողոպտվում են։ Այդպիսի դեպքերում վաճառականը կորցնում է ոչ միայն յուր նամակները, այլև զրկվում է յուր արծաթից։ Ոչ ոք պատասխանատու չէ լինում նորա կորստին, որովհետև սուրհանդակը մի պաշտոնական կամ պայմանավոր նշանակություն չունի։ Պարսից կառավարությունը այդպիսի հանգամանքներում միշտ մնում է անտարբեր, որովհետև նորա և սուրհանդակատիրոջ մեջ որևիցե համերաշխություն տեղի չէ ունեցած։

Փոթի—Թիֆլիսյան տրանզիտի ճանապարհը բացվելեն հետո սուրհանդակների գնացքը՝ Թավրիզից Էրզրում և այնտեղից Տրապիզոն՝ համարյա դադարեցավ։ Ասպարեզը մնաց ռուսաց սուրհանդակին։ Այդ վերջինը, օրինակի համար առնենք մինը՝ Թավրիզի ռուսաց կոնսուլը։ Վաճառականները յուրյանց նամակները կամ արծաթը հանձնում են հյուպատոսարանին, կոնսուլը ճանապարհ է դնում մինչև Ջուլֆայի կարանթինը, այնտեղից հանձնվում է ռուսաց փոստային և Պարսկաստան բերվելու նամակները դարձվում է Թավրիզ։ Մինչև անցյալ տարի վաճառականները ստիպված էին ուղարկվելու նամակների ամեն մի լոտ ծանրության համար վճարել երեք կրան (90 կոպեկ), իսկ ստացած նամակի համար մեկ կրան (30 կոպեկ)։ Իսկ այժմ ստացվում է ուղարկվելու նամակների մի լոտին երեք փանաբաթ (45 կոպ.), իսկ ստացած նամակին՝ մեկ կրան (30 կոպ.)։ Իսկ լրագրների ամեն մի նոմերի համար ստացվում է մին փանաբաթ (15 կոպ.), դարձյալ սարսափելի վճարներ։

Մինչև վերջին տարիները ռուսաց կոնսուլները թղթատարության սուրհանդականոցը տալիս էին վարձով մասնավոր անձինքների, որոնք պարտավորվում էին ամեն տարի մի մասնավոր գումար վճարել կոնսուլին և մնացած օգուտները յուրյանց գրպանն էին դնում։ Այժմ բոլորը անցել է կոնսուլի ձեռքը։

Ի նկատի ունենալով այն սկիզբը, որ ոչ մի օրինավոր պետության մեջ փոստայի հիմնարկությունը չէ լինում մասնավորների շահավոր նպատակների համար, այլ նա ծառայում է ընդհանուրի օգտին, մեք բոլորովին վնասակար ենք տեսնում մի այդպիսի գործողությունը, երբ վաճառականի թղթերը և արծաթի ապահովությունը կախված կլինի մի սուրհանդակի կամայականությունից: Դորա հետևանքն այն է լինում, որ շատ անգամ (որպես հաճախ պատահել է) վաճառականը զրկվում է յուր փողերից, բավական է միայն, որ սուրհանդակը ասե, թե կողոպտվեցա:

Այդպիսի դեպքերի առաջն առնելու համար, և վաճառականների

թե՛ գրավոր և թե՛ դրամական հաղորդակցություններին դյուրություն տալու համար, խիստ անհրաժեշտ. կարևորություն կա փոստայի հարակցության Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ։

Ամեն մի պետություն յուր սահմանի մեջ, ինքն յուր կառավարության ներքո ունի փոստայի համակարգությունը։ Այդ պատճառավ պատասխանատու է լինում կորուստներին, երբ նոքա ապահովված էին։ Իսկ Պարսկաստանում, որպես մեր ընթերցողը տեսավ, այդպես չէ։ Այնտեղ ոչ միայն կոնսուլները, և ինքը կառավարությունը[1], այլ ամեն մի մասնավոր մարդ կարող է յուր հատուկ սուրհանդակը ունենալ։

Ինչո՞ւ չպետք է Պարսկաստանը անե միևնույնը, ինչ որ անում են մյուս տերությունները։ Այսինքն՝ արգելե սուրհանդակների նահապետական ձևը, հարթե ճանապարհները, փոստայի երթևեկության հարմարավոր կացուցանե և Ռուսաստանի հետ հարակցության պայման կապե։

Ռուսաստանը վաղուց է, որ խիստ մոտ հարաբերություններ ունե Պարսկաստանի հետ. այդ հարաբերությունները օրըստօրե ավելի և ավելի ընդարձակ շրջան են ստանում։ Փոստայի սերտ հարակցությունը այդ երկու պետությունների մեջ կարող է ավելի ևս ընդարձակել նոցա առևտրական հաղորդակցությունը, որպես սահմանակից և դրացի երկրների, և հետևապես մեծ օգուտ կհասցնե ուղևորության և ճանապարհների հաղորդակցության։ Փոստաների առիթով հարթած ուղիները կդառնան միևնույն ժամանակ հաճախորդների և ապրանքների փոխադրության ուղիներ։ Այն ժամանակ թե՛ ռուսաց նավագնացությունը և թե՛ Փոթի—Թիֆլիսյան երկաթուղին կհասնեն յուրյանց նպատակին։

ՀԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԽԵԼՔԸ

Ա

«Հայի վերջին խելքը գովելի է», ասում է ժողովրդական առածը։

Այդ ասացվածքի մեջ կա այնքան ճշտություն, որքան կարող է լինել ամեն մի առածի մեջ, որպես ժողովրդի սրտից և կյանքից բխած ճշմարտության մեջ։

Հայը աշխատասեր է, այո՛, նրա խնայողությունը հասնում է մինչև ժլատության, նորա ջանքը հասնում է մինչև անձնանվիրության, նա

[1] Կառավարությունը ունի կանոնավոր սուրհանդակի վարչություն Թավրիզից—Ղազվին—Զանգյան, մինչև Թեհրան, որտեղ ինքը երաշխավոր է լինում հանձնված արծաթի կորստին։

վաստակում է արժաք, միայն արժաք ունենալու համար։ Նա դառնում է հարուստ՝ ուրեմն հասավ յուր նպատակին։

Այդ նպատակին զոհում է նա ամեն ներելի և աններելի միջոցները։ Ծանոթ և անծանոթ, օտար և ազգական, թշնամի և բարեկամ՝ բոլորը նորա համար չկան։ Նա դեպի բոլորը սառնասիրտ է, նա դեպի բոլոր տիեզերքը վարվում է անտարբեր։ Ասել է, թե նա ապրում է կատարյալ եսականության մեջ։

Այդպես գործում է նա, քանի կենդանի է։

Գերեզմանի դռանը հասած ժամանակ հայը դառնում է մի ուրիշ մարդ։ Սրտի հանգած մոխրի միջից հանկարծ բոցավառվում են մարած կայծերը՝ կրոնական զգացմունքը զարթնում է...

Նա հիշում է յուր սարսափելի անցյալը, և բոլոր նորա գործերը մի քանի րոպեում սև կերպարանքով պատկերանում են նորա աչքի առջև։ Եվ իսկույն զարթած խղճի տանջանքը խառնվում է մահվան ցավերի հետ...

Մի ճար միայն գտնում է նա յուր հոգեվարքի րոպեին, հաշտվելու երկնքի հետ, այն է՝ հասարակության սեփականությունից խլած գումարը կրկին դարձնել հասարակությանը։ Եվ այդ անում է նա։

Նա յուր հարստությունը կտակում է յուր ազգին բարեգործական նպատակով ու հանգիստ խղճմտանքով մտնում է գերեզման։ Կարծես թե հային վիճակված է բարին գործել գերեզմանի միջից...

Ահա՛, հայի «վերջին գովելի խելքը»։

Բայց հաճախ պատահում է, որ այդ «գովելի խելքը» դառնում է այն սխալանքներից մինը, որոնք գործել էր հանգուցյալը յուր կյանքում։ Նորա կտակը մնում է անկատար։ Որովհետև նա չէ մտածում, որ կտակի կատարումը ենթարկվելու է այնպիսի մարդկանց խղճմտանքին, որոց համար ոչինչ բան սուրբ չկա, որք ոչ միայն յուրյանց ազգը, այլ բոլոր մարդկությունը, եթե ի մի մարմին ձուլվեր, միշտ պատրաստ էին մի հարվածով նորա գլուխը թռցնել, եթե մի այդպիսի եղեռնագործությունը խոստանում էր նորանց որևիցե նյութական շահ...

Ասածներիս ապացույց՝ բերենք մի քանի փաստեր։

Առաջ քան անգլիացվոց տիրապետությունը՝ Հնդկաստանը բաց արավ հայերի առջև մի նոր Կալիֆորնիա, ուր ոսկին, եթե կարելի է այդպես առասպելել, գետնից բուսնում էր։ Մի դարտակ ուղևորության պարկով և գավազանով այնտեղ գնացած հայ պանդուխտը հանկարծ հազարների տեր է դառնում։

Նա օտարության մեջ կյանքը մաշելով է ձեռք բերում այդ հարըս-

տությունը, իսկ մահվան րոպեին պանդուխտ հայի մտքին ուրիշ ժառանգներ չեն գալիս, բացի հայրենիքը և ազգը: Նա կտակում էր հարստությունը յուր ազգին, որևիցե բարեգործական նպատակով։

Բայց ի՞նչ եղան այդ կտակները։

Նոցանից շատերը ընկան մոռացության գետի մեջ և անհետացան... Շատերի կտակագիրը ընկան այս և այն հոգևորականի ձեռքը և նոցա շահասիրության զոհ դարձան...

Շատերը կողոպտվեցան կեղծ ազգականներից, որք կաշառելով յուրյանց վիճակավոր առաջնորդին և մյուսներին՝ շինծու թղթեր հնարեցին և Հայաստանից Հնդկաստան գնացին, կտակողին ժառանգներ ձևացան... Շատերը դեռ փտում են Էջմիածնի արխիվումը, առանց ուշադրության թողած... Մի քանիսը միայն հասան յուրյանց նպատակին, այն ևս Նալբանդյանցի նման մարդերի շնորհիվը...

Բ

Մենք ինչո՞ւ ենք զարմանում Հնդկաստանի, ասիական մի խորին անկյունում պատահած չարագործության վերա, երբ մեր աչքի առջև այս լույս օրում լինում են այդպիսի բաներ։

Արշակունիի և իշխան Արղությանի կտակների դեպքը հայտնի է «Մշակի» ընթերցողներին։ Բայց Թիֆլիսի հայ և ռուս լրագրության վերջին թերթերը բարձրացրել են մի նոր կտակի խնդիր, այն է՝ հանգուցյալ Դանիել Իզմիրյանցի կտակի հարցը։ Ահա նորա մանրամասնությունքը.

Հանգուցյալ Դանիել Իզմիրյանցը 1867 թվի մայիսի 20-ին կտակում է 120689 ռուբլի և 10 կոպեկ, այդ գումարով մի օրիորդական դպրոց հիմնելու նպատակով։ Կտակակատարներ նշանակված են լինում հանգուցյալի կինը՝ տիկին Նատալիան, ավագ եղբայրը՝ Գրիգոր Իզմիրյանցը և Դավիթ Մելիքովը։ Կտակագիրը հաստատված է եղել նոտարական ձևով, 1868 թվի սեպտեմբերի 20-ին համարավ 4852, և յուր ժամանակին ներկայանալով օկրուժնի սուդին, նորանից վավերացած է եղել։

Չնայելով այս օրինավորական հաստատություններին և նույնիսկ կտակի պարունակությանը, կտակակատարներից և ոչ մինը չմտածեց իրագործել յուր վերա դրած պարտավորությունը, այսինքն՝ չմտածեցին օրիորդաց ուսումնարանի մասին, որ էր կտակի բուն նպատակը։

Պատճառը շատ պարզ էր. դոցանից ամեն մինը ուներ շահասիրա-

կան կապեր կտակի առանց հետևանքի թողնվելու մեջ... Մելիքովը վաղօրոք հրաժարվեցավ յուր պաշտոնից։ Այնուհետև հայտնվեցան ոմանք շահախնդիրներ, որք սկսեցին աշխատել կտակը քանդելու։

Հանգուցյալի կինը՝ տիկին Նատալիան, որի համար կտակի զորությամբ որոշված էր ստանալ ամեն ամիս 500 ռուբլի, միայն նորա տոկոսիքից, ստանում է վվոդնի լիստ, բոլոր կայքին տիրապետելու, այն է՝ 120 689 ռուբ. 10 1/4 կոպ.։

Այդ միջոցին մեջ են մտնում և մյուսները, դոցանից մինը լինում է հանգուցյալի կրտսեր եղբայրը՝ Հարություն Իզմիրյանցը։ Նա բողոքում է դատարանին, թե իր եղբոր կտակը չէ կարելի օրինավոր համարել, որովհետև նա կազմվել է այն ժամանակ, երբ կտակողը յուր խելքի առողջ տրամադրության մեջ չէ եղած և յուր խոսքերի հաստատության համար ներկայացնում է մի քանի այլ փաստեր։ Թիֆլիսի պալատը գտնում է Հարություն Իզմիրյանցի գանգատը անարժան յուր ուշադրության, և նորա բողոքը հերքվում է։

Հարություն Իզմիրյանցը տալիս է կասսացիոնական աղերս Թիֆլիսի պալատի վճռի դեմ պետական Սենատին։ Սենատը թողնում է նորա աղերսը առանց հետևանքի և հաստատում է Թիֆլիսի պալատի վճիռը։

Թեև Հարություն Իզմիրյանցին չհաջողվեցավ քանդել կտակը, բայց նորա եղբայր Ստեփան Իզմիրյանցը հասավ կտակը ոչնչացնելու նպատակին, 1873 թվի հունվարի 24-ին, այդ վերջինը վեճ բաց արավ Թիֆլիսի օկրուժնի սուդում, որով պնդում էր կտակի անհաստատ լինելու մասին, ո՛չ յուր եղբոր նման պատճառ բերելով կտակողի խելքի անառողջ դրությունը, այլ հիմնվելով նույնիսկ կտակի պարունակության էական մասների վերա, գտնելով նոցա մեջ հակասություններ, անհետևողականություն, որոնցով, իբր թե կտակը դառնում էր անգործադրելի և միևնույն ժամանակ չունեցող որևիցե նշանակություն։ Յուր ապացույցները Ստեփան Իզմիրյանցը պնդում էր կտակի երկու սխալանքներով. մինը՝ վերաբերելով նորա կայքին, մյուսը՝ վերաբերելով կայքը տիրապետող անձին: Կայքի համար, ասում էր նա, կա անճշտություն, որովհետև բաժանելի տոկոսիքը, որը հաշվվում է կտակի մեջ 8400 ռուբլի, դոյացնում է հազիվ 6000 ռուբլի, տերության բանկերումը ընդունված տոկոսիքով։ Իսկ անձի մասին, ասում էր նա, թե հայտնի չէ՝ ո՞ւմն է կտակվում կայքը որպես սեփականություն։ Ուսումնարանը,— ասում էր նա,— որպես կտակը գրվելու րոպեին և նորանից հետո, չլինելով մի գոյություն ունեցող մարմին, հետևապես և չէր կարող (համաձայն 1014 և 1026 հոդ. 1 մաս, X հատ.) տեր լինել կայքին։

Սուդը, գտնելով Ստեփան Իզմիրյանցի ապացույցները արժան յուր նկատողության, վճռեց կտակը համարել անհաստատ և չունեցող ոչինչ նշանակություն։

Մեր ժողովրդական առածը ասում է. «Եզը, որ ընկնի, դանակ վերցնողները կշատանան»։ Միևնույնը պատահել է և հանգուցյալ Դանիել Իզմիրյանցի կտակի գործի մեջ։ 120 689 ռուբլին կազմում է բավականին խոշոր թվանշաններ, ո՞ւմ շահասիրությունը չէր կարող գրգռել մի այդպիսի մեծ գումարը, որ յուր դանակը սրեր և նորանից մի մասը կտրեր յուր համար...

Մենք զարմանում ենք մի բանի վերա, որ այդ բոլոր պրոցեսների մեջ, որոց համառոտ նկարագիրը տվեցինք մեր ընթերցողին, մենք տեսնում ենք միայն այն անձինքը, որոց շահերը խիստ կապ ունեին կտակի հետ... Գրիգոր, Ստեփան և Հարություն Իզմիրյանցները կտակողի եղբայրներն էին, տիկին Նատալիան՝ հանգուցյալի կինն էր, Դավիթ Մելիքովն՝ կնոջ եղբայրը... Իսկ ուսումնարանը, որի գոյության համար կազմվել է կտակը, ուսումնարանը՝ չէ հանդիսացրել ոչ մի դատարանի առջև յուր ներկայացուցիչը։

Այստեղ հարկավոր ենք համարում բերել «Тифлисский вестник» լրագրի 101 համարի այս առիթով գրված հոդվածից մի քանի տողեր... Այդ կտակը (Դանիել Իզմիրյանցի) յուր ժամանակին ներկայացրած էր օկրուժնի սուդին հաստատվելու համար և նորանից վավերացած էր, և այդ ամենից հետո ինչպե՞ս կարող էր պատահել, որ վիճմունքի ժամանակ ամենից գլխավոր և հավիտենական ժառանգը (ուսումնարանը) չունենար յուր ներկայացուցիչը։

«Մի՞թե մեր օրենսդրությունը չկարողացավ նախագուշակել, օրինակի համար, մի այդպիսի բան, որ կտակակատարները, որպես մոտավոր ժառանգներ, ուղղակի շահասիրված էին կտակը ոչնչացնելու մեջ, քան թե նորան կատարելու։ Մի՞թե, ամեն ազգերից այնքան հարգված կատարումը հանգուցյալների ցանկության, օրենսդրուն կարող էր ենթարկել կտակակատարների կամայականությանը։ Բայց եթե բարեգործական նպատակով եղած զոհաբերությունները չեն ունենալ ուրիշ պաշտպաններ, բացի կտակակատարները, ուրիշ ի՞նչ երաշխավորություն կարող է լինել նոցա կատարվելու համար... Բայց եթե, ինչպես, օրենսդրուն այդ չկարողացավ նախագիտել, այն ժամանակ կատարյալ իրավունք կա կասկածելու, որ հարյուրից ինը բարեգործական նպատակով եղած զոհաբերություններից չեն հասնի յուրյանց նպատակին ագռավների երամի որկրամոլության շնորհիվ»։

Այդտեղ, ռուս լրագիրը բերում է հոդվածները մեր օրենսդրությունից, որք նախագուշակել են այդ տեսակ դեպքերը, և օրենքը հանձնում է, օրինակ. պրիկազին՝ պաշտպանել բարեգործական նպատակով դրած կտակները։ Բայց չենք կարող չմեղադրել մեր հասարակության սառնասրտությունը դեպի մի այդպիսի զգալի կորուստը։ Հանգուցյալ Դանիել Իզմիրյանցը կտակել էր 120 689 ռուբ.՝ մի ուսումնարան հիմնելու հայ օրիորդների համար։ Ասել է թե, որպես ուսումնարանը, նույնպես նորա գոյությունը պահպանող դրամագլուխը է՛ հայ հասարակության սեփականություն։ Բայց ինչո՞ւ մեր հասարակությունը մինչև այսօր մնացել է անտարբեր դեպի յուր սեփականության կորուստը։

Ժամանակը դեռ բոլորովին անցած չէ, մեր հասարակությունը կարող է և այժմ ձեռնամուխ լինել այդ գործի մեջ, եթե նա չկամեր կորցնել յուր որդիների մի ամենասուրբ ժառանգությունը՝ ուսումնարանը։

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Երբ հանդիպում ես մի հայ օրիորդի, որ Ժորժ Սանդի կամ Տուրգենևի ռոմանը խառնած դառնում է օտարազգի ընթերցարանից, հարցնում ես նորան՝ օրիորդ, ինչո՞ւ չեք կարդում հայերեն։ Պատասխանը լինում է՝ կամ մի արհամարհական ժպիտ և կամ՝ «ի՞նչ կարդամ»։

Ի՞նչ կարդա, կրկնում ենք մենք, Նարե՞կ, Եղիշե՞, թե՞ Խորենացի։ Դոցա լեզուն այնքան հասկանալի է օրիորդին, որքան նոցա նյութը մատչելի է նորա սրտին։ Դյումայից և Հյուգոյից ոլոլեցող թարգմանություննե՞րը կարդա օրիորդը. ո՛չ, նա ծանոթ է արդեն դոցա բնագրին, կամ կարդացել է թարգմանությունը մի օտար լեզվով։

Ի նկատի ունենալով այդպիսի երևույթներ, համոզվում ենք, որ մենք, հայերս, ընթերցանության գրքեր չունենք. էլ ինչո՞ւ ենք մեղադրում մեր մանուկ սերունդը, թե նորա հեռու են պահում յուրյանց հայոց լեզվից և նորա գրականությունից։

Մի ազգ երբեք չէ կարող կրթության կատարելագործությանը հասնել, քանի նորա մեջ չէ զարգացած ընթերցանության սերը։ Իսկ ընթերցասիրությունը ամբոխի մեջ տարածելու գլխավոր միջոցներից մինը բանաստեղծական և վիպական գրվածքներն են։ Ի՞նչ գիրք կարող է լինել ժողովրդի սրտին և հոգուն այնքան մոտ, որքան մի վեպ, որը կախարդական հայելու նման պատկերացնում է յուր մեջ նորա կյանքը,

Երևան է հանում հասարակական տիպեր՝ յուրյանց գեղեցիկ և այլանդակ նկարագիրներով։ Վերջապես ի՞նչ ձայն կարող է լինել այնքան ազդու, քան թե մի երգ, որ հնչեցնում է ժողովրդին նորա ցավերը, նորա սրտի տխուր կամ ուրախ զգացմունքները։

Հայերն, իբրև արևելցիք յուրյանց տաք երևակայությամբ, որպես է նոցա շրջապատող բնությունը, սաստիկ հակումն ունեն դեպի վեպեր և դեպի ֆանտազիան առհասարակ։ Տեսնում ենք, թե քանի ախորժանոք նոքա լսում են աշուղների «հեքիաթները» և որքան սիրով կարդում են «Պղնձե քաղաքի» հիմար առասպելները, կամ Խիկար իմաստունի խրատները։ Աբովյանի «Վերք Հայաստանին», թեև նա գրված է մի գավառի ժողովրդական բարբառով, որ մատչելի չէր ընդհանրությանը, թեև յուր կրկնությունների ճոխությամբ մինչև անգամ ձանձրացնում է, այսուամենայնիվ՝ ամեն հայ սիրում է այդ գիրքը և կարդում է նորան։ Ուրեմն, բոլորովին անտեղի է մտածել, թե հայերը ընթերցասեր չեն։ Մեղավորքը մեր գրագետներն են, որ նորանց մտավոր սնունդ չեն մատակարարում։

Այդ շարժառիթներն էին, որք խրախուսեցին «Փունջի» հեղինակի վստահությունն յուր ավելի քան տասը տարվա աշխատությունները զանազան հատորներով ի լույս ընծայել։ Թեև այդ մեր կողմից մի հանդգնություն էր, փույթ չէ, միշտ պատերազմողների առաջին շարքը ընկնում են։ Եթե մի օր հայոց հողի վերա կծնվեին դյութներ, շիլլերներ և շեքսպիրներ, թող նոքա մեզ նման անձնավստահների ավերակների վերա բարձրացնեին յուրյանց գեղեցիկ և հսկայական շինվածքը։

Հանճարներն և տաղանդներն ավելի զարգացած հասարակական կյանքի արտահայտություններ են։ Թեև ես գրեցի հանգավոր տողեր, բայց, սիրելի ընթերցող, դու իմ չոր ու ցամաք և անտաշ երգերիս մեջ չես գտանելու ոչինչ բանաստեղծական։ Նոքա զուրկ են այն գեղարվեստական փափկությունից, որով մուսաների սիրելին ստեղծագործում է յուր հորինվածքը։ Բայց ես ներկայացնում եմ քեզ մի ալբոմ, ուր դու կտեսնես զանազան այլանդակված պատկերներ՝ յուրյանց բարոյական և մտավոր տգեղություններով.— դոքա մեր հասարակական կյանքի տիպերն են։ Իսկ իմ երգերն՝ արձագանք են դառն հառաչանքի…

Գուցե ոմանք կդատապարտեն մեր բացասական ուղղությունը, չընկատելով որևիցե ուրախալի երևույթ մեր ներկայացրած պատկերների մեջ։ Բայց թող մեր անձնախաբեությունը չմոլորեցնե մեզ, մենք ուրախալի ոչինչ չունենք։ Հազիվ նշմարվող լուսավոր կետերը հայոց մութ հորիզոնի վերա գուցե հրապուրում են շատերի աչքերը, բայց նոքա խա-

բուսին լույսեր են, որք անհետանում են ընդհանուր խավարի մեջ...

«Փունջը» լույս կընծայվի տասը հատորով։ Բացի առաջինից՝ մնացորդ ինը հատորներն կտպվին հետևյալ պարունակությամբ՝ II հատոր՝ վիպասանություններ

ա. Անմեղ վաճառք
բ. Ուխտյալ միանձնուհի
գ. Տնային փեսա
դ. Հարեմ (առաջին մաս)
ե. Սառա (բանաստեղծություն)

III հատոր՝ վիպասանություններ

ա. Հարեմ (երկրորդ մաս և վերջ)
բ. Բաթոններ
գ. Խաչագողի հիշատակարան
դ. Սպանդանոց
ե. Խորենացու ողբը (բանաստեղծություն)

IV հատոր՝ վիպասանություն

ա. Զահրումար (առաջին և երկրորդ մաս միասին)

V հատոր՝ ճանապարհորդական հիշատակարան

ա. Րաֆֆիի ուղևորությունը Պարսկաստանում[1]
բ. Ճանապարհորդություն Տաճկաստան (Վասպուրականի և Տարոնի նահանգներում)

VI հատոր՝ վիպասանություն

Սալբի (առաջին մաս)

VII հատոր՝ վիպասանություն

Սալբի (երկրորդ մաս)

VIII հատոր՝ վիպասանություն

Սալբի (երրորդ մաս և վերջ)

IX հատոր՝ վեպիկներ

ա. Գեղեցիկ Վարդիկ
բ. Սով
գ. Նազանի
դ. Անբախտ Հախիսամե
ե. Մի օրավար հող

---

[1] Րաֆֆիի ուղևորությունը Պարսկաստանում ընդամենը կազմված է 50 նամակներից, որոց 24-ն միայն տպված են «Մշակ» լրագրի 1872—1873 համարներում։

Հիշյալ վեպիկները տպված են «Մշակ» լրագրի 1872—1873 տարվա համարներում «Միքիրզադե» ստորագրությամբ։ Այդ իսկ հատորի մեջ կպարունակվին և Միքիրզադեի մյուս հոդվածներն, որք տպված են նույն լրագրի մեջ։ Այլև զանազան ամսագրերում տպված մեր աշխատությունները, որպես է՝ «Ախթամարա վանքը» «Հյուսիսափայլի» մեջ և այլն

X Հատոր

ա. Ներսես Ե-բդի կենսագրությունը

բ. Խրիմյանի կենսագրությունը[1]։

«Փունջի» ամեն մի հատորը միևնույն գիրքը կունենա, ինչպես առաջինը։ Եթե որևիցե պատճառով վերոհիշյալ աշխատություններից մինը չտպվի, այն ժամանակ հատորների պարունակությունը փոփոխություն կստանա։

Վերոհիշյալ նյութերն, որք պետք է կազմեն՝ բացի առաջինից՝ մնացյալ ինը հատորների պարունակությունը, բոլորը պատրաստ են, վերջացրած չէ միայն Ներսես Ե-բդի կենսագրությունը։ Որովհետև մենք պատրաստում ենք հանգուցյալի ավելի ընդարձակ կենսագրությունը, սկսյալ նորա երեխայությունից մինչև նորա մահը, այդ պատճառով այդ աշխատությունը մեր ցանկացածին պես լրացնելու համար մենք կարոտ ենք ավելի մանրամասն և ճիշտ տեղեկությունների։ Որա համար խնդրում ենք հանգուցյալի ծանոթներից հաղորդել մեզ նյութեր նորա կյանքի, գործունեության և հարաբերությանց մասին ստարների հետ։ Տեղեկությունների որքան և աննշան լինեին, դարձյալ մեզ համար թանկագին են, մենք կարող կլինեինք նոցանից օգուտ քաղել։ Եթե որևիցե կոնդակ, նամակ հանգուցյալից, չկամեին նոցա իսկականը մեզ հաղորդել, բավական են միայն նոցա արտագրած պատճենները. մենք կվճարենք փոստայի և գրագրի ծախսը։ Ներսեսի կենսագրության հետ զուգընթաց կնը-կարագրվին նույն ժամանակի էջմիածնա, մեր հոգևոր կառավարության և հայերի դրությունը, այլև ռուսաց, պարսից հետ ունեցած պատերազմը և հայերի գաղթականությունը Պարսկաստանից և Տաճկաստանից դեպի Ռուսաստան։ Մենք հուսով ենք, որ մեզ կօգնեն, և այդ մեծ մարդի հավերժական հիշատակը անմոռաց կմնա պատմագրության մեջ։

[1] Խրիմյանի կենսագրության համառոտությունը՝ «Մի քանի գծեր Խրիմյանի կյանքից» վերնագրով՝ մենք տպեցինք «Մշակի» 1873 ամի 48 համարում «Միքիրզադե» ստորագրությամբ։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Կ. ՊՈԼՍԻ ՄԵՋ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԸ

Ամեն մի հասարակության մեջ զանազան կուսակցությունները, ժողովրդական շարժումները և նորա հուզմունքը, նույն հասարակության կենդանության արտահայտությունքը են։ Ինչ հասարակության մեջ չեն երևում դոքա, այնտեղ տիրում է մեռելային անշարժությունը, ավելի պարզ ասած, այնտեղ կյանք չկա։

Ազգային մամուլը, պարբերական հրատարակությունքը, թարգմաններ են ժողովրդի պահանջների և նոցա պիտույքների։ Նոքա քննում են ամեն մի հասարակական երևույթ և յուրյանց համոզմունքին համար ուղղություն են տալիս նոցա ընթացքին։ Եվ, հետևաբար, նոցանից ամեն մինը դառնում է որևիցե կուսակցության օրգան:

Այդ լինում է քաղաքակրթված ազգերի մեջ։

Կ. Պոլսի սր. պատրիարքի և Քաղաքական ժողովի մեջ տեղի ունեցած երկպառակությունները պատճառ եղան, թե առաջինին և թե վերջինին, հրաժարվել յուրյանց պաշտոնեն[1]*։ Այդ դեպքը առիթ տվեց երկու կուսակցության բաժանմանը, որոնց մինը՝ եթե թույլ կտրվի մեզ այդպես կոչել՝* խրիմյանական, *մյուսը՝* հակախրիմյանական:

Այդ երկու կուսակցությունները ունեցան յուրյանց կողմնակիցները, ոչ միայն էֆենդիներից, այլև կաշառված մշեցի համալներից և ջրբերներից... Եվ տեղային լրագրներից երկուսը նոցա օրգաններ հանդիսացան, «Մասիսը»՝ խրիմյանականներին, իսկ «Օրագիրը»՝ հակախրիմյանականներին։

Մենք ավելորդ ենք համարում ուշադրություն դարձնել այդ երկու լրագրի մեջ ծագած բանակռվի այն կետերի վերա, ուր թողելով քննելի առարկան, անցնում են անձնականության, աշխատելով մինը մյուսի պատվին մուր քսել: Միայն կասենք այսքանը, որ հայոց լեզուն, իբրև ասիական լեզու, դժբախտաբար այնքան լի ու հարուստ է հայհոյական բառերով, որ ծանր բանակռվի մեջ նորանց գործիք ընտրողը երբեք չէ կարող հասնել մի օգտավետ հետևանքի, և նոցա պոլեմիկային վերջ չի լինիր։

Անցնենք բանակռվի բուն նյութին։

Այդ մասին Կ. Պոլսի լրագրությունը այնքան անորոշ և աննշան

---

[1] *Տե՛ս «Մշակ», 35-րդ համարը։*

նյութեր է հաղորդում, որ ընթերցողը դժվարությամբ է կարողանում հասկանալ, թե ի՞նչ առարկայի վրա է բանակռիվը: Մենք կարդում ենք նույն հոդվածների մեջ դատարկ խոսքեր՝ շատ, բայց միտք, լուրջ և եղբայրացուցիչ՝ ոչ երբեք: Որովհետև վիճաբանության բուն առարկան խեղդվում է կրքերից և ատելությունից դուրս վիժած հայհոյանքների և լուտանքների մեջ: Իսկ եթե պոլեմիկային հաջողվել էր արձակել գլխի յուր հակառակորդը մի քանի կոշտ արտահայտություններ, նա արդեն հաղթության մրցանակը տարած է համարում:

Վերջապես, այդ Տաճկաստանի հայ լրագրության ողորմելի հատկանիշն է, քանի որ նոքա չեն սովորել առողջ դատողությունը:

Խրիմյանը, հիմնվելով յուր չորս տարվա պատրիարքության փորձերի վրա, տեսնում է, որ Սահմանադրության արդի կանոնադրությունները և նույն վարչական ձևի գործադրությունը անհամապատասխան է ազգի այժմյան պիտույքներին և պահանջում է նորից վերաքննել Սահմանադրությունը և լրացնել նորա թերությունները: Յուր մի այդպիսի առաջարկությունը ապացուցանելու համար նա բերում է ժԳ հոդվածով կանոնական խնդիրներ, որոնց Սահմանադրությունը յուր տասներեք տարվա ընթացքում չէ կարողացել որևիցե հոգ տանել: Եվ դորա պատճառը Խրիմյանը գտնում է նույնիսկ Սահմանադրության թերությունների մեջ:

Ահա՛ այն խնդիրները, որք մենք քաղում ենք «Մասիսի» 1419 համարից:

Ա. Ազգային վարչությունն իբրև կենտրոնական և հանրային դրության վերածել և Կ. Պոլսո համար առանձին տեղական վարչություն մը կազմել:

Բ. Ազգային պաշտոնեության բարեխնամ կառավարության հետ ունեցած հարաբերությունն օգտակար դրության և ավելի օրինավորության վերածել:

Գ. Սահմանադրության ընտրական օգտակար սկզբունքը չարաչար չգործածելու համար ապահով և կարևոր եղանակ որոշել:

Դ. Ազգային տուրքը կանոնավորել և ընդհանրացնել:

Ե. Ազգային պաշտոնեության համարատվությունն ու համարատությունք պարտավորիչ եղանակի մը մեջ դնել:

Զ. Եկեղեցականաց ներկա անկերպարան վիճակն ու ընթացքը կերպավորել և կանոնավորել, համաձայն հայաստանյայց Առաքելական եկեղեցվո նախնի ավանդ օրինաց և ուղղության.

Է. Առաջնորդական պաշտոնավարության և համարատվության օրինավոր և անխուսափելի եղանակ սահմանել:

Ը. Ազգային վանօրեից և եկեղեցյաց կալվածներն ու եկամուտներն ապահովել և ազգի բարոյական օգտին ծառայեցնել։

Թ. Հայաստանյայց եկեղեցվո անկախությունն հաստատուն պահելու և քրիստոնեական ճշմարիտ գիտության լույսն ազգին մեջ ծավալելու համար ամեն կարևոր միջոցները ձեռք առնել և ջանալ ազգին մեջ պատահած կրոնափոխության առաջքն առնուլ։

Ժ. Ազգին մեջ ուսումն և գիտություն ծավալելու համար նոր և ազդու միջոցներ ձեռք առնելու։

ԺԱ. Ազգային դաստիարակության համար դրամագլուխ հաստատել։

ԺԲ. Նախակրթական ուսումն ընդհանրացնելու դյուրություններ գտնել և քանի մի կրոնական բարձր ուսումնարաններ բանալ։

ԺԳ. Հայոց ազգային ընտանեկան կյանքն, այն է՝ ամուսնական և բարոյական կապերն ամրապնդել, զեղծումները բառնալ, պանդխտության առաջքն առնուլ և ազգը մի հանրական ընտանիք կազմելու դրության վերածել։ Ներքին և արտաքին հարստահարությունները բառնալու համար բարեխնամ տերությանն ավելի զորավոր միջոցներ խնդրել, գաղթականությունը արգելուլ, ազգային անհատական իրավունքները պաշտպանել, որով և ազգի ամբողջությունն ապահովել։

Այդ խնդիրները, որ ազգի կյանքի և մահվան խնդիրներն են, եթե Սահմանադրությունը մինչև այսօր չէ կարողացել գոնյա մասամբ իրագործել, նշանակե, որ նորա թե կանոնադրությունքը և թե վարչությունը չունի յուր մեջ այն զորությունը, որով կարողանար հոգալ հասարակության պետքերը։ Ուրեմն Խրիմյանի ենթադրությունը Սահմանադրության վերաքննության և նրա կատարելագործության մասին բոլորովին իրավացի է։

Սահմանադրության կանոնները աստվածադրոշմ պատգամներ չեն, որք ապրեին մինչև դարերի վերջը։ Նոքա կարող են այնքան փոխվել, որքան փոխվում են հասարակության պահանջները։ Որովհետև ժողովրդի կյանքն է ծնեցնում օրենքները, և ոչ թե օրենքները ծնեցնում են նորա կյանքը։

Բայց քաղաքական ժողովը, փոխանակ քննելու, թե մինչև ո՞ր աստիճան իրավացի էր Խրիմյանի առաջարկությունը, բավականանում է մի լոկ զրպարտության բառով. «Խրիմյանը **հակասահմանադրական** է», և հաշվում է մի քանի զեղծումներ, որ նա իբր թե արել է յուր կառավարության մեջ։

Ա. Վանա Պողոս վարդապետին, առանց Կրոնական և Քաղաքական

ժողովի գիտությունը՝ աքսորելը: Բ. Ս. Երուսաղեմի խնդրի մասին ինք-նագլուխ հեռագիր քաշելը: Գ. Կիլիկիո կաթողիկոսին ավելի իրավասու-թյան արտոնություն տալը, քան գավառական առաջնորդներին: Դ. սր. պատրիարքի յուր ամսականին վերաբերյալ Քաղաքական ժողովի որոշ-ման թուղթը պատռելը: Ե. Քաղ. ժողովի հակառակ մութարա հավաքե-լը: Զ. Քաղաքական ժողովի որոշման հակառակ՝ Մշո Ս. Կարապետի վանուց մութարրայի պարտքի մասին գիր գրելու արգելը: Է. Բալուի առաջնորդին՝ խառն ժողովի որոշմանը հակառակ պաշտոնագիր գրելը: Ը. Գառը գյուղի խնդիրը: Թ. բարձ. դռան նախարարաց հետ պաշտո-նական այցելությունների խնդիրը: Ժ. ս. պատրիարքի ամսականի խնդի-րը: ԺԱ. ս. պատրիարքի Քաղաքական ժողովի հետ նախատանոք վար-վելը:

Այդ գեղծումները մինչև բնիմած չեն, մենք չենք կարող ասել, թե որքան իրավացի էին նոքա: Միայն կասենք մի բան. այն է, որ մասնա-վոր գեղծումները որևիցե իրավաբանական կանոնի դեմ՝ չէ նշանակում մեղանչել օրենսդրության ընդհանուր ոգվոյն, կամ նորա ամբողջության դեմ: Խրիմյանը, եթե ճշմարտապես այդ բոլորը արած էլ լիներ, դարձ-յալ նա Սահմանադրության թշնամի չէ կարող համարվել, և ոչ այդ առի-թով կարելի է նորան «նախասահմանադրական» կոչել: Դորա լոկ հրեա-կան ադմուկներ են, «Նա կամենում է օրենքը լուծանել...», և բնավ չեն կարող արգելք դառնալ Խրիմյանի այն առաջարկությանը, որ նա գտնում է Սահմանադրության մեջ և պահանջում է վերաքննել և լրացնել նորանց:

Թեև սր. պատրիարքի և Քաղաքական ժողովի մեջ ծագած վերոհիշ-յալ երկպառակությունները յուրյանց լուծմանը չհասած, որպես «Մշակի անցյալ համարներում հայտնած էինք, Ազգային երեսփոխանական ժո-ղովը պատրիարքությենեն հրաժարված Խրիմյանին կրկին յուր աթոռը հրավիրեց, բայց գործի քննությունը մնաց Ազգային ընդհանուր ժողովին:

Այժմ խրիմյանական և հակախրիմյանական կուսակցության օր-գանների՝ «Մասիսի» և «Օրագրի» բանակռվի գլխավոր նյութը եղած է այդ վեճը, մինը՝ «Մասիսը» պնդում է, որ Ընդհանուր ժողովի նիստը պետք է որ բաց լինի, մյուսը՝ «Օրագիրը»՝ թե գոնփակ պետք է լինի: Ամբողջ համարների էջերը այդ երկու լրագիրները մրոտում են այդ առիթով, գևսես որևիցե եզրակացության հասած չեն:

Այստեղ երևում է Կ. Պոլսի լրագրության դարտակ շատախոսու-թյունը, որ փոխանակ քննելու, թե ինչ նպատակով է կազմում Ազգ. Ընդ-հանուր ժողովը յուր նիստը, և ի՞նչ պետք է լինի նորա դատողության

առարկան, նոքա խոսում են մեկ բանի վերա միայն՝ նիստը փակ պետք է լինի, թե բաց։

Մենք չենք հերքում, որ նիստի փակ կամ բաց լինելու խնդիրը դարձյալ յուր կարևորությունը ունի։ Բայց լրագրության գլխավոր պարտավորությունը այն է, որ նախքան նիստի կազմվելը վիճելի առարկայի մանրամասնությունքը քննե, բացատրե և նորանց հասարակական կարծիքին հաղորդե, որպեսզի վեճը նախքան նիստի կայանալը բոլորովին մշակված լինի։

Օրինակի համար, վեճը ծագել է այն հարցեն, թե արդյոք հարկավո՞ր է Սահմանադրությունը վերաքննել, թե ոչ։ Խրիմյանական կուսակցության օրգանը՝ «Մասիսը», մինչև այսօր կատարելապես չբացատրեց, թե Սահմանադրության ո՞ր կետերն կարոտ էին վերանորոգության, և ոչ հակախրիմյանականների օրգանը՝ «Օրագիրը», հերքեց այդ, յուր խոսքը հաստատելու համար, թե՝ արդի սահմանադրական օրենքների լոկ տառացի գործադրությունը յուր իսկությամբ բավական է ազգի պիտույքը հոգալու, այլևս վերանորոգության կարոտություն չունի։

Բացի դորանից, Խրիմյանի ԺԳ հոդվածով, Երեսփոխանական ժողովին ներկայացրած խնդիրների վերա, որք ամենակարևոր քննության նյութերն են, մի խոսք անգամ չկա։ «Մասիսի» և «Օրագրի» բանակռիվը դեռ ձգվում է նիստի փակ կամ բաց լինելու մասին... Դորան ասում են. «Տղան չծնած, շորերը ձևել»։

Որպեսզի հասկացնենք մեր ընթերցողին, թե ինչ դատարկ սոփիզմների վերա են հիմնում Կ. Պոլսի լրագրները յուրյանց կարծիքը, հարկավոր ենք համարում մեջ բերել «Օրագրի» մի իրավաբանական հայացքը. «Ընդհանուր օրենք է ամեն երկրի և ամեն ազգի մեջ, որ անհատներու դատաստանը (՞) երկուց դատելոց կողմանց արդարացուցման փաստերը հրապարակավ լսելեն վերջը՝ դատավճռույն վճռաբանությունը դատավորք դռնափակ կընեն և դատավճիռը կհրատարակեն հետո»։

Ազգ. Ընդ. ժողովը դեռ կայացած չէ և, հետևաբար, նա չէր կարող լսել երկու դատախազների յուրյանց արդարացնելու փաստերը, ուրեմն ի՞նչ հիման վրա ժողովը կդներ յուր վճիռը։ Եթե «Օրագիրը» բավական է համարում երկու կողմից ներկայացրած գրավոր բողոքները, կամ նոցա բացատրությունքը, դա ոչ միայն մի սահմանադրական ժողովքի մեջ, այլ հոտենտոտների մեջ անգամ չի լինում, որ դատարանը (դռնփակ նիստում) միայն գրավոր թղթերի վերա հիմներ յուր վճիռը, առանց հրապարակապես լսելու՝ կամ դատախազների և կամ նոցա փաստաբանների բերանացի պաշտպանությունը յուրյանց իրավունքի։

Ահա այդպիսի մարդիկ, որք օրենքի հոտն անգամ առած չեն, վստահանում են ընդհանուր ազգի ճակատագիրը վճռել և նորա համար մովսեսներ ձևանալ...

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Այս օրերում քաղաքիս հասարակության ուշադրությունը դարձած է նորին մեծ. շահի մի հրամանի վերա, որով այստեղի նաիբ-ուլ-վուզարան, այսինքն արտաքին գործոց վեզիրի պաշտոնակալը, կախաղանի դատապարտվեցավ։

Հիշյալ անձն, որ հայտնի է անունովս Միրզա-Յուսուֆ-խան, մի ժամանակ պարսից կոնսուլ էր Թիֆլիսում, հետո Փարիզում շարժեդաֆեր եղավ պարսից կառավարության կողմից։ Նա ուսերության մեջ հանճարավոր մարդերից մեկն էր։ Այդ պատճառով, երբ Շահը յուր արտասահմանյան պաշտոնակալները (որպես եվրոպական քաղաքակրթության հմուտ անձինք) Պարսկաստան հրավիրեց յուր պետության մեջ վերանորոգություններ գործելու համար, նոցա թվում գտնվում էր և Միրզա-Յուսուֆ-խանը։ Նա բերավ յուր հետ Փարիզից ֆրանսիական օրենքներից մի քաղվածք, որը թարգմանած էր պարսկերեն լեզվով և հարմարեցրած էր Պարսկաստանի կյանքին։ Յուր այդ աշխատությունը Միրզա-Յուսուֆ-խանը առաջարկեց վերանորոգիչների ժողովին և պահանջում էր նոցա գործադրությունը։ Ժողովը կայացած էր Սադրազեմի նախագահությամբ՝ Մելքում-խանից և այլ անդամներից։ Բայց ժողովը չհասավ յուր նպատակին, որովհետև նույն օրերում թե շահի և թե բարձ. դասի ուշադրությունը դարձած էր մի այլ ամենակարևոր և անհրաժեշտ խնդրի վերա՝ այն էր Պարսկաստանի ժողովրդի կյանքի և մահու խնդիրը։

Սովը սարսափելի կերպով տարածված էր ամեն տեղ։ Կառավարությունը աշխատում էր որքան կարելի է ժողովրդի կյանքը ազատել մահից և սովի խստությունը մեղմացնել։ Այդ իսկ նպատակով Միրզա-Յուսուֆ-խանը Աշտերխան ուղարկվեցավ, որպեսզի այնտեղից ալյուր բերե աղքատներին բաժանելու համար, որու մասին կառավարությունը որոշել էր մի նշանավոր գումար։

Միրզա-Յուսուֆ-խանը կատարեց այդ հանձնարարությունը։ Բայց ինչպե՞ս։ Որպես լսում ենք, շահը Եվրոպայից դառնալեն հետո նորին մեծությանը հայտնում են, թե Միրզա-Յուսուֆ-խանը Աշտարխանից ալ-

յուր գնելու փողերից 16 հազար թուման յուր գրպանին է նվիրել... Սարսափելի անհավատարմություն, որ զրկեց գույն 16 հազար հոգի կյանքից։ Դորա հետ խառնվելով և մի քանի այլ հանցանքներ, վճռեցին նորան մեռնել կախաղանի վերա։

Ահա ողորմելի Պարսկաստանի վերանորոգիչներից մինը, որ ցանկանում էր նորան օրենքներ տալ և նորա բարությունը անօրինել...

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ա

«Մշակի» թե ներկա և թե անցյալ տարվա համարներում կարդացվեցան զանազան հոդվածներ, նամակներ և խառն լուրեր՝ մեր եկեղեցականների վերաբերությամբ։ Այդ հարցը բավականապես բազմակողմանի կերպով քննված լինելով, մենք ավելորդ չենք համարում մեր կողմից ավելացնել մի քանի կարծիքներ։

Մենք տեսանք. «քահանա» բառը լսելու ժամանակ հայը մեծ մասամբ երևակայում է յուրյան մի մարդ, որ պատրաստ էր նորա քսակից մի քանի կոպեկներ դուրս քաշելու։

Մենք տեսանք, որ ժողովրդի անհամակրությունը դեպի յուր հոգևոր հայրերի մի մասը հասել է մինչև անհավատության։ Հայը վաղ առավոտյան տերտերի երես տեսած ժամանակ մտածում է, թե, այսօր նորա գործերը չեն հաջողվի։

Մենք տեսանք, եկեղեցու սուրբ խորհուրդները՝ պսակը, մկրտությունը, թաղումը, կարգը և այլն, սուրբ սեղանի պաշտոնյաների ձեռքում դարձել են վաճառքի նյութեր։

Մենք տեսանք, հասարակական գործերում հարմարություն չունեցող ամեն մի անպետ և անընդունակ մարդ եկեղեցու պաշտոնի մեջ ընդունելություն է գտնում։ Քահանայության ծանր լուծը, որ «ընտրյալներին» միայն տանելի է, զանազան տխմարների ձեռքում խաղալիք է դառնում։

Մենք տեսանք, ուր կրոնափոխություն է պատահում, դրդիչ պատճառներից մինը եկեղեցական հայրերն են։ Ուր ուսումնարանների փողը կամ սուրբ սեղանի գանձանակն է անհետանում, ուր ժողովրդական երկպառակությունք են լինում, ուր ազգային դավաճանությունք են լինում, շատ անգամ գաղտնի մեքենան շարժողները հոգևորականներն են։

Վերջապես ինչե՞ր չտեսանք մենք...

Բ

Ի՞նչ են այդ անմխիթար երևույթների պատճառները։

Ոմանք պատճառը գտան նորա բարոյական և մտավոր անկրթության մեջ և առաջարկեցին հոգևոր բարձր դպրոցներ, կամ մի աստվածաբանական ֆակուլտետ՝ գիտնական եկեղեցիականներ պատրաստելու համար։ Այդ հայացքը թեև հեռու չէ հավանականությունից, բայց ունի յուր վնասակար հետևանքները։

Մարդկային քաղաքակրթության պատմությունը մեզ ցույց տվեց, որ հատկապես նեղ-կրոնական ուղղությամբ եկեղեցականներ պատրաստելու նպատակով հիմնված դպրոցները միշտ վնասեցին ընդհանուր կրթության զարգացմանը։ Նոքա կազմեցին կղերականների զանազան դասեր, ժողովրդի պիտույքներից բոլորովին տարբեր գաղափարներով, որք կրոնական դիմակի տակ սկսան տիրել ժողովրդի վերա, հիմարացնել նորան և հարստահարել նորա շահերը։ Այդ իրողությունը շոշափելի կացուցանելու համար, իբրև օրինակ, բավական է աչքի առաջ ունենալ եզվիտները, լազարիստները, դոմինիկյանները և այլ կղերական միաբանությունները։

Թե գիտությունը և ուսումը պետք է եկեղեցականներին, այդ հերքել ոչ ոք կարող չէ։ Բայց որոշ կրոնական ուղղությամբ մատակարարված կրթությունը միշտ խտրություն է բացում ժողովրդի և յուր եկեղեցականների մեջ, որք յուրյանց պահանջմունքներով չեն համապատասխանում միմյանց։

Կրթյալ եկեղեցականը պետք է ծագե նույն իսկ եկեղեցվո սրտից, այլ խոսքով, ժողովրդի միջից պետք է հայտնվին նորա հոգևոր և մարմնավոր պետքերը հոգացող անձինքը, որ կարողանան յուրյանց գիտությամբը բավականություն տալ այն շրջանի կարիքներին, ուսկից դուրս եկան իրանք և որին ծանոթ էին արդեն։

Այդպես վարվեցավ և մեր կրոնքի վարդապետը ինքը՝ Մեսիան։ Նա յուր աշակերտները ընտրեց գյուղերից, որոց մոտ էր Հին կտակարանի գիտությունը, և ո՛չ մի ղևտացի նորա առաքյալների թվում չմտավ։ Այդ նոր կրոնքի քարոզիչներն եղան հասարակ ձկնորսներ, բոլորովին ժողովրդական մարդիկ, որք յուրյանց ծագումով ավելի մոտ էին ժողովրդի սրտին և նորա հոգուն։

Բայց ի՞նչ է պատճառը, որ մեզանում աշխարհականներից կրթյալ և գիտնական անձինք միշտ յուրյանց հեռու են պահում եկեղեցական պաշտոնների մեջ մտնելուց։

Պատճառը խիստ պարզ է։

Հասարակական գործերի մեջ ամենաստոր պաշտոնակալը՝ դիվանատան գրագիրը, վաճառականի գործակատարը, հյուրանոցի սպասավորը, յուր աչքի առաջ ունի մի որոշյալ եկամուտ, որով նա ապահովում է յուր ապրուստը։ Բայց եկեղեցականը ոչինչ հաստատ եկամուտ ի նկատի չունի։ Նա սպասում է, որ մինը ծնե, մյուսը մեռնե, որպեսզի ինքը կարողանա շահվել։ Այլ խոսքով, եկեղեցականի եկամուտի աղբյուրները եկեղեցվո խորհուրդներն են։

Այդ դեպքում ևս մեր եկեղեցականները թշվառ դրության մեջ են։ Որովհետև թե քաղաքներում և թե գյուղորայքում նոցա թիվը, ժողովրդի քանակության համեմատելով, այնքան շատ է, որ եկեղեցվո խորհուրդներից գոյացած արդյունքը հազիվ է բավականանում նոցա ապրուստին։ Այդ երևույթի պատճառը պետք է որոնել այն իրողության մեջ, որ վիճակավոր առաջնորդները, ի նկատի ունենալով յուրյանց անձնական շահը, շատ անգամ ձեռնադրում են քահանաներ առանց ծուխի։ Խեղճ նորընծան սպասում է, սպասում է, մինչև յուր կարգընկերներից մինը վախճանվի, որ ինքը նորա տեղը անցնի։ Իսկ գյուղորայքում որոշված ծուխեր ևս չկան։ Գյուղի տները այնքան բաժանվում են տերտերների վրա, որքան ավելանում է նոցա թիվը։ Շատ անգամ ամեն մի հինգ ընտանիքը բաժանված է լինում մի քահանայի վերա։ Աղքատ գյուղացին ինչո՞վ կարող է նորա ապրուստը բավականացնել։ Բայց ո՞վ կարող էր այդ բոլոր դժվարություններին համբերել, եթե ոչ այն մարդիկը, որոնք կյանքի և ապրուստի այլ հնարների մեջ անընդունակ են յուրյանց հացը վաստակելու։ Ահա այդ է գլխավոր պատճառը, որ մեր եկեղեցականները մեծ մասամբ բաղկանում են այդ կոչմանը բոլորովին անարժան անձինքներից։

Դժբախտաբար, մեզանում, եթե կներվի մեզ այդպես ասել, քահանայությունը այժմ մի որոշ ֆասոն է կազմում, որ միայն պետք է գործե եկեղեցվո համար և ապրե եկեղեցուց։ Հասարակական գործունեության այլ շրջանները նորանից մատչելի չեն։ Չնայելով, որ Միսիայի աշակերտներից շատերը զանազան արհեստներով էին պարապում։

Գ.

Թե որքան կարևոր է մեզ համար բարվոքել մեր եկեղեցականների դրությունը, այդ հասկանալի կլինի, եթե մտածենք, թե որքան անհրաժեշտ է մեզ համար եկեղեցին և մեր կրոնը։ Մի այնպիսի ազգ, ինչպես

է հայը, որ չունի մի այլ հիմք յուր գոյությունը պահպանելու, միակ նեցուկները, նորա ազգայնությունը կանգուն պահելու համար՝ մնում են նորա կրոնքը և լեզուն։

Մենք թողնում ենք լեզվի հարցը, որի մասին շատ է խոսացվել «Մշակի» մեջ, առնենք կրոնքը։

Ավելի հեռու հայացք ձգելով մեր պատմական անցյալի վերա, մենք տեսնում ենք, որ սկսյալ հեթանոսական դարերից մինչև մեր օրերը Հայերի կրոնքը և նոցա առանձին դավանությունը միշտ եղել է մի միջնապարիսպ, որ պահպանել է նորան դրացի կամ տիրապետող ազգերի հետ խառնվելուց։ Որա ընդհակառակն, հայը շատ տեղերում փոխելով յուր կրոնքը, կորցրուց յուր ազգային գոյությունը։

Հայերի մեջ, սկսյալ հեռու հնությունից, կրոնական տարրը այնպես խորին կերպով միավորված է նորա քաղաքական կյանքի հետ, մինչ երկուքն կազմում են մի անհատական մարմին։ Բաժանել մինը մյուսից՝ անկարելի է, առանց նոցա գոյությանը վնասելու։

Բայց ո՞վ պետք է պաշտպանե մեր կրոնքը և եկեղեցին, եթե ոչ մեր եկեղեցական հայրերը։

Հայոց եկեղեցականները մեր նախնյաց ժամանակ չեն կազմել նեղ աբեղական միաբանություններ, որք անձնատուր լինեին միմիայն կրոնական պաշտամունքներին։ Նոքա միշտ մոտ են եղել յուրյանց հոտին և հոգացել են նորա թե հոգևոր և թե մարմնավոր պետքերը։ Նոքա եղել են միշտ ժողովրդական, այդ բառի բուն նշանակությամբ։

Այն դարերում, երբ Հայաստանը տարուբերվում էր մերթ հունաց և մերթ պարսից լծի տակ, տեսնում ենք մեր կղերին ոչ միայն հոգս էր տանում նա հասարակության կրթությանը և նորա ներքին բարեկարգությանը, այլ մեծ դեր էր խաղում և քաղաքական գործերի մեջ։

Թեև տեսնում ենք Վրթանես Մեծին հայ նախարարների գլուխը անցած թագավորեցնում է Խոսրովին և նորա որդի Տիրանին։

Մենք տեսնում ենք Ներսես Մեծին, շինել է տալիս աղքատանոցներ, հիվանդանոցներ։ Եվ Վալենտինոսի ու մեր Արշակի մեջ հաշտության դաշն է կապում։ Մենք տեսնում ենք նորան աքսորված, յուր քաղաքական նպատակների պատճառով, հունաց բանակայներից։ Եվ վերջապես երևում է նա Նպատ լերան վերա, Ջիրավի սարահարթի պատերազմում։

Մենք տեսնում ենք Սահակ Պարթևի հարաբերությունները երբեմն Թեոդոս կայսեր և երբեմն պարսից արքունիքի հետ, երբ Հայաստանի

դահի Հոգեվարք դրության ժամանակ աշխատում է պահպանել նորա վերջին շունչը…

Վերջապես. մենք տեսնում ենք Մեսրոպին, Խորենացուն, Եղնիկին և մեր ազգի այլ լուսատուներին, որք Հայաստանի այն ճգնաժամի մեջ, երբ մի կողմից շողում էր նորա գլխին Շապուհի և Հազկերտի սուրը, մյուս կողմից Նենգավոր Հույնը նորա անկման որոգայթն էր լարում, մտցրին մեր մեջ ուսում և կրթություն, լուսավորություն տարածեցին մեր Հայրենիքում և ծաղկեցրին մեր գրականությունը։

Բայց ի՞նչ ենք տեսնում այժմ։ Մեր եկեղեցվո սյուների տխուր ավերակները…

Դ.

Հիմնվելով ավետարանական խոսքի այն սկզբի վրա. «Որպես ձրի առացաք, նույնպես ձրի պետք է տաք», բոլորովին հակառակ է քրիստոնեական կրոնքի հոգուն, որ եկեղեցվո խորհուրդները գործադրված լինեին որպես միջոցներ նորա պաշտոնյաների ապրուստը հոգալու։ Որովհետև քանի խորհուրդները կատարվում են վարձատրության նպատակով, նոքա ոչ միայն ժողովրդի աչքում զրկվում են յուրյանց սրբազան հատկությունից, այլ ստորացնում են նորա մատակարարների համարումը ամբոխի միջում։ Այստեղից է ծագում ժողովրդի մեջ այն մինչև անելության հասած սառնասրտությունը դեպի յուր հոգևոր հայրերը։

Բայց ի՞նչ անե քահանան, նա մարդ է և, որպես ամեն կենդանի էակ, յուր գոյությունը պահպանելու համար կարոտ է սննդի։ Կոշկարարություն անելը, կամ բազարում մի բան ծախելը նորան արգելված է։ Ուրեմն ինչո՞վ պետք է նա յուր գլուխը և ընտանիքը պահե, եթե մկրտությունից և թաղումից փող չառնե։

Մենք բոլորովին համաձայն ենք Պողոսի հետ, թե. «Կալի մեջ աշխատող եզան դունչը չեն կապում»։ Եվ կավելացնենք մեր կողմից, որ եկեղեցվո պաշտոնյաները պետք է ապրեն եկեղեցուց։

Իսկ հարցը նոցա ապրուստի հնարները որոշելու մեջն է։

Այդ խնդրի մեջ մենք օրինակ ունենք մեր աչքի առջև մեզանից ավելի բարձր, քաղաքակրթության աստիճանի վերա կանգնած ազգերը, որպիսի են գերմանացիք, անգլիացիք և շվեյցարացիք։ Նոցա մեջ ամեն մի եկեղեցական պաշտոնյան ունի յուր հաստատ և որոշյալ ռոճիկը: *Ինչու մենք ևս գործ չդնենք այն ձևը, ինչ որ նոքա կազմեցին դարևոր փորձերից հետո։ Այստեղ կրոնքի դեմ դավանաբանական ոչինչ չկա։ Հար-*

ցը բոլորովին անտեսական է։ Փոխանակ թույլ տալու, որ «տերտերը» մի պսակ կատարելու ժամանակ ամբողջ քանի մի ժամ հարսանքատիրոջ հետ բազար անեն, ավելի հարմարավետ չէ՞ր լինի արդյոք, եթե եկեղեցական խորհուրդները և այլ ծեսերը կատարվեին բոլորովին ձրի։ Իսկ ամեն մի ծխական ժողովուրդը համեմատ յուրյանց կարողության վճարեին մի որոշյալ նվեր, կամ ավելի լավ է ասել հոգևորատուրք՝ սուրբ սեղանի գանձարանին։ ժողովրդից ընտրված երեսփոխանությունը կանոնավոր հաշվապահությամբ խնամք տաներ մուտքի պահպանության և այդ գումարից վճարվեր քահանաների և աստծո տան մյուս սպասավորների ռոճիկները։

Մի այդպիսի նոր կազմակերպությունը, բացի եկեղեցվո մուտքերի միջոցները դյուրացնելը, կունենա և այն օգուտը, որ կապահովե քահանաների ապրուստը և եկեղեցվո պաշտոնի մեջ մտնել ցանկացող անձինք հաստատ հողի վերա կանգնած կլինեն։ Այն ժամանակ, կարող ենք համարձակությամբ ասել, որ մեր եկեղեցականությունը կմաքրվեր անպիտան մարդերից, որովհետև կարգերը «ընտրյալներին» միայն տված կլինեին։

Մենք այդ խրողության վերա նայում ենք բոլորովին գործնական կետից։ Ուրեմն պարզենք մեր միտքը։

Մենք հիշեցինք մեր հոդվածի մեջ, թե հայոց եկեղեցականները ժողովրդական են, այսինքն՝ նոքա ընտրվում են ժողովրդի կամքով և առաջարկվում են հոգևոր կառավարությանը՝ ձեռնադրության համար։ Այդ կանոնը այնքան հին է մեր ազգի մեջ, որքան հին է նորա եկեղեցվո ինքնակառավարության սկիզբը։ Բայց դարերի ընթացքում այդ օգտակար սովորությունը կորցրեց յուր բուն նշանակությունը, պահպանելով միայն արտաքին ձևերը։ Եպիսկոպոսները սկսան մեծ դեր խաղալ, և եկեղեցվո կարգերը մեծ մասամբ գնվեցան արծաթով։

Իսկ երբ մեր եկեղեցվո մեջ կմտցվի այն սիստեմը, որ ժողովուրդը ռոճիկ կնշանակե քահանաներին, այսինքն՝ նոցա ապրուստի հոգաբարձությունը յուր վերան կառնե, այն ժամանակ նա կընտրե յուր միջից այնպիսիներին, որք թե յուրյանց գիտությամբ և թե բարոյականությամբ արժանավոր կլինեին այդ սուրբ կոչմանը։ Այլ խոսքով, «ընտրյալները» միայն կարող կլինեին եկեղեցվո սպասավորության մեջ մտնել։ Եվ այդ վերջինները յուրյանց կողմից կաշխատեին միշտ սրբությամբ կատարել յուրյանց պարտականությունը, ի նկատի ունենալով, որ մի փոքր անկարգությունը կարող էր նորանց զրկել հացից։

Ահա այդպիսով, սիրելի ընթերցող, մեր եկեղեցին կարող էր մաքրվել անպիտան սպասավորներից, և աստուծո տաճարը կփրկվեր շնորհավաճառության հանդիսարան լինելուց։

ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐ ԽՐԻՄՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

1837 թվին Վանի Այգեստան կոչված արվարձանի ուռիները շատ անգամ յուրյանց հովանու տակ հրապուրում էին մի լղարիկ բարձրահասակ պատանյակ՝ գունատ դեմքով և կրակոտ աչքերով։ Նա ամբողջ ժամերով պառկած կանաչ խոտերի վրա, յուր մտքի սրբազան հափշտակության մեջ, զմայլվում էր կամ վաղորդյան արշալույսով, կամ երեկոյան վերջալույսով և կամ, աչքերը ձգած Վանա ծովակի մանիշակագույն կապուտակի վերա, հիանում էր հայրենիքի շքեղ տեսարաններով։

Արևը մայր էր մտնում, գիշերը պատում էր, խրճիթների ճրագները վառվում էին։ Պատանին խորին մտացության մեջ տակավին այնտեղ էր գտնվում։ Կարծես թե ուռիների խորհրդական սոսափյունը, զեփյուռի հեզիկ շշունջը կախարդած լինեին նրան։

Դա Մկրտիչ Խրիմյանն էր, որ այդ նվիրական առանձնության մեջ գրում էր յուր երգերը։

Լիմ, Կտուց, Աղթամար և այլ անապատները չկարողացան յուրյանց վանդակի մեջ զսպել պատանին, և ոչ նոցա մեջ կենտրոնացած գիտությունը, Նարեկի և Այսմավուրքի ընթերցանությունը կարողացան գրավել նորա սիրտը։ Նա յուր ուսումնառության ցանկությունը լրացնելու համար գնաց դեպի Կ. Պոլիս, որ այն ժամանակ Վանի Աթենքն էր համարվում։

Նորա չքավորությունը թույլ չտվեց ավարտել որևիցե բարձր ուսումնարանում, որովհետև նա ստիպված էր միևնույն ժամանակ յուր օրական հացի համար մտածել։ Բայց իբրև ինքնուս մարդ, յուր եռանդոտ աշխատասիրությամբ, Խրիմյանը Կ. Պոլսում, մի քանի տարվա մեջ, կարողացավ այնքան զարգացնել յուր միտքը և գիտությունը, որ ընդունվեցավ որպես դասատու մի քանի դպրոցներում և զանազան ամիրաների տներում, որոնց մեջ նորա խնամակալ համարելու է Այվազյան Հովհաննես էֆենդին։

Իսկ այդ գործունեությունը երկար չկարողացավ կապել եռանդոտ երիտասարդի սիրտը Կ. Պոլսի հետ։ Նորան վաղուց տանջում էր մի նպատակ, որին մանկությունից նվիրած էր յուր անձը։ Դա էր՝ հայրենասիրության զգացմունքը։

Խրիմյանը վերադառնալով Վան՝ գտավ յուր հայրը վախճանած, բայց ավագ եղբոր՝ Մարխանի թախանձանոք, ամուսնացավ Սեիկյան օրիորդի հետ, որից ունեցավ մի աղջիկ:

Արդեն գերդաստանի հայր էր նա, երբ յուր երկու ընկերների հետ նա գնաց ճանապարհորդել Արարատ, Շիրակա նահանգը և Գողթանի գավառը, տեսավ Անին և Հայաստանի նշանավոր հիշատակարանները: Այդ ճանապարհորդության պտուղն էր նորա «Հրավիրակ Արարատյան» *գեղեցիկ բանաստեղծությունը: Յուր այդ երկասիրության մեջ Խրիմյանը թափում է սրտի բոլոր կրակոտ բոցերը, որք վառվել էին նորա մեջ հայրենասիրական զգացմունքից: Նա յուր աշակերտների ձեռքից բռնած պտտեցնում է Հայաստանը, ցույց է տալիս նորա ավերակները, այցելություն է գործում Տրդատա, Գրիգորի, Մեսրոպի, Խորենացու, Եղիշեի շիրիմներին, և նոցա գերեզմաններից կոչում է այդ անմահների ուրվականները և նորանց պատմել է տալիս Հայաստանի թշվառությունը:*

«Հրավիրակ Արարատյանը» միակ բանաստեղծությունն է մեր գրականության մեջ, որտեղ այնպես գրավիչ և ազդու կերպով երգվում են այն բոլոր ցավալի զգացմունքները, որք զարթնում են մարդու մեջ յուր հայրենիքի ավերակներին նայելու ժամանակ:

Յուր այդ աշխատասիրությունը ի լույս ընծայելու համար Խրիմյանը կրկին Կ. Պոլիս գնաց, ուր 1850 թվին տպագրեց Այվազյանի ծախսով: Նույն միջոցին նա ստացավ յուրյան բարերար և Պալյան Կարապետ ամիրային, որո օգնությամբ ճանապարհորդեց Պաղեստինը, տեսավ ս. Երուսաղեմը: Այդ ուղևորության արդյունքն եղավ նորա «Հրավիրակ Ավետյաց Երկրի» *բանաստեղծական գործը, որո մեջ հեղինակը երգում է բիբլիական աշխարհը, Մեսիայի կյանքը և նորա տնօրինությանց սրբատեղիքը:*

Այդ գիրքը ներշնչված է կրոնական սրբազան ոգևորության բոլոր սքանչելիքներով:

Այդ աշխատությունը տպագրվեցավ 1851 թվին, երևի նույն իսկ Պալյան ամիրայի ծախսով:

Խրիմյանի այդ երկու բանաստեղծությունները բավական էին նորա անունը հռչակելու և նորա գործունեության մի նոր ասպարեզ բաց անելու համար: Այն ժամանակից Տատյան Հովհաննես ամիրայի օգնությամբ Խրիմյանը գնում է Կիլիկիա, Սսո վանքի մեջ ուսումնարան բաց անելու նպատակով, այն կողմերում լուսավորություն տարածելու համար: Բայց հանդուցյալ Կիրակոս կաթողիկոսի հարաբերությունները շուտով անտանելի են դառնում նորան, գործը չէ հաջողվում, նա վերադառնում է

կրկին Կ. Պոլիս, նշանակվում է ուսուցիչ Խաս-Գյուղի օրիորդաց վարժարանին։ Նույն միջոցին հրատարակում է մի տետրակ պապի աշխարհային փառամոլության դեմ։

1852 թվին Խրիմյանը վերադառնում է Վան, նա արդեն ազատված էր ընտանեկան կապերից, որովհետև յուր կինը և աղջիկը վախճանված էին։ Նա ձեռք է զարկում Վանի մեջ օրիորդաց և աղայոց ուսումնարաններ բաց անելու, բայց յուրյան հակառակորդ է գտնում ոչ միայն տեղային առաջնորդին, այլ խավարասեր աղաներից մի քանիսին։

Նույն միջոցին Խրիմյանի գլխում ծագում է մի միտք՝ վարդապետ ձեռնադրվելու, որպեսզի այդ միջոցով կարողանա յուր գաղափարները տարածել ամբոխի մեջ։ Յուր այդ դիտավորությունը իրագործեց Խրիմյանը 1854 թվին, փետրվարի 14-ին, Գաբրիել արքեպիսկոպոսից ձեռնադրվելով վարդապետ Վարագա վանքի միաբանության վերա։

Ինչ դրության մեջ էին այն ժամանակ մեր եկեղեցականները, մեր աբեղաները և մեր վանքերը Վասպուրականի և Տարոնի կողմերում։ Հայաստանի այդ երկրում լայնատարած նահանգները մինչև այսօր ունեն յուրյանց մեջ հայերի ավելի բազմաթիվ ազգաբնակություն, քան թե Փոքր Ասիայի այլ գավառներում։ Այստեղ ամբողջությամբ պահպանված ազգային հիշատակարանները ամեն մի քայլափոխում հանդիպացնում են Հայաստանի փառավոր անցյալը։ Վանա ծովակի կղզիներում, ձորերի մեջ, բլուրների վերա հանդիպում են հոյակապ վանքեր, որք լի են կրոնավորներով և աբեղաներով։ Այդ ծույլերը, որք յուրյանց կյանքը նվիրել են Սամսոնին և Նարեկին, դուրս են գալիս յուրյանց բներից այն ժամանակ միայն, երբ պետք էր վանքապատկան կալվածների արդյունքը հավաքել, կամ թեմերից հոգևոր պատիվը ստանալ։ Այնուհետև նոքա ժողովրդի մեջ չէին մտնում, այլ ազգի արծաթն էին վայելում և նորա համար աղոթում էին... Վանքերի մեջ վարդապետների խաբեբայությունը հասել էր վերին աստիճանի կեղտոտության։ Նոքա պահում էին յուրյանց մոտ մինչև անգամ կախարդներ՝ ինքնավոր կոչված մի տեսակ խելագար վանքական մարգարեներ, որք ուշքից գնալով զանազան խաբեբա գուշակություններ էին անում, շարժում էին ուխտավորների սնահավատությունը և դուրս էին քաշում նոցանից ավելի արծաթ։

Խրիմյանը առաջինը եղավ, որ յուր օրինակով ցույց տվեց, թե վարդապետների պաշտոնը չէ այն, որ վանքերի խորշերում ազգի փողով յուրյանց փորը պարարտացնեն։ Նա հանդես դուրս եկավ որպես ժողովրդի բարեկամ և նորա գործիչ։

Խրիմյանը առաջինը եղավ հայոց աբեղաների մեջ, որ թողնելով վան-

քը և Այսմավուրքի երևակայական առասպելաբանությունքը, սկսավ եկեղեցու բեմից քարոզել ժողովրդի առօրյա կյանքի՝ նրա պիտույքների մասին, հորդորել նրան դեպի ուսում, արհեստ և գիտություն։ Նրա ատենախոսությունները նշանավոր էին յուրյանց ջերմ, աղդու և գրավիչ բնավորությամբ, որք միշտ քաշում էին դեպի աստուծո տաճարը հարյուրավոր լսողների խումբը։ Նրա քարոզների մեջ չէին հիշվում Եղիա մարգարեի, Թռդիկ ճգնավորի և Ալեքսիանոս միայնակյացի անունները։ Հայկը, Արամը, Արշակունիքը, բոլորը հարություն էին առել քրիստոնեական տաճարի մեջ։

Բայց Խրիմյանը, որպես ամեն մի հասարակական փտած կազմակերպության բարեկարգիչները, շուտով ստացավ յուրյան թշնամիների բազմություն, որոց մեջ գլխավոր տեղն էր բռնում կղերը, և Վանից հալածվեցավ։ Բայց նրա երկաթի ամրությամբ տոկուն բնավորությունը երբեք չհուսահատվեցավ։ Նա կրկին դիմեց դեպի Կ. Պոլիս, որ յուր նպատակների իրագործման օջախն էր համարում։ Իսկույն այնտեղ Խրիմյանը նշանակվում է քարոզիչ Ուսքուդարի Սուրբ Խաչ եկեղեցումը, և յուր մի տարվա ստացած արդյունքով և մի քանի բարերարների օժանդակությամբ գնում է Արապյանի տպարանից մի հնաձև մամուլ և 1855 թվից սկսում է հրատարակել «Արծվի Վասպուրական» անունով ամսաթերթը։

Խրիմյանը առաջինը եղավ հայերի մեջ, որ, պատառելով եկեղեցական նեղ-աբեղայական շրջանը, հանդես դուրս եկավ որպես պուբլիցիստ։

«Արծվին» նշանակում էր իր ջերմ, գրավողական բնավորությամբ և մինչև մոլեռանդության հասած ազգասիրական և հայրենասիրական ուղղությամբ։ Նրա գրականական այդ նոր գործունեությունը ստացավ ընդհանուր համակրություն, և «Արծվին» անսպասելի կերպով տարածվեցավ։

Բայց Խրիմյանի նպատակը չէր՝ գործել Կ. Պոլսում։ Նրա սիրտը տաշրվում էր յուր հայրենիքի մտավոր խավարի մեջ թմրած ազգայինների համար։ Այդ նպատակով կազմում է նա Կ. Պոլսում մի բարեգործական ընկերություն «Պաշտպանողական» անունով և, ստանալով Հակոբ պատրիարքից կոնդակ և բարձր Դռնից հրովարտակ, 1857 թվին յուր տպարանը և «Արծվի» ամսաթերթը տեղափոխում է Վարագա վանքում և հիմնում է այնտեղ մի գիշերօթիկ դպրոց՝ «Ժառանգավորաց» անունով։

Այդ հիմնարկությունները արժեցին այնքան դժվարությունների, որոց Խրիմյանի պես տոկուն բնավորությունը կարող էր միայն տանել։

«Ժառանգավորաց» դպրոցի մեջ Խրիմյանը հավաքեց մինչև 30-ի չափ աշակերտներ, մեծ մասամբ գյուղացիներից, այն նպատակով, որ կարողանա գյուղերի համար վարժապետացուք պատրաստել։ Առաջին անգամ Վասպուրականի մեջ, մի հայոց վանքում աշակերտները սկսան սովորել կրոնագիտության հետ զանազան լեզուներ և արհեստներ, որպես են՝ մաթեմատիկա, բնական պատմություն, աշխարհագրություն, ազգային պատմություն և այլն։

Խրիմյանը յուր ազդեցությամբ ներշնչեց, թե՛ ընտրած վարժապետների մեջ և թե՛ յուր աշակերտների մեջ, այնպիսի մի սեր դեպի գիտությունը, մանավանդ դեպի յուր անձը, մինչ բոլորը պաշտում էին նորան որպես հոգևոր։ Այդ ժամանակից ժառանգեց նա «Հայրիկ» անունը, և թե որքան առաջադիմություն ստացան մի քանի տարվա ընթացքում դպրոցի աշակերտները, այդ հայտնի է նոցա հոդվածներեն, որք տպվում էին «Արծվի» թերթերի մեջ։

Բայց Խրիմյանի Կ. Պոլսից բերած նյութական օժանդակությունները սպառված էին արդեն։ Մի կողմից տպարանի, մյուս կողմից՝ 30 գիշերօթիկ աշակերտներով «Ժառանգավորաց» դպրոցի ծախսերի պատճառավ՝ նա ընկավ ծանր պարտքերի տակ։ Միակ աղբյուրը նորա արդյունքի մնացել էր Վարագա վանքի եկամուտը, որը ժառանգավորաց դպրոցին սեփականելով, Խրիմյանը հարույց յուր դեմ Վանա առաջնորդի և մի քանի հին կլանողների թշնամությունը։ Խռովությունը մինչ այն աստիճան բորբոքեցավ, որ թշնամիները փորձ փորձեցին կաշառված քրդերի միջնորդությամբ դավաճանել նորա կյանքը։

Մի անգամ նա Վան քաղաքից ոտքով Վարագ էր գնում, երբ ճանապարհին հանդիպում է նորան մի քուրդ։ Չարագործի դեմքը գունատվում է, նորա ձեռքերը սկսում են դողալ։

— Բարեկամ, ինչո՞ւ շփոթեցար դու,— հարցնում է «Հայրիկը»։

— Ես ուզում էի քեզ սպանել,— պատասխանում է քուրդը։

— Ապա ինչո՞ւ չսպանեցիր,— անխռով կերպով Խրիմյանը շարունակում է յուր խոսքը։

— Աստված չթողեց,— ասում է քուրդը և ընկնում է նորա ոտքը ներողություն խնդրելու։

Այստեղ երևում է Խրիմյանի բնավորության բոլոր վեհությունը, որ նա այդ դեպքի առիթով ոչ միայն հանդիմանություն չէ անում յուր թշնամիներին, այլ յուր բարեկամներին անգամ անփույթ է լինում հայտնելու։

Խրիմյանը, տեսնելով, որ յուր պարտքերը օրըստօրե ծանրանում են,

թե գրքերը և թե տպարանը կործանվելու վտանգի մեջն են, նույն կառավարությունը հանձնեց ուսումնական և տնտեսական վարչություններից կազմված երկու ժողովների և ինքը դարձյալ գնաց Կ. Պոլիս։ Բայց այս անգամ գնալով այնքան օժանդակություն չգտավ, միայն կարողացավ յուր հետ բերել մի մեծ և մի փոքր մամուլներ և տպարանի համար հարկավոր պարագայք։

1860 թվի նոյեմբերի 10-ին նա ուղևորվեցավ դեպի Կովկաս, գնաց ուղղակի ս. Էջմիածին, ստացավ հանգուցյալ Մատթեոս կաթողիկոսից կոնդակ, ժառանգավորաց դպրոցի անունով օժանդակություն խնդրելու կովկասեցի հայերից։ Թիֆլիսում նա ընդունվեցավ ժողովրդի ընդհանուր համակրությամբ, և նորա քարոզները մեծ շարժում ձգեցին ժողովրդի մեջ։ Բայց հայտնի չէ, թե ինչ մրրիկ բարձրացավ, որ ի նպաստ Խրիմյանի, մինչև 10 000 ռուբլի ստորագրված արծաթը օդի մեջ ցնդեցավ, և ինքը հազիվ ճանապարհի ծախսը ստանալով հեռացավ Պարսկաստան...

Խրիմյանը յուր կյանքում շատ անգամ մեծ գումարներ ձեռք ձգեց, բայց նա մնաց միշտ աղքատ, միշտ պարտքերի տակ խրված։ Խրիմյանը խիստ անփույթ էր դեպի յուր անձնական վայելչությունքը, դեպի յուր բարեկեցությունը. նա յուր վերա ոչինչ չէր վատնում, իսկ բնավորությամբ, եթե կարելի է այդպես կոչել՝ կոմունիստ էր: *Նա որպես անհաշիվ կերպով ստանում էր, նույնպես անհաշիվ կերպով սպառում էր։ Հանդիպած աղքատին Խրիմյանը պատրաստ էր յուր վերջին* փարան *տալ և ինքը սոված մնալ։ Սեփականությունը նորա համար ոչինչ նշանակություն չուներ, երբ նա ծառայում էր ընդհանուրի օգտին։*

Բայց չնայելով յուր միշտ նյութական դժվարություններին, Խրիմյանը երբեք չվհատեցավ յուր գործունեության մեջ։ Նորա սիրտը մնաց միշտ հանգիստ, նա մինչև ֆատալիստության հասած անձնավստահ էր յուր նպատակների մեջ։

Խրիմյանը նոր ուժ է ստանում, երբ Կ. Պոլսի ազգային վարչության և պատրիարքի անօրինությամբ ընտրվում է առաջնորդ Տարոնի և ս. Կարապետի վանքի վանահայր։ Այդ վանքը միակ վանքն է բոլոր Փոքր Ասիո մեջ, որ Երուսաղեմից հետո ունի արդյունավոր եկամուտ։ Ուխտավորների բազմաթիվ խմբերը նա քաշում է դեպի ինքն ամեն տեղից, ուր կային հայեր։ Խրիմյանին այդպիսի մի վանքի եկամուտներն էին հարկավոր յուր ցանկություններին նպաստելու։ Նա անմիջապես Վարագա հին մամուլը փոխադրելով ս. Կարապետի վանքը և յուր առաջադեմ աշակերտներից երկուսը յուր հետ առնելով, գնում է Տարոն 1862 թվին օգոստոսի 20-ին յուր աշակերտ Սրվանձտյանցի խմբագրու-

թյամբ ս. Կարապետի վանքում հրատարակել է տալիս մի շաբաթաթերթ «Արծվիկ» անունով։ Նա բարեկարգում է վանքի ուսումնարանը, կանոնավորում է վանքի եկամուտները։

Իսկ այնտեղ ևս ապուշների սև երամը չէ դադարում որոգայթներ լարելու տրխաչյան «Հայրիկի» դեմ։ Քանի անգամ յուր սենյակի լուսամուտներով արձակված հրացանների գնդակներից հազիվ է ազատվում նա։ Կաշառված քրդերը այստեղ ևս մի քանի վարդապետների չարանենգության գործիք դարձան. խռովությունը օրըստօրե վտանգավոր կերպարանք ստացավ։ Պատճառը խիստ պարզ էր. Խրիմյանի վանահայր լինելը վերջ տվեց մի քանի վարդապետների շահասիրությանը, որոնք յուրյանց ձեռքն էին անցուցել վանքի բոլոր արդյունքների մենավաճառությունը։ Յուրյանց նախկին ցանկությանը հասնելու ուրիշ հնար չէին գտնում այդ անպիտանները, բացի Խրիմյանի մահը։

«Հայրիկը» յուր կյանքը ազատեց՝ փախչելով նախ Կարին և այնտեղից՝ Կ. Պոլիս։ Նորա ոսոխներից չորս վարդապետներ դատապարտվեցան աքսոր, որոնք կրկին ազատվեցան Խրիմյանի խնդրելով։ Նույն միջոցում «Հայրիկը» Կ. Պոլսում տպագրեց «Մարգարիտ արքայության երկնից» գրքույկը։

1868 թվի 20 հոկտեմբերի Խրիմյանը արեց յուր առաջին սխալը՝ Էջմիածնում ձեռնադրվելով եպիսկոպոս։ Իսկ 1869 թվի 4 սեպտեմբերի նա արեց յուր երկրորդ սխալը՝ Կ. Պոլսում ընտրվելով պատրիարք։ Նա կարծում էր, թե եկեղեցական բարձր աստիճանների վերա կանգնելով՝ ավելի օգուտ կարող էր բերել ազգին։

Խրիմյանը չէր ծնված բարձր կոչման համար, որ պատրիարքական աթոռի վերա փտեցներ յուր կյանքը և ձեռքը, որ սովոր էր մուսաների շնորհած քնարը հնչեցնել, պարապեցներ քաղաքական և կրոնական ժողովների վճիռները ստորագրելով։

Խրիմյանը հոգվով բանաստեղծ է, իսկ սրտով՝ առաքյալ։ Նա հիշեցնում է մեզ հինգերորդ դարու անձնուրաց աբեղաներին, որք հոգևոր զինվորության ցուպը ձեռքներին կրած, հուրի և սուրի միջից անցնելով պտտում էին Հայաստանում, ուսում, գիտություն և կրոնք էին տարածում։

Տասնեիններորդ դարը հայոց եկեղեցականների մեջ, բացի Ներսես Ե. չէ ծնել մի այլ մարդ, որի կյանքը լի լիներ այնքան բազմատեսակ անցքերով, որպես եղել է Խրիմյանինը։ Բայց նորա հերոսական կյանքի բոլոր վսեմությունը հանդիսանում են նորա վարդապետական օրերում, երբ կապված էր նա Վարագի և «Ժառանգավորաց» դպրոցի հետ, երբ

«Արծվի» թևերով յուր բոցավառ մտքերը տարածում էր Հայաստանում, երբ եկեղեցու բեմից հնչեցնում էր Հայկի և Արամի անունները։

Խրիմյանի պատրիարքության չորս տարին անցավ խիստ անգույն կերպով. նա մի երևելի բան չարդյունաբերեց, որովհետև նա կառավարչական մարդ չէր. այլ խոսքով, նա ուսած չէր դիպլոմատիկական խորամանկ ձևերը, որով հմուտ քաղաքագետը պտտեցնում է յուր նենգավոր մեքենան։

Արդարև, Խրիմյանը եռանդոտ, անհանգիստ և անվաստակելի բնավորություններից մինն է։ Նա սիրում է գործել, ընկնել, կանգնել և միշտ պատերազմել վտանգների մրրկածուփ խռովության հետ։ Բայց այդ բոլորը բավական չէր մի սահմանադրական վարչության գլուխ լինելու համար։

Խրիմյանը, որպես շատ բանաստեղծներ՝ իդեալիստ է։ Նա համբերություն չուներ ազգային գործերի կանոնավոր կերպով և հաջորդաբար բարեկարգվելուն։ Նա պահանջում էր հրաշքներ։ Նա կամենում էր հայոց դեռ նոր ստրկության թմրութենից աչքը բացած ժողովուրդը հանկարծ վերաստեղծել և Շվեյցարիայի նման ձևակերպել։ Խրիմյանը անհամբեր էր։ Այդ պատճառով մենք տեսնում ենք նորա բոլոր ձեռնարկությունները, բոլոր հիմնարկությունները այնքան երերուն և անտևողական են, որ օդային մեքենաների նման հանկարծ ցոլանում են և շուտով անհետանում խավարի մեջ։ Նա ամեն բան սկսում է, ամեն բան ուզում է անել, բայց խիստ սակավ է հաջողվում նորան։

Խրիմյանի խռովությունները Կ. Պոլսի քաղաքային ժողովի հետ մի այդպիսի անհամբերության ծնունդ էր։ Նա պահանջում էր վերաքննել Սահմանադրությունը, մաքրել նորան թերություններից և վերին աստիճանի կատարելագործության հասցնել։ Այդ շատ գեղեցիկ միտք էր, եթե հնարավոր լիներ։ Բայց Խրիմյանը հուսահատվեցավ, թե ինչու չեն հասկանում նորան և հրաժարվեցավ պատրիարքությունից։

Գնա՛, ազգի բարեկամ, ճակատագիրը կոչում է քեզ. պատրիարքության սահմանափակ պաշտոնական շրջանը քո տեղը չէ։ Դու, որպես Իսրայելը Բաբելոնում, միշտ կարոտում էիր քո նազելի Սալիմին՝ դա Վասպուրականն է։ Գնա՛, կրկին սիրե Վարագը, սիրե Այգեստանի ուռիները, «Արծվին» և ժառանգավորաց դպրոցը քեզ սպասում են*...

* Պարոն Մելիքզադեն պատրաստելով Ներսես Ե-րդի կենսագրությունը, խնդրում է հանգուցյալի կյանքի կամ գործունեության մասին տեղեկություններ ունեցողներից հաղորդել նյութեր ուղղակի «Մշակի» խմբագրությանը և կամ յուրյան պարոնին, հետևյալ Թարխանովի տանը, Սխոնի մոտ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ընծայելով պատվելի հասարակությանը «Փունջի» երկրորդ հատորը, մենք մասամբ հասած ենք համարում մեր նպատակին, տեսնելով, որ նորա առաջին հատորը սառն ընդունելություն չգտավ ընթերցողներից։ Այլ, ընդհակառակն, նա հարուց աղմուկ, գրգռեց հարցասիրություն, իսկ շատերի մեջ՝ գրքեր և զզվանք... Այդ բավական է մեզ, նշանակում է, որ նա ազդեց, նշանակում է, որ մեր ժողովրդի մեջ դեռ հանգած չեն կենդանի զգացմունքները...

Անտարբեր չմնաց և մեր լրագրությունը։ «Մշակը» և «Մեղուն» յուրյանց կողմից ընծայեցին «Փունջին» մի քանի վայրիվերո խոսքեր։ Ավելին սպասել չէր կարելի, երբ պակաս էր առողջ կրիտիկան կամ անաչառ քննադատությունը։

Գալով երկրորդ հատորի հրատարակությանը, այսքանը միայն կասենք, որ այս գրքի մեջ պարունակված վեպիկները մենք գրել ենք Թիֆլիսում 1872—1873 թվականներում։ Թե որքան է հաջողվել երկու տարվա ընթացքում ըմբռնել մեզ անծանոթ մի երկրի հասարակական կյանքի մի քանի երևույթները, այդ թողնում ենք ընթերցողների դատողությանը։ Բայց «Հարեմը», «Սառան» և «Ղույլուբանին» մեր Պարսկաստանում եղած ժամանակվա գրվածներից է, երբ արդեն վերադարձած էինք մեր հայրենիքը։

Մենք հարմար համարեցինք այդպիսի փոքրիկ վեպիկներով նախ զարգացնել կարդացողների ճաշակը և նոցա սերը դեպի մայրենի լեզվի ընթերցանությունը, մինչև նոքա պատրաստված կլինեին հետաքրքրվել ավելի ընդարձակ վիպասանական գրվածքներով, որոնց, եթե կհաջողվի մեզ, կմատուցանենք հետագա հատորներով։

Թող կույր վայրախոսներն ինչ որ ուզում են ասեն, մեր վստահությունը կմնա միևնույնը, ինչ որ էր առաջ։ Դափնիք վայելելու ցանկությունից հեռու ենք մենք, բայց ուրախ ենք, որ հասարակական կրթության գանձանակի մեջ կարողանում ենք ձգել մի չնչին լումա՝ մեր ունեցածն այդ է։

«ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԱ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԵՐԱ»

Խմբագրությունը ստացել անհայտ հեղինակից վերոհիշյալ վերնագրով մի տետրակ, տպված Կ. Պոլսում 1874 ամի 15 հունվարի, որ բաղկանում է 77 երեսից։ Այդ տետրակը հետաքրքրական է նրանով, որ, մի կողմից, տալիս է բավականին ճիշտ տեղեկություններ Վասպուրականի ազգաբնակությանց և նրա դրության մասին, մյուս կողմից՝ ցույց է տալիս Կ. Պոլսի Ազգ. Սահմանադրության անխնամ և թույլ ազդեցությունը տեղային հայերի վիճակը բարվոքելու համար, այլև՝ հայոց հոգևոր առաջնորդի հարաբերությունները թե՛ յուր ժողովրդի և թե՛ օտարազգիների հետ։

Վասպուրականի նահանգը յուր Վան քաղաքով ունի 180 հազարի չափ հայ բնակիչ, 40-ից ավելի վանքեր, հարյուրավոր եկեղեցիներ և բազմաթիվ թե՛ կուսակրոն և թե՛ աշխարհային հոգևորականներ։ Այդ բոլորի վերա իշխում է վիճակային հոգ. առաջնորդը։ Քրդերն, տաճիկներն ու եզդիք բնակիչների շատ փոքր և աննշան մասն են կազմում, վարում են թափառաշրջիկ կյանք և պարապում են մեծ մասամբ անասնապահությամբ։ Երկրի արհեստը, վաճառականությունն և երկրագործությունը կենտրոնացած է հայերի ձեռքում։

Վաղեմի սովորությամբ հայոց առաջնորդն ոչ միայն ընդարձակ իրավունքով իշխում է յուր վիճակի հոգևոր կառավարության վերա, այլև քաղաքական կառավարության կողմից նա համարվում է որպես ներկայացուցիչ ազգի և միջամտություն է անում նրա ամեն մի դատաստանական գործերում։ Այդ իրավունքն առաջնորդի տարածվում է՝ բացի հայերից՝ և մյուս մանր ազգերի վրա, որպես են՝ տաճիկները, քրդերն, եզդիներն և այլն։ Առաջնորդն է նշանակում վանքերի վանա-

հայերը, եկեղեցիների ծխական քահանաները, նա հսկում է նույն եկամուտների վերա։ Առաջնորդն է նշանակում գյուղերի ռեիսերը (տանուտերերը) և ամեն մի թե՛ քրեական ու թե՛ քաղաքական գործերի համար նախ դիմում են հայոց առաջնորդարանը, իսկ եթե այնտեղ դատը չէ վճռում, ապա՝ փաշային։ Իսկ փաշայի մեջլիսում ազգի կողմից նախագահում է դարձյալ առաջնորդը։

Մի այդպիսի պաշտոնը վարում էր երկար տարիներով Պողոս վարդապետը։ Այդ վարդապետի վարմունքը միանգամայն ներկայացնում է մի տխուր երևույթ՝ այդ հոգևորականը, բարձր իշխանության հասած, փոխանակ գործ դներ իր իրավունքը դեպի բարին, գործադրում է դեպի չարը։ Պողոս վարդապետը հանդիսանում է այն հնուտ որսորդներից մինն, որ շատ լավ ուղղել գիտե յուր զենքը նպատակին դիպցնելու համար։ Նա կշռել էր յուր ուժը, նա գիտեր, որ յուր ժողովուրդը Բարձ. Դռան առջև ձայների ավելի մեծ բազմություն էր կազմում։ Կառավարության ամեն մի պաշտոնակալը՝ փաշան, գայմագամը, դադին, մեմուրը, զափթիան՝ ստիպված էին հնազանդել Պողոս վարդապետին և նորա հաճույքին համեմատ վարվել, որովհետև, հակառակ ընթացքում՝ նոքա զրկված կլինեին յուրյանց տեղերեն։ Բավական էր հայր սուրբի մի խոսքը, իսկույն պատրաստ էր ժողովրդից մի հանրագրություն, հազարավոր ստորագրություններով, փաշայի կամ գայմագամի դեմ։

Այդպիսի միջոցներով ենթարկելով յուր ազդեցության կառավարության պաշտոնակալները, Պողոս վարդապետը հասնում է այն իրավունքին, որ կարողանում է տիրել և մանր ազգությունների, որպես են քրդերի իշխանների վերա։ Յուզբաշի Ալի աղան, Ջալալ էմիրը, Շեմսկի Տրպոն, Պաշկալայի Քոռ էմիրը, բոլորը հպատակում են նորան։ Նորտուզա Տրպալ աղան, որ Հոգվոց վանքը թալանեց. Շատախու Գյուլ-Մեհմեդը, որ տեղային եկեղեցիները կողոպտեց և յուր անասունների գոմեր դարձրուց, Մոդաց երկրի Ավդալ բեկը, որ Ներսեսի պես նշանավոր հային սպանեց, Դեվրիշ բեյը՝ այն հազարավոր հայերի արյունը թափող խան-Մահմուդի եղբայրը և Մուքուրզվոց Մահմեդ Ալի աղան, որ Սալթմանից եկեղեցին պղծեց՝ բոլորը Պողոս վարդապետի ամենահավատարիմ բարեկամներն են դառնում։ Եղբայրներ աղաները Ջաֆոն և Սաառն, Հեյտարանցվոց բազմաթիվ ցեղապետները, նույն գլխավորը Ալի աղան, որք Տաճկաստանից կողոպտելով անցնում են Պարսկաստան և այնտեղից կողոպտելով պատսպարվում են Տաճկաստանում՝ այդ բոլոր չարագործները գաղտնի կապեր են կցում Պողոս հայր սուրբի հետ և նորանից կախումն ունեին։ Ինչո՞ւ։ Որովհետև Պողոս հայր սուրբը փա-

շային շատ մոտ մի անձն է, եթե այդ ավազակապետներից մինը մեղադրվում էր որևիցե հանցանքի մեջ, միշտ կարող էր նորա միջնորդությունից օգուտ քաղել և ազատվել։

Պողոս վարդապետն յուր պաշտպանությունը դեպի վերոհիշյալ ամենասոսկալի ավազակապետները գործ էր դնում ոչ միայն այնպիսի դեպքերում, երբ նոքա որևիցե չարագործություն էին անում օտարներին, այլև երբ հարստահարվածները լինեին նույնիսկ յուր ժողովուրդը՝ հայերը։ Անուրանալի է այն անցքն, երբ Մուքուրցվոց Մահմետ Ալի աղան Սաթմանից եկեղեցին կողոպտեց և պղծեց, երբ տարվում էր նա Պոլիս պատժվելու համար, կես ճանապարհից, այն է Կարինից, ետ դարձավ Պողոս հայր սուրբի պաշտպանությամբ։

Այլ փաստեր.

Պողոսի պաշտպանությունը վայելող հեյդարանցի քրդերը Խժիշկ գյուղի եկեղեցին կկողոպտեն. հայր սուրբը գյուղացիներին 6000 ղուրուշ ընծա հավաքելով կտա ավազակների գլխավորին և կողոպուտը ետ կգնե։ Մի հայոց եկեղեցի պղծել տվող Մեհմետ Ալիին ազատելու համար Պողոսը կառավարության ատյանի մեջ վկայում է, թե չարագործն, անչափահաս մանուկ լինելով, ազատ է պատժվելուց, մինչդեռ նա ահագին մորուք ուներ։ Կոճա աղան Շերիֆը ճանապարհին մի խավենցի հայ կին է բռնաբարում և՝ ազատվում է հայր սուրբի օգնությամբ։ Շատ անգամ ինքը հայր սուրբը այդպիսի անիրավությունների միջնորդ էր դառնում, որպես է այն դրամատիկական անցքը, երբ զորապետ Ֆերիկ փաշան Պողոսեն մի հայ կին է ուզում, նույն միջոցներում արհեցի Պետրոսն յուր կնոջ ծեծած լինելով, հայր սուրբը լսում է և, բերել տալով, փաշայի մոտ է ուղարկում։

Ի՞նչ էր պատճառն, որ Պողոս վարդապետը կապեր ուներ այդպիսի եղեռնագործների հետ։ Պատճառը շատ պարզ է։ Երբ նոքա հափշտակում էին, հայր սուրբը մասն ուներ կողոպուտի մեջ։ Երբ նոցա ցեղերի մեջ որևիցե մարդ կամենում էր վաճառականության առիթով կամ այլ գործով գնալ, յուր անձի և ապրանքի ապահովության համար ստիպված էր հայր սուրբից մի հանձնարարական թուղթ առնել այս կամ այն իշխանի վերա, իհարկե, միևնույն ժամանակ ընծայելով հայր սուրբի «աջահամբույրը»։ Բացի դոցանից, այդ ավազակներից ամեն մինը, լինելով միևնույն ժամանակ մի ամբողջ ցեղի իշխան, նոքա միշտ պատրաստի գործիքներ էին հայր սուրբի ձեռքում յուր հակառակորդներին սարսափեցնելու համար և երկրի մեջ ցանկացած խռովությունները հարուցանելու համար։

Օրինակի համար Տփխիսից Վանա երկու անապատներին հատկացյալ մի կտակի մասին Պողոսի և Թափուզյան հայր սուրբի մեջ անհամաձայնություն է բացվում։ Քանի օրից Թափուզյանի վանահայրությանը ներքո գտնվող անապատի խոտի մարագները հրդեհվում են, վնասը հասնում է մինչև 30 000 ղուրուշի։ Չարագործը հայտնվում է Պողոսի հավատարիմ քրդերից մինը։

Մի այդպիսի ճարպկությունն, որով Պողոս վարդապետը կարողացավ հպատակեցնել յուրյան թե՛ տեղային կառավարության ներկայացուցիչներին և թե՛ թափառական ցեղերի զանազան իշխաններին, մենք վերաբերում ենք նորա ամենահնարագետ խորամանկությանը և հմուտ քաղաքականությանը։ Արդարև, նա երևում է բարձր բնավորության տեր մարդերից մինը։ Եթե նա յուր այդքան ազդեցությունը գործ դներ դեպի ժողովրդի բարօրությունն, անուրանալի է, որ Վասպուրականի հայերը կարող կլինեին շատ բարիքներ վայելել։ Մենք չենք հերքում այն բանը, որ, Վասպուրականի նման նահանգում, ուր առաջնորդը ժողովրդի և՛ հոգևոր, և՛ մարմնավոր գլխավորի ներկայացուցիչն է, նորան մինչև անգամ հարկավոր է մյուս մանր ազգությանց իշխանների հետ կապեր ունենալ, կառավարության հարստահարությունների առաջն առնելու համար։ Բայց երբ որ մի այդպիսի մարդն յուր ուժերը դեպի չարն է գործադրում, այդ ներելի չէ։

Բայց շուտով Պողոս վարդապետը անտանելի է դառնում ժողովրդին, և սկսում են անդադար և ձիգ բողոքներ դեպի Կ. Պոլսի Ազգ. Վարչությունը։ Պատրիարքարանի 1860 թվից սկսյալ արձանագրություններից հանելով, տետրակի հեղինակը հիշում է հետևյալ հանցանքները. ա. Վանա Այգեստանի մեջ կասկածավոր կնոջ տունը հաճախելը. բ. Յուր սիրելի նժույգը գինիով արբեցնելը, և, արհեստական կատաղությամբ վարժեցնելով, նորանով զվարճանալն. գ. ավանցի Մանուկի կինն ամուսնի կենդանության ժամանակ ուրիշին հետ պսակել տալն. դ. ռեիս (տանուտեր) Սինանին ծեծի տակ անողորմաբար կաշին քերթելը. ե. արտաշենցի քահանային մահու չափ գանակոծելը. զ. սխկայեցի ռեիս Գրիգորին չարաչար ծեծելով աչքերը կուրացնելը. է. Հարության ժամկոչին նույն վիճակի մեջ գցելը. ը. Վարդավառի տոնախմբության օրում, Վարագա վանքի մեջ, Դրախտ անվանյալ պարտեզում, Ըրղատ-բաշի Հակոբի հարսին հետ ունեցած կամեդիան... թ. Մի փոքրիկ երեխայի գողության համար մորը ժամկոչին շալակն տալով չարաչար ծեծելը. ժ. ժողովրդից անասելի բռնաբարությամբ փող հավաքելը՝ տաճիկների համար զորանոցներ շինելու և այլն։

Վերոհիշյալ հանցանքները մանրամասնաբար բացատրելուն հետ տետրակի հեղինակը մեջ է բերում մի քանի նշանավոր անձինքների նամակներն, ուղղած Պոլսի պատրիարքին, որոնք նույնպես երևան են հանում Պողոսի այլ մեղադրանքներն, որոնք մենք ավելորդ ենք համարում հիշել։

Ազգ. Վարչությունն, ուշադրություն դարձնելով ժողովրդի բողոքներին, Պողոս վարդապետին բերել է տալիս Կ. Պոլիս քննության համար, նրա տեղը նշանակելով Իգնատիոս եպիսկոպոսին։ Իսկ Պողոսը Պոլսից փախչում է, կրկին վերադառնում է Վան և, յուր հին բարեկամները գըլխին հավաքելով, հարձակվում է Առաջնորդարանի վերա և արյունահեղությանց պատճառներ է տալիս։ Այնուհետև նա սկսում է յուր հին գիրը խաղալ։ Անապատի վանքի հարստությունը վատնում է զանազան անբարոյականների հետ, մինչև անգամ նույն վանքի վարդապետների հետքում Դերվիշ բեկին հետ չենկի (պար եկող պատանի է) խաղցնում։ Եվ Կտուց Անապատի միաբան Ռափայել վ. Պողոսից չարաչար ծեծվելով, ոսկորները փշրվում է և մեռնում է։ Այնուհետև նա սկսում է վրիժխնդիր լինել այն անձանց, որք նրա մասին Պոլսում բողոքել էին։ Դրանցից մինն էր Տ. Օհաննեսյան Կարապետը։ Պողոս վ. գիշերով յուր երեխլի քուրդ գերվիշին մի քանի ծառաների հետ ուղարկում է Տ. Օհաննեսյանի տունը. անկողնից քարշում են և ձեռքն ոտքը կապած բերում են Պողոսի մոտ։ Հայր սուրբն յուր զոհին պառկեցնում է, գլուխը Նազար անուն ծառային բռնել տալով և ոտները՝ ուրիշներին, յուր հաջի ռանտապով[1] այնքան ծեծում է, մինչև երիտասարդի բերնեն արյուն է հոսում և շատ չէ տևում, որ մեռնում է։

Այնուհետև տետրակի մեջ նկարագրվում է Պողոսի մինչև նիտանի չափ զարմանալի բարբարոսությունները, որք արտահայտում են նրա զազանային, ցած և անբարոյական բնավորությունը։ Մենք լռում ենք դրա մասին, որովհետև չենք ուզում զզվեցնել ընթերցողին։

Նորից բողոքները թափվում են դեպի Պոլսի Ազգ. Վարչությունը։ Քաղաքական ժողովը գործը զցում է Կրոնական ժողովին, վերջինն այդ խնդիրն յուր վերա չէ առնում։ Խրիմյանը ստիպված է լինում ինքնին գործի վճիռը տալ. Բարձ. Դռան հրամանով և յուր պատրիարքական բազերով, Պողոսին Վանից աքսորելով, Ուչ Քիլիսայի վանքն է ուղար-

---

[1] «Հաջի ռանտապ» Պողոսի ահագին մաքրածեծ փայտի անունն է, որի վերա Թուրքերեն գրել էր տված՝ «Դա հաջի ռանտապն է, մոլորվածներին կդարձնե դեպի ուղիղ ճանապարհ»։

կում[1]: Այնտեղ Պողոսն անտանելի է դառնում, աքսորը դարձյալ Խրիմյանի հրամանով փոխվում է Կարին: Բայց Կարինում Պողոսը նույնպես հանգիստ չէ մնում. նորա հին բարեկամների, քրդերի զանազան իշխանների գաղտնի և հայտնի հարաբերությունները նորա հետ դարձյալ շարունակվում են: Պողոսը Կարինում դառնում է ոչ միայն անտանելի, այլև վտանգավոր: Այնտեղից բողոքում են Պոլսի Ազգ. Վարչությանը Պողոսի աքսորանքի տեղը փոխել: Ազգ. Վարչությունը մի քանի «պատգամաւորների» միջնորդությամբ որոշում է՝ ներկա հունվարի 10-ին, որ Պողոսը Բարձ. Դռան հրամանով կրկին Վան երթա և մնա Անապատում, այն անապատում, որտեղից նա քանի տարի առաջ ապստամբինյալ քուրդերով Վանա առաջնորդարանին վերա հարձակվելով և խեղճ Իգնատիոս եպիսկոպոսի գլխին այն սարսափելի դրաման խաղաց:

Պոլսի Ազգ. Վարչության մի այդպիսի որոշումը մեծ խռովություն է բարձրացնում Վասպուրականի մեջ: Ժողովուրդն ամենևին չէ ուզում այն մարդին կրկին յուր մեջ ունենալ, որից այնքան չարիքներ կրած էր: Բայց Ազգ. Վարչությունը, բոլորովին անտես առնելով ժողովրդի բողոքը, մնում է հաստատ յուր որոշման վերա, որովհետև Պողոսին պաշտպանողները ժողովրդի մի քանի նշանավոր անձինքներն էին[2]:

Ինչո՞վ է վերջանում այդ խռովությունը: Ժողովրդի ներկայացուցիչները վերոհիշյալ տետրակը առաջարկելով Պոլսի Ազգ. Վարչությանը, երեսները դարձնում են այդպիսի խոսքերով. «Եթե Ազգ. Վարչությունը նորեն անփոփոխ պահե իր ըրած որոշումը, մեզ կմնա վերջինը համարել խոհեմություն... և դիմել բարձրագույն կառավարության ներկայացնելու մեր այս կենաց և մահու խնդիրը... Ալ ապա պիտի մնա մեր խիղճը, մեր պատիվն ալ»:

Մենք հուսով ենք, որ Պոլսի Ազգ. Վարչությունն այնքան խոհեմ կլինի, որ չի արհամարհի ժողովրդի ձայնին, որպես ճշմարտության ձայնին, ի նկատի ունենալով այն սարսափելի հետևանքն, որ կարող է ծագել այդպիսի դեպքերից: Որովհետև երբ Ազգ. Վարչությունը, չհարգելով ժողովրդի բողոքները, նորանց առիթ կտա դիմել Բարձ. Դռանը,

---

1 Խրիմյանի այդ արդարադատ վարմունքն էր, որ վերջապես Պոլսի Քաղ. ժողովի կողմից նորա վերա դրած մեղադրանքներից մինը համարվեցավ:

2 Յարյանց անխիղճ շահերը հաջողցնելու համար Պողոսի պաշտպանությունը վայելում էին և մի քանի հայ աղաներ, որպես են Վանա կոմպանիաները, որք նորա միջոցով կարողանում են օրինավոր կերպով հարստահարել աղքատ գյուղացիներին:

այսպիսով նա ինքը ճանապարհ կբացանե հայերի դեմ՝ դեպի տաճիկների դիվանատները դիմելու:

Այդ է կառավարության իսկական նպատակը։ Երբ որ այդպիսի դեպքերը կկրկնվեն հաճախակի, կառավարությունը մի օր կասե. հայեր, մենք տվեցինք ձեզ սահմանադրություն և ազգային ինքնակառավարության իրավունքներ, բայց դուք անընդունակ եղաք վարելու, ուրեմն ետ տվեք։ Արժե՞ արդյոք մի այդպիսի կորուստ զոհել մի քանի շահասեր «պողոսյանների» հաճույքին, որք Խրիմյանի անկումից հետո աշխատում են Պողոսին այդ միջոցով կրկին Վանա առաջնորդության աթոռը նըստեցնել...

ԴԱՎՐԵԺԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՐՑԸ

«Մշակի» արդեն երրորդ տարվա ընթացքում սակավ չէր այն նամակների և հոդվածների թիվն, որոնք արտահայտում էին Ատրպատականի ժողովրդի բողոքը դեպի Դավրեժի վիճակային առաջնորդը։ Այդ թեև մի կողմից տխուր, մյուս կողմից շատ ուրախալի երևույթ է, որ երևան է հանում այն իրողությունը, թե ժողովուրդն արդեն արթնացել է, նա յուր հովվին համապատասխան չէ գտնում յուր պիտույքներին և ո՛չ բավարար յուր ընթացքին և ուղղությանը. մի խոսքով, ժողովուրդն նրանից ավելի է պահանջում:

Անհերքելի է, որքան ավելի բազմանում է մի ժողովրդի պահանջները և նրա պիտույքների քանակությունն, այնքան ավելի ծանր պարտականություն է ենթարկվում նրա առաջնորդող անձն, որ պիտի գոցանե այդ պահանջները։ Բայց ի՞նչ ենք տեսնում։ Ժողովուրդը կանոնավոր դպրոցների պետք ունի, նա կարոտ է օրինավոր քահանաների, նրա եկեղեցական արարողությունքն անկարգ դրության մեջ են, նրա ժամատների պանձանակը վատնվում է... վերջապես, ինչե՞ր չեն պատահում... Դոցա բոլորի վերա պետք է հսկե առաջնորդը։ Բայց առաջնորդն ի՞նչ է անում։ Նա անհոգ յուր սենյակում նստած, երբ մի հարուստ մեռնում է, առատ փող առնելով նրա դագաղը մինչև գերեզմանատան ճանապարհի կեսը հասցնում կամ այս և այն գեղից մի քանի այբ-բենի կտորտանքն փորում ունեցող տիրացուներ ձեռնադրում և յուր վարձը ստանում...

Ասածներիցս երևում է, առաջնորդն, որ պետք է առաջնորդեր, ուղղություն տար ժողովրդի առաջադիմությանը, որ պիտի մտցներ նրա

մեջ ավատատիրական ոգին, ինքը բավականին հետ է մնացել: Նրա ուսումը, նրա կրթությունը, վերջապես նրա անձնական հատկություն-ները անգամ համապատասխան չեն ժողովրդի պետքերին: Այդ մի սար-սափելի, միևնույն ժամանակ վտանգավոր հայտնություն է, երբ ժողո-վրդի և յուր հոգևորականների մեջ բացվում է մի այդպիսի անդունդ, մանավանդ մի այդպիսի ժողովրդի մեջ, որպես հայն է, որ պետք է շատ սերտ կապերով կապված լինի յուր հոգևորականների հետ:

Որովհետև մեր խոսքը Դավրեժի առաջնորդի վերա է, դառնանք դե-պի այդ հարցը:

Դավրեժի վիճակավոր առաջնորդը իշխում է ամբողջ Ատրպատա-կանի հայերի վերա: Նրա իշխանությանը ենթարկվում են հիշյալ գա-վառների հայերը՝ Մակու, Խոյ, Սալմաստ, Ուրմի, Սուլդուզ, Սովուխ-Բուլաղ, Մարաղա, Ղարադաղ և վերջապես Դավրեժ քաղաքի հայ ժո-ղովուրդը: Հիշյալ գավառներում հայոց ազգաբնակության քանակության մասին ուղիղ համար տալ կարող չենք, որովհետև չունենք աչքի առջև վիճակագրական ճիշտ թվանշաններ:

Պարսից կառավարությունը ճանաչում է հայոց առաջնորդին իբրև յուր ժողովրդի թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր ներկայացուցիչ և ամեն մի հայերին վերաբերյալ հարցերում դիմում է դեպի առաջնորդը: Կա-ռավարությունը նաև չէր արգելում առաջնորդին միջամտության գործել յուր ժողովրդին վերաբերյալ ամեն մի խնդիրների մեջ: Հայոց առաջ-նորդը միևնույն իրավունքներն է վայելում, ինչ որ ունեն եվրոպական պետությունների կոնսուլները և դեսպաններն յուրյանց հպատակների վերաբերությամբ:

Իհարկե, մի այդպիսի անձն անընդհատ հարաբերություններ ունի Բարձ. Դռան կամ Պարսից առաջնակարգ դիվանատների հետ: Ազգա-յին խնդիրները և դեպքերը միշտ կան՝ այսինչ գյուղից թուրքը մի հայ աղջիկ է փախցրել, այնինչ գյուղի ժամատունը թուրքերը կողոպտել են, այսինչ գյուղացուց խանն անիրավ տուգանք է առել և այլն:

Առաջնորդը պետք է լինի բավականին գործունյա և քաղաքագետ անձն և միևնույն ժամանակ հմուտ պարսից պոլիտիկային, որ կարո-ղանա այդ բոլոր անկարգությունների առաջն առնել: Բայց ինչպե՞ս է լինում: Որևիցե վանքի պարիսպների մեջ թթված մի վարդապետ կամ եպիսկոպոս ուղարկվում է Դավրեժ առաջնորդ լինելու համար: Նա չգի-տե երկրի սովորությունները, ծանոթ չէ պարսից կառավարչական ձևերի հետ, որ պահանջում է ավելի հմտություն, քան թե մի քաղաքակրթյալ պետության մեջ: Այդպիսի դեպքում, առաջնորդն, փոխանակ դարման

տանելու ժողովրդի ցավերին, նորան ավելի հալածանքի է ենթարկում, բացի դորանից, նա ստորացնում է առաջնորդության պատկանող արտոնության վարկը:

Բացի քաղաքական գործերը՝ Ատրպատականի առաջնորդն ունի, եթե կարելի է այդպես ասել, մի անխղճելի պատերազմ ավելի վտանգավոր թշնամիների հետ, դոքա են կաթոլիկ և բողոքական միսիոնարները, որք մտել են տեղային հայերի մեջ։ Նոքա ունեն ավելի ույժ, բայց են արել անվարձ ուսումնարաններ, ձրի բաժանում են գրքեր, ունեն տպարան, ունեն պատրաստված վարժապետներ և քարոզիչներ, վերջապես ունեն կոնսուլներ և դեսպաններ, որոնց միջնորդությամբ կարողանում են ազատել յուրյանց հետևողներին զանազան հարստահարություններից, և այդ ավելի է գրավում անպաշտպան ժողովրդին դեպի նոցա կողմը:

Բայց հայերն ի՞նչ ունեն։ Ճշմարիտն ասած, ոչինչ չունեն։ Շատ բնական է, որ ակարները միշտ ենթարկվում են ավելի զորեղ ույժերին և կորչում են նոցա մեջ, եթե չպահպանվեր նոցա գոյությունն որևիցե նոր և նպաստող զորությունով, ավելի պարզ ասած, եթե նոցա մեջ չդըրվեր այնքան ույժ, որ կարողանա մրցություն անել յուր հակառակորդի հետ։

Թեև կաթոլիկ միսիոնարներն ավելի քան հարյուր տարի, և բողոքականներն ավելի քան քառասուն տարի բույն են դրել Պարսկաստանում, եթե այսքան ժամանակ հայը կարողացել է հեռու մնալ նոցանից և պահպանել յուր եկեղեցին և ազգությունը, դորա պատճառն ուրիշ ոչինչ չէ, թե ոչ հայերի մոլեռանդությունը, որով նոքա նայում էին կաթոլիկին և բողոքականին, որպես հեթանոսների վերա։ Բայց այդ նախապաշարմունքն անցավ։ Այժմ հայը համոզվել է, որ յուր որդուն հարկավոր է ուսում, տեսնում է՝ յուր ազգի մեջ չկա ուսումնարան, տալիս է նորան բողոքականի վարժատունը և մեծ գոհությամբ, որովհետև ոչինչ չէ վճարելու։ Հայը ցանկանում է լսել աստուծո խոսքը, յուր եկեղեցվո բեմեն կարդացածներից նա ոչինչ չէ հասկանում, գնում է բողոքականի ժողովարանը, այնտեղ կենդանի խոսք է լսում, և այդ նորան ավելի բավականություն է տալիս։ Հայը այսինչ և այնինչ նեղության մեջն է, դիմում է միսիոնարին, նա օգնում է նորան, և եթե նորա որդիքը քաղցած են, նա հաց է տալիս։ Մինչդեռ մի այդպիսի օգնություն նա ոչ միայն չէ գտնում յուր եկեղեցականներից, այլ ընդհակառակն, նոքա հարստահարում են։ Այժմ ուրիշ ի՞նչ բան կարող է հայերին հեռու պահել այդ հոսանքից, եթե ոչ ունենալ այն բոլորն, ինչ որ ունեն և անում են օտարները։

Բայց ի՞նչ չինեցին Պարսկաստանում մեր եկեղեցականները։

«Քաղցած փորին կորյակ հացն էլ զուր է գալիս»,— ասում է ժողովրդական առածը։ Դարերով մի ուսումնարանի երես չտեսած հայ ժողովրդի աչքերը շլացնում են առաջնորդները, միշտ մատնացույց անելով Դավրեժի ազգային դպրոցի չորս պատերի վերա։ Բայց ի՞նչ արդյունք է տալիս նա, այդ երկրորդական հարց է։ Թողնենք մյուս գավառները, վեր առնենք միմիայն Ղարադաղը, որ մոտ երեսուն հայ գյուղորայք կան, մի ուսումնարան չունեն, ուր գոնյա հասարակ ընթերցանություն սովորեցնեին, մի քահանա չունեն, որ կարողանար առանց տասը սխալ անելու «Հայր մեր» ասել։

Մենք չենք կարող մեծ գոհունակությամբ չհիշել պարսից կառավարության այն առանձնաշնորհությունը, որ պարգևել է հպատակ ազգերին՝ բոլորովին ազատ կերպով վարվել ամեն մի ազգային հիմնարկությունների մեջ, որք նպաստում են նորա լուսավորության և առաջադիմության։ Որպեսզի և կամիս դպրոց հիմնիր, ինչ ուղղություն ցանկանում ես տուր նորան, կառավարությունը խառն չէ գործի մեջ և մինչև անգամ չէ պահանջում յուրյանից թույլտվություն խնդրել։ Տպարան հիմնիր, լրագիր հրատարակիր...

Արդյոք կարողացա՞ն օգուտ քաղել հայոց առաջնորդներն այդ ազատությունից։ Մենք, փոխանակ պատասխանելու՝ մանավորապես կնկարագրենք Ատրպատականի առաջնորդների, սկսյալ Նիկողոս եպիսկոպոսից, նոցա մոտ երեսնամյա գործունեության ընթացքը։

Մենք չենք կամենում հիշել նոցա անունները, միայն կբերենք մի քանի փաստեր, որք հայտնի ապացույց կարող են լինել նոցա անկարգ գործավարությանը։ Թաթոս առաքելո, Բարդուղիմեոս առաքելո, Ստեփաննոս Նախավկայի վանքերը վերջին աղքատության մեջ ընկան դոցա ձեռքով։ Առաջնորդներից մինը, Բարդուղիմեոս առաքելո վանքի սրբությունքը գրավ էր դրած մի թուրքի մոտ, որ հետո հազիվ ժողովուրդն յուր միջից փող հավաքելով կարողացավ ազատել։ 1827 թվին ռուսաց պարսից հետ պատերազմեն հետո, երբ հայերը սկսան գաղթել դեպի Արաքսի այս կողմը, Ատրպատականի իշխանը՝ Նայիբուլ Սալթանան (Աբբաս Միրզան) հայերին գրավելու համար, որ նոքա Պարսկաստանից չգաղթեն, սկսավ տալ նորանց զանազան արտոնություններ, օրինակի համար, Դավրեժի հայ ժողովրդին ազատեց որևիցե հարկ վճարելուց. զանազան մելիքներին մշտնջենավոր ռոճիկ նշանակեց. դոցա թվումն էլ՝ Սալմաստա Հավթվան գյուղի եկեղեցուն, որ այն ժամանակ առաջնորդարան էր, շնորհեց մի ընդարձակ երկիր, որպես եկեղեցական կալ-

վածք (վարձ)։ Երկար ժամանակ այդ հողը մշակում էին գյուղացիք և վճարում էին մի նշանակյալ տուրք եկեղեցուն։ Բայց մեր պատվելի առաջնորդները կամաց-կամաց սկսան այդ երկիրը վաճառել գյուղացիների վերա և փողն յուրյանց ջիբը դնել, մինչև բոլորովին սպառվեցավ։ Միայն արքայական պարտակ ֆերմանը մնաց հայոց առաջնորդարանում։ Այն ևս մնա՞ց արդյոք։ Վերջապես առաջնորդներից մինը վաճառեց Դավրեժի գերեզմանատան համար ունեցած ընդարձակ հողի մի մասը։ Բայց ժողովո՞ւրդը, նա ոչ միայն ձայն չունի, այլ այնպիսի մի անզգա դրության մեջ է, որ չէ հասկանում, թե ի՞նչ է գործվում նորա մեջ։ Նա այնքանը գիտե, երբ գործողն առաջնորդն է՝ ուրեմն նա անսխալական է...

Վաղեմի սովորությամբ, երբ մինը մեռնում է Պարսկաստանում և չէ թողել ուղղակի ժառանգ, նորա կայք ու կալվածները դառնում են վանքապատկան։ Բայց այժմ ժառանգներ հանդիսանում են յուրյանք առաջնորդները, որ վաճառելով, փողը գրպանում են։ Առաջնորդը բացի նորանից, որ առնում է առանձին տուրք պսակից, մկրտությունից, թաղումից և այլն, նաև առնում է ամեն մի գյուղից նորա ծխերի հաշվով մի առանձին ճարկ, այդ հարկը շատ գյուղերում միացած է տերության հարկի հետ և ստացվում է ֆերաշների ծեծի զորությամբ։ Պարսկաստանում կան այնպիսի գյուղեր, օրինակ, տասը տուն հայ ընկած են քրդերի կամ թուրքերի մեջ։ Իհարկե, այդպիսիներն երկար տարիներով միմյանց մոտ ապրելով խնամացել են, համարյա բոլորի մեջ կա հեռու կամ մոտ ազգականական կապեր։ Պատահում է, դոցանից մինը կամենում է ամուսնանալ, անկարելի է, որ հարսի և փեսայի «արյունը օխտը պորտից» բաժանված լինեին միմյանցից՝ առաջնորդը պահանջում է՝ կամ այնքան փող և կամ արգելում է պսակը։ Ինչ անի խեղճ գյուղացին։ Նա չէ կարող յուր միակ եզը, կովը, այծը ծախել, առաջնորդին տալ և ամբողջ ընտանիքը թողնել քաղցած։ Եվ լսում ես, մի բարի օր հարսն ու փեսան պսակվեցան թուրքի մզկիթում, մի մոլլայի ձեռքով։

Ահա, որպիսի անձինքներից կախված է եղել Պարսկաստանի հայոց վիճակը և նոցա ապագան։

Սկսյալ Եփրեմ եպիսկոպոսից, որ համարյա մինչև ութն առաջնորդներ են փոխվել, մենք գովությամբ կարող ենք հիշել երկուսին միայն՝ հանգուցյալ Սահակ եպ. Սաթունյանին, որ հիմք դրեց Դավրեժի ազգային դպրոցին և Գևորգ եպ. Վեհապետյանցին, նորա հմուտ պոլիտիկայի մասին, որ գիտեր պարսիկների հետ վարվելու բոլոր ձևերը։ Այդ իսկ

պատճառն էր, որ առիթ տվեց նորան վայելել այն փառավոր ընդունելության շնորհը, որ գտավ նա Նորին մեծությունից՝ պարսից շահից։

Դավրիժից ստացած նամակներից հայտնվեցավ ժողովրդի դժգոհությունը յուրյանց այժմյան առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսից։ Այդ մարդը, ճշմարիտ ասած, շատ մեղմ բնավորության տեր և բարեսիրտ ոմն է։ Բայց այդ բավական չէ մի այնպիսի նահանգին առաջնորդելու համար, որպես Ատրպատականն է։ Նորին սրբազանությունն ունենալով մարմնական տկարություն՝ ոտքերի հիվանդություն, յուր եկած օրից վիճակի վարչության սանձը հանձնում է յուր մտերիմին՝ Հովհաննես վարդապետին։ Այդ վերջինն, որ միևնույն ժամանակ կառավարում էր Դավրեժի ազգային ուսումնարանը, խիստ ճարպկությամբ կարողանում է ամեն ինչ դարձնել դեպի յուր նպատակները *և անձնական* շահերը։ *Ուսումնարանի տեսչության և հոգաբարձուներ ընտրելու հարցը տարիներով ոչինչ լուծումն չեն ստանում, որովհետև ժողովրդից ընտրված անձինքների միջամտությունն ուսումնարանի կառավարության մեջ կարող էր վնասել հայր սուրբի այսինչ և այնինչ* նպատակներին։ *Վարձվում են մի քանի տիրացուներ խիստ էժան ռոճիկով, որպես վարժապետներ, բայց միևնույն ժամանակ ուսումնարանի ծախսերի հաշիվը մեծ թվանշաններ են ներկայացնում։ Փոքրիշատե կարողություն ունեցողներն, որևիցե պտուղ չտեսնելով, յուրյանց որդիքը դուրս են բերում ուսումնարանից, ոմանք օտար երկրներ են ուղարկում, ոմանք հիմնում են մի նոր և փոքրիկ ուսումնարան։ Ազգային դպրոցի մեջ մնում են աղքատների որդիքը միայն, նորա եկամուտները պակասում են, և նա ընկնում է։ Բայց վարդապետը չէր դադարում միևնույն ժամանակ զանազան երեխաների անունով «Արարատի» մեջ նամակներ հրատարակել, ցույց տալու համար յուր տեսչության ներքո գտնվող դպրոցի աշակերտների առաջադիմությունը։*

Կրոնափոխությունը դոցա օրով ավելի ընդարձակ քայլեր է անում։ Հայերի մեջ՝ բացի Ամերիկայի բողոքական միսիոնարները, բացի կաթոլիկ լազարիստները, հայտնվում են լյութերական քարոզիչներ, Գերմանիայից ուղարկված երկու հայ պաստորներ, որք բույն են դնում Դավրեժի մեջ։ Բայց Հովհաննես վարդապետը կարող էր ոչ միայն դորանց ծածկել, այլ արևի երեսին ևս քող գցել։ Նա «Արարատի» մեջ նամակ է տպում և հերքում է Պարսկաստանի հայերի մեջ կրոնափոխության տարածվիլը, որպեսզի էջմիածնի ցավը այդ երևույթի մասին մեղմացնե և յուրյանց գործունեությունը չարատավորվի։ (Տե՛ս «Արարատ», 1872 ամի, թիվ Թ-րդ, երես 370)։

Մի բան, որ աճում զարգանում է դոցա օրով, այն է լինում, որ տգետ քահանաների թիվը բազմանում է։ Ղարադաղի անտառներից զանազան ածխագործներ Դավրեժի յուրյանց գավառն են դառնում քահանայի փիլոնով և յուրյանց ածուխի մեջ մրոտած ձեռքերն ժողովրդին համբուրել են տալիս։ Երբ Դավրեժի ազգային դպրոցը գոնյա կարելի էր այդ նպատակին ծառայեցնել, որ գավառներից երեխայք բերվեին այնտեղ և օրինավոր քահանայացուք պատրաստվեին։

Նորին սրբ. Գրիգոր եպիսկոպոսի գլխավոր պակասությունը, որ ապարդյուն թողեց յուր վեցամյա առաջնորդությունն, այն էր, որ նա միշտ անհոգ մնաց դեպի ազգային գործերը, հանձնելով նորանց մի վարդապետի ինքնակամ հոգաբարձությանը, որ միշտ աշխատեց «պղտոր ջրի մեջ ձուկն որսալ»։

ՄԻ ՆՈՐ ՊՐՈԵԿՏ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՎՈՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Մշակի» անցյալ տարվա № 48, մեր ընթերցողը կարդացած կլիներ մի նամակ Վաղարշապատից, որտեղ հաղորդվում էր այն լուրը, որ մի գերմանացի, պարոն Հոբոմ, կամենում է հանձն առնել Երևանի նահանգի անջուր հողերը ջրել, Արփա-Չայ գետից ջուր հանելով։

Այժմ մենք լսում ենք, թե այդ պարոնը, որ մի մեծ արտասահմանյան ընկերության ներկայացուցիչ է, առաջարկել է կառավարությանը մի շատ բաղադրյալ պրոեկտ Երևանի նահանգի տնտեսական դրությունը բարվոքելու նպատակով։ Նա խնդրում է կոնցեսիա 60 տարով, խոստանալով ջրանցքներ շինել Երևանի նահանգի անջուր հողերի մեջ, տնկել անտառ մոտ 70 հազար դեսյատին հողի վրա, հիմնել գործարաններ (ինչպես օրինակ՝ շաքարի և այլն) հիմնել անգամ ամբողջ մի նոր քաղաք Արարատ սարի ստորոտում, բնակեցնելով այդ քաղաքը գերմանական գաղթականներով, պարտավորվում է բնակեցնել Երևանի նահանգը 100 000 գերմանացի և հոլանդացի գաղթականներով և, վերջապես, նոր քաղաքից երկաթուղի շինել մինչև Թիֆլիս։

Այդ տեսակ ձեռնարկություն մինչև այն աստիճան ահագին է և միևնույն ժամանակ հրապուրիչ ապագայի մի պատկեր է ներկայացնում, որ մարդս հազիվ հավատալ է կամենում և հակված է առասպել համարել մի այդ տեսակ պրոեկտ...

Բայց ճանաչելով այժմյան եվրոպական և ամերիկական համարձակ

ձեռնարկությունները, մենք չենք կարող պ. Հոբոմի առաջարկությունները անիրագործելի համարել... Ժամանակակից գիտությունը հասել է մինչև այն աստիճան կատարելագործության, որ անապատ տեղերում ջուր ստեղծել, բուսականությունից զուրկ երկրներում անտառ առաջացնել, սարոտ տեղերում երկաթուղի շինել հեշտ է, երբ կա աշխատող ուժ, հմտություն և դրամական միջոցներ...

Մի բանի մասին միայն մենք թույլ կտանք մեզ քանի մի նկատողություններ անել, այն է՝ պ. Հոբոմից ձեռնարկված օտարազգի գաղթականության առիթով։

Եթե պ. Հոբոմի ճշմարիտ մի մեծ ընկերության ներկայացուցիչ է և միևնույն ժամանակ հմուտ մի անձն է, մենք համոզված ենք, որ կառավարությունից կոնցեսիա ստանալուց հետո նա կարդարացնե իր վրա դրած բոլոր հույսերը և կկատարե հեշտությամբ իր տված խոստումները, բայց մի բան կա, որ վեր է ամեն հմտություններից և անմատչելի է որևէ դրամական միջոցներին՝ այն է մեր Կովկասի պես երկրի մեջ բերել հազար հազարավոր գերմանական կամ հոլանդական մի ազգաբնակություն, որ սովոր չէ մեր կլիմային։ Պետք է ասած, որ մեր երկրում զետեղված գերմանական մի քանի գաղթականները, որոնք երկրիս ամենալավ տեղերն են ստացել, հազիվհազ կարողացան ընտելանալ կլիմային, այն էլ երկրորդ թե երրորդ սերունդին հասնելով... Մինչև վերջին ժամանակ նրանք ճանճերի պես էին մեռնում...

Չպիտի մոռանանք, որ պ. Հոբոմը իր ձեռնարկությունը սկսելու բոպեին ստիպված կլինի բերել տալ եվրոպական գաղթականներին, որովհետև ուրիշներ չի ունենա ձեռքի տակ, ուրեմն նրանց օգնությամբ պիտի առաջ տանի իր բոլոր աշխատանքները այն ժամանակ, երբ դեռ երկիրը բարվոքված չի լինի...

Այդ տեսակ ծանր և դժվար աշխատանքներ Երևանի նահանգի պես մի երկրի մեջ կատարելու ժամանակ պիտի գործ դնել այնպիսի աշխատողներին, որք թե՛ պատրաստական աշխատանքներ տանել կարողանային, թե՛ բնակվելով նույն երկրի մեջ, արդեն ընտելացած լինեին համանման կլիմային։

Մենք համարձակապես պնդում ենք, որ պ. Հոբոմը սաստիկ կսխալվի, եթե գերմանացիներին կբնակեցնի Երևանի նահանգում և եթե նա կամենում է գործը հաջողակ կերպով առաջ տանելու, ուրիշ ելք չի մնում նրան, եթե ոչ հայերին գաղթել տալ Պարսկաստանից։ Հայերը, մանավանդ պարսկաստանցիք, սովոր են Երևանի նահանգին նման կլիմային

և հեշտությամբ կգաղթեն։ Այդ միակ ժողովուրդն է, որ հարմարվում է իր ֆիզիկական հատկություններով մեր կլիմային։

Եվ այդ շատ հասկանալի է՝ դարերով, սերունդից սերունդ նրանք ընտելանում էին այդ կլիմային, ուրեմն նրանց ֆիզիկական կազմվածքը զարգացման այն աստիճանին է հասել, որին օտարազգի մի ազգություն շատ սերունդից հետո պիտի հասնի...

Հայը միևնույն ժամանակ խղճմտաբար և ուժեղ աշխատող է, միայն նրա աշխատանքը ապարդյուն է մնում, որովհետև նրան պակաս է հմտություն, պակաս են հասկացող առաջնորդներ։

Այդ պատճառով հայերից ավելի հարմար ազգաբնակություն ցանկանալ էլ չէ կարելի, թեև, իհարկե, ցանկալի է քանի մի նոր կոլոնիաներ օտարազգիներից, մանավանդ գերմանացիներից, որք իրենց աշխատանքի ուղղությամբ օրինակ կարողանային տալ Երևանի նահանգի թե բուն ազգաբնակությանը, թե հայոց նոր գաղթականների համար։

Մենք համոզված ենք, որ պ. Հոբոմը եթե այդ սխալը կանե, բնակեցնելով Երևանի նահանգում եվրոպական անթիվ գաղթականներ, ժամանակով ինքը կհամոզվի, որ իզուր զոհել է թե մարդկանց կյանքը, թե դրամական միջոցները, և վերջը էլի պիտի դիմե հայ-պարսկական գաղթականներին։ Ինչի՞ խելացի ուղիղ և կանոնավոր ճանապարհով չգնալ, այլ նախ և առաջ սխալվել և հետո նոր ստիպված լինել իր արած սխալը դրստելու...

ՊԱՏԱՍԽԱՆ «ՄԵՂՎԻՆ»

«Մեղվի» 15-րդ համարում կարդացի պ. Թոխմախի քննադատությունը «Փունջի» մասին։ Թող պարոնը փաստերով ապացուցանե յուր ասածները, որպես վայել է օրինավոր կրիտիկոսին։ Այդպիսով միայն նա ցույց կտար հեղինակին յուր թերությունները, այլև մեր ընթերցող հասարակությունը դուրս կբերեր յուր մոլորություններից։ Իսկ մի քանի կոշտ-կոպիտ սրախոսությունների տակ ծածկել յուր մտքի ողորմելի աղքատությունը, մենք դորան կոչում ենք գրականական դատարկախոսություն, ավելի ոչինչ։

«ՔՆԱՐ ՄՇԵՑՎՈՑ ԵՎ ՎԱՆԵՑՎՈՑ» ԳՐՔՈՒՅԿԻ ԱՌԻԹՈՎ

Լույս տեսավ Ս. Էջմիածնի տպարանից Հայր Արիստակես վ. Սեդրակյանի հրատարակությամբ մի գրքույկ, որ կոչվում է «Քնար մշեցվոց և վանեցվոց»։ Այդ գրքույկը բաղկանում է 46 երեսից և պարունակում է մինչև 36 երգեր, որ ժողովել է հրատարակիչ հայրը Տարոնի և Վասպուրականի կողմերի ժողովրդական երգերից։

Երգերը կարելի է բաժանել երկու մասի՝ կրոնական և լիրիկական: *Առաջին մասին պատկանում են՝ «Ծննդյան երգ», «Ս. Կարապետի Գլակա վանից», «Քարոզ խաչ», «Հոգի և մարմին»։ Այդ երգերը թեև զուրկ են դավանաբանական և պատմական ճշտություններից, այսուամենայնիվ, նոքա հետաքրքրական են նրանով, որ արտահայտում են գեղջիկ և անուս ժողովրդի հայացքը յուրյանից սրտին խիստ սուրբ եղած առարկաների վերա։ Օրինակի համար, «Ծննդյան երգի» մեջ ժողովրդական ֆանտազիան չէ բավականանում նրանով, թե Մեսիայի ծնունդն եղավ անշուք փարախի անկյունում, հովիվների տնակի մեջ։ Նա ընծայում է մարդկության նորածին փրկչին մի տուն, որո շինվածքը շաղախված էր աշնան գինիով, զարդարած էր գարնան ծաղիկներով. եկեղեցին ներկայացնում էր նորա* թոնիրը, *սրբազան կրակարանը, իսկ բոլորած լուսինը՝ կազմում էր այն թոնրի խուփը։ Մի տուն, որո սյուները խնկենի ծառերից էին, առաստաղը՝ ծալ-ծալ ոսկուց. աղավնիք հարսների նման սպասավորում էին այնտեղ և մանիշակի փունջերով ավլում էին, մաքրում էին տունը և այլն։*

Դորանից երևում է, թե որպիսի առասպելաբանական կերպարանք է ստանում կրոնքը, երբ նորա ծագումը կապված էր մի ազգի բանաստեղծության հետ։

«Սուրբ Կարապետի Գլակա վանից» *այդ երգը, որ նվիրված է Մշու Սուրբ Կարապետի վանքին, ցույց է տալիս այն խորին, մինչև մոլեռանդության հասած հավատքը ժողովրդի, որ ունի նա դեպի յուր պաշտած սրբարանը։ Նա ամեն ինչ սպասում է նորանից. յուր կյանքի բոլոր պետքերի մատակարարը նորան է համարում։ Նա տալիս է այդ վանքին «Մշու սուլթան», «Մուրադատուր» տիտղոսները, այն ջերմ հուսով, որ ամեն* մուրազների, *այսինքն՝ նպատակների և փափագների կատարողը նա է։ Ահա մի այդպիսի հավատքն է, որ ձգում է հեռու աշխարհներից բազմաթիվ հայ ուխտավորների քարավանները դեպի այդ վանքը։ Բանաստեղծը չէ ընդունում Հովհաննեսին, որպես Քրիստոսի* մկրտիչ, *նո-*

րա երեսուն տարեկան հասակում, այլ որպես կնքավոր նորա երեխայության ժամանակ։ Այդպես էլ հավատում է ժողովուրդը։ Իսկ ինչ որ վերաբերում է այն խոսքերին, թե որպես սուրբ Կարապետ հալածեց չար ոգիներին, որք չէին հեռանում նորա սրբարանից, և բանտարկեց նորանց մթին զնդանում, այդ ավանդությունն այնքան հին է, որ գուցե հասնում է մինչև Լուսավորչի օրերը, երբ այդ վանքը հեթանոսական մեհյանից քրիստոնեական տաճարի վերափոխվեցավ, երբ Տրդատ Ամանոր չաստուծո տոնի փոխարեն հրամայեց կատարել սուրբ Կարապետի տոնախմբությունը։ Սուրբ Կարապետի մարմինը Կեսարիից (Կեսարիայից) Տարոն բերվելը, որպես ասվում է երգի մեջ, հիշում չեն մեր պատմագիրները։ Թեև խորին կապ ունեն ժողովրդական ավանդությունները նորա պատմական անցյալի հետ։

«Քարոզ խաչ»: Այդ երգի մեջ նկարագրվում է մի ամբողջ առասպել, թե որպես խոտաղները (խոտարած մանկտին) դաշտում պոխի կոչված բույսից շինում են մի խաչ, զարդարում են նորան։ Թե որպես նոցա աղոթքով երկնքից իջնում է նույն խաչի մեջ «սուրբ մասունք»։ Գյուղացիք փառավոր հանդիսով այդ սրբությունը տանում են գյուղը։ Նա ցերեկով հովանի էր լինում նոցա գյուղի վերա և պատսպարում էր արևի տոթից, իսկ գիշերով արեգակի նման լույս էր սփռում։ Թե որպես չար ոգիի մատնությամբ այդ դեպքը լսում է մի քուրդ աղա, կամենում է խաչը յուր ամրոցը տանել, որ այնտեղ լուսավորե։ Որո պատճառավ ինքը, յուր բոլոր գերդաստանի հետ, պատժվում են կատաղության ախտով, և այլն։ Այդ երգը, իբրև ծնունդ ժողովրդական սնահավատության, նշանավոր է նորանով, թե որպես ստեղծագործվում են հրաշքները։

«Հոգի և մարմին» երգի մեջ ընթերցողը տեսնում է ամբոխի հայացքը, որ նա ունի ներկա աշխարհի և առհասարակ կյանքի վերա։ Երևակայելով մի փառավոր և խաղաղ ապագա գերեզմանի մյուս կողմում, մշեցին նայում է նյութական աշխարհին որպես անցավոր և փուչ բանի վերա, որո պետքերի մասին մտածելն անգամ մեղք էր։ Մի այդպիսի ուղղությունը նկատելի է համարյա մեր բոլոր ռամկական երգերի մեջ, երբ նոքա հայտնում են որևիցե կարծիք ներկա և հանդերձյալ կյանքի մասին։ Այդ վնասակար համոզմունքի ներշնչությունը ժողովրդի մեջ, մենք ուրիշ պատճառի չենք կարող ենթադրել, եթե ոչ այն բազմաթիվ վանքերի, ճգնավորների և միայնակյաց աբեղաների ազդեցությունը, որոցմով շրջապատված են Մուշը և Վանը։ Եվ այդ է պատճառը, որ Տարոնի և Վասպուրականի ժողովուրդը չափից դուրս ծույլ են դեպի աշխատությունը, նոքա բավականանում են այնքանով, որ կարող լինեին

վարել յուրյանց ողբասացին ապրուստը, այլ խոսքով, նոքա արհամարհում են մարմինը, մտածելով հոգու մասին, որ ուներ ավելի փառավոր և տևվողական ապագա։

Լիրիկական երգերի մեծ մասը ջանիմաններ են. այդ անունը, որ պարսկերեն նշանակում է իմ հոգյակս, տալիս են մի տեսակ պարերգի, որ երգվում է զանազան խաղերի մեջ։ Այդ խաղերը Վասպուրականի և Տարոնի կողմերում կոչվում են գուանդ, կամ գոնդ, իսկ Արարատա կողմերում յալլի: Խաղացողները, երկու սեռից էլ, միմյանց ձեռքից բռնելով կազմում են բոլորակ շղթա, որ պար գալով զանազան պտույտներ և շրջաններ է գործում, իհարկե շարժումները համարեցնելով պարի եղանակին։ Պարագլուխը (յալլի բաշին) սկսում է մի ջանիման, իսկ ամբողջ խումբը կրկնում է երգի ամեն մի տան վերջին տողերը միայն։ Այդ է պատճառը, որ ջանիմանների մեջ առաջին տողը կրկնվում է միշտ, օրինակ.

Ջանիման, ջանիման,
Դեհե դը՜նկ դընկ, դեհե ջան,
Բաղնի ջան, Բաղնի և այլն։

Լիրիկական մնացյալ երգերի մեծ մասը, որպիսին են՝ «Մայրամ», «Լալուխան», «Խումար», «Զաշմիկ», «Խանդյալ», եթե կարելի է այդպես կոչել, դոքա ժողովրդական երգիծաբանություններ են, դեպի նույն անձինքը, որոց անունները հիշվում են այդ երգերի մեջ։ Ամեն մի տարապայման երևույթ ժողովրդի մեջ, որ համար չէր նորա սովորություններին և կյանքի կանոններին, միշտ սաստիկ ազդեցություն ուներ նորա սրտի և հոգու վերա։ Մի պարզ, նահապետական մաքրությամբ ապրող ամբոխի մեջ, մի կնոջ փոքրիշատե տարապայման վարմունքը, ոչ միայն հարուցանում է ընդհանուրի զզվանքը, այլև յուր վերա է դարձնում նորա երգիչների պարսավը։ Այդ է պատճառը, որ ժողովրդական երգերի մեջ, երբ նոքա վերաբերում էին որևիցե անձնականության, ըստ մեծի մասին չեն հիշվում հնարված անուններ, այլ իսկական անուններ, որք առնված էին կյանքից։ Այդպես է և պ. Միանսարյանցի «Քնարի» մեջ տպված «Զուլոն»։

Լիրիկական երգերի մեջ հետաքրքրական է մի հարսանյաց երգ (տե՛ս եր. 16-ը), որը նվիրված է փեսայի մորը։ Հեռանալով հայրենական օջախից, դեռահաս օրիորդը պիտի մտնի մի նոր շրջան, մի նոր ընտանեկան լծորդության մեջ։ Նորան կանգնեցնում են այն տան շեմքի վերա, որո մեջ ընտրված էր նա լինել գերդաստանի անդամ։ Այդ երգով

Հրավեր են կարդում փեսայի մորը, որ նա դուրս գա տնից և ընդունի յուր նորընծա հարսնացուն։ Երգի մեջ կարդացվում է այդ խղճալի զոհի ճակատագիրը, նորա պաշտոնը, որ պետք է լիներ ամուսնի տան մեջ։ Ահա երգի միտքը՝ «Դուրս արի՛, դե՛ դուրս արի՛, թագավորի (փեսայի) մայր, դուրս արի, քեզ համար աղբյուրից ջուր բերող ենք բերել, քեզ համար դաշտը հաց տանող ենք բերել. քեզ համար ձավար ծեծող ենք բերել, քեզ համար հաց թխող ենք բերել, քեզ համար կերակուր եփող, տունը ավլող աղախին *ենք բերել» և այլն։*

Դեռահաս աղջիկն առաջին օրից դառնում է մի կրավորական էակ պառավ կեսուրի անսահման իշխանության ներքո, նորա մեջ ճնշվում, խեղդվում են մարդկային ազատ զգացմունքները։ Այդ երգը մասնավորապես երևան է հանում հայոց ընտանեկան կյանքի այն պատրիարքական միապետությունը, ուր դերդաստանի պետը իշխում է բոլոր մանուկ ուժերի վերա։

Մի այլ տեղ, որպես է եր. 22 ժԲ երգի մեջ, մշեցին արտահայտում է յուր սիրո զգացմունքները։ Նա երևակայում է յուր սիրուհին կանգնած աղբյուրի մոտ, որը դեմքը շողշողում էր արեգակի լուսով. այդ միակ տեղն է, ուր հաճախ կարելի էր տեսնել գյուղացի աղջիկներին։ Գովում է նորա ժրությունը, որ երկու սափոր միասին շալակին առած, գալիս էր աղբյուրից ջուր տանելու։ Նորա մեջքի նրբությունը նմանեցնում է յուր խենջարի բարակ կոթին, իսկ նորա կուրծքի սպիտակությունը՝ մածունի։ Նորա ընթացքը նմանեցնում է ոչխարների շորոր տալով ճեմելուն։ Եվ, արդարև, ուրիշ ի՞նչ գեղեցիկ համեմատություն կարող էր գտնել մի խաշնարած ժողովրդի որդին, քան խենջարը, որ յուր անձի պաշտպանն է, քան մածունը, որ նորա սիրելի կերակուրն է, քան ոչխարը, որ նորա հարստությունն է։ Բնության այլ գեղեցկությունները նորա համար զգալի չեն։ Յուր նպատակին հասնելու համար, սիրած օրիորդն յուրյան կին ունենալու համար, հերոսը մտածում է գործ դնել երկու միջոցներ միայն, կամ փախցնել աղջկան յուր ալ նժույգով և կամ նորա հայրը, եթե հարյուր ուզելու լինի, փոխարենը հազար վճարել և առնել աղջկան։ Փոխադարձ սերն այս հանգամանքում տեղիք չունի։ Ծնողքների կամայականությունը ստիպում է սիրողներին այդպիսի միջոցներին դիմել։

Դատելով դեպի այդ երգերի գրականական նշանակությունը, մենք այդքանը կասենք, որքան այդպիսի ժողովրդական երգերը կազմված լինեին կոշտ-կոպիտ կերպով, որքան նոքա զուրկ լինեին արհեստական գեղեցկությունից, այսուամենայնիվ, նոքա դարձյալ նշանավոր են, որպես մի անպարգացած, դեռ յուր տղայության մեջ ապրող ժողովրդի

երեխայական-անկեղծ թոթովանքը, որ բխում է նորա սրտից և նորա կյանքից։

Մի ազգի կամ մի ժողովրդի բարոյական և մտավոր պատկերն ավելի ճշտությամբ երևում է նորա բանաստեղծության մեջ. կամենում ես ճանաչել նորա հոգին, կարդա նորա երգերը։

Մշեցվոց և վանեցվոց երգերի մեջ ընթերցողը տեսնում է ոչ թե երևակայական էակներ, այլ մի կենդանի ժողովուրդ, թե որպես ապրում է նա, որպես մտածում է, զգում է, վերջապես որպես սիրում է նա։ Այդ իսկ հատկանիշն է ժողովրդական երգերի։

Մինչև այսօր տպված աշըղ Շիրինի, Նիրանու, Ասլամի և այլ դոցա նման երգերը՝ չէ կարելի կոչել բուն ազգային կամ ժողովրդական։ Նոքա ուրիշ բան չեն, եթե ոչ կուրորեն հետևողություն պարսից կամ թուրքաց մուխամմազների ձևերին։ Բայց մշեցվոց և վանեցվոց երգերի մեջ կա ինքնուրույնություն, կա մի ժողովրդի հատկանիշ, բնավորություն։

Բացի մեր հիշածները, այդպիսի երգերը, որպես մի ժողովրդական բարբառի մաքուր օրինակ, ունեն և լեզվագիտական նշանակություն։ Նոցա լեզուն, թեև չափից դուրս աղավաղված է, այսուամենայնիվ նորա մեջ դեռ պահպանված են մեր հին լեզվի մի քանի ձևերը. ընթերցողը հանդիպում է մինչև այսօր յուրյան անծանոթ բուն հայկական բառերի, որոնց նա ոչ մի գրքի մեջ չէ տեսել։

Դառնալով դեպի այդ գրքույկի հրատարակությունը, մենք չենք կարող չհամակրել հայր Արիստակես վ. Սեդրակյանցի գովելի աշխատությանը. առավել այն պատճառավ, որ նա յուր դասի մեջ մի նախանձելի օրինակ է, որ յուրյան նվիրել է այդպիսի աշխատությանը։ Բայց միևնույն ժամանակ չենք կարող չնկատել, որ այդ գրքույկն ունի յուր թերություններն, այն կողմից, որ բոլոր անհասկանալի բառերի բացատրությունները դրած չեն, մանավանդ այն տեղերը, ուր ամբողջ տողեր թուրքերեն կամ քրդերեն են։ Բացի դորանից ծանոթությունների մեջ տեղ-տեղ երևում են անճշտություններ։ Որո ընդհակառակն, ոչ միայն հարկավոր էր դնել ամեն մի բառի բուն նշանակությունը, այլև անհասկանալի պարբերությունների և դարձվածների միտքը նույնպես պետք էր բացատրել։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Մեզ գրում են Պարսկաստանից, որ Ատրպատականի նահանգում հացը մի ամսվա մեջ իր արժեքից կրկնապատիկ թանկացավ։ Ժողովուրդը սարսափելի տագնապի մեջ է. նա երկյուղ ունի սովից։ Հացի թանկանալու պատճառը վերաբերում են այն դեպքին, որ անցյալ ձմեռվա սաստկությունը մինչև գարնան ամիսները թողել էր խիստ թանձր ձյուն դաշտերի վրա, և գետինը տաքանալով, ցանքերը փտել են։ Լուր կա, թե Նորին մեծ շահի ժառանգը (Վալիահթը) նպատակ ունի ճանապարհորդել Ատրպատականի գավառները՝ ժողովրդի վիճակը հետազոտելու համար։ Նորին բարձրությունը գլխավորապես ուշադրություն պիտի դարձնե գյուղացիների դրության վրա։ Նա պիտի կարգադրե հարկապահանջության մի նոր սահմանադրություն, որպեսզի թե կալվածատերերը, թե նույնիսկ կառավարությունը իրավունք չունենան ամեն մի գյուղից նշանակվածեն ավելի հարկ պահանջել։ Որի ընդհակառակն, մինչև այսօր գյուղերն ենթարկված են եղել կալվածատերերի կամայականությանը։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Այս օրերս քաղաքիս խոհուն գլուխները զբաղված են մի նոր հարցով, այն է՝ քաղաքական ամուսնությունը։ Ծիծաղելի բան, մի ազգ, որ չունի քաղաքական կյանք, մտածում է քաղաքական ամուսնության վերա։ Ինչ ատյանում պետք է կատարվի այդ նոր ամուսնական դաշնադրությունը։ Իհարկե, պետական ազգի ատյանում։ Այդ խիստ դյուրին միջոց կլինի մի հայ աղջկան բռնել Թուրքի, հույնի, հրեայի և ինչ ազգից որ ուզենա, մի տղամարդի ձեռքը և տանել ուղղակի մահմեդականի մահքեմանի։ Մինչդեռ հոգևոր կառավարությունը յուր ձեռքում ունենալով ամուսնությունը որպես եկեղեցվո խորհուրդ, գոնյա արգելք էր դնում այդպիսի դեպքերին։ Ապա Սահմանադրությո՞ւնը, կհարցնեն մեզանից։ Մի՞թե կա երաշխավորություն դորա հարատևության մասին, հարցնում ենք մենք։

Պոլսեցոց հատկանիշն է՝ ամեն բան, փոխանակ գլխից սկսելու, պոչից սկսել։ Պոլսեցին չգիտե, հետևաբար, առաջադիմել կյանքի մեջ։ Նա սիրում է թռիչքներ գործել։ Իսկ այդ վտանգավոր է նորանով, որ խիստ հաճախ պատճառում է սարսափելի անկումներ։

Կարդացի «Մշակի» մեջ Վանա Պողոս վարդապետի մասին գրված պ. Մելիքզադեի հոդվածը։ Կարծես «Մշակը» ազդեց այստեղ։ Ազգ. Վարչությունն իր առաջին նիստից հետո անմիջապես հեռագրեց Պողոսին հետ կոչել Վանից։ Իսկ այդ հին աղվեսը տակավին հեռանալու նպատակ չունի իր որջից։ Նա պատասխանած էր, եթե յուրյան նորից դառնալու միտք կա, թող այդ կատարվի Վանի մեջ։ Նպատակը խիստ պարզ է. այնտեղ Պողոսն իր կողմնակիցների միջոցով ամենայն հնարներ կունենա պաշտպանվելու...

Պատրիարքական խռովությունները դադարեցան։ Ներսես Վարժապետյանը վերջապես պատրիարք ընտրվեցավ։ Իսկ ե՞րբ պետք է սկսվեն և դարան վանդելու մեքենաները լարվել. այդ հեշտ գուշակելու բան է։ Որովհետև պոլսեցին որպես գյուրագրգիռ է դեպի սեր և ազնվություն, նույն կրքերն ունի և ատելության մեջ։

Բեշիքթաշի գերեզմանատունը, գտնվելով Սուլթանի պալատներից մինի հանդեպ, բարեբախտ վիճակին ենթարկվեցավ։ Բարձ. Դռան առաջարկությանը զիջանելով, հայ հասարակությունը սկսեց ծառերով և կանաչներով պատել այդ մեռելանվեր անապատը։ Այդպիսով գոնե մի ամբողջ թաղ կազատվի թունավոր օդ ծծելուց։ Կարծեմ և մեռելներին հաճելի կլինի ծանր գերեզմանաքարի փոխարեն պառկել ծառերի հովասուն ստվերի տակ...

Փոքր Ասիայի սովի մասին սարսափելի լուրեր են հասնում մեզ։ Ցավալի է, որ Ասիան ուշադրություն չէ դարձնում յուր մեջ այդպես հաճախ կրկնվող մի երևույթի վրա, որպես սովն է։ Ամեն մարդ զարմանում է, այնպիսի մի բարեբեր երկրում, որպես փոքր Ասիան, հանկարծ մարդիկ մեռնում են քաղցածությունից։ Պատճառները խիստ պարզ են. չլինելով ճանապարհների օրինավոր հաղորդակցություն՝ ներսի մթերքը դուրս տանելու, և դրսինը ներս բերելու, երկրագործական բերքը մշակվում է այնքան, որքան պետք էր երկրագործի տարեկան ապրուստին։ Ավելիի համար նա չէ մտածում, որովհետև հույսով է, թե մյուս տարի կստանա և այդ պատճառով նա ավելորդ պաշար չէ պահում։ Մյուս տարին եղավ երաշտություն, բերքը չեկավ, արդեն երկրագործը տանը հաց չունի։ Որքան զգացվում է երկաթուղու կարևորությունը...

Հասունյանների վեճը տակավին շարունակվում է։ Պատմության մեջ սև տառերով կհիշատակվի այդ ողորմելիների վարմունքը։ Մինչդեռ ամեն ազգ աշխատում է թոթափել իրենից Հռոմի լուծը, այդ կույր մոլեռանդները նորից սկսում են անսխալական կիսաստվածի հողաթափները լիզել...

«Մեղու» ծաղրական լրագրի խմբագիրը շնորհ տարավ դեպի ոգիների աշխարհը: Դա մի զգալի կորուստ էր Կ. Պոլսի հայ հասարակությունից: Ա՜խ, որքան ծաղրալի բաներ ունի այդ հասարակությունը...

Մխիթարյան աբեղաները, որք հանգուցյալ Մուրատի կտակի զորությամբ կարգված էին Փարիզի Մուրատյան վարժարանին իբրև հոգեբարձուք, ազգի անհոգությունից բոլորովին տիրեցին այդ դպրոցին: Այժմ ուզում են վաճառել նորա շինվածքը: Ազգը տակավին Զաքարիայի լռության մեջն է: Ընդհանուր հայերի կայքը դառնում է մի կաթոլիկ միաբանության սեփականություն... Ահա՜, որպես հասնում են կտակներն իրենց նպատակին...

Որովհետև իմ նամակը բավական եղավ զանազան լուրերից, ավելորդ չեմ համարում հիշել և այդ՝ մեր հայրենակից Մ. Ամերիկյանցի երևալն Պոլսի թատրոնական բեմի վերա՝ յուր առաջին անգամից ֆուրոր արեց: Ես հանդիսականներից մինն էի նորա ներկայացման գիշերը: Մշեցի Կիվ-կիվի (որի դերը կատարում էր Ամերիկյանցը) երգը, նորա հարց ու փորձը և կարոտանքը հայրենիքից, ճշմարիտ ասած, բազմության հոգու մեջն էր թափանցում: Որքան ազդու է կենդանի խոսքը, որ առնված է նույն ժողովրդի կյանքից...

«Ախպար, գլուխներս հանեց այդ ֆրանսիական թարգմանություններեն,— ասաց իմ մոտ նստող պոլսեցին,— ըշտա աղվոր բան մը՝ հայու մը ձայն կը լսենք բեմեն»:

Այդպես գնահատում են այստեղ տաղանդները: Բայց որքան համազգաց է պոլսեցին դեպի ձիրքը և գեղարվեստը, այնքան ևս նորա ոգևորությունը դեպի դուրս օդային է և անտևողական: Պոլսեցին կյանքի մեջ ամեն մի աչքին զարկող հայտնության վրա հիացմամբ է նայում, հափշտակվում է: Բայց ամեն մարմին, որ շուտ է տաքանում, շուտ էլ սառչում է. այդ բնական օրենք է:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Մասնավոր նամակներից տեղեկանում ենք, որ անցյալ ամսի վերջերում Պարսկաստանի Դավրեժ քաղաքի ժողովուրդը մեծ հանդեսով ընդունեց նորին մեծ. շահի նորոգ կարգադրած հիմնարկությունը, որ կոչվում է Սանդուղ-Ադալաթ: Այդ բառի նշանակության մեջն է պարունակվում և այդ կարգադրության պաշտոնը: Սանդուղ-Ադալաթ նշանակում է «արդարության սնդուկ»: Այդ սնդուկը պետք է դրվի առանձին

ատյանում, որի մեջ իրավունք ունեն ձգել յուրյանց բողոքները ամեն մարդիկ, որք անիրավացի կերպով դատապարտված կամ հարստահարված էին տեղային կառավարչական պաշտոնակալներից։ Բողոքները ուղղակի կերպով կուղարկվեն Թեհրան Բարձր. Դուռը և ինքը շահը քննելով վճիռ կտա։

Ով որ փոքր ի շատե ծանոթ է Պարսկաստանին, կհամոզվի, որ մի այդպիսի կարգադրությունը մասամբ կվերացնե այն զեղծումները և անիրավությունները, որ մինչև այսօր եղել են և լինում են Պարսկաստանում։

Հայտնի բան է, որ ամեն մի պետության մեջ, ուր չկան երկրորդ, երրորդ և ավելի բարձր կայարաններ դատաստանական ատյանների, այնտեղ առաջին պատահած դատարանում շատ անգամ գործերը վճռվում են կամայականությամբ, որովհետև նոքա երկյուղ չունեն յուրյանց վերա բողոք լինելույ ավելի բարձր տեղեր։

Պարսկաստանում ամեն խան, ամեն մի բեկ, ամեն մի շահզադե, որոնց հանձնված էր մի քաղաքի, մի գավառի կամ մի ամբողջ նահանգի կառավարությունը, նոքա գործում են, ինչ որ կամենում են։ Նոքա են միևնույն ժամանակ նույն երկրի դատավորները, մի խոսքով՝ ամեն իրավունք ունեցողները։ Եվ որովհետև այդ խաներին, բեկերին, շահզադեներին նույն երկրի կառավարությունը ձրի տված չէ, այլ նոքա համարյա թե գնել են, վարձել են նորան, այդ պատճառով նոքա ամեն անիրավություններ գործ են դնում՝ որքան կարելի է ժողովրդից ավելի փող դուրս բերել, որ լրացնեն յուրյանց տվածը և մի բան ևս վաստակեն։

Օրինակի համար, մի խան վեր է առել այսինչ գավառի տարեկան վճարելիք արքունի տուրքը, դիցուք թե, 50 հազար թուման, որ հավաքե և ներկայացնե կառավարությանը։ Նա սկզբից 50 հազար թումանի պարտամուրհակ է տվել, որ ամիս-ամիս լրացնե այդ գումարը։ Եվ բացի դորանից. նա մի նշանավոր գումար փեշքեշ (ընծա) է տվել, որ այդ պաշտոնը նորան հանձնել են։ Ուրեմն ո՞րտեղից պետք է նա լրացնե այդ բոլորը, եթե ոչ ժողովրդից ավելորդությամբ առնե այն, ինչ որ նոքա պարտավոր չէին վճարել։ Նա սկսում է տուգանքներ առնել, կաշառքներ առնել և անիրավացի կերպով բռնադատել դորա և նորա իրավունքը։

Ժողովրդին մի բարձր տեղ չէ մնում այդպիսի անիրավությունների դեմ բողոքելու։ Եթե նա բողոքե, պետք է բողոքե այն անձի մոտ, որից իր հարստահարողը ստացել է իր պաշտոնը։ Հասկանալի է, թե պաշտոնատվողը որքան կպահպանե արդարությունը, երբ նա այդ պաշտոնը փողով է ծախել յուր պաշտոնակալի վրա։

Ահա այդպիսի հանգամանքների մեջ է զգացվում արդարության սնդուկի կարևորությունը, որ ժողովուրդը փոխանակ ուրիշին դիմելու, ուղղակի շահին դիմե։

Իհարկե, այդպիսի կարգադրությունը նպաստավոր չէ տեղային պաշտոնակալների շահերին, և նորանք կաշխատեն ամեն հնարներով ոչնչացնել նորան։ Մի այդպիսի բան եղավ, որքան կարելի է հիշել, քսան տարի առաջ. «արդարության սնդուկը» լցրին այնպիսի կեղտոտ թղթերով, մինչև անգամ շահի անձնավորության դեմ, որ Նորին Մեծությունը հրամայեց վեր առնել սնդուկը։ Իսկ այժմյան նոր կանոնադրության մեջ, հուսով ենք, որ այդպիսի անկարգություններ պատահել չեն կարող։

ՊԱՏԱՍԽԱՆ

Պարոն Գ. Շերմազանյան, մեր ուխտյալ կրիտիկոսը, կրկին հայտնըվեցավ «Արարատ» ամսագրի Ը-րդ համարի մեջ։ Մի մարդ, որ մինչև այսօր չէ ցույց տվել գրական ասպարեզում որևիցե նշանավոր գործ, մի մարդ, որ մի հասարակ երգի միտքն անգամ հասկանալու ընդունակություն չունի[1], յուրյան թույլ է տալիս քննել մի ամբողջ գիրք— «Փունջի» առաջին հատորը։ Մենք այդպիսի կրիտիկոսին առաջին անգամ (տե՛ս «Մշակ», 1873 ամի, № 24) պատասխանեցինք արհամարհանքով և կրկին նորա հետ բանակռիվ ունենալու ախորժակ չունենք։ Բայց չենք կարող լռել, երբ պ. Շերմազանյանը մեղադրում է մեզ գրական գողության մեջ։ Նա ասում է, թե ունեցել է «Կտակ» վերնագրով մի հոդված, տվել է նորան մեզ կարդալ, և մենք այնտեղից քաղել ենք մեր «Կտակ» և «Թիֆլիսեցու հիշողություն» կոչված երգերը։ Այդ ճշմարիտ է, պարոնը մի անգամ տվեց ինձ կարդալ մի աղվեսի պատմություն, որս մեջ նկարագրված էր, որքան հիշում եմ, թե ինչպես մի երևանցի վաճառել էր թիֆլիսեցուն մի հատ աղվես և առևտուրի մեջ խաբել էր նորան։ Թիֆլիսեցին զայրացած դորանով կտակում էր յուր համաքաղաքացիներին

---

[1] «Դայակ» երգի մեջ կրիտիկոսը գտնում է մտքերի հակասություններ, թե պառավի և երիտասարդի խոսքերը հակառակում են միմյանց։ Արդարև, եթե երիտասարդները այնպես մտածեին, որպես Շերմազանյանն է մտածում, հավանական է, որ նոցա և պառավների խոսքերի մեջ կտիրեր կատարյալ համաձայնություն։ Բարեբախտաբար այդպես չէ լինում...

հավիտյան անհաշտ մնալ երևանցիների հետ և միշտ նորանց «մածուն ուտողներ» կոչել, և այլ այդպիսի հիմարություններ։

Այժմ «Փունջի» ընթերցողներին ենք թողնում գտնել, արդյո՞ք մեր «Կատակ» և «Թիֆլիսեցու հիշողություններ» կոչված բանաստեղծությանց մեջ կա ավելի և մածունի վերաբերյալ մի խոսք։

Իսկ թե մեր «Իսրայելը Բաբելոնում», «Որբ օրիորդ» և «Հայ օրիորդ» երգերը քաղվածք են պ. Գյուլզադյանի բանաստեղծություններից, պատասխանում ենք.— ունի՞ արդյոք պ. Գյուլզադյանը բանաստեղծություններ, որտե՞ղ են տպված նոքա, այդ մեզ հայտնի չէ և խնդրում ենք հեղինակից յուրյան բողոքել, եթե գտնում էր նա մեր և յուր երգերի մեջ նմանություն. եթե ոչ, մենք նորա ինքնակոչ փաստաբանի խոսքերը բանի տեղ չենք դնում։

ՀԱՍՈՒՆՅԱՆԸ ԵՎ ՅՈՒՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Համարյա 8 տարի է Կ. Պոլսի մեջ հուզվում է հասունյանների և հակահասունյանների խնդիրը, բայց տակավին յուր վերջնական լուծմանը հասած չէ։ Այդ խիստ տխուր մի երևույթ է մեր հայ-կաթոլիկների կյանքի մեջ, երբ լուսավոր աշխարհի ուշադրությունը դարձած է այն հարցի վերա, թե որքան ընդակալ պապականությունը վնասեց մարդկային առաջադիմության գործին, երբ ամեն մի ազգի մտածող մասը աշխատում է թոթափել իրանից Հռոմի շղթաները, և ահա Տաճկաստանում հանդիսանում է մի կուսակցություն, կնքված Հասունյանի անունով, որ կրկին մտնում է պապի, այդ համաշխարհական հրեշի, ծանր լծի տակ։

Հասկանալի է մի հերձված որևիցե ժողովրդի մեջ, որ, թոթափելով իրանից հնության փոշին, ձգտում էր դեպի ավելի պարզ և ավելի ազատ կրոնական գաղափարները։ Բայց հասունյանների վարմունքը բոլորովին հակառակ երևույթ է ներկայացնում, մի երևույթ, որ քանի մի դարով պետք է ետ մղեր նոցա առաջադիմությունը և կրկին տաներ դեպի այն ստրկությունը, որ քարոզվում է հոգու փրկության անունով...

Մենք ավելորդ ենք համարում մտնել այդ հարցի դավանաբանական վիճմունքների մեջ. քննել նորան ազգային և հասարակական կետից։ Երբ մի փոքր հետու հայացք ենք ձգում դեպի մեր ազգի պատմական անցյալը, տեսնում ենք՝ կրոնափոխությունները հայերի մեջ եղած են ոչ այնքան հավատքի համոզմունքով, որքան քաղաքական նպատակներով։ Հայը, նեղված տաճիկներից, պարսիկներից և այլ բարբարոս հարստա-

հարցերից, չէ մտածել յուր սեփական ուժերից օգուտ քաղել, նա սովորած է եղել միշտ օտարներից օգնություն մուրալ և նորան հասնելու համար զոհել է նա մինչև անգամ յուր գոյության ամենակենական տարերքը՝ յուր անկախ եկեղեցին և ազգությունը։

Հայերի կրոնական միության ձգտումը, երբեմն Հռոմի և երբեմն Բյուզանդիոնի հետ՝ նոցա քաղաքական նպատակների արտահայտությունըն էր։

Բայց ի՞նչ օգուտ շահեցին հայերն այդ ընթացքը բռնելով։ Ոչի՛նչ։ Եվ այն ժամանակներում, երբ պապերի մի խումբը վայր էր գլորում թագավորներին յուրյանց գահից, և այն ժամանակներում, երբ նոցա հրամանով ամբողջ երկրներ ողողվում էին պատերազմական արյունով, պապերի այն հզոր իշխանությունն ոչ միայն չկարողացավ ազատել հայերին թշնամիների սրից, այլ ավելի և ավելի զրգռեց թաթարների, տաճիկների և Եգիպտոսի ամիրապետների կատաղությունը, և Հայաստանը նոցա ավերմունքին զոհ դարձավ։

Այսքան դառն և արյունալից փորձերից հետո արևմուտքից օգնություն հուսալու ցնորքը մինչև այսօր տաճկաստանցի հայերի երևակայության մեջ մեծ դեր է խաղում։ Կապված լինել Հռոմի հետ և պապի, այդ արդեն ուժից ընկած ճիվաղի, օգնությամբ գրավել Ֆրանսիայի կոնսուլների և դեսպանների պաշտպանությունը՝ դոքա գլխավոր շարժառիթներն էին, որք ստիպել են տաճկաստանցի հային ընդունել կաթոլիկությունը։

Չնայելով, որ այժմ Տաճկաստանի կառավարությունը այն չէ, ինչ որ սուլթան Մահմուդի ժամանակ, այսուամենայնիվ պապի որսորդները վաղուց ճանաչած էին հայերի մի այդպիսի թույլ կողմը և ամենայն կերպով աշխատեցին նրանից օգուտ քաղել։ Եվ այսպիսով նոքա կտրեցին ազգի ամբողջությունից 150 000 հոգու հասնող մի հատված, որ կոչում է յուրյան կաթոլիկ և ֆրանգ անուններով, և թուլացրին ազգի միության ուժերը։

Ընթերցողի ուշադրությունը դարձնելով «Մշակի» անցյալ և ներկա համարների բանասիրականի վերա, դառնանք կրկին դեպի հասունյանների և հակահասունյանների խնդիրը։ Որպեսզի կարողանանք լավ ծանոթացնել այդ երկու կուսակցության նպատակների հետ, հարկավոր ենք համարում հիշել, որ մինչև 1865 թիվը, այսինքն՝ մինչև Կիլիկիայի վերջին կաթողիկոս Գրիգոր Պետրոս ութերորդի մահը, Տաճկաստանի մեջ կաթոլիկների հոգևոր կառավարությունը երկու թեմերի էր բաժանված, այն է՝ Կիլիկիայի և Կոստանդնուպոլսի, որք ունեին յուրյանց

առանձին կաթողիկոսները և պատրիարքները։ Նոքա թեև պապի իրավասության ներքո էին գտնվում, բայց դեռ բոլորովին զրկված չէին յուրյանց ազգային առանձնություններից։ Նոքա պահպանել էին յուրյանց նախկին եկեղեցվո ծեսերը, ժամասացությունը և լեզուն։ Ժողովուրդն ինքն էր ընտրում յուր կաթողիկոսները, պատրիարքները և ազգապետները, ներկայանում էր պապի և Բարձր. Դռան հաստատությանը։ Ժողովրդի ձեռքումն էր եկեղեցական կալվածների, դպրոցների, հիվանդանոցի և այլ ազգային հիմնարկությունների պահպանությունը։ Մի խոսքով ժողովուրդն ուներ յուր հասարակական և եկեղեցական անկախ կառավարությունը, նա հպատակվում էր պապին, ընդունելով նորան իբրև եկեղեցվո գլուխ միայն, բայց թույլ չտալով միջամտել յուրյանց ներքին գործերում։

Բայց Հռոմի քաղաքականությանը ընդդեմ էր հայ կաթոլիկների հիշյալ իրավունքների վայելումը, նա ամենայն ջանք գործ էր դնում խլել նրանցից յուրյանց առանձնաշնորհությունները և խղճալի հպատակեցնել Վատիկանի իշխանությանը։ Յուր այդ նպատակին հասնելու համար պապը գործիք էր ընտրում Հասունյան Անտոն վարդապետին, որ 1833 թվին պրոպագանդայի դպրոցում ավարտելով յուր ուսումը, ձեռնադրվում է քահանա և վերադառնում է յուր հայրենիքը՝ Կ. Պոլիս։ Այն օրից այդ նենգավոր եկեղեցականի կյանքը ներկայացնում է մի անընդհատ շարք ինտրիգաների, խռովությունների և ապստամբությունների, որոնցմով նա անցնում է հոգևոր իշխանության ավելի բարձր և բարձր աստիճանները, և վերջապես 1867 թվին նշանակվում է կաթողիկոս և պատրիարք Կիլիկիայի և Կ. Պոլսի աթոռներին, միացնելով այդ երկու որոշ թեմերը յուր իշխանության ներքո։

Հասունյանն յուր վաղուց փափագած բաղձանքին յուրյան հասած էր համարում։ Բայց Պիոս իններորդը էժան գնով չծախեց Հասունին յուր շնորհած իշխանությունը։ Նա պետք է զոհեր հայ-կաթոլիկների դարերով պահպանած իրավունքները պապի կամայականությանը։ Եվ այդպես եղավ։ Պապի և Հասունյանի հետ հաստատած նոր կանոնադրության համաձայն հայ-կաթոլիկների բոլոր ժողովրդական առանձնաշնորհությունները ոչնչանում էին, և նոքա դառնում էին մի լոկ կրավորական մարմին, ենթարկված Հռոմի և նորա ներկայացուցիչների իշխանության ներքո։

Բայց բռնակալությունն այն ժամանակ միայն ավելի զգալի է լինում, երբ ուղղակի կերպով դիպչում է ժողովրդի իրավունքներին։ Հակահասունյանների ապստամբությունը մի համարձակ, միևնույն ժամանակ հակակրական բողոք էր ընդդեմ Հռոմի քահանայապետի մի այդ-

պիսի վարմունքին։ Նոքա ճանաչեցին այն վաղեմի սխալը, թե արևմուտքից նորանց օգուտ չկա, թե նորանց պետք է գրավել տիրող պետության համակրությունը, հիմնվել յուրյանց սեփական ուժերի վերա և պահպանել յուրյանց ազատությունը և ազգային իրավունքները։ Բայց բոլորովին այլապես էր մտածում հակառակ կուսակցությունը՝ հասունյանները։ Նոքա բանեցին պապի և նորա ներկայացուցիչ Հասունի կողմը։ Ահա մի հետադեմ կուսակցություն, որ կույր մոլեռանդությամբ պահում է անխախտական կիսաստվածին յուր ազատությունը, եկեղեցվո ժողովրդականությունը, որ աշխատում է ոչնչացնել յուր ազգային սրբությունները և ստրկանալ:

Բայց որքան զզվելի է ստրկության գաղափարը, այնքան ժամանակ պատմագրության մեջ դատապարտելի կմնա Հասունի և նորա կուսակիցների ազգանենգ վարմունքը...

ՎԱՆՔԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՐՈՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վաղուց է, մեր մեջ ծագել է հոգևորականների վիճակը բարվոքելու խնդիրը, այդ խնդիրն այնքան ուշադրության արժան է, որքան օրինավոր եկեղեցականները անհրաժեշտ են մեզ հայերիս համար։

«Մշակը» հայ լրագրության մեջ, եթե ոչ առաջինն եղավ, բայց ավելի բազմակողմանի կերպով սկսեց քննել այդ հարցը։ Մի կարճ եզրակացություն, որ կարելի է դուրս բերել մինչև այսօր հայտնված դատողություններից, այն է՝ թե մեզ պետք են կրթյալ եկեղեցականներ, ապահովված յուրյանց նյութական դրության մեջ, որք, ազատ կարողություն ունենալով, կարողանային ժողովրդի այժմյան պահանջներին համաձայն լրացնել նոցա պիտույքները։

Քահանաների հարցը բավականապես պարզված համարելով, հարկավոր ենք տեսնում մի քանի խոսք ասել և կուսակրոն եկեղեցականների մասին, որք հոգևոր կառավարության մեջ գլխավոր դերն են խաղում։

* * *

Ի՞նչ է կուսակրոն եկեղեցականը։

Անելով կուսակրոն եկեղեցական, հայ մարդն իսկույն պատկերացնում է մի ծերունի աբեղա, առանձնացած մի վանքի խցում, որ լի ջերմ-

եռանդությամբ «Տերողորմյա» էր դարձնում, Սաղմոս և Նարեկ կարդում, վանքի ուխտավոր-այցելուներին ընդունում...

Յուր մի այդպիսի տարապայման կարծիքի մեջ հայ մարդը մասամբ սխալված չէ, որովհետև նա յուր աբեղային միշտ այդ դրության մեջ է տեսել։ Նա չէ տեսել նորան յուր եկեղեցվո բեմից քարոզ կարդալիս. նա չէ տեսել նորան յուր հիվանդներին այցելություն գործելիս. նա չէ տեսել նորան աղքատի խրճիթը մտնելիս՝ նորա չքավորությանը դարման տանելու. նա չէ տեսել նորան մի մոլորվածին դեպի ուղղություն դարձնելիս. նա չէ տեսել նորան յուր որդիների դաստիարակությանը հոգ տանելիս, մի խոսքով, յուր կյանքի շրջաններում նորա հետ հարաբերություններ ունեցած չէ։

* * *

Հայաստանի եկեղեցին յուր նախկին պարզության մեջ կուսակրոն աբեղաներ չուներ. Գրիգոր Լուսավորիչն ամուսնավոր մարդ էր, և նորա որդիքը, որք մի քանի սերունդ ժառանգաբար տիրեցին նորա աթոռին, նույնպես գերդաստանի հայրեր էին։ Հետո Հայաստանը, ավելի մերձ հարաբերություններ սկսելով արևմտյան եկեղեցիների հետ, ընդունեց նրանցից մյուս ավելորդապաշտությանց հետ և կուսակրոն եկեղեցականությունը։

Բայց Սահակի, Մեսրոպի, Մեծն Ներսեսի ժամանակ, և նրանցից շատ դարեր հետո, կուսակրոն եկեղեցականներն այն նշանակությունը չունեին, որպես այժմ։ Նոքա բացի նրանից, որ ամենայն եռանդով լցուցանում էին եկեղեցվո հոգևոր պիտույքները, այլև հասարակական գործերում առաջին դերն էին խաղում։ Նոցա ձեռքում էր ժողովրդի կրթությունը. նոքա գլխավոր գործիչներ էին գրականության մեջ։ Նոքա էին հանգստացնում մեր երկրի ներքին խռովությունները, հանապազ հաշտություն պահպանելով նախարարների և թագավորող տան մեջ։ Նոքա էին կապում դաշնադրություններ դրացի պետությունների հետ, երբեմն հունաց և երբեմն պարսից արքունիքը դեսպանախոսության գնալով։ Նոքա մասնակցում էին պատերազմների մեջ, երբ պետք էր պաշտպանել հայրենիքը, և հոգս էին տանում ամբոխի բարօրությանը, երբ տիրում էր խաղաղությունը։ Մի խոսքով, նոքա ժողովրդից հրաժարված, անապատական մարդիկ չէին, այլ հասարակական գործիչներ էին։

* * *

Վանքերը և անապատները եղել են Հայաստանի մեջ և այն դարերում, երբ ապրում էին ներսեսները, Սահակը և Մեսրոպը, բայց նոքա ունեին յուրյանց ժամանակին համապատասխանող հասարակական նշանակություն։ Վանքը ծառայում էր որպես հյուրանոց ճանապարհորդների համար, որք առևտրական կամ այլ հարաբերություններով անցնում էին Հայաստանի մի գավառից դեպի մյուսը։ Վանքը, որպես մի ամուր շինվածք, շատ անգամ պատսպարում էր ժողովուրդը թշնամու հարձակումներից։ Վանքերը պահպանում էին յուրյանց մեջ ազգի գրականական հարստությունը, և այնտեղից հեղինակները ընծայում էին հասարակությանը յուրյանց աշխատությունները։ Վանքերից, որպես երկրի մտավոր կենտրոնից, ծնունդ էին առնում գիտնական հոգևորականներ։

* * *

Իսկ ա՞յժմ։

Այժմ ժողովրդի կյանքի պայմանները փոխվել են, և հետևապես նորա պիտույքներն այլ կերպարանք են ստացել։ Իսկ վանքերը ոչ միայն չեն պահպանել յուրյանց նախկին դրությունը, բայց բոլորովին մի այլ և ազգի արդի պահանջներին անբավարար վիճակի մեջ ընկած են։

Ժողովուրդը դեռ վաղեմի ջերմեռանդությամբ թափում է այնտեղ յուր նվերքները, նոքա ծառայում են այս և այն աբեղայի հաճույքին, որոց հաջողվել էր վանքի միաբանը կամ նորա վանքահայրը լինել։ Բայց ի՞նչ են շինում աբեղաները։ Նոքա ազգի համար աղոթում են...

Բայց ազգն այլևս ճգնավորների և աղոթողների այնքան կարոտություն չունի. այժմ վանքի մեջ փակված աբեղան ժողովրդի համար կորած մթերք է։

* * *

Մեր դարում դեռևս հասկանալի է այնպիսի մի վանքի նշանակությունը, ուր մի առանձին միաբանություն կենտրոնացրել է յուր գործունեությունը և աշխատում է մի որոշ նպատակի համար։ Այդպիսի միաբանության յուրաքանչյուր անդամները, իբրև մեկ մարմին, ծառայում են ընդհանուր գործին, այդպես նոքա տարածում են յուրյանց գաղափարները, կազմում են մի առանձին կուսակցություն որոշ հատկություններով և որոշ ձգտումներով։

Մխիթար Սեբաստացին առաջինն եղավ հայերի մեջ, որ մտածեց մի այդպիսի միաբանություն կազմել, բայց նորան հաջողվեցավ միայն կաթոլիկության անունով. այնուամենայնիվ, Վենետիկի վանքը փոքր արդյունք չտվավ հայերին։ Այդ հիշելով, մենք չենք կամենում պաշտպանել կղերական գաղափարը, միայն կասենք՝ մեր վանքերն յուրյանց այժմյան անորոշ դրության մեջ հազիվ թե կարող են ազգի պահանջներին համապատասխանող բավականություն տալ։

* * *

Ս. Էջմիածնի վանքը, որպես ընդհանուր հայության հոգևոր և մտավոր զորության կենտրոն, վերջապես հասկացավ յուր ժամանակակից նշանակությունը. նա հիմնեց մի ճեմարան գիտնական եկեղեցականներ պատրաստելու։ Արդարև, խիստ գեղեցիկ նպատակ։

Ճեմարանը կառուցվեցավ բավականին հոյակապ շինվածքով և ընդարձակ պրոգրամայով. աշակերտները հավաքվեցան, օրհնության հանդեսը կատարվեցավ, և դասատվությունները սկսվեցան։ Բայց ցավալին այն է, որ կրակը հենց առաջին քայլափոխում մեծ հարվածք տվեց նորա ընթացքին։

Ամենայն ինչ, որք անհրաժեշտ էին մեր օրինավոր ճեմարանի կազմակերպության համար, բոլորը պատրաստված էին։ Իսկ գլխավոր բաները, որք պակաս էին մնացած՝ էին ուսուցիչները և տեսուչը։

Բոլորովին հույս ունենալով, որ վեհ. կաթողիկոսը ամենայն ջանք գործ կդնե ճեմարանը կրկին նորոգելու, հարկավոր ենք համարում նկատել, եթե նա կհանձնվի (որպես եղավ սկզբում) դարձյալ վաղեմի վարդապետների և տիրացուների ձեռքը, այն ժամանակ ճեմարանը կդառնա էլի Ղաղարապատի հին դպրոցը, միայն նոր պատերի մեջ...

Մի ուսումնարանի հին կամ նոր պատերն ոչինչ ներգործություն չունեն և չեն կարող ունենալ աշակերտների հմտության վերա, ուսումը մատակարարողը պատրաստված վարժապետներն են։ Ցավում ենք, որ մինչև այսօր մեր ազգի մեջ յուրյանց գիտությամբ հայտնված անձինքներից և ոչ մինը չհրավիրվեցավ ս. Էջմիածնի ճեմարանում։

* * *

Արժանավոր եկեղեցականների կարևորությունն և նոցա պահանջն այնքան խիստ է մեզ համար, որ "այդ" մասին ամենայն ապացույց ավելորդ կլիներ առաջ բերել։ Բայց որովհետև մեր խոսքը գլխավորապես

կուսակրոն եկեղեցականների վրա է, հարկավոր ենք համարում մասնավորապես բացատրել նոցա այժմյան նշանակությունը։ Մենք թողնում ենք աբեղաներին, որք անապատական կյանք են վարում. նոցա թիվը մի բարի բախտով օրըստօրե պակասում է մեր վանքերից։ Մնում է կուսակրոնների այն մասը, որք հոգևոր իշխանության (եպարխիայի) կառավարչական (ադմինիստրացիայի) պաշտոններն են վարում։ Այդ վերջինները են վիճակների առաջնորդները, նոցա ձեռքումն է թեմական և ծխական ուսումնարանների կառավարությունը։ Նշանակի՝ նոքա են ուղղություն տալիս ժողովրդի թե՛ բարոյական և թե՛ մտավոր զարգացմանը։ Նշանակի նոցա ձեռքումն են երկու ամենագլխավոր գործիքները մեր լուսավորության՝ դպրոց և եկեղեցի։

Բայց մի ժողովուրդ կառավարելու համար, նորա կարիքը հասկանալու և նորա ժամանակակից պիտույքներին բավականություն տալու համար, պետք է լավ պատրաստած լինել և լուսավոր աշխարհի ընդունած գիտությունների մեջ զարգացած լինել։ Վանքերի չորս պատերի մեջ աբեղայական խմորով թթված մարդը հազիվ թե կարող էր ժողովրդի ցավերին դարման տանել...

* * *

Բայց մինչև ճեմարանը կհասներ յուր կատարելագործված դրությանը, մինչև նա յուր խորին-աստվածաբանական քուրայից կձուլեր մեզ համար արժանավոր եկեղեցականներ, մի՞թե մենք պետք է սպասենք և չաշխատենք մեր մեջ գտնված, արդեն պատրաստի ուժերից օգուտ քաղել։

Մեզանում էլ գտնվեցան երիտասարդներ, այո՛, եռանդոտ և ջերմ նախանձով վառված գիտնականներ, որք նվիրվեցան կուսակրոնության այն նպատակով, որ յուրյանց գործունեությամբ մի նոր զարկ տան եկեղեցականների դարավոր անշարժությանը, հեղաշրջեն հին-աբեղայական դրությունը և ժողովրդի պահանջմունքներին համաձայն լցուցանեն նոցա հոգևոր և մտավոր պիտույքները։ Ցավալին այն է, որ նոքա էլ այն արդյունքը չկարողացան բերել, որքան սպասելի էր։

Ի՞նչ է պատճառը։

Երևակայեցեք մի որևիցե համալսարանում ավարտած ուսանող կամենում է վարդապետ լինել։ Նա էլ ստիպված է փակվել մի վանքի խցում և անցկենալ այն բոլոր փորձությունները, ինչ որ պահանջվում է այս և այն «հայր սուրբի» հողաթափները լիզող մի տիրացուից... Նորա աշ-

խույժը մասամբ սառած է լինում, մինչև քանի մի տարիներից հետո հագցնում են նորա գլխին սև վեղարը։

Այժմ նա վարդապետ է, ուզում է գործել և յուր գաղափարներին համաձայն ուղղություն տալ ժողովրդին։ Նա քարոզում է եկեղեցում, բայց մի կենսական և հասարակական միտք հայտնել կարող չէ։ Նա լույս է ածում որևիցե հրատարակություն, բայց նորա աշխատությունը չէ կարող հաջողություն ունենալ, եթե ներշնչված չէ վաղեմի նախապաշարմունքներով։ Նա հրավիրվում է որպես տեսուչ, կամ վարժապետ որևիցե դպրոցում, այնտեղ ևս արգելում են նորան, և նա զրկվում է միակ ասպարեզից, ուր նվիրված էր դաստիարակել ազգի որդիքը։

Նորընծա վարդապետը որքան և գիտնական լիներ, դարձյալ նա յուր սեփական կամքի տերը չէ, նորա գլխին միշտ հսկում է մի ավելի եկեղեցական, ավելի բարձր աստիճանի վերա կանգնած «հայր սրբազան»։

Ի՞նչ պտուղ կարող էր տալ, հարցնում ենք, մի նորահաս ծառ, որ գտնվում էր մի փտած և հսկայական ծառի ճնշողության ներքո...

* * *

Որոնել եկեղեցական արժանապատվությունը ոչ գիտության, այլ մորուքի ավագության մեջ, գլխավոր պատճառներից մեկն է, որ թույլ չէ տալիս նորընծա վարդապետներին ինքնուրույն գործել։ Որպեսզի նոքա ամեն մի քայլափոխում խոչընդոտներ չունենային, երկու բանից մեկը պետք է լինի. կամ պետք է սպասել մինչև հիները անցնեին, և կամ նորահաս վարդապետներին եկեղեցական բարձր տեղեր պաշտոններ տային։ Այն ժամանակ գոնյա թե՛ մեծավորը և թե՛ ստորադրյալը, երկուքն էլ իբրև նոր սերունդի մարդիկ, համամիտ և համակամ լինելով, նոցա գործը կընթանար լծորդաբար, առանց մինը մյուսին խանգարելու։

Այս ասելով, մենք չենք կամենում հերքել, թե կարելի էր գործել եկեղեցական պաշտոնների և աստիճանների ստորին կարգերում, բայց ստորադրյալն որքան զարգացած, որքան և հմուտ մարդ լիներ, դարձյալ անկարելի բան է, որ նա յուր կատարելու գործին կարողանար օրինավոր ընթացք տալ, երբ նորա մեծավորն անզարգացած մարդ է։ Նա ամեն մի րոպեում կքանդեր այն, ինչ որ ստորադրյալը բազում աշխատությամբ շինած էր։

Ժողովրդի պահանջը նոր է, իսկ առաջնորդող հոգևոր գլուխը՝ հին սերունդի մարդ։ Մի գիտնական, թարմ սրտով և նոր գաղափարներով երիտասարդին առաջնորդ լինել անկարելի է, որովհետև առաջնորդ լինելու համար պետք է նախ և առաջ եպիսկոպոս լինել, իսկ վերջինի համար պահանջվում է ալևոր գլուխ և մի նշանավոր քանակություն տարիների…

* * *

Քրիստոս երեսուն տարեկան էր, երբ սկսեց վարդապետել, կնշանակե՝ յուր երիտասարդության ավելի թարմ հասակումն։ Մեր պատմության մեջ ևս ունենք օրինակներ, որ շատ մանկահասակ անձինք հասան եկեղեցական բարձր աստիճանների, մինչև անգամ կաթողիկոսության։ Այժմ հարցնում ենք, ի՞նչ է արգելում մեր ուսյալ երիտասարդներից ընտրել նույնպիսիքը, որպեսզի նոքա ենթարկված չլինեին ծերերի ճընշումներին։ Եթե դորան արգելում է այն, որ մեր երիտասարդները ծանոթ չեն Տաթևացու աստվածաբանությանը, կամ սովորած չեն Այսմավուրքի առասպելները, դոքա ինքստինքյան մի մեծ թերություն չեն կարող համարվել։ Բայց եթե նոքա փորձված չեն, դորան պատասխանում ենք՝ անձնական փորձը տգետների համար է, զարգացած մարդն անցյալի և ընդհանուր մարդկության փորձերից օգուտ է քաղում։ Իսկ եթե մեր երիտասարդները կասկածավոր էին համարվում այն պատճառով, որ նոքա զարգացած էին օտարազգի դպրոցների սնունդով, դորան մենք պատասխանում ենք, որ մեր հինգերորդ դարու նշանավոր գործիչները նույնպես հայոց վանքերի ծնունդներ չէին։ Նոքա արդյունավոր եղան նորանով, որ օտար երկրներից բերած գիտությունը հարմարեցրին յուրյանց երկրի պահանջներին և ժողովրդի պետքերին համապատասխանող կրթություն տվին։ Բոլորովին բնական և անհերքելի ճշմարտություն է, որ մի ծառի պտուղն այն ժամանակ միայն կատարելագործվում է և ազնվանում է, երբ մի օտար շյուղ պատվաստվում է նորա վերա։ Ամեն մի ծառի հարատևելն յուր միատեսակ որակության մեջ կպահպանե նորա վայրենությունը, ավելի ոչինչ…

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Մեզանում գրականությամբ պարապողներն ըստ մեծի մասին աղքատ մարդիկ են։ Եթե նրանցից մեկը հեղինակել կամ թարգմանել էր որևիցե գիրք, տարիներով նրա աշխատությունը լույս չէ տեսնում, մնում է առանց տպագրվելու։

Ի՞նչ անե հեղինակը։ Նրա աշխույժը սառչում է, նա հուսահատվում է և դադարում է աշխատելուց. տեսնելով, որ յուր պարապմունքը ոչ միայն հաց չէ տալիս նրան, այլև նա զրկվում է յուր գործունեության բարոյական բավականությունից։

Մի միջոց, որ շատ անգամ գործ է դրվում մեզանում գրքեր տպագրելու, այն է, որ հեղինակը կամ նրա բարեկամներից մեկը ստիպված են լինում բաժանորդագրության թերթը դռնեդուռն ման ածել, դռանդռան ընկնել, որ մի քանի օրինակ ստորագրեն, արծաթը կանխիկ վճարելով։ Եվ եթե հաջողվում է մի այդպիսի ձանձրալի ձեռնարկություն, այն ևս ոչ թե հեղինակի տաղանդը հարգելու և նրան խրախույս տալու համար է լինում, ոչ, այլ որպես ռամկորեն ասում են՝ «խաթրի համար»։

Թե հիշյալ միջոցներով գիրք տպագրելը որքան է վիրավորում հեղինակի անձնասիրությունը, այդ ինքնըստինքյան հասկանալի է. բայց ինչ հնարներ պետք է գործ դրած նրանց այդ դժվարություններից ազատելու համար։

* * *

Անհասարակ գրքերի պահանջը մեզանում այնքան զգալի է, որ այդ մասին երկար խոսելը բոլորովին ավելորդ է։

Մանկավարժական ժամանակակից խնդիրն արդեն զարթել է մեր մեջ, և մենք խիստ հաճախ լսում ենք՝ նոր մեթոդ, նոր եղանակ պետք է մտցնել դպրոցների մեջ. հին, փտած դրությունը պետք է ոչնչացնել և նոր համակարգությամբ կազմակերպել ուսումնարանների ձևը և այլն։

Բայց այդ վերանորոգություններին հարկավորած դասագրքերն ունե՞նք արդյոք։ Այդ մասին ո՛չ ոք չէ մտածում։

Գիտությունների և արհեստների դասատվությունը մայրենի լեզվով պետք է լինի, կրկնում են նույն ձայները, և երեխան երեխայությունից պետք է սովորի մտածել և խոսել ազգային լեզվով։

Իսկ այդ առարկաներին հարկավոր ձեռնարկներ ունե՞նք։ Դարձյալ ո՛չ ոք չէ մտածում։

Հարաժամ լսում ենք՝ ժողովրդի մեջ պետք է ընթերցանություն տարածել, դարուս լուսավոր գաղափարները պետք է նորա մեջ տարրացնել, արհեստների և գիտությունների հետ պետք է ծանոթացնել և հեռացնել պետք է նրանից վաղեմի նախապաշարմունքները, սովորեցնելով նորան ազատ և առողջ դատողություն։ Ահա այդպիսի հազար ու մեկ ցանկություններ լսում ենք մեզանում։ Բայց ո՞ր գրքերի միջոցով կարող ենք հասնել դորան։ Պատասխանը կլինի՝ գրքեր չունենք։

* * *

Ինչո՞ւ չունենք։

Կոշկակարն յուր արհեստով ապրում է. հյուսն յուր արհեստով ընտանիք է պահում. իսկ գրքերի հեղինակն յուր գլուխն անգամ պահել չի կարողանում։ Նորա արդյունաբերությունը մի այնպիսի մթերք է, որ խիստ սակավ է գնահատվում։ Չկա մի ձեռք, որ գնելով նորա աշխատության նյութը՝ հաղորդեր ամբոխին։

Մեր հայ գրավաճառները մեծ մասամբ օտարազգի գրքերի առևտուրով են պարապված։ Նոքա խիստ հեռու են պահում յուրյանց այն մըտքից, որ գնեին հայ հեղինակի աշխատությունը և յուրյանց ծախսով հրատարակելով տարածեին ամբոխի մեջ։ Եվ եթե նրանցից մեկը հոժարվում է գնել մի աշխատություն, այն ևս այնպիսի պայմաններով, որ հեղինակի թղթի և մելանի արժեքը չէ դուրս բերում։

Իսկ առանձին մեկենասներն մեր մեջ հազվագյուտ բաներ են։ Մեր հարուստները պատրաստ են հազարներով մսխել յուրյանց փառասիրության համար, իսկ մի հեղինակի միջոց տալ յուր աշխատությունը ի լույս ածելու, այդ նրանց համար մահ է։

* * *

Մասնավոր անձանց նվիրատվությամբ գիրք տպագրելը հաստատուն լինել չէ կարող, որովհետև զոհաբերությունը որքան գեղեցիկ բան է, այնքան և անտևողական է։

Ուրեմն, գրքերի տարածելը ժողովրդի մեջ ոչ թե մասնավոր մարդու գործ է, այլ մի կազմակերպված ընկերության գործ։

Թողնենք օտարազգիների մեջ զանազան ձևերով եղած տպագրա-

կան ընկերությունները, թողնենք Կ. Պոլսի մեջ նույն նպատակով կազմված մի քանի ընկերություններ, հիշենք միայն Վենետիկը և Վիեննայի հայ աբեղաների միաբանությունները։ Նոքա ոչ միայն ազատեցին մեր հին մատենագրությունը Հայաստանի վանքերի խորշերում փտելուց, այլև ընծայեցին մեզ թվով շատ ինքնուրույն և թարգմանական հեղինակություններ։ Նոքա մի կողմից տարածեցին մեր հասարակության մեջ ընթերցասիրություն, ծանոթացրին եվրոպական գիտությունների հետ, մյուս կողմից, հարստացրին յուրյանց վանքը։

Ս. Էջմիածնի տպարանը կարող էր նույն դերը խաղալ, ինչ որ արեցին վենետիկցիք, եթե նրա գործունեությունը չլիներ սահմանափակված, և եթե վանքի միաբանությունը կազմված լիներ գիտնական աբեղաներից, և նոքա յուրյանց նվիրած լինեին գրականության։

Բայց դժբախտաբար Ս. Էջմիածնա մամուլը ճաշոցներով և սուրբ գրքերի հին մեկնություններով է զբաղված...

* * *

Վերոհիշյալ հանգամանքներն աչքի առաջ ունենալով, մեզ համար խիստ զգալի է լինում մի օրինավոր ապագրական ընկերության կարևորությունը։

Բայց թիֆլիսեցի հայը ոչ մի գործի միջամուխ չէ լինում, մինչև նորա մեջ մի շոշափելի օգուտ չտեսնի։ Հինգ աբասով առնել, տասն աբասով ծախել, այդ բաները նորան այնքան սովորական են, որ նա մի ուրիշ առևտրական հիմնարկության վերա չէ մտածում։ Առհասարակ թիֆլիսեցի հայի գործունեությունը վաճառականական ասպարեզում դալալի գործունեություն է, մի ձեռքից առնել, մյուս ձեռքին տալ. նա ինքը մի նյութ արդյունաբերելու ընդունակ չէ։

Ուրեմն խիստ դժվար է հասկացնել, թե վաճառականական սկզբների վերա հիմնված մի տպագրական ընկերություն կարող էր տալ նրանց, եթե ոչ այն կողոպուտներն, որ անում են յուրյանց առևտուրից, այլ մի արդար և խղճմտանքով արդյունք։ Իսկ դորանով մեր դրամատերները բավականանալ կարող չեն։ Դարձյալ ստիպված ենք դիմել ուրիշ միջոցների։

***

«Մշակի» 45-րդ համարում տպված էր մի լուր, թե մեծապատիվ Օնանովի հորդորանքով հավաքվում է մի գումար Ներսիսյան դպրոցի հոբելյանի տարեդարձը կատարելու համար։ «Մշակը» յուր կողմից արել էր մի առաջարկություն, թե ավելի լավ կլիներ հոբելյանի հանդեսն որքան կարելի է համեստ կերպով կատարել և ավելորդ գումարն ընծայել դըպրոցին, նորա տոկոսով մի աշակերտ արտասահմանում ուսանելու համար։

Այժմ լսում ենք, որ քանի օր առաջ մեծապատիվ Օնանովի հոգատարությամբ կազմվել է մի ժողով բժշկապետ Շահպարունյանցի տանը, ուր հավաքված են եղել Ներսիսյան դպրոցի հին աշակերտներից ոմանք, ստորագրել են մի նշանավոր գումար, որի տոկոսով մի աշակերտ պետք է ուսում առնե արտասահմանում հանուն հանգուցյալ Ալամդարյանի, որը նոցա վարժապետն է եղել։ Արդարև, երախտագիտության մի գովելի արտահայտություն է այդ դեպի այն մարդու հիշատակը, որ նոցա մտավոր և բարոյական դաստիարակիչն է եղել։

Բայց հանդիսականներից մինը՝ պարոն Ն. Տ. Շ., հայտնելով գրատպության այժմյան մեծ կարևորությունը և նկարագրելով հեղինակների աննախանձելի դրությունը, նույն ժողովի մեջ արել է ուրիշ առաջարկություն, թե հավաքված գումարը փոխանակ գործ դնելու մի աշակերտ ուսում առնելու համար, ավելի օգտավետ կլիներ նույն գումարով կազմել մի դրամագլուխ, որի տոկոսով տպագրվեին զանազան գրքեր, և այդպիսով միջոց տրվեր հեղինակներին թե՛ ապրելու և թե՛ եռանդով աշխատելու։

Որպես լսում ենք, պարոն Ն. Տ. Շ...ի առաջարկությունն ընդունվել է ժողովի ընդհանուր համակրությամբ, և նոքա վճռել են՝ բացի հանգուցյալ Ալամդարյանի անունով հավաքված նվիրատվությունները, կազմել մի տպագրական ընկերություն, ստորագրությամբ հավաքելով մի առանձին դրամագլուխ գրատպության գործին նպաստելու համար։

Հուսով ենք, որ մեծապատիվ Օնանովն ի թիվս յուր այլ բարեգործությանց՝ կատարումն կտա և տպագրական ընկերության հաստատությանը, որը մեր կենսական ամենամեծ պահանջներից մեկն է, և այդպիսով կդյուրացնե գրքերի տարածվիլը մեր հասարակության մեջ։

Հիշյալ գումարի գործադրության կամ նորա ընկերության պայմանների մասին խոսելն ավելորդ է այժմ, միայն այսքանը պետք է ասել, որ դրամագլուխը պետք է հասնի այն քանակության, որ դորա տարե-

կան 1000 ռուբլի ծախս բերե։ Այն ժամանակ կարող էին տպագրվել ամեն մի տարի երեք գրքեր, մոտավորապես 300 երեսից բաղկացած, և յուրաքանչյուր գրքից 1200 օրինակ։

* * *

Բոլորովին անիրագործելի բան չէ մի այդպիսի տպագրական ընկերություն, զոհաբերության սկիզբների վերա հիմնված, այնպիսի անձանց կողմից, որ այժմ մտածում են այդ մասին։ Մանավանդ, որքան մեզ հայտնի է, թեև նոքա անվերադառնալի կերպով ընծայելու են մի գումար, բայց նոցա ծախսի փոխարեն յուրաքանչյուրն միշտ և ժառանգաբար ստանալու է մի-մի օրինակ ընկերության բոլոր հրատարակություններից։

Ներսիսյան դպրոցն ընծայել է մեր հասարակությանը, բացի յուրյանց հայրենի լեզվին հմուտ և ազգային ոգվով կրթված բազմաթիվ աշակերտներ, այլ նույն անձանց մեջ շատերը վայելում են բախտի առանձին բարիքները, նոքա մեր քաղաքի հարստականների շարքումն են դասվում։ Որպես լսում ենք, մեծապատիվ Օնանովի համախոհները, որք մտածում են տպագրական ընկերության մասին, նույն դասակարգի մարդիք են։ Ուրեմն նրանց համար մի մեծ ծանրություն չէր լինի հոբելյանի առթիվ կազմել մի մշտական դրամագլուխ, օգտավետ հրատարակությունների համար։ Այդպիսով, մի կողմից հեղինակներին միջոց կտրվեր աշխատելու, մյուս կողմից թե՛ մեր դպրոցները և թե՛ հասարակությունը զրկված չէր մնա այն գրքերից, որոց մեծ կարոտություն ունի։

Եթե պարոն Ն. Տ. Շ...ի առաջարկությունը բոլորովին կիրագործվի, այն ժամանակ մենք պատրաստ ենք հրատարակել մի ամբողջ ծրագիր հիշյալ տպագրական հիմնարկության թե՛ կանոնների և թե՛ նորա վարչության ձևերի մասին։

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Հեռվից միշտ լսում ենք, թե Թուրքիայում ազատություն կա, թե մանավանդ Թուրքիայի հպատակ հայերը վայելում են սահմանադրական իրավունքներ, թե թուրքաց տերության հովանավորության տակ կա և հասարակական, և տպագրական ազատություն...

Բայց ազատության բառը միացնում է իր հետ իրավունքի և պարտավորության գաղափարները...

Ազատությունը զանազան տեսակ կարող է լինել՝ կա ազատություն, որ հետևանք է մի ժողովրդի, մի պետության ինքնության, դարավոր, հասարակական և պատմական կյանքի կանոնավոր, թեև դանդաղ զարգացման, կա ազատություն, որ արդյունք է մի հասարակության կիսավայրենի դրության, որտեղ դեռևս թե պետական, թե հասարակական հարաբերությունները որոշված չեն հաստատ օրենքներով, որտեղ տիրում է կատարյալ կամայականությունը...

Ո՛չ մի տեղ այդքան ազատություն չկա, որքան մի վայրենի երկրում, օրինակ կենտրոնական Աֆրիկայում. այնտեղ ազատություն է՝ որովհետև կարող ես ամեն բան անել, ինչ որ ուզում ես, բայց այդ ազատությունը նման չէ լուսավորված երկրների մեջ եղած ազատությանը, որ կայանում է պետության և ազգի իրավունքների և պարտավորությունների հավասարակշռության վրա։

Պարսկաստանի մեջ շատ ժամանակ չէ, որ պատահել է հետևյալը՝ ամերիկացի միսիոնարները հիմնել են այնտեղ մի տպարան և սկսել են հրատարակել առանց ցենզուրա գրքեր, լրագիրներ ամենաազատամիտ բովանդակության, և ոչ ոք չէ արգելում նրանց... ահա ըստ երևույթի կատարյալ ազատություն։ Բայց հանկարծ իրանց գրվածների մեկի մեջ խոսելով շահի վրա և շարելով արքաների արքայի բոլոր տիտղոսները, մոռացել են նրա տիտղոսներից մինը հիշել, միսիոնարներին մատնեցին, և լրագիրը արգելվեցավ։

Թուրքիայի մասին մենք միշտ լսում ենք, թե այնտեղ ազատություն կա, թե կարելի է դասախոսություններ կարդալ, լրագրներ առանց ցենզուրա հրատարակել, ուսումնարաններ հիմնել, զանազան ձեռնարկություններ իրագործել՝ առանց որևէ արգելքի պատահելու տերության կողմից... ահա ըստ երևույթի ընդարձակ ազատություն։ Բայց հանկարծ մի որևէ մասնավոր մատնության պատճառով մի լրագիր արգելվում է առանց դատաստանի...

Հայերը ունին Թուրքիայում սահմանադրական իրավունքներ, ունին ազգային ժողով։ Բայց ազգային ժողովի նիստում, երբ մի անդամ, որ բարձր ծագումից չէ, հակառակ է խոսում մի ամիրայի, այդ ամիրան կամայական կերպով կարող է վռնդել տալ նրան ժողովից...

Թուրքիայի և Պարսկաստանի պես երկրներում կարելի է ամենակարճ ժամանակում բարձրանալ մինչև ամենանշանավոր աստիճաններ և պաշտոններ, բայց միևնույն ժամանակ կարող է պատահել, որ նույն

բարձր պաշտոնյան մի օրվա մեջ իր բարձրությունից ընկնի, աքսորվի, կորցնի իր կյանքն անգամ...

Վերջին ժամանակներս Թուրքիայի տերության կամայականությունը լրագիրների վերաբերությամբ մինչև ծայրահեղությունը հասավ։ Լրագիրները արգելվում են կամայորեն, առանց որևէ դատաստանի, առանց նախազգուշության։ Արգելվեցան՝ «Levant Times», «Progres d'Orient», *քանի մի թուրքաց և հայոց լրագիրներ, իսկ այժմ «Մասիսից» տեղեկանում ենք, որ թուրքաց տերությունը արգելեց օտար մի քանի լրագիրների մուտքը Թուրքիա՝ արգելվեցան ֆրանսիական* «Univers», «Semaphore» *և մի քանի հունական լրագիրներ...*

Հազար անգամ լավ է մի զորեղ անսահման իշխանություն, որոշ թեև խիստ օրենքների վրա հիմնված, քան կիսավայրենի մի երկրի կամայական իշխանությունից տված ազատությունը։

Լավ է անսահման որոշ իշխանությունը, քան թե ծայրահեղ ազատությունը միացած ծայրահեղ կամայականության հետ։

[«ՓՈՒՆՋԻ» ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ]

Գալոց տարվա հունվար ամսից սկսվելու է «Փունջի» 3-րդ հատորի տպագրությունը, ուստի խնդրվում է պատվելի պարոններից, որոնք զանազան քաղաքներում հանձն են առած, «Փունջի» 1-ին և 2-րդ հատորների տարածելը, իրանց մոտ գտնված պատրաստի արծաթը դարձնել Թիֆլիս դոք. Աբգար Հովհաննիսյանին, որպես «Փունջի» մնացած հատորների տպագրությունը շարունակվի։

ԹՈՒՐՔԻԱ

Փոքր Ասիո սովը ամենածանր երկրորդ կատարածներ է անում, ձմեռվա վրա հասնելը մի երկրորդ դժբախտության պատճառ եղավ ժողովրդին. ճանապարհների հաղորդակցությունները դժվարացան, և խեղճ սովատանջները զրկվեցան դրսից շուտափույթ կերպով պաշարներ ստանալուց։ Ամեն կողմից բարեգործական օժանդակությունները դեռ շարունակվում են. Նորին մեծ սուլթանը յուր սեփական կայքից շնորհեց 20 000 լիրա, իսկ մայր թագուհին 5000 լիրա։ Այդ նմանում է այն հայրերի ծնողական զգացմունքին, որոնք անգութ կերպով իրանց որդիներին ճնշում են, մաշում են քանի նրանք առողջ են, իսկ երբ հիվանդացան, սկսում են սիրել, երբ մեռան, մի քանի կաթիլ արտասուքով միայն մխիթարում են իրանց...

Փոխանակ ժողովրդի հարկերը թեթևացնելու, փոխանակ նրա անտեսական դրությունը բարվոքելու, փոխանակ միջոց տալու երկրագործության ծաղկելուն, կառավարությունը յուր պարտքերի բացը ծածկելու համար մինչ այն աստիճան հարստահարում է նրանց, որ ժողովուրդը շատ չէ ցանում, որովհետև արդյունքը չէ կարողանում լրացնել այն հարկերը, որ պետք է վճարե կառավարությանը։ Այստեղից հասկանալի է, թե ինչու սովը հաճախ կրկնվում է նույն երկրներում։

Նորոգ պատրիարքության ժամանակ վճռված ազգային խնդիրների կարգում անցավ և եկեղեցականների ընտրության հարցը։ Կրոնական ժողովի նոր կանոնադրության համաձայն, հոգևորականներ լինելու արժանավորություն ունենալու համար, պետք է լինել՝ համեստ, բարոյական, կրթված սուրբ գրոց մեջ և ունենալ մի քիչ էլ *ուսում, այդ վերջինը ամենաերկրորդական տեղն է բռնում... Պատվական «Մասիսը»*

մինչև անգամ այդ ևս ավելորդ էր համարում, նա 1874 ամի յուր 1586 թերթի մեջ հայտնում է այն միտքը, թե ի՞նչ պետք է եկեղեցականների դրությունը բարվոքելու համար նոր կանոնադրություն, երբ մեր մայր Մաշտոցի մեջ ամեն բան գրված է... (՞) Թե ամեն մի նոր վերանորոգություն եկեղեցականների վերաբերությամբ համարվելու է զեղծում հայաստանյայց եկեղեցվո դեմ և այլն։

Խավարասերնե՜ր, միշտ դեպի հինը, միշտ դեպի ետ, բայց ոչ երբեք մի քայլ առաջ...

Աչքային, փոքրիշատե հասարակական նշանակություն ունեցող հարցերի կարգում կարելի է դասել և Կ. Պոլսի հայ գաղթականների խնդիրը, որոնք գավառներից թափվում են դեպի մայրաքաղաքը և տարիներով մնում են այնտեղ։ Ազգ. ժողովը վճռեց ազդարարություն տալ ծխատեր քահանաներին և եկեղեցիների երեսփոխաններին, որ նրանք խրատեն և համոզեն պանդուխտներին չորս տարուց ավելի չմնալ Կ. Պոլսում, այլ դառնալ իրանց հայրենիքը։ Մի՜շտ պալիատիվ *միջոցներ և ոչ արմատական...*

Փոխանակ քննելու այն պատճառները, որոնք ստիպեցնում են պանդուխտներին թողնել հայրենիքը, իրանց տունը, տեղը և ընտանիքը, և տասն-քսան տարիներով մաշվել օտարության մեջ, փոխանակ մտածելու այն միջոցների մասին, որոնք հնար տային գաղթողներին մնալ իրանց հայրենական հողի վերա և հաստատուն ապրուստ ունենալ. ժողովը յուր վճռով տերտերներին և մղդսիներին է դիմում... Ահա ինչպես են օգուտ քաղում մեր զարգացած պոլսեցիք Սահմանադրության արտոնություններից...

Գաղթականության հարցը ամենագլխավոր տեղն է բռնում Տաճկաստանի հայերի վիճակի մեջ։ Ամեն տարի հազարավոր երիտասարդներ Վանից, Մուշից, Բաղեշից, Կարինից և այլ գավառներից, դիմում են դեպի Կ. Պոլիս՝ իրանց ընտանիքի համար ապրուստ շահելու։ Այդ հոսանքը գնալով ավելի ընդարձակ քանակություն է ստանում, քանի նույն երկրներում ժողովրդի ապրուստի հնարները դժվարանում են։ Ցավալին այն է, որ պանդուխտներից շատ քչերին է հաջողվում վերադառնալ յուր հայրենիքը. մեծ մասը կորչում են մայրաքաղաքի մեջ, թողնելով հազարավոր անբախտ և անխնամ ընտանիքներ...

Չենք հիշում, թե որքա՞ն է վնասում գաղթականությունը մեր ազգի աճելությանը, իսկ ավելի զգալի կորուստ է այն, որ հայ ազգաբնակությունը հեռանում է յուր բնիկ կենտրոնից, որի վերա պետք է հաստատված լիներ նրա կյանքը և ապագան։ Որ նա յուր հայրենական հողից

ստանար յուր սնունդը և ոչ մեծ քաղաքներում նամալություն աններ։ Ահա գլխավոր խնդիրը, որի վերա պետք է ուշադրություն դարձներ ազգ. ժողովը։

Վսեմափայլ Երեմյան բեյը շնորհեց մի նշանավոր դրամ՝ ազգային սնդուկի պարտքերը վճարելու համար։ Բարեգործությունը միշտ գովելի բան է, այդ պատճառով էլ Պոլսի լրագրությունը ջերմ խնկարկություններ է անում։ Մենք խորհուրդ կտայինք ուշադրություն դարձնել այն հարցի վերա, որ ազգ. վարչությունը կանոնավորեր յուր անհաշիվ անտեսությունը, որ մյուս անգամ նրա սնդուկը մի նոր Երեմյանի օգնության կարոտ չմնար։

Խրիմյանի բողոքը յուր վերա դրած ծանր զրպարտության մասին մնաց առանց հետևանքի։ Խե՜ղճ Հայրիկ, մխիթարեցեք ձեզ նրանով, որ այդպես է մի անզարգացած հասարակության մեջ գործիչների վախճանը... Շա՜տ ապրի Պոլսո լրագրությունը, նա մի մարդու գործունեությունը քննելու ընդունակություն չունի, իսկ նրան անձնապես մրոտելու վարժված է...

Կ. Պոլսի լրագրությունը բացարձակ հայտնում է, թե Խրիմյանին յուր աթոռից զրկելու համար մի նշանավոր անձից 25 000 ռուբլի ուղարկված է եղել «կծողների» ատամները սրելու և նրանց բերնում լեզու դնելու համար։ Որքան ուղիղ է այդ լուրը, մենք չգիտենք, միայն այսքանը կարող ենք ասել, որ մեր բարձր եկեղեցականների մեջ հիշյալ միջոցը նոր բան չէ. մի ժամանակ նրանք կաշառում էին պարսից շահերին, տաճկաց սուլթաններին և միմյանցից աթոռներ էին խլում, այժմ կաշառում են գրական մամուլը...

Կրոնական ժողովի նախազգուշությունը, որ դարձած էր Կ. Պոլսի լրագրությանը, որ նրանք եկեղեցականներին վերաբերյալ տեղեկությանց մեջ համեստություն պահպանեն, նրանց անձնականությանը չդիպչեն և այլն... Այդ հռոմեական կոչը խեղճ «Մասիսի» գլխին կոտրվեցավ. լրագիրը դադարեցավ յուր գործունեությունից։ Կրոնական ժողովը փոխանակ լրագրության ձայնը լռեցնելու, ավելի լավ կաներ հոգևորականներին ուղղել։ Կեղտոտ գործը կմնա միշտ կեղտոտ, թեկուզ, գործողը աշխարհական լիներ, թեկուզ հոգևորական....

Սահմանադրության զանազան հոդվածները, որոնց ժողովրդի այժմյան պահանջներին անհամապատասխան լինելու մասին բողոքում էր Խրիմյանը — այդ գլխավոր հարցը նույնպես ուշադրության առնված չէ։ Իսկ ի՞նչ բաներով զբաղված է Կ. Պոլսի ազգ. վարչությունը, ավելի ոչինչ չենք կարող հաղորդել, որովհետև մի շոշափելի բան չենք գտնում։

«ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ ԿԱՄ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ»

Գրքույկի առիթով, տպված Կ. Պոլսում, 1874 ամի Գ. վ. Սրվանձտյանցի աշխատասիրությամբ

Կարդալով Խորենացու խոսքերը, որով նա մեղադրում է յուր նախորդների անհոգությունը, թե նրանք չթողեցին որևիցե հիշատակարան հայերի պատմական անցյալից, ընթերցողը բոլորովին իրավացի է գտնում ծերունի պատմագրի գանգատը։ Բայց նույնիսկ Խորենացին չկարողացավ իրան ազատ պահել մի այդպիսի անհոգությունից, որի դեմ բողոքում է տասնիններորդ դարու սերունդը։

Խորենացին մեզ ավանդեց մեր նախնյաց պատմությունը, իսկ այդ ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ լոկ ազգահամար իշխող տների։ Խոսվում է նրանց գործունեության մասին, երբ պատերազմ կա, երբ հաղթում են, կամ հաղթվում են։ Իսկ թագավորի ներքին գործերի, նրա օրենսդրության և կառավարչական ձևերի մասին գտնում ենք խիստ աննշան տեղեկություններ։ Պետությունը կազմող մարմինը (ամբոխը) չէ մտնում նրա պատմության մեջ. ժողովրդի ընտանեկան և քաղաքական կյանքից մենք ոչինչ չենք գտնում։

Նույն մեթոդին հետևեցին մեր և մյուս պատմագիրները։

Թողյալ այդ, Խորենացին, ակնարկելով յուր ժամանակի «գողթան, թվելյաց, ցցոց, վիպասանաց» երգերի մասին, հիշելով հին զրույցները և ավանդությունները, տալիս է մեզ մի քանի կտորիկներ միայն այն թանկագին ժառանգությունից, որոնց ամբողջությունը կարող էր լույս գցել մեր ազգի խորին առասպելավիպական անցյալի վերա։

* * *

Արդյոք, մենք ևս նույն մեղադրանքներին չե՞նք ենթարկվելու, ինչով դատապարտում ենք մեր նախնիքներին, եթե զրկենք ապագա սերունդը գրականության այդ մասից։

Մի այնպիսի անշարժ ազգ, որպես եղել է և է հայը, նրա կյանքի ձևերը շուտով չեն փոխվում։ Մինչև այսօր պահպանել է նա յուր հին սովորությունները, մինչև այսօր նրա կյանքը լի է նախապաշարմունքներով։

«Գողթան երգիչների» թամբուրը դեռ ոչ բոլորովին լռել է Հայաս-

տանում. աշուղները և այսօր հիշեցնում են հին վիպասաններին։ Այդ կույր հոմերոսները[1] ժողովրդական բանաստեղծներ են։ Աշուղը, ժողովրդի սիրելին, յուր սազն առած, թափառում է գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, երգում է ու հեքիաթներ է ասում։ Աշուղը գրագետ մարդ չէ, բայց նա բերանացի գիտե ամբողջ վեպեր. նա հանպատրաստից հորինում է ամբողջ երգեր. նրա հոգու բխմունքը արտահայտությունն է ժողովրդական ոգևորության։

Մտածո՞ւմ են արդյոք մեղանում հավաքել և գրի անցուցանել աշուղների, այդ կենդանի հնադարանների մեջ պարունակված վեպերը և երգերը, որոնց նրանք մի օր իրենց հետ գերեզման կտանեն։

Բացի դրանից, մեր ժողովրդի մեջ մինչև այսօր իրանց սկզբնական պարզությամբ պահպանվել են զանազան ավանդություններ, սնոտիապաշտություններ, առասպելներ, զրույցներ, երդումներ, անեծքներ, առածներ, ասակներ, երգեր և այլ ծեսեր ու սովորություններ։ Դրանք այնպիսի խորին կապ ունեն մեր ամենահին անցյալի հետ, որ մասամբ կարող են լրացնել այն թերությունները, ինչ որ նկատվում են մեր պատմագրության մեջ։

Որպես բնագետը մի կենդանու քարացած ժանիքից կազմում է մի ամբողջ գաղափար նրա մարմնի կազմվածքի մասին, նրա ջրհեղեղյան գոյության մասին, այնպես և հետախույզ հնագետը մի ժողովրդական ավանդությունից կարող է եզրակացնել նույն ազգի անցյալ կյանքի այս և այն ձևերը։

Թողյալ այդ, ժողովրդական ավանդությունները, նրա առասպելները և զրույցները ծնունդ են ժողովրդի երևակայության, նրանց հավաքածուն նպաստում է նույն ազգի բանաստեղծությանը։ Որովհետև մի ազգի բանաստեղծությունն այն ժամանակ միայն կենդանանում է և նույն ազգի բնավորության հատկանիշ կերպարանքն է ստանում, երբ նա ծագում է նրա ավանդություններից։

Մի կարևոր ժողովրդական լեգենդայի վերա պոետը կարող է հիմնել յուր հոյակապ ստեղծագործության շինվածքը։

---

[1] Աշուղ պարսից էշխ բառիցն է, որ նշանակում է բանաստեղծական ոգևորություն։ Աշուղներ կոչվում են և ժողովրդական երգիչները կամ սիրահարները։ Հայոց աշուղները մեծ մասամբ լինում են կույր մարդիկ, երևի նորա համար, որ կյանքի մեջ ուրիշ պարապմունք չգտնելով, իրանց նվիրում են բանաստեղծության։

Դառնալով Գ. վ. Սրվանձտյանցի գրքույկին, մենք գտնում ենք նրան մինը այն աշխատություններից, որ յուր պարունակությամբ բոլորովին համապատասխանում է մեր վերոհիշյալ մտքերին։ Գրքույկը բաղկացած է 192 երեսից. առաջաբանից հետո հեղինակը խոսում է հայոց գավառական բարբառների մասին (առավելապես Տարոնի և Վասպուրականի նահանգների) և ցույց է տալիս օգտավետությունը ժողովրդական բառեր հավաքելու, այժմյան մեր գրականական լեզուն հարստացնելու համար։

Բոլորովին համակրելով հեղինակին, մենք ավելի կընդարձակենք նրա միտքը, ասելով, որ միանգամայն սխալ է դատողությունը այն պարոնների, որոնք պնդում են, թե մեր այժմյան կենդանի լեզուն պետք է կազմվի հին գրաբարից, և թե միմիայն գրաբարից պետք է առնենք այն ամեն բառերը, որոնք հարկավորվում են մեր այժմյան գրականության մեջ։

Այդ կարծիքը խաբեական է այն պատճառով, որ մի հին, գործածությունից ընկած լեզվի մեջ չեն կարող գտնվել այն բոլոր բառերը, որոնցմով կարելի լիներ արտահայտել մեր ժամանակակից գաղափարները։

Մի ազգի լեզուն աճում է և զարգանում է ներդաշնակաբար նույն ազգի կյանքի և մտավոր զարգացման հետ։ Որքան ընդարձակվում է նրա գիտությունը և արհեստը, այնքան ավելի առարկաների հետ ծանոթանում է նա և այնքան ավելի անուններ ու բառեր է հնարում։ Այդ է պատճառը, որ վայրենի ազգերը հազար անգամ ավելի քիչ բառեր ունեն, քան թե քաղաքակրթված ազգերը։

Մեր գրաբար լեզուն ժողովրդի բերանով մեզ հասած կենդանի լեզուն չէ, որ նա կարողանար աճել, մշակվել և կատարելագործվել նրա կյանքի պայմանների հետ։ Մեր գրաբար լեզուն մի քանի տասնյակ դարերով առաջ մեռած լեզուն է, որ հասել է մեզ գրված հին մատենագրության դավթարների մեջ։ Ուրեմն նա արտահայտություն է այն ժամանակվա դրության, որպես մտածում էր և գործում էր հայը։

Թողյալ այդ, նույն գրքերը, որոնց միջոցով հասել է մեզ գրաբար լեզուն, չեն պարունակում նկարագրեր իրանց ժամանակի կենսական բոլոր երևույթների։ Մեր հին մատենագրությունը կազմված է պատմական և կրոնական գրքերից, որոնց պարունակությունն այնքան միակողմանի և համանման է, որ միևնույն բառերին հանդիպում ես ամեն տեղ։

Նրանց մեջ պակաս են, օրինակ. բառեր անտեսական և ընտանեկան կյանքի, նրանց մեջ շատ չկան գիտական, արվեստագործական և հոգու զգացմունքներ արտահայտող բառեր, որովհետև այդ առարկաների մասին խոսվում է կամ խիստ սակավ, կամ ամենևին ոչ։

Բառերի մի փոքր ընդարձակ հավաքածու տալիս է մեզ Աստվածաշնչի թարգմանությունը, որովհետև նրա պարունակությունն ավելի բազմակողմանի է։

Իսկ ժողովրդական լեզվի մեջ մեծ մասամբ կարելի է գտնել այն բառերը, ինչ որ պակասում են մեր հին գրքերից հավաքված բառարաններում։ Մտի՛ր գյուղացու խրճիթը, նրա տնտեսական բոլոր կահ-կարասիքը նրա լեզվում ջոկ-ջոկ անուններ ունեն։ Գնա՛ երկրագործի մոտ, նա յուր գութանի և արորի բոլոր պարագաների անունները կասե քեզ. նա կասե քեզ ժամանակների անունները, երբ նա ցանում է, նա կասե քեզ այս և այն հատկություն ունեցող հողերի անունները։ Ուզում ես ծառերի, թփերի, պտուղների անուններ գիտենալ, գնա՛ անտառների մեջ բնակվող շինականի մոտ, նա բոլորը կասե քեզ։ Ուզում ես ծաղիկների և խոտերի հետ ծանոթանալ, հարցրու խաշնարած հայից, նա կասե քեզ՝ ոչ միայն յուր սարերի և դաշտերի բույսերի անունները, այլև նրանց բժշկական հատկությունները։ Մի խոսքով, դու գյուղացի հայի լեզվի մեջ կգտնես՝ նրան շրջապատող բնության շատ առարկաների անունները և կլսես նրա կարծիքը յուրաքանչյուրի մասին։

***

Այնուհետև հեղինակը նկարագրում է մի շարք խիստ հետաքրքրական ավանդություններ, որոնց մեջ դեռ նշմարվում են հետքերը մեր հեթանոսական անցյալի։ Ավանդություններից մի քանիսը ունեն դիցաբանական նշանակություն, այդպես է այն գեղեցիկ լեգենդը, որ պատմում են Մշու դաշտի բնակիչները Աստղիկի մասին։ Թե Աստղիկը սովորություն ունի ամեն գիշեր Եփրատի[1] մեջ լողանալու, թե հայոց կտրիճները կրակ են վառում Դաղոնաց լեռան վերա (դա հանգած վուլկան է), որ նրա մարմնի չքնաղությունը տեսնեն։ Գեղեցիկ դիցուհին ամբողջ այն միջավայրը պատում է մշուշով (մառախուղով) և յուր մարմինը անտեսանելի է անում սիրաբորբոք տարփածուներից։

Այդ պատճառավ Մշու դաշտի հորիզոնը մշուշով պատած է, և այդ մշուշից երկիրը կոչվեցավ Մուշ։ Իսկ ժողովրդական երգը ասում է՝

---

[1] Եփրատը հոսում է Մշու դաշտի միջով և կոչվում է Մուրատ գետ։

Մշու սարեր մշուշ է
Յար հողն ու ջուր անուշ է։

Առհասարակ, հեղինակի ասելով, Տարոնի և Վասպուրականի մեջ շատ նվիրական սարեր, բլուրներ և ժայռեր կապ ունեն Աստղիկի անվան հիշատակի հետ։

* * *

Լեզ կամ Հարալեզք, հայտնի են մեր պատմության մեջ, որպես լիզելով մեռած մարմինները կենդանացնողներ, վերջին անունը նրանք ստացան գուցե այն դեպքից հետո, երբ Շամիրամի աղերսանոք հրավիրվեցան լիզել պատերազմում ընկած սիրելու՝ Արայի վերքերը և կենդանացնել նրան։ Որովհետև Արալեզք նշանակում է Արային լիզողներ։ Երևում է, այդ աստվածների պաշտոնն էր՝ խնամք տանել ավելի կռվի դաշտում ընկածներին, նրանց վերքերը բուժելու համար, այդ իհարկե մի խրախույս էր դեպի պատերազմը։

Հայերը Լեզք անունով կուռք էին պաշտում այն բլուրի վերա, ուր այժմ դեռ մնում են Լեզքա ամրոցի ավերակները, որոնց քարերը պատած են բևեռագրերով։ Հեղինակը ասում է՝ քանի տարի առաջ պղնձի արձաններ և այլ հնություններ գտնվեցան այնտեղ։

Նույն բլուրի վերա, ուր առաջ Լեզքերի մեհյանն էր, այժմ կանգնած է Ամենափրկչի մատուռը և Աշխարհամատրան կյուրակեին մեծ տոնախմբություն է լինում այնտեղ։ Այդ, իհարկե, կռապաշտությունից դեպի քրիստոնեություն անցած, մի հին սովորություն է։

Շամիրամի անունը նույնպես դեռ ոչ բոլորովին անհետացած է այն տեղերից, և այժմ Շամիրամ անունով մի գյուղ կա Դրգուռ լերան մոտակայքում։ Արտամետու մոտ մի ահագին ժայռ կա, որ կոչվում է Մամ-Քար, որի մասին խոսվում է, թե Շամիրամ այն ժայռը յուր ծամերուն կապելով, պարտաքարի պես Վանա բերդից նետել է մինչև այնտեղ։

* * *

Տարոնը և Վասպուրականը, որպես այն աշխարհը, ուր հանդիսացավ մեր Հայկ դյուցազնի պատերազմը Տիտանյան Նեբրովթի հետ, մինչև այսօր անթիվ հիշատակարաններով կապված են այդ հսկաների

անունների հետ։ Նեմրութա[1] լեռանը նայելով, մշեցի հայը ցույց է տալիս յուր որդուն «Բելի ուղտերի քարավանը[2], նրա զորքերը, որոնք աստուծո հրամանով քար դարձան»։ Նա ասում է՝ կռապաշտ թագավոր էր Բելը, իրան աստուծո տեղ դրեց և եկավ մեր թագավորի վերա կռվի։ Աստված պատժեց նրան, և մեր թագավորին զորություն տվավ, Բելին սպանեց։ Նրա մարմինը վեր հանեց Նեմրութա սարի գագաթը, այնտեղ թոնիր փորեց և, դիակը մեջը կախելով, այրեց։ Աստծո հրամանով կրակը ջուր դարձավ և մոխիրը ջրի տակն անցավ, չլինի՞ թե նա երկրի վերա ցրիվ գա և աշխարհը ապականե։

Ով որ տեսնե Նեմրութա սարի գիրքը և նրա կաթսայաձև գագաթը, ուր կանգնած է փոքրիկ լճակ, կհամոզվի, թե որքան գեղեցիկ հարմարացրած է այդ ավանդությունը մեր պատմության առասպելական սկըզբի հետ։

Խորենացին ասում է. «Հանյալ կախե ի լյառն մի բարձր զմարմին Բելա ի տեսիլ կանանց և որդվոց»։ Շատ կարելի է, որ Հայկը Բելի դիակը որպես յուր քաջության առարկան, յուր գերդաստանին ցույց տալեն հետո, հեթանոսական օրենքով այրեց նրան։

Շատ հավանական է տեղացիների կարծիքը, թե Նեմրութա գագաթի լճակի ջուրը, սարի տակովն անցնելով կազմում է Մեղրագետի ակը։ Եվ արդարև, Նեմրութա սարից ոչ այնքան հեռու գետնի խորությունից շատրվանաձև դուրս է ժայթքում ջրի ահագին կիտվածք, որտեղից սկիզբն է առնում հիշյալ գետը և անցնում է Մշու դաշտի միջով։

Թե Բելը և Նեբրովթը նույն անուններն են համարվում, որպես մեր պատմության, նույնպես և ժողովրդական ասացվածների մեջ, դրանում տարակույս չկա։ Հայաստանի մյուս մասներում, օրինակ Ղարաբաղի և Ղարադաղի կողմերում, Բելի անունը առակ է դարձել. յուր հպարտություններով հիմարացած մարդուն հայը միշտ ասում է՝ «բելացել է»՝ այսինքն՝ Բելի բնավորությունն է ստացել։

Հայկա անունը և հիշատակը նույնպես մոռացված չէ Վասպուրականից. նրա քաջագործությունքը դեռ թողել են իրանց հետքերը։ Այնտեղ է «Հայկա կամ Հայոց ձորը», Բելի և մեր դյուցազնի պատերազմի

---

[1] Նեմրութա կամ Նեբրովթա լեռը Մշու դաշտի արևելահյուսիսային կողմումն է, Վանա ծովակի մոտ։ Նրա մոտն է Գրգուռ սարը, որի մասին ավանդություն կա, թե Նոյի տապանը նրա գագաթից քսվելով անցավ, գրգռալու ձայն հանեց, և դրա համար Գրգուռ անուն ստացավ։

2 Դրանք մի շարք ցցված ժայռեր են, որոնք հեռվից ուղտի քարավանի պատկեր են ներկայացնում։

պաշտը։ Վանա քաղաքից դուրս մի արվարձան մինչև այսօր կոչվում է Հայկավան։ Հայկա ձորի մեջն է Տըրշող գյուղը, ուր ժողովրդական ավանդությամբ արեգակի շողը անցավ Հայկի նետից ծակված Բելի ըրահապատ կողքից։ Նույն ձորի մեջն է և Հայկ անունով գյուղը։

***

Շատ հետաքրքրական են ավանդությունները օձերի և վիշապների մասին։

Պատմությունից մեզ հայտնի է, որ Երվանդյան Տիգրանի ժամանակ օձը և վիշապը հայկական դրոշակի նշանն էին, գուցե ի հիշատակ այն հաղթության, որ Տիգրանը գործեց «վիշապազանց» դեմ։ Մինչև այսօր Տարոնի նահանգի արևելա-հարավային կողմում մնում են Օձ քաղաքի ավերակների հետքերը, ուր այժմ նույն անունով փոքրիկ գյուղ կա։ Տարոնի պատմիչ Հովհանն եպիսկոպոսը վիշապ անունով քաղաք է հիշում նույն նահանգում, Աշտիշատա մոտ։

Առհասարակ օձերի, մանավանդ վիշապների վերա նայում է հայը որպես գերբնական զորությունների վերա։ Հեղինակն ասում է, թե մինչև այսօր Տարոնի և Վասպուրականի մեջ մի տեսակ օձեր համարվում են երկրի պաշտպաններ, և նրանց չարչարելը կամ սպանելը մեղք է համարվում։ Այլև մասնավոր տներում իբր թե բնակվում են օձեր, որոնք նույն գերդաստանի պաշտպանն են, որոնց գոյության հետ կապակից է այն ընտանիքի բախտը, հաջողությունը, կամ անհաջողությունը։ Հեղինակը հիշում է և մի առասպել, թե որպես մի տան պաշտպան օձը սպանվելով, ընտանիքը անբախտության է ենթարկվում։

Մինչև այսօր սովորություն կա, որ երեխաների գդակի վերա կարում են օձի կամ վիշապի ձև ունեցող արծաթյա բժժանքներ. իհարկե, այդ զարդարանքի համար չէ, այլ ունի մի դյութական նշանակություն[1]։ Որպես Հայաստանի շատ տեղերում երեխաների գդակի վերա կարում են արծաթյա մահիկներ[2], այսինքն՝ կիսալուսնի ձև ունեցող մի զարդ. նույնը հուլունքներով շարած, հարսները կապում են իրանց պարանոցին։ Որպես երևում է, դրանք հին հեթանոսական սրբություններ են,

---

[1] Թիֆլիսի կինտոները ևս կրում են իրանց բթամատի վերա գալարված օձի ձև ունեցող մատնիք։

[2] Մահիկ պարսկերեն մահ բառիցն է, որ նշանակում է լուսին։

որոնք ունեին նույն նշանակությունը, որպես խաչի գործածությունը քրիստոնեական աշխարհում։

Թե լուսինը պաշտվում էր հայերից որպես աստված, այդ մենք գիտենք, իսկ թե օձերը և վիշապները նույն սրտտնությունն էին վայելում, այդ հարցը այնքան տարակուսական է, որ խորին քննությունների է կարոտ։ Միայն կասենք, որ օձերը և վիշապները կախարդության մեջ մեծ դեր էին խաղում։ Եվ այսօր օձի շապիկը հայը պահում է յուր ծոցում, տալով նրան թիլիսմանական նշանակություն։

Վիշապները իրանց հսկայական զորությամբ անկարելի բան է, որ նույն ազդեցությունը չունենային հայի սնահավատության վերա, որպես Եգիպտոսում և Հնդկաստանում։ Առհասարակ հայը նայում է վիշապների վերա, որպես անմահ էակների վերա, իբր թե վիշապը հազար տարեկան դառնալեն հետո, հրեշտակները քաշում են նրան դեպի երկինքը, որ երկիրը չապականե։ Այդպես է նայում հայը թաթառի, կամ դեպի երկինքը բարձրացող պտտվող մրրիկների սյուների վերա։ Հիշյալ երևույթներին նա տալիս է մի խորհրդական նշանակություն, որպես թե վիշապներ էին քաշվում։

Վասպուրականի հայերը հավատում են, թե Վանա ծովակի խորքումը բնակվում է մի վիթխարի վիշապ, որի վերա պատմված հրաշալիքները հիշեցնում են Հոբա լևիթանը։

Ավելի առասպելական բնավորություն ունի տեղային հայերի կարծիքը օձերի մասին, իբր թե նրանք մի կազմակերպված կառավարություն ունեն. թագավորը կրում է թանկագին դոհարներով զարդարած պսակ. նրա թագուհին բոցագույն գիսակներ ունի. թե նրանց ամրոցը գտնվում է Դաղոնաց լեռան այրերի մեջ։ Թագավորը յուր զորքերով կռվելու է գնում Դիարբեքիրի (Տիգրանակերտ) կողմերում բնակվող յուր հպատակ օձերի հետ, երբ նրանք ապստամբվում են, հաղթում է նրանց և դառնում է գերիներով և անհուն ավարով[1] և այլն։

Այդ առասպելը չէ՞ հիշեցնում արդյոք մեր Երվանդյան Տիգրանի պատերազմը Աժդահակի և վիշապազանց հետ[2]։

---

[1] Այդ ավանդությունը սույն իսկ ձևով պատմվում է Նախիջևանի մոտ գտնվող Իլան-Դաղի (օձի սարի) մեջ բնակվող օձերի և նրանց պետության մասին։

[2] Աժդահա պարսից և մեդացվոց լեզվով նշանակում է վիշապ։ Խորենացին նկարագրում է Տիգրանի պատերազմը վիշապազանց հետ, և թե որպիսի առասպելաբանական կերպարանք ստացավ նա հայերի ժողովրդական վեպերի մեջ։

***

Հայաստանի լճերը, գետերը և աղբյուրները պահպանել են տակավին իրանց Ներյան կույսերը և հավերժահարսունքը։ Մինչև այսօր պատմըվում են զանազան զրույցներ «հրեղեն աղջիկների» մասին։ Վանա գավառում հայոց հուրիաների[1] սրսկարանն է Արչակա[2] լճակը։ Տարփավոր երիտասարդները իրանց պատրաստում են զանազան միջոցներով և գիշերը պառկում են նույն լճակի ափերու մոտ, որ «հրեղեն աղջիկները» ջրից դուրս գալու ժամանակ հափշտակեն նրանց։

Նույն լճակում կան և «հրեղեն նժույգներ», որոնց բաշը հյուսում են հավերժահարսունքը իրանց քնքույշ մատներով և այլն։

Թե աստվածները և նրանց սերունդը ժողովրդի երևակայության ծնունդ են, դրանում տարակույս չունենք։ Ամեն ազգի դիցաբանության մեջ երևում է նույն ազգի փիլիսոփայությունը, այլև նրա բնավորությունը և ճաշակը։ Հույները սեպհականեցին իրանց աստվածներին մինչև անգամ իրանց ամենաանբարոյական հատկությունները։

Իսկ հայը, մի ժամանակ լուսինը պաշտող հայը, և այժմ նույն հատկություններն է գտնում նրա մեջ, որպես յուր կանանց մեջ։ Հայ կինը ամոթխած է, նա ոչ ոքի հետ չէ խոսում, յուր գեղեցկությունը ծածկում է ամենից։ Հայոց լուսինը, արեգակի նշանածը, այդ երկնային թագուհին, նույն բնավորությունն ունի։ Նա յուր դեմքի շքեղությունը քողարկել է ամպերից հյուսած նուրբ շղարշով, յուր նաժիշտներին (աստղերը) յուր հետն առած, ման է գալիս գիշերով, երբ նրա ամուսնացուն (արեգակը) քնած է։ Նա յուր պարկեշտ ողջախոհական ամոթխածությամբ ամաչում է հանդիպել նրան, որպես հայ օրիորդը միշտ խույս է տալիս յուր ապագա ամուսնից, քանի դեռ նրա հետ պսակված չէ։

Իսկ Արեգակը գիշերները մտնում է Վանա ծովակի մեջ հանգստանալու յուր ցերեկվա աշխատությունից, երեկոյան նրա ննջարանը բաց է անում յուր ոսկեղեն դռները, վարդագույն-ծիրանի ամպերը իրանց նուրբ և թափանցիկ ծալքերով կազմում են նրա անկողնի վարագույրները, որ դրած է ծովակի հատակում սպիտակ փրփուրներից հյուսած մահճակալի վրա։

---

1 Հուրիա, այդպես են կոչվում Մուհամմեդի դրախտի հավերժահարսունքը, այդ արաբական անունը գուցե կազմվել է մեր հուր բառից. հրեղեն կոչվում են մեզանում այն էակները, որոնք մարմին չունեն։

2 Արչակա, ժողովրդական բարբառում աղճատված անուն է, փոխանակ ասելու Արշակա։

Առավոտյան, երբ զարթնում է արեգակը, լվացվում է նույն ծովակի ալիքների մեջ, և յուր գեղեցիկ դեմքի թացությունից, որպես մարգարիտներ ցողում է վաղորդյան շաղը ծաղիկների, խոտերի և դաշտերի վերա։ Ահա որպես բանաստեղծորեն է մտածում հայը յուր հին, բայց մինչև այսօր իրանց պաշտոնը ճշտությամբ կատարող աստվածների մասին[1]։

* * *

Պատմությունից հայտնի է, որ Տարոնը Հայաստանի այն նահանգներից մինն է, ուր ավելի ծաղկյալ դրության մեջ էր գտնվում կռապաշտությունը։ Այստեղ էր Վահագնի մեհյանը, այստեղ Վահունիք կատարում էին նրա հանդիսավոր տոնախմբությունը։ Այստեղ Լուսավորիչն ունեցավ այն սարսափելի պատերազմը քրմերի հետ։

Այն ևս հայտնի է, որ Լուսավորիչ, քանդելով հին մեհյանները, նրանցից շատերը անմիջապես քրիստոնեական տաճարների վերափոխեց։ Շատ հավանական է, որ իբրև պատրաստի նյութեր, շինվածքի համար գործ դրվեցան նույնիսկ մեհյանների քարերը։ Այդ կարծիքին որպես ապացույց կարող է լինել այն, որ Վասպուրականի մեջ կան եկեղեցիներ և վանքեր, որոնց շինվածքի քարերից շատերը ամբողջապես պատած են բևեռագրերով։ Այդպես են Վան քաղաքի սուրբ Առաքելոց եկեղեցվո տաճարի ներքին պատի քարերը, Վարագա վանքի տաճարի շենքին մեջ գործածված քարերը. Կարմրավորաց վանքինը և այլն։ Երևում է, որ դրանք հին մեհյանների շինվածքի նյութեր են։

Եվ մի մեհյան, քրիստոնեական տաճարի վերափոխվելով, շուտով չէր կարող կորցնել յուր դարերով ժողովրդի սնահավատության հետ կապված ծեսերը և ավանդությունները։ Այդ է պատճառը, որ Հայաստանի վանքերի տոնախմբությունների մեջ և մինչև այսօր տեսնվում են ճիշտ հեթանոսական արարողությունների շատ նշաններ, օրինակ, կա-

---

[1] Մինչև այսօր հայերը երդվում են արևով. «իմ արևը», «քո արևը», այդ երդումներն այնքան հին են, որքան հին էր արևի պաշտամունքը Հայաստանում։ Սույն իսկ երդումը գործ էր ածվում և հայոց հեթանոսական դարերում։ Խորենացու մեջ կարդում ենք՝ «Երդնույր Վարդան յարևն արքայի...»։ Երդումը արևով մինչև այսօր գործ են ածում վրացիք։ Երեսը դարձնել դեպի արևելք աղոթելու ժամանակ, այդ հեթանոսական սովորությունը մտավ գործեց և քրիստոնեական տաճարներում։ Հայը միշտ առանձին ջերմեռանդությամբ է նայում դեպի արևելք. նրա երեսը մինչև անգամ գերեզմանի մեջ դարձած է լինում դեպի այն կողմը, որտեղից ծագում է արևը...

Արևապաշտները, որ կոչվում էին արևորդիք, Հայաստանում երկար ժամանակ մնացին և քրիստոնեական դարերում։

խարդություններ, գուշակող աղջիկների մարգարեություններ, պարերգություններ, աշուղների, վիպասանների հանդեսներ և այլն։

Մշո դաշտի Կլակը, կամ Սուրբ Կարապետ հռչակավոր վանքը մինչև այսօր պահում է յուր հին, քրիստոնեական ժամանակներից մնացած, ոգիներից մինը։ Դա մի դևիկ է, որ իբր թե աներևութաբար վանքի սպասավորություն է անում։ Սուրբ Կարապետ «կաղ դևի» պատմությունն ամեն մշեցի գիտե։ Երբ Լուսավորիչը քանդարկեց կռապաշտական մեհյանի բոլոր ոգիները, այն մինին խնայեց, որովհետև նա խոստացավ միշտ հավատարիմ մնալ վերանորոգված տաճարին, թեև նա այժմ մի նոր աստծուն էր պատկանում։

«Կաղ դևը» մինչև այսօր վանքի վառարանների մոխիրը շալակած, գետնի տակով տանում է դեպի Տիգրանակերտ և թափում է Փրեքաթման գյուղի մոտ, որից ահագին բլուր է ձևացել։

Ահա որպես է բացատրում այդ առասպելը ժողովրդական երգը.

Լուսավորիչը ժողվեց դիվան,
Լցեց զընդան.
Կաղ դևն եկավ ասաց՝ յաման,
Ձիս մի դընեք զընդան.
Ես կեզնեմ սուրբ Կարապետու փոշեհան.
Տանեմ, թափեմ Փրեքաթման.
Մինչ օր Քրիստոս գա դատաստան։

Դևերի մի ահագին խումբ էլ սուրբ Կոնոնոսի վանքումը կա, կարասներու մեջ լցրած, բերանները կնքած և գետնի տակը թաղած, ուր պետք է մնան մինչև վերջին դատաստանի օրը։ Հոգվոց վանքը, որը Վասպուրականի մեջն է, նույնպես ունի Ղուզրաթ խաթուն[1] անունով մի աղջիկ դև, որ նույնպես թոնիրների մոխիրները դուրս է ածում և շատ անգամ երևում է միաբաններին...

* * *

Գ. վ. Սրվանձտյանցի ավանդությանց հավաքածուի մեջ մի քանիսը վերաբերում են ժողովրդի ընտանեկան և հասարակական կյանքին։ Օրինակ, այն ժայռերը, որոնք Վանա մոտ կոչվում են հարսն ու փեսա,

[1] «Ղուդրաթ-խաթուն» նշանակում է բնության տիրուհի։

դրանք մի զույգ անբախտ ամուսիններ էին, որոնք պսակվեցան ընդդեմ իրանց ծնողաց կամքին։ Աստված բարկացավ նրանց վրա և հարսանիքի միջոցին թե հարսն ու փեսային, թե հանդիսականներին և թե երաժիշտներին բոլոր քար դարձուց։

Ահա մի ազդու արտահայտություն ծնողական բռնակալության... Հորն ու մոր կամքը այնքան մեծ նշանակություն ունի որդիների ամուսնության մեջ, մինչ որևիցե ընդդիմադրություն զավակների կողմից կարող էր նրանց աստուծո պատժին ենթարկել... Հայոց ընտանեկան կյանքը, ուր որդիների կամքը ամուսնության մեջ ոչինչ կշիռ չունի, շատ բնական էր, որ ստեղծեր հիշյալ ավանդությունը։

Կալվածատերերի հարստահարությունները ևս չէին կարող չանցնել ժողովրդական ավանդությունների կարգում։ Վանա հյուսիսային կողմում Դալաշեն գյուղի մոտ են «շեղջա դար»[1] կոչված հողաբլուրները։ Դրանք մի հարուստ, բայց ագահ կալվածատիրոջ ցորենի կույտերն են, որ յուր անսահման ժլատության և խստասրտության պատճառով աստված հողային բլուրների փոխարկեց։

«Սուրբ Թոնիրի»[2] ավանդությունը պարունակում է յուր մեջ բոլոր զարհուրանքը խանդոտ ամուսնու։ Գեղեցիկ տերտերակինը թոնրի մեջ հաց թխելու միջոցին, գալիս է նրա մոտ մի մուրացկան. ափկնոց կրակի տաքությունից շառագունած երեսը գրավում է մուրացկանի սիրտը։ Նա հաց է խնդրում, տերտերակինը տալիս է. կերակուր և գինի է խնդրում, նույնպես տալիս է։ Վերջապես մի համբույր է խնդրում։ Տերտերակինը մտածում է. «Աղքատ բեմարզու (կարոտյալ) է, ինչ կա, վարձք է...»։ Համբույրն էլ տալիս է։ Նույն վայրկենին երեցը ներս է մտնում, տեսնում է կնոջ անպարկեշտությունը։ Երեցկինը, որը ամոթից, որը երկյուղից, իրան գցում է թոնրի կրակի մեջ։ Կատաղած տեր հայրը հետևում է նրան, որ բռնե և պատժե, ինքն էլ ընկնում է կրակի մեջ։ Բայց աստուծո հրամանով թոնիրը դառնում է ավազան. կրակը փոխարկվում է ջուր, և տերտերակինը կերպարանափոխվում է մի ձուկ, որ մինչև այսօր լողում է նույն ավազանի մեջ, ոսկի օղը քթից անցուցած, որպես հավիտենական խրատ անհավատարիմ ամուսիններուն[3]։

---

[1] Շեղջ նշանակում է ցորենի կամ ուրիշ բանի կիտվածք, իսկ դար—նշ. բլուր, կամ հողային բարձրություն։

[2] Սուրբ Թոնիրը—Թոնրի ձև ունեցող մի ավազան է Լեզք գյուղի մոտ, որտեղ ուխտագնացություններ են լինում, և կանայք զանազան հմայողություններ են անում։

[3] Հայաստանի մի քանի գավառներում կանայք մինչև այսօր օղեր ունեն անցուցած իրենց քթից որպես զարդ։

* * *

Հեղինակը հիշում է մի քանի ավանդություններ «աղնավորների» գերեզմանների մասին, որոնց շատերը ունեն հսկայական մեծություն։ Նրանց համարում է զանազան ցեղապետների դամբարաններ, որովհետև աղնավոր նշանակում է տոհմ կամ ցեղ ունեցող։ Նա նկարագրում է, թե որպես այն գերեզմաններից շատերը դարձել են ուխտատեղիներ և այլն։

Հեթանոսական դարերում նշանավոր մարդիկ, որոնք իրանց մտավոր կամ մարմնական զորություններով ավելի բարձր էին, քան հասարակ ամբոխը, համարվում էին դիցազունք և պաշտելի էին դառնում ժողովրդին։ Նույն սնահավատությունը կրկնվել է մինչև այժմ անզարգացած ժողովուրդների մեջ։ Քիչ չէ պատահում յուր քաջությամբ հռչակված մարդու կամ մի կախարդի գերեզմանը երկրպագության առարկա է դառնում, տաքցոց, կամ այլ հիվանդություններ ունեցողները լվացվում են նրա վերա, բժշկություն հուսալով, և կանայք դյութական գործողություններ են կատարում այնտեղ։ «Աղնավորների» գերեզմանները նույն նշանակությունն ունեն։ Նրանք պատկանում են այնպիսի անձանց, որոնք գրաված են եղել ռամկի սնահավատությունը, որ տեսնում է նրանց մեջ, իրան անմատչելի, մի գերբնական ուժ։

Մեր առանձին ապացույց է ավանդությունը, որ խոսվում է Մանազկերտի Բասսան խալայ կամ Քարապարանց կոչված գյուղում «աղնավորի» գերեզմանի մասին։ Նույն գյուղի մոտ ակոսաձև ճղճղած քարադաշտը, որ պարանցի քարացած թոմբերի նմանություն է բերում, դեռ ներկայացնում է այն դիրքը, որ կապ ունի ավանդության հետ։ Ահա նրա վեպը՝ «Աղնավորը» հեռու տեղից հափշտակում է մի գեղեցիկ «հրեղեն աղջիկ», բերում է հիշյալ գյուղում, պալատ է շինում և բնակեցնում է նրա մեջ։ Նրա անունը լինում է Շիրին։ Բայց որքան աշխատում է նա, չէ կարողանում գրավել աղջկա սերը. Շիրինը միշտ անհնարին պայմաններ է առաջարկում «աղնավորին»։ Օրինակ, որ նա այնտեղի քարադաշտը վարե, բոստան ցանե, վարունգ բուսցնե, Շիրինը ուտելուց հետո կսիրե նրան։ Հսկա «աղնավորը» քսան լիդրանոց բահը ձեռին երկար տանջվում է, մինչև քարերը փշրելով պարտեզ է շինում և կատարում է Շիրինի բաղձանքը։

Խորամանկ աղջիկը մի նոր և ավելի դժվարին առաջարկություն է անում, թե նա ուզում է վարունգը հարիսայի հետ միասին ուտել. և խնդրում է «աղնավորից»՛ գնալ Սիփան սարի գեղերից մի աման հարիսա բերել։

Մինչ «աղնավորի» այնտեղ գնալը և մինչև հարսան բերելը, Շիրինի բուն սիրականը՝ Ղուլը, վրա է հասնում, աղջիկը նրա հետ միասին փախչում են պալատից։

«Աղնավորը» հուսահատվելով յուր սիրուհու նենգության վերա, թե որպես նա խաբեց աշխարհի ամենահզոր հսկային, յուր բահով ինքն իրան սպանում է. երիտասարդները նրան թաղում են, և գյուղի կնանիքը նրա մասին երգ են հորինում։

Հայաստանում, ուրիշ տեղեր գտնված, աղնավորների գերեզմանները՝ հսկաների կամ «օղուզների» գերեզմաններ են կոչվում։ Նրանց շատերն իրանց հնությամբ հասնում են կռապաշտական ժամանակներին։

* * *

Նա խոսում է և «ցասման խաչերի» մասին, որոնք զանազան տեղերում, ըստ մեծի մասին բլուրների վերա տնկած, խաչաձև արձաններ են։ Որպես կռապաշտության ժամանակ ժողովուրդը ամեն մի անբախտություն վերաբերում էր աստվածների բարկությանը և զոհերով աշխատում էր հաշտվել նրանց հետ, այնպես և քրիստոնեության ժամանակ հեռու չմնաց ժողովուրդը նույն նախապաշարմունքներից։ Ամեն մի անբախտության վերա, օրինակ, սով, ժանտախտ, խոլերա, ցանքերի երաշտություն և այլն, նայում է նա որպես աստուծո կամ նրա սրբերի պատուհասի վերա։ Եվ այդպիսի դեպքերում նա զոհեր է մատուցանում, թափոր անում և «ցասման խաչեր» է կանգնում[1]։

Նա խոսում է և զանազան լեռների մեջ գտնվող բազմաթիվ այրերի և քարանձավների մասին, որոնց շատերի մեջ երևում են արհեստի հետքեր։ Այդպիսի քարանձավները (տրոգլոդիտ) պատկանում են այն ժամանակներին, երբ մարդկությունը դեռ սովորած չէր յուր համար բնակարաններ շինել։ Հայաստանում շատ են պատահում լեռների մեջ քարանձավներ։ Նրանք դարձան միայնակյացների բնակարաններ, երբ քրիստոնեությունը հայոց մեջ տարածվելեն հետո մտցրուց յուր հետ և ճգնավորական կյանքը։

[1] Ես ինքս ներկա էի, որ Պարսկաստանի 1865-ի խոլերայի ժամանակ, մեր գյուղում, Շահմուրատ անուն մի ծերունին երազի մեջ նույն գյուղի սուրբ Գևորգը հայտնել էր, թե խոլերան յուր բարկությունից է, և պահանջել էր, որ մատաղներ կտրեն և «ցասման խաչ» կանգնեն։ Գյուղացիքը անմիջապես կատարեցին այդ հրամանը...

* * *

Գ. վ. Սրվանձտյանցի գրքի մեջ հանդիպում են այնպիսի տեղերի անուններ, որոնք պատկանում են մինչջրհեղեղյան ժամանակներին, օրինակ, Խնուսա դաշտի մեջ Հարամիկ գյուղին մոտ գտնված ծառերը, որոնց տեղացիք անվանում են «Կայենի ծառեր»։ Պատմում են, թե Կայենը նույն ծառերի հովանվո տակ հանգստանում էր յուր երկրագործական աշխատությունից։ Այնտեղից ոչ այնքան հեռու մի բլուր կոչվում է «Կայենի գերեզման»։ Նույն դաշտի մեջ կա մի սար, որ անվանվում է «Ղամերա բերդ». Ղամեքա այն քաջ որսորդն էր, որ սպանեց անեծքով դատապարտված, թափառական Կայենին։ Հիշյալ տեղերի մոտն է այժմյան Բինգյոլը. այդ գեղեցիկ հովիտը յուր հավերժական չքնաղությամբ բոլորովին համապատասխանում է բնակիչների ավանդություններին, որոնք համարում են նրան Ադամա դրախտը։ Նրանք ցույց են տալիս առաջին քաղաքը, որ շինեց Կայենը և այն դաշտերը, ուր Աբելը արածացնում էր յուր հոտը։ Այդ տեղերը խիստ կենդանի կերպով պատկերացնում են նախաստեղծ մարդերի բնագավառը։

Բացի վերոհիշյալ բիբլիական անունները Գ. վ. Սրվանձտյանցի գրքի մեջ տեսնում ենք և պատմական անուններ, որպիսիք են՝ Եփրատի ափի մոտ Ողկան բերդը, որ յուր հետ ունի զարհուր ժամանակների հիշատակներ. նա նշանավոր էր Տրդատի ժամանակ և Մամիկոնյանց օրերում։ Գրգուռ լերան մեկ կողմն է Սեղանասարը, իսկ մյուս կողմն՝ Սեմ սարը, Նոյի որդվո հիշատակարանը։ Այդ տեղերից շատ հեռու չէ Ցրոնք գյուղը, որի մասին պատմությունն ասում է՝ «Սեմի որդի Տարբան յուր տոհմակիցներով բնակվեցավ այնտեղ և այնտեղից ցրվեցան, որո համար և տեղի անունը մնաց Ցրոնք»։

Տեսնվում են և այլ բազմաթիվ պատմական անուններ, որոնք ավելորդ ենք համարում մի առ մի հիշել։

* * *

Այնուհետև հեղինակը նկարագրում է տեղային հարսանիքի ձևերը, որ շատ նման է Հայաստանի մյուս կողմերում կատարվող հարսանիքների արարողությանը։ Նկարագրում է Համբարձման տոնի օրհորդաց վիճակախաղը, որ նույնպես շատ չէ զանազանվում Արարատա կողմերի խաղերից։ Հետո խոսում է Վարդավառի տոնախմբության մասին, թե որպես մարդիկ ջուր են թափում միմյանց վրա, որպես աղավնի են թըռ-

ցընում, և թե այդ բոլորն հիշատակ է ջրհեղեղին, Նոյի աղավնի թռցը-նելուն և այլն: Այդ սովորությունները ոչ միայն Հայաստանում, այլ ամեն տեղ կարելի է տեսնել, ուր հայերը գաղթած են: Առհասարակ հին ավանդությունները ընդհանրանում են մի ազգի մեջ և անցնում են մինչև անգամ նույն ազգին ցեղակցություն ունեցող օտար ազգերի մեջ: Որպես պարսիկների մեջ ևս տեսնում ենք միմյանց վերա ջուր թափելու և աղավնի թռցնելու սովորությունը, որովհետև մենք և պարսիկները միևնույն ցեղին ենք պատկանում:

Այդպես են և հեղինակի հիշած նվիրական ծառերը, որոնց ճյուղերի վերա ժողովուրդը իրանց հագուստի կտորներից կամ թելերից փաթաթում են, որ իրանց հիվանդությունը անցնի, կամ փոխադրվի ծառի վերա: Այդպիսի ծառերին Պարսկաստանում շատ տեղ կարելի է հանդիպել, որոնց միևնույն հուսով դիմում է ժողովուրդը: Սրբազան ծառեր ունեին հռովմայեցիք և գալլական ցեղերը:

Հայոց «Թուխ-մանուկները»[1] նույնպես կան զանազան արևելյան ազգերի մեջ: Շատ հավանական է, որ Գ. վ. Սրվանձտյանցի կարծիքը ճիշտ լինի, թե նրանք զանազան ժամանակներում նահատակված, քրիստոնյա մարտիրոսների արյուն թափած տեղերը լինեն: Իսկ շատ անգամ ևս ժողովրդի սնահավատությունը ստեղծում է «Թուխ-մանուկները». հանկարծ պառավին մինը այնինչ ավերակի մեջ երազում կամ առաշյաք լույս տեսավ, ալեզարդ և ճաճանչավոր գլխով մի ծերունի տեսավ, նա այդ տեսիլքը պատմում է ժողովրդին, և իսկույն նրանք ամենայն ջերմեռանդությամբ շարում են այնտեղ իրանց ճրագները և խունկեր են ծխում....

* * *

Մի քանի տեղերում Գ. վ. Սրվանձտյանցի գիրքը ունի աշխարհագրական նշանակություն: Նկարագրում է զանազան վանքեր, լեռներ, դաշտեր, բայց ուշադրություն չէ դարձնում ժողովրդի ներկա կյանքի վերա, նրա առտնին և արտաքին գործունեության վերա, թե ինչ պարապմունք ունեն կամ ինչպես են ապրում: Բացի հայերից ավելորդ չէր

---

[1] «Թուխ-մանուկ» կոչվում են Վասպուրականի կողմերում զանազան նվիրական տեղեր, ուր նշանակյալ օրերում (ըստ մեծի մասին կիրակնամուտ գիշերներում) ժողովուրդը ճրագներ է վառում, խունկ է ծխում, զանազան խնդրվածքներ անելով: «Թուխ-մանուկների» վերա շատ տեղ շինված են փոքրիկ մատուռներ և կոչվում են «օջախ»:

լինի ուշադրություն դարձնել և ուրիշ ազգությունների վրա, որոնց հետ դրացություն ունեն հայերը, և տեղեկություն տալ նրանց միմյանց հետ հարաբերությանց մասին։ Այո, շատ թանկագին են մեզ համար մի երկրի կամ ժողովրդի հնագիտական տեղեկությունները, բայց նույնքան օգտավետ է նրա ներկա կյանքի ուսումնասիրությունը։

Աշխարհագրական տեղեկությանց մեջ ուշադրության արժան է Սիփան լեռան նկարագրությունը, որը գտնվում է Վանա ծովակի մոտ և յուր գեղեցիկ հովիտներով խոստավետ արոտատեղիներ է քաշխում խաշնարածներին։ Տեղային հայ բնակիչները մինչև այսօր պահել են այն հին ավանդությունը, թե Նոյի տապանը, Գրգուռ լեռան գագաթին քսվելով, տաշեց նրան և անցավ դեպի Սիփան, այնտեղ հանգչելու։ Բայց Սիփանը, ավելի համեստ լինելով, չընդունեց նրան, ցույց տալով իրանից ավելի բարձր սարը՝ հսկա Մասիսը։

Տեղացիք այսպես են երգում հիշյալ լեգենդը.

Նոյա տապանն եկավ ի Սիփան,
Ասաց՝
Ս՛իփան, ա՛ռ զիս, ա՛ռ զիս։
Ս՛իփանն ասաց՝
Գնա՜ ի Մասիս, գնա՜ ի Մասիս,
Որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս։

Տեղացիք հավատում են, թե Սիփան լեռան մեջ թաքնված է մի կախարդված քաղաք, որի մուտքը փակված է երկաթե դռներով. թե նա ունի յուր թագավորը, և մեծ գետ է հոսում քաղաքի միջով և այլն։ Առհասարակ Սիփանը տեղացի բնակչաց Օլիմպոսն է, որի հետ սերտ կապված է ժողովրդի սիրտը, որի մասին նրա երևակայությունը ստեղծել է շատ և շատ ավանդություններ, որք այնքան բանաստեղծական և վառուն են, որպես մի լեռնաբնակ ժողովրդի հոգին։

Խիստ ազդու է մի աղջկա երգ, որին մի պատանի փախցնելով, Սիփանա սարն է բերում։ Մանկահասակ սիրահարները երեք օր մնում են այնտեղ, մի բան չեն գտնում ուտելու, նրանք ապրում են միայն սիրով։ Վերջապես քաղցը սոսկեցնում է պատանուն որսալ մի եղնիկ. նրա հրացանի գնդակը դիպչում է, արյունը սկսում է հոսել, իսկ կիսաշունչ անասունը դեռ շարունակում է փախչել։ Պատանին վազում է նրա հետևից և գլորվում է բարձր քարաժայռից դեպի ցած... Աղջիկը այսպես է երգում նրա մահը, կշտամբելով միևնույն ժամանակ յուր սիրելու խստասրտությունը.

Ինչու մինակ էլավ որսի,
Ինչու զարկավ եղնիկին.
Գուցե նա էլ սիրական մ'ուներ
Այս վայրերում մեջ մեզ պես։
Ահա սիրո աստվածը արդար
Ու վաղահաս ըրավ յուր դատաստանը...

Երգը վերջանում է հետևյալ խոսքերով.

Թե. «Ինքը նրա համար էլավ սարը, նրա համար... և նրա հետ պիտի մեռնի...»։

Վերջին խոսքերի հետ աղջիկն էլ իրան գահավիժում է ժայռի բարձրությունից...

* * *

Առհասարակ խոսելով Գ. վ. Սրվանձտյանցի գրքույկի մասին, թեև նա շատ անգամ մի մտքից մյուսն է թռչում, այսուամենայնիվ, մենք համարում ենք նրան մի օգտավետ աշխատություն, որ ընծայում է հնագիտական առատ և անմիջակ նյութեր։ Ցանկալի կլիներ, Հայաստանի ամեն մի գավառի ժողովրդական ավանդությունները այդպես հավաքվեին[1]. Հուսով ենք, հայր Սրվանձտյանցի գրքույկը օրինակ և խրախույս կտա շատերին։

Գրքույկը պարունակում է յուր մեջ և մի ամբողջ վեպիկ այս անունով՝ «Սասունցի Դավիթ, կամ Մհերի դուռ»։ Վեպը պատկանում է մեր Սկայորդվո ժամանակներին և մի բանաստեղծական նկարագրություն է Ասորոց Սենեքերիմ թագավորի որդիների՝ Ադրամելիքի և Սանասարի, գաղթականության դեպի Հայաստան։ Սույն վիպասանությունը, թեև ավանդությամբ մինչև մեր ժամանակը անցնելով, շատ տեղերում աղճատվել է, բայց դարձյալ պահպանում է յուր խորին առասպելա-պատմական հնությունը։ Մենք խոստանում ենք, առանձին հոդվածով ներկայացնել մի քննադատություն հիշյալ վիպասանության մասին։

[1] «Մշակի» ընթերցողների ուշադրությունը հրավիրելով սույն հոդվածի վերա, առաջարկում ենք թղթակիցներին, հաղորդել իրանց տեղերի ժողովրդական ավանդությունների նկարագրություններ, որքան կարելի է պարզ կերպով և այն ճշտությամբ, որպես խոսվում է ժողովրդի մեջ։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Դավրեժը, չնայելով յուր բազմամարդությանը, չնայելով, որ նա այժմ ընդարձակ կապեր ունի Եվրոպայի հետ, դարձյալ մնացել է ասիական քաղաք. ժողովուրդը զուրկ է կյանքի ամեն հասարակական վայելչություններից։ Թողնենք մյուս ազգաբնակությունները, ասենք մի քանի խոսք հայերի մասին։

Հայերն այստեղ իրանց կյանքի ձևերով շատ քիչ են որոշվում մահմեդականներից։ Նրանց ընտանիքի մեջ նույնպես տիրում է հարեմական առանձնությունը, և նրանց թե հագուստի, թե սովորությունների և թե բնավորության մեջ, ամեն տեղ տեսնվում է ասիականություն։

Թատրոն, կլուբ, կրուժոկ և այլ դրանց նման հասարակական ակումբները այստեղ չկան. կանանց սեռի աշխարհը սահմանափակվում է իրենց տան չորս պատով, իսկ տղամարդերի աշխարհը՝ է՛ բ ա զ ա ր։

Տղամարդն ամեն օր փակում է յուր տան դուռը և գնում է բազար. նա մնում է այնտեղ մինչև արևի մտնելը։ Երեկոյան դառնում է նա հոգնած և դադրած, մի փոքր զվարճություն և հանգստություն է որոնում. այն ևս ոչ յուր տանում, այլ խումբեր կազմելով, այս և այն պարոնի տանը։ Նրանք անձնատուր են լինում ուտելու և խմելու, որոնց վերջաբանն լինում է թղթախաղը։

Կանանց սեռը դրանց և ոչ մինի մեջ մասնակցություն չունի. նա միայն դառնում է գործիք լցուցանելու յուր տղամարդի հյուրերի պատվասիրությունը, նրանց համար կերակուրներ և խմելիքներ պատրաստելով։

Ժողովրդի մտավոր կյանքը բոլորովին անապատ դրության մեջն է. չկան այն հիմնարկությունները, որ նրան բարոյական և կրթական սնունդ տային։ Եկեղեցին, որ ամեն օր հավաքում է ժողովուրդը միասին, մի ծիսապաշտական ժողովարան է դարձել նրա համար. նա չէ դուրս տանում այնտեղից այն, որ կարող էր նպաստել յուր բարոյական և մտավոր զարգացմանը։ Դպրոցը, դեռ լի թերություններով, նոր բարեկարգված դպրոցը, գուցե պտուղ կբերե ապագայում... Էլ ի՞նչ է մնում...

Նորին սրբազնությունը, Անդրեաս եպիսկոպոսը, յուր Ատրպատականի առաջնորդ ընտրվելու օրից, աչքի առջև ունենալով հիշյալ տխուր երևույթները, ամեն միջոցներով աշխատեց և աշխատում է ժողովրդին տալ այն, ինչ որ պահանջում է այժմյան լուսավորությունը։ Իհարկե, մի այդպիսի դարևոր խավարում թմրած հասարակության մեջ չէր կարելի միանգամից ամեն ինչ հեղափոխել. նա սկսեց փոքրից։ Նորին սրբազ-

նության դպրոցի մասին արած վերանորոգությունները արդեն հայտնի են Թիֆլիսի պարբերական թերթերից, իսկ այժմ նա հիմնեց մի գրադարանական ընկերություն։ Ընկերությունը կազմված է հիմնադիր և բաժանորդ անդամներից, որոնցից առաջինները կանխիկ վճարում են 12 ռուբլի, իսկ երկրորդների մի մասը՝ ամսական մեկ ռուբլի, մյուսը՝ կես ռուբլի։ Ընկերությունը ունի տեսուչ, գանձապետ, երկու գրագիր, որոնք միասին կազմում են տնօրեն ժողովը։ Ընթերցարանը կբացվի Վարդանյանց տանը, հրապարակական հանդեսով և կկոչվի Արամյան ընթերցարան։ Նա կլինի կից քաղաքի դպրոցին, որ հայերի բնակության կենտրոնն է կազմում և յուր բացման օրից կունենա պատրաստի մի քանի հարյուր հայերեն գրքեր, հայոց նշանավոր պարբերական թերթեր, երկու գաղղիերեն լրագիր և մի պարսկերեն։

Թե որքան օգտավետ է մի այդպիսի հիմնարկությունը ժողովրդի մտավոր զարգացմանը, այդ մասին ավելորդ է խոսել։ Միայն կասենք, որ Դավրեժի համար նա մի առանձին նշանակություն ունի, ուր հասարակությունը բոլորովին զուրկ է ուսումնական պարապմունքներից։ Հուսով ենք, որ հիշյալ ընթերցարանը կլինի մի կենտրոն, ուր հասարակությունը անցուցանելով իր ազատ ժամերը, հեռու կպահե յուրյան թղթախաղից և այլ զվարճություններից, որոնք, բացի բարոյական փտությունը, մի այլ բան չեն զարգացնի նրա մեջ։

Վերջացնելով իմ նամակը, ես հարկավոր եմ համարում ավելացնել, որ Դավրեժի հայ հասարակության մի մասը, առավել վաճառական և ունևոր մասը, որքան և անկիրթ դրության մեջ լինի, դարձյալ նա պատրաստ է ընդունել ամեն տեսակ օգտավետ առաջարկություններ։ Այդ ապացուցեց այն դեպքը, թե որպես նրանք իրանց նյութական օժանդակությամբ նպաստեցին դպրոցի բարեկարգությանը և որպես այժմ միևնույնը չխնայեցին ընթերցարանի հիմնարկության մասին։ Այդպիսի ժողովուրդը բոլորովին անզգայացած չէ դեպի հասարակաց բարին. նրան պետք են միայն խթան և շարժառիթներ։

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Զմյուռնիո «Արևելյան մամուլ» կոչված ամսագրի 1874 ամի սեպտեմբեր, հոկտեմբեր և դեկտեմբերի համարների մեջ ուշադրության արժան է մի հոդված այս վերնագրով՝ «Կրթության խնդիրը հայոց մեջ»։

Խոսելով կրթության մասին, հոդվածագիրը գտնում է, թե արևելքում մի ժամանակ իրանց արհեստով, վաճառականությամբ և գիտու-

թյունով առաջին դերը խաղացող հայ ազգը, հետ մնալով ժամանակի առաջադիմությունից, այս օրվա օրս ամենաստորին տեղն է բռնում մյուս քրիստոնյա ազգերի մեջ։ Որովհետև հայերը անշարժ մնացին կրթության նույն աստիճանի վերա, ինչ որ էր քանի-հիսուն տարի առաջ. նրանք չաշխատեցին ընթանալ ժամանակի հետ և ոչ նրա պահանջմունքներին համաձայն վերանորոգեցին իրանց դրությունը։ Եվ այդպիսով հայ ազգը զրկվեցավ յուր ասպարեզից, տեղի տալով իրանից ավելի հմուտ և քաղաքակրթված ազգերին։

Հայերի մի այդպիսի հետամնացության պատճառը հոդվածագիրը գտնում է դպրոցի մեջ։

Դպրոց և եկեղեցի, այդ երկու հիմնարկությունները, սկզբից, թե նյութապես և թե բարոյապես, հայերի մեջ միացած են եղել ամենասերտ կապերով։ Դպրոցը շինվում էր եկեղեցվո մոտ, դպրոցը կառավարվում էր եկեղեցվո եկամուտներով և եկեղեցականների ձեռքով. և այդպես, փոխադարձաբար լրացնում էին մինը մյուսի պահանջները։

Իսկ այդ ուներ յուր պատմական պատճառները։

Թողնենք Հայաստանի ամենահին հեթանոսական անցյալը, երբ ժողովրդի կրթությունը քուրմերի ձեռքումն էր, անցնենք այն դարերին, երբ քրիստոնեությունը մուտք գործեց հայերի մեջ, մենք կգտնենք միևնույնը։ Ժողովրդի ուսուցիչ և դաստիարակ քուրմերի փոխարեն դառնում են եկեղեցականները, որովհետև նրանք իրանց զարգացումով ավելի բարձր էին, քան հասարակ ամբոխը։ Նրանք էին ուղղություն տալիս ժողովրդի կյանքին, նրանց ձեռքումն էր ժողովրդի հոգին և միտքը, և հետևապես այն երկու գործիչները, որոնք նպաստում էին հոգու և մտքի կրթությանը, այսինքն՝ դպրոցը և եկեղեցին։

Բայց որովհետև եկեղեցականների մատակարարած ուսումը ավելի բարոյական և կրոնական բնավորություն ուներ, այդ պատճառավ նրանք միացրին դպրոցը եկեղեցվո հետ։

Իսկ կյանքը և ժամանակը չէին կարող համբերել մի այդպիսի անբնական միավորության։ Երկու բանից մեկը պետք է լիներ, կամ եկեղեցականները պետք է ենթարկվեին աշխարհի պահանջներին, թողնեին կրոնական ուղղությունը և ժողովրդի իրական պետքերին համաձայն վերափոխեին կրթության ձևը, կամ դպրոցը պետք է ինքն իրան խզեր յուր կապը եկեղեցու հետ։

Այդպես էլ եղավ։ Դպրոցը կտրեց յուր կապերը եկեղեցու հետ։ Ո՞վ եղավ այդ հերձվածի սկզբնապատճառը։ Այդ հարցին պատասխանելու համար կբերենք պատվելի հոդվածագրի խոսքերը։

«Եկեղեցականն,— ասում է նա,— եկեղեցականն, որ երկնային պատգամին հետևելու տեղ աշխարհային պատգամներու անսաց, որ ճշմարտապես գիտության և լուսավորության կուսակից և հաղորդ գըտնըվելու տեղ տգիտության քարոզ և կենդանի տիպար մ' եղավ։ Ուստի ժողովուրդն իր հոգևոր հովվին վրա չտեսավ այն ջահն, որով սովոր էր առաջնորդվիլ և այլուր լույս և առաջադիմության տարերք փնտրեց։ Նույնիսկ եկեղեցականին պատկան պաշտոնն շատ պարագաներու մեջ ինքն ստանձնեց և Քրիստոսի բանին հետ՝ եկեղեցու իրավունքն ու սահմանքը քարոզելու և պաշտպանելու եղավ։ Այս հերձվածը՝ թեև աղետալի մեր ազգին նկատմամբ, լուսո և խավարի մեջ, ժամանակիս բերած, մեկ հեղափոխություն էր, որուն անմտադիր գտնվելով առհասարակ մեր կրոնական դասն, միջնադարյան գաղափարներու սպասավորությունը շարունակեց։ Ի՞նչ եղավ ասոր հետևանքը. թեև մեր դպրոցներն տակավին եկեղեցյաց մոտ կշինվին, թեև եկեղեցականն միշտ իր նվիրական անվամբը կհիշվի, թեև եկեղեցու ժամկոչը կամ զանգակն ժողովուրդն եկեղեցին կկոչե, բայց քահանան պարտ և պատշաճ վստահություն և պատկառանք չազդեր, բայց ժողովուրդն առանց ջերմեռանդության եկեղեցի կմտնե։ Ուրեմն մինչև որ եկեղեցին իր մթությունը չփարատե, մինչև որ եկեղեցականն իր կոչման վսեմությունը ճանաչելով չգործե, ոչ ազգին վրա, որ օրըստօրե նոր լուսավորության աչքը կբանա, և ոչ դպրոցներու վրա, որ կնկրտի հին կապերը քակել, ներգործություն չպիտի ունենա։

«Առաջադիմությունը կպատժե անձայն զինքն անգիտողներն և կանգոնե լոկ հնության, սովորության և նախապաշարման հայտարար փտառացի տիտղոսներ։ Եվ արդարև՝ եթե հին ազնվականն միմիայն իր ազնվականությամբ, մեծատունն միմիայն իր ոսկիովը, կրոնականն միմիայն իր վեղարովը զորեն մարդկային ընկերության ակնածության, երախտագիտության և պաշտման վրա իրավունք մը պահանջել, այն ատեն հանճար, գիտություն, հայրենասիրություն, կրոնասիրություն ունայն անուններ պիտի դառնային և պիտի գահավիժեին այն անդունդըն, ուսկից հանելու համար ոչ միայն խելք, ճարտարություն և գանձեր, այլև արյան հեղեղներ թափված են։ Ինչպես նոր օրենք մ' աստվածային դրոշմով պատկառելի ընելու ժամանակներն անցան, նույնպես անցավ ուսումն լոկ եկեղեցու շուքին ներքև փափագելի ընելու դարը։ Ուսման օգուտն ինքնին կխոսի այժմ հայ ընկերության մեծագույն մասին, և եկեղեցվո գանձանակն և եկեղեցականին հորդորն ամենուրեք կարևոր չեն դպրոցականները նյութապես և բարոյապես կանգուն պահելու հա-

մար։ Ժողովուրդն ըստ կարողության ինքնահորդոր կհայթհայթե կրթության հարկը, բավական է, որ համոզվի, թե այդ հարկն առաջադրվալ նպատակին պիտի ծառայե»։

Վերոհիշյալ խոսքերով պատվելի հոդվածագիրն ամենևին նպատակ չունի հերքել հոգևոր իշխանության կարևորությունը և կրոնքի անհրաժեշտությունը, այլ, ընդհակառակն, նա կամենում է ցույց տալ, թե ինչո՞վ եկեղեցականը կարող է եկեղեցվո և ժողովրդի պիտանի անդամ դառնալ։

«Ուր որ մարդիկ կան,— ասում է նա,— կրոնն ալ անհրաժեշտ է, ինչ գույն որ ունենա այդ կրոնը, և կրոնականն իր հատուկ նվիրական շրջանն ունի, որ կարող է հրահանգել ժողովուրդն և անոր բարոյական զարգացման հոգ տանել։ Սակայն կրոն մ՚երբ պարզապես չոր ու ցամաք բառական մեկնություն կդառնա, երբ, փոխանակ հոգի և միտք կենդանացնելու, զանոնք կսեղմե, կբթացնե, կկուրացնե, այդ կրոնն ինքնըստինքյան մեռած կրոն մ՚է, և միայն գիրքերու վրա կներգործե։ Ինչ որ երկնային է կրոնի մը մեջ պահելով, մարդկային հեղինակությամբ շինվածները նորոգելը և ժամանակիս հոգվույն համեմատ տնօրինելն, առաջադիմության ընդունակ ժողովրդյան մը հոգվո և մտաց պահանջումներուն համեմատ վարվիլ և անոր վրա բարոյական իշխանություն մ՚անվթար պահպանելու միակ եղանակն է։ Այս ճշմարտության՝ շատ կորուստներ ընելեն ետև՝ պիտի համոզվի մեր հոգևորական դասը, և արդեն առաջին մեկ մեծ կորուստն է ազգային դաստիարակության մեջ իրեն մնացած խիստ աննշան մեկ դերը»։

Պ. Հոդվածագիրը զարմանում է, թե հայ կղերն ինչի՞ց է վախենում, որ չէ կամենում եկեղեցին մաքրել ավելորդապաշտություններից և դըպրոցի մեջ մտցնել այնպիսի ուսում, որ համապատասխան լիներ ժողովրդի այժմյան կենսական պահանջներին։ Նա խորհուրդ է տալիս, թե կղերը գոնյա յուր շահերը և յուր գոյությունը պահպանելու համար պետք է աներ այդ, եթե ոչ, նա ինքնըստինքյան կզրկվեր ժողովրդի հետ կապեր ունենալուց։ Ժողովուրդը առաջ կգնա այն ճանապարհով, որը հարթում է նրա առջև իր դարը և ժամանակը, իսկ եկեղեցականը հետ կմնա, շատ հետ և վերջապես կանջատվի յուր հոտից...

Ահա՛ պ. Հոդվածագրի խոսքերը.

«Ուրեմն հայ կղերն իր արդի դրությամբը, դրություն, որ ի վաղուց դատապարտյալ աստվածապետության կնայի, ոչ միայն ներկա, այլև ապագա սերունդը ձեռքե կհանե և իր պաշտոնեն կհրաժարի անգետ։ Շատ գիտուն մարդիկ ըսին և նորերն ալ անդադար կկրկնեն, որ ժողո-

վրդյան վրա տիրելու համար պետք է մանկավույն դաստիարակության և կրթության վրա տիրել։ Թեև այս պետքը կզգան մեր հոգևորականներն, սակայն ժամանակներն իրարու կշփոթեն, միջոցներու ընտրության մասին կվրիպեն և ետև կնային, քան թե առաջ։ Երբ Ֆրանսիայի կղերն կըրթության ամեն նորահաստատ օրինաց առջև աղմուկ և փոթորիկ կհանե, կըմբռնեմ իր վրդովման պատճառը, կհասկնամ, որ իբրև Սիլլաբուսի հավատարիմ աշակերտ, պիտի ամեն ջանք, հնար, նենգություն գործե, որ մանկավույն կրթությունն ըստ առաջնույն իր լծի ներքև պահե և հետևապես՝ Ֆրանսիան իր ափին մեջ։ Սակայն չեմ կրնար ըմբռնել մեր դաս մը հոգևորականաց ընթացքն, երբ Հայաստանյաց եկեղեցվո ազատ սահմանքը կմոռնա, օտարոտի և մթին սկզբանց կաշակերտի և ապա կպահանջե, որ հայքը վարելու իրավունքը միայն իրեն մնա։ Պապական դրությունը միապետական է. մերին զուտ սահմանադրական, հետևապես եկեղեցական մարմինն ժողովրդեն դուրս անկախ մարմին մ'որ կարենա կազմել, ինքույն իր էությունը կվտանգե։ Իր էության պայմանն է՝ ոչ միայն ժողովրդեն անբաժան մնալ, անոր աղետից և ուրախության մասնակից գտնվել, անոր պիտույից տեղյակ և առաջադիմության հաղորդ լինել, այլև լուսամիտ առաջնորդ կանգնել»։

Վերոհիշյալ խոսքերից հետո պ. հոդվածագիրն ավելացնում է, թե հայ եկեղեցականը մինչև անգամ կրոնքը հայ մանուկներին ուսուցանելու անընդունակ է, ուր մնաց, որ նրանից պահանջվի մյուս գիտությունների և արհեստի դասատվություն դպրոցի մեջ։ Եվ իբրև ապացույց նրանց խորին տգիտության բերում է նրանցից հեղինակված կրոնական դասագրքերը և երբեմնապես նրանց կողմից հրատարակված հոդվածները լրագրների մեջ։ «Շատ դպրոցներում,— ասում է հոդվածագիրը,— քրիստոնեական վարդապետության դասատուներն իսկ աշխարհականներն են. ամեն օր, ամեն ամիս գավառներեն դասատուներ կխնդրվին, այն պատճառավ, որ կրոնականներն անկարող են ժողովրդյան ուսումնասիրության փափագը գոհ ընել։ Եվ սակայն գեթ գավառներու մեջ եկեղեցվո պաշտոնեին կպատկանի իր հոտին մանկտին ժողովել, անոր ուսման ճաշակը հայթայթել, բարոյական դասեր ավանդել, ազգային պատմության, աշխարհագրության, թվաբանության, բնական գիտության՝ երկրագործության և տնտեսության տարերքն ուսուցանել։ Քանի՞ հատ վարդապետ (ինչո՞ւ ոչ քահանա) կգտնես, որ այս հրահանգները գործ ճամփել ուսումնատենչ գավառացիին, որ իր հոգևոր հովվին կամ քահանային ձեռնտվութենե անհույս՝ հեռվեն (աշխարհական) վարժապետներ կփնտրե, որ կրթվի»։

Խոսելով վանքերի և կուսակրոն եկեղեցականների մասին, պ. Հոդվածագիրը շատ ուղիղ նկատում է, որ այժմ բոլորովին իրանց նշանակությունը կորցրել են և ժողովրդի պիտույքներին ոչ միայն անկարևոր, այլ խիստ վնասակար դրության մեջ են ընկել։

Ահա նրա խոսքերը.

«Գավառացին մի շատ վանքեր ունի, որ կրթության ամեն մի վիճակային կենտրոններ լինելու սահմանված են իրավ, այլ այժմ մեծավ մասամբ ամայի, թափուր, կամ խավարության ու ծուլության որջեր դարձած են։ Այս վանորեք պիտի լինեին ժողովրդական ուսումնատեղիք, մինչդեռ այժմ միայն կրքոտ, կեղեքիչ, ընչասեր, անգութ վանականաց պատըսպարաններն են։ Եթե լավ մը քննենք մեր վանական և առաջնորդական մի շատ կռիվներ, պիտի տեսնենք, որ գլխավոր պատճառն անգործությունն է և ասոր հարակից ամեն մոլությունները։ Վանականն բստինքյան մուրացկան մը է հայու ընկերային կենաց մեջ, և ստեպ հափշտակիչ մուրացկան մը, որ առանց փոխադարձ ծառայություն մը մատուցանելու ազգին (վասնզի քանի մ՛աղոթք ծամծմել ըստ իս ծառայություն մը չէ) ասոր գույքը կվայելե, միշտ կպահանջե, և եթե չտաս, կշորթե։ Հազվագյուտ բացառություններ են անոնք, որ ոչ միայն վանքը կշենցնեն և կպահպանեն, այլև ժողովրդյան հոգին ու միտքը, թեև ըստ իս վանական կյանքն ժամանակագրական վրիպակ մ՚է այս դարուս մեջ, բայց եթե հարկ է դեռևս մնան այս հաստատությունները, գոնե պետք է, որ կարելի եղածին չափ ազգին օգտակար դառնալու ստիպվին և անոր կռնակը բեռ և դավադրություններու դուբեր լինելեն դադրին»։

«Այս նպատակին հասնելու համար կարուկ ճամփա մը կա, պետք է նախ սրբել վանքը, դուրս հանել, լուծել անօգուտ, տգետ և ծույլ անդամները, հետզհետե նոր, պիտանի և փոքրիշատե ուսյալ անդամներ ընդունել, այնպես որ կարող լինեն կրթության գործին ձեռնտու կանգնել։ Պատրիարքական հրաման մը և ժողովրդյան կամքը բավական են այս վերանորոգությունն ի կատար հանելու։ Թեև փոքր-ինչ հանդուգն, այս տնօրինության հետևանքն արդյունալից են։ Վանական դանդաղության և ծուլության դարը կանցնի, վատթար հոժարությունները կվերնան, և ազգաշեն գործ մը կսկսի։ Քիչ ատենեն գավառացիք իրենց բոլորտիքն ուսումնասեր մշակներ և հովիվներ պիտի տեսնեն և չէ թե վայրենի էակներ, ինչպես են այժմ ազգային տառապանաց անկարեկից ինքնասերներ։ Ժողովրդյան նոր վարդապետը միանգամայն ճշմարիտ ուսուցիչ պիտի լինի և ոչ միայն մարդեր, այլ թշվառության տակացուց, վտանգի առջև անվեհեր, արիասիրտ հայեր պիտի պատրաստե, այլ

ինքն ալ պիտի կրթվի, ազգային կենաց մեջ պիտի ապրի։ Ուսուցիչն ամեն օր մանկանց հետ տեսնվելով, անոնց բարոյական զարգացման հոգ տանելով, բնապես անոնց հարգն ու սերը պիտի գրավե. իր սիրտն համբերության, բարեսրտության և կարեկցության պիտի բանա, ներողամտության պիտի վարժի, և իր հովվական պաշտոնն ալ այս հոգվո տրամադրության համեմատ պիտի վարե։ Ի բաց առյալ քահանաներն, որ ավելի հայրական կերպով կտածեն՝ ըստ որում ընտանեկան շրջանի մեջ կապրեն, սովորաբար եպիսկոպոս և վարդապետ իրենց առանձնացյալ դիրքով՝ նսականության և անգթության ավելի հակամետ և մարդկային ամենեն քաղցր զգացումներուն անհաղորդ են։ Ուստի անոնք ազգային կրթության գործին եթե պարապին, մեկ կողմե մարդասիրական գաղափարներ իրենց մեջ պիտի ծաղկին, միտքն արդյունավետ սնունդ պիտի գտնե, մյուս կողմե ապօրեն փառասիրության մը հարուցած վեճերն և գժտությունները, որ վիճակներու շրջանավոր հիվանդություններն են և պատրիարքարանին այնքան տագնապ կպատճառեն, եթե ոչ իսպառ մեծավ մասամբ պիտի դադրին։ Այս կրթական ազդեցության մեջ կկայանար հին ատեն եկեղեցականին պաշտոնը, և այս պետք է որ լինի մանավանդ այժմ, որ գավառները դասատուներու սով կա, և քանի որ ժողովուրդը ցիրուցան է և իր բարօրության և միաբանության հիմունքն ուսման և կրթության մեջ կփնտրե։

«Ահա այս ուղղությամբ թե կրոնականը և թե աշխարհականը կշահին, այն իր նախորդ պատկառելի դիրքը կստանա, այս՝ իր բարօրության լույսն, որ ազգին համար անմիջական, միակ փափագելի բարիքն է, իբրև միության, գիտության և նյութական զորության հիմ։ Ահա՛ այն ատեն դպրոցն իրոք եկեղեցվույն սրբագավիթը կլինի, և եկեղեցին ոչ միայն երկնային, այլ երկրային փրկության պատվար մը, որու դեմ պիտի փշրվին մեր ազգային հիմնարկությունները շրջապատող բազմադիմի օտար թշնամիներու արձակած ռումբերը...»։

Պ. Հոդվածագրի վերոհիշյալ դատողություններից երևում է, որ վանական միաբանությունը, որքան և օրինավոր անդամներից կազմված լինի, նա դարձյալ չէ կարող ունենալ ժողովրդի համար օգտավետ գործունեություն, քանի նա առանձնացած է վանքի պարիսպների մեջ։ Այլ նա պետք է ժողովրդի մեջ ապրե և նրա համար աշխատե. այն ժամանակ միայն կստանա յուր կոչմանը համապատասխան նշանակություն։

Ցանկալի էր, որ «Արևելյան մամուլի» այդ հոդվածը, որպես առողջ մտքի ծնունդ, ազդեցություն գործեր Տաճկաստանի հայոց հոգևոր կա-

ռավարության վրա և մերայինք նույնպես օրինակ առնեին նրանցից։

Որովհետև հոդվածը պետք է շարունակվի, մենք մյուս անգամ առիթ կունենանք խոսել այդ մասին։

* * *

Զմյուռնիո «Արևելյան մամուլի» պ. հոդվածագիրն յուր շարունակության մեջ ուշադրություն է դարձնում այն, մեր այժմյան շատ մտածող գլուխները զբաղեցնող հարցի վերա, որոնք կրոնքի և քրիստոնեական վարդապետության ուսմունքը ոչ միայն անհրաժեշտ են համարում դպրոցի մեջ, այլ նրա միակ նպատակն են դնում։

Հիշյալ համոզմունքը ծագում է երկու զանազան կարծիքներից։

Առաջին՝ մոլեռանդությունից, որ միշտ մարդու բարօրությունը և նրա փրկությունը որոնում է կրոնքի մեջ, որ միշտ երևակայում է մի հանդերձյալ և ամենափառավոր կյանքի մասին գերեզմանի մյուս կողմում, և իրական աշխարհը համարում է մի ունայն, ժամանակավոր կայարան այստեղից դեպի երկինք անցնելու համար։ Մենք այդ մասին խոսելը ավելորդ ենք համրում, որովհետև շատերին հայտնի է, թե ինչ է նշանակում սնահավատությունը։

Երկրորդ կարծիքն ավելի խոհուն գլուխների ծնունդ է, որոնք կրոնքի գաղափարը շփոթում են ազգայնության հետ, որոնք մտածում են, թե հայը յուր եկեղեցուց դուրս ոչ միայն հայ չէ, այլ նա մինչև անգամ չի կարող հայ մնալ, նա կուլ կերթա այն ազգությունների մեջ, որոնց դավանությունը կընդունե։

Այո՛, երբ մի ազգի ինքնաճանաչությունը կենտրոնանում է միմիայն նրա եկեղեցու մեջ, երբ նա յուր գոյությունը պահպանելու համար ուրիշ հաստատուն հիմք չունի, խլելով նրանից կրոնքը, բաժանելով նրան յուր եկեղեցուց, նա կորցնում է յուր ազգությունը։

Իսկ պահպանել մի ազգ այսպիսի խախուտ հիմքի վերա, կնշանակե նրա կյանքը մշտական վտանգի մեջ դնել, և այս վտանգը այնքան շուտափույթ է, որքան հաճախ փոփոխության են ենթարկվում դավանությունները։ Հայը դառնալով կաթոլիկ, դադարեց յուրյան հայ կոչել, հայը բողոքականություն ընդունելով, էլ յուրյան հայ չէ համարում. միևնույնը կպատահի նրա հետ, երբ նա որևիցե այլ դավանություն կընդունե։

Ինչո՞ւ

Որովհետև երբ սկիզբը ծուռն է, ծուռն կլինի և հետևանքը։ Երբ հիմքը ուղիղ չէ, շինվածքը չէ կարող կանոնավոր ձև ստանալ։ Այնպես էլ կրոնական կամ աստվածապետական կոչված ազգերը կյանք չունեն, քանի իրանց գոյությունը կապված է իրանց դավանանական կոչման հետ, քանի նրանք կանգնած են մի անրնական և երերուն հողի վերա։

Թե հայը սկզբում ո՞ր կրոնքին էր պատկանում, մենք այդ չգիտենք. միայն նա անցնելով հեթանոսության զանազան շրջանները և վերջապես ընդունելով քրիստոնեություն, մնաց դարձյալ հայ և չկորցրեց յուր ազգությունը։ Իսկ եթե նա փոխած լիներ յուր լեզուն, օտարացած լիներ յուր ազգային հատկանիշ առանձնություններից, կարո՞ղ էր հայ մնալ։ Չենք կարծում։

Ուրեմն՝ մի ազգ յուր գոյությունը պահպանելու համար կարոտ է ուրիշ շատ պայմանների, եկեղեցին, միմիայն եկեղեցին բավական չէ։ Եվ նա մինչև անգամ վնասակար է դառնում, երբ չէ համբերում կամ տեղիք է տալիս նույն ազգին ազատ և ինքնուրույն զարգանալ յուր գոյության նպաստող այլ պայմանների մեջ։

Մենք ավելորդ ենք համարում մանրամասնաբար խոսել այն պայմանների մասին, միայն այսքանը կասենք, որ խիստ ունայն և անցողական մխիթարություն է մեզ համար, երբ տեսնում ենք մի հայ, որ չգիտեր յուր ազգի լեզուն, որ տեղեկություն չուներ յուր ազգի պատմությունից և նրա գրականությունից, որ բոլորովին օտարացած էր յուր ազգի հատկանիշ առանձնահատկություններից, որ չգիտեր յուր կոչումը, յուր նշանակությունը, յուր խաղալու դերը ընդհանուր մարդկության մեջ, կրկնում ենք, խիստ ունայն մխիթարություն է, երբ մի այսպիսին յուրյան հայ էր համարում նրա համար միայն, որ նա մկրտվել էր հայոց եկեղեցում, հաճախում էր հայոց ժամատունը, հայ քահանայի ձեռքից հաղորդություն էր ընդունում և վերջապես թաղվում էր հայոց եկեղեցականի ձեռքով։

Մի շատ թույլ հողմի հնչումը բավական է՝ արմատախիլ անել մի այսպիսի հային ազգային հողից և ձգել օտար անդունդի մեջ... Իսկ «Արևելյան մամուլի» պ. հոդվածագիրը, քննելով կրոնքի հարցը և նրա դասատվության կարևորությունը դպրոցի մեջ, նայում է նրա վերա բոլորովին մանկավարժական կետից, որ խիստ տարբեր է վերոհիշյալ կարծիքներից։ Նա համարում է կրոնքը որպես մարդու հոգին կրթող, բնավորությունը ազնվացնող և նրան բարոյական ուղղություն տվող մի ուսում։ Բայց այն ժամանակ միայն նա հասած կլիներ յուր իսկական նպատակին, երբ չոր ու ցամաք և աշակերտի համար անըմբռնելի աստվածաբանական բառերից կդառնար հասկանալի և նրա հոգուն ու մտ-

քին շոշափելի գաղափար հայտնող մի դիտողություն։ Որքան հնարավոր է այդ միացնել կրոնքի վերացականության հետ, այնքան կարևոր է նրա ուսումը դպրոցի մեջ։ Իսկ ընդունել տալ աշակերտին մի վարդապետություն միմիայն կույր հավատքով, առանց նրա նշանակությունը հասկացնելու, միևնույն է՝ երեխայությունից սպանել նրա մեջ մտածության ուժը և խլել նրանից քննողական հոգին։

Իսկ մեր դպրոցներում ընդունված կրոնագիտության ուսումը և նրա դասավանդության եղանակը, բացի աշակերտին մոլորության մեջ ձգելուց, բացի նրա խելքն ու միտքը շփոթելուց, մի այլ նշանակություն չունենա։ Աշակերտի բնականապես հետաքրքիր միտքը, բավականություն չգտնելով դասագրքի գրվածքին, դառնում է նա ուսուցչին, պարզ և յուրյան հասկանալի բացատրություն է պահանջում, օրինակ, աստվածության, հոգու, դժոխքի, արքայության և այլ դրանց նման առարկաների մասին։ Վարժապետը շփոթվում է, նա չէ կարող բավականություն տալ մանուկի հարցասիրությանը, նրա վերջին պատասխանը լինում է՝ «պետք է հավատալ»։ և նույն րոպեից զարթնում է աշակերտի գլխումը մի կասկած դեպի յուր ուսանելի առարկան։

Մենք առաջ կբերենք նույնիսկ պ. հոդվածագրի խոսքերը.

«Թերևս հասարակաց ձայնին և եկեղեցականաց բողոքներուն մեջ գտնվել էր, որ Կենտրոնական Կրոնական Ժողովն անցյալ տարի կրոնագետ եկեղեցականներ ընտրեց, որպեսզի այլևայլ վարժարանաց մեջ քրիստոնեական վարդապետություն դասեն։ Քանի՞ հատ կրոնի ուսուցիչ գտավ՝ ինձ անհայտ է. այսօր ազգային դպրոցները քանի՞ վարդապետ ու քահանա կհաճախեն իբրև դասատու՝ չգիտեմ. սակայն քաջ գիտեմ, որ այս ուսումն ավանդելու համար մեր ձեռքն եղած միջոցներն, մեր հետևած եղանակը բոլորովին անբավական են և տկար, այնպես որ ասոնք չեն պատասխաներ կրոնական դաստիարակության նպատակին, որ ամեն կրթության հիմնական մասը կհռչակվի և կքարոզվի իրավ, բայց բոլորն այլ կրոնական բառագիտության վրա կկայանա, այսինքն՝ չոր ու ցամաք կրոնական բառերու սերտողության վրա, որոնք իբրև մութ ու խորհրդավոր ձայներ կհնչեն աշակերտի ականջին՝ առանց մտքին ու սրտին մեջ բան մը թողնելու։

Առ նախակրթարանի համար շինված կրոնական դասագրքերին, օրինակի համար՝ «Մանր ուսմունքը», և աչքէ անցուր։ Թող վերջի պատմական մասն, որ թեև փոքր-ինչ հասկանալի, դարձյալ խիստ հակիրճ ու ցամաք է, ի՞նչ պիտի գտնես, թե ոչ հարց ու պատասխանով գրված եկեղեցվո ծանր խորհուրդներ, որ նույնիսկ աստվածաբանները կտադ-

նա՛յենք։ Աստվածության անձանց վրա կտրուկ բացատրություններ, որ հասուն մտաց անգամ դող կազդեն, անմահության, արքայության և դժոխքի վրա վճիռներ, որ խելք ու միտք կշփոթեն, ուր մնաց ութ, տասն, տասներկու տարեկան տղոց միտքն՝ որք թեև կսերտեն մեքենայես, կարտաբերեն թութակի պես, ամեն հարցման շինված պատասխան մ'ունին, որ ռամկին սքանչացում կպատճառեն, սակայն իրապես ի՞նչ արդյունք, ի՞նչ օգուտ կարտադրեն այն թարմ մատղաշ սրտերու մեջ՝ ոչինչ։

Իմ միտքս այս կամ այն քրիստոնեական դասագիրքը դատաքննել կամ դատապարտել չէ,— շարունակում է պ. Հոդվածագիրը,— այլ այն նշանակել, որով նորուս աշակերտի մը կրոնական տարերքը կավանդվին, այսինքն՝ անբանական կամ խորհրդավոր ձևեր, ամենևին զուրկ հոգին զարգանալու պայմաններե։ Իրավի, դասատուն պարտավոր չէ դասագրքի մը կապվիլ, դասը բառաբառ ուսցնել, դասագիրքն իր ձեռքը լոկ ուղեցույց մ'է, որով պիտի առաջնորդի քրիստոնեական ուսման զանազան մասունքը պարզել, մեկնել, ընդլայնել և բարոյական հրահանգներ հանել. սակայն ինչ չափ մեծ լինի իր հմտությունն ու ճարտարությունն, դարձյալ, քանի որ կրոնի վարդապետական շրջանին մեջ պիտի դառնա, առ հարկի պիտի ստիպվի կակազել կամ մատղաշ իմացականության անհպելի կետերու վրա քող ձգել փոքր-ինչ հետաքրքիր ու հանդուգն աշակերտի մը պարզամտությամբ ըրած հարցումներու առջև։ Դասատուին այս վարանումը կամ ծածկապահությունն՝ թեև տարբեր ներգործություն կրնա ունենալ տարբեր մտքի և կարողության տեր աշակերտներու վրա, բայց արդյունքը կրթության մասին՝ գրեթե նույնն է։ Ուշիմ աշակերտը դեռ դատելու ու խորհելու չսկսած՝ պիտի սկսի կասկածիլ իր կրոնագետ վարժապետին խոսքին վրա և իր կասկածներն արտաքուստ ճարակ գտնելով, քրիստոնեական դասերեն օգուտ մը չպիտի քաղե. դանդաղամիտ աշակերտն իբրև պատգամ պիտի ընդունի լսած դասն և մեքենայես պիտի կրկնե՝ առանց անոր ոգին և նշանակությունն ըմբռնելու. մինը կասկածոտ, մյուսը կույր հավատավոր, մինը սկեպտիկյան, մյուսը մոլեռանդ պիտի դառնա և այս հետևանքն դաստիարակության առաջադրած նպատակին բոլորովին հակառակն է, քանի որ՝ չէ թե լուսամիտ քրիստոնյա հայեր, այլ անկրոն կամ մոլեկրոն հայեր պատրաստած պիտի լինի»։

Առաջ բերելով մեր մի քանի նշանավոր հեղինակների կրոնական դասագրքերը և նրանց հայտնած կարծիքները, պ. Հոդվածագիրն ակամայից խոնարհվում է անաեղի պահանջի առջև և ընդունում է այն կար-

ճառեսների պատգամները, որոնք միմիայն կրոնքի մեջ են գտնում ազգի մտավոր և բարոյական զարգացման ուժը և ավելացնում է. «Ես կընդունեմ այս պատգամները այլ ընտրողությամբ։ Արդեն ըսի, որ բարոյական դաստիարակությունն մարմնավոր և մտավոր կրթության խարիսխը պարտի լինել. բայց երբ այս բարոյական դաստիարակությունն պարզապես բառական, անվանական կրոնագիտություն մը կդառնա տըղոց նկատմամբ, այն ատեն միտքս կըմբոստանու աշխարհիս ամեն կրոնագետներու վճիռներուն դեմ, և կըսեմ, որ եթե առանց հասկանալու հավատա, հավատը մաս մ՚է չափահաս քրիստոնեի համար, առանց հասկընալու տղոց հավատա ըսելն ալ՝ կրթության և ճշմարտության դեմ ոճիր մ՚է դաստիարակաց կողմե։ Այն օրն, որ աշակերտը կհորդորվի հավատալ առանց իմանալու, այն օրն, որ պատանին կհավատա առանց համոզվելու, այն օրն իր ապագան կկնքե, ուրիշին աչոք տեսնելու, ուրիշին մտոք դատելու, ուրիշին հեղինակության և կամաց համեմատ շարժելու դատապարտյալ ստրուկ մը, մարդկանց, կարծյաց և պարագայից խաղալիք մը կդառնա։ Լավ ես է ուզիմ մանուկը բնական լույսին թողուլ, քան թե այնպիսի մթնոլորտի մեջ կրթել, ուր կրթության առաջին պայմանն իմացական կարողությունը ճնշել, բթացնել է»։

Լուսավոր աշխարհներում, օրինակ, Ամերիկայում կրոնական դաստիարակության կրթարանը լինում է ընտանիքը. հայրը և մայրը մանկությունից մտցնում են երեխայի մեջ այն եկեղեցու հրահանգները, որին իրանք են պատկանում։ Դպրոցն այդ պարտավորությունը ձգել է ծնողաց վրա։

Եվ իրավ, եթե լեզուն, որպես ազգային առանձնություններից ամենագլխավորը և նրա պահպանող հիմքը, եթե լեզուն սովորում է երեխան նախ ընտանիքում, և ապա դպրոցը մշակում է և կատարելագործում է նրան, ինչո՞ւ միևնույնը չպետք է լինի և կրոնքի հետ։ Դըժբախտաբար հայ ընտանիքը դեռ այնքան խավարի մեջ է ապրում, որ կրոնքի ճշմարտությունը գտնում է մի քանի արտաքին ձևերի և ծիսապաշտությունների մեջ. նրան դեռ ծանոթ չեն կրոնքի բարոյական ըսկիզբները. նա դեռ չէ ըմբռնել նրա բարձր կենսական նշանակությունը, նա ապրում է հեթանոսության մեջ...

Քահանան, որ շատ-շատ հաճախում է մի այսպիսի ընտանիք, ավելի նպաստում է տիրող խավարին, ավելի ուժ է տալիս ծիսապաշտությանը, որովհետև այդ ձևնտու էր նրա շահերին...

Բողոքական եկեղեցիներում մանուկը չէ կարող ընդունել սուրբ հաղորդություն, եթե քննություն չտա յուր ծուխի հովվին քրիստոնեական

վարդապետությունից և սրբազան պատմությունից։ Բայց այդ բոլորը նա գլխավորապես սովորում է ընտանիքում։

Հայոց տերտերը բավականանում է միայն հաղորդվողի կողմից մի քանի շինծու խոստովանություններով և «մեղայի» տեր հոր թելադրությամբ կրկնելով։ Թող նա չհասկանար, թե ի՞նչ է կարդում, թող նա չգիտենար, թե ի՞նչ խորհուրդ ունի այն հաղորդությունը, որ պետք է ընդունի, բավական է միայն, որ կատարում է մի ընդունված ձև...

Ուրեմն մեղանում թե՛ եկեղեցին և թե՛ ընտանիքը իրանց ավերված կազմակերպությամբ չեն մատակարարում մանուկին կրոնքի կենդանացուցիչ տարերքից և ոչ մինը։

Հոգսը դարձյալ մնում է դպրոցի վերա։

Իսկ դպրոցը, որպես նկատեցինք, յուր ընդունած անկանոն և անմարսելի դաստավորության եղանակներով, միևնույնն է անում, ինչ որ ընտանիքը և եկեղեցին։ Դպրոցը մեռցնում է աշակերտի մեջ նրա բոլոր մտավոր կարողությունը, շինում է նրանից հլու սարուկ առանց ինքնուրույն մտածության, առանց սեփական կամքի։ Դպրոցը չէ զարթեցնում մանուկի մեջ բարոյական զգացմունք, չէ մաքրում նրա խիղճը, չէ տալիս նրան այն հոգին՝ սիրել, պաշտել այն ամենը՝ ինչ որ ճշմարիտ է, ինչ որ բարձր և աստվածային է։ Եվ այդպիսով նա չէ կարողանում կապել մանուկի սիրտը մի վսեմ և գերագույն էակի հետ։

Երբ որ ընտանիքը, եկեղեցին և դպրոցը, որոնք, իբրև համազոր գործիչներ, պետք է դաստիարակեին, զարգացնեին մանուկին բոլոր բարոյական և մտավոր սկզբունքների մեջ, որոնք պետք է լծորդաբար առաջնորդեին նրան կյանքի մեջ դեպի ուղիղ ճանապարհը, երբ այս երեք գործիչները փոխանակ ճշմարտության ուղեցույցներ լինելու մոլորեցնում են մանուկին, էլ ի՞նչ է մնում...

Մենք հետո կխոսենք այդ մասին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Դավրեժից մեզ գրում են՝ թե տեղային թուրքերը կատարեցին մեծ տոնախմբություն ի հիշատակ այն հրաշագործության, որ իբր թե հայտնըվել էր այս օրերում նրանց Քարբալա կոչված ուխտատեղում։ Որպես թե յոթն սունիտյան աղանդին պատկանող մարդիկ համարձակվում են մտնել շիիտյան մահմեդականների սրբարանը։ Որովհետև այդ մի սըրբապղծություն էր հակառակ անձինքների այնտեղ մտնելը, հանկարծ

հայտնվում են հրեղեն սրեր և նրանց ոչնչացնում են։ Քաղաքը կատարեց այդ հրաշագործության տոնը ամենափառավոր կերպով, քանի գիշեր մոլլաների և այլ մոլեռանդների տները լուսավորված էին ճրագներով։ Իսկ երբ հայտնվեցավ, որ այդ ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ մի հնարած խաբեություն մոլլաների կողմից ժողովրդի կույր մոլեռանդությունը գրգռելու համար, Նորին Բարձրությունը՝ թագավոր ժառանգը, բանտարկեց խաբեության հեղինակներին։

Այսպիսի երևույթները Պարսկաստանի համար ունեն խորին քաղաքական նշանակություն։ Քանի ժամանակ էր, որ Նորին Մեծությունը, Շահը, ձգտում էր այն բանին, որքան կարելի է թուլացնել հոգևորականների և կրոնի նախապաշարյալ ժողովրդի վերա ունեցած ազդեցությունը։ Իսկ մոլլաներն այսպիսի հնարքներով աշխատում են միշտ գրգռյալ դրության մեջ պահել կույր սնոտիապաշտությունը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Դավրեժից մեզ գրում են. Յազդի մեջ մի սարսափելի մրրիկ է պատահել, որ տևել է մի քանի ժամ, խլելով շատ տների ծածկը, կործանելով պարիսպներ և մինչև անգամ խորտակել է մի քանի մինարեթներ։ Ուրմի, Խոյ, Սալմաստ գավառների կուսակալը, Սուջայըդ-դովլա զորապետը փոխվեցավ իր չափազանց խստության և հարստահարության պատճառով։ Խոյ քաղաքի ժողովուրդը, որ ավելի տանջված էր կուսակալի փոխանորդից, նրա տիրոջ յուր պաշտոնեն հրաժարվելեն հետո յուր վրեժխնդրությունը թափեց փոխանորդի մի քանի ամիս առաջ մեռած դիակի վերա, գերեզմանից կրկին հանելով նրան և քաշ տալով դիակը ծառից։ Այժմ Սուջայըդ-դովլայի փոխարեն նշանակված նոր կուսակալները ավելի մեղմ են վարվում ժողովրդի հետ, նրանից չեն ծեծում, տուգանք չեն խլում, հայտնի կերպով կաշառքներ չեն խլում։ Եթե ժամանակավոր չլիներ մի այդպիսի վարմունքը, ժողովուրդը բավականին հանգիստ կլիներ։ Դավրեժ քաղաքում հիմնված «արդարության սնդուկը» ընդունում է ժողովրդի կողմից ամեն տեսակ բողոքներ, ուղղակի Նորին Մեծության Շահի անունով գրված. բարձրագույն վճիռները ստացվում են խիստ շուտ։ Ափսոս, վճիռների գործադրությունը շատ անգամ մնում է անկատար։

ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ

Ապրիլի 1-ին

Ես ահա չորս ամիս է, որ, Ռաշտում լինելով, կամենում եմ այս քաղաքի դրության մասին տեղեկություն տալ ձեր լրագրին։

Ռաշտը ծովեզր քաղաք է և համարյա թե Պարսկաստանի քաղաքների թվում ամենաարդյունավորներից մինն է։ Նորա շրջակա հարյուրավոր գյուղերի ամենանշանավոր արդյունքը բրինձն է։ Այս արդյունքի մեծ մասը Ռուսաստան, Թուրքիա և Ֆրանսիա է վաճառահանվում, իսկ մնացածը Պարսկաստանի իր մեջն է գործածվում։ Այստեղ, ընդհակառակն, ուրիշ երկրներից բերվում են և ծախվում են հետևյալ ապրանքները՝ շաքար, երկաթ, մոմ, թղթեղեն և այլ ապրանքներ։

Հայ բնակիչների թիվը մոտ 20 տուն են։ Մեծ մասը ուրիշ երկրներից այստեղ գաղթված։ Բայց չունին ո՛չ եկեղեցի, ո՛չ էլ ուսումնարան։ Ահա երկու տարի է, որ բոլոր ժողովուրդը աշխատում է եկեղեցու շինության համար, անցյալ տարի քիչ գումար են հավաքած և եկեղեցու հիմնադրությունն արած են։ Անցյալ տարի այստեղի քահանան ուղարկվեցավ Ռուսաստան փող հավաքելու համար, բայց նա վերադարձավ այնպիսի աննշան գումարով, որ համարյա թե հավաքված փողի մեծ մասն էլ գործ դրվեցավ նրա ճանապարհի ծախսը ծածկելու վերա։ Այս տարի էլ միտք ունեն ուղարկել քահանային Ռուսաստանի Հայաստանը, որ գնե այնքան գումար հավաքի, որ եկեղեցու շինությունը ավարտվի։

Իսկ ուսումնարանի իրագործման մասին, նյութական միջոցների պակասության պատճառով, դեռ չէ կարելի մտածել։

Բայց իսկապես եկեղեցին և ուսումնարանը պիտի անբաժան լինեին միմյանցից և պիտի ձեռք ձեռքի տված առաջ գնային ամեն տեղ, որտեղ հայեր կան… Եկեղեցին մենք ենք, ժողովուրդը, քրիստոնեական համայնքը, իսկ եկեղեցու արժանի որդիք, համայնքի արժանի անդամներ լինելու համար հարկավոր է պատերազմել տգիտության դեմ… իսկ տգիտության դեմ պատերազմելու միջոցը ուսումնարանն է։ —

ՏԱՐՈՆԻ ԵՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ ԵՎ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Շատ հեռու չէ այն ժամանակը, երբ Տարոնը և Վասպուրականը թեև Տաճկաստանի մի մասն էին կազմում, բայց քրդերի զանազան ցեղերը, օգուտ քաղելով սուլթանի պետության թուլությունից, տիրում էին Հայաստանի այդ երկու ամենամեծ նահանգներին, սկսյալ Սև ծովի հարավ-արևելյան եզերքից, Կորդվաց լեռներից մինչև Մուսուլ և Ասորեստանի սահմանները։

Հիշյալ նահանգները պարունակում էին իրանց մեջ հետևյալ գավառները. Արզրում, Բայազեդ, Հաղբակ, Վան, Բաղեշ (Բիթլիս), Մուշ, Շատախ, Սասուն, Խիզան, Մոզաց երկիր, Ջարսանչախ, Քեղու, այդ գավառներին տիրում էին քրդերը։

Մնացյալ ազգաբնակությունը, բացի քրդերից, էին՝ հայեր, ասորիներ, հրեաներ և թուրքեր։ Հայերը իրանց թվով բազմություն էին կազմում և համարյա բաղկացնում էին ամբողջ ազգաբնակության կես մասը։

Որպեսզի գիտենալ, թե ինչ դրության մեջ էին այն ժամանակ հայերը, պետք է նախ ծանոթանալ տիրող ազգի՝ քրդերի, բնավորության և նրանց քաղաքական կազմակերպության հետ։

Քրդերը բաժանված էին զանազան ցեղերի, որոնց գլխավորներն էին՝ Ջալալի, Ռավանդ, Բիլբասս, Մամըքանի, Հարտոշի, Շիզակ, Հարքի, Եզըդի։ Դրանք շատ քիչ էին զանազանվում հատկություններով և սովորություններով. խոսում էին միևնույն լեզվով, որ յուրաքանչյուր ցեղի մեջ որոշվում էր բարբառների առանձնությամբ։ Կրոնով մահմեդական էին՝ սուննի աղանդից։ Եզըդիները միայն բաժանված էին կրոնով, որոնք պաշտում էին չար և բարի ոգիները, երկրպագություն էին տալիս տնային օջախին։ Դրանք գուցե մնացորդներ են Արամազդի և Արհմնի հին երկրպագուներից, որոնց մեջ մինչև այսօր երևում են մոգական ծեսերը։

Քուրդերը չունեին գիր և գրականություն. շեյխերը (դենպետները) միայն գիտեին արաբերեն կարդալ, որով ավանդում էին ժողովրդին իրանց կրոնի հրահանգները, որոնք բովանդակում էին մի քանի պարզ և թեթև արտաքին ծիսակատարությունների մեջ։ Միակ բանը, որ գիտեր ամեն քուրդ յուր հավատքի հանգանակից, էր նամազը, որը նա մեքենաբար և ճիշտ կերպով կատարում էր նշանակյալ ժամերում, առանց հասկանալու, թե ինչ էին նշանակում յուր այնքան ջերմեռանդությամբ

արտասանած, արաբական բառերը։ Բացի դրանից, քուրդը գիտեր մեծ մարգարեի՝ Մուհամեդի անունը, և նրա նախկին խալիֆաների՝ Օմարի, Օսմանի, Աբու-Բաքրի անունները և ավելի ոչինչ։

Բայց ժողովրդական բանաստեղծությունը կենդանի էր քրդերի մեջ, նա, ծագելով ամբոխի խսխական կյանքից, ուներ նույն բնավորությունը և ոգին, որով ապրում էր ինքը ամբոխը։ Հովվերգությունը և քաջազնական հաղթերգությունը գլխավոր տեղն էին բռնում նրանց բանաստեղծության մեջ. առաջինը՝ որպես մի խաշնարած ազգի կյանքի առնչություն, երկրորդը՝ որպես նրա պատերազմական ոգու արտահայտություն։ Հովվական երգերը տխուր էին և մելամաղձոտ, նրանք խիստ մեղմ կերպով ներդաշնակվում էին հովվի սրնգի խուլ և ձգական հնչյունների հետ։ Իսկ պատերազմական երգերը կրքոտ, վառվռուն և խրոխտ էին, նրանք լիահնչյուն համարձակությամբ որոտում էին թմբուկների ձայնի հետ։

Ո՛չ մի նշանավոր երևույթ չէր կորցնում յուր հետքը քրդի կյանքի մեջ. ժողովրդական ոգին յուր տաղերով կամ փառաբանում էր մեկի քաջագործությունը, կամ պարսավում էր մյուսի թուլասրտությունը։ Ծածկըլեցավ մեկը թշնամուց, կամ խույս տվեց նա կռվի դաշտից, մյուս օր կանայքը և աղջիկները հորինում էին նրա մասին զանազան կծու պարսավներ, և երգը արագ թռչում էր ամեն երեխայի, ամեն չափահասի բերանից։

Թուրը, մի ջուխտ ատրճանակ, վահանը և նիզակը քրդի մարմնի անդամներ են, որոնք միշտ մնում են նրանից անբաժան, հրացանը նա գործ է ածում մեծ կռիվների մեջ։ Թամբած ձին, որ միշտ պատրաստ է նրա չադրի առջև, քրդի հավատարիմ ընկերն է. նրան սիրում է տերը ավելի քան յուր կնոջը, ավելի քան յուր որդիներին։ Քուրդն յուր չադրի մեջ հյուրասեր է որպես Աբրահամ, բայց նա չի խնայելու կողոպտել նույն հյուրին, եթե նա կհանդիպեր մեկ մղոն հեռու յուր չադրից։ Արյան վրեժխնդրությունը, որպես ամեն կիսավայրենի ցեղերի մեջ, նույնպես քրդի մեջ, անցնում է սերունդից սերունդ։ Սպանվածը հանգիստ չէ յուր գերեզմանի մեջ, քանի նրա արյան փոխարենը չէր առնվել սպանողից, կամ նրա մոտ ազգականներից։ Սպանողը այն ժամանակ միայն ազատ է մնում վրեժխնդրությունից, երբ գնում է յուր ոսոխի տունը, յուր սուրը դցում է նրա ոտքի տակ և ներողություն է խնդրում։ Բայց հազիվ կգտնվեր մի քուրդ, որ խոնարհվեր մինչ այս աստիճան ստորության։ Քուրդը քինախնդիր է և ոխերիմ. նա մինչև մահ չի մոռանում վիրավորանքը կամ անպատվությունը, քանի լիակատար բավականություն չէր ստացել։ Նա միևնույն ժամանակ շատ հանգամանքներում հպարտ է

և ավելի։ Քուրդը դադարեցնում է յուր կռիվը, երբ հակառակ կողմից միջամտություն են գործում կանայք։ Նա իրան չէ ստորացնում պատերազմել իրանից թույլ արարածի հետ, թեև քուրդի կինը կռվի ասպարեզում նույնքան կատաղի է և քաջասիրտ, որքան յուր ամուսինը։

Կրկին անգամ ամուսնանալը, մեռած կամ սպանված տղամարդից հետո, քուրդ կնոջ համար համարվում է նախատինք։ Նա մնում է միշտ այրի, մխիթարում է իրան այն քաղցր հիշողություններով, թե յուր այրը մի լավ ավազակ էր, թե նա մնաց միշտ մաքուր երկչոտության արատից, թե նա երբեք յուր թիկունքը չդարձրուց թշնամու դեմ, թե նա սիրում էր իրան, որքան սիրում էր յուր արաբական նժույգին, և երբեք նրա սիրտը չգրավեց ամենագեղեցիկը յուր ցեղի աղջիկներից։ Եվ մայրն երեխայությունից պատմում էր յուր որդիներին հոր գործերը, խրատում էր հետևող լինել նրան և կրկին բարձրացնել հանգուցյալի հիշատակը խոր գերեզմանից։

Մանկությունից քուրդը կրթվում է ձիան սանձ կառավարելու, զենք գործածելու, մարմնամարզության և այլ ճարպկությունների մեջ։ Նա քաջագործություն է համարում գողանալ, հափշտակել ամեն ինչ, որ պետք էր յուր ապրուստի համար։ Նա մինչև անգամ գողանում է յուր հարսնացուն։ Բախտավոր է համարվում ամուսնությունը, երբ տղամարդը—հերոսը առևանգել էր յուր սիրուհին հոր ընտանիքից։ Կինը այսպիսի դեպքերում մի առանձին հպարտությամբ է նայում յուր ընկերուհիների վերա։

Քուրդի ամենամեծ երդումը թալախի վերա է լինում. նա առնում է մի քար և նետում է, ասելով. «Թող իմ թալախն այս քարի պես գցած լինի, եթե այսպես կամ այնպես անեմ»։ Թալախը նրա ամուսնական կապն է, նա քանդված է համարվում, երբ նրանով երդում ուտողը երդմնազանց է լինում։ Այսպիսի երդումները պահանջվում են, երբ պետք էր որևիցե գործի մեջ ամենահաստատ գրավական մի մարդու հավատարմության մասին։ Եվ այդ լինում է այն ժամանակ, երբ գործը վերաբերում էր ընդհանրության ամենակարևոր մեկ հարցին։

Որպես բնության ազատ որդի, նվիրելով իրան անհոգ և արձակ կյանքի, քուրդը բավականանում է յուր անասուններով։ Նա հովիվ է։ Նա չունի տուն և հաստատ բնակություն, նրա օթևանը յուր չադրն է, որը կազմում է այնտեղ, ուր կարող է յուր անասունների համար ճարակ գտնել։ Ձմեռային ձյուները միայն քշում են քուրդին յուր սիրելի սարերից, այն ժամանակ նա մի հայի տուն միշտ պատրաստ է ընդունել ինքնակոչ հյուրին։ Այնտեղ քուրդն յուր անասունների հետ անցուցանում է

ձմեռը, մինչև գարունը կրկին կոչում է նրան դեպի լեռների։ գիրկը։

Քուրդի կերակուրն է՝ յուր անասունների կաթը, մածունը, պանիրը, սերը, կարագը և յուղը. նա չէ դիպչում նրանց մսին։ Քուրդի հագուստը, ոտքից մինչև գլուխ, կազմված է յուր անասունների բուրդից և կաշուց, իսկ այդ բոլորը պատրաստում է նրա կինը։ Տղամարդը տնտեսության մեջ ավելի չէ խառնվում. նա պատերազմական մարդ է։ Երկրագործությունը, արհեստը քուրդի համար ստոր պարապմունքներ են, որոնց նա արհամարհում է, համարելով ռայայի գործ։ Վաճառականությունը նրա մեջ դեռ պահպանել է յուր հին նահապետական ձևը։ Նա տալիս է, օրինակ, քսան ոչխար և գնում է մեկ ձի. նա փոխում է յուր յուղը, պանիրը, բուրդը երկրագործի ալյուրի հետ, կամ արհեստավորի շինած այս և այն գործիքի հետ։ Եվ այս բոլորը կատարում է նա չափազանց միամտությամբ. ամեն առևտուրի մեջ խաբվում է նա. ամեն փոխառինության մեջ որսում է նրանից մանրավաճառի յուր շահերը։ Որովհետև այսպիսի հարաբերությանց մեջ քուրդը գործ չէ դնում յուր սուրը և մարմնական ուժը, որ նրա մեջ շատ զարգացած է, այլ նա բանեցնում է յուր հիմարությունը և խելքը, որոնք նրա մեջ խիստ թույլ են։

Քուրդը խաբեբա չէ. նա հավատարիմ է յուր խոստմունքը կատարելու մեջ։ Նա մնում է միշտ ճիշտ յուր պարտքը վճարելու մեջ։ Վճարել այն, ինչ որ պարտքով էր առած, և կողոպտել ուրիշի սեփականությունը՝ երկուսն էլ միօրինակ սուրբ են նրա համար։ Առաջինի մեջ նա պահպանում է յուր պատիվը և խոսքը, իսկ երկրորդի մեջ՝ իրավունքը և արդարությունը։ Որովհետև քուրդի համար ոչինչ ընդդեմ չէ իրավունքի և արդարության, երբ նա սեփականացուցած էր սրի և հաղթության ուժով։ Սուրը և հաղթությունը արդարության կշիռն է նրա և յուր հակառակորդի մեջ։

Այսպես է վարվում ամեն մի ավազակ, այսպես է վարվում ամեն մի հասարակություն, որ նույն բնավորությունն ունի. այսպես է վարվում մի ամբողջ պետություն, որ ավազակի դեր է խաղում...

Այսքանը բավական համարելով քուրդի բնավորության և ընտանեկան կենցաղավարության մասին, դառնանք այժմ դեպի նրա քաղաքական կյանքի կազմակերպությունը։

Քուրդերի ցեղերը կառավարվում էին իրանց էլ-աղաների (ցեղապետների) և շեյխերի (դենպետների) գլխավորությամբ։

Ցեղապետը, որ և կոչվում է միր (տեր), չէ նշանակվում ընտրողական սկզբներով. նա, որպես ցեղի նահապետ, սերունդից սերունդ, տիրում է ժառանգաբար։ Ամբողջ ցեղը հպատակվում է նրա իշխանությա-

նը, խոնարհ, որդիական հնազանդությամբ. նրա սուրը, նրա ձեռքը, նրա կյանքը միշտ պատրաստ են ծառայելու պետի կամքին և հաճույքին, որքան և չար կամ բարբարոսական լինեին նրանք։ Ցեղապետն է վճռում յուր ժողովրդի վեճերը. նա է պատժում հանցավորին, նա է բաժանում ավարը հափշտակողների մեջ, նա է առաջնորդում յուր ցեղը դեպի կռիվ, նա է ուղարկում խմբերը ավազակության համար։ Ցեղապետը, ամեն առավոտ յուր շատրի մեջ նստած, ընդունում է ցեղի նշանավոր տղամարդերին, որոնք իրանց զինվորական ամբողջ կազմվածքով ներկայանում են նրան, լսելու պետի պատվերները։ Այնտեղ ծխում են հյուրասիրության չիբուխը, խմում են մի-մի ֆինջան դառն ղահվե։ Մի այսպիսի սալամը կատարվում է ամեն առավոտ յուր բոլոր ճշտությամբ։

Իսկ շեյխերը նշանակվում են գլխավոր դենպետից. նրանք ունեն իրանց մուֆթիները և ղադիները։ Շեյխերը կատարում են ցեղի կրոնական պահանջները, որպիսի են՝ ամուսնություն, թլփատություն և հրապարակական նամազ։ Իսկ կռիվների մեջ նրանք մասնակցում են որպես զինվոր, բայց ավազակության մեջ՝ որպես ավազակապետ։ Այսուամենայնիվ, նրանք վայելում են ցեղի համակրությունը նույն չափով, որքան ջերմ էր կրոնական զգացմունքը մի պարզ և կիսավայրենի ժողովրդի մեջ, որպես էր քուրդը։

Տարոնի և Վասպուրականի ամբողջ նահանգները բաժանված էին քրդերի զանազան ցեղերի մեջ։ Իսկ յուրաքանչյուր ցեղի մեջ երկրի բաժանմունքը ամենախոշոր մասներից հասնում էր յուր ամենափոքր մանրերորդին։ Այսինքն, սկսյալ մեկ քաղաքից, մեկ գյուղից և մեկ ընտանիքից, յուրաքանչյուրն առանձին-առանձին տերեր ունեին, և յուրաքանչյուրի բաժինը հավասարվում էր տիրողի զորության բարձր կամ ստոր աստիճանին։

Ռայան—հպատակը, վճարում էր այլևայլ հարկեր հողի մշակության համար, յուր անասունների համար, յուր արհեստի համար, յուր բնակության տեղի համար, յուր գլխի համար, մի խոսքով, ամեն բանի համար, որ լրացնում էր նրա կյանքի և ապրուստի անհրաժեշտությունները։ Հարկերի չափը և նրանց քանակությունը ո՛չ կշիռ ունեին և ո՛չ սահման. դա կախված էր առնողի խղճմտանքից։ Ռայայի տեր լինելու և հարկեր պահանջելու արտոնություն վայելողները կոչվում էին խաֆիր. դրանք ցեղի մեջ որևիցե նշանակություն ունեցող մարդիկն էին։ Օրինակ, գլխավոր ցեղապետը ունի յուր ազգակիցները, կամ պաշտոնակալները, նրանց ապրուստի համար տալիս է մի կամ ավելի գյուղեր, որոնց հասույթով պետք է կառավարվեն նրանք. այսպիսիները ստանում են խա-

ֆիրության իրավունք։ Նույնիսկ պաշտոնակալները, կամ ցեղապետի ազգակիցները ունեն ծառաներ կամ սպասավորներ. նրանց ռոճիկի փոխարեն տալիս են իրանց ստացած գյուղերից մի կամ շատ տներ որպես ծուխ, և այն ծառան վարվում է նույն տան հետ որպես յուր սեփականության կամ հպատակի հետ։ Ահա՛ պատճառը, որ երկրի բաժանմունքը, սկսյալ ամենախոշոր կտորներից, հասնում էր մեկ ընտանիքի։

Որպես իշխանությունը, սկսյալ ցեղապետից, աստիճանաբար իջնում էր մինչև վերջին սպասավորը, նույնպես սեփականության իրավունքը, սկսյալ երկրի խոշոր կտորներից, հասնում էր նրա ամենափոքրր մասին։

Բայց երկիրը (խաֆիրների) տոհմային կամ կալվածական ժառանգություն չէր, այլ նա սեփականացուցած էր սրի ուժով. այս պատճառով, նա անդադար անցնում էր մի տիրապետողից դեպի մյուսը, որի սուրն ավելի զորություն էր ստանում։

Եվ այսպես, պատերազմը տիրողների մեջ դառնում էր մշտական։

Պատերազմների ժամանակ, յուրաքանչյուր հակառակ կողմերի, թե հաղթության և հաղթվելու միջոցին, բնակիչների վիճակը սարսափելի էր։ Օրինակ, մեկ ցեղ կամենում է խլել մյուս ցեղի ձեռքից երկրի այս կամ այն մասը. նա կամ հաղթելով տիրում է, կամ ավար առնելով, թալանելով ամեն հանդիպածը, հետ է դառնում։ Այսպիսի դեպքերում ժողովուրդը թողնում է յուր տունը, տեղը և մշակության դաշտերը, յուր գլուխը միայն ազատելու համար պատսպարվում է լեռների անմատչելի տեղերում։ Կռիվը տևում է երկար։ Անասունները անտեր մնալով, թշնամին կողոպտում է, հունձքը անխնամ մնալով, չորանում է, ոչնչանում է. և կռիվներից հետո վրա է հասնում մի նոր, ամենասարսափելի թշնամի՝ սովը։

Ժողովուրդը գտնվում էր անվերջ երկյուղի և հուսահատության մեջ. նա չգիտեր, թե էգուց կարո՞ղ է հանգիստ լինել, որովհետև թշնամին միշտ կանգնած էր, որպես ասում են՝ նրա քամակին։ Կռիվների փոթորիկների մեջ միանգամ զրկվելով նրա մշակությունները բերքից, մյուս օրը նա ուտելու հաց չունի։ Որովհետև նա ապագայի համար պաշար չէ պահում. նախ, որ ապահով տեղ չունի պահելու, երկրորդ, ավելորդ ծանրությունը միշտ արգելում է նրա փախուստը թշնամու ձեռքից. նա աշխատում է ազատել յուր գլուխը միայն։

Կռիվները, ժողովրդի անդադար անցնելը մեկ տիրապետողից դեպի մյուսը, քայքայում էին բնակիչների կյանքը սրով, կրակով և սովով։

Հանկարծ երկրի նախկին տիրապետողն իրան հաղթված է համա-

րում. որպեսզի նա հաղթողի համար շահվելու ոչինչ չթողնի, հրդեհում է ամբողջ գյուղորայք, ավերում է քաղաքները, կրակ է տալիս հասունացած հունձքերին և բոլորովին անապատ դարձնելով երկիրը, որ պատկանում էր իրան, այնպես թողնում է և հեռանում։ Այսպիսի հանգամանքներում քուրդը կորցնելու ոչինչ չուներ, որովհետև նա մեկ ժամանակավոր հյուր էր. իսկ այն բոլոր կրակի նյութ դարձած շինություններն պատկանում են հայ կամ օտարազգի բնակիչներին, այն բոլոր մշակությանց արդյունաբերությունը նրանց ձեռքերի վաստակն էր։ Նույն բարբարոսությամբ վարվում է հարձակվողը, երբ տեսնում է, թե տիրելու անկարող է. նա խույս է տալիս կռվի դաշտից, յուր հետքից թողնելով ավերակներ և ամայություն։

Ժողովուրդը միշտ գտնվում էր նույն դրության մեջ, որպես մի թռչունի, որի բույնը քանդված էր չար երեխայի ձեռքով, նա նստած է միշտ օրորվող տերևի վերա և չգիտե ինչ անի։ Բնակիչը սիրտ չունի կրկին նորոգել յուր խրճիթը, որովհետև մտածում էր՝ արդյոք երկա՞ր կարող է բնակվել նրա մեջ. սիրտ չուներ մյուս անգամ ցանել յուր արտը, որովհետև հույս չուներ, թե կհաջողվի իրան քաղել յուր հունձքը։ Նրա տան շարժական իրեղենները միշտ թաղված էին հողի մեջ, կամ նրանց համար հատուկ շինված, ստորերկրյա պահարաններում, որպեսզի փախուստների ժամանակ թշնամու ձեռքը չընկնեին։ Բայց հաջողվո՞ւմ էր նրան մյուս անգամ դուրս բերել յուր կայքը գերեզմանից, խիստ հազիվ, որովհետև շատ անգամ թաքցնողը, հանդիպելով թշնամուն, զրկվում էր կյանքից և յուր պահարանի գաղտնիքը տանում էր դեպի մյուս աշխարհը։ Այս է պատճառը, որ Հայաստանում մինչև այսօր գետինը փորելու ժամանակ գտնվում են այնքան շատ պղինձ, երկաթե իրեղեններ, կանանց զարդեր, դրանք պատերազմների միջոցներում թաքցրած կայքեր են, որոնց տերերն իրանց հետ իջել էին գերեզման։

Այսպես էր այն ժամանակ հայի վիճակը Տարոնի և Վասպուրականի մեջ. նրա դժբախտությունն ավելի նրանումն էր կայանում, որ տիրող ազգը, քուրդը, երկրի տերը չէր, այլ զանազան թափառական ցեղերից բաղկացած մի ամբոխ, որ կատաղի մրրիկի նման տարուբերվում էր երկրի մի կողմից դեպի մյուսը, ոչնչացնելով ամեն կենդանություն, և ամեն ինչ, որ արդյունաբերել էր արհեստը և մարդու աշխատասեր ձեռքը։

Քուրդը սեփական «փառասիրություն» չուներ, և ոչ հասկանալի էր նրան աշխարհակալության հպարտությունը։ Նա «նստում» էր յուր նվաճած ժողովրդի վերա, որպես այն սարերի խոտերի վերա, ուր արածում

էին նրա անասունները։ Մեկը՝ ժողովուրդը, մատակարարում էր իրան քրդի պիտույքները. մյուսը՝ սարերի խոտերը, ճարակ էին տալիս նրա հոտերին, որպես վերջինի աճեցնելու և մշակելու համար նա հոգ չէր տանում, նույնպես և ժողովուրդը խնամելու մասին նա չէր մտածում։ Քուրդը վստահ էր, թե աշխարհի մեջ ամեն տեղ բաց է նրա ասպարեզը, քանի յուր սուրը կտրում է, քանի յուր ձիքը շարժում է։

Վասպուրականի և Տարոնի նահանգներում, բացի ներքին խռովությունները քրդերի կողմից, լինում էին և հարձակումներ արտաքին թըշնամիներից։ Քիչ չէր պատահում պարսիկներն արշավանքներ էին գործում և բազմաթիվ բախտախնդիր հրոսակներով թափվում էին այն երկըրների վերա։ Պատերազմը վերջանում էր կրակով, արյունով, գերեվարությամբ և ավարառությամբ։ Այսպիսի դեպքերում վտանգը հասնում էր դարձյալ ժողովրդին, որովհետև քրդերը, եթե թշնամուն ընդդիմանալու կարողություն չունեին, թողնում էին երկիրը, քաշվում էին դեպի լեռների անմատչելի տեղերը և սպասում էին մինչ թշնամու հեռանալը։

Քիչ չէր պատահում և օսմանյան պետությունը ուղարկում էր զորքեր՝ խաղաղացնելու յուր տերության սահմանագլուխները և նվաճելու ապստամբ քրդերին։ Եվ տաճկի ասկերը վարվում էր նույն բարբարոսությամբ, որպես պարսիկները։ Որովհետև տաճկի տիրապետությունը կամ խսպառ չէր հաջողվում, կամ եթե հաջողվում էր, լինում էր ժամանակավոր, և ասկերը, դատարկաձեռն հետ չդառնալու համար, հափշտակում էր ամեն հանդիպածը։

Ահա՛, այսպիսի դրության մեջ էին այն ժամանակ Արզրումի, Բայազեդի, Հախքարիա, Վանի, Բաղեշի, Մուշի, Ճապախու, Սասնո, Խիզանու, Մոգաց, Չարսանջախի, Քեղվա գավառները, իրանց բազմաթիվ հայ բնակիչներով։ Նրանց տիրում էր մի ազգ, որի աջ ձեռքը յուր սուրն էր, որի ոտքերը յուր նժույգն էր. որի տունը՝ յուր թեթև չադրը, որի հայրենիքը՝ ամեն տեղ, որի հունձքը՝ թշվառ մարդկությունը, որի օրենքը և իրավունքը՝ յուր կամքը, որի կյանքի նպատակը փչրել, խորտակել և ոչնչացնել, որի գործող ոգին՝ յուր երկաթի սիրտը, վայրենի կատաղությունը և գազանական հանդգնությունը...

Բայց ի՞նչ էր, որ կապում էր հային մի այնպիսի երկրի հետ, ուր նրա կյանքը հանապազօրյա վտանգի մեջ էր, ուր նրա կայքը ապահովված չէր, ուր նրա ապրուստը խառն էր արյան և արտասուքի հետ, ուր նրա ընտանեկան պատիվը արատավորվում է. ուր նրա կրոնը, և ամեն ինչ, որ նվիրական էր յուր համար, սրբապղծվում էր։

Ի՞նչ էր, որ կապում էր հային մի այսպիսի երկրի հետ։

— Հայրենիքը։

Հայրենիքը լի էր անթիվ հիշատակարաններով, որոնք ասում էին հային. «Դա քո երկիրն է, այստեղ էին ապրում քո պապերը և այստեղ մեռան նրանք, դու էլ պետք է այստեղ մեռնես ու քո ոսկերքը խառնես նրանց փոշիների հետ»։

Վանա բերդի պարսպաքարերի վրա, և Վասպուրականի մեջ ղանայան բլուրների գագաթներում, հայը տեսնում էր անթիվ արձանագրություններ, սկսյալ սեպաձև բևեռագրերից մինչև այն տառերը, որ հնարեց յուր ազգի համար Մեսրոպը, որոնք հազարավոր տարիներ պատերազմելով ժամանակների հետ, պահել էին նրա վաղեմի մեծության հիշատակները։

Այն երկրում, Հայոց-ձորով անցնելու միջոցին, հայը միշտ հիշում էր յուր նահապետի՝ Հայկ դյուցազնի՝ այն մեծ հսկայի կռիվը Նեբրովթի հետ։ Նա ցույց էր տալիս յուր զավակներին Նամրութա (Նեբրովթի) սարը, ուր մեր նախապապը վեր հանեց տիտանների որդվո դիակը նրան սպանելուն հետո և այնտեղ այրեց։ Եվ հայը միշտ պարծենալով էր հիշում հին ավանդությունը և հպարտանում էր, որ ինքը մի այնպիսի մեծ մարդու սերունդիցն է, որ շառավիղում էր աստվածների արյունից։

Տարոնի և Վասպուրականի մեջ դեռ չէին ցամաքել չորս գետերը, որոնք բխում էին աստուծո դրախտից, և Բինգյոլի ծաղկավետ դաշտին նայելով, հայը ասում էր յուր որդուն՝ «Տես, այստեղ էր մեր նախահոր՝ Ադամի և նախամոր՝ Եվայի բնագավառը»։ Նա ցույց էր տալիս «Կայենի ծառերը», որոնց հովանու տակ հանգստանում էր առաջին երկրագործը. նա ցույց էր տալիս «Ղամեքա բերդը», ամրոցը այն քաջ որսորդի, որ սպանեց Ադամի անդրանիկ, բայց դատապարտյալ որդուն։ Նա ցույց էր տալիս դաշտերը, ուր առաջին խաշնարած Աբելը արածեցնում էր յուր ոչխարները։ Հայը տեսնում էր, որ առաջին հոր և առաջին մոր ժամանակից ինքը մնացել է անբաժան այն երկրից, ուր ապրում էր մարդկության նախաստեղծ զույգը։

Ջրհեղեղը մինչև անգամ յուր աշխարհավեր սասանմունքով չկարողացավ դուրս մղել հային հայրենի երկրից։ Հայի ավանդությունն ասում էր, թե ինքը խոսում է նույն լեզվով, որով խոսում էր Նոյը, թե աստուծո բարկությունը անցնելուն հետո մարդկության երկրորդ նախահայրը կրկին հայոց երկրի վերա հիմնեց յուր բնակությունը։ Եվ Գրգուռ սարին նայելով, նա յուր միտքն էր բերում այն հին զրույցը, իբր թե Նոյի տապանը. այս սարին քսվելով, անցավ դեպի Սիփան լեռը, խնդրեց նրանից ընդունել իրան յուր գագաթի վերա։ Սիփանը համեստությամբ

պատասխանից, թե ինքը հայոց լեռների ամենակրտսերն է, և ցույց տվավ յուր անդրանիկ եղբայրը՝ հսկա Արարատը, ասելով. «Գնա ի Մասիս, որ բարձր է քան զիս»։

Ահա այսպիսի բազմաթիվ ավանդություններով և հիշատակներով կապված էր հայրենիքը հայի սրտի հետ, հիշատակներ, որոնք սկսյալ ամենախորին հեթանոսական դարերից, հիշեցնում էին նրա հին և փառավոր անցյալը։

Հայը չէր կարող բաժանվել հայրենիքից։ Հայրենիքը նրա սրբարանն էր։ Այնտեղ ամեն մեկ քար, ամեն մեկ ավերակ հիշեցնում էր նրա վաղեմի մեծությունը։ Դեռ բոլորովին չէին անհետացել բերդերի, ամրոցների փլատակները, ուսկից մի ժամանակ նրա ազգի պետերը տարածում էին իրանց իշխանությունը։ Դեռ մնում էին հին քաղաքների ավերակները, որոնց փշրանքի մեջ երևում էին հայ մարդու արհեստը և ճարտարությունը, որոնք քարոզում էին՝ թե որքան հանգիստ էր քաղաքացու կյանքը, որքան զարգացած էր նրա մեջ գիտությունը։ Դեռ բոլորովին չէին անհետացել հետքերը բազմաթիվ ջրանցքների, ստորերկրյա խողովակների, որոնք ցանցաձև հյուսվածքով տարածվել էին ընդարձակ դաշտերի վրա, անցնում էին ամենադժվարին լեռների և բլուրների միջով, որոնք ցույց էին տալիս, թե մի ժամանակ որքան ծաղկած էր մշակ մարդու գործը, որքան նա սերտ կերպով կապված էր բնության և երկրի հետ։

Այս երկրի վերայով անցան հույները, պարսիկները, մանգոլները, արաբացիք, թուրքերը, իսկ վերջին ժամանակ՝ քրդերը, և ամեն ինչ ոչնչացավ նրանց ոտքերի տակ։ Այժմ տիրում էր անապատ և ամայություն։

Մի բան, որ մնաց անջնջելի թե ժողովրդի սրտի մեջ և թե երկրի վերա յուր արտահայտող հիշատակարաններով, դա էր կրոնը, յուր վանքերով և եկեղեցիներով։ Ամեն տեղ, մինչև անգամ անմարդաբնակ և խուլ ձորերի մեջ, լեռների ու բլուրների վերա, հանդիպում են հոյակապ վանքեր, փոքրիկ մատուռներ, որոնց մեջ վաղուց է լռել եկեղեցականի ձայնը, միայն տոնական հանդեսների ժամանակ հավաքվում է ուխտավորների բազմությունը՝ նվիրելու յուր զոհերը երկրի հին սրբարանին։ Իսկ մեծ մասը վանքերից դեռ պահպանում են աբեղաների միաբանություն, որոնք դեռ վայելում են ժողովրդի ջերմ համակրությունը։ Մինչև այսօր լեռների անմատչելի տեղերում տեսնվում են մթին քարանձավներ, ուր ճգնավորները, հեռանալով աշխարհի աղմուկից, նվիրում են իրանց անձները աստուծո։ Շատ գյուղեր, որոնք բաղկանում են մի քանի գետ-

նավոր խրճիթներից, ունեն մի փառավոր եկեղեցի, մնացած այն ժամանակներից, երբ բնակիչները բազմաթիվ էին և ապահովված։

Ես կհիշեմ մի քանի նշանավոր վանքերի անունները, որոնք գտնըվում են Տարոնի և Վասպուրականի նահանգներում։ Մարդլա գավառումն են՝ Բագնաց առաքելո և Ստեփաննոս Նախավկայի վանքերը։ Հազբակա գավառումն է Բարդուղիմեոս առաքելո վանքը։ Վանա ծովակի կղզիներում գտնվում են Լիմ, Կտուց և Աղթամար անապատները, յուրյանց ճըգնավորական կյանքին նվիրած աբեղաներով։ Շատերը վանքերից և եկեղեցիներից կրում են իրանց մեջ հայոց երևելի մարդերի շիրիմները։ Օրինակ, Աշտիշատի եկեղեցին Մուշի մեջ ունի Սահակ Պարթևի գերեզմանը, այն մեծ քահանայապետի, որ այնքան երկար տարիներ պատերազմելով պարսից արքունիքի և Բյուզանդիոնի խորամանկ քաղաքականության հետ, պահպանեց Արշակունիների այն ժամանակ խախուտ գահը։ Սուրբ Ղազարու կամ Առաքելոց վանքը նույնպես Մուշի մեջ ունի Մովսես Խորենացու գերեզմանը, որ մտցրուց Հայաստանում հունաց գիտությունը, որ ավել հայերին իրանց նախնյաց պատմությունը, որպես Եհովայի Մովսեսը ավել Իսրայելին Հին կտակարանը։ Նույն վանքումն է Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Խորենացու աշակերտակցի գերեզմանը, որ Աթենքից բերավ Հայաստան հունաց դպրությունը և սովորեցրուց հայերին մտածությունը։ Այնտեղ են և Հովհանն ու Ղազար թարգմանիչների գերեզմանները։ Ոստանա վանքը Ռշտունյաց երկրում ունի Եղիշեի գերեզմանը, այն ոգելից բանաստեղծի, որ այնքան եղերական կերպով երգեց հայոց քաջերի նահատակությունը Ավարայրի դաշտում։ Վանքն Նարեկա ունի Գրիգոր Նարեկացու գերեզմանը, որի գիրքը ամեն հայ մարդու սրտի բուրվառն է, որով ծխում է յուր ջերմ օրհներգությունը դեպի հավիտենականի աթոռը։ Հոգվոց վանքը Անձևացյաց երկրում ունի Տրդատ Մեծի գերեզմանը, որ մտցրուց Հայաստանում Ավետարանի լույսը։ Վարագա վանքը Վան քաղաքի մոտ ունի Սենեքերիմ Արծրունու գերեզմանը, այնտեղ են դրած և՛ Խոշոշ թագուհու, և՛ Պետրոս Գետադարձի շիրիմները։ Վանքն Կոփա Մուշի մոտ ունի Դանիել Երջանիկի, Լուսավորչի թոռան գերեզմանը։ Վանքն Բասենու կամ Հասան-Գալեի— Գրիգոր Մագիստրոսի գերեզմանը։ Տարոնի Սուրբ Կարապետի կամ Գլակա վանքը՝ Մուշեղի և Գայլ Վահանի գերեզմանները։ Իշխանագոմ գյուղի եկեղեցին՝ Վարդ Պատրիկի գերեզմանը։

Հիշյալ լուռ և անբարբառ շիրիմները կանգնած հսկում են երկրի վերա, պահելով հայի սրտի մեջ սերը դեպի հայրենիքը և նրա հպարտությունը դեպի յուր անցյալը։

Տարոնի և Վասպուրականի վանքերում, բացի նրանից, որ գտնվում են Հայոց նշանավոր մարդերի շիրիմները, այլ շատերի մեջ պահվում են և նրանց մարմնի «սուրբ մասունքները»։ Օրինակ, Վանա Սուրբ Վարդան եկեղեցումն է Մամիկոնյան Վարդանի մեկ մատը։ Մշո Սուրբ Կարապետ վանքումն է ս. Ղևոնդա մասունքները։ Հաղբակա Բարդուղիմեոս առաքելո վանքումն է նույն առաքյալի աչքը։ Մի խոսքով, վանքերը և եկեղեցիները լիքն են այսպիսի սրբություններով, ամփոփված արծաթի և ոսկու մեջ, զարդարած թանկագին քարերով։ Եթե ավելացնենք դրանց վերա արծաթի բուրվառները, սկիհները, աշտանակները, ջահերը, արծաթակազմ ավետարաններ և արծաթից շինված այլ եկեղեցական անոթները, կարելի է ասել, որ ազգի հարստությունը կենտրոնացած էր գլխավորապես վանքերի մեջ։ Մի այսպիսի առձեռն գանձը շատ անգամ գրավում էր մահմեդական ավարառուների շահասիրությունը, և քիչ չէր պատահում, որ վանքերի սրբությունները գերի էին ընկնում։ Քուրդերը հարգում էին իրանց ձեռքն ընկած սրբությունները և չէին ոչնչացնում։ Քրդի համար քրիստոնեական տաճարի սրբությունը նույն նշանակությունն ուներ, որպես յուր շեյխի տված թիլիսմանը, որը նա կապում է յուր աջ թևին թշնամու զենքերից անխոցելի մնալու համար։ Քուրդը դարձնում էր սրբազան կողոպուտը միայն ծանրագին փրկանք ստանալեն հետո։ Պարսիկները և թուրքերը այն ակնածությունը չունեին դեպի քրիստոնյաների սրբությունները, նրանք կոչնչացնեին, եթե տեսնեին՝ նրանցից գոյացած ոսկին կամ արծաթը կարող էր ավելի գին բերել, քան այն գումարը, որ ստանալու էին որպես փրկանք։ Իսկ փրկանքը լինում էր միշտ ավելի բարձր, քան սրբության վերա գտնված ոսկու և արծաթի արժեքը։ Օրինակի համար, Բարդուղիմեոս առաքելո աչը, որ գտնվում էր Հաղբակա նույն անունով վանքում, գերի է ընկնում պարսիկների ձեռքում։ Ժողովուրդը վճարեց տասն անգամ սուրբ աչի ծանրությամբ ոսկի և փրկեց գերին։ Ամբողջ գավառի կանայքը զրկվեցան իրանց ոսկի և արծաթի զարդերից։ Նրանք իրանց մատանիները, քամարները, գլխի պաճուճանքը, պարանոցի մանյակները թափում էին վանահոր մոտ, որ վաճառե, ոսկի շինե և փրկե հայոց առաքյալի աչը, «իրանց երկրի պաշտպանը», անօրենների ձեռքից։ Բայց սուրբ առաքյալի բազուկը, ամփոփած արծաթի մեջ, յուր հսկայական մեծությամբ, չափազանց ծանրություն ուներ...

Ինչո՞ւ ժողովուրդը յուր աղքատ դրության մեջ դարձյալ զոհում էր յուր ունեցածը, միայն թե չզրկվեր յուր վանքերի սրբություններից։ Նրանցից յուրաքանչյուրը հիշակված էր ամբոխի մեջ յուր հրաշագործ

զորություններով։ Մեկը դուրս էին բերում երաշտության ժամանակ, «անդաստան» էին անում, թափոր էին կատարում, և նրա բարեխոսությամբ երկինքը ներում էր մարդիկների հանցանքը և անձրև էր թափում։ Մեկին ուխտ էին մատուցանում խոլերայի և ժանտախտի ժամանակ, և ժողովրդի միջից դադարում էր աստուծո պատուհասը։ Մեկը բժշկում էր դիվահարներին, մյուսը՝ անդամալույծներին... Ահա այսպիսի սնահավատություններով կապված էր ժողովրդի սիրտը յուր սրբությունների հետ։

Թողյալ այն, որ ժողովուրդը ստիպված էր ազատել յուր սրբությունները մահմեդականների գերությունից, շատ անգամ ևս պատահում էր, որ վանահայր աբեղաները կամ վիճակավոր առաջնորդները, կաշառքներով իրանց կողմն էին դցում քուրդ, թուրք կամ պարսիկ իշխաններին և նրանց օգնությամբ խլում էին միմյանց վանքեր, տիրում էին թեմերի։ Այսպիսի հափշտակությունները խիստ թանկ էին նստում։ Վանահայրը կամ առաջնորդը մի օտարազգի վաշխառուի մոտ գրավ էր դնում վանքի սրբությունները, պարտք էր անում՝ յուր խոստացած կաշառքը լրացնելու համար։ Բայց ո՞վ էր թափում գրավականը։ Դարձյալ ժողովուրդը։ Իսկ շատ անգամ ևս վարդապետները վատնում էին վանքերի կայքը, մնում էին միայն սրբությունները, որովհետև իրանց խղճմտանքը չէր ներում նրանց վաճառել, գրավ էին դնում։

Չնայելով, որ վանքերի սրբությունները դարձել էին շահասիրության առարկա եկեղեցականների ձեռքում, չնայելով, որ վարդապետները նրանց շնորհիվ բավական արծաթ էին քամում ժողովրդի աղքատ քսակից, նա, ժողովուրդը, ստիպված էր ենթարկվել և այսպիսի տուգանքների, այսինքն՝ ազատել նրանց վաշխառուներից...

Փառավոր և հոյակապ վանքերին շրջապատում էին հայոց գյուղորայքը, ուր գետնափոր խրճիթների մեջ, խլուրդների նման ապրում էին բնակիչները։ Ամենահմուտ աչքը չէր կարող նկատել, թե այն ստորերկրյա խորշերում գտնվում էին մարդիկների բնակարաններ, միայն երդիկներից դուրս հոսած ծուխը հիշեցնում էր նրանց գոյության մասին։ Այն խրճիթներից դուրս են երևում կիսամերկ արարածներ, մաշված, դունաթափ երեսներով, որոնք կարծես կենդանի մեռած էին իրանց գերեզմանների մեջ։ Եվ արդարև, այն մթին և խոնավ գետնափոր խրճիթները այլ բանի չէ կարելի նմանացնել, քան գերեզմանի...

Մտաբերելով Տարոնի և Վասպուրականի փառավոր անցյալը և տեսնելով այնտեղ հայերի աղքատությունը և նրանց ստրկությունը քրդերի ձեռքում, ակամայից ծագում է մարդի գլխում մի այսպիսի հարց՝ ին-

չո՞ւ մինչ այս աստիճան ընկան հայերը, ինչո՞ւ նրանք գերի դարձան քրդերի ձեռքում, երբ իրանք բազմությամբ մի քանի անգամ շատ էին, քան քրդերը:

Այդ հարցին պատասխանելը հեշտ կլինի, երբ մտաբերենք Տարոնի և Վասպուրականի մեջ գտնված այնքան բազմաթիվ վանքերի և աբեղաների ազդեցությունը ժողովրդի վերա: Արդարև, վանքերը մի կողմից պահպանեցին հայերի կրոնը, կապեցին նրան յուր հայրենիքի հետ, մյուս կողմից, խլեցին նրանից քաջությունը, մտցրին նրա մեջ կույր հնազանդություն՝ խոնարհվելու օտար լծի տակ և մեռցրին նրա աշխատասեր հոգին: Հայը չէր կարող իրական կետից նայել կյանքի վերա, երբ տեսնում էր յուր վանքերի մեջ ճգնավորների և աբեղաների բազմությունը, որոնք մտածում էին միայն երկնքի մասին, որոնք քարոզում էին այս աշխարհի ոչնչությունը և նրա ունայնությունը: Այստեղից ծագեց հայի մեջ մի սաստիկ ատելություն դեպի կյանքը և հետևապես դեպի նրա ապահովությունը: «Փուչ աշխարհ, անցավոր աշխարհ»,— այդ յուրաքանչյուր հայի սովորական խոսքն է:

Հայի մեջ չկար գոյության պատերազմ, որովհետև նրա գոյությունը այս աշխարհում յուր համար ոչինչ նշանակություն չուներ, նա մտածում էր միայն հանդերձյալ կյանքի մասին: Ով որ արհամարհում էր յուր գոյությունը, նա և հոգս չէ տանում նրան պահպանող պայմանների համար: Քուրդը խլում էր նրա հացը, կողոպտում էր նրա անասունները, զրկում էր նրան օրական ապրուստից, թափում էր նրա արյունը, այս բոլորին համբերում էր նա, համարելով վերին նախասահմանության անօրինություն: Հայը վրդովվում էր այն ժամանակ միայն, երբ այլադավանի ձեռքը դիպչում էր յուր եկեղեցական սրբություններին: Որովհետև դա միակ բանն էր, որի վրա կայանում էր նրա կյանքի նպատակը:

Բայց կյանքը ամենասաստիկ կերպով պատժում է մարդուն, երբ նա արհամարհում է նրան: Աշխարհը չէ կարող համբերել այն մարդերին, որոնք չեն սիրում իրան և չեն աշխատում յուր պարգևած բարիքներից օգուտ քաղել:

Հայը սիրում էր յուր հայրենիքը, և չնայելով, որ ինքը ամենաթշվառ կերպով նեղված էր այնտեղ, դարձյալ չէր ուզում բաժանվել նրանից: Բայց նա սիրում էր ոչ այն պատճառով, որ համարում էր հայրենի երկիրը որպես հաստատուն հող, որի վերա պետք է հիմնել յուր կյանքի ապահովությունը, այլ նրա համար միայն, որ նա չէր ուզում բաժանվել յուր վանքերից, որոնց մեջ դրած էին յուր սրբությունները: Այս, թեև խիստ վնասակար սերը, ունեցավ այն օգուտը, որ պահեց հային հո-

ղի վերա և չթողեց նրան ցրվել։ Բայց հայտնվեցավ մի ավելի սարսափելի թշնամի, ավելի բարբարոսական, քան քուրդը, պարսիկը և թուրքը, որ սկսեց հետզհետե դուրս մղել հային հայրենի երկրից՝ դա էր աղքատությունը, որի զորության դեմ ոչինչ նշանակություն չուներ սերը դեպի վանքերը և եկեղեցական սրբությունները...

Այստեղից ծագեց Տարոնի և Վասպուրականի հայերի գաղթականությունը, որ ահագին բազմություններով լցրուց Կ. Պոլիսը, Սև ծովի ափերում գտնված քաղաքները և մինչև Եգիպտոսը։

Դեռ հայերի մեծ մասը մնացած էր Տարոնի և Վասպուրականի մեջ, երբ ներկա դարուս երկրորդ կիսաբաժնից սկսյալ, Տաճկաստանի պետությունը սկսեց հետզհետե նվաճել քրդերին, ոչնչացնել հին ցեղապետների, խաֆիրների և շեյխերի սերունդը և ստիպեց քրդերին թողնել թափառական կյանքը, հաստատաբնակ ժողովուրդ լինել և պարապել երկրագործությամբ։ Իհարկե, դարերով հովվական կյանքին սովորած, քրդերի թափառական ցեղերի համար դժվար էր թողնել իրանց կյանքի հին ձևերը, այս պատճառով տերության ջանքերը նրանց մասին մնացին ապարդյուն։ Տերությունը կարողացավ անել այն, որ խլեց քրդերից վաղեմի իշխանությունը և խոնարհեցրուց նրանց։

Այն ժամանակից Տարոնի և Վասպուրականի հայերի համար ծագեց մի նոր կյանքի առավոտ։

Յուրաքանչյուր պատմական անբախտություն շատ անգամ ունի յուր օգտավետ հետևանքները։ Քրդերի տիրապետությունը թեև այնքան արյան և արտասուքի պատճառ եղավ հայերին, բայց նա թողեց մի շատ թանկագին ժառանգություն հայերի համար, դա էր նրան հայրենի հողը։ Քրդի ցեղապետները, իբրև հովիվ ազգի գլխավորներ, միշտ անհաստատաբնակ կյանք վարելով, ոչ միայն չմտածեցին, այլև անընդունակ էին ժառանգել հողը, որպես կալվածական սեփականություն, ինչպես արեցին պարսիկները և Ղզլբաշ-թուրքերը Հայաստանի մյուս մասերում։ Տաճկաստանի կառավարությունը, նվաճելո՛վ քրդերին, գտավ երկիրը մեծ մասամբ ազատ կալվածատեր իշխաններից, և նա մտցրուց Տարոնի և Վասպուրականի մեջ թափիայի սիստեման։ Բաժանել հողը գյուղացիների մեջ, որպես նրանց մշտական սեփականություն, ստանալով կառավարության համար մի ամենաթեթև գնահատություն հողի արժեքի մասին,— այդ է թափիայի նշանակությունը։ Հիշյալ սիստեման շարունակվում է մինչև այսօր։ Բայց հայերը, սկզբանե անտի սովորելով գաղթականության, սովորելով Կ. Պոլսի քարվանսարաներում կամ նավահանգստներում համալությունով փող աշխատել, մեծ էֆենդիների

տներում էյվաղություն (պատվավոր սպասավորություն) անել, հայերը, նվիրելով իրանց զանազան քաղաքներում մանրավաճառության, ղահվեջիության, հայերը չկարողացան այն օգուտը քաղել Թաիփայից, որքան հարկավոր էր, որքան կարող էին։ Տերության նշանակած վճարը հողերը գնելու մասին այնքան չնչին էր, որ կարող էին նրանք ամբողջ Տարոնի և Վասպուրականի երկիրը կրկին իրանց ձեռքը գցել։ Թեև ուշ, բայց դարձյալ կարելի է ուղղել հին սխալը։ Հայերը և այժմ կարող են անել այն, որի մասին առաջ անհոգ գտնվեցան։ Տարոնը և Վասպուրականը ունին տակավին ընդարձակ ազատ դաշտեր։ Այն ժամանակ միայն կդադարի գաղթականությունը, այն ժամանակ միայն բնակիչները կպահովեն իրանց ապրուստը, երբ կհիմնվին հաստատ հողի վերա, երբ նրանք գործ կունենան բնության հետ, և կծաղկի երկրագործությունը։— Դա Տարոնի և Վասպուրականի հայերի փրկության միակ ճանապարհն է[1]։

«ԸԼԻ ՄԵԿ ԶՈՀ»

Կոմեդիա երեք արարվածով և հինգ պատկերով, հեղինակություն
պ. Գ. Սունդուկյանցի

Թիֆլիսի ամառային թատրոնում մայիսի 16-ին ներկայացրին պ. Սունդուկյանցի «էլի մեկ զոհ» կոմեդիան։

Այս կոմեդիայի մեջ հանդես են գալիս երեք ընտանիքներ, որոնք պատկանում են ժողովրդի զանազան դասակարգերին՝ Սուլաթովի ընտանիքը, որ է չքավոր աղնվական, Բրիլիանտովի ընտանիքը, որ է շատ հարուստ վաճառական և Թորոսի որդի Սարգսի ընտանիքը, որ ստոր ծագումից և աղքատությունից միջակ հարստության հասած վաճառական է։ Տիպերը, որ դուրս են բերած յուրաքանչյուր ընտանիքի մեջ, են հին և նոր սերունդի ներկայացուցիչներ։

Հին սերունդի հերոսներն են Սարգիսը և Սալոմեն, իսկ նոր սերուն-

[1] Կ. Պոլսի մամուլը, որ մինչև այսօր գտնվում է Զաքարիայի պապանձման մեջ Թաիփայի հարցի մասին, մենք նրանից այլևս սպասելու ոչինչ չունենք. միայն Կ. Պոլսի ազգային սահմանադրության ուշադրությունն ենք դարձնում այս ամենակարևոր և կենսական խնդրի վերա։ Հեղ:

դի հերոսները՝ Միքայելը և Անանին։ Մնացյալ տիպերը համարյա թե կորչում են դրանց ստվերի տակ։

Քննենք յուրաքանչյուր տիպերն առանձին։

Միքայելը Սարգսի որդին է, մի ուսումնական երիտասարդ, որ սիրահարված է Սուրաթովի աղջկա՝ Անանու վրա. վերջինը նույնպես ուսում ստացած օրիորդ է, և երկուսն ուխտել են միմյանց սեր, որ պետք է պսակվեր ամուսնական կապով։ Անանին և Միքայելը սիրում են միմյանց ջերմ և անկեղծ սրտով, սիրում են, որպես կսիրե կրթված և զարգացած մարդը, որ հասկանում է նրա բարձր և վսեմ նշանակությունը։

Բայց Անանին չքավոր ծնողաց դուստր է. նրա հայրը՝ Յագոր Սիմոնիչը, մի հին աստիճանավոր, պահում է ընտանիքը մասնավոր ռոճիկով, որ կախված է յուր մեծավորի կամայականությունից. մի անզգուշություն, մի անհաճո վարմունք մեծավորի դեմ բավական էր զրկել Յագոր Սիմոնիչի ընտանիքը օրական հացից։ Ուրեմն, Անանին փող, բաժինք, օժիտ, ոչինչ չունի, միակ կապիտալը, որ նա նվիրելու է փեսային, է նրա սերը և յուր մաքուր սիրտը։ Իսկ Միքայելը գոհ է միայն դորանով։ Նա չէ ցանկանում պսակվել փողի վերա. նա որոնում է կյանքի ընկեր, հավատարիմ ամուսին, և նրա գտածը Անանին է։

Սովրած լինելով աղնիվ և տոկուն աշխատության, Միքայելը և Անանին չեն համարում փողը որպես կենդանի կապիտալ, որպես միակ միջոցը մարդկային ապրուստի։ Նրանք նայում են փողի վերա, որպես մի անտեղական առարկայի վերա, որ այսօր կա, իսկ էգուց կարող էր անհետանալ։ Փողը Միքայելի և Անանու համար ճարստություն չէ։ Հարստություն համարում են նրանք իրանց ձեռքի վաստակը, որ արդյունաբերվում էր եռանդոտ ջանքերով և սեփական քրտինքով։ Աշխատությունը համարում են նրանք ապրուստի հաստատուն աղբյուր, որ նույնքան տևողական է ու բեղմնավոր, որքան մարդը սովոր և ընդունակ է գործելու։ Ամուսնական կապը, զարդնած ոսկու շղթաներով, համարում են նրանք խիստ թույլ և դյուրին կերպով խորտակելի։

Այսպես են մտածում հին սերունդի հերոսները՝ Սարգիսը՝ Միքայելի հայրը և Սալոմեն՝ Անանու մայրը։

Սարգիսը և Սալոմեն համարում են փողը ոչ միայն իբրև միջոց մարդկային ապրուստի, այլ իբրև միակ նպատակ կյանքի։ Փողը Սարգսի և Սալոմեի համար մի աստվածություն է, որ բովանդակում է յուր մեջ բոլոր հրաշալի զորությունները և միակ գործիչ ուժը մարդկային կենցաղավարության մեջ։

Ամեն գործողություն, որքան բարբարոսական լիներ նա, ամեն գործողություն, որքան թաթախված լիներ անբարոյականության կեղտերի մեջ, որքան ներկված լիներ նա արյունով և արտասուքով, սուրբ է Սարգսի և Սալոմեի համար, երբ նա ուներ շահասիրական նպատակներ։ Փողի անդունդը մաքրության ավազան է Սարգսի և Սալոմեի համար, ուր սրբագործվում է մարդը յուր բոլոր կեղտոտություններից։ Փողն այն կախարդական գավազան է, որ ծածկում է պատվի քողով մարդու անազնվությունը, նրա անբարոյականությունը, նրա հիմարությունները, մի խոսքով ամեն ինչ, որ կարող էր բիծ դնել օրինավոր մարդու վրա։

Փողը բովանդակում է յուր մեջ ամեն ինչ։ Ով որ փող ունի, ամեն ինչ ունի. ահա Սարգսի և Սալոմեի վարդապետությունը։

Սարգիսը և Սալոմեն հայերի մեջ ճիշտ կատարելատիպ են։ Մեկը, որպես գերդաստանի հայր, մյուսը, որպես գերդաստանի մայր, նրանք պարունակում են իրանց անձնավորության մեջ մարմնացած հարստահարությունը յուր բոլոր սարսափելի կերպարանքներով։

Սարգիսը և Սալոմեն փչացած հասարակության հարազատ զավակներն են։

Ինչպե՞ս է ծնում հասարակությունը այսպիսի հրեշավոր որդիք։

Սարգիսը վաճառական է։ Նրա արհեստի բնավորությունն ունի այն հատկությունները, ինչ որ ուներ մի ժամանակ վաճառականության աստվածը՝ Հերմեսը, որ պաշտվում էր Հունաստանի տաճարներում։ Հերմեսը միևնույն ժամանակ և վաճառականության, և ավազակության, և խաբեբայության աստվածն էր։ Վաճառականը քաղաքավարի ավազակ է, իսկ նրա զենքը՝ հարստությունը և խաբեությունը:

Որքան հասարակությունը զարգացման ստոր աստիճանի վրա է կանգնած, որքան նրա մեջ տարածված չէ կրթությունը, այնքան հաճախ վաճառականությունը միանում է խաբեության և ավազակության հետ, այնքան ավելի զորություն է ստանում հարստահարությունը։

Սարգիսը վաճառական է։

Ամեն առարկայի վրա նայում է նա, որպես առևտրական մթերքի վրա։ Նրա ընտանիքը յուր համար նույնպես մթերք է, որպես յուր խանութում դարսած ապրանքները։ Երկուսի հետ ևս վարվում է նա միօրինակ կերպով։ Յուր ապրանքների ծախելում Սարգիսը գործ է դնում ամեն միջոցներ, որքան կարելի է, ճարպիկ կերպով կողոպտել գնողին։ Ստախոսությունը, խորամանկությունը և անխիղճ հարստահարությունը նրա գլխավոր զենքերն են. նույնը նա չէ խնայում և յուր ընտանիքի վերաբերությամբ։

Սարգիսն այն մարդերիցն է, որ ամեն առարկայի վերա նայում է շահասիրական կետից. ոչ մի գործողություն նրան չէ գրավում, երբ նա կապված չէր նյութական օգուտների հետ։ Բարոյական բավականություն նրա համար չկա։ Սարգիսը նյութապաշտ է։

Մի այսպիսի մարդը չէր կարող համբերել յուր որդու՝ Միքայելի ամուսնությանը աղքատ Անանու հետ, որ «փող ու բաժինք» չուներ։ Սարգիսը պետք է օգուտ քաղեր որդու ամուսնությունից. իսկ նա պսակվում էր առանց փողի։ Ահա երկպառակության պատճառը, որ հարուցանում է անբավականություն հոր և որդու մեջ։

Սալոմեն նույն է յուր դստեր՝ Անանու վերաբերությամբ, ինչ որ է Սարգիսը Միքայելի վերաբերությամբ։ Մեկը հարստահարող հայր է, մյուսը՝ հարստահարող մայր։ Երկու բռնակալ ծնողքներ ճնշում են իրանց որդիների կամքը և ազատությունը։ Երկուսն էլ ունեն իրանց առանձին նպատակները։ Սարգիսը աշխատում է յուր որդու՝ Միքայելի համար նրա սիրած Անանու փոխարեն հարուստ աղջիկ բերել, իսկ Սալոմեն աշխատում է Անանուն զրկել յուր Միքայելից և հարուստ փեսայի տալ։ Որդիքը ընդդիմանում են ծնողաց կամքին և պաշտպանում են իրանց ընտրածը։

Խորտակել գերդաստանի հոր և գերդաստանի մոր իշխանությունը, ոչնչացնել նրանց ամենահին դարերից ժառանգած իրավունքը, չէր կարող անցնել առանց պատերազմի, հին և նոր սերունդի մեջ։ Այդպես էլ եղավ։

Ո՞րը կհաղթե։

Պետք է կշռել հակառակ կողմերի ուժերը։

Սարգիսը և Սալոմեն, իբրև հին և փորձված զինվորներ, համարձակ կռվողներ են։ Նրանց բոլոր պատերազմական տնօրինությունները՝ յուր խորամանկություններով, յուր նենգությունով և յուր արյունով՝ նրանց մոտ նախապատրաստված են։ Ընտանեկան պատերազմի մեջ նրանք կռվում են ոչ իբրև ազնիվ և մեծահոգի հերոսներ, այլ իբրև քուրմ կամ մարգարե։ Մարգարեն պատերազմում է ուղղության և ճշմարտության անունով։ Նա յուր քարոզները առաջնորդում է սրով։ Բայց պատահած ժամանակ նա գիտե նենգել, գիտե խաբել։ Երբ իրան թույլ է զգում, նա գիտե կեղծավորել։ Երբ երկրային զենքերն անզոր մնացին, երկյուղ է զցում հակառակորդի վերա երկնքի սպառնալիքներով, անեծքներով, իսկ երբ հաղթեց, նա անգութ է որպես գազան յուր զոհի վերաբերությամբ։

Այսպես են վարվում Սարգիսը և Սալոմեն իրանց կռվի մեջ նոր սերունդի դեմ։

Սարգիսը և Սալոմեն, որպես ընտանիքի պատրիարքներ, որպես ծնողքներ, քաղցր խրատներ են կարդում, երբ որդին ցույց է տալիս սատանիկ ընդդիմադրություն։ Նրանք ճնշում են, ոտնակոխ են անում որդուն, երբ նա խոնարհվում է։ Մայրական-հայրական գութը, անեծքը, արտասուքը և սպառնալիքը խառնում են միմյանց, ազդելու որդու մեջ խոնարհություն և պատկառանք դեպի ծնողաց եսը։

Ինչպե՞ս են վարվում նոր սերունդի ներկայացուցիչները իրանց կռվի մեջ հների դեմ։

Նրանք պարզ և անկեղծ կռվողներ են, նրանք դեռ վարժված չեն պատերազմական նենգությունների մեջ։ Միքայելի և Անանու կռիվը ծնողաց դեմ՝ ստրուկների կռիվ է իրանց տիրոջ դեմ, որոնք հաշտվում են, երբ տերը դադարում է բռնաբարել։ Միքայելը և Անանին տիրելու կամ իշխելու նպատակ չունեն. նրանք խնդրում են ազատություն։ Իսկ Սարգիսը և Սալոմեն ձգտում են տիրելու և իշխելու։ Նրանք բռնակալներ են։

Որպես նոր, որպես դեռ յուր սաղմական դրության մեջ, Միքայելի և Անանու բոլոր հոգեկան ուժերը, բոլոր ձգտողությունները դեպի բարին և դեպի ճշմարտությունը, դեռ գտնվում են իրանց գոյության խառն, երերյալ և ակար վիճակի մեջ։ Նրանք դեռ չեն ստացել հաստատ, կատարելագործված ձև ու կերպարանք։ Միքայելը և Անանին ունեն համոզմունք, իսկ նա վճռական չէ. նրանք ունեն բարի ցանկություններ, ազնիվ նպատակներ, բայց որպիսի՞ ուղղություն տան իրանց ընթացքին, որ հասնեն նրանց, իրանք չգիտեն։ Եվ նրանց խոսակցությունը, և նրանց դարձվածները, և նրանց ձայնը միչև անգամ արտահայտություն է սրտի և հոգու անհաստատ տրամադրության։

Ընդհակառակն, Սարգսի և Սալոմեի մեջ ամեն ինչ վճռված է նախքան նրա գործադրությունը։ Նրանց մեջ կա կամքի հաստատություն, նրանք ունեն երկաթի պնդությամբ համոզմունքներ, և նրանց գործադրության մեջ ոչ միայն համարձակ են, այլ հանդուգն են և աներկյուղ։ Սարգսի և Սալոմեի խոսքերն ուժ ունեն, հնչում են ինքնահավան կերպով, արտաշնչում են հեգնություն, արհամարհանքի և երգիծանության բոլոր զորությամբ։ Նրանց բերանից թափվում են ամբողջ հեղեղներ ազդու և ներգործող մոնոլոգների, որոնք բխում են սրտի խորքից։ Իսկ Միքայելը և Անանին, կարծես, վախում են իրանց խոսքերից, կարծես, իրանք էլ երկբայության մեջ են նրա մասին, որ խոսում են, նրա մասին, որ գործում են։

Սարգիսը և Սալոմեն հանդիսանում են որպես հաղթողներ։

Թե՛ Սարգիսը և թե՛ Սալոմեն իրանց նպատակների իրագործումը

գտնում են մեկ տան մեջ, դա է Ստեփան Դանիելիչ Բրիլիանտովի, ամենահարուստ, միլիոնատեր վաճառականի ընտանիքը։ Այնտեղ կան մի օրիորդ և մի պատանի՝ Նատոն և Վանոն, մեկը Բրիլիանտովի աղջիկն է, մյուսը՝ տղան. մեկին ուզում են Միքայելի համար կին բերել, մյուսին Անանու համար ամուսին առնել։

Բրիլիանտովը նույնպես վաճառական է, և որպես հայ վաճառական, ամենակեղտոտ ճանապարհներով բարձրացած յուր ոսկու ամբարդակի վերա։ Նա զանազանվում է Սարգիսից նորանով, որ հազարավոր խեղճերի արյունով և արտասուքով դիզած յուր հարստությունը ներկել է ազնվականության ներկով և բարձր կանգնած է յուր փառքի գենիթի վերա։

Թե ի՞նչ միջոցներով էր հարստացել Բրիլիանտովը, դա երկրորդական բան էր Սարգսի և Սալոմեի համար. միայն նրանք գոհ էին նրանով, որ իրանց որդիքը, Միքայելը և Անանին, կարող են բախտավորություն գտնել Բրիլիանտովի ոսկիների մեջ, մեկը՝ նրա փեսա դառնալով, մյուսը՝ նրա հարսը լինելով։

Նատոն և Վանոն, Միքայելի և Անանու նշանակված ամուսնացուքը, նույնպես պատկանում են նոր սերնդին, այսպիսի տիպերն երիտասարդության մեջ բազմություն են կազմում։ Նրանք թեթևամիտ և փչացած արարածներ են։ Նատոն և Վանոն ստացել են վայրիվերո կրթություն, կուրորեն հետևում են նոր ձևերին և սովորություններին, կոտրատում են հայերենի հետ խառն հառուկոտր ռուսերեն և ֆրանսերեն բառեր։ Նրանց խոսակցության առարկան է՝ մոդան, զանազան զվարճության տեղերը, պարահանդեսները և այն անկյունիկները, որոնք թափ են տալիս մարդու քսակից առատ արծաթ, բավականություն տալով նրա անբարոյական հաճույքներին... Վանոյի մտերիմ բարեկամը և խորհրդակիցն է Օսեփը՝ յուր խորամանկ սպասավորը, որ ծածուկ Վանոյի սիրուհի Կաբոլինին նամակներ է տանում ու բերում։ Իսկ Նատոյի մտերիմը, սատանան գիտե թե ով...

Այսպիսի որդիքը, ինչպես Վանոն և Նատոն, Բրիլիանտովի նման հարուստների տան ցեցն են, սատուծո պատիժն են. բրիլիանտովները, որոնք չեն մտածում որդիների օրինավոր կրթության մասին, որոնք իրանց խելքը և միտքը տված են միայն փող դիզելու, նույն փողը բաց է անում որդիների դեմ շռայլության և անբարոյականության լայն ուղին։ Ահա գլխավոր պատճառը, որ հայ մեծատուների մեջ հարստությունը չէ անցնում մինչև մի քանի սերունդներ։ Ինչ որ յուր անազնվությամբ դի-

զել էր ժլատ հայրը, յուր շռայլությամբ ոչնչացնում է անբարոյական որդին։

Վանոն և Նատոն այս տեսակ որդիներից էին և խիստ հավատարիմ իրանց կոչմանը, և դրանց հետ պետք է կապվեր Անանու և Միքայելի կյանքը…

Անանին ստիպված է լինում թողնել Միքայելին և ընդունել յուր մոր՝ Սալոմեի առաջարկությունը, թեթևամիտ Վանոյի կին դառնալով։ Միքայելը այնքան ընդունակություն չէ ունենում ազատելու թշվառ զոհը…

Դրանով է վերջանում նրանց պատերազմը ծնողների դեմ, դրանով է քանդվում կապը, որ պետք է զուգեր երկու սիրողներին՝ Անանուն և Միքայելին։

Պիեսայի մեջ մնացյալ տիպերն աննշան են։ Բարբարեն՝ Սարգսի ամուսինը, մի բարեսիրտ կին է. նա սիրում է յուր որդուն՝ Միքայելին, պաշտպանում է նրան, համակրում է նրա ցանկությունները, բայց շարժված ավելի մայրական գթից, քան գիտակցական համոզմունքից։ Բարբարեն ստրկացած հայ կնոջ տիպն է, որ յուր բողոքը ամուսնի բռնակալության դեմ կարող է հայտնել միայն լուռ արտասուքներով։

Յագոր Սիմոնիչ Սուրաթովը՝ Սալոմեի այրը՝ Անանու հայրը, հին աստիճանավոր է, և որպես ծառայող, նա սովորել է դրսում կույր հնազանդությամբ թեքվել յուր մեծավորի առջև, իսկ տանը՝ կնոջ «կոշիկների տակ»։ Յագոր Սիմոնիչը նույնպես բարի մարդ է, բայց որպես ծառայող նա խոնարհվում է այնտեղ, որտեղ ուժ է տեսնում։ Ահա պատճառը, որ Սալոմեն տիրում է նրա վրա։ Նա իբրև հայր լավ սիրտ ունի, հասկանում է յուր դստեր՝ Անանու, անբախտությունը, Վանոյի կին դառնալով, ճանաչում է Միքայելի արժանավորությունները, գիտե, որ յուր աղջիկը, Միքայելի ամուսինը դառնալով, կարող էր ավելի երջանիկ լինել, քան Բրիլիանտովի ոսկիների մեջ. բայց այնքան քաջություն չունի ընդդիմանալ յուր կնոջ կամքին, մանավանդ հակառակ կողմում ուժ է տեսնում՝ հարստություն, նրա առջև ևս պետք է թեքվի հին ծառայողը…

Մենք քննեցինք պ. Սունդուկյանցի կոմեդիայի միայն տիպերը, իսկ նրա բովանդակությանը մանրամասնաբար չդիպանք։

Իսկ ինչ որ վերաբերում է պիեսայի արհեստական նշանակությանը, մենք այսքան կասենք՝ «Էլի մեկ զոհը» թեև լրացրած գործ չէ, թեև նա չէ հասցնում գործողությունները իրանց վերջնական կետին, այսուամենայնիվ, հեղինակը ցույց է տվել յուր տաղանդը, որ իրան հանդիսակա-

նին մտածել է տալիս կոմեդիայի վախճանը, երևակայել այն, ինչ որ նա պետք է տեսներ բեմի վրա։

Որպես պ. Սունդուկյանցի մյուս պիեսներում և «Էլի մեկ զոհի» մեջ ավելի ճիշտ և գեղարվեստական կերպով նկարված է հին սերունդը, մանավանդ վաճառական դասը։ Նոր սերնդի մեջ Վանոն և Նատոն երևում են իրանց իսկական պատկերներով, նրանք կատարելատիպ են թեթևամիտ երիտասարդության։

Բայց Միքայելը և Անանին նոր պատերազմողներ են, նրանք պետք է ընկնեին, որովհետև կանգնած էին կռվողների առաջին շարքում։ Իսկ նրանց դիակների վրայից կանցնեն նոր հերոսներ, որոնք առաջ կտանեն հաղթության դրոշակը…

ԽԱՎԱՐԻ ԱՐԲԱՆՅԱԿՆԵՐԸ

Մարդկության պատմագրությունը մեզ ուսուցանում է, որ ամեն մի հասարակական գործիչ, երբ նա փոքրիշատե բարձրանում է նույն հասարակության ստորացած, մինչև գետին հավասարված մակերևույթից, երբ նա աշխատում է վերականգնել նորան և դուրս քաշել անբարոյականության ցեխից, նա դառնում է ամբոխի հալածանքին առարկա և զոհ նորա խավար նախապաշարմունքներին։ Թողնենք եվրոպական ազգերի կյանքում պատահած բազմաթիվ օրինակները, դառնանք մեր ազգի պատմական անցյալին։ Մեծն Տրդատ, որ մտցրուց Հայաստանում քրիստոնեության լույսը, ստացավ ամբոխից այդ սրբագործության փոխարեն թունալի բաժակը։ Նորա մեծ գործակիցը, Սուրբն Գրիգոր, հալածված ժողովրդից, թողեց նորան, հեռացավ և յուր ծերության վերջին մխիթարությունը գտավ առանձնակեցության մեջ Մանյա այրերում, ուր և վախճանվեցավ անհայտությամբ։ Արիստակեսը սպանվեցավ, Մեծն Ներսես մահացու թույն ընդունեց և այլն։ Ինչո՞ւ ենք քրքրում պատմության խորքերը, դառնանք ավելի նոր ժամանակներին։ Կարապետ վարդապետ Շահնազարյանցը մեռավ Փարիզում, Ալամդարյանցը յուր կյանքի մեծ մասը անցրուց աքսորանքներում մեր եկեղեցականների աններողամտությունից։ Ստեփաննոս Նազարյանցի և նորա արժանահիշատակ աշխատակցի պատմությունն ամենեցուն հայտնի է, շատ տարիներ չեն անցել, որ մտածում էին «Հյուսիսափայլի» տետրակները հավաքել այրելու համար։

«Հյուսիսափայլի» անկումից հետո տիրեց, եթե կարելի է այսպես

կոչել, գրականական մեռելությունը։ Երևեցան մի քանի լրագիր, ամսագիր, բայց նոցա չքանալն այնպես շուտափույթ եղավ, որ յուրյանց հետքն անգամ չթողեցին։ Շնչասպառ «Մեղուն» դեռ յուր դանդաղ ընթացքը շարունակում էր։ Վերջապես նա էլ ընկավ։

Հայտնվեցավ Գերմանիայից մի ուսանող։ Նա արհամարհեց փառքը, աստիճանը և աշխարհային բոլոր բարօրությունքը, որոնց հասնելու հարմարություններն ուներ, կամեցավ ծառայել հասարակությանը և յուր ազգին։ Նա հիմնեց մի խմբագրություն։ Երևեցավ «Մշակը»։ Առաջին անգամ մի հայոց թերթ ազդեց ժողովրդի վերա, շարժում ձգեց, վիճաբանություններ հարույց, զրգռեց ժողովրդի հարցասիրությունը, մի խոսքով էլեկտրական ցնցում տվեց նորա թմրած անշարժությանը։ Այդքանը բավական էր բորբոքել խավարասերների նախանձը։

Ազգի լուսավորությունը և նորա տնտեսական բարօրությունը հաստատուն պահպանել «Մշակի» սուրբ նպատակն է, որին նվիրել է յուր գործունեությունը։ Այս նպատակին հասնելու համար, այո՛, «Մշակը» չի քարոզել փտած ազգասիրություն, այլ ընդհակառակն, անխնա հարձակվել է, մտրակել է ամեն մի հասարակական տգեղ երևույթները։ Նա մերկացրել է ժողովրդի կյանքի ամեն մի այլանդակությունները և դառն ատելությամբ պարսավել, պախարակել է նորանց։ Նույնիսկ ատելության մեջ կայացած է եղել նորա սերը դեպի ազգը և դեպի ժողովուրդը։ Ճշմարիտ է, եզվիտական կեղծ ժպիտը երեսին «Մշակը» չէ շողոքորթել ամբոխի հաճույքներին, այդ անում են նոքա, որք ցանկանում են ավելի ևս ծանրացնել ազգի թմրությունը և նորա անշարժությունից ու տգիտությունից օգուտ քաղել։ «Մշակի» ուղղությունը, այո՛, բացասական է։ Նա խորին ատելությամբ աշխատում է և պիտի աշխատե հեռացնել ամեն մի վնասակար տարրը ազգային մարմնից։ Այդ յուրաքանչյուր բարեխիղճ վիրաբույժի պաշտոնն է, որ կտրում է մարմնի փտած և ապականված մասը, նորա կենդանությունը պահպանելու համար։

Նա միշտ պաշտպանել է ազգի լեզուն և նորա գրականությունը։ Նա միշտ աշխատել է ցույց տալ ուղին, որով նա կարող էր հասնել ճշմարիտ գիտության և լուսավորության։ Նորա նյութական և տնտեսական վիճակը բարվոքելու համար ցույց է տվել և պիտի ցույց տա բոլոր միջոցները։

Մեզ մեղադրում են, թե մենք հերքեցինք բոլոր ազգային ուժերը։ Որո՞նք են մեր ուժերը։ Մենք արիստոկրատիա չունենք։ Փա՛ռք աստուծո, որ չունենք։ Մենք ունինք վաճառական դաս... Մենք ունինք արհեստավոր դաս, որ այսօրվա օրս էլ կոշիկը այնպես է կարում, ինչպես մի

ժամանակ հագնում էր Արամը կամ Արմենակը։ Մենք ունինք երկրագործ դաս, որ մաշվում է յուր նահապետական ծանր աշխատության մեջ, և նորա վաստակը խլում են կալվածատերը, մանրավաճառը և այլն։ Բայց ինչ որ վերաբերում է ազգային ոգուն, սրա գործիչ զորություններին՝ մենք չունենք այն հին կամ նոր սերունդ կոչված բաները։ Մեզանում թե՛ հինը և թե՛ նորը եգիպտական միակերպ մումիաներ են ներկայացնում, այն զանազանությամբ միայն, որ նոր սերունդը բավականին խարդախված, օտարացված և անպիտանացված է, մինչդեռ հինն ապրում է նախկին բնավորությամբ։

Մենք բավականին խաբեցինք մեզ ու մեզ, երեխայի նման ամեն մի ազգային չնչին հայտնություններով ուրախացանք, ոգևորվեցանք այն բոլոր բաներով, ինչ որ հային էր պատկանում, ատեցինք այն ամենը, ինչ որ օտարինն էր, սիրելի էր մեզ ամեն գործ, ուր հայն էր գործում, թող լիներ նա անօգտավետ, փույթ չէ։ Մեր որդիների անունը Տիգրան, մեր աղջիկների անունը Աշխեն դրեցինք, մեր դրասեղանների առջև «Ողբ Հայաստանի» պատկերը կախեցինք։ Բայց ի՞նչ եղավ այդ մոլի ազգասիրական շնորհքների արդյունքը, մի դառն անձնախաբեություն։ Երբ քննեցինք մեզ ու մեզ, տեսանք, որ մի ողորմելի դատարկություն է տիրում մեր կյանքի։

«Օրհնած,— ասում էր մեզ,— մի քանի տարի առաջ ավելի վատ էր...»։ Հայը միշտ այսպեսով է մխիթարում յուրյան, նա գոհ է, որ կես քայլ առաջ է գնացել, բայց երևակայել անգամ չէ կարող, թե քանի հազարավոր մղոններով ետ էր մնացել զարգացած ազգերից։

Դարձյալ ազգի անշարժության վերա թուխս նստած պառավներն, այդ հնդկական վամպիրները, ուզում են ավելի ևս ծանրացնել նորա շունչը, յուրյանց մաշկաթևիկներով զով փչելով նորա երեսին, որպեսզի կարողանան ավելի հանգիստ կերպով ծծել յուրյանց զոհերի արյունը։ Լույսը միշտ ատելի է նորանց, որովհետև չղջիկները սիրում են թափառել խավարի մեջ։

Ահա, սիրելի ընթերցող, մեր այժմյան հասարակական կյանքի տխուր պատկերը։ Բայց մենք ունինք մի բան, որ մոռացա քեզ ասել, մի քանի դեռևս անհայտ երիտասարդներ, որոնց հալածում են ազգուրաց, դավաճան, հերետիկոս և այլն անուններով. դոքա են մեր ուժերը։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Շատ տարիներ չեն անցել, որ Դավրեժի հայերը մի քանի անգամ ենթարկված են եղել սարսափելի հալածանքների. մահմեդականները ընդհանուր ապստամբությամբ հարձակվել են հայոց թաղերի վերա, քանդել են տներ, կողոպտել, թալանել են նրանց կայքը, բարբարոսությունը հասել է մինչև արյունահեղության և վերջացել սպանություններով։ Այսպիսի չարագործության շարժառիթն եղել է միշտ մի հնարավոր ամբաստանություն հայերի վերա, որ դիպչում էր մահմեդականների կրոնական կամ ազգային առանձնահատկություններին և, գրգռելով մոլեռանդ ամբոխի կատաղությունը, առիթ է տվել նրանց վրեժխնդրությանը։

Այս օրերում Դավրեժի հայերին սպառնում է մի այսպիսի վտանգ, այս օրերում, երբ ամեն կողմից լսելի է լինում բանզիմարի (օրենսդրության) ձայնը, նրա ներմուծանելը Պարսկաստանի մեջ։ Այս օրերում, երբ Բարձր. Կառավարությունը աշխատում է խաղաղություն տարածել, ապահովել ժողովրդի դրությունը և, առանց խտրություն դնելու կրոնի և ազգության, հավասարություն հաստատել։

Ամբողջ մահմեդական բազմությունը գտնվում է կատաղի խռովության մեջ. նրա վրեժխնդրությունը հասել է մինչ այն աստիճանի, որ ամեն րոպե պատրաստ է հարձակվել հայերի վերա, ոչնչացնել և խպառ բնաջինջ անել նրանց։ Հայերի երկյուղը և հուսահատությունը անցել է սահմանից. նրանք արդեն սկսել են իրանց կայքը թաքցնել ապահով տեղերում և մեծ տագնապի մեջ սպասում են զարհուրելի ճգնաժամին։

Տեղային կառավարությունը ամեն միջոցներ գործ է դրել խռովությունը հանգստացնելու, նա արդեն բաժանել է զինվորներին պաշտոններ, որ վտանգի ժամանակ պաշտպանեն հայերին մահմեդականների հարձակմունքից, և հրամայել է թաղապետներին (ղալաբեգիներին), որ նրանցից յուրաքանչյուրն զսպե յուր թաղում գտնված խռովարարների չարությունը։ Որովհետև այսպիսի դեպքերում ավելի մեծ ազդեցություն ունեն մոլլաները, այս պատճառավ քաղաքիս մեծ մուշտայիդը յուր կողմից ամեն ջանք է գործ դնում ապստամբության առաջն առնելու։

— Ի՞նչ է այս բոլոր հուզմունքի պատճառը։

— Չորս ամիս առաջ կորել է մի թուրք աղջիկ…

Ահա անցքի մանրամասնությունքը։

Մի թուրք ընտանիք ընդունում է, յուր մեջ մի մանկահասակ որբ աղջիկ, որը, գյուղից բերվելով, հանձնվում է նույն տանը իբրև աղախին։

Աղջիկը, որպես լսվում է, շատ պարկեշտ վարքի տեր չէ լինում և մի օր անհետանում է այնտեղից։ Ասում են, նա սիրահարվելով քաղաքումս գտնված ձեռնածուներից (ֆոկուսնիկներից) մեկի վերա, նրա հետ գնում է օտար երկիր։ Բայց մահմեդական ձեռնածուի փոխարեն ամբաստանվում է մի հայ երիտասարդ, թե նա առևանգել է աղջկան, մեղանչել է կույս օրիորդի պատվի դեմ և, կամենալով ծածկել յուր հանցանքը, խեղդել է նրան ու ձգել մի հորի մեջ և այլն։

Երիտասարդը անմիջապես կալանավորվում է, և ոստիկանության կողմից սկսում են խուզարկություններ անել հայերի տներում աղջկա դիակը գտնելու համար։ Իհարկե, ոչինչ չեն գտնում, և երիտասարդի վերա ոչ մի հանցանք չէ հաստատվում։ Բայց մահմեդականների հալածասիրությունը դրանով գոհ չէ մնում, նա կամենում է վրեժխնդիր լինել. նա պատիվ է պահանջում...

— Ումի՞ց։

— Ամբողջ հայ հասարակությունից...

Դիցուք թե երիտասարդը հանցավոր էր այս դեպքի մեջ, դիցուք թե բոլորովին ճշմարիտ լիներ նրա վերա դրած զրպարտությունը, բայց ինչո՞վ են մեղավոր թավրիզեցի հայերը։ Այս հարցը խավարասեր մահմեդականի համար ոչինչ նշանակություն չունի, բավական է, որ նա մի հաջող միջոց է գտել յուր վրեժխնդրությունը թափելու մի քրիստոնյա հասարակության վերա, որի գոյությունը այնքան տանելի չէ նրան...

Քաղաքիս սանջաքբեյը (դիվանի պետը) վերջին օրերումս պատասխանել է թուրքերին՝ եթե հաստատվի մեղադրված երիտասարդի վերա հանցանքը, ինքը պատրաստ է նրան գլխատել տալ, միայն հայոց հասարակությունը անպարտ կմնա այս գործի մեջ։ Այս խոսքը դարձյալ չխաղաղեց թուրքերի կատաղությունը։ Ցավալին այն է, որ գահաժառանգ իշխանը քաղաքումս չէ, գտնվում է ամառանոցում, Նորին բարձրության ներկայությունը կարող է զսպել ապստամբությունը։

Թե ինչով կվերջանա խռովությունը, ոչինչ նախագուշակել կարող չեմ, միայն այսքանը կասեմ, որ ներկա դարումս պատահած մի այսպիսի անկարգություն հավիտենական բիծ կդնե մի պետության վերա, ուր իրավունքը և արդարությունը բռնաբարվում է կույր և հալածասեր ամբոխի մոլեռանդությունից...

Մինչև ե՞րբ...

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Հուլիսի 15-ին

Խոսելով հայերի նշանակության մասին Ասիայի մեջ, շատ անգամ հայտնված է եղել մի այսպիսի միտք՝ թե հայերին վիճակված է գիտություն և լուսավորություն տարածել արևելքում, թե քաղաքակրթությունը պետք է նրանց առաջնորդությամբ մուտք գործե մահմեդական Ասիայում։ Մի այսպիսի ինքնահավան կարծիքը շատերին կարող է ծիծաղելի երևալ, եթե ի նկատի չառնվի ամենամոտ անցյալը և այն դերը, որ հայերը ներկայումս խաղում են Տաճկաստանի և Պարսկաստանի մեջ։ Բերենք մի քանի օրինակներ։ Շահի և Սուլթանի արքունիքը միշտ ունեցել են իրանց դռանը մեծամեծ պաշտոնակալներ, որոնց ձեռքումն է եղել պետության ամենագլխավոր գործերի վարչությունը, որոնք համաձայն եվրոպական քաղաքագիտության ուղղություն են տվել կառավարության վերանորոգություններին, որքան կարելի է, հեռացնելով այն հին ձևերը, որոնք բռնաբարում էին իրավունքը և արդարությունը։ Պետության ֆինանսական վիճակը կախված է եղել հայ սառաֆների ձեռնտվությունից, դպրոցների մեջ եվրոպական գիտությունների առաջին վարժապետներն են եղել հայերը. գեսպանախոսական հարաբերությանց մեջ թարգմաններ եղել են հայերը, և հայոց թատրոնից առաջին անգամ լսելի է եղել բեմական խոսքը, և մամուլը հայկական տառերով և տաճկաց լեզվով աշխատել է ծանոթացնել մահմեդականներին լուսավոր աշխարհի մտածությանց և գաղափարների հետ։

Թողնենք այդ ընդհանուր տեսությունը, անցնենք դեպի մասնավորը. խոսքս Պարսկաստանի Դավրեժ քաղաքի մասին է։

Դավրեժը թե՛ յուր բազմամարդությամբ և թե՛ առևտրական ընդարձակությամբ առաջին տեղն է բռնում ամբողջ Իրանի մեջ։ Խիստ հաճախ հարաբերություններն օտարների հետ վաղօրոք զգալ տվին քաղաքիս մտածող մասին եվրոպական կրթության կարևորությունը, և մի քանի տարի առաջ Դավրեժի մեջ սկսեցին հիմնել մի դպրոց, բայց մահմեդական ժողովուրդը որքան անպատրաստ է, անընդունակ է լուսավորության, բավական է հիշել այս անցքը։ Մոլլաների դասը (որպես սպասելի էր) ընդհանուր կատաղությամբ ընդդեմ կացավ դպրոցի հիմնարկությանը, համարելով նրան վնասակար, կրոնքի և օրենքների հակառակ։ Մեծ մուշտայիդը ամբիոնից քարոզ էր կարդում, թե Իսլամի որդիքը, ֆրանգների (եվրոպացիների) լեզուն և գիտությունը սովորելով, կաֆիր-

ներ (անհավատներ) կդառնան, և երբ նրանց մահից հետո աստուծո հրեշտակները կգան հարցնելու Իսլամի հավատո հանգանակը, նրանք կպատասխանեն ֆրանգի լեզվով, և հրեշտակները նրանց լեզուն չհասկանալով և կարծելով, թե նրանք ֆրանգներ են, կփակեն նրանց առջև դրախտի դռները և բոլորին կտանեն դժոխքը[1]...

Մի այսպիսի քարոզը բավական էր զրկելու մահմեդականների մոլեռանդությունը, խլելով նրանցից հոժարություն իրանց որդիքը եվրոպական կազմակերպությամբ մի դպրոց ուղարկելու։ Բայց դժբախտաբար այս հանգամանքին ավելի շատ նպաստում է մի դեպք՝ նույն միջոցում քանդվում է նորակառույց դպրոցի պարիսպներից մեկը, այս երևույթը, բավական էր ժողովրդին մտածել տալ, թե ինքը աստված և նրա մարգարեն (Մուհամեդ) ընդդեմ են դպրոցի հիմնարկությանը և հրաշքով ցույց տվին իրանց անհամաձայնությունը։ Եվ այսպես ֆրանգների ուսումնարանը յուր սկզբնավորության մեջ ոչնչացավ...

Նույն իսկ ժամանակներում Ատրպատականի վիճակավոր առաջնորդ Սահակ եպիս. Սաթունյանը Դավրեժում սկսել էր մի դպրոցի շինությունը հայերի համար։ Դա նույնպես պետք է պատերազմեր ժողովրդի մոլեռանդության հետ։ Որովհետև տեղի անձկության պատճառով առաջնորդը ստիպված էր դպրոցը հիմնել մի հին գերեզմանատան վերա, ժողովուրդը չէր ցանկանում, որ իրանց պապերի փոշիների վերա դրվի հիմքը այն շինվածքի, որի մեջ նրանց որդիքը պետք է ուսում և կրթություն ստանային։ Այսուամենայնիվ հայր Սաթունյանը հաղթելով բոլոր արգելքներին, հասավ յուր նպատակին, մի տարվա մեջ թե՛ դպրոցը և թե՛ նրան կից առաջնորդարանը՝ երկուսն էլ պատրաստ էին։ Այնուհետև հիմնադիրն մտածում էր նյութական կողմից մշտապես ապահովել դպրոցի գոյությունը, երբ մահը վերա հասավ, և նա յուր բոլոր բարի ցանկությունները յուր հետ գերեզման տարավ։ Բայց նա թողեց յուր վախճանից հետո մի գումար, որ նույն ուսումնարանի հիմնական դրամագլուխն դարձավ։

Սահակ եպիսկոպոսից հետո փոխվեցան մի քանի առաջնորդներ, բայց նրանցից և ոչ մեկը մտածեց աճեցնել դպրոցի նյութական միջոցները և ընդարձակել նրա նեղ ուսումնական պրոգրամը։ Գործը առաջ էր գնում խիստ թույլ կերպով, և դպրոցը օրըստօրե ընկնելու վերա էր,

---

[1] Մահմեդականների կարծիքով թե՛ աստված և թե՛ նրա հրեշտակները բոլորը խոսում են արաբերեն լեզվով, և վերջին հարցափորձը մի մեռանողից նրա դավանության մասին լինելու է նույն լեզվով, ոչ մի այլ լեզվով խոսակցություն ընդունված չէ երկնքում։

երբ Վեհապետյան Գևորգ եպիսկոպոսի առաջնորդության օրերում դպրոցը սկսեց վերածաղկել։ Ինքը Վեհապետյանը շահին ներկայանալով և դպրոցի առաջադիմության արդյունքը Նորին Մեծությանը առաջարկելով, դարձրուց դպրոցի վրա շահի բարձրագույն ուշադրությունը, որով բարեհաճեց յուրաքանչյուր տարի մի նշանակյալ գումար արքունի գանձարանից օժանդակել դպրոցին։

Բայց դպրոցը տակավին յուր իսկական նշանակությանը հասած չէր և չէր կարող էլ հասնել, քանի նա գտնվում էր առաջնորդների միակ իրավասության ներքո, քանի ժողովուրդը յուր ներկայացուցիչները չունէր նրա կառավարության մեջ։ Այս իրողությունն ավելի զգալի եղավ Գրիգոր եպիս. Հոբյանի առաջնորդության օրերով, երբ դպրոցը թե՛ բարոյապես և թե՛ նյութապես գտնվում էր յուր վերջին հոգեվարքի մեջ։ Քաղաքի նշանավոր մարդիկը, ոչինչ արդյունք չտեսնելով, իրանց որդիքը դուրս բերեցին այնտեղից և հիմնեցին առանձին վարժարան։ Այս բաժանումն ազգային դպրոցից վերջին զարկն էր, որ պետք է տաներ նրան դեպի կործանում, եթե էջմիածնի հոգևոր կառավարությունը չհականար Հոբյանի անպիտանությունը և չհեռացներ նրան Պարսկաստանից։

Հոբյանի փոխարեն ուղարկվեցավ առաջնորդ Անդրեաս եպիսկոպոսը, որն Ատրպատականի այժմյան վիճակավորն է։ Այս վերջինը, օգուտ քաղելով յուր նախորդների արած սխալներից, դպրոցը կրկին վերականգնելու միջոցը գտավ նրա մեջ, որ դուրս բերե նրան եկեղեցական նեղ իշխանությունից և դարձնե ժողովրդական։ Մի այսպիսի փոփոխությունը շուտով ցույց տվեց յուր արդյունքները։ Դպրոցի համար նշանակվեցան ժողովրդից ընտրված հոգաբարձուներ, որոնք իրանց պաշտոնի մեջ մտած օրից ուշադրություն դարձրին դպրոցի նյութական ապահովության վերա, որից կախումն ուներ նրա ուսումնական առաջադիմությունը։ Խիստ կարճ միջոցում նվիրատվությամբ հավաքվեցավ մի նշանավոր գումար, որը թեև լիապես բավականություն չէր կարող տալ դպրոցի պահանջներին, բայց կարելի եղավ նույն գումարի տոկոսիքով նշանակել հմուտ տեսուչ, վարձել մի քանի օրինավոր վարժապետներ և ավելացնել դասատվության առարկաների և լեզուների թիվը։ Դպրոցը ստացավ փոքրիշատե կանոնավորված ձև և կերպարանք։ Եվ ներկա հուլիս ամսի հարցաքննությունը (որին ներկա գտնվելու պատիվըն ունեի) ցույց տվեց մի տարվա ընթացքում եղած արդյունքը, որից երևում էր դպրոցի զարմանալի արագությամբ առաջադիմությունը։ Քննություններին ներկա էին, բացի աշակերտների ծնողքները, նաև եվ-

րոպական հյուպատոսների ներկայացուցիչներ, և համարյա քաղաքում գտնված ամբողջ եվրոպական հասարակությունը։ Բոլորը մնացին գոհ, և ամենի հաճությունը չափ չուներ։

Մենք բավականին շեղվեցանք մեր գրած հարցեն, այժմ դառնանք դեպի այն։ Մենք տեսցինք, թե հայերին, որպես կրթության ընդունակ մեկ ազգի, վիճակված է լուսավորություն տարածել Ասիայում, այս մաքին իբրև ապացույց վեր առնենք նույն իսկ Դավրեժի դպրոցը։ Դեռ դպրոցը յուր թույլ և խանգարված դրության մեջ, նա դարձյալ այնքան բարձր էր մոլլաների ձեռքում եղած մադրասայներից (վարժարաններից), որ շատ անգամ պարսիկներից նշանավոր անձինք առաջարկել են յուրյանց որդիքը այնտեղ ուղարկել ուսում առնելու համար։ Բայց տեղային հայոց առաջնորդը այնքան նեղսիրտ է գտնվել, որ չէ կամեցել մահմեդական երեխան ընդունել քրիստոնյայի դպրոցի մեջ։ Մոլեռանդությունն ինքնըստինքյան հասկանալի է... Թողնենք այդ։ Այս տարվա հարցաքննության ժամանակ կրկին անգամ զարթեցավ նույն հարցը։ Պարսկերենի քննության օրը հրավիրված էր Նախրու-վուզարան, այսինքն՝ արտաքին գործոց վեզիրի փոխանորդը[1]։ Նա ուղարկեց յուր կողմից գեներալ Ղուլի-խանին. բայց ինքը Նախրու-վուզարան անձամբ եկավ ֆրանսերենի քննության օրը։ Նա, որպես ֆրանսիագետ և եվրոպական ուսմունք ունեցող մարդ, բոլորովին հիացած մնաց աշակերտների առաջադիմության մասին և ընծայից դպրոցին հարյուր թուման փող։ Բայց Նորին պայծառափայլության ավելի մեծ ընծան այն էր, որ խոստացավ յուր որդին ուղարկել այնտեղ ուսանելու համար և հայտնեց, թե պարսից մեծամեծներից շատերը պատրաստ են հետևել յուր օրինակին, որովհետև իրանք օրինավոր վարժապետներ չունեն։ Բացի դրանից, Նախրու-վուզարան բարեհաճեցավ՝ թե դպրոցի դրությունը և նրա Պարսկաստանի ժողովրդի համար բերած օգուտները կհայտնե արտաքին գործոց վեզիրին, և նա յուր կողմից կներկայացնե շահի բարձրագույն ուշադրությանը։

Քննությունից հետո Նախրու-վուզարան մտավ հայոց ընթերցարանը, որ նույն շինվածքի մեջն է գտնվում, ուր դպրոցն է։ Պարսկաստանի մեջ առաջին անգամ նա տեսավ, սեղանի վերա դրած, մինչև տասնհինգ զանազան օրինակներ՝ հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն և պարսկերեն լրագրներ և ամսագրեր։ Այս տեսարանը մինչև այն աստիճանը գրավեց

---

[1] Դավրեժի այժմյան Նախրու-վուզարան, մի ժամանակ Թիֆլիսի մեջ պարսից կողմից գեներալ կոնսուլ Ալի-խանն է, որ հայտնի է հայ հասարակության մեծ մասին որպես եվրոպակիրթ և ուսումնասեր մարդ։

Նորին պայծառափայլությանը, որ խոստացավ 40-պարսկերեն գրքեր ընծայել ընթերցարանին, որովհետև պարսկերեն գրքերի թիվը փոքր էր։

Նորին պայծառափայլություն Նախրուլ-վուզարայի այս համակրությունը՝ թե՛ դեպի դպրոցը և թե՛ դեպի ընթերցարանը՝ ամենայն շնորհակալության արժանի է։ Իսկ ինչ որ վերաբերում է այն մտքին, այսինքն՝ հայոց դպրոցի մեջ ընդունել և պարսիկ երեխաներ, այդ մասին մենք կխոսենք առանձին նամակով. առայժմ այսքանը կասենք, դա միակ միջոցն է՝ պարսիկների և հայերի, այդ երկու միմյանց հետ ցեղակից ազգերի մեջ սեր և միաբանություն տարածել, պետության համար հավատարիմ և կրթյալ հպատակներ պատրաստել, և հայոց դպրոցում եվրոպական գիտությանը ծանոթացած պարսիկ աշակերտների միջոցով լուսավորությունը մտցնել նույն իսկ մահմեդական ժողովրդի մեջ։

Տացե՛ աստված, որ Դավրեժի հայոց ազգային դպրոցը կարողանար կատարել այդ մեծ պարտավորությունը։

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

27 հուլիսի

Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանագլուխները, սկսյալ Բայազետից մինչև Բասրա, կամ Պարսից ծոցը, ճշտությամբ որոշված չլինելով, շատ անգամ ծագում էին վիճաբանություններ երկու պետությունների մեջ այս և այն երկրների մասին, որոնք անցել էին մինի կամ մյուսի իշխանության ներքո։ Բացի դրանից, նույն գծի վրա, որ բաժանում էր Պարսկաստանը Տաճկաստանից, բնակվում էին քրդերի զանազան ցեղեր, որոնց այս երկու պետություններից որի հպատակ լինելը հայտնի չէր։ Քրդերը իրանց բեգերի առաջնորդությամբ մի քանի տեղերում բոլորովին անկախ և ապստամբ դրության մեջ էին, նրանք, որպես հատուկ և մի ավազակ ազգի, շատ անգամ թալանելով Պարսկաստանից՝ անցնում էին դեպի Տաճկաստան, շատ անգամ ևս Տաճկաստանում նույնը գործելով՝ անցնում էին դեպի Պարսկաստան։ Սահմանագլխյան ոչ մի պահնորդություն չէր կարողանում նրանց արշավանքների առաջն առնել։ Ավազակները մնում էին միշտ անպատիժ, որովհետև, մի կողմից, նրանք պատսպարություն էին գտնում անմատչելի լեռներում, մյուս կողմից, տեղային կառավարությունը պաշտպանում էր նրանց, երբ մի ահագին ամբոխ չարագործների, կողոպտելով յուր դրացի տերությունից, ապաստան էին խնդրում և պատրաստ էին յուրյանց բերած ավարը բաժանել տեղային կառավարության հետ։ Այս անկարգություններն ավելի

զգալի էին այն կողմերում, ուր դրած են Խոյ, Սալմաստ, Ուրմի, Սոլուխբուլախ գավառները մինչև Սուլեյմանիե քաղաքը, ուր բնակիչների դրությունը միշտ անհանգիստ և վտանգավոր վիճակի մեջ էր քրդերի արշավանքներից։

Երկու պետությունների, Պարսկաստանի և Տաճկաստանի, Բարձ. կառավարությունը չէր կարող ուշադրություն չդարձնել վերոհիշյալ անկարգությունների վերա, որի հետ կապված էր ժողովրդի անհանգստությունը և նրանց կայքի անապահովությունը։ Սահմանագլուխները պետք է ճշտությամբ որոշվեին և, քրդերին նվաճելով, հաստատաբնակ ժողովուրդ դարձնեին։ Այս միտքը Պարսկաստանի մեջ ծագեց դեռ այն ժամանակ, երբ տակավին կենդանի էր երևելի Ամիրը[1], բայց մեծ վեզիրի մահը թողեց անկատար նրա դիտավորությունը։

Նորին մեծության շահի Եվրոպայի ճանապարհորդությունից դառնալեն հետո յուր տերության մեջ մտցնելու նկատի առնված բարեկարգությանց թվում կարելի է դասել՝ և Տաճկաստանի ու Պարսկաստանի սահմանագլուխները կարգի դնելու, կամ քրդերի մասին մի որոշումն անելու հարցը, որը տեղի ունեցավ մի քանի ամիս առաջ։ Բայց որովհետև մի այսպիսի հնացած և բազմակնճիռ հարցը չէր կարող պարզվել առանց երկար վիճմունքների, և գուցե նրա վերջին վճիռը կարվեր սրով, այս պատճառով երկու տերությանց կողմից ևս սահմանի մոտ այժմ հավաքված են նրանց զինվորական ուժերը։ Պարսկաստանի գլխավոր բանակը դրած է Սալմաստ Դիրիշկ գյուղի մոտ, իսկ Տաճկաստանինը՝ Հաղբակս մեջ։ Ինչո՞վ կվերջանա գործը դեռ հայտնի չէ, միայն հուսալ, թե խաղաղությամբ կլինի որոշումը՝ փոքր-ինչ տարակուսական է, քանի օտար պետությանց միջամտությունը չներգործեր յուր կողմից։ Պատերազմը շատ ցավալի հետևանքներ կարող էր ունենալ երկու կողմից ևս ժողովրդի համար. որովհետև մահմեդական ազգերի մեջ պատերազմի միջոցներում ամենևին խնայողություն չէ լինում խաղաղասեր ժողովրդի թե կայքին և թե կյանքին։

Մի օր առաջ ես բախտ ունեցա պարսից բանակը մտնելու. ինձ տարավ յուր հետ որպես թարգման Ատրպատականի հայոց առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոսը, որ կամենում էր տեսություն անել Սահարդի-

---

[1] Միրզա-Թաղի-խան Ամիրը, որ հասավ վեզիրության պաշտոնի, առաջինն էր այն մարդերից, որ ներկա դարու երկրորդ կիսարաժնում գործում էր Պարսկաստանի բարեկարգության համար, բայց նրա ցավալի գլխատումը հարյուրավոր տարիներով հետ մղեց Պարսկաստանի առաջադիմությունը։

վանի (Ատրպատականի ընդհանուր դիվանապետի) և Մուհամեդ-Ռահիմ-Միրզա իշխանի հետ, որը Խոյ և Սալմաստ գավառների այժմյան նահանգապետն է։ Այս երկու երևելի պաշտոնակալների խոսակցություններից ինձ վերա քաղցր տպավորություն թողեցին այն խոսքերը, որոնք վերաբերում էին ժողովրդի հասարակական բարեկավությանը և նրա հանգստությանը։ Հավասարություն բառը, առանց խտրության դնելու կրոնի և ազգության, միշտ լսվում էր իմ ականջներին։ Երևում էր, այդ և դրանց նման մարդիկը, որոնք կառավարում են պետության մեծամեծ գործերը, հասկացել են ժամանակի պահանջմունքները, բայց մի բան, որ միշտ արգելք է դնում նրանց իրագործել հասարակաց բարին, է ժողովրդի մեջ դարերով թանձրացած խավար նախապաշարմունքը, որը փարատելու համար պետք է հիմնավոր ուսում ու կրթություն—այդ պակաս է Պարսկաստանին։

Բայց մտաբերելով անցյալը, պետք է ներկայի մասին գոհ լինել առածուց, դրանից առաջ, եթե մի զունդ պարսկական զորք մի երկրով անցներ, այլև այն երկրի մեջ շինություն պետք չէր մնա, թող թե, նույնիսկ երկիրը պատկանում լիներ նույն պետությանը, որին ծառայում էր զորքը։ Այժմ Սալմաստա մեջ գտնված բանակը բաղկանում է բավականին մեծ բազմություն ունեցող հեծելազորներից և հետևակներից, բայց մինչև այսօր չէ պատահել, որ զինվորները հարստահարեին ժողովրդին, իրանց համար ձրի ուտելիք կամ խմելիք պահանջելով։ Ամեն ինչ, որ պետք է նրանց, գնում են փողով. այդ առաջին անգամն է տեսնվում այս կողմերում, որ սարվազը չէ խլում, չէ կողոպտում, չէ հափշտակում, բայց ապրում է կուշտ փորով, ստանալով պաշար յուր կառավարությունից։

Բացառություններ իհարկե լինում են, սկզբանե օրինավոր, կարգապահության չսովորած զինվորների մեջ դժվար է միանգամով մտցնել խիստ դիսցիպլինա։ Քանի օր առաջ գիշերով սպանվեցավ մի հայ երիտասարդ, որ գնում էր մոտակա գյուղը, ասում են, թե սպանությունը պատահել է թուրք զինվորներից, չնայելով տեղային կառավարության խուզարկություններին, չարագործը չհայտնվեցավ։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

29 օգոստոսի

Օգոստոսի 3-ին տոնեցին Դավրեժի ազգային դպրոցի քսանհինգամյա գոյության կես հոբելյանը։ Դպրոցի վարչությունը, սկսյալ նրա հաստատության օրից, բոլորովին մոռացության էր տվել արժանահիշատակ հիմնադրի՝ Սահակ եպիսկոպոս Սաթունյանի անունը։ Իսկ ներկա հոգաբարձությունը կանգնեց մարմարինից մի արձանագրություն դպրոցի ճակատին, հավերժացնելով նրա բարեջան հիմնադրի հիշատակը։

Տոնախմբության հանդեսը բավականին խորհրդավոր և գեղեցիկ էր։ Մենք ավելորդ ենք համարում մանրամասնաբար նկարագրել այն բոլոր ցույցերը, որոնցով ժողովուրդը արտահայտում էր յուր ցնծությունը և սրտի գոհունակությունը դեպի յուր քաղաքի մեծ բարերարը։ Մենք չենք ուզում խոսել ճառերի, երգեցողությանց, ճրագալույցի և հրախաղությանց մասին, որոնք տալիս էին հանդեսին փառք ու շքեղություն, մենք կնայենք Սահակ եպիսկոպոսի գործի վերա հասարակական կետից։

Սահակ եպիսկոպոս Սաթունյանը այն հոգևորականների կարգիցն էր, որոնք իրանց կոչման նշանակությունը չեն ամփոփում միայն եկեղեցական պարտավորությունների մեջ, որոնք քահանայի պաշտոնը գտնում են կենդանի եկեղեցվո-ժողովրդի կրթության և նորա մտավոր զարգացման մեջ։ Սահակ եպիս. Սաթունյանը ժամանակի մարդ էր, նրա ոգին հասկացող, նորա պահանջմունքներին համեմատ գործող։

Պարսկաստանում հայտնվեցավ նա այն ժամանակ, երբ մի կողմից բողոքական, մյուս կողմից կաթոլիկ քարոզիչները թափում էին իրանց բոլոր ուժերը հայի որդիքը որսալու և նրանց ազգային կապերը խզելու համար։ Նա տեսավ հայի թշվառ զավակները, որոնք, աղքատությունից ստիպված, մի պատառ ցամաք հացի համար վաճառում էին իրանց ազգի ամենաարքաղան ժառանգությունը՝ կրոնքը և մինչև անգամ մահմեդականություն ընդունելով։ Նա գտավ ողորմելի ժողովրդի փրկությունը միակ դպրոցի մեջ, որի մասին նրանք մինչև այնօր գաղափար ևս չունեին։

Խոսելով շատ անգամ մի հայ աբեղայի հետ, որ յուր ամբողջ կյանքում Սաղմոսի և Նարեկի գերի է դարձած, որ վանքի պատերից դուրս աշխարհի հետ հարաբերություն չունի, հարցնում ես նրան՝ հայր սուրբ, ինչո՞ւ դու չես գործում ժողովրդի մեջ, քո աղոթքներն մեզ այնքան պետք չեն... Միշտ լսում ես նրանից նույն հին երգը, որ արտասանում

է բավականին ինքնահավատ հպարտությամբ. «Մեր աղոթքները և այդ վանքերը ազատեցին հայոց ազգը...»։

Քրքրելով հայի պատմական անցյալը՝ երևան են գալիս շատ փոքր թվով եկեղեցականներ, որոնք զանազան դարերի ընթացքում հանդիսանում են որպես հասարակական գործիչներ։ Իսկ նրանք վանքական աբեղաներ չեն եղել. նրանք եղել են վանքականներից հալածված ժողովրդական մարդիկ։ Ղազար Փարպեցին, յուր ժամանակի երևելի մտածողը, թողել է մեզ խիստ տխուր տեղեկություններ այն դարի մասին, որը մենք ոսկյա դար ենք կոչում։ Մենք տեսնում ենք՝ այն ժամանակ ոչ բոլոր հայ եկեղեցականները Սահակի, Մեսրոպի, Ներսեսի և Մովսեսի նման նվիրել էին իրանց ժողովրդի կրթության գործին, այլ ընդհակառակը, մեծ մասը հալածում էին նրանց, վատ համբավներ էին տարածում նրանց գործունեության մասին, նրանց գրքերը «փաթաղիկես» էին կոչում և իրանց ուսմունքը՝ մոլորություն։ Նույն եկեղեցականների հալածասիրությունն էր, որ չթողեց Խորենացու ոսկերը յուր գերեզմանում հանգիստ գտնելու, այլ հանվելով, գետի մեջ ածվեցան։ Նույն եկեղեցականների հալածասիրությունն էր, որ չէր թողնում արևմուտքից դարձող, հելլենական գիտությունը իրանց հետ բերող աբեղաները Հայաստանում մուտք գործելու։

Սահակ եպիս. Սաթունյանը իր ժամանակում նույնպես ազատ չպրծնըվեցավ յուր դասակիցների հալածանքից. նա թողեց վանքը, դուրս եկավ աբեղայական փտած շրջանից, եկավ Պարսկաստան, միացավ ժողովրդի հետ։ Այս մարդու գործունեությունը կարող է խիստ ճիշտ ապացույց լինել այն ճշմարտության, երբ եկեղեցականը ժողովրդի հետ ձեռ-ձեռի տված է գործում, երբ նրանց երկուսի նպատակն էլ նվիրված է հասարակաց օգտին, նրանց մեջ ամեն գործ հաջողվում է։ Սահակ եպիսկոպոսը, գալով Պարսկաստան, գտավ մի աղքատ և խավարասեր ժողովուրդ. մի այսպիսի ամբոխի մեջ նրան հաջողվեցավ հաստատել մի հոյակապ դպրոց Դավրեժում, և գավառներում բաց անել զանազան գյուղական վարժարաններ։ Նա դուրս եկավ վանքից առանց մի փարա յուր գրպանում ունենալու, միայն բերեց յուր հետ յուր ջերմ ազգասիրական սիրտը և այնքան մեծամեծ հիմնարկություններ անելեն հետո թողեց Դավրեժի դպրոցին մի նշանավոր գումար, որով պահպանվեցավ նրա գոյությունը։

Սահակ եպիսկոպոսի գործունեությունը ունի յուր հասարակական նշանակությունը և այն կողմից, որ նա Ատրպատականի հոգևոր կառավարությանը (որի առաջնորդն էր ինքը) ավեց պարսից պետությունից

ճանաչված մի պաշտոնական կերպարանք, նրանից հետո հայոց հոգևոր առաջնորդությունը Պարսկաստանի մեջ ունեցավ յուր և՛ եկեղեցական, և՛ աշխարհական նշանակությունը։ Այդ մի խորհրդավոր սկիզբ էր, որ դրեց Սահակ եպիսկոպոսը, Պարսկաստանի հոգևոր կառավարությունը ժամանակավ վերածել այն դրությանը, որի մեջ այսօրվա օրս գտնըվում է Տաճկաստանի պատրիարքությունը յուր սահմանադրական կերպարանքով։ Իրագործել հանգուցյալ Սահակի նպատակը շատ հեշտ կլիներ նրա հաջորդներին, եթե նրանք ունենային այն սիրտը, այն հոգին, որ ուներ Սաթունյանը։ Մենք հուսով ենք, որ Պարսկաստանի այժմյան վիճակավորն ուշադրության կառնե հիշյալ կետը, որի մեջ կայանում է Պարսկաստանի հայոց հանգստությունը և նրանց բարօրությունը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պարսկաստանում հայերը մեկ երկրի մեջ ամփոփված չեն բնակվում, այլ ցրված են զանազան կողմեր, սկսյալ Երասխ գետից մինչև Բենդեր-Բուշեր, այսինքն՝ մինչև Պարսկական ծոցը կամ Հնդկաստանի սահմանները։ Այս ահագին տարածության վերա հայեր կարելի է գտնել զանազան քաղաքներում և առավելապես գյուղորայքում։ Նրանց որքանությունը կարելի է գիտենալ հետևյալ թվանշաններից.

	տուն	այր	կին
Նոր-Ջուղա (*Սպահանի մոտ*).	*371*	*1 191*	*1 355*
Չըհար-Մահալ (*գավառ Սպահանա, ուր կան 5 հայաբնակ գյուղեր՝ Ահմադաբադ, Սիրաք, Գիլնեկան, Մահամդա և Լուասիան*).	*306*	*1 107*	*956*
Փերիա (*գավառ Սպահանա, ուր 25-զանազան գյուղորայքում բնակվում են*).	*1 012*	*3 437*	*2 966*
Բուրվարի (*գավառ Սպահանա, ուր 16-զանազան գյուղորայքում բնակվում են*).	*446*	*1 450*	*1 243*
Քամարա (*գավառ Սպահանա, ուր*			

5-զանազան գյուղորայքում բնակվում են).	124	402	343
Կիամլա *(գավառ Սպահանա, ուր 9-զանազան գյուղորայքում բնակվում են).*	183	578	445
Քեազազ *(գավառ Սպահանա, ուր 7-զանազան գյուղորայքում բնակվում են).*	151	489	453
Մալայիր *(գավառ Սպահանա, ուր 4-զանազան գյուղորայքում բնակվում են).*	110	321	260
Ղարաղան *(գավառ Սպահանա, ուր 4-զանազան գյուղորայքում բնակվում են).*	102	395	377
Ուրեմն ամբողջ Սպահանա նահանգում	2 805	9 370	8 501
Շիրազ *քաղաքում.*	7	14	20
Բուշեր *քաղաքում.*	9	33	32
Համադան *(հին Եկբատան քաղաքում).*	40	114	120
Շավարին *(գյուղ Համադանի մոտ).*	76	165	149
Թեհրան *(մայրաքաղաք Պարսկաստանի).*	110	300	251
Վանակ և Շոքորխաղ *(գյուղեր Թեհրանի մոտ).*	43	108	103
Ամբողջ Արաղեստանի հայ ազգաբնակության գումարն է	3 090	10 104	10 082

Վերոհիշյալ թվանշաններից երևում է[1], *որ հայոց ազգաբնակության մեծ մասը կենտրոնացած է Սպահան քաղաքում և նրա գյուղորայքում։ Թե որտեղից և որպես զետեղվեցան այնտեղ հայերը, այդ հայտնի է պատմությունից. մենք թողնում ենք անցյալը, հարկավոր ենք*

[1] *Վերոհիշյալ թվանշանները դուրս են բերված Թաթևոս եպիսկոպոսի՝ մի ժամանակ Սպահանա առաջնորդի, 1856—1857 թվի վիճակագրությունից։ Բայց 1871—1872 թվի սովը այնպիսի մեծ հարված տվեց տեղային հայերին, որ այժմ նոցա թիվը պետք է պակասած լինի։*

համարում նրանց արդի վիճակից առել մի քանի խոսք։ Նոր-Ջուղան (մի արվարձան է Սպահանի մոտ) յուր բազմամարդության ժամանակ ունեցել է 20 եկեղեցի, բայց այնուհետև, երբ ժողովրդի մեծ մասը գաղթեցին դեպի Հնդկաստան, կանգուն մնացած են 7 եկեղեցի միայն։ Երկու վանքեր տակավին չեն զրկված իրանց միաբանությունից։ Ս. Կատարինեի վանքը կուսանաց է, ունի մինչև 20 միանձնուհիք. Ամենափրկչի վանքում գտնվում է տեղային առաջնորդարանը։

Նոր-Ջուղան ունի երեք դպրոց, ա) Հայկյան-Հայրենասիրական, հաստատված 1843 ամի բարերարությամբ պ. պ. Հարության Աբգարյանի և Հովհանջան Էլիազյանի, որք բնակվում են Հնդկաստանի Կալկաթա քաղաքում. այս դպրոցի մեջ նույն պարոնների օժանդակությամբ ուսանում են 70 աշակերտներ. բ) Ամենափրկչյան դպրոց. բացված 1852 ամի բարերարությամբ երկու քույրերի՝ տիկ. Մարիամ Հարությունյան և օրիորդ Թագուհի Մանուկյան, որոնք բնակվում են Հնդկաստանի Բատավիայում։ Այս դպրոցը ունի 40 աշակերտներ և կառավարվում է նույն տիկինների օժանդակությամբ. գ) Սուրբ Մինասա դպրոց, որի հիմնադիրն է պ. Մարգար Սուքիասյան, բնակվում է Հնդկաստանի Ջավա կղզու Ջափարա քաղաքում. աշակերտաց թիվը 80 է։ Բացի հիշյալ արական դպրոցներից, Ս. Կատարինեի վանքի կուսանոցն ուներ յուր մեջ մի օրիորդական վարժարան, որ հիմնված է բարերարությամբ պ. Մանուկ Հորդանանյանի, որը բնակվում է Բատավիայի մեջ։

Բայց այժմյան վիճակավոր առաջնորդի՝ հայր Գրիգորիս եպիսկոպոսի օրերով Սպահանի վերոհիշյալ երեք արական դպրոցները բոլորովին ուրիշ կերպարանք ստացան։ Նորին սրբազնությունը հայոց դպրոցները հանձնում է մստեր Բրուս անունով անգլիացու տեսչությանը, որպեսզի եվրոպական մանկավարժության կանոններին համեմատ նրանց ուղղություն տա։ Այդ, իհարկե, մի գեղեցիկ միտք է հայոց վանակարգ վարժարանը հանձնել եվրոպացի գիտնականին, նրան բարեկարգելու համար, երբ հայերից եվրոպական կրթությանը ծանոթ մարդիկ չկային։ Բայց մստեր Բրուսը միսիոնար է, որը Լոնդրայի Անգլիական եկեղեցու կողմից ուղարկված էր Պարսկաստանում քրիստոնեություն տարածելու։ Մի այսպիսի մարդուն հանձնել հայոց դպրոցների տեսչությունը, հազիվ թե կհասցներ ցանկալի նպատակին, այն է՝ դպրոցի բարեկարգությունը և նորա եվրոպական մանկավարժության համեմատ կազմակերպությունը։ Որովհետև միսիոնարը գիտության մարդ չէ, միսիոնարը, ո՛ր եկեղեցուն և պատկանելու լինի, այնուամենայնիվ մոլեռանդ և կրոնամոլ է։ Նա ծառայում է՛ մի վերացական գաղափարի, որն իրականության

հետ առանձին ոչինչ չունի, և նույն գաղափարին նվիրում է յուր գործունեությունը։ Եթե միսիոնարին հանձնում են հայոց դպրոցների տեսչությունը, հարկավ, այն դպրոցները ծառայեցնելու է յուր նպատակներին։ Այսպես էլ լինում է։ Մստեր Բրուսը յուր օգնական հայազգի պ. Մելքում Աստատուրյանի հետ, որ ուսած էր Գերմանիայում, յուրյանց տեսչության տակն առնելով հայոց դպրոցների կառավարությունը, քիչ ժամանակից հետո հայտնվում է մի նոր այլանդակ կրոնական ուղղություն, որ մտցրած էր նույն ուսումնարաններում։ Հայր Գրիգորիս եպիսկոպոսը, թեև ուշ, բայց հասկանում է յուր սխալը, նա կամենում է հեռացնել անգլիացի միսիոնարին յուր պաշտոնից։ Բայց նա չէ ցանկանում հաճությամբ թողնել հայոց դպրոցները, մինչև հայոց առաջնորդին ստիպեցնում է դիմել տեղային կառավարությանը և բողոքել։ Թեև դատը վճռվում է հօգուտ հայոց առաջնորդի, բայց անգլիացի միսիոնարը մեծ մասամբ հասած էր յուր նպատակին, որովհետև աշակերտները մինչ այն աստիճան գրաված են լինում իրանց տեսչի տված ուղղությունով, որ չեն հեռանում նրանից և ո՛չ ցանկանում են շարունակել իրանց ուսումը այն դպրոցներում, որոնք կրկին հայոց առաջնորդի հովանավորության տակ պետք է մնեին։ Նրանք, աշակերտները, սկսում են հաճախել մստեր Բրուսից հիմնված մի առանձին վարժատուն, որ հատկապես հայ մանուկների համար կառուցել էր նա։

Մենք ամենևին չենք դատապարտում անգլիական միսիոնարի գործ դրված խորամանկությունը, որովհետև գիտենք՝ անգլիացին որքան յուր երկրում ազատամիտ է, այնքան նա Ասիայում շահամոլ է և հարստահարող։ Մենք դատապարտում ենք Գրիգորիս եպիսկոպոսի անհոգությունը. նա շատ միամիտ պետք է լինի, որ չէ հասկանում, թե գայլն ինչ նպատակով հանձն է առնում գառների պահպանությունը...

Մենք հայոց եկեղեցվո մոլեռանդ պաշտպաններից չենք. միայն նայում ենք նրա վերա բոլորովին ազգային կետից, և խիստ վնասակար ենք գտնում, որ հայը, հեռանալով հայրենական եկեղեցուց, դադարում է յուրյան հայ կոչել։ Ահա միսիոնարների մեզ տված օգուտը...

Սպահանու հայերի մեջ, բացի բողոքական տարրեն, որ նոր է մտցրած, կան քանի գերդաստանի չափ հայ կաթոլիկներ, որոնք կրոնափոխ են եղած մասամբ եզվիտներից, մասամբ Ունիթոռ կոչված դոմինիկյաններից։ Այս վերջինների արհամարհանքը դեպի հայությունը հասնում է մինչ այն աստիճանի, ինչ աստիճանի հասնում է Հռոմի պաշտոնյաների հալածասիրությունը դեպի մարդկային ամեն ազատ ձգտողություն...

Բացի Սպահանից և նրա գավառներից, որպես տեսավ ընթերցողը, Պարսկաստանի մյուս քաղաքները շատ փոքր հայ բնակիչներ ունեն։ Շիրազը, պարսից բանաստեղծական քաղաքը, այժմ ունի 7 հայոց գերդաստաններ, նրանց թիվը առաջ շատ էր, բայց օրըստօրե սպառվելու վրա են։ Շիրազն ունի մի հայոց եկեղեցի, որն 1853-ի երկրաշարժից փլած էր, բայց կրկին նորոգվեցավ 1856 թվին։ Վարժարան չունի։ Բենդեր-Բուշերի ինը տուն հայերը նույնպես ունեն մեկ եկեղեցի, բայց դպրոց չունեն, իրանց որդիքն ուղարկում են Բոմբա ուսանելու։ Զարմանալի երևույթ, ամեն տեղ հայն, որքան և փոքր լինի թվով, նա դարձյալ ունի մի եկեղեցի։ Նա առանց դրան ապրել կարող չէ... չնայելով, որ առանց դպրոցի, եկեղեցվո ժողովուրդն ոչնչանում է, և նրա քարերն պարսից բաղնիքների շինության համար են գործ դրվում...

Պարսկաստանի 1871 թվի սովը բավականին լայն ասպարեզ բաց արավ ամերիկացի բողոքական միսիոնարների առջև՝ տարածել իրանց վարդապետությունը տեղային հայերի մեջ, որոնք փոխեցին իրանց կրոնքը ավելի մի պատառ հացի համար, քան որևիցե համոզմունքից դրդված։ Այս մոլորության առաջին օրինակը տվեցին Համադանու հայերը, որոնք համարյա բոլորը ընդունեցին բողոքականություն։ Այժմ ամերիկացի միսիոնարներն ունեն այնտեղ ուսումնարան, աշակերտները ստանում են շաբաթական 2 կրան փող, հագուստ և ուսման բոլոր պարագայք։

Նույնը բերին ամերիկացի միսիոնարները և Թեհրանի հայերի մեջ, հիմնելով այնտեղ երկու դպրոցներ, որոնց մեջ ուսանում են 60 աշակերտներ, ստանալով շաբաթական 2 կրան փող, հագուստ, գիրք և բոլոր ուսման պարագայքը։ Ամերիկացի միսիոնարների օրինակը գրավեց այնտեղ և երկու կաթոլիկ քահանաներ, որոնք հինգ մայրապետների հետ, բույն դնելով Թեհրանում, միտք ունեն օրիորդաց ուսումնարան հիմնել հայերի մեջ։

Բայց Թեհրանում գտնվեցան մի քանի եռանդոտ երիտասարդներ, որոնք, տեսնելով ազգի կորուստը, հորինեցին մի ընկերություն. Հայկազնյան կոչված, և հիմնեցին նույն անունով մի դպրոց, որ ունի այժմ մինչև 40 աշակերտներ։ Դպրոցը կառավարվում է բարերարների մասնավոր նվիրատվությամբ, բացի դրանից ստանում է Պարսից կառավարությունից տարեկան 200 թուման օժանդակություն։ Դպրոցի աշակերտները, բացի նրանից, որ ձրիավարժ են, ունեն նաև գրադարան, որ ծառայում է որպես հասարակաց ընթերցարան։ Թեհրանի երիտասարդության գործը գովելի է և այն կողմից, որ փոխանակ զանազան միջոց-

ներով աշխատել է օտարերկրյա քարոզիչներին դուրս հալածել իրանց միջից, նրանք սկսել են ազատ կերպով մրցություն անել, որը միակ և ուղիղ ճանապարհն է հայ հասարակության մեջ կրոնափոխության առաջքն առնելու: Թեհրանը ունի երկու հայոց եկեղեցի:

Մեր հաղորդած վերոհիշյալ տեղեկություններից ընթերցողը կտեսնի, թե որպես կրոնափոխությունը արագ քայլերով, օտարերկրյա քարոզիչների ձեռքով, առաջ է գնում հայերի մեջ: Այս երևույթի գլխավոր պատճառն է ժողովրդի չքավորությունը, որ յուր ապրուստի համար վաճառում է ամեն ինչ, որքան և նվիրական և սրբազան լինեի յուր համար: Իսկ բողոքական և կաթոլիկ քարոզիչները հայտնվում են Պարսկաստանում ահագին գումարներով: Մի երկրորդ ամենագլխավոր պատճառը մենք վերաբերում ենք տեղային հայոց հոգևոր կառավարության անհոգության և նրա անկարգության: Թողնենք մյուս եկեղեցական հարստահարությունները, այսքանը բավական է հիշել, որ Սպահանի առաջնորդական վիճակը պարունակում է յուր մեջ, բացի վերոգրյալ քաղաքների և գավառների հայ ժողովուրդը, նաև Հնդկաստանի հայերը: Թե՛ Հնդկաստանի հայերը և թե՛ Պարսկաստանի հայերը իրանց սեփական քահանա չունեն: Սպահանի առաջնորդն ուղարկում է ամեն կողմ քահանաներ երկու կամ երեք տարվա պաշտոնով: Կնշանակե, Հնդկաստանի և Պարսկաստանի բոլոր հայ ժողովուրդը Սպահանի քահանաների ղևտական ժառանգություններ են: Մի քահանա Սպահանից դուրս գալով, մի և երկու ամսվա ճանապարհ պետք է անցնե, մինչև Թեհրան, Բուշիր և Հնդկաստանի զանազան քաղաքները հասնի, իսկ այնտեղ մնալու է նա երկու կամ երեք տարի: Ժամանակը լրանալեն հետո նրան կփոխանորդե մի երկրորդը: Իսկ այդ վիճակը ձրի չստացավ այն քահանան, նա յուր գալու ժամանակ բավականին գումար ծախսեց, մինչև ստացավ յուր տեղը: Նա ճանապարհին բավականին ծախս արավ, մինչև հասավ յուր համար նշանակած քաղաքը: Որտեղի՞ց պետք է դուրս բերե այս բոլորը, որ ինքն ևս մի բան շահե, ժողովրդի քսակից... Այժմ երևակայեցեք, թե ի՞նչ բարոյական և հոգևոր ուղղություն կարող է տալ յուր ժողովրդին այդ տեսակ քահանա...

Այժմ, որպես հիշեցինք, Սպահանի հայոց առաջնորդը Գրիգորիս եպիսկոպոսն է. նա թողել է Պարսկաստանը և գնացել է Հնդկաստան:

Ինչ որ վերաբերում է Պարսկաստանի հայերի հասարակական կյանքին, նրանց կենցաղավարությունը ամեն տեղ այնքան միատեսակ է, որ կարելի է այդ ընդհանուր տեսությունը անել, քաղաքաբնակները պարապվում են մի քանի արհեստներով, որպես են՝ հյուսնություն, ու-

կերչություն, ջուլհակություն և այլն, նրանց գլխավոր առևտուրը գինեվաճառությունն է, որ, մահմեդականներին արգելված լինելով, մնացել է քրիստոնյաների սեփականություն։ Եվ որովհետև կրոնքով արգելված մի ըմպելիքի գործածությունը լինում է մահմեդականներից առավել անբարոյական և սրիկա մասի մեջ, այս պատճառավ հայը գինեվաճառության հետ ծախում է և յուր պատիվը, մանավանդ այդ առևտուրը գտնվում է կանանց ձեռքում... Կանոնավոր վաճառականությամբ պարապում են քաղաքներում շատ քիչ մարդիք։ Այնպես որ, ամեն տեղ տիրում է չքավորությունը։ Սպահանա հայերը համարյա ապրում են իրանց Հնդկաստանցի ազգայինների ողորմությամբ։ Գյուղացիների վիճակը ավելի դժբախտ է. նրանք թեև առհասարակ պարապում են երկրագործությամբ, բայց կալվածատիրոջ հարստահարությունը նրանց ձեռքում ավելի վաստակ չէ թողում. և իրանց ապրուստը որոնում են օտար երկրներում գաղթականության մեջ։

Գաղթականությունը տարածվում է ավելի դեպի Հնդկաստան, որ հայերի համար մի անդառնալի կորստյան անդունդ է...

Պարսկաստանի գյուղացիների գաղթականությունը նպաստում է տեղային կառավարության այն ապօրինությունը, որ յուրաքանչյուր գյուղի համար սահմանված տուրքը ստացվում է նրանից մինչև վերջին շունչը մնալը։ Գյուղն այն ժամանակ միայն ազատվում է տուրքից, երբ բոլորովին ամայի և դատարկ է մնում։ Օրինակ, մի գյուղ մի ժամանակ ունեցել է 200 տուն բնակիչներ, և նույն մարդահամարի համեմատ նշանակված է տուրքի մի որոշյալ գումար։ Այժմ բնակիչներից 50 տուն գաղթեցին. տուրքի գումարից ոչինչ չէ պակասում. 50 տուն ևս գաղթեցին, դարձյալ նույն գումարը կստացվի, և այսպես բնակիչների թիվը օրըստօրե փոքրանում է, բայց տուրքը մնում է միևնույնը։ Իսկ մնացած բնակիչները ստիպված են այնուհետև թողնել գյուղը, որովհետև այնքան ծանրություն տանել կարող չեն։

Ի նկատի ունենալով այսպիսի հանգամանքները, մենք ստիպված ենք հայտնել մի քանի տխուր ճշմարտություններ, որ Պարսկաստանի հայոց ապագան չէ խոստանում որևիցե մխիթարական վախճան, քանի նորա գոյությունը ապահովող մի հաստատ դրություն չենք տեսնում։ Թողյալ այդ, միշտ փոքրիկ մասնիկները անհետանում և կուլ են գնում նույն տարրի ընդհանրության մեջ։ Այժմ երևակայեցեք Պարսկաստանի հայոց ցրվյալ, կտոր-կտոր եղած մասնիկները զանազան պարսկական քաղաքներում և գյուղորայքում։ Բավական է միայն քարտայի վերա նայել և տեսնել, թե որքան հեռու են միմյանցից Թեհրանը, Համադանը, Սպա-

հանը, Շիրազը, Բենդեր-Բուշերը և այլն։ Այնտեղ, ուր մենք 7—8 տուն հայ ենք տեսնում, գտնում ենք մի կամ ավելի եկեղեցիներ, ընդարձակ գերեզմանատուն, որոնք որպես անբարբառ վկայարանք ցուցանում են, թե հայ բնակիչների թիվը ավելի շատ է եղած առաջ. իսկ ո՞ւր են այժմ։ Բոլորը անհետացան շրջապատող տարրի ընդհանրության մեջ, հետևելով մարդկային կենցաղավարության կլանող օրենքներին...

Պարսկաստանի հայերի փրկությունը նրա մեջն է կայանում, որ նրանք ամփոփվեն մի տեղ և մի այնպիսի տեղ, որ ավելի մոտ լինի Հայաստանին։ Այս ասելով, մեր նպատակն այն չէ՝ գաղթականություն քարոզել դեպի Պարսկաստանի սահմաններից դուրս, և հայերին օտար երկրներում բախտ որոնելու ճանապարհ ցույց տալ։ Այլ կամենում ենք ասել, փոխանակ Սպահանից և այլ քաղաքներից գաղթելով Հնդկաստան գնալ, ուր մեր ազգայինների կյանքը բոլորովին վտանգի մեջ է, ավելի լավ և նպատակավոր կլիներ տեղափոխվել Ատրպատականի նահանգը, որը Հայաստանի նախկին գավառներից մեկն է և հայկական կենտրոնից շատ հեռու չէ։ Այստեղ դարձյալ պարսից կառավարության իշխանության ներքո հայերը կարող էին ամփոփ դիրք ընդունել, և բոլորը հավաքելով՝ միասին ապահով կյանք վարել։ Եվ որովհետև պարսկահպատակ հայերի մեծ մասը Ատրպատականի մեջ են զետեղված, նրանց գումարումը կկազմեր մի ամբողջություն, մի կենդանի ազգային մարմին։

Եթե ոչ, ամեն մի ազգային ամբողջություն, երբ որ կտրատվում է նա, յուր մեջ ո՛չ միայն ուժ չունի, այլ դադարում է և կյանք ունենալուց...

Մեր այս նամակով հաղորդած վիճակագրական տեղեկությունները վերաբերում են միայն Պարսից Արաղստանի մասին, մնում է Ատրպատականի նահանգը, որի մասին կգրենք հետո։

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Երկրագործություն:— Վաճառականություն ընդհանրապես, և հայերի վերաբերմամբ՝ մասնավորապես

Ատրպատական. *Այստեղ հայերը գլխավորապես զետեղված են Ուրմիո լիճը շրջապատող գավառներում, որպիսին են Խոյ, Սալմաստ, Ուրմի, Սուլդուզ, Սովուխ-բուլախ, Բինաբ և Մարաղա։ Բացի դրանից,*

բնակվում են Ղարադաղի գավառներում, Թավրեզ քաղաքում, Մակու քաղաքում և իր շրջակա գյուղորայքում։

Հայերի թիվը Ատրպատականի առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոսի վիճակագրության համեմատ կարելի է նկատել հետևյալ ցուցակից։

Քաղաքաբնակ հայերը որոշվում են գյուղացիներից ո՛չ միայն իրենց պարապմունքով, այլ կենցաղավարության մյուս ձևերով։ Գյուղացիք առհասարակ երկրագործներ են, ժիր աշխատասեր բանվորներ են։ Երկրագործությունը հայերի մեջ այն աստիճան զարգացած է, որ Ֆաթհ-Ալի շահի առաջին վեզիրը՝ Հաջի Միրզա Աղասին, կամենալով Արաղստանի պարսիկներին երկրագործության օրինակելի ձևեր ցույց տալ, հրավիրեց խոյեցի հայ գյուղացիներ, այլև հայ դարբիններ և հյուսներ, գութան, արոր, խոփ և բահ շինելու համար։

Երկրագործության գլխավոր ճյուղը նվիրված է ցորյանի և բամբակի մշակության. կտավհատը մշակվում է միայն նրա յուղալի հատիկներից յուղ դուրս բերելու համար, իսկ ձողերի թելանյութը բոլորովին թողվում է անպետք. դրանից օգուտ քաղել դեռ չեն սովորած գյուղացիք։ Կտավհատի յուղը, որ տեղացիք կոչում են ձեթ, գործ է ածվում որպես վառելիք լուսավորության համար, և որպես ուտելիք պաս օրվա համար, այլև նորա յուղով տարին մի քանի անգամ օծում են գոմեշները, նրանց վերայի ուտող միջատները սպանելու և չորքոտանիների կաշին փափկացնելու համար։ Կանեփի հատիկները նույնպես գործ է դրվում յուղ դուրս բերելու համար, իսկ ձողերի թելանյութից դեռ չեն սովորած նուրբ գործվածքներ պատրաստել, շինում են միայն պարաններ և կոշտ գործվածքներ ջուալների (պարկերի) համար։ Յուղաբեր բերքերի կարգին պատկանում է և գերշակը, որի յուղը լուսավորության համար է գործ ածվում, և շատ խնայողական է յուր դանդաղ վառվելու համար։ Տաք տեղերում պարարտ հողերի մեջ ցանում են նաև կնջիթ, որի յուղը յուր ազնվությամբ պակաս չէ մնում ձիթապտղի յուղից։ Դա գործ է դրվում որպես կերակուր. նրան բանեցնում են նաև ներկարարները (ձիթհանք)։ Ջրավետ երկրներում շատ զարգացած է բրինձի մշակությունը։ Այդ երկրների կարգին է Ուրմիո գավառը, որտեղից դուրս է գալիս ահագին քանակությամբ բրինձ։

Բամբակի մշակությունը, ի բացառյալ սառոտ և սառն երկրներից, տափարակ դաշտերի վերա յուր ծաղկյալ դրությանն է հասել։ Բամբակ ցանելու համար միայն հողը վարում են տղամարդիկ, իսկ մնացյալ բոլոր հոգատարությունն մնում է կանանց վերա. նրանք ցանում են, քաղ-

նելուց հետո քաղհան են անում, հասնելուց հետո նրանք են հավաքում կոճակները։ Հետո նրանք են մաքրում բամբակը հունդերից իրենց հնաձև չերչերներով։ Թեև փորձում են նորաձև մեքենաներ բամբակը մաքրելու համար, բայց փորձը ցույց տվեց, թեև նոր մեքենաներով գործը արագ է գնում, բայց բամբակի նուրբ թելանյութը կտրատվելով կորցնում է յուր լավ հատկությունը։ Բամբակի մեծ մասը վաճառահանվում է, իսկ մի մասից տեղացիք հագուստ են պատրաստում։ Կանայք մանում են թելը իրանց ջահրեններով, իսկ երբ ձմեռը գալիս է, և տղամարդը ազատ է յուր դաշտային պարապմունքներից, այն ժամանակ սարքում է յուր ջուլհակի պարզ գործարանը և բամբակից կտավներ է գործում։ Այս արհեստը գտնե ամեն մի գյուղացի։ Գյուղացու հագուստը ոտքից մինչև գլուխ իր պատրաստած կտավներիցն է։ Նա փոխում է նրանց գույնը կարմիր և կապույտ ներկերով. և դորա համար կան գյուղերում լեղակի ներկարարներ (բոյախանչի), նույնպես տորոնով կարմիր ներկողներ (շիլաչի)։ Պարսկաստանի կարմիր և կապույտ կտավները այնքան ամուր գույն ունին և այնքան լավ են պատրաստվում, որ մեծ քանակությամբ տարվում է Թիֆլիս, և այստեղից տարածվում է Կովկասի կիսավայրենի ցեղերի և գյուղացիների մեջ։

Հացաբույսերի տեսակներից ցանվում է նաև գարի և կորյակ, վերջինը ցանում են ավելի այն տարիներում, երբ մորեխից վտանգ է սպառնում, որովհետև մորեխը չի ուտում կորյակի բույսը։

Ագարակային բույսերից ավելի մեծ քանակությամբ մշակվում է սեխ, ձմերուկ և վարունգ. դոցա կարգումն է շաղգամը, կաղամբը, բողկը, ճակնդեղը, սոխը, սխտորը (դաղար), որոնք գործ են դրվում որպես կերակուր, հում կամ եփած ձևով։ Գետնախնձորի մշակությունը մի քանի տեղերում դեռ նոր է սկսվել։

Ագարակային ընդեղենների տեսակից մշակվում են լոբի, ոսպ, բակլա և սիսեռ։ Սիսեռի բույսից ստացվում է մի տեսակ թթու հեղուկ, որ կոչվում է շաբնամ։ Գյուղացիք կարծում են, թե դա մի տեսակ թթու ցող է, որ առավոտները նստում է սիսեռի բույսերի վրա, և այս պատճառով ամեն օր վաղ առավոտյան սպիտակ մաքուր կտավներ են սփռում բույսերի վրա, կտավը ծծում է ցողը, հետո, քամելով թափվում է կտավից թթու հեղուկը։ Բայց իսկապես թթվությունը սիսեռի դեռ չհասած պատյանների մեջն է, և երբ ցողը իջնում է նրանց վրա՝ պատյաններից թթու համ է ստացվում. և այդ լինում է առավելապես այն երկրներում, ուր առավոտյան ցողը առատ է, որպես են Ուրմիո լճակի շրջակա գավառները։ Սիսեռի բույսերից առնելով թթվությունը՝ վնա-

սում է հատիկներին, որոնք ավելի չեն լցնում, այլ մնում են նիհար և փոքրիկ։ Սիսեռի թթուն գործ է դրվում ըմպելիքների համար, երբեմն խառնում են թեյի մեջ՝ լիմոնի տեղ։

Այգեգործությունը *նույնպես յուր պատվավոր տեղն է բռնում պարսկահայ մշակության մեջ։ Այս ճյուղի մեջ ավելի զարգացած է խաղողի մշակությունը, մանավանդ այն մասերում, որ բարեխառն կլիմա ունին։ Դոցա կարգումն են դարձյալ Ուրմիո լճի շրջակա գավառները, մանավանդ Ուրմիան և Մարաղան։ Խաղողից գյուղացիք պատրաստում են այնքան գինի, որքան իրենց պետք է, իսկ մեծ մասը չորացնում են և* չամիչ *կամ սուլթա պատրաստում, ուրիշ երկիր վաճառահանելու համար։ Ատրպատականի քիշմիշը տարվում է մեծ մասամբ Ռուսաստան, Նիժնի վաճառատեղը և Երևան։ Թեև պարսիկները չեն գնում հայի պատրաստած քիշմիշը, բայց հայ վաճառականներին են ծախում։ Խաղողի* ճաղցուից *պատրաստում են նաև* դոշաբ *կամ բաքմազ, որ մի քաղցր, հալած մեղրի նման հյութ է, գործ է ածվում որպես կերակուր։*

Մեղվաբուծությունը *զարգացած է այն գյուղացիների մեջ միայն, որոնց գյուղերն գտնվում են լեռների ստորոտին կամ լեռնային բարձրավանդակի վրա։*

Որպես երկրագործ ժողովուրդ, հայ գյուղացիք անասնապահությամբ *շատ չեն պարապում. պահում են այնքան կովեր և գոմեշներ, որքան բավական է իրանց տնտեսական գործածության՝ յուղ և մածուն ունենալու համար։ Ավելորդ անասուններ պահել չեն էլ կարող այն գյուղացիք, որոնք պաշտարնակներ են, որովհետև անմշակ հողերը շատ փոքր են անասուններին արածելու համար։ Ոչխարներ չեն պահում, որովհետև խաշնարածության հետ կապակից է չվական կյանքը, այսինքն՝ տարվա տաք եղանակներին ոչխարները սարը տանել և այնտեղ դարմանել մինչև ձմեռ. իսկ երկրագործ և միևնույն ժամանակ հաստատաբնակ հային դըժվար է հեռանալ հողային պարապմունքից։ Այն հայ գյուղացիք, որոնք սարերի մոտ են, կամ լեռնային բարձրավանդակի վրա են բնակվում, պարապում են նաև խաշնարածությամբ, որովհետև նոցա շրջապատող բնությունը ընծայում է ճոխ արոտամարգեր ոչխարներ պահելու համար։*

Խաշնարածների մեջ զարգացած է նաև բրդից գործվածներ պատրաստելու արհեստը, որը ըստ մեծի մասին կատարվում է կանանց ձեռքով։ Այս գործվածները թեև այնքան նուրբ և գեղեցիկ չեն, որպես պարսիկներինը, բայց հայտնի են իրեն ամրությամբ և գույների տոկունությամբ, որպիսիք են զանազան տեսակի կարպետներ, թալիքներ և ավելի բարակ գործվածներ, որոնցից գյուղացիք պատրաստում են վերար-

կուներ (աբա) և վարտիքներ (շալվար)։ Գորգեր շինել չեն կարողանում։ Ծալեղեն գործվածքների հետամնացության գլխավոր պատճառը այն է, որ Հայոց ոչխարների բուրդը և մազը նույն լավ հատկությունը չունեն, որպես պարսիկներինը, կլիմայական աննպաստ պայմանների պատճառով։

Ամեն գյուղերում գտնվում են այնպիսի արհեստավորներ, որ այն գյուղին պետք են. գյուղացիք ունեն հյուսներ, որոնք շինում են երկրագործական գործիքներ՝ գութան, արոր, որպես և դռներ, լուսամուտներ և այլն։ Գյուղերում կան որմնադիրներ, որոնք գլխավորապես շինում են նույնպես երկրագործական անոթներ, որպիսի են՝ խափ, բահ, շղթա, բրիչ և այլն։ Գյուղերում կան ջաղացպաններ, որ սրում են բթացած աղորիքը։ Գյուղերում կա սափրիչ, որ միևնույն ժամանակ շատ անգամ բժշկի պաշտոն է կատարում։ Ոսկերիչները, որ ավելի կանանց են ծառայում, գալիս են քաղաքներից և ժամանակավորապես մնում են, դրանց կարգում են և կլայեկագործները։

* * *

Քաղաքներում հայերը համեմատաբար փոքր թվով են բնակվում, և եթե գտնվում են քաղաքներում հայեր, նրանք կամ առանձին և մահմեդականների հետ խառն թաղեր են կազմում քաղաքի պարիսպների մեջ, կամ բնակվում են քաղաքից դուրս առանձին արվարձաններում։ Այդ այն պատճառով է, որ նախ մահմեդականները թույլ չեն տա քրիստոնյա հային իրանց մեջ բնակվելու և իրանց դրացիությամբ նրանց պղծելու. եթե թույլ ևս տային, հայերին ձեռնտու չէ ցրվել մահմեդականների մեջ և նրանց թաղերում բնակություն հաստատել, ուր ամեն րոպե կարող էր նրանց վտանգ սպառնալ։ Այս պատճառով սրանք աշխատել են միշտ ամփոփ դիրք բռնել և միմյանց հետ սեղմված ապրել։ Ամբողջ Պարսկաստանում Թեհրանում միայն հայերը ցրված են զանազան թաղերում և այդ այն պատճառով, որ Պարսկաստանի մայրաքաղաքը ավելի ներողամիտ է դեպի ոչ-մահմեդականները։ Այստեղ հայերն ազատ են այն հալածանքներից, որ պատահում է ուրիշ քաղաքներում։

Քաղաքներում հայերը ըստ մեծի մասին պարապում են զանազան արհեստներով. այս արհեստների մեջ առաջին տեղն է բռնում ոսկերչությունը։ Պարսից հարեմները և կանանց ճոխ զարդարանքը, ոսկու, արծաթի և թանկագին քարերի շռայլաբար գործածությունը միշտ առատ գործ են տալիս հայ ոսկերչին։ Թեև հրեաները նույնպես պարապում են

այս արհեստով, բայց այս ազգի բնական խարդախությունը թույլ չէ տալիս հայերի հետ մրցություն անել։ Հայերը, դրված լինելով պարսիկների երաշխավորությունը, ամենահին ժամանակներից շահի դրան զարգարբաշին (ոսկերչապետը) միշտ եղել է հայ, այժմ նույնպես հայ է։ Նրա համար պալատում առանձին գործարան կա, ուր նա աշխատում է միմիայն արքունիքի համար։ Այսպիսի արհեստավորները միշտ արժանացել են խանության աստիճանի, և նոցա իրենց արհեստի վերաբերյալ արտոնությունը անցնում է որդուց որդի։

Պարսից իշխանները շատերն ունեն տնային ոսկերիչ, որ ամբողջ տարի բանում են միայն այս և այն խանի կամ շահզադայի համար։ Պարսիկները առհասարակ սիրում են նայել փայլուն և խայտաճամուկ իրերի վրա։ Մտեք մի պարսիկ իշխանի կամ մինչև անգամ հասարակ հաջու հյուրանոցը, դուք կկարծեք, թե դա հազվագյուտ իրեղենների մի խանութ է, ուր դասավորված են գույնզգույն չինական անոթների, հայելիների, արծաթե աշտանակների և ջահերի մի մեծ հավաքածու։ Այստեղ դուք կտեսնեք քսան-երեսուն հատ արծաթե ղելյաններ, մի քանի հատ արծաթե սամովար, նույն մետաղից շինված ափսեներ, թեյամաններ և շաքարամաններ, ոսկուց շինված սուրճի փոքրիկ ֆինջաններ (բաժակներ), մի խոսքով, ամբողջ սենյակը վառվում է ճենապակու և թանկագին մետաղների կարասիքով, և այդ բոլորի մեջ փոքր գործ չէ գտնում յուր համար հայ ոսկերիչը։

Պարսիկը, երբ ձեռքում փող ունի, գնում է այսպիսի բաներ, նրա համար մեծ պարծանք է, երբ ասեն՝ «տասն հատ արծաթե սամովար ունի». այս պատճառով նա յուր հարստությունը ի ցույց է դուրս բերում։ Բայց երբ բախտը փոխվեցավ, նա սկսում է ծախել, գրավ դնել և սպառել... Բախտի հեղաշրջության հետ անդադար պարսկի տունը լցվում է և դատարկվում է, և ամեն պարագային օգուտ է քաղում հայ ոսկերիչը. նա գնում է եղածը չնչին գնով, կամ նորն է շինում։

Ոսկերչությունից հետո արհեստների մեջ երկրորդ տեղն է բռնում հյուսնություն: Ով որ փոքրիշատե գաղափար ունի պարսիկների լուսամուտների մասին, կարող է հասկանալ, որ հյուսնությունը հայերի մեջ չափազանց զարգացած է, որ այնքան ճիշտ մաթեմատիկական համաչափությամբ դուրս են բերում իրանց ձեռագործը։ Պարսից ճաշակը այս արհեստի մեջ նույնպես պահպանել է յուր հատկանի առանձնությունը. նա չի սիրում, որ արեգակի ճառագայթները իրանց բնական գույներով ներս ցոլան յուր սենյակի մեջ, անպատճառ ցանկանում է նրանց գույն տալ, որպես նա ներկում է յուր մորուքը և մատները։ Պարսիկի այս պա-

հանքը կատարում է հայ հյուսնը. նրա լուսամուտների փանջարաները կազմում է գույնզգույն ապակիների փոքրիկ բանվածներով, որոնք հորինում են զանազան նկարներ, և լույսը այս նկարների միջից անցնում է, որպես գույնզգույն ծաղկի փունջերի միջից և գեղեցիկ ֆանտաստիկական ճառագայթներ է արձակում սենյակի մեջ։

Հայ հյուսնը կամ ատաղձագործը պատրաստում է միայն նուրբ և բարակ գործվածներով, իսկ փայտե կոշտ շինվածքները նա թողնում է մահմեդականներին։ Վերջին ժամանակները պարսիկների տներում մուտք գտան նաև եվրոպական կարասիք. այս նորաձևությունը հայերի համար մի նոր գործ բացավ։ Հայ արհեստավորը ավելի շուտ է սովորում այն, ինչ որ եվրոպական է. մինչդեռ պարսիկը չի ուզում փոխել ինչ որ սովորած է յուր պապերից. նույնը պատահեցավ և դերձակության մեջ։ Երբ պարսիկները (ծառայողները) սկսան նեղ պանտալոն հագնել և իրանց հագուստները նմանեցնել եվրոպացիներին, հայ դերձակները միայն կարողացան նրանց ճաշակին հարմարեցնել մի նորաձև կիսաեվրոպական և կիսապարսկական հագուստ։ Եվ այսօրվա օրս ամենալավ դերձակը, որ բանում է շահից սկսյալ մինչև ստոր աստիճանավորների համար, հայ է։ Ամեն քաղաքներում հայ դերձակների խանութները բազմանալու վրա են և ավելի արդյունավոր է լինում այդ արհեստը, քանի որ հագուստի նորաձևությունը տարածվում է։

Դարբնության մեջ քաղաքներում հայերը ձեռք են առել զինագործությունը: Տերության զինվորական գործարանների (զաբախանաների) հմուտ արհեստավորները հայեր են։ Հայ զինագործները սովորաբար գնում են փոքրիկ քաղաքներ կամ մեծ գյուղեր և այնտեղ մնում են գործելու ժամանակավորապես։ Նրանք գնում են մինչև անգամ զանազան ալատաշրջիկ ցեղերի մեջ, որպիսիք են քրդերը, թալիշները, գելաքները և այլք և այս ավազակների համար զենք են պատրաստում, նրանց թաբունի հետ այստեղ և այնտեղ թափառելով։ Զարմանալի է տեսնել մի ազգ, որ գիտե զենք շինելու արհեստը, բայց նրա գործածելը չգիտե...

Հայերից կաշեգործներ չկան, որպես և կոշկակարներ, թամբ շինողներ։ Կաշին գործվածները այն տեսակ նյութերի կարգին են պատկանում, որ պարսիկ շառիաթի համեմատ կարող են պղծություն ընդունել. այս պատճառավ պարսիկը կաշվեղեն հայից չէ գնում. թեև Եվրոպայից բերած կոշիկները պարսիկը առնում և հագնում է, բայց այս դեպքում նա չի ուզում մտաբերել, թե նրա պատրաստողը ինչ ազգից է... Այնուամենայնիվ հայը կարող է կոշկակարի խանութ ունենալ, երբ նա բաց է անում հայոց թաղում և միայն հայերի համար է բանում։ Այս

առանձնական արհեստավորների կարգին են սափրիչները. պարսիկը իր մազերը հային կտրել չէ տալիս։ Հայերից չկան քաղաքներում և ներկարարներ. պարսիկը յուր սենյակի պատերը հային ներկել չէ տալիս, եթե սա մի այդպիսի բան աներ, այն ժամանակ չէր կարող աղոթել այն սենյակում, որի պատերը պղծված են հայի ձեռքով։ Այս արհեստը, նույնպես և նկարչությունը շատ առաջ է գնացած պարսիկների մեջ։ Ոչ ոք այնպես գեղեցիկ չէ կարող նկարել սենյակի պատերը, որպես պարսիկը։ Այստեղ մարդ տեսնում է պարսիկին իր երևակայության ճոխ ֆանտազիայով։ Նրա պատերի վրա նկարված է յուր սիրելի ջննաթը յուր հուրիներով և փերիներով, մշտականաչ արմավենիներ, սիրամարգներ, վարդի թփեր յուր գույնզգույն սոխակներով և թութակներով, կիսամերկ կանայք կամ ածում են կամ պար են գալիս. մի խոսքով ամեն հրաշալիք, որով միշտ հրապուրվում է արևելքը...

Անձնատուր եղած երևակայական ցնորամտության, պարսիկ պարզությունը ուշադրություն չէ դարձնում իսկականի վրա. այս պատճառավ նրանց նկարների մեջ մարդ երբեք չէ տեսնում բնությունը: Այսպես է և պարսից բանաստեղծությունը, նրա մեջ ամենևին չկան բնության նկարագիրներ, նրա մեջ դուրս բերված անձնավորությունները անգամ մի տեսակ հրեշտակներ են, որ ապրում են բանաստեղծի երևակայության մեջ։

Քաղաքաբնակ հայերի գլխավոր պարապմունքներից մեկն է գինեգործությունը: Պարսիկներին որպես կրոնով արգելված է ոգելից ըմպելիքների գործածությունը, այնպես էլ արգելված է նոցա պատրաստելը։ Այս պատճառով այդ արհեստը մնացել է հայերի սեփականությունը։ Ամեն քաղաքներում հայ հասարակության ստոր մասը պարապում է գինեվաճառությամբ. թեև նրանց թույլ տված չէ ազատ և բացարձակ կերպով գինետներ բաց անել, բայց վաճառում են գաղտնի կերպով իրանց տներում։

Մինչև անգամ երկրի քրիստոնեաբնակ մասերում գինետները և գինեվաճառությունը կապված են զանազան անբարոյական գործողությունների հետ։ Պարսիկ խմողը խմում է հարբելու չափ և այնուհետև գազան է դառնում...

Պարսկաստանում այս կերպով արգելված ըմպելիքի վերաբերմամբ զեղծումներ գործողները լինում են ըստ մեծի մասին ժողովրդի անբարոյական և սրիկա դասը, ուրեմն հասկանալի է, թե ինչ տեսակ մարդիկ կլինեն հայ գինեվաճառի հաճախորդները։ Պարսկաստանում պատահած

սպանությունների, գողությունների մեծ մասը սկիզբ են առնում գինետներից։ Ամենահանգիստ լոթին (սրիկան), որ գինետուն մտնելիս գառնուկի պես հեզ էր, դուրս է գալիս այնտեղից մերկացած դաշույնը ձեռին... Այս պատճառով կառավարությունը շատ անգամ կամեցել է արգելել հայերի մի այսպիսի պարապմունքը, բայց հնար չի եղել, հայերը միշտ իրանց սրածը արել են, միշտ պատճառ են գտել ասելու. «Թույլ տվեք մեզ ունենալու մսավաճառի, մրգավաճառի, խոհարարի և հացթուխի խանութներ, այն ժամանակ մենք կթողնենք գինեվաճառությունը. մի բանով պետք է մեզ ապրել»։

Պետք է ասել, որ հայ ժողովրդի մնացյալ մասը ամենևին գոհ չէ գինեվաճառներից, որովհետև քիչ չէ պատահում, որ նրանց վնասը կրում են իրանք կամ մարդիկ են սպանվում, կամ գողություններ են լինում. այլ ժամանակ մի ամբողջ անմեղ հասարակություն պատասխանատու է լինում գործված չարիքին։

Պարսկաստանում այժմ խմողների թիվը ավելի շատ է, քան թե քրիստոնյաների մեջ։ Արևելցիք սիրում են իրենց ուղեղը գրգռել ոգելից բաներով, այս պատճառով հնարեցին ափիոն, բանգը և տեսակ-տեսակ մաջուններ. իսկ այդ բոլորի տեղը այժմ բռնում է արաղը (օղին)։ Պարսիկը սիրում է խմել թունդ ըմպելի, որ շուտ արբենա։ Խմիչքների գործածությունը մտել է մինչև անգամ և հարեմներում. պարսիկ կինը ավելի հրապուրիչ է դառնում, երբ նա արբած է... Հայ գինեվաճառները սովորել են պատրաստել նրանց համար քաղցր լիքեռներ. բացի դրանից, նրանք սովորել են պատրաստել ուրիշ տեսակ եվրոպական ըմպելիներ. այժմ Թավրիզի մաարիկան յուր հատկությամբ պակաս չէ եվրոպականից։ Պարսկաստանում խնձորից պատրաստված գինիները հիանալի են։

Պարսիկները իրանք էլ սովորել են գինի շինել. Շիրազի գինին առաջին տեղը կարող է բռնել բոլոր եվրոպական գինիների մեջ։ Նա չի վաճառահանվում, միայն մասնավոր մարդիկ պատրաստել են տալիս և պարսիկ մեծամեծներին ընծա են ուղարկում։

Խոսելով արհեստների վերաբերմամբ, չէ կարելի չհիշել և այն, որ Պարսկաստանում տակավին պահպանվել է արհեստավորների որոշ-որոշ դասեր կազմելու սովորությունը, որի նմանը դեռևս կա Թիֆլիսում համքար անունով, այլև Անդրկովկասի ուրիշ քաղաքներում պարսիկներից մնացած։ Բայց հայերը ամեն տեղ չեն մտնում պարսից համքարների մեջ. նրանք միշտ առանձին դասեր են կազմում և ունեն իրանց գլխավորը իրանց ազգից։ Այդ գլխավորները, օրինակ, գերձակապետը (խայաթ-բաշին). ոսկերչապետը (զարգարբաշին), կառավարության առջև

իրանց դասի ներկայացուցիչն են և նշանակվում են տեղական կառավարությունից։ Դրանց ձեռքով է հավաքվում արհեստավորներից տուրքը, և դրանք են ներկայացնում կառավարությունը։ Արհեստավորների գլխավորը պահպանում է և միաբանությունն յուր դասի մեջ, դատելով և վճռելով արհեստավորների մեջ պատահած վեճերը։

Հայերի գյուղական կառավարությունը: Հայ գյուղերը, լինեն դրանք արքունական թե մասնավոր կալվածատերերի սեփականություն՝ ունեն մի ռայիս (տանուտեր), որին ընտրում են իրանք գյուղացիք։ Տանուտերը ունի մի օգնական, որ կոչվում է զզիր. այս վերջինը գյուղի սատանան է, ամեն ծակը կմտնե, ամեն բան կլրտեսե և ամենի մասին զեկուցում կտա տանուտերին։ Տանուտերը գյուղի ծերակույտի գիտակցությամբ որոշում և բաժանում է հարկերը գյուղացոց վրա, հավաքում է տուրքը, ինքը ստացական է տալիս և ներկայացնում է ուր որ հարկն է։ Տանուտերը է միևնույն ժամանակ գյուղի հաշտարար դատավորը. նա վճռում է գյուղացոց մեջ պատահած վեճերը և պատժում է ոչ մանր հանցավորներին. իսկ մեծ հանցանքները դատում է կամ գյուղի տերը կամ տեղային կառավարությունը։ Եթե տանուտերը լավ մարդ է, գյուղը միշտ շահում է նրա գործունեությունից, և անկարգությունները շատ սակավ են պատահում։ Բայց վատ տանուտերը մի վնասակար գործիք է կալվածատիրոջ ձեռքում, որ զոհում է գյուղացոց բարիքը կալվածատիրոջ շահերին։ Թեև գյուղացիք իրանք են ընտրում տանուտեր, բայց վատ տանուտերին միշտ դժվարանում են փոխել, որովհետև նա վայելում է պաշտպանություն գյուղատիրոջ կողմից, որի շահերին միշտ կուրությամբ ծառայել է։ Տանուտերը իր պաշտոնից հանվելուց հետո հասարակ գյուղացի է դառնում։

Գյուղերը դատարան չունեն, այսինքն՝ մի հատկացյալ տեղ, ուր հավաքվեին և խորհրդածեին։ Խորհրդածությունները կատարվում են շատ անգամ հրապարակի վրա կամ այս ու այն աղայի դռան առջև։ Շատ անգամ տանուտերը փողոցում ման գալու ժամանակ, կամ գինետան մեջ խմելու ժամանակ և կամ մի տան մեջ հյուր եղած ժամանակ վճիռներ է տալիս։

Քսան կամ երեսուն տարի առաջ դեռ կային մելիքներ, նրանք ժողովրդից չէին ընտրվում, այլ ժառանգական ազնվականներ էին, որոնց տոհմային հնությունը ուներ մի քանի հարյուր տարվա պատմություն։ Մելիքը իշխում էր մի կամ մի քանի գյուղերի վրա, շատ անգամ մի ամբողջ մասի ազգաբնակության վրա։ Նրա իշխանությունը ընդարձակ էր և միապետական։ Մելիքները ունեին ֆարմաններ, շնորհված պարսից

շահերից, և ռոճիկ էին ստանում կառավարությունից։ Ժողովուրդը հպատակվում էր մելիքին, ինչպես յուր նահապետին։ Նա ուներ յուր ձեռքի տակ զինված մարդիկ, որոնցով կռիվներ էր հայտնում թշնամիներին, արշավանքներ էր գործում, գերիներ և թալաններ բերում։

Մելիքները այն ժամանակներում փայլում էին իրանց իշխանությամբ, երբ ավատական խանությունները Պարսկաստանում դեռ իրանց բնական միապետությունն էին վայելում։ Իսկ Աղա-Մամուդ-խանից սկսյալ, այժմյան տիրող ղաջարյան ցեղի շահերի ժամանակ՝ ավատականությունը սկսեց փոքր առ փոքր թուլանալ և վերջապես կորցնել յուր նշանակությունը, նրա հետ էլ մելիքները ընկան։

Մելիքների անկման մի երկրորդ պատճառն էլ Պարսկաստանի հայերի գաղթականությունն էր, երբ 1827 թվին քառասուն հազար հայեր անցան դեպի Նախիջևանի և Արարատի կողմերը։ Պարսկաստանում մնացող հայերը թվով քիչանալով տկարացան, և մելիքներն էլ զրկվեցան իրանց ուժերից։ Մինչև գաղթականությունը Խոյ քաղաքի զառաֆխանան (դրամ կտրելու տունը) և Սալմաստ գավառի մաքսատները հայերի ձեռքումն էին[1]։

Մելիքների մեջ իրանց գերիշխանությամբ առաջին տեղը բռնում էին Ղարադաղի մելիքները, որոնք, օգտվելով երկրի լեռնային և անտառապատ բնությունից, շատ անգամ անկախ դրություն են պահպանել։

Ղարադաղը (Հին Փայտակարանը) գտնվում է Ղարաբաղի հանդեպ. այս հայկական երկու գավառները բաժանվում են Երասխ գետով, և

---

[1] Պարսկաստանում մինչև այսօր շատ քաղաքներում դրամ կտրում են մասնավոր մարդիկ, որ կապալով վարձում են դրամ կտրելու իրավունքը, հավաքում են ուրիշ քաղաքներում կտրված դրամները և իրանք նորից կտրում։ Նրանք շահում են դրամների կշռի և ոսկու ու արծաթի հատկության մեջ. այսինքն՝ առաջվանից փոքր-ինչ թեթև են կտրում և ոսկու կամ արծաթի մեջ ուրիշ մետաղ են խառնում։ Այսպիսով դրամները հետզհետե կորցնում են իրենց արժեքը, թեև միևնույն անունները են կրում։ Այդ անդադար փոփոխությունը, որ ծառայում է մասնավոր անձանց շահերին միայն, մեծ դժվարություններ է հարուցանում վաճառականության մեջ։ Վաճառականը շատ անգամ այսօր մեկին տված մաքուր արծաթ ունեցող ղիրղռանի (այս բառը պարզ չի կարդացվում ձեռագրի մեջ։ Ծան. Աննա Րաֆֆու) տեղ, քանի օրից հետո ստիպված է ընդունել նույն փողը ավելի թեթև կշռով և ավելի անմաքուր արծաթով, մյուս կողմից, մի գավառում կտրված դրամը մյուս գավառում նույն արժեքը չունի, և կամ ամենևին չի ընդունվում։ Այս դժվարությունները բառնալու մտքով վաղուց է, որ Բարձր. Դուռը Թեհրան հրավիրեց եվրոպական դրամահատներ, կամենալով այնտեղ հիմնել ամբողջ Պարսկաստանի համար մի կենտրոնական դրամատուն և դրամների մեջ միակերպություն պահպանել։

մինչև անգամ հայոց թագավորության օրով երբեմն անկախ իշխանություններ են կազմել[1]*։*

Ղարադաղու մելիքները մեր դարու սկզբներում մտածում էին միանալ Ղարաբաղի մելիքների հետ և իրանցից թոթափել պարսկական լուծը. բայց հայոց անմիաբանությունը չթողեց գործը հաջողի։

Ղարադաղի մելիքները ընկան այն ժամանակ, երբ այդ երկիրը մտան թաթարների մի բարբարոս ցեղ, որ կոչվում է չալաբեանցիք: *Հայոց գյուղերը անցան նրանց խաների ձեռքը, և հայերը փոքր առ փոքր հպատակեցան նրանց։* Չալաբյանցոց *հարստահարությունները վերջին ժամանակներում այն աստիճան անգթության հասան, որ Ղարադաղի բնակիչներից շատերը գաղթեցին դեպի Ղարաբաղ, իսկ շատերը բնակություն հաստատեցին Թավրեզ քաղաքում։*

Ղարադաղը հայտնի է յուր հանքերի հարստությամբ. այնտեղի պղնձի և երկաթի հանքերը, կարելի է ասել, իրանց նմանը շատ քիչ ունեն ամբողջ երկրագնդի վրա։ Մինչև այսօր Ղարադաղի հայերը բովագործում են երկաթի հանքերը. նրանց մեծ մասը դարբիններ են։ Շինում են պայտեր *և տանելով զանազան քաղաքներ վաճառում են. դրանով են ապրում շատերը։*

Ղարադաղի այն կողմերում, ուր իջնում է դեպի Երասխի ափերը, որ տեղացիք կոչում են իրանց բարբառով արազքար, այսինքն՝ Արազի կամ Երասխի ափեր, ավելի ցած դիրք ունենալով, պահպանում է տաք և խոնավ կլիմա։ Այս տեղերում, հին ժամանակներից սկսած, պահպանվել է թթենու մշակությունը և շերամապահությունը. իսկ այժմ այդ արհեստը ավելի զարգացած է տեղացի հայերի մեջ։ Ղարադաղի մետաքսը յուր հատկությամբ միշտ բարձր տեղ է բռնում վաճառականության մեջ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Ասում են... Պարսկաստանը ունի մոտ 70 ֆովջ (զորագունդ), ամեն մի ֆովջը բաղկացած է 800 զինվորից, ուրեմն ամբողջ զինվորների թիվը կազմում է 56.000։ Յուրաքանչյուր զինվոր ստանում է տարեկան 5 թուման ռոճիկ. այսինքն՝ օրական 4 կոպեկ, այն ևս այն ժամանակ, երբ

[1] *Տրդատի քրոջ որդի Սանատրուկը Ղարադաղում (Փայտակարանում) կամեցավ առանձին իշխանություն կազմել, որ Խոսրով Բ-ի ժամանակ ջնջվեցավ. Փայտակարանը մինչև անգամ առանձին կաթողիկոսություն կազմեց դեռ Տրդատի կենդանության ժամանակ, Վրթանեսի օրերով, երբ Գրիգոր-աղա կոչեցյալ նորա հայրապետ ձեռնադրվեցավ։*

զինվորը գնում է մարտի. իսկ զինվորը տանը նստած ժամանակ ոչինչ չի ստանում:

Պարսկաստանը պատերազմներ չէ վարում. ուրեմն զինվորը կարող է միշտ տանը մնալ և այս չորս կոպեկ թոշակից զրկվել: Միայն մի քաղաքական նպատակ առիթ է տալիս կառավարությանը զինվորը տեղափոխել մի նահանգից դեպի մյուսը. Ատրպատականից դեպի Արաղստան, Արաղստանից դեպի Խորասան, այնտեղից դեպի Սպահան և այլն: Դա կոչվում է սաֆար: Այդ ժամանակ միայն զինվորը իրավունք ունի ստանալու օրական 4 կոպեկ: Բայց դժբախտ կոպեկը սկսած միֆանչից (գնդապետ) մինչև վերջին դահ-բաշին (տասնապետ) հանելը ձեռքից ձեռք աստիճանաբար իջնելով, մնում է երկու կոպեկ, այդ վերջինը ստանում է զինվորը:

Բայց նա ինչո՞վ է ապրում:

Նա ապրում է...

Ճանապարհներում մրգավաճառների քարավաններ են անցնում: Սարվազը (զինվորը) պատրաստ է կողոպտել. նա անցնում է այգիների, բոստանների մոտից, հափշտակում է. ճանապարհի վրա հունձքի արտերը զրկվում են իրանց բերքից, և ճանապարհորդ-քարավանները չեն համարձակվում ուղի ելանել, երբ լսում են, թե զինվորներ են անցնում: Սարվազը ուր և գնում է՝ թողնում է իր հետևից ամայություն: Քաղաքներում ամեն հանցանքի մեջ բռնվող մարդը սարվազն է: Նա բռնվում է գողության մեջ, աղջիկների, կնիկների, տղաների բռնաբարության մեջ, արբեցողության մեջ և այլն:

Սարվազը մնում է անպատիժ, գնդապետը և մյուս մեծավորները պարտավորված են պաշտպանել սարվազին, եթե չպաշտպանեն նրան, նրանք չեն կարող նրա չորս կոպեկից երկուսը անուշ կերպով ճաշակել...

Շահի գանձարանից դուրս են գալիս ամեն զինվորի համար այդ չորսական կոպեկները, և ամեն ֆոջի 800 հոգի սարվազի հաշվին: Արդյոք ունի՞ ամեն մի ֆոջ 800 հոգի սարվազ. կարող է ունենալ, պատասխանում են մեզ, այդ դժվար բան չէ:

Ամեն մի գլխավոր քաղաք հանելու ժամանակ գնդապետը (սարթիբը) յուր ֆոջի համար պիտի տա, որ կոչվում է սան: Նա վարձում է փողոցում մի քանի համալներ, հագցնում է նրանց սարվազների պաշտանազգեստը, կանգնեցնում է սարվազների շարքում և նրանով լրացնում է թիվը:

Չնայելով այսպիսի չնչին թոշակին, Պարսկաստանում շատերը ցանկանում են սարվազ դառնալ, եթե պարտադիր իսկ չէ ծառայությունը.

պատճառը հասկանալի է. սարվաղը, որպես հիշեցինք, վայելում է մի քանի կեղտոտ արտոնություններ։ Ժողովրդի մեջ ամեն մի անբարոյական սրիկան միշտ պատրաստ է սարվաղի Փանողան վզին ձգել և ամեն տեսակ լրբություններ գործելու իրավունքը ստանալ։ Նշանավոր մարդիկը ես ցանկանում են իրենց որդիքը տալ սարվաղներ լինելու այն նպատակով, որ նոքա ունենալով սարվաղներ, մի կողմից, ազատվում են ուրիշ սարվաղների հարստահարությունից, մյուս կողմից, նրանք կարողանում են ճնշել ուրիշներին։

Սարվաղների համար չկա որոշ ժամանակ, թե քանի տարի պիտի ծառայեն։ Նա յուր կյանքում մնում է միշտ սարվաղ, եթե մի քանի տասնյակ թուման յուր գնդապետին չվճարե իրան ազատելու համար։

Սարվաղների համար զինվորական կրթություն չէ պահանջվում. սարվաղը կարող է լինել ամեն մի մարդ, յուր հասակի ամեն մի աստիճանում և կարող է առանց նախապատրաստական մարզության վարել յուր պաշտոնը, փույթ չէ, թե նա չգիտե թե հրացանի գնդակը որտեղից են ձգում և փիստոնը որ կողմից դնում։

Սարվաղին չի կարելի ճանաչել՝ քանի որ նա յուր տանն է. նա ման է գալիս ժողովրդի հասարակ հագուստով։ Նա հագնում է յուր համազգեստը, երբ որևիցե քաղաքի ալակափոխի բակում պիտի տար յուր սանը (համարը)։

Առանց ծիծաղի չէ կարող մարդ նայել մի այսպիսի խառնիճաղանջ բազմության վրա. մինը կարճ, մյուսը երկար փափախով, մինը լապչինով, մյուսը կոշիկով, մինը տրեխով, մյուսը ճոշերով, և այլն։

Ես ներկա էի մի այսպիսի սանին, երբ սուլթանները (հինապետները) խնամքով աշխատում էին ուղիղ կերպով շարել սարվաղները. Հինապետը մի սարվաղին ասաց.

— Ահմադ, ուղիղ կանգնիր։

— Ինչո՞ւ ես միայն,— պատասխանեց Ահմադը կոշտությամբ.— թող Հասանն էլ ուղիղ կանգնի, որ ես էլ կանգնեմ։

Տասնապետը ասում է մի այլ սարվաղին.

— Ղասըմ, ոտքդ ուղիղ դիր։

— Սուտ ասողի հոր գերեզմանը անիծած, եթե ուղիղ չէ,— պատասխանում է Ղասըմը...

Զինվորական հնազանդությունը (դիսցիպլինա) այդ աստիճանումն է պարսից զորքի մեջ։

Ինչ որ վերաբերում է համազգեստի ձևերին, դա կարող է ամենա-

ծիծաղելի տարազը դառնալ մասկարադ բալերում (դիմակահանդեսներում)։

Բայց թե ինչպես են ընտրվում զինվորապետները, բավական է հիշել մի երևելի պատկերահանի մի ծիծաղելի կարիկատուրան։ Նա նկարել է Մաղուա Ալի խանի արու սերունդը, որոնք իրանց մոր արգանդից մինչև կեսը ծնված միջոցին հայտնվում էին սարթիբի (գնդապետի) էպոլետները ուսերին կրած, արևի և առյուծի շքանշանը շլինքիցը քարշ ընկած։

Զորապետի որդին դառնում է զորապետ, իշխում է յուր հոր ֆովջերին, եթե նրան այդ պաշտոնը ստանալու համար կնստեր մի քանի հարյուր թուման։ Փողի շնորհիվ նա ոչ միայն կարող է դառնալ սուլթան, յավար, սարհանգ, սարթիփ, միրփանջ, ամիրթուման և այլն, նույնիսկ ոչինչ չգործած նրան հեշտ է ստանալ փայլուն տիտղոսներ, որպես սուջայվուշ-մուլք (տերության քաջը) մասիր-ուլ-դովլա (տերության սուրը) կամ մուշարդ-դովլա։

Մի քանի տարի առաջ մի զորապետ Մավրի պատերազմում իր ֆովջերով գերի ընկավ թուրքմենների ձեռքը, կռվի դաշտից փախչելու ժամանակ։ Նա հարուստ լինելով կարողացավ ազատել յուր անձը մի քանի հարյուր թումանով։ Բայց Թեհրան գալուց շահից ստացավ սուջայվուշ-դովլա (տերության քաջը) տիտղոսը։

Սարթիբը (ժեներալը) ստանում է պարսից կառավարությունից 800 թուման ռոճիկ, ասել է 2300 ռուբլի ռուսաց փող։ Այդ գումարը Սաֆարի ժամանակ նրա առավոտյան նախաճաշիկի փողը չի լինի։ Նա ծախս է անում մի քանի հազար թուման. այսուամենայնիվ նա չէր հրաժարվելու յուր ֆովջից, եթե այդ 800 թումանն էլ չտային և իրանից մի քանի հազար ևս պահանջեին։

— Ինչո՞ւ։

Խիստ երկար կլիներ մանրամասնաբար գրել այն բոլոր եկամուտների մասին, որ նա շահում է յուր ձեռքում ֆովջ ունենալու միջոցով. բավական է հիշել, որ սարթիբը կալվածատեր է, գյուղեր ունի, ուրեմն և գյուղացի ռայաթներ (հպատակներ) ունի։ Նա գտնվելով զինվորական պաշտոնի մեջ, կարողանում է յուր գյուղորայքը յուր կամքի ուզածին պես կառավարել. այսինքն՝ հարստահարել խեղճ շինականներին և ծծել նոցա կենսական ուժը մինչև վերջին կաթիլը։

Մի քանի գաղղիացի մոլաշրջիկ աստիճանավորներ, չգիտեմ ինչ դիպվածով Պարսկաստան գալով, և ռուսաց ապստամբած զորապետ

Սամսոնն փոքրիշատե մոտից Պարսկաստանում զինվորական կրթության մի քանի հասարակ ձևեր։

Ես տեսա այդ ֆովջերից ամենակրթյալը, որ կոչվում է խասսա ֆովջ (ընտիր գունդ). ինձ թվում էր, թե գյուղացի երեխայք հավաքված զինվորական խաղեր էին ներկայացնում։

Քանի տարի առաջ Նասր-էդդին շահը կազմեց մի ֆովջ հայերից և ասորիներից։ Աչքի առաջ ունենալով քրիստոնյաների հավատարմությունը, նա կամենում էր նոցանով շրջապատել յուր պալատը։ Այդ գունդի բոլոր զորապետները գեներալից սկսած մինչև վերջին տասնապետը հայեր էին։

Զարմանալի բան, պարսից զինվորների անբարոյականությունները երևեցան և հայ զինվորների մեջ. նոքա սկսեցին նեղացնել ոչ միայն օտարազգիներին, այլև իրանց համազգիներին. մինչև հայ ժողովուրդը զզվեցավ և խնդրեց բարձրագույն կառավարությանը վերացնել զինվորությունը իրանց միջից։

Սարվազը սաֆարում պարտավոր էր յուր հացը պատրաստի առնել բազարից, այդ պատճառով տերությունը չէ մտածում ունենալ զորքերի համար հացի ամբարներ։

Սարվազը ապրում է յուր տանը, այդ պատճառով տերությունը չէ մտածում շինել նոցա համար մարտկոցներ։

Գլխավոր քաղաքներում, որպիսին են Թեհրան, Թավրեզ, որտեղ կան գիշերապահ զինվորներ, սարվազների համար շինված են մի տեսակ ասիական քարվանսարաների նման տներ, որոնք կոչվում են սարվազ-խանաներ: Մինչև այն աստիճան կեղտոտ, որ նկատված է, խոլերան Պարսկաստանում առաջին անգամ հայտնվում է սարվազխանաներում։

Մի քանի տարի առաջ կառավարությունը սարվազներին ոչինչ թոշակ չէր տալիս։ Երբ սարվազը գնում էր սաֆար, նա ստանում էր հանդիպակաց քաղաքից կամ գյուղից շիլա և սուրսաթ, այսինքն՝ ուտելիք։

Ասել պետք չէ, որ առանց պատճառների ևս ժողովուրդը կողոպտող սարվազները մի այսպիսի առիթով որքան կչարչարեին խեղճ ժողովրդին, մինչև ամիր, Նորա հիշատակը ի բարին եղիցի, վերացրուց այդ օրենքը, որ մնացել էր Պարսկաստանի բարբարոսական հնությունից։

Զինվորական երաժշտություն: Երաժշտություն... Ի՞նչ գրեմ դրա մասին։ Երևակայեցեք սոխակը, ագռավը, կատուն, ավանակը և այլ դոցա նման կենդանիներ հավաքված միասին կամենային երաժշտություն կազմել. նորանցից ամեն մինը առանց տակտի յուր ձայնին զոռ էր տալիս. որպիսի՜ ներդաշնակություն կդուրս գար. ահա՛ քեզ զինվորական մուզիկան։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրեժ, դեկտեմբեր

Թե՛ Եղիշեն և առավելապես Եզնիկը թողել են մեզ բավականին հարուստ տեղեկություններ հին արևապաշտների կրոնքի և նոցա սովորությանց մասին, այնուամենայնիվ, նոքա չեն կարողանում մեր հնախույզի քննադատությանը լիակատար բավականություն տալ։ Նոքա գրել են այնքան, որքան վերաբերում էր յուրյանց աշխատության նյութին։ Իսկ այժմյան գաբրների, որպես հին արևապաշտների, կյանքի ուսումնասիրությունը կլրացնե այն թերությունները, ինչ որ պակաս է թողել պատմությունը, որովհետև այս ցեղը բոլորովին անփոփոխ է մնացած յուր նախնական դրության մեջ։

Եթե ընդունենք, թե հայոց ազգը առաջ է եկել արիական ցեղերից, թե նա պաշտում էր նույն կրոնքը, ինչ որ այժմ գաբրն է պաշտում, թե նորա լեզուն նույն ծագումից է, որով այժմ գաբրն է խոսում, կհամոզվինք, թե գաբրի կյանքի, դրականության և լեզվի (որ մաքուր զանդիկ բարբառն է) ուսումնասիրությունը խիստ պայծառ լույս կարող է ձգել մեր հին դյուցազնաբանության վերա, որ դեռ պարզված չէ, մեր լեզվի ֆիլոլոգիայի վերա, որ ամենևին ուսումնասիրված չէ, և հետևապես մեր պատմության վերա, որ շատ տեղերում մութ է։ Որովհետև մեր նախնիքը, սկսյալ ամենահին ժամանակներից, անընդհատ հարաբերություններ են ունեցել արիական ցեղերի հետ, որպիսի էին՝ պարսիկները, պարթևները, բակտրիացիք, մարք, և այլն, իսկ այդ ազգերի ներկայացուցիչներն այժմ մնում են Պարսկաստանում յուրյանց նախնական ավանդություններով և սովորություններով։

Մահմեդականությունը պարսից մեջ ոչնչացրեց հին դրականությունը, որպես քրիստոնեությունը մեր մեջ. բայց նրանք ավելի բախտավոր եղան մեզանից նորանով, որ նոցանից պահպանվեցավ մի ցեղ, որ ազատ մնաց մահմեդականությունից և այսպիսով կարողացավ պահպանել յուր հին դրականության մի մասը։ Դոքա գաբրներն են։ Իսկ մեր հեթանոս եղբայրներից դժբախտաբար և ոչ մինը չմնաց մինչև մեր օրերը։

Իսկ այն, որ մենք պետք է որոնեինք մեր հեթանոս եղբայրների մեջ, այժմ կարող ենք գտնել գաբրների մեջ, որովհետև դոքա նույնպես ազգակցություն ունեն մեզ հետ։

Հնդկաստանի պարսիկ արևապաշտների մեջ այժմ կազմվել է մի ընկերություն բարեգործական և ուսումնական նպատակով, և նրանց

կողմից ուղարկված է Թեհրան մի գործակալ Մանուչի անունով, որ մի կողմից հոգս է տանում յուրյանց պարսկաստանցի եղբարց՝ գաբրների նյութական կարոտությանը, պաշտպանում է նորանց զանազան հալածանքներից, մյուս կողմից հավաքում է նրանց մեջ գտնված հին գրքերը։ Մանուչին մեծ եռանդով ուսումնասիրում է Խորենացին և հայոց այլ պատմությունները, որոնք կարող էին պարսից հին պատմության մութ տեղերը պարզել։ Որովհետև իրանք պարսիկները (մահմեդականները) հին պատմություն չունեն, և ոչ հետաքրքրվում են գիտենալ յուրյանց մինչ-մահմեդական անցյալը։ Ֆիրդովսու գիրքը, որ այդ մասին մի թանկագին հարստություն կարող է համարվիլ, այն ևս, որպես առասպելավիպական բանաստեղծություն, զուրկ է պատմական ճշտությունից։ Ուրեմն, մի գաբր ուսումնականի համար, որպես է Մանուչին, խիստ ձեռնտու է որոնել յուր ազգի պատմությունը ավելի հին արևապաշտների և հայոց գրքերի մեջ, քան պարսիկների մեջ, ուր ամեն ինչ, որ հեթանոսական էր, ջնջեց մահմեդականությունը։

Ցանկալի կլիներ, որ մերայինք նույնպես հետևեին Մանուչի օրինակին և փոխադարձաբար սկսեին ուսումնասիրել գաբրների գրականությունը, նոցա լեզուն և ավանդությունները, մեր պատմությունը հարստացնելու, և մեր լեզվի ֆիլոլոգիային նյութ տալու նպատակով։ Իսկ ինչ որ վերաբերում է այս հոդվածի հեղինակին, նա արդեն սկսել է գործել այդ մասին, որքան կներեին հանգամանքները, որքան թույլ կտար յուր դրությունը...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թավրիզ, հունվարի 24

Մինչդեռ Տաճկաստանը յուր հոգեվարքի տագնապի մեջ քրիստոնյաներին նոր արտոնություններ, նոր իրավունքներ է շնորհում, և մահմեդականներին հավասար ազատություններ է տալիս,, որ այսպիսյավ յուր գլխի վերա պտտավող փոթորիկը հեռացնե, և կրկին յուր զոհերի արյունը ծծելու բախտին վերադառնա, Պարսկաստանի մեջ քրիստոնեից դեմ եղած եղեռնագործությունները օրըստօրե սարսափելի կերպարանք են ստանում։

Հիշենք մի անցք։

Ղարադաղի Քեյվանու գավառի Սրղըն կոչված հայաբնակ գյուղը դիվանի գրքերում նշանակված ունի 25 թումեն (70 ռուբլ.) արքունի հարկ, որը նա պարտավոր էր վճարել կառավարությանը։ Բայց գյուղի Բաղըր-խան անունով տերը փոխանակ հիշյալ գումարի (70 ռուբլ.), գյուղացիներից մի քանի ամիսների ընթացքում փայտի և մորակի զորությամբ ստանում է 2550 ռուբլ.։ Այդ բավական չէ, կրկին սկսում է Բաղըր-խանը պահանջել գյուղացիներից 1800 ռուբլ.։ Ծեծը, բանտը և ամենատեսակ չարչարանքները չեն կարողանում դուրս բերել արդեն աղքատացած գյուղացիներից վերջին գումարը։ Չեղած տեղից վճարել մի այսպիսի նշանավոր գումար, անհնարին բան էր։ Բռնավորը, սպառելով յուր բոլոր տանջանքները խեղճ գյուղացիների վերա, երբ տակավին տեսնում է յուր նպատակը չկատարված, ձեռք է առնում մի ուրիշ միջոց, մի չար միջոց, որի գործ դրվելու ժամանակ հայը չէ խնայում ոչ միայն յուր գույքը, այլև յուր հոգին... Չարագործը ձեռնամերձ է լինում գյուղացիների կրոնական սրբություններին...

Ս. ծննդյան օրը, երբ գյուղի ժողովուրդը հավաքված է լինում

եկեղեցում, երբ սեղանի վրա կատարվում էր ս. մկրտության խորհուրդը, հանկարծ մի խումբ խանի մարդիկներից թափվում են եկեղեցում: Նրանք ջարդուփշուր են անում խաչերը, խորտակում են բոլոր եկեղեցական սպասները, բռնում են քահանային և ժողովրդի ծերերին, ըս-կըսում են ծեծել, սպառնալով, թե բոլորովին կմորթեն նույն տաճարի մեջ, եթե չուզենան տալ խանի պահանջած արծաթը: Եվ մի քանի սրբապիղծ չարագործություններից հետո, որոնց հիշելն անգամ սարսափ է բերում, քահանային մի քանի ծերերի հետ տանում են բանտարկում, իսկ մյուսներին հաջողվում է փախչել:

Կրոնքը հայի զգալի կետն է, նա համբերող է, քանի զրկանքը չէր վերաբերում այս կետին. իսկ երբ թշնամու սրբապիղծ ձեռքը սկսավ այնտեղ ևս շոշափել, այն ժամանակ նորա ստրկացած ոգին զարթնում է, բողոք է բարձրացնում...

Բացի խանի բանտումը բռնվածներից, գյուղի բոլոր տղամարդիկը հավաքվում են և ճանապարհ են ընկնում դեպի Դավրեժ քաղաքը, բողոքելու այս բռնակալության դեմ: Նրանց մեծ մասը ցրտի սաստկությունից սառչում են և մնում են ճանապարհի վրա զանազան տեղերում, իսկ 51 հոգի հասնում են Դավրեժ քաղաքը: Նոքա Անդրեաս արքեպիսկոպոսի առաջնորդությամբ դիմում են Ատրպատականի կառավարության գլխավոր ներկայացուցչի՝ Սահաբ-դիվանի մոտ: Հայոց առաջնորդը, պատմելով անցքը և նորա առիթ տվող պատճառները, ավելացնում է, եթե գյուղացիներին բավականություն չտրվի, և չարագործը ըստ արժանվույն չպատժվի, նա ստիպված կլինի դիմել Պարսկաստանում գտնված եվրոպական տերությանց միջամտությանը: Սահաբ-դիվանը հանգստացնում է առաջնորդին և խոստանում է անել պարտուպատշաճ տնօրինությունները: Ճշմարիտ խոստովանել պետք է, որ պետության այս բարձր պաշտոնակալն, յուր Ատրպատական գալու օրից, ամեն գործերի մեջ ցույց է տվել արդարություն և խղճմտանք, և մանավանդ քրիստոնյաներին վերաբերյալ դեպքերում նա միշտ արդարադատ է գտնվում և ողորմած:

Եվ այս դեպքում նորին վսեմության գործ դրած միջոցները բավականին ազդու պետք է համարել. նա անցքը մանրամասնաբար Թեհրանի Բարձ. Դռանը հաղորդելեն հետ, իմացում է տալիս նորին բարձրությանը՝ թագավոր ժառանգին, որ նույնպես Դավրեժումն է գտնվում, և երկուքը միասին Ղարադաղ մարդիկ են ուղարկում սաստիկ հրամանով, որ Բաղըր-խանը բերվի և յուր պատիժը կրե:

Այժմ հարցն գորանումն է, արդյոք կարելի՞ է այս գազանը դուրս

քաշել յուր բույնից։ Բաղըր-խանը և նորա նման Ջալաբխանի կոչված խաները Ղարադաղի լեռների աստվածներն են, իսկ խեղճ ժողովուրդը՝ նոցա թշվառ զոհը։ Շատ ժամանակ չէ անցել, որ Հայոց եկեղեցվո սրբությունը շան վզից քարշ տվող շարագործը մնաց անպատիժ, նա ևս Ղարադաղի գաղաններիցն էր...

Բայց հուսով ենք, որ նորին վսեմության Սահաբ-Դիվանի օրերով այսպիսի եղեռնագործությունք, որ պատիվ չեն բերում մի բարեկարգվելու շավղին մեջ ընթացող տերության, բոլորովին բարձված կլինին, խաղաղության մեջ դրվելով գյուղացիների վիճակը, որի գլխավոր պատճառն է հարկերի անկարգ դրությունը և կալվածատերերի հարստահարությունը։

ՄԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԲՐՈՇՈՒՐ

Այս օրերումս լույս տեսավ մի պարսկերեն բրոշուր, որը պարսից գրականության մեջ մի բոլորովին նոր և գեղեցիկ երևույթ համարվելու է։ Բրոշուրի հեղինակն է մի ժամանակ Թիֆլիսի գեներալ կոնսուլ, հետո Փարիզի շարժե-դաֆեր, իսկ այժմ Դավրեժի արտաքին գործոց վեզիրի պաշտոնակալ Միրզա Յուսուֆ խանը։ Երկար ժամանակ ապրելով Եվրոպայում և ծանոթանալով լուսավոր աշխարհի այժմյան կրթության և առաջադիմության գործին, բրոշուրի հեղինակը խիստ պայծառ կերպով նկարագրում է յուր գրքույկի մեջ Եվրոպայի լուսավորության պատկերը և, նույնը համեմատելով Պարսկաստանի տխուր և թշվառ վիճակի հետ, ցույց է տալիս նորա անմխիթար դրությունը, թե որքան ետ էր մնացած նա մարդկության ընդհանուր առաջադիմությունից։ Հիշյալ հետազոտության մեջ հեղինակը դիտողություններ է անում Պարսկաստանի բոլոր քաղաքական և հասարակական երևույթների վրա և ցույց է տալիս, թե նորա մինչև որ աստիճան անկարգ, վնասակար և վայրենական էին։

Մի այսպիսի աշխատությունը հրապարակ հանել, դեռևս հնամոլ և նախապաշարմունքներով լի Պարսկաստանում արդարև պահանջում է հեղինակի կողմից մեծ անձնավստահություն, բայց նա այնքան խոհեմ է եղել, որ յուր բոլոր ասացվածները ապացուցել է Ղորանից բերած սրբազան վկայություններով։ Այս ձևը ունի յուր առանձնական օգուտը այն կողմից, որ պարսից մոլլաները (որոնք կուրորեն հալածում էին եվրոպական կրթությունը) գոնեա կհասկանան, թե լուսավորությունը իսլամի կրոնքին ընդդեմ ոչինչ չունի, թե եվրոպական կրթությունը

հետևող մահմեդականը դարձյալ կարող է մնալ որպես ուղղափառ մուսուլման։

Ճշմարիտ կրոնքը երկյուղ չունի գիտությունից և հետևապես լուսավորությունից։ Բայց եթե մի կրոնքի բուն հիմունքը և նորա բարոյական սկզբունքը վարագուրվում են արտաքին ծիսապաշտական քողով, նա միշտ երկյուղ ունի գիտությունից, որպեսզի նորա վարագույրը չըպատռվի, և նորա այլանդակությունը չերևա։ Սույն ուղղությանն էր հետևում մի ժամանակ քրիստոնեությունը. նա ևս թշնամի էր գիտությանը, հալածում էր Կոպեռնիկին և նորա նման մարդիկը։ Բայց երբ որ մարդկությունը սկսավ այլապես հասկանալ քրիստոնեության գաղափարը, քան թե ցույց էր տալիս նորան կաթոլիկ կղերը, այնուհետև համոզվեցավ, թե մարդը կարող է լինել և ճշմարիտ գիտնական, և ճշմարիտ քրիստոնյա, որպես Նյուտոնը՝ երևելի աստղաբաշխ և ջերմեռանդ աստվածապաշտ։

Սույն կռվի մեջն է այժմ մահմեդական Պարսկաստանը...

Քաղաքիս պաշտոնական ծառայողներից մեկը, որ ցեղով սեիդների (մարգարեի որդիների) տոհմին էր պատկանում, հանդիմանություն է ընդունում մեծ մոլլաների մեկից, թե ինչո՞ւ նա հագել էր ևերոպացու ձևով նշանակված համազգեստը, թե այդ ընդդեմ էր իսլամի դավանությանը, որովհետև մի սեիդ պետք է պահպանի յուր ցեղին հատուկ հագուստի ձևերը և ոչ եվրոպական նեղ պանտալոն հագնե...

Յուրաքանչյուր մոլլա հիշյալ համեմատության կետիցն է նայում եվրոպական կրթության և իսլամի վերա։

Բայց Ղորանը, որպես ցույց է տալիս Միրզա Յուսուֆ խանը յուր բրոշուրի մեջ, չէ արգելում յուր հետևողներին այն ձգտողությունները, որ նպաստում են մի ազգի մտավոր և բարոյական առաջադիմությանը։ Նա բովանդակում է յուր մեջ բոլոր հրահանգները, որ տանում են մարդը դեպի կատարելագործություն, դեպի այն ամեն բաները, ինչ որ բարի և ազնիվ է, ինչ որ նպաստում է կյանքի երջանկությանը։

Որպես բնության, նույնպես և կյանքի մեջ ամեն մեկ իրականություն արտահայտվում է արտաքին երևույթներով, ուր չկա երևույթ, այնտեղ և չկա իրականություն։ Նույնպես Ղորանը մինչև այսօր պետք է արտահայտված լիներ յուր կենսագործող զորությամբ, եթե կային նորա մեջ ընդհանուր մարդկային կրթողական ուժեր։ Բայց նորա հետևողների մեջ մենք հակառակ երևույթն ենք տեսնում։ Այսօրվա օրս մահմեդականն աշխարհի մեջ յուր դրությամբ ամենաթշվառ ազգերից մեկն է ներկայանում։

Եթե ընդունենք, թե կրոնքները ծագում են ազգերի բնական և պատմական կյանքից, թե նոքա արտահայտություն են նոցա հոգեկան զորությունների, բոլորովին հասկանալի կլինի վերոհիշյալ երևույթների պատճառը։ Վերաբերենք այս ճշմարտությունը այն ցեղին, որի մասին է մեր խոսքը, դա սեմիտական ցեղն է։

Սեմիտը, անապատի հարազատ որդին, նույնն է, ինչ որ յուր շըրջապատող բնությունը։ Նա սիրում է մենավորություն, առանձնություն, որպես մենավոր օազիսը անապատի ամայության մեջ։ Նա յուր վրաններով տարբերվում է անբնակ աշխարհի ընդարձակության մեջ, որպես թուֆանը տեղափոխում է ավազակույտ բլուրները մի տեղից մյուս տեղ, բայց երբեք յուր անապատի սահմանից դուրս չէ գնում...

Սեմիտն յուր բոլոր մտադրությանց մեջ ինքնասեր և եսական է։ Եսականը սիրում է յուր չորեք կողմում տեսնել միշտ անապատ, որպեսզի ինքն միայն երևա, ինքն միայն տիրե։ Նա բացասական է ամեն բանի մեջ, ինչ որ յուր շրջանից դուրս է, ինչ որ չէ հպատակում յուր անձնական եսին։ Այստեղից հասկանալի է, թե ինչո՞ւ բոլոր ազգերից առաջ սեմիտական ցեղերի մեջ ծագեց միաստվածության գաղափարը։

Բազմաստվածությունը ավելի հարակցական բնավորություն ունեցող ազգերի ոգու ծնունդ է։

Բայց սեմիտի աստվածը եսական է. նա միապետ է։ Նա չէ կարող համբերել ուրիշ աստվածների, որովհետև կրում է յուր վերա այն երկրի և այն ազգի հատկությունները, որից պաշտվում է։ Եհովան հրեից համար միմիայն Իսրայելի աստված է, իսկ ալլահը՝ արաբների համար նույնն է։ Մինը տալիս է յուր մարգարեի ձեռքում սուրը, հրամայում է կոտորել, ոչնչացնել բոլոր օտար ցեղերը և բնակեցնել սուրբ ժողովուրդը կաթն և մեղր բխող երկրում։ Մյուսը նույն սուրը տալով մի ավելի ոգելից մարգարեի ձեռքում, հրամայում է Իսլամի պետությունը տարածել ամբողջ աշխարհի վրա։

Որպես սեմիտական ցեղի աստվածը չէր կարող համբերել ուրիշ աստվածների, նույնպես սեմիտական ցեղը խոտում է օտար ազգերին։ Այստեղից առաջ եկավ սույն ցեղերի առանձնահատկությունը, նոցա փակված կենտրոնականությունը յուրյանց մեջ։ Կտրվելով օտար ազգերի հետ հարաբերությունից, թեև ամենից առաջ ծաղկեց նոցա մեջ արհեստը, ճարտարությունը, գիտությունը, բայց դոքա չանցան մի նշանակյալ սահմանից, որքան թույլ էին տալիս նույն ցեղի մտավոր ուժերը, որովհետև չունեցան արտաքուստ մղող և առաջ տանող դրդիչներ։ Այս պատճառավ տիրեց նոցա մեջ փտեցուցիչ անշարժությունը և

հետամնացությունը ընդհանուր մարդկային առաջադիմությունից։ Եվ այդ ցեղերն ընկան և համարյա ոչնչացան։

Միտ դնելով սեմիտական ցեղերի եսական բնավորությանը, նոցա մեջ աստվածային գրքերը, որպես բարձր և վերին հրահանգների հայտնություն, չէին կարող ունենալ ընդհանուր մարդկային սկզբունքներ. նոքա պետք է լինեին սահմանափակ և միմիայն նույն ազգերի շահերին ծառայող, որոնց համար ավանդված էին։

Մովսեսի Եհովան մտածում է միայն Իսրայելի համար, իսկ Մուհամեդի ալլահը՝ իսմայելի ցեղի արաբների համար։ Թովրաթը և Ղորանը նույն նպատակներին են ծառայում։

Եվ այլապես լինել կարող չէր։

Մարգարեն յուր ժամանակի մտածության ներկայացուցիչն է. նորա խոսքը յուր ժամանակի հասարակական պահանջների արտահայտությունն է։ Նա խոսում է այն, ինչ որ ազդում է նորա մեջ ժամանակի ոգին։

Ժամանակի ոգին նույնն է, ինչ որ մի ժողովրդի հոգեկան զորությունների կատարելատիպը՝ նորա աստվածը։ Մարգարեն սույն իսկ աստծո թարգմանն է, երկուսի մեջ կա անմիջական կապ, նորա խոսքը աստծո բանն է, որ ապա դառնում է օրենք, պատգամ և մեծ ներգործություն է ունենում ապագա սերունդի հոգու և նրա կյանքի ձևերի վերա։

Բայց մի ազգ, որպիսի է պարսիկը յուր արիական ծագումով, յուր ամեն ազգերի հետ հարակցող բնավորությամբ, չունի սեմիտական ցեղերին հատուկ առանձնությունները։ Պարսիկը բնավորությամբ առաձգական (էլաստիկ) է, նա ընդունակ է, որպես բոլոր հնդկագերմանական ցեղերը, յուրը օտարին հաղորդելու և օտարինը յուր վերա ստանձնելու։ Մի այսպիսի ազգի կյանքի մեջ հրո և սրո զորությամբ պատվաստվելով սեմիտական ցեղին հատուկ կրոնքի վարդապետությունը, հարկավ, չէր կարող բոլորովին հեղաշրջել և կերպարանափոխել նորա դարերով կազմակերպված հասարակական կյանքի ձևերը և նորա մտածության հայացքը։ Մահմեդականությունը այս ազգի վերաբերությամբ պետք է աներ նշանավոր զեղչումներ, որովհետև Ղորանը նորա բուն ազգային հրահանգը չէր։

Այսպես էլ եղավ սկզբից։ Մենք կհիշենք մեկը միայն։

Պարսիկը, ընդունելով մահմեդականությունը, պահպանեց յուր մարմնավոր-պետական իշխանությունը, որ բոլորովին ընդդեմ էր իսլամի, եթե կարելի է այսպես կոչել, երարխիական ոգուն, որը միացնում

է բոլոր իշխանությունները կրոնքի պետի կամ նորա հաջորդների մեջ։ Իսլամը քահանայապետական զորություն է, որպես պապի թագավորությունը։ Նորա առջև փշրվում և խորտակվում են ամեն աշխարհային ուժեր։ Բայց Պարսկաստանը ընդդիմացավ նորան։ Այստեղից առաջ եկան երկու միմյանց հակառակ իշխանություններ՝ մինը շահի իշխանությունը, մյուսը կրոնքի ներկայացուցչի՝ Մուշտեհիդինը, որ սկսան առաջ ընթանալ բոլորովին տարբեր ուղղություններով։ Այս երկու ուղղությունների յուրաքանչյուրն առաջնորդվում է յուր հատուկ օրենքներով, մինը հիմնված Ղորանի հրահանգների վրա, մյուսը՝ ժողովրդական սովորությունների և ամբոխի մեջ օրենքի զորություն ստացած նահապետական ավանդությունների վերա։ Այստեղից ծագեց անհամաձայնությունը շարիաթի և շահի դիվանի մեջ, և հետևաբար պատճառ տվեց մոլլաների, որպես շարիաթի ավանդապահների, մրցությանը շահի կառավարության դեմ։

Միացնել այս երկու միմյանց հակառակ տարրերը այնքան անկարելի է, որպես իրականությունը վերացականության հետ. մինը նայում է դեպի գերեզմանի մյուս կողմը՝ դեպի մթին հավիտենականությունը, իսկ մյուսը՝ դեպի լուսավոր և պայծառ աշխարհը։

Այս կետից նայելով, մենք Միրզա Յուսուֆ խանի յուր գրքի մեջ ընտրած եղանակը ոչ այնքան նպատակավոր ենք համարում, որ փոխանակ ճշմարտությունը մերկանդամ կացուցանելու, վարագուրում է նորան կրոնական դիմակով։ Որովհետև նորա, յուր ասացվածները հաստատող, Ղորանից բերած վկայությունները, եթե մի որևիցե մոլլայի մեկնությանը ենթարկեինք, հազիվ թե կհասցնեին ցանկացյալ նպատակին...

Պատմության փիլիսոփայությունը մեզ ուսուցանում է, որպես մի երկիր, երբ յուր աշխարհագրական դրությամբ հեռու է գտնվում ծովերից, երբ նա շրջապատված է բարձր և անմատչելի լեռների շղթաներով, որոնք դժվարացնում են նորա բնակչաց հարաբերությունները օտար ազգերի հետ՝ միշտ անընդունակ է կրթության, նույնպես մի կրոնք, երբ սահմանափակում է մի ազգի հարաբերությունները օտարների հետ, նորան անընդունակ է կացուցանում լուսավորության։ Որովհետև ամեն մի շրջափակ դրություն՝ կյանք, շարժողություն և առաջադիմություն չունի։ Հնդկացին միշտ կմնա խավարի մեջ, պատճառ, յուր շրջանից դուրս ամեն ինչ պիղծ է յուր համար։ Այսպես է և մահմեդականը յուր Ղորանով։

Մահմեդականությունը, որպես տեսանք, իբրև սեմիտական ցեղի

հոգու ծնունդ, ունի առանձնական բնավորություն, նա չէ կարող կրթության գործի մեջ օտարամուտ լուսավորության հետ հաշտվել. նա աններողամիտ է դեպի ամեն ինչ, որ յուր վերա չէ կրում արաբական դրոշմը։

Իսկ Պարսկաստանը բախտավոր է նորանով, որ, ընդունելով իսլամը, բոլորովին չենթարկվեցավ նորա ազդեցությանը, այլ պահպանեց յուր ազգային ոգին։ Նա չեղավ քահանայապետական (խալիֆայական, իմամաթ) թագավորություն, որ տարածվում էր մի ժամանակ Բաղդադից սկսյալ մինչև Գրենադա։ Պարսկաստանը պահպանեց յուր տոհմային-պետական իշխանությունը, որ կայացած է շահի գլխավորության մեջ։ Շա՛հը, միայն շա՛հը կարող է կրթությունը ներս բերել յուր երկրի մեջ, առանց մոլլաների միջամտության, առանց ուշ դնելու կրոնական խոչընդոտներին։ Այն ժամանակ միայն նա հաստատուն դիրք կստանա յուր բարձրագույն զորության մեջ։ Այն ժամանակ միայն նորա ժողովուրդը ունենալու հաց կունենա և խաղաղ կյանք կվայելե։ Թող մոլլան գնա յուր ընտրած ճանապարհով, թող նա թուլե ժողովուրդը ջեննաթի կախարդական երջանկություններով, թող նա հրապուրե ուղղափառ մուսուլմաններին դրախտի հուրիներով և փերիներով, այդ բոլորը կանհետանան գիտության լույսի առջև։ Մեր օրական խնդիրն այս է, որ պարսիկն այսօրվա օրս ունենալու հաց, հագնելու հալավ և հանգիստ օթևան չունի...

Բավական չէ (որպես Մ. Յուսուֆ խանը յուր գրքի մեջ) նկարել Եվրոպան յուր բոլոր գեղեցիկ կերպարանքով, թե որքան առաջ է գնացել այնտեղ կրթությունը, որքան հանգիստ է ապրում այնտեղ մարդը։ Բավական չէ երեցնել Պարսկաստանը յուր թշվառ կազմակերպությամբ, ուր ոչ սեփականության ապահովություն կա և ոչ պատվի սըրբություն։ Այլ հարկավոր է բացատրել առաջինի առաջադիմության և վերջինի հետամնացության բուն պատճառները։ Այս կետի մեջ Մ. Յուսուֆ խանը լուռ է մնում։ Այս պատճառով, մի մոլլա կարդալով նորա գիրքը, յուր բերանում միշտ պատրաստ ունի մի շատ հասարակ պատասխան, թե «սատանան ունի այնքան վարպետություն և հանճար, որ կարող է աշխարհային վայելչություններով վարձատրել յուր հետևողներին (քրիստոնյաներին), իսկ մենք, իսլամի որդիքս, թեև զուրկ ենք դոցանից, բայց փոխարենը կվայելենք Մուհամմեդի հավիտենական դրախտում...»։

Այսպես է պատասխանում ամեն մեկ մոլլա, երբ նորա հետ խոսում ես եվրոպական ազգերի բախտավորության, նոցա քաղաքական զորության, արհեստի և ճարտարության մասին։ Մոլլան այս կյանքից ոչինչ չէ պահանջում, այլ ամեն ինչ սպասում է գերեզմանի մյուս կողմում...

Կրթության գործը հաջողված կարելի է համարել Պարսկաստանում, երբ ամեն մի մեչիդին կից մադրասաները (ուսումնարանները) կվերացվին, ուր մոլլան ալիֆ-բեից հետո տալիս է աշակերտի ձեռքում «Ղորան», և երեխան յուրյան անհասկանալի մի լեզվով սկսում է սովորել մի օտար ազգի՝ արաբների կրոնական վարդապետությունները։ Կրկնում ենք, կրթության գործը կարելի է հաջողված համարել Պարսկաստանում, երբ հիշյալ մադրասաների փոխարեն կկառուցվին ժողովրդական-տարրական ուսումնարաններ, լուսավոր երկրներում այժմյան ընդունված մանկավարժական եղանակներով։

Մենք հուսով ենք, որ ինքը Միրզա Յուսուֆ խանը, որպես արտաքին գործոց վեկիլի պաշտոնյա, որպես եվրոպական լուսավորության ծանոթ անձն, ինքը գործով և շոշափելի կերպով կիրագործե այն, որ քարոզում է յուր գրքի մեջ։ Պարսկաստանի փրկությունը կրթության մեջն է կայանում, և այդ սպասելի է Միրզա Յուսուֆ խանի նման անձինքներից, որոնք յուրյանց դրությամբ կառավարության բարձր պաշտոնների վերա են կանգնած։ Ստորին ամբոխից ոչինչ սպասել կարելի չէ, նա մեռած է, նորան նորից կյանք պետք է տալ...

Թող կրոնքը գնա յուր հին շավիղով, թող մոլլաները առաջնորդեն նորան։ Բայց լուսավորությունն յուր առանձին ճանապարհն ունի, որ հարթվել է մեծամեծ ղուհերի արյունով և քրտինքով... Մինը մյուսի հետ խառնել պետք չէ, դա ապագայի գործն է...

Ձնայելով, որ Միրզա Յուսուֆ խանը յուր գլխավոր փաստերը հիմնում է կրոնական ապացույցների վերա (դա յուր առանձին նպատակն ունի...), այսուամենայնիվ, մենք գտնում ենք նորա գրքի մեջ շատ և շատ օգտավետ խորհրդածություններ, որք վերաբերվում են Պարսկաստանի այժմյան պահանջներին, որք մահմեդականների համար բոլորովին նոր մտքեր են։ Այս պատճառով հիշյալ բրոշուրը յուր տեսակի մեջ համարում ենք խիստ բարձր և հեռատես մտածության մի արտահայտություն և հուսով ենք, որ Միրզա Յուսուֆ խանը կշարունակե այսպիսի աշխատություններով օգտավետ լինել յուր հայրենիքին, որը հմուտ և գործող մարդերի կարոտ է։

ԳԺԱՏՈՒՆ

(Տաճկաստանի մամուլը և գաղթականության խնդիրը)

Ընթերցող, պատահե՞լ է քեզ երբեմն գժատունը մտնել, դու տեսե՞լ ես այս թշվառ օթևանի նույնպես թշվառ հասարակությունը...

Այնտեղ հանդիպում են քեզ մարդիկ, որոնք խոսում են, դատում են, վիճում են, և նոցա խոսակցությունն այնքան կանոնավոր և ոգելից է, որ քո մեջ ակամայից ծնվում է մի այսպիսի միտք. «Մի՞թե դոքա խելագարներ են, ինչի՞ են բերած այս անբախտները մի այսպիսի տըխուր բնակարանի մեջ»։

Հանկարծ դերը փոխվում է...

Դու տեսնում ես նույն փիլիսոփան, որ քեզ հետ խոսում էր, դատում էր ավելի բարձր և վսեմ համամարդկային գաղափարների վերա, նա, որ աշխարհների և ազգերի ճակատագիրն էր վճռում, յուր խորհըրդածությունքը վերջացնում է այսպիսի խոսքերով. «Պարոն, եթե քո ջիբիցդ մի հատ մուկն յուր պոչիցը կախված լիներ, ա՜խ որքան հեշտ կլիներ նորան քո բերանը մտնել»...

Դու այն ժամանակ միայն համոզվում ես, որ դա խելագար է...

* * *

Այսպիսի տպավորություն է գործում ընթերցողի վերա, երբ յուր ձեռն է առնում Տաճկաստանի որևիցե լրագիր։ Այսպիսի տպավորություն գործեց իմ վերա Զմյուռնիո «Արևելյան մամուլի» հունվար ամսո համարի մեջ Տերենց ստորագրությամբ մի նամակ։ Նամակը խիստ երկար և ձիգ էր, որպես երևում էր, ամբողջապես նույնիսկ խմբագրության գործարանի մեջ կարկատած էր... Նամակի գլխավոր նյութը վերաբերում էր գաղթականության խնդրին։ Այո՛, մի կարևոր խնդիր, որո մեջ պետք է որոնել հայոց ներկա և անցյալ թշվառությունները։

Պ. նամակագիրն յուր հոդվածի սկզբում ողջամիտ է և խելացի, որպես մեր գժատան փիլիսոփան։ Նա ցույց է տալիս, թե որպիսի ցավալի հետևանքներ ունեցավ հայերի համար գաղթականությունը։ Նա օրինակ է բերում Վենետիկի, Լիվոռնիայի, Ամստերդամի և ամբողջ Լեհաստանի հայերը։ Նա հիշեցնում է «Մշակի» երկու հոդվածները Հընդկաստանի և Պարսկաստանի հայերի մասին, որոնց մեջ ցույց էր դրված տեղային հայերի անբախտ վիճակը և նոցա օրըստօրե սպառումը։

Հանկարծ այս բոլորը մոռանում է նա...

Եվ խոսելով այն երևույթի մասին, թե այսօրվա օրս հայը յուր բընիկ երկրում թշվառ և անգործ է, ուտելու հաց և հանգստություն չունի, պ. հոդվածագիրն մեջ է բերում հետևյալ խոսքերը.

«Այս վիճակներն (ապրուստի նեղությունը) օրավուր կծանրանան և միայն մեզի համար չեն, և ասոր ապացույցն այլ հայտնի կերևի, երբ

անգղիացին, գաղիացին, գերմանացին, իտալացին, կանեննք, հայրենիքնին ձգած, մեր երկրներուն մեջ եկած, հացի պատառ մը կփնտրեն, ոմանք յուրյանց արհեստին՝ ոմանք յուրյանց դրամագլխին՝ ոմանք յուրյանց ճարպիկության վստահանալով։ Ինչո՞ւ այս օրինակին չենք մտածեր հետևել մենք ալ, ինչո՞ւ մեր հորիզոնը չենք ուզեր ընդարձակել, շարժելու սովորությունը ինչո՞ւ կորուսեր ենք. պե՞տք է ուրեմն միշտ մեզի սուրի և սովու անտանելի բռնությանց խարազանը, որ կարենանք շարժել և ընկնել հեռու աշխարհներ, որպեսզի հաց, հարստություն և մինչև երջանկություն գտնենք...»։

Մտածում ես, թե ո՞րտեղ է այն «հացի, հարստության և երջանկության» երկիրը, ուր կամենում է առաջնորդել մեր նոր Մովսեսը յուր տառապյալ Իսրայելը։ Հնդկաստանում, դարձյալ նույն երկրում, ուր առաջ նա ողբում էր հայերի ցավալի կորուստը։ Նա դարձյալ հայերի փրկությունը գտնում է գաղթականության մեջ...

Ահա նրա խոսքերը.

«Ուրեմն ի՞նչ կարգելե այսօր այն հայերը, որ իրենց ծնված տեղվանքը կնեղեն ի չքավորութենե կամ ի բռնութենե, անգործութենե, կամ ի տառապանաց, երթալ հոն այն տեղվանքը (Հնդկաստան), ուր իրենց ազգակիցքը երբեմն գժնդակ վիճակե մը ազատելու համար դիմեր և երջանկություն գտեր են։ (Ակնարկում է Պարսկաստանից դեպի Հնդկաստան առաջուց գաղթող հայերի վերա)։ Երբ այն ատեն և անկից վերջն ալ նաև հոն դեռ բռնություն կա եղեր. վասն զի նաև հոն հնդիկ կամ մոնղոլ երբեմն կրոնամոլություն գործածելով, հայ եկեղեցին, իրան գմբեթը կկործանեն եղեր (Սուրաթի մեջ), բայց հիմա թե Բաբելոնի աշտարակի չափ ալ բարձրացնեն ոք, արգելք դնող չկա Անգղիո և Հոլանդիո հովանվույն տակ...»։

Որքան հատուկ է Տաճկաստանի լրագրությանը հրատարակել այսպիսի հիմար, վնասակար և մինչև անգամ խելագար գլուխների մտածությունքը, այնքան աններելի է «Արևելյան մամուլին» որպես մի առողջամիտ ամսագրին, հետևել տղեների օրինակին, որոնք առանց մտածելու առանց նպատակի դուրս են վիժում յուրյանց գլխի ցնորքները։

Ինչ որ օգտակար է մի ազգի համար, շատ անգամ նա լինում է վնասակար մյուս ազգերին։

Անգլիացին, ֆրանսիացին և գերմանացին ուր և գաղթում են, յուրյանց հետ տանում են՝ գիտություն, արհեստ, ճարտարություն և վերջապես յուրյանց սուրը և քաղաքական դրոշը։ Նրանք նվաճում են մի եր-

կիր, հիմնում են այնտեղ ազատ գաղթաշենք և սկսում են օգուտ քաղել երկրի բնական հարստություններից։

Բայց ի՞նչ է տանում յուր հետ դեպի օտար աշխարհ հայ գաղթականը։ Նա տանում է յուր հետ յուր անկիրթ գլուխը, յուր պանդխտության թույլ գավազանը և յուր ամեն զորության դեմ խոնարհվող ստրկական ոգին... *Ուր և գնում է՝ նա հպատակ է։ Նա պետք է գտնե իրանից մի ավելի թույլ, թշվառ և տգետ ժողովուրդ, որ կարողանա նորան հարստահարել, նորանից օգուտ քաղել... Այո՛, ա՛յս բախտին հանդիպեցավ մի ժամանակ հայ գաղթականը, նա գտավ Գանգեսի ափերի մոտ իրանից ավելի մի թշվառ ժողովուրդ։ Բայց այն դարն անցավ։ Այժմ այնտեղ անգլիացին հրեղեն սուրը ձեռին հրեշտակի նման հսկում է, և ոչ ոքին թույլ չէ տալիս մոտենալ յուր դռհին...*

Ջնայելով այն բոլոր վնասներին, որ հայի առջև դնում է յուր անցյալի պատմությունն, նա դարձյալ ձգտում է գաղթել... Հայը յուր հանգստությունը և յուր բարօրությունը միշտ երևակայում է հայրենի երկրի սահմանի դրսում... կարծես, նորա բնիկ երկրի հորիզոնը յուր համար թունավորված լինի...

Հայի մի այսպիսի հատկությունն միտս է բերում մի առակ, որ շատ անգամ լսած եմ իմ պառավ տատիցը։ Նա տալիս էր մի առասպելական թռչունի անունը, և թող այն թռչունը լինի հոպոպը, ասում էր. թե հոպոպը ուր և յուր բույնը դնում էր, փոքր ժամանակից հետո զըտնում էր յուր նոր օթևանը բոլորովին հոտած։ Այս պատճառով նա ստիպված էր անդադար փոխել յուր բնակարանը, որպեսզի կարողանա մի մաքուր տեղ գտնել։ Մի օր նա խորհրդով դիմեց ծիծեռնակին. «Բարեկամ,— ասաց նորան,— ի սեր աստուծո, ինձ մի ճանապարհ ցույց տվեք. մի՞թե չկա աշխարհի երեսին մի տեղ, ուր կարելի լիներ մաքուր օդ շնչել և հանգիստ լինել»։ «Այստեղ ի՞նչով է վատ»,— հարցրուց ծիծեռնակը սառնությամբ։ «Ա՜խ, քույրիկ, ես անբախտ եմ այստեղ, այս երկիրն ինձ համար չէ, ուր և բույնս շինում եմ, քանի մի օրից տեսնում եմ, այնպե՜ս վատ հոտում է, այնպես վա՛տ, որ ոչ միայն անտանելի է ինձ, այլև իմ մանրիկ ճտերին»։ «Ուրեմն դարձյալ միտք ունեք գաղթել»,— հարցրուց ծիծեռնակը ժպտալով։ «Ի՞նչ պետք է արած, քանի որ ապրել չեմ կարող...»։ Ծիծեռնակը յուր գեղեցիկ գեմքը դարձրուց դեպի հոպոպը և ասաց այս խոսքերը։ «Ընկեր, փոխանակ անդադար բույնդ փոխելու, ավելի լավ կլիներ, որ խասիաթդ *(բնավորությունդ) փոխեիր, որովհետև այդ ժահահոտությունն քո իսկ անձնանմաքրությունից է փչում... Եթե ոչ, աստուծո աշխարհը և այստեղ մաքուր է և սուրբ...»։*

***

Մենք չենք կամենում հերքել, թե մի երկրի բնական հարստություններն և մինչև անգամ նորա աշխարհագրական դիրքն մեծ ներգործություն ունեն բնակիչների կյանքի և նոցա զարգացման վերա։ Մենք գիտենք, որ կան երկրներ, ուր մարդը յուրյան շրջապատող հանգամանքներից ստիպված է լինել աղքատ թե՛ նյութապես և թե՛ մտավորապես։ Այսուամենայնիվ, Հայաստանը այն երկրների կարգին չէ, որ յուր բնակիչներին չկարողանա մատակարարել նոցա կենսական պիտույքները, և ստիպեցնե նորանց յուրյանց ապրուստը որոնել օտար երկրներում։ Հայաստանը ունի կյանքի շատ հարմարություններ, եթե նորա բնակիչները սովոր էին աշխատելու և երկրի հարստություններից օգուտ քաղելու։ Բայց հայը գործել չգիտե, դորա համար նա աղքատ է, դորա համար նա հաց չունի, դորա համար նա թափառում է երկրից երկիր։

Հայը աշխատասեր ժողովուրդ է, այսպես մտածում են շատերը։

Աշխատասիրությունն ոչինչ նշանակություն չունի, երբ նա զուգընթաց առաջ չէ գնում ժամանակի պահանջների և նորա ընդհանուր զարգացման հետ։

Հեռվից դատել Հայաստանը առանց նորա մեջը մտնելու, շատ հեշտ բան է։ Բայց երբ որ մոտենում ես, սկսում ես բոլորովին այլապես մտածել։

Հայը այսօր հերկում է յուր հողը այնպես, որպես հերկել է յուր պապը՝ Արամի օրերում։ Արհեստը և ճարտարությունը նորա մոտ կրում են յուրյանց վերա հազարավոր տարիների հնության կնիքը, կարծես այդ ազգը մի քայլ անգամ առաջ չէ դրել... Ինձ պատահել է տեսնել Հայաստանում հին փլատակների տակից դուրս եկած խեցեղեն ամաններ, նույնը այսօր շինում է հայ բրուտը առանց որևիցե զանազանության։ Ինձ պատահել է տեսնել Հայաստանում ամբողջ ժողովուրդը, որ պարապում էր խաշնարածությամբ։ Այս հովիվ ժողովուրդն դեռ ապրում է յուր նախնական կյանքով. նորա հագուստը ոտքից ցգլուխ կազմված է բրդից, բոլորը նահապետական պարզ ձևով։ Նորա ոտնամանները (տրեխները) մինչև անգամ հյուսած են այծի մազից։ Եվ մարդ, դատելով դեպի հնությունը, մտածում է, թե դա նույն հովիվ ժողովուրդն է, որ Հայկի և Արմենակի օրերով թափառում էր Բզնունյաց ծովակի շուրջը՝ յուր անասունների համար ճարակ գտնելու... Ես առիթ եմ ունեցել մտնել նոցա գետնափոր խրճիթների մեջ, որոնք ավելի գազանների որջերի են նման, որոնց մեջ տերը և յուր չորքոտանին միասին և մի

հարկի տակ են ապրում։ Ես տեսել եմ նրանց կիսավայրենի նահապետական կյանքը և համաձայնվել եմ Քսենոփոնի հետ, մտածելով, եթե այդ հույն պատմաբանը նորից անցնելու լիներ Հայաստանի միջով, նորից նկարագրելու լիներ նրա ընտանեկան կյանքը, դարձյալ նույնը պիտի գտներ, ինչ որ տեսել է 24 և կես դար առաջ…

Եվ այդ անմեղ, պարզամիտ ժողովրդին խրատում են, որ նա թողնե հայրենի երկիրը, գնա հեռու, շատ հեռու և օտար աշխարհներում յուր համար ապրուստ որոնե… Եվ այդ ժողովուրդն է, որ այժմ լցնում է Կ. Պոլսի քարվանսարաները, նավահանգիստները, մաքսատները և համալի ստոր պաշտոն է կատարում, մի ծառայություն, որ բեռնակիր անասուններին միայն է սեփական… Այդ ժողովուրդն է, որին հանդիպում ես Տաճկաստանի և Եգիպտոսի (որտե՞ղ չկան նրանք…) բոլոր ծովեզրյա քաղաքներում, ուր նրանց գործն է չափչիություն[1], բուլամբաջիություն[2], և այլ այսպիսի ստոր պարապմունքներ։ Ուր նրանց կերակուրն է՝ զինվորներից ավելցած սոմունը[3] և մեչիդների միաբանության (սոֆթայների) սեղանից ավելցած փշրանքը[4]։ Ուր նրանց օթևանն է բաղնիքների վառարանի (թուլամբարի) մոխիրները[5]…

Այս ժողովուրդն առյուծի ուժ ունի, բայց գառնուկի սիրտ… Նա յուր բոլոր մարմնական զորությունը սպառում է այն գործի մեջ, որ

---

1 Չափչիություն նշանակում է հայ մշակների այն պարապմունքը, որ նոքա քաղաքացվոց տների աղբերը յուրյանց կողովների մեջ առնելով, տանում են ծովը նետում։

2 Բուլամբաջիություն է ջրկիրների պաշտոնը, որոնք միևնույն ժամանակ ծառայում են որպես հրդեհաշեջներ։

3 Սոմուն մի տեսակ հացի անուն է, որ տալիս են որպես պաշար Տաճկաստանի զինվորներին. և նոքա ազատություն ունեն վաճառել հացի բորբոսած և անպիտանացած մասը հայ պանդուխտներին։

4 Տաճկաստանում կան այնպիսի մեչիդներ, ուր դրած են թագավորների կամ երևելի անձանց շիրիմները, այսպիսի մեչիդներում մի դաս մոլլաների գործն է աղոթել այնտեղի ննջեցյալների համար, նոքա կոչվում են սոֆթայներ և ստանում են նույն մեչիդը կայքից առատ կերակուր, որի ավելորդը, որպես մի աժան կերակուր, գնում են հայ մշակները։

5 Հայ մշակներն, մանավանդ Տաճկաստանում, մի ուրիշ աժանագին տեղ չգտնելով գիշերելու համար, տարվա տաք եղանակներում անցուցանում են եկեղեցիների գավիթներում, իսկ ձմեռվա ցրտերի ժամանակ բնակվում են բաղնիքների թուլամբարներում։ Եթե Տարտարոսի վերա կամենիք ճիշտ գաղափար ստանալ, բավական է մի անգամ թուլամբարը տեսնել, ուր բոցը, խեղդող ծուխը և մոխիրը միասին գործում են։ Նա լավ է նորանով միայն, որ տաք է… Այնտեղ է բոլոր պատսպարան չունեցողների օթևանը…

նավերից փոխադրում է դեպի ցամաք այն ծանրությունները, որին կըրակի և օվկիանոսի ուժերն հազիվ կարողանում են դիմանալ… Բնությունը ոչինչ չէ խնայել նրան. նորա մեջ կան հարուստ ու ճոխ զորություններ, բայց դեռ անմշակ… Միակ բանը, որ պակաս է նորան, է **կրթությունը**, և այդ փոքր բան չէ…

Այս մշեցի, վանեցի, բաղեշցի ժողովուրդն է, որ հայրենիքը ձգած, ցրված է դեպի ամեն կողմ։ Նա թողնում է յուր տանը ծերունի հայր, պառավ մայր, մանկահասակ ամուսին, փոքրիկ երեխայք, բոլո՜րն կարոտության մեջ… Նորան խորհուրդ են տալիս գաղթել, նոր աշխարհներ գտնել և բախտ որոնել… Բայց ինչո՞վ և որպե՞ս…

***

Արդարև հայերի գաղթականությունն ունեցել է և ունի յուր պատմական և տեղական պատճառները, բայց եթե խիստ կերպով քննելու լինենք, կտեսնենք, որ ոչ այնքան պարսիկների, մոնղոլների, արաբացվոց և այլ բարբարոսների բռնության խարազանը դուրս է քշել նորանց հայրենի երկրից, որքան նույնիսկ յուրյանց ծուլությունը, անգործունեությունը և կույր կրոնական սնահավատությունը…

Պարսիկը, մոնղոլը, արաբացին կողոպտել է նորա սեփականությունը, հրդեհել է նորա բնակարանը, մոր աչքերի առջև մորթել է նորա երեխան, ոչնչացրել է ամեն ինչ, որ սուրբ է նորա համար և նվիրական, հայի քահանան մխիթարել է նորան ասելով. «Այդ մեր մեղքերի համար է, որ աստված պատժում է մեզ… Թողնե՜նք այդ երկիրը, նա անիծվա՜ծ է, և մեզ համար մի ուրիշ տեղ պտռենք»… Հայը սրբել է յուր աչքերի արտասուքը և մխիթարվել այդ խոսքերով…

Եվ այժմ շատերն մտածում են, թե ճարստաճարությունն է, որ ստիպեցնում է հային թողնել յուր բնիկ երկիրը։ Այո՛, ասիական Տաճկաստանում քրդերն հարստահարում են։ Բայց ո՞վ է մեղավոր, կառավարությունը, պատասխանում են, որովհետև այնքան թույլ է, որ չէ կարողանում զսպել յուր վայրենի հպատակները։

Դիցուք թե կառավարությունը թույլ է, բայց հայը, յուր անձի, ընտանիքի և սեփականության տերը, միթե պարտավոր չէ՞ նոցա պահպանության համար ընդդիմանալ յուր թշնամուն և թույլ չտալ, որ կողոպտեն յուրյան։

Գոյության կռվի մեջ ամեն թույլ ուժեր դատապարտված են ոչնչության։ Ցանկանում ես ապրել, սովորիր դեմ դնել այն արգելքներին, որ խանգարում են քո բարօրությանը։

Իսկ հայը յուր կյանքում միշտ կրավորական դեր է խաղացել...

Ամբողջ ասիական Տաճկաստանի մեջ քուրդերի թիվը հաշվում են 30 հազար հոգի, որոնք, անասնապահ և թափառական ցեղեր, ցրված են զանազան կողմերում։ Իսկ միմիայն Վանի և Մուշի գավառներում ավելի քան 250 հազար հոգի հայեր կան, և այդ տասնապատիկ թվով ավելի բազմությունը հարստահարվում է մի քանի հազար թափառական քրդերից... Ո՞վ է մեղավոր...

Երբ մարդ անընդունակ է անձնապաշտպանության, *նա կյանքի իրավունք չունի...*

Քուրդը, որպես մահմեդական, պաշտպանություն է գտնում տիրող կառավարությունից յուր բարբարոսությանց մեջ, իսկ հայը, որպես քրիստոնյա, մնում է անօգնական, նա ստիպված է յուր կրոնքը փոխել, որ մահմեդականներին հավասար արտոնություն ստանա։ Այսպես մտածում են շատերը։ Բայց ոչ, այդ երևույթի պատճառը պետք է որոնել նույնիսկ հայի թուլությունների մեջ։ Վանի և Մուշի մոտ բնակվում է մի հարևան ազգ, նույնպես քրիստոնյա, որպես հայերը, դոքա են ասորիները, ավելի փոքրաթիվ, քան թե հայերը։ Ասորին ոչ միայն չէ հարստահարվում քուրդերից, այլ նա յուրյան մինչև անգամ ազատ և անկախ է պահել տիրության բռնությունից, որովհետև ասորու մեջ կյանք կա, նա գիտե, թե որպե՛ս պետք է վարվել թշնամու հետ...

* * *

Կարճատես մարդու հայեցողական հորիզոնը շատ նեղ է լինում, նա հեռուն գիտել կարող չէ։ Կարճատեսը հրապուրվում է միայն շլացուցիչ երևույթներով, որոնք խիստ ազդու կերպով ներգործում են նորա տեսանելյաց վերա։ Այդ վիճակի մեջն է գտնվում «Արևելյան մամուլի» պ. հոդվածագիրն։ Հիշելով մի քանի հայ անուններ, որոնք մի ժամանակ Հնդկաստանում փառք, մեծություն և հարստություն ստացան, պ. հոդվածագիրն երևակայում է այն անսպառ երանությունները, որ և այժմ սպասում են հայերին Գանգեսի և Բրահմանբուտրայի ափերի մոտ։

Այո՛, հայը, հայտնվելով Հնդկաստանում, այն ժամանակ կարող էր յուր համար մի բախտավոր վիճակ գտնել, որովհետև նա յուր մտավոր զարգացումով ավելի բարձր էր, քան թշվառ հնդկացին, որ դեռ յուր տղայության մեջն էր գտնվում։ Տղաներին խաբելը և նրանց կողոպտելը մի դժվար բան չէ։ Բայց երբ հայտնվեցան այնտեղ խաբողնե-

ր՝ մի ավելի մեծ բազմություն, որոնք յուրյանց արհեստի մեջ ավելի հմուտ և ճարպիկ էին, այն ժամանակ հայերի փառքը նսեմացավ…

Եվ ուրիշ կերպ լինել կարող չէր։

Ազգերի գաղթականության պատմությունն ներկայացնում է մեզ երկու տեսակ բախտախնդիրներ, մեկը որոնում է ոսկի, մյուսն՝ հող: Օրինակ, սպանիացին աստվածային Կոլումբոսի հանճարով գտնում է Նոր Աշխարհը և սկսում է կողոպտել խեղճ հնդկացիների կանանց ոսկի զարդերը և անթիվ նավերով երկրի հարստությունները դեպի Սպանիա է կրում։ Այս անակնկալ հարստության հեղեղը վերջապես ձգում է նույն ազգին աղքատության մեջ։ Անգլիացին գնում է այնտեղ, բռնում է երկրի ավելի արգավանդ մասը և սկսում է մշակել նորան։ Նա գտնում է յուր հարստությունը բնության մեջ, որ երբեք չէ սպառվում։

«Գանձ պահող աղքատի որդիքը սոված կմեռնեն». իսկ «քրտինքով վաստակած հացը չի սպառվի»։

Հայը ուր որ գնում է, պատրաստի ոսկի է որոնում և շատ անգամ գտնում է, որպես գտան սկզբում Հնդկաստան գաղթող հայերն։ Բայց նոցա որդիքն այժմ ուտելու հաց չունին։ Ինչո՞ւ։ Որովհետև ոսկին կապիտալ կամ հարստություն չէ. նա կարող է այսօր լինել և էգուց օդի մեջ ցնդվել… Հնդկաստանցի հայերն մինչև անգամ փչացրին յուրյանց սպահանցի ազգակիցներին, որոնք Պարսկաստանումն էին ապրում։ Նոքա ուղարկում էին առատ ոսկի յուրյանց ազգականներին, որ թողել էին Պարսկաստանում։ Սպահանցի հայը, սովորելով պատրաստի ոսկու գործածությանը, դադարեց գործելուց, ընկավ ծուլության և շռայլության մեջ և վերջապես աղքատացավ, երբ նորա Հնդկաստանից եկող թոշակն դադարեց։

***

«Արևելյան մամուլի» պ. հոդվածագիրն գաղթականության շահերը ցուցանելու համար օրինակ է բերում հրեաները, որոնք թեև աշխարհի ամեն անկյուններում ցրված են, այսուամենայնիվ, ունեն փառավոր դրություն և կատարյալ երջանկություն են վայելում…

— Որքա՜ն նախանձելի վիճակ…

— Բայց մի՞թե հրեան ազգ է, մի՞թե նա կյանք և ապագա ունի…

Այո՛, համեմատության մեջ պ. հոդվածագիրն չէ սխալված։ Եթե այսօրվա օրս հայերին կամենանք համեմատել որևիցե ազգի հետ, նոցա

զուգակշիռը կգտնեինք միմիայն հրեաների մեջ, մի թափառական ժողովուրդ, որ երկրի վերա ոչինչ հիմք չունի, որպես այն բույսերը, որոնց արմատները խորին կերպով դրված չեն հողի մեջ և հողմի ամենաթեթև փչելուց տարուբերվում են մի կողմից դեպի մյուս կողմ...

Մեր խոսքը բավական երկարացավ, այժմ վերջացնենք։

Մարդու կյանքը կապված է բնության հետ, և նորա մայրը՝ է հողը։ Եթե հայը կամեր կյանք և ապագա ունենալ, նա պետք է յուր ապրուստը հիմնե հաստատուն հողի վերա, և այդ հողը թո՛ղ լինի այն, որ սրբված և գնված է մեր նախահարց արյունով...

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Մայիսի 1/13

Թուրքաց պետության այժմյան խառն դրությունը, Հերցեգովինայի և Բոսնիայի ապստամբությունները, Սալոնիկի մեջ պատահած սպանությունները, այդ ամենը խոր տպավորություն գործած է մայրաքաղաքիս ժողովրդի հասարակական կարծյաց վրա, ահ և սարսափ ձգելով քրիստոնյա ազգաբնակության սրտերում։ Երբ այս օրերս լուր տարածվեցավ (ապրիլի վերջերում), թե մայրաքաղաքիս մահմեդական ազգաբնակությունը սաստիկ գրգռված է քրիստոնյա ժողովրդի դեմ, թե մահմեդականներին հատուկ հնագարյան մոլեռանդություն, ֆանատիկոսություն ույժն նորեն զարթած է թուրք ժողովրդի մեջ, մանավանդ որ լուր տարածված էր քաղաքիս մեջ, թե մահմեդականները վերջին ժամանակները զենքեր էին առնում մեծ քանակությամբ, և զենքերի վաճառականները սովորականին դուրս սկսեցին շատ զենք ծախել, քրիստոնյա ամբոխը սաստիկ երկյուղի մեջն ընկավ։ Ապրիլ ամսի 20-ին, երբ մայրաքաղաքիս գլխավոր փողոցների վրա երևեցավ հանկարծ զինավորված մահմեդականների ահագին բազմություն՝ դիմելով շեյխ-ուլ-իսլամի բնակարանի կողմը, քրիստոնյայք սկսեցին փակվել իրենց տների մեջ, ամբոխը լցվում էր եկեղեցիք և քարվանսարաներ, պինդ փակելով իրենց այդ ժամանակավոր ապաստարանների դռները։ Այսպիսի տխուր և հուսահատական տրամադրության մեջ մայրաքաղաքիս քրիստոնյա ազգաբնակությունը անցած է մի քանի ժամ..... Կ. Պոլսի քրիստոնյայք, մանավանդ հայերը, չունեն այլևս թուրքաց տերության հպատակ գավառական ամբոխին հատուկ դյուցազնական, քաջ հոգին, նոքա անհամարձակ, անորոշ, վախկոտ բնավորություն ստացած են, որ հատուկ է քաղաքային ազգաբնակության առևտրա-

կան և գումարատեր, միմիայն գործնական կենսական գաղափարներին և նպատակներին նվիրված ժողովրդին։ Մայրաքաղաքիս քրիստոնյայք երկյուղ են քաշում մահմեդականաց կառավարության մոլեռանդության զարթնելեն, վասնզի ոչ ընդունակություն, ոչ սեր ունեն պատերազմական գործերու, ավելի հակամետ լինելով ճարտար խոսելուն, քան թե գործ կատարելուն, ոչ էլ իրենց պաշտպանելու հարկավոր զենքերն ունեն։ Մահմեդականաց ապստամբվելուն պես, քաղաքիս քրիստոնյա ժողովուրդը գիտե, թե մեծ բազմությամբ պիտի անխնա կոտորվի մոլեռանդ թուրք ազգաբնակության ձեռքեն, առանց կարողություն և միջոց ունենալու իրան պաշտպանելու... Մի քանի ժամ երկյուղի մեջ անցնելեն վերջը քրիստոնյայքը, փոքր առ փոքր դուրս գալով իրենց ապաստաններեն, տեսան թե ամեն բան հանդիստ է քաղաքիս մեջ... Վերջապես իմացվեցավ, թե ինչ էր զինավորված թուրք ամբոխի մահմեդական հոգևորականության գլխավորի և Սուլթանի պալատի դիմելու պատճառը՝ այդ զինավորված ամբոխը սոֆթաներն էին (մեչիտների մոտ մոլլաների ուսանողներ, մահմեդական տիրացուներ), որոնց ըսպառնալի հավաքման նպատակն էր պահանջել, թե այժմյան շեյխ-ուլ-իսլամը և մեծ վեզիրը ընկնեն և նոցա տեղ նորերը նշանակվեն։ Սոֆթաների այդ պահանջը իսկույն կատարվեցավ տերության կողմեն, և զինավորված ամբոխը ցրվեցավ։ Հեռագրեն իմացած կլինեք, որ տերության հրամանով ճշմարիտ նշանակված է նոր շեյխ-ուլ-իսլամ և նոր մեծ վեզիր, ինչպես և պահանջած է ամբոխը։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Մայիսի 1-ին

Տաճիկների կրոնամոլությունը հետզհետե գրգռվում է մահմեդական հոգևորականության ձեռքով։ Մեքքայի շեյխ-ուլ-իսլամը, որ բոլորովին անկախ է Կ. Պոլսի իր պաշտոնակցից և մինչև անգամ նորա թշնամին է, այժմ դաշնակից է լինում նորան։ Նա ուղարկել է նորերումս մի դարվիշի ձեռքով Մահմեդի շորերի մի կտորը թուրքերի կրոնամոլությունը գրգռելու համար և իր քարոզներով հրավիրում է սուլթանին հավաքել բոլոր ուղղափառներին մարգարեի կանաչ դրոշակի տակ։ Մոլեռանդության նշանները սրանք են՝ ա. կանաչ դրոշակ, որի բարձրացնելով բոլոր մահմեդականները պարտական են հավաք-

վելու, բ. խիրխեթ-շերիֆ (Մահմեդի վերարկու), որ առաջադրվում է գյավուրների դեմ գրգռելու համար, որովհետև Մահմեդը ուներ ծածկած այս վերարկուն այն ժամանակ, երբ մի քրիստոնյա կին նորան թունավորեց (այս վերարկուն էլ որպես թե բերած է դարվիշը Մեքքայից Կ. Պոլիս), գ. ձուքեն-շերիֆ (Մահմեդի մորուքի մասը), սանշերիֆ (նորա առջևի ատամը) և վերջապես դ. վեմն, որի վրա ոտք կոխեց Մահմեդը, երբ Մեդինայում հիմնեց քաաբ (տաճար)։ Այս քարի վրա երևում են մարգարեի ոտքերի հետքը։ Դրոշակը մուգ կանաչ գույն ունի և Մահմեդի սիրելի կնոջ ննջարանի վարագույրի պաշտոնն էր կատարում։ Այդ դրոշակը տխուր պատմական նշանակություն է ստացել, երբ Մահմուդ 2-րդ սուլթանի օրով բարձրացրած էր, պատվիրելով Ստամբոլի ուղղափառ բնակիչներին զինվորվել՝ անհնազանդ ենիչարներին կոտորելու համար։ Այդ հիշյալ սուրբ հնությունների երևան հանելը միշտ գրգռում է սաստիկ հուզմունք մահմեդականաց մեջ և այս պատճառով կարելի է երևակայել, թե որպիսի հուզմունք տիրեց Ստամբոլի բնակիչների բոլորեցունց սրտերին, երբ դարվիշը բերեց մարգարեի վերարկուն, մանավանդ որ նորա Ստամբոլ գալը պատահեցավ հենց Մահմեդի ծննդյան օրը։ Այս պատճառով մահմեդականները զենք են պատրաստում այժմ և չեն թաքցնում իրենց սպառնալի մտադրությունը։ Հասկանալի է, որ քրիստոնյաները և նույնպես օտարականները մեծ երկյուղի մեջ են, աչքի առաջն ունենալով Սալոնիկի, Մաստարայի, Տրավնիկի և այլ տեղերի մեջ պատահած վերջին արյունահեղ անցքերի օրինակները և մոլեռանդության արտահայտությունները մահմեդականների կողմից։ Կ. Պոլսում բնակվող եվրոպացիք բավական չեն համարում այն միջոցներն, որ ձեռնարկում են դեսպանները նոցա պաշտպանության համար ընդդեմ կրոնամոլ ամբոխի, նոքա սկսում են փոքր առ փոքր գաղթել Կ. Պոլսից։ Տաճիկները ոխակալությամբ հետևում են իրենց ապագա զոհերի հեռանալուն, բայց առայժմ ոչինչ չեն ձեռնարկում, չեն խանգարում գաղթելուն և ակներև սպասում են որևէ նշանի։ Որտեղի՞ց կառաջանա այդ նշանը՝ հայտնի չէ։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրեժ, մայիսի 22-ին

Այս տարի գարունը սկսվեցավ այստեղ անընդհատ անձրևներով, որոնք խոստանում էին առատ պտղաբերություն։ Ուտելիքները օրըստօրե էժանանում էին։ Բայց մայիսի սկզբներում Պարսկաստանի այլևայլ տեղերում մի ամենասաստիկ կարկուտ եկավ և այնպիսի արագությամբ, որ շատ տեղ 5 րոպե միայն տևելով, մեկ թզաչափ ծածկեց երկրի երեսը։ Կարկուտի հատիկները հասնում էին մեկ ընկույզից ավելի մեծության, նրանք թափեցրին ոչ միայն ծառերի պտուղները, այլ նրանց միանգամայն ճյուղակոտոր տերևաթափ արեցին։ Օդի մեջ նույն րոպեում գտնված թռչունները սպանվեցան, և դաշտերում բազմաթիվ գառներ և ոչխարներ նույնպես կոտորվեցան։ Դավրեժից հեռու տեղերից նույնպես լուրեր են հասնում, որ կարկուտը շատ կողմերում զարկել է։ Մարանդի մեջ երկնքից համարյա խոշոր սառույցի կտորներ են ընկել։ Պատճառած վնասը բազմապատիկ է։ Օրինակ, Դավրեժի գյուղերին պատկանած այգին կարկուտից առաջ կամենում էին վարձել 85 թումանով, բայց նորանից հետո կես գնով ևս փող տվող չեղավ։

Այստեղ շատ է խոսվում Ռաշտ քաղաքում պատահած՝ անցքի մասին, որ իր բարբարոսությամբ ետ չէ մնում Սալոնիկի եղեռնագործությունից։ Այդ անցքը այսպես են պատմում։ Մի պարսիկ կնոջ և մի երիտասարդ հայի մեջ նկատելի են լինում կասկածավոր հարաբերություններ։ Մահմեդական ամուսինը, այս լսելով, կատաղած դիմում է քաղաքի մուշտայիդի մոտ և հայտնում է նորան։ Մուշտայիդը անմիջապես դիմում է մեջիդը և ամբիոնը բարձրանալով խոսում է ժողովրդին, թե որպիսի խստությամբ պատժում է իսլամի օրենքը այսպիսի հանցանքներ և վերջացնում է իր քարոզը ամենասարսափելի կերպով գրգռելով ժողովուրդը, միևնույն ժամանակ կարդալով ողորմելի երիտասարդի մահվան դատավճիռը։ Այնուհետև ամբոխը մի քանի մոլլաների առաջնորդությամբ դուրս է գալիս մեջիդից և սկսում որոնել երիտասարդին։ Նորան գտնում են տան մեջ, հարձակվում են և կոտրատելով ու կողոպտելով տան բոլոր կարասիքը, երիտասարդին դուրս են քարշում։ Երիտասարդին բերելով մեջիդի դռանը մի հրապարակի վերա, այնտեղ ժողովուրդը վայրենի կատաղությամբ հարձակվում է նորա վերա և սրերով ծակծկում է... Հետո ոտներիցը մի պարան կապելով, սկսում

են քաղաքի բոլոր փողոցներում քարշ տալ։ Աննկարագրելի էր սույն միջոցին ամբոխի դժոխային հոգեզմայլությունը, թե մինչև ո՛ր աստիճան նա բորբոքված, իր սրտի ուրախությունը հայտնում էր հազար երգերով.... Այս զոհը իր ցավալի վախճանին հասցնելեն հետո ամբոխը տակավին չէ հանդարտվում. մահմեդականները գտնում են և հիշյալ կնոջը։ Այս թշվառի մահը ավելի էլ սարսափելի է լինում։ Նրան տանում են քաղաքի հրապարակի վրա և մինչև կուրծքը թաղում են գետնի մեջ, այնպես որ մարմնի վերևի մասը դրսումն է մնում։ Այնուհետև ամբոխին առաջնորդող մոլլան մոտենում է զոհին և առաջին քարը ինքն ձգելով, հրամայում է հետևել իր օրինակին։ Մի րոպեի մեջ խեղճ կնոջ գլխի վրա քարերից մի ահագին բլուր է ձևանում։ Ռաշտի մեջ գտնված ռուսաց, անգլիացոց և ֆրանսիացոց կոնսուլները՝ ոչ մինը չէ համարձակվում իր տանից դուրս գալ. և ճշմարիտ է, մահմեդականների այդ սարսափելի մոլեռանդ բորբոքման ժամանակ նոքա կարող էին ենթարկվել Սալոնիկի զոհերի վիճակին։ Հեռագրի թելերը կտրատված լինելով, անհնար է լինում Թեհրան լուր տալ, բայց հետևյալ օրը, երբ ժողովրդի կատաղությունը մի փոքր հանդարտվում է, ռուսաց և անգլիացոց կոնսուլները սուրհանդակով Թեհրան իմացում են տալիս։ Քաղաքի դատավորը երկյուղից մի քանի օր շարունակ տանից չէ դուրս գալիս։ Այժմ լսում ենք, որ նորին մեծություն շահը ուղարկել է Ռաշտ մի գունդ զորք և խռովության գլխավոր մոլլաները կալանավորվեցան և պետք է Թեհրան տարվին, այնտեղ պատժվելու համար։

Մինչև ե՞րբ պետք է շարունակվի Պարսկաստանում մոլլաների այսպիսի մոլեռանդությունը, մինչև ե՞րբ...

ԿՂԵՐԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 15-ին ներկա 1876 թվի Դավրեժի ազգային-հոգևոր Արամյան դպրոցի հոգեբարձությունը ուղղեց նորին վեհափառության կաթողիկոսին ամենայն հայոց հետևյալ աղերսը, ստորագրությամբ նախագահի, Անդրեաս արքեպիսկոպոսի և բոլոր հոգաբարձուների։

Ահա աղերսը՝

«Մայր Աթոռի Գահակալությունը, սկսյալ 1867 թվից, հայկական կյանքի մեջ սկիզբ է դնում մի նոր և փառավոր դարեշրջանի, երբ ուսումը, գիտությունը և հայաստանյայց սուրբ եկեղեցվո բարեկարգությունը

ավելի փայլ և պայծառություն ստացավ։ Լուսավորության այդ նոր դարեշրջանը սկսվեցավ այն օրից, երբ սուրբ Լուսավորչի Աթոռը ձերդ վեհափառության վիճակվելու բախտն ունեցավ։

Վեհափառությունդ, քաջ ծանոթ լինելով ժամանակի ոգուն և նորա պահանջներին, գիտելով, թե մի մտավորապես ընկած ազգի վերակենդանությունը կայանում է միմիայն նորա կրթության և լուսավորության մեջ, ամենայն ջանք ի գործ դրեց հիմնել Մայր Աթոռի կենտրոնում իմաստության մի տաճար, մի հոյակապ ճեմարան, որտեղից պետք է սփռվեն լուսավորության ճառագայթներն դեպի ամեն կողմեր, ուր կան և ապրում են հայեր։ Դա հսկայական մի գործ է, որի վերա ժամանակը և անաչառ պատմությունը ամենայն պարծանոք պիտի դրոշմե վեհափառիդ հավերժական անունը։

Որպեսզի ուսումը և գիտությունը, որպես լույս և ճշմարտություն, ամեն տեղերում տարածվի հայերի մեջ, ամեն տեղ ներշնչե յուր կենսատու ոգին, վեհափառությունդ բուն գործեց նաև մերձավոր և ամենահեռավոր վիճակներում բարեկարգել դպրոցների դրությունը։ Այդ բարեմասնություններից զուրկ չմնաց և հեռավոր Ատրպատականը։ Դավրիժո ազգային դպրոցի այժմյան բարեկարգ վիճակը ձերդ վեհափառության քաջալերությանը պարտական է։

Թե որպիսի մեծ նշանակություն ունի այդ դպրոցը Պարսկաստանի հայոց այժմյան կարիքների համար, բավական է հիշել այն բազմաթիվ որոգայթները, որոնք ուսման և կրթության անունով այստեղ լարել են այլադավան որսորդները (կաթոլիկ և բողոքական միսիոնարները) հայ մանուկները մոլորացնելու համար։ Այո՛, Դավրիժո ազգային դպրոցը մի հաստատուն պատվար է նոցա բոլոր հարձակումների առաջը առնելու։ Այստեղ հայ մանկտին սովորում է հավատարիմ մնալ յուր մայրենի եկեղեցվույն, սիրել յուր ազգն ու լեզուն և պատրաստվել հայրենյաց համար պիտանի և գործունյա որդի։

Բայց ցավալին այն է, որ դպրոցի նյութական վիճակը չէ համապատասխանում մինչև անգամ այն ամենաանհրաժեշտ կարիքներին, որոնք նա լցուցանելու ավելի պետք ունի։ Որպես սույն աղերսագրի հետ ներկայացուցած հաշվեցուցակից վեհափառությունդ կբարեհաճի նկատել, որ դպրոցը յուր միամյա ելևմտից մեջ բավականին բաց ունի, և նույնը շարունակվելու է և հաջորդ տարիներում, եթե արդյունքի մի նոր աղբյուր չտնօրինվի։ Ի նկատի ունենալով մուտքի և ելքի մի այսպիսի զգալի անհավասարակշռությունը; դպրոցի հոգաբարձությունը այժմ մեծ տագնապի մեջ է, մտածելով, թե դպրոցի մայր դու-

մարն ամ ըստ ամե պակսելով, վերջապես կսպառվի, և այնուհետև ուսումնարանը փակվելու վիճակի պետք է ենթարկվի։

Ուրիշ աղբյուրներ չկան արդյունքի համար և կրկին քաղաքիս բարերար անձանց նվիրատվությանը դիմել չէ կարելի, որովհետև նոցա յուրաքանչյուրն յուր կարողության համեմատ, որպես վեհափառությանդ հայտնի է, սկզբանե մի նշանավոր գումար նվիրած են։ Մանավանդ որպես մտածվում է, օրիորդաց ուսումնարան ևս պիտի հիմնվի, դարձյալ ծանրությունը նույն բարերար անձանց վերա ընկնելու է, որոց թիվը դժբախտաբար շատ փոքր է։ Աշակերտների վերա նորանոր վճարներ նշանակել անհնար է, որովհետև փոքր-ինչ զգալի ծանրությունը կստիպեցնե նոցա աղքատ ծնողներին մեր դպրոցեն դուրս հանել յուրյանց որդիքը և բողոքականների վարժատունը հանձնել, ուր ամեն ինչ ձրի է։

Դպրոցի մի այսպիսի անմխիթար նյութական դրությունը անշուշտ ձերդ վեհափառության բազմախնամ ուշադրությունը յուր վերա դարձնելու բախտն պետք է ունենա, որովհետև Պարսկաստանի փոքրաթիվ հայերը որպես կորուսյալ ոչխարներ արթուն հովվապետիդ կարեկցությանը ավելի շատ կարոտություն ունեն։ Որո վասն դպրոցի հոգաբարձությունը վստահանում է խոնարհաբար խնդրել, որ ձերդ վեհափառությունը բարեհաճի Ատրպատականի մի քանի մասնավոր վանքական և աթոռային մուտքերը տեղային հայերի պիտոյից համար գործադրել, հատկացնելով նորանց Դավրիժո ազգային դպրոցին։

Հիշյալ վանքական և աթոռային մուտքերը, որոց մասին դպրոցի հոգաբարձությունը, իբրև տեղային ժողովրդի ներկայացուցիչը, խնդրում է ձերդ վեհափառությունից, հետևյալքն են. 1. Դոխարղանու Այգվո եկամուտը. 2. Սուրբ Նախավկայի վանքի եկամուտի մնացորդից 100 ռուբլի. 3. Դավրիժո եկեղեցյաց սուրբ Աթոռի անունով հավաքված գանձանակադրամը։

Հուսով եմք, որ ձերդ վեհափառությունը կհարգե հոգաբարձության ամենախոնարհ աղերսը, որո վասն եմք և մնամք բազմախնամ հովվապետիդ օրհնությանը և շնորհացն կարոտ։

(Ստորագրություններ)

ՊԱՏԱՍԽԱՆ

...Մինչդեռ Դավրեժն և վիճակն նյութական ոչինչ օգուտ չկա և չսպասվիր ես ստանալ, նկատելով նույն նյութական վիճակը, սակայն խի՞ղճ է, որ Էջմիածնի կալվածքին արդյունքը *ես ինքյանց վերադարձնել ուզենան և եթե էջմիածին հետզհետե տալ և անդի ունեցած առավել կամ նվազ արդյունքը սմին և նմին թողու, ապա ինքն ինչո՞վ պիտի կառավարվի։*

Վ. Ե. ՄԱՆԿՈՒՆԻ

Ընթերցող, դու կարդացի՞ր այս աղերսը, որ ուղղված է Նորին վեհափառության կաթողիկոսին ամենայն հայոց, դու տեսա՞ր այն կոշտ լակոնական պատասխանը, որ դարձրած է դեպի խնդրատուները։

Աղերսը կատարյալ աղերս է, *այս բառի բուն նշանակությամբ նորա մեջ չկան փաստեր՝ ապացույցներ, որ հաստատում են խնդրատուի իրավունքները, նորա մեջ կան միայն փաղաքշական խոսքեր, խայտաճամուկ գովեստներ, լաց և արտասուք։ Այսպիսի աղերսը ուղղում են միայն ստրուկներն, որովհետև կարծում են, թե այլ ոճով իրանց տիրոջ սիրտը ամոքել կարող չեն...*

Պարսկաստանի հայը, դարերով ստրկության մեջ ճնշված հայը՝ լավ սովորած է հիշյալ ոճին, նա չգիտե ի՞նչ է իրավունքը, նա միայն գիտե աղաչել և պաղատել...

Մենք չենք զարմանում աղերսի պարունակության վերա, մեզ զարմացնում է միայն պատասխանը. ուրեմն խոսենք դորա մասին։

Դավրեժու ազգային հոգաբարձությունը վիճակային առաջնորդի հետ միասին ուղղում են մի աղերս դեպի ամենայն հայոց կաթողիկոսը. խնդրելով, որ Պարսկաստանից Ս. Էջմիածնա գանձարանը մտնող ինչ-ինչ արդյունքները հատկացվին Դավրեժու ազգային դպրոցին։ Խնդիրը բավականին կարևոր է, և խնդրատուներն հասարակ մարդիկ չեն. խնդրում են՝ վիճակային առաջնորդն ազգային հոգաբարձության հետ միասին։

Էջմիածնում սինոդ կա։ Վեհ. կաթողիկոսը պետք է աղերսագիրը առաջարկեր սինոդին, որովհետև ուղղակի վերաբերում էր սուրբ աթոռի եկամտական մասին, և սինոդը, յուր կողմից քննելով խնդիրը, կամ կընդուներ և կամ կմերժեր։

Բայց այս պաշտոնական ձևերից և ոչ մեկը գործ դրված չէ եղել։ Չլինի՞ թե վեհ. կաթողիկոսը ոչինչ տեղեկություն չուներ այդ աղերսի վրա։ Պատասխանում է Մանկունին։ Ով է այդ Մանկունին։ Վեհափա-

նի վաղեմի սեննկապետը, որ այսօր եպիսկոպոսական վեղար է կրում։ Շատ լավ, այսպիսի եպիսկոպոսներ, փառք աստուծո, շատ ունենք, մի՞թե նրանց իրավունք է տված ինքնահաճ կերպով ազգային գործերի մեջ մտնել։

Այժմ ես հասկանում եմ այն խոսքը, որ շատերն ասում են, թե էջմիածինը կառավարում է Մանկունին…

Այստեղ զարմանալու ոչինչ չկա. ազգերի պատմության մեջ դա մի նոր բան չէ։ Եղել են ժամանակներ, որ պալատական սեննկապետները և արքունյաց նաժիշտներն մեծ դեր են խաղացել ամբողջ պետությունների ճակատագրի մեջ…

Դառնանք հիմա աղերսագրի այն կետերին, թե որքան իրավացի կամ անիրավ էր ազգ. հոգաբարձության խնդիրը։

1. Ազգ. հոգաբարձությունը խնդրում է Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի արդյունքից 100 ռուբլի (ինչո՞ւ ոչ ամենը) շնորհել Դավրիժո ազգային դպրոցին։

Ինչո՞ւ ոչ ամենը, կրկնում ենք դարձյալ։ Էջմիածինը ի՞նչ իրավունք ունի տանել Ս. Նախավկայի վանքի արդյունքը։ Որպեսզի բացատրենք այս հարցը, մենք ստիպված ենք ասել մի ամբողջ պատմություն։

Ռուսաց պարսից հետ պատերազմից հետո, Թուրքմենչայի դաշնագրության համեմատ, պարսից հպատակ հայերին թույլ տրվեցավ գաղթել դեպի Ռուսաստան։ Նույն ժամանակվա Ատրպատականի փոխարքան, որ կոչվում էր Նաիբուլ-Սալթանա (Աբբաս-Միրզա մեծ իշխանը), գիտելով հայ հպատակների մեծ նշանակությունը Պարսկաստանի վաճառականության և երկրագործության մեջ, սկսավ ամեն կերպ կողմնակի հնարներ գործ դնել, որպեսզի գաղթականությունը արգելի։ Մեծ իշխանին աջակից էին անգլիական դեսպանատան մի քանի պաշտոնակալներ, որոնք պաշտպանում էին այն ժամանակ Պարսկաստանի շահերը։ Գաղթականությունը թեև իսպառ չխափանվեցավ, բայց հայերը մասամբ պահվեցան Պարսկաստանում յուրյանց հայրենի հողի վերա։ Այս մնալու պատճառն այն է, որ մեծ իշխանը կարողացավ գրավել հայ ժողովուրդը զանազան առանձնաշնորհություններով. օրինակ, գյուղացիների հարկերը թեթևացրուց, Դավրեժ քաղաքի հայերին բոլորովին ազատեց հարկատվությունից, շառիաթի

անիրավության դեմ ղանաղան ֆիրմաններ շնորհեց[1] և գյուղերի նշանակություն ունեցող մելիքներին ու տանուտերերին մշտական ռոճիկ սահմանեց։ Մեծ իշխանը, իմանալով, որ հայերը կապված են ավելի յուրյանց եկեղեցուն և եկեղեցականներին, աշխատեց գրավել և այդ կողմը։ Հաֆթվանա եկեղեցուն շնորհեց մի քանի օրավար գետին[2], որպես եկեղեցական կալվածք, որովհետև այս եկեղեցին նույն ժամանակվա առաջնորդարանն էր, և առաջնորդին մշտական ռոճիկ սահմանեց, որը մինչև այսօր ստանում է ամեն մեկ Պարսկաստանի վիճակավորն։ Այժմ մոտեցանք բուն խնդրին. մեծ իշխանը շնորհեց Ս. Նախավկայի վանքին մի ամբողջ գյուղ, որ կոչվում է Դարաշամբ, նույն գյուղը, որի մոտ գտնվում է վանքը, որը և մինչև այսօր համարվում է վանքային կալվածք։ Վանքի գլխավոր արդյունքը գոյանում է այս գյուղից, և այս արդյունքը մտնում է էջմիածնա գանձարանը, ի՞նչ իրավունքով, հայտնի չէ…

Եթե մենք ուշադրությամբ կարդալու լինենք Մանկունու պատասխանը, նորա մեջ կգտնենք այս խոսքերը. «Մինչդեռ Դավրեժեն ի վիճակեն նյութական ոչինչ օգուտ չկա և չպատվեր ես ստանալ, սակայն խի՞ղճ է, որ էջմիածնի կալվածքին արդյունքը ես ինքյանց (այսինքն՝ վիճակի հայերին) վերադարձնել ուղենամ»։ Այս խոսքերից պարզ երևում է, որ Մանկունին Ս. Նախավկային պատկանած Դարաշամբ գյուղը էջմիածնա կալվածք է համարում։ Դա կարելի էր, եթե Մանկունին յուր հրաշագործ զորությամբ հրամա՛ն տար Երասխ գետին թողնել Պարսկաստանի և Ռուսաստանի սահմանի գիծը և մի քանի տասնյակ մղոն հեռվից հոսել, այն ժամանակ Դարաշամբը կընկներ Ռուսաց հողի վերա և, ավելի մոտենալով էջմիածնին, Մանկունին կարող կլիներ ջնջել վանքի դռան ճակատից այն պարսկերեն հսկա արձանագրությունը, որ ասում է, թե Նաիբուլ-Սալթանան չէ ընծայել Դարաշամբ գյու-

---

[1] Մահմեդական օրենքով, եթե մի այլադավան ընդունե իսլամը, նորա ազգականներից որն մեռնելու լինի, ժառանգությունը մահմեդական եղողին կհասնի, թեև մեռնողն ունենար ուղղակի ժառանգներ։ Այս անկանոնությունը քիչ զրկանք չէր պատճառում հայերին, որոնցից շատերն ընդունում էին իսլամը յուրյանց ազգակիցների կայքը հափշտակելու համար։

2 Չնայելով, որ պարսից օրենքով բոլորովին արգելված է եկեղեցական կալվածքը, կամ այն, որ կոչվում է վախմիար, վաճառքի դնել, էջմիածնից Պարսկաստան ուղարկված վիճակային առաջնորդներն սկսեցին վերոհիշյալ կալվածքը փոքր առ փոքր վաճառել. բայց հայտնի չէ նորա փողը ստրր Աթոռն ուղարկեցին, թե յուրյանց քսակը դրին։ Եթե այն հողը մնացած լիներ, կարող էր այժմ նորա եկամուտով նույն գյուղում մի օրինավոր վարժարան պահպանվել։

ղը էջմիածնին, այլ ընծայել է նա Ս. Նախավկայի վանքին, այն վանքին, որ այսօր Պարսկաստանի հողի վերա է գտնվում, ընծայել է այն վանքի ժողովրդին, որ այսօր Պարսկաստանի հպատակներն են[1]։

Մեր կարծիքով, Դավրեժի ազգային հոգաբարձությունն ամենևին պատճառ չուներ խնդրել էջմիածնից, որ յուրյան, այսինքն՝ Պարսկաստանի ժողովրդին պատկանած մի կալվածքի արդյունքից 100 ռուբլի ողորմություն շնորհեր, քանի որ ինքը հոգաբարձությունը կարող էր բոլորովին դադարեցնել ամբողջ արդյունքի էջմիածին մտնելը։ Եվ եթե օգուտ քաղելով ժողովրդի կուրությունից մինչև այսօր հափշտակվել է արդյունքը, մենք այդ կոչում ենք կղերական ճարտաճարություն, ավելի ոչինչ...

Դառնանք այժմ 2-րդ խնդրին։

Դավրեժու ազգ. հոգաբարձությունը խնդրում է Դոխորղանու այգիի արդյունքը սեփականել Դավրեժի ազգ. դպրոցին։ Մանկունին այդ ևս համարում է էջմիածնա կալվածք, բայց ապացույցներն հայտնի չեն։

Մենք դարձյալ ստիպված ենք ասել մի նոր պատմություն հայերի Պարսկաստանից գաղթականության մասին։ Հայերի գաղթականությունը Պարսկաստանից այնքան հանկարծակի եղավ, որ նրանք ամենևին միջոց չունեցան վաճառելու յուրյանց կալվածքները, այլ թողեցին մնացող ազգականներին, և եթե դոքա չկային, ընծայեցին տեղային որևիցե եկեղեցուն։ Այսպիսի նվերներից մեկն է և Դոխորղանու այգին, որ այսօր էջմիածնա կալվածք է դարձել...

3-րդ խնդիրն ավելի հետաքրքրական է։

Դավրեժու ազգ. հոգաբարձությունը խնդրում է, որ Դավրեժ քաղաքի եկեղեցիների մեջ Մայր աթոռի անունով հավաքված դանձանակադրամը հատկացվի տեղային ազգ. ուսումնարանին։ Բայց Մանկունին ուրանում է, թե «Դավրիժեն և վիճակեն նյութական ոչինչ օգուտ չկա և չսպասվիր ևս ստանալ»։ Ուրեմն էջմիածինը ի՞նչ կարող է տալ, քանի որ ինքը ոչինչ չէ ստանում։

Դա կատարյալ ստություն է։

Բայց այստեղ կա մի ուրիշ հարց ևս, որտեղ երևան է գալիս կղերական պատկերը յուր ամբողջ հոգևոր հարստահարությամբ։

---

[1] Մենք յուր ժամանակին կհրատարակենք հիշյալ արձանագրության ճիշտ օրինակը, նույնպես և Նախրու-Սալթանայի շնորհած արքունական ֆիրմանը, ցույց տալու համար, թե մինչև ո՞ր աստիճան էջմիածինը բռնաբարել գիտե իրավունքը և արդարությունը։

Ամեն մարդ գիտե Պարսկաստանի հայոց թշվառությունը, ամեն մարդ գիտե, որ նա աղքատ է, և հայտնի է այդ ողորմելի աղքատության պատճառը։ Նորա ձեռքի բոլոր վաստակը գնում է զանազան տուրքերի· Նա պետք է տուրք վճարե դիվանին (կառավարությանը)։ Նա պետք է տուրք վճարե կալվածատիրին, որի հողը մշակում է։ Նա պետք է տուրք վճարե սարիֆարաստին և այլն։ Ավելացնենք դոցա վերա և հոգևոր տուրքեր, նա առանձին տուրք է վճարում վիճակային առաջնորդին պսակի, թաղման և մկրտության համար։ Առաջնորդն ստանում է նաև ժողովրդի ծխահամարի թվով մի ուրիշ տուրք ևս, որ կոչվում է «հոգևոր պտուղ»։ Քահանան ստանում է առանձին բոլոր այն ծիսակատարությանց մասին, որ եկեղեցին մատակարարում է յուր ժողովրդին։ Դոցա վերա ավելանում են և գանձանակագրամները[1], որ եկեղեցիներում հավաքվում են էջմիածնի անունով, և պրոսաճարկը, որ ստացվում է Մայր աթոռի համար։ Այս բոլոր հոգևոր տուրքերն, եթե յուրյանց ժամանակին չվճարվեն, ոչ միայն պարտավորյալը զուրկ կմնա եկեղեցվո այս և այն խորհրդից, այլ գործ կդրվին ավելի ազդու միջոցներ, որոնք գործ է դնում դիվանը յուր հարկերը հավաքելու մասին...

Այժմ ո՞վ կարող է մեղադրել մի այսպիսի ժողովրդին, որ ենթարկված է այսպիսի «կղերական հարստահարությանց»։ Ո՞վ կարող է մեղադրել նորան այն մոլորության համար, որ նա յուր մայրենի եկեղեցին թողնելով կամ կաթոլիկ է դառնում, կամ բողոքական և կամ մահմեդական...

Այս բոլորից հետո այժմ հասկանալի է, թե որքան իրավացի է Մանկունու պատասխանը, իսկ այդ պատասխանը մենք համարում ենք էջմիածնա խոսքը, և Դավրեժի հայ հասարակությունն ևս այնպես է ընդունում։

Ի՞նչ էր մնում այնուհետև անել հասարակությանը, նա էջմիածնա դեմ դատ բացելու և յուր իրավունքները պահանջելու ընդունակություն չունի. նրան մնում էր ասել մի բան, թե «մենք այսուհետև էջմիածնա հետ գործ չունենք, մենք կտրում ենք մեր բոլոր կապերը Մայր աթոռի հետ, մենք կհիմնենք Պարսկաստանում մի առանձին

---

[1] Կար մի ժամանակ, որ Տաճկաստանի բոլոր եկեղեցիներում պտտում էին զանազան գանձանակներ զանազան վանքերի և անապատների անունով, նոցա մեջ ավելի նշանակություն ուներ էջմիածինը. բայց Կ. Պոլսի պատրիարքը բոլորը արգելեց։ Այժմ Պարսկաստանի եկեղեցիներն նույն դրության մեջն են գտնվում, բայց այստեղից ե՞րբ պետք է արգելվի այդ հոգևոր մուրացկանությունը, հայտնի չէ...

Հոգևոր կառավարություն, որպես ունի Տաճկաստանը, յուր պատրիարքներով և կաթողիկոսներով, և էջմիածինը այնուհետև չէ կարող տանել մեր վանքերի արդյունքը...»։

Եվ այսպես էլ անելու միտք ունի նա։

Այժմ մենք առաջարկում ենք մեր ընթերցողին, որքան էլ զզվելի լինեի «Արարատ» ամսագիրը, առնել մարտ ամսի համարը և կարդալ եր. 82 «Կղերականություն» վերնագրով հոդվածը։ Պ. Հայկորդին, կամենալով ցրել կղերականությունը, միևնույն ժամանակ ինքն չէ զգում, որ յուր գրվածքից փչում է կաթոլիկ-կղերականության խիստ թթված հոտը... Նորա հոդվածի մեջ աչքի են զարկում հետևյալ խոսքերը. «Հայոց ընդհանուր հայրապետությունը, որո Մայր աթոռը միշտ (**) համարված է Ս. էջմիածինը, դարավոր ժամանակներե հետե ամեն տերությունների, որոց ձեռքին տակ գտնված են տիրասեր-հայկականք, ճանաչված է այն ազգին ներկայացուցիչը թե՛ կրոնական և թե՛ քաղաքական նկատմամբ, ուստի և Ս. էջմիածնա Ծայրագույն պատրիարքությունը՝ ամենայն հայոց կաթողիկոսությունը այդ յուր պաշտոնը ջանացած է հավետ կանոնավոր ու ազգօգուտ կերպով կատարել»։

Թողենք անցյալը, թողենք պատմությունը, երբ էջմիածնա կաթողիկոսներն պարսիկ իշխաններից կաշառքով էին հափշտակում Մայր աթոռի գահակալությունը և, պատրաստի փող չունենալով, պարտամուրհակներ էին տալիս, և ժամանակին չկարողանալով վճարել, Մայր աթոռի սրբությունը վաճառվում էին... Թողենք կեղտոտ անցյալը...

Այժմ ի՞նչ «կանոնավորություն» և ի՞նչ «ազգօգուտ» ջանադրություն ես գտնում, ընթերցող, էջմիածնա վարմունքի մեջ դեպի Պարսկաստանի թշվառ ժողովուրդը։ Բողոքական և կաթոլիկ քահանաներն հեռու երկիրներից գալիս են, Պարսկաստանում յուրյանց արծաթը և կյանքը սպառում են, հայերին ուսալու համար դպրոցներ են հիմնում։ Բայց էջմիածինը ամբողջ Ատրպատականի մեջ գտնված խեղճ հայ գյուղացի արդյունքը տանում է... նորանից խնդրում են նորա մի փոքր մասը գոնյա շնորհել յուրյանց որպես ողորմություն. այն ևս Մանկունու բերանով մերժվում է... Ահա՛, այսպես է կատարում էջմիածնա պատրիարքությունը յուր «կանոնավոր և ազգօգուտ» պաշտոնը դեպի յուր հետ կապված հայ ժողովուրդը...

Մեր ազգի մտածողներին վաղուց զբաղեցնում է մի խնդիր.

արդյոք պե՞տք է Էջմիածինը հայոց ընդհանուր ազգի Մայր աթոռ ճանաչել և Տաճկաստանում գտնված պատրիարքություններն և կաթողիկոսություններն իբրև հակաթոռ, և որպես Հայկորդին ասում է՝ չկաթողիկոսություն համարել։ Մենք ցանկություն չունենք այդ հարցը քրքրել՝ որովհետև գիտենք, որ հայոց ազգի կյանքը և նորա ժամանակակից պահանջները իրանք կանորինեն յուրյանց գործը։

Բայց մենք կառաջարկենք մի ուրիշ հարց. թե ո՞վ է մեղավոր, որ օտար պետության մեջ գտնվող հայերն օրըստօրե յուրյանց կապերն կտրում են Էջմիածնա հետ... Ո՞վ է մեղավոր, որ Պարսկաստանի հայերն այսօրվա օրս մտածում են յուրյանց համար առանձին և Էջմիածնից անկախ հոգևոր կառավարություն կազմել...

Պատասխանը ինքնըստինքյան հասկանալի է...

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Հունիսի 15

Երեք միլիոն թուրքահպատակ քրիստոնյա հայ ժողովուրդ թուրքաց լծի դեմ ուրիշ քրիստոնյաների ընդհանուր ապստամբության ժամանակ ամենևին ձայն չէ հանում։ Հայերի տարրը Թուրքիայում կարծես մեռած է։ Այդ անմխիթար երևույթը ունի թե իր աշխարհագրական և ազգագրական, թե պատմական և բարոյական պատճառները։ Հայաստանի և Փոքր Ասիայի հայերի վրա վիճակագրական ճիշտ տեղեկություններ ու ոք չունի։ Բայց որքան հայտնի է՝ ամենախիտ կերպով հայերը բնակեցրած են Վանի գավառում և այդտեղ նրանք մահմեդականներից բազմաթիվ են, Բայց Վանի հայերը, բացի այդ գավառի սարոտ մասերից՝ բոլորովին զենք չունեն և չեն իմանում զենք գործածել։ Մուշ գավառի հայերը ամենքը զինավորված են և քաջ մարդիկ են, բայց այնքան խիտ կերպով բնակեցրած չեն։ Փոքր Ասիայի որ մասն էլ որ գնաք՝ հայերի գյուղերը ցրված կտեսնեք մահմեդական գյուղերի մեջ։ Մահմեդականներ ասելով պետք է հասկանանք թե՛ թուրքերին, թե՛ քրդերին։ Երկու ցեղերն էլ թշնամի են հայերին՝ մահմեդականությունը հատկանիշ է ենթարկելով այս կամ այն քրիստոնյա ցեղ իր ազդեցությանը, անհաշտ թշնամի դարձնել նրան մինչև անգամ իր ցեղակից քրիստոնյաներին։ Ինչպես հայտնի է, քրդերը հին մեդացիներ են և ուրեմն հայերին և պարսիկներին ցեղակից ժողովուրդ։ Քրդերից նոքա, որք մահմեդականություն ընդունած չեն, որք ավե-

տարանն են ճանաչում, կամ եզդիներ անվանված խառն քրիստոնեական և կռապաշտական աղանդը՝ շատ բարեկամ են հայերին։ Քուրդերը անհասարակ քաջ, զորեղ մարդիկ են, և ամենքը զենք ունեն։ Զենք ունենալը քուրդի համար առաջին հարկավորություն է։ Մի քանի տարի առաջ Երզնկայի մոտ մի գյուղում բացվեցավ մի հայոց արական ուսումնարան։ Քուրդերը սկսեցին ուղարկել այդ ուսումնարանը իրենց երեխաներին, բայց տեղական առաջնորդը արգելեց, որ հայերը քուրդերի հետ միասին սովորեն, և ուսումնարանը ստիպվեցավ այլևս չընդունել քուրդերին։ Այդպես է միշտ վարվում մեր հոգևորականությունը։ Ամբողջ աշխարհի ճշմարիտ քրիստոնեական ոգով վառված մարդիկ մեծ համակրությամբ են նայում մահմեդական լուծի տակ ճնշված քրիստոնյա ցեղերի վրա, երբ նրանք հարկավոր ժամանակին գիտեն իրանց սուրբ կրոնքը, ավետարան ճշմարտությունը՝ զենքը ձեռքին պաշտպանելու և ճշմարտության ու ազատության համար արյուն թափելու։ Իսկ հայոց հոգևորականությունը Փոքր Ասիայում դարերով և միշտ համոզել է հայերին տան մեջն էլ զենք չպահել, որ կարողանան ցույց տալ մահմեդական տարրին, թե հայերը նրա հնազանդ, հլու հպատակներ են։ Այդ դեռ ոչինչ, այդ դեռ կարելի է մեկնել քրիստոնեական հնազանդությամբ, բայց ինչ կասեք, որ մեր հոգևորականությունը միշտ եղել է ժողովրդի ամեն անհատական արտահայտությունը մատնող թուրքաց տերության առջև։ Նորերումս Տրապիզոնում հայ երիտասարդները ուզեցին թատրոն ներկայացնել և ընտրեցին այդ ներկայացման համար մի պատմական ողբերգություն։ Հոգևորականները մատնեցին տերությանը, որպես մի քաղաքական հանցանք, և երբ վարագույրը բազմաթիվ հանդիսականների ներկայությամբ բարձրացավ, դահլիճի դուռը բացվեց, և մտավ տերության ոստիկանը, հրամայելով, որ հասարակությունը դուրս գա թատրոնից և ներկայացումն չշարունակվի։ Այդ տեսակ հազար ու մի անցքեր կարող եմ պատմել ձեզ մեր հոգևորականների քաջագործություններից։ Մատնություն և քրիստոնեություն միմյանց հակառակ սկիզբներ են։ Քի՞չ է պատահել միթե, որ Թուրքիայի ազատամիտ հայ երիտասարդները մատնվեցան հոգևորականների ձեռքով, քի՞չ է պատահել միթե, որ հայ լրագիրները խափանվեցան հայ հոգևորականության Բարձր. Դռան մատնության պատճառով... Ահա ինչ է արել և ինչ է անում մեզ համար մեր հոգևորականությունը։ Ընդհանրապես Փոքր Ասիայի և Հայաստանի հայերի դրությունը այս է՝ մահմեդական տարրը կատաղած է հայերի դեմ միայն այն

22 Րաֆֆի. Երկ. ժող 12 հատ.․ հատ. 10 353

պատճառով, որ հայերը քրիստոնյա ժողովուրդ են։ Մահմեդական ամբոխը, թե քաղաքներում թե գյուղերում՝ դրդված լինելով մոլեռանդ մոլլաներից, կկոտորեն բոլոր հայերին, եթե Թուրքաց տերության զորքը շարժվեր դրանց կոտորության արտահայտվելուն...

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կրոնական շարժումներ մահմեդականների մեջ։—Ամերիկացի բողոքական միսիոնարներ։—Կաթոլիկ միսիոնարներ լազարիստների կարգից։—Հայոց հոգևոր կառավարությունը Պարսկաստանում և նորա անբավականացուցիչ ընթացքը։—Հայոց ազգային սահմանադրությունը Պարսկաստանում։—Պարսկաստանի հայոց մտավոր շարժումը և Դավրեժի ազգային դպրոցը։—Ո՞րպես պետք է բարեկարգել Պարսկաստանում վիճակային հոգևոր կառավարությունը։—Դավրեժի ընթերցարանը։

Պարսկաստանում վերջին ժամանակներումս մահմեդականների մեջ հայտնվում են խիստ զգալի կրոնական շարժումներ, որոնք առաջ թաքնված էին հալածանքի երեսից։ Երևան են գալիս զանազան աղանդներ, որոնք յուրյանց բազմաթիվ հետևողներ ունին։ Այս կրոնական հերձվածները մի ազդու բողոք են իսլամի մոլեռանդության դեմ, որ ճնշում է կյանքի և մտքի ամեն ազատ ձգտողությունն[1]։

Քննելով այս աղանդների բնավորությունը և ոգին, սոցա մեծ մասը հայտնվում են որպես նիհիլիստական։ *Բայց ո՞րտեղից է առաջ եկել ուղղությունը դեռևս չզարգացած պարսիկների մեջ։*

Դա ունի իր բնական պատճառները։

Մի կրոնք որքան հեռանում է ճշմարիտ աստվածպաշտությունից, մի կրոնքի մեջ որքան պակասում են բարոյական և հոգեկան սկզբունքները, այնքան նա դառնում է սնապաշտական, և նորա բոլոր վարդապետությունները հիմնված են լինում արտաքին ձևերի և արարողության վերա։

Մի այսպիսի կրոնքով ապրող մարդը, երբ հանկարծ զգում է յուր մոլորությունը, նա մի ծայրահեղությունից թռչում է դեպի մի այլ

---

[1] *Պ. Րաֆֆիի Պարսկաստանի ճանապարհորդության մեջ ընդարձակ և ավելի մանրամասն տեղեկություններ լինելով մահմեդականների մեջ եղած աղանդների մասին, մենք բավականանում ենք այս հոդվածում միայն ընդհանուր տեսությամբ, պահելով հիշյալ աշխատության հրատարակությանը, որ արդեն, որպես գիտենք, պատրաստվում է իր ամբողջությամբ «Փորձի» մեջ տպագրելու համար։*

ծայրահեղություն,— ամենաստոր մոլեռանդությունից նա անցնում է անկրոնության և դառնում է անձնական, ճերմող:

Շատ բնական է, որ մարդու չափազանց խառված դրությունը ծնեցնում է նորա մեջ կասկած և երկբայություն. բավական է, որ նա հասկանա, թե խաբված է յուր կարծիքների մեջ, որ այնուհետև կորցնե յուր հավատարմությունը դեպի ամեն ճշմարտություն։ Նա միայն հերքում է, փշրում է, ոչնչացնում է ամեն ինչ, որ հին է, բայց թե ինչ պետք է դնի նորա տեղ, այդ ինքն էլ չգիտե։

Այստեղից հասկանալի է, թե ինչու ամեն մեկ պարսիկ աղանդավորից հարցնելու ժամանակ, նա չէ կարողանում մի որոշ տեղեկություն տալ իր դավանության մասին։ Նա միայն բողոքում է հնի դեմ, բայց ինքը մի կազմակերպված վարդապետություն չունի։ Եվ այլ կերպ լինել կարող չէր, որովհետև աղանդներն յուրյանց սկզբնական դրության մեջ միշտ լինում են անմշակ. նորանք զարգանում են, կատարելագործվում են կյանքի և ժամանակի հետ։

Զարմանալին այն է, որ Պարսկաստանում հայտնված աղանդներից մի քանիսը բոլորովին նյութապաշտական են, հիմնված ավելի բնական ճշմարտությունների վերա։ Դոցա հետևողները գտնվում են ժողովրդի ավելի զարգացած դասի մեջ:

Նյութապաշտությունը, կամ այլ խոսքով բնապաշտությունը, մարդու սկզբնական և վերջնական դավանությունն է։ Նա իր աղայության մեջ, հրապուրվելով բնության ազդու երևույթներով, աստվածացնում է նորանց և պաշտում է որպես կույր ճակատագիր, իսկ յուր զարգացման աստիճանին հասնելով, պաշտում է նորանց որպես փիլիսոփա: Բայց ոգիներին կամ աներևույթ էակներին երկրպագություն տալը հիշյալ հերի վերա— Է բարիների աղանդը։ Նորա հետևողներն ամեն քաղաք-

Բայց մի աղանդ, որ ավելի ուժ և զորություն է ստացել, չնայելով այն հալածանքներին, որ մինչև անգամ ինկվիզիցիան չի ունեցել իր դոհերի վերա — Է բարիների աղանդը։ Նորա հետևողներն ամեն քաղաքներում բազմացել են և ժողովրդի ավելի մտածող և ընդունակ մասն են կազմում։ Զանդիանի սարսափելի կոտորածից հետո այս աղանդը առժամանակ լռել և թաքուստի մեջ էր պահվում, բայց այս օրերում նա յուր դրոշը կրկին բարձրացրեց Դավրեժ քաղաքում։

Քաղաքի նշանավոր մեջիդներից մեկի դռան վերա, որտեղից իսլամի մեծ մուշտայիդը (հոգևոր պետը) ամեն օր անցնում էր նույն մեջիդում իր նամազը կատարելու, կպցրած էր մի հայտարարություն. նորա պարունակությունը խիստ վտանգ և վճռական էր։ Բաբիները

հայտնում էին, թե յուրյանց աղանդի գլխավոր հեղինակը (մոլլա Մամադալի ղանգիանցին, որին պարսիկները 22 տարի առաջ նահատակեցին Դավրեժ քաղաքում) այժմ կենդանի է. նա արդեն հարություն էր առած այն ժամանակ, երբ պարսիկները կարծում էին, թե սպանեցին նորան. թե նա գտանվում է այժմ Աքքա քաղաքում և այնտեղից ուղարկում է հավատացյալներին յուր հրահանգները. թե այժմ բաբիների հասարակությունը պահանջում է, որ իրանք թույլատրություն ստանան ազատ և առանց արգելքի պաշտել յուրյանց կրոնքը, և այդ սպասում են իսլամի մեծ մուշտայիդից. իսկ հակառակ դեպքում ոչ միայն մուշտայիդի կյանքը ենթարկված կլինի մահվան. այլև իրանք արդեն պատրաստ ունին 10.000 զինյալ տղամարդիկ, որոնք յուրյանց սրով և արյունով պետք է գնեն բաբիության ազատությունը:

Այս հայտարարությունը բոլորովին սարսափի մեջ դցեց քաղաքը. մուշտայիդը մի քանի օր դադարեց մեջիդը գնալուց, այնուհետև նա դուրս էր գալիս շրջապատված զինյալ մարդիկանցով: Բայց թե ինչո՞վ կվերջանա այս խռովությունը, դեռ հայտնի չէ:

Թե հալածանքը սաստկացնում է աղանդների աճելությունը— դա մի պարզ ճշմարտություն է: Եվ առաքյալների օրերում, երբ հրեաները ամենայն խստությամբ հալածում էին նոցա քարոզությունները, մի ատյանի մեջ, որ հավաքված էր նորանց դատապարտելու համար, խիստ խելացի կերպով խոսեց հրեաների օրենսուսույց Գամաղիելը. «Հեռու կացեք այդ մարդիկանցից (առաքյալներից) և թողեք դորանց, պատճառը, որ եթե այդ խորհուրդը և այդ գործը մարդիկանցից է, կքանդվի: Բայց թե որ աստծուց է, չեք կարող քանդել դորանց, գուցե աստուծո դեմ կռիվ անողներ կլինիք»:

Բայց ես ուրիշ կերպ կասեմ. —ամեն մի աղանդ, որ ծագում է մի ժողովրդի մեջ, եթե չի համապատասխանում նույն ժողովրդի կենսական պահանջներին, նա հիմք չունի և ինքն իրան կոչնչանա:

Բայց Պարսկաստանի մեջ աղանդների ոչնչանալը անհնարին է, որովհետև նրանք ժողովրդի բուն պահանջների արտահայտությունն են: Գուցե նորանք կկերպարանափոխվեն, բայց իրանց էությունը կորցնելու չեն:

* * *

Ոչ սակավ շարժումն է ձգել Պարսկաստանում քրիստոնեական քարոզությունը, որ մուտք է գործել ամերիկացի բողոքական առաքյալների ձեռքով: Նորանք համարյա թե Պարսկաստանի բոլոր նշանավոր

քաղաքներում ունին իրանց ծածուկ և հայտնի քարոզիչները, սկսյալ Դավրեժից մինչև Բենդիր-Բուշիր։ Քանի օր առաջ այս տեղում գտնված նոցա ժողովարանը գնացի, նա գտանվում է ամենագեղեցիկ և հոյակապ տան մեջ հայոց թաղում։ Ժողովարանի դահլիճը լիքն էր լսողներով երկու սեռից ևս. նոցա մեծ մասը մահմեդականներ էին, որոնց թվում կային մի քանի մոլլաներ և սեիդներ (իսլամի մարգարեի որդիներ), իսկ լսողների մնացյալ մասը կազմված էր հայերից և ուրիշ ազգություններից։ Անգլիացի քարոզիչը ամբիոնի վերա խոսում էր իր քարոզը ամենին հասկանալի թուրքաց լեզվով, աղոթքները և երգերը մատուցանվում էին դարձյալ նույն լեզվով։

Զարմանալի է, թե որպիսի խորին տպավորություն է անում մինչև անգամ անզգա սրտերի վերա լավ քարոզը։ Ես սկզբում ուշադրությամբ էի լսում, բայց հետո համարյա դադարեցա լսելուց, թեև նա խիստ գեղեցիկ և քաղցր էր։ Ես նույն միջոցին մտածում էի... բայց ի՞նչ էի մտածում... մտածում էի մեր եկեղեցու և մեր եկեղեցականների մասին...

Ես հիշեցի, որ քանի օր առաջ քաղաքի հայոց եկեղեցու քահանաները բողոքել էին սրբազան առաջնորդի մոտ, որպեսզի եկեղեցուն կից ընթերցարանը կիրակի օրերը փակվի, որովհետև ժողովուրդը ընթերցարան գնալով, էլ ժամ չէր գալիս, և քահանաները զրկվում էին յուրյանց շահերից... Նորին սրբազանությունը շատ խելացի կարգադրություն արեց, հրամայեց, որ ընթերցարանը բացվի՝ եկեղեցու մեջ պատարագն ավարտվելուց հետո... Բայց ցավալին այն է, որ դորանով ևս եկեղեցի գնացողների թիվը չբազմացավ... Ինչո՞ւ — Քահանաները պատասխանում են, թե ժողովուրդն անհավատ է դարձել, կրոնքը և ջերմեռանդությունը նոցա մեջ սառել է... Այս խոսքերը լսվում են ամեն տեղ, ամեն հայ քահանայի բերանից... Բայց ճշմարի՞տ են նորանք։

Ո՛չ։ Մեր ժողովուրդը անհավատ չէ և ոչ սառել է նորա մեջ կրոնական ջերմեռանդությունը, բայց թե նորան չի գրավում յուր մայրենի եկեղեցին, դա ունի յուր առանձին պատճառները։ Վեր առնենք երկու հիմնարկություն՝ մինը եկեղեցին, մյուսը ընթերցարանը, երկուսն էլ մրցություն են անում միմյանց հետ, երկուսի մեջ նույնպես լինում են ընթերցանություններ, բայց մինը տալիս է կենդանի խոսք և մտավոր սնունդ, մյուսը հնչեցնում է գրաբար անհասկանալի և մեռյալ ձայներ միայն... ընթերցարանը հաղթող է հանդիսանում, որովհետև ժողովուրդը նորան հասկանում է և նորանով գրավվում...

Աստվածների տաճարները զանազան ժամանակներում զանազան կերպերով գրավում էին ժողովրդի սիրտը։ Կար ժամանակ (և այժմ Հնդկաստանում նույնն է), երբ մի արձան բազմաթիվ գլուխներով և բազմաթիվ ձեռքերով, որի պարանոցի վերա զարդարվում էին վիշապներ կամ դրած էր մի մանյակ՝ շարած մարդիկների կառափներով, որը մի ձեռքով բռնել էր փոքրիկ երեխայի ոտներից և մինչև նորա կեսը կուլ էր տալիս. այսպիսի աստվածներն յուրյանց հրեշավոր այլանդակությամբ սարսափ էին գցում ռամկի վերա և հետևապես զարթեցնում էին նորա մեջ հարգանք և մոլեռանդություն դեպի յուրյանց սրբարանը։ Բայց երբ որ մարդիկների ճաշակը նրբացավ, երբ նրանք սկսեցին սիրել գեղեցիկը և վսեմը, այն ժամանակ աստվածներն ևս փոխեցին յուրյանց կերպարանքը. նորանք սկսեցին երևալ տաճարների մեջ ավելի գեղեցիկ և վայելուչ կերպով։ Հռոմի և Աթենքի գեղարվեստն ստեղծեց աստվածների ամենաընտիր օրինակները, և այնուհետև ամբոխը գրավվում էր յուր տաճարների շքեղությամբ, իր աստվածների գեղեցկությամբ։

Քրիստոնեությունն աշխարհ եկավ. նա յուր դրոշի վերա գրած ուներ այս խոսքերը. «Աստված հոգի է, և նորա երկրպագողներն էլ պետք է որ հոգով և ճշմարտությամբ երկրպագություն տան։ Բայց քրիստոնեությունը իր պարզությամբ, յուր բոլոր հոգեկան զորությամբ երկար ժամանակ չկարողացավ դարձնել ժողովուրդը դեպի ճշմարիտ աստվածապաշտություն, այն որ մարդու սրտի և հոգու մեջ յուր հիմքըն ունի։ Որովհետև ժողովուրդը վաղուց արդեն սովորած էր յուր աստվածը յուր աչքի առջև տեսնել, յուր շրթունքներով և ձեռքերով շոշափել և նորա նյութական մարմինը պաշտել...

Հռոմի եկեղեցին, կռապաշտության այդ վաղեմի վարպետը, սկսյալ Կռոնոսի ժամանակներից, ժողովրդի նյութապաշտության կույր օժանդակ դարձավ, և իր տաճարները զարդարեց այն բոլոր շքեղություններով, որ կարող են ազդել արտաքին զգայարանքների վերա, որ կարող են հրապուրել նորա անհավատությունը խայտաճամուկ երևույթներով միայն։

Բայց ժողովուրդը միշտ միակերպ չի մտածում, նորա ճաշակը կրթվում է, նորա միտքը զարգանում է, և հետևապես նորա պահանջմունքները փոխվում են։ Նա կրոնքի միջից սկսում է դուրս ձգել այն, որ նյութական է և որոնում է հոգևորը, այն, որ բարոյական ուժ ունի, այն, որ մաքրում է և ազնվացնում է բնավորությունը։ Դա աստծո կենդանի խոսքն է. ինչ եկեղեցում նա չի լսում, ժողովուրդը հետզհետե

դադարում է այնտեղ մուտք գործելուց... Եվ ինչ եկեղեցի աշխատում է միայն ծեսերի և արարողությանց զորությամբ պահել ժողովուրդը. նա հիմք չունի։

Այժմ ես հասկանում եմ, թե ինչու այս հայերն յուրյանց ազգային եկեղեցին թողած հավաքվել են այստեղ.— ես կրկին դառնում եմ դեպի բողոքականների ժողովարանը։

Քարոզը վերջացավ մի կարճ մաղթանքով, երգվեցավ մի բեթե երգ, և այնուհետև բազմությունն սկսեց ցրվել։ Բայց ոմանք մնացին, երևում էր, որ դորանք եկել էին լոկ հետաքրքրության և մանավանդ վիճելու համար. վերջինները մահմեդականներ էին։ Վիճաբանության առարկան սկզբում Քրիստոսի աստվածության մասին էր։ Մաներ Սանյն, ամերիկացի քահանան, թեև երևում էր բավական հմուտ աստվածաբանության մեջ, բայց պարսից և թուրքաց լեզուները լավ չտիրապետելու համար դժվարանում էր պատասխանել։ Նույն միջոցում մի ծերունի մոլլա, որ հեռվից նորան լուռ լսում էր, մոտեցավ վիճողներին և պահանջեց պարսկերեն աստվածաշունչ։ Այնուհետև դառնալով դեպի միսիոնարը, նա խնդրեց, որ թույլ տա յուր փոխարեն պատասխանել։ Միսիոնարը հաճեցավ, վիճաբանությունը անեց երկար և անդադար փոփոխվում էր մի խնդրից դեպի մյուսը։ Բոլորը, ինչ որ կարողացա եզրակացնել մոլլայի խոսելուց, այն էր, որ իսլամի այս ծերունի կրոնավորը երկար ժամանակ և խիստ հաստատուն կերպով ուսումնասիրել էր աստվածաշունչը, նորա փաստերը և բերած ապացույցները անկեղծ էին և պինդ համոզմունքից առաջ եկած։ Մոլլային կամակից էին և մի քանի ուրիշ պարսիկ դպիրներ, որոնց թվում կար և մի սեիդ իսլամի մարգարեի սերունդից։ Նրանք գործ էին ածում երկու զենք քրիստոնեությունը պաշտպանելու համար, մինը՝ աստվածաշունչ գիրքը, մյուսը՝ մահմեդականության փտած կազմակերպության ցույցմունքը։

Շատ վտանգավոր բան է, երբ կրոնքի ընդդեմ զինվորվում են այն անձինքը, որ իրանք նույն կրոնքի վարդապետներ են. որովհետև նորանք գիտեն և ծանոթ են յուրյանց կրոնքի թույլ կողմերին, ուստի հեշտությամբ կարող են խորտակել նորան։ Եվ այսպես քրիստոնեությունը գտնելով յուրյան հետևողներ մոլլաների մեջ, սպառնում է մեծ վտանգ իսլամին, որ յուր հիմքը պաշտպանում է միայն ժողովրդի մոլեռանդության մեջ։ Այսպես էլ եղավ և քրիստոնեության մեջ. հռովմեական վանքերի ցեխից դուրս եկան այն մարդիկը, որոնք Լու-

մի սարսափելի թշնամիքը դարձան. բողոքականությունը նրանց արդյունքն է։

Հետևյալ օրը ես բողոքականների երկսեռ դպրոցը մտա, ուր խառըն սովորում էին աղջիկներ և տղաներ. նրանց թվում կար մի քանի աշակերտներ և աշակերտուհիք թուրքերից, իսկ մնացյալները հայեր էին։ Առաջին քաղցր տպավորությունը, որ գործում է այցելուի վերա, է ամերիկական մանկավարժության կանոնավոր կազմակերպությունը, մանավանդ մի այնպիսի երկրում, ուր բնիկների երեխաները դեռ սովորում են ժամատների բակերում, տիրացուների ձեռքով, կամ մզկիթների խուցերում մոլլաների ձեռքով։

Վարժուհին, որ կոչվում էր միս Ջուլի, խիստ պարզ կերպով խոսում էր հայերեն և թուրքերեն. նա գիտեր այդ երկու լեզուների դըպրությունը այնքան, որ կարողանում էր նույն լեզուներով ավանդել աշակերտներին ուսանելի առարկայք։ Թեև աշակերտուհիքը նույն միջոցում պարապած էին ձեռագործներով և աշակերտները՝ գեղագրությամբ, բայց վարժուհին ցանկացավ, որ ես տեսնեի, թե որքան առաջ էին գնացած նրանք հայերենի մեջ։ Եղավ մի փոքրիկ հարցաքննություն։ Ճշմարիտն ասած, ես բոլորը գտա գոհացուցիչ, չնայելով, որ երեխայք շատ փոքր էին, և նրանցից շատերը երկար ժամանակ չէր, որ մտել էին դպրոցը։

Այնուհետև վարժուհին հայտնեց, թե ինքը շատ ցանկանում է ունենալ հայոց աշխարհաբար լեզվի քերականություն՝ աշակերտներին մայրենի լեզուն կանոնավոր կերպով ուսուցանելու համար, և դիմում էր իմ խորհրդին, որ նրան մի որևիցե ձեռնարկ առաջարկեմ։ Ես ամաչեցի ասել, թե մեր աշխարհաբարը դեռ բոլորովին մշակված չէ, և մենք աշխարհաբարի կանոնավոր քերականություն չունենք, և առաջարկեցի պ. Պալասանյանի քերականությունը։ Նա իսկույն նշանակեց յուր հիշողության տետրակի մեջ։

Ամո՞թ մեզ համար. ամերիկացուհին մտածում է հայի որդուն կանոնավոր կերպով ուսուցանել յուր մայրենի լեզուն, բայց աշխարհաբարի քերականությունը դեռ բուն հայկական դպրոցներում մուտք գործած չէ...

Չմոռանանք ասել, որ քանի օրից հետո ես ընդունեցի մի քանի խոշոր բամբասանքներ, թե ինչո՞ւ ես մտել էի ֆարմասոնների ժողովարանը, այստեղ այդպես են կոչում բողոքական քարոզիչներին։ Ողորմե՞լի մարդիկ դեռ չգիտեն, թե ի՞նչ նշանակություն ունի մտնել թշնամու բանակը և նրա ուժերը կշռել... Այս կեղծավորները, ճշմա-

րիտ է, Հայոց եկեղեցու փոշիները յուրյանց ծնրադրությամբ լիստում են, բայց եթե գիտենային, թե Հայկի և Արամի ոսկերքը կարող էին մի քանի կոպեկի շահ բերել, միշտ պատրաստ են նորանց գերեզմաններից հանել ու վաճառել...

* * *

Այսքան խոսելով բողոքական միսիոնարների մասին, չի կարելի և մի քանի խոսք չասել կաթոլիկ կղերի մասին, որոնք հայտնվել են Պարսկաստանում, որպես լույս և ճշմարտության *տարածողներ։ Եվրոպայում* անարգված և յուր ճամարումը կորցրած *այդ սևախումբ հասարակությունն այժմ որոնում է յուր զոհերը միամիտ արևելքում։ Նորանք գործում են այստեղ այն, ինչ որ մի քանի դար առաջ անում էին Եվրոպայում։ Որպեսզի ավելի շոշափելի կերպով նկարագրվի դորանց գործունեությունը, իբրև օրինակ ես վեր կառնեմ մի գյուղ, ուր անցյալ ամառ Սալմաստա կողմերում ճանապարհորդության ժամանակ առիթ ունեցա գտնվելու։ Այս գյուղը կոչվում է Խոսրովխա. դա ունի մինչև 300 տուն բնակիչներ, ուր բացի մի քանի հայ լուսավորչական ընտանիքներից, մնացյալը բոլորը կաթոլիկներ են։*

Չի կարելի մի ուրիշ տեղում ավելի բացարձակ կերպով նկատել կաթոլիկ կղերի բթամտացնող, ստրկացնող և կենդանի մարդկանցից դիակներ պատրաստող ազդեցությունը, որպես հիշյալ գյուղում։ Թե որպիսի զենք է գործ դնում հռոմեական կղերը տիրելու իր ժողովրդի սրտի, մտքի և բոլոր զգացմունքների վերա, դա արդեն հայտնի է, դա կրոնական խայտաճամուկ թելերով պատրաստված ուռկանն է, որով որսում է յուր զոհերը։ Բայց այստեղ գործ է դրվում մի ուրիշ և ավելի սարսափելի զենք, որ բոլորովին ստրկացնում է ժողովրդին կղերի ձեռքում։ Այս վերջինը կարոտ է բացատրության։

Զարմանալի է, թե որպես կաթոլիկ կղերը գիտե օգուտ քաղել զանազան հանգամանքներից, երկրի դրությունից, ժողովրդի վիճակից և այլն։ Խոսրովխա գյուղը, որի մասին է մեր խոսքը, Սալմաստա այն գյուղերից մեկն է, ուր ամենասարսափելի կերպով անել է փաշխաունների ճարտաճարությունը: *Կաթոլիկ կղերը հիշելով այն առածը, թե «պարտականը պարտատիրոջ գերին է», մտածեց օգուտ քաղել և այն ստրկացնող միջոցից, որի մեջ կային և նյութական շահեր։*

Խոսրովխացին միշտ փողի կարոտություն ունի։ Հասկանալի է, թե

ինչ կլինի մի ժողովրդի վիճակը, երբ նա գործում է և վաստակում է միմիայն յուր եկեղեցու և նորա պաշտոնյաների պիտույքները լցուցանելու համար։ Մի գյուղի մեջ, որպես խոստովանեցին է, կան երկու վանքեր, մեկը կուսանանց, մյուսը աբեղաների. երկուսն էլ լիքն են միաբաններով։ Ժողովուրդն աղքատ է, այնուամենայնիվ նա պետք է լցուցանե այն պարտավորությունները, որ դնում է նորա վերա եկեղեցին։ Բայց նա ունի ուրիշ պարտավորություններ ևս. նա պետք է հոգա յուր ընտանիքի ապրուստը, նա պետք է վճարե դիվանի տուրքը, և այս տուրքը նույնպես ծանր է և անտանելի, որպես եկեղեցինը։ Որտեղի՞ց պետք է տա. նորա երկրագործական վաստակը չէ լրացնում այս բոլոր ծախսերը, մնում է մի ճար միայն՝ պարտք անել։ Նա ս-կսում է մահմեդականներից պարտքեր անել խիստ ծանր տոկոսներով, յուր այգին, տունը, պարտեզը գրավ է դնում։ Նա անդադար պարտամուրհակները փոխում է, տոկոսը տոկոսի վերա բարդվում է. իսկ պարտքերը հատուցանելու ոչինչ հնար չկա։ Ի՞նչ պետք է անի նա։

Գյուղացոց պարտքերը հասնում են մինչև մի քանի հարյուր, հազար ռուբլու։ Այն ժամանակ միայն ժողովուրդը հասկանում է յուր կործանումը և սկսում է բողոքել։ Դառն աղքատության սարսափներն ավելի զորավոր է լինում, քան կրոնական զգացմունքը, և ժողովուրդը սկսում է կղերի դեմ սպառնալ. «Եթե դուք մեր պարտքերի մասին մի հոգացողություն չանեք, մենք պատրաստ ենք ընդունել բողոքականություն, և բողոքականների առաքելական ընկերությունը կվճարե մեր պարտքերը»։ Աբեղաները նորանց հանգստացնում են. «Դուք անհոգ կացեք, մենք մարզիկ կուղարկենք դեպի աշխարհի զանազան կողմերը, փող կհավաքեն, կբերեն, ձեր պարտքերը կտանք»։

Ժողովուրդն այս հուսով «անհոգ» է մնում... նա սկսում է ավելի պարտքեր անել, յուրյան ավելի զվարճություն տալ, որովհետև մի քանի ամսից հետո, առանց յուր աշխատության, նորա պարտքերը վճարելու են...

Եվ իրավ, շատ ժամանակ չէ, որ վանքի միաբանության կողմից երեք խումբ մուրացկաններ ճանապարհ են ընկնում դեպի աշխարհի զանազան կողմերը. մեկը գնում է դեպի Հնդկաստան, մյուսը՝ դեպի Ամերիկա, իսկ երրորդը՝ դեպի Եվրոպայի կաթոլիկ երկիրները։ Նորանք յուրյանց ձեռքում ունենում են թղթեր, վկայականներ միաբանության կողմից ստացած, որոնց մեջ ամենասարսափելի գույներով նկարագրված է լինում Պարսկաստանի կաթոլիկ եկեղեցու թշվառության-

ները, նույն նյութական չքավորությունը, որ առաջ է եկել պարսիկների և նույն կառավարության հարստահարությունից (ինչո՞ւ ո՛չ իրանց՝ աբեղաների հարստահարությունից...)։

Ողորմության հավաքողների խմբերը վերադառնում են. որքա՞ն փող են բերում, հայտնի չէ, միայն կղերն սկսում են այնուհետև գյուղացոց պարտքերը տալ։

Բայց որպե՞ս։

Կղերն սկսում են մի կողմից գնել գյուղացոց կալվածները, որ զանազան վաշխառուների մոտ գրավ դրվելով՝ տիրացել էին, և այսպիսով վանքի միաբանությունը գյուղի ամենալավ արտերը և այգիները գցում է յուր ձեռքը։ Մյուս կողմից, նա գյուղացիներին փողը տոկոսով է տալիս և նրա մնացյալ կալվածները յուր մոտ գրավ է դնում, և այսպիսով ժողովրդին յուրյան պարտական անելով, բոլորովին ստրկացնում է...

Գյուղացիք սարսափում են. «Այդ ի՞նչ էր, որ դուք մեզ հետ արեցիք»,— գոռում են նրանց։— «Փողը եկեղեցու անունով է հավաքված, մենք չենք կարող առանց գանձանակը վատնել»,— պատասխանում են աբեղաները։

Ինձ պատահեց աբեղաների մեկից հարցնել, թե դուք ինչո՞ւ խլեցիք գյուղացիների կալվածները։ Նա խիստ մարդասիրական կերպով պատասխանեց. «Մենք ինքներս մշակելով այդ հողերը, աշխատում ենք գյուղացիներին երկրագործության կատարելագործված օրինակներ ցույց տալ»։ Լավ միտք է, եթե այդպես լիներ։ Բայց կղերը այստեղ մշակում է յուր հողերը թշվառ գյուղացիների քրտինքով, որոնք առաջ նույն հողերի տերերն էին. կղերը այս դեպքում մի հարստահարող կալվածատեր է և ավելի ոչինչ։

Եվ շատ բնական է, որ այսպես լիներ. այժմ Հռոմեական միաբանությունները, որոնք դեպի արևելք եկած են, որպես քարոզիչներ, Եվրոպայից ավելի նպաստ չեն ստանում, նրանք ստիպված են այսպիսի խարդախ միջոցների դիմել, որովհետև մեջտեղում հացի խնդիր կա[1]։

---

[1] Հոդվածս վերջացնելու վրա էի, երբ հաստատ աղբյուրներից լուր ստացա, որ Խոսրովիայի կաթոլիկ միաբանությունը գնել է նույն գյուղից ոչ այնքան հեռու մի ամբողջ գյուղ Դուլիզան անունով։ Ես զարմանում եմ, պարսից կառավարությունը, որ արգելած է օտար պետությանց հպատակներին Պարսկաստանում կալվածատեր լինել, ինչպես է թույլ տալիս Հռոմեական լազարիստ աբեղաներին գյուղեր և ագարակներ գնել...

Հռոմեական աբեղաներն այստեղ խառնվում են յուրյանց ժողովրդի և դատաստանական գործերին. Նրանք ժողովրդի կողմից ուղղակի հարաբերություն ունեն դիվանի հետ։ Օրինակ, երբ որ գյուղացին դիվանին պետք է հարկ վճարե, բայց փող չունի, հարկը աբեղաներն են տալիս և գյուղացիներից պարտամուրհակ առնում։ Նրանք գործում են և ուրիշ առաքինական գործեր. օրինակ, երբ որ կնոջ ամուսինը գնացել է օտար աշխարհ բախտ որոնելու (տղամարդիկ մեծ մասամբ պանդխտության մեջ են ապրում), և կինը երկար ժամանակ ամուսնից ծախսելու արծաթ չի ստանում, կղերը նորան փող է տալիս, իհարկե տոկոսով, և ամուսնից փող եկած ժամանակ ետ է ստանում։ Երևակայեցեք մի կնոջ վիճակ, որ հանձնված կլինի կաթոլիկ աբեղայի հոգաբարձությանը...

Ես տեսա, թե աբեղաները խառնվում են գյուղացոց և դատաստանական գործերում. որպեսզի ճիշտ գաղափար տամ, թե որպիսի իրավաբանական ճշմարտություններով են վճռվում նոցա մեջ վեճերը, ես կհիշեմ մի դատ։ Երկու կաթոլիկներ կռվում են միմյանց հետ և սաստիկ ծեծվում են։ Կռիվը ծագում է նորանից, որ մինը հայհոյանք է տալիս մյուսի վաղուց մեռած հորը, իսկ երկրորդը փոխադարձաբար հայհոյում է առաջինի հորը, որ նույնպես մեռած էր։ Մեռելներին հայհոյելը Պարսկաստանում ավելի մեծ հանցանք է համարվում, քան կենդանիներին, բայց բանը նորանումն է, որ մեկի հայրը վախճանվել է որպես ուղղափառ կաթոլիկ, մյուսի հայրը՝ որպես հերետիկոս-նեստորական։ Կաթոլիկի որդին արդարանում է, որովհետև նա մեղք չէր գործել մի հերետիկոս հայհոյելով, իսկ հերետիկոսի որդին դատապարտում է, որովհետև նա իրավունք չուներ չար խոսել մի ուղղափառ հանգուցելո դեմ։

Ահա այս գյուղի ժողովուրդն է, որ կազմում է Թիֆլիս քաղաքի քուլուղչիների ամբողջ հասարակությունը, որից հարցնելու ժամանակ, թե ի՞նչ ազգից ես, բերանումը միշտ պատրաստ ունի «փռանկ» կամ «կաթոլիկ» բառերը։ Թշվառականը մինչև անգամ մոռացել է յուր ազգությունը...

* * *

Պարսկաստանում սրից և վաղեմի մահմեդական հալածանքներից զերծ մնացած մի պատառ հայերին այս նոր և ավելի վտանգավոր եվրոպական որսորդներից ազատ պահելու համար գործ դրված

միջոցները բոլորովին գոհացուցիչ չեն։ Որովհետև յուր եկեղեցուց հրաժարվիլ ցանկացող և դեպի այլադավանները հարվող մի հայի կրկին դեպի մայրենի փարախը դարձնելու համար մի վարդապետի նզովք, բանադրանք և եկեղեցական արարողություններից զրկելու սպառնալիքը, այդ բոլորը հին և փտած զենքեր են։ Հասկանալի է, թե ի՛նչ է, որ հային դրդում է դեպի մի օտար եկեղեցու գիրկ, և նորա ճարն անելու է։ Հայտնի բան է, որ փոքրիշատե խելացի մարդը երբեք չի հեռանա յուր մայրենի եկեղեցուց. հեռանում են միայն տգետները, և նորանք էլ ոչ թե դավանաբանական ճշմարտություններ որոնելու համար, այլ անձնական հաշիվներն ունենալու համար։ Կամ նա որդի ունի, ցանկանում է, որ միսիոնարի մոտ ձրի կրթություն ստանա, կամ դատաստանական վեճ ունի, նորանցից պաշտպանություն է սպասում[1], կամ աղքատ է, փողի կարոտություն ունի, կամ վերջապես զանազան պատճառներով յուր եկեղեցուց զզված է։

Պարսկաստանի հայոց հոգևոր կառավարությունն այնպիսի մի բարձր նշանակություն ունի, որ եթե յուր պարտավորությունները խղճմտաբար կատարելու լինի, նա կարող է լիակատար բավականություն տալ յուր ժողովրդի պահանջներին, որ նա ամենևին դեպի այլադավան եկեղեցիները հարվելու ցանկություն չունենա։

Մեր ասածն ավելի շոշափելի կերպով ապացուցելու համար նախ խոսինք այն բանի վերա, թե ինչ նշանակություն ունի Պարսկաստանում հոգևոր կառավարությունը։

Պարսկաստանը յուր ծայրահեղ միապետական կառավարության մեջ դարձյալ չկարողացավ թուլացնել իսլամի հոգևոր-աստվածապետական զորությունը։ Մոլլան միշտ մնաց յուր բարձր նշանակության մեջ, որպես կրոնքի և սուրբ օրենքի ավանդապահ, որպես մեծ մարգարեի և նորա հաջորդների ներկայացուցիչ, որոնք յուրյանց ձեռքում ունեին ժողովրդի թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր իշխանությունը։ Այս պատճառով մահմեդական հոգևորականությունը վայելում է խիստ ընդարձակ իրավունքներ ժողովրդի կյանքի մեջ։ Այս իրավունքներից զրկվեցան և ոչ-մահմեդական ազգերի հոգևոր ներկայացուցիչներն յուրյանց ժողովրդի վերաբերությամբ։ Հայերի հոգևոր առաջ-

---

[1] Միսիոնարները յուրյանց դեսպանների և կոնսուլների զորությամբ կարողանում են մեծ դեր խաղալ յուրյանց ժողովրդի քաղաքական կյանքի մեջ. նորանք մինչև անգամ կարողանում են փոխել տալ մի երկրի դատավորի, եթե նա յուրյանց նպատակներին հարմար չէր։

Նորը համարվում է հայ ժողովրդի որպես եկեղեցական, նույնպես և աշխարհային գլխավորը. տերությունը նորան է ճանաչում, իբրև ազգի ներկայացուցիչ: Նա իրավունք ունի միջամտություն գործելու հայերին վերաբերյալ բոլոր գործերի մեջ:

Մի այսպիսի իրավունք վայելում էր մի ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարքը, բայց Կ. Պոլսի մտածող հայերն այնքան խոհեմ գտնվեցան, որ պատրիարքի կղերա-միապետական իշխանությունը փոխեցին սահմանադրական վարչության: Դա մի արտոնություն էր, որ ազգը համարյա անգիտակցաբար ստացավ, այն ժամանակվա Թուրքաց կառավարության նեղ դրությունից օգուտ քաղելով: Թեև սահմանադրությունը այն օգուտները չբերեց, որքան կարող էր և որքան սպասվում էր, որովհետև պոլսեցի պատասխանատու էֆենդիներն այնքան գործ չշինեցին, որքան դատարկ աղմուկներ բարձրացրին, այսուամենայնիվ սահմանադրությունը դարձյալ կմնա յուր արժանավորության մեջ, որպես մի ժանգոտված, բայց հաստատ զենք, որ լավ բանեցնողի ձեռքում կսրբվի և կրկին կստանա յուր նշանակությունը:

Այժմ Պարսկաստանի հոգևոր կառավարությունը նույն դրության մեջ է, ինչ դրության մեջ էր պատրիարքի իշխանությունը Կ. Պոլսում սահմանադրությունից առաջ: Առաջնորդը յուր թեմի սուլթանն է. նա ինչ որ կամենում է, անում է առանց ոչ ոքի հաշիվ ու համար տալու: Նա ստանում է յուր վիճակի յուրաքանչյուր ընտանիքից (ծխից) մի նշանակյալ հոգևոր տուրք. նա ստանում է առանձին տուրք մկրտության, պսակի և թաղման համար: Նա ստանում է վարձ ավելի քահանաներ ձեռնադրելու համար. նա ստանում է և քաղաքավարի «աջահամբույրներ», երբ մեկի դատաստանական գործը գլխանում շինում է, շիտկում է... Նա շատ բաներ է ստանում, և այդ բոլորն այլ խոսքով կոչվում է հոգևոր պտուղ[1]...

Բոլորը, ինչ որ ստանում է առաջնորդը, նորա անձնական սեփականությունն է. նա չունի յուր մոտ ոչ կոնսիստորի և ոչ որևիցե վերադիտող ատյան: Նա վարվում է յուր ժողովրդի հետ այնպես, որպես կապալառուն յուր վարձած այգու հետ. որ եթե պտուղից չկարողանա ավելի շահել, կսկսե ծառերի ճյուղերը կտրատել և ծածուկ վաճառել...

Թողնենք հարցի նյութական կողմը, դառնանք նորա վարչական

[1] Վիճակային առաջնորդի ստացած հիշյալ հոգևոր արդյունքներից դուրս է այն վարձատրությունը, որ ստանում են քահանաները որպես վարձ յուրյանց եկեղեցական ծառայությանց համար:

նշանակությանը։ Շատ պարզ է, որ միապետությունը, մանավանդ հզոր կառավարության մեջ, ավելի բռնապետական կերպարանք է ստանում, երբ իրավունքի լավ կամ վատ գործադրությունը կախումն է ունենում միմիայն մի մարդու կամայականությունից։ Այստեղ գործերի ընթացքը կապված է կառավարող անձի բարոյական հատկությունների հետ, որովհետև նորա իշխանությունը սահմանափակված չէ, և նորա կամայականությունը թե՛ լավության և թե՛ վատության մեջ սահման չունի։ Քննելով մի քանի տասնյակ տարիների Պարսկաստանի հզոր առաջնորդների գործունեությունը, ավելի պարզ կերպով երևան է գալիս մեր ասածների ճշմարտությունը. Նորանցից ոմանք բնավորապես տրամադրված լինելով դեպի հասարակաց բարին, թողել են բավականին ազգօգուտ գործեր, իսկ ոմանք՝ խիստ սև հիշատակներ... Բայց ոմանք եղել են բոլորովին անտարբերներ, ոչ լավն են գործել և ոչ վատը. այսինքն՝ նույնպես լավերի կարգն են անցնում. որովհետև հայի համար միշտ լավ մարդ է նա, որ վնաս չի տալիս, որպես ճշմարիտ մարդ է նա, որ գող չէ։ Հայը մարդկությունից շատ փոքր պահանջմունք ունի. նա չգիտե, որ գող կամ վնասակար չլինելը մեր անձնական պարտավորությունն է, և եթե մենք չենք գողանում, դրանով մի բարի բան չենք գործում։ Մտածության այսպիսի տրամադրության մեջ գտնվելով մեր ժողովուրդը, նա յուր առաջնորդից մի ավելի մեծ բան չի պահանջում, նա գոհ է, երբ նա չլիներ գող և հափշտակող։ «Միրակոսը լավ մարդ է, — ասում է հայը, — որովհետև Մարտիրոսի հողը նորա ձեռքն ընկավ, բայց չկերավ»։

Բայց նայելով այն դիրքին, որ Պարսկաստանում բռնած են հայոց առաջնորդները, նայելով այն արտոնություններին, որ նրանք վայելում են պետությունից, բոլորովին իրավունք ունինք պահանջել, որ նրանք վարվեին համաձայն յուրյանց նշանակությանը, նրանք ժողովրդի բարին մտածեին, նորա ժամանակակից պահանջներին բավականություն տային և ոչ միայն յուրյանց քսակը հարստացնելու աշխատեին։ Բայց քանի որ առաջնորդի իրավունքները մի կանոնավոր ձևի մեջ դրված չեն, դոցանից և ոչ մինը սպասել կարելի չէ։

Ի՞նչ ելք կա։

Մեր կարծիքով պետք է հետևել այն օրինակին, ինչ որ արավ Թուրքիայի հայը. պատրիարքի միապետական իշխանությունը փոխելով սահմանադրական վարչության։ Պարսկաստանում դա փրկարար միջոցներից ամենագլխավորն է։ Բայց հարցը նորանումն է, թե արդյոք հայերին Պարսկաստանում թույլ կտրվի՞ ունենալ ազգային սահ-

ձին սահմանադրական վարչություն։ Այդ մասին ոչինչ տարակույս չկա, քանի որ առաջին փորձը աչքի առջև ունինք։ Շատ տարի չէ (1873 թվին), որ Թեհրանի հայերը փորձ փորձեցին ունենալ ազգային սահմանադրական վարչություն, և բարձր կառավարությունը չմերժեց նոցա խնդիրքը, շնորհելով բոլոր արտոնությունները, ինչ որ պետք էր մի ազգային ազատ սահմանադրական վարչության։ Բայց եթե գործը առաջ չգնաց և համարյա յուր խանձարուրի մեջ մեռավ, պատճառն այն էր, որ գործիչ անձինքն պատրաստված չէին, նրանք սկսեցին և թողեցին, առանց շարունակելու համբերություն ունենալու։ Բացի դորանից, Թեհրանը թեև Պարսկաստանի մայրաքաղաքն է, բայց հայության կենտրոնը չէ, մի այսպիսի գործ պետք էր հիմնել այն տեղում, ուր հայերն ավելի խիտ բնակություն ունին, ուր նոքա յուրյանց զարգացումով ավելի բարձր են, ուր նոցա նյութական դրությունը ավելի հաջող պայմանների մեջ է։ Այդ մասին ավելի հարմար է Ատրպատականը, և Թավրեժ քաղաքը կարող է նորա կենտրոնը լինել։

Մենք համոզված ենք, որ ազգային սահմանադրությունը սկզբում մի նշանավոր օգուտ չի կարող բերել նաև Ատրպատականում ժողովրդի անպատրաստ լինելու համար։ Դա կլիներ միայն սկսել գործը յուր ժամանակից առաջ, որ անհմուտ գործադրողների ձեռքում խեղաթյուրվելով և այլանդակվելով, մի ավելի հրեշավոր բան պիտի դառնար։

Բայց մենք հայերս առհասարակ նախապատրաստված մարդիկ չենք, մենք սովորում ենք գործել գործի մեջ. օրինակ, մեզանում վարժապետը սովորում է մի առարկա, նույն առարկան ծուռ ու սխալ կերպով աշակերտներին դաս տալով, բժիշկը սովորում է բժշկություն, ավելի մեծ թվով մարդիկ կոտորելով. լրագրապետը սովորում է գրել, հիմար թերթեր դուրս տալով։ Ամեն գործ մեզանում այսպես է առաջ գնում...

Թեև մենք դեմ ենք դոնկիշոտության, թեև մենք գիտենք, որ ամեն մի վերանորոգություն որևիցե ժողովրդի կյանքի մեջ լինում է ավելի հիմնավոր և ավելի օգտավետ, երբ ժողովուրդը հասնում է նորան յուր կանոնավոր զարգացումով, հաջորդաբար և ոչ թռիչքներ գործելով, այսուամենայնիվ, Պարսկաստանում ազգային սահմանադրություն ունենալու խնդրի մեջ մենք խորհուրդ կտայինք տեղային հայերին՝ ամենայն վստահությամբ դիմել այս գործին։ Ժողովուրդը դորանով շահած կլիներ երկու բան՝ առաջին, կանոնավոր ձևերի մեջ կգներ տեղային հոգևոր կառավարությունը, երկրորդ, որ նա առայժմ ստա-

ցած կլիներ մի արտոնություն, որը մի քանի տասնյակ տարիներից հետո գուցե դժվար կլիներ ձեռք բերել...

Թեև բավական անբնական երևույթ է տիրող ազգի անկարգ միապետական կառավարության մեջ մի մասնավոր ազգի ունենալ առանձին սահմանադրական վարչություն, բայց այլապես լինել կարելի չէ, քանի որ որպես Թուրքիայում, նույնպես և Պարսկաստանում տիրապետող ազգերը խիստ թույլ և դանդաղ կերպով են շարժվում, իսկ քրիստոնյաները համեմատաբար խիստ առաջ են գնացած. նորանք սպասել կարող չեն, մինչև մահմեդականները դուրս գալով վաղեմի նախապաշարմունքներից, նորեն ոտք կկոխեին առաջադիմության շավղի վերա։

Բայց որպես և լինեին, պետք է այսքանով ևս գոհ լինել, որ պարսիկ կառավարությունը այժմ յուր ոչ մահմեդական ազգերին չի խնայում որևիցե արտոնություն, որ կարող էր նորանց հանգստությունը և առաջադիմությունը նպաստել։ Ինչո՞ւ օգուտ չքաղել ժամանակի բերմունքից, քանի որ գիտենք, թե պետությունները որքան քաղաքակրթվում են (իհարկե կեղծ քաղաքակրթությամբ), որքան զարգանում են, այնքան նորանք ժլատ են լինում յուրյանց հպատակ մանր ազգերին ազատ արտոնություններ շնորհելու...[1]։

* * *

Այժմ դառնանք այն հարցին, թե արդյոք Պարսկաստանի հայերը ցույց տալի՞ս են որևիցե ձգտողություն դեպի ժամանակակից կրթությունը, կամ նոցա մեջ երևո՞ւմ են առաջադիմության նշաններ։

Արդարև, Պարսկաստանի հայի անցյալը անցել է խիստ տխուր հիշատակներով, և նորա ներկան թեև այնքան նախանձելի չէ, բայց նա արդեն պատրաստվում է մի փառավոր ապագայի համար։ Օրինակ առնենք Դավրեժի հայերը և քննենք այս քաղաքի մերայնոց մտավոր գործունեությունը։ Սկսենք դպրոցից։ Դավրեժի ազգային դպրոցի հիմքը դրեց արժանահիշատակ Սահակ եպիսկոպոս Սաթունյանը 1850 թվին։ Նա կառուցց դպրոցի շենքը և ժողովեց այնտեղ հայ մանուկները, որոնցից շատերը մինչև այն օրը մի տիրացուի մոտ այբբեն ստ-

---

[1] *Մենք խոստանում ենք առանձին հոդվածներով ավելի մանրամասն կերպով բացատրել այս հարցը, ցույց տալ նորա իրագործելու միջոցները և Պարսկաստանում նորան որպիսի կերպարանք տալու ձևը։*

վարելու բախտից ևս զուրկ էին։ Սաթունյանը կանգնեց նույն դպրոցի մոտ և մի հոյակապ շինվածք, որպես առաջնորդարան, և առաջնորդի «դուռը» այն օրից պաշտոնական կերպարանք ստացավ, երբ նրանից առաջ անհայտ և բոլորովին աննշան մի բան էր։

Ցավալին այն է, որ հիշյալ հիմնարկություններից հետո Սաթունյանի կյանքը կարճատև եղավ, այդ պատճառով նա չկարողացավ կատարել յուր խիստ ցանկալի փափագը, այն է՝ դպրոցի գոյությունը պահպանելու համար նորա նյութական դրությունը մշտապես ապահովել։ Բայց նորա մահից հետո դարձյալ մնաց մի գումար, որ դպրոցի սկզբնական հիմնադրամն դարձավ։ Սաթունյանի մահից հետո մինչև այժմ 26 տարվա միջոցում միմյանց հաջորդեցին 6 առաջնորդներ։ Այս «Նորին սրբազանություններից» և ոչ մեկը մի քար անգամ չդրեց այն շինվածքի վերա, որի հիմքը դրել էր Աստրախանի արժանահիշատակ բարերարը։ Այլ խոսքով, դպրոցը դոցա օրերով ոչ միայն յուր ուսումնական և նյութական վիճակի մեջ առաջ չգնաց, այլ հետըզհետե ընկնել սկսավ[1]։ Սաթունյանը շինեց դպրոցը, առաջնորդարանը և այլ ազգօգուտ հիմնարկություններ, բոլորը յուր փողով, այսինքն՝ այն փողով, որ նա ստանում էր վիճակից որպես «հոգևոր պտուղ»։ Բայց նա ժողովրդից ստացածը կրկին ժողովրդին ետ դարձրեց, յուրյան չսեփականեց։ Նույն վիճակից նորա հաջորդներն ստանում էին նույնքան, բայց այս վերջինները «հոգևոր պտուղը» յուրյանց ջիբը դրին...

Ճշմարիտ է, եթե Սաթունյանի հաջորդներից ամեն մեկը մի մասնավոր գումար ավելացրած լիներ դպրոցի դրամագլխի վերա, դպրոցը բոլորովին նյութապես ապահովված կլիներ, բայց ընդհակառակն, նրանք այնքան անփույթ գտնվեցան, որ չաշխատեցին մինչև անգամ հանգուցյալի թողած գումարը օրինավոր կերպով շահեցնել, այլ այս և այն մարդու ձեռքը ընկնելով, համարյա ոչնչացավ...

Թողյալ դպրոցի մի այսպիսի անմխիթար նյութական վիճակը, նորա ուսումնական կամ կրթական մասը սարսափելի այլանդակության մեջ էր։ Երևակայեցեք ձեզ մի վարժատուն, ուր վարժապետը

---

[1] Իբրև բացառություն, խղճմտանքի ընդդեմ կլիներ չհիշել Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանցին, որի առաջնորդության օրերով դպրոցը բավականին ծաղկել սկսավ, և Նորին սրբազանությունը, յուր սեփական փողից մինչև 6000 ռուբլի ծախսելով, անձամբ Թեհրան գնաց, Նորին մեծ. շահին ներկայացավ, և դպրոցի համար արքունի հրովարտակ (ֆերման) և կառավարությունից 250 թուման մշտական օժանդակություն ըստացավ, որ մինչև այսօր շնորհվում է դպրոցին։

բոլորովին հարբած է ներս մտնում, աթոռի վերա նստած ժամանակը նորա քունը տանում է, աշակերտները այս բախտավոր րոպեին էին սպասում։ Նորանք հավաքվում են վարժապետի չորս կողմը, մինը պո-չին թել կապած ճանճ է թռցնում նորա երեսի վերա, մյուսը մորուքի հետ է խաղում, երրորդը՝ այս խոսքերն է ասում. «Վարժապե՞տ, վարժապե՞տ, մի փիալա էլ (բաժակ) համեցե՛ք»։ Երևակայեցեք ձեզ մի վարժատուն, ուր աշակերտը առավոտից մինչև իրիկուն լսում է յուր դաստիարակից այսպիսի խոսքեր. «շան շան որդի», «հառամ զադա», «էշի լակոտ» և այլն, և միշտ ընդունում է յուր մարմնի վե-րա նորա ձեռքի անտանելի հարվածները։ Երևակայեցեք, վերջապես, մի վարժատան դրություն, ուր ուսման ամբողջ շրջանը «Սաղմոսից» և «Ավետարանից» այն կողմը չի անցնում...

Ի՞նչ էր այս բոլոր անկարգությանց պատճառը։

—Այն, որ դպրոցը գտնվում էր եկեղեցական անմիջական իշխա-նության ներքո, և նա «եկեղեցականացրած» էր...

Բայց Սաթունյանը այս նպատակով չէր շինած դպրոցը. նա չգրոշմեց դպրոցի վերա «Հոգևոր» անունը. նորա դպրոցը ճիշտ ժողո-վրդական էր. նա շինած էր ժողովրդի փողով և ժողովրդի համար, և Սաթունյանն ինքը ժողովրդական մարդ էր. նա ոչինչ առիթ չուներ յուր դպրոցը կնքել «Հոգևոր» անունով...

Պարսկաստանում թե՛ աշխարհականը և թե՛ հոգևորականը կա-րող են մինչև անգամ համալսարան հիմնել առանց ոչ ոքից հարցնե-լու, մեր բարեխիղճ կառավարությունը այսպիսի բաների մեջ մտնել չի սիրում։

Այո՛, դպրոցը բոլորովին ժողովրդական էր, բայց նորան եկեղե-ցականացրին, և եկեղեցականացնելով մեռցրին...

Ժողովուրդն այս հասկացավ, բայց հասկացավ խիստ ուշ... Նա ազատեց առաջնորդի ձեռքից դպրոցի միայն կմախքը... Նորան պետք էր նորից շունչ և հոգի տալ, այդ վերջինը կարոտ էր դրամի:

Ժողովուրդը, թեև աղքատ, բայց եռանդուն դեպի հասարակաց բարին, սկսեց յուրաքանչյուրի կարողությանը համեմատ հավաքել մի օժանդակություն, դպրոցի նյութական վիճակը բարվոքելու համար[1]։

---

[1] Այս վերանորոգությունը եղավ 1874 թվին Ատրպատականի այժմյան վիճակա-վորի՝ Անդրեաս եպիսկոպոսի առաջնորդության առաջին տարվա մեջ։ Պետք է հրապա-րակավ շնորհակալություն հայտնել նորին սրբազանությանը, որ նա ոչ միայն չընդդի-

Բարեկար անձանց նվերներն հասան մինչև մի նշանավոր գումարի, որի տոկոսով դպրոցը կարողացավ ունենալ առաջվա տիրացու վարժապետների տեղ մի ուսուցիչ և յոթն վարժապետներ։ Դպրոցի մեջ մըտան երկրի պահանջներին համեմատ բացի հայերենից, ֆրանսերեն, ռուսերեն և պարսկերեն լեզուները և գիտություններից զանազան առարկաներ։ Դպրոցն ունեցավ հինգ դասատուն և բավականին բարեկարգ ձևի մեջ մտավ։ Նորա կառավարությունը հանձնվեցավ ժողովրդից ընտրրված հոգաբարձության, որս եռանդուն գործունեությունը առաջին տարվա ընթացքում ցույց տվեց յուր պտուղները։ Առաջին հարցաքըննությունը, որ եղավ 1875 թվին, գրավեց մինչև անգամ քաղաքում գտնված եվրոպացիների և եվրոպական կոնսուլների ուշադրությունը, որոնք յուրյանց ներկայությամբ պատվեցին հայ մանուկների ուսման հարցաքննությունը։ Ներկա էր նաև քաղաքի արտաքին գործոց վեզիրի փոխանորդը, որ մինչ այն աստիճան գոհ մնաց, որ նվիրեց դպրոցին մի նշանավոր գումար։

Հիշյալ վերանորոգությունից հետո Դավրեժու ազգային դպրոցը թեև տակավին ունի յուր ինչ-ինչ թերությունները, բայց երկրի դրությունը նայելով նա կարողացել է դպրոցների կատարելատիպը համարվել։ Իբրև ապացույց՝ ես հարկավոր եմ համարում հիշել, որ շատ ժամանակ չէ Դավրեժի արքունի դպրոցի[1] ուսուցչը այցելության եկավ մեր դպրոցը. դա էր գեներալ Միրզա-Ջավադ-խանը. գիտե գաղիերեն և բավականին կրթյալ երիտասարդ է։ Նա տեսնելով հայոց դպրոցը՝ շատ գոհացուցիչ գտավ նորա կազմակերպությունը և պահանջեց ուսումնարանի ծրագիրը։ Այս այցելությունից հետո մի քանի շաբաթ

մացավ ժողովրդի կամքին, այլ ժամանակի պահանջների հետ հաշտվելով, յուր կողմից ևս բավական օգնեց ժողովրդի դպրոցի դրությունը բարվոքելու համար և քաջալերեց նոցա եռանդը։

[1] Խոստանալով ուրիշ անգամ ավելի մանրամասն գրել Դավրեժի արքունի դպրոցի մասին, առայժմ այսքանը կասեմ, որ նա ամբողջ Պարսկաստանում գտնված երկու արքունի դպրոցներից երկրորդն է. հիմնվեցավ այս տարի։ Ինչպես մի մարդ երկար ժամանակ սոված մնալով, ձեռն ընկած կերակուրները մի անգամով ուզում է կլանել, այնպես էլ եվրոպական կրթության պարսիկները հիմնելով եվրոպական ձևով մի դըպրոց (՞,՞,՞,), կամենում են բոլոր ուսմունքները և գիտությունները նորա մեջ ամփոփել։ Այժմ Դավրեժի անդրանիկ դպրոցի մեջ ինչ ասես դաս են տալիս.— այբ-բեն, փիլիսոփայություն, բժշկություն, ճարտարապետություն, զինվորական կրթություն և շատ այսպիսի ություններ... Այսպիսի մի դպրոցի հետ կարող է՞ համեմատվել միայն... և մի հռչակավոր կախարդի (անունը մոռացել եմ) ներկի կարասը, որտեղից նա ամեն գույներ դուրս էր բերում,—կարմիր, սպիտակ, դեղին, սև, կանաչ և այլն։

Հազիվ էր անցել, որ պատվելի տեսուչը ուղարկվեցավ դեպի Թեհրան, այն նպատակով, որ այնտեղ աշխատե, գուցե կարողանա փոխել տալ Դավրեժի արքունի դպրոցի ծրագիրը, որ տրված էր լուսավորության վեզիրից։

Բայց մի ուրախալի երևույթ այն է, որ դպրոցը, մանավանդ հայի դպրոցը գրավում է մահմեդական բարձր հոգևորականի ուշադրությունը։ Այս օրերում Դավրեժի մեծ մուշտայիդը, որ կոչվում է Հուջաթ-ուլ-իսլամ (իսլամի հաստատությունը), յուր այցելությամբ նույնպես պատվեց մեր դպրոցը։ Նորին սրբազանությունը ման եկավ բոլոր դասատները, ամենի մեջ հարցրեց ուսանելի առարկաները, քննեց, թե որքան աշակերտները առաջ են գնացած պարսկերենի մեջ և յուր հեռանալու ժամանակ հայտնեց յուր կատարյալ համակրությունը, թե ինքը շատ ուրախ է տեսնելով, որ հայերը կրթության համար այդչափ հոգս են տանում, քանի որ պարսիկները բոլորովին անփույթ են այդ մասին։

***

Այս բոլորից հետո ծագում է մի խնդիր, թե արդյոք Դավրեժի ազգային դպրոցը պիտի կարողանա՞ այս ընթացքը շարունակել, թե ո՛չ։

Ցավելով պետք է պատասխանել, թե ո՛չ, չպիտի կարողանա շարունակել։

Որպես հիշեցինք դպրոցը կառավարվում է գլխավորապես այն գումարի տոկոսով, որ վերջին անգամին բարերար անձիքներից հավաքվեցավ որպես դրամագլուխ։ Այս դրամագլուխը կազմվելուց հետո երկու տարվա հաշիվները ցույց տվին, որ դպրոցի մուտքը չի ծածկում նորա ելքը, այսինքն՝ յուրաքանչյուր տարի ծախսերի մեջ բավականին բաց է մնում և այս բացը ծածկվում է դրամագլխից պակասեցնելով։ Մուտքի և ելքի մի այսպիսի զգալի անհավասարակշռությունն առիթ է տալիս այժմեն մտածել, որ յուրաքանչյուր տարի դրամագլխից անդադար պակասելով, վերջապես կսպառվի նա, և դպրոցը փակվելու վիճակի կենթարկվի։ Դա շատ ցավալի կորուստ կլիներ, քանի որ մտածում ենք, թե այս դպրոցը բարձր նշանակություն ունի ոչ միայն Ատրպատականի նահանգի համար, այլև ամբողջ Պարսկաստանի համար։

Ի՞նչ պետք է արած։

Զանազան մտածողներ զանազան միջոցներ են առաջարկում։ Ոմանք ասում են՝ Պարսկաստանի Հայոց վիճակը կարեկցական է, դիմենք ուրիշ երկրներում հարուստ բարերարների օգնությանը, գուցե նորանք օգնեն մեզ։ Լա՞վ երազ է, եթե բարին կատարվի...[1] Ոմանք ասում են՝ կրկին ժողովրդից օժանդակություն հավաքենք։— Ժողովուրդը աղքատ է, նորան շատ ծանրացնել չի կարելի, նա որքան կարող էր տվավ։ Ոմանք ասում են, թե աշակերտների վերա վճար նշանակենք։— Այն ժամանակ աղքատ ծնողներն յուրյանց որդիքը կհանեն և բողոքականների դպրոցը կտան, ուր ամեն ինչ ձրի է։

Ոմանք ասում են, թե դպրոցի ուսումնական շրջանը նեղցնենք, դասատուներից մի քանիսը փակենք, ուսուցիչների թիվը պակասեցնենք, որպեսզի ծախսերը փոքրանան,— այն ժամանակ դպրոցը կկորցնի յուր նշանակությունը։ Վերջապես շատ տեսակ խոսքեր են ասվում, բայց մենք դոցա և ոչ մեկը նպատակավոր չենք գտնում։

Ապա ի՞նչ պետք է արած, կհարցնեն մեզ։

Նախքան ուղղակի պատասխանելը՝ մենք հարկավոր ենք համա-
բող էր տվավ։ Ոմանք ասում են, թե աշակերտների վերա վճար
առաջարկել մի քանի հարցեր,— ո՞վ հիմնեց այդ դպրոցը։— Դպրոցը հիմնեց Սաթունյան եպիսկոպոսը։— Ի՞նչ գումարով հիմնեց։— Նա հիմնեց Ատրպատականի վիճակից ստացած հոգևոր արդյունքով։— Այժմ այն արդյունքն ո՞ւր է մնում։— Նա մնում է այժմյան առաջնորդի քսակը...

Եթե այդ քսակի հարցը վճռվելու լինի, ամեն ինչ պարզված է։

Խոսելով Պարսկաստանի հոգևոր կառավարության մասին, մենք արդեն ցույց տվինք, թե որպիսի՛ աղբյուրներից է գոյանում առաջնորդի «հոգևոր արդյունքը» կամ այն եկամուտը, որ կոչվում է «հոգևոր պտուղ»։ Մենք դարձյալ կհիշենք։ Այս «պտուղն» ստացվում է այն հարկերից, որ առաջնորդը դրել է յուրաքանչյուր տան վերա։ Այս հարկերը նույնպես սահմանական են, որպես արքունի հարկերը. եթե յուր-

[1] Շատ անմխիթար մի երևույթ է տեսնել, որ Հայոց հարուստները բավական անգամ են դեպի հասարակաց գործը։ Դավրեժի ազգային դպրոցի մասին շատ գրվեցավ լրագրներում, մանավանդ «Մեղուի» և «Մշակի» մեջ։ Բայց մինչև այսօր չգտնվեցավ մի անձ, որ հեռու տեղից մի մասնավոր բան նվիրած լիներ այս դպրոցին։ Չենք ասում մեծ գումարներ, այլ մինչև անգամ փոքր բաներ, որպիսի են թուղթ, գրիչ, գրքեր, պատկերներ՝ նկարագրական ուսման համար և այլ ուսումնական պարագայք։ Թավրիզի դպրոցը ոչինչ վճար չի ստանում աշակերտներից և մինչև անգամ թուղթը, գրիչը և գրքերը ձրի է տալիս նորանց։

յանց ժամանակին չատացվին, գործ կդրվին ազդու միջոցներ, որոնք են՝ փայտ, ծեծ և այլն։ Այս «պատուղն» ստացվում է մկրտության, պսակի և թաղման համար, որ նույնպես եթե յուր ժամանակին չվճարվի, հիշյալ եկեղեցական արարողությունները կմնան անկատար։ Այս «պատուղն» ստացվում է զանազան աղբյուրներից, որոնք այնքան անվայել են, որ նորանց շոշափելու ցանկություն չունինք... Բացի հիշյալ «պատուղներից», կա մի ուրիշ ևս, որ կոչվում է պտռաճարէ: Դա մտնում է Մայր Աթոռի (Էջմիածնա) գանձարանը...

Պարսկաստանի հարստահարության տակ ճնշված մի ժողովրդի կրկին ծանրաբեռնել այսպիսի հոգևոր տուրքերով վերջին աստիճանի անխղճություն է, բայց քանի որ ժողովուրդը սովորած է տալու, թող տա, մենք նորա ջերմեռանդությունը վիրավորելու միտք չունինք։ Բայց մտածո՞ւմ է արդյոք ժողովուրդը, թե յուր տվածը որտեղ է մըտնում։ Մտնում է առաջնորդի քսակը...

Դարձյալ քսակի խնդիրը մեջ մտավ։

Հայերի մեջ, որքան հիշում եմ, Պարսկաստանի պես չկա մի վիճակ, որ հոգևոր առաջնորդը, մի արևելյան միապետի նման, ազատ և անձնիշխան կերպով ժողովրդի վրա հարկեր նշանակեր և այս ու այն եկեղեցական արարողության համար առանձին տուրքեր ստանար։ Զանազան երկրներում կան զանազան ձևով հոգևոր վարչություններ, բայց նոցա և ոչ մեկը Պարսկաստանի ինքնահաճ կամայականությունը չունի։ Մի տեղ՝ օրինակ, Ռուսաստանում, թեմերը ունին յուրյանց վիճակային կոնսիստորիան, ուր անօրինվում են բոլոր եկեղեցական գործերը և կանոնավոր հաշվի ու համարի տակ են ընկնում։ Վիճակային հոգևոր արդյունքը նույնպես անօրինվում է կոնսիստորիայի ձեռքով և յուր նշանակության համեմատ գործի է դրվում։ Առաջնորդը, որպես վիճակային հոգևոր կառավարության ներկայացուցիչ, իրավունք չունի գոյացած արդյունքից մի կոպեկ անգամ յուրյան սեփականել. նա ունի յուր համար նշանակած ռոճիկ, որով ապրում է։ Կան ուրիշ տեղեր, օրինակ, Տաճկաստան, ուր վիճակային հոգևոր ատյանը յուր ձեռքում ունի վիճակի կառավարությունը։ Բայց Պարսկաստանում չկան դոցա և ոչ մեկը. այստեղ կառավարում է միմիայն առաջնորդը, և ամեն ինչ կախում ունի միայն նորա կամքից...

Մի՞թե կարելի է այդ։

Մենք ամենևին չենք պաշտպանում այս երևույթը, թե ինչո՞ւ է եղած այսպես. մենք գիտենք, որ Պարսկաստանի միապետության մեջ մի այլ ձևով հոգևոր կառավարություն կազմվել կարող չէր։ Մենք գի-

տենք, որ հայ կղերը, երբ ազատ է, նա բռնակալ է, և եթե այս կամ այն երկրում սահմանափակված է նրա կամայականությունը, այդ մասին պետք է գոհ լինել բարձրագույն տիրող կառավարությունից։

Այո՛, հայ կղերը սիրում է ազատություն, բայց նա ցանկանում է ազատությունը միմիայն յուր համար։ Այն ցնո՞րք է, որ շատ անգամ ասում ենք՝ «Հայոց եկեղեցին ժողովրդական է». եթե նա մի ժամանակ ժողովրդական էր, դա ուրիշ հարց է, իսկ այժմ այդ չի երևացնում...

Ի՞նչ ելք կա։

Պետք է վերանորոգել, պետք է ոչնչացնել հին ձևը, և բոլորովին նոր կերպարանք տալ նորան։

Արդարև մենք սկզբում խոսելով Պարսկաստանի հոգևոր կառավարության բարեկարգելու մասին, առաջարկեցինք սահմանադրական վարչություն. այո՛, բախտավոր կլիներ Պարսկաստանի հայը, եթե մեր երազն իրագործվեր... Բայց քանի որ գիտենք մեր այստեղի ազգային անհոգությունը, առայժմ մեր կողմից բոլորովին անրջային ցնորք կլինի առաջարկել մի այսպիսի ձեռնարկություն։ Առհասարակ հայերն ապագա պատրաստելու մեջ խիստ անփույթ են, և մանավանդ Պարսկաստանի հայը...

Ուրեմն ի՞նչ պետք է անել՝ բարեկարգել վիճակային հոգևոր կառավարությունը և նորան յուր այլանդակություններից կանոնավոր ձևերի վերածել, դա առաջին քայլն է դեպի սահմանադրություն, դորանով ուղին հարթվում է նույն նպատակին հասնելու։

Բայց ո՞րպես բարեկարգել, այստեղ է գլխավոր հարցը։

Բայց որովհետև բարեկարգության հարցը մի այսպիսի բազմաճյուղ խնդիր է, որ այժմյան մեր հոդվածի համառոտությունը չի ներում նորան ավելի մանրամասնաբար ընդարձակելը, մենք խոստանում ենք բացատրել դորան մի շարք հոդվածներով։ Իսկ առայժմ կասենք մի քանի ընդհանուր խոսքեր։

Մենք բոլորովին ընդդեմ ենք կոնսիստորիային, կամ մտցնել Պարսկաստանում այն տեսակին կազմակերպությունը, որ բաղկացած է լինում միմիայն եկեղեցականներից՝ որևիցե առաջնորդի նախագահությամբ։ Եվ որովհետև Պարսկաստանի հոգևոր կառավարությունը միացնում է յուր մեջ թե՛ հոգևոր և թե՛ աշխարհային իրավունքները, այս պատճառավ և նորա կենտրոնական վարչությունը պետք է կազմված լինի թե՛ հոգևորականներից և թե՛ աշխարհականներից։ Առաջինները որպես եկեղեցու ներկայացուցիչներ, իսկ վերջինները որ-

պես ժողովրդի ներկայացուցիչներ։ Վիճակային առաջնորդը կլինի ատյանի նախագահը. իսկ գործերը կվճռվեն ժողովրդի ընդհանուր հավանությամբ։ Այն ժամանակ բոլոր վիճակային «հոգևոր արդյունքը», որ ստացվում է այլևայլ անուններով, կանոնավոր սահմանի մեջ դրվելով, կհավաքվեն և կմտնեն ազգային կենտրոնական սնդուկը և ոչ առաջնորդի ճանկը, որ մինչև այժմ լինում էր։

Հիմա տեսա՞ր, ընթերցող, ճանկի հարցը մասամբ վճռվեցավ. բայց կարելի է դու հարցնես՝ ապա առաջնորդն ինչո՞վ պետք է ապրի։ Մենք կսահմանենք նորա համար մի որոշյալ ռոճիկ, որքան կբավականանա մի եկեղեցականի համեստ կեցությանը։ Այսպիսով, մենք շահած կլինենք երկու բան. առաջին՝ վիճակային հոգևոր կառավարությունը կարգ-կանոնի մեջ կդրվի, երկրորդ՝ վիճակային «հոգևոր արդյունքը» առաջնորդի քսակից դուրս կորզելով, ավելի ազգօգուտ հիմնարկությանց վերա գործ կածվի։

Եվ որովհետև բոլոր մեր այս խորհրդածությունները առաջ եկան Դավրեժու ազգային դպրոցի նյութապես ապահովված չլինելու հարցից, այժմ հարկավոր ենք համարում կրկին վերադառնալ դեպի նույն հարցը։

Վիճակային բոլոր «հոգևոր արդյունքը» հավաքվեցավ կենտրոնական սնդուկի մեջ, առաջնորդի ռոճիկը տվինք, ատենական ծախսերն արինք, այժմ սնդուկի մեջ մնում է ավելացած փող[1]։ Ի՞նչ անենք այդ փողը։ Այդ փողով ահա Դավրեժի ազգային ուսումնարանը բոլորովին կապահովենք և նորա ուսումնական շրջանը ավելի կընդարձակենք։

Այստեղ առաջ է գալիս մի նոր խնդիր, թե ինչո՞ւ միայն Դավրեժի ազգ. ուսումնարանը պետք է շահվի կենտրոնական սնդուկից, իսկ մյուսները զուրկ մնան։

Մյուսները զուրկ չեն մնա, նորանք նույնպես կշահվեն, բայց ուրիշ կերպով։ Դավրեժու ազգային դպրոցը, որպես ամբողջ Ատրպատականի կրթության կենտրոնական աղբյուր, հանձն կառնե զանազան գավառներից ընդունել յուր մեջ աշակերտներ, նորանք կապահովվին ուսումնարանի ծախսով և յուրյանց կրթությունը ստանալուց հետո

[1] Պարսկաստանի երկու վիճակների, այսինքն՝ Ատրպատականի և Արաղիստանի հոգևոր արդյունքն այնպիսի մի գաղտնիք է, որ մինչև այսօր խորին կերպով պահված է եղել թեմական առաջնորդների մոտ. ուրեմն նորա որքանության վերա ճիշտ դատել անկարելի է, քանի որ աչքի առջև չունինք որևիցե գրավոր ապացույց։

կվերադառնան յուրյանց հայրենիքը, այնտեղ կլինեն վարժապետներ կամ քահանաներ։ Այսպիսով գյուղական ուսումնարաններն ազատված կլինեն հիմար տիրացուներից, և գյուղական եկեղեցիներն ազատված կլինեն տգետ քահանաներից։

Բայց բացի կենտրոնական սնդուկից, ես մոռացա հիշել արդյունքի մի ուրիշ աղբյուր ևս, որից Դիլմանի ազգային դպրոցը նույնպես կարող է շահվել։ Ես, վերևում խոսելով վիճակային այլևայլ հողեր տուրքերի մասին, ասացի, թե ժողովրդից հավաքվում է մի առանձին տուրք ևս, որ կոչվում է «աթոռահարկ», թե դա մտնում է Էջմիածնա գանձարանը։ Թողյալ այդ, Ատրպատականի երկու վանքերի, այսինքն՝ Ս. Ս. Թադեոս և Նախավկայի վանքերի եկամուտներն դարձյալ նույն գանձարանն են մտնում, Էջմիածին են ուղարկվում…

Դիցուք թե ժողովուրդը տգետ ջերմեռանդ է և չէ հասկանում Էջմիածինն ի՞նչ իրավունքով է քարշում Պարսկաստանից աղքատ և հազարավոր պարտքեր ունեցող ժողովրդի արծաթը։ Չմոռանանք, որ երկու վանքերից մեկը, այսինքն՝ սուրբ Նախավկայի վանքը ունի մի ամբողջ գյուղ Դարաշամբ անունով. այս գյուղը պատկանում է վանքին, որ նվիրված է պարսից մեծ իշխան Նաիբ-ուլ-Սալթանայից[1]։ Կարծեմ նորին բարձրությունը այն մտքով չնվիրեց այս գյուղը վանքին, որ նորա արդյունքը Էջմիածին տանեն. նա նվիրեց պարսից տերության մեջ գտնված մի վանքի և Պարսկաստանի հայ ժողովրդի պետքի համար գործածելու։

Բացի վերոհիշյալներից կան և ուրիշ կալվածներ ևս, որոնց արդ-

---

[1] Նաիբ-ուլ-Սալթանա՝ նշանակում է թագավորի փոխանորդը կամ երկրորդականը. այսպես կոչվում էր Աբբաս-Միրզա մեծ իշխանը, որ յուր ժամանակին Պարսկաստանի Բիսմարկն էր։ Դա ռուսաց պարսից հետ պատերազմի ժամանակը Պարսկաստանի ամբողջ արևմտյան մասի փոխարքան էր, որ կապեց ռուսների հետ Թուրքմենչայի դաշնադրությունը։ Նույն ժամանակ, երբ Պարսկաստանի հայերն սկսեցին գաղթել դեպի Ռուսաստան, Աբբաս-Միրզան ամենայն հնարք ի գործ էր դնում, որ արգելե գաղթականությունը. այս պատճառով նա շնորհեց հայերին շատ արտոնություններ, օրինակ, Դիլմանի հայերին բոլորովին ազատ կացուց հարկատվությունից, մելիքներին, տանուտերերին մշտական ռոճիկներ սահմանեց, վիճակային առաջնորդին նույնպես թոշակ նշանակեց, նշանավոր եկեղեցիներին և վանքերին կալվածքներ շնորհեց, որոնց թվումն է և Ս. Նախավկայի Դարաշամբ գյուղը։

յանքը էջմիածինն է տանում, որոնք, բոլորն էլ ամենայն իրավամբ, պետք է սեփականել Դավրեժի ազգային դպրոցին[1]:

Բայց ո՞վ պետք է իրագործե մեր առաջարկած բարեկարգությունները:—Մենք պատասխանում ենք.— ժողովուրդը:

Այո՛, ժողովուրդը, որովհետև նա է յուր իրավունքների պաշտպանը և տերը. նա պետք է բողոքե յուր վերա գործ դրված անիրավության դեմ, և նորա ձայնը այնքան ուժ և զորություն ունի, որքան նորա պահանջը իրավացի է և արդար:

Բայց մեր ժողովուրդը գիտե՞ այդ: Ո՛չ, դժբախտաբար նա այնպիսի թմրած վիճակի մեջ է ապրում, որ գուցե չի էլ զգում, թե ինքը հարստահարված է... Գուցե նա համոզված է, թե գործերի կարգը հենց այնպես պետք է լիներ, որպես առաջուց դրված է, որպես կա... որովհետև ինքը նորան սովորած է, ինչպես որ սովորած է, թե հորանջելու միջոցին պետք է բերանը խաչակնքել. եթե պատճառը հարցնես, կասե, իմ պապս էլ այսպես էր անում...

Բայց ամեն տեղ ամբոխը չէ, որ ներգործում է, նա շատ անգամ մնում է անտարբեր, ներգործում է միայն նորա ընտրյալ մասը. մտածողները և հասարակական բանվորները: Եվ մենք այդ ունինք, դորանցից զուրկ չենք: Մեզանում ևս կան տղամարդիկ, որոնք թե՛ խոսքով և թե՛ գործքով պատրաստ են պաշտպանել ճշմարտության համար... Թողյալ այդ, ժողովուրդն արդեն ունի յուր ներկայացուցիչները, դա է Դավրեժի ազգային հոգաբարձությունը. նորա ոչ միայն սեփական պարտքն է պաշտպանել ժողովրդի շահերը, այլև իրավունք ևս ունի:

Հուսով ենք, որ Ատրպատականի այժմյան թեմակալ Անդրեաս եպիսկոպոսը, ուշադրության առնելով այս խնդիրը, յուր կողմից չի խնայելու ամեն աշխատություն և ջանք, որպեսզի յուր առաջնորդության օրերով վիճակային հոգևոր կառավարությունը մաքրվի հին կեղտերից և հեռացվի վաղեմի անկարգությունները: Հուսով ենք, որ նորին սրբազանության օրերով կբարեկարգվի յուրյան հանձնարարված

[1] Մենք լսում ենք, որ Դավրեժի ազգային դպրոցի հոգաբարձությունն արդեն առանձին աղերսագրով դիմել է Նորին վեհափառության կաթողիկոսին, խնդրելով, որ Ատրպատականի ինչ-ինչ կալվածքների և եկեղեցվո «աթոռային» արդյունքները, որ մտնում են մինչև այսօր էջմիածնի գանձարանը, այսուհետև հատկացվին Դավրեժի ազգային դպրոցին: Հուսով ենք, որ Նորին վեհափառությունը, տեսնելով այս գործի կարևորությունը, կհարգե հոգաբարձության աղերսը, և այսպիսով մեծ շնորհ արած կլինի Պարսկաստանի աղքատ հայերին և նոցա դպրոցին, որ մեծ կարոտության մեջ է:

վիճակը, ստանալով մի նոր ձև և կերպարանք, որպես պահանջում է ժամանակը, որպես հարմար է ժողովրդի այժմյան պիտույքներին։ Եվ նորին սրբազանության ազնիվ հատկությունները բոլորովին երաշխավորում են մեր հույսը, թե նորա անունը Պարսկաստանի հոգևոր կառավարության բարեկարգության տարեթվի մեջ առաջին տեղը կբռնի։

* * *

Վերջացնելով մեր հոդվածը՝ չի կարելի մի քանի խոսք չասել Դավրեժի ժողովրդական ընթերցարանի մասին, որ բացվեցավ 1875 թվին։ Դա զետեղված է նույն տան մեջ, ուր գտնվում է քաղաքի ազգային դպրոցը և առաջնորդարանը։ Եկեղեցուն շատ մոտ է։

Դավրեժի հայ ժողովրդականք, ապրելով ասիական կյանքով, չունեին մի տեղ, մի կենտրոն, որ նոքա որոշյալ օրերում հաղորդակցություն ունենային։ Նորանց հարաբերությունները խիստ առանձնական էին։ Նորանք տեսնվում էին միմյանց եկեղեցում, ուր բանավոր հաղորդակցություն նոցա մեջ լինել կարող չէր։ Փողոցներում առավոտից մինչև երեկո նորանք զբաղված էին յուրյանց գործերով, իսկ տուն դառնալուց հետո խիստ մերձավոր բարեկամները միայն, այն էլ ոչ միշտ, կարող են միմյանց տեսնել։ Եվ այսպես ընկերական կապը նոցա մեջ ամեն կերպով կտրված էր։ Հասարակային տեղեր չկային, ամեն մարդ յուր աշխարհը գտնում էր յուր նեղ ընտանեկան շրջանի մեջ, որից դուրս նորա համար կյանք և լույս չկար...

Ապրելով այսպիսի առանձնական կյանքով, ժողովուրդը մինչ այն աստիճան բթամտացած էր, մինչ այն աստիճան հանգել էր նորա մեջ մարդկային զգացմունքները, որ նա բոլորովին անզգա էր դարձել դեպի հասարակային գործերը. նա չէր հետաքրքրվում, թե յուր հորիզոնից դեպի հեռու կողմերում ի՞նչ են գործում մարդիկ, ի՞նչպես են ապրում և ի՞նչ են մտածում...

Այսպիսի վիճակի մեջ էր ժողովուրդը, երբ մի քանի եռանդոտ երիտասարդներ մտածեցին մի ընթերցարան հիմնել և նրանով առիթ տալ ժողովրդին մի կողմից շուտ-շուտ միմյանց հետ հաղորդակցության կապեր ունենալ, մյուս կողմից զարգացնել նոցա միտքը։

Ընթերցարան բացվեցավ, թողյալ նյութական կողմը, նա սկզբում պետք է հանդիպեր շատ արգելքների, պետք է պատերազմեր հասարակության նախապաշարմանց դեմ։ Ժողովուրդն արհամարհանքով էր նայում այս հիմնարկության վերա, նա ծիծաղում էր՝ «գիրքը կարդում

են աղոթելու համար, և այն կարդում է միայն տեր հայրը, աշխարհականն ինչ գործ ունի գրքի հետ». կրթության մասին ամենևին գաղափար չունեին, այդ պատճառով նրա մասին դատել կարող չէին։

Ի նկատի ունենալով այսպիսի տխուր հանգամանքները, ընթերցարանը պետք է հաղթեր մի մեծ դժվարություն. նա չուներ պատրաստի ընթերցասերներ, նա ստիպված էր նորից ընթերցողներ պատրաստել։ Այս նպատակով ընթերցարանն սկզբում ընդունեց մի տեսակ լսարանի կերպարանք, որպեսզի յուր հաճախորդների ճաշակը կրթե, նոցա նախապաշարմունքները ջնջե, նոցա մտածության ձևերը փոխե, և նոցա նորանոր գաղափարների հետ ծանոթացնե։ Այս մտքով ընթերցարանը հիմնող երիտասարդները հազար ու մեկ ճարպկություններով մարդիկ էին որսում, այնտեղ բերում։ Մեկն սկսում էր, օրինակ, բարձր ձայնով կարդալ որևիցե լրագրում մի նշանավոր հոդված, մյուսները լսում էին, հոդվածը վերջանալուց հետո հայտնվում էին կարծիքներ, վիճում էին, դատում էին, և այս բոլոր մտավոր պատերազմի մեջ մեր ակամա հաճախորդը նկատում էր՝ «չէ՞, ընթերցարանը մի ուրիշը բան է եղել,—ասում էր նա յուր մտքում զարմանալով.— էստեղ մարդ շատ բան է սովորում»։ Նա հետաքրքրվում էր, սկսում էր այնուհետև ինքը կարդալ, չգիտցած, չհասկացած տեղերը հարցնել և «բան սովրել»։

Այնուհետև այն պարոնները, որ սկզբում ակամա էին բերվում ընթերցարանը, սկսեցին իրանք հաճախել, սկսեցին գրքեր վարձել և տուն տանել կարդալու համար։ «Ինձ մի լավ գիրք տվեք, տանեմ տանը կարդամ»,—ասում էր հաճախորդը, լավ գիրքը ընտրում էր ընթերցարանի կառավարիչը, որովհետև խնդրողը ոչ մի գրքի ծանոթ չէր և ոչ մի գրքի անուն չգիտեր, բացի «Սաղմոսից» և «Ավետարանից»։

Այնուհետև փոստայի ներս գալու օրը մի անհամբեր օր դարձավ. հաճախորդները շատ վերա էին թափվում և հարցնում էին՝ «ի՞նչ նոր բան կա լրագիրների մեջ»։ Յուր պատասխանները հեշտացնելու համար ընթերցարանի վարչությունը ստիպված էր ամենից առաջ ինքն աչքի անցկացնել ստացած լրագրները և ամսագրերը, և նշանակել նոցա ճակատի վերա նշանավոր հոդվածների անունները։

Այսպիսի երևույթները տալիս են մի մխիթարական հույս մտածելու, թե մի ժողովուրդ որքան և բթացած լիներ, որքան և անզգայացած լիներ դեպի հասարակային մտածողությունները, այսուամենայնիվ տոկուն և եռանդոտ աշխատությունը կարող է զարթեցնել նորա մեջ կյանք և ազնիվ զգացմունքներ։

Տեսնելով ընթերցարանի այսպիսի հաջող առաջադիմությունը, մենք չենք կարող չհիշել պարոն Հ. Հաջեյանին՝ պոլսեցի ազնիվ երիտասարդին, որ սկզբից մինչև այժմ տեսուչն է և նորա եռանդոտ հիմնողների պարագլուխն է եղել։ Նորա աշխատությամբ ընթերցարանը մեկ ու կես տարվա ընթացքում ունեցավ 700 հատոր հայերեն, գաղղիերեն, ռուսերեն, հունարեն, անգլիերեն, պարսկերեն և այլ գրքեր. շաբաթական ստանում է. 8 օրինակ հայերեն լրագիրներ, 4 օրինակ գաղղիերեն, մեկ օրինակ պարսկերեն, մեկ օրինակ ռուսերեն. ստանում է նաև 5 օրինակ զանազան հայերեն ամսագրեր։

Ընթերցարանը բացի նորանից, որ բավականություն է տալիս հասարակության ընթերցասիրությանը, որպես հիշեցինք, Դավրեժի ազգային դպրոցին կից լինելով, նաև նպաստում է դպրոցին նորա ուսումնական առաջադիմության մեջ։ Ընթերցարանը յուր հաշվով բերել է տալիս բոլոր այն գրքերը, որոնցից վարժապետները և նոցա աշակերտները կարող են օգուտ քաղել։ Ընթերցարանը օգնում է և Պարսկաստանի հետավոր քաղաքներին. յուր ստացած լրագիրները կարդացվելուց հետո բոլորովին ձրի ուղարկում է, օրինակ, Թեհրանի հայոց ընթերցարանին, որ շատ աղքատ վիճակի մեջ է, այլև յուր մեջ գտնված գրքերի ավելորդ օրինակները նույն ընթերցարանին է ընծայում[1]։

Այսպիսի հաջող ընթացքով, հուսով ենք, մի քանի տարուց հետ ընթերցարանը յուր կատարելագործված վիճակին կհասնի։ Ի՞նչ հրաշքներ չէ գործում երիտասարդությունը, ժողովրդի թա՞րմ և կենդանի ուժը...

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Հունիսի 27-ին

Ինչպես հայտնի է ձեզ, երբ պատերազմը Սերբիայի և Չեռնոգորիայի հետ արդեն սկսված էր, սուլթանը հեռագրով դիմել է Բոսնիայի մահմեդականներին՝ սիրով ողջունելով նրանց և հրամայելով, որ այդ գավառի յուրաքանչյուր բնակիչը, որ կարող է զենք վեր առնել

---

[1] *Շնորհակալություն Կ. Պոլսի ազգայիններին. նոքանք ցույց տվին խիստ ազնիվ համակրություն դեպի աղքատ Դավրեժի ընթերցարանը, ուղարկելով նորան որպես ընծա 470 հատոր զանազան լեզուներով գրքեր։ Իսկ մեր Ռուսաստանի հայերից չգտնվեցավ և ոչ մեկը, որ մի հատոր գիրք ուղարկած լիներ, բացի մեծապատիվ Մ. Սանասարյանից, որը յուր հաշվով ուղարկել է տալիս «Время» ամսագիրը...*

17 տարեկան հասակից սկսած մինչև 70 տարեկան հասակը, զինավորվեն և միանան Թուրքաց զորքի հետ սլավոնացիների դեմ, կրոնքը և հայրենիքը պաշտպանելու համար։ Կառավարության համայն պաշտոնյաները իրենց ռոճիկից մի ամսականը նվիրեցին տերությանը։ Խասբով անուն Փնդըքլյան մի հայ վաճառական 50.000 ոսկի նվիրեց օսմանյան բանակի օգնության համար։ Ահա մի փաստ, որ պարզ ցույց է տալիս մեզ, որ հայերի մի մասի համար՝ հարուստ, բարձր, հարստահարող մասի համար, Թուրքաց ողորմելի տերությունը մեծ նշանակություն ունի։ Այդ տեսակների համար ազգություն, ստորին ժողովրդի տանջանք, երեք միլիոն ամբոխի թշվառ դրություն, ընդհանուր մարդասիրական, քրիստոնեության և մարդկային քաղաքակրթության գաղափարները նշանակություն չունեն։ Հայերը Թուրքիայում այժմ սկսում են հասկանալ, որ Կ. Պոլսի հայերից ոչինչ չեն կարող սպասել։ Օտար՝ բյուզանդյան հողի վրա, Կ. Պոլսում զետեղված, իրենց հայրենիքից հեռու, հայրենակիցների օգուտներին օտար, նրանք հարստանում են զանազան անազնիվ միջոցներով, ծուծը հարստահարելով հայրենակիցների միջին և ստորին դասերը, նույնիսկ մայրաքաղաքում զետեղված, դառնում են էֆենդիներ, փաշաներ, հետո ստանում են տերությունից զանազան իրավունքներ, պաշտոններ, պատվանշաններ, աստիճաններ և հոգևորականների հետ ձեռք ձեռքի տված ճնշում են տերության ամեն ժողովրդական ինքնուրույն արտահայտություն ազգի մեջ, խափանել են տալիս այն հայոց լրագիրները, որք ազատ են խոսում նրանց վրա, ունեն իրանց ձեռքում սահմանադրությունը, ազգային և կրոնական ժողովը, իսկ ազգի աշխատող, տանջված, հարստահարված մասը ի՞նչ փույթ նրանց համար։ Հայերը Թուրքիայում մեծ ազատություն են վայելում, ասում են միշտ։ Այո, ճշմարիտ է, հայերը այնպիսի ազատություն են վայելում այստեղ, որ ո՛չ մի տեղ ո՛չ մի երկրում չունեն, բայց ի՞նչ հայեր, հայերի ո՞ր մասը՝ հարուստ, վաճառական, հարստահարող հայերը, որք դառնում են էֆենդիներ, աղաներ, բեկեր և փաշաներ, իսկ ամբոխը միջնադարյան ստրկության մեջ է։ Շատ անգամ ասվում էր՝ թող հայերը վաճառականությամբ պարապեն, հարստանան և հետո կարող են իրանց հավաքված գումարները ազգին օգնելու համար գործ դնել։ Ահա՛ ինչպես գործ են դնում նրանք իրանց գումարները՝ բարբարոս տերությանը օգնելով, ապստամբված քրիստոնյաների դեմ... Ասում են՝ հայերը Թուրքիայում սահմանադրություն ունեն։ Այո՛, ճշմարիտ է, ունեն, բայց ովքե՞ր են այդ հայերը, ո՞ւմ համար է սահմանադրությունը՝ ոչ թե հայ երկրա-

գործ բազմաթիվ դասի, մոտ երեք միլիոն ժողովրդի համար, այլ Կ. Պոլսի ոչ ամբողջ 300.000 հայ ազգաբնակության համար, այլ այդ քաղաքի էֆենդիների, աղաների, ամիրաների և հոգևորականների համար միայն։ Սահմանադրությունը ոչ թե հայ երկրագործ դասի, հայ արհեստավորների, բուն ազգի հիմնավոր տարրերի համար է, այլ Պողոս, Ներսես, Կիրակոս կամ Մարտիրոս հայր սուրբերի և Փնդըլյան, Մնդըլյան հարստացած վաճառականների և Օղլյան, Սափրիչյան ու սրանց նման էֆենդիների համար է... Հասկանալի է, որ այդ երկու դասերը՝ հոգևորականները և վաճառականները ու այդ վերջիններից էֆենդիներ ու ամիրաներ դարձածները բոլոր ազատ իրավունքները վայելելով, չեն հոգում մնացած ազգի մեծագույն մասի վրա, բուն ազգի վրա... Իսկ Կ. Պոլսում երեսուն տարի շարունակ հրատարակվող հայոց լրագիրները այդ բուրժուա դասի ու կղերականների, այդ բուրժուազական սահմանադրության օրգաններն էին և անտես էին առնում ժողովրդի պիտույքները։ Ազգը կորչում էր, անհետանում էր, գաղթում էր, սատկում էր, բարոյապես ընկնում էր, տերության բռնի ազդեցության տակ մահմեդականություն էր ընդունում, տնտեսական կողմից հարստահարվում էր, իսկ Կ. Պոլսի էֆենդիները, ամիրաները և հոգևորականները աղաղակում էին «կեցցե սահմանադրություն», լրագրությունը կրկնում էր, թե ոչ մի տեղ հայերը չեն վայելում այնքան ազատություն, որքան Թուրքիայում... Այո, էֆենդիները վայելում էին ազատություն... Թուրքաց տերության անբարոյական տիրապետության տակ ուրիշ կերպ չէր կարող լինել և այդ հայոց սահմանադրությունը շատ խելոք և գործնական բան էր թուրքաց տերության կողմից՝ նա տվեց էֆենդիներին, ամիրաներին, հարստացած վաճառականներին, կապալառուներին և այլ սրանց նման հարստահարողներին, նույնպես և հոգևորականներին, մի խոսքով ազգի պահպանողական տարրերին, որք կախված չեն ժողովրդից, այլ որոնց օգուտները կապված են տերության օգուտների հետ, սահմանադրական իրավունքները, որ նրանց օգնությամբ ավելի ճնշե, ստրկության մեջ պահե ժողովրդի կենդանի, աշխատող, մեծագույն մասը, ճշմարիտ ազգը...

Այո՛, հայը Հայաստանից պանդուխտ, թափառական, գաղթական էր լինում, որովհետև էլ ապրել չէր կարող այնտեղ, նա որ մնում էր Հայաստանում՝ գրաստ էր թուրքերի ձեռքում՝ նրա ոչ սեփականությունը, ոչ կյանքը, ոչ անձնական և ընտանեկան պատիվը չէր ապահովված, իսկ Կ. Պոլսի հայ էֆենդին՝ առուտուրով, հարստահարությամբ կամ տերության ծառայության մեջ կաշառքներով ու գողություններով

հարստացած հայ էֆենդին ու նրա ընկեր հոգևորականը, որ տերության շնորհներ էին վայելում, կուշտ ու գոհ, ազգային ու կրոնական ժողով էին սարքում, ճառեր կարդում, տերությունը գովում ու մինչև երկինքը բարձրացնում և «կեցցե՛ ազգ ու սահմանադրություն» էին աղաղակում...

Վաճառականները որ ազգության և պատկանեին, միշտ նույն բընավորություն են պահում։ Նույնը որ արել է հայ Փնդըլյան վաճառականը, նույնը արել է մի բուլղար Դուհ-օղլը Իվան վաճառականը Թուրքաց տերության, որպես նպաստ զորքին 56.500 ոսկի ընծայելով։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրեժ, հուլիսի 25-ին

Այս տարի Միջագետի մեջ հայտնված ժանտախտի պատճառավ Պարսկաստանի հարաբերությունները Բաղդադի հետ կտրվեցան, պարսիկներին արգելք դրվեցավ այն կողմերում մանել։ Այս արգելքը զըրկեց պարսիկներին մի նշանավոր կրոնական մխիթարությունից, այն է՝ Քարբալայի *ուխտագնացությունը, որ կատարվում է Բաղդադից փոքր-ինչ* հեռու Նաջաֆ *կոչված տեղում, ուր դրված են Ալիի նահատակված որդիների՝ Իմամ-Հասանի և Իմամ-Հուսեյնի շիրիմները։*

Քարբալայի ուխտագնացությունը պարտավորական է ամեն մի մահմեդականի համար, որ պատկանում է շիա *աղանդին։ Եթե մի մահմեդականի ամբողջ հարստությունը հասնում է այն չափին, որ նա կարող է հոգալ ճանապարհի ծախսը, պետք է անպատճառ կատարե յուր ուխտագնացությունը, հակառակ դեպքում նա օրենքի դեմ մեղանչած կհամարվի։ Մի այսպիսի սնահավատությունը ամեն տարի Պարսկաստանի ամենահեռավոր անկյուններից անգամ ուխտավորների հազարավոր կարավաններ քաշում է դեպի իմամների սուրբ շիրիմները, և աղքատ, ողորմելի ժողովրդի արծաթը ծախսվում է օտար երկրում։*

Թողյալ այդ, պարսիկներն յուրյանց մեռելների դիակներն ևս տանում են Բաղդադ և թաղում են Նաջաֆի հողի մեջ, որ սրբված է իմամների արյունով...

Այս տարի, որպես ասեցինք, ժանտախտի պատճառավ պարսիկները զրկվեցան հիշյալ կրոնական մխիթարություններից։ Բայց իմամներն չուզեցին թողնել Պարսկաստանի ժողովուրդն անխնամ և կարո-

ության մեջ. Նրանք մտածեցին՝ եթե ժողովրդին արգելված է յուր-յանց մոտ գալ և յուրյանց ուխտը կատարել, ավելի լավ է, որ իրանք՝ իմամներն տեղափոխվեն ժողովրդի մոտ և նրանց կարոտը լցուցանեն: Եվ հանկարծ նրանք Բաղդադից գաղթելով հայտնվում են Պարսկաստանի Խոյ քաղաքում:

Հիշյալ քաղաքում կա մի վաղեմի մատուռ, որին տեղացիք կոչում են մաղվարա, այնտեղ դրած են մի քանի սեյիդների, այսինքն՝ իմամների սերունդների շիրիմներ: Մատուռի միաբանությունը կազմող մոլլաներից մեկն հայտնի տեսիլքի մեջ տեսնում է Բաղդադի իմամներին, որոնք ասում են նրան. «Մենք Քարբալայի իմամներն ենք, մենք չուզեցինք, որ այս տարի պարսիկներն զուրկ մնային մեր շնորհներից և եկանք Պարսկաստան: Այս մատուռն կլինի մեր բնակարանը, այստեղից մենք կթափենք մեր զորությունները ժողովրդի վրա: Վեր կա՛ց, գնա՛, քարոզիր ժողովրդին, թող բերեն յուրյանց կաղերն, կույրերն և անդամալույծներն, և նրանք բժշկություն կգտնեն»:

Իմամների Խոյ քաղաքում հայտնվելու լուրը կայծակի արագությամբ տարածվում է Պարսկաստանի ամենախորին ծայրերը, և ամեն կողմից կույրերի, կաղերի, անդամալույծների և զանազան ախտավորների անհամար բազմություն թափվում են դեպի հիշյալ քաղաքը և հրաշալի կերպով բժշկվում են...

Այո՛, բժշկվում են... թեև բժշկված մեկը ոչ ոք չէ տեսել, բայց ժողովուրդն ստեղծել է բժշկվածների հազարավոր անծանոթ անուններ և ջերմ ոգևորությամբ պատմում է բոլոր հրաշքները, որ կատարվեցան նրանց վրա: Բժշկությունը և հրաշքները, որպես միշտ, կատարվում են սնահավատ ժողովրդի բորբոքված երևակայության մեջ...

Պարսկաստանում այսպիսի երևույթներ պատահում են խիստ հաճախ, բայց նրանց և ոչ մեկը մինչև այս աստիճան ցնորամիտ խաբեության հասած չէ եղել: Ամեն ընտանիք, որի մեջ գտնվում է ախտավոր մեկը, դիմում է դեպի Խոյ քաղաքը իմամների շնորհը վայելելու և յուր ախտավորը առողջացնելու: Թեև նրանց բաղձանքը չէ կատարվում, թեև կույրը վերադառնում է յուր տունը դարձյալ կույր աչքերով, այնուամենայնիվ, այսպիսիքը միշտ ունեն մի խոսք յուրյանց կարծիքը արդարացնելու. «Գուցե մեր հավատքը հաստատուն չէր, գուցե մենք ջերմեռանդ հույսով չդիմեցինք իմամի դուռը, և նա չկատարեց մեր խնդիրքը» «Բայց Քարիմը և Հաշիմը բժշկվեցան, որովհետև նրանց միտքն ուղիղ էր»: Բայց ո՞վքեր են այդ Քարիմը և Հա-

շիմը, ոչ որ չէ ճանաչում, ոչ ոք չգիտե, նրանք ապրում են ժողովրդի երևակայության մեջ…

Այստեղից հասկանալի է, թե ո՞րպես ստեղծվեցան հրաշքները և որպես նրանք կրկնվում են մեր լուսավոր դարումը…

Բայց ցավալին այն է, որ այսպիսի երևույթները միշտ սպառնում են վտանգ տեղային քրիստոնյաներին։ Ժողովուրդը, գրգռված յուր ցնորամիտ մոլեռանդության մեջ, սկսում է հալածանք բարձրացնել քրիստոնյաների դեմ, ասելով. «Անիրավներ, այսքան հրաշքներ տեսնելուց հետո դուք դարձյալ պիտի մնաք ձեր անհավատության մեջ»։ Այսպիսով, այսօրվա օրս Խոյ քաղաքի հայերի կյանքը մեծ վտանգի մեջ է։

Կառավարությունը ուշադրություն չէ դարձնում հանգստացնելու անհավատ ժողովրդի ամբոխմունքը։ Իսկ մոլլաներն յուրյանց կողմից մեծ գրգիռ են տալիս նրան, որովհետև դորա մեջ է նրանց օգուտը, ուխտավորներից նրանք շահվում են։ Նրանք կցանկանային, որ Բաղդադի աներևույթ իմամներն երկար մնային Պարսկաստանում և շարունակեին յուրյանց հրաշագործությունները… Բայց կառավարությունը, եթե խրատված լինի անցյալ փորձերից, նա պետք է ամեն հնարքներ գործ դնե հանգստացնելու ժողովրդի կատաղի հուզմունքը ոչ միայն քրիստոնյաների հանգստությունը պահպանելու համար, այլ նույնիսկ յուր շահերը պահանջում են այդ։ Որովհետև այսպիսի խաբեական երևույթները միշտ ամրապնդում են ռամկին յուր մոլեռանդության մեջ և հետևապես բարձրացնում են մոլլաների ազդեցությունը և հարգը, որոնք մոլեռանդության ներկայացուցիչներն են։ Այսպիսով կառավարությունը զրկվում է իրագործելու յուր նպատակը մոլլաների ազդեցությունը թուլացնելու մասին, որոնք միշտ հակառակ են գնում պետության բարենորոգումների դեմ։

Ի՜նչ խայտառակություն է այդ, մի խաբեբա մոլլայի ինքնահնար երազի պատճառով ամբողջ Պարսկաստանը տակնուվրա է լինում։ Շինականը, երկրագործը, վաճառականը թողնում են յուրյանց աշխատությունը, բավականին ծախսեր անելով, հեռու տեղերից գալիս են հրաշքներ տեսնելու։ Թողնենք այս իրողության բարոյական կողմը, մի՞թե դա նյութապես չէ վնասում աղքատ և ողորմելի ժողովրդին։

Այժմ ես հասկանում եմ, թե որպես ստեղծվեցան և իրական կերպարանք ստացան հրաշքները…

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Օգոստոսի 7-ին

Այս շաբաթը «Թատրոն» ծաղրաթերթը չհրատարակվեցավ։ Պատճառն հետևյալն էր. Ներսես պատրիարքը մի շրջաբերական հրատարակելով լրագիրների մեջ (որ ֆրանսերեն լրագրներն էլ թարգմանած են), աշխարհի առջև հայտարարում էր, թե հայերը գոհ են թուրքաց բարեխնամ կառավարությունից, և թե եղած հարստահարությունները անհատական բաներ են, կառավարության կամքին հակառակ եղած։ «Թատրոն» վարպետ կերպով ծաղրած էր այդ գրվածը, նույնպես և կովկասյան ապստամբության խնդրի մեջ պատրիարքարանի բռնած զարմանալի ընթացքը։ Պատրիարքարանը երևի թե կառավարության ազդեցության տակ ճնշված լինելով, պատիպատ պատասխաններով ժողովրդին ավելի էլ կասկածներ ներշնչեց։ Բ. Դուռը առաջարկեց «Թատրոնին» ետ առնել իր գրվածները, բայց «Թատրոնի» խմբագրությունը լավ համարեց չհրատարակել թերթը, քան թե գրվածքը ետ առնել։ «Caurrier d'Orient» *լրագիրը կառավարության հրամանով արգելվեցավ Բուլղարիայի մեջ կատարված անգթությունները հրատարակելու պատճառով։ Թուրքերը Բաղեշի մեջ մի վանք կողոպտել են։ Ասում են, որ գողացած գումարը հասնում է մինչև 50000 օսմ. ոսկի։ Ասիական գավառների այլ և այլ հարստահարություններ շարունակվում են։ Վանի կառավարիչը, որ քրիստոնյաների բարեկամ էր, այս օրերս փոխվեցավ։ Ասում են, որ նրա հաջորդը մի մոլեռանդ մահմեդական է։ Կառավարությունը Վանի, Ղարսի բերդերը և այդ սահմանագլուխ երկրները ամրացնում է։ Կառավարությունը 5.600.000 ղուրուշի թղթադրամ հանձնած է պետական բանկը, որ ղմավլին և թվանշանները գրվին։ Այսօր կամ վաղը սպասում ենք, որ շրջաբերությունը հանձնըվեն։ Կառավարությունը իր հանած թղթադրամը չպետի ընդունի մաքսի, հեռագրերի և փոստի համար վճարելու ժամանակ... Կառավարությունը սրանով ցույց է տալիս, որ ինքն մեծ նշանակություն չէ ընծայում իր հանած նոր թղթադրամներին...*

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրեժ, 13 օգոստոսի

Մինչ Տաճկաստանը յուր քրիստոնյա հպատակներին նորանոր արտոնություններ շնորհել, իրավունքի հավասարություն տալ և նրանց վաղեմի ծանր և անտանելի լուծը թեթևացնել է խոստանում, որպեսզի քրիստոնյան պետությունների համակրությունը ստանա և նրանց կողմից իրան սպառնացող վտանգը հեռացնե, ընդհակառակն, Պարսկաստանը յուր քրիստոնյա հպատակների վերաբերությամբ դեռ վաղեմի բարբարոսության մեջն է գտանվում, բարբարոսություններ, որ կրում են իրանց վերա լանկթեմուրյան-չինգիզխանյան դարերի արյունոտ կնիքը...

Հայը Պարսկաստանում ոչինչ բանի տեր չէ. նրա կյանքը, նրա կայքը և նրա ընտանիքը իրան չեն պատկանում։

Նրա կյանքը և մի հավի կյանքը՝ երկուսն էլ միևնույն նշանակություն ունեն։ Որպես մի ժամանակ կատաղի ենիչերին յուր սրի զորությունը փորձելու համար հայի գլուխներ էր թռցնում, այնպես էլ պարսիկը յուր հաճույքի համար կարող է մի հայ սպանել և անպատիժ մնալ։

Եվ նրա կայքը, այո՛, իրանը չէ։ Պարսկի տանը ինչ որ պակաս է. նա առանց պատասխանատվության հափշտակում է և խլում է հայից։ Եվ նրա ընտանիքը նույնպես իրանը չէ. նրա գեղեցիկ աղջիկը և կինը միշտ ղոհվում են մահմեդականի կրքերին...

Մեր ասածներն դատարկ խոսքեր չեն, այլ հիմնված են ամենօրյա պատահած անցքերի վերա։ Հիշենք մի քանիսը, որ մոտ օրերի անցքեր են։ Արդեբիլում հայ երիտասարդներն ձիարշավ են ունենում, նրանց մեջ գտանվում է մի թուրք. դա նախանձից դրդված, արձակում է յուր հրացանը և սպանում է հայերից մեկին։ Չարագործը թեև բռնվում է, բայց մնում է անպատիժ։ Ռաշտում մի հայ երիտասարդ բոլորովին անտեղի կասկածանաց պատճառավ մի թուրք հրապարակական կնոջ հետ, քարկոծվում է կատաղի ամբոխից։ Մարաղայում թուրքերը դաշտից հափշտակում են մի հայ աղջիկ, և, նրան շաբաթներով այստեղ և այնտեղ ման ածելեն հետո, երբ գործը դատի է հասնում, համաձայնվում են աղջիկը ետ դարձնել յուր ծնողներին միայն այն պայմանով, երբ նրանք կտային մի նշանավոր գումար փող։ Ծնող-

ներն աղքատ լինելով, տեղային հայ հասարակությունը յուր միջից հավաքում է բավականին գումար և մոլլաներին ու դատավորին կաշառք տալով, ետ են գնում իրանց անպատված աղջիկը…

Սալմաստում մի տան մեջ, երբ գյուղացի հայերն հավաքված, կատարում էին մի հանգուցյալ սուգը, հանկարծ գյուղատեր խանի եղբայրն քանի զինվորված մարդերով պաշարում է տունը և հափշտակում է այնտեղից մի աղջիկ։ Չարագործը յուր անմեղ զոհը մինչև 15 օր յուր կրքերին ծառայեցնելեն հետո, աղջիկը փախչելով ազատվում է, բայց կրկին հափշտակվում է նա…

Թողնենք այդ անիրավությունները, որոնք թեև հաճախ կրկնվում են, բայց դարձյալ պատահական են, դառնանք այն հարստահարություններին, որ կատարվում են մշտական կերպով և հաջորդաբար։

Գյուղացիները սարսափելի թշվառության մեջ են. կալվածատեր խաների հարստահարությունը հասցրել է նրանց վերջին աստիճանի աղքատության։ Խաներն առնում են գյուղացիներից երեքպատիկ, չորեքպատիկ անգամ ավելի տուրք, քան այն գումարը, որ նշանակել էր գյուղի վերա կառավարությունը։ Մենք իբրև օրինակ կվերառնենք միայն Ղարադաղի Քեյվանի կոչված գավառի 6 հայաբնակ գյուղորայքը։ Երևակայեցեք, ի՞նչ կլինի մի հայ գյուղացու վիճակը, երբ նա 25 թուման տերությունից նշանակված հարկի փոխարեն վճարել է 700 թուման, դեռևս չէ ազատվում հարկահաններից (Սրդրն գյուղ)։ Եվ մնացյալ գյուղորայքն 280 թումանի փոխարեն վճարել են 1500 թուման, տակավին պահանջում են նրանցից։

Ինչո՞ւ են տալիս, գուցե կհարցնե ընթերցողը։

Գյուղացին իր հաճությամբ չէ տալիս, այլ նրանից առնում են սարսափելի բռնություններ գործ դնելով, բռնություններ, որ ոչ մի բարբարոսի մտքից անգամ անցած չէ։ Հիշյալ գավառի կառավարիչները՝ Բաղր-խանը և Մահմուդ-խանը, իրանց հանձնված թշվառ հայերը անողորմ կերպով կողոպտելեն հետո, դարձյալ նորանոր հարկեր են պահանջում։ Գյուղացիք այլևս վճարելու կարողություն չունեն. բայց խանը ուշադրություն չէ դարձնում նրանց արտասուքին ու լացին, սկսում է ավելի զազանական միջոցներ գործ դնել, որ ինկվիզիցիան երբեք գործ չէ դրած յուր զոհերի վերա։ Մենք կհիշենք միայն մեկը, թող մնացածի մասին գաղափար ստանա ինքը ընթերցողը։

Բաղր-խանը գյուղացիների բոլոր այն իրեղենները, որոնք որևիցե արժեք ունեին, կողոպտելեն հետո, բռնել է տալիս գյուղի ծերունիներին, զանազան տեսակ չարչարանքներով սկսում է զուտ փող պա-

հանջել։ Օրինակ, 70—80 տարեկան ծերերի ամորձիքից ծանր քարեր քարշ տալով, ծեծի և խարազանի զորությամբ ստիպեցնում է նրանց վազ տալ... Տեսեք, ամբողջ մարդկային պատմությունը չունի յուր էջերում չարչարանքի մի այսպիսի սատանայական օրինակ... Երևակայեցեք, թե մինչև որ աստիճան զարգացած է պարսից մեջ տանջելու արհեստ...

Գյուղացիներից ոմանք հազիվ կարողանում են փախչել և գալ Դավրեժ, և Ատրպատականի առաջնորդի միջնորդությամբ յուրյանց բողոքը հայտնելով բարձր կառավարության, այո՛, նրանց վերա գործ դրված զարհուրելի բարբարոսությունները գրավում են կառավարության ուշադրությունը։ Նորին վսեմության՝ Ատրպատականի կառավարչի՝ Սահաբ-դիվանի հրամանով Բաղր-խանը Ղարադաղից բերվում է Դավրեժ։ Գյուղացիների բողոքին խոստանում են լիակատար բավականություն տալ. Բաղր-խանին պատժել, անիրավաբար հափշտակած փողերն ետ առնել և այլն։ Իսկ այդ բոլոր խոստումներն իզուր են անցնում, որովհետև Բաղր-խանը հետևելով Պարսկաստանի սովորական ձևերին, կարողանում է մի քանի հարյուր թումանով դեպի ինքն գրավել դատավորների որպես օգնությունը, նույնպես և նրանց խղճմտանքը...

Այժմ գյուղացիների վիճակն ավելի անտանելի դարձավ, որովհետև, նրանք իրանց բողոքին բավականություն չստանալեն հետո, այլևս չեն համարձակվում վերադառնալ դեպի իրանց տները, վախենալով, չլինի թե ենթարկվեն իրանց բռնակալի ավելի սարսափելի վրեժխնդրությանը...

Մի քանի ելք միայն կա այս դժոխային դրությունից ազատվելու Գյուղացիներն այժմ մտածում են թողնել Պարսկաստանը և գաղթել դեպի ռուսաց հողը։ Երասխ գետը միայն բաժանում է նրանց երկիրը Ղարաբաղի գավառից. անցնելով գետը, նրանք ազատված կլինեն, և դա շատ դյուրին է...

Կառավարությունը բոլորովին անհոգ է այդ մասին, նա ամենևին չէ ուզում հասկանալ, որ մի անիրավ Բաղր-խանի և գազան Մահմուդ-խանի պատճառով յուր ժողովուրդը գաղթում է և ցրվում է դեպի օտար երկրներ։ Այսպիսի բաղր-խաններն ամեն տեղ նույնն են գործում, շատ ժամանակ չէ, մի քանի օր առաջ էր, որ 30 գերդաստան հայեր Սոլդուզից գաղթեցին դեպի Երևանու գավառը. և ամեն օր տեսնում ենք, թե որպես Սպահանի հայերն խմբերով գալիս են և գնում են դեպի ռուսաց Հայաստանը։ Շահ Աբասը այս մարդիկին Գողթան գավառից

տարավ Պարսկաստան այն մտքով, որ յուր երկիրը երկրագործության և վաճառականության մեջ ծաղկեցնե, և նա չսխալվեցավ։ Բայց նրա հաջորդների օրով խաներն սրով և արյունով դուրս են հալածում իրանց երկրից Պարսկաստանին հազարավոր օգուտներ տված հայերին…

Իսկ այդ բոլորը գործողը չէ բարձր կառավարությունը, նա ոչինչ բանից տեղեկություն չունի… գործում են միայն Բաղր-խանի և Մահմուդ-խանի նման բռնակալներն… Դրանք Չալաբյան ցեղին են պատկանում, չալաբյանցի և ավազակ բառերն միևնույն նշանակությունն ունեն Պարսկաստանում։

Համարձակվում ենք նորին վսեմության Սահաբ-դիվանի ուշադրությունը դարձնել հիշյալ իրողությունների վերա, նկատելով, որ նրա կառավարությանը պատիվ չի բերի մեր այս ժամանակում, երբ ամեն պետություն յուր հպատակների հանգստության համար է մտածում, առանց խտրություն դնելու կրոնի և ազգության, հայերն Պարսկաստանում հարստահարված լինեին Բաղր-խանի և Մահմուդ-խանի նման ավազակներից…

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Օգոստոսի 24.

Պարսկաստանում հրա՛շագործությունները սակավին կրկնվում են, նրանք սկսեցին հայտնվել և ուրիշ քաղաքներում։ Քանի օր առաջ Դավրեժի ամբողջ մահմեդականությունը սարսափելի ոգևորության մեջ էր. գիշերները քաղաքը լուսավորվում էր անհամար ճրագալույցներով. բոլոր կտուրների վերա լինում էին հրախաղություններ, և հրացան գործիքների որոտմունքը հանգստություն չէին տալիս։ Մեջիդներից լսելի էին լինում հոգևոր երգեցողություններ, և ամբոխը նրանց մեջ հավաքված, մինչև լույս աղոթում էր…

—Ի՞նչ է պատահել։

—Նոր հրա՜շք։

Ահա՛ ժողովրդի պատմությունը. յոթանասուն տարվա անդամալույծ մեկը, մի ծերունի մահմեդական, երկար տանջվելով յուր անբախտ դրության մեջ, վճռում է կամ մեռնել և կամ բժշկություն գտնել։ Այս մտքով նա մի գիշեր հրամայում է իրան տանել քաղաքի ուխտատեղիներից մեկում, որ կոչվում է իմամզադա: Այնտեղ նա յուր վզից մի թոկ է կապում և այնպես քարշ է ընկնում իմամզադայի

առաստաղից, աղոթելով, որ կամ խեղդվի, մեռնի և ազատվի, և կամ իմամը նրան բժշկություն շնորհի։ Այս դրության մեջ նրա քունը տանում է։ Հանկարծ նրա կողքը խթում են։ Նա զարթնում է և օդի միջից լսում է մի աներևույթ էակի խոսքերը. «Վե՛ր կաց, գնա՛, դու բժշկված ես»։

Նրա վզից կապած թոկը ինքն իրան կտրատվում է, անդամալույծը վեր է ցատկում և բոլորովին առողջ ոտներով վազում է մեծ մոլլայի տունը և պատմում է յուր վերա կատարված հրաշքը... Առավոտյան մեծ մոլլան հայտնում է մյուս մոլլաներին, և քաղաքի բոլոր մեջիդները լցվում են բազմությունով, որոնց մեջ նրանք սկսում են փառաբանել Մուհամմեդի ալլահը յուր ցույց տված հրաշքի մասին...

Ժողովրդի մոլեռանդությունը հասնում է ծայրահեղության։ Բժշկված անդամալույծը դառնում է բոլոր քաղաքի համար սրբության առարկա։ Նրա մորուքի և գլխի մազերը բաժանվում են ջերմեռանդ մահմեդականների մեջ[1]. նրա հագուստը կտրտում են, և ամեն մի պատառն մի մարդու ձեռքումն է մնում։ Որպես սրբություն և նրա հնացած հողաթափերն անգամ նվիրական առարկաների կարգն են անցնում...

Մե՜ծ էր մահմեդականների ոգևորությունը։ Մենք հայերս հանգստություն չունեինք. փողոցներից անցնելու միջոցին թուրքի փոքրիկ լակոտներն ևս ասում էին մեզ. «Էրմենի, ինչո՞ւ չես թուրքանում, որ հոգիդ ու մարմինդ ազատվի»։

Ժողովրդի հոգևոր կատաղությունը կարող էր ավելի վատ հետևանքների հասնել, եթե նորին վսեմությունը՝ Ատրպատականի կառավարող Սահաբ-դիվանը հուզմունքի առաջն չառներ։ Նա կոչել է տալիս յուր մոտ բժշկված անդամալույծին, և ստուգելով, որ բոլորն շինծու խաբեություն է և ավելի ոչինչ, հրամայում է նրան փայտի կապել։ Եվ բժշկված ոտներին մի քանի հարյուր փայտի հարվածքներ տալով, և այժմ ճշմարիտ անդամալույծ դարձնելով[2], Սահաբ-դիվանը հրամայում

[1] Սույն վիճակին ենթարկվեցավ 1855 թվականի սրբազան կովը, որ սպանդանոցին մսավաճառի ձեռքից փախչելով, Դավրեժի Հազրաթ-Սահաբի մեջիդը մտավ։ Ողորմելի անասունի մազերի ամեն մի հատը մի մահմեդականի ձեռքում մնաց, որպես բժշկության առարկա, մի քանի շաբաթ նա մեջիդում թանկագին խալիների վերա պառկելու բախտն ունեցավ, բայց հետո կրկին դեպի սպանդանոց տարվեցավ...

[2] Որպես երևում է, այդ մարդը երբեք անդամալույծ չէ եղել, այլ մորից կաղ ծնված մեկը, որին երբ ասում էին, թե դու դարձյալ կաղ ես մնացել, նա պատասխանում էր՝ կաղությունս ինձ խրատի համար թողեց իմամը, որ նրա սրանչելիքը չմոռանամ, բայց մյուս անդամներս բժշկված են...

է նրան ճաղամից հեռացնել։ Խռովությունը դադարում է։ Որքան ամոթ է մեր դարումը այսպիսի խաբեություններով պարզամիտ ամբոխին մոլորության մեջ գցել, դա ինքնըստինքյան հայտնի է։ Բայց Պարսկաստանում այս երևույթների հաճախ կրկնվելն ունի յուր առանձին պատճառները։ Հրաշքներն միշտ հայտնվում են որևիցե հասարակական տագնապի միջոցներում, մանավանդ այն ժամանակ, երբ կրոնական հեղափոխություններ են լինում, և ժողովրդի մոլեռանդությունն ավելի գրգռված է լինում։ Պարսկաստանում այժմ հայտնված բազմաթիվ աղանդներն, որոնք իսլամին մեծ վտանգ են սպառնում, շատ բնական է, որ հարուցանեին այսպիսի հրաշքներ։ Իսկ այդ բոլորը հին և փտած զենքեր են. Ճշմարիտ կրոնքը կարող է պահպանվել միմիայն ճշմարիտ կրթության մեջ։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Սեպտեմբերի 24.

«Մշակի» վերջին մի քանի թերթերը ուշադրությամբ կարդալով, որտեղ հոդվածներ կային հայերի մեռելային վիճակի վերաբերությամբ, ես համարձակվում եմ դրանց մասին իմ կարծիքը ձեզ հայտնելու։ Մինչև որ արևելյան քրիստոնյա ժողովուրդը իրանց դարավոր ստրկության շղթաները խորտակելով, իրանց ազատության համար են պատերազմում իրանց հնօրյա թշնամու դեմ, հայը մենակ այդ ընդհանրական ձգտումների մեջ անշարժ է մնում, անհոգ իր ներկայի և ապառնալի ապագայի մասին։ Ձեր հոդվածները ջանում են զարկ տալ հային թմրությունից, իր խոր քնից զարթեցնելու համար։ Բայց եթե ձեր խոսքը Կ. Պոլսի հային է ուղղված, զուր կլինի ձեր ջանքը։ Կ. Պոլսի հային օտար են իր հայրենիքին վերաբերյալ որևէ ձգտումներ և զգացմունքներ։ Կ. Պոլսի հայը չունի հայրենիք։ Ռամիկը բացի հացից չունի ուրիշ մտածում, բավական է նրան եթե պատառ մի հաց ունենա, և նա խոնարհությամբ իր հարստահարողի ձեռքը կլիզե։ Հարուստը, թուրքական մոլություններով լի, գուցե էլ փոքր ի շատե թեթև ֆրանսիական դաստիարակությունը ստացած, բացի հասարակ անասնական վայելումից, չունի ուրիշ նպատակ կյանքի մեջ։ Աստիճանավոր հայը միայն նյութական ապահովության նպատակին հետևելով զոհում է իր շահերի համար ազգի իրավունքները։ Հոգևորականը ժողովրդի ռամիկ ծոցից դուրս եկած, չունի ոչինչ բարձր ազգասիրական,

ընդհանուր մարդկային ձգտումներ, ներկայացնելով իր անձի մեջ անդարգացած ամբոխի բոլոր պակասությունները՝ տգետ, ծույլ և քանքարազուրկ... Այդ է ծխական քահանան, այնպես են հոգևորականների մեծ մասը մնում, իսկ բարձր հոգևորականները նույն անընդունակությունը, տգիտությունը և ծուլությունը միացնում են և իրանց անսանձ իշխանության ուժը, կամայական կերպով գործածելով նրան ժողովրդի օգուտների դեմ՝ ազգի տունը փլելու նպատակով չկա նույս համար մի միջոց, որ արժանի չհամարեին գործ դնելու՝ կեղծավորություն, հալածանք, մատնություններ նույս սովորական գործիքներն են։ Նրա պատրաստ են ոտնակոխ անել ազգի կենսական շահերը իրանց նեղական նպատակներին հասնելու համար։

Կ. Պոլսի հայությունն անկյալ, զուրկ հայրենասեր բարեմասնություններից, թշվառությունից թշվառություն է գլորվում, և հուսահատականն այն է, որ իր ներկա կացության գիտակցությունը չունի ամենևին... Խոսեցեք Կ. Պոլսի հայի հետ կյանքի անասնական, հեշտասիրական կողմի վերաբերությամբ, նա կլսե ձեր խոսքը մեծ ուշադրությամբ։ Բայց փորձեցեք խոսել նրա հետ ազգի մտավոր, բարոյական պիտույքների վրա, ուղղեցեք հարցը մարդկային ամենաբարձր, ամենաթանկագին ձգտումների, գաղափարների, իդեալների վրա, և նա երեսը կդարձնե ձեզնից։

Կ. Պոլսի լրագրությունը իմաստակների և շահախնդիրների ձեռքում մի պատառ հաց ճարելու ձեռնարկություն է, ավելի ոչինչ։ Արյուն և արտասուք է լաց լինում այն հայը, որ այս ամենը տեսնում է կենդանի աչքերով և անզոր է զգում իրան դարման գտնելու այդ թշվառ դրության դեմ... Դուք փորձում եք այդ դարմանը ցույց տալ հայրենի ոգին կորուսած հային... Աստված տար, որ բյուրավոր արձագանք գտներ ձեր ձայնը ավերակ սրտերի մեջ, բայց, այնուամենայնիվ, ներեցեք ինձ, եթե կրկին ասեմ ձեզ, որ իմ կարծիքով զուր է ձեր ջանքը, որովհետև ճանաչելով Թուրքիայի մայրաքաղաքիս հայերի թմրած, քնած, մեռած սիրտը, պետք է մի հրաշալի, գերբնական ուժ լինի, որ կարողանա այստեղի հային իր կատարյալ մեռելությունից զարթեցնել...

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Սեպտեմբերի 4-ին

Եթե Հայերը փոքր ի շատե լավ դրության մեջ են Թուրքիայում, այդ միայն Կ. Պոլսումն է, որովհետև դա ավելի եվրոպական քաղաքի նման է և բնակեցրած է բավական մեծ թվով եվրոպացիներից։ Բայց և այստեղ Հայերը շատ ապահովված չեն։ Ի՞նչ նշանակություն ունի այդպես անվանված Հայոց սահմանադրությունը, եթե դեռ սլավոնական պատերազմից շատ առաջ այդ սահմանադրությունը ոչինչ ուժ և նշանակություն չուներ։ Հայը թե՛ անձնական ապահովության կողմից, թե՛ նյութապես, թե՛ որպես պետության քաղաքացի, օրենքների կողմից այնքան քիչ ապահոված է, որ վաղուց է արդեն Կ. Պոլսի Հայերը այստեղ բնակվելով ձգտում են օտար հպատակությունն ընդունել։ Յուրաքանչյուր Հայի համար, որ իր անձը, ընտանիքը, կարողությունը ապահովացնել էր ուզում, կատարյալ խաղաղության ժամանակն էլ, մնում էր միայն մի ելք՝ օտար պետության հպատակությունն ընդունել։ Այդ է պատճառը, որ այնքան շատ են մեզանում երբեք Կ. Պոլսից չդուրս եկած, Ռուսաստանում չեղած և ռուսերեն մի խոսք չիմացող զանազան Մարկոսովներ, Սարգիսովներ և այլ ռուս վերջավորություններ կրող ազգանուններ ունեցող ռուսահպատակ պոլսեցի Հայեր, կամ անգլիահպատակ, ամերիկահպատակ Հայեր։ Զանազան բթամիտներ ասում են՝ Թուրքիայի Հայերի դրությունը ավելի լավ է, քան թե այլ պետությունների... այո, պատասխանում ենք մենք, Թուրքիայի Հայերի, որոնք ուրիշ պետության հպատակություն են ընդունել, դրությունը շատ լավ է, որովհետև նրանք այսպիսով ազատվում են թուրքաց պետության կամայականությունից և պաշտպանություն են գտնում օտար պետությունների դեսպանատներում։ Մենք անդադար լսում ենք, որ Հայոց եկեղեցին շատ լավ դրության մեջն է Թուրքիայում, բայց գիտե՞ն արդյոք այս տեսակ միտք հայտնողները, որ Հայոց եկեղեցին Թուրքիայում չունի մինչև անգամ անշարժ կայքի իրավունքը, և եթե մի եկեղեցի այստեղ ունի հող կամ տուն, այդ կալվածները պետք է մասնավոր մարդու անունով գրվեն, որովհետև ինքըն եկեղեցին անշարժ կայք ունենալ իրավունք չունի։ Այդպիսով, շատ անգամ մասնավոր անբարեխիղճ մարդիկ, որոնց անունով գրված է կալվածքը, սեփականացնում են իրանց եկեղեցական անշարժ կայքերը։ Իսկ անձնական ապահովությունը ինչ դրության մեջն է, ընթեր-

ցույց կարող է հետևանքներ դուրս բերել այն իրողություններից, որ ոչ թե միայն Թուրք մոլեռանդ ամբոխը խաղաղության ժամանակն էլ արհամարհանքով է վարվում քրիստոնյայի հետ, երբ չկա առիթ մահմեդական մոլեռանդության հուզմունքներին, բայց և կարգի և օրենքի ներկայացուցիչները, Թուրքաց սոլդատները Կ. Պոլսի փողոցներում շատ անգամ հարձակվում են խաղաղ բնակիչների վրա, կողոպտում և սպանում են կամ կանանց բռնաբարում... Ինչ ապահովություն կարող են ունենալ քրիստոնյաները այն երկրում, որտեղ իրանք կարգի և օրենքի ներկայացուցիչները, զորքը պատրաստ է ավազակություն անել պետության մայրաքաղաքում։ Մինչև անգամ այստեղի հայոց լրագիրները, որոնց շատ չեն թույլ տալիս գրելու, լի էին միշտ փոքր լուրերով, թե՝ այսինչ թաղում մի զինվորական, մտնելով այսինչ տունը, բռնաբարել է այսինչ կնոջ, թաղի այս փողոցում մի այլ Թուրք սոլդատ վիրավորել է այսինչ քրիստոնյային... և այլն։ Դեռ պատերազմից առաջ ես հիշում եմ այն անցքը, որ Նուբար-Շահնազարյանի դըպրոցի երկու պատանիներ ցերեկով անցնում էին Կ. Պոլսի ամենահաճախած փողոցներից մինում, հանկարծ նրանց վրա հարձակվում են զինվորականներ, ինչ նպատակով, հայտնի չէ, երիտասարդները ըսկսում են պաշտպանվել, աղաղակել, զինվորականներից մինը ընդդիմադրող աշակերտներից մինին խանչալով վիրավորում է, բայց բախտավորապես անցնողները հավաքվում են, և սոլդատները փախչում են, տանելով երիտասարդների գլխարկները և զգեստները... Դեռ պատերազմից առաջ, երբ ասում ենք առիթ չկար մոլեռանդության հուզմունքներին, թե՛ Կ. Պոլսի, թե՛ Թուրքիայի այլ քաղաքների մահմեդական թաղերում քրիստոնյաները իրավունք չունեին զետեղվել, և եթե այդ թաղերից մինի փողոցով պատահմամբ անցնելիս է լինում մի քրիստոնյա և կամ ճանապարհ չի տա պատահող մահմեդականին, կամ ակամա կդիպչի նրան անցնելու ժամանակ, նա հավատի կարող է լինել, որ կլսի իսկույն՝ «շան որդի գյավուր» Թուրքերեն խոսքը մահմեդականի բերանից և ոչինչ հնարք չունի գնալ դատարանը, կրած վիրավորանքի մասին գանգատվելու համար...

Ասում են, որ հայոց լրագրությունը ունի այստեղ ազատություն դատողություն անելու, գրելու... այդ ազատությունը մենք տեսանք այժմ, երբ «Թատրոն» լրագիրը Ներսես պատրիարքի դեմ գրած մի շատ քաղաքավարի հոդվածի համար արգելվեցավ։ Կառավարչական և տնտեսական հարցերն էլ հարուցանել երբեք անկարող է եղել մեր լրագրությունը։ Կարելի՞ է խոսել քաղաքային վարչության վրա և նրան

քննադատել, ո՛չ։ Կարելի՞ է քննադատել պետական բանկի ֆինանսական գործունեությունը և առաջարկել մտքերը, ո՛չ, որովհետև նա պետական բանկ է։ Կարելի՞ է գրել և պակասությունները ցույց տալ Կ. Պոլսի մեջ երթևեկություն անող շոգենավերի ընկերության, նրա վատ կառավարության, վերցվող թանկ գների, անկանոն երթևեկության մասին, կամ նավահանգիստներում փոքրիշատե հարմար կայարանների շինելու անհրաժեշտության մասին, ո՛չ, որովհետև այդ ընկերության արդյունքը ընծայված է սուլթանի այս կամ այն ազգականին, այս կամ այն սիրելի բարձր պաշտոնյային։ Նույնպես և այլ տնտեսական հարցերը՝ հանքի բովագործությունը, ճանապարհների շինությունը և այլն... որովհետև ամենայն բան Թուրքիայում տերության արտոնության և մենավաճառության սկզբունքի վրա է հիմնված, կամ հանձնըված է մի որևէ նշանակություն ունեցող բարձր պաշտոնյայի ձեռքը, ընծայած կամ կապալով տված է առանց հասարակական կոնտրոլի, վերահասության իրավունքի...

Այժմ կհաղորդեմ ձեզ վերջին անցքերի վրա, որոնք պատահեցան Անատոլիայի մեջ գտնվող Եոզկատի հայերի հետ։ Բայց փոխանակ իմ սեփական խոսքերով պատմելու, ուղարկում եմ ձեր լրագրի ընթերցողների համար «Օրաթերթ Մասիս» լրագրից օրինակած հոդվածը, որի պատճառով այդ թերթը այս օրերս արգելվեցավ տերության հրամանով։

Կարդալով այդ հոդվածը՝ ձեր ընթերցողները կտեսնեն, թե Թուրքիայի մեջ այնուամենայնիվ կան քաջասիրտ խմբագիրներ, և ժողովուրդը, որ բողոքել է նորերումս նշանավոր թվով թուրքերից գործված բարբարոսությունների դեմ, զուրկ չէ ազգային զգացմունքից։ Ուրեմն դեռ չհուսահատվենք Թուրքիայի հայերի վրա և նրանց ազգասիրության վրա...

Նոքա, որոնք պիտի կարդան Եոզկատի հարստահարությունների սրտաճմլիկ պատմությունը, պիտի տեսնեն, թե որքան իրավունք ուներ պ. Մինաս Չերազը՝ «Գրականական փորձեր» գրքի հեղինակը, երբ Կ. Պոլսի ֆրանսիական թերթերից մինի մեջ մի հոդված հրատարակելով, հայտարարում էր, թե հայը բուլղարացուց տասնապատիկ ավելի պատճառներ ունի գանգատի։ Բուլղարացին հարստահարվում է, երբ ապստամբվում է, իսկ հայը հարստահարվում է ամեն վայրկյան՝ ահա տարբերությունը։

Ձեր երկրի պաշտոնյան ընդդիմախոս սահմանափակ ուղեղները

այս իրողությունները լսելուց հետո արդյոք պիտի համոզվի՞ն, թե Թուրքաց լուծը այլևս անտանելի է հայի համար...

Երևի կարդացած կլինեք, որ օգոստոսի 26-ին կատարվեցավ Համիդ 2-րդի՝ նոր սուլթանի սրակապի հանդեսը, ուր մասնակցեցան քաղաքային և զինվորական պաշտոնյաները և բազմաթիվ մահմեդական կրոնավորներ։ Այստեղ հայտնի է, թե նոր սուլթանը չափազանց կրոնամոլ է։ Այն օրը, որ նա հրատարակվեցավ Մուրադ 5-րդի հաջորդ, իր առաջին գործը եղավ երթալ աղոթել Էյուպի մզկիթի մեջ, որ համարվում է Թուրքերի մեջ առաջնակարգ մզկիթներից մին, և ուր ոչ մի քրիստոնյա իրավունք չունի ոտք կոխելու։ Այնուհետև, գրեթե ամեն օր սուլթանը գնում է խրքայի շերիֆ Մահմեդի հագուստին երկրպագություն տալու համար։ Արդյոք եթե կրոնամոլությունը կտիրե ամբողջ կառավարությանը և պետական բարձր շրջանները, ի՞նչ կարելի է սպասել այդ տեսակ կառավարությունից խեղճ հայերի համար... Մի՞թե մահմեդական կրոնի ազդեցությունը պիտի աճե, և ուրեմն պիտի աճեն և հայ ժողովրդի ավերները։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Սեպտեմբերի 18-ին

Կ. Պոլսի հայերը սկսեցին շարժվել։ Պատրիարքը և վարչությունը, ժողովը և ժողովուրդը ոտքի վրա են այժմ։ Նույնիսկ անզգա ազգայինները հուզվում են և բորբոքվում են Թուրքերի դեմ։ Եոզղատի մեջ կատարված բարբարոսությունները, որ պատմեցի ձեզ անցյալ նամակումս և որոնց մասին ուղարկեցի ձեզ մի ամբողջ հատված «Օրաթերթ Մասիս» լրագրից. բավական գրգռեցին ազգը, իսկ նորանոր բարբարոսությունները բոլորովին բորբոքեցին նրան։

Սիվրի-Հիսարի մեջ հայտնված հրդեհը ոչնչացնում է հայոց թաղը։ Կուսակալը անփույթ է մնում՝ «Թո՛ղ գյավուրները մոխիր դառնան» ասելով. բայց երբ իմանում է, թե կրակը սկսել է հայտնվել և Թուրքերի թաղի մեջ, իսկույն հրամայում է հրշեջներին փութով երթալ և մարել բոցը...

Մուշի մեջ մահմեդականները այրում են հայերի հարդերը և ցորենը, որպեսզի, երբ ձմեռ կհասնի, կորչեն նրանք սովամահ...

Չմշկածագի մեջ քրդերը հայ երկրագործների վրա են հարձակ-

վում, շատերին վիրավորում են, սպանում են մի քանի երիտասարդներին։ Երկրագործները ստիպված են թողնել իրենց դաշտերը և ապաստանել քաղաքների մեջ։

Մալաթիայի մեջ Թուրքերը մի խաչ կախ են անում մի շան վզին և պտտեցնում են անասունը քաղաքի բոլոր փողոցների մեջ, ծաղր անելով քրիստոնեական կրոնը և մահ սպառնալով Հայերին։

Երբ այս վայրագ ոճիրները լսվեցան Կ. Պոլսի մեջ, սեպտեմբերի 5-ին 2000 Հայեր ադերսագիր տվին արքեպիսկոպոսին, պահանջելով որ պատժվեն ոճրագործները։ Արքեպիսկոպոսը խնդրեց, որ հաջորդ օրը (սեպտեմբերի 6-ին) տասը պատգամավոր ներկայանան իրեն, որպեսզի նա պաշտոնապես պատասխանե նրանց։ Ուստի սեպտեմբերի 6-ին ժողովուրդը իր միջից ընտրեց 10 պատգամավոր (2 քահանա և 8 աշխարհական), և այդ պատգամավորությունը պաշտոնապես ներկայացավ եպարքոսին, որի մոտ էին այդ ժամանակ Միհաղ փաշան, նույնպես մինիստրներից և ուրիշ պաշտոնյաներից ոմանք։ Եպարքոսը պատասխանեց թե՝ այժմ 80 % նվազ հարստահարություններ են գործվում Հայաստանում, քան թե երեսուն տարի առաջ (նոր մեթոդ է խավար մոլեռանդության երևույթները մաթեմատիկական հաշիվներին ենթարկել) և թե ժամանակը իր առաջադեմ ընթացքի մեջ (՞) պիտի բառնա բոլորովին մնացած հարստահարությունները, ուստի պատգամավորներին հորդոր կարդաց համբերություն ունենալ և նույնը քարոզել ժողովրդին։ Բայց ժողովուրդը, դժգոհ այդ տեսակ պատասխանից, պատրիարքին դիմեց, պահանջելով, որ հարստահարությունների վերջնական հարցումը խնդրե կառավարությունից և եթե գոհացուցիչ պատասխան չստանա, ինքն հրաժարվե իր պատրիարքական պաշտոնից։ Ներսես պատրիարքը հանձն առավ, ուստի սեպտեմբերի 8-ին, ներկայացավ եպարքոսին 16 կրոնավորներով և հասցրեց նրան Հայոց ժողովրդի պաշտոնագիրը (մեմորանդում), յոթ հոդվածներից բաղկացած, որոնց մեջ պահանջվում էին մի քանի ամենաանհրաժեշտ մարդկային իրավունքներ։ Եպարքոսը, որին, ինչպես լսվում է, այդ մասին հաղորդած էր անգլիական դեսպանը, խոստացավ մի գոհացուցիչ պատասխան տալ մի քանի օրից հետո։ Պատրիարքը դեռևս սպասում է այդ պատասխանը։

Ահա այն իրավունքները, որ պահանջում են Հայերը Թուրքաց կառավարությունից՝ ա. Հայերի և մահմեդականների պետության ներքին նահանգներում հողի սեփականության վերաբերությամբ հայտնված երկպառակությունների վճռելը։ բ. Ներքին նահանգներում երկրագոր-

ծական դասի վրա մահմեդական բեկերից ունեցած թշնամության ոչնչացնելու գ. Պատրիարքարանի ձեռքով նշանակված հանձնաժողովի ուղարկելը Փոքր Ասիայի և Հայաստանի կողմերը, մահմեդականների դեմ հայերի ունեցած գանգատների շարժառիթները քննելու նպատակով. դ. Եկեղեցիների և վանքերի կալվածների կանոնավորելը ե. Նոր կանոնադրության հրատարակելը, որի զորությամբ ոչ մի հային թույլ չի տրվի անցնել մահմեդական դավանության չափահասի լինելուց առաջ, այսինքն՝ 21 տարեկան հասակից առաջ։ զ. Պատրիարքարանի ձեռքով հանձնաժողովի նշանակելը, որ իրավունք ունենար իր նիստերն ունենալ պետության հոգևոր վարչության մեջ։ է. Քրիստոնյաներին իրավունք տալ դատաստանական գործերում վկաներ լինել։

Տեսնենք ինչ պատասխան կտա կառավարությունը։

Լեզվագետ և ազգասեր երիտասարդները սկսած են ամեն տեղ եվրոպական լրագիրների մեջ Թուրքիայի հայերի դրության վրա հոդվածներ հրատարակել. Հայ ազգի գանգատները հաղորդելով եվրոպական հասարակությանը, ժամանակ է արդեն, որ Եվրոպան ծանոթանա, թե ինչ թշվառ դրության մեջ են այդ 3 միլիոն մոռացված քրիստոնյաները... Արդեն հոդվածներ հրատարակվեցան «Le gaubeis», «La France», «La Nord», «Kölnishe Zeitung», «La Temps», «Die Politik», «Iournal de genève». «Deutsche Zeitung և այլ թե ֆրանսիական և թե գերմանական լրագիրներում։ Նույնպես հայերի թշվառ դրության վրա երևեցան հոդվածներ անգլիական մի քանի թերթերի մեջ։

Ձեր լրագրից իմացանք, որ և ռուս լրագրության մի քանի թերթեր սկսել են համակրությամբ խոսել խեղճ, անպաշտպան հայոց ժողովրդի վրա։

Մեր Կ. Պոլսի հայ խմբագիրներն էլ լավ են աշխատում այժմ, աներկյուղ են գրում, որի ապացույց կարող են լինել այն մի քանի ծանր և խելացի, ճշմարիտ մարդասեր ոգով գրած հոդվածները, որոնց պատճառով մի քանի հայ թերթեր ժամանակով կամ իսպառ արգելվեցան տերության հրամանով։ Այդ ուղղության ապացույց կարող է լինել և այն հոդվածը (Հայերի դրությունը Թուրքիայում), որ ուղարկում եմ ձեզ և որ հանած եմ ազգային թերթերի մինից։

26 Րաֆֆի, Երկ. ժող. 12 հատ., հատ. 10

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

8/20 նոյեմբերի

Իմ վերջին նամակից հետո Թուրքիայում ոչինչ նշանավոր բան չէ պատահել։ Որպես պատմեցի ձեզ արդեն, պատրիարքը յոթ հոդվածներից բաղկացած հայերի պաշտպանագիրը ընդունելով, ներկայացրել է նրան Բ. Դռանը, իբր դարման այն ճնշված դրության, որին ենթարկված է հայ ժողովուրդը Թուրքիայում, մանավանդ գավառների մեջ։ Կառավարությունը մինչև այժմ պատասխան չտվեց այդ պաշտպանագրին։ Կ. Պոլսի հայերը շարունակում են հուզվել, ժողովրդական գումարումները տեղի են ունենում հաճախ։ Այսօր իսկ մի մեծ գումարում տեղի պիտի ունենա Պատրիարքարանի եկեղեցու մեջ։ Թուրքերը շատ գրգռված են մեր դեմ և իրանց թղթերի մեջ «ապստամբ» անվանում են մեզ։ Պատրիարքը բողոք տվեց այդ գրպարտության դեմ, որով թուրք խմբագիրները դադարեցին գրիչ շարժել մեր դեմ։

Գավառական հարստահարությունները շարունակվում են լսվել, որոց մեջ է նաև Բինկյանի դեպքը, որի մանրամասն պատմությունը ձեզ կուղարկեմ, օրինակելով նրան ազգային թերթերի մեջից։

Սեպտեմբերի 17/20-ին տեղի ունեցավ երեսփոխանական ժողովի մի կարևոր նիստ, որ Կ. Պոլսի «Նորագիր» թերթը նկարագրեց իր էջերի մեջ։ Կառավարությունը ջնջել տվեց այն թերթը, որ այդ հոդվածը հրատարակեց։ Կարող եք երևակայել, թե որքան բռնաբարված է այստեղ մամուլի ազատությունը։ Անգլիական և ֆրանսիական թերթերը շարունակում են հոդվածներ հրատարակել Թուրքիայի հայերի դրության վրա։ Ռուսիայի մեր հայ եղբայրները արդյոք կարդո՞ւմ են այդ հոդվածները...

Մի հայ մի նամակ հրատարակեց «Times» *լրագրի մեջ, ուր ասում էր, թե պետք է Հայաստանը հային թողնել, որպեսզի մշակելով հողը, անտեսական կերպով բարվոքելով երկրի դրությունը, դրախտի փոխե անապատները։ Նույն լրագրի մի այլ թղթակցության մեջ Կ. Պոլսից գրում են հետևյալը։ «Այստեղի հայոց պատրիարք Ներսեսը հաղորդեց Բ. Դռանը և բոլոր եվրոպական պետությունների ներկայացուցիչներին՝ ինչ ճնշումների են ենթարկված հայերը Թուրքիայում։ Այդ ընդունակ և աշխատասեր ժողովրդի տանջանքները նույնքան մեծ են, որքան և բոսնիացիների և բուլղարացիների տանջանքները, բայց այնքան հայտնի չեն Եվրոպային միայն այն պատճառով, որ Հայաստանը ավելի հե-*

ում է Եվրոպայից։ Մի ժամանակ, ասում է անգլիական լրագրողը, հա-յերը կազմում էին 8 միլիոն հոգուց բաղկացած ազգ, իսկ այժմ նրանց թիվը հաշվում են Մեծ Հայքի մեջ և Արարատյան երկրում մինչև 2.500.000 հոգի։ Բացի սորանից, 500.000 հոգի հայերից բնակվում են Փոքր Ասիայում և Սիրիայում, մի քանի հազար էլ՝ Կ. Պոլսում (գերմանական աղբյուրներից հայտնի է, որ մոտ 300 հազար հայ գտնվում է Կ. Պոլսում)։ Նրանց գանգատները նրանումն են պարունակվում, որ տիրապետող թուրքաց ցեղը ճնշում է և հարստահարում է նրանց։ Բացի սորանից, Հայաստանի սահմաններում բնակեցրած են քրդեր, թուրքմեններ և չերքեզներ, որոնք հարստահարում են ժողովուրդը և ավազակություններ են անում երկրի մեջ»։

Սպասում էինք, որ Վեհափառ Կաթողիկոսը, իբրև հոգևոր գլուխ հայ ազգի, մի պաշտոնագիր կներկայացնե թե ռուսաց, թե այլ եվրոպական տերություններին, դարման խնդրելով մեր ազգի տխուր վիճակին։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Նախքան խոսելը Պարսկաստանի ներկա առևտրական գործունեության մասին, ավելորդ չեմ համարում մի համառոտակի հայացք ձգել նրա այն ժամանակվա դրության վրա, որ երեք քառորդ դարով միայն հեռու է մեզանից։ Այն ժամանակ Պարսկաստանի ամեն մի գավառը, ամեն մի փոքրիկ նահանգը ձևացնում էին միմյանցից անկախ առանձին ավատական իշխանություններ, որոնք պատկանում էին ղանական խաներին, բեգերին և այլ կալվածատեր իշխաններին։ Այդ փոքրիկ տերությունները միշտ թշնամական հարաբերությունների մեջ լինելով՝ կռիվը, արյունահեղությունը, կայքի հափշտակությունը՝ անդադար և սովորական պատահարներ էին։ Հայտնի բան է, մի այսպիսի ժամանակ, երբ բնակիչները թաքցնում էին իրենց կայքը և մտածում էին միայն իրենց գլուխը պահպանելու մասին թշնամու սրից, անկարելի էր, և չէր կարող զարգանալ վաճառականությունը։

Երբ Աղա-Մամադ-խանն ներքինին 1779 թվին տիրելով պարսից գահին, միևնույն ժամանակ նվաճեց ավատական իշխաններին իր միապետության զորության ներքո, նախնի սովորությունները փոքր-ինչ խախտվեցան, և նրա հաջորդների՝ Մամադ-շահի ու Ֆեթ-Ալի-շահի օրերով, ժողովուրդը կարողացավ անվախ ցուցադրել յուր կայքը,

և Շահ-Աբասի ժամանակ ծաղկած[1] և նրանից հետո թառամած վաճառականությունը մի փոքր շունչ առավ, կենդանացավ։

Բայց տակավին նա ուներ խիստ նեղ շրջան, որովհետև Պարսկաստանի վաճառականությունը ներքին էր, արտասահմանի հետ ոչ մի հարաբերություն չուներ։ Դրա պատճառը պետք է որոնել գլխավորապես այն բանի մեջ, որ մահմեդական պարսիկին մեղք էր համարվում ոտք դուրս դնել օտար հողի վրա, որտեղ նա ստիպված կլիներ պղծել՝ գյավուրների հետ հարաբերություն ունենալով և շարիաթով արգելված նոցա կերակուրները ուտելով։ Այդ համարձակ քայլը արեցին բնիկ հայերը։ Եվրոպական ապրանքը առաջին անգամ նոքա մտցրին Պարսկաստան և Պարսկաստանի մթերքը առաջին անգամ նոքա արտածեցին արտասահման։ Նոցա օրինակը հրապուրեց եվրոպայի բախտախնդիրներին, երբ նոքա հասկացան, թե հայերը մի փոքրիկ գրչահատ դանակը մինչև քանի ռուբլի էին վաճառում միամիտ պարսիկներին և մի ձեռք անգլիական ֆենջաննալբաքիով և մի քանի արշին Լեյպցիգի մահուդով գրավում էին գեղասեր խանի գյուղերը։

Այժմյան պարսից արքայի՝ Նասր-էդդին շահի թագավորության առաջին տարիներում հայտնվեցան Թավրիզ քաղաքում և մի քանի մեծ և հաստատ եվրոպական տներ։ Այս երևույթը ստիպեց հայերին տեղի տալ եվրոպացիներին առևտրական ասպարեզը, որովհետև նոքա մեծ կապիտալիստներ չլինելով, և ապրանքը երկրորդ և երրորդ ձեռքից առնելով, չէին կարող ազատ մրցում անել Եվրոպայի վաճառական տների հետ, որոնք կազմակերպված էին մեծ ընկերություններից

[1] Շահ-Աբաս Մեծը տիրելով Անդրկովկասին, տարավ իր հետ վրացիներ և հայեր մեծ թվով։ Հայերին նա բնակեցրեց Սպահան քաղաքի մոտ մի առանձին թաղում, որ կոչեց նոցա հայրենի բնակության տեղի անունով՝ Ջուղա, և շնորհեց նոցա շատ արտոնություններ և ազատություններ, և վաճառականական գործունեության մեջ ընդունակ հայերը խիստ փոքր ժամանակում ծաղկեցրին տեղային առևտուրը՝ խիստ զորեղ հարաբերություններ ունենալով Հնդկաստանի հետ։ Մի սարսափելի սովի պատճառով նոցա մեծ մասը գաղթեց դեպի Հնդկաստան և մեծ մասամբ բնակություն հաստատեց Բոմբեյում, Կալկաթայում և Ջավա կղզում։ Այնտեղ ևս հայերը շուտով տիրեցին տեղային վաճառականության ասպարեզը, մինչև անգլիացոց հայտնվելը, որոնց բանության հետ ազատ մրցություն չկարողացան անել. հայերը մի փոքր ընկան։ Իսկ Սպահանում և նրա շրջակայքում մնացորդ հայերը հետզհետե ենթարկվելով Շահ-Աբասի հաջորդների բռնակալությանը՝ աղքատացան, միակ բանը, որ կարողացան պահպանել իրանց հալածանքներից՝ կրոնն էր, լեզուն և ամուր եկեղեցական կապը Ս. Էջմիածնի հետ։ Բայց վրացիք փոխեցին իրանց կրոնը և միացան պարսիկների հետ։ Նոցա լեզվի հազիվ նշմարվող հետքերը և մի քանի սովորությունները միայն հիշեցնում են նոցա թշվառացած ծագումը։

և ապրանքները հանում էին ուղղակի աղբյուրներից։ Այդ առևտրական տներից շատերը մինչև այսօր տևում են Թավրիզում։ Նշանավոր են հետևյալ ընկերությունները՝ Ռալլի, Սուվաչ-օղլի և Հանհարթու Ցիկլեր՝ զվիցերական տուներ։

Թավրիզը Պարսկաստանի գլխավոր վաճառականական կենտրոնն է, ուր մտնում են մասամբ արտասահմանից ներմուծած ապրանքները, և որտեղ հավաքվելով դուրս են գալիս դեպի արտասահման՝ Պարսկաստանի ապրանքների մեծ մասը։ Այստեղ պիտի խոսեմ գլխավորապես Թավրիզ քաղաքի վաճառականության մասին։

Վաճառականների ապրանքը զետեղելու համար ծառայում են գլխավորապես քարավանսարաները, որոնց թիվը Թավրիզում հասնում է մի քանի հարյուրի։ Երկաթուղիներ չկան Պարսկաստանում։ Ճանապարհների անկարգության պատճառով ուղևորվող ապրանքը բարձում են ձիերի, ջորիների, եզների, ավանակների և ուղտերի վրա։ Վերջինը բանում է տարվա ցուրտ և բարեխառն եղանակներում, իսկ առաջինները՝ միշտ։ Քարավանները կազմում են միատեսակ անասուններից, որոնք պատկանում են կամ մի մարդու, և կամ մի ընկերության, որ ունի յուր ներկայացուցիչը թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեպքում։

Քարավան-բաշին, այսինքն՝ քարավանի գլխավորը, միշտ պատասխանատու է կորած կամ պակասած ապրանքին, բացի թալաններից և բնության վտանգներից։ Պետք է ասել, որ քարավանները վայելում են մեծ հավատք վաճառականների կողմից իրենց սովորական հավատարմությամբ, թեև նոքա ոչինչ երաշխավորություն չունեն այդ մասին։

Առևտուրը Թավրիզում կատարվում է դալալների միջնորդությամբ, այդ պատճառով ամեն մի աչքի ընկնող առևտրական տուն ունի յուր սեփական դալալը, որ ստանում է մի հայտնի տոկոս։ Դալալի հաշվեգիրը առնողի և ծախողի մեջ համարվում է որպես անհերքելի մի ապացույց։

Դրամական շրջաբերությունները կատարվում են սառաֆների միջնորդությամբ։ Սառաֆները, որոնց կարելի է համարել փոքրիկ բանկիրներ, հաճախ ընդունում են վաճառականներից գումարներ, և հարկավոր ժամանակ փոխ են տալիս հայտնի տոկոսներով։

Սառաֆությունը կառավարությունից արտոնություն ստացած մի առանձին հիմնարկություն չէ. ամեն մի մարդ կարող է լինել սառաֆ, երբ կամ փող ունի, կամ վարկ։ Այս պատճառով սառաֆը, չունենալով բարձրագույն հրամանով հաստատված մի ծրագիր, կամ անա-

կրնկալ կերպով սնանկանում է և կամ, եթե վարում է յուր գործը, նա անում է շատ կամայականություններ. մի օրվա մեջ քանիցս անգամ կուրսի բարձրանալը և իջնելը կախված է սառաֆների շահախնդրությունից:

Վաճառականների մեջ ծագած վեճերը վճռվում են բաշիրբաշիների (վաճառականապետների) ձեռքով: Ամեն մի տերության հպատակները կամ ամեն մի ազգին և կրոնքին պատկանող վաճառականները ունին իրենց բաշիրբաշիները: Իսկ եթե վեճը ծագում է զանազան տարբեր կողմերի մեջ, այն ժամանակ քննվում է քաղաքի Նաիբ-ուլ-Մուլարայի ատյանում, որտեղ մասնակցում են եվրոպական կոնսուլները իրենց հպատակների իրավունքները պաշտպանելու համար:

Վեճերը վճռվում են ըստ մեծի մասին իշլամներով (տրետեյսկի սուդով, արբիտրաժ, միջնորդ դատարանով):

Պարսից բնածին հակումը դեպի շռայլություն և շքեղություն շատ կարճ ժամանակում մի սաստիկ զարկ տվեց եվրոպական արդյունաբերության տարածվելուն նույն երկրում: Սպահանի զարբաֆները և թավիշները, Ղազվինի, Ջանգիրայի մետաքսեղեն գործվածները, Բրուջերդի նահանգի և Գյուլփայագանի բամբակեղեն գործվածքները և չիթերը խիստ կոշտ և կոպիտ երևացին եվրոպական գործվածների նրբության և գեղեցկության հանդեպ: Նրանք ընկան և մնացին ժողովրդի ստորին և աղքատ դասի գործածության առարկա:

Միակ մթերքը, որ մնաց անհաղթելի եվրոպացիներից՝ էին խալիները, որ փառավոր կերպով արվեստագործում է Խորասանը, և շալերը:

Պարսկաստանը ապրանք է ստանում հետևյալ եվրոպական գլխավոր քաղաքներից. Ֆրանսիայում՝ Մարսել և Փարիզ, Անգլիայում՝ Լոնդրա և Մանչեստր, Գերմանիայում՝ Լեյպցիգ, Ավստրիայում՝ Վիեննա, Ռուսաստանում՝ Նիժնի-Նովգորոդի յարմարկան (տարեվաճառը), Տաճկաստանում՝ Պոլիս, այստեղից գնում են միայն երկրորդական դասի վաճառականները:

Լոնդրայից բերում են ըստ մեծի մասին մահուդեղեն, չինեղեն և բյուրեղյա ամաններ, զենքեր, մանր գործածական իրեր: Մանչեստրը տալիս է մեծ քանակությամբ բամբակեղեն ապրանք, որպիսի են ամուր գործված և գույնը պահպանող չթեր և կտավներ: Մարսելը և Փարիզը տալիս են չթեղենի ավելի նուրբ և գեղեցիկ տեսակներ, թեև նոքա երկար չեն դիմանում և այլ գալանտերեական ապրանքներ և մետաքսեղեն, զարբաֆեղեն գեղեցիկ գործվածքներ և բրդեղեն ապրանք: Լեյպցի-

վից բերում են մահոգու զանազան տեսակները: Վիեննան տալիս է գեղեցիկ ֆարֆորի (ճենապակու) ամաններ: Նիժնիի յարմարկայից բերվում են նույնպես ֆարֆորի ամաններ, որոնք արհեստագործության ստորության պատճառով գործ են ածվում միջին կարգի ժողովրդի մեջ: Այստեղից ստացվում են նաև սամովարներ և երկաթ:

Պարսկաստանում գտնվող եվրոպացի վաճառականները այնքան հմուտ են իրենց գործին, և այնքան լավ հասկացել են ժողովրդի ճաշակը, որ իրենց ներմուծելի ապրանքները պատվիրում են եվրոպական գործարաններին արհեստագործելու պարսից պիտույքների և կենցաղի համաձայն:

Ամեն մի առևտրական տուն ունի յուր առանձին նկարիչը, որ նախշերի օրինակներով պատրաստում են եվրոպական գործարաններում ապրանքները և նրանց ձևերը, որը այնպես շուտ-շուտ փոխվում են և այնքան սրընթաց ընթացք են տալիս առևտրական առաջադիմության, որպես մոդայի փոփոխվելը Եվրոպայում: Ահա այդ պատճառով եվրոպական ապրանքը այժմ դարձել է հասարակաց գործածության նյութ Պարսկաստանում:

Միակ տերությունը, որ ետ է մնացել այդ ասպարեզում, որ գրեթե չունի ոչ մի վաճառականական տուն Պարսկաստանում՝ Ռուսաստանն է, որի ապրանքները իրենց ստոր հատկության և պարսից ճաշակին անհամապատասխան լինելու պատճառով երբեք չեն կարող մրցել եվրոպական մյուս տերությունների վաճառքների հետ: Եվ եթե Ռուսաստանում արտասահմանյան ապրանքները փոքրիշատե տեղի են տալիս տեղային արդյունաբերության, գլխավոր պատճառն այն է, որ նըրանց գները թանկանում են ծանր մաքսերով և դառնում են ամբոխի ստոր դասի համար անմատչելի, և դրանով ռուսաց ապրանքը օգուտ է քաղում, յուր էժանությամբ լրացնելու չունևորների պահանջը: Իսկ Պարսկաստանում՝ այդպես չէ: Մաքսը այնտեղ նախ շատ թեթև է, երկրորդ՝ մաքս վճարվում է ոչ թե մթերքի գնահատության չափով, այլ հակերի քանակության համարքով: Թե՛ կապված հակը լինի թանկագին մետաքսեղենից և թե՛ հասարակ կտավից՝ միևնույն մաքսն է վճարվում: Հակերը, որպես են Եվրոպայում կապված երկաթե կապերով, այնպես էլ մտնում են վաճառականի ամբարը, առանց բացվելու, մաքսատան կնիքը չի դիպչում նրանց: Ուրեմն Պարսկաստանի մեջ Ռուսաստանի ապրանքը որպե՞ս կարող էր մրցություն անել մյուս եվրոպական ապրանքների հետ, որոնք անհամեմատ ավելի էժանագին են և ավելի լավ հատկություններով:

Ոչ մի երկրում հագուստը այնպես շուտ չէ մաշվում և այնպես շուտ չի փոխվում, որպես Պարսկաստանում։ Թողյալ կանայքը, տղամարդիկ իսկ դեռևս չեն վարժված հագնել ամուր և դիմացկուն բրդեղեն գործվածներ։

Պարսկի հագուստը մեծ մասամբ բաղկացած է բարակ մետաքսեղեն նյութերից, չթեղեն և բրդեղեն գործվածները մեծ մասամբ ստոր կարգի ժողովրդի հագուստն է կազմում։

Պարսիկ կինը թեև դրսում ման է գալիս փաթաթված յուր չարշավի (սփածանելիի) մեջ, թեև նրա զարդարանքը ծածկված է այդ տղամարդերի ոխերիմ սավանի տակ, բայց նրա ամուսինը միշտ սիրում է հարեմի պատերի մեջ տեսնելու յուր կինը ամենաշքեղ կերպով զարդարված։ Նրա հագուստը այնքան խայտաճամուկ և վառվռուն է, որպես արևելքի որդու վառ երևակայական բնավորությունը։

Ղորանով արգելված ոգելից ըմպելիքների չգործածելը սաստիկ զարկ տվեց թեյի և շաքարի տարածվելուն Պարսկաստանի մեջ։ Նոքա եղան ընդհանուր գործածության նյութ, ոչ իբրև հասարակ ըմպելիներ ընտանիքի կենցաղավարության մեջ, այլ որպես հյուրասիրության գլխավոր առարկա։ Պարսիկը պատվում է հյուրին շատ անգամ մինչև տասն բաժակ խիստ թունդ և շաքարով թանձրացրած թեյով։

Թեյը և շաքարը ստացվում են գլխավորապես Մարսելից, Լոնդրայից և Հոլանդիայից։

Հաշված է, որ բոլոր ապրանքները և վաճառականական մթերքը, որ դուրս է գնում Պարսկաստանից, հազիվ է հավասարակշռություն պահում միայն թեյի և շաքարի հետ։ Մնացորդ ապրանքները, որ ներս են մտնում արտասահմանից, բոլորը փող են դուրս տանում։ Ի նկատի առնելով այդ սարսափելի երևույթը, շատ հավանական է նախագուշակել այդ երկրի խիստ մոտավոր աղքատությունը և նրա թշվառ ապագան։

Պարսկաստանից արտասահման վաճառահանված գլխավոր մթերքը հետևյալներն են։ Հում բերքեր. աբրշում (մետաքս) ստացվում է Ռաշտից, Գիլանից և Մազանդարանից, կազմում է Պարսկաստանի գլխավոր հարստությունը և արտահանվում է մեծ մասամբ դեպի Ֆրանսիա։ Բամբակ, նույնպես Մազանդարանից, Քաշանից և Ատրպատականի զանազան մասերից։ Բուրդ և ոչխարի ու տավարի, գոմեշի կաշիներ և մաղոտ գազանների մորթիք, ստացվում են ամեն տեղ, գլխավորապես խաշնարած ցեղերի մեջ, որպես են քրդերը, շակագիները, դիլաքները և այլք, որոնք բնակվում են Տաճկաստանի սահ-

մանակից երկրներում և Կասպից ծովի հարավային ափերի մոտ գըտնըված գավառներում։

Ջոր մրգեղենների ամենաազնիվ տեսակները նույնպես ընդարձակ վաճառականության նյութ են կազմում, որոնք տարվում են Աստրախանից մեծ քանակությամբ դեպի Նիժնի։ Խաղողի տեսակներից ֆիշմիշ, սաբզա, որոնք գլխավորապես բերքերն են Ուրմիո, Մարաղայի և Ուրմիո լճակը շրջապատող երկրների։ Նշենու բոլոր տեսակները, որպես են փուստա, բադամ, փաշլ-բադամ և համարակ նուշ։ Դոցա հետ պետք է հաշվել և չորացած դեղձ, ծիրանի, շլորի և կեռասի չիրերը, որոնք պտղաբերվում են Ատրպատականի ամեն գավառներում։

Շիրազը և Քաշանը տալիս են մեծ քանակությամբ թամբաքու, որ տարվում է Տաճկաստան, և օսմանի երկրի բոլոր սրճարանների նարգիլեների ծխախոտը այդ երկրի բերքից է ստացվում։

Խինա (հինա). արևելքում մազեր և ձեռքեր ներկելու փոխինդը ստացվում է կենտրոնական Պարսկաստանից և բավական վաճառահանվում է։ Իսկ Թիրյաքը հազիվ է բավականանում օրենքով ոգելից ըմպելիքներից զրկված պարսիկներին այդ թույնով գրգռել իրենց ուղեղը։

Գիլանի անտառները տալիս են փայտի զանազան տեսակներ, որպես են շիմշադ, ընկուզենի, որ հասնում է հսկայական մեծության։ Այդ անտառներում պտղաբերվում են լիմոնի, նարինջի և ապելսինի ամեն տեսակները և ձիթենի։

Քանի տարի առաջ ռուսաստանցի Կոկոռևները այնտեղ հիմնեցին ձիթենուց յուղ դուրս բերելու մի գործարան, բայց մի քանի տարուց հետո թողեցին նրան մեզ անհայտ պատճառներով։

Պարսկաստանի արվեստագործության ավելի կատարելագործված իրերը խալիները և շալերն են։ Խորասանը և Ֆալահանը տալիս են խալիների ամենալավ տեսակները. վերջինի գործը թեև ավելի նուրբ և գեղեցիկ է, բայց ամրության և գույների դիմացկունության կողմից շատ ետ են մնում Խորասանի խալիներից։

Պարսկաստանի շալերը թեև ավելի դիմացկուն են, բայց մինչև այսօր չհասան այն կատարելության, որ ունենային Քաշմիրի և Լահորի շալերի նրբությունը, փափկությունը և գեղեցկությունը, այդ պատճառով և արժողության մեջ շատ ետ են մնացել։ Շալերի ամենալավ տեսակները գործվում են Մեշեդ քաղաքում։

Սինայի և Սակզի կողմերում գործում են շատ գեղեցիկ կապերտներ։

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՄԵՋ

Մեր հայերի մեջ, ինչպես այժմ մենք նկատում ենք, կան մի քանի դասակարգի պատկանող անձինքներ, որոնք կենտրոնացնում են իրանց մեջ մեր ազգի ներկա և ապագա ուժը. սոցանից առաջինն է վաճառական, երկրորդ՝ արվեստավոր և երրորդ՝ մշակ, այն է՝ հողագործ դասը։ Խոսելով վերջի երկու դասակարգի վրա՝ մենք գիտենք, թե մինչև որ աստիճան խավար, ողորմելի դրության մեջ են գտնվում այդ երկու դասակարգերը ևս։ Մշակ երկրագործը ընկած է դեռևս յուր հին նախաջրհեղեղյան հնության մեջ, նորա ճակատի վրա պարզ և որոշ կերպով կարդվում են աստվածային այն անեծքը, թե «միմիայն քո ճակատից քրտինքով պիտի վաստակես քո հացը», և ողորմելին հարյուրավոր տարիներից հետո անդադար ու անդադար քրտինքով, դառն աշխատանքով վարում և գործում է հողը, միմիայն յուր օրական ապրուստի համար. նա դեռևս մինչև անգամ տեղեկություն չունի, թե ինչպես ուրիշ լուսավորյալ ազգերը դյուրությամբ և առանց ծանր աշխատանքի շատ կարճ միջոցում գլուխ են հանում այն գործը, որը երկար միջոց և դառն աշխատանք է այժմ իրան։

Յուր մտավոր, գործնական և արհեստական գիտությամբ մշակ դասից բարձր չէ և արվեստավոր դասը. նույն նահապետական հին դրությունը, նույն անփոփոխ, կոշտ և կոպիտ արհեստը, որի մեջ գտնվելիս է եղել յուրաքանչյուր արհեստի սկզբնապատճառը, նույնությամբ փայլում է այդ դասի վրա։ «Մշակի» ընթերցողները անշուշտ տեղեկացած կլինեն նորա 40 համարում տպված առաջնորդող հոդվածից այդ դասակարգի վերաբերմամբ, այդ առթիվ այլևս ավելորդ է մեզ երկար խոսել, մինչդեռ կովկասյան ամեն մի քաղաքում հայ արհեստավորները գտնվում են միևնույն դրության մեջ։

Այժմ քանի որ ո՛չ արհեստավոր և ո՛չ մշակ դասը կարող են ներկայումս նպաստել մեր ազգի բարոյական գոյությունը, մեր հույսը մնում է միայն ազգի առավել բարձր, առավել զարգացած, այն է՝ վաճառականական դասի վրա. նոքա պիտի լինեն մեր հայտնի ներկայացուցիչը քաղաքական ազգերի առաջ, նոքա պիտի վերականգնեն մեր ընկած նշանակությունը մյուս ազգերի մոտ, և միևնույն ժամանակ նոքա պիտի լինեն մտրակող ուժը մեր մյուս, այն է՝ արվեստավոր և մշակ դասակարգի։ Այս հարցի մասին քանիցս անգամ կրկնած են մեր պարբերական հրատարակությունները, որոնց գոռում-գոչումները կարծես ցնդած են օդի մեջ, որպես ձայն բարբառո անապատի... Թո՛ղ ներ-

վի մեզ այստեղ մի քանի դիտողություններ անել մեր հայերի անցյալ և ներկա վաճառականական կյանքից։

Հայկական առևտրության մասին հիշատակարանները կարծես չկամենալով բոլորովին խորտակել հայի ինքնասիրությունը, ավանդում են մեզ հայի գաղթականության միակ պարծանքը, այն է՝ նույն առևտրական նախանձելի ասպարեզը իրան շրջապատող ազգություններից։

Ինչպես հայտնի է, գլխավոր գաղթականությունը հայերի Կովկասի մեջ սկսում է Բագրատունյաց իշխանության կործանումից հետո, երբ սոքա փախչելով բռնավոր տիրապետողների սրից, առավել հարմար էին գտնում սահմանափակվել իրանց կովկասյան բարձրագագաթ շղթաների մեջ։ Իհարկե, այն ժամանակ կովկասյան ազգաբնակությունները, լինելով առավել անկիրթ, առավել ստոր մտավոր դրության մեջ, հեշտ էր հայերին շուտով ձեռք բերել այդ երկրի վաճառականությունը։

Հայերը, ամրանալով Կովկասի մեջ, նույն վաճառականական ասպարեզը չէր կարող ընդլայնանալ դեպի օտար մերձակա սահմանները, քանի որ կովկասյան սարերը պատնեշ էին հանդիսանում նույն հաղորդակցությանը հյուսիսային և արևմտյան ազգությունների հետ։

Ռուսաստանում հայերը հայտնվում են գլխավորապես Պետրոս Մեծի ժամանակից, երբ աշխարհաշեն ինքնակալը, աչք դարձնելով յուր ժողովրդի առաջադիմությանը, հարմար դատեց ուրիշ ազգերի միջնորդությամբ մի խթան պատրաստել յուր ազգի մեծ մասի ագիտությունից արթնանալուն, և ահա այդ է գլխավոր պատճառը, որ հայերին ևս իբրև վաճառականական ազգի արտոնություններ շնորհվեց ազատորեն պարապելու առևտրով հյուսիսի հետ. իհարկե, հայերը այդ միջոցում օգուտ քաղելով, թե՛ այդ և թե՛ նրանցից հետո կրկնված արտոնություններից, տարածեցին իրանց առևտրական ասպարեզը Ռուսաստանի զանազան կողմերում և մինչև անգամ Ռուսաստանից դուրս։

Մի խոսքով, հայերն այդ ժամանակ կարող էին մեծ դեր խաղալ վաճառականության մեջ, մինչդեռ իրանց շրջապատող ազգությունները իրանցից բարձր մտավոր դրության մեջ էին գտնվում, նոքա կարող էին լինել վաճառականներ իրանց դարու ոգու համաձայն, գուցե և նախանձելի ուրիշ ազգերից։ Բայց այնուհետև, երբ ժամանակի հոսանքը մարդկային մտքի հանճարի օգնությամբ մի անփոփոխական զարկ տալով թե՛ վաճառականության, թե՛ արհեստին և թե՛ հողագործության, հասցրին նույն իրենց այժմյան կատարելագործյալ դրությանը, հայերը՝ չհետևելով լուսավորյալ ազգերի առաջադիմության նախանձելի հառ-

կությունների, մնացին միևնույն հին վաճառականները, որոնցով այժմ լիքն են Կովկասի ամեն կողմերը։ Պարսկի ընթացքները չունեցան նոցա համար այն փոփոխական ազդեցությունը, որին ենթարկվեցան ուրիշ ազգերը. նոքա սովորած լինելով հնադարյան վաճառականության ոգուն, որի օրենքները կայանում է միմիայն հազարավոր անուղիղ ճանապարհներով փող ձեռք բերելու, օգուտ քաղելով իրանց սառրագրյալների տգիտությունից, առաջ գնացին այդ ճանապարհով առանց աջ ու ձախ շեղվելու, խուլ մնալով բոլորովին ժամանակի պահանջման ձայնին, սակայն տարաբախտաբար երկար չանեց նոցա այդ դրությունը, լուսավորյալ վաճառականական դասը ներս խաղաց և դեպի այդ ասպարեզը, ուր հայերը օգտվում էին այնքան տարիներից ի վեր, հիմնըվեցին ընկերություններ, շինվեցին երկաթուղիներ և հաստատվեցին բանկաներ, հայը, որ համարում էր իրան ամենից ճարպիկը վաճառականական խաբեբայության մեջ, այժմ գտավ իրա առաջ մի ավելի բարձր զարգացած ճարպիկ դասակարգ, որի բարոյական ճարպիկության տակ շուտ կարող էր ընկճվել նա։ Այն մասնավոր հողերը, բնության գանձի այն ծածուկ շտեմարանները, որոնք մինչև այն րոպեն հայի համար անգործադրելի էին, շուտով սկսան իրանց գանձերը արտադրել գործունյա ձեռքերի համար։ Հայի համար այդ մի տխուր ներկա էր և ապագան ցավալի անեծքներ թափվեցան երկաթուղիների, բանկաների և այլ ժողովրդական բարեկարգությունների հիմնարկուների վրա. որովհետև բանկաների հաստատվելուց հետո այլ չէին կարող նոքա ծանր անմարսելի տոկոսներով հարստահարել խեղճ հասարակությունը, պակաս վնաս չէր և նոցա երկաթուղու հաստատությունը, որովհետև եվրոպական վաճառականները, փոխանակ երկրորդական ձեռքով վաճառելու իրանց ապրանքները, ուղղակի իրանք կարող էին ներս բերել և առավել օգտակար կերպով վաճառել. այդ կերպով հայերի դրությունն օրըստօրե ծանրանում էր, շատերը, որոնք մութ ժամանակներում կարողացած էին ապահովացնել իրանց վիճակը, բավականացան միմիայն տներ, քարվանսարաներ շինելով, նոցա եկամուտքի օգնությամբ ազատ պահպանել իրանց ապագայի փորձանքներից, շատերն էլ մինչև այսօր արշինը ձեռքներին, սուտ երդումներ բերաններից թափելով, անցնող դարձողի ղահլաներն են տանում։

Նկատելով մեր հայ վաճառականների այժմյան դրությունը, մենք ուշք դարձնենք այն երևույթի վրա, ի՞նչ է.արդյոք պատճառը, որ օտարերկրացի վաճառականներից շատերը, որոնք ո՛չ ժողովրդի սովորությունների, ո՛չ երկրի դիրքի, և ո՛չ էլ տեղի հատկությունների հետ ծա-

նոթություն ունենալով, կարողանում են փափուկ կերպով օգտվել մեր հասարակությունից, իսկ տեղացի բնիկ վաճառականները, որոնք սատանայի ծակն անգամ գիտեն, այդքան հետադեմ դրության մեջ են մնում։ Ի՞նչն է պատճառը, որ ֆրանսիացի բիշարներ, տալեններ մեծ գումարներով կարողանում են փող աշխատել, իսկ մեր վաճառականները ամեն օր գանգատվում են, թե աշխատանք չկա, խեր-բարաքյաթը վերացել է, և այլն։

Մենք վերև հիշեցինք, որ մինչև ուրիշ ազգերը ամենայն ջանք ի գործ էին դնում՝ հիմնավոր և պատվավոր վաճառականություն տարածել իրանց ժողովրդի մեջ և այդ առթիվ հիմնվում էին գործարանները ժողովրդի առօրյա պիտույքը արտադրող առարկաների, ուշք էին դարձնում գլխավորապես ներքին բերքը առավել փոխարինելու արտաքին բերքի հետ, երբ հողագործությունը ևս օրեցօր զարգանում էր, մեր հայերը, սովորած լինելով միմիայն իրարու հարստահարել, ուրիշ երկրների բերքերը երկպատիկ գնով իրանց հասարակության վրա վաճառել, անփույթ անելով իրանց երկրի բերքը, որոնք մեծամեծ օգուտներ էին խոստանում աշխատող ձեռքերը, ուշ չդարձրին երբեք հետևելու նոցա օրինակին և մնացին այսօր էլ հրեականության հատուկ վաճառականներ, կամ պարզ կերպով ասել՝ այժմյան չարչիներ...

Ուրախալի մի երևույթ է, որ վերջին ժամանակներս մի քանի հայ վաճառականներ, թոթափելով իրանցից հնադարյան փոշին, հաստատեցին, թեև օտար հողի մեջ, մի քանի գործարաններ. բայց ի՞նչ օգուտ կարող են ունենալ այդ գործարանները մեզ համար, մինչև մեր հասարակության ոսկիները պիտի քամեն օտար երկրի մեջ։ Վերջապես մի քանի ծաղիկով էլ երբեք գարուն չի լինի, պետք է ներգործել կենտրոնի մեջ։ Ինչպես հայտնի է, մեր հասարակությունը յուրաքանչյուր տարի հազարներով ոսկիներ է վճարում գործարաններին բոլոր այն թե՛ անձնական պիտույքը և թե՛ շռայլական ցանկությունները գոհացուցանող առարկաների համար, որոնք զարդարում են Թիֆլիսի մագազինները. ի՞նչ օգուտ չէր ունենալ այդ հասարակությունը, եթե այդպիսի մի քանի գործարաններ հիմնվեին և Կովկասի մեջ տեղացի բնիկներից, որոնց արտադրությունքը ազատ լինելով մաքսից և ճանապարհի ծախսերից, կարող էին իրանց օգտակար և ժողովրդի ստորին դասի համար ևս գոհացուցիչ և մերձենալի լինել. այդպիսի մի հաստատություն պակաս օգտավետ ևս չէր լինի այն դասի համար, որ, աշխատանքի ուրիշ միջոց չունենալով, ստիպվում է անամոթաբար փողոցներում մուրալու։ Այդ առթիվ «Մշակը» ևս կրկնած էր իր ժամանակին։

Վերջացնելով մեր այս հոդվածը՝ չենք կարող լուռ մնալ մի քանի շամախեցի և այլ երկրացի հայ վաճառականների այս տարվա Նիժնի-Նովգորոդի տոնավաճառում բռնած ապօրինի ընթացքի մասին, որոնք ռուս վաճառականներից ապրանք առնելով՝ խոստանում են մի քանի օրվա միջոցում իրանց հաշիվները կարգադրել, սակայն մինչև հաշիվները տեսնելը, իրանք անհայտանում են, ո՞վ գիտե սատանայի որ բույնը, ռուսներին ցույց տալով, թե որքան հայերը ճարպիկ են խաբեբայության, անամոթության և այլ այդպիսի նախանձելի ածականներին հարմար հատկությունների մեջ։ Չմոռանանք ասել, որ այդպիսի ազգապարծանք վաճառականները վաղօրոք կարգադրած լինելով իրանց մտադրությունը, բոլոր իրանց ունեցած ստացվածքները դարձնում են իրանց կնոջ, եղբոր և ուրիշ ազգականների անվան։

«ՏԵՂԵԿԱԳԻՐՔ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅԱՆՑ»[1]

Կ. Պոլիս 1876 թ.

(Պաշտոնական հրատարակություն ազգային պատրիարքարանի)

Անցյալ տարվա վերջին ամիսներում Կ. Պոլսում հրատարակվեցավ հիշյալ վերնագրով մի գրքույկ, որ բովանդակում է յուր մեջ ասիական Տաճկաստանի հայ ազգաբնակության վերաբերությամբ կատարված գավառական հարստահարությունները։ Դա մի պաշտոնական հրատարակություն է, որ դուրս է բերված Կ. Պոլսի պատրիարքարանի արձանագրություններից և 1876 ամի սեպտեմբերի ներկայացրած է տեղային ազգային ժողովին։

Վարագույրը բարձրացավ, այժմ մենք գիտենք, թե ինչ է կատարվում բեմի վրա...

Մինչև այսօր մենք խիստ աննշան տեղեկություններ ունեինք Կ. Պոլսի պատրիարքարանի, այլ խոսքով, ազգային սահմանադրության գործունեության վրա։ Մինչև այսօր մենք համարյա չգիտեինք, թե Կ. Պոլսի հայոց ազգային վարչությունն որ աստիճան նշանակություն ունի Բ. Դռան առջև և որ աստիճան ձեռնհաս է նպաստելու արտապոլսական գավառացիների գործերին։ Հիշյալ «Տեղեկագիրքը» տալիս է մեզ թեև շատ տխուր, բայց հետաքրքրական տեղեկություններ։

«Տեղեկագիրքը» բաժանված է երկու մասի։ Առաջին մասը պարունակում է իր մեջ գավառական հարստահարությունների ամբողջ քանի տարվա արձանագրությունների հավաքածուն և ունի այսպիսի վերնա-

---

[1] *Այս հոդվածը դեռևս 1977 ամի 10-ին հունվարի ուղարկել էինք «Փորձի» մեծ. խմբագրին, բայց նա իրան միայն հասկանալի պատճառներով թողել էր անտիպ։ Մենք ստիպվեցանք ետ առնել։ Այժմ, թեև փոքր-ինչ հնացած, հրատարակում ենք՝ ցույց տալու համար Տաճկաստանի հայոց թշվառ դրությունը մի կողմից և «Փորձի» ուղղությունը նրանց դրության վերաբերյալ մյուս կողմից։*

գիր՝ «Ա. Տեղեկագիր գավառական հարստահարությանց առ Բ. Դուռն հանուն ազգային ժողովո ի 11 ապրիլի 1872»։ «Տեղեկագիրքը» ունի կնիք և ստորագրություն այս անունով՝ պատրիարք Կ. Պոլսի Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյան։

Հիշյալ «Տեղեկագրքի» բովանդակած խնդիրները, որպես ասացինք, դուրս են բերված պատրիարքարանի 20 տարվա արձանագրություններից և հասնում են մինչև 1872 թվի ապրիլի 11-ը։ Իսկ երկրորդ «Տեղեկագիրքը» ունի այսպիսի վերնագիր. «Երկ. Տեղեկագիրք գավառական հարստահարությանց ի խորհրդարանական հանձնաժողովէ առ ազգային ժողովն»։ Դա պարունակում է իր մեջ 1872 թվից սկսյալ մինչև 1876 սեպտեմբերի 1-ը, այսինքն՝ 5 տարվա ընթացքում կատարված հարստահարությունների արձանագրությունները։ Ասել է թե, ամբողջ «Տեղեկագիրքը» ներկայացնում է պատրիարքարանի 25 տարվա գործունեությունը։ Թե ինչ չափով և որքան թվով բողոքներ է ստացել պատրիարքարանը գավառներից այս 25 տարվա ընթացքում, հայտնի չէ. հայտնի է միայն, որ 57 զանազան խնդիրների մասին Նա պաշտոնական բանակցություն է ունեցել Բ. Դռան հետ։ Դա շատ փոքր թվանշան է, ի նկատի ունենալով այն բազմաթիվ անիրավությունները, որ կատարվում են ասիական Տաճկաստանում, այն էլ 25 տարվա ընթացքում։

Ընթերցողին փոքր-ինչ գաղափար տալու համար, թե ինչպիսի հարստահարություններ են կատարվում ասիական Տաճկաստանում, հարկավոր ենք համարում ծանոթացնել թե՛ առաջին և թե՛ երկրորդ «Տեղեկագրքի» բովանդակության հետ։

Առաջին «Տեղեկագիրքը» պարունակում է իր մեջ հետևյալ խնդիրները.

1) Օրենք և արդարություն գործ դնելու մեջ գավառական պաշտոնակալները ընդհանրապես անփույթ և անտարբեր են մնում։ Եվ իրանց կամայականությանը հետևելով, իրանց հաճույքի համեմատ զեղծանում են բարձրագույն հրամանագրերը հարստահարությունները բառնելու և հարստահարիչները պատժելու մասին։

2) Գավառական արքունի ժողովները բեշիրլաքի[1] օրենքով կազմվելով՝ չար և շահախնդիր անձանց մենավաճառության ասպարեզ են դառնում։

3) Գավառացի հայը, մահմեդականների մոլեռանդության ենթա-

1 Մի տեսակ դատարանի կազմակերպություն խառն մահմեդականներից և ոչ-մահմեդականներից կոչվում է բեշիրլաք, ուր ինչպես ոչ-մահմեդականները միայն ձևի համար ընտրված կամ կոչված են լինում։

կա լինելով, միշտ նախատինքի, թշնամանաց և անպատվության առարկա է դառնում։

4) Արքունի շինվածքների համար հայերին ձրի աշխատեցնում են, և ով որ աշխատելու անկարող է, դրամական անիրավ պահանջմունքի են ենթարկում։

5) Ճանապարհների շինության համար հայերին նույնպես ձրի աշխատեցնում են, և կամ այս պատրվակով նրանց կեղեքում են։

6) Կապալառուները (մուլթեզիմ) փոխանակ բերքի տասանորդը առնելու, բռնադատելով, նրա տեղը զուտ արծաթ են առնում։

7) Նմանապես իր ընտանիքի ուտեստի համար տան պարտեզի մշակած բերքից ստիպեցնում են տասանորդ վճարել։

8) Բերքից ստացած տասանորդը գյուղացիներին ստիպեցնում են կապալառուի շտեմարանը փոխադրել։

9) Կապալառուն դիտմամբ իր ժամանակին չգալու համար, բերքը անձրևի տակ մնալով փտում է (որովհետև գյուղացին իրավունք չունի վեր առնել առանց տասանորդը վճարելու)։ Եվ հետո փտած բերքի տասանորդի փոխարեն ողջի արժեքով զուտ արծաթ է առնում։

10) Գյուղացին պարտավորվում է կապալառուին և նրա գործակալներին իր տան մեջ հյուրասիրել և ձրիաբար կերակրել։

11) Կապալառուները, երբեմն եղների լծերի վրա հաշվելով, տասանորդի անունով ապօրեն և ավելորդ ցորյան են առնում գյուղացիներից։

12) Բացի կապալառուների հիշյալ հարստահարություններից, գավառացի հայերին բռնաբարում են վճարել մշակությունների համար շահնալըգ *և* օլչէ-հագգը *կոչված արդելյալ տուրքերը*[1]*։*

---

[1] *Գյուղացի հայերի գլխավոր հարստահարիչները լինում են կապալառուները։ Որովհետև գավառական պաշտոնակալները մշակության բերքերի տասանորդի վճարը կապալով են տալիս ըստ մեծի մասին իրանց բարեկամներին կամ մերձավոր մեկին, և իրանք գաղտնի կերպով նրանց հետ ընկերանում են։ Երբ որ բերքը ծախվում է, լավ գին ունի, կապալառուն տասանորդը ստանում է առավելությունով, իսկ երբ որ բերքը գին չունի, նա թանկ գնահատելով, փողն է ստանում, որ ամենևին իրավունք չունի։ Բայց գյուղացին ստիպված է խոնարհվել կապալառուի բռնությանը, որովհետև եթե հակառակվի, կապալառուն նրա մշակության կալը երեսի վրա կթողնի. ձյունի և անձրևի տակ կփտեցնի, այն ժամանակ ավելի իրավունք կստանա տասանորդի կրկնակի արժեքը արծաթով առնելու, որովհետև բերքը փչացած է։ Եվ տեղային կառավարությունը համբերում է կապալառուի բռնակալությանը, որովհետև ինքն էլ նրա շահերին ընկեր է։ Իսկ* օլչէ-հագգը *նշանակում է չափելու վարձ,* շահնալըգ *նշանակում է արքունական։*

13) Զինվորական տուրքից՝ մեռնողների, գաղթողների և փախըստականների մասը, հարկադրում են մնացողներին վճարել[1]:

14) Կալվածական և քաղաքական տուրքերի անդադար բաշխման պատճառով մահմեդականների բեռը հայերն են կրում:

15) Տուրքերի վճարման պատճառով՝ տնային անհրաժեշտ կահկարասին, երկրագործական պարագայքը և մինչև անգամ բանվոր անասունները, ծախելու են ստիպում, և ոստիկանության ձեռքով ծեծելու, բանտ դնելու խստություններին են ենթարկում չքավոր ժողովուրդը:

16) Կիները և անչափահաս մանուկները բռնաբարվում են մահմեդական կրոնը ընդունելու համար:

17) Ոչ-մահմեդականների վկայությունը չընդունվելով, մահմեդականների նրանց վերաբերությամբ կատարած ոտնձգությունները, գողությունները և սպանությունները մնում են անպատիժ:

18) Զինյալ քրդերի, լեռնաբնակ ցեղերի, չերքեզների և բնիկ թյուրք զեյբեկների (ինքնիշխան բռնակալ) այլևայլ հարստահարությունների ներքո հայ ժողովուրդը տանջվում է և կեղեքվում է:

19) Կիները, հարսները, այլև կույս աղջիկները առևանգվելով բռնաբարվում են:

Ահա սրանք են առաջին «Տեղեկագրքի» խնդիրները, որ մինչև 1872 թվականը ամբողջ 20 տարվա ընթացքում պատրիարքարանի և Բարձ. Դռան մեջ պաշտոնական բանակցության նյութ են դարձած եղել: Բայց Դուռը ի՞նչ հոգացողություններ է արել հարստահարությունները բառնալու համար:

---

[1] Տաճկաստանում հայերը որովհետև զինվոր չեն տալիս, նրա փոխարեն վճարում են մի տուրք, որ կոչվում է բեդել (փոխարեն): Այս տուրքը որոշվել է ստանալ հետևյալ եղանակով. 180 արու անձանց վրա մի զինվոր հաշվելով, նրա փոխարեն պետք է ըստացվի զուտ փող 5000 ղուրուշ (300 ռուբլի): Այս վճարին մասնակից լինելու բաշխումից դուրս պետք է մնան՝ 15 տարեկանից ցած և 75 տարեկանից վեր անձինք, նաև կղերականներն, աղքատ ու բոլորովին անկարող մարդիկը և այն անձինք, որ անհայտացած են: Բայց տերության հարկահանները, հիշյալ բացառությունները ամենևին նկատի չառնելով և իրանց կամայականությունը միայն գործ դնելով, ժողովրդին տուժել են տալիս, որքան և կարողանում են: Թողյալ այդ, մահմեդականը, որ զինվոր է տալիս, վայելում է այդ մասին ինչ-ինչ բացառիկ արտոնություններ և առանձնաշնորհություններ: Բայց հայը, որ զինվորի փոխարեն արծաթ է վճարում, զուրկ է այն արտոնություններից, որ ունի զինվոր տվող մահմեդականը: Եվ ի նկատի ունենալով այնքան բազմաթիվ գաղթականները ամբողջ Տաճկաստանից, հասկանալի է, թե որքա՞ն կծանրանա մնացած ժողովրդի վրա զինվորական տուրքը, որովհետև դա ստացվում է ազգահամարի հաշվով:

Այս մասին մենք առաջ կբերենք Հանձնաժողովի նկատողությունը, որ պատրիարքարանի արձանագրություններից անելով հաղորդում է ազգային ժողովին. «Հիշյալ «Տեղեկագրի» մատուցած թվականեն ի վեր (11 ապրիլ 1872) հարստահարության համար պատրիարքարանեն գրված թագրիրներ *(բողոքագիր) ալ, ինչպես կերևին ձեր հանձնախմբի պատրաստած հավաքածոյեն, կամ* պատրքալ *ըլլալով (առանց հետևանքի թողնելով, ուշունալով) կամ անպատասխանի թողնելով, և* խաբիյամի[1] *ապարդյուն գրությամբ հետաձգվելով, և առ առավելն Կենտրոնական Կառավարությունեն առ գավառականս ուղղյալ հրամանագրաց անգործադրելի մնալովը՝ մոռացության մեջ թողված են, առանց դարման տանելու ժողովրդյան կրած տառապանաց»։*

Հանձնաժողովի այս նկատողությունը մեր լեզվով կպարզենք այսպես. մինչև 1872 թվականը 20 տարվա ընթացքում պատրիարքարանը գավառներից զանազան տեսակ հարստահարությունների մասին գանգատներ է ստանում և իր բողոքագրերով (թագրիրներով) հաղորդում է Բարձ. Դռանը և բավականություն է խնդրում։ Բարձ. Դուռը պատրիարքարանի բողոքները կամ թողնում է առանց հետևանքի, կամ պատասխանի չէ արժանացնում, կամ եթե ընդունվում է, և իր կողմից հրամաններ է գրում, այն ժամանակ գավառական պաշտոնակալներն բարձրագույն հրամանագրերը թողնում են առանց հետևանքի։ Եվ այսպես, ժողովրդի վիճակը միշտ մնում է թշվառության մեջ... և պատրիարքարանի բողոքներից ոչ մեկը յուր նպատակին չէ հասնում...

Տաճկաստանի ներկա տագնապի մեջ շատերի հետաքրքրությունը զբաղեցնում է այն հարցը, արդյոք այս տերությունը վերջին 20 տարվա ընթացքում առա՞ջ է գնացել, թե ո՛չ. և կամ նրա կառավարությունը քրիստոնյա հպատակների վերաբերությամբ բարվոքվե՞լ է, թե ո՛չ։ Տաճկաստանի բարբարոսությունները ծածկող և նրա երևակայական առաջադիմությունը հռչակող անձնական հաշիվներով կուրացած մարդիկ հայտնում են, թե այժմ Տաճկաստանը բավական բարեկարգված է, և քրիստոնյա հպատակների դրությունը այժմ համեմատաբար շատ

---

[1] *Գավառական հարստահարության մասին մատուցած մի բողոք շատ անգամ Բարձ. Դուռը դարձնում է նույն գավառի կամ նահանգի կառավարչին ստուգելու կամ վերաքննելու համար. դա մի խորամանկ ձեռնարկություն է բողոքարկուները սանձելու համար։ Որովհետև երբեք գավառական կառավարիչները չեն ցանկանա արդարացնել բողոքողներին այս մեղադրանքների մեջ, որ իրանք դատավորներն շատ անգամ խառն են լինում։* Խաբիյամը *մի այսպիսի բան է։ Նա կատարվում է առավելապես գործը երկարացնելու և վերջապես մոռացության անդունդի մեջ ձգելու համար։*

լավ է, քան թե առաջ, և նրանք համարյա կատարյալ ազատություն են վայելում և այլն…

Այս բոլորն զատարկ խոսքեր են։

Տաճկաստանը առաջ է գնացել միայն մեկ բանի մեջ՝ այն է՝ յուր արտաքին կերպարանքը պաճուճել որպես եվրոպական մի պետություն. իսկ սրտով, հոգվով և գործով մնալ միշտ մանգոլ, նույն բնավորությամբ, որպես էր նա երբեմն Թուրանի անապատներում…

Քննելով պատրիարքարանի 25 տարվա արձանագրությանց «Տեղեկագրերը», մենք ավելի համոզվում ենք այս կարծիքի մեջ, թե տաճկական կառավարությունը ինչ որ էր առաջ, համարյա նույնն է մնացել և այսօր, նաև ոչ-մահմեդական ազգերի վիճակը փոխանակ բարվոքվելու՝ հետզհետե վատթարացել է։

Այս խորհրդությունը ավելի շոշափելի կացուցանելու համար մենք ընթերցողի ուշադրությունը կդարձնենք պատրիարքարանի երկրորդ «Տեղեկագրի» վրա, որ բովանդակում է յուր մեջ Տաճկական Հայաստանի 1872-ից սկսյալ մինչև այսօր, 5 տարվա ընթացքում կատարված հարստահարությունների արձանագրությունները։

Ի՞նչ ենք տեսնում

Երկրորդ «Տեղեկագրի» մեջ հարստահարությանց խնդիրների թիվը առավելություն է կազմում[1]։ Նշանակե անիրավությունները հետզհետե սաստկացել են։ Հարստահարությունները ավելի բազմատեսակ են դառնում և իրանց քրեական բնավորությամբ ավելի սարսափելի են։ Երկու բան մնում են անփոփոխ. մինը՝ կառավարության գործ դրած թույլ միջոցները իրանց անբավարար հետևանքներով, մյուսը՝ հարստահարությանց կատարված տեղերը[2], որովհետև միշտ նույն անիրավությունները միևնույն կերպով կատարվել են միևնույն տեղերում։ Դա ինչի՞ց է։

---

[1] *Առաջին «Տեղեկագիրըն» ունի 20 տարվա շրջան և պարունակում է յուր մեջ 19 խնդիրներ միայն, իսկ երկրորդ «Տեղեկագիրըն» ունի 5 տարվա շրջան և պարունակում է 38 խնդիրներ։ Բացի դրանից, երկրորդ «Տեղեկագրքի» մեջ երևան են գալիս նոր տեսակ խնդիրներ, որոնք առաջինի մեջ չկան, այն է՝ 284 գյուղերի և վանքերի կալվածները մահմեդականներից հափշտակելու խնդիրները։ Եվ չպետք է մոռանալ, որ երկրորդ «Տեղեկագիրքըն» վերջին ժամանակների գործերն է բովանդակում։*

[2] *Թե՛ առաջին և թե՛ երկրորդ «Տեղեկագրքի» մեջ հարստահարությունների կենտրոնը է Վանա ծովակի չորեք կողմում դրած գավառները, այսինքն՝ Սրզրումի և Տիգրանակերտի նահանգները, Մուշ, Բաղեշ, Վան, Դերջան, Քղի, Ղուլուլջան, Չարսանջակ, Սղերտ, Սասուն և այլ գավառները։*

Պատճառն շատ պարզ է։ Դրանով բացատրվում է այն հարցը, թե Տաճկաստանը 25 տարվա ընթացքում ո՛րքան է առաջ գնացել։ Այո՛, նա մե՛ծ առաջադիմություն է գործել ոչ-մահմեդական ազգերը նորանոր ձևերով կեղեքելու, կողոպտելու և անպատվելու մեջ... Եվ որպեսզի ընթերցողը համոզվի այս խոսքերի ճշմարտության մեջ, մենք կդնենք այստեղ պատրիարքարանի երկրորդ «Տեղեկագրի» խնդիրներն, որոնք իրանց բովանդակությամբ ավելի մանրամասն և ավելի որոշ կերպով գրված են[1]։

Հարստահարություններ

1. Արզրումի կուսակալության ներքո գտնվող Երզնկա գավառի Ղուլուչանի կայմադամ (նահանգապետ փաշայի փոխանորդ) Շահ-Հուսեյն բռնավորի հարստահարությանց դեմ, սկսյալ Խրիմյանի պատրիարքության օրերից (1873-ից) մինչև այսօր[2] անդադար բողոքներ են մատուցվել Բարձ. Դռան։ Դուռը խիստ «ազդու» միջոցներ է գործ դրել, որ հիշյալ չարագործը իր պաշտոնից հեռացվի և ժողովրդի հանգստությունը հարգվի։ Եվ մեծ եպարքոսը (սադրիազամը), նաև արտաքին, ներքին և այլն, և այլն մինիստրներն այս հարցի մասին հինգ փառավոր հրամանագրեր են ուղղել Արզրումի կուսակալ փաշային։ Հրամանագրերի լեզուն բավական խիստ և ազդու է, Նրանք հայտնում են, որ «յուր հայրն ու մայրն և կինն սպանող» Շահ-Հուսեյնին իր պաշտոնից զրկեն և Երզնկայի գավառից հեռացնեն։ Նրանք հայտնում են, որ «հարյուրավոր սպանություններ գործող» և «քուրդ ավազակների պարագլուխ դարձած»՝ քրիստոնյա ժողովուրդը կեղեքող Շահ-Հուսեյնին Երզնկայից հեռացնեն, և իր բռնակալությանց համար աքսորյալ հոր պես որդուն ևս անհետացնեն...

Հինգ մինիստրների Բարձ. Դռան կողմից ուղղված հրամանագրերի

---

[1] Կ. Պոլսի պատրիարքի վերջին անգամ մեծ եպարքոսին (սադրիազամին) մատուցած խնդիրների կարգում, որոնցով նա տաճկահպատակ հայերի ցավերին դարմաններ էր աղերսում, նույն խնդիրների մեջ անցուցած էր նաև Շահ-Հուսեյն չարագործի անունը, կարծես, մի մասնավոր անձի հարստահարություններն նույն կարևորությունն ունեին, որպես, օրինակ, հայերի ընդհանուր կալվածական հարցը կամ անչափահաս երեխաների կրոնափոխ անելու խնդիրը...

[2] Տեղեկագրի մեջ խնդիրներն տարեթվի կարգով դասավորված են, բայց մենք տեղափոխեցինք, ցույց տալու համար, թե ինչ չափով ինչ տեսակ հարստահարություններ են գործվել։

ամբողջ օրինակները դրած են «Տեղեկագրքի» մեջ, և իրանց բովանդակությամբ, այո՛, խիստ ազատ են և մարդասիրական, ինչպես լինում են ամեն մի թղթի վրա գրված, բայց ոչինչ գործադրություն չգտնող բարձրագույն ֆերմանները, որոնց Դուռը շռայլորեն դուրս է տալիս իր խաբեության գործարանից...

Հրամանագրերի յուրաքանչյուրի ներքո դրոշմված կնիքների մեջ կարդացվում են Թյուրքիայի այս մեծամեծ մարդերի անունները՝ Ալի, Մահմուդ-Նեդիմ, Միդհատ, Մուհամմեդ-Ռուշդի, Հուսեին-Ավնի... Հինգն էլ շատ անգամ հասարակ վեզիրից բարձրացել են մինչև սադրազամության բարձր աստիճանը։ Բայց ի՞նչ օգուտ բերեցին այս հինգ մինիստրների հրամանագրերը։ Ոչի՛նչ։ Նրանք Կ. Պոլսի նեղուցեն դեպի Փոքր Ասիա անցնելով, իրանց նշանակությունը կորցնում են, և Շահ-Հուսեյն չարագործը մինչև այսօր շարունակում է յուր ավազակությունները, որովհետև նա մի ավելի մեծ ավազակի՝ Արզրումի փաշայի, պաշտպանության տակ է գտնվում...

Այստեղից հասկանալի է, թե ինչու բարձրագույն հրամանագրերն գավառական պաշտոնակալներից շատ անգամ մնում են անգործադրելի։

2. Սղերտ գավառի Սասուն ավանի քուրդ բեգերն, տեղային հայերից արքունի տուրքերը բռնությամբ հավաքելով, այլևս իրանց կողմից գանձին չեն ներկայացնում։ Կառավարությունը, զինվորներ ուղարկելով, քուրդ բեգերից ետ է ստանում արծաթը։ Բայց հենց որ զինվորներն հեռանում են, քուրդ բեգերն սկսում են իրանց տված արծաթը վերստին հայերից առնել։ Եվ որպեսզի մյուս անգամ այսպիսի անիրավություններ չպատահեն քրդերից, կառավարությունը այնտեղ զորանոց շինելու և մշտական զորք պահելու որոշում է անում, բայց մնում է անգործադրելի։

3. Մուշի հարստահարիչ քուրդ բեգերից Ջաբեղ և յուր եղբայրն կառավարության հրամանով աքսորվում են Գասթամանի, բայց հետո հայտնի չէ ինչ հնարքով ազատություն գտնելով, վերադառնում են և ավելի վրեժխնդրությամբ սկսում են տանջել և կողոպտել հայերին։ Այդ մասին կրկին թագրիրներ են մատուցվում, կրկին բողոքներ են բարձրանում. բայց բոլորը կամ առանց հետևանքի են թողնում, կամ «բաթթալ» են անում, այսինքն՝ ոչնչացնում են։

4. Մուշ գավառի Բերնաշեն, Խութ, Սասուն և Շատախ կոչված երկրների քուրդ հարստահարիչների մասին պատրիարքարանից թագրիր է գրվում, բայց մնում է ապարդյուն։

5. Խարբերդի գավառում Մադեն քաղաքի ճանապարհների ուղղության համար շինությունների պաշտոնատարներն հայ գյուղացիներին տարապարհակ վարելով (ձրի աշխատացնելով) գործավորների օրական վարձը չեն վճարում: Բողոք է բարձրանում, բայց արդյունքը հայտնի չէ:

6. Տիգրանակերտի գավառում Սեղերեկ ավանի հայերից զինվորական տուրքի՝ կառավարության հրամանով պակասեցրած քառորդ մասի գինը գործ շրջելուց հետո ամբողջությամբ են առնում, բացի դրանից մեռնող և անհայտ եղած անձանց զինվորական տուրքը մնացողներից են պահանջում: Նաև կառավարության պաշտոնյաներն կալվածների արժեքը խիստ բարձր գնահատելով, չափազանց կալվածական տուրքերով ծանրաբեռնում են ժողովուրդը: Այն ճանապարհների շինությանց մեջ ժողովրդին օրենքով սահմանված օրերից ավելի են աշխատացնում: Բողոք մատուցված է, բայց արդյունքը հայտնի չէ:

7. Վանա կողմերի Հոգվոց վանքը քրդերն կողոպտում են, եղածչեղածը տանում են: Պատրիարքարանը այդ մասին բողոքում է, բայց թաղրիրն մնում է առանց պատասխանի:

8. Մուշի գավառում Մոտկան երկրի հայոց գյուղերն քրդերից անդադար հափշտակվում են, որոնց մի տարվա կողոպուտը ներկայացնում է հետևյալ թվանշանները. 799 ոչխար, 53 850 ղուրուշ փող (3167 ոսկի). 1972 բաթման ուտեստ և արմտիք, 121 կտոր հագուստ, 261 թափ կարմիր կտավ: Թաղրիր է գրվում, հիշյալ ցուցակը ներկայացնելով բարձր կառավարության, բայց գործը մնում է ապարդյուն:

9. Բիթլիսի (Բաղեշի) գավառում Մահմեդ-բեկ անունով բռնակալն իր 12 որդիների և ազգականների հետ նույն գավառի 32 գյուղերում ամեն տեսակ հարստահարություններ են գործում: Ժողովրդյան բողոքը տեղային կառավարության կողմից անուշադիր մնալով, և մահմեդականներն ու հայերն միանալով, առանձին բողոքագրով դիմում են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին: Այս մասին բարձր կառավարությունից հրամանագիր է ուղարկված, բայց արդյունքը հայտնի չէ:

10. Սասունցի քրդերն Մուշի Աղբյուրիկ վանքից յուրաքանչյուր տարի որպես տուրք բռնությամբ առնում են՝ 400 ղուրուշ փող, 4 կով, 20 ոչխար, 4 բաթման ծխախոտ, 4 բաթման յուղ, 5 գրիվ ցորյան: Երբ վանքը այս բաները չտա, միաբանների կյանքը միշտ վտանգի մեջ է: Թաղրիրը գրված է. Բ. Դռնից հրամանագիրը ուղարկված է. արդյունքը հայտնի չէ:

11. Տիգրանակերտի նահանգում մի քանի բռնակալ դերեբեյիներ սոսկալի հարստահարություններ են գործում։ Բարձ. Կառավարությունը ժողովրդի և պատրիարքարանի բողոքների համեմատ առանձին քննիչ է ուղարկում։ Բռնակալ դերեբեյիների հանցանքներն ստուգվելով, նրանք Տիգրանակերտ են բերվում և նույն քաղաքում մշտապես մնալու որոշում է լինում Բայց կառավարության քննիչը հեռացածին պես, բռնակալներն իրանց տեղն են դառնում և ավելի կատաղությամբ ըսկսում են առաջվա չարագործությունները շարունակել։ Այդ մասին կրկին բողոքներ են բարձրանում, բայց չարագործներն միշտ մնում են անպատիժ։

12. Մարաշի մութասարրիֆ (փաշայի փոխանորդ) Սայիդ-փաշայի անիրավությունների դեմ ժողովրդից գանգատներ լինելով, և պատրիարքարանի թագրիրների հիման վրա, Բարձ. Կառավարությունը հրամանագիր է ուղարկում տեղային կառավարության վրա՝ գործը քննելու համար։ Բայց տեղային կառավարությունը փոխանակ քննելու, աշխատում է Սայիդին արդարացնել և հայերին զրպարտիչ ցույց տալ։ Այս մտքով նա մի վկայական (մազբաթա) է պատրաստել տալիս, և մինչև անգամ տեղային առաջնորդական փոխանորդին բռնությամբ ստիպում է, որ նույն վկայականը ստորագրե, որը Սայիդի արդարության համար էր վկայում։ Այս բռնության դեմ բողոքում է պատրիարքարանը. արդյունքը հայտնի չէ։

13. Ակշեհիր քաղաքի հայոց տուրքերը պատկանածից ավելի նշանակելով, ժողովուրդը ծանրաբեռնում են անտանելի վճարներով։ Այդ մասին պատրիարքարանը թագրիր է գրում և անպատասխան է մնում։

14. Կարսի հարստահարիչ քրդերի և Մադենի քուրդ բեգերի հայերին հասուցած վնասների մասին պատրիարքարանը թագրիր է գըրում և անպատասխան է մնում։

15. Վանա ոստիկանության հազարապետ Ֆիլավեր աղայի և նրա ազգականների անիրավությանց դեմ թագրիր է գրվում, մնում է առանց պատասխանի։

16. Զինվորական տուրքի անկանոն բաշխման վրա և հայերից ավելությամբ առնելու մասին թագրիր է գրվում, արդյունքը հայտնի չէ։

17. Սեբաստիո կուսակալության ներքո Սարմուսակլը գյուղի հայերն հարստահարվում են մահմեդականներից. վերջինների անգթությունը մինչ այն աստիճան է հասնում, որ մի հայ կին բռնությամբ

սարը տանելով, իրանց գազանական կիրքը հագեցնելուց հետո, սպանում են և դիակը գետն են գցում։ Այդ մասին թագրիր է գրվում, Բ. Դռնից հրաման է գնում, բայց արդյունքն հայտնի չէ։

18. Ուրֆայի քաղաքական ատյանում, դատարանի Նայիբ-էֆենդին ներկայացնող քրիստոնյա վկաները մերժում են, հակառակ դատավարության օրինաց։ Թագրիր գրված է, բայց արդյունքը հայտնի չէ։

Հողային կամ կալվածական խնդիրներ

19. Տիգրանակերտի Սաթը գյուղի հայոց բոլոր արտերը մի մահմեդական կին անիրավությամբ սեփականելով, հայ գյուղացիներին պարտավորեցնում է իրանց մշակության բերքերից բաժին հանել իրան որպես կալվածատիրոջ։ Այդ մասին մի քանի անգամ թագրիրներ են գրված, որն անպատասխան մնացած է, որն՝ ապարդյուն։

20. Մուշ գավառի Մորնիկ գյուղի հողերը մի մահմեդական հոգեվորական (մուֆթի) բռնությամբ տիրում է։ Նույն միջոցում Արզրումի կուսակալը անձամբ այն կողմերը գնալով, և որովհետև Մուշն էլ իր կառավարության տակն էր, գյուղացիների բողոքը հիշյալ հողերի մասին լսելով, մուֆթիի տիրապետելը անիրավացի է համարում և գյուղացիներին նոր հաստատված կալվածագիր է տալիս։ Գյուղացիք այսպիսով տեր են լինում իրանց 40—50 տարի հերկած արտերին։ Բայց Արզրումի կուսակալը փոխվելով, նրա կարգադրությունն էլ հիշյալ հողերի մասին փոխվում է։ Մուֆթին գյուղացիներից մի քանի հոգի բերել տալով Մուշ քաղաքը, տեղային կառավարության ժողովի մեջ բռնությամբ և սպառնալիքով վկայություն է առնում, թե հողերն պատկանում են մուֆթիին և ոչ գյուղացիներին։ Եվ այսպիսով, նա մյուս անգամ հողերը իր ձեռքն է գցում։ Գյուղացիք այնուհետև սկսում են բողոքել, թե վկայություն տվող միայն երկու գյուղացիներն չեն կարող ամբողջ բնակիչների ներկայացուցիչ համարվել, թե նրանք իրավունք չունեին բոլոր գյուղացոց կողմից մի բան խոսելու և այլն։ Բայց մուֆթին ազդեցության տեր մեկն լինելով, գյուղացոց բողոքը իրանց երկրում լսելի չէ լինում։ Խեղճերն այնուհետև իրանց կողմից երկու պատգամավոր Կ. Պոլիս են ուղարկում, նրանց տալով նաև իրանց կալվածագրերը և ուրիշ գրավոր ապացույցներ։ Կ. Պոլսում գործը նորից քննվում է, բայց վճիռը հօգուտ մուֆթիին է վերջանում։ Պատրիարքարանը կրկին թագրիր է գրում, հետևանքը հայտնի չէ։

21. Խարբերդի նահանգի Չարսանջակ գավառի բոլոր հայոց գյու-

ղերի ամբողջ տները, խանութները, պարտեզները, այգիները և արտերը Իսակ-բեկ անունով մեկը և մի քանի մահմեդական աղաներ բռնությամբ տիրելով, գյուղացիների վրա որպես կալվածատեր հարկ են նշանակում։ Գյուղացիների բողոքների և պատրիարքարանի թագրիրների հիման վրա Բարձ. Կառավարությունը առանձին մասնաժողով է ուղարկում Զարսանջակի գավառը այս գործը քննելու համար։ Մասնաժողովը գյուղացիների բողոքը իրավացի գտնելով և Իսակ-բեկի ու մյուսների իրավունքը անհիմն համարելով, յուր տեղեկությունները հաղորդում է Պետական խորհրդին։ Վերջինս իր կողմից հրամայում է տեղային կառավարության աղաների միջամտությունը արգելել և գյուղացիներին հիշյալ կալվածների տեր ճանաչել, այլև նրանց կալվածագրերը նորից հաստատել։ Բայց կայսերական իրադեյով (հրովարտակ) հաստատված այս որոշումը տեղական կառավարությունից անգործադրելի մնալով, Իսակ-բեկը և մյուս մահմեդական բռնակալները զանազան խարդախ միջոցներով դարձյալ մնում են Զարսանջակի գյուղերից տեր։ Այս խնդրի մասին աննահետև մի քանի թագրիրներ են գրվում, բոլորն մնում են ապարդյուն։

22. Սեբաստիո գավառի Յար-Հիսար գյուղի հայերին պատկանող մշակության դաշտերի և արտերի մեջ տեղային մյուդիրը (գավառապետ) չերքեզներ է բնակեցնում, և հայ գյուղացիները զրկվում են իրանց հողերից։ Այդ մասին պատրիարքարանից մի քանի անգամ թագրիր է գրվում, բայց Դռան կողմից «բաթալ» է լինում, այսինքն՝ առանց հետևանքի է մնում։

23. Էսկիշեհերի մեջ մահմեդականները քրիստոնյաներին արգելում են նոր կալվածք գնելու, բնակություն հաստատելու և եկեղեցի շինելու։ Թագրիրներ գրված են, Բ. Դռնից մի քանի անգամ հրամաններ ուղարկված են քրիստոնյաներին նպաստելու նպատակով, բայց արդյունքն հայտնի չէ։

24. Տիգրանակերտի նահանգում Սպահերտ ավանի գյուղերը հարստահարող քրդերի գլխավորներից մեկը՝ Աբդի-բեկ անունով, մուդիրության պաշտոն վարելով, սկսում է ժողովուրդը ամեն կերպով կեղեքել։ Այս բռնակալը հափշտակում է հայերից նրանց արտերը, հողերը և անասունները, այլև Հուսպ գյուղի հայոց գերեզմանատունը գրավելով, միջի գտնված եկեղեցին քանդում է և յուր համար տուն է շինել տալիս։ Նմանապես մի քանի ուրիշ քուրդ բեգեր (անունները գրված են) Էրան ավանի գյուղերը հարստահարում են։ Թագրիր գրված է, հրամանագիրը ուղարկված է, արդյունքը հայտնի չէ։

25. Վանա Շատախ գավառում քուրդ բեկերն, որպես երկրի անիշխանության ժամանակ, սկսում են իրանց վաղեմի բարբարոսությունները գործ դնել։ Նրանք Հայերին սոսկալի կերպով տանջում են, սաստեցնելով, որ իրանց տուրք վճարեն, եկեղեցիները քանդում են, պղծություններ են գործում, մշակությունները այրում են և շատ նշանավոր Հայեր սպանում են (անունները գրված են)։ Բացի դրանից Շատախու գավառի վեց գյուղերի (անունները գրված են) Հայ բնակիչներին դուրս քշելով, քրդերը իրանք են նրանց մեջ բնակում և նրանց Հողերը ամբողջապես իրանց են սեփականացնում։ Թողյալ այդ, ուրիշ 12 գյուղերի արտերը Հայերի ձեռքից խլում են քրդերը։ Հայ ժողովուրդը բողոքելով տեղային կառավարության, նա իր կողմից Աղա-բեկ և Բարսեղյան Մկրտիչ անունով անձինքը քննիչ է ուղարկում։ Քննիչները ստուգելով քրդերի անիրավությունը, Հայերի իրավունքը հաստատում են հիշյալ Հողերի վերաբերությամբ։ Բայց հետևյալ տարին Ռեշիդ-էֆենդի անունով մեկը թափու օրինաց գործադրության համար Շատախու գավառն ուղարկված լինելով, Հայերին պատկանող նույն Հողերը գաղտնի կերպով քուրդ բեգերի անունով թափու է անում[1]։ Այս խարդախության համար գյուղացիներից մինչև 200 Հոգի դիմում են Վան քաղաքը և բողոքում են տեղային կառավարությանը, և պատրիարքարանը յուր կողմից առանձին թագրիրով Հայտնում է Բարձ. Դռանը, բայց պատասխան չէ ստանում։

26. Զնքուշի վանքի արտերը կառավարությունը իբրև մահլուլ[2] ճանաչելով, ծախել է տալիս։ Այդ մասին թագրիր է գրվում, արդյունքը Հայտնի չէ։

27. Արզրումի մեջ թահրիր էմլաք (կալվածական արձանագրություն) կատարվելու միջոցին, երբ կարգը ազգային դպրոցների և եկեղեցիների կալվածներին է Հասնում, տերության պաշտոնյան չէ ուզում դրանց իբրև ազգային կալվածք արձանագրել, ասելով, թե այսպես

---

[1] Տաճկաց կառավարությունը անմշակ Հողերը մի որոշյալ գնով ժողովրդի վրա ծախում է կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ կապալով է տալիս, և յուր կողմից կալվածագիր է տալիս, դա ասվում է թափու անել։ Բայց թափու լինում են այն Հողերը միայն, որոնք տեր չունին և անմշակ են մնացած։

[2] Տաճկաց կառավարությունը վանքային կամ եկեղեցական կալվածք չէ ճանաչում, որովհետև կալվածատեր կարող են լինել միայն անձնավորություն ունեցող անհատներ, իսկ վանքը և եկեղեցին նրա կարծիքով իրավաբանական անձնավորություն չէ, ուրեմն և կալվածատեր լինել կարող չէ... Այս պատճառավ վանքային կալվածները համարվում են որպես մահլուլ, այսինքն՝ որոչ տեր չունեցող։ Այսպիսի կալվածների տերն ինքն պետությունն է լինում։

անելու հրահանգ չունի, այլ յուր պարտավորությունն է յուրաքանչյուր կալվածքի կենդանի տերը գտնել, և նրա սեփականության իրավունքը ստուգելեն հետո, նրա անունով արձանագրել։ Իսկ երբ մի կալվածք անձնավորյալ տեր չունի, պետք է իբրև մահլուլ նկատել[1]։ Այդ մասին պատրիարքարանից թագրիր գրված է, Բ. Դուռը հեռագրել է, որ հիշյալ կալվածները ազգի անունով արձանագրվին, բայց արդյունքը հայտնի չէ։

28. Տրապիզոնի ս. Փրկիչ վանքի արտերի մեկ մասը Ալի էֆենդի անունով մեկը կամենում է սեփականել։ Թագրիր գրված է այդ մասին. պատասխան առնված չէ։

29. Մադեն քաղաքի Ջերմուկ գյուղի հայոց թաղի մեջ եկեղեցին շինելու արգելք են լինում մահմեդականները, պատճառելով, թե հայոց թաղի մոտ մզկիթ կա։ Թագրիր գրված է, հրամանագիր ուղարկված է, արդյունքն հայտնի չէ։

Ո ճ ր ա գ ո ր ծ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր

30. Հալեպի հեռագրատան պաշտոնյա Սատուր անուն հայազգին հեռագրատան մեջ սպանվում է։ Կառավարությունն հեռագրատան տեսչից պահանջում է ոճրագործին։ Եվ նա Ահմատ անունով հեռագրատան ստոր ծառաներից մեկին ցույց տալով, հայտնում է, թե նա է սպանողը։ Բայց մյուս կողմից տեղական կառավարությունը ձեռացյալ մարդասպանին առանց քննության «խենթ» է ասելով, հիվանդանոցն է ուղարկում... Թագրիր գրված է, հրամանագիր ուղարկված է, արդյունքը հայտնի չէ։

31. Վանա Նարեկա վանքի ջրաղացը քուրդերն կողոպտելով, ջաղացպանին սպանում են։ Թագրիր գրված է, Բարձ. Դուռն պատասխան չէ տված։

32. Մուլեզիմ (Տիմնապետ) Հասանը, Աղթամարա վանքը մտնելով, միաբաններից Հակոբ վարդապետին սպանում է։ Մի քանի քուրդեր էլ Մինդան գյուղի Տեր-Հովհաննես քահանային են սպանում։ Եվ Աբդուլ-Ցաթթահ եղեռնագործը նույն կողմերում բոլոր հայերը կոտորելու սպառնալիք է անում։ Թագրիր գրված է. Բ. Դռնից հրամանագիր է ուղարկված և հեռագիր է զարկված, արդյունքն հայտնի չէ։

---

[1] Այստեղ դարձյալ նույն խնդիրն է, ինչ որ էր վանքային կալվածների վերաբերությամբ։ Մեզ շատ հայտնի չեն Թուրքիայի կալվածական օրենքները (եթե ունի նա օրենքներ). բայց չենք կարողանում հասկանալ, թե ինչու մահմեդականի մզկիթը և մադրասան կարող են կալվածք (վակֆ) ունենալ, բայց հայոց եկեղեցին, վանքը և դպրոցն չեն կարող ունենալ։

33. Մարաշի մեջ Մենդերյան Հարությունին և Զամչիկյան Ղազարոսին տեղային մահմեդականներն սպանում են։ Նաև Զեյթունի կայմակամ Դավութ աղան Հարություն անունով հայ ոստիկանին սպանել է տալիս։ Թագրիր գրված է, Բ. Դռնից հեռագիր ղարկված է, բայց արդյունքն հայտնի չէ։

34. Մալաթիո Մուսթաֆա-բեկի դեպի հայերն ունեցած մոլեռանդական վարմունքի դեմ և մահմեդական սրիկաների շան վզից խաչ կախելով քաղաքի փողոցներում և շուկաներում ման ածելու համար Թագրիր գրված է, Բ. Դռնից պատասխան առնված չէ։

Կրոնափոխություններ

35. Բայբուրտ քաղաքի Ռումելի գյուղացի Մարթա անուն աղջիկը առևանգվում է Սաֆար անունով մի Թուրքից։ Հայերի բողոքելով աղջիկը տեղային կառավարության ատյանում ներկայացնում են հարցափորձի համար։ Այնտեղ լինում են Բայբուրտի հայոց երևելիներն, մի քանի հույներ և մահմեդականների գլխավորներն։ Փոխանակ աղջկան թույլ տալու, որ խոստովանվի, արդյոք նա իր հաճությամբ է ընդունել մահմեդականությունը, հանկարծ մահմեդականների մոլեռանդ բազմությունը ներս է թափվում և սկսում են գոռալ. «Աղջիկն արդեն մահմեդականությունը ընդունած է, կրկին հարցնելու հարկ չկա, և եթե նա՝ մահմեդական չեմ ասե և դեպի քրիստոնեություն վերադառնա, շարիաթի օրենքով նրան գլխատել պետք է»։ Կատաղի ամբոխը այսպիսի և դրա նման շատ սպառնալիքներ կարդալով և մորը թույլ չտալով, որ աղջկան մոտենա, խեղճ Մարթային ստիպեցնում են խոստովանել, թե ինքն՛ հաճությամբ է ընդունել մահմեդականությունը, և բռնի կերպով նրան ամուսնացնում են Թուրք Սաֆարի հետ։

Բայց Մարթան չկարողանալով մահմեդականի հետ կենակցել, գիշերով փախչում է և յուր մոր տունն է գալիս։ Այս բավական էր քաղաքի մահմեդականությունը կատաղության չափ վրդովմունքի մեջ գցել։ Մոլլաներն քաղաքի մեջ մունետիկ են կանչել տալիս, և մոլեռանդ բազմությունը հավաքում են մադրասաների մեջ և նրանց գրգռում են, ասելով, թե քրիստոնյաներն մահմեդականություն ընդունող աղջիկը փախցրել են։ Իսկույն երկու հազարի չափ կատաղիներ զենքերով հայոց տների և խանութների վրա են հարձակվում, մեծ մասը կողոպտում են, քանդում և 30 հոգի հայերից չարաչար վիրավորում

են։ Տեղական կառավարությունը Կարնո կուսակալին վարանքը հեռագրով իսկույն իմացում է տալիս։ Կուսակալը զորքով այնտեղ է հասնում, խռովությունը դադարեցնում է, և ստուգելով, թե աղջիկն ամենևին քրիստոնեից կողմից փախցրած չէ եղել, մի քանի մարդիկ Կարին տանելով բանտարկում է։ Բայց գլխավոր խռովարարներն մնում են անպատիժ, և կեղեքված ժողովրդի վնասներին ոչինչ հատուցում չէ լինում։ Այդ մասին մի քանի անգամ թղթերներ են գրված, բայց ամենին Բարձ. Դռնից պատասխան չէ առացված։

36. Սեբաստիո մեջ մի հայ մահմեդականություն է ընդունում և իր աղջիկը հետն է տանում։ Բայց աղջիկն որովհետև չափահաս էր, հոր մոտից փախչում է և ապաստանում է հայոց վանքում։ Մահմեդականներն պնդելով, թե աղջիկն հոր մոտ պետք է մնա, հարձակվում են վանքի վրա և աղջկան բռնությամբ դուրս են քարշում։ Պատրիարքարանը անդադար թագրիրներ է գրում, որ աղջիկը քրիստոնյա մնացած մորը հանձնվի, քանի որ նա հոր կրոնքը ընդունելու միտք չունի։ Բարձ. Դուռը հրաման է գրում, որ աղջիկը նախ թուրքացած հորը հանձնվի և ապա քննություն լինի։ Պատրիարքարանը իր թագրիրները կրկնում է։ Վերջապես, երեք տարուց հետո աղջկան քրիստոնյա մորն են հանձնում քննելու համար, երբ ամեն բանով փախված էր...

36-րդ խնդիրը Քղիի և Երզնկայի գավառների երևելի չարագործ Շահ-Հուսեյնին է վերաբերում, որի մասին արդեն խոսեցինք։ Այս չարագործի հարցը «Տեղեկագրի» մեջ շատ տեղ է բռնում։

37-րդ խնդիրը վերաբերում է զինվորական տուրքին, որի մասին փոքրիշատե տեղեկություն տվինք մեր ծանոթության մեջ։

38-րդ խնդիրը վերաբերում է հողային հարցերի, որոնց մասին առանձին պետք է խոսենք, որովհետև այս ամենագլխավոր հարցը, որպես նկատվում է «Տեղեկագրից», շատ փոքր գրավել է պատրիարքարանի ուշադրությունը...

* * *

Որպես տեսանք, թե՛ առաջին և թե՛ երկրորդ «Տեղեկագրի» մեջ պարունակված խնդիրները, եթե իրանց տեսակին համեմատ դասավորելու լինենք, կստանանք հետևյալ թվանշանները.

Ամբողջ 58 խնդիրներից 36՝ վերաբերում են զանազան տեսակ հարստահարությունների, 12՝ հողային և կալվածական խնդիրների,

5՝ անիրավարարության կամ բռնական հանցանքների, իսկ 4՝ կրոնափոխության, կամ կանանց բռնաբարությունների։ Հիշյալ թվանշաններից դուրս է մնում 263 հայոց գյուղերի և 21 վանքերի հողերի քրդերից և թուրքերից հափշտակելու խնդիրը, որոնց մասին «Տեղեկագրի» մեջ միայն մեկ ընդհանուր բողոքագիր է երևում, պատրիարքարանի կողմից Բարձ. Դռան մատուցած։ Հողային հարցը, որ հայերի կենսական հարցն է, շատ ուշադրության չէ առնվել, կարծես այդ խնդիրը չէ հետաքրքրել պատրիարքարանին։

Ինչևիցե, խոսենք 58 խնդիրների մասին։ Պատրիարքարանը դրանց համար ամբողջ 25 տարվա ընթացքում անդադար թաքրիրներ է մատուցել Բարձ. Դռան։ Բայց ի՞նչ արդյունք են ունեցել պատրիարքարանի պաշտոնական թաքրիրները։ Յուրաքանչյուր թաքրիրի ներքո կարդացվում են այսպիսի մակագրություններ. «Անպատասխան մնացած է»։ «Ապարդյուն մնացած է»։ «Նույն թաքրիրը բաքքալ (առանց հետևանքի) մնացած է»։ «Բարձ. Դռնեն հրամանագիր ղրկված է, ինչ արդյունք ունեցած ըլլալն հայտնի չէ»։ Եվ այսպես, թաքրիրներից և ոչ մեկը չենք գտնում, որ յուր նպատակին և յուր նշանակությանը հասած լինի։ Կնշանակե, ամբողջ 25 տարվա ընթացքում Բարձ. Դուռը պատրիարքարանի խնդիրներին բավականություն տված չէ։ Դա շատ ցավալի մի երևույթ է, մի երևույթ, որ ցույց է տալիս, թե սուլթանի կառավարությունը ո՛րքան նվազ պաշտպանում է արդարությունը և իրավունքը, և ո՛րքան սակավ հոգս է տանում նա ոչ-մահմեդական ազգերի հանգստության և բարօրության։

Արդարև, խնդիրների կարգում տեսնվում են մի քանիսը, որոնք, Դռան բարձրագույն ուշադրությունը իրանց վրա դարձնելով, արժանացել են բարձրագույն հրամանագրերի։ Բայց Ծաղ-Հուսեյն չարագործի հարցը բավական է ցույց տալու համար, թե բարձրագույն հրամանագրերն ինչ նշանակություն ունեն գավառական հարստահարությունները բառնալու համար։ Ընթերցողն արդեն տեսավ, որ հինգ մեծամեծ սադրազամներ և վեզիրներ, որպես էին Ալի փաշան, Միդհատը, Հուսեին Ավնին և այլն, իրանց հրամանագրերով չկարողացան Ծաղ-Հուսեյնի նման մի ավազակապետ հեռացնել յուր հարստահարության ասպարեզից։ Եվ ուրիշ կերպ լինել կարող չէր, քանի որ Տաճկաստանի արտակենտրոնական կառավարության մեջ մեծ դեր է խաղում դարաբեյիությունը, այսինքն՝ անձնիշխանությունը մի պաշտոնակալի, որն որքան հեռանում է կենտրոնից՝ Կ. Պոլսից, այնքան կամայական և այնքան ապստամբ է դառնում։

Դույն սուլթանի դուռը շատ անգամ ցանկանում է յուր ոչ-մահմեդական հպատակներին հանգստություն, կյանքի, կայքի և պատվի ապահովություն շնորհել և աշխատում է բառնալ անիրավությունը, պատժել հարստահարիչներին։ Բայց ի՞նչ օգուտ ունեն բարի ցանկությունները, երբ որ գործադրություն չեն գտնում, երբ որ նահանգական և գավառական պաշտոնակալների կամայականությամբ բոլորը մնում են անգործադրելի։ Սուլթանի Դռան բարձրագույն ֆիրմաններն նույն նշանակությունն ունեն հարստահարված ժողովրդի բարօրության համար, ինչ նշանակություն, որ ունի տեր-բաբայի գրած թալիսմանը մի հիվանդ երեխայի առողջության մասին, որը խորին ջերմեռանդությամբ առնում է մայրն և խնամքով գնում է որդու բարձի տակին, որ նա չմեռնի...

Տաճկաստանի գործերի այսպիսի անկարգ և այլանդակ դրությունը մեզ բնավ չէ զարմացնում, որովհետև նա շատ հասկանելի է և ծագում է իրերի բնական կարգից։ Որքան էլ աշխատեր, որքան էլ ճըգներ Դուռը, և որքան էլ հաճախ իր ֆիրմաններով ազատ իրավունք և արդարություն անզար ժողովրդի վրա, բոլորն անօգուտ էր։ Որովհետև մենք համոզված ենք, թե վերից միայն հրաշքներ կարող են գործվել, բայց մի երկրի բարեկարգությունը պետք է սկսվի արմատից: Ոչինչ ցանք բուսնել չէ կարող, քանի որ հողը պատրաստված չէ։ Այնպես էլ հազարավոր ֆիրմաններ միշտ կմնան որպես մեռած տառ, քանի որ ամբոխն յուր կրթությամբ չէ համապատասխանում բարձրագույն նպատակին:

Թողնենք փիլիսոփայությունը։

Անկարելի է, որ բոլոր նահանգական և գավառական բարձր և ստոր պաշտոնակալներն լինեին անիրավ մարդիկ։ Որպես պատրիարքարանի «Տեղեկագրից» ևս երևում է, նրանց մեջ կան և այնպիսիքը, որ աշխատում են գործ դնել բարձրագույն հրամանը, աշխատում են հարստահարիչներին զսպել, բայց և նրանց աշխատությունը մնում է ապարդյուն։ Որովհետև այսպիսիները շատ անգամ իրանց դեմ են հանում մոլեռանդ մահմեդականության կատաղությունը և այսպիսով չեն կարողանում պահպանել իրանց դիրքը։ Հարստահարիչների գլխավորներն ամեն տեղում երկրի նշանավոր և ազդեցության տեր մարդիկն են, և նրանցից է կախված մի փաշայի կամ մի կուսակալի վիճակը։ Եվ մահմեդական ժողովուրդն յուր շահերով կապված է գլխավոր հարստահարիչների հետ։ Այսպիսի հանգամանքներում ի՞նչ կարող է անել մի թույլ և անզոր տերություն նույնպես անզոր պաշտոնակա-

լր. նա ևս ստիպված է գնալ ընդհանուր հոսանքի հետ։ Որովհետև պաշտպանել հարստահարված հային հարստահարող մահմեդականի դեմ՝ նույն է, որպես զրկել վերջինը յուր անիրավ շահերից, որը մինչև անգամ կրոնքով նրան թույլ տրված է, որը նրա բնավորության մեջ պատմականաբար արմատացած է...

Մահմեդականության գաղափարը կից է հարստահարության գաղափարի հետ, որը կրոնից տարրացել է ամբոխի մեջ։ Ամեն կրոն նույն ազդեցությունն է անում, երբ նրա մեջ եղած օրենքները և վարդապետությունները ընդհանուր մարդասիրական նշանակություն չունեն. այսինքն՝ երբ նա խտրություններ է դնում յուր հավատացյալների և օտարների մեջ։ Օրինակ, այն, որ արգելված է մի մահմեդականի դեմ գործելու, շատ անգամ թույլ է տրված գործել, երբ դա վերաբերում է մի այլադավանի։ Մենք կարող ենք հարյուրավոր փաստեր բերել, բայց բավական է հիշել մեկը։ Մահմեդական օրենքով վկայությունը նույն ուժը և զորությունը ունի, որպես գրավոր ապացույց։ Բայց ոչ-մահմեդական ազգերի վկայությունը մահմեդականի վերաբերությամբ չէ ընդունվում։ Ահա՛ օրենքի այս խտրության տակ կարող են ծածկվել ամեն տեսակ չարագործություններ։ Մահմեդականը մի հայ սպանել է, մի հայ աղջիկ բռնաբարել է, մյուսի այս ինչ բանը գողացել է, և այս բոլորը պատահել են հայոց շրջանում, ինհարկե, վկաներն նույնպես հայ կլինեն. բայց նրանց վկայությունները չընդունվելով, հանցանքը մնում է անպատիժ։ Ոչ-մահմեդականի վկայությունն այն ժամանակ միայն կարող է ընդունված լինել, երբ տված կլինի մահմեդականի օգտին։ Եվ այսպես, մահմեդական կրոնը գլխավոր արգելառիթներից մեկն է Տաճկաստանում արդարության և քաղաքացիության հավասարության մտցնելու։ Այստեղից հասկանալի է, թե ինչու Բարձ. Կառավարության, շատ անգամ բոլորովին անկեղծորեն առաջարկած, բարենորոգմունքը քրիստոնյաների վերաբերությամբ մնում են անկատար։

Եթե պատրիարքարանի «Տեղեկագիրքը» ընդունենք որպես Ասիական Տաճկաստանում հայերի վերաբերությամբ կատարված հանցանքների վիճակագրական արձանագրություն, այն ժամանակ դուրս բերված թվանշաններն մեզ շատ տխուր եզրակացությունների կհասցնեն։ Խոսենք յուրաքանչյուրի վրա առանձին-առանձին։

Քսանևհինգ տարվա միջոցում կատարված կրոնափոխությունների թիվը (2 հոգի միայն) ամենափոքր տեղն է բռնում պատրիարքարանի արձանագրությանց մեջ։ Դա ինչի՞ց է։ Դուցե ոմանք կմտածեն, թե

կրոնափոխություններ սակավ են պատահում և պատրիարքարանին այդ մասին չեն զբաղեցնում։ Ո՛չ, պատահում են, և ավելի մեծ թվով. և եթե պատրիարքարանը այդ մասին ունեցել է երկու խնդիրներ, միայն դա ունի յուր առանձին պատճառները։

Կրոնափոխությունները Ասիական Տաճկաստանում համոզմունքով չեն կատարվում, որովհետև մահմեդականությունն այդ առավելությունը չունի, որ քրիստոնյա հայը ցանկանար յուր կրոնը փոխել. այդ մասին բավական է ի նկատի ունենալ անբախտ Մարթայի անցքը։ Կրոնափոխությունները պատահում են ըստ մեծի մասին աղջիկների և կնիկների մեջ հետևյալ պատճառներով. Ասիական Տաճկաստանում շատ փոքր է այն գյուղերի թիվը, որոնք ամբողջապես բնակեցրած լինեին հայերով. շատերը խառն են քրդերի և տաճիկների հետ։ Եվ եթե կան բոլորովին հայաբնակ գյուղեր, նրանց միրձակայքում դրած են մահմեդականներինը, իսկ քաղաքներում միշտ խառն են բնակվում։ Եվ այսպես, հայերի և մահմեդականների հարաբերությունները անջատված չեն։ Որպիսի՞ հետևանքներ են առաջ գալիս այսպիսի սերտ հարակցությունից։ «Լավ բան է, բայց ափսո՜ս, որ գյավուրին (անհավատին) է պատկանում», դա մի առած է մահմեդականի լեզվում։ Մահմեդականը միշտ աչք ունի հային պատկանող այն ամեն բանի վրա, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ թանկագին է։ Եվ հայի գեղեցիկ կինը ու աղջիկը չէին կարող չգրավել նրա հրապուրանքը։

Տաճիկը, մանավանդ քուրդն ամեն ինչ ավելի ախորժակով է վայելում, երբ նա գողացված էր։ Գողանալ յուր ամուսինը քրդի համար ոչ միայն պարծանք է համարվում, այլև քաջություն։ Եվ այդ հերոսությանը զոհվում են մեծ մասամբ հայոց գեղուհիները։ Մի երկրորդ, ավելի զորեղ շարժառիթ պատճառ է տալիս նրանց հափշտակությանը, այն է կրոնական մոլեռանդություն. գողանալ քրիստոնյա կինը և աղջիկը և նրանց դեպի մահմեդականություն դարձնել, դա հոգևոր վարձատրություն ես ունի։

Մի անգամ խլվեցավ աղջիկը հայրենական անակից, այլևս նրան վերադառնալու հույս չկա։ Մահմեդականությունը սարսափելի օրենքներ ունի մի անգամ նրա ծոցը մտնող (եթե բռնությամբ ևս լինի) և կրկին դեպի հայրենական կրոնը վերադարձող անձի համար։ Հանդիպող մահմեդականն իրավունք ունի սպանելու նրան։ Եվ երկյուղը փակում է նրա վերադարձի ճանապարհը։

Իսկ մի երկրորդ մոլեռանդություն նույնիսկ հայերի կողմից ոչ սակավ պակաս է, քան մահմեդականինը, որ և առավելապես պատ-

ճառ է դառնում թշվառ զոհերի կորչելուն։ Մի անգամ մահմեդականի ձեռքն ընկած աղջիկը և կինը համարվում է որպես պղծված մարմին։ Նրանք կորցնում են ազգայինների մեջ իրանց համարումը և պատիվը, և այնուհետև դժվար թե մի հայ տղամարդ կցանկանար այնպիսի մի կնոջ և աղջկա հետ ամուսնական կապ ունենալ։ Այդ գիտեն թշվառ զոհերը... և եթե նրանք այնքան քաջություն ունեին, որ կամենում են ազատվել իրանց հափշտակողների ձեռքից, այլևս չեն վերադառնում դեպի իրանց ազգայինները, այլ իրանց նախատինքը ծածկելու համար շատ անգամ անձնասպան են լինում, և կամ հուսահատությունից ըստիպված, ակամա կերպով խոնարհվում են բռնության առաջ... Եվ այսպես, կրոնափոխությունները կանանց վերաբերությամբ կապված են առևանգության և բռնաբարության հետ։

Այստեղից հայտնի է, թե ինչու կրոնափոխությունների մասին եղած խնդիրները շատ փոքր տեղ են բռնում պատրիարքարանի արձանագրությանց մեջ։ Որովհետև պատրիարքարանն ինքնակամ գանգատ սկսել չէ կարող, քանի որ ժողովրդի կողմից բողոք չէ լսում, և ժողովուրդը վերոհիշյալ երկու պատճառներով շատ անգամ լռում է դեպքերի մասին։ Եվ եթե Մարթայի դժբախտ անցքը չպատահեր Բայբուրտի ամբողջ հայերի կոտորածին, հազիվ թե նա պատրիարքարանի և Արզրումի կուսակալի ուշադրությանը կարժանանար։

Այս մեր դիտողությունները կանանց սեռի մասին են, բայց կրոնափոխությունները տղամարդերի մեջ կատարվում են բոլորովին ուրիշ շարժառիթներից։ Օրինակ, շատ անգամ մի հայ մարդ յուր ազգակիցների հետ վեճեր ունի, դատ ունի, կամ որևիցե ոխակալության համար կամենում է վրեժխնդիր լինել յուր ոսոխից, այսպիսին մահմեդականներից պաշտպանություն գտնելու համար փոխում է յուր կրոնը, որովհետև մահմեդականությունն ավելի իրավունք, ավելի զորություն է տալիս նրան չար կրքերը հագեցնելու։ Կամ եթե հանցանք է գործել, փոխելով յուր կրոնը, նա ազատվում է պատժից, և կամ ծույլ ու թշվառ մեկն է, նա յուր օրական հացը գտնում է կրոնափոխության մեջ։ Եվ այսպես, տղամարդերից կրոնափոխ լինողների ըստ մեծի մասին լինում են չար և անբարոյական մարդիկ, որոնք մահմեդական շրջանի մեջ ավելի հարմար են գտնում իրանց մոլությունները։

Ուրիշ պատճառներ մենք չենք ճանաչում կրոնափոխության մասին, որովհետև գիտենք, որ մահմեդականությունը միսիոնարներ չունի. նրա հիմքը դրվել է սրով և այժմ պահպանվում է մոլեռանդության մեջ։

Մնում է մի քանի խոսք ասել մանկահասակ պատանիների կրոնափոխության մասին. այդ թշվառներին նույնն է պատահում, ինչ որ պատահում է մանկահասակ օրիորդների հետ. որովհետև երկուսն էլ միևնույն նշանակությունն ունեն մահմեդական աշխարհում...

Կրոնափոխություններից հետո պատրիարքարանի արձանագրությանց մեջ փոքր տեղ են բռնում սպանությունները (6 հոգի միայն). դա շատ տխուր մի երևույթ է, որով մեկնվում է Տաճկաստանի հայի թշվառ դրությունը: Կրկնում ենք՝ տխուր, այո՛, շա՛տ տխո՛ւր, և դուցե այս ասացվածը կբարձրացնի մեր դեմ մի այսպիսի հարց. «Մի՞թե ցանկալի էր, որ մեծ թվով կոտորվեին հայերն Տաճկաստանում»:

Մենք կյանքի և բնության մեջ կատարված երևույթները թեև վերաբերում ենք մի նախասահմանյալ տեսության, բայց համոզված ենք, որ ամեն մի երևույթ ունի յուր իրական պատճառները: Եվ այսպես էլ հայերի մեջ կատարված սպանությունների սակավությունը չենք կարող վերաբերել մահմեդականների գթությանը, թե նրանք ավելի մարդասիրաբար են վարվում հայերի հետ, մինչդեռ իրանց մեջ ավելի մեծ թվով են կոտորում մինը մյուսին:

Պարզենք մեր միտքը:

Մի հասարակության մեջ կատարված հանցանքների թիվը, նրանց բնավորությունը և տեսակը ցույց են տալիս նույն հասարակության նյութական և բարոյական դրությունը: Եվ հանցանքների պատճառներն ու նրանց շարժառիթներն այնքան զանազանվում են, որքան զանազանվում է մի հասարակության կրթության աստիճանը մյուսից և նրա տնտեսական դրությունը:

Անհասարակ նկատված է, մի հասարակության մեջ ավելի մեծ թվով կատարվում են սպանություններ, երբ աշխատությունը, արդար վաստակը և ապրուստի ապահովությունն ընդհանրացած չէ ժողովրդի բոլոր դասակարգերի մեջ, երբ զորեղն անզորին ճնշում է և խլում է նրա ձեռքի վաստակը: Ասիական Տաճկաստանն այդ դրության արյունոտ պատկերն է ներկայացնում: Այստեղ ոչ միայն մասնավոր գողեր և ավազակներ խլում են օտարի բարին, այստեղ ոչ միայն բռնակալ դարաբեյիներ *կողոպտում են ժողովրդը, այլ ավազակներից կազմված ամբողջ խմբեր (որպես քրդերի ասպատակներն) արշավանք են գործում երկրի մի կողմից դեպի մյուսը, հափշտակում են և ամեն տեղ տարածում են ավերմունք և աղքատություն: Մի փոքր ընդդիմադրություն հափշտակվողի կողմից վերջ է տալիս նրա կյանքին, և այստեղից առաջ են գալիս սպանությունները:*

Սպանությունները այստեղ պատահում են կայքի հափշտակության և նրա պահպանության համար գործ դրված երկու հակառակ ուժերի մեջ, և որքան սաստիկ է լինում ընդդիմադրությունը, այնքան աճում է սպանությունների թիվը։

Բայց քննելով պատրիարքարանի արձանագրությանց թվանշանները, մենք բոլորովին հակառակ եզրակացության ենք հասնում։ Նրանց հարստահարությունների թիվը հարյուրապատիկ ավել է, քան սպանությունները։ Ի՞նչ է պատճառը։

Մենք ուրիշ պատճառ չենք գտնում, բայց միայն այն, որ հայը Տաճկաստանում ամենևին ընդդիմադրության զորություն չէ ցույց տալիս, նա բոլորովին կրավորական դեր է խաղում, նա թույլ է տալիս քուրդին, տաճկին հափշտակել յուր կինը, յուր աղջիկը, յուր մանկահասակ որդին, միայն յուր անձին չդիպչել... նա թույլ է տալիս հափշտակել յուր ձեռքի վաստակը, խլել յուր պապերից մնացած մի կտոր հողը, միայն յուր կյանքին խնայել... Այսպիսի ստոր և ցած վարմունքի մեջ բնականաբար շատ փոքր թվով կպատահեին սպանություններ, որովհետև հայն յուր ընտանիքը, յուր կայքը, յուր պատիվը և ամեն ինչ, որ սուրբ է յուր համար՝ զոհում է միայն յուր կյանքը պահպանելու համար։ Բայց նա կյանքը զոհելու և իրավունքը պահպանելու քաջությունը չունի...

Բայց սպանությունները մահմեդականների մեջ ավելի մեծ թվով են պատահում, որովհետև մահմեդականը այնպես չէ վարվում, որպես հայը. նա գիտե չարին չարով պատասխանել...

Գուցե ոմանք կնկատեն, թե ի՞նչ կարող է անել ողորմելի հայը, երբ թուրքը և քուրդը սուր ունեն, բայց հայը չունի, նա ի՞նչով կարող է ընդդիմանալ յուր զինվորված թշնամուն։ Նա պետք է խոնարհվի բռնության դեմ և թույլ տա, որ կողոպտեն իրան, որպեսզի իր անձը կենդանի պահե։ Այս բոլորը միամիտ մարդիկների կարծիքն է, որոնք նայում են առաջկա անարգար երևույթների, որպես վերին տնօրինությունից սահմանված օրենքների վրա։ Բայց մենք այս բանին չենք հավատում. որ աստված տաճկի և քուրդի ձեռքում սուր տված լիներ հային կողոպտելու համար, և ոչ էլ մտածում ենք, թե դա ժողովրդի մեղքի համար է, որ աստված պատժում է նրանց...

Հայի ստրկության և նրա այժմյան թուլասրտության պատճառները այնքան բաղադրյալ են, որ պետք է մեր ամբողջ պատմությունը քրքրել այս հարցը բացատրելու համար։ Բայց դա դուրս է մեր հոդվածի նպատակից։ Այսքանը միայն կասենք. եթե մի հայ, որ յուր գրպանում

ունէ մի քանի ոսկի, փոխանակ այն գումարը տալու և մթերք գնելու, որ կրկինը շահէ, եթէ նրա մի մասը տա և մի զէնք գնէ յուր մթերքը և յուր գլուխը պահպանելու համար, իմ կարծիքով, ոչ ոք նրան չի արգելի: Եվ եթէ նա այդ չէ անում, այլ հրեայի նման միշտ շահասիրության ետևից է ընկած, ո՞վ է մեղավոր, որ նրան կողոպտում են:

Այն ուրիշ բան է, երբ մի կառավարություն ինքն է պահում զէնքը յուր ձեռքում, իրան միայն է սեփականում նրա գործածության իրավունքը, և հետևապես ինքն հսկում է հպատակների հանգստության և ապահովության վրա, բայց քանի որ Տաճկաստանն այդ անելու զորություն չունի, այն ժամանակ հպատակների վրա է մնում անձնապաշտպանության հոգսը ինչ կերպով և լինի:

«Թո՛ղ ուրիշն փրթէ, ես խփշտեմ»,— ասում է հայկական առածը. դա մի ծույլ ազգի առած է, որի մեջ բովանդակվում է նրա կյանքի ամբողջ վարդապետությունը... Հայը դեռ սպասում է... հրեայի համբերությամբ սպասում է... եթէ ուրիշի արյան գնով քրիստոնյաներին հանգստություն կբաշխվէր, գուցե իրան էլ մի պատառ կցցեին: Լավ երազ է, եթէ իր բարին կատարվի...

Հայն յուր ամբողջ կյանքում այսպես է վարվել. «Թող ուրիշը փրթէ, ես խլփշտեմ» և յուր ստրկությունն այս քաղաքականությունը հետևելու արդյունքն է: Նա այսպես է վարվել ոչ միայն յուր քաղաքական կյանքում, այլև գիտության, արհեստի, ճարտարության մեջ նույնն է եղել. նա ոչինչ չէ արդյունաբերել, ոչինչ չէ ավել մարդկությանը, այլ միշտ «խլփշտել է ուրիշի փրթածը...»: Մենք շատ խիստ լեզու չենք գործածի հայի այս վարմունքի դեմ, միայն կասենք, որ մուրացկանությունը ծույլերի հատկանիշն է... և մուրացկանի փորին շատ անգամ չի աջողվի կշտանալ օտարի փշրանքով...

Դառնանք դեպի մեր խոսքը:

Ասեցինք, թե հայերի վերաբերությամբ կատարված սպանությունների փոքր թվանշանները, պատրիարքարանի արձանագրությանց համեմատ, ապացուցում են նույնիսկ հայերի թուլությունը և նրանց ստրկային հոգու ցածությունը: Այս հարցը ավելի պարզելու համար հարկավոր ենք համարում փոքր-ինչ երկար խոսել հարստահարությունների և կալվածական խնդիրների մասին, որոնք պատրիարքարանի արձանագրությանց մեջ համեմատաբար ավելի մեծ տեղ են բռնում:

Հարստահարություններն կատարվում են ըստ մեծի մասին Տաճկական Հայաստանի հյուսիս-արևելյան մասում, և կենտրոնը, որպես երևում է պատրիարքարանի արձանագրություններից, համարելու է Վանա ծովակի շուրջը դրված երկիրները։ Այս երկրներն են՝ Արզրումի նահանգն յուր գավառներով, Տիգրանակերտի նահանգն յուր գավառներով և Վասպուրականի երկիրն յուր գավառներով։ Դրանք այն երկրներն են, որոնք ավելի խիտ բնակեցրած են հայերով և ավելի հեռու դրած են Կ. Պոլսից։

Հարստահարությունները կարելի է երեք տեսակի բաժանել. հարստահարություններ, որ կատարվում են կառավարության պաշտոնակալների կողմից, հարստահարություններ, որ կատարվում են քուրդ դերեբեկիների (բռնակալ, ապստամբ) և թուրք ազդեցության տեր անձինքների կողմից, հարստահարություններ, որ կատարվում են մահմեդական հասարակ ժողովրդի կողմից։

Կառավարության պաշտոնակալների կողմից եղած հարստահարություններն ըստ մեծի մասի վերաբերում են տերության տուրքերին և հարկահանների անգթությանը։ Տուրքերի տեսակներն և նրանց վճարման ձևերն այնքան զանազան են, որ անկարելի է այդ մասին մի որոշ տեղեկություն տալ։ Որովհետև յուրաքանչյուր երկրում միևնույն տուրքը թե՛ իր քանակության մեջ և թե՛ նյութի հավաքման մեջ տարբերվում է, ավելի կախումն ունենալով հարկահանների բարոյական հատկությունից, քան թե օրենքի տրամադրությունից։ Բայց ժողովրդի գանգատներն գլխավորապես վերաբերում են տուրքերի անարդար բաշխմանը, որով մահմեդականների հարկերի ծանրությունն ընկնում է հայերի վրա։ Հայը դյուրընտել և հլու բնավորիր է, նա եզի համբերությամբ կրում է յուր ծանրությունը, որքան և անտանելի լիներ նա... Իսկ տաճիկը կարող է ըմբոստանալ, կարող է թոթափել իրանից բռնության ձեռքից դրած բեռը...

Զինվորական տուրքը հայերի վերաբերությամբ այն պարտավորությունների կարգիցն է, որ յուր հետ արտոնություններ չունի։ Հայը, որպես մեր նկատողության մեջ հայտնեցինք, զինվորի փոխարեն փող վճարելով, չէ վայելում այն բացառիկ իրավունքները, որ շնորհվում է զինվոր տվող մահմեդականին։ Հայի զինվորական տուրքը համարյա մի կերպ տուգանք է, որ նրան տուժել են տալիս, օգուտ քաղելով նրա տխմար ներողամտությունից...

Երբ առաջին անգամ բարձրացավ Տաճկաստանի զինվորագրության հարցը, մեր պարբերական թերթերը դրա վրա երկար վիճեցին: Ես դեռ հիշում եմ այն հիմար վիճաբանությունները: Համարյա մեծ մասի խոսքերը հանգում էր այս ասացվածի մեջ. «Հայը թող զինվորի փոխարեն փող տա. նա փողը միշտ կարող է աշխատել, բայց հայի համար թանկ է յուր արյունը»:

Որքան վախենում է այդ ազգն արյունից, ամենևին չմտածելով, թե փրկությունը արյան մեջ է...

Մեր ազգի պատմությունը մեզ ուսուցանում է, երբ հայերն պարսիկների, մոնղոլների, արաբների և այլ տիրապետող ազգերի զորքի մեջ զինվորներ ունեին, նրանք քիչ չէին պաշտպանում իրանց հայրենիքը նույն ազգերի բարբարոսություններից, որոնց ծառայության մեջն էին: Այսպես էլ հայը Տաճկաստանի զինվորության մեջ, եթե ուրիշ օգուտ չտար յուր հայրենիքին, գոնե այնքանը կսովորեր, թե բացի ստրկական խոնարհությունից կա և մի ուրիշ բան անձնապաշտպանության համար՝ զենքը:

Բայց մենք համոզված ենք, եթե հայերն թուրքաց զորքերի մեջ զինվորներ ունենային, այժմ Ասիական Տաճկաստանի հարստահարությունները մեծ մասամբ բարձված կլինեին: Այս խոսքը երկար բացատրությունների կարոտ չէ: Ով որ ճանաչում է Տաճկաստանը, ով որ գիտե, թե ինչ աղբյուրներից են ծագում հարստահարությունները, նա ևս մեզ հետ կհամոզվի, թե զինյալ քրդի դեմ միայն զինյալ մարդը կարող է պահպանել յուր կայքը, յուր ընտանիքը, յուր պատիվը և այլն. եթե ոչ՝ քրդին արքունի ֆիրմաններով կարգ-կանոնի մեջ պահել անկարելի է:

Մեր խոսքը կառավարության պաշտոնակալների հարստահարությանց մասին էր: Պատրիարքարանի արձանագրությանց մեջ զինվորական տուրքից հետո ավելի աչքի է զարկում տասանորդի *տուրքը, որ ստացվում է մշակության բերքերից: Այստեղ մշակ մարդու թշվառությունը հասնում է վերջին աստիճանի անկարեկցության: Գյուղացին ստիպված է երկու տեսակ տուրք վճարել այն հողի համար, որը մշակում է. մինը՝ կալվածական տուրք կամ հողային հարկ, մյուսը՝ մշակած բերքի տասանորդը: Դա այն ժամանակ է լինում, երբ հողը միմիայն մշակի սեփականությունն է: Բայց որպես երևում է պատրիարքարանի արձանագրություններից, հայերի սեփականություն եղած հողերը մեծ մասամբ թուրք և քուրդ* դերեբեյիները *բռնությամբ հափշտակել են: Այս դեպքում հայը դարձել է* դերեբեյիի *կամ յուր* նոր աղայի ձեռքում ճորտ: *Այժմ նա յուր մշակած հողի համար պարտա-*

վոր է վճարել չորս տեսակ տուրքեր, որովհետև երկու սղա ունի, մինը՝ կառավարությունը, մյուսը՝ յուր նոր կալվածատերը։ Նա վճարում է կառավարությանը կալվածական տուրքը և տասանորդը առանձին, բացի դրանից վճարում է կալվածատիրոջը միևնույն հողի համար առանձին կալվածական տուրք և բերքի տասանորդ։ Երևակայեցեք մըշակ մարդու դրությունը, և այն ժամանակ հասկանալի կլինի, թե ինչո՞ւ նա թողնում է յուր արորը, թողնում է հայրենի երկիրը և պաղթում է օտար երկրներում բախտ որոնելու…

Հիշյալ տուրքերի վճարման ձևերը ավելի ևս սաստկացնում են մշակի անբախտությունը։ Կառավարության պաշտոնակալները տասանորդի տուրքը տալիս են կապալով իրանց մերձավորներին և գաղտնի կերպով նրանց հետ ընկեր են դառնում։ Կապալառուն, վարձկանց (մուլթեզիմը), ավազակի չափ անգութ կլինի և հափշտակող, մանավանդ, երբ յուր անիրավության վրա հսկող պաշտոնեությունն յուր գործունեությանը և յուր շահերուն ընկերակից է։ Պատրիարքարանի արձանագրությունները բավականին ապացույցներ ունեն, թե որպես են կեղեքում կապալառուները։ Նրանք բացի սովորական տասանորդից առնում են շահճալըզ և օլչեք հազզը կոչված արգելված տուրքերը։ Նրանք, երբ բերքը գին չէ բերում, թողնում են, մշակի հունձքը փտում է, ոչնչանում է կալի մեջ, և այնուհետև տասանորդի փոխարեն պահանջում են արծաթ փող։ Իսկ երբ որ մշակը փող չունի վճարելու, ծախել են տալիս նրա երկրագործական անհրաժեշտ պարագայքը և նրա անասունները։ Ահա գլխավոր պատճառը, թե ինչու հողագործությունն առաջ չէ գնում Սախական Տաճկաստանում, և ինչու սովը հաճախ կրկնվում է այս երկրում։ Ի՞նչ անե մշակը, երբ ինքն կառավարությունն ուղղակի և անուղղակի կերպով նրա ձեռքի վաստակը հափշտակում է, և եթե մի բան էլ մնացել էր, այն ևս բռնությամբ ափրացած կալվածատերն է առնում։

Մեր հոդվածի համառոտությունը չէ ներում ավելի մանրամասնությունների մեջ մտնել. այսքանը միայն կասենք, որ նույն երկրում, միևնույն հողի վրա բնակվող մահմեդական մշակի հետ այս բաները չեն պատահում։

Կառավարության պաշտոնակալների դատաստանական խարդախությունները մահմեդականների և ոչ-մահմեդականների վերաբերությամբ ոչ սակավ զրկում են հայերին իրանց արդար իրավունքներից, և նրանց մասին կատարված անիրավությունները միշտ մնում են անպատիժ։ Այս հանգամանքներում հայը մի ճար միայն ունի դատավա-

րի արդարությունն յուր կողմը դրավելու. այն է յուր արծաթով ամոքել նրա կաշառասեր սիրտը: Իսկ դա խիստ հազիվ է հաջողվում նրան, որովհետև շատ անգամ յուր արծաթով դատավորի քսակը լցնելուն հե-տո նա դարձյալ կորցնում է յուր իրավունքը: Դատավորը միշտ դեպի այն կողմն է թեքվում, ուր ուժ կա, բայց Տաճկաստանում ուժ և զո-րություն ունի միայն մահմեդականը: Թողյալ այդ, մահմեդականը վա-յելում է օրինական առանձնաշնորհություններ, որից զուրկ է քրիս-տոնյան: Օրինակ, նա կարող է անթիվ վկաներով իրան արդարացնել, բայց հայի վկայությունը չէ ընդունվում: Եվ վկայությունը մահմեդա-կան օրենսդրության մեջ մեծ դեր է խաղում: Շատ ժամանակ չէ, որ Կ. Պոլսի լրագրներում կարդացինք մի դեպք, որ պատահել էր Վանա կողմերում: Մի մահմեդական, առանց դրավոր ապացույցի, միայն սուտ վկաներով մի հայի իրան պարտական էր արել և, բանտ դնել տա-լով, փողը ստացավ: Այսպես ամեն մահմեդական կարող է ցանկա-ցած հային կողոպտել. վկաներ նրա համար պակաս չեն լինի. և ինքն դատավորը կնքպատակ նրա չարագործությանը, որովհետև ստացած արծաթի մի մասն էլ իրան է պատկանում...

Մահմեդականը ամեն մի հայի ճակատի վրա կարդում է այս խոսքերը՝ «գյավուր և ռայա», և այս խոսքերի մեջն է բովանդակվում նրա համոզմունքի ամբողջ վարդապետությունը, թե հայը ուրիշ ոչինչ չէ, բայց միայն աստծուց իրան շնորհված մի որս, որին նա իրավունք ունի ամեն կերպով յուր պիտույքներին ծառայեցնելու... Եվ մահմե-դականը չէ սխալվում յուր կարծիքի մեջ, քանի որ հայը յուր կրավո-րականությամբ արդարացնում է նրա կարծիքը...

Այսքանը բավական է կառավարության պաշտոնականների մա-սին, այժմ դառնանք այն հարստահարություններին, որ կատարվում են մասնավոր բռնակալների (դերեբեկիների) և հասարակ ժողովրդի կողմից:

Պատրիարքարանի արձանագրության մեջ ավելի մանրամասն տեղեկություններ կան այդ մասին, և պատրիարքարանի Բարձ. Դռան մատուցած բողոքագրերի մեծագույն մասը նվիրված են գավառական հարստահարություններին: Ընթերցողն արդեն բավական գաղափար ստացած է, թե ինչ տեսակ հարստահարություններ են կատարվում, և մենք դրա վրա երկար խոսելու նպատակ չունենք, միայն կամե-նում ենք մասնավորապես ցույց տալ այն աղբյուրները, որոնցից ծա-գում են հարստահարությունները:

Տաճկական Հայաստանի ժողովրդագրության մեջ հայերից հե-

տա բազմություն են կազմում Եղերը, մի ազգ, որ մինչև այսօր ապրում է նախնական կյանքով, մի ազգ, որ արհեստ և երկրագործություն չունի, այլ ավազակությունը համարում է արդար վաստակ և սպանությունը՝ քաջություն։ Քրդերի մեծ մասը վարում են չվական կյանք և իրանց անասուններով թափառում են հայոց լեռներում, իսկ շատ փոքր մասը կիսահաստատաբնակ դրություն ունի։

Տաճկական կառավարության թույլ զորություններն անօգուտ եղան վայրենի քրդերը նվաճելու, և բանզիմաքը յուր բոլոր մարդասիրական ազատամտությամբ չկարողացավ մեղմացնել այս բարբարոսների՝ քրիստոնյաների վերաբերությամբ կատարած անգթությունները։ Քուրդ էշիրաթներն միշտ մնացին անպատիժ և մինչև այսօր շարունակում են իրանց ավազակությունները[1]։ Այս այսպես լինելուց հետո կառավարությունը ավելացրեց քրդերի վրա նաև չերքեզները, Կովկասի լեռների գազան որդիքը, որոնք իրանց կյանքի ձևերով շատ չեն զանազանվում քրդերից...

Քրդերի հարստահարությունների մեջ հափշտակությունները, մանր գողությունները և ավազակությունները այնքան սովորական են դարձել, որ կարծես թե ժողովուրդը ընտելացել է նրանց և արտաքո կարգի բան չէ համարում։ Այս պատճառով, հազիվ թե մեկը վստահանում է բողոք բարձրացնել... «Է՜հ, քուրդ է, նրա գործն այս է» ասելով, ինքն իրան մխիթարում է։ Նա ուրիշ ճար չունի ողորմելին, նա ստիպված է լռել, եթե ձայն բարձրացնի, այն քուրդը, որ այսօր գողացավ նրա ոչխարը կամ եզը, մյուս օրը կկտրե տիրոջ գլուխը։

Բայց քուրդը յուր արհեստի մեջ ծույլ չէ, նա միշտ չէ բավականանում մանր գողություններով։ Շատ անգամ բոլորովին կազմակերպված խմբեր, որոնք բաղկանում են հարյուրավոր ձիավորներից, արշավանքներ են գործում և ասպատակում են մի կողմից ամբողջ գյուղորայքը, ավար են տանում ոչխարների հոտեր և այլ անասուններ և դրր-

[1] Մինչև այսօր Ասիական Տաճկաստանում, առավելապես Հայաստանի կողմերում դեռևս գտնվում են այնպիսի երկրներ, օրինակ, Բուլանըխ, որ քրդերն բոլորովին անկախ և ապստամբ դիրք են պահպանում։ Բուլանըխի Զարզա կոչված քուրդ ցեղի հետ խառն բնակվում են նաև հայեր, որոնք միևնույն վայրենության մեջ են որպես քրդերն և իրանց բնավորությամբ շատ չեն զանազանվում։ Այստեղ հայերն էլ քրդերի հետ ավազակություններ են անում, դեպի զանազան կողմեր արշավանքներ են գործում և մինչև անգամ չեն խնայում, եթե պատահելիս լինեն իրանց կրոնակիցներին։ Իսկ Տաճկաստանի և Պարսկաստանի սահմանի գծի վրա բնակված քրդերը համարյա բոլորն ապստամբ և անպատիժ են և անարգել անցնում են սահմանի գիծը, որ կողմ էլ որ փոքր-ինչ նեղվում են։

կում են գյուղացիներին բոլոր անհյածից: Այսպիսի դեպքերում, որ կրկնվում են խիստ հաճախ, արդեն, որպես սովորաբար ասում են, «դանակը ոսկորին է հասնում», և ժողովուրդը ստիպված է բողոք բարձրացնել: Բայց ո՞ւմ, ո՞վ է նրա ձայնը լսողը: Խղճալիի ձայնը միշտ մնում է յուր կուրծքի մեջ խեղդված...

Պատրիարքարանի արձանագրություններից երևում է, որ գավառներից եկած բողոքներն առհասարակ վերաբերում են այն տեղերին, որոնք ավելի մոտ են գրված մեծ քաղաքներին, որպիսին են Վանը, Բաղեշը, Տիգրանակերտը, Արզրումը և այլն: Այդ այն պատճառով չէ, որ մեծ քաղաքների մոտ ավելի շատ են պատահում հարստահարություններ, այլ ընդհակառակն, հարստահարություններն որքան մոտենում են մեծ քաղաքներին, այնքան նվազում են: Բայց մեծ քաղաքներում հայոց առաջնորդներ կան, նահանգապետ փաշաներ կան, և ժողովուրդն առաջնորդարանի միջնորդությամբ կամ ուղղակի կարողանում է յուր բողոքները հասցնել Կ. Պոլիս: Բայց անկյուններում, այսինքն՝ կենտրոնական քաղաքներից հեռու գտնված տեղերում ավելի շատ և ավելի անգութ կերպով են կատարվում հարստահարությունները, բայց բոլորը կորչում են անհայտության մեջ: Որովհետև այն կողմերի թշվառ ժողովուրդը մինչև անգամ չգիտե, թե Կ. Պոլսում պատրիարքարան կա, սահմանադրություն կա, և ինքն կարող է այնտեղ դիմել:

Կ. Պոլսի պատրիարքարանն յուր թույլ սահմանադրական վարչությամբ մինչև այսօր չէ կարողացել յուր պաշտպանությունը այնքան տարածել, որ կարողանա Ասիական Տաճկաստանի բոլոր հայ ժողովրդականության վրա ազդել: Եվ այս պատճառով ժողովրդի և ազգային վարչության կենտրոնի մեջ փոխադարձ հարաբերության կապեր չեն կազմվել: Ես անձամբ առիթ եմ ունեցել լսել թշվառ հայի գանգատներն յուր դրության վրա, երբ նրան ասում ես, թե ինչու չես բողոքում, սովորական պատասխանը լինում է. «Ո՞ւմը բողոքեմ...» Թշվառականը չգիտե մինչև անգամ, թե հանցավորների համար դատարաններ կան. նա ճանաչում է մի դատարան միայն, այն է՝ երկինքը...

Եվ ի՞նչ հարկ կա բողոքելու, քանի որ ժողովուրդը փորձված է և գիտե, որ յուր գանգատներով ավելի վատթարացնում է յուր վիճակը: Որովհետև բողոքներն թե՛ պատրիարքարանի և թե՛ Բարձ. Դռան կողմից որևիցե բավականություն չգտնելով, այսպիսով ավելի վստահություն տված են լինում հարստահարողին՝ հարատևել յուր չարագործու-

թյունների մեջ։ Այսպիսով ավելի զգացվում է բնակալի վրեժխնդրությունը, և եթե նա առաջ փոքրիշատե երկյուղ ուներ դատաստանից, այնուհետև բոլորովին միամտանում է և ավելի վստահությամբ ընկնում է տանջել յուր զոհերը։ Այս դրության մեջ հային մի ելք է մընում, այն է՝ խոնարհվել յուր թշնամու անգթությունների առջև և բոլորովին անձնատուր լինել նրա կամքին...

Ահա այստեղից է առաջ գալիս այն դրությունը, որ նկատվում է պատրիարքարանի արձանագրություններից. ամբողջ հայոց գյուղորայք և մինչև անգամ վանքերը ու եկեղեցիները քուրդ դերեբեկիներին, թուրք բնակալներին և ազդեցություն ունեցող մուֆթիներին ու շեյխերին հարկատու են դառնում։ Դա մի ակամա հարկատվություն է, որ ժողովուրդը ճարահատյալ վճարում է յուր հարստահարողին, որպեսզի նրան հանգիստ թողնե։ Այսպիսով ժողովրդի վրա ծանրանում է երկու տեսակ հարկատվություն, մինը՝ տաճկաց կառավարությանը, մյուսը՝ քուրդ կամ թուրք դերեբեկիներին և ինքնիշխան բնակալներին։ Այս վիճակին ենթարկվում է ոչ միայն մի ամբողջ հասարակություն, այլև մասնավոր անձինք (մանավանդ երբ փոքրիշատե ունևոր են) մտնում են այս և այն ազդեցություն ունեցող թուրքի և քրդի հովանավորության ներքո, որպեսզի ուրիշները նրանց չվնասեն։ Բայց այս պաշտպանությունը շատ թանկ է նստում. պաշտպանյալը թե՛ յուր կայքով և թե՛ յուր պատվով դառնում է յուր ազայի գերին։ Դա մի կամավոր ստրկություն է, որով անզորը հպատակում է հզորին և դառնում է նրա կամքի բոլորովին կրավորական առարկա... Դա ճորտության սկիզբն է, որի տխուր օրինակները տեսնվում են նաև պատրիարքարանի արձանագրությանց մեջ։ Մոզաց կողմերում Տինիս ավանի բեգերն անզային հայ գյուղացիներին որպես ճորտ և գերի իրանց մեջ վաճառում են...

* * *

Տաճկաստանի բարձր կառավարությունը նկատելով, որ քրդերի և ուրիշ վայրենի ցեղերի բարբարոսություններն առաջ են գալիս նրանց թափառական կյանքի բնավորությունից, վերջին ժամանակներում ըսկսեց աշխատել, որ նրանք թողնեն չվական կյանքը, թողնեն խաշնարածությունը և հաստատ բնակություններ ունենան և սկսեն պարապել հողագործությամբ։ Կառավարությունն այս դրության մեջ մտածում էր զսպել քրդերին և ուրիշ վայրենի ցեղերին։ Նպատակը վատ չէր, բայց

նա սխալվեցավ գործադրության մեջ։ Որովհետև փոխանակ քրդերին Հայաստանի լեռներից հալածելու և նրանց Տաճկաստանի մի անբնակ կողմում (որպես են Միջագետքի և Ասորեստանի անապատները) գաղթեցնելու, կառավարությունը նրանց թույլ տվավ հենց Հայաստանում իրանց համար բնակության և մշակության տեղեր բռնել։ Բայց ո՛րպես

Հողերը հայերի ձեռքումն էին գտնվում, պապերից և հայրերից մնացել էին որպես ժառանգություն։ Քուրդին դժվար էր փողով հայից հող գնել. որովհետև նա սովորած էր ամեն ինչ բռնությամբ խլել հայից, ինչ որ նրան պետք էր։ Այսպես էլ արեց։ Այստեղից առաջ եկավ հարստահարության մի նոր խնդիր, այն է՝ հողային *կամ* կալվածական *խնդիրը։*

Պատրիարքարանի առաջին «Տեղեկագրերի» արձանագրության մեջ, այսինքն՝ մինչև 1872 թվականը, հողային կամ կալվածական խնդիրների մասին ամենևին հիշատակություններ չկան։ Կնշանակե, մինչև վերոհիշյալ թվականը հայերն իրանց հողերի և այլ կալվածների տերն էին։ Դա այն ժամանակին է վերաբերում, երբ քրդերն բոլորովին չվական կյանք էին վարում և սակավին հողի հետ գործ չունեին։ Բայց երբ կառավարության հրամանով նրանք սկսեցին փոքր առ փոքր հաստատ կացություն հիմնել, շատ բնական էր, որ պետք է ծագեր հողային խնդիրը։

Այս խնդիրը, որպես ասեցինք, երևան է գալիս 1872 թվականից հետո, և պատրիարքարանի երկրորդ «Տեղեկագրերի» արձանագրության մեջ մենք գտնում ենք նրա հիշատակությունը։ Մինչև այսօր հայերի միայն շարժական կայքը հափշտակող քրդերն ու այլ վայրենի ցեղերն, այնուհետև սկսում են ձեռնամերձ լինել նրանց անշարժ կայքերին։ Նրանք զանազան գավառներում հայերից հափշտակում են մինչև 263 գյուղորայք իրանց պատկանած հողերով։ Գավառների և գյուղերի, նաև հափշտակողների անունները միըստմիոջե գրված են «Տեղեկագրերի» մեջ։ Հիշյալ գյուղերից շատերի հայ բնակիչներին քրդերն բոլորովին արտաքսում են և կալվածները սեփականում են իրանց։ Բայց գյուղերի մեկ մասի բնակիչներին իրանց տեղն են թողնում, միայն հողերը նրանց ձեռքից խլելով, իրանք դառնում են կալվածատեր։ Եվ այսպես հայերին հպատակեցնելով՝ քրդերն նրանց հայրենական հողը իրանց մշակել են տալիս, տուրք և տասանորդ են առնում և մինչև անգամ բերքի մի մասն իրանք են առնում։ Բացի հիշյալ 263 գյուղերից և ագարակներից քրդերի ձեռք են անցնում Սղերդի գավառի, Ջարսան-

չակի գավառի և Զարշամբայի գավառի բազմաթիվ հայաբնակ գյուղերի կալվածները, որոնց անունները նշանակված չեն։

Քրդերը չեն բավականանում հայերի միայն անձնական կալվածներով, նրանք սկսում են տիրել նաև վանքային կալվածները. և 21 վանքերի ընդարձակ հողերը զոհ են դառնում նրանց հափշտակությանը։

Նաև վանքերից շատերը քարուքանդ են անում և բոլորովին ջնջում են նրանց հիշատակը...

Պետք է ի նկատի ունենալ, որ հիշյալ հափշտակությունների մեջ խառն են՝ ոչ միայն քրդերի հասարակ ժողովուրդը, այլ գլխավորապես նրանց բեգերը, հոգևոր շեյխերն ու մուֆթիները և թուրք աղաները, բացի դրանցից և զանազան պաշտոնակալներ, որոնք իրանց բռնակալության հետ միացրած ունեն և պաշտպանություն կառավարության կողմից։

Բարձր կառավարությունը փոխանակ հիշյալ հափշտակությունների առաջն առնելու, փոխանակ հայ ժողովրդի բողոքները լսելու, խիստ անտարբեր կերպով է նայում այս անիրավությունների վրա։ Կարծես թե նա ավելի ուրախ էր, որ այդպես էր լինում։ Նա մտածում էր, թե հայը իմ հլու հպատակն է, նա եթե հող էլ չունենա, դարձյալ յուր գլուխը կպահե. բայց ապստամբ քրդին պետք է մի կերպով կապել երկրի հետ, որ նա չշարժվի...

Այս կարծիքն առանց ապացույցի չէ, քանի որ տեսնում ենք, որ հայերին պատկանող կալվածների մեծ մասն ինքն կառավարությունը հափշտակելով, տալիս է մահմեդականներին[1]։ Եվ որպեսզի յուր անիրավությանը մի օրինական ձև տա, նա հնարում է թափուի խաքեական օրենքը։ Այս օրենքի հիման վրա ամեն հող, որ մնացել էր մի քանի տարի անմշակ, նա համարվում է մահլուլ, այսինքն՝ անտեր և կառավարությանը պատկանող։ Այսպիսի հողերն ինքն կառավարությունը գրավելով, շատ չնչին գնով արձանագրում է մահմեդականների վրա և նրանց անունով թափուի կալվածագիր է տալիս։ Այսպիսով հայերը կարող էին զրկվել իրանց կալվածների մեծ մասից, ահա՛ պատճառը։

---

[1] Կառավարության հափշտակած հողերը բոլորովին տարբեր են այն գյուղորայքից, որոնց մասին հիշեցինք։ Եվ թափուի օրենքը այնքան խառնիճաղանջ մի բան է, որ ամբողջ հոդվածներ պետք են բացատրելու այս խորամանկ կալվածական օրենքի մանրամասնությունները, որով հողը անունով միայն պատկանում է այս և այն մարդուն, բայց իսկապես նա տերության սեփականությունն է։

Ընթերցողը գուցե հիշում է, որ հայերը հարկահանների և տասանորդի կապալառուների հարստահարություններից ստիպված, շատ անգամ իրանց հողերն անմշակ թողնելով, գաղթում են դեպի Կ. Պոլիս կամ մի այլ քաղաք, համալությունով և ուրիշ տաժանական աշխատությունով հաց վաստակելու։ Հողը մնում է անտեր, թեև գաղթականի կամ պանդուխտի ընտանիքը մնացել էր հայրենիքում նույն հողի մոտ, բայց նա կառավարության հայացքով անտէր է համարվում, քանի որ մշակող չունի։ Ի նկատի ունենալով Ասիական Տաճկաստանի այնքան բազմաթիվ հայ գաղթականները, որոնցից միայն 45 հազար հոգի Կ. Պոլսում է գտնվում, շատ հասկանալի էր, թե որքան հայերին պատկանող հողեր մնացած կլինեն անտեր և անմշակ։ Այսպիսի հողերը տերությունը մահլուլ համարելով, տալիս է մահմեդականներին, և թշվառ հայը պանդխտությունից վերադառնալով, գտնում է իրան զրկված այն միակ հայրական ժառանգությունից, որ նրա վերջին հույսն էր։

Տաճկաց կառավարությունը չէ խնայում մինչև անգամ վանքային և եկեղեցական կալվածներին. վանքը և եկեղեցին նրա օրենքով մի վերացական անձնավորություն է, նա չէ կարող կալվածատեր լինել։ Եվ հայ բարեպաշտների երկար դարերից հետե իրանց նվիրական տեղերին ընծայած հողերը, որոնցով ապահովված էր վանքերի գոյությունը, ընկնում են մահմեդականների ձեռքը։ Պետք է գիտենալ հայոց վանքերի այն բազմաթիվ քանակությունը Ասիական Տաճկաստանում, պետք է գիտենալ, թե որքան ընդարձակ տարածությամբ տեղեր պատկանում էին վանքերին, որպեսզի հասկանալի լինի ազգային հարստության այս մեծ կորուստը։

Հայը Հայաստանում հազարավոր թշվառություններ կրելով, և ամեն տեսակ հարստահարությունների համբերելով, մի բանով միայն մխիթարում էր իրան, թե նա յուր հայրերի քրտինքով սրբված հողի տերն է։ Բայց այս մխիթարությունից ևս զրկվեցավ նա։ Մի կողմից քրդերը բռնությամբ խլեցին նրա ձեռքի հողը, մյուս կողմից, ինքը՝ կառավարությունը հափշտակելով, հանձնեց մահմեդականներին։ Էլ ի՞նչ մնաց։

— Հայի ապագան Տաճկաստանումն է,— ասում են կարճատեսները։ Մենք չենք հասկանում, թե ինչ ապագա կարող է լինել մի երկրում, ուր կյանքի և կայքի ապահովություն չկա։ «Հետո լավ կլինի…», եզրակացնում են կարճատեսները…

Ով որ չէ խոստովանում մահմեդականության կլանող և ոչնչաց-

նող բնավորությունը, նա ուրանում է պատմությունը, բայց ուրանալ պատմությունը, նշանակում է ուրանալ ճշմարտությունը։

Որևիցե ժողովրդի համար ոչինչ բախտավոր ապագա գուշակել չէ կարելի, քանի որ նրա ապրուստի պահանջները հաստատուն հիմքերի վրա կայացած չեն, քանի որ նա թե՛ նյութապես և թե՛ բարոյապես մաշվում է և կլանվում է մի ուրիշ և ավելի զորեղ տարրից։ Ասիական Տաճկաստանի հայը ապահովված դրություն չունի, և դրա մեծ ապացույցն այն է, որ նա յուր տան մեջ ապրուստ ճարել չէ կարողանում, և ինչ որ էլ վաստակում է, նրա ձեռքից խլում են, և նա միշտ մնում է աղքատ ու սոված և միշտ ստիպված է պանդխտության մեջ հաց որոնել։ Տաճկաստանի հայը երերյալ և տատանյալ վիճակի մեջ է ապրում։ Այսպիսի տունկը արմատ ձգել կարող չէ և շուտով կչորանա...

Մենք ունենք Ասիական Տաճկաստանում ժողովրդի երկու դասեր՝ վաճառականներ և հողագործ մշակներ, վերջինը թե՛ յուր բազմությամբ և թե՛ յուր բարձր նշանակությամբ կազմում է այն, որ կոչում ենք ամբոխ: Վաճառականն յուր տանը հանգիստ չէ. նա միշտ թափառում է յուր շահերի ետևից. նա այնտեղ է, ուր նրա շահերն են գտանվում։ Վաճառականը հայրենիք չունի, նրա հայրենիքն այնտեղ է, ուր արծաթ կա։ Վաճառականը հասարակաց շահերի համար չէ մտածում. նա եսական է։ Մնում է մշակ դասը, որ հասարակության գլխավոր ուժն է կազմում. նա յուր հայրենի երկրում հանգստություն և ապրուստ չգտնելով, յուր կյանքը նույնպես պանդխտության մեջ է անցկացնում, և նրա ամուր ձեռքերը, որ հայրենի հողը պետք է մշակեին, մեծ քաղաքներում զբաղվում են ստոր և ծառայական պարապմունքներով։ Եվ մշակը, արդար երկրագործը, ժողովրդի պարենը հայթայթողը դառնում է համալ, բեռնակիր, գրաստ...

Եվ այսպես Ասիական Տաճկաստանի ժողովրդականության մեծ մասը գաղթականության մեջ է ապրում։ Մի դաս միայն մինչև այսօր մնում էր անշարժ. դրանք էին վանքային աբեղաները։ Բայց երբ վանքերն ենթարկվեցան նույն վիճակին, որպես ժողովուրդը, երբ նրանք էլ զրկվեցան կալվածներից՝ իրանց գլխավոր հարստությունից, այն ժամանակ վանքային միաբանությունները նույնպես ցրվել սկսան, և հայոց նվիրական տեղերը մնացին ամայի։

Հողային կամ կալվածական խնդիրը Ասիական Տաճկաստանի հայոց հարստահարությունների մեջ ամենագլխավոր խնդիրն է։ Այս խնդրի նշանակությունն այնքան բարձրանում է, որքան մենք մտա-

ծում ենք, թե տաճկաբնակ հայերի մեջ գաղթականությունը դադարեցնելու և ժողովրդին հայրենի հողի վրա ապահով կյանք վարելու միակ միջոցը հանգիստ երկրագործությունն է: Բայց ցավում ենք, նկատելով, որ այդ խնդիրը խիստ աննշան տեղ է բռնում պատրիարքարանի «Տեղեկագրքի» մեջ, և պատրիարքարանը յուր տասնևյոթնամյա սահմանադրական վարչությամբ շատ փոքր ուշադրություն է դարձրել դրա վրա և համարյա զանցառություն է արել կալվածական խնդիրը, այն խնդիրը, որ հայի կյանքի և մահու խնդիրն է: Այս խոսքերը զրպարտություն չեն, քանի որ մենք աչքի առջև ունենք պատրիարքարանի արձանագրությունները: Ամբողջ «Տեղեկագրքը», որպես հիշած ենք, պարունակում է յուր մեջ պատրիարքարանի 25 տարվա գործունեության շրջանը, այս 25 տարվա մեջ կալվածական հարստահարությունների մասին պատրիարքարանի կողմից, մենք տեսնում ենք միմիայն մեկ հատ բողոքագիր, որ 1875 թվին հունվարի 3-ին մատուցված է Բարձ. Դռան, այն ևս բավականություն չէ գտել, և պատրիարքարանը լռել է այնուհետև[1]... Որով, ընդհակառակն, տեսնում ենք, Կիրակոսի աղջիկը մահմեդականներին առևանգել են, կամ Մարտիրոսի ոչխարները գողացել են, և կամ այսինչ եկեղեցու խաչը թուրքերը շան վզից քարշ տալով փողոցները ման են ածել: Այսպիսի սկանդալներ տարիներով պատրիարքարանի և Բարձ. Դռան մեջ բանակցության նյութ են դարձել... Մենք չենք ասում, թե դրանց մասին պետք էր լռել, բայց և ոչ պետք էր այնքան կարևորություն տալ, որովհետև այսպիսի մասնավոր դեպքերը պատահական են, այսօր կարող են լինել, իսկ վաղը՝ ոչ: Բայց երբ մահմեդականները գավառների ամբողջ հայ գյուղորայքը իրենց են սեփականացնում, դա է գլխավոր կենսական հարցը, որովհետև դրանով մի ամբողջ հասարակություն թե՛ նյութապես և թե՛ բարոյապես մահանում է և սերնդից սերունդ զրկվում է հացից և հետևապես կյանքից... Բայց պատրիարքարանի ուշադրությունը չէ գրավում այս հարցը...

---

[1] Պատրիարքարանի ձեռքով վերջին անգամ որպես Տաճկաստանի հայ ժողովրդյան կողմից մեծ եպարքոսին (սադրեզամին) մատուցված խնդիրների կարգում դարձյալ ընդհանուր հողային խնդիրը մոռացված էր. այնտեղ հիշված էր միայն եկեղեցական և վանքային կալվածների հարստահարության մասին: Մենք զարմանում ենք, եթե Շահ-Հուսեյնի նման մի մասնավոր անձի պաշտոնանկությունը և նրա յուր հայրենիքից տարագրվելը կարող է հասարակական հարց դառնալ, որքան առավել հողային խնդիրը պետք էր գրավեր ս. պատրիարքի ուշադրությունը:

Այս նկատողություններից հետո մենք հասնում ենք այն տխուր եզրակացության, թե Կ. Պոլսի պատրիարքարանը և այն, որ կոչվում է ազգային սահմանադրություն, որքա՜ն դատարկ բաներով են զբաղված եղել և որքա՜ն սակավ հասկացել են ազգի և ժողովրդի իրական պետքերը... Պողոս վարդապետի գործը, Սսի և Աղթամարա կաթողիկոսների խնդիրները, Կ. Պոլսի ազգային սահմանադրությունը յուր գոյության ամբողջ ընթացքում ծամծմեց, կլկլեց, և համարյա յուր ժամանակի ամենամեծ մասն այսպիսի աննպատակ վիճումների մեջ անցկացրեց, բայց մի անգամ էլ չմտածեց, թե Կ. Պոլսի թռւլամբարներում պառկող 45 հազար վանեցի, մշեցի և այլ գավառական համալները ինչո՞ւ համար են թողել իրանց հայրենիքը։

Թեև մեզ հայտնի էին պոլսեցոց թեթևամտությունները, թեև մենք գիտենք, որ նրանք երևակայությամբ են ապրում և ամենևին իրական կետի վրա կանգնած չեն, այնուամենայնիվ Կ. Պոլսի պատրիարքարանի և նրա սահմանադրական վարչության մասին մինչ այս աստիճան աննպաստավոր կարծիք չունեինք։ Բայց պատրիարքարանի «Տեղեկագիրքը» երևան հանեց նրա բոլոր ոչնչությունը։ Եթե Տաճկաստանի այժմյան հանգամանքներն առիթ չտային, գուցե մենք երբեք չպիտի տեսնեինք այս «Տեղեկագիրքը». գուցե պատրիարքարանը մինչև հավիտյան պիտի ծածկեր յուր խայտառակությունը, միշտ ինքն իրան խաբելով և միշտ ազգին ցույց տալով, թե մեծ գործ է շինում...

Շատ ժամանակ չէ, որ հրատարակվեցավ այն մեծ խաբեությունը՝ պատրիարքարանի երևելի շրջաբերականը, որի մեջ մոտ 4 միլիոն ժողովրդի ներկայացուցիչը հայտնում էր, թե նա գոհ է «բարեխնամ կառավարությունից»։ Եվ այդ գոհությունը հայտնում էր 25 տարվա ընթացքում հազարավոր անիրավությանց դեմ միշտ բողոքող և ոչինչ բավականություն չստացող ժողովրդի հոգևոր գլուխը։ Զարմանալի՜ աչքակապություն...

Արդեն ընթերցողը տեսավ, որ պատրիարքարանի կողմից գավառական հարստահարությանց մասին Բարձ. Դռան մատուցած խնդիրները (թաքրիրները), համարյա ոչ մեկն յուր նշանակությանը չէ հասել, կամ մնացել է առանց պատասխանի, կամ թողնվել է առանց հետևանքի, կամ եթե Դռնից հրամանագիր է ստացվել, այն էլ գավառների պաշտոնակալները գործի չեն դրել. այսպես բոլորն անցել են ապարդյուն... Այստեղից հասկացվում է, թե ինչ նշանակություն ունի հայոց պատրիարքարանը Բարձ. Դռան առջև և ո՜ր չափով Դուռը հոգս է տանում ոչ-մահմեդական ազգերի ապահովության մասին։

Այս այսպես լինելուց հետո մենք պատրիարքարանին հրաշքներ գործել տալու իրավունքն չունենք։ Բայց մեզ զարմացնում է մեկ բան. արդյոք ինչո՞վ էր պարծենում Կ. Պոլսի ազգային սահմանադրությունն յուր 17 տարվա գոռում-գոչումներով, յուր ուրախ կեցցեներով...

Այժմ հասկացանք...

Կ. Պոլսի ազգային սահմանադրությունն ուրիշ ոչինչ չէ եղել, բայց միայն մի մանկական խաղալիք, որ խորամանկ դայակը տալիս է երեխայի ձեռքում, որ նա հանգիստ մնա, որ նրանով զբաղվի, չարություն չգործե... Եվ Կ. Պոլսի աղայամիտ էֆենդիները շատ գոհ և ուրախ էին այս խաղալիքով, և ամեն տարի Բոսֆորի ափերի մոտ տոնում էին ողորմելի պատրանքը...

Տաճկաց կառավարությունը շատ լավ է ճանաչել յուր հպատակ ազգերի բնավորությունը, նա գիտե, թե ամեն մեկին որպես պետք է խաբել։ Այժմ պատրաստել է նա մի ավելի վիթխարի խաղալիք յուր հպատակների ձեռքը տալու համար՝ յուր պետության մեջ ընդհանուր սահմանադրական վարչություն։ Երկու խոսքով կհայտնենք մեր կարծիքը. «Օձը յուր շապիկը կփոխե, բայց խասիաթը էլի այն կմնա...»։

Հոդվածս վերջացնելու վրա էի, ստացա մի նամակ, որ վերաբերում էր Վանա հրդեհին. նամակագիրը վանեցի ծանոթներիցս մեկն էր, որ անձամբ ականատես է եղել անցքին։ Թեև Կ. Պոլսի և Թիֆլիսի լրագրներում հրատարակություններ եղան այդ մասին, բայց տեղեկությունները թերի լինելով, հարկավոր համարեցինք այս կտորը որպես հավելված կցել մեր հոդվածի հետ։

Վանա հայերի մեծ մասը բնակվում են Այգեստան կոչված արվարձանում, որ հեռու է բերդից, այսինքն՝ բուն քաղաքից, մի քանի ժամվա ճանապարհով։ Այգեստանցիք, թե՛ վաճառականներ և թե՛ արհեստավորներ, խանութներ ունեն բերդի մեջ, վաղ առավոտյան գալիս են քաղաքը, մինչև երեկո զբաղված են առևտուրով և արևը մտնելուց հետո դառնում են իրանց տները։ Խանութները մնում են նասաների հսկողության ներքո։

Հրդեհից մի քանի շաբաթ առաջ քուրդ բեգերից մեկը բարեկամաբար հայտնում է յուր ծանոթ հայերին, թե այս օրերում մահմեդականների կողմից ձեզ սպառնում է մի մեծ վտանգ։ Հայերն առանց այս խոսքը լսելու էլ ամեն րոպե սպասում էին, թե Թուրքերը պետք է կոտորեն նրանց, որովհետև Աբդուլ-Ջեթթահ բեկ չարագործը Տիգրանակերտից վերադառնալով, դեռ վաղուց բոլոր հայերը կոտորելու հրավեր կարդացած էր։

Հույն յուր կյանքից առաջ մտածում է յուր հարստության մասին, որովհետև վերջինը թանկագին է նրա համար։ Այս սպառնալիքները լսելով, հայերը ոչնչով չեն պատրաստվում զալու վտանգի առաջն առնելու, այլ աշխատում են մի կերպով ազատել իրենց իրեղենները։ Այդպատճառով հայերը իրանց տներում գտնված թանկագին իրեղենները տանում են քաղաքը և հավաքում են իրանց խանութներում, մտածելով, թե այնտեղ ավելի ապահով կմնան, որովհետև բերդի մեջն է, այնտեղ զինվորներ կան, ոստիկանություն կա և այլն։ Եվ այսպես հայերի բոլոր հարստությունը կենտրոնանում է շուկայում։

Գիշերով հասասները նկատում են, որ զանազան կողպած խանութներից այստեղ և այնտեղ մուխ է դուրս գալիս, հասկանում են, որ կրակ կա։ Նրանք շտապում են խանութատերերին իմացում տալու, բայց ոստիկանությունն արգելում է։ Նույն միջոցին բերդի զորանոցի գլխին լսելի է լինում փողի ձայն. իսկույն զինվորներով շրջապատվում է շուկան։ Զինվորների մեկ մասը բռնում է փողոցների մուտքը և չէ թողնում հայերին, մինչև անգամ խանութատերերին մոտենալ հրդեհի տեղը, իսկ մյուս մասը սկսում է կոտրել խանութների դռները, ոչ միայն նրանց, որոնցից կրակի նշույլներ էին երևում, այլև այն խանութների, որոնք շատ հեռու էին հրդեհից։ Վերջինների մեջ իրանք զինվորները կրակ են ձգում և մի քանի ժամվա մեջ ամբողջ շուկան բոցավառվում է հրդեհի մեջ։

Բայց ի՞նչ են լինում ապրանքները։

Մեծ մասը զինվորներն ու ոստիկանությունը կողոպտում է։ Եվ դեռ հրդեհը բոլորովին չճարակված, շուկայում հայտնվում է մի խառնիճաղանջ բազմություն՝ թուրք, քուրդ և այլ գյուղացի մահմեդականներ. դրանք, որպես երևում է, առաջուց տեղեկություն ունեին պատահելու անցքի մասին և շրջակա գյուղերից հավաքվելով՝ ցերեկով թաքնված են եղել թուրքերի տներում, և զինվորներից ու ոստիկաններից մնացած ապրանքը դրանք են հափշտակում։ Մահմեդականների առջև բաց է լինում կողոպուտի ասպարեզը, մոտ չեն թողնում միայն հայերին։ Նամակագիրը ավելացնում է, թե քաղաքի հարուստ հայ վաճառականներից մեկը մինչև անգամ առաջարկում է 500 լիրա զինվորական գլխավորին, որ իրան թույլ տան յուր խանութից ազատել միայն հաշվի գրքերը և այլ թղթեր, դարձյալ մոտ չեն թողնում։ Այդպատճառով հայերը հրդեհի մասին ոչինչ չեն հասկանում, որովհետև հեռու էին, իսկ այն հայերը, որ բերդի մեջն են բնակվում, նրանց էլ մոտ չեն թողնում։

Եվ այսպես, ապրանքներից ինչ որ թանկագին էր, բոլորը հափշտակվում է, բայց ինչ որ անպետք էր, կրկին ձգվում է կրակի մեջ։ Եվ որպեսզի հրդեհը հաջող կերպով ճարակվի, ավելացնում են նրա վրա հեշտ վառվող նյութեր, որպիսի են՝ վառոդ, նավթ և այլն։ Կողոպտված ապրանքները մասամբ թաքցնում են թուրքերի տներում և մասամբ կրում են դեպի մոտակա գյուղերը։ Այն գիշեր Ավանց գյուղի նավահանգստի մեջ կանգնած են լինում մի քանի նավակներ, հատկապես այն նպատակով։ Ընդամենը կողոպտվել են 2000 խանութներ, որոնցից 1300-ը կրակից բոլորովին զերծ են մնացած, միայն դռները խորտակել են, իսկ 700-ը այրվել է։ Այս խանութներն ըստ մեծի մասին պատկանում են հայերին, բայց նրանց թվում գտնված թուրքերի խանութները նամակագրի կարծիքով առաջուց դատարկված են եղել։

Նամակագրի կարծիքով այս անցքը պատահական չէ, այլ առաջուց խորհված և տնօրինված մի դավադրություն է, որի գաղտնիքը պահված է եղել զինվորական պաշտոնեության և տեղային կառավարության երեսելի անձինքների մեջ։ Եվ գյուղացի կամ քաղաքացի մահմեդականները, դավադրության հոտը առնելով, նշանակյալ գիշերը հավաքված են եղել, որ իրանք էլ մասն ունենան ընդհանուր կողոպուտից։ Եվ Թուրքբեկի հրդեհից մի քանի շաբաթ [առաջ] հայտնված նախազգուշությունն ուրիշ նպատակ չէ ունեցել, բայց միայն այն, որ հայերը, երկյուղ կրելով, նաև իրանց անձնային հարստությունը հավաքեն շուկայում։ Որովհետև հայ հասարակությունը, թեև մահմեդական ամբոխից կասկածներ ուներ, բայց նա կառավարությունը և նրա զինվորական ուժը միշտ յուր պաշտպան էր համարում։ Այս պատճառով շուկան նրա ապահով տեղն էր, դրված լինելով ոստիկանության և հասանների հսկողության ներքո և շատ մոտ էր զինվորանոցին, յուր բերդի մեջը գտնվելովն։

Թեև նամակագրի ենթադրությունը դեռևս չապացուցված մի կարծիք է, այսուամենայնիվ, մի քանի փաստեր հաստատում են այս կարծիքը, թե հրդեհը մի հնարած պատրվակ է հափշտակության մեղադրանքը նրանով ծածկելու համար։ Հրդեհից մի քանի օր առաջ զինվորները գնելիս են եղել մոմպատներ և այլ վառվող նյութեր։ Եվ նույն գիշերվա երեկոյան պահուն, երբ պատահել է հրդեհը, զինվորներից շատերն՝ այս և այն խանութին մոտենալով, ձևացրել են, թե բան են գնում (ճիշտ այն ժամանակ, երբ խանութպաններն իրանց կրպակները կողպելիս են եղել) և աննկատելի կերպով խանութներում այրվող բաներ են ձգել։ Նամակագիրը բերում է մի արդեն հայտնված ապացույց

յուր խոսքերին, իբր թե մի վաճառական, երբ խանութը կողպելու վրա էր, մտնում են նրան երկու զինվորներ, նրանցից մեկը խնդրած ապրանքն յուր ձեռքն առածի պես փախցնում է, խանութպանը նրա ետևից վազելով, կամենում է բռնել և ապրանքը ետ առնել, նույն միջոցին մյուս զինվորն, որ մնացել էր խանութի մոտ, մի փաթաթած բան ձրգում է նրա մեջ և հեռանում է։ Վաճառականը վերադառնալով յուր խանութը, գտնում է այնտեղ մի կտավի կտորի մեջ փաթաթած շիկացրած ածուխի կտորներ, որ արդեն սկսել էր վառել յուր փաթոթը և ընկած էր բամբակյա գործվածքների մեջ։

Մյուս և ավելի կասկածանք հարուցանող փաստն այն է, որ հափըշտակության գլխավոր գործիչները, որ եղել են զինվորները, հրդեհի առավոտը փոխում են և հեռացնում են քաղաքից, նրանց տեղը բերելով նորերին։ Այս փոփոխությունն այլ նպատակ չունի, եթե ոչ ավազակների հետքը կորցնել և Տաճկաստանի այժմյան զինվորական խառնվության մեջ թաքցնել չարագործները։

Նամակագրի կարծիքով, այս անցքն առանց նպատակի չէ եղել. իբր թե տաճկաց կառավարությունն յուր այժմյան տագնապի մեջ կասկած է ունեցել Վանա հայերից, չլինի թե ռուսների հետ պատերազմ ծագելու միջոցին նրանք թշնամուն ձեռնտվություն անեն, և այս պատճառով մտածել է առաջուց նյութապես տկարացնել նրանց։ Մեր կարծիքով, այս ենթադրությունը անտեղի է, որովհետև տաճկաց կառավարությունը շատ լավ է ճանաչում հայերին, նա գիտե, թե որքան ընտելացած են հայերն յուր բռնակալությանը, նա գիտե, թե որպիսի սիրտ են կրում հայերը... Մենք նայում ենք այս անցքի վրա որպես մի խորամանկությամբ հնարված հափշտակության վրա, ավելի ոչինչ։

Ընդհանուր վնասի մասին նամակագիրը դժվարանում է հաշիվ տալ, բայց կարծում է, թե շատ մեծ պետք է լինի, քանի որ Վանա վաճառականությունը հայերի ձեռքումն է, և Վանը իր շրջակա գավառների առևտրական կենտրոնն է։

Վանա հրդեհի անցքի մեջ նկատվում է միևնույն երևույթը, ինչ որ տեսանք գավառների բոլոր հարստահարությանց մեջ, ուր սպանությունններն ամենափոքր թվանշաններն էին կազմում։ Այստեղ ևս ոչ մի սպանություն չէ պատահում, երևում է, որ հայերն իրանց ճակատագրական թուլասրտությամբ կանգնած նայելիս են եղել, թե որպես կողոպտում են իրանց... Բայց Վանա մեջ հայերն ավելի բազմաթիվ են, քան մահմեդականները... Բայց հայը կյանքի կռվի մեջ ունի յուր առանձին զենքերն յուր կորուստը դարձնելու համար։ Վանեցի հայերն հեռա-

գրում են իրանց Կ. Պոլսում եղած ընկերներին. «Մեզ այստեղ կոտորեցին, դուք էլ այնտեղ ումից որ ապրանք եք առած, փողը մի տվեք...»:

Վանա հրդեհի մասին գրածից ավելի գրել առայժմ անտեղի է, քանի որ գործը բոլորովին պարզված չէ։ Կ. Պոլսի լրագրների մեջ արդեն ծանուցված էր, թե Բարձ. Դռնից առանձին մասնաժողով նշանակված է այս անցքը քննելու համար։ Կսպասենք, մինչև մասնաժողովը յուր գործը վերջացնե, թեև համոզված ենք, որ ճշմարտությունը ոչ բոլորովին պիտի երևան ելնի։

ԴԱՎՐԻԺՈՒ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 20-ին առաջնորդարանի դահլիճում կայացավ Դավրիժու ազգային ընթերցարանի ընդհանուր ժողովը, յուր մեկ տարվա գործունեության հաշիվը ներկայացնելու և հաջորդ տարվա համար նոր տնօրինություններ անելու համար։ Ժողովին ներկա էին ընկերության հիմնադիր անդամները, ընթերցարանի բաժանորդ անդամները, այլև պարսից արքունական դպրոցի տեսուչ Միրզա-Աղա-խանը և այլ հանդիսականներ։

Նախ բաց արեց պ. Ա. Ղարաբեկյանը, Դավրիժու ազգ. դպրոցի հոգաբարձուներից մեկը։ Պ. Ղարաբեկյանը յուր ատենախոսության մեջ պատմականորեն բացատրեց ընթերցարանի մեծ նշանակությունը կրթության գործի մեջ։ Սկսելով Պտղոմեոս Ֆիլադելֆոսի մեծ մատենադարանից մինչև Ֆրանկլինի ընթերցարանը, պ. Ղարաբեկյանը ցույց տվեց, թե գրքերը և նրանց կարդալը որքան նպաստել են հասարակության զարգացմանը և նրա առաջադիմությանը։ «Գրքերի միջնորդությամբ,— ասաց նա,— ընթերցողը սկսում է խորհել և մտածել մարդկության երևելի հանճարների հետ. այն ժամանակ միայն նա դառնում է համաշխարհային քաղաքացի, որովհետև նրա և աշխարհի մեծ մտածողների մեջ կազմվում է մի ներքին մտավոր կապ»։

Պարոն Ղարաբեկյանից հետո խոսեց պ. Հ. Մելիք-Հակոբյանը, Դավրիժու ազգ. դպրոցի հայոց լեզվի և պատմության ուսուցիչը, միևնույն ժամանակ ընթերցարանի ընկերության ատենադպիրը։ Իր ատենախոսության մեջ պ. Մելիք-Հակոբյանը, նախ խոսելով բարեգործական նպատակով կազմված ընկերությունների վերա, բացատրեց այն միտքը, թե որպես այսպիսի հիմնարկություններն ամենափոքրից սկսելով, հետզհետե ընդարձակվում են, ուժ և զորություն են ստանում

և վերջապես հասնում են իրանց ամենաբարձր և վսեմ նշանակությանը: «Ինչ որ դժվար է մի անհատին գործել, այն հնարավոր է մի եռանդոտ ընկերության. ընկերությունը կենդանի և բաղադրյալ զորություն է, շատ մասնավորներից կազմակերպված, որ իրագործում է մեծամեծ հասարակային գործեր»:

Դառնալով Դավրիժու ընթերցարանի ընկերությանը, պ. Մելիք-Հակոբյանը բացատրեց նրա գլխավոր նպատակը: Այս նպատակը կայանում էր երկու բանի մեջ. նախ, տարածել ժողովրդի մեջ սեր դեպի ընթերցանություն և կրթել նրա միտքը, ծանոթացնելով ժամանակակից գաղափարների հետ: «Այս նպատակը ավելի գործնական կերպով իրագործելու համար,— ասաց ատենախոսը,— ընկերությունը միշտ աշխատել է բերել տալ այնպիսի գրքեր, որ ավելի մոտիկ են մեր հասարակության հասկացողությանը և նրա զարգացման աստիճանին: Եվ որպեսզի ընկերությունն յուր կողմից բանավոր կերպով նպաստած լիներ յուր ընթերցողներին ուղղություն տալու, նա զանց չէ արել յուր ընթերցարանին տալ մի տեսակ գրականական հանդիսարանի կերպարանք, ուր ձեռնհաս անձինք շատ անգամ կարդում են և մեկնում են ավելի կրթողական նշանակություն ունեցող հոդվածները որևիցե լրագրի կամ ամսագրի մեջ: Այսպիսի միջոցներում բարձրանում են հարցեր, ծագում են վիճաբանություններ, և մեր հաճախորդներն վարժվում են մտածելու և խոսելու մեջ»:

Գալով երկրորդ նպատակին, պ. Մելիք-Հակոբյանը ասաց. «Որովհետև մեր ընթերցարանը յուր նշանակությամբ կից է ազգային դպրոցի առաջադիմության հետ, այս պատճառով ընկերությունը միշտ ամեն ջանք ի գործ է դրել, որ ոչ միայն դպրոցի զարգացած աշակերտները շահվեին ընթերցարանի գրքերից, այլև ուսուցիչներն ևս իրանց աշակերտների վերաբերությամբ օգուտ քաղեին ընթերցարանից: Այս մտքով, երբ ընթերցարանի տնօրեն ժողովը կամեցել է օտար երկրներից գրքեր բերել տալ, միշտ հրավիրել է դպրոցի ուսուցիչներին՝ ցուցակը միասին կազմելու, որպեսզի նրանք հայտնեն, թե ինչ գրքեր ավելի պետք են իրանց և աշակերտների համար»:

Թե որքան է կարողացել իրագործել ընթերցարանը յուր հիշյալ երկու գլխավոր նպատակները, բավական է աչքի առաջ ունենալ նրա երկու տարվա առաջադիմությունը: Այն մարդիկ, որոնք առաջ զզվանքով էին նայում դեպի ընթերցանության գործը, այժմ անհամբերությամբ են սպասում փոստայի դուրս գալուն, որ նոր լրագրներ կարդան:

Այն մարդիկ, որոնք առաջ կարծում էին, թե աշխարհականի համար չէ կարդալը, և եթե պետք էր կարդալ, այն էլ մի աղոթքի գիրք լինելու էր, այժմ անկեղծորեն խոստովանում են, թե գրքերն իրանց մեծ բավականություն են պատճառում։ «Մի դաս միայն մեզանում մնացել է անտարբեր դեպի այն հասարակային օգտավետ գործը,— նկատեց պ. Մելիք-Հակոբյանը,— և դա է հոգևորական դասը։ Մեր քահանաները, որոնք ավելի պետք ունին ուսանելու և ուսուցանելու, ցավելով պետք է խոստովանեմ, որ մինչև այսօր չէ պատահել, որ նրանք ոտք կոխած լինեին ընթերցարանի շեմքի վերա»։

Պ. Մելիք-Հակոբյանի վերջին նկատողությունը յուր դեմ գրգռեց պ. Խիզանյանցին, ազգ. դպրոցի ռուսաց լեզվի և թվաբանության վարժապետին։ Այս պարոնը կամենալով նույն ժողովում ներկա գտնված մի նշանավոր տերտերի քթին խունկ ծխել, ասաց. «Բոլորովին անտեղի է պահանջել, որ քահանաներն էլ ընթերցարան հաճախեին, որովհետև ոչ մի երկրում ընդունված չէ, որ քահանաները ընթերցարանում մուտք գործեին (՞)։ Քահանաներն,— ասաց նա,— ունեն իրանց հոգևոր պարտավորությունները, որոնք ժամանակ չեն տալ ընթերցանության գործով զբաղվելու։ «Այս պատճառով,— ավելացրուց նա,— պ. Մելիք-Հակոբյանի նկատողությունը քահանաների վերաբերությամբ ոչ միայն անտեղի է, այլ միանգամայն կարող է վիրավորական համարվել»։

— Կեցցե՜ ատենախոսը...,— մռմռացին մի քանի խուլ ձայներ։

Թե մինչև որ աստիճան բթամիտ և հետադեմ մարդու կարծիքներ են հիշյալ խոսքերը, այդ ինքնըստինքյան հայտնի է։ Բայց ցավում ենք լսելով, թե այդ պարոնը Ներսիսյան դպրոցի աշակերտ է, և այս քաղաքը եկել է վարժապետի պաշտոնով, և այն առարկաների համար, որ այստեղ է սովորում... Մի՞թե այսպիսի հրաշքներ է պատրաստում Ներսիսյան դպրոցը...

Պ. Մելիք-Հակոբյանը յուր սովորական սառնասրտությամբ պատասխանեց. «Իմ նկատողությունը քահանաների վերաբերությամբ բոլորովին բարեմտությամբ էր. ես նպատակ չունեի ոչ ոքին վիրավորելու։ Եվ եթե քահանային ընթերցարան հրավիրելը կարող է վիրավորական համարվել, ուրեմն մենք այսպիսով վիրավորում ենք մեր ամբողջ հասարակությանը, երբ հորդորում ենք նրան դեպի ընթերցանություն։ Իսկ այն խոսքերին, թե ոչ մի երկրում ընդունված չէ քահանային ընթերցարան մտնել, ես ավելորդ եմ համարում պատասխանել, որովհետև երևում է, որ պարոնը շատ փոքր ծանոթ է, թե ինչ է գործ-

վում օտար երկրներում։ Բայց ես, կրկնելով իմ նկատողությունը, հանձն եմ առնում ավելի պարզել նորան»։

Այնուհետև պ. Մելիք-Հակոբյանը բավական երկար խոսեց քահանայի այժմյան նշանակության վերա, և թե որքան ետ են մնացել նրանք մեր դարու պահանջներից։ «Ուսումը, գիտությունը, ընթերցանությունը,— ասաց նա,— այժմ այնպիսի անհրաժեշտ կարիքներ են դարձել, որ նրանք պետք են ժողովրդի ամեն դասակարգին, թե՛ աշխարհական լինի և թե՛ եկեղեցական, և առավելապես վերջիններին, որովհետև նրանք են ժողովրդին առաջնորդողները և նրան բարոյական ուղղություն տվողները»։

Պարոն Ս. Ղարաբեկյանը, ավելի գործնական կետից նայելով այս հարցին, ավելացրուց. «Որովհետև մեր հասարակությունը տակավին այն նախապաշարմունքի մեջն է, որ սովորել է ամեն հոգեկան և մտավոր շարժողության մեջ հետևել յուր քահանայի օրինակին, այս պատճառավ ընթերցարանի հիմնարկությունը քահանաների վերա մեծ պարտք է դնում, որ նրանք ևս իրանց կողմից օգնած լինեին այս գործի առաջադիմությանը։ Ժողովուրդը ավելի վստահությամբ ընթերցարան կդիմի, երբ տեսնի, որ յուր քահանան ևս այնտեղ հաճախում է, նա այնուհետև կթողնի յուր սխալ կարծիքը (որպես շատերն մտածում են), թե ընթերցարանում կրոնի և հավատի հակառակ բաներ են կարդացվում։ Թողյալ այդ, ընթերցարանը ունի այժմ հարյուրի չափ կրոնական գրքեր, եթե մեր քահանաներին հաճելի չէր ուրիշ գրքեր կարդալ, նրանք կարող են օգուտ քաղել նույնիսկ կրոնական գրքերից։ Բայց մի՞թե քահանային լրագրներ կարդալը վնասակար է, մի՞թե նրանք չպիտի գիտենան մարդկության շարժողությունը, թե ի՞նչ են մտածում և որպե՞ս են գործում հասարակությունները։ Իմ կարծիքով, քահանային ավելի պետք է այս բաները գիտենալ, եթե նա հասկացել է յուր բարձր նշանակությունը»։

Այնուհետև տեր Միսրոպ Փափազյանը, ազգ. դպրոցի կրոնի ուսուցիչը, յուր համակրությունը հայտնելով հիշյալ վիճաբանություններին, յուր կողմից պաշտպանեց ընթերցարանի կարևորությունը և նրա օգուտները մանավանդ մի այնպիսի հասարակության համար, որպես են Պարսկաստանի հայերը։ Եվ յուր խոսքը վերջացնելով, արժանապատիվ հայրը առաջարկեց մի հանգանակություն Վանա հրկիզյալներին օգնելու համար։ Շատ ուրախալի է լսել մի քահանայի բերանից խրախույս և հորդոր դեպի առաջադիմություն, բայց ցավալին այն է, որ այս քահանան, ընթերցարանի եռանդոտ հաճախորդներից մեկը, տե-

ղացի չէ, տեղացի հինգ քահանաներից և ոչ մեկը մինչև այսօր ոտք չեն կոխել ընթերցարանի շեմքի վերա…

Բոլորից հետո խոսեց պարսից արքունական դպրոցի տեսուչ Միրզա-Աղա-խանը։ Եվրոպական կրթություն ստացած լուսամիտ երիտասարդը հայտնեց յուր խորին համակրությունը, ասելով, թե նա չէ կարող առանց ուրախության տեսնել, որ հայերը Պարսկաստանում ամենից առաջ ոտք են կոխում առաջադիմության շավղի վերա։ Ցանկություն հայտնեց, թե ավելի նպատակավոր կլիներ, որ ընթերցարանը միևնույն ժամանակ ծառայեր նաև պարսից մեջ կարդալու սերը տարածելու և ժամանակակից մտածողությունների հետ ծանոթացնելու։ Եվ խոստանալով, թե ինքն կաշխատե պարսիկներից ևս ընկերության անդամներ գտնել, նա յուր խոսքը վերջացրուց, քաջալերություն տալով ընթերցարանի ընկերությանը, որ նա չվհատի պատահած խոչընդոտներից, որոնք ամեն մի նոր և անսովոր գործի սկզբում անպակաս են լինում։

Հետո որ Մելիք-Հակոբյանը կարդաց ընկերության հաշիվը, որից երևաց, թե ընթերցարանը յուր երկու տարվա գործունեության մեջ բավական առաջադիմություն է գործել։ Նա ստացել է 804 գրքեր, և ընթերցարանի բոլոր կահկարասիները գնել են հետո, այժմ ունի տոկոսով տված մոտ 130 ռուբլի փող։ Եվ պարոնը միևնույն ժամանակ մի նոր խնդիր բարձրացրուց, թե ընթերցարանի կայարանը յուր փոքրության և ուրիշ անհարմարությունների պատճառավ շատ արգելում է գործի հաջողությանը, և ընկերությունը նպատակ ունի ազգ. դպրոցին կից փողոցի վերա կառուցանել մի նոր շինվածք, որ յուր ընդարձակությամբ, բացի ընթերցարանին ծառայելը, հարկավոր լիներ և ուրիշ հասարակային պիտույքների, որպիսի են հրապարակական դասախոսություններ, թատրոնական ներկայացումներ և այլն, որոնց համար հայերի թաղում ոչ մի հարմար տեղ չկար։ Այս առաջարկությունը բոլորի հավանությամբ ընդունվեցավ, և որոշվեցավ, որ այս նոր շինվածքին մասամբ օգնե Դավրիժու դպրոցը, և մնացյալ ծախսերի համար ստորագրությամբ փող հավաքվի։

Բոլոր սրտից ցանկանալով հաջողություն այս նոր ձեռնարկությանը, մեր կողմից բոլորովին նպատակավոր ենք գտնում մի այսպիսի շինվածք. որովհետև այս քաղաքը ոչ մի կենտրոն չունի, ուր հասարակության անդամները միմյանց մոտենային և հարակցություն ունենային։ Դա կլիներ մի տեսակ կլուբ, ուր հասարակությունը, բացի յուր պա-

բաղ ժամերը ընկերական կյանքով անցկացնելուց, կշահվեր նաև ընթերցանությունից։ Հուսով ենք, որ մեր օտարերկրյա ազգայինները նույնպես կօգնեն ընթերցարանի ընկերությանը՝ յուր նպատակը իրագործելու մեջ։

Միևնույն ժողովում ընթերցարանի նոր տարվա բաժանորդներից գոյացավ 276 ռուբլի, և դեռ ստորագրությունը շարունակվում էր։ Բացի դորանից, 80 ռուբլի գոյացավ որպես նպաստ Վանա հրկիզելոց համար։

***

Ճշմարիտն ասած, ինձ վերա շատ ախորժ տպավորություն գործեց այս բոլորը... մի ժողով, ուր երևում էր խիստ ջերմ ոգևորություն դեպի բարին և դեպի օգտավետը։ Եվ այդ ոգևորությունը մանավանդ ուրախալի է մի այնպիսի հասարակության մեջ, որպես է Պարսկաստանի հայը, որ շատ ժամանակ չէ, բոլորովին անզգա էր դեպի կրթության գործը։ Բայց միևնույն ժամանակ չեմ կարող առանց ցավելու հայտնել այն տխուր տպավորությունը, որ ինձ վերա գործեց քաղաքի ավագ Բանանայի վարմունքը։ Տեր հայրը նույն ժողովում ներկա էր. ամբողջ ժամանակը նստած էր կուռքի նման առանց մի բան խոսելու։ Իրավ որ պ. Մելիք-Հակոբյանի նկատողությունները քահանաների վերաբերությամբ նրան վիրավորանք էին պատճառել, և տեր հայրը, փոխանակ յուր սխալը զգալու, փոխանակ յուր պարտավորությունները ճանաչելու, սաստիկ վրդովված է եղել։ Նա լի սպառնալիքով դուրս եկավ ժողովից, և երբ նրան հրավիրեցին ընթերցարանի բաժանորդ գրվելու, նա պատասխանեց. «Ես ժամանակ չունեմ ընթերցարան գալու»։

Հետևյալ օրը ի՞նչ եմ լսում։ Տեր հայրը սկսել է տնից տուն ման գալ, ժողովուրդը գրգռել և ամեն տեղ քարոզել ընթերցարանը որպես մի վնասակար հիմնարկություն։ Այդ դեռ բավական չէ։ Նա գտնում է յուրյան մի քանի համախոհներ, նրանց հետ գաղտնի ժողովներ է կազմում, և սկսում են սարքել մի կեղտոտ դավաճանություն, այն է, ընթերցարանի գոյությունը մատնել կառավարությանը՝ որպես մի վտանգավոր հիմնարկություն... «Ես փակել կտամ այդ սատանայական բունը (ընթերցարանը),— ասում էր տեր հայրը քաղաքի փո-

ղեցներում քարշ գալով,— և նրա պաշտպաններին կորցնել կամ այնտեղ, ուր ագռավներն անգամ լույս չեն տեսնում»[1]:

Տեր Հայրը այնքան քաջություն ունի, որ կարողանար կատարել յուր սև նպատակը. որովհետև նա շատ բաներում ցույց է տվել յուր շնորհը կործանել և քանդել ամեն ինչ, որ բարի է և օգտավետ: Բավական է հիշել մեկը: «Մշակի» մեջ արդեն հրատարակված էր, որ անցյալ տարի Դավրիժում կազմվեցավ մի ընկերություն, որ նպատակ ուներ բաց անել օրիորդաց ուսումնարան: Ընկերության կանոնադրությունը պ. Հաջիյանի և Պ. Մելիք-Հակոբյանի աշխատությամբ գրված, ընկերության ժողովներից ընդունված և նորին սրբազնության առաջնորդի՝ Անդրեաս արքեպիսկոպոսի կնիքով վավերացած էր: Բացի դրանից, ընկերության հիմնադիր անդամներն իրենց վճարելիք բաժանորդագնի մասին ստորագրված էին, մի խոսքով ամեն ինչ պատրաստ էր. մնում էր մի տուն վարձել և բաց անել ուսումնարանը[2]:

Բայց մի գլխավոր բան դեռ մնում էր: Ասիական սովորություններին ընտելացած մի հասարակության համար ոչ միայն խորթ էր, այլ բոլորովին անսովոր էր երևում յուր աղջիկը ուղարկել մի ուսումնարան, ուր նա տղամարդերի երես պիտի տեսներ, ուր նրա վարժապետները տղամարդիկ պիտի լինեին: Հարկավոր էր համոզել ծնողներին և նրանց դուրս բերել այս նախապաշարմունքից: Բայց ո՞վ ավելի հարմար էր այս գործը, եթե ոչ քահանաները, որոնք ժողովրդի հետ ավելի սերտ հարաբերություն ունեն, և որոնք ընտանիքներին ավելի մատչելի են: Այս նպատակով ընկերության հիմնադիրներն իրանց ժողովներից մեկի մեջ, որ կայացած էր պ. Հ. Ցենեքչյանի տանում, հրավիրե-

---

[1] Այս անկարգությունը գլխավորապես վերաբերում է պ. Մելիք-Հակոբյանին, որովհետև շատ ժամանակ չէ, որ պարոնը հազիվ կարողացավ ազատվել մի մեծ մատնությունից, որի մեջ խառն էր նույնիսկ տեր հոր ձեռը: Ամեն մի հանգամանքում, ուր եկեղեցականը անճար է մնում, նա սկսում է գործ դնել յուր պաշտոնի զենքը՝ մատնությունը:

[2] Ուսումնարանի ընկերությունը բոլորովին բարեգործական սկզբունքի վերա հիմնված էր, նպատակն էր առավելապես չքավոր օրիորդների կրթությունը: Պ. Մելիք-Հակոբյանը հանձն էր առել ուսումնարանի տեսչությունը բոլորովին ձրիաբար. նրա կինը խոստացել էր նույնպես ձրի դասեր ընդունել, բացի դրանից, այլ ուսուցիչներն ևս իրանց կողմից օգնելու էին դասախոսության մեջ: Վարձ ստանալու էր միայն վարժուհին, որ արդեն պատրաստ էր և խոստացավ յուր առաջին տարվա ռոճիկը ամբողջապես նվիրել: Վերջապես գործը սկսված էր գլխավորապես զոհաբերության սկզբունքի վերա, որ այլ կերպ լինել չէր կարող:

ցին հիշյալ ավագ քահանային, որպես մյուսներից ավելի ազդեցություն ունեցողին, և հանձնելով նրան մի թերթ, խնդրեցին, որ նա տներում ման ածե և հորդորե ժողովուրդը իրանց աղջիկները ուսումնարան տալու։ Տեր հայրը ժողովից պատկառելով, այնտեղ ոչինչ չխոսեց և ընդունեց թերթը, բայց առավոտյան թերթը հետ ուղարկեց այսպիսի մակագրությամբ. «Իմ բանակային պարտավորություններից դուրս է այսպիսի բաներում խառնվելը»։ Տեր հայրը դրանով ևս չբավականացավ, այլ սկսեց տներում պտտել, ժողովուրդը վրդովել, ասելով, թե որտեղ տեսնված է, որ աղջիկը տանից դուրս գա, ուսումնարան գնար և տղամարդից դաս առնի։ Մի նախապաշարյալ ժողովըրդին բավական էր այս և դրա նման խոսքեր յուր «հոգևոր հոր» բերանից լսել, և այնուհետև եթե հրեշտակի ձայն ևս լսելու լիներ, նա յուր աղջիկը տան չորս պատերի միջից դուրս թողնելու չէր համոզվի։ Եվ այսպես էլ ուսումնարանի գործը չհաջողվեցավ։ Բայց ինչ մի առանձին օգուտ ուներ տեր հայրը այս գործը խանգարելու։ Չե՞ք լսած այն առածը, թե «մարդիկ կան, որոնք իրենց մի պատառ խորոված ուտելու համար ուրիշի մի եզը մորթել կտան»։ Որպես տեր հայրը, նույնպես յուր պաշտոնակիցներից ոմանք մի քանի ընտանիքներում աղջիկներին սաղմոս են կարդացնում, այս պատճառավ օրիորդաց ուսումնարանի բացվելը կարող էր նրանց շահերին դիպչել... Այժմ նորին սրբազնապատվությունը աշխատում է նույն խաղը խաղալ և նորահաստատ ընթերցարանի հետ, բայց այստեղ ի՞նչ շահ ունի, չենք հասկանում...

Մենք տեսել էինք ուրիշ երկրներում բթամիտ, հետադեմ, խավարասեր և ուրիշ շատ մոլություններ ունեցող քահանաներ, բայց դեռ չէինք տեսել բռնակալ քահանա, որ ժողովրդի վերա իշխում է, որից ժողովուրդը սարսափում է, ինչո՞ւ, նրա համար, որ նա մատնիչ է...

Եվ քանի որ այստեղի ժողովուրդը այնքան զարգացած չէ, որ կարողանար ինքն իրան յուր հասարակային գործերը կառավարել, և քանի որ նա կարող է խաղալիք դառնալ զանազան անիրավների ձեռքում և յուր շահերը զոհել նրանց կրքերին,— մի այսպիսի ժողովուրդ միշտ կարոտ է մի եռանդոտ և բարեմիտ առաջնորդի։ Շատ անգամ խոսված և շատ անգամ գրված է Պարսկաստանի հոգևոր առաջնորդի բարձր նշանակության մասին։ Բայց ցավում ենք, որ Ատրպատականի այդ մեծ վիճակը արդեն բավական ժամանակ է, որ մնացել է առանց հովվի. և ինչեր չեն պատահում, ինչեր չեն լինում, ոչ ոք նայող չկար...

Ինձ մնում է միայն Էջմիածնի բարձր ուշադրությունը դարձնել այս տխուր երևույթների վերա, որ նա չթողնի Պարսկաստանը առանց

Հովվի։ Առաջնորդը եթե ուրիշ բանի պետք չէ այստեղ, գոնե այսքանն էլ բավական է, որ նա յուր քահանաներին չափի և սահմանի մեջ կպահե։ Մենք մեր քահանաներից ոչ մի բարիք չենք սպասում, միայն թե մեր գործերը չխառնեին...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրեժ, 4-ին մարտի

Ներկա տարվա փետրվարի 20-ին Դավրեժու ընթերցարանի ընկերությունը ընդհանուր ժողով կազմելով, ներկայացրուց յուր տարեկան գործունեության հաշիվը։

Ընթերցարանը յուր երկու տարվա գոյության ընթացքում ստացել է հետևյալ գրքերը.

Առաջնորդարանից . . . . 80 հատ
Ընթերցարանի փողով գնված . . . . . 169 »
Դավրեժու բնակիչներից նվիրած . . 98 »
Կ. Պոլսի ազգայիններից նվիրած . . 437 »
Հաշտարխանից նվիրած . . 17 »
Թիֆլիսից նվիրած . . . . 3 »

Ընդամենը 804 հատ

Ընթերցարանի դրամական հաշիվը.

Ընթերցարանը 1876-ի սկզբում ուներ յուր կասսայում 162 կրան
Նոր մուտք հիմնադիր և բաժանորդ անդամներից, նաև
այցելուներից . . . . 1126 կրան

Ընդամենը 1288 կրան

Հիշյալ գումարից նոր գնված գրքերի և այլևայլ ծախսերի
համար դուրս է գնացած . . . . 841 կրան
Կասսայում այժմ մնացած է . . . . 447 կրան

Ընդամենը 1288 կրան

Այս հաշվից հայտնի է, որ ընթերցարանը յուր երկու տարվա գոյության ընթացքում 804 հատ գրքերի տեր լինելուց հետո, և յուր բոլոր կարասիկներն ու պարագայքը գնելուց հետո, այժմ ունի պատրաստ դրամ 447 կրան։

Ընթերցարանի ընկերության նպատակը լինելով նպաստել ոչ միայն Դավրեժի ժողովրդին, այլ թե Պարսկաստանի բոլոր հայաբնակ քաղաքներին շահված լինելու նրանից, յուր կանոնադրության համեմատ մինչ այսօր աշխատել է յուր որպես նվեր ստացած գրքերի ավելորդ օրինակները ուղարկել այլ քաղաքներ։ Օրինակ Թեհրանի դպրոցի ընթերցարանին նվիրել է 52 հատ գրքեր։

Ընթերցարանը երկու տարվա ընթացքում ստացել է հետևյալ լրագիրները և ամսագրերը։

*Տաճկաստանից՝ 1) «Մասիս», 2) «Լրագիր», 3) «Փունջ», 4) «Արևելյան մամուլ», 5) «Մեղու», 6) «Լույս», 7) «Արարատ», 8) «Հայրենիք», 9) «Թատրոն ծաղրական», 10) «Թատրոն մանկանց», 11) «Նոր-Դար», 12) «Արշալույս Արարատյան», 13) «Փունջ» օրաթերթ, 14) «Սիոն», 15) «*Turguie, *16)* "Phare du Bospore":

*Ռուսաստանից՝ 1) «Մշակ», 2) «Մեղու Հայաստանի», 3) «Դպրոց», 4) «Արարատ», 5) «Հայկական աշխարհ», 6) «Փորձ», 7) «*Голос*»։*

Թեհրանից՝ «Իրան», ընդամենը 25 օրինակ։ Այս լրագրներից և ամսագրերից միայն 4-ի համար մինչև այսօր ընթերցարանը փող է վճարել, իսկ մնացյալները ստացել է որպես նվեր կամ ուղղակի խմբագիրներից, կամ մասնավոր անձինք փողը վճարելով՝ ընծայել են ընթերցարանին։

Որպես գրքերի, նույնպես և լրագրների վերաբերությամբ ընթերցարանը մինչև այսօր ջանք է գործ դրել, որքան ներում էր ճանապարհների հաղորդակցությունը, յուր ստացած լրագրներից (ստանալուց մի շաբաթ հետո) ուղարկել Պարսկաստանի զանազան քաղաքներում և առավելապես Թեհրան, ոչինչ վճար չպահանջելով։

Ընթերցարանի ընկերությունը բոլորովին բարեգործական սկզբունքի վերա հիմնված լինելով, յուր գլխավոր նպատակը ունեցել է զարգացնել և պատրաստել նոր սերունդը, այս պատճառով Դավրեժու ազգային դպրոցի աշակերտներին թողել է անվճար թե ընթերցարանը հաճախելու և թե գիրք կամ լրագիր տուն տանելու համար։ Բայց այս տարի նույնը որոշվեցավ և եկեղեցականների համար, թե քահանա լինի, թե տիրացու, ընթերցարանի մուտքը և դրանց համար ձրի է այսուհետև, և կարող են առանց վճարելու գրքեր կամ լրագրեր տանել կարդալու։

Ընթերցարանի ընկերության նպատակը չէ միայն նեղ հայկական շրջանին բավականություն տալ յուր գործունեությամբ. այլ նա միշտ աշխատել է և պիտի աշխատի, որ ստացողները նույնպես օգտվեն

նրանից։ Այս մտքով ընթերցարանի վարչությունը աշխատել է, որքան ներում է իր նյութական վիճակը, բերել տալ նաև զանազան օտարազգի գրքեր, որոնց թիվը հասնում է այժմ 217 հատորի։ Եվ ընթերցարանը մասամբ հասած է համարում իրան յուր նպատակին, որովհետև նա յուր բաժանորդների թվում ունի այժմ մի քանի եվրոպացիներ և պարսիկներ։

Ի նկատի առնելով այն օժանդակությունները, որոնցով մեր հեռավոր և մերձավոր ազգայիններն նպաստեցին ընթերցարանի առաջադիմությանը, առավելապես մեր պոլսեցի եղբայրները իրանց ջերմ համակրությամբ օգնեցին ընթերցարանի գործին։ Մեր ներկայացրած հաշվից հայտնի է, որ ընթերցարանի ունեցած գրքերից 437-ն նվիրված են մեր պոլսեցի ազգայիններից։ Եվ այս նվերների մասին ընկերությունս պ. պ. Հ. Ցեներջյանի և Հ. Հաջիյանի աշխատությանը պարտական է, որոնց պետք է համարում հայտնել յուր խորին շնորհակալությունը։

Մեր ռուսաստանցի եղբայրներն նույնպես չզլացան իրանց լուման ձգել այս հասարակային բարեգործության գանձանակի մեջ։ Հաշտարխանից պ. Պերճ Պռոշյանցի շնորհիվ ստացվեցավ 17 գրքեր, որոնցից մի քանիսը ինքը պարոնը նվիրել է, իսկ մնացյալը հավաքել է ուրիշներից։ Բայց ցանկալի է, որ ռուսաստանցիք, որպես մեզ սահմանակից և որպես ավելի մոտ մեզ, առավելապես օգնեին բազմակարոտ պարսկահային կրթության գործի մեջ։

Ես կդնեի այստեղ մեր պատվելի նվիրատուների անվանց ցուցակը, բայց զգուշանալով, մի գուցե վիրավորեմ շատերի համեստությունը, այս պատճառով զանց արեցի. միայն ընթերցարանի արձանագրության մեջ միշտ անմոռաց կմնա այն բարեգործների հիշատակը, որոնք ձեռնտու են եղել մեզ այս հասարակաց օգտին ծառայող գործի մեջ։

Վերջացնելով նամակս, հարկ եմ համարում անել մի նկատողություն մեր բարերարներին։ Գուցե այս նկատողությունը շատ անհամեստ լիներ, բայց հույս ունեմ, որ կներեն մեզ, տեսնելով, թե որ աստիճան իրավացի էր նա։

Մենք իրավունք չունենք մերժել այն նվերները, թե գիրք լիներ և թե լրագիր, որ բարերար ձեռքով մեկնում են մեզ. մենք միշտ կմնանք գոհ և շնորհակալ։ Բայց մտածելով, թե մի հիմնարկություն, որպես է ընթերցարանը, որ ունի յուր առանձին նպատակը, որ նախասահմանել է իրան մի որոշ ուղղություն, թողնելու է, որ նա ընտրե յուր ընթերցանելի գրքերը, որովհետև նրան ավելի հայտնի է, թե ինչ ավելի օգտավետ է յուր ընթերցողներին, այս պատճառով ստացված գրքերից շատերն մնում են անգործադրելի։ Եվ որպեսզի մեր բարերարների նվիրատվու-

թյուններն լինեին ավելի նպատակավոր, ցանկալի էր, որ նրանք փոխանակ գրքերի (մեր խոսքը օգտավետ գրքերի մասին չէ) ուղարկեին մեզ դրամ. թող նա լիներ աննշան մի գումար, փույթ չէ, որովհետև մեծ ջրակույտերն հենց կաթիլներից են գոյանում։

Եվ մանավանդ ընթերցարանի ընկերությունը այս տարի նոր ծախսեր ունենալով, ավելի դրամական օժանդակության կարոտ է։ Մինչև այսօր ընթերցարանը զետեղված էր առաջնորդարանի ներքին հարկի սենյակներում. բայց զանազան անհարմարությունների պատճառավ ընկերությունը այժմ դիտավորություն ունի կառուցանել մի առանձին շինվածք։ Ծախսի մի մասը խոստացվել է նպաստել ազգային դպրոցի կողմից, իսկ մնացյալը պետք է մնա ընկերության և մասնավոր բարերարների վերա։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Դավրեժ, 2 ապրիլի

«Մշակի» 19-րդ համարի բանասիրականում տպված հոդվածը, «Դավրեժի ընթերցարանի ընկերություն» վերնագրով, մեր քաղաքում մեծ աղմուկ բարձրացրեց այն քահանայի շնորհիվ, որի վրա ակնարկություններ էին եղած նույն հոդվածում։

Ես պետք չեմ համարում ցույց տալ, թե մինչև որ աստիճան իրավացի կամ անիրավացի էին պ. հոդվածագրի նկատողությունները, բայց հավաստի եմ, որ նա այնքան ազնիվ է, որ յուր ժամանակին առանց դիմակի հրապարակ դուրս գալով, ավելի պարզ կերպով կներկայացնի ճշմարտությունը...

Ինձ մնում է միայն, նորին վեհափառության ամենայն հայոց կաթողիկոսի բարձր ուշադրությունը հայցելով, հայտնել, որ քաղաքիս Տեր-Հովսեփ քահանան, յուրյան վերաբերելով հիշյալ հոդվածի նկատողությունները և ինձ վերա կասկած ունենալով, սկսել է այնպիսի միջոցների դիմել, որոցմով ոչ միայն իմ անձը այժմ վտանգի ենթակա է, այլև մեր դպրոցին, ընթերցարանին և եկեղեցուն անգամ մեծ կործանում է սպառնում։

Ես ստիպված չէի լինել այս հայտարարությունը հրատարակել, եթե արժանապատիվ տեր հայրը կամ օրինավոր կերպով դատաստանի դիմեր և կամ յուրյան հրապարակական կարծիքի առջև արդարացնելու ջանար։ Բայց նորա ձեռք առած միջոցներն այնպես տարօրինակ են, որ այլ կերպ վարվել անհնարին էր։

Այժմ այդ նամակովս արդարություն և իրավունք խնդրելով, հա-

վստահ եմ, որ Նորին վեհափառությունն անուշադիր չպիտի թողնե իմ աղերսը, զսպելով յուր քահանայի կրքերը և գործի ընթացքը վերապահելով մինչև Ատրպատականի համար նշանակված առաջնորդի գալուստը:

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ
(ՋԻՀԱԹ)

Երբ սուլթանը սպառնում էր բարձրացնել «կանաչ դրոշակը» և հրատարակել սրբազան պատերազմ, Եվրոպան հեգնությամբ էր ընդունում այդ սպառնալիքը, նա այժմյան ռազմագիտական արհեստի մեջ բոլորովին երեխայական խաղ էր համարում պատերազմի այս հին և նահապետական ձևը, որ ստեղծեց Արաբիան և նրա ոգելից մարգարեն: Այժմյան թնդանոթների առջև նշանակություն չունի կրոնական մոլեռանդությամբ զինված անկիրթ խառնիճաղանջի ամբոխմունքը, մտածում էր Եվրոպայի ռազմագետը:

Այդ իրավ էր: Բայց հասկացավ Եվրոպան՝ ինչ բան է սրբազան պատերազմը և որքան չարիքներ թաքնված էին նրա ներքո:

Կողոպուտ, հարստահարություն և կոտորած, ահա ինչ բան է սրբազան պատերազմը, և այդ անգթությունները նա գործ է դնում ոչ միայն թշնամու դեմ, այլ ամեն անձնավորության, որ չէ պատկանում իսլամին: Իսլամից դուրս Մուհամմեդը բարեկամ չունի:

Սրբազան պատերազմը ամենադյուրին միջոցն է ավազակների խմբեր գումարել և ամբողջ երկրներ դատարկացնել կյանքից և ապրուստից: Եվ սնանկացած Թուրքիայի գանձային վիճակին խիստ ձեռնտու էր մի այսպիսի բան, որովհետև նրա զինվորներն պիտի կառավարվեին ժողովրդի հաշվով, խեղճ քրիստոնյա ժողովրդի հաշվով:

Իրավ, շատ հաճելի բան է բարբարոս և ավազակաբարո ազգի համար արյունահեղությունը, հարստահարությունը և կողոպուտը, մանավանդ, երբ դրանք սրբված են լինում կրոնի թույլատվությամբ, մանավանդ, երբ նրանց գործողներն ունեն երկու տեսակ վարձատրություն՝ աշխարհային և երկնային. առաջինի մեջ նրանք գտնում են երկրային հարստություն, իսկ երկրորդի մեջ՝ դրախտի անսպառ զվարճությունները...

Փոքր Ասիայի մեջ կան շատ կիսավայրենի ցեղեր, որոնք իրանց պարապմունքը գլխավորապես նվիրած էին ավազակության. բայց սրբազան պատերազմը նրանց առջև բացեց խիստ ընդարձակ ասպարեզ:

Այդ ցեղերին են պատկանում քուրդերը, Թուրքմենները, չերքեզները, արաբները, գուրգինները, տաճիկները և այլն։ Դրանցից է կազմված Թուրքիայի այժմյան կամավոր զորքը, որոնք կոչված են կարծես նրա համար միայն, որ կողոպտեն և կոտորեն տեղային հպատակ և խաղաղասեր քրիստոնյա ժողովուրդը։

Առանց փաստերի նշանակություն չի ունենա մեր ընդհանուր տեսությունը, ուրեմն որպես ապացույց մենք հարկավոր ենք համարում բերել Հաղբակա անցքը, որ տեղի ունեցավ սկսյալ մայիս ամսի 14-ից մինչև նույն ամսի 28-ն։

Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանի գծի երկու կողմերի վերա, սկսյալ Բայազետից մինչև Պարսից ծոցը, բնակվում են զանազան թափառաշրջիկ ցեղեր, որոնք հայտնի չէ այս երկու պետության որի հպատակն են, որովհետև անդադար Պարսկաստանից հափշտակելով անցնում են դեպի Տաճկաստան, և յուրյանց տարած կողոպուտը տեղային կառավարության պաշտոնակալների հետ բաժանելով, պատսպարան են գտնում և շատ անգամ Տաճկաստանից կողոպտելով անցնում են դեպի Պարսկաստան և նույն կերպով պաշտպանվում են։ Երկու կողմից էլ սահմանագլուխները բաց են այս ավազակների համար, որովհետև նրանք ծառայում են տեղային կառավարության ներկայացուցիչների շահերին։

Հիշյալ թափառաշրջիկներից նշանավոր են քուրդերը, որոնք բաժանված են անհամար ցեղերի և կրում են զանազան անուններ։ Նրանք բնակվում են գլխավորապես այն գծի վրա, որ բաժանում է Հայաստանի մի մասը Պարսկաստանի և Տաճկաստանի մեջ, ուրեմն դրացի են հայերի հետ։

Սալմաստի գավառի Չահրի կոչված գյուղի ամրոցում մոտ քանի տարի է, որ բնակվում է Ալի-Աղա կամ Ալի-խան անունով քուրդը։ Այս բանակալը Շիկակ կոչված բարբարոս ցեղի գլխավորը և միանգամայն նրա կառավարիչն է, որն երկար ժամանակ պարսից սահմանագլխին իրան պատսպարան ընտրելով, շատ անգամ յուր ավազակ ցեղով արշավանքներ է գործել հայոց Հաղբակ գավառի վերա, և տեղային հայաբնակ գյուղերն անդադար նրա հափշտակությունների ասպարեզ եղած են։ Այս է եղել միշտ այս չարագործի պարապմունքը, թեև երբեմն հարստահարված ժողովուրդը բողոքներ է բարձրացրել, բայց նա միշտ անպատիժ է մնացած եղել յուր անիրավությունների մեջ։

Բայց սրբազան պատերազմը ավելի լայն ասպարեզ բաց արավ հիշյալ բանակալի առջև։ Նա օգուտ քաղելով Հաղբակա կողմերի անտե-

րունչ դրությունից՝ սկսավ յուր ավազակաբարո քրդերը մեծ բազմությամբ այնտեղ ուղարկել և ամեն անգամին կողոպտել մի քանի հայոց գյուղեր, ավար առնելով անասուններ, տնային կայքեր և այլն։ Այս տեսնելով, Բարդուղիմեոս առաքելո վանքի մերձակա գյուղերի հայ բնակիչներն, իրանց անասունները և բոլոր հարստությունը հավաքում են և գաղթում են վանքը, թաքցնելով իրանց կայքը մասամբ տաճարի պարիսպների մեջ և մասամբ վանքի գյուղում, որովհետև թե առաջինը և թե վերջինը ամուր դիրք ունեին։

Նույն միջոցում Ալի-Աղայի ցեղից 1500 սպառազինյալ ձիավորներ (թողյալ հետևորդները) նրա երեք որդիների՝ Ահմեի, Ջհանգիրի և Ղասըմի գլխավորությամբ և Շեյխ-Նուրեդդին հոգևորականի առաջնորդությամբ գալիս են և իրանց բանակը դնում են վանքի դիմացը գտնված մարգագետնի վերա։ Նրանք եկած են լինում այն պատրվակով, որպես թե տաճիկներուն օգնելու են գնում ռուսաց հետ պատերազմելու։

Վանքի վանահայր Եղիազար վարդապետը, տեսնելով այս, գնում է բանակը և, Ալի-Աղայի որդիներին հյուրասիրություն ցույց տալու մտքով, տանում է 20 ոչխար ընծա, շնորհավորում է նրանց գալուստը, բարեմաղթելով հաջողություն իրանց գալիք պատերազմի մեջ։ Որպես Շեյխն, նույնպես և Ալի-Աղայի որդի Ահմեն առերես կեղծավորությամբ ընդունում են վարդապետին՝ պատվեր տալով, որ վանքի 1500 ձիավորի համար հաց և ճանապարհի այլ պաշար պատրաստե։ Վարդապետը երկյուղից ընդունում է այս ծանր հրամանը և վերադառնում է վանքի գյուղը նրանց պատվերը կատարելու։ Բայց մինչ նա այս պատրաստության մեջ է լինում, նրանք մարդիկ են ուղարկում և վանքի 350 ոչխարը և ձիերի երամակը հափշտակում են։

Վարդապետը դիմում է Ահմեին և Շեյխին, բողոքում է հափշտակության մասին։ Բայց նրան խաբեությամբ ետ են ուղարկում, խոստանալով, թե ոչխարներն ու ձիանները ետ կդարձնեն, որովհետև վանքին են պատկանում։ Եվ իրավ, մի քանի մարդիկ ուղարկում են, որ արգելեն հափշտակությունը, բայց նրանք ևս խառնվելով մյուս քրդերի բազմության հետ, սկսում են թալանել վանքի գյուղը, որ նրա մոտ էր։ Նրանք մտնում են տները և կողոպտում են ամեն ինչ, որ փոքրիշատե կարող էր գին բերել, թե անասուն, թե տնային կայք, ուտեստի մթերք և մինչև անգամ այր և կին մարդկանց հագուստը և նրանց զարդերը։

Այս տեսնելով՝ ժողովուրդը ընդդիմադրություն չէ անում, որովհետև բոլոր գյուղացիք մտածում են իրանց կյանքը ազատելու մասին։

Թալանը, ավարառությունը տևում է ամբողջ երեք օր։ Որովհետև

վանքի գյուղում, որպես հիշեցինք, հավաքված է լինում ուրիշ շատ հայ գյուղերի հարստությունն, ամենաթանկագին իրեղենները ամբարված են լինում վանքի պարիսպների մեջ[1]։

Այնուհետև գյուղը իսպառ կողոպտելուն հետո Ալի-Աղայի մարդիկն հարձակվում են վանքի վերա, խորտակում են տաճարի դռները և ներս են մտնում։ Սկսում են կողոպտել ամեն ինչ, որ այնտեղ ամբարված էր. և ամեն օր 300—400 ձիավոր գալիս են և իրանց ձիերը բեռնած ետ են դառնում։

Վանքի մեջ ոչինչ չեն թողնում. բոլոր արծաթեղեն, ոսկեղեն խաչերը, սուրբ մասունքները և տաճարի թանկագին անոթները տանում են։ Սանդուղքները դնելով տաճարի գաղտնի պահարաններն են մտնում և դուրս են բերում ինչ որ նրանց մեջ թաքցրած էր. ինչ խոսքս երկարացնեմ, մինչև անգամ սուրբ Բարդուղիմեոս առաքելո հոյակապ գերեզմանն են քանդում, մտածելով, գուցե նրա մեջ ևս հարստություն գտնեն։ Նրանք չեն խնայում և վանքի քարերին. Հայաստանի ամենահին սրբարանի գեղեցիկ շինվածքը նրանց անգթության զոհ է դառնում։

Մեզ դժվար է այժմ գնահատել բոլոր վնասը. դա մանրամասն քննության կարոտ է. միայն այսքանը կասենք. որ Հաղբակա գավառում, բացի վանքից, իսպառ կողոպտված են քսանչորս գյուղորայք[2]։ Հիշյալ գյուղերի բնակիչներն էին անասնապահներ, որ անթիվ ոչխարների հոտեր էին դարմանում և միևնույն ժամանակ երկրագործներ ու մասամբ վաճառականներ։ Գյուղացիների մոտ ոչինչ չեն թողնում, թե անասուն, թե տնային կայք և թե երկրագործական բերք, բոլորը թալանում են և մինչև անգամ բնակիչներին հագուստից մերկացնում են։

Թալանը տևում է ամբողջ 15 օր, այսինքն՝ սկսյալ մայիս ամսի 14-ից մինչև նույն ամսի 28-ը. այս միջոցում վանքի վանահայր Եղիազար վարդապետը և ժողովրդի տանուտերերը շատ անգամ բողոքում են տեղային կայմակամին և մուֆաթիշին, որ նրանք պահպանեն ժողովուր-

[1] Մինչև անգամ քուրդ Օմար-Աղան, որ ավելի խաղաղասեր ցեղի գլխավորն է, 20 բեռան չափ ապրանք թաքցրած է լինում վանքում յուր ազգակիցների հափշտակությունից ազատ պահելու համար, բայց հետո նախատեսելով վտանգը, մի քանի օր առաջ գալիս է և յուր ապրանքը տանում է։

[2] Հիշյալ գյուղերից 19 հայոց է, իսկ 5՝ ասորաց, մենք կդնենք անունները միայն. հայոց՝ Վանքի գյուղ, Բիժինկերտ, Բարլաար, Փարս, Սորադեր, Երինգիանի, Զուխ, Հերիան, Ջեյնիս, Դերեջ, Հասրխթան, Խարատոն, Մալքավիլ, Բազ, Առակ, Ալաս, Գատկան, Լաշկետ և Կարպեշ։ Ասորոց գյուղորայք՝ Ատեն, Արջի, Հողի, Բավեն Մանկլավին։ Թե որքան բնակիչներ կան հիշյալ 24 գյուղերի մեջ, ճիշտ թվանշաններ դնել չենք կարող, այսքանը միայն կասենք, որ շատ բազմամարդ են եղել։

դը քուրդերի բարբարոսությունից, բայց ոչինչ բավականություն չեն գտնում։ Այնուհետև Բաշկալեի տաճկաց կառավարության քանիցս անգամ իմացում են տալիս, այնտեղից ևս օգնություն չեն ստանում։ Միևնույն ժամանակ Վանա փաշային լուր են տալիս, նա ձևի համար 10 ձիավորներ է ուղարկում, բայց 10 ձիավորն ի՞նչ կարող էր անել հազարավոր բարբարոսներին։ Այսպես խեղճ ժողովուրդը անտեր և անօգնական մնալով, քուրդերի անգթությանը պատ է դառնում, ամեն ինչ թալանի է գնում, և դատարկ տներն անգամ չեն խնայում, կրակը և հրդեհը ոչնչացնում է բոլորը։

Ժողովուրդը անտեղ և անտուն մնալով, 1000 ընտանիքների չափ, բոլորովին մերկ հազիվ կարողացել են իրանց կյանքը ազատել, փախչելով պարսից Սալմաստ գավառը, որ սահմանակից է Հաղբակին, և այնտեղի հայերի մոտ պատսպարան են գտել. իսկ մնացյալ մասը կոտորվել են։ Սպանված են շատ ողամարդիկ և մինչև անգամ կանայք, պավակներին ծնողաց աչքի առջև մորթել են, որ թաքուցած գանձի տեղ ցույց տան։ Չեն խնայել մինչև անգամ ծծկեր երեխաներին... Մի քահանայի զաղուխի են զարկում և այնպես թողնում են, մնում է մի ամբողջ շաբաթ[1]։

Իսկ ինչ վերաբերում է կանանց և կույս աղջիկների բռնաբարությանը, ասված ազատ, աներևակայելի խայտառակություններ են գործվել, որոնք արտահայտում են ոչ միայն անասնական կիրք, այլ վայրենի և բարբարոսական անգթություն։ Հինգ-յոթն տարեկան աղջիկը քուրդի գազանային բռնաբարության ներքո հոգին ավանդում է... Բազմաթիվ կանանց և կույսերի խմբեր, իսպառ մերկացրած, օրերով և գիշերներով պար են ածել իրանց ծնողների և ամուսինների առջև, և իրանց բարբարոսական զվարճությունն են կատարել...

Ժողովրդի ծերունիներն դիմում են Շեյխ-Նուրեդդինին, որն սրբազան պատերազմի ուխտյալ զինվորների հոգևոր առաջնորդն էր, խնդրում են նրան. «Դուք հափշտակել տվիք ամեն ինչ, որ մենք ունեինք, գոնյա խնայեցեք մեր կյանքը և մեր ընտանիքը»։ Շեյխը պատասխանում է. «Ձեզ փրկություն կլինի այն ժամանակ միայն, երբ քուրդ

---

1 Պատժի այս բարբարոսական ձևը օսմանցու գյուտ է, նա վաղուց մոռացված էր Տաճկաստանում, իսկ սրբազան պատերազմը նրան կրկին երևան հանեց։ Գործողությունը կատարվում է այսպես. գետնի վրա ցցում են ծայրը սուր երկաթ ունեցող նիզակի նման մի երկայն փայտ. այնուհետև մահապարտի ձեռները կապում են, և բարձրացնելով յուր նստատեղից անց են կացնում փայտի ծայրին, սրածայր փայտը յուր գործը կատարում է... իսկ խեղճ զոհը մնում է նրա գլխին շամփրած։

կգանիք»: Այնուհետև շատերն ճարահատյալ ընդունում են մահմեդա-կանություն և քուրդ են դառնում:

Բարբարոս քուրդն անգամ կողոպտելուց հետո յուր զենքը կրոնա-փոխության գաղափարին է ծառայեցնում: Այս է սրբազան պատերազմի իսկական խորհուրդը...

Որպես հիշեցինք, Հաղբակա կողոպտված հայերից մոտ 1000 ըն-տանիք այժմ փախել են Սալմաստ և տեղային հայերի մոտ պատսպա-րան են գտել, մի մասը բռնի մահմեդական է դարձել, մի մասը կոտո-րել են, իսկ մնացյալը գերի են տարած: Վերջիններից մեծ բազմու-թյուն Ալի-Աղան բերել է Պարսկաստանի Սոմայի կոչված գավառը և երկու գաղթաշենք հիմնելով, իրան հպատակացրել է, կթողնե՞ն արդ-յոք նրանց քրիստոնեության մեջ, հայտնի չէ:

Ահա՛ սրբազան պատերազմի հետևանքը, սուլթանի հպատակ, խա-ղաղասեր քրիստոնյան բարբարոս քրդերի անգթությանը և մոլեռան-դությանը զոհ է դառնում...

Հաղբակա Բարդուղիմեոս առաքելո վանքի վանահայր Եղիազար վարդապետը, համարյա մի հրաշքով յուր կյանքը մահից ազատելով, մի քահանայի հետ այժմ եկել է Թավրեզ քաղաքը: Հայր սուրբը դիմեց տեղային եվրոպական կոնսուլներին՝ Ռուսաց, Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի, հայտնեց նրանց Հաղբակա ցավալի անցքը և բողոքեց քըր-դերի բարբարոսության դեմ: Բոլորն խոստացան բավականություն տալ և անցքի մանրամասնությունը հաղորդեցին իրանց Թեհրանի դեսպան-ներին: Տեսնենք, ի՞նչ վախճան կունենա նրանց խոստումները:

Բայց ավելի ազդու միջոց գործ դրեց Հաղբակա անցքի մասին Թավրեզու կուսակալ Նորին վսեմություն Սահար-Դիվանը, նախ Սալ-մաստ մոտ 12000 հոգի զորք ուղարկելով և Ղուլի-Խան Սարհանգին հատուկ պաշտոնով նշանակելով, որ Ալի-Աղային բռնել տա և Հաղբա-կա հայերի ապրանքը հետ առնե: Ճիշտ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Ալի-Աղան ձերբակալված է, և նա խոստանում է քրդերից կողոպտածը ետ դարձնել. բայց հարցն նորանումն է, արդյոք այդ չարագործն այս անգա՞մ ևս անպատիժ պիտի մնա...

Մենք ավելի չենք ցավում Հաղբակա հայերի վիճակի մասին, տես-նելով, որ ամբողջ Փոքր Ասիայի քրիստոնյաները նույն վիճակի ենթա-կա են: Ամեն տեղից լսվում է հարստահարություն, կայքի հափշտակու-թյուն, կանանց բռնաբարություն և կոտորած: Քրիստոնյաների կյանքը Փոքր Ասիայում մի մազից է կախված, ամեն րոպե նրանք սպասում են ընդհանուր ապստամբության տեղային մահմեդականների կողմից:

Եվ այս տագնապի մեջ գլխավորապես զոհվում են հայերը, որովհետև նրանք քրդերի հետ խառն են բնակվում։

Դրանք դատարկ խոսքեր չեն, այլ հիմնված են հայտնի փաստերի վրա։ Բայազետի հայոց սարսափելի անցքը թող երկրորդ ապացույց համարվի։ Ինչո՞վ էին մեղավոր բայազետցիք, ի՞նչ էին արել, ո՞ւմ դեմ զենք էին բարձրացրել։ Բայց քրդերը նրանցից մինչև 400 հոգի կոտորելով, ամեն ինչ կողոպտելով և բոլոր մանուկ աղջիկները ու տղաները դեպի Վանա կողմերը գերի տանելով, հազիվհազ 100 ընտանիք իրանց կյանքը ազատել են նրանց բարբարոսություններից և մերկ ու չքավոր փախել են Պարսկաստանի Մակու քաղաքը ու տեղային հայերի մոտ ապաստարան են գտել... Այս թշվառների վիճակը ավելի կարեկցության արժանի է։

Մի երկիր տիրելեն հետո խաղաղասեր ժողովրդին սրի և կրակի մատնել, դա լինում էր շատ հին դարերում, այդ անում էին մոնղոլները։ Այժմ ինչո՞վ են զանազանվում թուրքերը իրանց վայրենի նախապապերից։

Երբ առաջին անգամ խոսվում էր Բալկանյան թերակղզու մեջ գործված բարբարոսությունների մասին, Անգլիան չէր ուզում հավատալ, թե թուրքը մինչև այն աստիճան անբարոյական է։ Բայց Բուլղարիայի սարսափելի անցքը փոքր-ինչ շարժեց նրա մարդասիրական զգացմունքը (՞)։ Իսկ այժմ Հայաստանի հրդեհված խրճիթների մոխիրն ու բոցը, անմեղ կանանց անպատվությունը, հայրերի լացն ու մայրերի հառաչանքը և թափված արյան բողոքը՝ արդյոք կազդե՞ն մարդասեր Անգլիայի սրտին...

Անգլիան վաճառական է։ Ամեն վաճառական շահասեր է և եսական։ Ուր շահ կա, այնտեղ մարդկային գութը տեղիք չունի...

Քրիստոնյաների դրությունը այժմ Թուրքիայում շատ ողորմելի է։ Թուրքիան այժմ այն խելացնոր զրգռման մեջ է, որ նմանում է մի երեխայի, որի ձեռքում կար մի ծիտ։ Մյուս երեխան կամեցավ խլել նրանից ծիտը, որովհետև շատ էր չարչարում։ «Կխեղդեմ ու քեզ չեմ տա», ասաց առաջինը և խեղճ թռչունի անշնչացած դիակը ձգեց գետնին։

Մենք երկյուղ ունենք, որ քրիստոնյաների ազատության համար արյուն թափող Ռուսաստանը, մի օր տիրելով Թուրքիային, սարսափելով պիտի տեսնե, որ այնտեղ այլևս քրիստոնյաներ չեն մնացել...

«Կխեղդեմ, ու քեզ չեմ տա»... այդպես է մտածում այժմ Թուրքիան։

Ինչո՞վ կարելի է այդ վտանգի առաջն առնել։

Մեր կարծիքով հենց սկզբից պետք է Եվրոպան թույլ չտար Թուրքիային հրատարակել այն ավազակային ձեռնարկությունը, որ կոչվում

է սրբազան պատերազմ։ Հրատարակելով սրբազան պատերազմը, հրատարակեց նա քրիստոնյաների մահվան վճիռը, թե՛ հպատակ լինեին նրանք և թե՛ օտարերկրացիք։ Եվրոպան կարող էր արգելել, քանի որ ռուս-տաճկական պատերազմը կրոնական ոչինչ չուներ, քանի-որ ռուսները մահմեդականությունը ոչնչացնելու և քրիստոնեությունը տաճիկների մեջ մտցնելու նպատակ չունեին։

Ի՞նչ ասել է գրգռել և վրդովել ամբողջ մահմեդական աշխարհը, կատաղեցնել նրանց կրոնական մոլեռանդությամբ։ Այդպիսի դեպքում ոչ միայն տաճկահպատակ քրիստոնյայի կյանքը վտանգից ազատ չէ, այլ երկրագնդի վերա ամեն տեղ քրիստոնյան նույն վիճակին է ենթարկվում, ուր նա մահմեդականի հետ միասին է ապրում։

Ցույցերն արդեն հայտնվում են... Բայց հասկանո՞ւմ է Եվրոպան...

ՆԱՄԱԿ ԱԳՈՒԼԻՍԻՑ

Նոյեմբերի 15-ին

«Պատվելի հանդիսականք։ Այսօր սուրբ Քրիստափոր եկեղեցու տոնախմբության հետ կատարվում է Հայկանուշյան օրիորդաց դպրոցի տասնամյա տարեդարձը, մի դպրոցի, որից կախումն ունի տեղվույս հայ ժողովրդի ընտանեկան ապագան։

Նախքան խոսելը այս դպրոցի օգտավետության և նրա կատարած առաջադիմության մասին, ես հարկավոր եմ համարում ձեր ուշադրությունը դարձնել այն հարցի վրա, թե ի՞նչ է ընտանիքը, և որպիսի պաշտոն է կատարում նա կրթության գործի մեջ։

Ընտանիքն է այն հողը, որի մեջ գոյություն է ստանում մանուկը։ Այստեղ են ամփոփված նրա կյանքի սկզբնական ծիլերը, որոնք խորին արմատ են ձգում, աճում են այն աստիճան, որքան արգավանդ էր հողը, ծաղկում են, պտղաբերվում են այն աստիճան, որքան կենսատու էր նրա շրջապատող լույսը և ջերմությունը։

Ընտանիքի մեջ առաջին անգամ տպավորվում է մանուկի հոգու մեջ իր մարդկային կոչման խորհրդավոր կնիքը, և այնքան խորին կերպով, որ ոչինչ չէ կարող բնաջինջ առնել նրան։

Ընտանիքը երեխայի աշխարհն է, երեխան ներս է մտնում այս աշխարհում բնությունից բոլորովին մաքուր և անարատ կերպով ստեղծված։ Նա այնքան անմեղ է լինում և միամիտ, որ չգիտե որոշել չարը և բարին։ Նրա սիրտը այնքան պարզ է լինում, որ հայելվո նման անխտիր ցոլացնում է իր մեջ ամեն տեսակ գեղեցիկ և տգեղ պատկերներ։ Նրա

հոգին այնքան զգայուն է լինում, որ անգիտակցաբար ընդունում է ամեն լավ և կամ վատ տպավորություններ։

Այսպես, արտաքին ազդեցությունները, սկսյալ մատաղ հասակից, ներշնչում են երեխայի մեջ լավ կամ վատ հատկություններ, կերպարանագործում են նրա մեջ բնավորություն, ուղղություն են տալիս նրա բարք ու վարքին, և առաջացնում են նրա մեջ ազնիվ կամ մոլի կրքեր։

Ուրեմն, եթե երեխային շրջապատող աշխարհը, այլ խոսքով, եթե ընտանիքը գտնվում է այնպիսի օրհնյալ պայմաններում, որ ազդում է երեխայի մեջ այն, ինչ որ բարի է և ազնիվ, և եթե մատակարարում է այն, ինչ որ օգտավետ է և արդյունավոր, այն ժամանակ երեխան փոքր հասակից պատրաստվում է լինել մարդ իր մարդկային բոլոր կատարելությամբ։ Որի ընդհակառակն, եթե ընտանիքը չէ համապատասխանում երեխայի դաստիարակության պայմաններին, այն ժամանակ նա սկսած մանկությունից պատրաստում է իր համար թշվառ ապագա...

Որովհետև ինչ որ տեսնում է երեխայի աչքը, ինչ որ լսում է նրա ականջը, նույնը կերպարանավորվում է նրա հոգվո մեջ, և նույնպիսի ձև են ստանում նրա մտավոր և բարոյական ուժերը։

Ընտանիքի մեջ դրվում է երեխայի դաստիարակության հիմքը. և այս հիմքը որքան ամուր է լինում և կանոնավոր, այնքան հաստատուն կերպով բարձրանում է և նրա վրա կյանքի շինվածքը։

Ընտանիքից ստանում է երեխան այն լույսը, որ պիտի առաջնորդե նրան կյանքի ճանապարհի բոլոր շավիղների վրա։ Ընտանիքի մեջ է գրած այն կախարդական թելի ծայրը, որ պիտի պատացնե նրան աշխարհային լաբիրինթոսի մեջ, որ պիտի հեռու պահե նրան կորստաբեր մոլորություններից և չարաչար անկումներից։

Ընտանիքը երեխայի մթնոլորտն է։ Նրա մեջ աճում են և զարգանում են երեխայի մտավոր ուժերը. նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները, բոլորն այն չափով, ինչ չափով նպաստում է նրան գերդաստանի կրթական ազդեցությունը, և այն ձևով, որպիսի կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին։

Վերջապես, ընտանեկան օջախի մեջ սրբագործվում է երեխան իր ազգային ինքնուրույնության երկու ամենամեծ առանձնություններով, որպիսի են կրոնը և լեզուն։ Մայրը, գերդաստանի մեծ քահանայապետը, առաքինության առաջին օրինակն է լինում. նա է ազնվացնում և վառում երեխայի հոգին երկնային ջերմությամբ. նա է սովորեցնում սիրել արդարությունը և պաշտել այն, որ բարի է և գեղեցիկ։ Մայրն է սովորեցնում երեխային թոթովել այն նվիրական բարբառով, որ խոսել

են նրա պապերը, նրա նախնիքը։ Այն բարբառով սովորում է երեխան մտածել, ազդվել և արտահայտել իր զգացմունքը։

Ընտանիքից է սկսվում ազգայնությունը։ Ընտանիքը մի օղակ է ազգայնության մեծ շղթայակապի մեջ։

Այստեղ է ստանում երեխան իր, թե կարելի է այսպես կոչել, ազգային բնական գույնը իր բոլոր հատկանիշ նկարներով։ Եթե այդ գույնը խորին կերպով է տպավորված երեխայի մեջ, այնուհետև միշտ կմնա անջնջելի, այնուհետև ոչ մի օտար ազդեցություն չէ կարող փոխել նրան...

Այս բոլորից հետո, կարծեմ, շատ հասկանալի կլինի, եթե հարցնենք՝ ո՞ւմ վրա է դրել աստված այդ խորհրդավոր հոգաբարձությունը, և ո՞վ արդյոք պետք է լինի երեխայի դաստիարակության խնամատարը։

Դուք պիտի պատասխանեք՝ ծնողքը։

Այո՛, ծնողքը, այսինքն՝ հայրը և մայրը, որոնց վրա, որպես երկու հաստատուն սյուների վրա, դրված է ընտանիքի շինվածքը։

Կրկնում եմ, ծնողաց վրա է դրած այն սրբազան երաշխավորությունը, որով նոքա պարտավորվում են ստեղծողի առջև հոգաբարձու լինել երեխայի բարի դաստիարակությանը և ազգի ու հասարակության համար օրինավոր որդիք պատրաստել։

Բայց պետք է ասած, որ գլխավոր հոգսը դրած է մոր խնամատարության վրա։ Մայրն է այն հողը, որից ծլում և ծաղկում են երեխայի բնական կատարելությունները. մայրն է այն աղբյուրը, որից բխում են երեխայի ազնիվ հատկությունները։ Մայրը սկզբնական օրորոցի միջից կաթնի հետ սնուցանում է երեխային թե մարմնապես և թե հոգեպես։

Ուրեմն, բարեկիրթ երեխաներ ստանալու համար նախ պետք է պատրաստել ուսյալ մայրեր։

Բայց որտեղի՞ց պետք է ստանալ ուսյալ մայրեր։ Դպրոցից։

Այստեղից են առաջանում ժամանակի ոգուն և պահանջներին համապատասխանող մայրեր։ Այստեղից պետք է գոյություն առնե և վերստեղծվի մեզ համար մի նոր հասարակություն և մի նոր կյանք։

Որպես մի հասարակության, նույնպես և մի ամբողջ ազգի մեջ կրթության գործը հաջողված է համարվում այն ժամանակ միայն, երբ նրա կանայքը լուսավորված են։ Որի ընդհակառակն, միշտ թշվառ է մնում մի ժողովուրդ, երբ կանայք խավարի մեջ են ապրում, երբ նոքա անկիրթ են։

Կինը իբրև տղամարդի հավատարիմ ընկեր, իբրև նրա օգնական, այն ժամանակ միայն կարողանում է կուսապատշաճ լծորդությամբ

առաջ տանել նրա հետ թե ընտանեկան և թե հասարակական գործեր, երբ տղամարդի չափ հմտություն և կրթություն ունի։ Իսկ կրթությունը նրան տալիս է դպրոցը։ Այստեղից նա պատրաստվում է լինել կյանքի մեջ անխոնջ գործող, բաժանելով և թեթևացնելով ամուսնի հոգսերը և նրա աշխատությունը։

Դպրոցից կինը ստանում է իր ազատությունը։ Այստեղ պատրաստվում է նա փշրել, խորտակել այն դարևոր ստրկության շղթաները, որ սև նախապաշարմունքի զորությամբ կաշկանդել էին նրան։

Դպրոցը դարձնում է նրան իր կորցրած արժանությունը՝ մարդ և մարդկային հասարակության անդամ կոչվելու։ Դպրոցը բաց է անում նրա առջև մի նոր ասպարեզ, որի մեջ նա ցույց կտա աշխարհին, թե իր գործունեության սահմանը տան չորս պատերը չեն, թե ինքը կարող է մարդկային ընկերության բոլոր ելևէջների մեջ գործել և տղամարդի հավասար օգուտ բերել։

Բայց երբ դպրոցի դռները փակ են կնկան սեռի առջև, երբ նա զուրկ է մնում կրթությունից, այն ժամանակ մարդկությունը զրկվում է իր ամբողջ մի մասի գործակցությունից։ Այն ժամանակ կորչում է նա իր ամենազորեղ օգնականը, իր թանկագին կեսը, որի հետ միանալով կարող էր հրաշքներ գործել։ Այսպիսի հասարակություն միշտ մնում է թույլ և անընդունակ առաջադիմության։ Այսպիսի հասարակության մեջ մի նշանավոր գործ չէ կատարվում։ Այսպիսի հասարակություն չէ կարող երկրագնդի վրա և մի երևելի դեր խաղալ և իր համար հաստատուն ապագա պատրաստել։ Այսպիսի հասարակություն, համարձակվում եմ ասել, կյանք չունի, որովհետև մարդկության ոգին կրթյալ կինն է։

Իմ այս խոսքերը կարոտ չեն ապացույցի. բավական է միայն մի փոքրիկ հայացք ձգել դեպի արևելք։ Ի՞նչ ենք տեսնում։ Մարդկությունը, ամենահին մարդկությունը իր տղայության մեջ ծերացել, փտել և ապականվել է... Բռնակալի սրից արյուն է կաթում... Կենդանի մարդը, աստուծո պատկերը, այնքան է ստորացած, որ անասունը ավելի երջանիկ է նրա մոտ... Կյանքի և կայքի ապահովություն չկա. ամեն ինչ ծառայում է իշխանների հաճույքը հրապուրելու համար... Ինչո՞ւ, որովհետև կինը այնտեղ ստրուկ է, հարեմի գերի է, խավարի մեջ է ապրում։

Մի ամբողջ ազգի ստրկությունը սկսվում է ընտանիքից, երբ նրա առաջին զոհը լինում է կինը։

Այժմ նայենք դեպի արևմուտք։

Երիտասարդ մարդկությունը իր մանկական թարմ ուժերով առաջ է գնում և հսկայական թռիչքներ է գործում։ Կյանքը այստեղ ապահով է, իսկ ապրուստը՝ հանգիստ։ Գիտությունը օրըստօրե ծաղկում է, ար-

հեստը և ճարտարությունը օրըստօրե կատարելագործվում են։ Ամեն բանի վրա իշխում է օրենքը։ Ինչո՞ւ։ Որովհետև քրիստոնեական ազատության հետ այստեղ տիրում է կնոջ ազատությունը, թեև նա դեռ ոչ բոլորովին զերծ է նախապաշարմունքի հալածանքից...

Մեր ազգի պատմական կյանքի մեջ ավելի աչքի է ընկնում հինգերորդ դարը, այն օրհնված դարը, որ ոսկյա անուն է կրում։ Բայց պետք է նկատած, որ հայերի վիճակը այս դարում ամենաթշվառ հանգամանքների մեջ էր։ Որովհետև Հայաստանի հարստության երկու զորավոր սյուներն ընկած էին. Գրիգորի տան ժառանգական քահանայապետությունը վերջացել էր, և Արշակունյաց պետությունը կորցրել էր իր թագը։ Այն ժամանակ պարսիկները մի կողմից, հույները մյուս կողմից Հայաստանը կրակի վրա խորովում էին, հայոց նախարարները ներքին կռվով էին զբաղված։ Ժողովուրդը վերջին աստիճանի թշվառության մեջ էր. ամեն տեղ տիրում էր արյուն և կոտորած... Ահա այս օրհասական ճգնաժամի մեջ օգնության է հասնում հայրենիքի պաշտպան հրեշտակը՝ կինը։ Նա, զինված քրիստոնեական ջերմեռանդությամբ, ձեռք է մեկնում ընկած տղամարդին և վեր է բարձրացնում նրան կորստյան փոշիներից...

Ահա ինչ է անում կինը, երբ նա կրթված է, երբ նա ազատ է։

Մեր ավանի օրհնված հասարակությունը շատ վաղ հասկացավ իգական սեռի դաստիարակության կարևորությունը։ Եվ այդ ապացույց է, որ այսօր տոնում ենք մեր դպրոցի տասնամյա գոյության տարեդարձը։ Այո՛, տասն տարի է, որ գործում է մեր դպրոցը։ Նա տալիս է հասարակությանը կրթյալ մայրեր, որոնք պետք է հանձն առնեն այն խորհրդավոր հոգաբարձությունը՝ մաքրել ընտանիքը հնության փոշիներից, նոր լույս սփռել այնտեղ, նոր ոգի ներշնչել մանուկների սրտում և նոր սերունդ պատրաստել։

Մի այդպիսի ընտանիք դպրոցի նախագավիթն է։ Երբ այդ երկու հիմնարկությունները, այսինքն՝ ընտանիքը և դպրոցը, մինը մյուսին կհամապատասխանեն, այն ժամանակ թե՛ դաստիարակությունը և թե՛ ուսումը կհասնեն իրանց նպատակին։

Ուրեմն, հիմնելով այս դպրոցը՝ մեր հասարակությունը կատարեց իր ամենամեծ պարտավորությունը դեպի իր որդիքը։ Եվ մեզ, այս դըպրոցի աշակերտուհիներիս, մնում է մեր ջերմ օրհնությունը նվիրելով արարչին, բարեմաղթել այն պաշտելի անձանց կենաց համար, որ դպրոցի հաստատության սկզբնապատճառն եղան. այլև մեր խորին հարգանքը հայտնել մեր հոգաբարձության և մեր ուսուցիչներին, որ աշխատում են մեր առաջադիմության և մեր զարգացման համար։

- Եվ թող ընդունե ամենակալ տերը մեր մանկական շրթունքներեն դուրս թռած այս օրհնությունը, որում փառք հավիտյանս ամեն»։

ՆԱՄԱԿ ԱԳՈՒԼԻՍԻՑ

Հունվար, 23

Այս տարի և անցյալ տարվա կեսից սկսյալ, Ագուլիսում և նրա մերձակա գյուղորայքում, զանազան տեսակ հիվանդություններ կարծես մեկը մյուսի հետ մրցություն էին անում, թե որը շատ զոհեր կտանի։ Ամենից առաջ եկավ կարմրուկը։ Նա գործ ուներ երեխաների հետ, բայց երբեմն չափահասներին էլ չէր խնայում. տուն չկար, որ մի քանի հոգի այս ցավով բռնված չլինեին. դպրոցների աշակերտները և աշակերտուհիները համարյա կիսով չափ դատարկվեցան։ Տեղ-տեղ հայտնվում էր նաև ծաղիկը, բայց նա անվնաս էր անցնում։

Հետո երևացին ժողովրդին անծանոթ և մինչև այսօր օրինակը չտեսնված հիվանդություններ։ Դրանք արդեն վտանգավոր էին, մեծ ու պստիկին չէին նայում և անխնա կոտորում էին։ Այս հիվանդությունները մեր ժողովրդի մեջ անուններ չունեն, որովհետև առաջին անգամն է, որ գործ են ունենում նրանց հետ, և ես բժշկությունից այնքան տեղեկություն չունեմ, որ գիտենամ, թե լատիներեն որպես են կոչվում, միայն կպատմեմ, թե ինչպես էին հայտնվում և ինչ նշաններ ունեին։

Առաջինը սկսում էր քթից, որի վրա երևում էին բշտիկներ կամ փոքրիկ ուռուցքներ, եթե բշտիկները ծակվում էին և թարախը գնում էր, հիվանդը առողջանում էր, իսկ եթե չէին ծակվում, հիվանդությունը տարածվում էր դեպի գլուխը, որը սկսում էր ուռչել. այն ժամանակ դժվար էր հուսալ առողջության։

Երկրորդ տեսակի մեջ հիվանդի գլխավորապես թևքերի տակ և երբեմն մարմնի ուրիշ մասերում, հայտնվում էին պալարներ և բռնվողը ամբողջ մարմնով այրվում էր տաքության մեջ։ Եթե պալարները սև կամ կապույտ գույն էին ընդունում, այդ արդեն նշան էր, որ հիվանդի դրությունը հուսահատական է, իսկ եթե նրանք փափկանում և քաշվում էին, հիվանդը առողջանում էր։

Թե առաջին և թե երկրորդ տեսակի մասին ականատեսները խոսում են, թե դրանք միևնույն հիվանդություններն են, որ անցյալ տարի հայտնվեցավ Ռաշտում, ուր չումայի տեղ ընդունեցին։

Երրորդը մի տեսակ փողացավ է, որ տարածված է ըստ մեծի մա-

սին երեխաների մեջ։ Այս փողացավը այն տեսակներից չէ, որ մեր պառավները հեշտությամբ բժշկել գիտեին։ Դա շվարացնում է նրանց բոլոր հմտությունները։ Ուռուցքը հայտնվում է շնչափողի լեզվակների մեջ, որը, եթե խիստ էր, բոլորովին արգելում է շնչառությունը և փակում է կոկորդի անցքը։ Ներքին ծնոտի խուլերի մեջ նույնպես հայտնվում են բորբոքումներ։

Մի քանի հիվանդների մոտ այս փողացավը բոլորովին նման էր անցյալ տարվա վերջին ամիսներում Թավրիզի մեջ հայտնված սարսափելի փողացավին, որն բազմաթիվ կոտորածներ գործեց մանուկների մեջ։ Կոկորդը ուռչելուց հետո հիվանդի լնդերքը և լեզուն սկսում էին սևանալ, և մսերը ու ատամները՝ թափվել։ Դա սոսկալի տեսակն է և տարափոխիկ է։

Մի քանի ընտանիքներում մտել է նաև տիֆը, այս վերջինը այնքան խիստ չէ, թեև երկար է տևում։

Բայց ի՞նչ հնարներ է գործ դնում ժողովուրդը այս բոլորի դեմ։ Նա բավականանում է իր նահապետական հաքիմներով, որոնք, եթե որևիցե հիվանդության դեղ գիտեն, անխտիր ամեն տեսակի համար էլ գործ են դնում։ Ագուլիսը բժիշկ չունի։ Կա մի բժիշկ միայն Օրդուբադում, որը Ագուլիսից հինգ վերստ հեռու է, իսկ դա հարուստներին միայն է մատչելի, խեղճ աղքատը նրան հրավիրել չէ կարող...

Բայց ինչ նշանակություն ունի բժիշկը, որ այսքան հեռավորության վրա է գտնվում, որը անմիջական օգնություն հասցնել չէ կարող։ Նա համ դեղագործ է, համ բժիշկ, մինչև գնալը և մինչև դեղ ուղարկելը, շատ անգամ հիվանդի դրությունը փոխվում է։

Այժմ ժողովրդի հույսը միայն Աստուծո և նրա սրբերի վրա է մնացել։ Եվ այս պատճառով, ծննդյան տոնից հետո նա Երնջակա վանքից հրավիրեց «Հազարափրկչին», որ իր սուրբ շնորհքով հիվանդներին մի ճար անի։

Բայց նախքան խոսելը «Հազարափրկչի» հրաշագործությանց վրա, հարկավոր է ծանոթացնել ընթերցողին, թե ինչ բան է նա։ Դա մի պղնձե խաչ է, որի համար ավանդությունն ասում է, թե շինված է այն կոնքի պղնձից, որի մեջ Հիսուս Քրիստոսը լվաց իր աշակերտների ոտքերը։ Այդ սրբությունը բերեց Հայաստան Թադեոս առաքյալը, որպես մի հրաշալի ընծա, մեր Աբգար թագավորին։ Գուցե նրանով բժշկեց առաքյալը մեր Աբգարի բորոտությունը, բայց այդ մասին պատմությունը լռում է, միայն «Հազարափրկչի» ստացած տիտղոսից հայտնի է նրա բոլոր հրաշագործությունները։

Բայց այստեղ նկատելու մի ուրիշ կետ կա։

Տեսեք, Համը, որ այնքան վարպետ է սրբություններ հնարելում, որն մի ժամանակ հարյուրավոր էշի ոտներ էր ման ածում Եվրոպայում, ամենևին մտքովն էլ չի անցել այն կոնքը, որի մեջ լվացվեցան առաքյալների ոտները, որ մի կտոր էլ ինքն վեր առներ և մի Բյուրափրկիչ էլ ինքն շիներ։ Դժբախտ է Համը։

Թե ինչպես ընդունվեցավ «Հազարափրկիչը» մյուս գյուղերում, ես չտեսա, միայն կպատմեմ այն փառավոր հանդեսը, որով նա մուտք գործեց Ագուլիսում։

Հանդեսը կատարվեցավ Ծննդյան տոնի հետևյալ օրը։ Ժողովուրդը արդեն առավոտից պատրաստվել էր ընդունել ցանկալի Սրբությունը, և մի օր առաջ մի խումբ նվիրակներ գնացել էին Ներքին Ագուլիսից բերելու։ Գյուղից բավական հեռու, եկեղեցական դասը խաչով, բուրվառով, շարականներ երգելով մեծ բազմությամբ, որոնց մեջ իհարկե կանանց թիվը ավելի էր, դիմավորեցին «Հազարափրկչին»։ Այնտեղ կատարվեցավ «անդաստանի» սուրբ խորհուրդը։ Հետո Թափորը սկսեց դիմել դեպի գյուղը։ «Հազարափրկչին» հետևում էին և մի քանի ուրիշ սրբություններ, որպես էին՝ Թոմա առաքելո աջը, սուրբ Հովհաննու ծնոտի մի մասը, որ պատած էր ոսկու մեջ և մի փոքրիկ խաչ, որի մեջ գտնվում էր «կենաց փայտի» մի մասը։ «Հազարափրկիչը» գտնվում էր Երնջակա վանքի վարպետներից մեկի ձեռքում, իսկ մյուսները կրում էին մի-մի քահանաներ։

Թափորը առաջ էր գնում մեղմ և հանդարտ ընթացքով։

Այն օր ինքը բնությունը նպաստում էր այս սրբազան ծիսակատարությանը։ Ձմեռային տաք եղանակ էր։ Եվ Ագուլիսը, որ ուրիշ օրերում ներկայացնում է միայն խուլ և դատարկ փողոցներ փակ դռներով, այն որ կենդանացել էր և ցույց էր տալիս, թե այստեղ մարդիկների բազմություն է բնակվում։ Փողոցներում ասեղ գցելու տեղ չկար. ամբոխը ամեն կողմից վրա էր թափվում, ամեն հասակի և ամեն սեռի։

Մի քանի տեղերում Թափորը կանգնեցավ և խորհրդավոր կերպով «անդաստան» կատարեցին, աշխարհի չորս կողմը օրհնեցին և հիվանդությանց համար փարատություն խնդրեցին։

Նա դարձյալ սկսեց առաջ ընթանալ։

Տեսնելու էր, թե որպես ջերմեռանդների բազմությունը մոտենում էր, համբուրում էր Սրբությունը և մինչև անգամ վարդապետի շուրջառի դրոշակները, որ կրել էր նրան։ Տեսնելու էր, թե որպես տներից դուրս էին բերում փաթաթած հիվանդներ և գնում էին այն ճանապարհի վրա,

որ անդից անցնում էր «Հաղարափրկիչը»։ Ջերմեռանդ ժողովրդի այս հավատքը տեսնելով, ես մտաբերում էի այն տեղը Սուրբ գրքից, երբ հիվանդներին պատգարակներով և մահիճներով դնում էին հրապարակների վրա, որ Պետրոսի անցկենալու ժամանակը գոնյա նրա հովանին ընկնի նրանց վրա և առողջանան։

Երևի էր, երբ «Հաղարափրկիչը» մյուս սրբությունների հետ հասցըրին Թոմա առաքյալի վանքը և բազմեցրին սեղանի վրա։ Մյուս օրը պատարագ մատուցվեցավ։ Եվ այդ մի հարմար առիթ էր, որ Ագուլիսի կանայքը, դուրս գալով իրանց փակված արգելանոցներից, մի քանի օր շարունակ խմբերով գալիս էին վանքը՝ համբուրելու սրբությունները և իրանց հոգեպահուստ կոպեկները ձգելու փոքրիկ գանձանակի մեջ, որ դրած էր «Հաղարափրկչի» կողքին։

Եթե աշխարհից բոլորովին վերացվի սնահավատությունը, կանայք նորից կստեղծեն նրան։

Ես նպատակ չունեմ վիրավորելու ոչ ոքի ջերմեռանդությունը, երբ մտածում եմ, թե այնպիսի սնահավատությունները կարող են օգնել կրոնին։ Միայն կասեմ, որ հրաշքների դարը անցել է և կհիշեցնեմ մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերը, որ ասաց հրեաներին, թե «Չար և շնացող ազգը միայն նշան (հրաշք) է խնդրում» (Մատթեոս, ԺԲ, գլ. 39 համ.)։

Նկատված է, թե որևիցե հիվանդության ժամանակ, թե խոլերա լինեն, թե ժանտախտ լինեն և թե այսպիսի տարափոխիկ հիվանդություններ, որպես այժմ տարածվել են մեր կողմերում, երբ ժողովուրդը իր սրբությունների օգնության է դիմում, և երբ այսպիսի թափորներ են կատարվում, միշտ նրանից հետո զոհերի թիվը ավելանում է, և մարդիկ համեմատաբար շատ են մեռնում։ Դա շատ բնական է։ Մինչև այն օր հիվանդներին հոգ էին տանում, պահպանում էին, բայց թափորներից հետո խնամակալները կարծես բավականություն են ստանում, նրանց տիրում է մի տեսակ անհոգություն, որ առաջ է գալիս սնոտի հույսից։ Պարզ ասած, հիվանդները թողնվում են սրբերի կամքին։

Այսպիսի թափորներ կատարվում են ոչ միայն հիվանդությունների ժամանակ, այլ միշտ, երբ երաշտություն է լինում, կամ երբ ցանքերին սպառնում է մարախը, և երբ ծառերի տերևները ուտում է թրթուրը։ Ժողովուրդը հույսը սրբությունների վրա դնելով, չէ մտածում ուրիշ կերպով հեռացնել վտանգը։ Ահա վնասը։

Բայց ես խորհուրդ կտայի մեր սիրելի ազգակիցներին, թող նրանք իրանց հույսը չկտրեն սրբություններից, բայց միևնույն ժամանակ հարկավոր է մտածել և բժիշկի վրա։ Աստված չէ արգելում բժշկությունը,

նույնիսկ հրաշքների դարերում Քրիստոսի աշակերտների թվում կային և բժիշկներ, որպես էր Ղուկաս բժիշկը, որ առանց գերբնական զորության, նյութական դեղերով բժշկություններ էր անում:

Ագուլեցին այն ժամանակ միայն մտածում է բժշկի վրա, երբ սիրելի զավակը իր աչքի առջևը անպաշտպան մեռնում է։ Սակավ չեն օրինակները, որ այսպիսի դեպքերում Նախիջևանից, Թավրիզից, մի քանի հարյուրներ ծախսելով, բժիշկներ են բերել տվել։ Բայց նա գտել է հիվանդին կամ հոգեվարքի մեջ և կամ գերեզմանը դրած։

Ագուլեցիք համարյա ամեն բան ունեն, բայց բժիշկ չունեն։ Ագուլեցիք ամեն բանի համար խելոք մտածող են, բայց բժշկի համար անհոգ են։

Եվ իրավ, եթե Թիֆլիսը վերցնենք, Ագուլիսը թեև մի գյուղ է, բայց համեմատելով Կովկասի բոլոր քաղաքների հետ, նա առաջադեմ է։ Վաճառականության մեջ ագուլեցին առաջին դերն է խաղում։ Ագուլեցին ունի մետաքսի գործարաններ շոգեգործ մեքենաներով, ագուլեցին ունի հարստություն և մեծ կրեդիտ առևտրական շրջաններում։ Ագուլեցվոց տների մաքրությունը, տնտեսական բարեկեցությունը, ընտանեկան բարոյականությունը կարող են օրինակ լինել մյուս տեղերին։ Ագուլեցվոց դպրոցների վիճակը նույնպես ավելի բարձր և ավելի ապահով է, քան թե ուրիշ տեղերում։ Մի խոսքով ագուլեցին բավական ուղիղ շավղի վրա է ընթանում, և չեմ սխալվի, եթե նրանց կոչելու լինեմ Կովկասի ամերիկացիք։ Բայց մի այսպիսի գործնական ժողովրդին ներելի չէ անհոգ մնալ կենսական ամենաանհրաժեշտ պետքի մեջ, որպիսին է բժիշկը։

Ագուլեցին, իրավ է, խնայող է, բայց ժլատ չէ։ Նա իր արծաթը մինչև այսօր չէ խնայել այն բոլոր պահանջների համար, ինչ որ իրան հարկավոր է։ Եվ հույս ունեմ, որ իմ առաջարկությունը նույնպես անպտուղ չի մնա. ագուլեցիք կմտածեն սեփական բժիշկ ունենալու համար։ Բավական է միայն միաբանություն, այն ժամանակ գործը կատարված կարելի է համարել։

ԱԿՆԱՐԿՆԵՐ (ԷՋ 7—63)

Այս վերնագրի տակ ի մի են բերված Րաֆֆու այն ստեղծագործությունները, որոնք ժանրային առումով ունեն ակնարկային բնույթ։ Իհարկե, այս գործերը հիմք չեն տալիս ասելու, որ Րաֆֆին ցանկացել է զբաղվել ակնարկային ժանրով և ահա գրել է երեք գործ։ Սրանք տարբեր ժամանակներում նրա ճանապարհորդությունների հիման վրա գրած ուղեգրությունների ընդհանուր շղթայից առանձնացված պատկերներ են, որոնց մեջ ճանապարհորդական տպավորությունը տեղի է տվել ակնարկային ժանրին։ Հենց այս նկատառումով նպատակահարմար է դիտվել այս երեք գործը՝ «Աղթամարա վանքը», «Ջրաբերդը» և «Ուղևորություն Պարսկաստանում» պատկերները առանձնացնել «Ուղեգրություններից» և զետեղել Ակնարկներ *ընդհանուր խորագրի տակ։*

Ակնարկները հատորում տեղադրված են ժամանակագրական հաջորդականությամբ։

ԱՂԹԱՄԱՐԱ ՎԱՆՔԸ (ԷՋ 7—35)

«Աղթամարա վանքը» ակնարկի ինչպես գրության թվականի, այնպես էլ հեղինակի ճանապարհորդության տարեթվի վերաբերյալ մեզ են հասել իրարամերժ գրառումներ, որոնք թեև տարիներ շարունակ կողք կողքի եղել են շրջանառության մեջ, այսուհանդերձ աղաղակող անճշտությունը շտկման չի արժանացել։ Ոչ ստույգ փաստերի վրա հենվելու հետևանքով շփոթ ու հակասություն է առաջ եկել րաֆֆիագիտական գրականության մեջ, որի պարզաբանումը ավելի քան անհրաժեշտ է դառնում Րաֆֆու երկերի սույն գիտական հրատարակության առիթով։

Ավագ Ավթանդիլյանի հուշերից հայտնի է, որ Րաֆֆին, 1857 թվականին «անցնելով Թուրք-պարսկական սահմանը, մի քանի հայաբնակ գյուղեր ու վանքեր տեսնելուց հետո» հասնում է Վան և իջևանում է Այգեստանում։ Այնուհետև այցելում է Վարագ, հանդիպում է Խրիմյանի հետ, տեսնում է Ժառանգավորաց դպրոցը և ապա Բաղեշի վրայով մեկնում է Մուշ՝ Ս. Կարապետի վանքը։ Այս ճանապարհորդության առաջին կեսը հատկանշական է նրանով, որ երիտասարդ Րաֆֆին Վանում, Վարագում, Բաղեշում ու Մուշում իր ստացած թարմ տպավորությունների տակ գրում է մի շարք բա-

ստեղծությունները։ Վերադարձին նա մտնում է Աղթամար կղզին, հանդիպում և վեճի է բռնվում վանականների հետ Հայաստանի լուսավորության վերաբերյալ, ապա առանձնանալով գրում է հանրահայտ «Ձայն տո՛ւր, ո՛վ ծովակ» բանաստեղծությունը։ Բանավեճի մանրամասները վերադարձին նա ամփոփում է «Աղթամարա վանքը» ակնարկի մեջ և ուղարկում է «Հյուսիսափայլ» ամսագրի հրատարակողին, որը լույս է տեսնում հանդեսի 1860 թվականի 11-րդ ամսատետրակում՝ ճանապարհորդության թվականի վերաբերյալ փաստական հավաստիացում պարունակող մի ծանուցմամբ։ Ակնարկի վերնագրի և տեքստի արանքում մանր տառերով տպագրված է. «Խոսակցություն ազգային լուսավորության վերա, դուրս հանված մի ճանապարհորդությունից, որ եղած է 1858 թվակ. շրջագ. Վասպուրականի և Տարոնի կողմերում» (ընդգծումը մերն է— Խ. Ս.։ Տե՛ս «Հյուսիսափայլ», 1860, № 11, էջ 398, տե՛ս նաև այս հատորում, էջ 7)։

Ինչպես նկատելի է՝ տարբերություն գոյություն ունի «Հյուսիսափայլում» տպագրված գրառման և Ավթանդիլյանի հայտնած թվականի միջև։ Րաֆֆու ճանապարհորդության անդրադարձող հեղինակները, կենսագիրներն ու գրականագետները տասնամյակներ շարունակ օգտագործել են այս երկու տարեթվերը առանց տարբերությունը նկատելու, առանց շարժառիթների մեջ խորամուխ լինելու։

Այդ տարեթվերի տարբերակումն ու ճշտումը ավելի քան կարևոր է այսօր, որովհետև սերտորեն կապված է «Աղթամարա վանքը» ակնարկի գրության պատմության, Րաֆֆու կենսագրության առնչվող մի շարք հարցերի պարզաբանման, «Հյուսիսափայլի», Նազարյանի ու Նալբանդյանի հետ նրա ունեցած աղերսների մեջ հստակություն մտցնելու և որոշ անհիմն ենթադրություններ շտկելու առումով։

Ճանապարհորդությունը ըստ Ավթանդիլյանի (տե՛ս «Րաֆֆին ժամանակակիցների հուշերում», Ե., 1986, էջ 84), Շիրվանզադեի (տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1888, № 16, էջ 215), Համբարձում Առաքելյանի (տե՛ս նույն տեղում, էջ 219) և շատ ուրիշների՝ տեղի է ունեցել 1857 թվականին։ Ըստ Լեոյի (տե՛ս «Երկերի ժողովածու», հ. 6, Ե., 1987, էջ 153), Ա-դոյի (տե՛ս Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի «Իմ հիշողությունները» ձեռագիր աշխատությունը, Հայաստանի պետական պատմական թանգարան, ՆՊՖ, 839/193, էջ 234—240) և այլոց՝ տեղի է ունեցել 1858 թվականին։ Ճամփորդությունը 1857 թ. վերագրողները հենվել են սեփական մակաբերումների, մասամբ նաև Րաֆֆու հետ իրենց անձնական զրույցների վրա, իսկ 1858 թվականին վերագրողները հիմք են ընդունել «Հյուսիսափայլի» մեջ այս մասին եղած «Հեղինակային» գրառումը։

Րաֆֆու ճանապարհորդությանը հետագայում անդրադարձողները գերազանցապես օգտվել են վերը նշված երկու խումբ սկզբնաղբյուրներից, նայած թե տվյալ պահին որ փաստն են ունեցել իրենց ձեռքի տակ և կամ որին են նախապատվություն տվել։ Կան նաև այնպիսի գրականագետներ, որոնք երկու տարեթվերն էլ գործածել են առանց անդրադառնալու եղած տարբերությանը։

Թեև Արևմտյան Հայաստան 1858 թվականին մեկնած լինելու վարկածի հեղինակ համարելով ճանապարհորդ Րաֆֆուն, կարծես թե նրան չհավատալու իրավունքը չունենք, սակայն կան մեկից ավելի ուղղակի և անուղղակի փաստեր, որոնք ապացուցում են, որ այդ ճանապարհորդությունը տեղի է ունեցել ո՛չ թե 1858, այլ 1857 թվականին։

1874-ի փետրվարին լույս է տեսնում «Փունջ» մատենաշարի առաջին հատորը, որի մեջ ամփոփված էին նրա 1856—1874 թթ. ընթացքում գրած չափածո ստեղծագործությունները։ Չհաշված առանձին բացառություններ, բոլոր բանաստեղծությունների տակ մատնանշված են գրության վայրերն ու տարեթվերը։ «Փունջում» ամփոփված ստեղծա-

գործությունների մեջ տեղ են գտել նաև Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներում գրած բանաստեղծություններից հինգը, որոնց համար իբրև գրության տարեթիվ տողատակին մատնանշված է 1857 թվականը: Այսպես՝ «Արայն պատերազմի դաշտում» և «Օրորոցի երգը զեյթունցի հայ տիկնոջ» ստեղծագործությունները գրվել են Վանում, 1857 թ. (Րաֆֆի, «Փունջ», հ. 1, Թիֆլիս, 1874, էջ 75, 138)։ «Ողբ զեյթունցի կնոջ» և «Միություն» ստեղծագործությունները գրվել են Բաղեշում, 1857 թ. (նույն տեղում, էջ 163, 166) և «Մշակ» ստեղծագործությունը՝ Մուշում, 1857 թ. (նույն տեղում, էջ 28)։

Րաֆֆու Արևմտյան Հայաստանում գրած ստեղծագործություններից է նաև «Նվեր Վասպուրական Արծվույն» բանաստեղծությունը, որը ըստ Աննա Րաֆֆու վկայության գրվել է 1857 թվականին (նույն տեղում, էջ 30)։ Անհրաժեշտ է ավելացնել, որ «Փունջում» կան բանաստեղծություններ՝ գրված նաև 1858 թվականին, բայց դրանցից և ոչ մեկի գրության վայրը Արևմտյան Հայաստանը չէ։

Ավելորդ չպետք է համարել նաև հետևյալ անուղղակի փաստը։ Ինչպես հայտնի է, «Կայծերի» երկրորդ հատորի «Վարագ» գլխում Րաֆֆին նկարագրում է Խրիմյանի և Ասլանի (ասել է թե իր և Խրիմյանի) հանդիպումը։ Այդ պահին, ըստ «Կայծերում» եղած հավաստիացման, Խրիմյանը 37 տարեկան էր։ Եթե հայտնի է, որ վերջինս ծնվել է 1820 թ., ապա հասկանալի է, որ Վարագում Րաֆֆու և Խրիմյանի հանդիպումը տեղի է ունեցել 1857 թվականին։

Վավերականության մեծ երաշխիքներ ունեցող այս փաստերը, գումարվելով Շիրվանզադեի ու Ավթանդիլյանի հայտնած տեղեկություններին, ավելի են ամրապնդում նրանց մատնանշած տարեթվի հիմքերը, և անառարկելի է դառնում Րաֆֆու ճանապարհորդությունը 1857 թվականին կատարած լինելու փաստը:

Այս պարագայում, եթե չենք ցանկանում շրջանցել հակասությունը, ապա պետք է պատասխան տրվի այն հարցին, թե ինչո՞ւ Րաֆֆու 1857 թվականին Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդությունը վերագրվել է 1858 թվականին։

1858 թվականի կեսերին հոր առևտրական տան գործերի բերումով գալով Թիֆլիս՝ Րաֆֆին իր գիմնազիական ընկերների միջոցով ծանոթություն է հաստատում Ներսիսյան դպրոցի վերակացու Հովհաննես Քաթանյանցի հետ և, տեղեկանալով, որ վերջինս մտերմական կապերի մեջ է Ստեփանոս Նազարյանցի ու Միքայել Նալբանդյանի հետ, որոշում է օգտվել այդ բարեկամությունից։

Ավարտելով գործերը և վերադառնալով Փայաջուկ, Րաֆֆին Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդության նկարագրությունից մի հատված առանձնացնելով, վերամշակում է և 1859 թվականի հունվարի 15-ին մի նամակի հետ ուղարկում է Թիֆլիսից Ստավրոպոլ տեղափոխված իր «հոգեկից բարեկամ», արքունի գիմնազիայի նկարչության դասատու Հովհաննես Քաթանյանցին։ «Կարդա իմ այս... գործը,— գրում է Րաֆֆին վերջինիս,— որ անցյալ տարու ճանապարհորդության պտուղն է. եթե հաճելի կթվի քեզ, կարող ես ուղարկել Մոսկվա՝ պարոն հրատարակչին «Հյուսիսափայլի», որ թե արժան կգտանե, թող տպել տա յուր օրագրի տետրակներից մինի մեջ»։

Ինչպես հայտնի է դառնում նամակին կցված Քաթանյանցի ծանոթագրությունից, վերջինս, հավանելով «Աղթամարա վանքը», Մոսկվա մեկնողի միջոցով այն ուղարկում է Ստ. Նազարյանցին, «երեսանցի» խնդրելով, «որ եթե արժան տեսնվի՝ տպվի «Հյուսիսափայլի» մեջ»։ Ստանալուց և մեկ տարի ութ-ինն ամիս պահելուց հետո՝ 1860 թվականի նոյեմբերին, Նազարյանը Րաֆֆու ակնարկը, Քաթանյանին ուղղված նամակի հետ մեկտեղ, հրատարակում է «Հյուսիսափայլի» մեջ։

Տարիներ անց, Անանիա Սուլթանշահի հետ մի զրույցի ժամանակ Հովհաննես Քաթանյանցը, անդրադառնալով այս դեպքերին, պատմում է, որ «Աղթամարա վանքը» աշխատության հեղինակ «Հակոբ Մելիք-Հակոբյանին ինքն է ճանաչել դեռ 1858 թ. Թիֆլիսում... Նա իմ աշակերտներիս ընկերն էր, համակրում էր մեր պայքարին խավարամիտ Ջալալյան եպիսկոպոսի դեմ։ Մի օր էլ եկավ ինձ մոտ բազմաթիվ էջեր պարունակող ձեռագրերով ու խնդրեց, որ եթե կարելի է, աջակցեմ՝ «Հյուսիսափայլում» զետեղել։ Լսած էր,— շարունակում է նա,— իմ մտերիմ հարաբերությունների մասին խմբագրության հետ, ես էլ այդպես արի, թեև ձեռագիր մեկ տարուց ավելի ինչ-ինչ պատճառով մնաց մասամբ իմ, մասամբ Նալբանդյանի, մասամբ էլ Նազարյանի մոտ։ Հոդվածի լեզուն Նալբանդյանը մասամբ ուղղել էր և ավելի մոտեցրել «Հյուսիսափայլի» լեզվին։ Հոդվածը Աղթամարա վանքն էր նկարագրում» (տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1938, № 8, էջ 115, ընդգծումը իմն է — Խ. Ս.)։

Հատկանշական է, որ «Աղթամարա վանքը» աշխատության ձեռագրում փոփոխություններ անելու փաստին անդրադարձել է նաև հենց ինքը՝ հեղինակը։ 1861 թ. ապրիլի 25-ին Ուրմիայից Հ. Քաթանյանցին ուղղված նամակում Րաֆֆին գրում է. «Շնորհակալ եմ, աշխատել եք հասցնելու «Աղթամարա վանքը» մեր մի հատված բանը Մոսկվա, պատվելի Նազարյանցին, որ կարդացի «Հյուսիսափայլի» թերթերու մեջ։ Դարձյալ շնորհակալ եմ պարոն Նազարյանցին, առավել հույժ պատճառով պատվել է մեր գրվածքը, տպելով յուր պատվական օրագրի մեջ, մանավանդ մշակելով նորա բնությունը» (Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1958, էջ 23)։

Հովհաննես Քաթանյանցի այն հավաստիացումը, թե այդ «աշխատության ձեռագիրը մեկ տարուց ավելի, ինչ-ինչ պատճառով» մնացել է Նալբանդյանի ու Նազարյանցի մոտ, և այն, որ նրանք Րաֆֆու աշխատության լեզուն «մասամբ ուղղել են, ավելի մոտեցրել «Հյուսիսափայլի» լեզվին», ոչ միայն հետաքրքիր է առհասարակ «Աղթամարա վանքը» աշխատության հրատարակման պատմության տեսակետից, այլև որոշ իմաստով բանալի է դառնում՝ պարզելու, թե ինչո՞ւ է Րաֆֆու 1857 թվականին կատարած ճամփորդությունը վերագրվել 1858 թվականին։

Նալբանդյանի ու Նազարյանցի գործուն միջամտությունը Րաֆֆու ակնարկի ձեռագրում հանգեցնում է նրան, որ «Աղթամարա վանքը» ակնարկի մեջ կղզու վանականները տիրացու Հակոբի (Րաֆֆու) հետ լուսավորության հարցի շուրջը ունեցած բանավեճի ընթացքում քննադատում են նաև «Հյուսիսափայլի» դավանած սկզբունքները և նրա աշխատակիցների կողմից աշխարհաբար լեզվի պաշտպանությունը։ «Մարդ չհասկանար,— ասում է հայր սուրբը,— թե ի՞նչ կզրուցեն այդ շատախոս տետրակները։ (Խոսքը «Հյուսիսափայլի» ամսատետրակների մասին է — Խ. Ս.)։ Իրենց նոր, օձի նման ոլորուն լեզվովը։ Սատանան էլ կարող չէ հասկանալ... Ինչ այդպես կթեքթեքեք ձեր լեզուն նորանոր բառերով։ Տո Նազարյանց, ի՞նչ ըսեմ քեզի, դու միշտ Մոսկվայեն կռռաս, թե աշխարհաբար պիտի գրել և մտածել, որ ամեն մարդ հասկանա» (տե՛ս այս հատորում, էջ 21)։

Նման և ավելի մեծ չափերի ուղղումներ ու հավելումներ «Հյուսիսափայլին» ուղարկված հոդվածներում կատարելու փաստը ամսագրի հրատարակության պատմությանը ծանոթ ընթերցողին չի կարող զարմացնել։ Նալբանդյանն ու Նազարյանցը այլ առիթներով ևս դիմել են նման միջոցների։ Ետ ուղարկելով «Հյուսիսափայլի» թղթակից Հովհաննես Սայաթնովյանցի հոդվածը, Նազարյանցը նրան գրում է. «Դուք այժմ ետ եք տեսնում Ձեր հոդվածը ավելի կատարյալ կերպարանքով և բովանդակությամբ՝ ըստ

էության և ոչ ըստ ձևույն։ ...Դուք համեմատելով իմ ձեռագիրը Ձերի հետ, կգտնեք մի քանի բան դուրս ձգած, այլ բաներ այլապես կարդացած, և բոլոր Ձեր հոդվածի կատարելության դիտավորությամբ... Ես իմ «Հյուսիսափայլի» մեջ միշտ պաշտպանել եմ մի այդպիսի կանոն դեպի իմ բարեկամքը *(տե՛ս Ստեփանոս Նազարյան, Նամականի, Ե., 1969, էջ 261—262, ընդգծումը իրենն է)։ Այն հանգամանքը, որ Ստ. Նազարյանը* միշտ պաշտպանել է մի այդպիսի կանոն դեպի իր բարեկամները, *հիմք է տալիս ասելու, որ Րաֆֆու «Աղթամարա վանքը» աշխատությունը զերծ չի մնացել այդ* կանոնի *տակ ընկնելու պատահությունից։ Պետք է կարծել, որ երկու դեպքում էլ մոտեցումը եղել է նույնը։ Հովհաննես Սայաթնովյանցի հոդվածի հետ արվել է այն, ինչ պետք է, որ ավելի մեծ չափերով կատարված լիներ Րաֆֆու ակնարկի հետ։*

Նազարյանցի ու Նալբանդյանի այս կարգի վերաբերմունքը յուրովի պատճառաբանված է։ Նրանց համար մեծ կարևորություն ուներ, որ «Հյուսիսափայլի» գաղափարները, նրա ծավալած պայքարը ժողովրդի լայն խավերի մեջ մտքեր էր շարժում, կրքեր հրահրում, նրանց բարձրացրած հարցերը արձագանք էին գտնում Հայաստանի հեռավոր անկյուններում, թեկուզ և որոշ քննադատական խոսք ասվեր աշխատակիցների և դավանած սկզբունքների վերաբերյալ։ «Ստորագրողների (բաժանորդների— Խ. Ս.) բազմությունը,— գրում է Մ. Նալբանդյանը Կ. Հայրապետյանին ուղարկած նամակում,— մեզ համար բացի նյութականից ունի և բարոյական օգուտ, որովհետև կարող ենք ցույց տալ պարծանքով, թե ահա ազգը ընդունում է...» *(տե՛ս Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Ե., 1949, էջ 36)։ Այս հետապնդվող նպատակը իրականացնելու՝ «Հյուսիսափայլի» քարոզած գաղափարների արձագանքները Հայաստանի հեռավոր անկյուններում ու ժողովրդի լայն խավերի մեջ տարածում և պաշտպանություն գտնելու բաղձալի մտայնությունը իբրև կատարած իրողություն ցույց տալու համար Նալբանդյանն ու Նազարյանցը ոչ միայն խնդրում էին իրենց բարեկամներին «ամենայն ջանք և աշխատություն գործ դնել» (նույն տեղում), այլև իրենք էին դիմում ամենատարբեր միջոցների։*

Վերը ասվածից հասկանալի է դառնում, որ Մ. Նալբանդյանն ու Ստ. Նազարյանցը, «ինչ-ինչ պատճառով» մեկ տարուց ավելի Րաֆֆու աշխատությունը պահելով իրենց մոտ, ոչ միայն սրբագրում են լեզուն՝ ավելի մոտեցնելով «Հյուսիսափայլին», այլև խմբագրում են «Աղթամարա վանքը» և ընդունված կանոնի համաձայն ավելացնում են այն նատվածները, որ վերաբերվում են Մոսկվայում ապրող պարոնների լուսավորական գործունեությանը, «Հյուսիսափայլի» «շատախոս տետրակներին», «օձի նման օլորուն լեզվին» *և էլի շատ ու շատ մտքերի ու գաղափարների։*

Կատարելով համապատասխան հավելումներ, Նալբանդյանն ու Նազարյանցը լիովին հասնում են իրենց նպատակին։ Այս անցուդարձերին անտեղյակ Լեոն, իր «Ստեփանոս Նազարյան» աշխատության մեջ անդրադառնալով «Աղթամարա վանքը» «Հյուսիսափայլի» մեջ տպագրվելու փաստին, գրում է. «Այդ նկարագրություններից մենք, ի միջի այլոց, տեսնում ենք, որ Նազարյանի անունն ու ձայնը Թուրքաց Հայաստանի այդ խուլ ու հեռավոր անկյունն էլ էր հասել» (տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1987, էջ 112)։

Այն հանգամանքը, որ իրենց մտահղացումներն ու գործադրված ջանքերը պսակվում էին հաջողությամբ, ուրախություն էր պատճառում Նազարյանցին։ Ավելին, վերջինս նման դեպքերը ներքին հպարտությամբ ու մեծ ոգևորությամբ պատմում էր իր բարեկամներին։ Այս իմաստով ուշագրավ է «Հյուսիսափայլի» թղթակից Գաբրիել Տեր-

Հովհաննիսյանի (Քաջբերունու) պատմած հուշը «Նազարյանցը,— գրում է նա,— շատ զվարճանում էր Աղթամարա վանքի վանահոր խոսքերով նույն իսկ Նազարյանցի մասին, որ բերել էր յուր նկարագրության մեջ Հակոբ Մելիք-Հակոբյանը։ Լավ հիշում եմ,— ավելացնում է նա,— որ մի երեկո յուր առանձնասենյակում Նազարյանցի հյուրերի առաջ սրտանց ծիծաղելով կարդաց «Հյուսիսափայլի» մեջ վանահոր խոսքերը. «Ո՜ Նազարյանց, ի՞նչ ըսեմ քեզի, դու մի՜շտ Մոսկվային կըռաս, թե աշխարհաբար պիտի գրել և մտածել, որ ամեն մարդ հասկնա» (տե՛ս Քաջբերունի, «Ստեփանոս Նազարյանցի շուրջը, վաթսունական թվականներում», Վաղարշապատ, 1917, էջ 30)։

Երբ հայտնի են դառնում «Աղթամարա վանքը» աշխատության խմբագրման հետ կապված մանրամասները, ապա ավելի քան պարզ է, որ Արևմտյան Հայաստան Րաֆֆու կատարած ճանապարհորդությունը 1858 թվականին վերագրելը ոչ տպագրական վրիպակ է, ոչ էլ անուշադրության հետևանքով առաջացած սխալ, այլ կատարված է մտածված կերպով և այն էլ ոչ թե ճանապարհորդ հեղինակի, այլ՝ Նալբանդյանի ու Նազարյանցի կողմից։ Փոխելով ճանապարհորդության տարեթիվը, նրանք չէին կարող անփոփոխ թողնել ակնարկի գրության թվականը, ուստի 1859 թ. հունվարի 15-ի փոխարեն ակնարկի գրության թվականը դարձնում են 1860 թ. հունվարի 15։

Եթե Նալբանդյանն ու Նազարյանցը, հարազատ մնալով իրականությանը, աշխատության ենթավերնագրում անփոփոխ թողնեին Րաֆֆու կազմած նախադասությունը՝ որ նա ճանապարհորդությունը կատարել է 1857 թվականին, ապա նրանք իրավունք չէին ունենա աշխատության մեջ տեղ տալու 1858 թվականի ընթացքում կատարված դեպքերի մասին վերոհիշյալ խոսակցությանը։ Մինչդեռ, երբ նրանք կատարում են ժամանակագրության խախտում, ճանապարհորդությունը վերագրում են 1858 թվականին և ակնարկի հրապարակումը հետաձգում են մինչև 1860 թվականի նոյեմբեր ամիսը, ապա «Հյուսիսափայլի» աշխատակիցների դավանած սկզբունքների մասին Աղթամարա կղզում տարվող խոսակցությունը, եթե ոչ բոլոր կողմերով, գեթ ժամանակագրական առումով դառնում է պատճառաբանված ու տրամաբանական։

Մ. Նալբանդյանն ու Ստ. Նազարյանցը, Րաֆֆու «Աղթամարա վանքը» ակնարկում կատարած խմբագրական աշխատանքների ընթացքում տարվելով իրենց ամսագրի լայն ժողովրդականությունը և տարածվածությունը ցույց տալու մտահոգությամբ, ստվերի մեջ են թողել տեղական իմաստով ավելի կարևոր նշանակություն ու կշիռ ունեցող դեպքերը, որոնք կատարվել էին 1858 թվականի ընթացքում։

Պարզենք այս միտքը... Եթե ընդունում ենք, որ Րաֆֆին այդ ճանապարհորդությունը կատարել է 1858 թ. ամռանը, և Աղթամար կղզում կուսակրոն հոգևորականները արդեն տեղյակ էին «Հյուսիսափայլի» մեջ վիճարկվող հարցերին, ապա նրանք անտեսել են այն իրողությունը, որ նույն 1858 թվականի սկզբից Վարագում լույս էր տեսնում «Արծվի Վասպուրական» ամսագիրը, որի հանդեպ կղզու հոգևորականները ունեին արդեն ոչ թե բացասական, այլ ուղղակի թշնամական վերաբերմունք։ Եթե Րաֆֆին Աղթամար այցելեր 1858 թ. ամռանը, ապա Խրիմյանի դեմ չարությամբ լցված հոգևորականները առիթը բաց չէին թողնի ծաղրելու ու պարսավանքի ենթարկելու Վարագում նրա հիմնադրած տպարանն ու ամսագրի հրատարակումը, մինչդեռ, ինչպես հայտնի է, Րաֆֆու աշխատության մեջ Խրիմյանի «մեղքերի» թվում չկան այս իրադարձությունների հիշատակումն ու արձագանքները։

Մյուս կողմից րաֆֆիագիտությանը հայտնի է, որ Վարագում Խրիմյանի «արած մեծ անօրինությունները» լսելով՝ Րաֆֆին շտապում է այդ «ավետաբեր լուրը» հաղոր-

դել Թիֆլիսում ապրող իր բարեկամներին և ապա գործուն մասնակցություն է հանդես բերում՝ թղթակցում է Խրիմյանի հիմնադրած ամսագրին։

Եթե Րաֆֆին, իրոք, 1858 թվականի օգոստոսին գտնվեր Աղթամարում ու Վարագում, իր ակնարկում նա արդեն հանդես կգար ոչ թե իբրև տիրացու Հակոբ, այլ՝ «Արծվիի» պարսկահայ թղթակից Հակոբ Միրզայան Մելիք-Հակոբյանց ու «հարկադրաբար» մեծ տեղ կհատկացներ Խրիմյանի անձին և հետո չէր կարող շրջանցել նրա հրատարակած ամսագիրը ասպարեզում լինելու փաստը, այն դեպքում, երբ Րաֆֆին ոչ միայն ոգևորված էր «Արծվիի» գործունեությամբ, թղթակցում էր ամսագրին, այլև սկսած հրատարակության առաջին օրվանից՝ նրա եռանդուն տարածողն էր պարսկահայության մեջ ու պաշտոնական գործակալը՝ Սալմաստում (տե՛ս «Արծվի Վասպուրական», 1858, էջ 28, 56, 84, 111, 139, 167, 195, 223, 251, 275, 307, 335, մինչև 1860 թ. հունվարը ներառյալ)։ Հետևությունը այն է, որ Րաֆֆու աշխատության մեջ տեղական նշանակություն ունեցող դեպքերի բացակայությունը առաջացել է ոչ թե անուշադրության ու անտեսման, այլ Րաֆֆու այցելած շրջանում իրականության մեջ այդ փաստերի բացակայության հետևանքով։ 1857 թ. օգոստոսին Արևմտյան Հայաստանում շրջագայող Րաֆֆին չէր կարող իր աշխատության մեջ տեղ հատկացնել մեկ տարի հետո, 1858 թ. կատարվելիք դեպքերի նկարագրությանը։ Սակայն, քանի որ ժամանակագրության խախտումը կատարել են Նազարյանցն ու Նալբանդյանը և անտեղյակության հետևանքով անտեսել են այս հանգամանքը, ուստի ակնարկում «չտրամաբանված անուշադրությամբ» ստվերի մեջ են մնացել ոչ միայն Խրիմյանի հիմնադրած տպարանն ու «Արծվի Վասպուրական» ամսագիրը, այլև նրա թղթակից ու գործակալ Հակոբ Միրզայան Մելիք-Հակոբյանցը։

«Աղթամարա վանքը» աշխատության մեջ առկա է ժամանակագրության խախտման մի այլ ավելի ցցուն օրինակ։ Երկխոսության ընթացքում վանականները, անդրադառնալով Խրիմյանի անձնավորությանը՝ նրան ծաղրում են, որ «...չարվաղարի նման տարին մի անգամ կվազե դեպի Պոլիս ամիրաներուց օգնություն խնդրելու» (Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, Ե., 1957, էջ 290)։ Այս փաստի հիշատակումը Րաֆֆու աշխատության մեջ անտրամաբանական է արդեն մի այլ առումով։ Եթե Րաֆֆին Աղթամար այցելած լիներ նույնիսկ 1858 թվականի օգոստոսին, միևնույն է, ժամանակագրական իմաստով չէր արդարացվի այս խոսակցության առկայությունը ակնարկում, որովհետև Խրիմյանը նյութական միջոցներ հայթայթելու համար Պոլիս է մեկնում 1859 թվականի ձմռանը՝ հունվար-փետրվար ամիսների ընթացքում, և վերադառնում 1859 թվականի նոյեմբերի 8-ին (տե՛ս «Մեղու», Կ. Պոլիս, 1859, 10 հուլիսի, № 19, էջ 145, 10 նոյեմբերի, № 28, էջ 217)։ Այս դեպքի հիշատակությունը Րաֆֆու աշխատության մեջ նույնպես ավելացրել են «Հյուսիսափայլի» խմբագրատանը՝ հենվելով «Մասիսի» և հատկապես «Մեղվի» հաղորդած տեղեկությունների վրա։

Երբ ընդունում ենք, որ «Աղթամարա վանքը» աշխատության մեջ Մ. Նալբանդյանն ու Ստ. Նազարյանցը կատարել են հավելումներ, լեզվական ու խմբագրական բնույթի փոփոխություններ, ապա մեզ մնում է ոչ միայն հաստատել Հովհաննես Քաթանյանցի հավաստիացումը, այլև ավելացնել, որ կատարվածի գերակշռող մասը իր ոճով ու բնույթով ավելի մոտ է Նալբանդյանի, քան Նազարյանցի լեզվական մտածողությանն ու ատաղձին։ Ի դեպ, բոլոր հիմքերը կան ասելու, որ Հովհաննես Քաթանյանցը քաջատեղյակ է եղել այն ամենին, ինչ կատարվել է Րաֆֆու ակնարկի հետ։ Նրա կազմած

նախադասության ենթատեքստից հասկանալի է, որ այդ ակնարկը խմբագրատանը երկար մնալու համար նրան հայտնի են եղել «ինչ-ինչ պատճառները»։

Հ. Քաթանյանցի հուշերում եղած տեղեկությունները հիմք են տալիս միայն արձանագրելու փաստը, մինչդեռ ձեռագրերի առկայության դեպքում հնարավոր կլիներ մի քանի խոսք ասել նաև Նալբանդյանի ու Նազարյանցի միջամտության չափի, նրանց կատարած աշխատանքի ծավալի ու բնույթի մասին։ Թեև «Հյուսիսափայլը» լույս տեսնելուց հետո Րաֆֆին հարել էր աշխարհաբարին և փոխել էր գրաբարով շարադրված իր «Սալբի» վեպի նախնական լեզուն, այսուհանդերձ, ինչպես նկատելի է, նույնիսկ ավելի ուշ գրած ստեղծագործություններում նրա աշխարհաբարը այնպես հստակ չէ, ինչպես «Աղթամարա վանքը» աշխատության մեջ։ Այս առումով եթե համեմատության մեջ դնենք «Աղթամարա վանքում» զետեղված «Ձայն տո՛ւր, ո՜վ ծովակ» բանաստեղծությունը նույն շրջանում «Արծվի Վասպուրականի» ամսագրում տպագրված «Հայաստանի ողբը» բանաստեղծության հետ և կամ «Աղթամարա վանքը» համեմատենք շուրջ երեք տարի հետո Րաֆֆու գրած Ատրպատականի միսիոներների գործունեությանը վերաբերող ակնարկի հետ, որը նույնպես հրատարակվել է «Հյուսիսափայլում» (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, 1958, էջ 23), սակայն այս անգամ արդեն առանց Մ. Նալբանդյանի «սրբագրման», ապա կարող ենք որոշակի պատկերացում կազմել Մ. Նալբանդյանի կատարած աշխատանքի՝ եթե ոչ ծավալի, գեթ բնույթի մասին։ Անհավանական չէ նաև, որ «Ձայն տո՛ւր, ո՜վ ծովակի» գրության հարցում ինչ-որ չափով մասնակցություն ունեցած լինի նաև Մ. Նալբանդյանը։ Նման վարկածի համար հիմք է տալիս ոչ միայն բանաստեղծության ընդհանուր ոգին, բառապաշարը, շունչը, բառընտրությունը, այլև այն, որ 1873 թ. Րաֆֆին, ձեռնարկելով իր բանաստեղծությունների տպագրությունը և «Փունջի» առաջին հատորի մեջ զետեղելով իր բոլոր չափածո ստեղծագործությունները, այդ թվում նաև մի քանի բանաստեղծություններ «Սալբի» վեպից, նա «Ձայն տո՛ւր, ո՜վ ծովակը» դուրս է թողնում այս ժողովածուից։

Մի պահ եթե մոռանանք կատարված դեպքի հարյուրամյա հեռավորությունը և իրողության վրա նայենք երիտասարդ Րաֆֆու տեսանկյունից, ապա կարող ենք ասել, որ Նալբանդյանի վերաբերմունքը իրոք որ պարտավորեցնող է... «Ազգության աչքում պաշտելի դարձած տղամարդը»՝ Միքայել Նալբանդյանը, խմբագրել ու հավելումներ էր արել անհայտ վաճառականի՝ Հակոբ Մելիք-Հակոբյանի գրական թոթովանքի մեջ։ Ահա հենց այս հանգամանքն էլ առիթ էր տվել այն նվիրական գաղտնիք հանդիսացող երախտագիտությանը, որ նա արտահայտել է Նալբանդյանին ուղղված ընծայականի մեջ։

Հայտնի է, որ 1867 թվականին Րաֆֆին իր «Սալբի» վերնագրով ձեռագիր վեպը մի սրտառուչ ընծայականով նվիրում է «անմահ Մ. Նալբանդյանցի միշտ օրհնյալ հիշատակին»։ «Ինձ քաղցր է,— գրում է նա,— այդ պաշտելի տղամարդի հավիտենական հիշատակը հարգել՝ իմ աշխատության երախայրիքն նորան ընծայելով։ Թեպետ «Սալբիի» հեղինակը չէ ունեցել պատվելի Հանգուցելո հետ խիստ մոտավոր ծանոթություն, բայց քանի կա և կապրի հայոց լեզուն և գրականությունը, Մ. Նալբանդյանցի անմահ հիշատակը միշտ կունենա յուր զգալի համակրությունքը ամեն մի հայի սրտում մինչ դարերի վերջը» (Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1955, էջ 52)։

Րաֆֆու ժառանգությամբ զբաղվող մեր գրականագետներն ու բանասերները, ուշադրության կենտրոն բերելով վերը ընդգծված տողը, ներքին իմաստավորման մեջ,

ու առանց հիմքի, աշխատել են ի հայտ բերել Րաֆֆու և Նալբանդյանի նամակագրական կապի կամ ուղղակի ծանոթ լինելու հավանականությունը։

Անկախ նրանից, թե որքանով է հավանական Րաֆֆու և Նալբանդյանի հանդիպման հնարավորությունը և կամ ունեցե՞լ են նամակագրական կապ, թե ոչ (առ այսօր րաֆֆիագիտությանը և նալբանդյանագիտությանը որևէ փաստ հայտնի չէ), բայց երբ Նալբանդյանը խմբագրել է Րաֆֆու «Աղթամարա վանքը» աշխատության ձեռագիրը, լեզուն մոտեցրել է «Հյուսիսափայլի» լեզվին և կատարել է հավելումներ, որոնց ծավալն ու բնույթը երիտասարդ հեղինակի համար եղել է պարտավորեցնող, ապա Րաֆֆու հանդես բերած վերաբերմունքը, «Սալբիի» ընծայականի մեջ նրա կազմած նախադասությունը և մտերմության ու հանդիպման հավանականություն պարունակող բառերը ձեռք են բերում նոր իմաստ և դառնում են միանգամայն հասկանալի։

Այո՛, Րաֆֆին չի ունեցել այդ «պաշտելի ազգամարդու հետ խիստ մոտավոր» ծանոթություն, նշանակում է՝ չեն հանդիպել, բայց վերջինս հանձն է առել շտկելու նրա աշխատության մեջ եղած «թերությունները»։ Այս փաստը բավական է, որ Րաֆֆու արտահայտած միտքը, հենց այս առիթով, իր մեջ ճարցնի չափավոր «ծանոթություն» պարունակող ենթատեքստ։

«Աղթամարա վանքը», ինչպես ասվեց վերևում, առաջին անգամ տպագրվել է «Հյուսիսափայլ» ամսագրում (տե՛ս Մոսկվա, 1860, № 11, էջ 398)։

1868 թվականին այս ակնարկում զետեղված «Ամեն տեղ տիրած խորին լռություն» սկսվածքով բանաստեղծությունից մի հատված, որը հայտնի է «Ձայն տո՛ւր, ո՜վ ծովակ» անունով, տպագրվում է Մ. Միանսարյանի կազմած «Քնար հայկական» ժողովածուի մեջ (տե՛ս Պետերբուրգ, 1868, էջ 268)։

1873 թվականին, երբ Րաֆֆին նախագծում է իր ստեղծագործությունները ամփոփել 10 հատորի մեջ և հրատարակել «Փունջ» ընդհանուր խորագրով, «Աղթամարա վանքը» մտցնում է այդ մատենաշարի 5-րդ հատորի մեջ, բայց քանի որ երկրորդ հատորից հետո «Փունջի» հատորների տպագրությունը խափանվում է, Րաֆֆու այս ցանկությունը մնում է անկատար։

«Աղթամարա վանքը» երկրորդ անգամ տպագրվում է հեղինակի մահվանից հետո, 1891 թվականին, Աննա Րաֆֆու հրատարակած «Վեպիկներ և պատկերներ» ժողովածուի առաջին հատորում (տե՛ս Թիֆլիս, 1891, էջ 449)։

Այնուհետև այս ակնարկի մաս կազմող «Ձայն տո՛ւր, ո՜վ ծովակ» բանաստեղծության նոտագիր տեքստը տպագրվում է «Աղբյուր» ամսագրի 1889 թվականի 12-րդ համարում։ 1890 թվականին այն նաև երգվում է պրոֆեսիոնալ կատարողների կողմից (տե՛ս «Տարազ», 1890, № 10, էջ 114)։

1893 թվականին այս բանաստեղծությունը երաժշտական մշակման է ենթարկվում երգահան Գ. Ա. Կոզաչենկոն, որը «Перед озером» վերնագրով լույս է ընծայում 1893 թվականին Պետերբուրգում (տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Ռ. Պատկանյանի ֆ, № 1363)։

1895 թվականին «Ձայն տո՛ւր, ո՜վ ծովակը» տպագրվում է «Սոխակ Հայաստանի» երգարանում, հետագայում այն տեղ է գտնում նաև նույն երգարանի վերահրատարակության մեջ։

1904 թվականին այս բանաստեղծության խոսքերով ռոմանս է գրում Կոմիտասը (տե՛ս «Սովետական արվեստ», 1955, № 4, էջ 44)։

1916 թվականին «Ձայն տո՛ւր, ո՜վ ծովակը» Սերգեյ Զարովի ռուսերեն թարգմա-

նությամբ լույս է տեսնում «Армянский вестник» շաբաթաթերթում (տե՛ս Թիֆլիս, 1916, № 12—13, էջ 6)։

Այս բանաստեղծությունը Զաբել Բոյաջյանի, Ալիս Բլեկվելի և Գրինի անգլերեն թարգմանությամբ լույս է տեսել 1896 և 1905 թթ.՝ Բոստոնում, 1914 թ.՝ Լոնդոնում, 1916 թ.՝ Նյու Յորքում, 1917 թ.՝ Բոստոնում և Նյու Յորքում, 1918, 1950 և 1958 թթ.՝ Նյու Յորքում և այլն։

«Աղթամարա վանքը» երրորդ անգամ տպագրվել է Րաֆֆու «Երկերի ժողովածուի» տասնհատորյա հրատարակության 8-րդ հատորում, Ե., 1957, էջ 280—309։ Չորրորդ անգամ հեղինակի «Երկերի ժողովածուի» տասնհատորյա հրատարակության (երկրորդ տպագրություն) 8-րդ հատորում, Ե., 1963, էջ 280—309։

Սույն հատորի լույսընծայումով իրականացվում է այդ ակնարկի հինգերորդ տպագրությունը.

Արտատպված է «Հյուսիսափայլ» ամսագրից (Մոսկվա, 1860, № 11, էջ 398)։

[ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ] (ԷՋ 36—58)

«Ուղևորություն Պարսկաստանում». պայմանական անունը կրող այս խորագրի տակ զետեղված «Ուսում և գրականություն», «Պարսկական աղանդներ», «Դերվիշ», «Նոտար» և «Շահիաթ» ակնարկների գրության ստույգ թվականը հայտնի չէ։ Ոչ հեղինակը և ոչ էլ այս գործերի առաջին հրատարակիչ Աննա Րաֆֆին այդ մասին որևէ տեղեկություն չեն թողել։ Սակայն, բարեբախտաբար, կան մի քանի անուղղակի տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է դառնում պարզել գրության մոտավոր թվականն ու շարժառիթները։

«Մշակ» լրագրի 1873 թվականի մայիսի 10-ի համարում Րաֆֆին տպագրում է հայտարարություն այն մասին, որ ցանկանում է բաժնեգրությամբ լույս ընծայել իր «Ճանապարհորդություն Պարսկաստանում» ուղեգրությունը։ Շարունակության մեջ նա բաժանորդներին տեղյակ է պահում, որ իր աշխատությունը բաղկացած է լինելու 50 նամակներից։ Հայտարարությունը լույս տեսնելու օրերին այդ նամակներից հրատարակված էին ընդամենը 10-ը։ Այնուհետև «Մշակի» հետագա համարներում տպագրվում են ևս 14-ը։ Վերոհիշյալ 24 նամակներում ճանապարհորդ հեղինակը Շահթախտից անցնելով Արաքսը, Մակվի վրայով մտնում է Սալմաստ, ապա՝ Փայաջուկ, որից հետո՝ Ջոլամերիկ, հետո հարավից շրջանցում է Ուրմիո լճակը և արևելյան կողմով Սովուխ-Բուլախի, Մարաղայի ու Դյուլիստանի վրայով մտնում է Թավրիզ։ Այստեղ ավարտվում է նրա ճանապարհորդությունը և ընդհատվում է նամակների տպագրությունը։ Թեև «Մշակում» տպագրված հայտարարության մեջ և «Փունջ» մատենաշարի պրոսպեկտում Րաֆֆին հավաստում է, որ ուղեգրությունը բաղկացած է 50 նամակներից, այսուհանդերձ մնացած 26 նամակների գրությունը չի փաստարկվում։ Եվ դա տրամաբանական է, նամակները կարող էին գրվել այն դեպքում, երբ հեղինակին կհաջողվեր շարունակել իր ճանապարհորդությունը Թավրիզից մինչև Թեհրան։ Րաֆֆու կենսագրությանը լավատեղյակ Ավագ Ավթանդիլյանի հուշերից հայտնի է, որ, չնայած բուռն ցանկությանը, Րաֆֆու դեպի Թեհրան կատարելիք ճանապարհորդությունը չի իրականացվել (տե՛ս

«Րաֆֆին ժամանակակիցների հուշերում», Ե., 1986, էջ 147—148)։ Այս պարագայում Րաֆֆու հավաստիացրած 50 նամակներից վերջին 26-ի գրությունը պետք է համարել չիրականացված հղացում։

Հայտնի է, որ 1875 թվականի կեսերին Րաֆֆուն չնչին աշխատավարձով հրավիրում են Թավրիզ՝ վարելու տեղի Արամյան ազգային դպրոցի հայոց լեզվի և պատմության ուսուցչի պաշտոնը։ Թեև դրանով նա մոտենում էր իր նպատակի իրականացմանը, սակայն հասկանալի է, որ նախագծված ճանապարհորդությունը առանց նյութական միջոցների չէր կարող իրականացվել։ Թեև այս պատճառով կանխվում է դեպի Թեհրան կատարվելիք ճանապարհորդությունը, սակայն նրա մեջ չի թուլանում ո՛չ Թեհրան գնալու և ո՛չ էլ մնացած 26 նամակների գրությունը իրականացնելու մղումը։ Թավրիզում ապրող Րաֆֆին թե՛ հարցուփորձի և թե՛ ուսումնասիրությունների միջոցով շարունակում է տեղեկություններ հավաքել հայ և պարսիկ ժողովուրդների կենցաղի, հավատալիքների, կրթության, հոգևոր ու մշակութային կյանքի վերաբերյալ։ Նա,— ինչպես պատմում է Ավագ Ավթանդիլյանը,— սիրում էր իր մոտ հյուր եկած մարդկանց խոսեցնել, նրանց «ճանապարհորդական տոպրակը թափահարել... Ես,— շարունակում է նա,— վերադառնալով Թեհրանից, նրան նկարագրել էի մայրաքաղաքի առաջադիմությունը, նորանոր շենքերով, եվրոպական ճաշակով շինված նոր փողոցները, ճաշակավոր պարտեզները և պալատները... Նա միշտ ախորժանքով էր լսում ճանապարհորդներից հարավային Պարսկաստանի և մայրաքաղաքի նկարագրությունները (տե՛ս նույն տեղում, էջ 148)։ Ինչպես հայտնի է, այս զրույցներից է ծնունդ առել նաև Րաֆֆու «Բիբի Շարաբանի» պատմվածքը (տե՛ս այս հրատարակության առաջին հատորի ծանոթագրությունը, Ե., 1983, էջ 548)։

1876 թվականին, երբ Աբգար Հովհաննիսյանը ձեռք է բերում «Փորձ» անունով ամսագիր հրատարակելու իրավունքը, նույն թվականի փետրվարի 23-ին մի նամակով դիմում է Թավրիզում ապրող Րաֆֆուն. «...Իմ միտքս է,— գրում է նա,— որ Դուք ինձ մի անգամ ասել եք, որ «Մշակի» մեջ տպված Ձեր «Պարսկաստանի նամակները» ամբողջապես 50 նամակ կկազմի։ Դուք տպագրել եք միայն մի մասը, իսկ մյուս մասի հրատարակությունը ի վաղուց հետո դադարեցրել եք։ Եթե վերջացրել եք բոլոր 50 նամակը և եթե մտադիր չեք սոցա «Մշակի» մեջ շարունակել, ես հարմար կհամարեի թե արդեն տպվածները և թե ձեռագրերը լիովին «Փորձի» մեջ տպագրել։ Ես... պատրաստ եմ հին նամակները ևս նորին համեմատ վարձատրել» (տե՛ս Րաֆֆի, «Պարսկական պատկերներ», Վիեննա, 1913, էջ XII—XIV)։

Ստանալով նման խոստում՝ Րաֆֆու մեջ արթնանում է և գործնական հիմքի վրա է դրվում դեպի Թեհրան նախագծած ճանապարհորդությունը իրականացնելու և նամակների շարունակությունը գրելու մտադրությունը։ Հատկանշական է, որ նույն թվականի հուլիսի 1-ին Րաֆֆին Աբգար Հովհաննիսյանին է ուղարկում «Պարսկաստան» վերնագրով մի հոդված, որտեղ տողատակի ծանոթագրության մեջ որոշակի հավաստիացում կա այդ ակնարկներից «Պարսկական աղանդները» արդեն գրված լինելու մասին։ Այդ հոդվածի սկզբում, հարևանցիորեն խոսելով պարսկական աղանդների մասին, տողատակի ծանոթության մեջ Րաֆֆին գրում է. «Պ. Րաֆֆիի «Պարսկաստանի ճանապարհորդության» մեջ ընդարձակ և ավելի մանրամասն տեղեկություններ լինելով մահմեդականների մեջ եղած աղանդների մասին, մենք բավականանում ենք այս հոդվածում միայն ընդհանուր տեսությամբ, սպասելով հիշյալ աշխատության հրատարակությանը,

որն արդեն, որպես գիտենք, պատրաստվում է իր ամբողջությամբ «Փորձի» մեջ տպագրվելու համար» (տե՛ս այս հատորում, էջ 42, ընդգծումը իմն է— Խ. Ս.)։

Տողատակի ծանոթությունից հնարավոր է դառնում մակաբերել, որ հենց այդ շրջանում էլ 1876 թվականի փետրվարի 23-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակամիջոցում Րաֆֆին ավարտել է «Ուսում և գրականություն», «Պարսկական ադանդներ», «Դերվիշ», «Նոտար» և «Շարիաթ» ակնարկի գրությունը՝ «Փորձում» տպագրվելիք նամակների մեջ իբրև պատրաստի թեմաներ մտցնելու համար։ Սույն վարկածը հաստատող տեղեկություն կա նաև «Շարիաթ» վերնագրով ակնարկի մեջ։ «Ես,— գրում է Րաֆֆին,— կնկարագրեմ այդ շարիաթխանաներից մեկը, որին ես այցելություն արեցի Թեհրանում» (տե՛ս այս հատորում, էջ 52)։

Պետք է ենթադրել, որ Արգար Հովհաննիսյանի խոստացած վարձատրությունը ինչ-ինչ պատճառով գործնականում չի իրականացվել, որի հետևանքով խափանվել են թե՛ նախատեսված ճանապարհորդությունը և թե՛ շարքը լրացնող 26 նամակների գրությունը։ Այս պարագայում նաև հասկանալի է, թե ինչու հեղինակի կենդանության ժամանակ վերոհիշյալ ակնարկները տպագրության չեն արժանացել։

Աննա Րաֆֆին հեղինակի արխիվում հայտնաբերելով այդ ակնարկներից երեքը՝ տրամադրում է «Արաքս» հանդեսի խմբագրությանը, որոնք «Պարսկական նամակներ» ընդհանուր խորագրի տակ լույս են տեսնում պարբերականի Ա գրքում (Պետերբուրգ, 1892, էջ 65—85)։ Նույն թվականի հոկտեմբերին «Ուսում և գրականություն», «Պարսկական ադանդներ» և «Դերվիշ» ակնարկները նույնությամբ լույս են տեսնում նաև «Արձագանք» լրագրի 121, 122 և 124 համարներում։

1893 թվականին այդ նույն ակնարկների վրա ավելացնելով ևս երկուսը՝ «Շարիաթ» և «Նոտար» խորագրերով, Աննա Րաֆֆին բոլորը միասին հրատարակում է «Վեպիկներ և պատկերներ» ժողովածուի երկրորդ հատորում (տե՛ս Թիֆլիս, 1893, էջ 311, 346, 355, 364, 371)։

Պետք է ենթադրել, որ հիշյալ ակնարկները հեղինակային ձեռագրերում չեն ունեցել իրենց խորագրերը, այլապես անբացատրելի է դառնում այն, որ միևնույն ակնարկը «Արաքսի» խմբագրությունը հրատարակել է «Ուսում և գրականություն» վերնագրով, իսկ Աննա Րաֆֆին՝ «Պարսկական դպրոց», և ապա «Արաքսում» դրանք տպագրվել են հերթականությունը ցույց տվող թվանշաններով (Ա, Բ, Գ), իսկ Աննա Րաֆֆու հրատարակության մեջ բացակայում են այդպիսիք։ Այս տարբերությունները խոսում են այն մասին, որ վերոհիշյալ ակնարկների բնագրերը չեն ունեցել հեղինակային վերնագրեր, այլապես դրանց միանմանությունը կդառնար անառարկելի, ինչպես «Արաքսի» խմբագրության, այնպես էլ Աննա Րաֆֆու համար։

1892 թվականին այս ակնարկներից երեքը՝ «Ուսում և գրականություն», «Պարսկական ադանդներ» և «Դերվիշ», Գ. Ջուբարովի ռուսերեն թարգմանությամբ «Письма из Персии» ընդհանուր խորագրով լույս են տեսնում «Приазовский Край» պարբերականի (Ռոստով) դեկտեմբերի 5-ի (№ 316), 12-ի (№ 323) և 15-ի (№ 326) համարներում։

1893 թվականին Րաֆֆու «Վեպիկներ և պատկերներ» ժողովածուի երկրորդ հատորը լույս տեսնելուց անմիջապես հետո «Դերվիշ» ակնարկը Դավիթ Տեր-Դավթյանի վրացերեն թարգմանությամբ լույս է տեսնում վրացական «Կվալի» պարբերականում (տե՛ս Թիֆլիս, 1893, № 35, էջ 12—13 և № 36, էջ 12—13)։

1912 թվականին Աննա Րաֆֆին այս ակնարկները (ամբողջությամբ) դետեղում է

Րաֆֆու «Պարսկական պատկերներ» ժողովածուի մեջ և 1913 թվականին լույս է ընծայում Վիեննայի Մխիթարյան միաբանության տպարանում։

Մեր օրերում այդ ակնարկներից միայն «Դերվիշը» առաջին անգամ լույս է տեսնում Րաֆֆու «Երկերի ժողովածուի» եռահատոր հրատարակության առաջին հատորում, Ե., 1949, էջ 428։

1957 թվականին այս ակնարկները տպագրվում են Րաֆֆու «Երկերի ժողովածուի» տասնհատորյա հրատարակության VIII հատորում, Ե., 1957, էջ 611—634։ 1963 թվականին հիշյալ ակնարկները նույնությամբ տեղ են գտնում Րաֆֆու «Երկերի ժողովածուի» տասնհատորյակի (երկրորդ հրատարակություն) VIII հատորում, Ե., 1963, էջ 611—634։

Ակնարկների սկիզբ հանդիսացող 24 նամակները Րաֆֆին «Մշակում» (1872—1878 թթ.) հրատարակել է «Պարոն Րաֆֆիի ուղևորությունից Պարսկաստանում» վերնագրով։ «Փունջ» մատենաշարի հրատարակությունը իրականանալու դեպքում այն պետք է տպագրվեր հինգերորդ հատորում՝ «Րաֆֆիի ուղևորությունից Պարսկաստանում» խորագրով։ Թավրիզում վերամշակված տարբերակը (1876 թ.) կրել է «Ճանապարհորդություն Պարսկաստանի» վերնագիրը։ Հետագայում (1883—87 թթ.) Րաֆֆին նպատակ է ունեցել նամակների շարքը 26-ով լրացնելուց հետո այն հրատարակել «Ուղևորություն Պարսկաստանում» խորագրով (տե՛ս «Սամվել», Թիֆլիս, 1888 թ., շապկի շրջերեսը)։

Ինչպես վերը նշեցինք, այս ակնարկները առաջին անգամ հրատարակվել են «Պարսկական նամակներ» ընդհանուր խորագրի ներքո։ Թեև Աննա Րաֆֆին չի հետևում «Արաքսի» խմբագրության օրինակին, այնուամենայնիվ այդ խորագիրը ավանդաբար օգտագործվել է հետագա գրեթե բոլոր հրատարակությունների մեջ։ Այժմ, երբ հայտնի է դարձել հեղինակի վերջնական կամքը, նպատակահարմար գտանք ակնարկները ընթերցողին ներկայացնել «Ուղևորություն Պարսկաստանում» *պայմանական խորագրի տակ։ Ի դեպ, այս խորագրով պետք է ներկայացվեր նաև հեղինակի սույն հրատարակության IX հատորում զետեղված «Ճանապարհորդություն Պարսկաստանի» ուղեգրությունը։*

ՋՐԱԲԵՐԴ (ԷՋ 59—66)

«Ջրաբերդ» խորագրով ակնարկի գրության թվականը հեղինակը չի մատնանշել, սակայն, հայտնի են գրությունը պայմանավորող ճանապարհորդության և գրվածքը հրատարակչության հանձնելու ժամանակները, որոնք հնարավորություն են տալիս մոտավոր ճշտությամբ պարզելու գրության ժամանակը 10 ամսվա տարբերության սահմաններում։

Հայտնի է, որ 1881 թվականի հուլիսի 20-ին Րաֆֆին «Մշակում» ընդհատում է «Դավիթ Բեկի» տպագրությունը և վեպի գլխավոր հերոսի հետքերով մեկնում է Արցախ ու Սյունիք՝ տեղում նյութեր հավաքելու և հետազոտություններ կատարելու։

Հուլիսի 25-ին դուրս գալով Թիֆլիսից, Գանձակ տանող ճանապարհով Րաֆֆին ուղևորվում է Արցախ։ Մտնելով Գյուլիստան գավառը և կատարելով համապատասխան գրառումներ, նույն թվականի օգոստոսի երկրորդ տասնօրյակի սկզբում Րաֆֆին մտնում է Ջրաբերդ։ Թերևս հենց այստեղ էլ իր ստացած թարմ տպավորությունների ան-

միջական ազդեցության տակ Րաֆֆին Արցախ-Սյունիք ճանապարհորդության գրառումների համար նախատեսված ծոցատետրի մեջ ամփոփում է Ջրաբերդին (Չարաբերդին) վերաբերող տպավորությունները։ Այս պարագայում հասկանալի է, որ «Ջրաբերդ» ակնարկը չէր կարող 1881 թվականի օգոստոսի կեսերից ավելի վաղ գրված լինել։ Ինչ վերաբերում է (այսօրվա տեսքով) ակնարկի գրության ավարտին, ապա դրա ժամանակացույցը կապված է «Աղբյուր» ամսագրի հրատարակության պատմության հետ։

Հայտնի է, որ 1882 թվականի կեսերին Տիգրան Նազարյանը սկսում է նախապատրաստական աշխատանքներ տանել՝ 1883 թվականի սկզբից Թիֆլիսում «Աղբյուր» անունով մի մանկապատանեկան ամսագիր հրատարակելու համար։ Ցանկանալով ապահովել ամսագրի անխափան ու ժամանակին լույսընծայումը՝ ապագա խմբագիրը նախնական պայմանավորվածություն է ձեռք բերում անվանի գրողների ու նկարիչների հետ։ Ըստ պայմանավորվածության, Րաֆֆին «Աղբյուրի» ընթերցողների համար թարգմանում է Տուրգենևի «Աղավնիները» պատմվածքը, հանձնում է «Ջրաբերդ» ակնարկը, խոստանում է գրել « Տարվա եղանակները պատկերում» ակնարկը և այլն։ Խմբագիրը նկարիչ Նիկոլայ Կարազինին տալով «Ջրաբերդ» ակնարկի ձեռագիրը՝ հանձնարարում է Րաֆֆու նկարագրության հիման վրա իրականացնել ապագա ամսագրի շապիկի նկարը (տե՛ս «Աղբյուր», Թիֆլիս, 1909, № 1, էջ 29)։ Այս նշանակում է, որ Րաֆֆին պետք է ձեռագիրը ամիսներ առաջ խմբագրին հանձներ, որպեսզի նկարիչ Կարազինը կարողանար ժամանակին իրականացնել շապկի նկարը, և ապա ժամանակը պետք է բավականացներ կլիշեն արտասահմանում պատվիրելու և տպագրությունը մինչև Նոր տարվա սկսելը ավարտելու համար։

Ընդառաջելով ամսագրի խմբագիր Տ. Նազարյանին, Րաֆֆին «Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում» ուղեգրության Զ գլխից առանձնացնում է Ջրաբերդին վերաբերող հատվածը և վերամշակելով՝ 1882 թվականի մոտավորապես հունիս կամ հուլիս ամիսների ընթացքում հանձնում է խմբագրին։

Հատկանշական է, որ ուղեգրության Զ գլխի անոտացիայի մեջ Չարաբերդ տառադարձությամբ մնացել է Ջրաբերդին վերաբերող ենթավերնագիրը, սակայն նկարագրությունը բնագրում չկա (տե՛ս Րաֆֆու այս հրատարակության IX հատորում, Ե., 1987, էջ 275)։

Քանի որ «Ջրաբերդ» ակնարկը իր գրելաոճով ուղեգրության սխեմայից զգալապես տարբերվում է, պետք է ենթադրել, որ Րաֆֆին ձեռագիրը խմբագրին տրամադրելուց առաջ վերամշակել է և ավելացրել ակնարկային ժանրին բնորոշ գրվագներ։

Ի մի բերելով վերոհիշյալ ուղղակի և անուղղակի տվյալները, կարելի է ասել, որ «Ջրաբերդ» ակնարկը գրվել է 1881 թվականի օգոստոսի կեսերից մինչև 1882 թվականի հունիսի միջև ընկած ժամանակամիջոցում։

«Ջրաբերդը» առաջին անգամ տպագրվել է «Աղբյուր» ամսագրում (տե՛ս Թիֆլիս, 1883, № 2, էջ 68—79)։

Բնագիրը տպագրության է պատրաստված «Աղբյուրում» հրատարակված տեքստի հիման վրա։

«Ջրաբերդը» «Աղբյուրում» լույս տեսնելուց հետո «Մեղու Հայաստանի» լրագիրը հրապարակում է Հայկունու «Աներողություն, բայց և մի ցիտողություն» խորագրով հոդվածը։ Րաֆֆու երդվյալ հակառակորդը առանց ասելիք ունենալու սկսում է ծաղրել ու անվանարկել նրան այն բանի համար, որ «Ջրաբերդի» մեջ ղարաբաղցի հայ աղջկան

նկարագրելու ժամանակ գրողը մանկական ամսագրի մեջ խոսել է նաև «մերկ սրունքների մասին» (տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1884, № 19, էջ 1—2)։

Հայկունին իր հոդվածում կրկնում է, որ Րաֆֆին «իբրև գրող այն չէ, ինչ որ կարծում են», թեև նա «իզուր տեղն է մտել մեր գրականական տունը» և պահանջում է նրան հեռացնել այդ տնից։ Շարունակության մեջ նա ստիպված է լինում խոստովանել, որ Րաֆֆու «համբավը, անունը, անսխալականությունը այնքան մեծ է մեր մեջ, որ դժվար է հեռացնել նրան մեր գրականության տնից» (նույն տեղում)։

Նույն թվականի ապրիլին «Մշակի» երեք իրար հաջորդող համարներում լույս է տեսնում Լեոյի ««Աղբյուր» ամսագրի առիթով» հոդվածը, որտեղ նա անդրադառնում է նաև Րաֆֆու ակնարկին։ ««Ջրարբերդ» հոդվածը,— ի հեճուկս Հայկունու՝ գրում է Լեոն,— իսկապես գեղեցիկ և գրավիչ է։ Հարգելի հեղինակի ոճը նրբության և գեղեցկության կողմից ուրիշ ոչինչ սպասելի տեղ չի թողնում։ Ընթերցողը նրա հետ գնում է, պտտում է նրա հետ, տեսնում է ամեն ինչ և հոգեպես տրամադրում է այնպես, ինչպես ճանապարհորդը» (տե՛ս «Մշակ», 1884, 28 ապրիլի, № 47, էջ 1)։

Այս ակնարկը երրորդ անգամ տպագրվում է Հովհաննես Նազարյանի կազմած «Ընտիր հատվածներ» ժողովածուի մեջ (տե՛ս Թիֆլիս, 1883, Ա հատոր, էջ 103)։ Այնուհետև տեղ է գտել Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու» խորագրով դասագրքի 4-րդ գրքի 6-րդ տպագրության մեջ (տե՛ս Թիֆլիս, 1890, էջ 64) և ապա զետեղվել է այդ գրքի գրեթե բոլոր հրատարակությունների մեջ։ «Ջրարբերդը» չորրորդ անգամ լույս է տեսել Աննա Րաֆֆու հրատարակած «Վեպիկներ և պատկերներ» ժողովածուի առաջին հատորում (տե՛ս Թիֆլիս, 1891, էջ 203)։

Րաֆֆու մահվան 20-ամյակի կապակցությամբ «Աղբյուրի» խմբագրությունը նորից է տպագրում այս ակնարկը (տե՛ս Թիֆլիս, 1908, № 1, էջ 5)։

Մեր օրերում «Ջրարբերդն» առաջին անգամ հրատարակվել է Րաֆֆու «Երկերի ժողովածուի» եռահատոր հրատարակության առաջին հատորում, Ե., 1949, էջ 631։

1957 թվականին «Ջրարբերդը» տպագրվում է Րաֆֆու «Երկերի ժողովածուի» տասնհատորյա հրատարակության 8-րդ հատորում, Ե., 1957, էջ 634։ Այնուհետև այն նույնությամբ տեղ է գտել Րաֆֆու «Երկերի ժողովածուի» տասնհատորյակի (երկրորդ հրատարակության) 8-րդ հատորում, Ե., 1963, էջ 634։

ՀՈԴՎԱԾՆԵՐ (ԷՋ 69—480)

Այս խորագրի տակ ի մի են բերված այն բոլոր հոդվածները, գրախոսականներն, առաջաբանները, նամակ-հոդվածներն ու թղթակցությունները, որոնք 1858—1877 թվականների ընթացքում գրել ու հրապարակել է Րաֆֆին։ Րաֆֆու առաջին տպագիր գործը մի նամակ է, որը նա հղել է Մկրտիչ Խրիմյանին «Արծվի Վասպուրական» ամսագիրը Կ. Պոլսից Վարագ տեղափոխելու և Վասպուրականում լուսավորություն տարածելու առիթով։

Այնուհետև Րաֆֆին թղթակցում է «Հյուսիսափայլին», «Մշակին» ու «Փորձին» ավելի ուշ՝ նաև «Արձագանքին»։

Առանձնապես երկար ու նշանակալից է եղել Րաֆֆու աշխատակցությունը «Մշակին»

լրագիր, որին անմնացորդ տվել է նա սկսած 1872 թվականի սկզբից մինչև 1883 թվականի վերջը։ Նա եղել է ո՛չ միայն «Մշակի» ամենաբեղմնավոր թղթակիցը, այլև գործնական մասնակցություն է ունեցել լրագրի հրատարակչական կյանքում, իր վրա կրելով ծանր պարտականություններից մեկը։

«Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունուն նվիրված իր հուշատար աշխատության մեջ Լեոն, խոսելով «Մշակ» լրագրի հրատարակչական գործի կազմակերպման մասին, այլևայլ հարցերի հետ հանգամանորեն անդրադառնում է նաև հոդվածագիրներ ու թղթակիցներ հայթայթելու խնդրին։ Հենվելով ժամանակակիցների հիշողությունների և Գրիգոր Արծրունու «Բաց նամակ Գևորգ Ջմշկյանին» (տե՛ս «Մշակ», 1890, № 45) վերնագրով հոդվածի վրա, Լեոն գրում է. «Ներքին տեսության հոդվածներ գրում էր Վասիլ Շահվերդյանը... Արտաքին տեսության մեջ աշխատում էր Պողոս Իզմայիլյանը։ Ավելի դժվար էր թղթակիցների հարցը»։ «Արծրունին,— շարունակում է Լեոն,— վճռում է առժամանակ խմբագրության մեջ կազմել թղթակցություններ: Դրանով օրինակ և ուղեցույց կտրվեր գավառներից գրել ցանկացողներին: Այդ աշխատանքն էլ բաժանվեց այսպես. Վասիլ Շահվերդյանը կազմում էր թղթակցություններ Թիֆլիսից, Սղնախից և առհասարակ Վրաստանի զանազան կողմերից. Պերճ Պռոշյանը՝ Երևանից, Մելիք-Հակոբյանը (Րաֆֆին)՝ Պարսկաստանից, Մաժակը՝ Գանձակից...»: Իհարկե, բացատրում է Լեոն, դրանք չէին հնարվում, այլ «կազմվում էին հենվելով լրագրերի և մասնավոր նամակների հիման վրա» (ընդգծումը իմն է — Խ. Ս., տե՛ս Լեո, «Երկերի ժողովածու», հ. 6, Ե., 1987, էջ 391—392)։

Նման հավաստիացումը հիմք է տալիս Րաֆֆուն վերագրել «Մշակում» Պարսկաստանի մասին հրապարակված թղթակցությունների մեծագույն մասի, բայց ոչ բոլորի, հեղինակությունը։ Այս վերապահումը ունի իր բացատրությունը։ Բանն այն է, որ ժամանակի ընթացքում իրականանում են «Մշակի» խմբագրի նպատակադրումները։ «Օրինակ և ուղեցույց ստանալով՝» գավառն ու գաղթօջախները սկսում են պարզունակ նամակներով թղթակցել «Մշակին»։ Դրանց մի մասի մեջ պարունակած լուրերի հիման վրա Րաֆֆին գրում և հրապարակում է Պարսկաստանին (պարսկահայությանը) վերաբերող թղթակցությունները, իսկ մյուսները նույնությամբ (կամ մասնակի շտկումներով) հրապարակվում են լրագրի «Արտաքին լուրեր» բաժնում։ Ինչ վերաբերում է Րաֆֆու հեղինակած թղթակցություններին, ապա դրանք թեև հրապարակվում են գերազանցապես առանց ստորագրությունների, սակայն, իրենց ուրույն րաֆֆիական ոճով, լեզվական մտածողության յուրօրինակությամբ, արծարծվող հարցերի բնույթով, մտային զուգահեռներով ո՛չ միայն տարբերվում են այն պարզունակ լուրերից, որոնք մերթընդմերթ, նույնպես առանց ստորագրության, հրապարակվում են «Մշակում», այլև հավաստի են դարձնում այդ թղթակցությունները Րաֆֆու գրչին պատկանելու փաստը։

Պարսկաստանին վերաբերող թղթակցություններից բացի հատորում կան Րաֆֆու հեղինակությանը պատկանող նաև այլ կարգի հոդվածներ, որոնք նույնպես լույս են տեսել առանց ստորագրության։ Սրանց մի զգալի մասը պարզ թղթակցություններ են այլևայլ հարցերի վերաբերյալ, որոնց անստորագիր լինելը դարձյալ կապված է «Մշակի» խմբագրատանը նրա ստանձնած պարտավորությունների հետ։ Մի երկրորդ մասի տակ Րաֆֆին չի ստորագրել՝ նկատի ունենալով այդ հոդվածի բնույթն ու կշիռը։ Կան նաև այնպիսինները, որոնք իր անձի ապահովության նկատառումով նա ընթերցողին է ներկայացրել առանց ստորագրության (տե՛ս «Սրբազան պատերազմը և քրիստոնյա-

ների վիճակը Փոքր Ասիայում» հոդվածի ծանոթագրությունները, էջ 537)։ Կան հոդվածներ, որոնք Րաֆֆին նույն նկատառումով հրապարակ է հանել Էսպիոն և Անանուն ծածկանուններով։ Ուշագրավ է նաև «Միրզա Մեհրում խան» վերնագրով հոդվածին վերաբերող առեղծվածը։ Րաֆֆին այս հոդվածը «Մշակում» հրապարակել է առանց որևէ ստորագրության, իսկ հետագայում այն մտցրել է իր հեղինակությունների ցանկի մեջ (տե՛ս այդ հոդվածին վերաբերող ծանոթագրությունը, էջ 507—507)։

Հատորում զետեղված նյութերից և ոչ մեկի հեղինակային ձեռագրերը մեզ չեն հասել։ Այս պարագայում հասկանալի է, որ խոսք չի կարող լինել այդ նյութերի գրության ամսաթվերը նշելու մասին։ Բացառություն են կազմում այն թղթակցությունները, որոնց վերնագրին հաջորդող տողում հեղինակը նշել է գրության ամսաթիվն ու ամիսը։ Մնացած բոլոր դեպքերում ծանոթագրությունների մեջ նշված են տպագրության տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը։ Հակված ենք կարծելու, որ տվյալ դեպքում լույս ընծայման ժամանակացույցը մեկ-երկու շաբաթի տարբերությամբ համընկնում է գրության ժամանակացույցին։

Բնագրում մեր կատարած խիստ անհրաժեշտ միջամտությունները (լրացումները) առնված են քառակուսի [ ] փակագծերի մեջ։

1858

[«ԱՐԾՎԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԻՆ] (ԷՋ 69—71)

Մկրտիչ Խրիմյանին ուղղված այս նամակը Րաֆֆու երկրորդ տպագիր գործն է։ Եթե նրա «Արծվի Վասպուրական» ամսագրի խմբագրին ուղարկած նամակներից առաջինը գովասանքի ու քաջալերանքի խոսք էր Խրիմյանի հասցեին, ապա այս երկրորդ նամակը կրքոտ ու սուր մի քննադատություն է՝ ուղղված հայ հոգևորականության դեմ։ «Եվրոպացիք,— գրում է Րաֆֆին,— որչափ ավելի ջանք են տանում ուսումնարանները բազմացնելու և տպագրությունն առաջ տանելու՝ Հայաստանի վարդապետներն այնչափ հերքում են»։

Այս նամակից կարելի է դատել, թե սկսնակ Րաֆֆին ինչպիսի կրքոտ վերաբերմունք ուներ հասարակական կյանքի հանդեպ, և որքան համարձակ էր իր դատողությունների մեջ։ Ժամանակի իմաստով Րաֆֆու կշտամբանքները այնքան համարձակ էին հնչում, որ Խրիմյանը Րաֆֆու հոդվածի թողած տպավորությունը մեղմելու նպատակով անհրաժեշտ է համարում նրա հոդվածի թե՛ սկզբում և թե՛ վերջում բացատրություն տալ իր ընթերցողներին։

Հրապարակված է Հակոբ Միրզայան Մելիք-Հակոբյանց ստորագրությամբ։

Արտատպված է «Արծվի Վասպուրական» ամսագրից, Վանտոսպ, 1858, № 7, էջ 188։

ԱՐԳՈ ԲԱՐԵԿԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԹԱՆՅԱՆՑ (ԷՋ 72—77)

Ստավրոպոլի արքունի գիմնազիայի նկարչության դասատու Հովհաննես Քաթանյանցին ուղղված այս նամակը Րաֆֆին գրել է 1861 թվականի ապրիլի 25-ին, Արմավիրից։

Նամակը մի քանի ոտանավորների հետ ուղարկելով իր բարեկամին, Րաֆֆին ցանկանում էր Քաթանյանցի միջոցով այն հասցնել Մոսկվա, Ստեփանոս Նազարյանցին, որպեսզի վերջինս (հավանելու դեպքում) տպագրի «Հյուսիսափայլ» ամսագրում։ Նազարյանցը, հավանելով հոդվածը, 1861 թվականին այն հրատարակում է «Հյուսիսափայլում»։

Հոդվածի գրության հարցում շարժառիթ է հանդիսացել ամերիկյան միսիոներների վնասակար գործունեությունն Արևելքում, որոնք «լույս» և «ճշմարտություն» տարածելու անվան տակ հետապնդում էին այլևայլ նպատակներ։

Հրապարակված է Հ. Մ. Մելիք-Հակոբյանց սրբագրությամբ։

Արտատպված է «Հյուսիսափայլից», 1861, Մոսկվա, 11-րդ ամսատետրակ, էջ 393։

ՆԱՄԱԿ ԹԵՀՐԱՆԻՑ (ԷՋ 78—81)

1872

Գրված է սովի մասին Պարսկաստանից ստացված մասնավոր նամակների հիման վրա։ Հոդվածի թեման իբրև իրողություն կապ ունի հեղինակի «Սովը» պատմվածքի հետ (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

Հրապարակված է առանց սրբագրության։

Արտատպված է «Մշակից», 1872, 24 փետրվարի, № 8, էջ 3—4։

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՐԲԵՐՈՍՆԵՐ (ԷՋ 81—83)

«Ընտանիքի կերբերոսներ» հոդվածը ուղղված է «Մեղու Հայաստանի» լրագրի 2-րդ համարում տպագրված Մ.[արտիրոս] Ս.[իմոնյանի] «Մեր ընտանեկան կյանքի մասին» հոդվածի դեմ (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1872, 11 մարտի, էջ 3)։ Խոսելով կնոջը ֆեոդալական կապանքներից՝ հարեմի գերությունից ազատագրելու և հասարակական կյանքում ներգրավելու մասին, Րաֆֆին միաժամանակ քննադատում է «Մեղվի» հոդվածագիր Մ. Ս.-ի մի շարք տեսակետները։

«Ընտանիքի կիրակնօրյաները» հրապարակված է Յ.[ակոբ] Մ.[իրզայան] ստորագրությամբ.

Արտատպված է «Մշակից», 1872, 30 մարտի, № 13, էջ 1։

ՆԱՄԱԿ ԹԵՀՐԱՆԻՑ (ԷՋ 83—84)

Գրված է Պարսկաստանից ստացված մասնավոր նամակների հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1872, 6 ապրիլի, № 14, էջ 3։

ՊՈԼԵՄԻԿԱ (ԷՋ 84—87)

Հոդվածը, ինչպես ցույց է տալիս վերնագիրը, գրված է բանավեճի առիթով և ուղղված է «Մեղու Հայաստանի» թղթակից ԱՈ-ի դեմ, որը, հանդես գալով լրագրի 5-րդ համարում (1872, 1 ապրիլի), քննադատում է Գրիգոր Արծրունուն «Մշակում» Ննօքն ստորագրությամբ լույս ընծայած «Հինգերորդ դարի հայ-արնգա պատկերը» վերնագրով հոդվածի մեջ արծարծված մտքերի համար (տե՛ս «Մշակ», 1872, 23 մարտի, № 12, էջ 1)։

Հրապարակված է Սելիմզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1872, 27 ապրիլի, № 16, էջ 1։

ՎՐԱՑ ԻՇԽԱՆ ԱՐՔԱՅԱԶՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՅԱՆՔԻՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ (ԷՋ 87—89)

Վրաց իշխան Ալեքսանդրի կյանքին ու գործունեությանը վերաբերող այս հոդվածը Րաֆֆին գրի է առել ականատեսների պատմածից, հավանաբար այն ժամանակ, երբ նա գտնվում էր Խոսրովա գյուղում։ Չանցած կարճ ժամանակ, Րաֆֆու մեջ միտք է հղանում նորից ծավալուն հոդվածով անդրադառնալ վրաց իշխան Ալեքսանդրի գործունեությանը, ուստի Ավագ Ավթանդիլյանին ուղղված 4-ը օգոստոսի (1872) թվակիր նամակում Րաֆֆին վերջինիս գրում է. «Դուք կարդացած կլինեք «Մշակի» մեջ Սելիմզադե ստորագրությամբ մի պատմական հոդված վրաց թագավորազնի, վալիի Պարսկաստանի կյանքից, ես դարձյալ պատրաստում եմ մի հոդված վալիի մասին»։ Շարունակության մեջ նա հանձնարարում է դիմել Աննա խանումին. «Եթե նորան հայտնի էին որևից

անցքեր վալիի կամ նորա հետ Պարսկաստան եկած թալանողների մասին՝ հաղորդել մեզ։ Րաֆֆու խնդրանքին արձագանքել են թե ոչ՝ մեզ չհաջողվեց պարզել, սակայն որ նա այդ հոդվածը չի գրել՝ դա փաստ է։

Այս հոդվածը «Մշակում» լույս տեսնելուց հետո թարգմանվում է վրացերեն և տպագրվում է «Դրոեբա» լրագրում, Թիֆլիս, 1872, № 28։ Այնուհետև ավելի ուշ կրկին անգամ այն լույս է տեսնում նաև «Կվալի» լրագրում, Թիֆլիս, 1893, № 41։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1872, 6 հուլիսի, № 25, էջ 1։

ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻԱՅԻՑ (ԷՋ 90—92)

Գրված է Ուրմիայից ու Թեհրանից ստացված մասնավոր նամակների հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

Հրապարակված է *** (երեք աստղանիշ) ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1872, 6 հուլիսի, № 26, էջ 3—4։

[ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ] (ԷՋ 92—93)

Սա այն հոդվածներից մեկն է, որի մեջ հարևանցիորեն արված մի արտահայտություն հնարավորություն է տալիս փաստարկելու, թե ինչպես էին կազմվում պարսկահայության կյանքին վերաբերող նամակ-թղթակցությունները։ «Պարսկաստանից ստացած մի նամակից քաղում ենք հետևյալ տեղեկությունները», գրում է Րաֆֆին նամակի սկզբում և ապա «քաղած տեղեկությունների» հիման վրա, առանց չակերտների, միայն իրեն հատուկ ոճով ներկայացնում է հայության կյանքին վերաբերող իրողությունը՝ տողընդմեջ ներդնելով իր նկատումները և «Մշակի» հետապնդած գաղափարներն ու միտումները։

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1872, 13 հուլիսի, № 27, էջ 4։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (ԷՋ 93)

Գրված է Պարսկաստանից ստացված մասնավոր նամակների հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1872, 20 հուլիսի, № 28, էջ 4։

«Մշակում» հրապարակված «փոքրիկ տեղեկությունը», որը, ըստ հավաստիացման, ուրախացրել է Րաֆֆուն և շարժառիթ է ծառայել անդրադառնալու Ղարադաղում ծավալվող դեպքերին, տպագրված է լրագրի 1872 թվականի 27-րդ համարում (13 հուլիսի)։ Ինչ վերաբերում է հոդվածի մեջ արծարծվող մյուս հարցերին, ապա դրանց մի մասը Րաֆֆին մատուցում է վաճառականության շրջանում իր կատարած դիտարկումների ու ամբարած նյութերի, իսկ մյուս մասը՝ մասնավոր նամակներից քաղած տեղեկությունների հիման վրա։ Իր հոդվածում այլևայլ հարցերի թվում Րաֆֆին անդրադառնում է նաև ուսումնական գործերի անմխիթար վիճակին, կրոնափոխությանը և ապա առանց անունը տալու քննադատում է Ատրպատականի հոգևոր առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Հորյանին։ Այս քննադատությունը մեծ արձագանք է առաջ բերում ինչպես էջմիածնում, այնպես էլ Թավրիզում։ Թե ինչ միջոցների են դիմել հոդվածում քննադատված անձիք՝ այսօր դժվար է վերարտադրել, սակայն մի փաստ արժանի է ուշադրության։

«Մշակի» թավրիզյան թղթակից Ավագ Ավթանդիլյանին ցուցումներ տալու առիթով Րաֆֆին բերում է իր կիրառած օրինակը. «Ուշադրությամբ կարդացեք,— գրում է նա Ավագ Ավթանդիլյանին ուղղված նամակում,— «Մշակի» № 31 Ղարադաղու նամակը, այդպիսի պարունակություն ունեցող նամակներ միշտ հետաքրքրությամբ կկարդացվեն։ ԹԷև նա ամենևին Պարսկաստանից չի գրված, *այնուամենայնիվ ճիշտ տեղեկություններ է տալիս այդ գավառի վիճակից (տե՛ս Րաֆֆի, «Երկերի ժողովածու», հ. X, Ե., 1959, էջ 529, ընդգծումը իմն է — Խ. Ս.)։*

Րաֆֆու այս նամակի պարունակությունը ինչ-ինչ ճանապարհով Թավրիզում հայտնի է դառնում ինչպես հոգևոր առաջնորդին, այնպես էլ «Մեղու Հայաստանի» լրագրի թղթակից համարվող անձանց, և ահա թավրիզաբնակ Հեթիում Ճելալյանը «Մեղու Հայաստանի» լրագրում հրապարակած իր «Նամակ Դավրեժից» թղթակցության մեջ ոչ միայն հերքում է Րաֆֆու բերած փաստերը, այլև, վկայակոչելով Ավագ Ավթանդիլյանին Րաֆֆու գրած նամակը, բացահայտում է, որ «Նամակ Ղարադաղից» հոդվածի հեղինակը Րաֆֆին է (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1872, 30 սեպտեմբերի, № 31, էջ 3)։

Րաֆֆու հոդվածը մեծ իրարանցում է առաջ բերում նաև էջմիածնում։ Մանկունու հանձնարարությամբ «Արարատ» ամսագրում պատասխան հոդված է հրապարակում Ատրպատականի թեմի վարդապետ Հովհաննես Երեմյանը։ Սա ևս աշխատում է հերքել փաստերը։ Անդրադառնալով հոդվածագրի անձնավորությանը, նա առանց վարանելու մատնացույց է անում Թիֆլիսում ապրող «Մշակի» սալմաստեցի աշխատակցին՝ Րաֆֆուն (տե՛ս «Արարատ», Վաղարշապատ, 1872, № 9, էջ 370)։

Ավելի ուշ՝ 1873 թվականին, այդ հոդվածը Րաֆֆու գրչին պատկանելու փաստին անդրադառնում է նաև թավրիզաբնակ Խ. Գրիգորյանը (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1873, 24 փետրվարի, № 7, էջ 2—3)։

Րաֆֆին «Մշակի» միջոցով պատասխանում է թե՛ մեկին և թե՛ մյուսին (տե՛ս նրան հաջորդող հոդվածները)։

Հրապարակված է «Մշակի» բաժանորդներից մինը *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1872, 10 օգոստոսի, № 31, էջ 4։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ (ԷՋ 97—100)

Նկարագրելով Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում և մոտիկից ծանոթանալով ժողովրդի կացությանը, Րաֆֆին տեսնում է, թե ինչպես նոր զարգացող հարաբերությունները քայքայում են հայ գյուղացիության տնտեսության հիմքերը, և նա ստիպված թողնում է հողը, երկրագործությունը, գաղթում է քաղաք ապրուստ հայթայթելու։

Զարգացող վաճառականության առջև Րաֆֆին խնդիր է դնում թողնել նահապետական հին ձևերը և սովորել գյուղատնտեսական արհեստը, նա պահանջում է մեքենայացման ենթարկել գյուղատնտեսությունը։ Հանդես գալով բուրժուական հարաբերությունների ջատագովի դերում, Րաֆֆին իր նպատակների իրականացումը տեսնում էր առևտրական ընկերությունների հիմնադրման մեջ. «Ընկերության մեջ,— գրում է նա,— վնասը և օգուտը կլինի ընդհանուր։ Եվ նորա ընդհանուր ուժով կկարողանան եվրոպացիների հետ մրցություն անել»։

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1872, 17 օգոստոսի, № 32, էջ 2, 24 օգոստոսի, № 33, էջ 2—3։

ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ (ԷՋ 101—103)

«Մշակում» լույս ընծայելով «Վաճառականությունը հայերի մեջ» հոդվածը՝ Րաֆֆին իր ասելիքը սպառված չի համարում։ Գալով այն եզրակացությանը, որ վաճառականությունը լծորդված է արդյունաբերության հետ, նա անհրաժեշտություն է զգում ավելացնել, որ վաճառականությունը կարող է ավելի մեծ ծաղկում ապրել հայերի մեջ, եթե երկրում զարկ տրվի արվեստագործությանը (արդյունաբերությանը— խ. Ս.)։ Հենց այս նկատառումով էլ վերոհիշյալ հոդվածից չանցած մեկ շաբաթ նա հրապարակ է հանում «Արվեստագործությունը Կովկասում» հոդվածը՝ իբրև լրացում նախորդի։

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1872, 31 օգոստոսի, № 34, էջ 1—2։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (ԷՋ 103—104)

Գրված է Դավրեժից ստացված մասնավոր նամակի հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1872, 21 սեպտեմբերի, № 37, էջ 4։

ՊԱՏԱՍԽԱՆ (ԷՋ 104—107)

Բանավիճային երանգ ունեցող այս հոդվածը Րաֆֆին գրել է «Մշակում» տպագրված «Նամակ Ղարաբաղից» հոդվածի դեմ «Մեղու Հայաստանի» լրագրում (տե՛ս 1872, 30 սեպտեմբերի, № 31, էջ 3) Հեցիում Ճելալյանի հրապարակած թղթակցության առիթով։ Այս հոդվածում Րաֆֆին ո՛չ միայն հերքում է Հ. Ճելալյանի փաստարկները, այլև քննադատում է նրան՝ «Մշակի» խմբագրի հասցեին անստույգ փաստեր հրապարակելու համար։

Հրապարակված է ** (երկու աստղանիշ) ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1872, 12 հոկտեմբերի, № 40, էջ 4։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 107—109)

Նախորդ՝ «Նամակ Ղարաբաղից» հոդվածի ծանոթագրության մեջ ասվեց, որ այդ թղթակցությունը մեծ իրարանցում է առաջացնում նաև Էջմիածնում, և Դավրեժի առաջնորդը ստանում է մի հանդիմանական նամակ յուր անհոգության մասին։ Ասվեց նաև, որ Մանկունու հանձնարարությամբ «Արարատ» ամսագրի 9-րդ համարում պատասխան հոդվածով հանդես է գալիս Հովհաննես վարդապետ Երեմյանը։ «Արարատ» ամսագրի 9-րդ համարը ուշ լույս տեսնելու պատճառով Րաֆֆին հնարավորություն չի ունենում նախորդ՝ 12-ը հոկտեմբերի նամակում («Մշակ», 1872, № 40) անդրադառնալու Հովհաննես Երեմյանի գրածին, ուստի նա Էապիոն ծածկանունով (իբրև մի նոր թղթակից) նորից է հանդես գալիս նույն հարցի վերաբերյալ։

Հրապարակված է Էապիոն ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1872, 30 նոյեմբերի, № 47, էջ 3—4։

ՄԻՐԶԱ ՄԵԼՔՈՒՄ ԽԱՆ (ԷՋ 109—113)

Պարսից իրականության մեջ 1872 թվականի ընթացքում օրավուր տարածվում ու մեծանում էր հայազգի վերանորոգիչ Միրզա Մելքում խանի անունն ու հռչակը։ Մտադրություն ունենալով հոդվածով անդրադառնալ նրա անձին՝ Րաֆֆին անընդհատ հետամրտում է նրա գործունեությանը։ 1872 թվականի օգոստոսի 4-ին Ավագ Ավթանդիլյանին ուղղված նամակում Րաֆֆին գրում է. «Միրզա Մելքում խանի մասին ոչինչ չեն գրում, թե նա ինչ նորություններ արեց, կամ անելու միտք ունի Պարսկաստանի քաղաքական կյանքում» (տե՛ս Րաֆֆի, «Երկերի ժողովածու», հ. X, Ե., 1959, էջ 530)։

Կուտակելով նորանոր փաստեր, նույն թվականի նոյեմբերի 30-ին Մելքում խանի Թիֆլիս գալու առիթով Րաֆֆին «Մշակի» դեկտեմբերի 14-ի համարում հրապարակում է իր «Միրզա Մելքում խան» վերնագրով հոդվածը։

Ինչպես հայտնի է, 1882 թվականի սկզբներին Րաֆֆին իր առանձին գրքով չհրատարակված ստեղծագործությունները ամփոփում է 6 հատորի մեջ և հրավիրում է ցանկացողներին ձեռնարկել դրանց տպագրությունը։ Այս հրատարակության պրոսպեկտի երկրորդ հատորը Րաֆֆին հատկացնում է իր գրած կենսագրություններին և ահա այս խորագրի տակ Խրիմյանից հետո նա դետեղում է Միրզա Մելքում խան (հայազգի լիազոր դեսպան պարսից) կենսագրականի վերնագիրը (տե՛ս Րաֆֆի, «Կայծեր», հ. I, Թիֆլիս, 1883, շապկի շրջերեսը)։ Անհավանական չէ, որ տպագրելուց առաջ այն կարող էր ենթարկվել վերանայման ու լրացման։

Հրատարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1872, 14 դեկտեմբերի, № 49, էջ 3—4։

ԲՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱԶՄԱՆԱԼՈՒ ՎՐԱ (ԷՋ 113—114)

«Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին, ինչպես նաև Րաֆֆին բարձր էին գնահատում Հ. Թ. Բոկլի «Անգլիայի քաղաքակրթության պատմությունը» գիրքը և առանձնակի վերաբերմունք ունեին նրա ուսմունքի հանդեպ։ Բոկլի գրքի ռուսերեն հրատարակության առաջին հատորը (Պետերբուրգ, 1864 թ.) եղել է Րաֆֆու տրամադրության տակ։ Քանի որ այս հոդվածի վերնագիրը և թեման եզրեր ունի Բոկլի գրքի երկրորդ գլխի հետ (էջ 29—113), պետք է ենթադրել, որ հոդվածի գրության հարցում դեր է կատարել նաև այդ հանգամանքը։

Հոդվածի հեղինակությունը փաստարկելու հարցում ոճական առանձնահատկությունից բացի որոշակի նշանակություն ունի նաև Րաֆֆու գրավիցրած պաշտոնը և առանձնած պարտականությունը «Մշակի» խմբագրության մեջ։ Իբրև այդ բաժնի պատասխանատու՝ նրա խնդրանքը լրագրի թղթակիցներին. «Մենք վաղուց ենք խնդրել Մշակի թղթակիցներից,— գրում է Րաֆֆին հոդվածի վերջին պարբերության մեջ,— և չենք դադարել խնդրել, որ մեզ հաղորդեն Կովկասի զանազան մասերից (և նույնպես Թուրքիայից և Պարսկաստանից) բնակեցրած տեղերի կլիմայի և բնության տեղական պայմանների վերաբերությամբ ճիշտ տեղեկությունները»։ Ստանալով իր պահանջած տեղեկությունները՝ Րաֆֆին գրում և հրապարակում է այս հոդվածը։

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1872, 21 դեկտեմբերի, № 50, էջ 2։

1873

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 115—116)

Հենվելով՝ Թավրիզի ազգային ուսումնարանի աշակերտների «Արարատ» ամսագրում (1872 թ.) լույս ընծայած լուրերի և տեղից ստացված մասնավոր նամակների

վրա, Րաֆֆին գրում և «Մշակում» հրապարակում է «Նամակ Դավրեժից» վերնագրով հոդվածը։

Հրապարակված է Խսպիոն *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1873, 1 փետրվարի, № 4, էջ 4։

ԷԳ ԷԼ ՔԵՉ ԿՐԻՏԻԿԱ (ԷՋ 116—120)

Րաֆֆու այս հոդվածը մի պատասխան է՝ ուղղված Գ. Շերմազանյանի «Թե ո՞ւր են Ավարայր և Տղմուտ» խորագիրը կրող քննախոսության դեմ։

Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Գալուստ Շերմազանյանը «Մշակի» 1872 թվականի 7-րդ համարում կարդալով «Րաֆֆու ուղևորությունից Պարսկաստանում» վերնագրով ակնարկը, «Արարատ» ամսագրի նույն թվականի ԺԱ և ԺԲ համարներում հանդես է գալիս մի ընդարձակ հոդվածով և բանավիճում Րաֆֆու դեմ՝ Ավարայրի դաշտի և Տղմուտ գետի պատմաաշխարհագրական տեղը պարզաբանելու նպատակով։

Այս առիթով «Մշակի» 1872 թվականի 7-րդ համարում Րաֆֆին հրապարակում է «էգ էլ քեզ կրիտիկա» հոդվածը։

Նույն թվականին «Արարատ» ամսագրի մայիսյան համարում (էջ 185) կրկին հանդես է գալիս Գալուստ Շերմազանյանը «Դարձյալ թե ո՞ւր է Ավարայր և Տղմուտ» հոդվածով։ Մելիքզադեն սրան ևս անպատասխան չի թողնում, գրելով «Մի քանի խոսք» վերնագրով հոդվածը (տե՛ս այս հատորում, էջ 143)։

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1873, 22 փետրվարի, № 7, էջ 3։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (ԷՋ 120—122)

Հենվելով ժամանակին իր ամբարած տեղեկությունների և Խեհրանի «Իրան» լրագրից քաղած լուրերի վրա, Րաֆֆին գրում է այս հոդվածը (տե՛ս «Հոդվածներ» *բացատրականը, էջ 499—501)։*

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1873, 22 փետրվարի, № 7, էջ 3։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 122—124)

«Հոդվածներ» *բացատրականում արդեն ասվեց, որ «Մշակը», չունենալով պատրաստի (փարձառու) լրագրողներ, խմբագրության աշխատակիցները իրենց վրա են վերցնում այլևայլ տեղերից ստացված մասնավոր նամակների հիման վրա թղթակցություն-*

ներ գրելու և անփորձ նամակագիրների համար օրինակ ծառայելու պարտականություն։

Ասվեց նաև, որ Մելիք-Հակոբյանի (Րաֆֆու) վրա է դրվում Պարսկաստանի վերաբերյալ թղթակցություններ կազմակերպելու-գրելու պարտականությունը։ Պետք է ավելացնել, որ Գ. Արծրունին ևս հանձն է առնում, խմբագրականներից բացի, կազմել նաև Կ. Պոլսին վերաբերող թղթակցությունները և այլն։

Հայտնի է, որ «Մշակի» հիմնադրումից որոշ ժամանակ անց տրոհվում է լրագրի աշխատակիցների կազմը, համալսարականներ կոչվող մտավորականները հեռանում են խմբագրությունից, և աշխատանքը ծանրանում է փոքրաթիվ ուսների վրա։

Գ. Արծրունին երկու թղթակցություն հրապարակելով Կ. Պոլսի վերաբերյալ (տե՛ս «Մշակ», 1872, № 15 և № 16), ծանրաբեռնվածության պատճառով դադարեցնում է թղթակցությունների հրապարակումը, որից հետո այդ պարտականությունը դրվում է Րաֆֆու վրա։

Հայտնի է, որ «Մշակի» խմբագրությունը առանց խափանումների ստանում էր Կ. Պոլսում լույս տեսնող լրագրերը, որտեղից Րաֆֆին կարողանում էր քաղել իրեն անհրաժեշտ տեղեկությունները՝ Կ. Պոլսին վերաբերող թղթակցությունները կազմելու համար։ «Մշակի մեջ,— գրում է Լեոն,— տպագրվում էին պոլսական թղթակցություններ, բայց դրանք կազմվում էին Թիֆլիսում (ընդգծումը իմն է — Խ. Ս.) մասնավոր նամակներից և Կ. Պոլսից եկողների պատմածներից (տե՛ս Լեո, «Երկերի ժողովածու», հ. 6, Ե., 1987, էջ 391—392)։

Եվ այսպես, հենվելով Պոլսից Թիֆլիս եկած մարդկանց բերած լուրերի, անձնական նամակների և գերազանցապես «Մասիս» լրագրից քաղված տեղեկությունների վրա, Րաֆֆին կազմում է «Նամակ Կ. Պոլսից» թղթակցությունների շարքը, որոնք սկսած 1873 թվականի մարտից՝ պարբերաբար լույս են տեսնում «Մշակում»։

Այս դեպքում ոչ այնքան կարևոր են ստացված լուրերը, որքան դրանց հիման վրա Րաֆֆու արած դատողություններն ու կատարած եզրահանգումները, որոնք թղթակցություններին տալիս են հասարակական արժեք և իմաստավորում։ Եթե չլիներ այս վերջին հանգամանքը, այդ հոդվածները Րաֆֆու անունով հրապարակելը թերևս կդառնա ինքնանպատակ։

«Նամակներ Կ. Պոլսից» թղթակցությունները Րաֆֆին «Մշակում» հրապարակում է այնքան ժամանակ, մինչև որ 1877 թվականի սկզբներին լրագրի աշխատակից է դառնում պոլսաբնակ Մկրտիչ Փորթուգալյանը, ապա նաև՝ Հայկակը (Արփիար Արփիարյանը)։

Թղթակցությունները Րաֆֆին հրապարակում էր գերազանցապես Մ [ելիքզադե] ստորագրությամբ, կան նաև այնպիսիները, որոնք հրապարակված են *** (երեք աստղանիշ) կամ առանց ստորագրության։

Հրապարակված է Մ[ելիքզադե] ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 8 մարտի, № 9, էջ 4։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 125—127)

Հանդես գալով պոլսաբնակ թղթակցի դերում և բացահայտելով հայ գյուղի քայքայման սոցիալական արմատները, Րաֆֆին գաղթականության գլխավոր պատճառը տեսնում է ոչ թե հարևան ցեղերի կարծեցյալ թշնամանքի (ինչպես ճգնում էին բացատրել արևմտահայ ազգային լրագրերը), այլ հողատիրական, ֆեոդալական տնտեսաձևի ներքին հակասությունների մեջ։ Այս տեսանկյունից նա քննադատության է ենթարկում նաև Խրիմյանի հիմնադրած «Արծվի Վասպուրականի» ամսագրի դիրքը, որը կամենում էր «Հայկի և Արամի անցյալ հիշատակներով միայն կերակրել սոված ժողովուրդը» այն դեպքում, երբ «մարդը կարոտ է նյութական սնունդի»։ Նալբանդյանի նման Րաֆֆին ևս պնդում էր, որ «...ազգի գոյությունը պահպանելու գլխավոր պայմաններից մեկն է, հողը և նորա մշակությունը»։ Հենվելով այս տեսակետի վրա և ժողովրդի գլխավոր ուժը տեսնելով «երկրագործ ու արդյունաբերող դասի մեջ», Րաֆֆին որպես գաղթականության կանխման միջոց պահանջում է գյուղացուն կապել հողի և երկրագործության հետ, ելնելով դրանից, նա առաջարկում է հիմնել գյուղատնտեսական և արհեստագիտական ուսումնարաններ ու գյուղական փոխատու ընկերություններ։ Այլ խոսքով՝ Րաֆֆին ձգտում էր հողի օգտագործման հին եղանակը դնել զարգացման բուրժուական ուղու վրա։

Հրապարակված է Մ. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 19 ապրիլի, № 10, էջ 3։

[ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՐՈՆ Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ] (ԷՋ 128)

1873 թվականի փետրվարի 24-ին «Մեղու Հայաստանի» լրագրի 7-րդ համարում տպագրվում է Խ. Գրիգորյանի «Դավրեժ» վերնագրով թղթակցությունը, որտեղ նամակագիրը, անդրադառնալով Րաֆֆու 1872 թվականին «Մշակում» հրապարակած («Նամակ Ղարաղաղից», № 31, «Նամակ Դավրեժից», № 47 և «Պ. Րաֆֆիի ուղևորությանից Պարսկաստանում», № 50) նամակ-ակնարկներին, քննադատում է նրան ոչ ճիշտ տեղեկություններ հաղորդելու համար։ Ահա այս առիթով է, որ Րաֆֆին գրում և հրապարակում է իր պատասխան Խ. Գրիգորյանին երկտողը։ Շրջանցելով այլաստորագիր թղթակցությունների հեղինակային պատկանելությունը՝ նա անդրադառնում է միայն Րաֆֆի ստորագրությամբ («Մշակ», № 50) տպագրվածին։

Հրապարակված է Րաֆֆի ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 15 մարտի, № 10, էջ 4։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 128—131)

Նամակի վերնագրի և հեղինակի ստորագրության վերաբերյալ տեղեկությունները արդեն հայտնի են առաջին նամակի ծանոթագրությունից։ Րաֆֆու գրած այս երեք հոդվածները, հաջորդելով միմյանց, ունեն մի ներքին ընդհանուր կապ։

Առաջին հոդվածում «ազգության գլխավոր ուժը» տեսնում է «ճնշված ու հարստահարությանց մեջ մաշված հայերի մեջ». երկրորդում նա ցույց է տալիս «հարստահարությանց մեջ մաշվող» ժողովրդի քայքայման սոցիալական արմատները։ Երրորդ հոդվածում Րաֆֆին ազգային ուժերի միասնության կոչ է անում։ Նա առաջարկում է վերջ տալ դավանաբանական վեճերին, թողնել կղերի փեշերը և հենվել ժողովրդական ուժերի վրա։ Այս հարցում նեղ ու միակողմանի չգտնվելու և ավելի արդյունավետ գործելու համար Րաֆֆին պահանջում է գործակցել մյուս ազգությունների՝ հույների, ասորիների, հրեաների և այլոց հետ։

Հրապարակված է Մ. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 19 ապրիլի, № 14, էջ 3։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 131—132)

Գրված է Պարսկաստանից ստացված մասնավոր նամակների հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

Հրապարակված է Էսպիոն ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 10 մայիսի, № 17, էջ 4։

[ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ] (ԷՋ 132—133)

«Փունջ» մատենաշարի հրատարակությանը ու բաժնեգրությանը նվիրված՝ այս հայտարարությունը Րաֆֆին տպագրել է «Մշակի» խառը լուրեր բաժնում, առանց վերնագրի։

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1873, 10 մայիսի, № 17, էջ 4։

«ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ» (ԷՋ 133—138)

Այս հոդվածը Րաֆֆին գրել է Գ. Սունդուկյանի համանուն կատակերգության առաջին բեմադրության առիթով (1873 թ. ապրիլի 19-ին)։ «Քանդած օջախի» բեմադրությունը իրարամերժ կարծիքների տեղիք է տալիս մամուլում։ Մի փոքրածավալ ծանուցումից հետո «Մեղու Հայաստանին» հրապարակում է Ս[եներեքիմ] Ա[րծրունու] ընդարձակ հոդվածը, որտեղ վերջինս ձգտում է նսեմացնել ու արժեքազրկել Սունդուկյանի կատակերգությունը։

«Քանդած օջախի» վերաբերյալ միանգամայն տարբեր դիրք է բռնում «Մշակը»։ Բարձր գնահատելով պիեսի արժանիքները, «Մշակի» հոդվածագիր Րաֆֆին գտնում է,

որ «Քանդած օջախը» գեղարվեստական ու գաղափարական տեսակետից հաջողված գործ է։

Րաֆֆու այս հոդվածից հետո «Մեղվի» հոդվածագիր Ս. Ա.-ի հարձակումները կատակերգության ու հեղինակի վրա ավելի սուր բնույթ են ստանում (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1873, № 16, 17, 20)։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 17 մայիսի, № 18, էջ 1—2։

[«Русский мир» ԼՐԱԳՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ] (ԷՋ 139—143)

Հոդվածը կազմված է «Русский мир» լրագրի 1873 թվականի 104-րդ համարի հետ առաքված ռուսերեն գրքույկի մեջ հայերի և վրացիների մասին «մի քանի նկատողություններ» լինելու առիթով։ Կատարելով մեծահատված թարգմանություններ Րաֆֆին դրանով դրսևորում է իր վերաբերմունքը այդ գրքույկի վերաբերյալ։

Հրապարակված է Յ. [ակոբ] Մ. [իրզայան] ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 31 մայիսի, № 20, էջ 1—3։

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ (ԷՋ 143—144)

«Էդ էլ ընդ կրիտիկա» հոդվածի ծանոթագրությունից ընթերցողին արդեն հայտնի է Գ. Շերմազանյանի և Րաֆֆու միջև ծագած բանավեճի սկզբնառիթը։

Հայտնի է նաև, որ Րաֆֆու հոդվածից հետո Շերմազանյանը գրում է. «Դարձյալ թե ո՞ւր է Ավարայր և Տղմուտ» վերնագրով հոդվածը (տե՛ս «Արարատ», 1873, № 5, էջ 165), որտեղ, բանավիճելուց զատ, ի լուր ամենքին բացում է Րաֆֆու ծածկանունները և հայտնում է, որ Մելիքզադեն, Հակոբ Միրզայանը և Րաֆֆին միևնույն անձնավորությունն է։ Ահա այս առիթով է, որ Րաֆֆին գրում է «Մի քանի խոսք» վերնագրով հոդվածը։ Շերմազանյանի կատարածը բնութագրելով իբրև անազնվություն, մի առածով Րաֆֆին վերջացնում է իր բանավեճը նրա հետ։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 28 հուլիսի, № 24, էջ 3—4։

[ՊԱՏԱՍԽԱՆ «ՄԵՂՎԻՆ»] (ԷՋ 144—145)

1873 թվականի սկզբին Րաֆֆին որոշում է իր արձակ և չափածո ստեղծագործությունները ամփոփել 10 հատորի մեջ և հրատարակել «Փունջ» ընդհանուր խորագրով։

Այս առթիվ «Մշակի» մեջ տպագրում է մի հայտարարություն (տե՛ս «Մշակ», 1873, № 17, էջ 4), որտեղ, այդ հատորի պարունակության և բաժնեգրության պայմանների մասին ծանուցում տալուց բացի, խնդրվում է հայ գրականության սիրողներին նպաստել «Փունջի» տպագրությանը։

Դեռևս չէր ավարտվել առաջին հատորի բաժնեգրության գործը, երբ «Մեղու Հայաստանի» լրագրի թղթակից Քաղրցին իր մի ֆելիետոնում Րաֆֆու բանաստեղծությունները («Փունջի» առաջին հատորը) որակում է իբրև ««Փունջ» անգույն ու անհոտ ծաղկանց» (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1873, № 26, էջ 3)։

Ահա այդ ֆելիետոնի կապակցությամբ է, որ Րաֆֆին գրում է այս մի քանի տողից բաղկացած պատասխանը՝ «գլգլած» անվանելով Քաղրցու գործը։

Հրատարակված է Րաֆֆի ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 19 հուլիսի, № 27, էջ 4։

Կ. ՊՈԼՍԻ ՍՐ. ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ (ԷՋ 145—147)

Խրիմյանի պատրիարքությունից հրաժարվելու առիթով գրված այս հոդվածում Րաֆֆին քննադատում է Կ. Պոլսի սահմանադրական վարչությանը, որի գործունեությունը ոչ միայն չի տարածվում գավառների վրա, այլև զրկված է Պոլսի մեջ պատահած գործերն իսկ քննելու և վճռելու կարողությունից։

Րաֆֆուն զայրույթ է պատճառում, որ Պոլսի կուսակցությունները իրենց գործունեությունը ընդհանուր օգտին և ազատությանը ծառայեցնելու փոխարեն ի սպաս են դնում «էֆենդի աղաների չար կրքերին», նա իր քննադատության սուր ծայրն ուղղում է Քաղաքական ժողովի դեմ, որն անտես առնելով Խրիմյանի առաջարկները, տեղիք է տալիս նրա՝ պատրիարքությունից հրաժարվելուն։

Րաֆֆու հոդվածը ամբողջովին կառուցված է Խրիմյանի հրաժարականի հիման վրա, որի տեքստը լույս է տեսել Կ. Պոլսի «Մասիս» լրագրի 1873 թվականի օգոստոսի 7-ի համարում։

Հրատարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 13 սեպտեմբերի, № 35, էջ 3—4։

ԲՈՒՐՍԱՅԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ԷՋ 147—149)

Հայտնի է, որ Րաֆֆու մտահոգությունների ու աշխարհըմբռնման ոլորտում կարևոր տեղ ուներ հոդվածների միջոցով հասարակական նոր հարաբերությունների զարգացմանը նպաստելու, այդ գործընթացի վրա ազդելու միտումը։ Քանի որ «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին խրախուսում և ընթացք էր տալիս նման հոդվածների տպագրությանը, ուստի Րաֆֆին սկսում է հաջողությամբ համատեղել իր միտումը Արծրունու ցանկությունների հետ։ Այս փոխըմբռնումը կատարում է իր դերը, և Րաֆֆին 1872—77 թվականների ընթացքում «Մշակում» պարբերաբար հրապարակ է հանում

հետևյալ հոդվածները. «Վաճառականությունը հայերի մեջ», «Արվեստագործությունը Կովկասում», «Բուրսայի կարևորությունը», «Փոստայի հարակցության կարևորությունը», «Մի նոր պրոեկտ Երևանի նահանգի դրությունը բարվոքելու համար», «Վաճառականությունը Պարսկաստանում», «Հայ վաճառականներ Կովկասի մեջ» և այլն։

Սույն «Բուրսայի կարևորությունը» հոդվածը այդ շղթայի օղակներից մեկն է։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 20 սեպտեմբերի, № 36, էջ 2։

ՓՈՍՏԱՅԻ ՀԱՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ (էջ 150—152)

«Վաճառականությունը հայերի մեջ» հոդվածից արդեն հայտնի է, որ Րաֆֆին ցանկանում է զարկ տալ նոր տիպի վաճառականության զարգացմանը։ Նույն միտքը նա հետևողականորեն արծարծում է նաև մի շարք այլ հոդվածներում, ինչպես նաև «Ոսկի աքաղաղ» վեպում։

«Փոստայի հարակցության կարևորությունը Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ» հոդվածում Րաֆֆին թեև ուրիշ դիտակետից է մոտենում խնդրին, բայց նպատակն ու ելակետը մնում է նույնը՝ ճանապարհ հարթել նոր զարգացող բուրժուական հարաբերությունների համար։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 27 սեպտեմբերի, № 37, էջ 2։

ՀԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԽԵԼՔԸ (էջ 152—157)

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873, 11 հոկտեմբերի, № 39, էջ 1—2։

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ (էջ 157—160)

Ընթերցողներին ուղղված այս առաջաբանը Րաֆֆին գրել է իր անդրանիկ ժողովածուի՝ «Փունջ» մատենաշարի առաջին հատորի հրատարակման առթիվ։

Այս առաջաբանով Րաֆֆին իր բանաստեղծությունների գիրքը հանձնում է ընթերցողներին, նախօրոք զգուշացնելով, որ իր բանաստեղծությունները զուրկ են գեղարվեստական վսեմությունից, որ դրանք արձագանք են դառն հառաչանքի։

Առաջաբանի միջոցով Րաֆֆին ընթերցողներին նաև ծանոթացնում է իր հրատարակչական ծրագրերի հետ։

Հայտնում է, որ «Փունջ» խորագրով մատենաշարը լույս է տեսնելու տասը հատորով։ Այստեղ մանրամասն նշված է, թե ինչ պարունակություն է ունենալու «Փունջի» ամեն մի հատորը, ինչ դիրք ու ծավալ է ունենալու նրա յուրաքանչյուր գիրքը։

Առաջաբանը գրված է 1873 թվականի կեսերին։ Առաջին անգամ լույս է տեսել 1874 թվականին իբրև «Փունջի» մատենաշարի առաջին հատորի առաջաբան։ Այնուհետև հեղինակի մահվանից հետո, երբ Րաֆֆու ստեղծագործությունների հրատարակման իրավունքը անցնում է Աննա Րաֆֆու ձեռքը, վերջինս 1891 թվականին, երբ տպագրում է «Վեպիկներ և պատկերներ» ժողովածուն, իբրև նախաբան օգտագործում է այս առաջաբանը։

Հրապարակված է Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան) *ստորագրությամբ։*

Արտատպված է «Փունջի» առաջին հատորից, Թիֆլիս, 1874, էջ 7։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Կ. ՊՈԼՍԻ ՄԵՋ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԸ (ԷՋ 161—166)

Պոլսահայության հասարակական-քաղաքական կյանքին ծանոթ լինելը նրան հնարավորություն է տալիս գրելու ոչ միայն «Նամակներ Կ. Պոլսից» շարքն ու «Ղարիբ մշեցին» վիպակը, այլև «Կուսակցությունները Կ. Պոլսի մեջ» վերնագրով հոդվածը։

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1873, 18 հոկտեմբերի, № 40, էջ 1—2։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 166—167)

Գրված է Դավրեժից ստացված մասնավոր նամակների հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

*Հրապարակված է *** (երեք աստղանիշ) ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1873, 25 հոկտեմբերի, № 41, էջ 4։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ (ԷՋ 167—173)

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1873, 22 նոյեմբերի, № 46, էջ 1—3։

ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐ ԽՐԻՄՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ (ԷՋ 173—180)

Րաֆֆու հոդվածը «Մշակում» լույս տեսնելուց հետո երկրորդ շաբաթվա ընթացքում «Մեղու Հայաստանի» լրագիրը անդրադառնում է այս հոդվածին, առաջին անգամ դրվատանքի խոսք ասելով Րաֆֆու հասցեին: «Դեռ երեկ,— ասված է մանր լուրեր բաժնում,— մենք չենք կարդացել «Մշակի» մեջ մի այդպիսի ազգասիրական եռանդով գրած հոդված: Շնորհավորում ենք «Մշակի» առաջաքայլը դեպի հայության դարձը» (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1873, 22 դեկտեմբերի, № 49, էջ 4):

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ:*

Արտատպված է «Մշակից», 1873, 13 դեկտեմբերի, № 49, էջ 1—3:

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ (ԷՋ 181)

«Առաջաբանի տեղ» հոդվածը Րաֆֆին գրել է 1873 թ. ընթացքում, «Փունջի» երկրորդ հատորի հրատարակման առիթով: Րաֆֆին բացատրում է, որ հրատարակելով իր պատմածները, նպատակ է ունեցել «զարգացնել կարդացողների ճաշակը և նոցա սերը դեպի մայրենի լեզվի ընթերցանությունը»: Այնուհետև, օգտվելով առիթից, հեղինակը իր վերաբերմունքն է ցուցաբերում «Փունջի» առաջին հատորի «կրիտիկոսների» հանդեպ: Նա վայրիվերո է համարում «Մեղու Հայաստանի» լրագրի ֆելիետոնը (տե՛ս 1873, 14 հուլիսի, № 26, էջ 1—3) և Գր. Արծրունու խոսքը (տե՛ս «Մշակ», 1874, 21 փետրվարի, № 7, էջ 2 և 7 մարտի, № 9, էջ 1—2):

Հրապարակված է Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան) *ստորագրությամբ:*

Արտատպված է «Փունջի» երկրորդ հատորից, Թիֆլիս, 1874, էջ 7:

«ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԱ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԵՐԱ» (ԷՋ 182—188)

Րաֆֆին «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետի վերա» հոդվածը գրել է Պոլսից ստացված համանուն վերնագրով մի գրքույկի առիթով:

Պողոսի չարագործությունները հայտնի էին դեռևս 60-ական թվականների սկզբից: Լինելով Վանի առաջնորդ, նա կապված էր քուրդ ու թուրք ավազակների հետ, որոնք կողոպտում, ծեծում ու առևանգում էին աշխատավոր մարդկանց:

Պողոսի դեմ բողոքում են Կ. Պոլսի առաջավոր տարրերը և գավառի ազգաբնակչությունը, որոնց ճնշման տակ կրոնական ժողովը որոշում է ժամանակավորապես «քահանայագործելու» իրավունքից ազատել ոճրագործին: Պողոսի դեմ առանձին հանդես է գալիս Կ. Պոլսի «Մեղուն», պահանջելով քահանայությունից ընդմիշտ զրկել նրան: Նույն օրերին Սվաճյանին ուղղված նամակում Մ. Նալբանդյանը ողջունում է «Մեղվի» կողմից ժողովրդի իրավունքի պաշտպանությունը և պահանջում է դատի տալ ոճրագործ

հոգևորականին։ Զրպարտելով դրանով, Նալբանդյանը «Երկու տող» պամֆլետում, կրկին անգամ անդրադառնալով այդ խնդրին, մերկացնում ու դատապարտում է Պողոսին և նրա հովանավորներին։

Մեկուկես տասնամյակ հետո Պողոսի ոճրագործությունների դեմ այս հոդվածի միջոցով հանդես է գալիս նաև Րաֆֆին և Կ. Պոլսի ազգային վարչությունից պահանջում է խոհեմ լինել և լսել Պողոսին պատժել պահանջող ժողովրդի ձայնը։ Ըստ հավաստիացման՝ Րաֆֆին, այս մեկից բացի, «Մշակի» մեջ տպագրել է նաև «մի շարք» ուրիշ հոդվածներ, որով ծանոթացրել է «ընթերցողներին Պողոսի հրեշավոր անձնավորության հետ» (տե՛ս այս հրատարակության, հատոր 4-րդ, էջ 113—114)։ Րաֆֆին Պողոսի մասին խոսում է նաև «Նամակ Կ. Պոլսից» հոդվածում (տե՛ս այս հատորում, էջ 202)։ Մեզ չհաջողվեց հայտնաբերել «Մշակում» տպագրված նրա մյուս հոդվածները։ Պողոս վարդապետ անձնավորությանը Րաֆֆին անդրադարձել է նաև հետագայում՝ «Կայծերի» երկրորդ հատորում։

Հրատարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1874, 14 մարտի, № 10, էջ 1—3։

ԴԱՎՐԵԺԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՐՑԸ (ԷՋ 188—194)

Ինչպես խոստովանում է Րաֆֆին, այս հոդվածը ևս նա գրել է Դավրեժից ստացված մասնավոր նամակների հիման վրա։ Միաժամանակ հանրագումարի բերելով և ընդհանրացնելով պարսկահայության կրթական ու հասարակական կյանքի վերաբերյալ իր նախորդ նամակներում արծարծված հարցերը, նա նորից է անդրադառնում «Արարատ» ամսագրում Հովհաննես Երեմյանի Դավրեժից գրած նամակին։ Բացահայտելով հասարակական կյանքում տեղ գտած թերությունները՝ նա քննադատում է Ատրպատականի հայոց առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Հորյանի անգործունեությունը, որի ապիկարության հետևանքով կրոնափոխությունը մեծ ծավալ էր ընդունել նրա գլխավորած վիճակում և «ընդարձակ քայլեր է անում»։

Հրատարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1874, 25 ապրիլի, № 16, էջ 1—3։

ՄԻ ՆՈՐ ՊՐՈԵԿՏ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՎՈՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԷՋ 194—196)

«Բուրժուայի կարևորությունը» հոդվածի առիթով (տե՛ս այս հատորում, էջ 147) մենք արդեն ասացինք, որ Րաֆֆու համար կարևոր նշանակություն է ունեցել նման հոդվածների միջոցով հասարակական նոր զարգացող հարաբերությունների վրա ներազդելու միտումը։ Սույն հոդվածը նրա այդ շարքին պատկանող օղակներից մեկն է։

Հրատարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1872, 2 մայիսի, № 17, էջ 1։

ՊԱՏԱՍԽԱՆ «ՄԵՂՎԻՆ» (ԷՋ 196)

Մի քանի տողից բաղկացած այս «պատասխանը» Րաֆֆին գրել է «Մեղու Հայաստանի» լրագրի ապրիլի 20-ի համարում (1874 թ., № 15) հրապարակված Եղիշե քահանա Գեղամյանի (Թոխմախի) «Գավառական ֆելիետոն» վերնագրով անհամ սրախոսության դեմ։

Հրապարակված է Րաֆֆի ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1874, 9 մայիսի, № 18, էջ 4։

«ՔՆԱՐ ՄՇԵՑՎՈՑ ԵՎ ՎԱՆԵՑՎՈՑ» ԳՐՔՈՒՅԿԻ ԱՌԻԹՈՎ (էջ 197—201)

Այս հոդվածը մի գրախոսություն է նվիրված Արիստակես վարդապետ Սեդրակյանի հրատարակած «Քնար մշեցվոց և վանեցվոց» գրքույկին։ Րաֆֆին բանասիրական քննության է ենթարկում Սեդրակյանի հավաքած երգերը, արժեքավորելով այդ ստեղծագործությունների մեջ տեղ գտած «ժողովրդի հատկանիշ բնավորությունը», երգերի ազգային բնույթը, ինքնուրույնությունը։ Ժողովրդական երգերի կարևորագույն հատկանիշը Րաֆֆին տեսնում է առօրյա կյանքի հետ ունեցած կապի, հարազատության մեջ։ «Մշեցվոց և վանեցվոց երգերի մեջ ընթերցողը տեսնում է ոչ թե երևակայական էակներ, այլ մի կենդանի ժողովուրդ, թե որպես ապրում է նա, որպես մտածում, զգում է, վերջապես որպես սիրում է նա»։ Ինչ վերաբերում է ժողովրդական երգերի գեղարվեստական արժեքին, ապա Րաֆֆին «գրականական նշանակության» մեծությունը համարում է այդ երգերի բնական գեղեցկությունը։ «Որքան ժողովրդական երգերը կազմված լինեին կոշտ-կոպիտ կերպով, որքան նոքա զուրկ լինեին արհեստական գեղեցկություններից, այնուամենայնիվ, նոքա դարձյալ նշանավոր են, որպես անկեղծ թոթովանք, որ բխում է նորա սրտից և նորա կյանքից»։ Եթե կամենում ես ճանաչել ժողովրդի հոգին, կարդա նրա երգերը,— ասում է Րաֆֆին։

Հրապարակված է Սեյիրզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1874, 16 մայիսի, № 19, էջ 1—2։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (ԷՋ 202)

Գրված է Պարսկաստանից ստացված մասնավոր նամակի հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 495—497)։

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1874, 23 մայիսի, № 20, էջ 2—3։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 202—204)

Հոդվածը գրված է «Մասիս» լրագրում տպագրված լուրերի և մասնավոր նամակներից քաղված տեղեկությունների հիման վրա։ Անհավանական չպետք է համարել նաև անձնական շփումները։

Հրատարակված է Մ[ելիքզադե] *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1874, 23 մայիսի, № 20, էջ 2։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (ԷՋ 204—206)

Ինչպես ասված է հոդվածի սկզբում՝ գրված է «մասնավոր նամակներից» քաղված տեղեկությունների հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» *բացատրականը, էջ 499—501)։*

Հրատարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1874, 18 հուլիսի, № 28, էջ 3։

ՊԱՏԱՍԽԱՆ (ԷՋ 206—207)

1874 թվականի հունվարի 31-ին Թիֆլիսում լույս է տեսնում Րաֆֆու «Փունջ» խորագրով մատենաշարի առաջին հատորը, որի մեջ ընդգրկված էին նրա բանաստեղծությունները։ Նույն թվականի օգոստոսին էջմիածնի «Արարատ» ամսագրում հրապարակվում է Գալուստ Շերմազանյանի «Պարոն Րաֆֆիի «Փունջ» բանաստեղծությունների վերա» վերնագրով գրախոսականը։ Ահա այս առիթով «Մշակի» մեջ Րաֆֆին հանդես է գալիս սույն «Պատասխան» հոդվածով։

Հրատարակված է Րաֆֆի *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1874, 3 հոկտեմբերի, № 39, էջ 4։

ՀԱՍՈՒՆՅԱՆԸ ԵՎ ՅՈՒՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ԷՋ 207—210)

1860-ական թվականների երկրորդ կեսին Հռոմի պապի գործակալ և նրա կամակատար Անտոն Հասունյանի ազգադավ գործունեության հետևանքով պոլսահայ իրականության մեջ ծայր է առնում հասունյան և հակահասունյան կուսակցությունների պայքարը։

Պոլսում և գավառներում հասունյան կուսակցության դեմ ծավալվում է անհաշտ

պայքար, որին, ինչպես հայտնի է, մասնակցում է նաև հայ առաջավոր մտավորականությունը՝ ի դեմս Սերենցի և ուրիշների։

Այդ պայքարը առանձնապես սուր բնույթ է կրում 1874 թվականին, պատճառ դառնալով մի շարք անախորժությունների։ Առերևույթ կրոնական թվացող այս խնդրի տակ թաքնված էր քաղաքական նպատակադրում, որ Հասունյանի միջոցով ցանկանում էին իրականացնել նրա արևմտյան հովանավորները։ Հասունյանի և նրա կուսակցության դեմ տարվող պայքարին մասնակցում են նաև Րաֆֆին և Արծրունին։ Րաֆֆին «Հասունյանը և յուր կուսակցությունը» հոդվածով հետապնդում է մի նպատակ՝ ցույց տալ այդ կուսակցության գործունեության կործանարար հետևանքները և պարզել, որ հայ ժողովուրդը ոչ մի դրական սպասելիք չի կարող ունենալ այդ շարժումից։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1874, 24 հոկտեմբերի, № 42, էջ 1։

ՎԱՆՔԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՐՈՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԷՋ 210—216)

Չցանկանալով անտեսել ու թերագնահատել հոգևորականության դերը մեր ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում, Րաֆֆուն լրջորեն մտահոգում էր «Հոգևորականների վիճակի բարելավման խնդիրը»։ Ահա հենց այս շարժառիթով էլ նա բազմիցս անդրադառնում է սույն թեմային։ Այդ շղթայի օղակներից մեկն էլ «Վանքը և կուսակրոն հոգևորականությունը» վերնագրով հոդվածն է։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1874, 7 նոյեմբերի, № 44, էջ 1—2։

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ (ԷՋ 217—221)

«Հեղինակների վիճակը» հոդվածի գրության շարժառիթը մասամբ անձնական է, բայց խորանալով իրերի դրության մեջ և քննության ենթարկելով հեղինակների ընդհանուր վիճակն ու հրատարակչական գործի դրվածքը, այդ հարցը Րաֆֆու գրչի տակ ստանում է հասարակական նշանակություն։ Հայտնի է, որ առաջին և երկրորդ գրքերից հետո Րաֆֆին նյութական հնարավորություն չունեցավ շարունակելու «Փունջի» մնացած հատորների տպագրությունը։ Ղ. Աղայանի վկայությամբ՝ Րաֆֆու «Փունջերը» մնում են տպարանում փակված՝ «տպագրության վարձը չվճարելու համար և վերջը կշեռքով ծախվում են մանրուք փաթաթելու համար» (տե՛ս Ղ. Աղայան, «Երկեր», հ. Դ., Երևան, 1950 թ., էջ 463)։

Համեմատության մեջ դնելով գրողի, կոշկակարի և հյուսնի տնտեսական վիճակը, Րաֆֆին այն միտքն է հայտնում, որ գրողը ավելի վատթար կացության մեջ է գտնվում, քան վերջինները։ «Գրքերի հեղինակը յուր գլուխն անգամ պահել չի կարողանում»,— ասում է Րաֆֆին։ Ելնելով հեղինակի անկայուն ու անմխիթար դրությունից, հոդվածագիր Մելիքզադեն առաջարկում է հիմնել «Տպագրական ընկերություն», որով, ըստ նրա,

միջոց կտրվի հեղինակներին աշխատելու և մյուս կողմից կբավարարվեն դպրոցականների ու ընթերցասերների գրքի հանդեպ ունեցած պահանջները։

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1874, 28 նոյեմբերի, № 48, էջ 1—2։

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ (ԷՋ 221—223)

Հոդվածը գրված է տարբեր աղբյուրներից քաղված լուրերի հիման վրա, օգտագործված են՝ մասնավոր նամակներն ու անձնական շփումները, ինչպես նաև «Մասիս» լրագրում եղած տեղեկությունները, ինչը հոդվածի մեջ խոստովանում է նաև ինքը՝ Րաֆֆին.

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1874, 5 դեկտեմբերի, № 49, էջ 4։

[«ՓՈՒՆՋԻ» ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ] (ԷՋ 223)

Հրապարակված է Րաֆֆի *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1874, 12 դեկտեմբերի, № 50, էջ 4։

1875

ԹՈՒՐՔԻԱ (ԷՋ 224—226)

«Թուրքիա» վերնագրով հոդվածը գրված է «Մշակի» արտաքին տեսության բաժնի համար։ Հենվելով պոլսահայ թերթերի հաղորդած տեղեկությունների հիման վրա, Րաֆֆին կազմում է հիշյալ տեսությունը, յուրաքանչյուր հարցի վերջում ավելացնելով իր արժեքավոր դիտողություններն ու եզրակացությունները։

Փոքր Ասիայում տիրող սովի հետևանքով առաջացած դժբախտությունները մատնանշելուց հետո Րաֆֆին անդրադառնում է գաղթականության հարցին և քննադատում է Պոլսի ազգային ժողովը, որը աչք փակելով պանդխտություն ծնող սոցիալ-տնտեսական պատճառների հանդեպ, առաջարկում է այնպիսի միջոցներ, որոնք ոչ մի չափով չեն կարող կանխել գյուղացիության քայքայումն ու գաղթականության հոսանքը։

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1875, 16 հունվարի, № 2, էջ 3։

«ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ ԿԱՄ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» (ԷՋ 227—244)

«Գրոց ու բրոց...» հոդվածը Րաֆֆին գրել է Գ. Սրվանձտյանի համանուն գրքի (1874 թվականին) լույս ընծայման առիթով։

Պատմելով ու վերլուծելով Սրվանձտյանի հավաքած ավանդությունները, Րաֆֆին աշխատում է ցույց տալ այդ ստեղծագործությունների կապը ժողովրդի անցյալ կյանքի հետ։ Հաճախ Րաֆֆին Սրվանձտյանի կիսատ թողածը լրացնում է իր իմացած տեղեկություններով, պատմում է նոր ավանդություններ ու անում համապատասխան եզրակացություն։ Այս գիրքը Րաֆֆին գնահատում է իբրև մի «օգտավետ աշխատություն, որը ընծայում է հնագիտական առատ և անմշակ նյութ»։ Վերջում նա խոստանում է առանձին հոդվածով հանդես գալ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վեպի մասին։ Հիշյալ հոդվածը նա գրել է, թե ոչ, դժվարանում ենք ասել։

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1874, 16 հունվարի, № 2, էջ 1—3, 23 հունվարի, № 6, էջ 1—3։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 245—246)

Գրված է Դավրեժից ստացված մասնավոր նամակների և հանդիպումների ընթացքում քաղած լուրերի հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

*Հրապարակված է ** (երկու աստղանիշ) ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1875, 13 մարտի, № 10, էջ 3։

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ (ԷՋ 246—258)

«Արևելյան մամուլի» մեջ Մատթեոս Մամուրյանի հրապարակած «Կրթության խնդիրը հայոց մեջ» (տե՛ս № 9, էջ 385—391, № 10, էջ 433—438, № 12, էջ 532—536) հոդվածը շարժառիթ է դառնում, որ Րաֆֆին ոչ միայն հանդես գա «Մշակում» գրախոսական հոդվածով, այլև, առիթն օգտագործելով, ինքը ևս անդրադառնա կրթության խնդրին, ինչը խիստ կարևոր նշանակություն ուներ նրա հասարակական կյանքի վերակառուցմանը վերաբերող մտահոգությունների ոլորտում։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1875, 20 մարտի, № 11, էջ 1—2, 3 ապրիլի, № 13, էջ 1—2։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (էջ 258—259)

Գրված է Դավրիժից ուղարկված մասնավոր նամակի հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1875, 27 մարտի, № 12, էջ 3։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (էջ 259)

Գրված է Դավրիժից ուղարկված մասնավոր նամակների հիման վրա (տե՛ս «Հոդվածներ» բացատրականը, էջ 499—501)։

Հրապարակված է առանց ստորագրության։

Արտատպված է «Մշակից», 1875, 24 ապրիլի, № 16, էջ 4։

ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ (էջ 260)

Թեև հոդվածի սկզբում հեղինակը հավաստիացնում է, որ ինքը չորս ամիս եղել է Ռաշտում, սակայն դա արված է իբրև միջոց հավաստիությունը փաստարկելու համար։ Իրականում հոդվածը գրված է նամակ-թղթակցությունների, վաճառականության շրջանում նրա քաղած տեղեկությունների հիման վրա։

Հրապարակված է Մ[ելիքզադե] *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1875, 1 մայիսի, № 17, էջ 4։

ՏԱՐՈՆԻ ԵՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ ԵՎ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ (էջ 261—276)

Այս հոդվածի ասպարեզ գալու շրջանում Րաֆֆին զբաղված էր «Խաչագողի հիշատակարան» վեպի գրությամբ, որի հիմքի վրա ավելի ուշ կազմավորվում է «Կայծեր» վեպը։ Րաֆֆին այս հոդվածի առաջին կեսի մեջ կատարելով որոշ հավելումներ՝ «Ի՞նչ է քուրդը, և ի՞նչ է թուրքը» վերնագրով ներ է առնում «Կայծերի» առաջին հատորի մեջ իբրև վեպի ԻԵ գլուխ։ Նա նույն կերպ է վարվում նաև հոդվածի երկրորդ կեսի հետ և «Հայրենիքի սերը» վերնագրով մտցնում է «Կայծերի» առաջին հատորի մեջ իբրև վեպի ԻԷ գլուխ։ Պետք է ենթադրել, որ այս հոդվածը նախորդել է «Խաչագողի հիշատակարանի», ապա նաև «Կայծերի» գրությանը։

Հրապարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1875, 15 մայիսի, № 19, էջ 1—3, 22 մայիսի, № 20, էջ 1—2։

«ԷԼԻ ՄԵԿ ԶՈՀ» (ԷՋ 276—283)

Այս հոդվածը Րաֆֆին գրել է «Էլի մեկ զոհի» 1875 թվականի մայիսի 16-ի ներկայացման առիթով։

Քննելով Սունդուկյանի ստեղծած կերպարները, Րաֆֆին ցույց է տալիս դրանցից յուրաքանչյուրի վերաբերմունքը ժամանակի ամենախոշոր գործոնի՝ փողի հանդեպ։

Ինչպես հայտնի է, «Էլի մեկ զոհի» ավարտված տարբերակը բաղկացած է հինգ գործողությունից, սակայն 1875 թվականին Րաֆֆու տեսած ներկայացման տեքստը կազմված է եղել երեք գործողությունից։ Հավանաբար հենց այս հանգամանքն էլ առիթ է տվել Րաֆֆուն ասելու, որ «Էլի մեկ զոհը» «լրացված չէ», որ հեղինակը «չէ հասցնում գործողությունները իրենց վերջնական կետին»։

Հրատարակված է Մելիքզադե *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1875, 5 հունիսի, № 22, էջ 1—2։

ԽԱՎԱՐԻ ԱՐԲԱՆՅԱԿՆԵՐԸ (ԷՋ 283—285)

Հոդվածը մնացել է անավարտ, ուստի և հեղինակի կենդանության ժամանակ չի հրատարակվել։ Որոշ փաստեր հիմք են տալիս ասելու, որ «Խավարի արբանյակները» հոդվածը Րաֆֆին գրել է 1875 թվականի կեսերին։

Առաջին անգամ տպագրվել է Րաֆֆու մահվանից երկու տարի անց։ 1890 թվականին Աննա Րաֆֆին հեղինակի արխիվից հայտնաբերելով այս հոդվածի ձեռագիրը, տրամադրում է այն «Տարազ» ամսագրի խմբագրությանը։

Հրատարակված է Րաֆֆի *ստորագրությամբ։*

Արտատպված է «Տարազից», 1890, № 5, էջ 84։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 286—287)

Հայտնի է, որ 1875 թվականի հունիսի սկզբին Րաֆֆին մեկնում է Պարսկաստանի Թավրիզ։ Նրան հրավիրել էին վարելու տեղի ազգային դպրոցի հայոց լեզվի և պատմության ուսուցչի պաշտոնը։ Այդ առիթով «Մշակում» տպագրված հայտարարության մեջ ասված է, որ նա այնտեղից կշարունակի աշխատակցել «Մշակին» (տե՛ս 1875, 12 հունիսի, № 23, էջ 3)։

«Նամակ Դավրեժից» հոդվածը Րաֆֆու ուղարկած առաջին թղթակցությունն է, որտեղ նա իրեն հատուկ կրքով մասնակցում է հասարակական հարցերին, պաշտպանելով ընկած ու ստորացված մարդու՝ հայ շինականի իրավունքները կրոնական մոլեռանդությունից։

«Նամակ Դավրեժիցը» գրված է 1875 թվականի հունիսի 5-ին (հին տոմարով) Թավրիզից։

Հրապարակված է Մն․[իրզադե] ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1875, 24 հուլիսի, № 29, էջ 3—4։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 288—292)

1875 թվականի հուլիսի 15-ին Թավրիզից Րաֆֆին «Մշակին» է ուղարկում երկրորդ թղթակցությունը «Նամակ Դավրեժից» վերնագրով։ Խոսելով պարսկահայոց լուսավորության մասին, Րաֆֆին մեջ է բերում Թավրիզի ազգային դպրոցի հիմնադրման ու առաջադիմության պատմությունը։ Նա առաջարկում է դպրոցում ընդունել նաև պարսիկ երեխաներին, այդ փաստի մեջ տեսնելով «պարսիկների և հայերի, այդ երկու միմյանց հետ ցեղակից ազգերի մեջ սեր և միաբանություն տարածելու» լավագույն միջոցը։

Հրապարակված է Մնչիրզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1875, 31 հուլիսի, № 30, էջ 1—2։

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ (ԷՋ 292—294)

1875 թվականի հուլիսի սկզբներին հասնելով Թավրիզ և կարգավորելով մանկավարժական աշխատանքի հետ կապված գործերը, Րաֆֆին մեկնում է Սալմաստ, ընտանիքի մոտ։ Այստեղ նա հանդիպում է Ատրպատականի առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոս Հովհաննիսյանին։ Հուլիսի 26-ին Րաֆֆին Անդրեաս արքեպիսկոպոսի հետ, իբրև վերջինիս թարգման, այցելում է Ատրպատականի ընդհանուր դիվանապետ (Սահար-դիվան) Մուհամեդ-Ռահիմ-Միրզա իշխանին։ Այս ամենի մասին Րաֆֆին գրում և «Մշակի» խմբագրությանն է ուղարկում «Նամակ Սալմաստից» թղթակցությունը։

Հրապարակված է Մն․[իրզադե] ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1875, 21 օգոստոսի, № 33, էջ 3։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 295—297)

Թավրիզի Արամյան ազգային դպրոցի 25-ամյակի տոնակատարության առթիվ Րաֆֆին իր «Նամակ Դավրեժից» թղթակցության մեջ անդրադառնում է Ատրպատականի հոգևոր թեմի նախկին առաջնորդ և դպրոցի հիմնադիր Սահակ եպիսկոպոս Սաթունյանին։ Բարձր գնահատելով վերջինիս արժանիքները՝ Րաֆֆին հարկ է համարում «Մշակի» ընթերցողներին ծանոթացնել նրա հասարակական, լուսավորական ու կրոնական գործունեության հետ։

Հրապարակված է Մն․[իրզադե] ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1875, 11 սեպտեմբերի, № 36, էջ 3—4։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ (ԷՋ 297—304)

Այս հոդվածը թեև ունի իր սկիզբն ու վերջը, սակայն վերնագրի ընդգրկման առումով մնացել է անավարտ։ Նման մի հավաստիացում կա նաև հեղինակի կողմից։ Հոդվածի վերջին պարբերության մեջ Րաֆֆին, դիմելով «Մշակի» ընթերցողներին, գրում է. «Մեր այս նամակով հաղորդած վիճակագրական տեղեկությունները վերաբերում են միայն պարսից Արաղիստանի մասին, մնում է Ատրպատականի նահանգը, որի մասին կգրենք հետո»։ Շարունակությունը գրելու համար Րաֆֆին պետք է իր ձեռքի տակ ունենար Ատրպատականի հայոց վիճակագրությունը, որը ըստ տեղեկությունների պետք է իրականացներ հոգևոր առաջնորդ Անդրեաս եպիսկոպոս Հովհաննիսյանը։

Հրատարակված է Մնլ.[իմզադե] *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1875, 25 սեպտեմբերի, № 38, էջ 1—3։

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ (ԷՋ 304—315)

Նախորդ հոդվածի ծանոթագրության մեջ ասվեց, որ Րաֆֆին, դիմելով «Մշակի» ընթերցողներին, խոստանում է գրել նաև այդ հոդվածի շարունակությունը՝ Ատրպատականի հայոց վիճակագրության մասին: *Հետագայում Րաֆֆու ձեռագրերի մեջ Աննա Րաֆֆու հայտնաբերած սույն՝ «Հայոց ազգաբնակությունը Պարսկաստանում» հոդվածը ցույց է տալիս, որ Րաֆֆին կատարել է իր խոստումը։ Սակայն նա հոդվածը հրատարակել չի կարողացել, որովհետև «Հայերի թվի» մասին հոգևոր առաջնորդ Անդրեաս եպիսկոպոս Հովհաննիսյանի կազմելիք «ցուցակը» (որը Րաֆֆին պետք է տեղադրեր իր հոդվածի մեջ) տվյալ շրջանում տակավին պատրաստ չի եղել։ Ավելի ուշ, երբ այդ տեղեկությունները պետք է որ պատրաստ լինեին, Համբարձում Առաքելյանը մի նամակով դիմում է Րաֆֆուն. խոսելով Պարսկաստանի հայոց վիճակագրության մասին, նա հեգնական ճնշման է ենթարկում Րաֆֆուն (տե՛ս Րաֆֆու պատասխան նամակը Համբարձում Առաքելյանին, «Երկերի ժողովածու», հ. X, Ե., 1959, էջ 543)։ Բացի դրանից, Հ. Առաքելյանը 1875 թվականի վերջերին իր հրատարակած «Ճանապարհորդություն Դավրեժից Նախիջևան» գրքույկի տողատակի ծանոթության մեջ գրում է. «Ես պատրաստում եմ Ատրպատականի և Պարսկաստանի հայոց ընդհանուր վիճակագրությունը... Այդ գործը,— շարունակում է նա,— հաջող տանելու մեջ ինձ մեծապես օգնեց Անդրեաս սրբազանը, հրամայելով իմ խնդրանոք մի նոր և ստույգ վիճակագրություն կազմել...» (տե՛ս էջ 3)։ Ակնհայտ է, որ թե՛ Րաֆֆուն ուղղած նամակի և թե՛ գրքույկի տողատակի ծանոթության միջոցով Հ. Առաքելյանը ցանկացել է բարոյական ճնշում գործադրել և կանխել Րաֆֆուն հոդվածի գրության հարցում։*

Պետք է ենթադրել, որ Րաֆֆին տուրք է տվել բարոյական ճնշմանը և անավարտ ու անտիպ է թողել այս հոդվածը։ Ժամանակ անց Համբարձում Առաքելյանը հրատարակում է իր «Հայացք Պարսկաստանի հայերի և վիճակագրություն Ատրպատականի» վերնագրով հոդվածը, որտեղ ամենայն մանրամասնությամբ խոսում է վերոհիշյալ հար-

ների մասին (տես «Մեղու Հայաստանի», 1876, 18 սեպտեմբերի, № 36, 25 սեպտեմբերի, № 37 և 4 դեկտեմբերի, № 47)։

Տարիներ անց հեղինակի այրին՝ Աննա Րաֆֆին, ամուսնու ձեռագրերի մեջ հայտնաբերելով այս հոդվածը, հրապարակում է նրա «Պարսկական պատկերներ» ժողովածուի մեջ։ Չխորանալով հայտնաբերածի բովանդակության մեջ՝ Աննա Րաֆֆին այս՝ Ատրպատականին վերաբերող հոդվածի մեջ, Րաֆֆու բաց թողած տեղում, ուր նա պետք է տեղադրեր Անդրեաս Հովհաննիսյանի կազմած վիճակագրությունը, զետեղում է «Մշակում» արդեն հրապարակված Արդիստանին վերաբերող վիճակագրությունը։

Աննա Րաֆֆու այս չկշռադատված քայլի հետևանքով շփոթ, տարակուսանք ու անգիտություն է առաջացել հոդվածի հետագա հրատարակիչների մեջ։ Անվերապահորեն հավատ ընծայելով՝ Աննա Րաֆֆու կատարած այդ սխալին տուրք ենք տվել նաև մենք՝ Րաֆֆու «Երկերի ժողովածուի» 9-րդ հատորում (ինչպես 1958, այնպես էլ 1964 թվականի հրատարակությունների մեջ) նույնությամբ արտատպելով աղավաղման ենթարկված հոդվածը։

Ներկա հրատարակության մեջ «Պարսկաստանի հայոց վիճակագրական դրությունը» հոդվածը, առանձնացված է «Հայոց ազգաբնակությունը Պարսկաստանում» հոդվածից։

Հոդվածը Աննա Րաֆֆին հրատարակել է Րաֆֆի ստորագրությամբ։

Արտատպված է Րաֆֆու «Պարսկական պատկերներ» ժողովածուից, Վիեննա, 1913, էջ 528—555։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (ԷՋ 315—319)

Հոդվածը հեղինակի կենդանության ժամանակ չի հրապարակվել։

Գրության թվականի վերաբերյալ ուղղակի փաստական տեղեկություններ չկան։

Հայտնի է, որ 1875 թվականին գալով Թավրիզ և կարգավորելով պաշտոնավարման հետ կապված գործերը, Րաֆֆին մեկնում է Սալմաստ՝ ընտանիքի մոտ։ Հուլիսի 26-ին նա Անդրեաս եպիսկոպոսի հետ, իբրև վերջինիս թարգման, «մտնում է պարսից բանակ» (այցելում են Ատրպատականի Սահաբ դիվան Ռահիմ-Միրզա-խանին)։ Պետք է ենթադրել, որ հենց այստեղ էլ, Խոսրովա գյուղում, ծանոթանալով բանակում տիրող կացությանը, Րաֆֆու մեջ հղանում է այս հոդվածի գրությունը։ Մյուս կողմից հոդվածում Րաֆֆու հայտնած տեղեկությունները այն մասին, որ Նասրեդդին շահը քսան տարի առաջ է «կազմել մի փոլք» հայերից և ասորիներից, անուղղակի իմաստով փաստարկում է հոդվածի գրության թվականը։ Հայտնի է, որ փոլք կազմելու վերաբերյալ հրամանը շահը տվել է 1855 թվականին, եթե 1855-ի վրա ավելացնենք այն քսան տարին, որի մասին խոսում է Րաֆֆին (1855+20=1875), ապա կարելի է ասել, որ հոդվածը գրվել է 1875 թվականին։

Հոդվածը գրվել է «Մշակում» հրապարակելու համար։ Անհայտ պատճառով այն չի ուղարկվել լրագրին։

Արտատպված է Րաֆֆու «Պարսկական պատկերներ» ժողովածուից, Վիեննա, 1913, էջ 556։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (ԷՋ 320—321)

«Նամակ Պարսկաստանից» հոդվածը գրված է «Բիբի Շարաբանի» պատմվածքին նախորդող՝ նյութի կուտակման ժամանակաշրջանում։ Հայտնի է, որ այս պատմվածքը գրելուց առաջ Րաֆֆին մանրազնին ուսումնասիրում է գաբրների (արևապաշտների) կենցաղն ու սովորությունները։ Այդ են վկայում նաև հոդվածում Րաֆֆու ցուցաբերած խոր գիտելիքները գաբրների մասին։

Հոդվածը գրված է 1875 թվականի դեկտեմբերին, Թավրիզում, տպագրվել է 1876 թվականի հունվարին։

Հրապարակված է Մել. *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 29 հունվարի, № 3, էջ 3։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (ԷՋ 322—324)

Գրված է 1876 թվականի հունվարի 24-ին Թավրիզում, տպագրվել է նույն թվականի փետրվարի 5-ին։

Հրապարակված է Մել. *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 5 փետրվարի, № 4, էջ 3։

ՄԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԲՐՈՇՅՈՒՐ (ԷՋ 324—330)

Իր գրախոսականի մեջ Րաֆֆին խոսում է այնպիսի հարցերի մասին, քննում է այնպիսի խնդիրներ, որոնք կարող էին գրգռել մահմեդական հավատի շիա աղանդավորների կրոնական մոլեռանդությունը, քանի որ տվյալ շրջանում Րաֆֆին ապրում և աշխատում էր Թավրիզ քաղաքում, ուստի, հասկանալի պատճառով, ինչպես այս, այնպես էլ այս կարգի մի շարք հոդվածներ նա հրապարակում է ծածկանունով։

Հրապարակված է Անանուն *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 12 փետրվարի, № 5, էջ 1—3։

ԳԺԱՏՈՒՆ (ԷՋ 330—339)

Րաֆֆին այս հոդվածը գրել է «Արևելյան մամուլում» տպագրված Ծերենցի մի «Թղթակցության» առիթով (տե՛ս «Արևելյան մամուլ», 1876, հունվար, էջ 22)։

Ցույց տալով հայերի վիճակը Թուրքիայի բռնակալության տակ, Ծերենցը այն

միտքն է հայտնում, որ հարստահարությունից խուսափելու համար պետք է թողնել հայրենի հողը և ապաստան որոնել օտար երկրներում։

Արատավոր համարելով այս հարցադրումը, Րաֆֆին օրինակների միջոցով ցույց է տալիս գաղթականության կործանարար հետևանքները և արևմտահայությանը կոչ է անում ամուր կառչել մայր հողին։ «Եթե հայը կամե կյանք և ապագա ունենալ,— գրում է Րաֆֆին,— նա պետք է յուր ապրուստը հիմնե հաստատուն հողի վերա, և այդ հողը թող լինի այն, որ սրբված և գնված է մեր նախնյաց արյունով...»։

Այդ հարցի մասին Րաֆֆուց հետո հոդված է գրում նաև Սպանդար Սպանդարյանը (տե՛ս «Մշակ», 1876, № 24, 25, էջ 1)։ Սերենցը, իհարկե, անպատասխան չի թողնում ինչպես Րաֆֆուն, այնպես էլ Սպանդար Սպանդարյանին՝ «Արևելյան մամուլի» երկու համարում շարունակաբար տպագրելով մի ընդարձակ հոդված (տե՛ս «Արևելյան մամուլ», 1876, № 10, էջ 342 և № 11, էջ 394)։

«Գժատուն» հոդվածը գրված է 1876 թվականի մարտի 20-ին, Թավրիզում, տպագրվել է նույն թվականի ապրիլի 22-ին։

Հրապարակված է Մել. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876, 22 ապրիլի, № 14, էջ 1—3։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 339—340)

Ավագ Ավթանդիլյանի հուշերից, ինչպես նաև Րաֆֆու «Նամակ Պարսկաստանից» հոդվածում բերված ցանկից (տե՛ս այս հատորում, էջ 464) հայտնի է, որ Թավրիզի գրադարան-ընթերցարանը ստանում էր պոլսահայ գրեթե բոլոր պարբերականները։ Հենվելով իր ստացած մասնավոր տեղեկությունների և պարբերականներից քաղած լուրերի վրա՝ Թավրիզում ապրող Րաֆֆին գրում և «Մշակին» է ուղարկում «Նամակ Կ. Պոլսից» թղթակցությունների շարքը (տե՛ս նաև «Նամակ Կ. Պոլսից» բացատրականը, էջ 520)։

Հրապարկված է *** (երեք աստղանիշ) «ստորագրությամբ»։

Արտատպված է «Մշակից», 1876, 13/25 մայիսի, № 17, էջ 3։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 340—341)

Մամուլից քաղած տեղեկությունների հիման վրա Րաֆֆին գրում և «Մշակին» է ուղարկում այս թղթակցությունը (տե՛ս նաև «Նամակ Կ. Պոլսից» բացատրականը, էջ 520)։

Հրապարակված է *** (երեք աստղանիշ) «ստորագրությամբ»։

Արտատպված է «Մշակից», 1876, 20 մայիսի, № 18, էջ 3։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (ԷՋ 342—343)

Գրված է 1876 թ. մայիսի 22-ին Թավրիզից, տպագրվել է նույն թվականի հունիսի 10-ին։

Հրապարակված է Մել. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876, 10 հունիսի, № 21, էջ 3։

ԿՂԵՐԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ԷՋ 343—352)

«Կղերական հարստահարություն» հոդվածի գրության շարժառիթն է դարձել Թավրիզի ազգային-հոգևոր դպրոցի անմխիթար վիճակը և դպրոցի կողմից կաթողիկոսին ուղղված աղերսագրին էջմիածնի տված բացասական պատասխանը։

Րաֆֆու հոդվածը «Մշակում» լույս տեսնելուց հետո, նրա դեմ «Մեղու Հայաստանի» լրագրում թունոտ հոդված է հրապարակում էջմիածնի թղթակից Արշարունին (տե՛ս 1876, 18 սեպտեմբերի, № 36, էջ 2, և 23 հոկտեմբերի, № 41, էջ 2)։

Հոդվածը գրված է 1876 թվականի մայիսի 28-ին, Թավրիզում, տպագրվել է նույն թվականի օգոստոսի 12-ին։

Հրապարակված է Մել. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876, 12 օգոստոսի, № 30, էջ 1։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 352—354)

Մամուլից քաղած տեղեկությունների հիման վրա Րաֆֆին գրում և «Մշակին» է ուղարկում այս թղթակցությունը (տե՛ս նաև «Նամակ Կ. Պոլսից» բացատրականը, *էջ 520)։*

*Հրապարակված է *** (*երեք աստղանիշ) *«ստորագրությամբ»։*

Արտատպված է «Մշակից», 1876, 1 հունիսի, № 24, էջ 3։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (ԷՋ 354—382)

1876 թ. սկզբին Արզար Հովհաննիսյանը թույլտվություն է ստանում «Փորձ» անունով ամսագիր հրատարակելու և նույն թվականի փետրվարի 25-ին նամակով դիմում է Րաֆֆուն, խնդրելով վերջինիս աշխատակցել «Փորձին»։ «Ես ինձ շատ բախտավոր կհամարեմ,— գրում է Արզար Հովհաննիսյանը,— եթե ամսագրիս առաջին իսկ էջերի վերա կարողանամ Ձեր մի որևիցե գրվածքը տպագրել, իսկ վերջին մասերում՝ Պարսկաստա-

նից նամակ Ձեր ստորագրությամբ։ Ես ուրեմն անհամբերությամբ նամակիս պատասխանին կը սպասեմ» (տե՛ս «Պարսկական պատկերներ» ժողովածու, Վիեննա, 1913 թ., էջ XIII)։

Անցած մի քանի ամիս՝ Րաֆֆին Թավրիզից խմբագրին է ուղարկում «Պարսկաստան» վերնագրով հոդվածը, որը նույն թվականին տպագրվում է «Փորձի» առաջին համարում։ Այս հոդվածը մի տեսություն է՝ նվիրված պարսկահայոց սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքին։ Րաֆֆին այստեղ ամփոփում է այն ամենը, ինչ ուսումնասիրել, տեսել ու լսել էր Պարսկահայաստանում։ Հոդվածի սկզբում նա նշում է, որ Պարսկաստանի հասարակական կյանքում հանդես են եկել իսլամի մոլեռանդության դեմ ուղղված հոսանքներ, որոնց գործունեության մեջ Րաֆֆին տեսնում է ֆեոդալական կարգերի փլուզումը։ Դառնալով բուն խնդրին, նա ամբողջ կրքով դատապարտում է բողոքական միսիոներների և կաթոլիկների գործունեությունը, որոնք մուտք են գործել Արևելք և խարդախ միջոցներով դավանափոխ են անում ժողովրդին։

Անդրադառնալով պարսկահայոց կրթական վիճակին, Րաֆֆին դպրոցական գործի ձախողման պատճառը տեսնում է հոգևոր բնույթի մեջ։ Դպրոցը «եկեղեցականացրին և դրանով էլ մեռցրին»,— գրում է նա ու պահանջում ժողովրդի փողերով հիմնված դպրոցը անջատել եկեղեցուց և տալ ժողովրդին։

Րաֆֆին հոդվածը գրել է 1876 թվականի հունիսի սկզբին, Թավրիզում։ Առաջին անգամ լույս է տեսել «Փորձում», ապա նաև՝ հեղինակի «Պարսկական պատկերներ» ժողովածուում (Վիեննա, 1913 թ.)։

Հրատարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Փորձ» հանդեսից, Թիֆլիս, 1876, № 1, էջ 279։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 382—385)

Մամուլից քաղած տեղեկությունների հիման վրա Րաֆֆին Թավրիզում գրում և «Մշակին» է ուղարկում այս թղթակցությունը (տե՛ս նաև «Նամակ Կ. Պոլսից» բացատրականը, *էջ 520)։*

Հրատարակված է *** (երեք աստղանիշ) *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 15 հուլիսի, № 26, էջ 3։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (ԷՋ 385—387)

Նամակի գրության շարժառիթն են հանդիսացել մահմեդական կրոնավորների հրահրած սնոտիապաշտական ցույցերը, որոնց մոլեռանդությունը Խոյ քաղաքում լուրջ սպառնալիք էր ստեղծում շրջապատում բնակվող քրիստոնյաների համար։

Այս սպառնալիքը այնպիսի լուրջ բնույթ էր կրում, որ Րաֆֆին զգուշության համար ստիպված է լինում հոդվածը հրատարակել ծածկանունով։

Նամակը գրված է 1876 թվականի հուլիսի 25-ին, Թավրիզից, տպագրվել է նույն թվականի օգոստոսի 5-ին։

Հրապարակված է Անանուն *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 5 օգոստոսի, № 29, էջ 3—4։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 388)

Մամուլից քաղած տեղեկությունների հիման վրա Րաֆֆին գրում և «Մշակին» է ուղարկում այս թղթակցությունը (տե՛ս նաև «Նամակ Կ. Պոլսից» բացատրականը, *էջ 520)։*

Հրապարակված է *** (երեք աստղանիշ) *«ստորագրությամբ»։*

Արտատպված է «Մշակից», 1876, 26 օգոստոսի, № 32, էջ 4։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (ԷՋ 389—392)

Այս թղթակցության մեջ ցույց տալով բարբարոսության օրինակներ, Րաֆֆին աշխատում էր կառավարող շրջանների ուշադրությունը հրավիրել այդ երևույթի վրա, միաժամանակ մերկացնելով ու դատապարտելով պետական պաշտոնյաների չարաշահումները։

Նման պարագաներում միանգամայն հասկանալի է, որ Րաֆֆին չէր կարող բացահայտորեն հանդես գալ իբրև հեղինակ։

«Նամակ Պարսկաստանից» հոդվածը գրված է 1876 թվականի օգոստոսի 13-ին, Թավրիզից, տպագրվել է նույն թվականի սեպտեմբերին։

Հրապարակված է *** (երեք աստղանիշ) *«ստորագրությամբ»։*

Արտատպված է «Մշակից», 1876, 2 սեպտեմբերի, № 33, էջ 3—4։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (ԷՋ 392—394)

Այս նամակը մի թղթակցություն է՝ գրված «Մշակի» «Արտաքին տեսություն» բաժնի համար։ Հոդվածում եղած մերկացումները կարող էին կործանարար հետևանքներ ունենալ Թավրիզում ապրող Րաֆֆու համար, այդ իսկ պատճառով նա թաքցրել է հեղինակի ով լինելը։

Հոդվածը գրված է 1876 թվականի օգոստոսի 15-ին, Թավրիզից, տպագրվել է նույն թվականի սեպտեմբերին։

Հրապարակված է Անանուն *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 16 սեպտեմբերի, № 35, էջ 3—4։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 394—395)

Հոդվածում արտաբերվող հիմնական թեման մեզ ընդդիմությունն է Գ. Արծրունու տեսակետների հանդեպ, ինչ վերաբերում է օգտագործած փաստերին, ապա Րաֆֆին դրանք քաղել է պոլսահայ պարբերականներից (տե՛ս նաև «Նամակ Կ. Պոլսից» բացատրականը, *էջ 520)։*

*Հրապարակված է **** (Երեք աստղանիշ) *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 23 սեպտեմբերի, № 36, էջ 3։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 396—399)

Մամուլից քաղած տեղեկությունների հիման վրա Րաֆֆին Թավրիզում գրում և «Մշակին է ուղարկում այս թղթակցությունը (տե՛ս նաև «Նամակ Կ. Պոլսից» բացատրականը, *էջ 520)։*

*Հրապարակված է **** (Երեք աստղանիշ) *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 30 սեպտեմբերի, № 37, էջ 4։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 399—401)

Պոլսահայ մամուլից քաղած տեղեկությունների հիման վրա Րաֆֆին գրում և Թավրիզից «Մշակին» է ուղարկում այս թղթակցությունը (տես նաև «Նամակ Կ. Պոլսից բացատրականը», *էջ 520)։*

*Հրապարակված է *** (Երեք աստղանիշ) ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 7 հոկտեմբերի, № 38, էջ 3։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 402—403)

«Մասիս» և «Նորագիր» (՞) լրագրերից քաղած տեղեկությունների հիման վրա Րաֆֆին գրում և «Մշակին» է ուղարկում այս թղթակցությունը (տես նաև «Նամակ Կ. Պոլսից» բացատրականը, *էջ 520)։*

*Հրապարակված է **** (Երեք աստղանիշ) *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1876, 21 հոկտեմբերի, № 40, էջ 4։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ (ԷՋ 403—409)

Հոդվածը Րաֆֆու կենդանության ժամանակ չի հրապարակվել, ուստի փաստարկված չեն գրության տեղն ու թվականը։ Ալթանգիլյանի հուշերից հայտնի է, որ Րաֆֆին Պարսկաստանում եղած ժամանակ մեծ հետաքրքրություն է ցուցաբերում պարսից գրականության, ժողովրդի կենցաղի ու ներքին տնտեսական կյանքի հանդեպ։ Այս հոդվածը պետք է համարել Րաֆֆու պարսկական կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի արտահայտությունը, նրա մանրազնին ուսումնասիրությունների արդյունք։ Այդ են վկայում նաև հոդվածում բերված փաստական տվյալները։ Պետք է ենթադրել, որ հոդվածը գրված է 1876 թվականի վերջերում, երբ Րաֆֆին գտնվում էր Թավրիզում։

Հոդվածը առաջին անգամ ձեռագրից հրապարակում է Աննա Րաֆֆին։

Արտատպված է Րաֆֆու «Պարսկական պատկերներ» ժողովածուից, Վիեննա, 1913, էջ 556։

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՄԵՋ (ԷՋ 410—414)

Գրելով Պարսկաստանի վաճառականության մասին, որտեղ սկզբնական շրջանում որոշակի դեր են ունեցել նաև հայ վաճառականները, տրամաբանական է դառնում, որ Րաֆֆին ավելի գործնական նկատառումով կարող էր անդրադառնալ նաև Կովկասի հայ վաճառականությանը, ուստի նա գրում և Թավրիզից «Մշակին» է ուղարկում այս հոդվածը։

Հրապարակված է Մ. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876, 18 նոյեմբերի, № 44, էջ 1—2։

«ՏԵՂԵԿԱԳԻՐՔ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅԱՆՑ» (ԷՋ 415—456)

«Տեղեկագիրք գավառական հարստահարությանց» հոդվածը մի գրախոսական է, որը Րաֆֆին գրել է համանուն վերնագրով գրքի տպագրության առիթով։

Այս հոդվածը նաև մի վավերագիր է այն մասին, թե ինչպիսի վայրագություններ են գործել քուրդ բաշիբոզուկներն ու թուրք պաշտոնյաները հայերի նկատմամբ, և թե որպիսի սառն անտարբերությամբ է նայել թուրքական կառավարությունը այս ամենի վրա։ Անդրադառնալով գրքում լուսաբանված յուրաքանչյուր դեպքին, Րաֆֆին այն եզրակացությանն է հանգում, որ մի «ժողովրդի ոչինչ բախտավոր ապագա գուշակել չի կարելի, քանի դեռ նրա ապրուստի պահանջները հաստատուն հիմքի վրա կեցված չեն, քանի որ նա թե՛ նյութապես և թե՛ բարոյապես մաշվում և կլանվում է մի ուրիշ ավելի զորեղ տարրից»։ Արևմտահայության «գլխավոր կենսական հարցը» համարելով հողային խնդիրը, Րաֆֆին պահանջում է, որ պատրիարքը իր աչքի առաջ ունենալով Պոլսում համալություն անող 45 հազար վանեցի և մշեցի գաղթականներին, իր ուշադրու-

թյունը դարձնի հայ գյուղացիության քայքայման սոցիալական պատճառների վրա։

Հոդվածը, ինչպես պարզվում է տողատակի ծանոթությունից, Րաֆֆին գրել է 1877 թվականի սկզբին (հունվարի 10-ից առաջ), «Փորձում» հրատարակելու համար։ Սակայն «Փորձի» խմբագիրը, Րաֆֆու բնորոշմամբ, «իրեն միայն հայտնի պատճառով», այս հոդվածը թողնում է անտիպ։ 1878 թվականի հունիսի վերջերին Րաֆֆին Ագուլիսից գալով Թիֆլիս, «Փորձից» վերցնում է այն ու հանձնում «Մշակին»։ Նույն թվականի օգոստոսին «Մշակում» շարունակաբար սկսվում է տպագրվել Րաֆֆու այս հոդվածը։

Տեքստում որոշ լրացումներ են կատարված 1913 թվականի հրատարակությունից։

«Տեղեկագիրը...» ավելի ուշ, 1913 թվականին, տպագրվում է նաև հեղինակի «Պարսկական պատկերներ» ժողովածուում։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1878, 25 օգոստոսի—3 սեպտեմբերի, № 145—150։

ԹԱՎՐԻԶԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԷՋ 456—464)

Բացառիկ է եղել այս հոդվածի թողած ազդեցությունը Րաֆֆու անձնական կյանքի ու մանկավարժական գործունեության վրա։ Հանդես գալով «Մի հանդիսական» ստորագրությամբ, Րաֆֆին քաղվածաբար մեջ է բերում Թավրիզի ընթերցարանի ընկերության ընդհանուր ժողովում իր ունեցած ելույթի հիմնական մտքերը և խարազանում ու դատապարտում է ժողովրդի մեջ հեղինակություն վայելող, ծխատեր քահանա Տեր Հովսեփի բռնած դիրքը օրիորդաց դպրոցի ու գրադարան-ընթերցարանի հանդեպ։ Սա այն հոդվածն է, որ «Մշակում» հրապարակվելուց հետո մեծ աղմուկ է հանում Թավրիզում. բորբոքում է կրքերը, փոթորկում է հասարակական կյանքը։ Հոդվածում դատափետված Տեր Հովսեփ քահանայի և մի շարք այլ անձանց մատնության պատճառով Րաֆֆին ստիպված է լինում լքել մանկավարժական աշխատանքը և գիշերը ծպտված հեռանում է Թավրիզից՝ ազատելով իր կյանքը մահմեդական ամբոխի մոլեռանդությունից։

Հրապարակված է Մի հանդիսական ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1877, 17 մարտի, № 19, էջ 1—3։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (ԷՋ 464—467)

Հայտնի է, որ Թավրիզի Արամյան ազգային դպրոցում դասեր ունենալուց բացի Րաֆֆին վարում էր նաև ընթերցարանի ընկերության ատենադպիրի պաշտոնը։ Այս հոդվածը հանդիսանում է նրա տարեկան հաշվետվությունը։

Հրապարակված է Հ. Մելիք-Հակոբյան ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1877, 21 մարտի, № 20, էջ 3—4։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ (ԷՋ 467—468)

Նամակը թեև հասցեագրված էր «Մշակի» խմբագրին, սակայն իրականում այն ուղղված էր ամենայն հայոց կաթողիկոսին։ «Մշակի» 19-րդ համարում հրապարակված «Դավրիժու ընթերցարանի ընկերություն» վերնագրով հոդվածը մեծ իրարանցում էր առաջ բերել Թավրիզում։ Համայնքը բաժանվել էր երկու խմբի և սպառնալիքի տակ էր ո՛չ միայն Րաֆֆու կյանքը, այլև դպրոցի ու ընթերցարանի գոյությունը։ Րաֆֆին, դիմելով Գևորգ IV-ին, խնդրում է վերահասու լինել և կարգի հրավիրել Տեր Հովսեփ քահանային։

Հրապարակված է Հ. Մելիք-Հակոբյան *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1877, 18 մարտի, № 26, էջ 3։

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ (ԷՋ 468—475)

Հայտնի է, որ իր անձի դեմ ծայր առած խռովությունը կանխակալելու նպատակով, բարեկամների խորհրդով Րաֆֆին ժամանակավորապես թողնում է Թավրիզը և գալիս է Երևան։ Այստեղ նա մնում է շուրջ մեկուկես ամիս։ Պետք է ենթադրել, որ այս հոդվածը գրել է Երևանում, հուլիսի սկզբներին։

Րաֆֆին մոտիկից ճանաչում էր հոդվածում նշված Ալի աղային և նրա որդիներին։ 1860 թվականի գարնանը Ավթանդիլյանի հետ այցելել է նրան Կաշկավիս ձորակում և հյուրընկալվել է նրա վրանի տակ (տե՛ս «Րաֆֆին ժամանակակիցների հուշերում», Ե., 1986, էջ 92—103)։

Քանի որ քուրդ ավարառուն բնակվում էր «Սալմաստ գավառի Ջահրի կոչված գյուղում» և, ըստ Ավթանդիլյանի հուշերի, ճանաչում էր Րաֆֆուն (թերևս նաև նրա հորը՝ Մելիք Միրզաբեկին), ապա վերջինս պարտավոր էր համապատասխան զգուշավորություն ցուցաբերել, եթե չէր ցանկանում վտանգի տակ դնել նույն գավառի Փայաջուկ գյուղում ապրող իր մերձավորների կյանքը։ Այս պարագայում հասկանալի է, թե ինչու նա չէր կարող իր ստորագրությունը դնել հոդվածի տակ։ Րաֆֆին, ըստ Ավթանդիլյանի հուշերի, տեղյակ էր, որ Ալի աղայի ավագ որդին՝ Ահմադը, սպանված էր (տե՛ս նույն տեղում, էջ 99—100), սակայն 17 տարի անց մոռացության էր տվել։

«Սրբազան պատերազմը և քրիստոնյաների վիճակը Փոքր Ասիայում» հոդվածը թեմատիկ առումով նախատիպը է ծառայել «Ջալալեդդին» վիպակի գրության համար (տե՛ս այս հրատարակության IV հատորի ծանոթագրությունները, էջ 428—430)։

*Հրապարակված է **** (Երեք աստղանիշ) *«ստորագրությամբ»։*

Արտատպված է «Մշակից», 1877, 18 հուլիսի, № 52, էջ 1—2։

ՆԱՄԱԿ ԱԳՈՒԼԻՍԻՑ (ԷՋ 475—480)

Թավրիզից հետո, ինչպես հայտնի է, Րաֆֆին մեկնում է Ագուլիս և ստանձնում է երկսեռ դպրոցի բարձր դասարանների հայոց լեզվի և պատմության ուսուցչի պարտականությունը։ Մի քանի օրվա հյուր էր Րաֆֆին, երբ հոկտեմբերի 20-ին տոնվում է տեղի Հայկանուշյան օրիորդաց դպրոցի տասնամյա տարեդարձը։ Այդ առիթով Րաֆֆին գրում է սույն ճառը, որը հանդիսավոր երեկոյին կարդում է նույն դպրոցի աշակերտուհի Կատարինե Արասխանյանը։

Ավելի ուշ Րաֆֆու գրած ճառի սկզբում ավելացվում է փոքրիկ մուտք՝ հանդեսի նկարագրության վերաբերյալ, իսկ վերջում՝ ամփոփումը հանդեսի և սույն Կատարինե Արասխանյանի անունով ուղարկվում է Թիֆլիս՝ «Մշակին»։ Քանի որ սկզբի ու վերջի այդ հատվածները շարադրված են առաջին դեմքով, և Կատարինեն հանդես է գալիս նկարագրողի դերում, նպատակահարմար գտանք «ճառը» հատորում տեղադրել առանց այդ հատվածների։

Հրապարակված է Կատարինե Մ. Արասխանյան *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1877, 8 դեկտեմբերի, № 89, էջ 1—2։

ՆԱՄԱԿ ԱԳՈՒԼԻՍԻՑ (ԷՋ 480—484)

Այս այն թղթակցություններից մեկն է, որը Րաֆֆին հրապարակել է առանց ստորագրության, սակայն «Մեղու Հայաստանի» լրագրում, տպագրված մի թղթակցության մեջ (տե՛ս 1879, 9 մայիսի, № 34) ինչպես «Մի երիտասարդ» անվան տակ հանդես եկող հոդվածագիրը, այնպես էլ «Մեղվի» խմբագիր Պ. Սիմոնյանը իր առաջնորդողում (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1879, 2 հունիսի, № 41) բացահայտում են, որ հոդվածի հեղինակությունը պատկանում է Րաֆֆուն։ Վերջինս իր «Գավառական բանակռիվը մեր լրագրության մեջ» հոդվածում (տե՛ս «Մշակ», 1879, 5 հուլիսի, № 108), նկատի ունենալով թղթակցությունը անստորագիր տպագրված լինելու հանգամանքը, սկզբում մերժում է մեղվականների խոսքը, սակայն, շարունակության մեջ, ագուլիսցիներին «Կովկասի ամերիկացիներ» անվանելու հարցում բերելով մեղմացուցիչ պատճառաբանություններ ու տալով բացատրություն, ենթատեքստում անուղղակիորեն ընկրկում է։

Հրապարակված է *** (երեք աստղանիշ) *ստորագրությամբ։*

Արտատպված է «Մշակից», 1878, 3 փետրվարի, № 15, էջ 1—2։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ (ԷՋ 7—66)

1858

Աղթամարա վանքը 7

1876

[Ուղևորություն Պարսկաստանում] 36

1881

Ջրաբերդ 59

ՀՈԴՎԱԾՆԵՐ (ԷՋ 69—480)

1858

[«Արծվի Վասպուրականի» ամսագրի խմբագրին] 69

1861

Արգո բարեկամ Հովհաննես Քաթանյան 72

1872

Նամակ Թեհրանից 78
Ընտանիքի կերբերոսներ 81
Նամակ Թեհրանից 83
Պոլեմիկա 84
Վրաց իշխան արքայազն Ալեքսանդրի կյանքից Պարսկաստանում . . . 87
Նամակ Ուրմիից 90
[Նամակ Պարսկաստանից] 92
Պարսկաստան 93
Նամակ Ղարադաղից 93
Վաճառականությունը հայերի մեջ 97
Արվեստագործությունը Կովկասում 101

Պարսկաստան 103
Պատասխան 104
Նամակ Դավրեժից 107
Միրզա Մելքում խան 109
Բնության ազդեցությունը ժողովրդի բազմանալու վրա 113

1873

Նամակ Դավրեժից 115
Էդ էլ քեզ կրիտիկա 116
Պարսկաստան 120
Նամակ Կ. Պոլսից 122
Նամակ Կ. Պոլսից 125
[Պատասխան պարոն Խ. Գրիգորյանին] 128
Նամակ Կ. Պոլսից 128
Նամակ Դավրեժից 131
[Հայտարարություն] 132
«Քանդած օջախ» 133
[«Русский мир» լրագրի առաջնորդողը] 139
Մի քանի խոսք 143
[Պատասխան «Մեղվին»] 144
Կ. Պոլսի սր. պատրիարքի հրաժարումը 145
Բուրսայի կարևորությունը 147
Փոստային հարակցության կարևորությունը Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ 150
Հայի վերջին խելքը 152
Ընթերցողներին 157
Կուսակցությունները Կ. Պոլսի մեջ և ազգային ժամույլը 161
Նամակ Դավրեժից 166
Եկեղեցականների հարցը 167
Մի քանի գծեր Խրիմյանի կյանքից 173
Առաջարանի տեղ 181

1874

«Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետի վրա» 182
Դավրեժի առաջնորդի հարցը 188
Մի նոր պրոեկտ Երևանի նահանգի դրությունը բարվոքելու համար . . 194
Պատասխան «Մեղվին» 196
«Ձնար մշեցվոց և վանեցվոց» գրքույկի առիթով 197
Պարսկաստան 202
Նամակ Կ. Պոլսից 202
Պարսկաստան 204
Պատասխան 206

Հասունյանը և յուր կուսակցությունը 207
Վանքը և կուսակրոն հոգևորականությունը 210
Հեղինակների վիճակը 217
Ազատությունը Թուրքիայում 221
[«Փունջ»ի երրորդ հատորի տպագրությունը] 223

1875

Թուրքիա 224
«Գրոց ու բրոց կամ Սասունցի Դավիթ» 227
Նամակ Դավրեժից 245
Կրթության խնդիրը հայոց մեջ 246
Պարսկաստան 258
Պարսկաստան 259
Նամակ Ռաշտից 260
Տարոնի և Վասպուրականի անցյալ և արդի վիճակը 261
«Էլի մեկ զոհ» 276
Խավարի արքանյակները 283
Նամակ Դավրեժից 286
Նամակ Դավրեժից 288
Նամակ Սալմաստից 292
Նամակ Դավրեժից 295
Պարսկաստանի հայոց վիճակագրական գրությունը 297
Հայոց ազգաբնակությունը Պարսկաստանում 304
Պարսկաստանի զինվորական կազմակերպությունը 315
Նամակ Պարսկաստանից 320

1876

Նամակ Պարսկաստանից 322
Մի պարսկերեն բրոշյուր 324
Գժատուն 330
Նամակ Կ. Պոլսից 339
Նամակ Կ. Պոլսից 340
Նամակ Պարսկաստանից 342
Կղերական հարստահարություն 343
Նամակ Կ. Պոլսից 352
Պարսկաստան 354
Նամակ Կ. Պոլսից 382
Նամակ Պարսկաստանից 385
Նամակ Կ. Պոլսից 388
Նամակ Պարսկաստանից 389
Նամակ Պարսկաստանից 392
Նամակ Կ. Պոլսից 394

Նամակ Կ. Պոլսից 396
Նամակ Կ. Պոլսից 399
Նամակ Կ. Պոլսից 402
Վաճառականությունը Պարսկաստանում 403
Հայ վաճառականներ Կովկասի մեջ 410

1877

«Տեղեկագիր գավառական հարստահարությանց» 415
Դավրիժու ընթերցարանի ընկերություն 456
Նամակ Պարսկաստանից 464
Նամակ խմբագրին 467
Սրբազան պատերազմը և քրիստոնյաների վիճակը Փոքր Ասիայում . . 468
Նամակ Ագուլիսից 475

1878

Նամակ Ագուլիսից 480
Ծանոթագրություններ 485

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ՐԱՖՖԻ
Երկերի ժողովածու 12 հատորով
Հատոր տասներորդ
ԱԿՆԱՐԿՆԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Литературно-художественное издание

РАФФИ
Собрание сочинений в 12 томах
Том десятый
Очерки и статьи
На армянском языке
Издательство «Наири»
Ереван, 1991

Խմբ. վարիչ՝ Ստ. Է. Թոփչյան
Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Զուլհակյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան
Վերստ. սրբագրիչ՝ Օ. Վ. Թերզյան

ИБ 5556

Հանձնված է շարվածքի 18. 02. 1991 թ.։ Ստորագրված է տպագրության 10. 07. 1991 թ.։ Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ 31,62 պայմ. տպ. մամ., 30,25 հրատ. մամ. +1 ներդիր։ Տպաքանակ՝ 50000։ Պատվեր՝ 152։ Գինը՝ 6 ռուբլի։

«Նաիրի» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Наири», Ереван-9, ул. Теряна, 91.

Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆիական արտադրական միավորման գլխամասային հիմնարկություն, Երևան—9, Տերյան 91։

Полиграфическое производственное объединение им. Акопа Мегапарта Комитета по печати при Совете Министров Республики Армения. Ереван-9, ул Теряна, 91.

98
3

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0184168

A II 82769